ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆ

ԵՎ, ԱՆԳԱՄ ՄԱՀԻԿ ՀԵՏՈ



ՀՏԴ 891.981-3 Թոփչյան
ԳՄԴ 84Հ-4
Թ 836

Գիրքը տպագրվում է «Ռուբեն Սևակի հիշատակի տուն» հասատության մեկենասությամբ

Cet ouvrage est écrit et publié avec le soutien important de la Fondation des Frères Ghoukassiantz à laquelle l'auteur tient à adresser ses remerciement les plus sincères.

ԹՈՓՉՅԱՆ ԱԼ.

Թ 836 Եվ անգամ մահից հետո: Վեպ / Ալեքսանդր Թոփչյան.- Եր.: ՀԳՄ, 2005

Ալեքսանդր Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպի գլխավոր հերոսը հայ մեծ բանաստեղծ, 1915 թ. Ցեղասպանության նահատակ, ազգային հերոս Ռուբեն Սևակն է: Հեղինակը լարված ու հագեցած պատումով զննում է բանաստեղծի հայտնությունը, մտավորականի ճակատագրումը, նրա և գերմանուհի Յաննի Ապելի ռոմանտիկ և ողբերգական սերը: Վեպը ներկայացնում է բանաստեղծ-քաղաքացու մի կերպար, որի համար իր ասպետական հավատարմությունը վսեմ իդեալներին վեր է ամեն ինչից և անգամ սեփական կյանքից, ահա ինչու նա կտրականապես հրաժարվելով թուրքերի առաջարկած ստորացուցիչ առևտրից (մահմեդականություն ընդունելու գնով փրկել սեփական կյանքը), խիզախ ու աներեր է մնում մահվան սպառնալիքին դեմ հանդիման:

Թ 4702080201 2005
0182(01)-2005 ԳՄԴ 84Հ-4

ISBN 99941-45-11-8

© Ալեքսանդր Թոփչյան, ՀԳՄ Հրատարակչություն, 2005 թ.

Ծնողներիս՝

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՈՒՐԻ ԱԶԻԶՅԱՆԻ ԵՎ
ԷԴՈՒԱՐԴ ՍՏԵՓԱՆԻ ԹՈՓՉՅԱՆԻ
հիշատակին

ԵՎ ԱՆԳԱՄ ՄԱՀԻՑ ՀԵՏՈ

Առաջին Մաս

ԷՐՈՍԻ ԵՎ ԹԱՆԱՏՈՍԻ ՄԻՋԵՎ կամ

*TÆDIUM VITÆ**

* * *

Ժամը 21 անց 45 էր: «Արևելյան ճեպընթացի» մեկնելուն մնում էր ճիշտ քառորդ ժամ: Պոլսի Սիրքեջիի կայարանն այս ժամին առավել մարդաշատ ու խճողված էր: Ուղևորների մի զգալի մասն՝ իրենց բեռուբարձով, կայարան էին գալիս մեկ-երկու ժամ առաջ: Ոչ ոք չէր խոստովանում, բայց թաքուն մտավախություն կար, թե գնացքը, ինչ-ինչ պատճառներով կարող էր ավելի շուտ մեկնել, և տուժողը հատկապես իրենք կլինեն: Դրանից զատ, երևույթի հանդիսավորությունն ստիպում էր ամբողջ ընտանիքով, հարազատներով, երբեմն նույնիսկ մերձավոր հարևաններով հնարավորին չափ կանուխ ժամանել կայարան:

Ուղևորությունն դեպի Եվրոպա այս շքեղ, հարմարավետ և գեղեցիկ գնացքով: Քսաներորդ դարի սկիզբն էր, սակայն մարդկանց մեջ դեռևս մնացել էր վախն ու անհանգստությանը խառնված ակնածանքը՝ տեղից-տեղ շարժվելու ժամանակա-տարածական պարզ գործողության հանդեպ: Ուղևորը մեկնող էր բոլոր իմաստներով: Օրերով ու շաբաթներով կարող էին անտեսել նրա ներկայությունը, սակայն մեկնելուց առաջ տանը, կայարանում, մինչև վերջին վայրկյանը պիտի նրան տեսնեին, գրկեին, համբուրեին, բերնեբերան լցված ճամպրուկների ու պայուսակների մեջ մի քաղցրավենիք, մի ոգելից խմիչք, մի թալիսման, մի նվեր պիտի խոթեին: Սրբազան արարողության պես մի բան կար այդ ամենի մեջ: Յուրաքանչյուրից մի մասնիկ իր հետ պիտի տաներ մեկնողը:

---

* *Խորշանք կյանքից - լատ.: Այս և հետագա բոլոր ծանոթագրությունները հեղինակինն են:*

Հրաժեշտի ավանդական այս ծեսը դարձել էր մարտահրավեր ընդդեմ պողպատյա ռելսերի վրա կանգնած փնչացող, ծուխ ու գոլորշի արձակող այդ հրեշի: Մարդիկ, ասես, ուզում էին հատկապես իրենց համերաշխությունն ընդգծել այդ գայթակղիչ, այդ դյութող, սակայն իր անդուլ ընթացքով աշխարհը մեջտեղից կիսող վիշապի առջև:

Կառամատույցին, եռուզեռվող ամբոխի մեջ, երկրորդ կարգի վագոնի առջև կանգնած էր քսանամյա մի երիտասարդ: Հագին սև կոստյում էր, որ բավական հաճելի ընդգծում էր նրա ոչ բարձր, բայց կառուցիկ հասակը: Գլխին ֆես չկար: Կարճ կտրած մազերը ետ էին սանրված, իսկ շրթունքին աչքի էր զարնում նոր գծագրվող բեղը, որը նրան ավելի շատ որպես պատանի էր ներկայացնում, քան հասուն տղամարդ:

Երիտասարդը շրջապատված էր քույրերի, եղբայրների, հարազատների մի ստվար խմբով: Նրանք Պոլիս էին եկել նախօրեին և իջևանել ազգականների տանը: Գրեթե անքուն գիշեր անցկացրին. հյուրասիրություն, զրույցներ, խորհուրդներ և հեռանկարների անվերջանալի քննարկում... Աստվա՜ծ իմ, արդեն մեկ տարի էր, որ ամբողջ գերդաստանն զբաղված էր այս ուղևորության հիմնական նպատակի քննարկմամբ. համալսարանական ուսում Եվրոպայում, կայուն մասնագիտություն, կայուն ապագա...

Զարմանալի ոչինչ չկար սրանում: Պերպերյանի կամ Կեդրոնականի շրջանավարտներից շատերն էին ուսանում եվրոպական համալսարաններում: Սակայն սա արտակարգ երևույթ էր Սիլիվրիով մեկ հայտնի երկաթագործ Հովհաննես աղա Զիլինկիրյանի համար: Նրանց գերդաստանում դեռևս ոչ մեկը համալսարանական ուսում չէր ստացել: Եվ հիմա, կառամատույցին գնացքի մեկնելուն անհամբեր սպասող Ռուբենն էլ հավանաբար չխախտեր ընտանեկան այդ «ավանդույթը», եթե չլիներին «Մեծ Մարդու» տևական հորդորները: Նա էր, որ Հովհաննես աղային հատուկ հրավիրեց Գատը գյուղ, վարժարան, որպեսզի համոզի Ռուբենին ուղարկել Եվրոպա՝ կրթություն ստանալու:

«Մեծ Մարդու»՝ Ռեթեոս Պերպերյանի հեղինակությունն անկասելի էր: Ճիշտ է, Հովհաննես աղան իրեն չոյված զգաց որդու հասցեին ասված գովասանական խոսքերի համար, որն արդեն մի քանի տարի առաջինն էր բոլոր աշակերտների մեջ, այնուհանդերձ, վարժարանի հիմնադիր-տնօրենի առաջարկը Հովհաննես աղայի սրտովը չէր: Նա ուրիշ ապագա էր ծրագրել որդու համար: Արդեն ժամանակն էր, որպեսզի հաջողությամբ ընթացող իր գործը վստահեր որդիներից մեկնումեկին: Անշուշտ, ըստ ավագության չգրված օրենքի, այդ գործը պիտի անցներ համեստ և պարտաճանաչ Քերոբին: Սակայն տնօրենի գովեստներն ավելի էին համոզում Հովհաննես աղային, որ ինքը ճիշտ որոշում է ընդունել. գործը հանձնել ոչ թե որդիներից ամենամեծին, այլ ամենախելացիին՝ Ռուբենին: Ուստի որքան ավելի էին գովում նրան և խոստանում փաստաբանի կամ բժշկի փայլուն ապագա, հայրն այնքան ավելի էր համառում իր որոշման մեջ:

Եվ գուցե Ռուբենն այդպես էլ մնար Սիլիվրիում, եթե վարժարանի ավարտական հանդեսից հետո «Մեծ Մարդը» մի վերջին անգամ չհամոզեր Հովհաննես աղային, խոստանալով միջնորդել Պատրիարքի առջև՝ կրթաթոշակ

ապահովելու ապագա ուսանողի համար: Առարկելու փաստարկ այլևս չմնաց:

Սկզբում Փարիզն էր: Որոշված էր: Պիտի գնար այնտեղ: Հետո մեջտեղ եկան գերմանական համալսարանները: Խոսք գնաց անգամ Ստոկհոլմի մասին: Սակայն դարձյալ որոշիչ եղավ «Մեծ Մարդու» խոսքը. «Եվրոպայում բոլոր համալսարաններն էլ լավն են, բայց նախևառաջ պիտի ճշտես, թե ինչ ես ուզում դառնալ»: Եվ հետո ավելացրեց. «Ես քեզ չեմ ասում, թե բանաստեղծ դարձիր: Դու բանաստեղծ ես ծնվել և կմնաս բանաստեղծ, բայց ես ուզում եմ, որ բնատուր ձիրքերդ ծառայեցնես նաև ուրիշ, դարձյալ վեհ մի նպատակի: Քո պերճախոսությամբ, քո հռետորական խոսքով և տրամաբանված դատողությամբ դու կարող ես ճնշվածների ու մերժվածների արդարությունը պաշտպանել, ուստի անպայման պիտի Փարիզ մեկնես: Սակայն ուրիշ ձիրքեր էլ ունես: Օրինակ՝ հրաշալի քիմիագետ կդառնայիր և նոր գյուտեր անելով կծառայեիր մարդկությանը, ուստի պիտի մեկնես Գերմանիա...»:

Այդ հանճարեղ մանկավարժը, որ ուսման ամբողջ ընթացքում չափազանց ժլատ էր եղել գովեստների մեջ, հիմա բառեր չէր խնայում Ռուբենի արժանիքները հոր ներկայությամբ վեր հանելու: Հայրը, որ երկար տատանումներից հետո վերջապես զիջել էր, որոշեց, այնուամենայնիվ, իր ուզածով անել. իր որդին պիտի բժիշկ դառնա: Մանավանդ որ Սիլիվրիում և մերձակայքում կարգին բժիշկ չկար և մարդիկ, անհրաժեշտության դեպքում, շատ անգամ ստիպված էին լինում Ռոդոստո կամ նույնիսկ Պոլիս մեկնել:

Ինչո՞ւ է հիշում այս բոլորը, այս էլ որերո՜րդ անգամ, գնացքի մեկնելուց մի քանի րոպե առաջ: Գուցե սա փրկարար միջոց է հարազատների չափազանցված զգացմունքներն ինչ-որ կերպ մեղմելու: Չէ որ այլևս չի կարող, այլևս ուժ չմնաց յուրաքանչյուր անկեղծ ժպիտին, անհամար խորհուրդներին և անգամ արցունքներին համարժեք անդրադառնալ... Ա՜խ, հրաժեշտի այս սպանող ծեսը:

Ահա՛, վերջապես իրեն հանգիստ թողեցին, քանզի բոլորի ուշադրությունը միանգամից դարձավ դեպի տարօրինակ եռյակը, որ դանդաղ ու հանդիսավոր գալիս էր իրենց կողմը. առջևից քայլում է եվրոպական զգեստ հագած բարձրահասակ, քառասունն անց, վեհաշուք տեսքով մի տղամարդ: Նրա ինքնավստահ քայլվածքը, վայելուչ շարժուձևը, դեմքի ազնվական գունատությունը վկայում են, որ սա ամենաբարձր դիրքերում գտնվող մի պաշտոնյա է, մի նշանավոր փաշա, պալատական, վսեմաշուքին մերձ մի անձնավորություն: Չնայած գնացքի մեկնելուն հաշված րոպեներ են մնացել, սակայն քայլում է հանգիստ, հայացքը մի տեսակ ցած գցած, ասես քաշվում է իր բացահայտ գերակայությունից: Նա հատկապես ջոկվում առանձնանում է բազմաթիվ ու բազմազան եվրոպացիներից՝ իր վրա գրավելով անգամ նրանց ինքնագոհ ու ամբարտավան հայացքները:

Ետևից քայլում են երկու հոգի. բարձրահասակ, մոտ քառասուն տարեկան, սակայն գեղեցկության անժխտելի հետքեր պահպանած չիկահեր մի կին: Ստույգ է, որ փաշայի կինն է՝ եվրոպացի և, ամենայն հավանականությամբ, ազնվական տոհմի ժառանգ: Կնոջ կողքից քայլում էր տասնութ-տասնինը տարեկան, չիկահեր, կապուտաչյա, իսկապես գեղեցիկ մի տղա: «Մոր կտորն է», - ասում են նման դեպքերում:

Ոչ մեկի մտքով չէր անցնի, թե այս տղան թուրք է: Անգամ թեք դրված ֆե-

սով: Կատարյալ տևտոն, նորդիկ արարած, և եթե չլիներ իր միջավայրին հատուկ մեղկությունը, որ տպվել էր նրա դեմքին և արտահայտվում էր անգամ զգուշավոր, ասես մեղմասահ շարժումների մեջ, ապա հանգիստ կարելի էր ասել. ահա Նիցշե-ի «չիկահեր դևը»: Սակայն, ինչ-ինչ, գեղեցիկ պատանու սիրունիկ դեմքը նախևառաջ խոսում էր կամքի կատարյալ բացակայության մասին, որն ավելի ընդգծվում և անհեթեթ էր դառնում գլխին դրված մոլոշագույն ֆեսի պատճառով:

Երևում էր, որ մայր ու որդի որոշակիորեն շտապում են, սակայն նրանց առջևից հանդիսավոր ու հանդարտ քայլող հայրը զսպում է նրանց աճապարանքը: Այս եռյակն ուղեկցող զույգ ոստիկաններից մեկն էր միայն, որ գրեթե վազելով առաջ անցավ և փաշային հայտնեց, որ արդեն հասել են, հետո դարձավ և ճամպրուկները բռնած փունջ բեղերով համալին մատի կտրուկ շարժումով մոտ կանչեց: Տարօրինակ խումբը համալի առաջնորդությամբ մտավ վագոն, այնուհետև, կարճ ժամանակից հետո դուրս եկան և ամուսիններն, այս անգամ իրար կողքի կանգնեցին կառամատույցում: Երևում էր, որ կինը չափազանց հուզված է, սակայն տղամարդու դեմքը բացարձակապես ոչինչ չէր ասում: Նա ժառանգել ու յուրովի հարստացրել էր՝ կյանքի բոլոր, նույնիսկ ամենաանկանկալ իրավիճակներում դեմքին ոչինչ չարտահայտելու սերնդե-սերունդ փոխանցվող պալատականի փորձը: Ասիականությանը խառնված սպարտական մի խստամբեր բարեկրթություն կար նրա պահվածքում: Ոչ ոք չտեսավ, թե հրաժեշտից առաջ արդյոք գրկե՞ց, համբուրե՞ց որդուն...

Գնացքի մեկնելուց հաշված րոպեներ առաջ երկու ուղևոր, գրեթե միաժամանակ, մտան բաժնեխցիկ, որտեղ արդեն տեղ էր գրավել Ռուբենը և պատուհանի մոտ կանգնած վերջին հրաժեշտներն էր տալիս հարազատներին: Առաջինը բարձրահասակ, չորուտ, խիստ և ամփոփված դեմքով, քրդի կախ ընկած բեղերով, եվրոպական գլխարկով և, չնայած արևոտ օրվան, սրճագույն անձրևանոցով մի անձնավորություն էր՝ մոտ երեսունհինգ տարեկան: Նա մտավ, գլխով լուռ բարևեց և գրավեց դիմացի՝ ընթացքին հակառակ տեղը:

Նրանից բառացիորեն մի քանի վայրկյան հետո բաժնեխցիկ մտավ անորոշ տարիքի անշուք մի անձնավորություն: Գլխին դրած թեք ֆեսը բացարձակապես ոչինչ չէր ասում նրա ազգության և դավանանքի մասին: Նա կարող էր լինել հույն կամ հայ վաճառականի հանձնակատար, կարող էր լինել նաև սուլթանական բազմաստիճան հիերարխիայի ստորին աստիճաններից մեկը գրավող թուրք կամ դավանափոխ հրեա: Այդ էին վկայում հատկապես նրա չափազանց հաճոյակատար խոսքն ու շարժումը:

Նա գրեթե մինչև գոտկատեղը ծալվելով ողջունեց էֆենդիներին, այնուհետև, ձեռքի տոմսակը Ռուբենին ցույց տալով, ներողություն խնդրեց և ասաց, թե, ըստ երևույթին, իր տեղն այս խցիկում է: Ռուբենը, որ մի աչքով պատուհանի մոտ հավաքված հարազատներին էր ժպտում, մյուսով պարոնին նայում և իր կաշվե ծավալուն դրամապանակի միջից տոմսակը հանում, որոշակիորեն չէր հասկանում, թե ինչ է կատարվում և թե իրենից ինչ են ուզում: Վերջապես տոմսակը հանեց, մեքենայորեն մեկնեց մարդուն և նորից դարձավ իր հարազատների կողմը: Մարդն ուշադիր զննեց այն և զարմացած գոչեց.

- Ա՛յ քեզ բան... Մեկ տեղի վրա երկու տոմս են վաճառել:

Ճիշտ այդ պահին, գնացքը թեթև ցնցվելով, տեղից շարժվեց: Մարդը նորից համեմատեց տոմսերը: Նրա ճմլորած, անարտահայտիչ դեմքին ողբերգական մի հուսահատություն երևաց: Հաշիշի հաճախակի գործածությունից դեղնորակ դարձած նրա բիբերը չռվել էին, աչքերից զարմանալի մի տխրություն էր թափվում: Ասես մի երեխա լիներ, որի ձեռքից բրտորեն և անվերադարձ խլել էին երկար սպասված խաղալիքը: Նա տոմսը վերադարձրեց երիտասարդին և տխուր մրմնջաց.

- Ինչպե՞ս կարելի է...

Հետո գյուտ արածի պես հարցրեց.

- Ե՞րբ եք գնել այդ տոմսը:

- Մեկ ամիս առաջ, տոմսակի վրա նշված է:

- Ես ավելի ուշ եմ վերցրել... - Եվ տխուր եզրակացրեց. - Փաստորեն ինձ խաբել են:

- Բան չկա, էֆենդի, - կարեկցանքով ասաց Ռուբենը: - Դիմեք հսկիչին, նա մի ճար կգտնի:

- Հսկիչին դիմելու հարկ չկա, - վճռական ասաց դռան մեջ կանգնած չիկահեր երիտասարդը՝ փաշայի որդին, որն ակամայից հետևում էր խոսակցությանը: - Իմ խցիկում ազատ տեղ կա...

Այնուհետև, խոսքն ուղղելով իր հասակակցին, ավելացրեց.

- Խնդրեմ, կարող եք տեղափոխվել ինձ մոտ:

Գնացքի ընթացքին հակադիր նստած տղամարդը, որ լուռ հետևում էր տեսարանին, հանդարտ, բայց հակաճառություն չընդունող ձայնով ասաց.

- Դուք ձեր տոմսն ավելի ուշ եք վերցրել, էֆենդի: Սխալմունքի զոհը դուք եք, հետևաբար դուք պիտի ընդունեք այս սիրալիր երիտասարդի հրավերը և այնտեղ սպասեք մինչև հսկիչը գա և վերջ դնի այս թյուրիմացությանը:

«Սիրալիր երիտասարդի» համար բացահայտորեն գերադասելի էր իր հասակակցի հարևանությունը, սակայն ոչ դաստիարակությունը, ոչ էլ ստեղծված կացությունը թույլ չտվեցին հրաժարվելու իր իսկ առաջարկից, և կարկամած մարդը, գլուխն օրորելով մտավ հարևան բաժնեխցիկ:

«...Ըստ որում, ես համոզված եմ, որ սա թյուրիմացություն չէ, այլ իմ անձի դեմ ուղղված դավադրություն, որի նպատակն է ինձ վերջնականապես վարկաբեկել ... փաշայի աչքում և չնորհազուրկ անել: Ես նույնիսկ կարող եմ ասել, թե ով է կազմակերպել այս ստոր պատմությունը: Եվ ի՞նչ նպատակով, որպեսզի իր հարբեցող և խաղամոլ զարմիկին բերի իմ տեղը դնի: Բայց ի՞նչ օգուտ: Մի՞թե անցած ամսին ես չապացուցեցի, որ այն խայտառակ վրիպումի պատճառը ես չէի, այլ ...բեյը, սակայն ինձ լսող չեղավ, իսկ ...բեյի գլխից անգամ մի մաղ չպակասեց:

Ցավը միայն այն չէ, որ այս «թյուրիմացության» պատճառով չկարողացա ինչպես հարկն է կատարել ձեր խստիվ կարգադրությունը՝ ամբողջ ուղևորության ընթացքում նրա կողքին լինել, այլ որ հայտնվեցի մեկ այլ, ոչ պակաս սոսկալի

կացությունմեջ. ինչպես գիտեք, ես չեմ կարողանում ընթացքին հակառակ տեղում ճամփորդել, սրտխառնուք եմ ունենում, նույնիսկ՝ գլխապտույտներ: Բարեբախտաբար, այդ պահին անակնկալ հայտնված Հ. փաշան, մեր ընտանիքի հին բարեկամը, առաջարկեց իր զավակի հետ միևնույն խցիկում ճամփորդել: Փաշայի կրտսեր զավակը՝ Քենան անունով, իր արժանապատիվ հոր պես ազնիվ ու վեհանձն գտնվելով, իր տեղը զիջեց, որ ընթացքի ուղղությամբ էր, և ես հնարավորություն ունեցա ճամփորդության ժամանակ ականջս պատին մոտեցնել, որպեսզի հարևան խցիկի զրույցները լսեմ: Սակայն, մեր պարոնը, որ աչքի է ընկնում պերճախոսությամբ, այս անգամ լուռ էր, եթե չհաշվենք նրա հետ տեղավորված երիտասարդի մի քանի անկարևոր հարցերն ու պատասխանները...»:

Պոլիսը գրեթե չերևաց: Միայն, քիչ ավելի ուշ, իր ծննդավայրի՝ Սիլիվրիի կողքով անցնելիս, ծովը տեսավ և լիալուսնի տակ հստակ գծագրված լողափը՝ ճերմակ ավազով: Գյուղերի լույսերը կայծկլտում էին խավարի մեջ, դանդաղ անհետանում, հետո նորից հայտնվում: Մարմարայով սահող մի քանի շոգենավեր երևացին, որոնք հոգնեցնելու չափ սովորական էին դարձել, իսկ այժմ ուրիշ էին, մի տեսակ խորհրդավոր:

Զնկատեց, թե ինչպես քնով ընկավ: Հետո ինչ-որ աղմուկ արթնացրեց: Բուլղարական սահմանապահներն անձնագրերն էին ստուգում: Իր լռակյաց հարևանի անձնագիրը հավանաբար ինչ-որ բանով դուր չեկավ սահմանապահ զինվորին: Նա ներողություն խնդրեց, դուրս եկավ և քիչ հետո վերադարձավ մի սպայի հետ: Լռակյաց հարևանը բուլղարերեն մի քանի բառ փոխանակեց և սպան անձնագիրը նորից զննելով վերադարձրեց նրան: Այնուհետև Ռուբենի անձնագիրը նայեց և, պատիվ տալով, ֆրանսերեն ասաց.

- Հաճելի ճամփորդություն Բուլղարիայով, պարոն Ռուբեն Զիլինկիրյան:

Սպան չափազանց հմայիչ թվաց Ռուբենին: Առաջին անգամ էր, որ այսպիսի երկար ճանապարհ էր գնում, ուստի հաճելի էր, որ իր տեսած առաջին օտարականն այս համակրելի սպան էր, որ խոսեց անթերի ֆրանսերենով:

Բուլղարացին, անշուշտ, հասկացավ, որ ինքը թրքահպատակ է, բայց թուրք չէ: Եվ գուցե այդ պատճառով ժպտաց: Սակայն նույն, ծայրաստիճան բարեկիրթ ժպիտը պարգևեց նաև դիմացի խոժոռադեմ և լռակյաց պարոնին: Ի դեպ, ո՞վ է սա: Անշուշտ, թուրք չէ, մահմեդական չէ, սակայն շատ նման չէ եվրոպացու... Սպայի հետ բուլղարերեն խոսեց, սակայն անձնագիրը կարծես օսմանյան է...

Քունը նորից հաղթեց նրան: Արթնացավ դռան թակոցից: Լույսն արդեն բացվել էր: Անմիջապես նկատեց, որ դիմացի հարևանը չկա: Պառկած տեղից տեսավ, որ նրա կաշվե սրճագույն ճամպրուկն այլևս վերևում չէ: Որքա՜ն խորն է քնել, որ չի նկատել նրա հեռանալը:

Դռան թակոցը կրկնվեց: Ավելի շուտ, դա թակոց չէր, այլ ասես ճանկռում էին դուռը: Եվ տարօրինակն այն էր, որ դուռը գրեթե կիսաբաց էր:

- Մտե՛ք, - ասաց Ռուբենը: - Դուռը բաց է:

Դռան մեջ երևաց հարևան խցիկի շիկահեր, թուրքը: Նա «բարի լույս» ասաց և խցիկը զննելով բացականչեց.

- Քո հարևանն էլ մեկնե՞ց:

- Չգիտեմ... հավանաբար, - քաղաքավարի պաղությամբ պատասխանեց Ռուբենը: - Համենայն դեպս, դուրս գալը չեմ տեսել, քնած էի:

- Իսկ իմ հարևանը, այն ծերունին, այնպե՛ս էր շտապում, որ կոշիկները մոռացավ գնացքում և հողաթափերով դուրս եկավ... Կներեք, չներկայացա, անունս Քենան է..., - ասաց նա և անկեղծ ժպիտով ձեռքը մեկնեց Ռուբենին:

Տարօրինակ է այս թուրքը: Անշուշտ, համակրելի է թե՛ արտաքինով, թե՛ թուրքերին բնորոշ հաճոյակատարությամբ: Այո, այո, թերևս անկեղծ է... արդեն երևում է, սակայն ի՞նչ է մտքինը...

- Եթե դեմ չեք, գնանք միասին նախաճաշենք..., - ասաց նա, կարծես զարմանալով անծանոթ մարդուն արված իր իսկ առաջարկից: - Գիտեք, ես այստեղ մենակ եմ և սովոր չեմ... Ավելի շուտ, չեմ սիրում մենակ նախաճաշել, շոյված կլինեի, եթե ընկերակցեիք ինձ...

Եվ, առանց սպասելու պատասխանին, ֆրանսերեն ավելացրեց.

- Հագնվեք, իմ խցիկում կսպասեմ ձեզ...

Ասաց ու գնաց՝ առանց պարզելու, թե անծանոթն ընդունո՞ւմ է, արդյոք, իր հրավերը: Թուրք է, անշուշտ, անթերի թրքերեն է խոսում, բայց սա ի՞նչ անակնկալ հրավեր էր... Բոլոր դեպքերում, մերժելը ոչ միայն անքաղաքավարի, այլև վիրավորական է: Այն էլ թուրքի հրավերը... Բացի այդ, մի գավաթ տաք ու զորավոր սուրճն այս ժամին պարզապես հրաշք կլիներ և, ինչո՞ւ ոչ, գուցե այս համակրելի պարոնի հետ:

Քենանն իսկապես սպասում էր նրան: Ոտքը ոտքին գցած պատուհանից անտարբեր նայում էր դուրս: Ռուբենին տեսնելով, ուրախությամբ տեղից ելավ:

- Եթե դեմ չեք, գնանք ռեստորան, այնտեղ ավելի հանգիստ և ավելի հաճելի կլինի... Անհոգ եղեք, ամեն ինչ վճարված է:

Այս մեկն արդեն անակնկալ էր և բավական տհաճ: Նախ, ի՞նչ իրավունք ուներ առանց իր կարծիքն իմանալու վճարել իր նախաճաշի գինը:

- Կարիք չկար, պարոն... Ես բնավ մտադիր չէի նախաճաշս ձեր հաշվին անել, - վճռական ասաց Ռուբենը:

Քենանի դեմքին չարաճճի մի ժպիտ հայտնվեց, հետո լիաթոք հռհռաց.

- Իմ հաշվին չէ, սիրելի պարոն, հայրս է վճարել ճամփորդական գործակալությանը, և այնպիսի մի գումար, որ երկուսովս չէ, այլ տասը հոգով եթե ամեն օր քեֆ անենք դարձյալ չի սպառվի... Այնպես որ եթե չգնանք, դրամն իզուր կորչելու է:

Կացությունը բավական փափուկ էր: Ոչ կարող էր մերժել, ոչ էլ ընդունել այս հրավերը: Այո, երկուսս էլ մեր հայրերի դրամով ենք ճամփորդում, սակայն իր հայրը խստորեն պատվիրել էր չափազանց զուսպ լինել ծախսերի մեջ, վերցնել միայն ամենաանհրաժեշտը և հատկապես արգելել էր ռեստորան մտնել... Ո՛չ, հիմա այլևս մերժել չէր կարող, հրավերը պիտի ընդուներ, սակայն...

- Այնուհանդերձ ես կցանկանայի իմ նախաճաշի համար ի՛նքս վճարել:

Քենանի դեմքին մի անսահման տխրություն իջավ:

- Ափսոս... Թող ձեր ուզածով լինի:

Ռեստորանը պարզապես շլացուցիչ էր: Մանանեխագույն թավշապատ բաղմոցներ, ծոպավոր շքեղ վարագույրներ, որոնց կիսաբացվածքի միջով արագորեն սողանցում էր բնանկարի ժապավենը: Շարժումներն այստեղ հանդարտ են, հանդիսավոր, ձայները զուսպ, երբեմն-երբեմն դանակ-պատառաքաղի կամ բաժակի թեթև չխկոցն է հնչում: Բոլորն, ասես, հնազանդ ու համակերպված, մի կարևոր ծես են կատարում:

Սեղանների կեսն արդեն զբաղված էր: Քենանն աչք ածեց և Ռուբենին, ձեռքի շարժումով, առաջարկեց գրավել ազատ սեղաններից մեկը, սակայն նստելուն պես, գրեթե չշնջալով, հարցրեց.

- Դեմ չե՞ք, որ մեր տեղերը փոխենք: Այնտեղ մի գեղեցիկ կին կա...

Սիրով զիջեց, մանավանդ որ ռեստորանում եղած բոլոր կանայք գեղեցիկ թվացին:

Նրանց դլխավերևում անմիջապես հայտնվեց մատուցողը: Նա այնպիսի պատկառաշուք տեսք ուներ, որ կարելի էր կարծել, թե առնվազն եվրոպական միջին մեծության մի երկրի վարչապետ է: Նույնիսկ վայել չէր այդպիսի մարդուն պատվիրել, որ նախաճաշ բերի: Սակայն Քենանը բավական կտրուկ, թերևս մի քիչ էլ սանձարձակ խոսեց նրա հետ: Գուցե արդեն սովոր է...

Իսկապես եղեմ է, կատարյալ վայելք՝ այս շքեղ կահավորումի մեջ նստած, այս ընտիր հասարակության ներկայությամբ, հանգիստ ու ծույլ շարժումներով, անիվների օրորող չխկչխկոցի տակ առավոտյան սուրճդ առնես և կապիկի անթաքույց հետաքրքրասիրությամբ եվրոպացի կանանց աչքերի մեջ նայես, մատուցողների կատվաքայլ ու հեզասահ երթուդարձին հետևես... Այո, սա Եվրոպա է... Թվում է, թե ոչ մեկը թուրքերեն չի խոսում, բերանների շարժումից, անդամ այս լռությունից կարելի է կռահել... Միայն ֆրանսերենը, անգլերենը, նույնիսկ հոխորտացող գերմաներենը կարելի է այսպես բարեկիրթ շշնջալ, մինչդեռ թուրքերենը գոռալու, վիրավորելու, ստորացնելու լեզու է... Անգամ այս հղկված թուրքի բերանում... Որտեղի՞ց հայտնվեց այս տարօրինակ տղան: Երևում է, որ այս ամենը սովորական է նրա համար և, ըստ երևույթին, բավական չփացած է... Ահա թե ինչ է նշանակում ճանապարհ գնալ: Նման հանդիպումը Պոլսում երբեք, ոչ մի դեպքում չէր կարող տեղի ունենալ, մինչդեռ ճանապարհը կարծես ջնջում է ազգությունների, դասակարգերի և անգամ կրոնների միջև եղած տարբերությունները...

- Ես նույնիսկ մոռացա հարցնել, թե ո՞ւր եք գնում:

- Շվեյցարիա... Լոզան, - պատասխանեց Ռուբենը:

Քենանը, տեղից վեր ցատկելով, երեխայի պես ծափ զարկեց:

- Ուսանելո՞ւ...

- Այո:

- Միայն թե չասեք, թե փաստաբան եք ուզում դառնալ:

- Ընդամենը բժիշկ:

- Անկեղծ ասած, ես էլ սկզբում ուզում էի բժշկություն ուսանել, սակայն հայրս հակառակ էր, պնդում էր, որ անպայման Փարիզ գնամ և Զինվորական Վարժարան ընդունվեմ: Ինքը ժամանակին այնտեղ է սովորել..., - հետո կտրուկ

անցումով հարցրեց. - Ես ձեզ չասացի՞, որ մայրս Ֆրանսուհի է, և, կհավատա՞ք. հենց նա չուզեց, որ ես Փարիզ գնամ... Տարօրինակ է, չէ՞, և գիտե՞ս ինչու...

Քենանը ծոցագրպանից մի լուսանկար հանեց և մեկնեց Ռուբենին: Տասնհինգ-տասնվեց տարեկան եվրոպացի աղջիկ՝ ոսկեգանգուր մազերով կատարյալ մի հրեշտակ՝ նվաղկոտ աչքերով: Քենանը, հաղթական ժպիտը դեմքին, ասաց.

- Գեղեցիկ է, չէ՞: Մորաքրոջս աղջիկն է... Այս ամառ միասին Իշխանաց կղզիներում անցկացրինք..., - հետո խորհրդավոր ձայնով ավելացրեց. - Անկողնիցս դուրս չէր գալիս... Հիմա հասկացա՞ր, թե մայրս ինչու էր դեմ, որ Փարիզ գնամ...

Քենանն, առանց նկատելու, արդեն անցել էր «դու»-ին: Եվ այդ անցումը շատ անբռնազբոս եղավ: Ասես բնության ղավակ լինի այս տղան... և բավական չփացած զավակը:

- Մեկ հատ էլ սուրճ չխմե՞նք, - հարցրեց նա և, առանց պատասխանի սպասելու, ավելացրեց. - Գուցե մի բաժակ էլ օղի՞...

Թերևս, անպայմա՛ն: Այո, նաև օղի, ճիշտ ժամանակին է, այս օրորող, այս հաճելի մթնոլորտին պատշաճող և, իհարկե, այս բարձրակարգ ծխախոտի հետ, որ արդեն առաջարկվում է:

- Գիտեք, հայրս շատ է սիրում հայերին, շատ բարձր է գնահատում...

- Իսկ ինչո՞ւ հատկապես հայերին:

- Որովհետև դուք հայ եք, այդպես չէ՞...

Երկուսով միանգամից և անբռնազբոս ծիծաղեցին:

- Իսկ ինչի՞ց իմացաք, որ հայ եմ:

- Որովհետև, երբ անցանք ձեր կողքով, դուք հայերեն էիք խոսում:

Նորից ծիծաղ և դարձյալ անբռնազբոս:

- Իսկ հասկանո՞ւմ եք հայերեն:

- Շատ քիչ, հատուկենտ բառեր... Համենայն դեպս, հայերենը զանազանում եմ հունարենից... Հորս մոտ բազմաթիվ հայ պաշտոնյաներ կան, և ինքը շատ գոհ է նրանցից... Մեր ընտանիքի բժիշկն էլ հայ է... Հայրս միշտ ասում է, որ եթե ուզում ենք մեր երկիրը զարգացնել, հայերին պիտի ավելի շատ տեղ տանք:

Իր հայրն էլ, ինչպեսև «Մեծ Մարդը» մի քանի անգամ, մասնավոր զրույցների ժամանակ, ասել էին, որ Թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ կան, անգամ նրանց մեջ, ովքեր մերձ են սուլթանին, որոնք իսկապես բարձր են գնահատում հայերին, սակայն չեն կարող շատ բան անել, քանզի պայմանները...

Անիվների միալար աղմուկը, գնացքի թեթևակի ճոճքը, օղին, ռեստորանի հարմարավետ միջավայրը, մի տեսակ թմբիր իջեցրին: Զնայած հաճելի զրույցին և միանգամից ծնված մտերմությանը, Ռուբենը ցանկացավ առանձնանալ՝ պարզապես մի քիչ մտորելու համար: Զրուցակիցն, ասես, կանխելով նրա ցանկությունը, ինքն առաջարկեց վերադառնալ խցիկ, նախապես խոստում կորզելով, որ պիտի միասին ընթրեն:

Բուլղարիայի լեռնային բնանկարներով հիացած, աննկատ, քնով ընկավ: Արթնացավ ուժգին երաժշտությունից և կրակոցներից: Ի՞նչ է պատահել...

Ահա, նորից կրակեցին... Սակայն, երեսը պատուհանի ապակուն հպելով և ոստիկանի ճարպոտ, բեղավոր ու ժպտուն դեմքը տեսնելով, հանգստացավ: Գինով գյուղացիների մի խումբ ճանապարհ էր դնում մի քանի երիտասարդի: Ձեռքներին որսորդական հրացաններ կային: Երևում էր, որ ունևոր մարդիկ են: Գուցե դա էր պատճառը, որ ոստիկանը, խմբին մոտեցած, քծնալից ժպիտը դեմքին, հրացանները մատնանշելով, հավանաբար խնդրում էր, որ չկրակեն: Նրանց կողքին մի ամբողջ նվագախումբ էր կանգնած, որ ուղեկցում էր հարբած խմբի անկանոն երգեցողությանը: Մեղեդին այնքան լավն էր, որ անգամ այս խառնիխուռն կատարմամբ հնչում էր հուզիչ ու սրտառուչ: Չնայած այդ մարդկանց վայրագ կերպարանքներին, առինքնող մի նախնականություն կար նրանցում: Սերբական Պիրոտ կայարանն էր: Ոչ, սա դեռ Եվրոպան չէ, սա լավագույն դեպքում Եվրոպայի նախադուռն է, չնայած այս վայրագ ու գինով մարդիկ սլավոններ են, քրիստոնյաներ և շատ բաներով մեզ՝ հայերիս եղբայրակից:

Հիմա նկատեց, որ Քենանն աննկատ մտել է ներս և, իր կողքին կանգնած, զարմանքի և նույնիսկ վախի արտահայտությունը դեմքին նայում է դուրս: «Բայց սրանք բարբարոսներ են...», - հազիվ լսելի արտասանեց նա: Իմաստ չուներ առարկել, ոչ միայն, որ չէր հասկանա, այլև որ ստույգ ինքը չէր խոսում իր բերանով: Հայերին սիրո խոստովանություն էր անում, որովհետև հայրն էր այդպես խոսել, իսկ իր հողի վրա քեֆ անող սերբերին անվանում է «բարբարոս», որովհետև դարձյալ հայրիկը կամ մեկ ուրիշ անբեկանելի հեղինակություն իրեն այդպես է ասել:

Իսկապես տարօրինակ է ստացվում ամեն ինչ: Մեկնումին նախորդած ամբողջ շաբաթվա ընթացքում հազար ու մի խորհուրդ և հորդոր լսեց իր հորից, ավագ եղբայր Քերոբից և, անշուշտ, «Մեծ Մարդուց»՝ ճանապարհի ընթացքում դրամն ապահով պահելու, կանանց հետ ոչ մի գործ չունենալու, կտրականապես զերծ մնալու պատահական հանդիպումներից, ուղեկիցների հետ զրույցի չբռնվելու, իսկ եթե ստիպված ես խոսել, ապա միայն անվտանգ բաներից, և հատկապես ո՛չ մի դեպքում ոչինչ չխոսել քաղաքականությունից: «Ամեն տեսակ մարդիկ կան, չգիտես, թե ուր կհասցնեն քո խոսքը և ինչ հետևանքներ կունենա»:

Որքան հիշում էր, որքան լսել էր մեծերից, Օսմանյան կայսրության մեջ հայերը վաղուց ի վեր փակ բերանով էին ապրում: Եվ թվում էր, թե այդ խորհուրդները շարունակ կրկնելու կարիք չկա: Բայց հայրն իմաստուն մարդ էր: Նա լավ գիտեր, որ հեռավոր ճամփորդության գնացողը, մանավանդ անփորձ պատանին կարծում է, թե սահմանն անցնելով՝ բոլոր չարիքները թողեց իր թիկունքում:

Ինքը հիմա, արդյոք, այդպե՞ս է կարծում: Ամենևին: Անհոգության կամ անպատասխանատվության որևէ փաստ չհիշեց: Իսկ այս Քենա՞նը: Այո, պատահական ծանոթություն է, բայց տղան պատահական մեկը չէ, հայրը գուցե ողջուներ այս կապը, ի վերջո, փաշայի որդի է, բարեկիրթ, մյուս թուրքերից հաճելիորեն տարբեր մի անձնավորություն: Եվ հետո ինքը՝ Ռուբենը, գրեթե ոչինչ չխոսեց այդ տղայի ներկայությամբ: Ընդհակառակը, Քենանն այնքան շատախոս է, որ դիմացինին բերանը բացելու հնարավորություն չի տալիս: Իսկ գու-

ցե հետին նպատակներով է այդպես անկեղծ ներկայանում, որպեսզի ես էլ, իմ հերթին, անկեղծանամ... Ոչ, ոչ, երևում է, որ իսկապես չփացած և միամիտ տղա է: Սակայն, ի՞նչ իմանաս, ավելի լավ է զգույշ լինել...

- Վաղն առավոտյան Բուդապեշտ ենք հասնում... Այնտեղ եղե՞լ ես, - հարցրեց նա և, իր սովորության համաձայն, առանց պատասխանի սպասելու, ավելացրեց. - Հրաշալի քաղաք է, ի՜նչ աղջիկներ կան, դժվելու բան է...

Ռուբենն անմիջապես հիշեց Բերայի «Պտի Շան» սրճարանի մսուտ հունգարուհուն, որ իր ծավալուն կրծքերը գրեթե ամբողջությամբ բացած, պղնձագույն մազերն ուսերն ի վար թափած, կոկորդը պատռելու չափ գերմաներեն էր երգում և մսերը շարժելով պարում:

Ընկերները երկրորդ անգամ էին գալիս և կարոտալի հայացքով նայում երգչուհուն, ասես, լավ իմանալով, որ իրենց բաժին չի հասնելու: Բեմի առջևը չորս սպա էին նստած և աչքերով հոշոտում էին հունգարուհուն: Որոշակիորեն երևում էր, որ սպասում են ավարտին, որպեսզի համեղ պատառը մեջ-մեջ անեն: Դա իր տեսած առաջին և վերջին հունդարուհին էր: Ընկերները երրորդ անգամ գնացին նրան աչքերով վայելելու: Ինքը բնավ ցանկություն չունեցավ միանալ նրանց:

- Բուդապեշտում մեկ ժամ ենք կանդնելու: Կարող ենք նույնիսկ քաղաքում զբոսնել, - ասաց Քենանը և ավելացրեց. - Առավոտյան պատրաստ եղիր, որ ժամանակ չկորցնենք:

Առավոտ կանուխ երկուսն էլ, կաղմ ու պատրաստ, սպասում էին գնացքի կանգնելուն: Լույսը բացվելուն պես Ռուբենն արդեն ոտքի վրա էր և պատուհանից հմայված նայում էր սքանչելի բնանկարը: Ոչ, գեղեցկությունը չէր, որ հմայեց նրան, այլ ծայրահեղ խնամվածությունը, մարդկային օգտակար աշխատանքի հետքերը յուրաքանչյուր քայլի վրա: Փաստորեն հիմա նոր դուրս եկավ Օսմանյան կայսրության սահմաններից, քանզի, ճիշտ է, թե՛ Բուլղարիան, թե՛ Սերբիան արդեն երեսուն տարի կլինի, ինչ ազատվել են օսմանյան հպատակությունից, սակայն չեն ազատվել թուրքական ներկայության հետքերից, որոնք հստակ նկատվում են յուրաքանչյուր կայարանում, մարդկանց տեսքի, անգամ օդի մեջ: Մինչդեռ փոփոխությունն այստեղ կտրուկ էր, միանգամից: Հիմա արդեն կարող էր ասել, որ իսկապես Եվրոպայում է: Եվ իր տեսած առաջին «Եվրոպան» ծայրեծայր կանաչ էր, գրեթե զմրուխտյա: Մի տեսակ անդորր կար դաշտերում, իսկ բարետես և հաղթանդամ գեղջուկները ոչ թե աշխատում, այլ, ասես, զվարճանում էին: Ահա, ճիշտ այսպես անդորր գեղեցկությամբ էր մշտապես պատկերացրել Եվրոպան: Տարօրինակ է, որ Բուլղարիայի և Սերբիայի լեռնային հրաշք բնանկարները տեսավ, գնահատեց, նույնիսկ հիացավ, սակայն չոգևորվեց այնքան, որքան հիմա, քանզի սա իմաստավորված, մարդու մասնակցությամբ ծնված, ուստի մարդուն երջանկացնող գեղեցկություն էր: Այսպես էր ձևավորվել նրա պատկերացման մեջ «Եվրոպա» հասկացությունը, որպես բանական աշխատանքի, որպես մարդկային օգտակար գործունեության շարունակ կուտակվող մի արդյունք: Ահա ինչու հիմա համոզվելով, որ ճիշտ էր իր պատկերացումների մեջ, հիանում էր կոկիկ ու խնամված կանաչ դաշտերով:

Բուդապեշտի կայարանն էլ ճիշտ այսպիսին էր պատկերացնում. մարդաշ-

ատ, աղմկոտ, մասմաքուր, առանց քստմնելի վերքերով ու խոցերով ծածկված մուրացկանների, առանց գարշահոտ, յոթը տակ ծալված համալների, առանց քոսոտ ու անտեր շների, իսկ եվրոպացիք էլ իսկապես եվրոպացի են, իրենց բնական կենցաղի ու շրջապատի մեջ, և ոչ թե հակադրված փաթթոցավոր կամ, լավագույն դեպքում, ֆեսավոր ասիացուն: Եվ հատկապես շշմեցնող էր մեկը մյուսից գեղեցիկ կանանց և աղջիկների գերառատությունը: Բոլոր խավերի, բոլոր տեսակների, բոլոր ճաշակների համար, և գրեթե բոլորը շիկահեր: Ըստ որում, պարզ հագնված, միջին կամ ստորին խավի աղջիկը նույնքան է գեղեցիկ, որքան վերնախավի տիկինը կամ օրիորդը:

Առաջին անգամն էր, որ այսքան գեղեցկություն տեսնում էր միանգամից, մի փոքրիկ վայրում, պարզապես կանգնած տեղից: Պարտադիր չէր, որ քայլեր, փնտրեր, այլ բավական էր քաշվել մի կողմ, կռթնել պատին և հանգիստ վայելել նրանց անցուդարձը: Նույնիսկ հեռավոր միտք անցավ գլխով. Եդեմն արդեն առջևդ է, վե՛րջ ճամփորդությանը, հանիր ճամպրուկներդ գնացքից և վերջնականապես հաստատվիր այս քաղաքում, այստեղ էլ պիտի համալսարան լինի, այստեղ էլ կարելի է բժիշկ դառնալ: Եվ, ամենակարևորը, այսքան շիկահեր գլուխներ և այսքան կապույտ աչքեր ուրիշ տեղ չես տեսնի:

Մտածեց այդ մասին, միաժամանակ ղգալով ակնթարթի մեջ հայտնված դաղափարի խենթությունը... Մեղավոր չէր, որ իր ուղեղի հետին խորշերում այդպիսի հանդուգն ծրագիր հղացավ, որի պատճառն ու բացատրությունն անմիջապես գտավ. այն երկրում, որտեղ ապրել է իր բոլոր քսան տարիները, ոչ միայն կանացի մարմնի վայելումը, այլև կանացի գեղեցկության հայեցումը համարվել է մասնավոր բացարձակ սեփականություն և կինն ամեն կերպ թաքցվել է կողմնակի հայացքներից:

Իր հանդուգն և անակնկալ ցանկության բացատրությունը տեղնուտեղը գտնելուց հետո, հիմա արդեն սառը ուղեղով, բայց տաք ու տրոփուն սրտով վայելում էր գեղեցիկ կանանց տողանցումը: «Զարմանում եմ, տղաս, - ասում էր **Մեծ Մարդը**, *- թե այդքան տրամաբանող և վերլուծող ուղեղով ինչպե՞ս ես կարողանում բանաստեղծություններ գրել»:*

Քենանը, որն առաջին անգամը չէր այցելում այս քաղաքը, հավանաբար նույնպես զարմացած էր: «Կարծես սուլթանի հարեմն ազատ են արձակել», - կատակեց նա: Նա ցանկություն ուներ կառք վարձել և մի պտույտ անել քաղաքում: Առաջարկն, անշուշտ, գայթակղիչ էր, բայց մի քիչ անխոհեմ: Մեկ ժամն առանձնապես մեծ բան չէր: Կարող էին ուշանալ գնացքից: Բացի այդ, կայարանն էլ պակաս հետաքրքիր չէր: Ուստի մոտակա սրճարաններից մեկում արագորեն նախաճաշելուց և հունգարական հոյակապ ծիրանի օղին վայելելուց հետո, որոշեցին իրենց աչքերը շոյել այս հաճելի հայեցումով:

Աստիճանաբար սկսեց նկատել ոչ միայն իգական, այլև մյուս կեսը և ընդհանրապես հարաշարժ ամբոխն իր ամբողջության մեջ: Ծայրահեղություններն, ասես, ընդգծված չէին, ինչպես արևելքում. կային շքեղ ու գեղեցիկ ղգեստներ և համեստ, բայց կոկիկ ու մաքուր հագնվածներ, որը հավանաբար աղքատության նշան չէր:

Աչքի էր զարնում զինվորականների, մանավանդ բարետես ու ձիգ սպաների առատությունը: Նրանք թուրք սպաների պես ամբարտավան տեսք չունեին, այլ ժպտուն էին, քաղաքավարի և բարեհամբույր: Այնուհանդերձ, եթե ոչ մտահոգող, ապա առնվազն տարօրինակ տպավորություն էր թողնում նրանց զանգվածային ներկայությունը կայարանում:

Քաղաքացիական ղեկտա հագած տղամարդիկ հատուկենտ էին, և նրանք մի տեսակ քաշված էին, ասես մեղավորության արտահայտություն կար դեմքներին, որ պատերազմի աստծուն ծառայելուց զատ այլ արհեստ են բանեցնում: Դրության տերը համազգեստավոր տղամարդն էր, իսկ գեղեցիկ կանայք ու աղջիկներն էլ, ասես, եկել էին նրանց ճանապարհելու: Բայց դեպի ո՞ւր...

Ահա երիտասարդ սպաների մի խումբ բարձրաձայն ծիծաղելով մոտենում է իրենց: Նրանցից մեկն անսպասելի հայացքը հառեց Քենանին ասաց.

- Nézzék csak, uraim, azt a furcsa németet. török fezt biggyesztett a fejére !*

Ընկերները շրջվեցին և ժպիտով նայեցին շիկահեր, բայց ֆեսավոր թուրքին: Քենանը բազուկի պես կարմրեց և Ռուբենին դարձավ.

- Ի՞նչ կա, ինչո՞ւ այդպես նայեցին...

Պե՞տք էր արդյոք ասել, թե հունգարացի սպաներին մոլոշագույն ֆեսը զվարճացրեց: Միևնույն է, չի հասկանա և անպայման կվիրավորվի: Բացի այդ, ինքը՝ Ռուբենը, որ հիմա գլխաբաց է, ուրիշ մտորումների առիթ կտա այս չփացած պատանուն: Սակայն Քենանը, հավանաբար, ինքը կռահեց անչար ծիծաղի պատճառը. ֆեսը հանեց և, մազերը շտկելուց հետո, խնամքով ծալեց ու խոթեց ծոցը: Ամեն ինչ կատարվեց լուռ, առանց մի բառ ասելու:

Ժամանակն արագ էր անցնում: Գնացքի մեկնելուն մնացել էր տաստասներկու րոպե: Առանց աճապարելու, բեռնավորված ամբոխի միջով, քայլեցին դեպի իրենց վագոնը, որ առաջին դծի վրա էր, ուղղակի կառամատույցին: Հանկարծ մի տեսարան միանգամից գրավեց երկուսի ուշադրությունը:

Կայարանի հիմնական դռնից մի փոքրաթիվ թափոր դուրս եկավ, շքեղ հագնված պարոնների ու տիկնանց մի խումբ՝ բեռնակիրներով շրջապատված: Նրանց կենտրոնում, երիտասարդ, շլացուցիչ գեղեցկությամբ մի կին էր, անթերի դեմքին չափազանց վայելող փետրաղարդ մի գլխարկով: Նա քայլում էր հանգիստ, ինքնավստահ, հովանոցը, երբեմն-երբեմն, հպելով գետնին:

Ռուբենը միանգամից մեխվեց տեղում, ասես, անկարող որևէ շարժում անելու: Այդպիսի գեղեցիկ կին դեռ չէր տեսել: Կարծես հիմա, առարկայականորեն, հասկացավ գեղեցկության հարաբերականությունը: Մեկ ժամվա մեջ, այս կայարանի բազմամարդ ամբոխում տեսած բոլոր գեղեցկուհիները միանգամից խամրեցին: «Ահա կին, որի համար ամեն խենթություն կարելի է անել», - փաստեց նրա ուղեղը, այս անգամ չառաջարկելով հանդուգն մտքի բացատրությունը: Քենանն էլ, անշուշտ, նկատել էր և բերանը բաց հետևում էր կնոջ անշտապ ու հանդիսավոր երթին:

---

* Նայեցեք, պարոնայք, այս տարօրինակ գերմանացուն, որ թուրքական ֆես է դրել (հունգար.):

- Ազնվական է, կոմսուհի, - ասաց նա: - Զինանշանը տես ճամպրուկների վրա:

Իսկապես, նրա ետևից եկող բեռնակիրները բերում էին մոտ երկու տասնյակ, կաշվե չքեղ ճամպրուկներ, որոնցից մի քանիսի վրա երևում էին տոհմական միևնույն զինանշանները: Սակայն առանց դրա էլ երևում էր, որ այս կինն ազնվական է ոչ միայն ծագումով, այլև էությամբ, տեսակով, իր արտակարգ գեղեցկությամբ: Դեմքը չափազանց նուրբ էր, երկարավուն և գունատ ճերմակությամբ, աչքերը մոխրագույն էին, մազերը՝ սևին տվող մուգ շագանակագույն: Կնոջ համար նա կհամարվեր միջահասակ, սակայն կառուցիկ մարմինը բարձր հասակի պատրանք էր ստեղծում:

Իր եթերայնությամբ նա հատկապես առանձնանում էր՝ քիչ առաջ Ռուբենին և Քենանին հրապուրած մոտ, կրծքեղ, վարդագույն այտերով, կլորիկ ու պինդ նստուկներով հունգարուհիներից: Այդ սիրունիկ ու առողջ սպասուհիները, ուսանողուհիներն ու քաղքենուհիներն, անշուշտ, հարուցում էին երկրային ու լիովին առողջ ցանկություններ, սակայն այս կինը կարծես ասում էր, որ իսկական սերը միայն ցանկությունը չէ, միայն հողը չէ, այլև երկինքը: Իմաստություն, որին եթե փորձառությամբ չէր հասել պատանի բանաստեղծը, ապա տանջող կարոտի պես միշտ զգացել էր իր ներսում:

Կոմսուհուն ուղեկցող երկու կանայք երևում էր, որ նույնպես ազնվական են և նույնպես՝ գեղեցիկ, սակայն այս պահին ստվերում էին մնացել: Նրանց ետևից քայլում էին երկու տղամարդ. մի բարձրաստիճան զինվորական՝ պսպղացող միակնոցով և մի պատկառաչուք պարոն՝ կարճ մորուքով: Թափորն ամփոփում էին երեք բեռնակիրները(նրանցից մեկը հանդիսավորությամբ տանում էր ծաղկեփնջերի հսկա խուրձը) և երկու սիրունատես աղախինները:

Կոմսուհին, հավանաբար, պիտի ուղեկից դառնար մեր երիտասարդներին, բայց ուրիշ, չքեղ և հարմարավետ պայմաններում՝ սալոն-վագոնում: Թափորն այդ ուղղությամբ էլ քայլեց, իսկ երիտասարդները, չնայած արդեն իրենց վագոնի կողքին էին, հմայվածի պես հետևեցին նրանց...

«...Կոմսուհի ...-ը իր ուղեկիցների հետ (բարոնուհի Գ.-ն՝ Ավստրո-Հունգարիայի կայսերական պալատի առաջին տիկնանցից մեկը, իշխանուհի Կ.-ն՝ Հունգարիայի խոշոր կալվածատերերից մեկի դուստրը, հեծելազորի գնդապետ, իշխան Դյերդ Շ.-ն՝ Ավստրո-Հունգարիայի ռազմական նախարարության գլխավոր շտաբի հրամանատարի երկրորդ տեղակալ՝ գեներալ Միկլոշ Շ.-ի կրտսեր եղբայրը, և Հունգարիայի Արդյունաբերական բանկի տնօրենների խորհրդի նախագահ Էդվին Ռոզենֆելդը: Վերջին երկուսը Բուդապեշտում հայտնի են որպես կոմսուհու ամենամտերիմ բարեկամներ: Առաջինը՝ գնդապետը, պարտքերի մեջ է խրվել կոմսուհու քմայքները բավարարելու համար, մյուսը՝ բանկիրը, պարբերաբար փակում է կոմսուհու պարտքերը, որոնք հետապնդում են նրան՝ խաղատնից-խաղատուն: Ի դեպ, սալոն-վագոնի ուղևորության բոլոր ծախսերը վճարել է նույնինքը բանկիրը:

Այս մանրամասները, ինչպես և կոմսուհու հեռավոր ու մոտիկ բոլոր բարեկամների ցուցակը՝ ամենահետին մանրամասներով, ըստ ձեր պահանջի ես ներկայացրել էի ժամանակին: Ինչ վերաբերում է տվյալ ուղևորությանը, ապա ես լավ եմ հիշում, որ դրա ամբողջական և մանրակրկիտ նկարագրությունը պիտի հանձնվեր ավարտից հետո, պայմանավորված վայրում: Սակայն հարկ եմ համարում այսօր իսկ ձեր ուշադրությունը սևեռել կասկածահարույց և խորհրդավոր միջադեպի վրա, որ տեղի ունեցավ կայարանում:

Գնացքի մեկնելուն մնում էր հինգ րոպե, կոմսուհին վերոհիշյալ անձանց հրաժեշտ էր տալիս իր վագոնի մոտ: Այդ պահին կոմսուհուն մոտեցավ նրա հեռավոր ազգականը՝ հեծելազորի երիտասարդ լեյտենանտ կոմս Իշտվան ...-ը, իր երկու ընկերների ուղեկցությամբ: Նրանց կողքից քայլում էր բեռնակիրը՝ կարմիր վարդերի հսկայական մի զամբյուղով: Երիտասարդ լեյտենանտի և նրա ընկերների երեսներից դատելով, անքուն գիշեր էին անցկացրել: Լեյտենանտը նախ մոտեցավ գնդապետին ու պատիվ տվեց, այնուհետև, համբուրելով տիկնանց ձեռքերը, վարդերի զամբյուղը մատուցեց կոմսուհուն: Կոմսուհին, սակայն, նայում էր ոչ թե լեյտենանտին, այլ իրենց խմբից քիչ հեռու կանգնած երկու երիտասարդներին, որոնցից մեկն, ինչպես պարզվեց, օսմանյան բանակի նշանավոր գեներալներից մեկի որդին է և անցած ձմռանն այստեղ, Բուդապեշտում, աչքի ընկավ սկանդալային պատմություններով, որոնց պատճառով օսմանյան հյուպատոսը պաշտոնապես ներողություն խնդրեց:

Կասկածահարույցը, սակայն մյուսն էր. միջահասակ, մոտ քսան տարեկան, մազերը ետ սանրած, սև աչքերով և բարետես արտաքինով: Կոմսուհին, նրա ուղեկիցները և հատկապես լեյտենանտը սրան էին նայում ծայրահեղ զարմանքով, և անծանոթ երիտասարդն էլ, իր հերթին, նույնպիսի զարմանքով նայում էր լեյտենանտին: Եվ լուրջ պատճառ կար զարմանալու. փաշայի որդուն ուղեկցող երիտասարդը և լեյտենանտը, ասես, երկվորյակ եղբայրներ լինեին. նույն հասակը, նույն դեմքը, մազերի և աչքերի միևնույն գույնը, նույն արտահայտությունը: Միակ տարբերությունը հագուստն էր, և եթե անծանոթ երիտասարդն էլ հեծելազորի սպայի համազգեստ հագներ, ապա հարազատ մայրն անգամ նրանց չէր ջոկի իրարից:

Կոմսուհին ձեռքի շարժումով մոտ կանչեց անծանոթ երիտասարդին և, սկզբում գերմաներեն, այնուհետև ֆրանսերեն, հարցրեց.

- Դուք էլ եք եկե՞լ ինձ ճանապարհելու... հապա ինչո՞ւ վարդեր չեք բերել...

Երիտասարդը չափազանց հուզված պատասխանեց.

- Ոչ, տիկին... Ես այս գնացքի ուղևորներից եմ...

Այդ ժամանակ, կոմսուհին դառնալով լեյտենանտին, ասաց.

- Ահ, Իշտվան, դուք ինձ այսպես ավելի եք դուր գալիս:

Ներկաները ծիծաղեցին, իսկ կոմսուհին ավելացրեց.

- Շնորհակալ եմ վարդերի համար: Դուք կարող եք վերադառնալ զորանոց և հանգիստ մնալ... վերջիվերջո ինձ հետ նույն գնացքում եք լինելու: - Այնուհետև կոմսուհին դիմեց անծանոթ երիտասարդին. - Իսկ կարո՞ղ եմ իմանալ, թե ուր եք գնում:

- Լոզան, - պատասխանեց երիտասարդը, առաջացնելով բոլորի քրքիջը:

- Շնորհակալ եմ, Իշտվան, - ասաց կոմսուհին, - դուք իսկական ասպետ եք, չէ՞ որ մինչև վերջ ուղեկցելու եք ինձ:

Քիչ ավելի ուշ ես կարողացա պարզել, որ անծանոթ երիտասարդը ազգակցական ոչ մի կապ չունի լեյտենանտի, բնականաբար, և կոմսուհու հետ: Նա գալիս է Կոնստանդնուպոլսից, թուրքահպատակ է, դավանանքով՝ հայ քրիստոնյա, անունն է՝ Ռուբեն Զիլինկիրյան: Նա իսկապես ուղևորվում է Լոզան՝ տեղի համալսարանում բժշկություն ուսանելու»:

Քենանը ոչ մի կերպ չէր կարողանում հանդարտվել:

- Լսի՛ր, - բորբոքված ասում էր նա, - դու չտեսա՞ր, թե կոմսուհին ինչպես էր նայում քեզ, դու չնկատեցի՞ր նրա դեմքի արտահայտությունը...

- Ոչ, - շփոթված պատասխանեց Ռուբենը. - Ես նրան չէի նայում:

Զուզեց խոստովանել, որ հազիվ մի ակնթարթ համարձակվեց նայել կոմսուհու դեմքին, նրա աչքերի մեջ և, տեղնուտեղը, հայացքն իջեցրեց՝ ոչ այնքան ամոթխածությունից, որքան կոմսուհու աչքերի մեղմ, բայց այրող կրակից:

- Դու նրան դուր եկար, հավատա ինձ... և լսեցի՞ր, նա էլ է Լոզան գնում:

- Հետո ի՞նչ:

- Հետո այն, որ առիթ ստեղծիր նրան հանդիպելու, մտերմանալու... համոզված եղիր, հաջողություն կունենաս:

Ռուբենն ինքն էլ նկատեց, որ կոմսուհին միայն պարզ հետաքրքրասիրությունից չխոսեց, նրա աչքերի մեջ ուրիշ մի բան կար, գրեթե առաջարկ, որ միայն աչքերով կարելի է ասել և որը ոչ մի բառ այդքան լավ չի արտահայտի... Բացի այդ, արժանապատվության հարց կար: Մերժվելու պարագայում չափազանց ստորացված կզգար իրեն: Պետք չէ շատ ոգևորվել, քանզի որքան ավելի ուժգին լինի ցանկությունը, այնքան ավելի սաստիկ՝ մերժումի ցավը: Ուստի օձիքն ազատելու համար պատասխանեց.

- Հետո ի՞նչ, որ գալիս է Լոզան: Որտե՞ղ պիտի գտնեմ նրան...

- Այդպիսի նշանավոր կնոջ գալստյան լուրը թերթերն անպայման կհայտնեն, իսկ հասցեն գտնելը դժվար չի լինի...

- Լսիր, ես չեմ կարող քաղաքով մեկ վազել և այդ կնոջը փնտրել: Վերջապես, ես ուրիշ նպատակներով եմ գնում այնտեղ: Եվ հետո, ընդունենք, որ եթե այդ զուգադիպությունը... այդ նմանությունը չլիներ, կոմսուհին հազիվ թե նկատեր ինձ...

- Թերևս, - համաձայնեց Քենանը: - Գոնե այդ տղային ուշադիր նայեցի՞ր... Երկվորյակներն այդքան նման չեն լինում իրար, ինչպես դուք երկուսդ... Նույնիսկ ձայներն էին նմանվում:

Հետո Քենանի ոգևորությունը միանգամից մարեց և դեմքին լրջության, թե մտահոգության պես մի բան հայտնվեց:

- Դու տեսա՞ր, թե սպաների այն խումբն ինչպես նայեց ինձ: Նկատեցի՞ր նրանց հեգնական ժպիտը:

Ռուբենը փորձեց սրտապնդել տղային.

- Առանձնապես բան չկար, մանավանդ որ նրանց ժպիտը հեգնական չէր, այլ բարեկամական:

- Համաձայն եմ, եղածը մի բան չէր, սակայն ժպիտն իսկապես հեգնական էր... Եվ գիտե՞ս ինչու, որովհետև այդ եվրոպացիք, մանավանդ այդ գոռող և ինքնադոհ մադյարները վերևից են նայում մեզ՝ օսմանցիներիս... ի դեպ, նաև քեզ...

Ինչո՞ւ նաև իրեն, և որպես ի՞նչ: Որպես իր պատահական ուղեկի՞ց, որպես Օսմանյան կայսրության քաղաքացի՞, թե որպես հայ: Քենանը չճշտեց, և կարիք չկար փորփրել այդ նյութը, հայտնի չէ, թե ուր կտաներ, մանավանդ որ վիրավորական չեշտեր չդրեց այդ բառերի մեջ: Քենանը, սակայն, իր պարագայում, իրավացի էր: Ջէ, այս տղան հիմար չէ, որոշ բաներ հասկանում է: Բայց դոնե փորձո՞ւմ է արդար մտոք բացատրել այդ արհամարհանքը:

Նկատեց, որ Քենանը հիմա սկսում է մի զրույց, որից հատկապես, ամենախստագույն կերպով, իրեն խորհուրդ էին տվել հեռու մնալ: Սակայն իր ուղեկիցը նորից խոսում էր՝ առանց սպասելու մյուսի պատասխանին:

- Նրանք շարունակ ինչ-որ բաներ են հիշում մեր անցյալից: Բայց այսօրվա օսմանցիք երեկվանը չեն, մենք փոխվել ենք, շատ ենք փոխվել... և մենք ուզում ենք ավելի առաջ գնալ... Այդպես չէ՞:

- Այո, փոփոխություններ կան:

- Հայրս ասում է, որ եթե օսմանցիք քաղաքակրթվեն, ապա մեր երկիրը կդառնա աշխարհի ամենաերջանիկ անկյունը, իսկ մենք ամենալուսավոր ազգը...

Հետո, ժպտալով նայեց Ռուբենին.

- Ահա թե ինչու է գնահատում հայերին, իսկ հույներին շատ չի վստահում, ասում է, թե ծածկամիտ և հիշաչար ժողովուրդ են, որ մինչև հիմա քեն են պահել Կոնստանդնուպոլսի համար...

- Սակայն, դառնանք հունդարացի սպաներին: Նրանք բոլորը չգիտեն մեր ներկան, մանավանդ մեր ցանկությունները, և հետո, նրանց ժպիտն այդքան գոռոզ ու արհամարհական չէր, ինչպես քեզ թվաց...

- Թերևս, - համաձայնեց Քենանը և սև ռեդինգոտի գրպանից հանեց չարաբաստիկ ֆեսը: - Մեղավորը սա է, - ասաց նա՝ նայելով ձեռքին բռնած արաբական գլխարկին, որ դարձել էր մի ամբողջ կայսրության զատորոշիչ նշանը, եթե ոչ օսմանցիության խորհրդանիշը:

Հետո, անսպասելի, տեղից վեր կացավ, մոտեցավ պատուհանին, արագորեն բացեց և ֆեսը կտրուկ շարժումով դուրս նետեց: Նա, գլուխը դուրս հանած, երկար նայում էր իր անձը, իր ազգությունը, վերջապես, իր երկիրը ծիծաղելի դարձնող (ինչպես իրեն էր թվում) մուգ կարմիր խորհրդանշին: Ծխի թանձր քուլաները լցվեցին խցիկ:

- Փակի՛ր պատուհանը, - գոռաց Ռուբենը: - Հիմա կխեղդվենք այստեղ:

Քենանն, ասես, դժկամությամբ անսալով կարգադրությանը, պատուհանը փակեց և քամուց խառնված մազերը շտկեց: Ճակատը մի քիչ մրոտվել էր:

- Գլխարկը չէ մեղավորը, այլ գլուխը, - ժպտալով ասաց Ռուբենը:

- Գլուխն արդեն փոխվել է, ժամանակն է և գլխարկը փոխել... Ես երբեք

չեմ սիրել այդ ֆեսը: Ավելի շատ եվրոպական գլխարկներ եմ սիրում, սակայն հայրս է ստիպում, ասում է, թե սա մեր՝ օսմանցու հպարտությունն է, որ հենց սրանով ենք տարբերվում մյուս ազգերից:

Նա մի պահ լռեց, հետո ավելացրեց.

- Լողան հասնելուն պես ծղոտի գլխարկ պիտի գնեմ, ինձ շատ է սազում:

- Իսկ երբ վերադառնաս տուն, ի՞նչ պիտի ասես հորդ:

- Կասեմ, որ կորցրել եմ կամ... գողացել են:

- Եվ հետո, Պոլսում, հորդ ներկայությամբ նորից ֆես պիտի դնե՞ս:

- Այո, իհարկե...

Ռուբենը լռեց, գտնելով, որ այս նյութի շուրջ զրույցը շարունակելն անիմաստ է: Բացի այդ, ուզում էր հիմա մենակ մնալ, առաջիկա մեկ-երկու ժամը: Երեկ երեկոյան, ընթրիքից հետո, երբ թեթևակի գինով էր, ցանկություն ունեցավ մի բանաստեղծություն սկսել, սակայն ինքն էլ չզգաց, թե ինչպես, իր մտքերն ու հույզերն արձակ տողերով շարադրվեցին: Ձեռքն էր տանում իրեն, և տետրակի երեք էջը լցվեց մանր ու խիտ ձեռագրով: Ի վերջո, գրածն ավելի շատ ճամփորդական տպավորություններ էին, քան բանաստեղծություն: Հետաքրքիր է, թե ինչու այդպես ստացվեց: Մինչ այդ, գրիչը վերցնելուց առաջ արդեն գիտեր, թե ինչ է գրելու: Մնում էր միայն լավ շարադրել: Սակայն հիմա, ասես, զորավոր մի բան եկավ իր կամքը թելադրեց: Ուզում էր մենակ մնալ, հասկանալ, թե ինչ կատարվեց իր հետ, սակայն ձանձրույթից պատեպատ խփվող այս տղան եկել և առաջարկում էր ռեստորան գնալ և հունգարական «Տոկայ» խմել, անշուշտ, այդ գինուն պատշաճող ձկան ապուրի հետ՝ կծու, բայց սոսկալի համեղ: Ֆրանսիացու և օսմանցու այս զավակը և՛ գինու, և՛ ձկան լավից է հասկանում: Քիմք ունի: Հավանաբար, օձիքն ազատելու միակ միջոցը նրան ենթարկվելն է:

Գնացքի ռեստորաններն իրենց մասնահատուկ հմայքն ունեն: Այստեղ մշտական հաճախորդների չես հանդիպի: Այս անգամ հասարակությունն, իսկապես, ընտիր էր: Բայց աղմկալից: Հիմնականում երկու լեզու էր լսվում. հունգարերեն՝ բարձրաձայն և գերմաներեն՝ զուսպ, գրեթե շշուկով:

Հազիվ նստել և պատրաստվում էին պատվիրել, երբ մի երիտասարդ սպասավոր մոտեցավ Ռուբենին և տոհմական զինանշանով զարդարված մի ծրար հանձնեց, որից շատ նուրբ և հաճելի օծանելիքի հոտ էր գալիս: Ծրարը պարունակում էր մի մեծ այցետոմս՝ նույնպիսի զինանշանով, որից քիչ վար, ֆրանսերեն գրված էր.

«Սիրելի Պարոն,

Չեմ կարող թաքցնել, որ ձեր խորհրդավոր հայտնությունն, այսօր առավոտյան, ինձ պարզապես ապշեցրեց: Տա Աստված, որ դուք ձեր «երկվորյակին» միայն արտաքինով նմանվեք: Հուսամ կհամոզվեմ դրանում, եթե շնորհ անեք այսօր երեկոյան ընթրելու ինձ հետ: Երիտասարդ սպասավորը ձեզ կուղեկցի:

Հաճեցեք, Սիրելի Պարոն, ընդունել անկեղծ զգացմունքներիս հավաստիքը:

Ձերդ՝ Կոմսուհի...»:

Քենանը, որ անմիջապես հասկացել էր, թե ծրարն ումից է, պատկառան-

քի արտահայտությունը դեմքին, բերանը բաց նայում էր: Նա ընդամենը մեկ հարց տվեց.

- Ի՞նչ է գրում:

- Հրավիրում է ընթրելու:

- Միայն քե՞զ...

- Կարծում եմ՝ միայն ինձ:

- Հապա ինչո՞ւ ես նստել:

- Զգիտեմ, մի տեսակ անսովոր է:

- Շատ վիրավորական կլինի, եթե չգնաս:

- Հասկանում եմ, բայց թող խելքի գամ:

Հիմա նկատեց, որ ծրարը հանձնած սպասավորը համբերատար սպասում է իր վճռին: Ճամփորդությունը վերածվում էր արկածախնդրության: Նա պատկերացնում էր հանգիստ ու մենակ մի ուղևորություն, և մանավանդ լուռ, առանց ավելորդ հարցուպատասխանի, առանց կասկածելի ծանոթությունների: Մինչդեռ ճիշտ հակառակն էր կատարվում: Սակայն մի՞թե կոմսուհու պես կինը կարող է կասկածելի համարվել: Ինչպիսի՜ զառանցանք... Այս ծրարն ու այցեքարտը եթե ցույց տա ընկերներին, նախանձից պիտի պայթեն... Իսկ ծնողները հազիվ թե պախարակեն նման ծանոթություն հաստատելու համար:

Վարանումի պատճառն, այնուհանդերձ, ուրիշ էր. ի՞նչ պիտի խոսի կոմսուհու հետ, ինչպե՞ս պիտի պահի իրեն, որ ծիծաղելի չերևա... Արդյոք մենա՞կ է, թե ուրիշ հյուրեր էլ կան, իր դասակարգի մարդիկ, որոնց կողքին ինքը՝ համեստ ուսանողացուն... Եվ հետո, իր հագուստը պատշա՞ճ է, վայելո՞ւչ է նման այցելության համար:

Աչքի պոչով զննեց ռեստորանում նստած ապահով ու բարեկեցիկ եվրոպացիների հագուստը, կոշիկները: Ոչ մի տարբերություն չնկատեց: Երախտագիտական բացառիկ զգացմունքներով հիշեց հորը, որ ուղևորությունից առաջ հոգաց այս ամենի մասին՝ բոլոր անհրաժեշտ զգեստները պատվիրելով Պոլսի հայ դերձակներից մեկի մոտ: Հիմա տեսավ, որ իր արդիական ու վայելուչ հագուստով ինքը բնավ չի զիջում այս ազմկարար հունգարացիներին և նրբաճաշակ վիեննացիներին: Եվ հետո, միանգամից տրամաբանեց. կոմսուհին իրեն առայժմ միայն արտաքինով գիտի, ուստի եթե ինքը հարկ եղածի պես հագնված չլիներ, մի՞թե կհրավիրվեր ընթրիքի: Այս վերջին փաստարկը նրան արիություն հաղորդեց: Ներողություն հայցող հայացքով նայեց սեղանակցին և սպասավորին խնդրեց ուղեկցել կոմսուհու մոտ:

Ռուբենը նկատեց, թե սպասավորն ինչպիսի հարգալից ժպիտով և սիրալիրությամբ ընդունեց իր խնդրանքը: Ասես իր վաղեմի ծանոթին է տեսել: Գուցե սա ևս իրեն «երկվորյակի» տեղն է դրել կամ գուցե կարծում է, թե ես կոմսուհու շրջանակի մարդկանցից եմ...

Չէ՞ որ վարինը ձգտում է վեր: Բնական շարժումը դա է՝ դեպի կատարելագործում, դեպի իդեալը... Եվ հիմա Ռուբենին թվաց, թե երիտասարդ, սիրալիր ու հաճոյակատար սպասավորն իրեն նայում է ներքևից: Հաճելի մի բան կար դրանում, միաժամանակ սուտ, գրեթե խարդախությանը սահմանակցող ակամա

մի արարք, որն իր փոխարեն արել է մեկ ուրիշը, սակայն պատասխանն ինքը պիտի տա:

Զնկատեց, թե ինչպես հասան: Դուռը բացեց կոմսուհու սիրունատես սպասուհիներից մեկը և Ռուբենին հրավիրեց ներս:

Սրահը շատ ընդարձակ չէր, բայց բավական հարմարավետ ու հաճելի: Մուգ կանաչը նրբին կերպով զուգակցում էր կաղնեփայտի երանգներին, իսկ կաշեպատ բազմոցի բաց սրճագույնը համերաշխվում էր այդ գույների հետ: Կահավորումը ստեղծում էր մի մթնոլորտ, որի մեջ, ասես, կարելի էր խոսել միայն ազնիվ ու կարևոր բաների մասին: Բազմոցի կողքի կլոր փոքրիկ սեղանին երեք գիրք կար. «Vulgate»-ն, Ալբեր Սամենի ժողովածուն և Ստանիսլավ Պշիբիշևսկու «Homo sapiens»-ը, որը, հավանաբար, նոր էր ընթերցվում:

Ներս մտավ կոմսուհին: Նրա հագին երեկոյան թեթև զգեստ կար, ուսերին բրդյա շալ էր գցել: Այս անգամ նրա ժպիտը չարաճճի չէր, այլ մեղմ ու սիրալիր: Նա զգույշ մոտեցավ և ձեռքը մեկնեց համբույրի համար: Զարմանալի բնականությամբ արվեց դա, և Ռուբենին այդ ձեռքը թվաց ծանոթ, հարազատ:

- Ձեք ուզո՞ւմ իմանալ, թե ինչպես գտա ձեզ:

Ռուբենը հիմա փաստեց, որ իրար հաջորդող անակնկալների շարքում նույնիսկ չէր մտածել այդ մասին:

- Ես ձեզ ասացի, որ այս գնացքում եմ:

- Այո, բայց այս գնացքում երիտասարդներ շատ կան...

Նա մի լուսանկար ցույց տվեց՝ առավոտյան ճանապարհելու եկած հեծելազորի սպան՝ համազգեստով: Լուսանկարի ետևը գերմաներեն մի երկար տեքստ կար: Ռուբենը նորից զարմանքով փաստեց, թե որքան նման են իրար:

- Ես սպասավորին պատվիրեցի այս երիտասարդին ռեստորանում փնտրել, միայն զգուշացրի, որ համազգեստով չէ, և ինչպես տեսնում եք, նա չսխալվեց:

Կոմսուհու դեմքին մի ակնթարթ հայտնված չարաճճի ժպիտն անհետացավ և նա, ուղիղ նայելով Ռուբենի աչքերի մեջ, հարցրեց.

- Ո՞վ եք դուք, որտեղի՞ց եք և ինչպե՞ս է ձեր անունը:

- Կոնստանդնուպոլսից, հայ և մեկնում եմ Լոզան բժիշկ դառնալու:

Կոմսուհու դեմքին մի անկեղծ զարմանք հայտնվեց.

- Ի՜նչ եք ասում... Այ քեզ զուգադիպություն... Մորս մեծ մայրը հայ ազնվական է եղել... Տրանսիլվանիայում... Տասնութերորդ դարում... [illegible] ի դեպ, նաև քո «երկվորյակի» նախնին: Եթե շատ փորփրենք, հնարավոր է ազգականներ դուրս գանք..., - կոմսուհու դեմքը միանգամից լրջացավ և նա անկեղծ հետաքրքրությամբ հարցրեց. - Իմիջիայլոց, հայերը հիմա որտե՞ղ են...

Ռուբենն ակամայից ցնցվեց և դա չվրիպեց կոմսուհու աչքից:

- Խնդրում եմ ներողամիտ լինեք, հավանաբար իմ հարցը տեղին չէր կամ գուցե... սխալ ձևակերպված:

- Ոչ, ոչ, տիկին, ներողություն խնդրելու հարկ չկա, քանզի ձեր հարցը ոչ միայն տեղին էր, այլև ճիշտ ձևակերպված... չափազանց ճիշտ...

- Շնորհակալ եմ, շատ մեծահոգի եք, բայց, հավանաբար, խնայում եք ինձ:

- Ոչ, տիկին, խնայելու հարկ չկա... Ձեր հարցը պարզ էր ու հանճարեղ. իսկապես, մենք հայերս հիմա որտե՞ղ ենք: Այդ նույն հարցը ինքներս ենք տալիս մեզ, և գիտե՞ք երբվանից, հավանաբար այն ժամանակներից, երբ մեր նախկին, այլևս ջնջված, վերացած աղնվական տոհմերի ներկայացուցիչներն իրենց արյունն էին խառնում Եվրոպայի աղնվազարմ արյան հետ...

- Եվ հիմա ի՞նչ պատասխան եք տալիս այդ հարցին:

- Ինձ թվում է, ավելի ենք խճճվում:

- Հայերի պատմությունը ես վատ գիտեմ, սակայն, որքան հասկանում եմ, դուք վաղուց եք կորցրել ձեր թագավորությունը...

- Այո, մեկ բառով դժվար է բացատրել, երկար ու հին պատմություն է, գուցեև հետաքրքիր, սակայն չէի ուզի ձեզ հոգնեցնել:

- Չնայած ձեր պատմության մանրամասները չգիտեմ, սակայն, հավատացեք, որ շատ լավ հասկանում եմ ձեզ, քանզի մեր ճակատագրերը գրեթե նույնն են եղել...

- Իսկապես՝ գրեթե... միակ տարբերությամբ, որ հայերն, ինչ-որ իմաստով փրկելով Եվրոպան, կորցրեցին իրենց, մասնատվեցին և ցրիվ եկան մի քանի երկրների միջև:

- Եվ հիմա փրկությունն եք որոնում ժամանակին, ձեր ձեռքով փրկված Եվրոպայո՞ւմ... Արդյոք ճի՞շտ հասկայա, - գրեթե կատակին տալով հարցրեց կոմսուհին:

Ռուբենը զարմանքով փաստեց, որ բոլորովին ուրիշ խոսակցություն էր սպասում՝ ավելի աշխարհիկ, առօրյա նյութերի շուրջ, գուցեև մի քիչ անլուրջ, մինչդեռ հիմա իր առջև տեսնում էր խելացի, դիմացինին հասկանալ ձգտող, արդեն կյանքի փորձ ունեցող, բայց դեռևս երիտասարդ մի կին: Ի դեպ, քանի՞ տարեկան կլիներ: Դժվար էր ասել: Կաթնագույն դեմքը կատարելապես ողորկ էր, շատ թեթև, գրեթե անտեսանելի կնճիռներ կային բերանի շուրջ և ճակատին: Կարելի էր ենթադրել, թե նա քսանչորս-քսանհինգ տարեկան է, սակայն աչքերի թափանցող և խորամանկ կայծն ասում էր, որ երեսուն կլինի:

Առաջին անգամ էր, որ այսպիսի բացառիկ կնոջ հետ, առանձին, երես առ երես, զրուցում էր: Նկատեց, որ իրեն աղատ ու անկաշկանդ է զգում, ասես ինքն էլ այդ բարձրաշխարհիկ, այդ փակ ու առանձնաշնորհյալ միջավայրի լիարժեք մի անդամն է, իսկ կոմսուհու հետ, ասես, հին ծանոթներ են:

- Սակայն տարվեցինք խոսքով և մոռացանք մեր ընթրիքի մասին, - ասաց կոմսուհին, սեղմելով դռան մոտ դետեղված էլեկտրական զանգի կոճակը: - Ենթադրում եմ, որ դուք էլ ինձ պես քաղցած եք: Միայն թե ներողամիտ պիտի լինեք և վստահեք իմ ճաշակին: Պատվիրել եմ միակ բանը, որ բարեկամներս խորհուրդ տվեցին ուտել այս ռեստորանում, մնացած ամեն ինչը, նրանց ասելով, պարզապես խոզի կերակուր է...

Մի քանի րոպե անց, երեք սպասավոր ներս բերեցին կերակուրներով, զնգացող բաժակներով ու շշերով բեռնավորված սեղանը: Ռուբենը հմայված նայում էր, թե անթերի ճերմակ հագած սպասավորներն ինչպես մի քանի րոպեում հրաշք արարեցին՝ սրահի կենտրոնում բացելով իսկապես համեստ, բայց հրա-

պուրիչ մի սեղան: Կոմսուհու հայացքից չվրիպեց երիտասարդ հյուրի զարմանքը: Սպասավորներից մեկը, համաձայն կարգի, պիտի մնար մինչև ընթրիքի վերջը, սակայն կոմսուհին նրան ազատ արձակեց:

- Ի դեպ, դուք սնահավատ չե՞ք, - հարցրեց կոմսուհին:

- Ոչ, ընդհակառակը... սակայն ինչո՞ւ եք հարցնում:

- Այսինքն՝ ձեր տարիքում դեռևս սնահավատ չեն, իսկ ես, օրինակ՝ ամեն ինչի մեջ մի նշան եմ տեսնում: Ասենք, ձեր ապշեցնող նմանությունն իմ ազգականի՝ Իշտվանի հետ... Դա ձեզ ոչինչ չի ասո՞ւմ:

Ռուբենը կարկամեց.

- Զգիտեմ, տիկին, իսկապես արտառոց մի բան է... Սակայն այդպիսի նմանություններ հաճախ են հանդիպում:

- Ասում են, թե Արարիչը մեզնից երկու հատ է ստեղծում, մեկն՝ այստեղ, երկրի վրա, մյուսը՝ տիեզերքում, և որ նրանք երբեք իրար չեն հանդիպում... Սակայն Արարիչն այսօր խախտեց իր իսկ սահմանած կարգը:

- Ես չէի ասի, տիկին, թե դա իմ երկրորդն էր, ինչպես դուք բարեհաճեցիք ասել, չէ որ Արարիչի համար կարևորը հոգիների նմանությունն է, մինչդեռ մերը լոկ արտաքին, մարմնական նմանություն էր:

- Շատ ճիշտ ասացիք, առանց իմանալու բուն ճշմարտությունը... Արդեն մեկ ժամ է զրուցում եմ ձեզ հետ և կարող եմ վստահորեն ասել, թե որքան ձեր մարմիններն, այսինքն, արտաքինն է նման, նույնքան էլ ձեր հոգիներն են իրարից տարբեր... Ես կասեի, նույնիսկ, դուք կատարյալ հակադրություն եք...

- Տիկին, շատ կցանկանայի, որպեսզի ինձ հետ համեմատելիս ավելի շատ ձեր ազգականի արժանիքները շահեկանորեն ընդգծվեին:

- Ավա՜ղ, այդպես չէ, այսօր, երբ հաճելի առիթն ունեցա ձեզ ճանաչելու, նրա դատարկ հոգին ավելի անտանելի դարձավ:

- Այնուամենայնիվ, մեղավորության զգացում ունեմ, որ իմ ներկայությամբ կարծես...

- Ոչ, ոչ, - ընդհատեց կոմսուհին: - Մեղավորության մասին խոսք լինել չի կարող, Իշտվանի դատարկ հոգին նորություն չէ... Ես ուրիշ բան էի ուզում ասել:

- Դուք հարցրիք, սնահավա՞տ եմ, արդյոք:

- Այո, ես կասեի, ավելի շուտ, ինչ-որ նշան չեք տեսնո՞ւմ այս հանդիպման մեջ:

- Դժվարանում եմ ասել:

- Դուք, կարծեմ, ասացիք՝ «Եվրոպան փրկելով, կորցրեցիք ձեզ...», կարծեմ այդպես էր:

- Այո, այո:

- Եվ սա ձեր առաջին ուղևորությո՞ւնն է դեպի Եվրոպա:

- Այո, տիկին:

- Դե ի՞նչ, կարծում եմ, այդ նշանի մեկնությունն ավելի դյուրացավ: Գուցե այսպես ասենք. երկու Եվրոպաների անակնկալ հանդիպումը...

- Որո՞նք են այդ երկուսը, տիկին:

- Կայացած և պահպանված:

- Արդյոք ճի՞շտ եմ կռահում, թե որ դերն եք հատկացնում մեզ՝ հայերիս...

- Այո, չեք սխալվում:

- Եվ ինչպիսի՞ն է լինելու այդ երկուսի հանդիպումը, ավելի ճիշտ, ինչի՞ է հանգելու:

- Ես մարգարեություններ չեմ ուզում անել, և հետո ինքներդ կտեսնեք... Կարող եմ միայն ենթադրել, որ ձեզ նման վերլուծող երիտասարդն այդ հանդիպումից շատ բան է քաղելու:

- Ես լավատես եմ, տիկին, և մեծ հույսեր, մեծ սպասումներ ունեմ... Այսինքն՝ բոլորս ունենք, հայերս:

- Ես տեսնում եմ, երիտասարդ, և դա էլ ինձ առիթ է տալիս ենթադրելու, որ այդ հանդիպումը շատ անակնկալներ է բերելու... Իմիջիայլոց, ինչո՞ւ եք որոշել բժշկական բաժնում ուսանել, դուք տրամաբանող միտք ունեք, պերճախոս եք և համոզել գիտեք... Դուք հրաշալի փաստաբան կդառնայիք... Ինչո՞ւ հատկապես բժիշկ:

- Հորս ցանկությունն է, և ես համաձայն եմ նրա հետ... Քանզի մարդկությունը կարծես վերջապես սկսում է թոթափվել մեղքերից, և արդարության սպասավորները շուտով գործազուրկ պիտի դառնան:

- Եվ այդժամ առողջացող հոգին պիտի բուժի հիվանդ մարմի՞նը...

- Ճիշտ այդպես, տիկին:

- Շա՜տ հետաքրքիր է, ես իսկապես չէի մտածել այդ մասին... Եվ որքա՜ն պարզ է ու դյուրին: Սակայն չեք կարծո՞ւմ, որ դրանք, ինչպես ասեմ, հաղորդակցվող անոթներ են, այսինքն՝ մեկի պակասն անդրադառնում է մյուսին:

- Իրավացի եք, տիկին, ինչպեսև մեկի աճը նպաստում է մյուսի աճին:

Կոմսուհին անկեղծորեն ժպտաց.

- Չէ, դուք շատ հետաքրքիր եք, ձեր համոզվածությունն իսկապես վարակիչ է, հիացնող... Կարո՞ղ եմ հուսալ, թե ձեզ նորից կտեսնեմ:

- Անշուշտ, տիկին, դա միայն ձեզնից է կախված:

- Եվ որոշել եք Լոզանո՞ւմ մնալ...

- Այո, թղթերս արդեն համալսարանում են:

- Հրաշալի է, ուրեմն ձեզ գտնելը դժվար չի լինի:

Ընթրիքը վաղուց ավարտվել էր: Կոմսուհին տեղից ելավ, կարծես ազդարարելով հրավերքի ավարտը:

- Ձեզ հետ իսկապես կարելի է անվերջ զրուցել, - ասաց նա: - Սակայն անցած գիշեր գրեթե չեմ քնել:

Հետո հանկարծ մի բան հիշելով հարցրեց.

- Դուք սիրո՞ւմ եք բանաստեղծություն կարդալ:

Ռուբենը ժպտաց:

- Կներեք, ձեզ նման տրամաբանող և ռացիոնալ երիտասարդի համար պոեզիան գուցե ունայն բան է:

- Տիկին, թող անհամեստ չթվա, սակայն այդ ունայնությանը ես ժամեր ու գիշերներ եմ նվիրել:

Նորից անկեղծ զարմանքի ժպիտը փայլեց կոմսուհու դեմքին:

- Դուք գնալով ավելի խորհրդավոր եք դառնում: Շատ կուզեի ձեր բանաստեղծությունները կարդալու պատվին արժանանալ:

- Ավա՛ղ, տիկին, դրանք գրված են հայերեն:

- Դե ի՛նչ, ձեր բանաստեղծությունը թող մնա ինձ համար չբացահայտված մի գաղտնիք:

Նա սեղանին դրված երեք գրքերից առանձնացրեց Սամենի ժողովածուն և տվեց Ռուբենին, փոխարենը երախտագիտական համբույր ստանալով իր մեկնված ձեռքին:

Ինչպես ենթադրվում էր, Քենանն սպասում էր իրեն: Նա, անհամբեր, հարցերի տարափ տեղաց Ռուբենի գլխին: Վերջինս ոչ մի ցանկություն չուներ որևէ մեկի հետ կիսվելու երեկոյի մանրամասների շուրջ: Ուստի որոշեց կարճ կապել: Ասաց, թե գլուխը ցավում է, թե ուրիշ հյուրեր էլ կային, թե տաղտկալի հասարակություն էր և, թե կոմսուհու հետ ընդամենը երկու-երեք նախադասություն փոխանակեց: Ինչպես երևում էր, Ռուբենը համոզեց Թուրքին, ուստի բարի գիշեր մաղթելով քաշվեց իր խցիկը:

* * *

Պակասում է միայն երաժշտությունը, չնայած շուրջբոլորն ամեն ինչ երաժշտություն է: Եվ տարօրինակ է, պարզապես անհավատալի, որ հիմա նկատեց, Լոզան հասնելուց երեսուն օր հետո: Քանզի երեսուն օր բառացիորեն շուրջը նայելու ժամանակ չուներ: Մի հասցե էին տվել, գիշերօթիկ, որտեղ, չափավոր գներով, կարող էր սենյակ վարձել, սնվել և վայելել ուսանող ընկերների բարեկամությունը: Սակայն սենյակ կոչվածը նեղ, մութ և գարշահոտ մի խուց էր, իր հետ բնակվողները չնայած ուսանողի գլխարկ էին դնում, սակայն գրեթե բոլորը մութ անձնավորություններ էին, իսկ ամենաահավորը սնունդն էր. մեկ ամիս շարունակ խոզի տապակած միս ու կարտոֆիլ, որի միապաղաղությունն անհնար էր մեղմել առատորեն քսվող մանանեխով և Վալեի հոյակապ գինիով:

Կացարանի և սնունդի հոգսերին ավելացան համալսարանի անվերջանալի դասերը: Օրվա քսանչորս ժամը եթե հատկացներ հանձնարարված գրքերի ընթերցանությանը, դարձյալ չէր հասցնի բոլորը կարդալ: Այդ բազմազբաղ օրերի մեջ, «Evian programme»-ի «Liste officielle des étrangers»*-ում մի համառոտ լրատվություն կարդաց այն մասին, որ Լոզանի «Beau Rivage» պանդոկում երկու շաբաթ մնալուց հետո Էվիան է ժամանել կոմսուհի Ալիս ...-ը, որը մտադիր է ձմեռն անցկացնել Լեման լճի հարավային ափին: Լրատվության մեջ նաև նշվում էր, որ կոմսուհին ազգակցական կապեր ունի գերմանական, ռուսական, ֆրանսիական և նույնիսկ պորտուգալական ազնվականական մի շարք նշանավոր գերդաստանների հետ:

Անմիջապես հիշեց, թե այդ օրերին մի քանի անգամ անցել է կլասիցիզ-

* «Օտարականների պաշտոնական ցուցակ» (ֆրանս.):

մի ոճով կառուցված այդ չքեղագույն պանդոկի կողքով, որ կանգնած էր թեթևակի վերընթաց բլուրի լանջին, զարմանալի կանաչության մեջ: Նա, որ գյուղացու զավակ չէր, անմիջապես նկատեց խոտի այն նուրբ կանաչադույնը, որն իրենց դաշտերում միայն գարնանն է լինում, այնուհետև, օրերը տաքանալու հետ, այդ ջրանկարային կանաչը հասնում էր զմրուխտյա մգության և հետո դեղնում: Հիմա հոկտեմբերի վերջն էր, ծառերի կեսն արդեն ոսկեդույն էին, մինչդեռ նուրբ կանաչի մեջ բարձրանում էր այդ չքեղ պանդոկը, որտեղ կոմսուհին, իր նմաններին հավաքած, հրաժեշտի երեկո է կազմակերպել, զվարճացել ամբողջ երեկո, հետո, ուրախության ամենաթունդ պահին, հյուրերին հավաքել է ընդարձակ մի սրահում... ի դեպ, քանի՞ հոգի հրավիրած կլիներ, քսա՞ն, երեսո՞ւն, քառասո՞ւն... և ահա այդ քսան-քառասունին իր շուրջը հավաքած, շամպայնի բաժակից ումպ անելով, ասել է. «Իսկ գիտե՞ք, թե ում հետ էի ճամփորդում...»:

Հետաքրքիր է, ինչպես կներկայացներ իրեն կոմսուհին: Հիացա՞ծ, թե հեգնանքով, որպես զվարճալի մի հանդիպում: Հետաքրքիր է, իր անունը հնչե՞լ է այդ օրերին, որևէ մեկին չի պատմե՞լ իր մասին: Իսկ գուցե իսպառ մոռացել է իր գոյությունը... Թերևս, սա ամենահավանականն է: Այս պահին, համենայն դեպս, Ռուբենը մի կարևոր մանրամասն հիշեց. այդ օրն առավոտյան իր արյունը մտրակող հունգարացի առողջ ու փարթամ աղջիկներին տեսնելուց հետո, կոմսուհու հետ անցկացրած երկու ժամվա ընթացքում մարմնական որևէ ցանկություն չունեցավ: Մի՞թե այդպիսի նրբին գեղեցկությունը միայն ողջամտություն է արթնացնում երիտասարդների մեջ: Իսկ գուցե կոմսուհին այդպես ցանկացավ այն երեկո...

Հիմա լճի ափին նստած, այս մեկ ամսվա մեջ երկրորդ, թե երրորդ անդամ հիշեց նրան: Ավելի շուտ հիշեցրին: Քարակույտի մոտ նստած նայում էր դիմացի ափին կայծկլտացող լույսերին: Մի զույգ մոտեցավ և տեղավորվեց քարակույտի մյուս կողմում: Տղան, իր նման ուսանող էր, և դատելով գլխարկից՝ իտալացի* Նրանք երկար համբուրվում էին և հաղիվ լսելի բառեր շշնջում իրար: Հետո լռություն տիրեց և աղջիկն, անսպասելի և բարձրաձայն ասաց. «Այդ լույսերը տեսնո՞ւմ ես դիմացի ափին, Էվիանն է»: Ուրեմն այդտեղ է կոմսուհին հիմա և այդ լույսերից մեկն էլ հավանաբար նրա պատուհանից է առկայծում աշնան այս պարզկա գիշերվա մեջ:

Ինքը ծովի ափին ծնված, ամբողջ կյանքում ծով տեսած, մանկությունը Մարմարայի ամենադեղեցիկ ափերում անցկացրած, հիմա նստել էր Լեմանի ափին, հմայված նայում էր, առես առաջին անդամ էր ջուր տեսնում: Ձնկատեց նույնիսկ, թե ինչպես օրը մթնեց:

Այսօր առավոտյան վերջապես փոխեց հասցեն: Այսուհետ միասին պիտի ապրեր ընկերոջ հետ՝ ձեղնահարկի հարմարավետ ու լուսավոր մի սենյակում: Իրերը տեղափոխելու, տեղավորվելու և մի պատառ հաց ուտելու վրա գնաց ամ-

* Լոզանի համալսարանում ուսանողական գլխարկների վրա զանազան գույների ժապավեններ կային, որ նշում էին, թե տվյալ ուսանողը որ երկրից է:

բողջ առավոտն ու կեսօրը: Ճաշելուց հետո փաստեց, որ, գալուց ի վեր, առաջին անգամ է, երբ օրվա գործերն ավարտվել են, իսկ օրը դեռ չի ավարտվել: Սենյակ բարձրանալու և օրվա մնացած մասն այնտեղ անցկացնելու ոչ մի ցանկություն չուներ: Մնում էր ընդամենը մեկ բան. դուրս գալ և այս ամսվա մեջ առաջին անգամ աննպատակ թափառել:

Նախ մեկ ժամի չափ իր տան մերձակա փողոցներում զբոսնեց: Քաղաքի կենտրոնում էր հաստատվել, Ս. Ֆրանսուայի եկեղեցուց բառացիորեն երկու քայլի վրա՝ Բուրգ փողոցի հինավուրց տներից մեկում: Երբ դուրս եկավ տնից, քիչ հեռվում խոյացող փառահեղ Կաթողիկեի զանգակատունն ազդարարեց երկուսը: Հոյակապ եղանակ էր, աշնան մեղմ արև: Դիմնազիաներից դուրս եկած աշակերտները լցվել էին Սիտեի նեղ փողոցները և երբեմն նույնիսկ անցորդներին քսվելով էին անցնում: Առանձնապես աչքի էին ընկնում 16-17-ամյա չիկահեր, կապուտաչյա և կարմրաթուշ հելվետուհիք: Դեղջկական առողջ եռանդը հորդում էր նրանցից, մայրիչխանական մի ներքին ու զորավոր համոզում կար այս անփորձ աղջնակների մեջ, որ մղում էր նրանց ակնթարթի մեջ ջոկել իրենց հավանած տղամարդուն և նախահարձակ լինել:

Ռուբենն արդեն զգացել էր այդ ինքնամատույց իգության վտանգավոր գրոհները, և միայն իր ապագա ծրագրերի լրջությունը, իր ուսերին ընկած պատասխանատվությունը, ինչպես և ներքին համոզումը, թե այս ամենը ձեռքի տակ է, ուստի հարկ չկա շտապելու, նրա համար առայժմ ապակյա մի պատ էին դարձել: Նա տեսնում էր այդ ամենը, բայց գիտեր, որ իրենից մեկուսացված է մի անորոշ ժամանակով:

Սակայն այսօր, անհոգ մարդու անպատասխանատվությամբ որսում էր այդ գրգռիչ հայացքները, և ոչ միայն աղջնակների: Տևական, թափանցող, բացեիբաց կանչող հայացք ունեին հատկապես երիտասարդ, չքեղ հագնված, շնիկներով կամ առանց զբոսնող որոշ կանայք: Ուսանող ընկերներից արդեն հասցրել էր բավական պիկանտ պատմություններ լսել այդ կարգի կանանց մասին: Դրանք գրեթե բոլորն օտարականներ էին, որոնք այս փոքրիկ, ուսանողական քաղաքում գտել էին իրենց բարձրաշխարհիկ ձանձրույթը փարատելու հիմնական միջոցը:

Միջազգային այս հուշկապարիկների մասին ամենաանհավատալի առասպելներն էին շրջում: Ամենուր կարելի էր տեսնել նրանց, քաղաքի բոլոր տեսարժան վայրերում, քիչ թե շատ համբավավոր սրճարաններում ու ռեստորաններում կամ պարզապես, ինչպես հիմա, փողոցներում անշտապ ու հանդիսավոր իրենց անձը պտտեցնելիս: Առավել հանդուգն մեկ-երկուսը, երբեմն-երբեմն, հայտնվում էին ավտոմեքենայի ղեկին նստած, կաշվե բաճկոն հագած, աչքերը վարորդական խոշոր ակնոցով ծածկած: Դրանցից հատկապես մեկին, չիկահեր մի սկանդինավուհու, Ռուբենը մի քանի անգամ առիթ էր ունեցել տեսնելու: Մեքենան բերում և հանդիսավորապես կանգնեցնում էր բացօդյա սրճարանի առջև, անփույթ իջնում ղեկից, հանում կաշվե սաղավարտը և ակնոցը, չեկ մազերը թափ տալով իջեցնում ուսերն ի վար և իր կաշվե զրահներով ու երկարաճիտ սև, բայց չափազանց նուրբ կոշիկները ճռճռացնելով գալիս առանձին սե-

ղան էր զբաղեցնում և դանդաղ ու անվրդով ռուսական պապիրոսը ծխում մի գավաթ սուրճի հետ: Երբեք, ոչ մի անդամ առիթ չունեցավ այդ կնոջը որևէ տղամարդու հետ տեսնելու: Մի երկու անգամ, սրճարանում, փորձեց նրա հայացքը որսալ, սակայն սառն արհամարհանք տեսավ դեմքին: Թվում էր, թե այդ կինը մետաղից է սարքված:

Հիմա նրանից քիչ հեռու երեք դիմնազիստուհիներ կանգնել բարձրաձայն զրուցում էին: Հայացքով ջոկեց նրանցից մեկին, երևի ամենահամակրելիին: Ս. Ֆրանսուայի հրապարակից թեքվեց դեպի ռյու դյու Պտի Շեն: Աղջիկն զգաց, որ տղան հեռանում է և չարաճճի ժպիտով նայեց նրան: Սակայն Ռուբենն այս պահիս նպատակ չուներ նրան մոտենալու: Պարզապես երեքի միջից նրան էր հավանել: Աղջիկը որոշ ժամանակ նրա առջևից քայլեց, վերջին անգամ հանդուգն ժպիտով նայեց նրան և մտավ առանձնատներից մեկը:

Ռուբենը զառիվար փողոցներով իջավ, վստահ, որ դրանցից մեկն անպայման հասցնելու է լճափ: Ոչ մեկին չէր ուզում հարցնել: Կարող էր խենթի տպավորություն թողնել: Հետո, անմիջապես, մտքով մի դիպուկ, ինչպես իրեն թվաց, համեմատություն անցավ. ինչպես առուներն են լցվում գետ, իսկ հետո՝ ծով, այնպես էլ ինքը հիմա տուվի, թե գետի պես գնում է, ո՛չ, հոսում դեպի լիճ:

Ահա, կարծեմ այստեղ ավարտվում է Լոզանը և սկսվում Ուշին, քաղաքի և լճի միջև ընկած մի տարածք՝ լցված պալատներով, շքեղ պանդոկներով, գեղեցիկ առանձնատներով, որոնց պատուհանները միշտ փակված են արտափեղկերով և ստույգ չես կարող ասել՝ մարդի՞կ են ապրում այնտեղ, թե ուրվականներ:

Զուզեց ամբոխին խառնվել և քայլեց ափի երկայնությամբ՝ նավակների, ղանաղան ռեստորանների և ժամանցի հաստատությունների կողքով: Այս պարապ, բարեկիրթ, կոկիկ և անհոգ մարդիկ կարծես աղավաղում, նույնիսկ պղծում էին հեքիաթային բնանկարը: Զարմանալի էր, ինչպե՞ս էին կարողանում անտարբեր մնալ այս հրաշքի հանդեպ և բարությամբ, վեհությամբ ու ազնվությամբ չլցվել: Ասել չէր լինի, թե կատարելապես անտարբեր են, սակայն ինչո՞ւ էին մնում նույն միապաղաղ արարածները: Իսկ մի՞թե նույնը չէր իր ծննդավայրում. Բոսֆորի չքնաղ բնանկարները որքանո՞վ էին ազնվացրել ու կրթել թուրքին... Թերևս, հակառակն էր կատարվել...

Քիչ հեռվում ժեռ քարերի մամռակալած կույտը երևաց: Սա կարծես չէր խանգարում բնանկարին, այլ իր խորհրդավորությամբ նույնիսկ լրացնում էր համեստորեն:

Այս պահին, երբ նրան ոչ մի գետնաքարշ հոգս չէր հետապնդում, ուզում էր յուրովի տեսնել բնանկարը: Ո՛չ մյուսների պես, որ քիչ հեռվում, գարեջրի գավաթից ումպ անելով, ծուխն անհոգ փչելով, ժպիտը դեմքներին զրուցում էին... Նրանք հացի փշրանքներ էին շպրտում ափին մոտեցող կարապներին, երբեմն-երբեմն ժամացույցը նայում, ասես հիշելով, որ սա մի փոքրիկ հաճույք է կարևոր գործերի արանքում:

Ներքին, անբացատրելի մի իմաստություն, որը չէր ձգտում բառերով վերծանել, նրան ասում էր, թե այսօր, այստեղ մի կարևոր հայտնություն պիտի անի: Եվ հիմա, քարակույտի մոտ նստած, նկատեց, թե առաջին իսկ օրվա-

նից որքան զորավոր է եղել լճի ափ իջնելու ձգտումը, նույնքան էլ այդ քայլից հեռու պահող տարտամ մտավախությունը: Եվ լավ է, որ հիմա այսպես չկազմակերպված, դիպվածական, ինքնահոս կերպով եղավ... «Ջրի պես», - հիշեց նա:

Այդ մտավախությունը հիմա, ափին փչրվող ալիքների (որքան էլ մե՛ծ են այս փոքրիկ, պայտաձև լճի համար) խշշոցի տակ սկսում էր կերպարանք առնել, բացատրելի ու տրամաբանելի դառնալ տեղանքում գտնվող ամեն ինչով:

Նախ նրան զարմացրին ձյունափառ լեռները, որ ասես բարձրանում էին ուղղակի ջրի միջից: Եթե չհաշվեր գնացքի պատուհանից հպանցիկ տեսնված լեռնային բնանկարները, ապա առաջին անգամ էր, որ այսպես, ուղղակի բնության մեջ կանգնած դիտում էր լեռները, այսպես ձյունափառ և իրական: Դրանք թվում էին չափազանց մոտիկ, ասես, մի կես ժամում, կարելի է մոտենալ՝ սառցալեռի պես ուղղակի ջրից բարձրացող այդ հրաշքին:

Ճիշտ դիմացը Սավոյան էր, Ֆրանսիան, որը հիմա մայրամուտի գնացող արևի ճառագայթների տակ փայլում էր պղնձի և ոսկու բոլոր գույներով, արտացոլվում լճի մակերեսին, ստանում կանաչագույն երանգներ: «Պղինձը ջրին չփվելով, անմիջապես ժանգոտում է, կանաչում», - մտածեց նա, ինքն իրենից զարմացած, որ կարողացավ մի պատկերի մեջ քիմիագիտությունը խառնել բանաստեղծության:

Ո՞վ էր ինքը այս գեղեցիկի, այս աստվածային ու մշտական արարումի առջև, ի՞նչ արժեին իր ներշնչանքն ու ոգևորությունը, որ լավագույն դեպքում կարող էին վերածվել բանաստեղծական մի քանի խղճուկ, ծռթած, անշուք տողերի...

Նա մտովին նորից, ասես, դաժան ինքնախարազանումով կրկնեց այդ բառերը. «Այո՛, այո՛, խղճուկ, ծռթած, անշուք...»: Մի՞թե ինքը կարող էր ինչ-որ բան ավելացնել այս ամենին... Այդ դեպքում ավելի ազնիվ չէ՞ր լինի՝ անգործությունից խելագարվող այս ամբոխի պես, երբեմն-երբեմն, գալ այստեղ, մի բաժակ սուրճի առջև նստած հայեցողությամբ լիացնել հոգին, հետո առտնին հոգսերին դառնալ: Սակայն, ո՛չ, ինքը եկել էր հանդուգն նկրտումներով... Ինքը և՛ս գեղեցկություն արարող է, ուստի սա պիտի հանդիպում լիներ, ոչ թե հայեցում, գեղեցկության պարզունակ վայելում, թերևս մսխում...

Սակայն ո՞վ էր ինքը այս ամենի առջև, որ եղել էր իրենից առաջ և պիտի հավերժեր իրենից հետո... Եկել ու հանդգնում է ճեղքել այդ հավերժը և ներմուծվել, թափանցել...

Ինքն առաջինը չէր և ոչ էլ վերջինը: Իրենից առաջ քանի՛ հանճարներ են զմայլվել այս տեսարանով: Ինչե՞ր են մտածել այդ պահին, ավելորդության նույն զգացո՞ւմն է արդյոք մտատանջել նրանց, թե ինչ-որ գաղտնիքի են հաղորդակցվել այս ափերին:

Հոկտեմբերի ավարտն էր, սակայն զարմանալի տաք մի երեկո էր: Խավարն իր հետ բերեց ուրիշ գեղեցկություն և ուրիշ խոհեր: Կարծես հիմա զգաց իր ներկայությունն այստեղ, ազատ, միայն ինքն իր հետ: Հիմա կարծես ինքն էր բնությունը, և մութի մեջ զարմանալի հստակ տեսնում էր իրեն: Ինչ-որ ձայն կանչում էր ներսից: Ի՞նչ է դա, ի՞նքն էր իրեն կանչում, թե կեսօրվա գեղեցկու-

թյան արտացոլումն էր, որ ձևափոխվել դարձել էր իրենը: Ավելի՜ն, գուցե դա ի՜ր արտացոլումն էր, իր իսկ պատկերը, որ կանչում էր՝ հոգով ու մարմնով ձուլվելու այս բնությանը, անէանալ, վերանալու այս աշխարհից...

Արդյոք այսպե՞ս են հասնում նիրվանային: Գուցե էքստա՞զ է սա: Ինչպե՞ս տեղի ունեցավ, չէր կարող բացատրել, միայն մի պահ արթնացավ այդ վիճակից, երբ լսեց քիչ հեռվում նստած ղուլդի խոսակցության պատառիկները, որոնք այնուհետև մարեցին համբույրների մեջ: Իր հասակակիցներն էին, որ սեր էին անում այս խավարի մեջ: Նրանց չէր տեսնում, բայց ասես օդի միջով նրանց մարմինների յուրաքանչյուր թրթիռը հաղորդվում էր իրեն:

Զգաց, որ ինքն էլ, նրանց հետ միասին, սիրո արարչագործությամբ միանում է բնության խորհրդավոր ու անմեկնելի գեղեցկությանը: Եվ հանկարծ մի լույս ճառագեց իր մեջ՝ միանգամից բացելով իր ներկայության գաղտնիքն ու իմաստն այս գեղեցկության դեմ հանդիման: Սիրո լույսն էր դա՝ մաքուր և աստվածային, որ կարող էր ծնվել միայն այս գեղեցկությանը հաղորդվելուց: Բնությունն ինքը սերն էր՝ իր բոլոր դրսևորումներով: Բայց որքա՜ն փխրուն էր և ամեն վայրկյան կորսվելու վտանգի տակ... Եվ որքա՜ն պիտի հսկեր ինքը, որպեսզի այդ լույսը մշտապես ճառագեր իր ներսում:

Այս վերջին հարցականը, սակայն, մտահոգիչ չթվաց նրան, քանզի վստահ էր, որ գտել է գաղտնիքի ճամփան: «Ահա, այսօր ես եկա այստեղ», - փաստեց նա և չնկատեց, թե ինչպես քայլերն իրեն հեռացրին ափից:

* * *

Սենյակն իսկապես հոյակապ է. ընդարձակ, լուսավոր, ճիշտ է, առաստաղը մի քիչ թեք է (ի վերջո, ձեղնահարկ է), սակայն օրվա ուզած ժամին, երկու պատուհաններից, կարող ես վայելել լճի և լեռների հեքիաթային տեսարանը: Տունը քաղաքի բուն կենտրոնում է, միաժամանակ աղմուկից հեռու: Իր սենյակակիցն էլ հայ է, հոյակապ տղա, Լևոն Աղնավուրյան, Ալեքսանդրիայից: Միակ անպատեհությունը, որ սենյակը չորրորդ հարկում է, սակայն քսանամյա ուսանողի համար չորս հարկ բարձրանալը մի՞թե խնդիր է:

Լևոնը վերջացրեց հագնվելը: Ամենայն հանդիսավորությամբ: Հիմա էլ, ամենայն հոգածությամբ, մաղերն է սանրում հայելու առջև:

- Ինչո՞ւ ես այդքան չարչարվում: Կարելի է կարծել, թե կարևոր ժամադրության ես գնում:

- Դու չվեյցարացիներին դեռ լավ չես ճանաչում: Եթե ուզում ես նրանց հարգանքը վայելել, ասա անդամ ընթրիքի իջնելուց պիտի այնպես հագնվես, ասես ոչ թե կարևոր ժամադրության, այլ հարսանիքիդ ես գնում... Բացի այդ, մի կարևոր հանգամանք կա...

- Ի՞նչ հանգամանք:

- Եվրոպացիք իրենք իրենց շատ բաներում կներեն, մինչդեռ մեր հանդեպ չափազանց բծախնդիր են, և ամենաաննշան մանրուքը կարող են տարիներով հիշել:

Լևոնն իրավացի էր: Ճաշասրահի ժողովրդին նայելով՝ չէիր ասի, թե բո-

լորն են հարսանիքի եկել: Օրինակ՝ Էֆրաիմ Կացը՝ Օդեսայից, գզգզված մորուքով, անխնամ մազերով, վրայից մշտապես գինու և ծխախոտի հոտեր են գալիս: Նա նույնպես բժիշկ դառնալու մտադրություն ուներ, արդեն հինգ տարի է ուսանող էր, սակայն այս ընթացքում ավելի շատ ոստիկանության հետ էր գործ ունեցել, քան դասագրքերի: Իսկ այս հաղթանդամ երիտասարդին և նրա ահասարսուռ բուլդոգին նայելով հազիվ թե հարսանիք հիշես. Խոակիմ Պերեսն է, Արգենտինայի վարչապետի որդին, նույնպես բժշկականի ուսանող... Շունն առել, օվկիանոսը կտրել հասել է այստեղ, կարծես Եվրոպայում շներ չկան: Իսկ այն երկու չիկագլուխ պարոնները, որ դեմ դիմաց նստած այդպես խանդաղատալից նայում են իրար, գերմանացիներ են՝ Հիրշֆելդի հովանավորյալները*... Նրանցից մեկը՝ ավելի տարիքովը, մոտ երեսուն տարեկան, նախկին սպա է, որ չգիտես ինչու որոշել է բժիշկ դառնալ: Հավանաբար կարծում է, թե սպանելն ու բուժելը միևնույն բանն են... Այն երկուսը՝ բուլղարացիներ են, որոնք, երբ սկսում են ֆրանսերեն խոսել, ապա ստիպված ես խնդրել, որ բուլղարերենի անցնեն, որպեսզի հասկանաս, թե ինչ են ասում:

- Տասներկու ուսանող կա այստեղ, - եզրափակեց Լևոնը: - Հիմա բոլորը ներկա չեն... Հա՛, Բաբաջանյանին չեմ տեսնում, կովկասահայ է, Թիֆլիսցի... Իր ասելով, փիլիսոփայություն է ուսանում, սակայն, գերազանցապես Լոզանի աղջիկների հետ...

Գիշերօթիկի ճաշասրահը զուսպ էր, բայց ըստ պատշաճի կահավորված և ծայրահեղ մաքուր: Վեց առանձին սեղաններ՝ երկուական աթոռով, բուֆետ, որտեղից առատորեն կարելի է վերցնել հաց, կաթ, սուրճ, շաքար... Եվ շուրջբոլորը ծաղիկներ, ծաղիկներ...

- Ճաշերն այստեղ շատ համեղ են, գոհ պիտի մնաս, - ասաց Լևոնը:

Խոհանոցի դուռը բացվեց և մի կատարյալ հրաշք մտավ ճաշասրահ՝ մատուցարանը ձեռքին: Բարձրահասակ, սլացիկ, ոսկեգույն խոպոպիկներով, երկնագույն չքնաղ աչքերով, նուրբ և մի քիչ վեր ցցված քթիկով, վարդագույն այտերով և սրտիկի նման փոքրիկ բերանով: Ճիշտ և ճիշտ ամանորյա բացիկի վրայից դուրս եկած աղջիկ, հրեշտակային արտահայտությունը դեմքին:

Պերեսը, որ իր շան և աթոռի հետ մոտեցել էր հայերի սեղանին և հասցրել ոչ միայն Ռուբենին ծանոթանալ, այլև հիացմունք հայտնել իր հայ բարեկամների վերաբերյալ, բոլոր «ռ»-երն իսպանավարի վերածելով հնչուն «ր»-ի, բարձրաձայն ասաց.

- Ահա, տես, Ռուբեն, մեր բոլորի սիրտ կոտրողը... Զգույշ եղիր, չսիրահարվես հանկարծ, քեզ էլ կմերժի...

Երևում էր, որ այս և նման ուրիշ կատակներ Պերեսն այնքան էր ասել այս սրահում, որ դրանք սովորական էին դարձել, քանզի ներկաների դեմքին ոչ մի ժպիտ չերևաց, իսկ հայացքներն էլ ավելի շատ մատուցարանի լիքը ափսեներին էին նայում, քան մատուցողին:

---

* **Հիրշֆելդ** - Գերմանացի նշանավոր փաստաբան XIX դարի երկրորդ կեսում, որն առաջինը պաշտպանեց միասեռականների դատը:

Այսպիսի աղջկան չսիրահարվելն իսկապես անկարելի էր, նա ինքը տեղով սերն էր: Դեմքով նման է Վերածննդի վարպետների պատկերած աղեղնավոր Ամուրին, այսինքն՝ իր զոհերին ինքն է նետահարում...

Լիզետ: Այդպես է կոչվում այս հրեշտակը, որ ձեռքը մեկնեց ծանոթանալու և չափազանց շնորհալի շարժումով կնիքսեն սրեց: Որքա՜ն բարեկիրթ, միաժամանակ, որքա՜ն ազատ են այստեղի աղջիկները:

- Պարոնը ի՞նչ կկամենա, սնկի՞, թե հավի ապուր:

- Միևնույն է, թե ինչ, միայն թե քո ձեռքից լինի, - իր հերթական կատակը շպրտեց Պերեսը, որ գերադասեց հայ բարեկամների հետ ընթրել:

Աղջկա դուրս գալուց հետո, Պերեսը, հին բարեկամի պես, Ռուբենի կողը բոթեց և գրեթե չշնչալով ասաց.

- Տես, հա, կատակը մի կողմ, հանկարծ չսիրահարվես...

Սա, կարծես, կատակի շարունակությունն էր, բայց բավական լուրջ ասված: Սակայն այդ նախազգուշացումները, կատակով թե լուրջ, ավելորդ էին, քանզի Ռուբենը սիրահարված աչքերով չէր նայում աղջկան: Ավելի շատ հիացական: Լիզետը չափից ավելի հրեշտակային էր և, չնայած հասուն մարմնին, երեխայական ինչ-որ բան կար մեջը:

Պերեսն աղջկան արդեն մոռացած, բարձրաձայն պատմում էր, թե արգենտինյան-ուրուգվայական միացյալ խումբն, այսօր առավոտյան, անշուշտ, իր ղեկավարությամբ, նավակների մրցմանն է մասնակցել Լեման լճի վրա և հաղթել հատկապես անգլիացիներին:

Ռուբենին, սակայն, սպասարկեց Լիզետի մայրը, տիկին Շապազը, գիշերօթիկի տիրուհին, որին լավ գիտեր, քանի որ սենյակը վարձով տալուց առաջ, մոտ մեկ ժամ իսկական հարցաքննություն արեց՝ բացահայտ ու մանրամասն, և հատկապես ընդգծեց, որ տանել չի կարող խմիչքի հանգեպ թուլություն ունեցող ուսանողներին: Սա ավելի հանդուրժելի էր, քանի որ նախորդ գիշերօթիկի տերը տանել չէր կարող կնամոլ ուսանողներին:

Տիկին Շապազը փաստորեն մենակ էր պահում այս գիշերօթիկը: Աղջկա օգնությունը շատ մեծ չէր, և պարզապես զարմանալ կարելի էր, թե այդ կինն ինչպես է հասցնում ամեն ինչ տեղին, ժամանակին և անթերի կատարել: Եվ այդ ահավոր զբաղվածությամբ հանդերձ չափազանց ուշադիր էր բոլորի հանդեպ և իր արտաքին խստության տակ բարի սիրտ ուներ: Ահա, մսի հսկայական կտորը՝ տապակած կարտոֆիլի առատ հարևանությամբ, դրվեց Ռուբենի առջև:

- Հավանեց քեզ, - աչքով արեց Պերեսը: - Զգույշ կաց...

Բարի և ազնիվ տղա է երևում այս արգենտինացին, սակայն շարունակ անհասկանալի ակնարկներ է անում: Ընթրիքի վերջում առաջարկեց գնալ մի գավաթ գարեջուր խմելու:

- Այս կնոջ պատճառով ես շուտով հրեշտակ կդառնամ... Երկու օր առաջ, սենյակս մաքրելիս, կոնյակի շիշը վերցրել տարել էր մոտը: Հետո վերադարձրեց և ասաց, որ դա վերջինը լինի իր հաստատության ներսում:

Արգենտինացու առաջարկը որքան էլ որ գայթակղիչ էր, այնուամենայ-

նիվ, երկուսն էլ հրաժարվեցին, պատճառաբանելով, որ հաջորդ օրվա դասերը պիտի պատրաստեն:

Սենյակ բարձրանալուն պես, Ռուբենը հարցրեց Լևոնին.

- Ի՞նչ էր ուզում ասել այդ տղան, երբ զգուշացրեց, որ չսիրահարվեմ... Կատա՞կ էր, ինչ է...

- Մի՞թե չգիտես... Այսինքն՝ ընդամենը մեկ ամիս է, ինչ Լոզանում ես: Այդ աղջկա հայրը նշանավոր հարբեցող Սիմոնն է, Վալեի կողմերից եկած գյուղացի: Ազնիվ և բարի մարդ է, սակայն ընդամենը մեկ թուլություն ունի՝ չափազանցված սերը դեպի կիրշը* և տանձի օղին...

- Որքան նկատեցի, այստեղի գյուղացիների սիրած խմիչքը:

- Այո, սակայն Սիմոնի պարագայում այդ սերը դարձել է մի սոսկալի մոլություն... Այն աստիճան, որ օրերով ու շաբաթներով խումհարի մեջ է լինում... Ժամանակին երեք պանդոկ ուներ, որոնք, սակայն, ստիպված են եղել վաճառել, որպեսզի նրա հարբեցողության ավերները մի կերպ շտկեն: Հիմա մնացել է լոկ այս գիշերօթիկը, որն, ինչպես տեսար, տիկին Շապազը մենակ է պահում:

- Ամուսինը ո՞ղջ է:

- Այո, եթե դա կարելի է ողջություն համարել: Կինը վռնդել է նրան:

- Սակայն Լիզետն ի՞նչ գործ ունի այս պատմության հետ, - հարցրեց Ռուբենը, չնայած մոտավորապես կռահել էր, թե ինչն ինչոց է:

- Գործ ունի այնքանով, որ նրա աղջիկն է... Հաճելի բան չէ այդպիսի մարդու դուստրը լինել: Ի դեպ, շատ է կապված հորը... Սակայն, ինչպես ասում են, Լիզետն ընկնավոր է... Մարդ չի ուզում հավատալ... Ես աչքովս չեմ տեսել, բայց պատմում են, որ արդեն մի քանի անգամ հրաշքով են փրկել նրան... Վերջին անգամ բժիշկն ասաց, որ մեղավորը հայրն է...

- Եվ այդ պատճառո՞վ Պերեսն ինձ նախազգուշացրեց: Արդյոք շատ դաժան չէ՞...

- Գուցե, բայց տղան իրավունք ունի... Ի դեպ, համբերիր, դեռ առանձին կխոսի քեզ հետ, հավանաբար, հենց այդ նպատակով էր հրավիրում գարեջուր խմելու... Նա խնայում է քեզ և ավելի շատ՝ աղջկան... Անհնար է նրան չսիրահարվել, իսկ քո պարագայում խնդիրը մի քիչ բարդանում է...

- Ինչո՞ւ:

- Կարծում եմ ինքդ պիտի հասկանաս... Քեզ նման վառվռուն և գրավիչ արևելցին չի կարող նրան միանգամից չհրապուրել... Ջտեսա՞ր ինչպես էր նայում քեզ:

- Ուշադրություն չեմ դարձրել...

- Յուրաքանչյուր նորեկ սիրահարվում է Լիզետին: Անկարելի է չսիրահարվել: Նա ոչ միայն գեղեցիկ է, այլև հոյակապ նկարագիր ունի և չափազանց զգայուն է... Շարունակ նույն պատմությունն է. սկզբում ընդգծված ուշադրություն է, ծաղիկներ, նամակներ, նվերներ, սիրո խոստումներ, նույնիսկ ամուսնական առաջարկներ... Այնուհետև, եղելությունն իմանալուն պես, ամեն ինչ միանգամից կտրվում է... Աղջիկն ուրախանում է, ոգևորվում, իսկ հետո... Կա-

* Կեռասի օղի:

տարյալ ողբերգություն է: Ուստի Պերեսը ճիշտ էր, որ քեզ միանգամից զգուշացրեց: Նա էլ սկզբում հրապուրված էր Լիզետով, սակայն աղնիվ եղավ և խեղդեց իր զգացմունքները:

- Եվ դա համարում ես ազնվություն, - վրդովված գոչեց Ռուբենը:

Եվ, տեղնուտեղը, հարցն ապտակեց նրան. «Իսկ դու ինչպե՞ս կվարվեիր, եթե նրանց տեղը լիներիր»: Զգաց, որ պատասխանել չէր կարող, քանզի գտավ, որ իր վերաբերմունքն այդ աղջկա հանդեպ գնահատող հիացմունքից այն կողմ չանցավ: Կարո՞ղ էր դա վերածվել հրապուրանքի, իսկ հետո սիրո: Ի՞նչ է սերը, իսկական սերը... Զգաց, որ հստակ ոչինչ չի կարող ասել, քանի որ հիմա փաստեց, որ առ այսօր որևէ մեկին չէր սիրել: Իսկ Լիզետի հանդեպ ունեցած հիացմունքը դեռ սեր չէր. մեկ ամսվա ընթացքում քանի՛ անգամ այդպես հիացավ, բայց հո բոլորին չսիրեց...

Այդ դեպքում ի՞նչ է սերը: Ինչո՞ւ այդպես միանգամից իր վրդովմունքը հայտնեց արգենտինացու «ազնվության» առիթով... Սիրո՞ւմ էր, թե պարզապես հրապուրվել էր այդ աղջկանով... Իսկ ինքն ի՞նչ կաներ, ինչպե՞ս կվարվեր, եթե սիրեր Լիզետին, եթե ծաղիկներ նվիրած լիներ, եթե արդեն գրկած, համբուրած լիներ նրան... Մի՞թե ինքը նման արարք կգործեր, մի՞թե վատորեն, վախկոտի պես կլքեր նրան: Ո՛չ, ընդհակառակը, ավելի ջերմորեն կսիրեր, որպեսզի ոչ մի վայրկյան աղջիկն իրեն դժբախտ չզգար:

Աստված այդ աղջկան ուղարկել է մեզ առ ի փորձություն: Մի քանիսն արդեն չդիմացան ու ամոթալի նահանջեցին: Իսկ ինքը կարո՞ղ է դիմանալ... Տարօրինակ մի զգացում ունեցավ: Թվաց, թե ինքը նույնպես պիտի անցնի այդ փորձության միջով... Ինչպե՞ս, չգիտեր: Բայց զգում էր, որ եթե ճակատագիրը բերել հասցրել է այստեղ, ապա չի կարող չտեսնելու դնել... Ինքը ևս պատասխանատու է այդ աղջկա ճակատագրի համար, որ հենց դա է իր առաքելությունն այս երկրային կյանքում՝ հասկացնել, համոզել աղջկան, որ մենակ չէ:

Իսկ հիվանդությո՞ւնը... Մի՞թե դա իրոք անբուժելի է, հիմա, երբ գիտությունը հրաշքներ է գործում, երբ մի քանի տարի հետո բոլոր ախտերի բուժումը պիտի գտնվի... «Քանի դեռ ուշ չէ, Ռուբեն, փոխիր մասնագիտությունդ... Լևոնի պես մեքենայագետ դարձիր, անշունչ մետաղի հետ գործ կունենաս..., - ասում էր իր ներքին ձայնը, - բայց եթե որոշել ես բժիշկ դառնալ, ապա հենց առաջինը պիտի նեցուկ լինես այս թշվառներին...»:

Մտքերի հոսքը միանգամից դադարեց: Մի՞թե կյանքի առօրյա ընթացքից դուրս ընկած ամեն մի փաստը պիտի այսպես ցավագին անդրադառնար նրանում: Ի՞նչ է ապրում հիմա ինքը... Անշուշտ, բարձր, աստվածային մի բան, բայց դա սե՞ր է... Չէ որ ինքը, մյուսները, բոլորն ուրիշ կերպ էին պատկերացնում սերը: Իսկ եթե սեր է, հապա ինչո՞ւ է տառապանքին այդպես նման... Բանաստեղծների գովերգած սիրո վայելքները, քաղցր գգվանքները, քնքույշ զգացումներն ո՞ւր կորան...

Զուզեց միանգամից պատասխան փնտրել: Նաև դյուրին չէր: Կարծես հանրահայտ բոլոր հասկացությունները միանգամից կորցրել էին իրենց իմաստը: Առայժմ զգաց անսխալականորեն, որ ինքն էլ, որպես մարդ արարած, պա-

տասխանատու է այդ աղջկա երջանկության համար: Եվ բնավ կարևոր չէր, այդ զգացումը սե՞ր է, թե ոչ:

* * *

Դասագրքերը բաժանեց երկու մասի: Ձախ կողմում շարվեցին քիմիայի, բնագիտության, բուսաբանության, կենսաբանության և համեմատական անատոմիայի հատորները: Վե՛րջ: Սրանք այլևս հազիվ թե պետք գան, մանավանդ վերջինը: Բավական է, այլևս ցանկություն չունի գորտ և շուն հերձելու:

Հաղթանակողի հայացքով նայեց գրքերի կույտին: Դրանցից յուրաքանչյուրը ծայրեծայր կարդացել էր, մի քանիսը նույնիսկ երկու-երեք անգամ: Եվ լավ էր պահպանել: Հիմա, ուսանողական չգրված օրենքով և, իհարկե, անվճար, պիտի հանձներ հատուկ հանձնախմբին, որն, ըստ սեփական հայեցողության, կտրամադրեր կարիքավոր ուսանողներին կամ, ուսումնական եկող տարվա սկզբին, չափավոր գներով, կվաճառեր որևէ նոր ուսանողի, ինչպես ինքը գնեց վեց ամիս առաջ, կարդալով համալսարանի շքամուտքում կախված բազմաթիվ հայտարարություններից մեկը:

Ուսանողի իր սուղ միջոցներից մի կատարյալ դրամագլուխ ստիպված եղավ ծախսել աջ կողմում դրված նոփ-նոր դասագրքերի համար: Մեկը մյուսից ծավալուն գրքեր. հյուսվածաբանություն, ֆիզիոլոգիա, սաղմնաբանություն... Ձախից մի դասագիրք բերեց աջ. լատիներենն այս տարի էլ պիտի շարունակեր ուսանել՝ լրջորեն, և վերջապես, ամենաբժշկական գիտությունը՝ մարդու անատոմիան, երկու հաստափոր հատոր, մորթազերծ մարդկանց բազմաթիվ պատկերներով և մանավանդ լատինական անթիվ ու անհամար անվանումներով, որոնք սիրածդ բանաստեղծի տողերի պես պիտի անգիր անես:

Այսօր արդեն հասցրեց բավական անվանումներ ճանաչել: Ոչ թե անգիր անել, այլ հատկապես սովորել: Եվ ոչ թե դասագրքից՝ առջևդ դրված, հանգիստ թերթելով, նշումներ անելով, այլ դիահերձարանում, ըստ որում, աշխարհահռչակ դոկտոր Ռուի գլխավորությամբ:

Երկրորդ կիսամյակից սկսած նոր առարկա են անցնում. դիահերձում: «Միայն սրա համար արժեր բժշկական համալսարան մտնել, - ասաց Յուրգեն Կլաուսը, միևնույն գիշերօթիկում բնակվող գերմանացին, նախկին սպան, որ երեսուն տարեկանում որոշել էր բժիշկ դառնալ: - Մնացած ամեն ինչը կարող ես տանն էլ սովորել»:

Կանտոնալ հիվանդանոցի դիահերձարանը տարօրինակ թվաց: Կարծում էր, թե մահվան մռայլ թագավորությունը պիտի մտնի, սակայն առաջին բանը, որ նկատեց, առատ, բառիս բուն իմաստով աչք ծակող լույսն էր, որ անթերի սպիտակ պատերն արտացոլելով, ավելի էր սաստկացնում ճերմակությունը: Օրն արևոտ էր, սակայն Ռուբենին թվաց, թե դիահերձարանի մետաղյա ծանր դարպասը բացվելուն պես, դրսի ցերեկային լույսը մի տեսակ խամրեց ներսից եկող կաթնագույն ու մեռած շողերի դրոհի ներքո:

Սպիտակ խալաթ հագած մի երիտասարդ առաջնորդեց ընդարձակ սպա-

սասրահ, խնդրեց այդտեղ սպասել, հետո մտավ մի սենյակ: Այնտեղից ծիծաղ լսվեց, զվարթ ձայներ և... դանակ-պատառաքաղի զնդոց: Դուռը մնացել էր կիսաբաց: Զկարողացավ դիմադրել գայթակղությանը: Քայլերը դանդաղ բերեցին այդտեղ: Ներսը երեք հոգի ախորժակով ուտում էին: Երեքն էլ սպիտակ խալաթով էին, նրանցից մեկի խալաթին արյան կարմիր բծեր կային: Սենյակը, հավանաբար, պահեստ էր: Պատերն ի վեր բարձրանում էին հատուկ պահարաններ, որտեղ դարակներին, անդուլն հեղուկով լի անոթների մեջ մարդկային մարմնի մասեր էին երևում: Նկատվում էր, որ սեղանը գցել են հապշտապ, գործի արանքում: Անորոշ գույնի սփռոցի վրա ճերմակ հացի մի խոշոր բոքոն կար, շվեյցարական պանրի կոպիտ կտրած կտորներ, իսկ քիչ հեռվում, էլեկտրական օջախի վրա ինչ-որ բան էր տապակվում:

Ուսանողներին ներս բերող երիտասարդը հսկայական շշից ճերմակ գինի մատուցեց բոլորին: Բաժակ զարկեցին լուռ, սովորական դարձած մի շարժումով և շարունակեցին ուտել: Սոսկումով հետ քաշվեց. տապակած մսի կծու հոտն էր դիպել քթին... Ճիշտ այդ պահին, սեղանի մոտ նստածներից ամենատարեցը՝ լերկ գանգով, ըմբիշի հաստ վզով, կասկարմիր երեսով մի հսկա նկատեց ուսանողի սոսկահար հայացքը, ժպտալով նայեց նրան, ձեռքի շարժումով կանչեց ներս և մի դատարկ բաժակ վերցրեց, որ լինի լցնի: Մյուս երկուսը շրջվեցին և կարծես դեմ չէին, որ այս հետաքրքրասեր ուսանողն իրենց հետ խմի: Թվաց, թե հիմա կործկա: Հազիվ կարողացավ իրեն զսպել, լուռ գլխով արեց ի պատասխան հրավերի և հեռացավ դռնից: Կարմիր երեսով մարդը, հավանաբար զվարճալի ինչ-որ բան ասաց և, բոլորով միասին հռհռացին:

Դոկտոր Ռուն երևաց, իրենց դասախոսը: Մի հայացքով ընդգրկեց ուսանողների խումբը, բարևեց և դարձավ դեպի կիսաբաց դուռը:

- Պարոն Ժերար, - կանչեց նա:

Անմիջապես հայտնվեց լերկ դանդով և բոսորագույն երեսով հսկան: Ծամելով մոտեցավ դոկտորին, լուռ գլխով արեց, հետո գնաց և մի դուռ բացեց: Բոլորը հետևեցին նրան:

Մի երկար միջանցք մտան՝ չափազանց ցածր, ճնշող առաստաղով: Թվում էր, թե գլուխը կքսվի առաստաղին, իրար ետևից շարված լույսերին: Միջանցքին հաջորդեց մի մեծ սրահ: Զախից ճերմակ սալիկներով ծածկված պատն էր, երկու փոքրիկ պատուհաններով: Աջից դռների շարան էր, մետաղյա տարօրինակ փականքներով, որոնք միայն դրսից էին բացվում: Դիակներն, ամենայն հավանականությամբ, այդ դռներից անդին էին: Անհասկանալի էր, ի՞նչ կարիք կար հոգեզուրկ մարմիններն այդպես ամուր ու հաստատուն պահել:

Ժերարը մի հաստափոր մասյան բերեց:

- Այս վերջին հինգը երեկ ենք ստացել:

Դոկտոր Ռուն, ուշադիր զննելուց հետո, ասաց.

- 1331-ը:

- Այդ մեկը չենք կարող, ոստիկանության հետաքննությունը դեռ չի վերջացել:

- Այդ դեպքում... 1328-ը: - Հետո հարցրեց. - Վստա՞հ եք, որ քսանութ տարեկան է:

- Նման պարագաներում, սովորաբար, մոտավոր տարիքն է գրվում: Կարծում եմ, որ չենք սխալվում:

- Լավ, բերեք:

Ժերարը մատյանը հրեց մի կողմ, մոտեցավ միջանցքի ծայրի դռանը և բազմազան ու բարդ գործողություններով սկսեց բացել. մի պտուտակն աջ դարձրեց, մյուսը՝ ձախ, մի լծակ տարավ վեր, մյուսը՝ վար, հետո նոր սողնակը քաշեց, ուսով հրեց դուռը և մտավ ներս:

Այդ ընթացքում դոկտոր Ռուն, նկատելի անհանգստությամբ, ետուառաջ էր անում: Մոտ հիսուն տարեկան էր, միջինից ցած, նիհար, ճիգ, չափազանց աշխույժ մի տղամարդ: Ասես սնդիկ լիներ: Երիտասարդի դեմք ուներ, երկնագույն, լուսավոր աչքեր, որ նայում էին շիտակ, առանց հետին մտքի, մազերը շեկ էին, մորուքը կարճ և խնամված: Այդ մարդուց մշտապես եռանդ, վստահություն, վճռականություն և բարություն էր հորդում: Կարող էր ընդհանրապես մանկավարժությամբ չզբաղվել, քանի որ նրա հմուտ վիրահատությանը սպասող բազմաթիվ հիվանդներ կային, որ գալիս էին Եվրոպայի բոլոր անկյուններից: Սակայն զարմանալի սեր ուներ ուսանողների հանդեպ և կարողանում էր անսխալ գտնել ապագա բժշկին, օգնել նրան հաստատվելու, թողնել, որ ներկա գտնվի իր վիրահատություններին:

Այնուհանդերձ, իր ժողովրդականության համար պարտական էր ոչ միայն մասնագիտական բարձր կարողություններին: Նա մեկն էր այն հատուկենտ բժիշկներից, որոնք անվճար բուժում էին աղքատ հիվանդներին, և նա հրահանգում էր ուսանողներին՝ չունևորների հանդեպ լինել անարծաթասեր ու հոգատար:

Ժերարը վերջապես դուրս գլորեց անիվավոր սեղանը: Մարմինն այդտեղ էր, ճերմակ սավանի տակ: Անթերի ճերմակություն: Արյան ոչ մի հետք: Սավանի վրա արդուկի թողած հետքերն էին փայլում: Ինչո՞ւ է ամեն ինչ այսպես անթերի, այսպես անբիծ:

Ժերարն առանց որևէ հարց տալու սեղանը կանգնեցրեց միջանցքի կենտրոնում՝ ոտքերը դեպի դուռը, և գնաց նստեց պատի տակ:

Դոկտոր Ռուն նախ խնդրեց, որ ուսանողներն առաջ չգան, իսկ ինքը մոտեցավ սեղանին, կանգնեց հանգուցյալի գլխավերևը, սավանի ծայրը բարձրացրեց այնպես, որ գլուխը միայն ինքը տեսնի: «Այո, այո, թերևս...», - ասաց նա և նորից ծածկեց: Հետո ուսանողներին հրավիրեց հավաքվել սեղանի ձախ կողմը:

- Այսօր պիտի ուսումնասիրենք դաստակը և բազուկը: Երկուսն էլ արդեն ձեզ ծանոթ են, առայժմ պատկերներից: Մեր աշխատանքը կընթանա հետևյալ կերպ. ես, աստիճանաբար կհերձեմ դաստակը, հետո բազուկը, ձեր առջև կբացեմ յուրաքանչյուր մկանը և դուք..., - մի ժպիտ երևաց նրա դեմքին, - պիտի ինձ հիշեցնեք, թե ինչպես են կոչվում այդ մկանները: Համաձա՞յն եք:

Դիակի հայտնությամբ առաջացած տագնապալի որոշ լարվածությունն անմիջապես ցրվեց: Դոկտոր Ռուն սավանը կողքից զգույշ բարձրացրեց և ձեռքը հանեց դուրս: Կոշտուկներով ծածկված ափը միանգամից բացվեց նրանց

առջև, ասես մուրացկանի պարզած ձեռք լիներ: Լայն թաթ, օրնիբուն բանող և, անշուշտ, երիտասարդ մարդու ձեռք: Իսկ բաղուկը մկանուտ էր, չեկ մազերի խիտ ծածկույթով: Ո՞վ է այս մարդը, ինչի՞ց է մահացել: Հավանաբար, դժբախտ պատահարից: Որովհետև, դատելով ձեռքից, լիովին առողջ է:

Սուր նշտրակը, դոկտոր Ռուի ձեռքում, արդեն սկսել էր կտրտել: Նա ուսանողներին հերթով հրավիրում էր մոտիկից դիտելու յուրաքանչյուր մկանը: Պատի տակ լուռ նստած ժերարը հանկարծ վեր թռավ տեղից և մոտեցավ ուսանողուհիներից մեկին՝ կլորիկ երեսով մի աղջկա՝ Մոսկվայից: Ժերարը ճիշտ ժամանակին բռնեց նրան, քանզի աղջկա ոտքերն արդեն ծալվում էին: Նրա համար ծանոթ տեսարան էր: Աղջկան նստեցրեց հարմարավետ աթոռին և, ամոնիակի լուծույթը քթին մոտեցնելով, անմիջապես ուշքի բերեց:

Սակայն, ինչպես երևում էր, դեռ քաշելիք ուներ: Ռուս օրիորդին հաջորդեց մի լեհ երիտասարդ ազնվականուհի՝ Կրակովից և, ի զարմանս բոլորի, երրորդը եղավ փառահեղ կապիտան Յուրգեն Կլաուսը՝ Էրֆուրտից: Մշտապես ձիգ ու առնական այս տեստոնի դեմքը գունատվեց, նա երկու տակ եղավ և հռնդյունով սկսեց փսխել:

Իրար հաջորդող այս տեսարաններից հետո դասն, ասես, մարտահրավեր դարձավ: Դոկտոր Ռուն անտարբեր նայում էր այդ ամենին: Նրա համար դա սովորական առօրյա էր: Առաջին անգամ այստեղ մտնող ուսանողները, հավանաբար, պիտի անցնեին այդ փորձության միջով: Ուստի, տեսնելով, որ այլևս ուշաթափվել ցանկացողներ չկան, նշտրակը տնկելով, զգույշ հարցրեց.

- Ո՞վ կցանկանար:

Դոկտորին մոտեցավ Օլգան, երիտասարդ մի կին՝ Սանկտ-Պետերբուրգից: Այս մի քանի ամսվա ընթացքում արդեն գրավել էր բոլորի ուշադրությունը ոչ միայն իր նուրբ և խելացի դեմքով, այլև իր բացառիկ նվիրվածությամբ: Նա կենտրոնացած արտահայտությամբ մոտեցավ, վերցրեց նշտրակը և սկսեց հմուտ շարժումներով հերձել:

- Որտե՞ղ եք սովորել այդպես վարժ աշխատել, - հարցրեց դոկտոր Ռուն:

- Ես գթության քույրերի ուսումնարան եմ ավարտել և երկու տարի ռազմական վիրաբույժի օգնական եմ եղել:

Օլգայից զատ ուրիշ ցանկացող չեղավ: Արդեն երկու ժամ կլիներ, ինչ այստեղ էին, և գոկտորը, մի վերջին անգամ մերկացված մկանները մեկ առ մեկ թվարկելով ու ցուցադրելով, դիմեց ուսանողներին.

- Հարցեր չկա՞ն..., - սակայն տեսնելով համընդհանուր լռությունը, ձեռքով նշան արեց ժերարին սեղանը տանել իր տեղը:

- Իսկ ո՞վ էր այդ հանգուցյալը, - անսպասելի հնչեց հարցը:

Դոկտոր Ռուն, որ մեջքով էր կանգնած, միանգամից շրջվեց.

- Ես ուրիշ հարցեր նկատի ունեի... Սակայն, ո՞վ էր, թող առաջ գա:

Ռուբենը, կարկամած, առաջ եկավ: Դոկտորն ուշադիր զննեց նրան և չափազանց աշխույժ հարցրեց.

- Այդ հարցի պատասխանը կարևո՞ր եք համարում այսօրվա առարկայի և ընդհանրապես ձեր ընտրած արհեստի համար:

- Ես պարզապես կուզեի իմանալ, թե ով էր այդ մարդը..

- Իրավացի եք, պարոն, իսկապես, ո՞վ էր այդ մարդը... Խնդրեմ, մոտեցեք ինքներդ նայեք, ի վերջո սա ձեր առաջին և վերջին հանդիպումն է:

Ռուբենը մոտեցավ և սավանը զգուշ բարձրացրեց. մոտ երեսնամյա ամրակազմ մի երիտասարդ էր՝ ջախջախված գլխով: Ինքնությունը չպարզված մի անձնավորություն: Վզից հաստ թելով կապված ստվարաթղթի վրա գրված էր, որ դիակը հայտնաբերվել է Բուա Մերմեում, Լոզանի հյուսիսային կողմն ընկած գողտրիկ մի անտառում, մահացել է մետաղյա բութ առարկայի հարվածից, բավական մեծ քանակությամբ ոգելից խմիչք է օգտագործել մահվանից առաջ:

Նա զգուշորեն տեղը բերեց սավանը և հեռացավ սեղանից: Դոկտոր Ռուն, որ ուշադիր հետևում էր, դիահերձարանից դուրս գալուց առաջ, մի երկու բոպեով պահեց նրան և ասաց.

- Շաբաթը մեկ անգամ ես այցելում եմ քաղաքի աղքատ հիվանդներին: Կուզեի՞ք երեկոներն ուղեկցել ինձ:

- Դոկտոր, մեծ պատիվ է ինձ համար, սակայն ես ինչո՞վ կարող եմ օգտակար լինել, ես ընդամենը անփորձ ուսանող եմ:

- Դուք բարի սիրտ ունեք, դրանով իսկ օգտակար կլինեք, իսկ փորձն այս պատերում ձեռք չեք բերի... Բայց, իմացեք, անվճար է լինելու:

- Հասկանում եմ: Պատրաստ եմ:

* * *

«Եթե Լոզան ես եկել ուսանելու, ապա համալսարան կարող ես չմտնել, սակայն "Old-India" անպայման պիտի մտնես»: Այսպիսի ասացվածք էր շրջում Լոզանի ուսանողության մեջ: Երբվանի՞ց... Հավանաբար, հաստատության հիմնադրումից ի վեր: Եվ իսկապես, հանճարեղ մեկն է եղել սրա հիմնադիրը. քաղաքի սրտին, Ս. Ֆրանսուայի հրապարակում, իր տան և համալսարանի ճիշտ մեջտեղը: Եվ, չնայած, համեստորեն, ներկայացվում է որպես «թեյարան», ամենից քիչ խմվող բանն այստեղ թեյն է: Ուսանող և թեյ, նկարիչ, բանաստեղծ և թեյ... Անհամատեղելի բաներ են:

Թեյն այստեղ խմում են բազմազգ սոցիալիստները, երկու պայթյունների արանքում Շվեյցարիայում հայտնված հեղափոխականները, թեյը խմում են մութ ու անհայտ արկածախնդիրները և վարձու մարդասպանները, և այս բոլորին ուշիուշով հետևող գաղտնի ոստիկանները:

Սոցիալիստներին անկարելի է զատել լրագրողներից և համալսարանական դասախոսներից, մինչդեռ հեղափոխականներն աչքի են զարնում, նախևառաջ, բացարձակապես նոփ-նոր ու վայելչատեսք կոստյումներով (ասես դերձակի մոտից ուղղակի եկել են այստեղ), ծղոտե «կանոտյե» գլխարկներով, որոնք, որպես կանոն, կամ մեծ են լինում կամ փոքր, սակայն երբեք գլխի ճիշտ չափով (ասես այդ գլխարկները մեկ ուրիշն է գնել նրանց համար)... Հեղափոխականներն աչքի են ընկնում, մանավանդ, մշտապես շարժվող ձեռքերով, որոնց հետ, ասես, չգիտեն, թե ինչ անեն...

«Old-India»-ում, բնականաբար, կա նաև մշտական այցելուների մի սեղմ խումբ, որոնք օրվա որոշակի ժամերին միշտ այստեղ են, նույնիսկ այն պահին, երբ այլևս ոչ մի այցելու չկա: Այնպիսի տպավորություն է, թե այս մարդկանց աթոռի հետ միասին ու անբաժան են պատրաստել... Նրանց համար «թեյարանը» պարզապես գանձ է, և հարազատ մոր պես սիրում են երկրորդ հարկի այս սրահը, որտեղից հստակ երևում է Ս. Ֆրանսուայի ամբողջ հրապարակը... Նրանք չեն կարող ապրել առանց այս աղմուկի, առանց ձայների ու լեզուների այս բազմազանության:

Սակայն ո՞վ չի սիրում «թեյարանը»: Ռուբենն ուշ հայտնագործեց այս ուխտատեղին: Անհավատալի է, սակայն մեկ տարվա ուսանող էր արդեն: Հաճախակի չէր լինում այստեղ: Դասերը՝ համալսարանում և տանը, տեղի հոյակապ թատրոնները և համերգները և, վերջապես, իր ընթերցանությունները խժռում էին ամբողջ ժամանակը:

Գրեթե մեկ տարի այստեղ ոչինչ չգրեց, հատուկենտ գործեր, որոնք հետո պատռում էր կամ կիսատ թողնում: Տարօրինակ էր, նույնիսկ մտահոգիչ, քանզի թաքուն, ոչ մեկին չխոստովանած հույսեր ուներ, թե Եվրոպան պիտի նոր թափ հաղորդի իր բանաստեղծությանը: Սակայն Եվրոպան քնարական դեմք չուներ: Ո՞րն էր, սակայն, նրա դեմքը... Իսկապես խճճվել էր, և հատկապես չէր ուզում այդ դեմքը ճշտել իրենց՝ եվրոպացիների արտացոլումով... Միայն պատվախնդրության հարց չէր, պարզապես ուզում էր ԻՐ հայելու մեջ տեսնել:

Այսօր երեկոյան տարօրինակ մի ցանկություն ունեցավ բանաստեղծությունների իր սև, լաթակազմ տետրակը վերցնել ու գնալ «Old-India»: Արդեն շատերին էր տեսել այնտեղ, հատկապես բանաստեղծներին, գրոտելիս: Այնտեղ ամեն ինչ գրվում էր:

...Սակայն, չգիտես, Աստծո պատի՞ժ է, թե՞ Աստծո պարգև այս տղան: Գարեջրի գավաթից հազիվ մի երկու կում էր արել և առաջին տողերը գրել, երբ գլխավերևում հայտնվեց Քենանը: Լողան գալուց ի վեր, երբեմն-երբեմն հանդիպում էր նրան: Մի քանի ամիս պարապ թրև եկավ, հետո մեջտեղից կորավ, նորից հայտնվեց, որոշեց թողնել իրավաբանությունը և բժշկականի ուսանող գրանցվել: Մի խոսքով, ինքն էլ չգիտեր, թե ինչ է ուզում:

Նա մենակ չէր: Հետը մեկ ուրիշը կար, անկասկած՝ թուրք: Մոտ երեսուն տարեկան կլիներ, ծանր դեմք ուներ, թափանցող հայացք: Դատելով տեսքից ու շարժուձևից, վաղուց է, ինչ Եվրոպայում է: Քենանն, առանց հարցնելու, նստեց: Նրան հետևեց ուղեկիցը:

- Ահմեդ Մաքթուբ, - ներկայացավ նա:

- Մեր լուսավոր դեմքերից է, երանի Թուրքիայում նրա պես մարդիկ շատ լինեին, - հիացական ասաց Քենանը ֆրանսերեն:

- Քենանը ձեր մասին ինձ շատ է պատմել... Շատ ուրախ եմ, որ ձեզ նման արժանավոր բարեկամներ ունի այստեղ...

- Անկեղծ ասած, մենք դեռ չենք հասցրել բարեկամանալ, - զուսպ ճշտեց Ռուբենը, որ դժգոհ էր այս ներխուժումից և մի քիչ էլ գրգռված: Սակայն Մաք-

թուքն ուշադրություն չդարձրեց այդ բառերին և շարունակեց միևնույն ոգևորությամբ.

- Եվ գիտե՞ք ինչու եմ ուրախ, որովհետև հայերին համարում եմ մեր կայսրության ամենահավատարիմ և ամենաօգտակար հպատակները:

- Այո, Քենանն արդեն ասել է, որ իր հայրն էլ այդպես է կարծում:

- Ա՛հ, փաշան հայտնի է իր հայասիրությամբ, և գիտե՞ք, որ նրա համար դյուրին չէ, շատ անգամ երեսովն են տալիս, թե ինչո՞ւ ես այդ գյավուրներին պաշտպանում: Բարեբախտաբար նա մենակ չէ, նրա նման մտածող ուրիշներն էլ կան:

Երևում էր, որ այս երկուսը հույս չունեին իրեն այստեղ տեսնելու: Ավելին, ամենայն հավանականությամբ, առանձնություն էին փնտրում: Սակայն ի՞նչ էր նրանց մտքինը: Ռուբենը, համենայն դեպս, կատակի տվեց.

- Եթե այդպիսի բարեկամներով ենք շրջապատված, ուրեմն, հայերիս փառահեղ ապագա է սպասվում Օսմանյան կայսրության մեջ:

- Շատ ճիշտ եք, մեզ իսկապես փայլուն ապագա է սպասվում, պայմանով, որ մենք բոլորս միասին լինենք:

- Մենք՝ ովքե՞ր...

- Մենք՝ բոլոր թրքահպատակներս, մահմեդականները, քրիստոնյաները, հրեաները..., - հետո Մաքթուբը թզբեհը բռի մեջ հավաքելով և ձայնին, մտերմական երանգ հաղորդելով, շարունակեց. - Ուրիշ բան էլ պիտի ասեմ ձեզ. դուք երիտասարդ եք, հավանաբար չեք հիշի, բայց հայերի հանդեպ այդպես վարվել պետք չէր:

- Ի՞նչը նկատի ունեք:

- Այդ բախումները գավառներում, Զեյթունում... հետո Պոլսում քանի՛ անմեղ մարդկանց վնասեցին... Եվ հիմա տեսնո՞ւմ եք լուսավորյալ Եվրոպան ինչպես է նայում մեր սուլթանին... Գիտե՞ք նրան ինչպես են կոչում այստեղ...

Իհարկե, գիտեր: Իսկ ո՞վ չգիտեր այդ մասին: Սակայն ո՞վ է այս Մաքթուբ կոչվածը, ինչ պղտոր մտքեր ունի իր գլխի մեջ, ինչո՞ւ է սոխակի պես գեղգեղում:

- Ներողամիտ կլինեք, պարոն, որ ձեզ խանգարեցինք, տեսնում եմ, որ բանաստեղծություններ եք գրում...

Երկրորդ հարկի սրահում ազատ սեղան չկար: Երեկոն «Old-India»-ում նոր էր սկսվել: Թուրքերը մի վերջին անգամ աչք ածեցին սրահը և իջան ներքև: Քիչ հետո նրանք հայտնվեցին մարդաշատ մայթին: Հանկարծ նրա ուշադրությունը գրավեց Էֆրաիմ Կացի հայտնությունը Ս. Ֆրանսուայի եկեղեցու մոտ: Նա մենակ չէր, կողքը իր նման անխնամ կերպարանքով մեկը կար: Ասես երկվորյակ եղբայրներ լինեին, այն տարբերությամբ, որ այս մեկը տարիքով նկատելիորեն մեծ էր և մուգ ակնոց կար աչքերին: Մաքթուբը, նրանց տեսնելով, ձեռքերը թափահարեց և թուրքերն ու օդեսացի հեղափոխականները գնացին իրար ընդառաջ:

Բանաստեղծությունը մնաց կիսատ: Նայեց տողերին և նրան թվաց, թե դա գրվել է վաղուց, որ դրանց հեղինակն ինքը չէ: «Թուրքն էլ երբեմն կարող

է օգտակար լինել», - դառը հեգնանքով նշեց նա, փաստելով, որ նրանց անակնկալ միջամտությունը մի կարևոր ճշմարտության հանգեցրեց. ինքդ քեզ բանաստեղծ համարելը և իսկական բանաստեղծություն գրելը բացարձակապես տարբեր բաներ են: Ի՞նչն ստիպեց նրան այստեղ գալ. բանաստեղծություն գրելու սովորո՞ւթը, թե սնիմանալի խորքերից եկող անդիմադրելի կանչը:

Եթե առաջինը, նշանակում է ինքը պարզ արհեստավոր է, որն Աստծո ամեն օրն իր երկաթն է ծեծում, իր կոշիկն է կարում կամ իր կավը թրծում: Նման գրվածքներով լեցուն է Պոլսի հայկական մամուլը՝ անշահ, ոչինչ չասող ոտանավորներ... Մի՞թե ինքն էլ պիտի գնա ավելանա այդ անդեմ փաղանգին: Սակայն ինչպե՞ս ճանաչի ճշմարիտ ոգեշնչումը, որն իսկապես մայրն է գլուխգործոցի... Ինչպե՞ս զանազանել այն օրվա ընթացքում ապրած զանազան ոգևորությունների միջից...

Այսօր, օրինակ՝ այստեղ եկավ ոչ այնքան սրբազան ոգեշնչումի դրդումով, որքան արվեստագետների այս մթնոլորտին մերձենալու մի ցանկությամբ: Ներքին հարազատություն էր զգում այստեղ հավաքված բազմաթիվ երիտասարդների հետ: Օրինակ՝ այն հեռավոր անկյունում նստած ակնոցավոր երիտասարդը, որին արդեն քանի՛ անգամ տեսնում է գարեջրի գավաթի և խառնիխուռն թղթերի ու մետաղյա փոքրիկ թանաքամանի առջև, գրիչը շարունակ ձեռքին: Ի՞նչ է դրում այդպես... Կամ մյուսը՝ նիհար, թուխ, կենտրոնացած ծխում է, հետո, անսպասելի, ծոցագրպանից մաշած տետրակը հանում, արագարագ մի քանի տող գրում, ասես, ուր որ է ձեռքից կխլեն, հետո փակում, նորից դնում է գրպանը. միևնույն գործողությունը կրկնվում է քսան բոպեն մեկ:

Ամենաուշագրավը, թերևս, քիչ հեռվում նստած նկարիչն է: Ամբողջ երեկոյի ընթացքում լսվում է նրա սծուվի կամ մատիտի խզխզոցը թղթի վրա: Երբեմն, կենտրոնացած, ինչ-որ բան է նկարում ծավալուն ալբոմի մեջ, երբեմն էլ թղթի կտորների վրա այս կամ այն այցելուի դիմանկարը գծում:

Նախանձեց այս մարդկանց, որ հստակ գիտեն իրենց անելիքը, որ իրենց հունով, հանգիստ, առաջ են գնում: Մինչդեռ ո՞վ է ինքը, ուսանո՞ղ, բանաստե՞ղծ... Այդպես է իբր, սակայն ո՞ւր է հաստատումը, ինչո՞ւ չեն ծնվում տողերը...

Հիմա նկատեց, որ նկարիչն իրեն է նայում: Ոչ շատ բացահայտ, այլ ակնթարթային հայացքներ է նետում, հետո, կտրուկ շարժումներով գծում թղթի վրա: Պարզ է, հիմա էլ իրեն է նկարում: Հավանաբար վաղուց էր սկսել, ինքը նոր նկատեց: Սակայն ձևացրեց, թե չի տեսել, որպեսզի մարդը հանգիստ իր գործը վերջացնի:

Կարծես ավարտեց, դրեց սեղանին, սակայն շարունակում է իր կողմը նայել: Մի՞թե երկրորդն է գծում: Սա էլ վերջացրեց և, շարունակ իր կողմը նայելով, երրորդն սկսեց: Այլևս չէր կարող ձևացնել, թե չի նկատում: Նրանց հայացքները հանդիպեցին, նկարիչը ժպտաց, շարունակեց աշխատել և քիչ հետո մոտեցավ Ռուբենին:

- Հուսամ, թե դեմ չեք, որ նկարում եմ ձեզ... Խնդրում եմ ներողամիտ լինեք...

- Ոչ, ոչ, խնդրեմ, եթե իմ դեմքը հետաքրքիր եք գտնում... Հարկ չկա նեղողություն խնդրելու:

Նկարչի երեսին մի բարի ժպիտ հայտնվեց:

- Երկու շաբաթ առաջ, - ասաց նա, - կողքի սեղանին, արտառոց դեմքով մի պարոն էր նստած, աչքերը պարզապես վառվում էին... ինձնից անկախ մի քանի ճեպանկարներ արեցի, մեկը մյուսից հաջող... Այդ պարոնը նկատել էր, որ իրեն նկարում եմ և կարծես դեմ չէր...

Նկարիչն անսպասելի լռեց և զարմանքը դեմքին Ռուբենին նայեց, կարծես իր հին ընկերն էր և հետը նստած անբռնազբոս զրուցում էր.

- Եվ գիտե՞ք ինչ արեց, որ ասեմ, չեք հավատա. տեղից վեր թռավ եկավ նստեց կողքս, մի ձեռքով ատրճանակը դրեց փորիս, մյուսով նկարները հավաքեց սեղանից և նետի պես դուրս թռավ: Այդ օրվանից նրան այստեղ չեմ տեսել: Ափսո՜ս, շատ հաջող նկարներ էին...

- Հանգիստ եղեք, պարոն, ես ատրճանակ չունեմ, իմ միակ զենքը սա է, - ասաց Ռուբենը ժպտալով, և դիմացը դրված մատիտն ու տետրակը ցույց տվեց:

- Գիտեք, սա այստեղ հաստատված ավանդություն է... Ուրիշ որտե՞ղ կարող ենք այսպիսի բազմազան դեմքեր գտնել... Սակայն ես ուրիշ նպատակով էի նկարում ձեզ:

Նա Ռուբենի առջև դրեց երեք ճեպանկար՝ արագ և հատու գծերով արված: Ինքն էր, սակայն ինչ-որ ուրիշ արտահայտություն կար դեմքին:

- Մի մեծ կտավ եմ սկսել՝ երեք ֆիգուրներով, որոնցից մեկի համար ձեր դեմքը շատ համապատասխան թվաց:

- Իսկ ի՞նչ է պատկերելու ձեր կտավը:

Նկարիչն, ի պատասխան, մի տեսարան գծեց ու հետն էլ բացատրեց.

- Ձախից պատանին է՝ ձեռքերը մեկնած, քայլ գցած, աջից՝ աղջիկը՝ նույն դիրքով... Սիրո հավերժական զույգն է, մերկ ու գեղեցիկ... Խորքը բնությունն է, կենդանի տարերքը, իսկ կենտրոնում մահվան հրեշտակն է՝ գերանդին ձեռքին...

- Երրորդն այս դեպքում իսկապես ավելորդ է:

- Մահվան հրեշտա՞կը:

- Այո:

- Սակայն նա է միացնում ձեզ..., - նկարիչը ժպտաց: - Կներեք, ձեզ արդեն իմ կտավի պերսոնաժը դարձրի...

- Հավանաբար, իրավունք ունեք... Սակայն եթե Ս. Գիրքն ասում է՝ «զորավոր հանց մահը», չի նշանակում, թե մահն է նրանց միացնողը:

- Հապա ո՞վ, եթե ոչ մահը:

- Այդ բնությունը, որ տարել եք խորքը... Առաջ բերեք այն, փոխեք մեր կնքահորը, - այս անգամ Ռուբենը ժպտաց:

- Ձեր ասածն արդեն եղել է, արդեն ավարտվել է մինչև իմ կտավի մեջ մտնելը... Հիմա նրանք Թանատոսի հլու սպասավորներն են:

- Ինչո՞ւ այդպես մռայլ...

- Ոչ, բարեկամս, սա ընդամենը իրապաշտություն է... Ի դեպ, կներեք, ես շատ անքաղաքավարի եղա, Կոնրադ Կուբիկ, Վիեննայից:

- Ռուբեն, Կոնստանդնուպոլսից:

Նկարչի դեմքին անթաքույց զարմանք հայտնվեց:

- Դուք թո՞ւրք եք:

- Ոչ, հայ... քրիստոնյա: Այդ քաղաքում միայն թուրքեր չեն ապրում:

- Գիտեմ, գիտեմ... Ժամանակ կունենա՞ք արվեստանոց այցելելու, ձեզ շատ չեմ զբաղեցնի, առավելագույնը մեկ ժամ:

Այնուհետև, առանց պատասխանի սպասելու, իր գծած դիմանկարի տակ ստորագրեց և հասցեն գրեց: Սա ոչ միայն հրավեր էր, այլև նվեր:

* * *

Սկզբում թվաց, թե երաժշտությունը երազի մեջ է լսում: Հետո աչքերը բացեց, սակայն երաժշտությունը շարունակվեց, թույլ, հազիվ լսելի և հենց դրանով էլ դյութիչ: Շոպեն էին նվագում: Արդեն քանի օր է լսում է այս դաշնամուրը, ո՞վ կարող էր լինել, մի՞թե ուսանող կենվորներից մեկը: Զնայած կիրակի էր և կարող էր իրեն թույլ տալ սովորականից քիչ ավելի ուշ վերկենալ, սակայն շտապ լվացվեց, հագնվեց և իջավ ճաշասրահ:

Ինչպես երևում էր ինքն առաջինն էր, սակայն սուրճի բույրն արդեն տարածվել էր և խոհանոցից ձայներ էին գալիս, իսկ, ամենակարևորը, դաշնամուրն ավելի ուժեղ էր հնչում, նվագում էին առաջին հարկի մոտիկ սենյակներից մեկում, ուր ապրում էր գիշերօթիկի տիրուհին՝ իր աղջկա հետ: Պատին աֆիշ տեսավ: «Ժողովրդական Տունը» կանչում էր դասական երաժշտության համերգի՝ Բեթհովեն և Բրամս: Անուններ, որ մոգական բառերի պես էին հնչում նրա ականջին:

- Դուք երաժշտություն սիրո՞ւմ եք, - հնչեց հարցը թիկունքից:

Տիկին Շապաղն էր, որ տեսել էր նրա հայտնվելը և նախաճաշն էր բերում:

- Այո, իհարկե... Ի դեպ, ո՞վ է դաշնամուր նվագում:

- Հավանո՞ւմ եք... Լա՞վ է...

- Դե... Ես մասնագետ չեմ, սակայն շատ հաճելի է լսելը... Համենայն դեպս, ինձ թվում է, որ բավական վարժ է նվագում:

Տիկին Շապաղի դեմքը միանգամից շողաց.

- Մեր Լիզետն է... Նրան լավ ապագա են խոստանում, միայն թե ծույլ է, շատ պիտի պարապի... Օրը հազիվ մի երկու ժամ է նվագում:

- Մեզ համար էլ հաճելի կլինի, - անկեղծորեն ասաց Ռուբենը:

- Եթե դուք ասեք, ձեզ կլսի, պարոն... Ձեզ շատ է հարգում... Դուք ամենալուրջն եք և ամենաաշխատասերը... Երեկոները սենյակում փակված շարունակ կարդում ու գրում եք:

- Բոլորն են այդպես:

- Ոչ, ոչ, պարոն Ռուբեն, այդպես չեն... Ես այստեղ շատ ուսանողներ եմ ունեցել, ձեզ նմանները շատ քիչ են...

- Մայրիկը ճիշտ է, - անսպասելի հնչեց Լիզետի ձայնը, - դուք իսկապես շատ եք գրում, մանավանդ բանաստեղծություններ...

Տիկին Շապաղը ձգվեց և, ձայնին խստություն հաղորդելով, ասաց.

- Իսկ դու որտեղի՞ց գիտես:

- Ես ձեզ ասել եմ, մայրիկ... Անցած շաբաթ, երբ պարոն Ռուբենի սենյակի փոշիներն էի մաքրում, սեղանին տեսա, միայն, ափսո՜ս, անծանոթ տառեր էին, չկարողացա կարդալ:

Տիկին Շապազը շառագունեց, սակայն աշխատեց պահպանել զսպվածությունը:

- Մտածիր, թե ինչեր ես խոսում, - հանդիմանեց նա: - Եվ լավ է, որ տառերն անծանոթ էին, ապա թե ոչ պիտի կարդայի՞ր քեզ չվերաբերող բաները:

- Բայց, մայրիկ, դրանք բանաստեղծություններ են, դրանք գրվում են բոլորիս համար... Այդպես չէ՞, պարոն Ռուբեն:

- Այդպես է օրիորդ, սակայն տվյալ դեպքում ես ուրախ եմ, որ հայերեն չեք կարողացել կարդալ, քանզի այդ բանաստեղծությունները ձեզ արժանի չեն...

Տիկին Շապազն զգացված էր Ռուբենի պատասխանից, այնուամենայնիվ, պահպանեց մայրական խստությունը.

- Պարոն Ռուբենը շատ մեծահոգի է, բայց դա չի նշանակում, թե դու ճիշտ ես վարվել, խնդրում եմ հաջորդ անգամ զբաղվիր միայն քո գործով և մարդկանց թղթերին մի նայիր:

- Մայրիկ, ես չեմ նայում, բայց չէ որ դուք գիտեք, որ բանաստեղծություն շատ եմ սիրում... Օրինակ՝ մի հրաշալի գիրք տեսա պարոն Ռուբենի մոտ՝ Ալբեր Սամենի ժողովածուն... Կարո՞ղ եմ մի քանի օրով խնդրել...

- Հաճույքով, օրիորդ... Դուք նուրբ ճաշակ ունեք... Սակայն մեկ պայմանով. որ ավելի հաճախ նվագեք:

- Շատ մեծահոգի եք, պարոն Ռուբեն, - հուզված ասաց տիկին Շապազը: - Անցյալ տարի այստեղ մի ուսանող կար, դժգոհ էր, բողոքում էր, երբ Լիզետն սկսում էր նվագել... Խեղճ աղջիկն անհամբեր սպասում էր, թե այդ պարոնը երբ պիտի համալսարան գնա, որպեսզի կարողանա հանգիստ նվագել...

Նախաճաշը վերջացնելուն պես Ռուբենը բերեց Սամենի գրքույկը: Նրան մեկ ուրիշ անակնկալ էր սպասվում. Լիզետն, ասես, ի պատասխան նրա սիրալիրության, ասաց, որ երկու հրավիրատոմս ունի այսօրվա համերգի համար և դեռ չի որոշել, թե ում հետ պիտի գնա:

- Եթե զբաղված չեք երեկոյան, կուզե՞ք ընկերակցել Լիզետին, - հարցրեց տիկին Շապազը:

Իհարկե կուզեր: Երբեք չէր լսել Բեթհովենի Հինգերորդ սիմֆոնիան: Դա ոչ թե առաջարկ էր, այլ սքանչելի մի նվեր:

* * *

Ժողովրդական Տուն: Այստեղ արդեն առիթներ էր ունեցել մի քանի համերգ լսելու, և հոյակապ երաժիշտների կատարմամբ: Սակայն այսօր, իսկապես, բացառիկ օր էր: Նախ, որ վերջապես պիտի լսեր Բեթհովենի Հինգերորդ սիմֆոնիան, երկրորդ, որ առաջին անգամ այստեղ էր եկել աղջկա հետ, և զգում էր իրենց ուղղված հայացքները:

Առաջին իսկ հնչյուններից չհասկացավ, թե ինչ կատարվեց իր հետ: Զարմանալի, զգացումների մի խառնուրդ պայթեց ներսում: Ասես կապանքներ բացվեցին իր մեջ, արթնացան բարձր ու առնական գրգիռներ, որոնց գոյության մասին պատկերացում անգամ չուներ: Մի՞թե ինքն է ճակատագրի դեմ այդպես վճռական պայքարողը... Նրան թվաց, թե նույնացավ երաժշտության հետ, թե ինքն է այդպես բացվել մարդկության առջև և որ բոլորի ապագան կախված է այս պայքարի ելքից...

Զգաց, որ այսօր ուրիշ մարդ դարձավ... Ոչ, ավելի շուտ այն մարդը, որ իր ներսում էր և հիմա ծնվեց... Սա մի նոր ծնունդ էր՝ շնորհիվ այս հանճարի, որի պատկերը (զարմանալի մի կանխագուշակմամբ) գծել էր դեռևս Պոլսում, երբ առաջին անգամ լսեց նրա դաշնամուրային սոնատները:

Անկեղծ, տղնվացնող ու մարդու վեհացնող մի երախտագիտություն զգաց այս քնքույշ էակի հանդեպ, որի շնորհիվ կարողացավ ինքնիրեն գերազանցել... Որքա՜ն խեղճ էր կես ժամ առաջվա, աստվածային այս հնչյունները չլսած Ռուբենը, ասես, հրաշք մի ձեռքով միանգամից հայտնվել էր ամենաբարձր լեռան գագաթին և ինքն ու լեռը նույնացել էին:

Զգաց, թե ինչպես աղջկա ձեռքը բռնեց ու տարավ շուրթերին՝ որպես երախտագիտության նշան: Մարմնական ոչինչ չկար այդ համբույրի մեջ, և աղջկա խորունկ ժպիտն ասում էր, որ ինքն էլ այդպես է ընդունում:

Ընդմիջմանը հանդիպեցին Պերեսին՝ իր նման մի լատինամերիկացու և Լևոնի հետ:

- Զհոգնեցի՞ք այս աղմուկից, - վրա տվեց Պերեսը: - Եկեք ինձ հետ, մի լավ տեղ գիտեմ այս կողմերում, չեք փոշմանի:

Արվեստը սիրող ու գնահատող այս տղայի մեջ պանտագրյուելյան մի զորավոր ոգի կա, որը միշտ նրան քաշում է դեպի հող: Ուրիշ անգամ անպայման կընդուներ նրա հրավերը, սակայն ոչ մի ցանկություն չուներ Բեթհովենից հետո գինետան մթնոլորտն ընկնել: Բացի այդ, Լիզետը հատկապես եկել էր Բրամսի դաշնամուրային կոնցերտը լսելու, որը պատրաստվում էր առաջիկայում նվագել: Հրաժարվելու պատճառը բավական հիմնավոր էր:

Ռուբենն անհամբեր սպասում էր համերգի երկրորդ մասին: Ուզում էր նորից կախարդանքի մեջ սուզվել: Սակայն Բրամսից ստացած տպավորությունն ուրիշ էր... Նա դեռևս Բեթհովենի կախարդանքի տակ էր, և իրեն նույնիսկ սրբապիղծ թվաց, երբ փաստեց, թե երաժշտությունն այլևս չի լսում, այլ մտովին ուրիշ տեղ է, նույնիսկ սպասում է, թե երբ պիտի վերջանա:

Լիզետը լարված ուշադրությամբ լսում էր: Գործնական կենտրոնացում կար նրանում: Երբեմն-երբեմն տարօրինակ մի ժպիտ էր հայտնվում դեմքին: Ռուբենը հիշեց այսօր առավոտյան լսած Շոպենը, որ նրան պարգևեց այս արտառոց, իսկապես նրբին հոգի ունեցող աղջիկը: Հետաքրքիր էր նրան դիտել, նրա անդրադարձը, նրա մատների թրթռալը: Շուրջը նստածներից ոչ մեկն այսպես աշխույժ չէր լսում համերգը: Սա այլևս ունկնդրում չէր, այլ համաստեղծագործում:

Համերգից հետո, երբ երեկոյան զովի մեջ վերադառնում էին տուն, Ռուբենը դիմեց աղջկան.

- Դուք այնպես կլանված էիք, ասես ինքներդ լինեիք դաշնամուրի մոտ:

- Ճիշտ եք նկատել... Այդ կոնցերտը պիտի նվագեմ կոնսերվատորիայում...

- Ես չգիտեմ, թե ինչպես երախտահատույց լինեմ ձեզ Բեթհովենի համար:

- Իսկապե՞ս առաջին անգամ էիք լսում:

- Այո... Սակայն զարմանալին այն էր, որ ճանաչեցի ոչ միայն այդ հանճարեղ գործը, այլև... ինչպես ասեմ... Կարծես ինձ տեսա առաջին անգամ:

- Այսինքն՝ եթե ճիշտ հասկացա, մեկ ուրիշ Ռուբեն տեսաք այսօր:

- Այո, գուցե այդպես:

- Եվ նրանցից ո՞րն է ավելի լավը...

- Այս նորը... Անծանոթը... Նա անկասկած ավելի լավն է...

Ժամը տասն էր արդեն և երեկոն ուրիշ հմայքներ էր խոստանում... և, հավանաբար, իրագործելի, քանզի Ռուբենը հիմա նկատեց, որ բարձունքն ի վեր գնացող փողոցով դեպի տուն քայլելու փոխարեն, իրենցից աննկատ, ճիշտ հակառակ ուղղությամբ էին գնում՝ դեպի լիճ: Մի՞թե Լիզետն էլ չի նկատել... Սակայն տեղնուտեղը հիշեց, որ աղջկա մորը խոստացավ համերգից անմիջապես հետո վերադառնալ տուն: Ասես ձեռքին մի փխրուն անոթ էր, որ հնարավորին չափ շուտ ապահով տեղ պիտի հասցներ: Եվ ահռելի պատասխանատվության մի զգացում համակեց նրան, որ տեղնուտեղը խլացրեց ծլարձակել սկսող բոլոր նկրտումները:

Աղջիկն աննշմար դժկամությամբ համաձայնեց փոխել ճամբան և քայլել դեպի տուն:

Սա այն ժամն էր, երբ ուսանողների մեծ մասը դրսում էր: Միայն մեկ պատուհանում լույս կար: Նրանք մտան կիսախավար սպասասրահը:

- Դուք հաճա՞խ եք գնում համերգների, - հարցրեց Ռուբենը:

- Շատ հաճախ:

- Կուզեի երբեմն ընկերակցել ձեզ:

Աղջիկը մեղմ ժպիտով նայեց նրան և ձեռքը մեկնեց որպես «բարի գիշեր»: Ռուբենը ձեռքն առավ ափերի մեջ, համբուրեց, հետո, մեջքը գրկելով, մեկ այլ համբույր դրոշմեց աղջկա ճակատին, որից հետո, կարճատև մի համբույր շուրթերին: Աղջիկը չէր դիմադրում, միայն խուսափուկ հայացք գցեց կիսաբաց դռան կողմը, որտեղից մեղրագույն լույս էր տարածվում:

Կեսգիշերից առաջ սենյակ լցվեցին Պերեսը, նրա ուրուգվայցի ընկերը և Լևոնը: Նրանցից արտածվող գինու զորավոր բուրմունքը խոստանում էր դատարկ, աղմկալից, երկարատև ու անպտուղ մի ժամանց: Սակայն Ռուբենին տեսնելուն պես միանգամից զգոնացան:

- Ռուբեն, դու գիտես, որ եղբոր պես սիրում եմ քեզ, - ասաց Պերեսը: - Օ՜, իմ Ռուբեն...

- Դրանում երբեք չեմ կասկածել:

- Սակայն ես չէի ուզի, որ իմ եղբայրը տառապեր...

Ռուբենը հիշեց՝ կատակով ասված նրա նախազգուշացումները:

- Գուցե ավելի ճիշտ կլիներ ասել՝ տառապեցնի՞...

- Կեցցե՛ս, սիրելի Ռուբեն, ես հենց դա էի ուզում ասել, բայց վախեցա, թե կվիրավորվես:

Նա ավելի լրջացավ, աթոռը մոտեցրեց Ռուբենին և, աչքերի մեջ շեշտակի նայելով, ասաց.

- Դու գիտես, որ այդ հրաշք աղջիկը... ո՞նց ասեմ, կարծես բորոտ լինի... Այս պստիկ քաղաքում բոլորը գիտեն նրա մասին և բոլորի կողմից ասես մերժված լինի: Մի՞թե Լևոնը քեզ չի պատմել:

- Պատմել եմ... Սակայն դու ասա, որ ամբողջ սրահն իրենց էր նայում և ասա, թե ինչեր էին խոսում...

- Եվ ի՞նչ էին խոսում, - վրդովմունքը հազիվ զսպելով հարցրեց Ռուբենը:

- Նրանք ասում էին՝ խե՜ղճ տղա... և որքա՜ն գեղեցիկ է...

- Այո, այո, ճիշտ է ասում... Նրանք քեզ շատ էին հավանել, - հաստատեց Լևոնը:

- Եվ դուք չապտակեցի՞ք այդ սրիկաներին, - պոռթկաց Ռուբենը:

- Ասողները կանայք էին, Ռուբեն, - արդարացավ Պերեսը: - Եվ ի՜նչ կանայք... Նրանք աչքերով լափում էին քեզ...

- Օ՜, որքան չար ու դաժան են մարդիկ... Եվ ի՜նչ քստմնելի... Ես չեմ հասկանում, ինչպե՞ս կարելի է այդպիսի աստվածային երաժշտության տակ նման անմարդկային և պիղծ բաներ խոսել...

- Սիրելի Ռուբեն, բոլոր ստոր բաները աստվածային երաժշտության տակ են արվում, - ասաց Պերեսը: - Այո, իրավացի ես, դրանք անսիրտ մարդիկ են, սակայն եկ իրողությանը նայենք ուրիշ տեսանկյունից: Դու հավատացյա՞լ ես:

- Իսկ դո՞ւ, - հարձակողական հարցրեց Ռուբենը:

Պերեսն անմիջապես խաչակնքեց, հետո, վզից կախված խաչը հանելով, համբուրեց:

- Դու չհասկացար իմ հարցը: Եթե հավատացյալ ես, ուրեմն, հասկացիր, դևն է մտել նրա մեջ, նա դիվահար է, նա անմեղ է, այդ աղջիկը, սակայն Աստված այդպես է պատժել նրա հորը:

- Լսիր, Պերես, դու խոսում ես ինկվիզիցիայի հայրերի պես... Խենթացե՞լ ես, ի՞նչ է:

- Ոչ, սիրելի Ռուբեն, ես գիտեմ, թե ինչ եմ ասում... Լա՜վ, կարո՞ղ ես անկեղծորեն պատասխանել մի հարցի, սիրո՞ւմ ես այդ աղջկան, թե՞ սա պարզապես ժամանց է:

- Չեմ կարող ասել, թե սիրում եմ, բայց ստույգ կասեմ, որ ժամանց չէ:

- Իսկ աղջիկը գիտի՞ այդ մասին, - հարցրեց Լևոնը:

- Այդ մասին չենք խոսել, սա ընդամենը սովորական հանդիպում էր... Սակայն ես չեմ հասկանում, ինչո՞ւ եք հարցն այդպես դնում:

- Ես կուզեի, որ դու զգույշ լիներիր այդ աղջկա հետ: Նա վիրավորված հոգի ունի: Չէի ուզի, որ դու ևս խոցես նրան:

- Սակայն ես ոչինչ չեմ խոստանում, սա ընդամենը պարզ բարեկամություն է:

- Բայց աղջիկը կուզի, - վրա տվեց Պերեսը, - նա ավելին է սպասում, քան սովորական ընկերությունը... Նա սիրո կարոտ է... Դու հասկանո՞ւմ ես ինչ ես անում... Անկեղծ եղիր մեզ հետ, դու կարո՞ղ ես այդ ահավոր բեռն ամբողջ կյանքում ուսերիդ առնել:

Ռուբենը լուռ էր: Ընկերներն անհամբեր սպասում էին նրա պատասխանին:

- Այդպիսի խորությամբ դեռ չեմ մտածել... Կրկնում եմ, սա մեր առաջին հանդիպումն է, սովորական հանդիպում... Սակայն այսօր իսկ զգացի, որ այդ աղջկա ճակատագրի հանդեպ անտարբեր չեմ... Քիչ առաջ հարցնում էիր՝ հավատացյա՞լ եմ ես: Շիտակորեն ասեմ, ոչ այնքան... Բայց հավատում եմ, որ այդ աղջկան Աստված է ուղարկել ինձ:

- Ի՞նչ է դա, կարեկցա՞նք, թե՞ պատասխանատվություն:

- Ավելի շատ վերջինը:

Պերեսն ուշադիր, մի տեսակ ակնածանքով նայեց Ռուբենին և հատ-հատ ասաց.

- Ես տեսնում եմ, որ սա ավելի խորն է, քան սերը... Բայց դու բժիշկ ես, դու հասկանում ես, թե քեզ ինչպիսի փորձություն է սպասվում:

Ռուբենը գրադարակից մի քանի հաստափոր հատորներ վերցրեց և դրեց սեղանին:

- Այս քանի օրը ես հենց բժշկական գրականություն էի կարդում: Օրինակ..., - Ռուբենը գրքերից մեկը բացեց. - այսպիսի տեսություն կա, որ այդ հիվանդությունը ժամանակի ընթացքում անհետանում է, եթե խնդրո առարկա անձը շրջապատված է լինում հոգատար վերաբերմունքով և հոգեկան ցնցումներ չի ունենում:

- Դու վստա՞հ ես, որ ամբողջ կյանքում կկարողանաս նրան հեռու պահել հուզումներից:

- Զգիտեմ, չեմ կարող ամբողջությամբ երաշխավորել, սակայն հավատում եմ, որ բարի սիրտը կարող է բուժել:

Պերեսը մի պահ լուռ նայեց Ռուբենին հետո ծնկի իջավ նրա առջև.

- Ռուբեն, դու սուրբ ես, թող համբուրեմ ձեռքդ:

Պերեսը կատակ չէր անում, սակայն մյուս երկուսը հռհռացին, իսկ Ռուբենը ձեռքը դնելով ընկերոջ գլխին, թատերական կեցվածքով ասաց.

- Օրհնյալ ես, որդիս:

Եվ դժվարին հարցաքննությունն ավարտվեց ընդհանուր հռհռոցով:

* * *

Ինքն առաջինը տեսավ ծաղիկը: Քարքարոտ, թեք լանջը կտրուկ բարձրանում էր դեպի վեր: Իսկ այնտեղ, ուր վերջանում էր չոր ու անխոտ մակերեսը, զմրուխտյա կանաչի մի կտոր կար, որի ճիշտ մեջտեղը ճչում էր վառ կարմրի այդ կաթիլը: «Կարմիրը կանաչի վրա շատ գեղեցիկ է», - ասաց Լևոնը, որը նկարիչ էր ծնվել, բայց չգիտես ինչու որոշել էր ինժեներ դառնալ: «Իսկ դա ի՞նչ

է», - հարցրեց Պերեսը, առաջ բերելով բոլորի ծիծաղը: «Մի՞թե չես տեսնում, ծաղիկ է», - պատասխանեց Լևոնը և հետո ինքն իրեն հարց տվեց. «Սակայն ի՞նչ ծաղիկ է»: «Կակաչ», - պատասխանեց ինքը:

Տարօրինակ տեսարան էր: Մեկը մյուսից գեղեցիկ բնանկարների առատության մեջ, չգիտես ինչու, հենց այստեղ որոշեցին կանգ առնել և ուշադիր նայել: Երեք ընկեր, երեք անհանգիստ, գեղեցկությունը գնահատել իմացող ուսանողներ կանգնել և հմայված նայում էին իրենցից առնվազն մի երկու հարյուր մետր բարձրության վրա գտնվող վառ կարմիր կետին: Տասնյակ ու հարյուրավոր ծաղիկներ տեսան իրենց ճանապարհին, սակայն ոչ մեկը նրանց այդպես չգրավեց:

Առաջինն ուշքի եկավ Լևոնը: «Ափսո՜ս, շատ բարձր է, - ասաց նա: - Այնպես հոգնած եմ, որ եթե հիմա այնտեղ նույնիսկ խորոված ոչխար լիներ կարմիր գինու և մի գեղեցկուհու հետ, դարձյալ չէի գնա»:

Ասացին ու շարունակեցին կածանով իջնել: Ռուբենն էլ հոգնած էր ու քաղցած, սակայն, ինչ-որ անհայտ ուժով և մի խենթ վճռով մղված, ճամփից կտրուկ շեղվեց և քայլեց վեր: Տարօրինակ էր: Ամբողջ Շվեյցարիայում հաղիվ թե այսպիսի քարքարոտ և կանաչազուրկ լանջ գտնվեր: Եվ Արարիչն, այդ չորությունն, ասես, հատուցելու համար, վերը կանաչ մի սփռոց էր գցել և զարդարել այդ հրաշք ծաղիկով:

Չէր կարծում, թե բարձրանալն այսքան դժվար կլինի: Չոր ու փխրուն հողը ոտքի տակ սահում էր և քարերն աղմուկով գլորվում թափվում էին ներքև: Այստեղ, հավանաբար, մարդու ոտք չէր դիպել:

Պերեսի գլխով անցավ այս խենթ գաղափարը՝ բարձրանալ Դան Բլանշ: «Ո՞վ է տեսել, Շվեյցարիա գալ և լեռ չբարձրանալ»: Փաստարկն առավել քան համոզիչ էր: Սակայն, ինչպես երևում էր, նրան այնքան լեռնագնացությունը չէր հետաքրքրողը, որքան... «Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ վայելք է. այնտեղ, լեռան կատարին, խմում ես այս թունդ eau de vie-ն, հետն էլ այս խորոված հավերն ուտում...»:

Սակայն հավերն ու eau de vie-ն՝ կենաց ջուրը, ինչպես սքանչելիորեն խաղողի օղին է կոչվում այս կողմերում, ստիպված եղան վայելել վարը, քանի որ գագաթ չհասած, մի տեղատարափ անձրև սկսվեց: Շարունակելը ոչ միայն անիմաստ էր, այլև վտանգավոր: Ափսո՜ս, գրեթե հասել էին գագաթը: Իրենց առաջնորդը՝ տեղացի մի հովիվ, կտրականապես պահանջեց ետ դառնալ: Զգուշորեն, մի կերպ, վերադարձան լեռնագնացների խրճիթ: Չոր տեղ չէր մնացել նրանց վրա: Ահա որտեղ պետք եկավ «կենաց ջուրը»: Գիշերն անցկացրին խրճիթում, բուխարիկի շուրջ: Որոշեցին առավոտ կանուխ վերսկսել վերելքը:

Սակայն առավոտյան լեռն անհետացել էր, թաղվել ահավոր մի մառախուղի մեջ: Հովիվն ասաց, որ նման պայմաններում չափազանց վտանգավոր է լեռ բարձրանալը և որ եղանակը կարող է օրերով այսպես մնալ: Պերեսը շատ չտխրեց: Առավոտվա սուրճի հետ շշի տակ մնացած օղին խմեց և առաջարկեց վերադառնալ տուն:

Պարզվեց, որ իջնելը պակաս դժվար չէ, մանավանդ թաց գետնի վրայով

և առավոտյան խմած թունդ օղուց հետո: Այս դժվարություններին գումարվեց արևի անսպասելի հայտնվելը: Օդը դարձավ հեղձուցիչ: Այդ պահին էր, որ ինքն առաջինը նկատեց վառ կարմիր բիծը:

Ետ նայեց:

Կեսն արդեն հաղթահարել էր: Սակայն հեռավորությունը մինչև ծաղիկ գրեթե նույնքան էր, որքան թվում էր ներքևից, մինչև վերելքն սկսելը: Հիմա զգաց, որ իսկապես ջարդված է: Նույնիսկ մի պահ մտածեց, որ արածը ոչ թե խենթություն, այլ կատարյալ անխելքություն է: Ի՞նչ պարտադիր էր մոտենալ այդ ծաղկին, առավել ևս՝ քաղել...

Սակայն ավելի շատ նրա սրտով, քան մտքով անցավ, որ ծաղկին հասնելը և քաղելը սրբազան ուխտի պես մի բան է, որը պիտի կատարի թեկուզ կյանքի գնով:

Այս համոզումը զարմանալի ուժ տվեց նրան և չզգաց, թե ինչպես հաղթահարեց զառիվերի ամենաթեք հատվածը: Իսկ այժմ, մոտիկից, կանաչ խոտի ծածկույթն, ասես, չքեղ գորգ լիներ՝ աներևույթ ձեռքով այստեղ փռված: Բայց բավական էր քայլ գցեր այդ գորգի վրայով, որպեսզի ոտքերը խրվեին կանաչի տակ պատսպարած նախորդ տասնյակ, հարյուրավոր, հազարավոր տարիների ջրով ծծված ճիմերի մեջ:

Այժմ նոր խնդիր էր նրա առջև. զգուշորեն մոտենալ կանաչի մեջ վառվող կարմիր կետին, որն իրենից մի տասը մետր հեռավորության վրա էր: Ոտքերը դնում էր չափազանց մեծ զգուշությամբ, քանզի թվում էր, թե քայլում է ժամանակների ջրով հագեցած հսկայական սպունգի վրայով, որը կարող է չդիմանալ նրա ծանրությանը, պատռվել և քաշել թաքնված անդունդի հատակը:

Վերջապես հասավ և ծնկի իջավ այդ միակ ծաղկի առջև: Արտառոց մի տեսարան էր, և հիմա հասկացավ, թե ջրի վրա ինչպես է կարողացել աճել այդ կակաչը:

Կանաչության կենտրոնում մի լեռ քար կար, մեջտեղից ճաքած, գրեթե ամբողջությամբ ծածկված խոտով ու մամուռով: Քարի կատարը, որ մի քանի սանտիմետր դուրս էր գալիս խոտերի տակից, իդեալական պայմաններ էր ստեղծել կակաչի համար, որ արմատ էր ձգել ճեղքում հավաքված սևահողի մեջ և իր փխրուն ցողունն էլ գրեթե ամբողջությամբ թաքցրել այդտեղ: Ծաղիկն, ասես, դրված լիներ քարի վրա:

...Սոսկումնախառն մի դարշանք զգաց. կակաչի բաժակի կենտրոնը չափից ավելի մեծ էր և աշխուժորեն շարժվում, եռուզեռ էր գալիս: Յոթ-ութ անտրացիտափայլ սև բլոճներ խրախճանք էին անում այնտեղ: Ասես խնդային իր երեսին. «Մենք վաղուց այստեղ ենք, բարեկամս, պետք չէր չարչարվել, հասնել այս բարձունքը...»:

Հավանաբար քամին կամ մի թռչուն կակաչի սերմը բերել դցել էր քարի այս ճեղքը, որտեղ սևահող կար, բավարար խոնավություն և արև: Կային նաև տեղական ավատատերերը, որոնք, իրենց քառասուն թաթերը չփելով, անհամբեր սպասել են գեղեցկուհու զարթոնքին, որպեսզի վայելեն առաջին դիշերվա իրենց անկապտելի իրավունքը: Եվ մի՞թե ինքը, սրանց հետ մեկտեղ կամ սրան-

ցից հետո, պիտի վայելեր այս արստավորված գեղեցկությունը: Տեր Աստվա՛ծ, ինչո՞ւ ես պղծել քո իսկ ձեռքով արարված հրաշքը: Եթե գեղեցիկն ես ստեղծում, ապա անմատչելի դարձրու անարժաններին...

Զգաց, որ իրեն նայում են: Գլուխը բարձրացրեց և հայացքը հանդիպեց օձի աչքերին: Այնտեղ, ուր վերջանում էր կանաչը, չոր և արևի տակ լավ տաքացած քարեր կային: Հենց դրանցից մեկի վրա կծիկ դարձած սողունը հետաքրքրված, գուցեև տագնապահար սպասում էր ներխուժողի հաջորդ քայլերին:

Վերջապես ոտքի ելավ: Ծնրադրությունն իզուր էր: Կոշիկները լցված էին ջրով: Ներքևից կանչում էին: Այժմ թրջված ոտքերով իջնելը կատարյալ տառապանք էր: Արդյոք իզո՞ւր էր բարձրանալը, գուցե ավելի ճիշտ կլիներ հեռվից հիանալ այդ գեղեցկությամբ և չտեսնել նրա մեջ ծվարած այլանդակությունը: Եվ գուցե սա էր կյանքի խորհուրդը, որ գեղեցիկն ու այլանդակը մշտապես իրար կողք գտնվեն:

Անշուշտ, նրանք միասին են, իրար կողքի: Խոսքն այդ մասին չէ: Այլ, որ միշտ հաղթական են դուրս գալիս չարն ու տխեղծը, և ի հաշիվ բարու և գեղեցիկի: Մի՞թե չէին կարող այդ բլոճներն, իրենց համար առանձին, թեկուզ ծաղկի հարևանությամբ, իրենց բաժին արևը վայելել: Սակայն ոչ, նրանք շարունակ ձգտում են հենց գեղեցիկի սիրտը մտնել, այնտեղ հաստատել իրենց կայքերը:

Ուրեմն բարին ու գեղեցիկը մշտապես կարոտ են պաշտպանության: Եվ ճիշտ արեց, որ բարձրացավ ու տեսավ այդ ամենը: Ո՛չ, բարձրանալն իզուր չէր:

- Ծաղիկն ինչո՞ւ չքաղեցիր, - հարցրեց Լևոնը:

- Մտածեցի, որ իր տեղում ավելի դեղեցիկ է...

- Լսիր, Ռուբեն, եթե քո տողերն էլ այդպես են, ուրեմն դու պիտի հոյակապ բանաստեղծ լինես:

- Ասելիքդ ի՞նչ է:

- Դու իսկապես բանաստեղծի պես վարվեցիր, - ասաց Պերեսը: - Այդ դժվարին վերելքը բարձրացար, ոտքերդ թրջեցիր, որպեսզի ծաղիկով հիանաս ու ներքև իջնես: Մեզ էլ այստեղ երկու ժամ սպասեցրիր:

- Երկու ժամվա համար ներողություն եմ խնդրում, ինչ վերաբերում է իմ տողերին, ապա այսօր երեկոյան կթարգմանեմ քեզ, որպեսզի կարողանաս որոշել՝ ես եմ ավելի բանաստեղծ, թե՞ իմ տողերը:

* * *

«...Չնայած մեր բազմաթիվ ջանքերին ու հանգամանալից պրպտումներին, այդպես էլ չկարողացանք պարզել, թե ում նախաձեռնությամբ է հիմնվել "Ազատ միտք" լսարանը: Համալսարանի ղեկավարությունը կատարելապես անտեղյակ է: Նրանց ասելով, երկու-երեք տարի առաջ, մի քանի ուսանողներ բանավոր թույլտվություն են խնդրել՝ յուրաքանչյուր հինգշաբթի երեկոյան հավաքվել և զրուցել փիլիսոփայական-հասարակագիտական խնդիրների շուրջ: Մենք պարզեցինք նաև, որ ուսանողական որևէ խորհուրդ կամ մարմին չի տնօրինում այս լսարանը, սա-

կայն բոլոր բաժիններում գոյություն ունեն տարբեր ազգերի մի քանի ուսանողներ, որոնք եռանդուն աշխատանքով նորանոր ունկնդիրներ են հրավիրում: Մեր կապերի միջոցով փորձեցինք տեղական ոստիկանությունից պարզել, թե ովքեր են "Ազատ Մտքի" կազմակերպիչները, սակայն Լողանի պրեֆեկտն սկզբում կատարելապես անտեղյակ է ձևացել, իսկ հետո, մի մասնավոր զրույցի ժամանակ, ասել է, թե ուսանողական հերթական խենթություն է»:

«...Մեր ստույգ տեղեկությունների համաձայն տեղի համալսարանական երիտասարդության մեջ ֆրանսիական քաղաքացիների թիվը չնչին է, իսկ եղածներն էլ կատարելապես հեռու են քաղաքական որևէ գործունեությամբ զբաղվելուց, քաղաքական խնդիրներ արծարծող հավաքներին, նիստերին, ժողովներին մասնակցելուց: "Ազատ Մտքի" նիստերում ելույթ ունեցած ֆրանսիական քաղաքացիք ուսանողներ չեն, այլ Փարիզից եկած սոցիալիստ և մանավանդ անարխիստ մտավորականներ: Դրանց մեջ առավել եռանդուն են Ժորժ Սորելի* հետևորդները, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում, որպեսզի...»:

«...Ռուսական կայսրության գաղտնի կուսակցությունների և կազմակերպությունների մասին կարելի է բավական հարուստ տեղեկություններ ստանալ տեղի "Ազատ Միտք" լսարանից, որի մուտքն անվճար է, իսկ նիստերը, որպես կանոն, տևում են մինչև ուշ գիշեր: Սրահում նստած յուրաքանչյուր ոք կարող է ելույթ ունենալ, բայց անփորձ աչքն անգամ կնկատի, որ ելույթների մեծ մասը վաղօրոք կազմակերպված են: Համաձայն Ջերդ Գերազանցության խստիվ հրահանգի, մենք ներկա եղանք վերջին տասը նիստերին և, ըստ էության, հռետորների մեծ մասը մեր կայսրության հպատակներն էին: Կից ներկայացնում եմ նրանց անուն ազգանունները, հասցեները և ելույթների համառոտագրությունը 128 էջի վրա: Ցուցակից կարող եք տեսնել, որ մեծամասնությունը կազմում են սոցիալ-դեմոկրատների բոլշևիկյան թևը: Այս լսարանը փաստորեն դարձել է նրանց ամբիոնը»:

«Ի պատասխան ս/թ մարտի 13-ի մեզ հղված -14/0137 ծածկագրին հայտնում ենք, որ "Ազատ Միտք" լսարանում ելույթ ունեցած անձանց, թվով 37 հոգի, 100-ական չվեյցարական ֆրանկ գումար է մուծվել «Lloyd Bank»-ի ժնևյան բաժանմունքի - 00479/677355W հաշվից, որի տերը համեստ մի խանութպան է Ցյուրիխից»:

«...Ֆրանսիական որոշ քաղաքացիների կողմից կայսերական ընտանիքի հասցեին արվող անհարգալից արտահայտություններն այլևս չկրկնվեցին: Սակայն, այս էլ որերորդ նիստին, Փարիզից, լրագրողների անվան տակ, այստեղ ժամանած մի քանի երիտասարդներ եռանդուն կերպով տարածում են տխրահռչակ Ժորժ Սորելի գաղափարները: Մասնավորապես ընդգծվում է այն միտքը, թե "խաղաղության վիճակը Եվրոպայում անբնական է": Իսկ երեկվա նիստում նույն անձնավորությունը երկու անգամ հայտարարեց, թե «պատերազմը կգա Ռուսաստանից»:

---

* *Ժորժ Սորել (1847-1922) ֆրանսիացի սոցիոլոգ, ֆաշիզմի գաղափարախոսներից մեկը: Նրա «Խորհրդածություններ բռնության մասին» (1908) աշխատությունը մեծ ազդեցություն է ունեցել ֆրանսիական և իտալական ֆաշիստների վրա: Մուսոլինին Ժ. Սորելին համարում էր իր գաղափարական հայրը:*

«...Ես պարզապես զարմանում եմ, My darling! թե դու մի ամբողջ տարի ինչո՞վ էիր զբաղված այստեղ... Բո ասած սրճարանում ես միայն գերմանացի միասեռականներ, սկանդինավյան սուֆրաժիստներ և իսպանական զառամած կոմսեր տեսա: Այնուամենայնիվ, բախտս բերեց: Երեկ չէ առաջին օրը, շատ պատահական հայտնվեցի մի սրահում... Ափսո՜ս, անունը մոռացել եմ, սակայն հասցեն մոտս է... Կարծեմ ամեն չորեքշաբթի անիմաստ հավաքույթներ են լինում... Ահա թե որտեղ են հավաքված Շվեյցարիայի ամենակրակոտ երիտասարդները... Կողքս նստած իտալացի շատ բարեկիրթ մի ուսանող ինձ հրավիրեց մոտակա սրճարանը, որից հետո ես հրավիրեցի նրան ինձ մոտ... Ես քեզ հետո կպատմեմ մանրամասները... Այսօր առավոտյան գնաց... Այսօր շաբա՞թ է, այո, ուրեմն, այդ ժողովները հինգշաբթի են լինում...»:

«...Խնդրո առարկա անձնավորությունը Փարիզից այստեղ է ժամանել երկու ամիս առաջ և սերտ շփումներ սկսել ռուսական հեղափոխականների հետ: Մենք պարզեցինք, որ ժնևում նա հանդիպել է 15 անձնավորությունների, իսկ նրանցից մեկին հանձնել Պավլովիչի նամակը: Վերջին երկու շաբաթը Ցյուրիխում էր: Երեկ ժամանեց Լոզան և, ինչպես նախորդ այցելությունների ընթացքում, հիմա էլ հանդիպումներ է ունենում ռուս հեղափոխականների և ռուս ուսանողության հետ: Նրա հետաքրքրության շրջանակում են նաև հայերը՝ Կովկասից և Օսմանյան կայսրությունից: Ինչ վերաբերում է հայ հեղափոխականների հետ ունեցած հանդիպումներին, մենք արդեն մանրամասնորեն գրել էինք անցած ամսվա զեկուցագրի մեջ, որ...»:

«...Այսօրվա նիստում խոսեցին երկու ռուսահպատակ հրեա հեղափոխականներ: Նրանց ելույթներն ամբողջովին ուղղված էին մեր վսեմաշուք սուլթանի դեմ: Որոշակիորեն երևում էր, որ նրանց նպատակն է գրգռել, ոտքի հանել Օսմանյան կայսրության քրիստոնյա տարրը՝ մասնավորապես հույներին և հայերին: Այդ նիստին հատուկ աշխատանք էր տարված հրավիրելու թուրքահպատակ հայ ուսանողներին»:

* * *

Ժամանակի ինչպիսի՜ կորուստ էր այսօրվա երեկոն: Էֆրաիմ Կացն էր, որ հորդորելով, համոզելով բերեց այստեղ: Մեկ անգամ պատահաբար եղել էր այս լսարանում և շատ չէր տպավորվել: Հիշում էր, որ անգլիացի սոցիալիստը վիճում էր ֆրանսիացի սոցիալիստի հետ, հետո երկուսով շուռ եկան գերմանացի սոցիալիստների դեմ: Բանավեճի սքողված իմաստն այն էր, թե Աֆրիկան դեռ որքա՞ն պիտի գաղութ մնա: Ֆրանսիացին և անգլիացին գտնում էին, որ դեռ մի քսան-երեսուն տարի, գերմանացիք՝ մի փոքր ավելի շատ... Միակ սևամորթը, որ նստած էր սրահում, ձայն չստացավ: Ասացին, թե ամերիկացի ես, ազատ մարդ ես, դու չգիտես, թե ինչ բան է ստրկությունը...

Միամիտը Լևոնն էր, որ խաբվեց այդ խորամանկ օդեսացուն: Վերջինս առավոտ շուտ հայտնվեց ճաշասրահում: Հետը մի ընկեր էր բերել. ակնոցավոր, ցանցառ մորուքով, փտած ատամներով, երեսը պզուկներով ծածկված մի անձ-

նավորություն, որը ժամանել էր Պետերբուրգից, թե Կիևից: «Այսօր պիտի խոսենք հայկական խնդրի մասին», - հայտարարեց Կացը:

Պերեսին դա չհետաքրքրեց: «Արգենտինայում ընդամենը քաղաքական մեկ հարց գոյություն ունի. կարմիր գինու հետ մսի փառահեղ կտորը լավ ծամելուց հետո, մսի ավելի լավ կտոր ճարել՝ ավելի լավ վայելքի համար...»: Լևոնն էր, որ ոգևորվեց: Այդ օրը կարող էր համերգ լսել Լիզետի հետ, սակայն զիջեց ընկերոջ թախանձանքներին, որը չէր ուզում մենակ գնալ այնտեղ: Զիջեց մեկ պայմանով, որ երեկոյից հետո մտնեն Սիտեի գինետներից մեկը և լավ կոնծեն:

Սրահում սոսկալի ծուխ էր: Կարելի էր ասել, որ բոլորը միաժամանակ ծխում են: Կացի ընկերոջը տեսավ բեմում՝ երեք նախագահողների հետ: Նրա կողքինը, պարզվեց վտարանդի թուրքն է: Դա կարելի էր գուշակել առջևը դրված փափախից և աթոռին նստելու զուտ պոլսեցիական անփույթ կեցվածքից: Ի դեպ, ամենից շատ ծխողը, հավանաբար, նա էր: Երրորդը, ակնոցավոր մի լեհ ուսանող էր Կրակովից՝ ցորենագույն մազերով և երկար ազնվական դեմքով:

Առաջինը նա խոսեց. դատապարտեց ռուսական կայսերապաշտությունը, Ռուսաստանն անվանեց ժողովուրդների բանտ, հետո միևնույն մոլեգնությամբ շուռ եկավ ավստրիական կայսերապաշտության դեմ՝ մեղադրելով վերջինիս ազգերի և դավանանքների նենգաթաքույց ուծացման մեջ: Դահլիճի խորքից սուլոցներ լսվեցին: Վիեննայից եկած երկու ուսանող սպառնալից ճոճում էին նուրբ ձեռնափայտերը: Սակայն զավեշտն սկսվեց այն պահից, երբ Լևոնի ու Ռուբենի առջև նստած բարձրահասակ, հաղթանդամ, թավ բեղերով երիտասարդը, որն, ինչպես պարզվեց գալիցիական լեհ է, տեղից վեր թռավ և, թուք շաղ տալով, ըստ երևույթին իր ազգակցին հակաճառեց: Նա խոսում էր լեհերեն, սակայն անսխալ կարելի էր ասել, որ իր կտրուկ անհամաձայնությունն է հայտնում:

Դահլիճն աղմկեց, պահանջելով ֆրանսերեն խոսել: Սակայն լեհերը ոչ մեկին բանի տեղ չդրեցին: Ավելին, բեղավորի կողքին նստած, նույնպիսի գլխարկով, մեկ այլ լեհ ուսանող, մյուսից ավելի հաղթանդամ, վճռական քայլերով մոտեցավ ամբիոնին և մի շառաչուն ապտակ հասցրեց բանախոսին: Վերջինս պարտքի տակ չմնաց և բռունցքի շեշտակի մի հարվածով հաղթանդամին փռեց գետին:

Կռիվն արդեն սկսված էր: Երկու կողմերի լեհերը հարձակվեցին իրար վրա: Բարեբախտաբար ոստիկաններ հայտնվեցին, և ավստրիական լեհերին դահլիճից դուրս հանելով, կարողացան արագորեն կարգուկանոն հաստատել:

Լեհերի հարցն առկախ թողնելով, ձայնը տվեցին Փարիզից ժամանած թուրք վտարանդի լրագրողին, որն սկսեց իր ելույթը միջազգային եղբայրության տարփողումով: Սրան հաջորդեց սիրո խոստովանությունը բոլոր ազգերի և հատկապես Օսմանյան կայսրության քրիստոնյաների հանդեպ, որոնք, ինչպես թուրքն ասաց, հեծում են արյունարբու սուլթանի բռնության տակ: «Իմ սուլթանի պատճառով ես ամոթ եմ զգում, որ թուրք եմ, և ճիշտ են որակել նրան. "Կարմիր սուլթան", այո, արյունոտ են նրա ձեռքերը, և հայերի, հույների, անգամ մեր մահմեդական եղբայրների արյունը կկարողանա՞նք լվալ մեր վրայից...

Այդ ժամանակ միայն Օսմանյան կայսրությունը կդառնա եղբայրության, հավասարության ու արդարության տուն»:

Այսպիսի բառերով ավարտեց՝ յուր մորթե փափախը սեղանին թողած թուրքը, և գործն արած մարդու տեսքով եկավ տեղը նստեց:

Մի քանի կցկտուր ծափեր հնչեցին տարբեր անկյուններից: Կովկասահայ մեկ-երկու հայեր վերկացան և ցուցադրաբար լքեցին դահլիճը:

Թրքահպատակ քրիստոնյաների ծանր վիճակին անդրադարձավ նաև օդեսացի ուսանող Կացը: Հատկապես զարմանալի հոգատարությամբ խոսեց մեծ քաղաքակրթություն ունեցող, հինավուրց ժողովուրդ հայերի մասին, որոնք այնտեղ ապրում են դեռևս Տրոյայի ժամանակներից: Կեցցե՛ս, Կաց, ե՞րբ իմացավ այս բաները, ինչո՞ւ չուտ չէր ասում... օրինակ՝ առավոտները, մեզ հետ սուրճ խմելիս... Չէ, լեհերի զավեշտն ավելի բնական և ավելի հետաքրքիր էր: Ճիշտ կլինի հիմա դուրս գալ այստեղից և դիմացի գարեջրատունը գնալ, թե ոչ, այս դատարկախոսության ավարտից հետո այնտեղ կանգնելու տեղ անգամ չի լինի:

Սակայն իզուր եկան գարեջրատուն: Կես ժամ չէր անցել, երբ պարապ ու անիմաստ զրույցի մթնոլորտը տեղափոխվեց այստեղ: Իրենց սեղանի գլխին հայտնվեց Մաքթուբը, որին «Old India»-ում ծանոթանալուց ի վեր չէր հանդիպել:

- Ափսոս, որ չուտ գնացիք, - ասաց նա և, առանց թույլտվություն հարցնելու, նստեց իրենց սեղանի մոտ:

- Ուրիշ հռետորներ եղա՞ն, - հարցրեց Լևոնը թուրքերեն:

- Այո, եղան, բայց հետաքրքիր չէին:

- Ուրեմն, ափսոսալու բան չկա, - շպրտեց Ռուբենը, որին գրգռում էր այս թուրքի անկիրթ պահվածքը:

Լևոնն անմիջապես, վտանգն զգալով, Ռուբենի ձեռքը սեղմեց և հազիվ լսելի, հայերեն շշնջաց. «Զսպիր քեզ... Եվ համբերիր»: Մաքթուբը հայերեն գիտի՞, արդյոք նկատե՞ց Լևոնի այս շարժումը: Կարծես թե՝ ոչ:

- Ես ափսոսում եմ, որ դուք՝ հայերդ, չխոսեցիք: Եթե անկեղծ ասեմ, ես ավելի շատ եկել էի, որ ձեզ լսեմ:

- Սակայն մենք ասելիք չունենք, - պատասխանեց Լևոնը:

- Ինչպե՞ս չունեք... Ես զարմանում եմ, եղբայր... Արդեն հիսուն տարի է, ինչ Զեյթունում ամեն օր ապստամբություն է, տասը տարին մեկ սուլթանները Սասունում կոտորածներ են սարքում, «Բանկ Օտտոմանը» վերցրիք և հիմարի պես չպայթեցրիք... Անգամ այդ հրեշին չկարողացաք սատկացնել...

- Ձեր օգնությանը պիտի դիմեի՞նք, - կիրթ հեգնանքով հարցրեց Ռուբենը:

Լևոնն այս անգամ նրա ոտքը սեղմեց սեղանի տակ:

- Իսկ ինչո՞ւ ոչ... Կարծում եք միայն ձե՞զ է վնասում... Մենք էլ ձեր չափ դժգոհ ենք:

- Այդ դեպքում ինքներդ էլ ազատվեք ձեր սուլթանից...

- Ցավոք սրտի, նա մեր բոլորի սուլթանն է...

- Ոչ, պարոն, իմ սուլթանը չէ, ես եգիպտացի եմ, և հետո, հայերն արդեն

բավական արյուն հեղեցին, որպեսզի ձեր կայսրությունն իսկապես երկիր դառնա, սակայն փոխարենն ի՞նչ ստացան...

- Իրավացի եք, լիովին իրավացի եք, - արդարացավ Մաքթուբը: - Սակայն ումի՞ց էիք երախտիք սպասում, վաչկատուն և բարբարոս քրդերի՞ց, ոճրագործ չերքեզների՞ց, թե՞ Անատոլիայի տգետ գյուղացիներից...

- Առնվազն գոնե Պոլսի թուրք մտավորականներից, Եվրոպայում ուսանած թուրք վերնախավից, մի՞թե նրանք էլ տգետ են ու բարբարոս, - անհամբեր միջամտեց Ռուբենը:

Մաքթուբը լուռ գլխով արեց, հետո, թզբեհը սեղանին դնելով և, ասես, արդարանալով, պատասխանեց.

- Ինչ վերաբերում է մտավորականությանը, խնդրեմ՝ արդեն քանի՛ տարի է, ինչ Միդհաթ փաշայի և Նամըկ Քեմալի ճակատագիրն եմ կիսում, իսկ վերնախավը, ինչպես բարեհաճեցիք արտահայտվել, վախեցած է, սոսկալի վախեցած:

- Եթե փաշաներն անգամ անզոր են, ապա ի՞նչ կարող է անել ժողովուրդը, - դառը հեգնանքով պատասխանեց Լևոնը:

- Մենք գիտենք, որ ժողովուրդն անզոր է, սակայն մեր հույսը դուք եք, հայերը...

Հետո ձայնին մտերմական երանգ հաղորդելով և դավադրի պես սեղանին կռանալով, ցածրաձայն ավելացրեց.

- Անկեղծ ասեմ ձեզ. մենք հույների և մյուս քրիստոնյաների հանդեպ մեծ վստահություն չունենք: Հույների երազանքն է ամբողջ Թրակիան, Մակեդոնիան, Պոլիսը, Իզմիրը և կղզիները մեզնից խլել... Ավելի անկեղծ ասեմ. մենք հայերի հանդեպ ավելի մեծ վստահություն ունենք, քան մահմեդականների...

- Ինձ թվում է, պարոն, դուք ոչ մեկի հանդեպ վստահություն չունեք, - խայթեց Լևոնը:

- Ոչ, ոչ, - չհասկացավ կամ չհասկանալու դրեց Մաքթուբը: - Մի՞թե այնքան հիմար ենք, որ մեր ապագան կապենք կիսավայրենի, նախնադարյան բարքերով ապրող քրդերի հետ... Մենք ուզում ենք Օսմանյան կայսրությունը միանգամից հարյուր տարով առաջ տանել, մեզ քաղաքակիրթ ժողովուրդներ են պետք մեր երկրի ներսում:

- Պարոն, դուք շարունակ ասում եք «մենք» և «մեզ», արդյոք ձեր անձից զատ ուրիշնե՞ր էլ նկատի ունեք, - չափազանց բարեկիրթ հարցրեց Ռուբենը:

Մաքթուբին, կարծես, այդ հարցն անսպասելի չթվաց.

- Ձեր հարցը շատ տեղին էր... Ինքս պիտի խոսեի այդ մասին: «Մենք» ասելով նկատի ունեմ ինձ նման մտածող վտարանդի մտավորականների մի ստվար խումբ և հազարավոր համակիրներ հայրենիքում:

- Սակայն ո՞րն է ձեր նպատակը, - հարցրեց Լևոնը:

- Փրկել հայրենիքը բռնակալից, - պոռթկաց Մաքթուբը, հետո, հավանաբար, զգալով, որ չափն անցավ, շարունակեց ավելի զուսպ. - Ես շատ լավ գիտեմ, որ այսպիսի զրույցների համար այնտեղ կյանքով են վճարում, ուստի այլևս չեմ շարունակի, բայց լավ իմացեք, որ հիմա բոլոր ազնիվ թուրքերը և հայերը նույն կերպ են մտածում...

Մաքթուբի գնալուց հետո մի ճնշող լռություն տիրեց: Ոչ մեկը խոսելու ցանկություն չուներ:

- Դուրս գանք, - ասաց Ռուբենը և կտրուկ ելավ տեղից:

Նրանք լուռ քայլում էին գիշերվա անդորը փողոցներով:

- Ի՞նչ հասկացար այս ամենից, - հարցրեց Ռուբենը:

- Սովորական լրտես էր, - պատասխանեց Լևոնը: - Միայն թե դու չպիտի բորբոքվեիր...

- Չէ, չէ... Ուրիշ մի բան կար այս թուրքի մեջ, որը չեմ կարողանում պարզել... Ուրիշ մի բան... Զգիտեմ, ինչպե՞ս ասեմ... Օրինակ՝ ի՞նչ ընդհանուր բան կարող են ունենալ ռուս հեղափոխականները և այս թուրքը... Եվ, հավանաբար նա մենակ չէ... Զգիտեմ, ինձ դուր չի գալիս այս ամենը...

Նրանք չնկատեցին, թե ինչպես հասան դիշերօթիկ:

* * *

Այսօր դիահերձման հերթական դասին անակնկալ հանդիպում էր նրան սպասվում. ճերմակ և լուսավոր սրահում նստած էր նկարիչ Կոնրադը: Սպիտակ խալաթ էր գցել ուսերին, և շատ հնարավոր է նրան բազմաթիվ ծառայողներից մեկի տեղը դներ, եթե չլիներ ձեռքի հսկայական թղթապանակը, որն արդեն մեկ անգամ տեսել էր «Old India»-ում: Ինքը՝ Կոնրադն էլ այնպես էր կլանված իր աշխատանքով, որ գրեթե չնկատեց ուսանողների աղմկալից խմբի մուտքը: Մատիտը ձեռքին, ինչ-որ գծանկար էր ավարտում: Ռուբենը մոտեցավ նրան:

- «Old India»-ի այցելուները քեզ չեն բավարարո՞ւմ, ինչ է, - հարցրեց Ռուբենը:

- Հա՜, դու ես, բարև, - ասաց նա, առանց կտրվելու աշխատանքից: - Պատկերացրու չեն բավարարում... Եվ գիտե՞ս ինչու: Նրանք խաբում են, դիմակ հագնում, պճնվում, ինչ-որ դերեր ստանձնում, որոնք մեծ մասամբ անհարիր են նրանց բուն էությանը... Ինչպե՞ս բացատրեմ... Հանդիսատեսի վրա են աշխատում... Նրանց հետաքրքիր է դիտել մի որոշ շրջան, հետո ձանձրալի են դառնում, ասես, շարունակ միջակ մի ներկայացում նայես, որի ավարտը քեզ հայտնի է, հանգույցն առանձնապես բարդ չէ, դերակատարներն էլ իրար նման են...

Ուսանողները շրջապատել էին նկարչին և հետաքրքրությամբ լսում, ասես իրենց ուսուցիչը ոչ թե դոկտոր Ռուն է, այլ այս տարօրինակ անձնավորությունը, որի արտասովորությունն ամենևին չէր անհետացել սպիտակ խալաթի տակ: Թղթի ընդարձակ տարածքի վրա, տարբեր տեղերում, խառնիխուռն և առանց որևէ կոմպոզիցիայի, մարմիններ էին գծված, գրեթե բոլորն առանց դեմքի, մերկ, անօգնական մարմիններ, նկարված ակադեմիական բարեխղճությամբ և մանրակրկիտ ճշգրտությամբ: Այո, այս տղան գիծ ուներ, ձեռք ուներ, կարելի էր ասել, թե վարպետ է: Ռուբենը նկատեց, որ յուրաքանչյուր մարմինն առանձին վերցված, անշարժ էր, մեռած, սակայն թղթի ընհանուր տարածքի մեջ դիտված, մշտական մի շարժման մեջ էին: Ի՞նչ էր դա, որտեղի՞ց էր գալիս այդ դինամիզմը, հոգեզուրկ այդ մարմիններն ի՞նչ ուժ ունեին իրենց մեջ պահված,

որ այսպիսի մի անկասելի շարժում էր ստեղծում՝ այն է, թե կյանք:

Թիկունքից անսպասելի հնչեց դոկտոր Ռուի կենսախինդ ձայնը.

- Հոյակապ է, չէ՞, պարոնայք ուսանողներ... Իսկ գիտե՞ք այս վարպետը, որի տաղանդի առջև ես խոնարհվում եմ, ինչու է գալիս այստեղ:

Դոկտորը լռեց մի պահ և չարաճճի ժպիտով նայեց Կոնրադին, հետո ուսանողներին.

- Ի դեպ, զգույշ, շատ մի հրապուրվեք նրա նկարներով... Ոչ, ոչ, նա իսկապես վարպետ է, և հենց դա է վտանգը... Սակայն ես չասացի, թե ինչու է ուզում ինձ նկարել: Որովհետև ես, ինչպեսև դուք, պարոնայք ուսանողներ, մահվան սպասավորներ ենք... Այդպես չէ՞, Կոնրադ...

Դոկտոր Ռուն անկեղծ ծիծաղեց: Կոնրադը տարածեց ձեռքերը.

- Դոկտոր, դուք չափազանցում եք, ես այդ իմաստով չասացի... Ի վերջո, մենք բոլորս մահվան սպասավորներ ենք:

- Իրավացի ես, սիրելի Կոնրադ, ես կատակ արեցի... Դե, պարոնայք ուսանողներ, հինգ րոպե ժամանակ, որպեսզի Կոնրադի նկարները դիտեք, որից հետո կսկսենք դասը:

Հսկա թղթապանակում զետեղված նկարները շատ չէին, ընդամենը հինգվեց հատ, և գրեթե բոլորն անավարտ: Մյուս թղթերի վրա արդեն ոչ թե անշարժ, կենսազուրկ մարմիններ էին, այլ հերձված անդամներ՝ ձեռքեր, ոտքեր, ստամոքս... Մի էջ կար, որ ամբողջովին ծածկված էր հերձված ու կտրտված սրտերով:

Ռուբենն անհասկանալի մի սարսուռ զգաց: Հիշեց դասագրքերում զետեղված անատոմիական պատկերները, որոնք շատ անմեղ էին այս դաժան ճեպանկարների համեմատ: Մարդու կյանքի ոչնչացումն էր փաստված դրանցում, և պաղարյուն մի անողոքությամբ: Ի՞նչ էր փնտրում, անկասկած տաղանդավոր, այս արվեստագետը: Բուն պատճառն, ասես, խուսափում էր Ռուբենի հայացքից, սակայն զգում էր, որ մի մեծ տագնապ կա նրա հոգում:

Տարօրինակ զուգադիպությամբ, այսօր ինքը՝ Ռուբենը պիտի հերձեր, իհարկե, դոկտորի հսկողությամբ: Հուզմունքից, թե կողմնակի մարդու ներկայությունից, նշտարակը երկու-երեք անգամ չենթարկվեց նրան:

- Ի՞նչ եք անում, բարեկամս, սա դիակ չէ, սա մարդ է... Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ ահավոր բան կլինի, եթե վիրահատության ժամանակ մկանն այդպես կտրեք, - հանդիմանեց դոկտորը:

Կրկնակի ցավալի էր, քանզի ինքն էլ գիտեր, որ սխալ է արել և որ կարող էր անհամեմատ ավելի ճշգրիտ լինել: Սակայն նկարչի ներկայությունն, իսկապես, ճնշող էր: Նրա կողմը չէր նայում, սակայն որոշակիորեն նրա հայացքն էր զգում իր վրա, ինչպես այն երեկո՝ «Old India»-ում: Շտապում էր վերջացնել, որպեսզի թոթափվեր այդ հայացքի ծանրությունից: Հավանաբար դոկտորն զգաց նրա չփոթության պատճառը, ուստի հանձնարարության ավարտից հետո լրացուցիչ հարցեր չտվեց և միանգամից հաջորդ ուսանողին հրավիրեց:

Կոնրադը մինչև վերջ մնաց իրենց հետ: Դասի ավարտից հետո Ռուբենին հրավիրեց իր մոտ:

Զարմանալի մաքրություն և կարգուկանոն էր տիրում ամբողջ ձեղնահարկը գրավող արվեստանոցում:

- Սա իմը չէ, այլ ընկերոջս, որը հիմա Վիեննայում է և, ինչպես կռահում ես, այնտեղ իմ արվեստանոցում է ապրում և աշխատում:

Հետո, ծիծաղելով, ավելացրեց.

- Տարօրինակ աշխարհ է: Ինձ այստեղ են պատվերներ տալիս, իսկ ընկերոջս՝ Վիեննայում:

Պատերը գրեթե դատարկ էին: Մանր աշխատանքները չհաշված, երեք կտավ կար, որ առանձնանում էին մյուսներից: Առաջինը Առնոլդ Բյոքլինի «Մեռյալների կղզին» էր, հավանաբար, հեղինակի ձեռքովն իսկ արված մի տարբերակ: Երկրորդն այն կոմպոզիցիան էր, որ նկարիչն ընդհանուր գծերով ներկայացրեց սրճարանում: Աշխատանքն անավարտ էր, և Ռուբենը նկատեց, որ պատանին, իսկապես, ինքն է: Երրորդը նախորդի պես դարձյալ կիսատ էր, սակայն միանգամից գրավում էր ուշադրությունը:

Առաջին պլանը հիմնականում ավարտված էր. պայծառ կանաչով փայլող ընդարձակ դաշտի մեջ տարբեր մարմիններ էին փռված՝ մերկ, անօգնական և բոլորն էլ գրեթե անդեմ: Դաշտի հեռապատկերի հետ մարմինները գնալով փոքրանում էին: Կտավի վերին մասը գրեթե դատարկ էր: Երևում էր, որ աշխատելու ընթացքում նկարիչը փոխել է մտադրությունը և դեռ չի որոշել, թե ինչով է լցնելու այս կոմպոզիցիան:

- Ինչպե՞ս է կոչվում այս նկարը, - հարցրեց Ռուբենը:

- Մահվան հաղթանակը:

- Ես չեմ տեսնում, թե վերի մասն ինչպես ես ավարտելու, սակայն սա ինձ ավելի շատ երևում է որպես կյանքի հաղթանակ: Ի դեպ, հիմա հասկացա այն տարօրինակ զգացումը, որն ունեցա այսօր առավոտյան:

- Հա, ես նկատեցի, դու շատ հուզված էիր... Հավանաբար առաջին անգամ էիր մեռած մսին դիպչում:

- Ոչ, ոչ, առաջին անգամը չէ... Ես նկատի ունեմ ձեր գծանկարները, որ տեսա այսօր առավոտյան...

Կոնրադը թղթապանակը բացեց.

- Այս մե՞կը նկատի ունեք:

- Այո, հենց դա: Ահա, խնդրեմ, դուք ձգտել եք նկարել, ինչպես ասացիք, մեռած միսը, ավելին, դուք ահագնացրել եք պատկերը. սրանք այլևս մարմիններ չեն, սա մսակույտ է, եղբայրական գերեզման... Սակայն ուշադիր նայեք. այս ավարտված կյանքերի միջև մի տարօրինակ, աննկատելի շարժում կա, մի perpetuum mobile, հաղթողը նա է, ոչ թե մահը:

Կոնրադն ուշադիր լսում էր:

- Սակայն այդ շարժումն այլևս նրանց համար չէ, նրանք հեռու են, մեկուսացված են դրանից:

- Ընդհակառակը, - աշխուժորեն առարկեց Ռուբենը: - Նրանք մտնում են այդ շարժումի մեջ, թեկուզ մեռած... Ինչպե՞ս ես ավարտելու վերին մասը:

- Դեռ չեմ որոշել... Սկզբում այստեղ ամենակալ Աստվածն էր, որն այս

մարմիններին կյանք էր տվել... Հետո ուզեցի Ահեղ Դատաստանի տեսարանը գծել, սակայն հրաժարվեցի... Ես հավատացյալ եմ, բայց չեմ ուզում իմ արվեստում քրիստոնեական բարոյախոսություն մտցնել... Առայժմ դեռ չեմ որոշել, թե ինչ պիտի լինի այդտեղ...

- Ճիշտ ես արել, ինձ թվում է ոչինչ չպիտի լինի... Ուրիշ բան պետք չէ, քանզի այդ գաղափարն արդեն ստեղծել ես:

- Գաղափարն, իհարկե, կա, սակայն չի զարգանում, չի ամփոփվում:

- Ոչ, ոչ, զարգանում է... Օրինակ՝ ես գիտես, թե ինչ կանեի, այս կանաչ դաշտը կտանեի մինչև վերջ, մինչև հեռանկարի խորքերը... Ես նկարը կլցնեի այդ կանաչությամբ:

- Իսկ ի՞նչ անենք Արարչի հետ:

- Թող մնա իր տեղում... Այս մարմինները գնալով պիտի փոքրանան, անհետանան, կորչեն բնության մեջ: Ահա այսպես կվերադառնան Արարչին... Այդ շարժումը ինքդ ես դրել, բարի եղիր հասցնել ավարտին:

Կոնրադը, ծխամորճը վառած, լսում էր նրան, հետո մի պահ լուռ մնաց, որից հետո, զվարթ տեսքով, ազդարարեց.

- Այս խորհուրդներիդ առթիվ արժե կարմի գինի խմել:

Հետո նորից նայեց նկարին, ասես, ինքն իր համար, գրեթե շշնջաց. «Տեսնենք, տեսնենք», և ավելի զվարթ ձայնով ասաց.

- Չէ, իսկապես պետք է խմել, մանավանդ որ խոստացել եմ:

* * *

Ո՞վ է ինքը՝ փրկի՞չ, սո՞ւրբ, մխիթարո՞ղ, թե՞ սիրահարված երիտասարդ: Ոչ մեկը չի թողնում, որպեսզի ինքդ որոշես անելիքներդ, ինքդ, հետևելով զգացմունքներիդ բնական ընթացքին, գնաս, ինչպես առուն է գնում մարգի միջով, ինչպես ամպն է լողում: Մարդիկ անպայման իրենց խոսքը պիտի ասեն, պիտի միջամտեն: Նույնիսկ ազնիվ ընկերներդ: Ահա խնդրեմ, Պերեսը և Լևոնը, երկուսն էլ սքանչելի տղաներ են, բայց իրենց հոգատարությամբ արդեն չափն անցան: Իսկ այսօր առավոտյան տիկին Շապազը քիչ էր մնում իր ներկայությամբ արտասվեր: Ճիշտ է, առանձնապես մի բան չասաց. «Օ՜, պարոն Ռուբեն, այն օրվա համերգից հետո գիտե՞ք, թե Լիզետն ինչպե՜ս է ոգևորվել... Ամբողջ օրը դաշնամուրից չի հեռանում»: Այսքա՜նը: Այո, երախտագիտություն, շվեյցարացիք այս հարցերում շա՜տ նրբանկատ են: Սակայն ինչո՞ւ թրջվեցին նրա աչքերը, ձեռքերն ինչո՞ւ երկու անգամ, ասես, ցանկացավ մեկնել իր մայրական երախտագիտությունն արտահայտելու համար...

Ինչո՞ւ այս աշխուժությունը, ուշադրության, ընկերական չափազանցված պատասխանատվության, մայրական հոգատարության այս ընդգծված ցույցերը, երբ դեռ փաստորեն մեջտեղը ոչինչ չկա: Ընդամենը երկու անգամ համերգի է գնացել Լիզետի հետ, իսկ այսօր երրորդ անգամ է: Ինքը հրավիրեց Լիզետին, ոչ միայն համերգ լսելու, այլև երախտահատույց լինելու համար, քանզի երկու անգամ աղջիկն էր եղել հրավիրողը:

Այսօր, զարմանալի զուգադիպությամբ, նորից Բեթհովեն ու Բրամս էր, սակայն դաշնամուրային կտորներ: Ռուբենին թվաց, թե այստեղից դուրս չի եկել և որ շարունակվում է այն առաջին երեկոն: Սակայն քիչ անց փաստեց, որ առաջին համերգի սրբազան սարսուռը չի ապրում, այլ սթափ և նույնիսկ առտնին մի զգացում է համակել իրեն:

Նկատեց, որ զբաղված է ոչ այնքան երաժշտություն լսելով, որքան ներկաներին ուսումնասիրելով: «Խայտառակություն է արածս, - ինքնիրեն պախարակեց Ռուբենը: - Եկել ես երաժշտություն լսե՞ս, թե՞ հասարակությունը զննես»:

Փորձեց կենտրոնանալ երաժշտության վրա: Իսկապես գիտակցում էր, որ դաշնամուրային այս սոնատը նույնքան հանճարեղ է, որքան հինգերորդ սիմֆոնիան, որը նրանում ուրիշ՝ մի նոր մարդ բացեց, մեկ ուրիշ Ռուբեն: Ո՞ւր է այդ Ռուբենը, որն անհամեմատ ավելի բարձր է իրենից, այստեղ նստածից, որը ոչ մի կերպ չի կարողանում հաղորդակցվել հանճարին:

Հիշեց այդպիսի մեկ այլ պահ, երբ տասնչորս, թե տասնհինգ տարեկանում առաջին անգամ կարդաց Դուրյանի հանճարեղ բանաստեղծությունը, «Եթե Մահվան տժգույն հրեշտակ...»: Մի ամբողջ շաբաթ ոչինչ չէր երևում աչքին: Ամեն ինչ թվում էր սովորական, առօրյա: Հետո ուրիշ հեղինակների բանաստեղծություններում փնտրում էր այդ սարսուռը, հայտնության այդ հազվագյուտ վայրկյանները, և եթե գտնում էր, ապա ոչ միևնույն ուժգնությամբ:

«Դա ճանապարհն է դեպի Աստված, դեպի կատարելություն», - մտածեց նա: Նշանակում է, եթե ինքնիրեն հաղթահարի, դառնա ավելի բարձր, ապա հնարավոր է այն երանելի պահը նորից զգա: Նշանակում է այդ ճամփան անվերջ է... Բայց այդ անվերջությունը նաև խոստում է, որ հաջորդ պահի ցնցումն ավելի ուժգին է լինելու: Ճիշտ այդպես են հասնում լեռնաշղթայի ամենաբարձր գագաթին: Սկզբում բլուրի կատարն ես հասնում և մի գեղեցիկ տեսարան է բացվում առջևդ: Հետո, մինչև հաջորդ, ավելի բարձր բլուրի կատարը հասնելը, անցնում ես ձորակով, որտեղ տեսարանը նվաղ գեղեցիկ է: Եվ այսպես շարունակ: Բա՜րձր, ավելի բարձր...

Սոսկալի մի բան նկատեց. Լիզետը հորանջում էր: Ճիշտ է, գրեթե աննկատ, չափազանց նրբին, ափի հակառակ երեսը բերանին դրած: Սակայն երևում էր, որ նա ևս չի լսում, չի ապրում երաժշտությամբ: Իրար հասկացան անխոս, մանավանդ նստած էին շարքի վերջին նստարաններին, իսկ ելքի դուռը պարզապես կողքին էր: Բառացիորեն մեկ րոպե հետո փողոցում էին: Լիզետը մեղավոր ձայնով ասաց.

- Իմ պատճառով զրկվեցիք համերգից: Այսօր չեմ հասկանում, թե ինչ է կատարվում հետս, ամբողջ օրը հորանջում եմ:

- Դուք մեղավոր չեք, ես պարզապես չէի կարողանում կենտրոնանալ... Այդ երաժշտությունն, ասես, ուրիշի համար էին նվագում:

Մայիսյան հոյակապ երեկո էր: Իսկապես հանցագործություն էր այսպիսի օրը ներսում մնալ: «Իջնենք Ուշի», - առաջարկեց աղջիկը: Ծուռումուռ, զառիվար փողոցներով իջան լճափ: Ճանապարհին մի քանի անգամ Լիզետի ձեռ-

քը բռնեց և զգաց, թե ինչպես մարմնի միջով մի սարսուռ անցավ: Տարօրինակ էր, քիչ առաջ ապարդյուն փորձում էր այն առաջին սարսուռը վերապրել: Իսկ հիմա բավական էր, որպեսզի մեկ-երկու անգամ պատահական դիպչեր աղջկա ձեռքին, որպեսզի մեկ ուրիշ, գուցե նույնքան ազնիվ մի զգացում ապրեր:

Զգաց, որ աղջիկն է տանում իրեն: Եվ որ հետևում է նրան հնազանդ: Սակայն ոչ. նրանց երկուսին հզոր և անտեսանելի մի ուժ առաջնորդում էր դեպի ո՞ւր...

Հասան լճափ: Տաղավարները, սրճարանները, զվարճանալու բոլոր հաստատությունները լեփլեցուն էին պարապ ամբոխով: Նրանք անխոս շրջանցում էին այս մարդաշատ վայրերը: Համերգասրահից դուրս գալուց հետո ընդամենը մի քանի բառ էին փոխանակել: Նույնիսկ թվում էր, թե վախենում են խոսել, որպեսզի նրբին և փխրուն մի բան հանկարծ չփշրվի: Մի քանի սրճարաններից գեղեցիկ և հրապուրիչ եղանակներ էին լսվում, իսկ մի տեղ գինով ու զվարթ ամբոխը, զանազան դիմակներ դրած, մի խելագար շուրջպար էր սկսել: Ամեն ինչ հրապուրիչ էր ու կանչող, սակայն նրանք քայլում էին մեկ ուրիշ հրամանին ենթակա:

Իսկապե՞ս աղջիկն էր իրեն տանում, թե ինքն աղջկան, ի՞նչ կարևոր է... Նրանք անցան սրճարանների շարքը և թաղվեցին գրեթե անթափանց խավարի մեջ: Այո, քայլում էին դեպի այն քարակույտը, որին թիկն տված առաջին անգամ լսում էր գիշերը:

Խավարի միջից, անսպասելի, երեք ձիավորներ դուրս ցատկեցին: Տարօրինակ էին նրանք իրենց արտաքինով: Երեք տղամարդ էին: Նրանցից մեկը, անգլերենի նկատելի շեշտադրությամբ, Լյուտրիի ճանապարհը հարցրեց, իսկ երկրորդը մի ծաղիկ նվիրեց Լիզետին: Երրորդը լուռ էր, դեմքը թաքցրել էր սև կնգուղի տակ և միայն աչքերն էին փայլատակում ածխի պես:

Նրանց հեռանալուն պես ամպերի տակ թաղված լուսինն անմիջապես դուրս եկավ և անդենական լույս տարածեց շուրջբոլորը: Միայն ալիքների խշրտոցն էր խախտում համատարած լռությունը: Լիզետը հանկարծ ճչաց, ձեռքի վարդը շպրտեց մի կողմ և ափը մեկնեց դեպի Ռուբենը: Մատնեմատի վրա արյան խոշոր կաթիլ գոյացավ: Նրա դեմքի լարված արտահայտությունը խոսում էր ոչ այնքան ֆիզիկական ցավի, որքան անհասկանալի, դժնդակ անակնկալից առաջացած ցնցումի մասին: Ռուբենը փորձեց կատակով մեղմել կացությունը.

- Երեխա ժամանակ ի՞նչ էիր անում, երբ մատդ վնասվում էր:

- Մատս ծծում էի:

- Նույնը հիմա արա, միակ հիգիենիկ միջոցը:

- Բայց ինչո՞ւ ծակեց:

- Այդպես է սիրելիս, մի՞թե չգիտեիր, որ վարդը փշեր ունի:

- Գիտեի, բայց միշտ անփուշ տեղից էի բռնում, այս անգամ մուրթ էր, չտեսա:

Մինչև քարակույտը դեռ որոշ տարածություն կար, բայց ահա, ասես, նորից մի ձեռք նրանց քայլերն ուղղեց դեպի փոքրիկ կամրջակը, որտեղ վարձու նավակներն էին. նավավարի հետ ժամը 1 ֆրանկ, առանց նավավարի՝ հինգ անգամ պակաս:

Նավավարի կարիք նրանք չունեն: Ոչ միայն, որ Ռուբենը ծովի ափին ծնված և մեծացած տղան, հրաշալի լողալ ու թիավարել գիտի, այլև, որ երրորդն ավելորդ է: Իսկ երրորդն արդեն գիտե, որ այս ժամին վարձողներն իր կարիքը չունեն, նա միայն խնդրում է, որ ճիշտ ժամանակին վերադառնան և ափի երկայնությամբ թիավարեն:

Երկրորդ հրահանգին չեն հետևում: Նավակն ուղղություն է վերցնում դեպի դիմացի ափը՝ դեպի Ֆրանսիա: Ափից հեռանում են մի երկու հարյուր մետր: Ավելին կգնային, սակայն աղջիկն ինքն է կանգնեցնում Ռուբենին, որը վաղուց չէր թիավարել և հիմա, անհագ կարոտով և չափազանց վարժ, շարժում է թիակները: Նա հանել է բաճկոնը, թևերը սոթտել, շապիկի կոճակները բացել: Աղջիկը նստել է դիմացը և հմայված նայում է նրան: Հանկարծ նա գոչեց.

- Բավական է, կանգ ա՛ռ:

- Ինչի՞ց ես վախենում, լողալ չգիտե՞ս:

Աղջիկը չպատասխանեց: Նա համարձակ մոտեցավ, Ռուբենին գրեթե տապալեց և խեղդելու պես սկսեց համբուրել: Մի խենթ վճռականություն կար աղջկա գործողությունների մեջ, և որքան համարձակ էր նա, նույնքան էլ անվարժ: Երևում էր, որ զգացմունքների մի ահավոր հորձանք քանդել է նրա բոլոր կապանքները և վճռել է ամեն ինչ անել միանգամից, հենց հիմա, այստեղ:

Ռուբենը շշմած էր նրա գրոհից, և հաճույքով կտրվեր տասնութամյա անփորձ աղջկա վայրագ պոռթկումին, եթե չլիներ տեղի կատարյալ անհարմարավետությունը: Բացի այդ, նավակն սկսեց սոսկալի ճոճվել՝ սպառնալով նրանց ջուրը գցել: Լիզետն ինքն էլ տեսավ այդ վտանգը: Անսպասելի վեր կացավ, շտկեց զգեստն ու մազերը և գրեթե հրամայական ասաց.

- Վերադառնա՛նք:

Նավավարը զարմացած էր: «Պարոն, դուք դեռ կես ժամ ունեիք»: Սակայն որոշողը «պարոնը» չէ: Նա այսօր լուռ ենթարկվում է վերին հրամանին, որն ի կատար է ածվում աղջկա միջոցով: Հիմա նա ուղղակի բռնեց Ռուբենի ձեռքը և վազեց դեպի մոտակա փողոցի լույսերը: Ռուբենը ժամացույցը նայեց:

- Ճիշտ ժամանակին ենք վերադառնում տուն, համերգը հիմա նոր վերջացած կլինի: Այնպես որ մայրիկդ գոհ կմնա:

Լիզետը կանգ առավ մայթի լապտերի տակ և մարտահրավերի պես, աչքերի մեջ նայելով, ասաց.

- Մայրիկն այսօր ուշ է վերադառնալու: Կեսգիշերից հետո: Հիմա հազիվ ժամը իննը լինի:

Հետո նա Ռուբենին մի կողմ տարավ, համբուրեց և ձևանալով, թե իսկապես սրթսրթալով, ասաց.

- Շտապ մի կառք վարձիր, ես մրսում եմ:

Տասը րոպե չանցած տան առջև էին: Ամբողջ շենքում ընդամենը երկու լույս էր վառվում, մեկն իրենց սենյակն էր, մյուսը, հավանաբար, օդեսացին էր, որն ուսանելու փոխարեն հեղափոխականների միջազգային եղբայրակցության հիմունքներն էր մշակում: Աղջիկը շտապով բացեց դուռը, ճաշասրահով գնաց խոհանոց և սկսեց ինչ-որ բան փնտրել սնունդի պահարանում: Վերջապես ալ-

յուրի տոպրակների և շաքարավազի տուփերի ետևից հանեց հսկա մի չիչ՝ կիսով չափ լիքը:

- Տանձի օղի է, - ասաց նա:

- Այստե՞ղ, օղի՞, - ապշած հարցրեց Ռուբենը:

Աղջիկն ուղղակի շշից մի քանի կում արեց հետո, խեղդվելով, մեկնեց Ռուբենին:

- Եթե չես հավատում, ինքդ համոզվիր:

Իսկապես որ օղի էր: Թունդ և գրավիչ: Այս նուրբ աղջիկն ինչպե՞ս կարողացավ ուղղակի շշից խմել: Օղին հաճելի այրեց ստամոքսը: Աղջիկը ձեռքից խլեց, ևս մի կում արեց: Ինքը ևս: Հրա՜շք է այս օղին: Ճիշտ է, դժվար է գնում, կոկորդը քերելով, սակայն ազնիվ, առնական գինովություն է բերում: Կեցցե՛ս, տիկին Շապազ, մեզ արգելում ես անգամ մի կում գինի խմել ճաշի հետ, մինչդեռ այստեղ թաքուն, վառոդի ուժգնությամբ խմիչք ես պահում և, հավանաբար, օրվա մեջ մեկ-երկու անգամ գցում:

...Այս աղջկա երակների մեջ ոչ թե արյուն է հոսում, այլ կրակի պես օղի: Նրա կոկիկ և մաքուր սենյակը մի քանի վայրկյանում տակնուվրա եղավ: Աջ ու ձախ զգեստներ թափվեցին, կոշիկներ, սպիտակեղեն: Նույնիսկ անկողինը կարգին չբացեց: Ամեն ինչ արվում էր ծայր աստիճան հապճեպությամբ, ասես, նրանց ընդամենը մի քանի րոպե ժամանակ էր տրված: Փութկոտությունը վերածվում էր խուճապի, աղջիկն արդեն մեքենայական շարժումներ էր անում... Ո՛չ նրա համբույրն էր համբույր, ո՛չ գգվանքն էր գգվանք, ասես սիրո ճորտ լիներ, որ լուռ ու հնազանդ կատարում էր մի պարհակ և շտապում հնարավորին չափ շուտ և արագ անել, որպեսզի ժամ առաջ օձիքն ազատի, չնայած երևում էր, որ ցանկությունը խեղդում է նրան... Պետք էր նրան օգնել, մի քիչ խելքի բերել, թեկուզև թեթև բռնությամբ, այլապես, ամբողջ կյանքում, ոչ միայն այս գիշերը, այլև իրեն, պիտի հիշի ցավախառն, գուցեև տհաճ զգացումներով:

Կտրուկ շարժումով աղջկան իր վրայից մի կողմ վանեց: Աղջիկը չհասկացավ, թե ինչ կատարվեց, թե ինչու արեց այդ շարժումը: Հետո, ուսերից ամուր բռնած, մոլեգնորեն ցնցեց: Աղջկա գլուխը տարուբերվեց, ոսկեգույն խոպոպիկները լուսապսակ կազմեցին: Մի պահ զարմացած ու հարցական նայեց Ռուբենին և նորից գրոհեց: Այս անգամ արդեն հարկ եղավ երկու թեթև ապտակ տալ նրան:

Աղջիկը, վերջապես, ուշքի եկավ, իհարկե, սխալ հասկանալով կատարվածը: Նա, ապուշացած դեմքով, մորե մերկ, նստեց անկողնի եզրին, հետո աննկատ վար սահեց, կծկվեց մահճակալի մոտ և սկսեց լուռ լաց լինել: Այժմ նրա դեմքին զարմանալի հնազանդություն և դատապարտվածություն կար, արցունքները դանդաղ գլորվում էին երեսն ի վար:

Նրան բարձրացրեց և խնամքով պառկեցրեց անկողնուն: Հիմա վերջապես կարող էր հանգիստ, անշտապ, ամբողջությամբ տեսնել, հայացքով վայելել աղջկա մարմինը: Դա մի հրաշք էր կատարյալ: Այստեղ արդեն բազմաթիվ առիթներ էր ունեցել վայելելու եվրոպացի աղջիկների անթերի, մեկը մյուսից կատարյալ մարմինները, սակայն այսպիսի հրաշք դեռ չէր տեսել: Սա իրոք այն

դեպքն էր, երբ չգիտես, թե այդ մարմնին տիրանա՞լն է ավելի մեծ հաճույք, թե այդ մարմնով հիանալը: Սակայն նախ պետք էր ջնջել, վերացնել ակամա բրտության աննշան հետևանքները:

Զգուշորեն սրբեց արցունքները: Աղջիկը չանդրադարձավ, բայց կարծես դադարեց արտասվել: Հիմա վերջապես ինքն էր դրության տերը, ուստի պետք էր զգույշ, նրբանկատորեն «արթնացնել» քնած գեղեցկուհուն և, անշուշտ, համբույրներով, մանավանդ որ այս աղջիկը ոտքից գլուխ համբուրելիք է: Մի քանի բոպե շարունակ որևէ անդրադարձ չնկատեց, բայց հանկարծ աղջկա ձեռքն զգաց մազերի մեջ: Նրա մատները դանդաղ, մեղմ շոյում էին գլուխը, մազերը խառնում: Հետո մյուս ձեռքը հայտնվեց մեջքին՝ նույնպես մեղմորեն, նույնպես շոյելով: Եվ այս երկու ձեռքերի հպումներից սկսեց զգալ իր շոյանքների ու համբույրների ուժգնությունը, այդ ձեռքերն էին ասում, թե ինչպես է արթնանում, բացվում աղջկա մարմինը՝ որպես ազատ, անկաշկանդ պատասխան բնության կանչին:

Ռուբենն իրեն սիրո աստված էր զգում: Աղջիկը հնազանդ էր ամեն ինչում, սակայն ոչ անտարբեր, ոչ կրավորական, որը պիտի հարձակողականի մյուս ծայրահեղությունը լիներ՝ նույնքան անհանդուրժելի: Յուրաքանչյուր համբույրից հետո արտասվոր սարսուռներ էին անցնում աղջկա մարմնով, որ անմիջապես հաղորդակցվում էին նրան: Նա արդեն հաղթահարել էր վախն ու ցավը, և հիմա վայելում էր սերը: Նրա աչքի առջև, բառացիորեն մի քանի բոպեում, աղջիկը կին դարձավ, ըստ որում շռայլորեն, լիաբուռն սիրող կին, որի մարմնի յուրաքանչյուր նյարդը պատրաստ է կրկնակին տալ սիրո ամեն մի կանչին: Արդյոք ի՞նչն էր, որ կաշկանդված, բուռն ցանկությունից խենթացած աղջկան կին դարձրեց, թե՞ աղջիկն իր մեջ թաքնված տաղանդներ ուներ: Եվ նրա նրբությունը, նրա պատրաստակամ հնազանդությունը առնականությունը շոյող, նույնիսկ մտրակող մի բան ուներ, և տղան, առանց հագենալու, փորձում էր զգալ, վայելել այս չքեղ մարմնի գաղտնիքը:

Աղջիկը մեկ անգամ միայն խոսեց: Երբ առաջին մերձեցումից հետո, նրա կողքին պառկած, նայում էր առաստաղին և, ո՜վ զարմանք, վարագույրից անդրադարձվող սև ու ճերմակ գծերը հաշվում, նա կտրուկ շարժումով կծկվեց իր առաջին արուի կրծքին և փոքր ինչ տագնապած ձայնով հարցրեց. «Դու ինձ չես լքի, չէ՞...»:

Ռուբենն անկեղծ ծիծաղեց և հարցրեց. «Քանի՞ համբույր տամ, որ համոզվես, թե այսուհետ ընդմիշտ միասին ենք լինելու»: «Ոչ մի համբույր, միայն ասա՝ այո՞, թե՞ ոչ»: «Ի՞նչը՝ այո և ի՞նչը՝ ոչ», - սկսեց աղջկա հոգու հետ խաղալ տղան: Աղջիկը սրտնեղեց և սկսեց ցնցել նրան ու շարունակ կրկնել. «Վա՛տն ես, վա՛տն ես, վա՛տն ես...», և տղայի համբույրներն ու սաստկացող շոյանքները ոչ միայն լռեցրին, այլև իսկապես համոզեցին, որ այսուհետ ընդմիշտ միասին են լինելու: Իսկ կեսգիշերին, երբ տղան բացատրում էր, թե ուր որ է մայրը կգա, թե պետք է, որ ինքն անպայման հեռանա, աղջիկը չէր ուզում թողնել նրան, ասես իսկապես վախենալով, թե տղան ընդմիշտ հեռանում է իրենից...

Ուղիղ կեսգիշերն էր: Փայտե ճռճռան աստիճաններն այսօր դաշինք էին կնքել նրա հետ և ոչ մի ձայն չէին հանում: Ամենայն զգուշությամբ բարձրացավ և վերջին հարկում, սենյակ մտնելուց առաջ, մի հայացք նետեց շուրջբոլորը, ասես, համոզվելու, որ ոչ ոք չկա:

Սենյակ մտնելուն պես տարօրինակ մի զգացում ստիպեց նրան ցնցվել: Թվաց, թե աներևույթ մեկը կար, որին գուցե գտնելն անկարելի էր, սակայն նա ներկա էր սենյակում՝ առավել քան... Մանոթ բույրը հիշեց, մոտեցավ սեղանին, ուր կիսախավարի մեջ ավելի շատ զգաց, քան տեսավ ներկայությունը: Փութով վառված լապտերի լույսը խավարի միջից կորզեց վարդագույն և բուրավետ ծրարը՝ տոհմական զինանշանով և Լևոնի երկտողը, ուր նա հայտնում էր, թե «Խիստ համակրելի մի օրիորդ, այսօր ժամը 19-ին եկավ այստեղ և քեզ փնտրեց, որպեսզի անձամբ քեզ հանձնի սույն ծրարը»:

Ռուբենը ժպտաց. սենյակը լցված էր անուշահոտությամբ: Ի՞նչ է դրում կոմսուհին... Կարևոր մի բա՞ն... Ի՞նչ կարի՞ք ունի, թե պարզապես մեկով ուզում է ավելացնել իր երկրպագուների ցանկը:

...Ինքն էլ զարմացավ իր վճռից. ծրարը դրեց բաճկոնի գրպանը, հետո զգույշ հանվեց, որպեսզի Լևոնին չարթնացնի և մտավ անկողին: «Վաղը կկարդամ», - որոշեց նա:

* * *

Դոկտոր Ռուի ջանքերով հիվանդանոցում ստեղծվել էր մի ազնիվ ավանդույթ. քիչ թե շատ ճանաչված բժիշկները, երբեմն-երբեմն, այցելում էին քաղաքի և մերձակայքի աղքատ հիվանդներին: Որպես կանոն նրանց ուղեկցում էին ուսանողները: Սա ոչ միայն բժշկական փորձառություն էր, այլև պատիվ, քանի որ ուսանողներին ընտրում էին իրենք՝ բժիշկները:

Այսօր առավոտյան դոկտոր Ռուն հարցրեց, թե արդյոք չի՞ փոխել իր մտադրությունը, ցանկություն ունի՞ իրեն ուղեկցելու: Պայմանավորվեցին, որ երեկոյան ժամը յոթին կհանդիպեն հիվանդանոցի մուտքի առջև:

...Ժամը յոթին սակայն չկարողացան գնալ: Դոկտոր Ռուն ութին քառորդ պակաս դուրս եկավ վիրահատման սրահից: Նրա տեսքը մտահոգ էր, երևում էր, որ չափազանց ծանր վիրահատություն է վերջացրել: Ռուբենին թվաց նույնիսկ, թե հոգնած է և այսօրվա այցելությունները գուցե հետաձգի: Սակայն տեղով եռանդ է այս բժիշկը: Բառացիորեն քառորդ ժամ հետո, կազմ ու պատրաստ, մոտեցավ կառքին: Նրան ուղեկցում էին բժշկության թեկնածու երկու ուսանողներ, որոնք ավարտել էին ուսման քառամյա դասընթացները և հիմա երկու տարի պիտի աշխատելով ուսանեին հիվանդանոցում:

Նրանցից մեկի ձեռքին հասցեների ցուցակն էր: Բոլորն էլ, առանց բացառության, Լոզանի արվարձաններն էին կամ մոտակա գյուղերը:

- Սկսենք ամենամոտիկ հասցեից, - հրահանգեց բժիշկը:

Նրանք հասան Գազի գործարան և թեքվեցին աջ, դեպի դաշտի մեջ կանգնած մեկ-երկու հարկանի տնակները:

Ոչ գյուղ էր, ոչ քաղաք: Տները ցանկապատ չունեին: Պարզապես շրջապատված էին փոքրիկ, խնամված պարտեզներով:

Դուռը բացեց կարմրաթուշ, բոկոտն մի աղջիկ, երեխան գրկին, մի ձեռքին էլ կարտոֆիլ կեղևելու դանակը: Դոկտորին, հավանաբար ճանաչեց, քանի որ անմիջապես քաշվեց մի կողմ և հրավիրեց ներս:

Գյուղական տնակի համար լավ լուսավորված ընդարձակ սենյակում չորս երիտասարդ տղամարդիկ նստած թուղթ էին խաղում: Յուրաքանչյուրի առջև ճերմակ գինու բաժակն էր դրված: Բժշկի հայտնվելուն պես, թղթերը սեղանին դրեցին և կարգապահ աշակերտների պես կանգնեցին ոտքի: Վերջինս ձեռքը շարժելով ասաց. «Շարունակեք, շարունակեք, դուք իմ կարիքը չունեք...»: Հետո, առանց հարցնելու, քայլեց առաջ՝ դեպի սենյակի խորքում գտնվող փայտե սանդուղքը և բարձրացավ վեր:

Երկրորդ հարկն անպետք իրերի մի պահեստ էր: Երևում էր, որ տանտերերի միջոցները կամ համբերությունը հատել է և շտապել են այս անավարտ ու անխնամ տարածության վրա կտուր քաշել և տակն ապրել: Պահեստի ծայրին մոմի մի լույս էր պլպլում, կողքը մագաղաթի դեմքով մի ծերունի էր պառկած: Բժշկին տեսնելով նա աշխուժացավ, կիսապառկեց և ձեռքը մեկնեց.

- Օ՜, դոկտոր, թող Արարիչը ձեզ տասնապատիկը հատուցի ձեր բարության համար:

- Արարչի հետ գործ չունես, սիրելիս, դու ինձ ասա, թե հիմա որտեղդ է ցավում:

- Նույն տեղն է դոկտոր, ստամոքսս, ահավոր այրուցք է, ցավեր...

- Անցյալ անգամ կարծեմ թոքերիդ ծակոցներից էիր բողոքում:

- Ճիշտ է, դոկտոր, մրսել էի: Հիմա անցավ, բայց ստամոքսիս ցավերը մնացին:

- Քո կարմիր գինին շարունակո՞ւմ ես խմել:

- Ձեր արգելքից հետո՝ ավելի քիչ:

- Քիչ որքա՞ն, երկո՞ւ շիշ, մե՞կ շիշ:

- Մեկ բաժակ, դոկտոր:

- Ես կարծեմ իսպառ արգելեցի, ինչպեսև ծխելն արգելեցի և հատկապես քո այդ սոսկալի օղին:

- Իրավացի եք, դոկտոր, բայց իմ հայրը հարյուր տարի ապրեց և մինչև մահվան օրը այդ օղին էր խմում, ամեն օր:

- Քո հայրը, սիրելիս, գյուղացի էր Յուրայի լեռներում, իսկ դու ամբողջ կյանքդ բանվորություն ես արել և թունավոր օդ շնչել: Տարբերությունը հասկանո՞ւմ ես:

- Հասկանում եմ, դոկտոր, այն էլ ինչպես...

- Իսկ տղադ ինչո՞ւ ինքը չեկավ հիվանդանոց, ինչո՞ւ էիր հարսիդ ուղարկել:

- Հապա ո՞ւմ ուղարկեի... Այդ աղջիկը բարի սիրտ ունի, իսկ տղաս սպասում է, թե երբ պիտի մահանամ...

Դոկտոր Ռուն ժամացույցը նայեց և վճռական ձայնով դիմեց հիվանդին.

- Ոչ թե տղաք, այլ դու ես ուզում մահանալ: Պիտի կրկնեմ նույն խորհուրդները, որ անցած անգամ ասացի: Հա..., - նա մի տոպրակ հանեց: - Այս փոշին ամեն օր, ուտելուց հետո մեկ թեյի գդալ կխմես... Ցտեսություն:

Պարզվեց, որ հիվանդների մեծ մասն այս կողմերում էր ապրում: Եվ գրեթե բոլորը տարիքով մարդիկ կամ ծերեր: Բոլորն էլ բողոքում էին միևնույն ցավերից: Սակայն ամենատարօրինակը մի ծերունի էր, որը ոչ մի որոշակի բողոք չուներ, սակայն խնդրել էր, որ հատկապես դոկտոր Ռուն այցելի իրեն: Նա այդպես էլ ասաց. «Դոկտոր, ապրել չեմ ուզում, այդ պատճառով էլ ձեզ կանչեցի»: «Այդ դեպքում ինձ չպիտի կանչեիր, սիրելիս, ես ապրել ցանկացողների համար եմ»:

Ռուբենը և մյուս ուսանողներն ապշած էին, թե ինչպիսի հոգատարությամբ նստեց ծերունու կողքին և մոտ կես ժամ հետը զրուցեց: Դոկտոր Ռուն, որի յուրաքանչյուր բոպեն հաշվված էր այստեղ նստած մխիթարող զրույց էր վարում լքված մի ծերունու հետ: Երբ դուրս եկան, բժշկության թեկնածուներից մեկը հարցրեց.

- Ձեք կարծո՞ւմ, դոկտոր, որ ծերուկը չփոթել էր հասցեն. քահանայի փոխարեն ձեզ է կանչել... Չէ որ այս ընթացքում դուք կարող էիք մի լուրջ հիվանդի այցելել:

Ի զարմանս ուղեկցող երեքի, դոկտոր Ռուն կտրականապես առարկեց.

- Քահանաներն ավելի շատ մտահոգված են հոգիներով և, ըստ էության, դատապարտում են մարմինը, իսկ մենք ձգտում ենք մարմինն առողջ պահել, որպեսզի հոգին այնտեղ առիթ չունենա մեղսագործելու:

- Այլ խոսքով, օգնում ենք քահանաներին, - ասաց Ռուբենը:

- Թերևս... Այսպես թե այնպես, նրանք մեզնից հետո են գալու, սակայն վստահ չեմ, թե մենք նրանցից ավելի սլակաս ենք մտահոգված հոգու առողջությամբ...

- Թույլ տվեք, դոկտոր, ասել, որ դուք այսօր ավելի շատ հոգին էիք բուժում, քան մարմինը, քանզի, ինչպես ինձ թվաց, դրանցից ոչ մեկը ծանր հիվանդ չէր:

- Ինչ վերաբերում է հիվանդության ծանրությանը, դժվարանում եմ վերջնական ասել... Ես բավական մակերեսային քննեցի... Իսկ հոգին բուժելու անհրաժեշտությունը ճիշտ եք նկատել: Այո, այդ մարդիկ իսկապես հիվանդ են՝ մարմնական տարբեր հիվանդություններ ունեն, բայց ինքներդ տեսաք, նրանք ավելի շատ տառապում են լքվածությունից, ավելորդության զգացումից, միայնությունից... Եթե հոգու այդ տառապանքները չլինեին մարմինը գուցե այդքան ուժգին չցավեր:

Կառքն այժմ քաղաքից դուրս էր եկել և ընթանում էր դեպի հյուսիս, դեպի մոտակա գյուղերը: Ժամը տասն անց էր, սակայն դոկտորն անպայման ցանկացավ ցուցակում նշված վերջին հիվանդին այցելել այսօր, ոչ թե հաջորդ անգամ: Գյուղը բարեբախտաբար հեռու չէր: Հիվանդի տունն էլ դյուրությամբ գտան: Ինչպես երևում էր, բոլորը գիտեին նրան. «Հիվանդ ժա՞կը... Հա, գիտեմ: Այն տունը տեսնո՞ւմ եք, զանգակատնից ձախ... Այդտեղ է»:

- Նկատեցի՞ք, - հարցրեց դոկտորն իր ուսանողներին, - հիվանդներն այստեղ այնքան քիչ են, որ այդ վիճակը նշում են որպես մականուն:

- Գյուղացիներն ի՞նչ է, չեն հիվանդանո՞ւմ, - հարցրեց ուսանողներից մեկը:

- Այստեղ ծնվում և մահանում են վաղուց ի վեր հաստատված մի բնականությամբ, և ծերանալու հետ սկսվող զանազան ցավերն ու առողջական խնդիրները հիվանդություն չեն համարում... Այստեղի ժողովուրդը երկարակյաց է, հարյուր տարեկանները նրանց մեջ հազվագյուտ երևույթ չեն:

...Հիվանդին տանը չգտան: Նա դուրսն էր: Ավելի ճիշտ, իր խնդրանքով, նրան դուրս էին բերել և տեղավորել անասնագոմում... կովերի հարևանությամբ: Մոտ քառասուն տարեկան տղամարդ էր «հիվանդ ժակը»՝ ծայրաստիճան հյուծված, դեմքը հողագույն:

Ներս մտնելուն պես, անասունների սովորական հոտից զատ, զգացվեց ահավոր մի գարշահոտություն, որն, անշուշտ, տարածում էր այս թշվառը: Նրանց ուղեկցող կինը, մեղավոր դեմքով, կոշտացած ձեռքերը ցույց տվեց և ասաց.

- Ամբողջ օրը նրա սպիտակեղենն եմ լվանում, բայց միևնույն է փրկություն չկա:

- Ներող կլինեք դոկտոր, ես ստիպեցի կնոջս, որ ինձ բերի այստեղ... Մեղք է ինքը, մեղք են երեխաներս... Անասուններն էլ մեղք են...

Զնայած մոր խստիվ կարգադրությանը, երեխաները եկել կանգնել էին դռան մոտ: Նրանք երկար էին սպասել հրաշագործ բժշկի գալստյան և այժմ անպայման ուզում էին ներկա գտնվել իրենց հոր փրկության տեսարանին:

Սոսկալի էր: Փաստորեն, դեռևս երիտասարդ, ընտանիքի միակ հույս տղամարդը դատապարտված էր անշարժ պառկելու այս անկողնում և անօգնական երեխայի պես իր կարիքներն անելու տեղում, հենց անկողնի մեջ: Ահա ինչու իր իսկ պնդումով, նրան բերել էին այստեղ, երկու այծերի և երկու կովերի մոտ: Ռուբենը փաստեց, որ իսկապես ցավալի, ողբերգական, բայց միաժամանակ տարօրինակ տեսարան էր, որ ակամայից հիշեցնում էր մեկ ուրիշը՝ փրկչի փարախը և նրան այցի եկած Երեք Մոգերը: Միայն թե այստեղ մարդկության ծնվող հույսի փոխարեն, ընտանիքի մարող հույսն էր: Ռուբենը հիմա հասկացավ դոկտորի դիտողության իմաստը. այստեղ, այս լեռներում, ծեր, անկարող մարդը հիվանդ չէ, երիտասարդ հիվանդն է համարվում հիվանդ:

- Դոկտոր, - դիմեց կինը, - լսել եմ, որ մի հրաշք նյութ են գտել Փարիզում, թե Բեռլինում, որն այսպիսի ուռուցքներն ակնթարթի մեջ բուժում է:

- Որտեղի՞ց եք լսել, ո՞վ է ձեզ պատմել, - հետաքրքրվեց դոկտորը:

- Մեր գյուղի քահանան պատմեց, թերթերում է կարդացել... Միայն թե ասում էր, որ շատ թանկ է...

- Այո, կա այդպիսի նյութ, ռադիումը, և իսկապես թանկ է, չափազանց թանկ..., - ասաց դոկտորը: - Սակայն խնդիրը միայն գինը չէ...

- Դոկտոր, - աղաչական դիմեց կինը, - ասացեք, որքա՞ն դրամ է պետք, այս անասունները կվաճառեմ... Ես առողջ եմ, գիշեր-ցերեկ կաշխատեմ... Ասեք, որքա՞ն է պետք...

«Երեք Մոգերը» շվարած քաշվել էին մի կողմ, թշվառության դեմ դիմաց մենակ թողնելով միակ փրկչին՝ դոկտոր Ռուին, որը կնոջ աղաչանքներն անպատասխան թողնելով, հայացքը շրջեց, հետո դարձավ հիվանդին.

- Միշտ ցավո՞ւմ է:

- Ցավ ասելը քիչ է, - մի կերպ պատասխանեց հիվանդը:

- Գիշերները չի մեղմանո՞ւմ:

- Գիշեր ցերեկ չունի...

Դոկտոր Ռուն դարձավ բժշկության թեկնածուներից մեկին՝ իտալացի մի երիտասարդի, որի ձեռքին էր բժշկի պայուսակը, մոտ կանչեց և կարգադրեց մորֆին սրսկել հիվանդին:

Մի քանի րոպե հետո դոկտորը և բժշկացուների խումբը, շվարած ու ամոթահար, դուրս եկան և տեղավորվեցին կառքի մեջ: Նրանք երկար ժամանակ լուռ էին: Վերջապես, ուսանողներից մեկը, այն իտալացին, որ սրսկեց, համարձակվեց հարցնել.

- Դոկտոր, ինչո՞ւ չասացիք, որ այդ մետաղի մեկ գրամը քսանհինգ հազար ֆունտ ստեռլինգ արժե:

- Նախ, այդ գումարն ասելով ես վերջնականապես կսպանեի նրանց... Ամբողջ գյուղն այդքան գումար չի կարող հավաքել... Սակայն խնդիրը միայն դրամը չէ, այլ որ այդ՝ հրաշագործ հորջորջված մետաղն ավելի շատ նոր ու առավել խրթին հոգսեր է բերում, քան եղած հիվանդությունները բուժում... Ավելի լավ է մանրամասները չիմանա և այդ հույսով մահանա կամ, ո՞վ գիտե, թերևս մի հրաշքով փրկվի... Ո՞վ գիտե...

* * *

Կեսգիշերին մոտ էր արդեն, երբ վերադարձան հիվանդանոց: Բժշկության երկու թեկնածուները, որ ամբողջ օրն անց էին կացրել հիվանդանոցում, իսկ հետո չորս ժամ ուղեկցել դոկտորին, վերադարձի ճամփին արդեն ննջում էին: Մինչդեռ, Ռուբենն, ընդհակառակը, այս վերջին այցելությունից տակնուվրա եղած, չէր կարողանում կարգավորել մտքերը: Հազար ու մի հարց ուներ դոկտորին ուղղելու: Քաղցկեղից տառապող հիվանդներ արդեն տեսել էր, և դրանք գրեթե բոլորը, կարճ ժամանակ հետո, հայտնվել էին դիահերձարանում: Դատապարտված հիվանդները կարեկցանք չէին առաջացնում բժիշկների շրջանակում: Քաղցկեղը մնում էր քաղցկեղ:

Սակայն այս մեկն ստիպեց ուրիշ կերպ նայել անբուժելի հիվանդությանը: Պատճառը գուցե ընտանիքի ներկայությունն էր, գուցե այդ ծանր տեսարանը՝ անասունների հետ, փարախում: Վերջապես համարձակվեց իր մտորումների հիմնահարցն առանձնացնել և մտովի ուղղել իրեն. «Ինչո՞ւ այսքան ջանք թափել, երբ բուն, իսկական, մահացու հիվանդություններն այդպես էլ մնում են անբուժելի... Երբ գիտության հրաշք նվաճումներն անզոր են դառնում դրանց առջև... Մի՞թե վերջին հույսը մորֆինն է, խաբեությունը... Հավանաբար, Մոլիերն իրավացի էր, երբ այդպես անխնա ծաղրում էր բժիշկներին...»:

Զհամարձակվեց այս մտքերի շուրջ կիսվել դոկտորի հետ, որն աչքերն անորոշ կետի հառած նստել էր: Իսկական զինվոր էր այս բժիշկը, աննկուն մարտիկ, որը միշտ դիրքերի վրա մարտնչում է մահվան դեմ: Սակայն մի՞թե նա չէր, որ այսօր նահանջեց ահավոր տեսարանի առջև... Այո, նահանջեց, բայց անձնատուր չեղավ, և գուցե արեց հնարավորը:

Հիվանդանոցի ընդունարանում դոկտորը մոտեցավ հերթապահին, այնուհետև, կտրուկ շրջվելով, իր ուղեկիցներին դիմեց.

- Պարոնայք, շատ շնորհակալ եմ, որ այսօր օգնեցիք ինձ, հիմա ազատ եք, կարող եք տուն գնալ... Ի դեպ, նրանք, ովքեր հեռու են ապրում կարող են գիշերել հիվանդանոցում, բժիշկների հատուկ սենյակներում... Բավականաչափ տեղ կա...

Կեսգիշերից արդեն ահագին անցել էր, ավելի խելացի կլիներ մնալ այստեղ և առավոտյան միանգամից լինել դիահերձարան, որտեղ դաս պիտի լիներ:

Սակայն երկար չհաջողվեց քնել: Առավոտ շուտ անսպասելի արթնացավ և տեղից վեր թռավ ընդոստ: Ասես, ինչ-որ մեկը նրան ցնցելով հանել էր խոր քնից: Սենյակում միայն ինքն էր: Ժամը վեցն անց էր քառորդ: Սովորաբար այս ժամերին էր արթնանում: Սակայն ինչ-որ անսովորություն կար այսօրվա կտրուկ արթնանալու մեջ: Բավական ժամանակ ուներ մինչև դասերը: Մի տասը րոպեի չափ աչքերը բաց պառկել էր և առանց տեսնելու նայում էր առաստաղի ճերմակությանը: Ճիշտ դիմացը կանգնած, գրեթե իր հասակն ունեցող և հանդիսավոր թիկթակող մորբիերն* այժմ ուղիղ վեցն անց կես էր ցույց տալիս:

Անշտապ վերկացավ, լվացվեց, հագնվեց և իջավ բժիշկների ու հիվանդանոցի աշխատողների ճաշարան: Կյանքում առաջին անգամ գիշերեց հիվանդանոցում ոչ որպես հիվանդ, և հիմա, ճերմակ խալաթը հագած, գրեթե դատարկ ճաշարանում, հիվանդանոցային ջրիկ սուրճն էր խմում նույնպիսի անհամ, բայց առատորեն ձու և յուղ պարունակող մի խմորեղենի հետ: Առանձնապես ախորժակ չուներ: Ուտում էր մեքենայորեն: Սուրճի երկրորդ բաժակը վերցրեց, մի կում արեց, հետո, անսպասելի դրեց սեղանին և դուրս եկավ: Արդեն յոթն անց կես էր: Հիվանդանոցային եռուզեռը դեռ չէր սկսվել, բայց մի տարօրինակ շարժում նկատեց: Երկու գթության քույրեր, իրենց ավագ քրոջ գլխավորությամբ, այլայլված դուրս եկան վիրահատության սրահից և վազեցին դեպի բժշկի սենյակը:

Տարօրինակ հետաքրքասիրությամբ մղված բացեց սրահի դուռը և աչք ածեց: Այրված մսի և ճարպի ճենճահոտն անմիջապես դիպավ ռունգերին: Ներսը ոչ ոք չկար: Ճերմակությունից փայլող սրահի կենտրոնում վիրահատության սեղանն էր, կողքը՝ մեկ այլ սեղանի վրա, բոլոր անհրաժեշտ գործիքները:

Սեղանի վրա մարդ կար պառկած: Անշարժ: Ճերմակ սավանով ծածկված: Ոտքից գլուխ: Կրծքի և որովայնի մասերում սավանը փակչել էր մարմնին, ներկվել արյունով և, որ ավելի սոսկալի էր, վարդագույն չիճուկով: Դանդաղ մոտեցավ սեղանին, մի պահ նայեց սավանով ծածկված մարմինը, հետո ճարմակ պաս-

* Փայտե պահարանի մեջ զետեղված մեծ ժամացույց:

տառը զգուշորեն բարձրացրեց: Նրա առջև բացվեց ոսկե գանգուրներով լուսապսակված մի գլուխ. Լիզե՜տը:

Աչքերը փակ էին: Մի՞թե արդեն... Ոչ, ոչ, այլապես փորձված քույրերն այստեղ չէին բերի: Չհամարձակվեց սավանն ամբողջությամբ բացել: Մատը դրեց քներակի վրա: Թույլ, բայց կանոնավոր բաբախյուններ զգաց: Այդ ժամանակ, մի փոքր հանգստացած, մարմինը վերից վար բացեց. տեսարանն ահավոր էր: Ամբողջ կուրծքը՝ վզից մինչև որովայնը, բաց վերք էր: Ողջ տեղ չէր մնացել, մաշկն այրվել էր, ճարպերը հալվել, մկանները սևացել, բարակել ու կախվել պարանների պես... Արյունը տեղ-տեղ մակարդվել էր, որոշ տեղերից էլ շարունակում էր հոսել բարակ շիթերով: Ամենասոսկալին ստինքներն էին՝ այրված, հալված... Այն ստինքները՝ հոյակապ, սքանչելի, որ երկու գիշեր առաջ շոյում էր, նրանց ամրությունն զգում իր ափերի մեջ, անհագորեն համբուրում: Հիմա վերածվել էին վարդագույն մորթի պատառների՝ վարդի փրթված թերթերի պես: Տեղ-տեղ դեղնած ճարպն էր երևում՝ թարախագույն...

Չէր հասկանում, թե ինչ է կատարվում իր հետ: Ապուշացած, անշարժ կանգնել էր: Ինչո՞ւ չի գոռում, ինչո՞ւ չի աղաղակում, չէ որ սա այն մարմինն է, որի առջև ծնրադրում էր երեկ չէ առաջին օրը... Այն մարմինը, որն իր մեջ, զարմանալի համերաշխությամբ, միավորել էր գեղեցկությունը, ցանկասիրությունը և ողջախոհությունը, մարմին, որն անդիմադրելիորեն գրավելով, միաժամանակ արթնացնում էր ամենավսեմ զգացումները: Մի՞թե այլևս վերջ այս ամենին, մի՞թե այլևս չի գրկելու նրան, չի համբուրելու այս շուրթերը...

Էլեկտրական մի հոսանք ցնցեց նրան և այն է, ուզում էր ինքն էլ վազել դուրս, օգնություն կանչել, երբ սրահի դուռը բացվեց և անծանոթ մի բժիշկ մտավ՝ քույրերի ուղեկցությամբ: Նա նույնիսկ չնայեց իր կողմը: Միանգամից մոտեցավ աղջկան, ուշադիր զննեց, հետո զգուշորեն բարձրացրեց աղջկա ձախ ձեռքը. անգամ երկու մետր տարածությունից երևում էր, թե ինչպես է խփում մերկացած, մաշկազերծված զարկերակը: «Տարօրինակ է, - մտածեց նա, - թե ամբողջ կուրծքն ու որովայնն այդպես անխնա այրած կրակն ինչպես էր խնայել կյանքի այս թելը»:

Բժիշկը կարգադրեց երկաթ չիկացնել: Մի քանի րոպե անց Ռուբենը տագնապահար նայում էր, թե ինչպես է կրակը կրակով մաքրվում: Հրաշեկ երկաթը խարանում և փակում էր արյան ակունքները: Այդ դաժան հպումներից մարմինը կյանքի նշույլներ ցույց տվեց, մկաններ կծկվեցին, որովայնը գալարվեց, մորթազերծ կուրծքերը ցնցվեցին: Ռուբենը պատկերացրեց, թե հիմա ինչպիսի՜ տառապանքներ է կրում արդեն տառապած այս մարմինը: Մի պահ քիչ մնաց մոտենար և այս դաժան բժշկի ձեռքից խլեր երկաթը: Մանավանդ երեկվա ծանր տպավորություններից հետո, հիմա վերստին, արդեն հարազատ, թանկագին դարձած էակի այս ողբերգական օրինակով փաստում էր բժշկության և մանավանդ իր բացարձակ անզորությունն աղետին դեմ հանդիման: Իսկ ի՞նչ կաներ ինքն այս բժշկի փոխարեն... Իհարկե, ոչ հիմա, այլ բժշկելու իրավունք ձեռք բերելուց հետո:

Ճենճահոտ ծուխ էր բարձրանում, գալարվում օդում, լցվում սրահը, կո-

կորդը, թոքերը, շնչելը դարձնում անկարելի: Դթության քույրերն, արցունքն աչքերին, մեկ-մեկ անհետացան: Զգիմացավ նաև ավագ քույրը: Նա դուրս եկավ թաշկինակը մերթ աչքերին, մերթ բերանին տանելով:

Մնացին մենակ՝ բժիշկը և ինքը: Բժիշկը վերջապես կանգ առավ, սկսեց ուշադիր զննել վերքերը: Արյունահոսությունը դադարել էր: Հաջորդ քայլը ո՞ր պիտի լիներ, ինչպե՞ս պիտի փրկեին այս մարմինը: Ռուբենը մոտեցավ բժշկին.

- Ասացեք, դոկտոր, նա կապրի՞:

Բժիշկը, մի տեսակ զարմացած, նայեց նրան և հարցրեց.

- Դուք ուսանո՞ղ եք:

- Այո:

- Իսկ ի՞նչ եք կարծում, այսքանից հետո նա կապրի՞:

- Զգիտեմ, սակայն շատ կուզեի, որ փրկվեր:

- Փրկվելը գուցե փրկվի, չնայած շատ անհավանական է, բայց դա կյանք չի լինի, այլ ավելի սոսկալի և ավելի տևական մի տառապանք:

Նա դուրս եկավ սրահից և միջանցքում տեսավ Պերեսին ու Լևոնին: Այլայլված հայացքով նայեցին իրար:

- Ինչպե՞ս է վիճակը, կապրի՞, - հազիվ կարողացավ արտաբերել Լևոնը:

Նույն հարցը:

- Զգիտեմ, - ասաց Ռուբենը: - Մայրը տեղյա՞կ է...

- Այո, ուժասպառ պառկած է տանը... Բժիշկը չթողեց, որ այստեղ գա:

Բուժքույրերը, նրանց ներկայությամբ, երկաթյա սեղանը զգույշ գլորելով, տարան հիվանդասենյակ: Սավանը փոխել էին, սակայն դեմքը բաց էր և կողքից նայողը պիտի կարծեր, թե սովորական մի հիվանդ է:

- Առավոտ կանուխ է եղել... խոհանոցում..., - ասես արդարանալով պատմում էր Պերեսը: - Մինչև հասցրեցինք իջնել, ամբողջովին այրվել էր... Նոպայի պահին նավթավառն է շրջել, երեք լիտր նավթ թափվել է վրան... Առաջինը ես մոտեցա... Երանի տեսած չլինեի...

Ռուբենը ցնցվեց: Այն, ինչից զգուշացնում էին ընկերները, կատարվեց անմիջապես, ասես դաժանորեն պատժելու համար իրեն՝ իր պատրաստակամության, իր անձնազոհության, սիրով բուժելու իր համոզմունքի համար... Ասես դևը խնդար իր երեսին...

Իրեն մեղավոր զգաց, քանզի արդեն կարդացել էր, որ նոպաների պատճառ կարող են դառնալ անսպասելի և բուռն ալրումները... Այո՛, այո՛, անգամ հրճվանքի բարեբեր պահերը... Իսկ մի՞թե ինքը, նախանցած գիշեր, հրճվանքի գերագույն պահեր չպատճառեց անփորձ և փխրուն աղջկան...

Ռուբենը թողեց ընկերներին և անմիջապես մոտեցավ բժշկին, որը նոր դուրս եկավ վիրահատության սրահից:

- Դոկտոր, - դիմեց նրան Ռուբենը, - ես կարո՞ղ եմ մնալ նրա կողքին:

Բժիշկը նորից սևեռուն նայեց նրան:

- Ձեր կարիքը բոլորովին չի զգացվում, երիտասարդ: Նա հիմա քնած է, և քույրերը շատ ուշադիր հսկում են:

- Ես շատ կուզեի...

- Հասկանում եմ, սակայն ավելի լավ կանեք, որ գնաք տուն և հանգստանաք, մանավանդ որ գիշերն էլ քիչ եք քնել... Կարծեմ դուք էիք դոկտոր Ռուի հետ:

- Այո, դոկտոր:

- Ուրեմն, ընդունեք սա որպես կարգադրություն, չէ որ դուք ևս բժիշկ եք...

Հետո, մի փոքր մեղմելով ձայնի խստությունը, ավելացրեց.

- Եթե շատ եք ուզում, կեսօրից հետո եկեք, ես կասեմ քույրերին...

Երբ դուրս եկավ միջանցքից, ընդունարանում ընկերներին գտավ, որ նստած սպասում էին: Պերեսը մոտեցավ, հոգատարությամբ թևը բռնեց և ասաց.

- Ռուբեն, դու հավանաբար պիտի ամեն ինչ իմանաս..., - նա գրպանից մի ծրար հանեց: - Այսօր առավոտյան խոհանոցում, սեղանի վրա այս նամակը գտա...

Մի ծրար մեկնեց՝ վրան այսօրվա կնիքը: Նամակը հասցեագրված էր Լիզետին, և ընդամենը մի քանի տող էր. «Հիմա էլ այս միամիտ արևելցուն եք խաբո՞ւմ մայր ու աղջիկ: Շատ մի չարչարվեք, նա արդեն ամեն ինչ գիտի, այնպես որ տիկնիկը նորից մենակ է մնալու, մեղք չէ՞ այդ հոյակապ տղան, որ քեզ նման ընկնավորի հետ ամուսնանա: Ստորագրությունը՝ Ազնիվ Բարեկամ»:

Ռուբենը երկու անգամ կարդաց և հարցական հայացքը հառեց ընկերներին: Չէր կարող ասել, այսօրվա առավոտյան պատահա՞ռն էր ավելի շատ նրան ցնցել, թե՞ մարդկային չարության այս հրեշավոր վկայությունը:

- Ինչպես երևում է կնիքից, այսօր առավոտյան է ստացել և, ըստ երևույթին, այս քստմնելի նամակն է եղել նոպայի պատճառը...

Նրանք բոլորը լուռ էին: Պերեսը մեղմ ձայնով դիմեց ընկերոջը.

- Հիշո՞ւմ ես մեր առաջին զրույցը, Ռուբեն, երբ ես հարցրի, թե կարո՞ղ ես այդ ծանր բեռն առնել քո ուսերին... Ես չէի կասկածում քո ազնվությանը... Ես այսպիսի ահավոր բաները նկատի ունեի...

* * *

Տիկին Շապազին խուսափեց հանդիպել: Զգիտեր ինչ պիտի ասեր, ինչպես պիտի խոսեր նրա հետ: Բոլոր բառերն անզոր էին հիմա: Գուցե մեկ ժամ, երկու ժամ հետո... Հիմա կատարելապես ուժասպառ էր, ուզում էր մենության մեջ առանձին մնալ:

Ճաշասրահի կողքով անցնելիս, դերմանացիներից մեկին տեսավ, որ սուրճի բաժակի առջև նստած կարդում էր: Անծանոթ մի կին էր սպասարկում նրան:

Զգուշորեն բարձրացավ սենյակ: Ոտքի թաթերին էր քայլում, ասես ամբողջ շենքը լցված էր մահամերձ հիվանդներով, որ միակ անվնաս մնացածն ինքն էր և որ մեղավոր էր փրկված լինելու համար:

Երկու ժամի չափ պառկեց՝ աչքերը բաց, գլուխն՝ իսկական մրջնանոց: Անզորության մի զգացում էր համակել նրան, որ իսպառ զրկել էր վճիռ ընդու-

նելու, գործելու կարողությունից: Ինչո՞ւ չդիմադրեց, ինչո՞ւ թողեց, որ ընկերներն իրեն դուրս բերեն հիվանդանոցից... Եթե մարմինն իրեն չէր ենթարկվում, ինչո՞ւ գոնե հոգու խորքում չընդդիմացավ, նույնիսկ ներքուստ համաձայն էր, գոհ էր... Որովհետև մահվան տեսիլը հայտնվեց նրան, բառիս բուն իմաստով, միս ու արյունով, արնածոր մսերով... Այն միսը, որ նրա ցանկությունը մտրակեց, վերացման բացառիկ պահեր պարգևեց, հիմա մի կողմ էր վանում իրենից...

Բժիշկը հասկացավ, որ ինքը միայն ուսանող չէ, այլ որ ուրիշ, մտերիմ մի կապ կա այդ դժբախտ աղջկա հետ, ահա ինչու փրկության հավանականության մասին խոսեց շատ զուսպ... Այդ աղջիկը երեկ սիրո կատարյալ մարմնավորումն էր, իսկ հիմա մահն է որ կա՝ իր ամենադժնի կերպարանքով: Ճակատագիրն ինչպիսի՜ սոսկալի առաքելություն է տվել նրան՝ միաժամանակ մարմնավորել կեցության երկու բևեռները: Հազիվ էր հասցրել այդ աղջկա մեջ դիպչել մի բանի, որը սեր պիտի կոչվեր, դառնար կյանք, սակայն, տեղնուտեղը, սիրո կերպարանքն աղավաղվել՝ հրաշագեղի տակից հայտնվել էր հրեշավորը... Նույնիսկ մի պահ թվաց, թե այն եթերային, ակնթարթային սերը, որի առաջին կաթիլները հազիվ հասցրեց վայելել, ընդամենը մի նուրբ թաղանթ էր, որը ծածկում էր բուն էությունը և որ ինքը դիպչելով դրան, պատռեց ու մեջտեղ հանեց իրականը: Բայց աղջիկն ինչո՞վ էր մեղավոր, արարիչն ինչո՞ւ է գեղեցիկը դրել սիրո և մահվան միջև... Ո՞ւմ սպասավորն է գեղեցիկը, Էրոսի՞, թե Թանատոսի: Եվ եթե վերջինին է ծառայում, ապա իրո՞ք գեղեցիկը գեղեցիկ է, թե՞ դա ևս շղարշված հրեշավորություն է, ինչպես մահն է շղարշվել սիրով:

Դան Բլանշի մատույցներում տեսած այն մենավոր կակաչը հիշեց, որ դյութում էր հեռվից, զարդարում և հարստացնում բնանկարը, սակայն որի մեջ արդեն իր անսասան իշխանությունն էր հաստատել այլանդակը: Նախազգուշացո՞ւմ էր դա, թե պատահականություն: Հիշեց, որ այդ օրը բնավ տրամադրություն չուներ: Այո, այս աշխարհում ոչինչ պատահական չէ, ամեն ինչի մեջ մի ներքին կապ կա, բայց մենք, ավա՜ղ, դա զգում ենք դեպքը կատարվելուց հետո միայն:

Չնայած չէր ուզում, չնայած կոպերն անթարթ հառել էր պարապի մեջ, չնայած արդեն մտադիր էր մի քառորդ ժամից դուրս գալ և քայլել դեպի հիվանդանոց, բայցևայնպես քնով ընկավ: Կարճատև մի քուն էր, բայց չափազանց խորը և տեսիլքներով հագեցած: Ըստ էության դա քուն չէր, այլ արթնության մեկ այլ վիճակ, քանզի իրեն տեսավ, արթուն, ընդարձակ, կանաչ ու տարածուն մի դաշտի մեջ: Օդը զարմանալի մաքուր էր ու թափանցիկ, կանաչ, փափուկ խոտը շոյում էր բոբիկ ոտքերը, ինքը մերկ էր և ազատ, ասես նախամարդ լիներ:

...Հանկարծ շուրջբոլորը լցվեց մարդկանցով՝ հարյուր, հազար, միլիոն, միլիարդ... Անթիվ ու անհամար... Ամբողջ մարդկությունն այդտեղ էր, բոլոր գույների, բոլոր ցեղերի... Ողջերը, մեռածները և նրանք, որ դեռ պիտի ծնվեին, մարդկային ցեղի հետագա ամբողջ գոյությունը... Նա բոլորին գիտեր՝ մեռածներին ու ողջերին, մեկ առ մեկ... Անգամ ծնվելիք մարդկությունը գիտեր: Բոլորը մերկ էին, երիտասարդ, սքանչելիորեն գեղեցիկ... Յուրաքանչյուրը գտավ իր զույգին և անմիջապես, բոլորը միաժամանակ, սկսեցին Մեծ Սերը, այդտեղ, ուղ-

դակի կանաչ գորգի վրա... Ամբողջ հողագունդը, տիեզերքն ամբողջ տնքում և հառաչում էր սիրո նվաղումի մեջ... Դա տիեզերքի անվերջանալիության մի ահռելի և անպարագիծ խառնքն էր... Մարդկության հազարամյակների, ներկա ու գալիք սիրո ամբողջ կիրքն իրագործվում էր հիմա, աչքերի առջև, և նա մարմնի հետին զգայարաններով ապրում էր, հաղորդակցվում նրանցից յուրաքանչյուրի սեռական էքստազին:

Ինքն էլ ցանկացավ, մյուս բոլորի պես, իր զույգը գտնել: Սկսեց փնտրել գալարվող մարմինների մեջ և քիչ հեռվում տեսավ իրեն՝ ոսկեգանգուր մի աղջկա սիրելիս: Այո, դա ինքն էր, որ այստեղ, ամբողջ մարդկության հետ միաժամանակ սիրում էր: Եվ ինքն ավելի գեղեցիկ էր, ավելի առնական, և ոսկեգանգուր աղջիկն էլ ավելի գեղեցիկ էր, անթերի մարմնով՝ մինչև գոտկատեղը հասնող մազերը խոտերի վրա տարածած: Ոսկու դեղինը կանաչի վրա: Եվ իրենք ամենագեղեցիկն էին բոլորից: Եվ նրանք երկուսով տևական ու անվերջանալի մի օրգազմ էին ապրում... Եվ նա փաստեց. «Ես երազ եմ տեսնում, ես իմ երազի մեջ տեսնում եմ ինձ»:

Հանկարծ նկատեց, որ այս ամենը խիստ ծանոթ է իրեն, որ արդեն տեսել է ինչ-որ տեղ... Իհարկե՛... Սա Կոնրադի դժնի և անավարտ բնանկարն էր: Նորից փաստեց. «Ափսո՜ս, հնարավոր չէ, որ նկարիչն էլ մասնակցեր այս երազին»: Սակայն դաշտն իր երազի մեջ ավելի կանաչ էր, մարմիններն՝ ավելի գեղեցիկ, սերն՝ ավելի տիրական:

Քայլեց առաջ և հասավ այն սահմանագծին, որտեղ Կոնրադի կտավի վրա ընդհատվում էր հեռանկարը: Կանաչապատ սևահողի թանձր շերտն այդ հատվածում մի փոքրիկ ճեղքով զատված էր, սակայն հեռանկարը շարունակվում էր:

Այժմ իրեն տեսավ կողքից, երազից, պատկերից «դուրս», հեռանկարի անվերջանալի գծերով քայլելիս: Քիչ հեռվում բարձունքներ երևացին: Լեռնե՞ր էին դրանք, թերևս բլուրներ: Ոչ, ոչ, պարզապես մի բլուր էր, դաշտից ոչ կտրուկ, կոր և փափուկ գծերով բարձրացող վերելք: Սակայն, ո՛չ, դա մարմին էր, կանացի մերկ, հսկայական մարմին, շնչող, ապրող, թրթռացող, անթերի անզուգակա՜ն... «Ահա նրա զույգը, այսինքն՝ իմ զույգը...»: Այդ մարմինը տարածված, պատրաստ, ինքնամատույց սպասում էր իր զույգին... Կինն արդեն տնքում էր սեռական հրայրքի մեջ: Զգաց, որ ինքն էլ հսկա է, ինչպես այդ կին-բլուրը, և արդեն պատրաստվում էր մերձենալ նրան... Բայց հանկարծ հայացքը կանգ առավ ձախ կրծքին՝ անթերի, սքանչելի մի բլուր, որի գագաթին, վարդագույնով եզերված պտուկի ծայրին, հսկայական մի սև խաչ էր տնկվել...

Սոսկումով հետ քաշվեց, իր հսկայացումն ակնթարթի մեջ կորցրեց, պստիկացավ, հայտնվեց կնոջ անուրթի վրա, ողորկ ու մարմարյա մաշկի վրայով սկսեց սահել... Անկումի մեջ մի պահ հայացքը գցեց ներքև ու տեսավ դժնի անդունդը, անլցնելի փոսն ունայնության...

...Ընդոստ արթնացավ, ինչպես այս առավոտ՝ հիվանդանոցում: Մարմինն ամբողջովին թաց էր: Դիմացը Լևոնին և Պերեսին տեսավ նստած:

- Վաղո՞ւց եք այստեղ:

- Հազիվ մի տասը բոպե... Ձուզեցինք քեզ արթնացնել:

Երկուսի դեմքին էլ միևնույն արտահայտությունն էր. կարեկցանքով նայող աչքեր, գլուխը մի քիչ հակված ներքև, յուրաքանչյուր շարժումիդ, որպես պատասխան, դեմքներին հայտնվող համակ պատրաստակամություն: Այդպիսի արտահայտությամբ այցելության են գալիս հիվանդին: Հատկապես արգենտինացուն սա բնավ նման չէ, նա, որ ամեն առիթով պիտի սրամտի, երբեմն դաժան, գետնաքարշ, բայց համով ու բարի, առանց հետին մտքի:

- Ի՞նչ կա, ասեք, - հարցրեց նա՝ բազմոցի վրա նստելով:

Ընկերները չվարեցին մի պահ, հետո Լևոնը խոսեց.

- Վերջ, Ռուբեն... Ամեն ինչ վերջացավ... Այնտեղից ենք գալիս...

Նա չցնցվեց: Այդ մահն արդեն ապրել էր: Պարզապես մի պահ, սառած հայացքով նստեց, նայեց ժամացույցը: Ժամը տասներեքն էր:

- Ե՞րբ..., - հարցրեց նա:

- Առավոտյան... Մեր դուրս գալուց մեկ ժամ հետո, - դժկամությամբ պատասխանեց Պերեսը, հետո ավելացրեց. - Ռուբեն, սիրելի եղբայր, ես հասկանում եմ քեզ, հիմա քո չափ զգում եմ քո ցավը, բայց դու պիտի հաղթահարես, դիմանաս, չէ որ դու զորավոր տղամարդ ես... Բժիշկ ես, վերջապես... C'est la vie, հասկանո՞ւմ ես...

Հետո, նկատելով Ռուբենի անշարժացած, ներսը նայող աչքերը, բացակա հայացքը, միանգամից լռեց: Սակայն ոչ երկար:

- Ռուբեն, - ասաց նա, - իմ կարծիքով քեզ հիմա միայն խմելը կփրկի... Մենք վարն ենք, սպասում ենք քեզ... Հագնվիր դուրս գանք...

Ընկերները դուրս եկան: Նա դանդաղ, մեքենայորեն վեր կացավ, աթոռի մեջքին գցած բաճկոնը վերցրեց և այդ պահին աչքովն ընկավ ներսի գրպանից դուրս ցցված ծրարը: Հիշեց, որ երկու օր գրպանում էր և բառացիորեն ժամանակ չի ունեցել կարդալու: Եվ տարօրինակ էր, որ բույրը բնավ չէր թուլացել... Հիմա նորից շնչեց... Հանեց ծրարը և զգույշ բացեց. «Սիրելի Բարեկամ, ես միշտ հիշում եմ մեր անակնկալ հանդիպումը և հաճելի երեկոն, որ պարգևեցիք ինձ: Պարզվեց, որ մենք շատ մոտիկ ենք ապրում, գրեթե հարևաններ ենք: Դարձյա՞լ պատահական է... Շատ կուզեի ձեզ տեսնել: Այսօր երեկոյան ժամը 19.00 ես հրավիրել եմ իմ բարեկամներին և կզարմանամ, եթե նրանց մեջ չտեսնեմ ձեզ:

Այդ սպասումով, անկեղծորեն Ձերդ՝ Ալիս:

Իմ հասցեն. 26, ռյու Բել Ֆոնտեն, «L'étoile d'Orient» առանձնատուն, հեռախոս 1939»:

Կոմսուհին արդյոք զարմացե՞լ է՝ իրեն չտեսնելով հյուրերի մեջ: Ինչպե՞ս է իմացել իր հասցեն... Պահ, շատ պարզ... բավական էր զանգել համալսարան և հարցնել բժշկական բաժնի ուսանող Ռուբեն Ձիլինկիրյանի հասցեն... Հիմա իրավունք ունի՞ այս հեռախոսով զանգելու և ներողություն խնդրելու հրավերը չընդունելու համար...

Ամոթի և մեղավորության զգացում ունեցավ, որ այս դժբախտության օրը, գրեթե հանգուցյալի ներկայությամբ անմիջապես մտածեց մեկ ուրիշ կնոջ մասին... Ծրարը նորից դրեց գրպանը և արագ իջավ աստիճաններով: Ներսում

կտրուկ որոշեց իրենից առայժմ հեռու վանել մոգությունը մի կնոջ, որի դեմ, վստահ էր, չպիտի կարողանար որևէ կռվան հանել և որին, հոգու խորքում, պատրաստ էր լիովին անձնատուր լինել: Սակայն ի՞նչ կպատասխաներ կոմսուհուն, եթե (Աստված տա՛ր) այս ահավոր պատահարը տեղի ունեցած չլիներ...

* * *

Արդեն հինգերորդ օրն է տնից դուրս չի եկել: Լոգան գալուց ի վեր ընդամենը մեկ անգամ այսպիսի դեպք եղավ, երբ դեկտեմբերյան սոսկալի քամիների ժամանակ, որ տեղացիք կոչում են bise, մրսեց և մեկ շաբաթ անցկացրեց անկողնում: Սակայն այդ օրերին, նույնիսկ բարձր տաքությամբ, ուզում էր դուրս գալ և գնալ դասի: Մինչդեռ հիմա, ոչ մի տեղը չի ցավում, սակայն բնավ ցանկություն չունի որևէ բան անելու: Անգամ տեղից շարժվել չի ուզում: Ընկերներն են ստիպում իջնել և մի բան ուտել: Միակ գործը, որ արեց (եթե դա կարող էր գործ համարել), իր սև, լաթակազմ տետրակում հինգ-վեց բանաստեղծություն գրելն էր, որոնց թվում և այն օրվա երազի սոսկալի նկարագրությունը, երկարաշունչ մի բանաստեղծություն, որն ուզում էր տեղնուտեղը ֆրանսերեն թարգմանել ու տանել Կոնրադին: Սակայն լավ է, որ չարեց, քանզի առավոտյան, երբ վերընթերցում էր, բնավ չհավանեց, վերից վար մատիտով ջնջեց: Նրան դուր չեկավ նաև վերնագիրը. «Մահվան հաղթանակը»: Սա դառնում էր ակամա մարտահրավեր ազնիվ ու տաղանդավոր մի արվեստագետին, որի ստեղծագործական տարածքներում է, այսպես ասած, ծավալվել իր երազը, նրա ստեղծած դաշտից է գնացել հասել այն հսկայական և անսահմանորեն դյուրիչ կին-բլուրին... Որքա՜ն նուրբ էր և փխրուն իր այդ հսկա ծավալների մեջ... Զարմանքով հիշեց, որ երբ ցանկացավ մերձենալ այդ հսկայամարմին կնոջը, ձեռքը դրեց կրծքին, որը մի փոքրիկ բլուր էր մեծ բլուրի վրա: Սակայն ինչո՞վ բացատրել, որ այդ բլուրն՝ իր անթերի գծագրով, ուռուցիկ և պինդ, ամբողջությամբ տեղավորվեց իր ձախ ափի մեջ... Հետո հիշեց, թե ինչպես, զարմանքով, ափը հեռացրեց կրծքից, որովհետև այն թրջվեց՝ ուռած պտուկից աղբյուրի պես առատորեն հոսող ճերմակ ու կպչուն կաթից: Եվ այդ պահին էր, որ հայտնագործեց այն սոսկալի տեսիլքը՝ ձախ կրծքի պտուկի վրա հաղթականորեն տնկված մետաղյա սև խաչը... Եվ եթե աջ կուրծքը՝ կաթնածոր, ամբողջությամբ տեղավորվեց ափի մեջ, ապա ինչո՞ւ ինքն ակնթարթի մեջ այդքան փոքրացավ, չնչինացավ ձախ կրծքի առջև, որի ծայրին հաղթականորեն կարկառված սև խաչն իրենից ավելի մեծ էր և ինքը կանգնած այդ կուրծք-բլրի ստորոտին ապշած ու վախեցած նայում էր վեր...

Անգործության և անշարժության չորրորդ օրվա գիշերը զարմանալի կերպով նույն երազը տեսավ, ավելի շուտ երազի մի հատվածը՝ ճիշտ այն պահից, երբ աղջկա կաթնածոր աջ կուրծքը զգաց իր ափի մեջ, հետո նորից հայտնվեց բլուր-կրծքի մատույցներում... Նույն տեսարանն էր, նույն զարմանքը, միայն թե այս անգամ մի փոփոխություն նկատեց. կրծքի լանջն ի վար, ուղղակի պտուկի ակից, արցունքի պես վճիտ ջուր էր հոսում... Ափի մեջ հավաքեց այդ ջուրը, երեսը չփեց, հաճելի զովություն զգաց... Հետո կրծքի ողորկ մակերեսով մի կերպ

մագլցեց և հասավ գագաթը: Աղբյուրի ակն այստեղ էր, ուղղակի հսկայական սև խաչի տակից: Ջուրն առատորեն հոսում էր, մի քանի շիթերով ճյուղավորված իջնում կուրծքն ի վար... Սոսկալի ծարավ զգաց, կռացավ և ուղղակի աղբյուրի ակից առատորեն խմեց՝ թրջելով երեսը, վիզը, կուրծքը... Ու երբ գլուխը բարձրացրեց, որպեսզի շունչ քաշի, տեսավ, թե ինչպես աչքի առջև կատարվեց սոսկալի մի բան. աղբյուրի ակից բխող վճիտ ու անապակ ջուրն ակնթարթի մեջ կարմրեց, դարձավ արյուն, որ սկսեց ժայթքել, պոռթկալ՝ ալ կարմիր ներկելով ամբողջ կուրծքը, մարմինը, կանաչ դաշտը... Հետո գույնը թանձրացավ, մոտեցավ սևին ու վերջապես դարձավ սեփ-սև, և ձյութի պես դանդաղ, ծուլորեն հոսեց, տարածվեց՝ կարմիրն իսպառ վերածելով անթափանց ու սգավոր սևի...

Գիշերվա կեսին նորից, մեկ շաբաթվա ընթացքում այս էլ երրորդ անգամ, ընդոստ արթնացավ, և դարձյալ քրտինքի մեջ կորած: Լևոնը կողքի մահճակալին լուռ ու անխռով քնած էր: Պառկեց մեջքի վրա և կրկնված երազը փորձեց հասկանալ: Այսինքն, հասկանալու և մեկնաբանելու կարիք չկար, ամեն ինչ պարզ էր ու ակնբախ: Ի՞նչ ուժ էր, ի՞նչ տարերք, աստվածային ինչպիսի՞ վճիռ էր, որ իրեն ստիպում էր նույն երազը երկու անգամ իրար վրա տեսնել, ըստ որում, երազը գնալով ավելի դժնատեսիլ էր դառնում... Ի՞նչ պատգամ ուներ իրեն հաղորդելու, ի՞նչ էր ուզում մտցնել իր գլուխը այդպես համառորեն: Եվ ինչպե՞ս ինքը չի հասկանում, թե Տերն ինչ է հաղորդում իրեն այդ երկու կրծքերի պատկերով, որոնցից մեկը՝ կաթնածորը (իր ափի մեջ այնպես տեղավորված, ասես, ափն ու կուրծքն միմյանց համար էին ստեղծված), կյանքի ակն էր, Սեր-ակն էր՝ կենսատու կաթով, մյուսն՝ այդպես հաղթապանծ, հսկայական, Մահն էր, իր Սև ակով... Եվ ինքն այդ աղբյուրից խմեց, ինքը Սեր-ակը չընտրեց, այլ Սև-ակը և սևով պատեց իրեն...

Զգույշ վերկացավ անկողնից, որպեսզի չարթնացնի ընկերոջը, մոտեցավ սեղանին, լաթակազմ տետրակը վերցրեց և նախորդ օրը խաչաձև ջնջված բանաստեղծության մյուս երեսին, լուսնի լույսի տակ սկսեց տենդագին գրել: Ասես ինքը չէր շարժում գրիչը, այլ ինչ-որ մեկը տանում էր իր ձեռքը մաքուր էջի վրայով, ետևից թողնելով տառեր, բառեր, նախադասություններ... Ոչ մի անգամ կանգ չառավ, չնայեց, չկարդաց գրածը, գրեց մեկ շնչով, ինչպես ասում են, գրիչն առանց թղթից կտրելու: Պարզապես, վերջում, երբ արդեն ստորագրել էր, մի ընդհանուր հայացք նետեց, հետո փակեց տետրակը և անդորրի մի զարմանալի զգացումով, միանգամից ու աներազ քնեց: Առավոտյան, արթնանալուն պես, առաջին ցանկությունը եղավ կարդալ գիշերը գրված բանաստեղծությունը: Լաթակազմ տետրակը սեղանին էր: Բացեց փնտրած էջը և անմիջապես ուշադրությունը գրավեց իր ձեռքով դրված ստորագրությունը. Ռուբեն Սևակ:

* * *

Առավոտյան փոստով մի ծրար ստացավ: Հետադարձ հասցե չկար, սակայն ձեռագրից անմիջապես ճանաչեց. դոկտոր Ռուն էր: Ներսը այցեքարտ կար, որի հակառակ երեսին գրված էր. «Պրն. Ջիլինկիրյան, ձեր բացակայու-

թյունն ինձ մտահոգում է: Կուզեի ձեզ այսօր տեսնել երեկոյան ժամը 19-ին, նշված հասցեով: Դոկտոր Ռու»:

Այցեքարտի վրա ընդամենը մեկ հասցե կար, որը ոչ համալսարանի, ոչ էլ հիվանդանոցի հասցեն էր: Նշանակում էր դոկտորը պատիվ էր անում հասարակ ուսանողին՝ երեկոյան հրավիրելով իր տուն: Չէր հիշում, թե որևէ ուսանող երբևէ հպարտացել է նման հրավերով:

Դա չափազանց դյուրթիչ էր, ինքնասիրությունը շոյող, բայց միաժամանակ որոգայթի պես մի բան կար դրանում: Կռահում էր, թե դոկտորն ինչու է կանչել և թե ինչպիսի զրույց պիտի տեղի ունենա այնտեղ: Պատկերացրեց դոկտորի թափանցող հայացքը, որի առջև անհնար էր կեղծել կամ թաքնվել:

Երեկոյան ժամը յոթին, ավընյու Մոն Ռեպոյի վրա, սեղմում էր դոկտորի առանձնատան էլեկտրական զանգի կոճակը: Դուռը բացեց մոտ քառասուն տարեկան մի կին և ժպիտը դեմքին առաջնորդեց ուղղակի դոկտորի սենյակ:

Մինչև այժմ մի քանի առիթ էր ունեցել տարբեր բժիշկների աշխատասենյակում լինելու: Սակայն այս մեկը, Լոզանի ամենանշանավոր բժշկի աշխատասենյակը, ոչնչով չէր մատնում տիրոջ մասնագիտությունը, եթե չհաշվենք գրադարակներին շարված բժշկական գրականությունը և գրասեղանի ետևը, պատն ի վեր բարձրացող նկարը. ձախից կանգնած էր բժիշկը, գլխահակ: Նրա աջ ձեռքին նշտրակն էր, իսկ ձախով իզուր փորձում էր պահել ծնկները ծալվող, աչքերը կուլ գնացող, հոգեվարքի մեջ գտնվող մի մարմին... Մահապարտն ուր որ է կսահի, դուրս կգա բժշկի ամուր բազկի հսկողությունից և անշունչ կտարածվի գետնին, դառնալով ճարակը նրա, որը, հավանաբար, առանց թակելու, բացել է բժշկի դուռը, ներս մտցնելով առայժմ կատարելապես մսաթափ ոտքը, արնածոր գերանդու ծայրը, իսկ դռան բացվածքի ռեմբրանդյան խավարի մեջ կարելի էր կռահել անկոչ այցելուի մակաբրեսկային ժպիտը:

Ռուբենի մեջքով սարսուռ անցավ: Մի ձեռք դիպավ ուսին: Դոկտորն էր:

- Այո, բարեկամս..., - ասաց նա, տեղավորվելով բազկաթոռում և ուսանողին հրավիրելով նստել իր դիմաց, սեղանի մոտ: - Կուզե՞ք մասնագիտական մի գաղտնիք բացեմ ձեզ՝ այս նկարի հետ կապված, որն առանձնապես մեծ գաղտնիք չէ և մանավանդ..., - նա ժպտաց. - մասնագիտական էլ չէ... Ընդամենը փոքրիկ մի խորամանկություն... Ուրեմն, այսպես, յուրաքանչյուր այցելու ընդունելիս, մինչև նրա բողոքները լսելը, հետևում եմ, թե ինչպես է նայում նկարին, ինչ վերաբերմունք է ցուցաբերում այս տեսարանի հանդեպ... Դա կարծես ինձ օգնում է ավելի ճիշտ հասկանալ նրան... Եվ գիտե՞ք, թե որն է արտառոցը. կան մարդիկ, որոնք ոչ մի ուշադրություն չեն դարձնում...

- Ես, հավանաբար, չափից ավելի ուշադրություն դարձրի:

- Չափից ավելի ուժգին, որն, անշուշտ, խոսում է ի նպաստ ձեզ:

- Պատճառը երևի այն է, որ ես չգիտեմ՝ որպես ուսանող եմ եկել այստեղ, թե՞ որպես հիվանդ...

- Արդեն հինգ օր է չեք ուսանում, սակայն գիտեմ նաև, որ հիվանդ չեք և դժվարանում եմ ասել՝ բարեբախտաբար, թե դժբախտաբար...

- Ըստ երևույթին, դժբախտաբար...

Դոկտորը գլխով արեց և պատից կախված զանգակի թելը քաշեց: Ներս մտավ այն կինը, որը դուռն էր բացել:

- Տիկին Մաթիլդ, երկու սուրճ բերեք, մեկը զորավոր, պարոնն արևելցի է, մեր տեղական սուրճը նրանց համար կաթի համ ունի... Բերեք նաև կիրչ և այսօրվա պատրաստած ձեր կարկանդակը:

Ռուբենն չտապեց կիրչից հրաժարվել.

- Դոկտոր, կարծում եմ միայն սուրճը բավական է...

- Դուք, ուրեմն, հրաժարվում եք իմ ներկայությամբ մի փոքրիկ գավաթ կիրչ խմել, որպեսզի հետո գնաք և գարեջրատանը տասը խոշոր գավաթ լցնեք ձեր փորը... Ահա, հեղափոխական ուսանողներդ ինչպիսին եք... Բերեք, տիկին Մաթիլդ:

Քիչ հետո սեղանին հայտնվեց տեղական սուրճը, որն այստեղ խմում էին կաթնասերով, կիրչը և ախորժալի բույր արձակող խնձորի կարկանդակը: Դոկտորը լցրեց արծաթյա փոքրիկ գավաթները, կում արեց և հրահանգի պես ասաց.

- Դուք կարող եք միանգամից խմել, ես գիտեմ ձեր սովորությունները, հայ ուսանողներ շատ եմ ունեցել, մանավանդ Կովկասից:

Կիրչը և սուրճը խմվեցին կատարյալ լռության մեջ: Դոկտորն, ուսանողի աչքերի մեջ նայելով, ասաց.

- Ես իմացա, որ հինգ օր առաջ ներկա եք եղել դոկտոր Բուրժեի վիրահատությանը... Խոսքն այն դժբախտ պատահարի մասին է, այրված աղջկա:

Սա կատարելապես անսպասելի էր Ռուբենի համար:

- Այո, դա մեր այցելությունների հաջորդ օրն էր, առավոտ շուտ... Ձեր թույլտվությամբ գիշերը հիվանդանոցում մնացի:

- Դոկտոր Բուրժեն այն տպավորությունն էր ստացել, թե ձեր աչխույժ մտահոգությունն այդ աղջկա ճակատագրով ավելի շատ մասնավոր բնույթ ուներ, քան մասնագիտական: Իրո՞ք այդպես է:

Տեսնելով իր ուսանողի որոշ շփոթվածությունը և վարանումը, դոկտորն ավելացրեց.

- Ես նպատակ չունեմ ձեր մասնավոր կյանքի մեջ թափանցելու, ի վերջո, կարող եք հարցին չպատասխանել, պարզապես, զարմանալի զուգադիպությամբ, ձեր հինգ օրվա բացակայությունը հաջորդում է այդ վիրահատությանը:

- Ոչ մի խնդիր չկա, ես կարող եմ պատասխանել. ես այնտեղ էի թե՛ մասնավոր, թե՛ մասնագիտական հետաքրքրասիրությունից մղված... Մի խոսքով, չէի կարող այդ պահին այդտեղ չլինել...

- Շնորհակալ եմ, որ անկեղծ եղաք: Ուստի կխնդրեի, որ շիտակորեն մի հարցի ևս պատասխանեիք. դուք սիրո՞ւմ էիք այդ աղջկան:

- Քիչ է ասել՝ սիրում էի... Ինձ պատասխանատու էի զգում այդ աղջկա ճակատագրի համար:

- Գիտեի՞ք, որ նա հիվանդ է, ավելի շուտ՝ դատապարտված:

- Այդ մասին գիտեի մինչև սիրելը:

- Եվ այդ իմանալուց հետո՞ որոշեցիք սիրել:

- Չորոշեցի, ամեն ինչ բնական եղավ:

- Ես գիտեմ, որ արևելցիք չափազանց կրակոտ են և հատկապես մեր աղջիկների հանդեպ, սակայն դուք գիտակցո՞ւմ էիք, որ ձեր սերը հասարակ մի բան չի լինելու, այլ... Ինչպե՞ս ասեմ... Հանդգնություն, մարտահրավեր Արարչին...

- Եթե դա չլիներ՝ այդ ընդվզումը, ինչպես ասացիք՝ այդ հանդգնությունը, հնարավոր է չսիրեի նրան... Արարիչն ինքը նրան բերեց ինձ մոտ և ես այդ աղջկան ընդունեցի որպես ճակատագիր... Եվ ոչ որպես դառը, ծանր, այլ երջանիկ ճակատագիր...

- Լավ, պատկերացրեք, որ այդ սոսկալի պատահարը պիտի տեղի ունենար ավելի ուշ, ասենք՝ երկու-երեք տարի հետո, երբ արդեն ամուսիններ կլինեիք, զավակներ կունենայիք:

- Ես տարբերություն չեմ տեսնում, քանզի երկու դեպքում էլ պատասխանատվության զգացումը նույնը կլիներ:

- Դուք արդեն երկու անգամ այդ բառը գործածեցիք՝ պատասխանատվություն: Չեմ թաքցնում, ինձ համար փոքր ինչ տարօրինակ է այն լսել քսանմեկ տարեկան երիտասարդի բերանից, տարիք, երբ հատկապես աչքի են ընկնում անպատասխանատվությամբ, մանավանդ սիրո հարցերում... Մի՞թե ձեր սերը խենթությունից, վերացումից զուրկ է և այդքան բանական է ու տրամաբանված:

- Ես ստիպված եմ չափից ավելի տրամաբանական լինել, որպեսզի կարողանամ իմ խենթությունների մեջ ազատ լինել:

- Իսկ կարո՞ղ էիք միևնույն ուժգնությամբ և հատկապես միևնույն պատասխանատվությամբ սիրել, եթե աղջիկը կատարելապես առողջ լիներ:

- Այդ դեպքում հնարավոր է, որ նախախնամությունը մեզ չհանդիպեցներ...

- Ահա երկրորդ բառն արտասանեցիք, որը նույնպես թարգմանվելու կարոտ է. պատասխանատվություն և նախախնամություն:

- Այսինքն...

- Պատասխանատվությունը ես կանվանեի կարեկցանք, իսկ նախախնամությունը՝ ինքնազոհաբերման պատրաստակամություն:

- Սակայն մի՞թե թարգմանությունն ուրիշ բան է ասում:

- Ընդհակառակը՝ լրացնում և հարստացնում է, չէ որ ամեն կարեկցող չէ, որ պատասխանատվություն է ստանձնում...

- Եվ նախախնամությանն ամեն հանդիպող չէ, որ պատրաստ է ինքնազոհաբերման, այդպե՞ս է:

- Այո, ճիշտ այդպես: Ահա ինչու հարցրի, եթե աղջիկն այդ ցավալի ժառանգությունն ստացած չլիներ իր հորից, դուք հազիվ թե այդպես նպատակամղված սիրեիք... Ի դեպ, ես լավ գիտեի այդ աղջկան, այդ ընտանիքը: Այո, նա գեղեցիկ էր, սակայն Լոզանում նրանից ավելի գեղեցիկները կան, որոնք ձեզ նման երիտասարդին հանգիստ չեն թողնի... Ենթադրում եմ, որ ձեր սիրային արկածներն արդեն տպավորիչ մի թիվ են կազմում...

Ռուբենը պատրաստվում էր առարկել, սակայն դոկտորը, ձեռքի շարժումով, նրան լռեցրեց.

- Մի ժխտեք և մի արդարացեք, քանզի ձեր պատրաստակամությունը հենց դրանով է իմաստավորվում և արժեքավորվում...

- Խնդրում եմ, ինձ արժանիքներ մի վերագրեք, դոկտոր, դա ընդամենը մասնավոր մի պատմություն էր:

- Իհարկե, մասնավոր էր... Մեր կյանքը հենց առտնին և մասնավոր հոգսերի մի շղթա է, սակայն ես ընդգծում եմ այս հանգամանքը: Ինչո՞ւ խոսեցի ձեր արկածների մասին... ուզեցի, պարզապես, ճշտել ենթադրությունս. ինքնազոհաբերման գնում է նա, ով գիտե կյանքը լիարժեք վայելել...

- Մինչդեռ Լառոշֆուկոն ասում էր, թե մեր ամեն մի ազնիվ արարքի տակ մի գծուծ հաշիվ կա:

- Ես չեմ ընդունում այդ հոռետես պարոնի փիլիսոփայությունը... Աշխարհը պիտի կառուցվի բարի մղումների վրա, որոնք պիտի անպայման դառնան բարի գործեր:

- Լառոշֆուկոն գուցե իրավացի էր, քանզի մարդիկ բարոյական ուժ և հավատ չունեն բարին ընդունել որպես բարի... Իմ լավ ու ազնիվ ընկերներից մեկը գիտե՞ք ինչ բառերով էր մխիթարում ինձ. «Մի տխրիր, - ասում էր նա, - գուցե լավն էլ սա էր, որ այսպես եղավ... Միևնույն է, մի օր պիտի լիներ, ավելի ուշ...»:

- Եվ դուք ի՞նչ ասացիք նրան:

- «Իսկ ինչո՞ւ չես մտածում, թե կարող էր նաև չլինել»: Եվ պատկերացնո՞ւմ եք, այս տարրական բանը նա չհասկացավ և ապուշ հայացքով նայում էր ինձ:

Դոկտորն արծաթյա գավաթները նորից լցրեց և այս անգամ Ռուբենը չստիպեց, որ իրեն համոզեն ու միանգամից խմեց կեռասի օղին:

- Եվ դուք գտնում եք, որ այդ ամենը բավարա՞ր պատճառ են դասերը լքելու համար: Ասացեք, խնդրեմ, պարոն ապագա բժիշկ, վաղը երբ որևէ մեկի ոտքը բուժելու լինեք, ոչինչ չպիտի կարողանաք անել, քանզի հինգ օր է ոտքն ենք հերձում առանց ձեզ:

- Ես այլևս վստահ չեմ, թե անպայման բժիշկ պիտի դառնամ, - իրենից անկախ արտաբերեց Ռուբենը: Ասաց ու ինքն էլ ապշեց իր խոսքերից:

Այստեղ գալուց առաջ մոտավորապես գիտեր, թե ինչի մասին պիտի գնա խոսքը, ուստի մի շարք պատասխաններ և արդարացումներ էր մտմտացել: Սակայն այս մեկը երբեք մտքով չէր անցել: Ասես մեկ ուրիշը խոսեց իր բերանով: Սակայն գիտակցում էր, որ այդ մերժումը, այդ հրաժարականն արդեն լողում էր օդում՝ առիթ փնտրելով մարմին ստանալու:

- Ենթադրում եմ, որ երկար եք մտածել այդ վճռի վրա:

Դոկտորն իրավացի է: Վճիռն ազդարարվեց հիմա, բայց մի՞թե հինգ օր իսկապես այդ մասին չէր մտածում, վախենալով այդ նախադասությունն անգամ մտքում արտասանել: Ահա դոկտոր Ռուի որոգայթը, որը կանխազգում էր. հանեց խնդրին դեմ հանդիման և ստիպեց ամեն ինչ իրենց անունով կոչել:

- Այո, մտածել եմ:

- Չեմ կարծում, թե միայն աղջկա եղերական մահն է պատճառը:

- Դա վերջակետը եղավ:

- Առաջին անգա՞մն էր, որ մտածեցիք լքելու մասին:

- Այո:

Դոկտորն իր կարճ ու կոկիկ մորուքը շոյեց, մի պահ նայում էր անորոշ կետի, հետո հանդարտ, առանց շտապելու, խոսեց.

- Ամեն ուսանողի ես չեմ կանչում այստեղ: Այսքան տարիների ընթացքում դուք չորրորդն եք, թե հինգերորդը... Իմ ժամանակը չափազանց սուղ է, բացի այդ ուսանողի հետ գերադասում եմ հանդիպել համալսարանում: Այնտեղ աշխատում եմ իմ լույսը հավասարապես բաշխել բոլորիդ, և տեսնում եմ, թե ինչպես այն օգտակար ճառագայթները, որ հավաքել եմ ամբողջ կյանքում, գնում կորչում են ոմանց մեջ... Սակայն ինձ համար կարևորն այն ուսանողներն են, որոնք հայելու պես արտացոլում են այդ լույսը և վերադարձնում ինձ... Նրանք ստիպում են, որ իրենց նկատեմ, երբեմն առանձնացնեմ...

Դոկտորը լռեց, ուշադիր նայեց իր ուսանողին.

- Ես կուզեի, որ ճիշտ հասկանաք ինձ և ճիշտ հետևություններ անեք: Դուք ինձ ստիպեցիք, որ առանձնացնեմ ձեզ, ուստի, չեմ թաքցնում, պիտի ցավեմ, եթե այսուհետև ձեզ չտեսնեմ իմ դասերին:

- Ես նույնպես չեմ կարող չմտածել այն մասին, որ այլևս չեմ լինելու ձեր դասերին... Սակայն ես սարսափեցի մահվան այն սոսկալի կերպարանքից, որ իրար վրա տեսա այդ օրերին... Ես չեմ ուզում նպաստել նրա դյուրին հաղթանակներին:

Դոկտոր Ռուն տեղից վեր թռավ:

- Կեցցե՛ս, հրաշալի ասացիր. «Նպաստել նրա դյուրին հաղթանակներին»: Ձեզնից առաջ այստեղ եղածներն այդպես հստակ չձևակերպեցին: Սակայն նրանք միևնույն սոսկումն էին ապրել...

- Նրանք նույնպե՞ս առանձնացյալներից էին...

- Անշո՛ւշտ, այլապես այստեղ չէին լինի, և նրանք հինգն էլ այսօր, աշխարհի տարբեր անկյուններում, ճանաչված բժիշկներ են:

- Ուզում եք ասել, որ ես կլինեմ վեցերո՞րդը, եթե...

Դոկտորը ոտքի ելավ և նորից դարձավ նկարին.

- Ես կուզեի, որ վեցերորդը լինեք, սակայն վերջնական վճիռն ընդունողը դուք եք: Նորից նայեք այստեղ. այս կտավը նրանք չտեսան... Սա մեկ տարի առաջ գնեցի Մյունխենում, մի ցուցահանդեսից, չնայած կուզեի, որպեսզի որոշ բաներ այլ կերպ ներկայացված լինեին: Օրինակ՝ մեռնողի այս մարմինը փաստորեն դուրս է նկարի գաղափարից... Նա ընդամենը մահվան ճարակ է, և բժշկի գլխահակ կեցվածքն, ինձ համար, շատ համոզիչ չէ:

- Ուրիշ ի՞նչ կարող էր անել... Մի՞թե ի վերջո մահվան ճարակ չի դառնալու մեր յուրաքանչյուր հիվանդը...

- Ահա և ձեր պարտվողական կեցվածքը:

- Մի՞թե նա կարող է խուսափել պարտությունից...

- Այո՛, կարող է, - գրեթե գոռաց դոկտորը, - քանզի պարտությունը մահը չէ, այլ սարսափը մահվան առջև... Տեսեք, գերանդիավորը եկել է տանելու իր հերթական զոհին, որի վրա հոգու, առավելևս՝ ոգու հետք չկա այլևս:

- Նրանք ավելի շուտ են մահացել, քան մարմինը...

Դոկտորը չպատասխանեց, ասես, լռությունը մատուցելով որպես համաձայնության նշան: Նա Ռուբենին առաջնորդեց սենյակից դուրս և հրաժեշտ տալուց առաջ, ասաց.

- Վաղը, երեկոյան ժամը ութին, այցելությունների պիտի գնամ: Երախտապարտ կլինեմ, եթե անցյալ անգամվա պես օգնեք ինձ:

Ռուբենը լուռ գլխով արեց, որպես համաձայնության նշան:

* * *

Արտասովորության այս զգացումն առաջին անգամ ունեցավ Կոնրադի արվեստանոցում: Նկարիչը սրտանց ուրախացավ նրան տեսնելով, մանավանդ որ տրամադրությունն արդեն բարձր էր, և կարելի էր կռահել, թե ինչու. արվեստանոցի կենտրոնում նստած էր պատկառաշուք տեսքով մի պարոն, որն, ինչպես երևում էր, արդեն հասցրել էր ծանոթանալ աշխատանքներին և (դատելով նկարչի հաճոյակատար վերաբերմունքից) նույնիսկ նկարներ գնել: Իսկապես, մի քանի նկարներ առանձնացված էին: Երևում էր, որ այս մարդը հիմար չէ:

- Ես ձեզ հրավիրում եմ ոչ միայն կնոջս դիմանկարն անելու, այլև որպեսզի օգնեք այս նկարները կախելու իմ առանձնատան պատերին: Դա իմ խելքի բանը չէ, - ծիծաղելով ասաց նա:

Ռուբենը տհաճությամբ փաստեց, թե այս խոսքերից ինչպես փոխվեց Կոնրադը: Նրա դեմքին մի յուրատեսակ ժպիտ հայտնվեց, շարժումները դարձան մեղմ, ճկուն, իրանն ասես մի փոքր թեքվեց: Ցավով նայում էր, թե հպարտ արտիստն ինչպես է հաճոյանում այս մարդուն: Բոլորովին վերջերս իմացավ Կոնրադի դժվարին հոգսերի մասին, իմացավ ուրիշից: Նա Լոզան էր եկել ոչ այնքան որպես իր հայրենիքում չճանաչված մի մարգարե, որքան ավելի շատ կնոջ համար, որը գտնվում էր Լեյզենի սանատորիաներից մեկում: Այդտեղից հատուկենտ մարդիկ էին վերադառնում... Իսկ այնտեղ մնալը, անգամ այնտեղ մեռնելը փող արժեր և բավական շատ:

Որևէ վատ բան չուներ այս մեծահարուստի հանդեպ, դեռ լավ է, որ իր դրամն արվեստի վրա է ծախսում: Ոչ էլ Կոնրադին ներքուստ մեղադրեց, որ հաճոյանում է նրա առջև: Նա վրդովված էր աշխարհի այս դրվածքից, որ արվեստագետը, ոգի արարողը միշտ կախված է ստորին նյութից, և դրամ ունեցողներից արդյոք բոլո՞րն այս պարոնի նրբանկատությունը կունենան՝ գնելու ոչ թե արվեստագետին, այլ նրա աշխատանքի պտուղը:

Ինչպես երևում էր, պարոնի այցելությունը մոտենում էր ավարտին: Նա յուր փորին կորաձև կախված շղթայից քաշեց դուրս հանեց ոսկե զանգվածեղ «Longine»-ը և ժամը նայեց: Կոնրադը Ռուբենին խնդրեց մի քանի րոպե ներսը սպասել, մինչև որ կճանապարհի պարոնին:

Պատի տակ, հավանաբար, դրված էին վաճառված նկարները: Առանց տեղից շարժելու, նայեց դրանք: Հետո, անսպասելի, ուշադրությունը գրավեց արվեստանոցի հեռավոր անկյունում, պատի տակ գտնվող շրջված մի նկար: Նկատվում էր, որ այն հանված ու զատված է կտավների ընդհանուր կույտից:

Մոտեցավ ու շրջեց: Նկարը շլացնող մի լույս էր արձակում: Այնտեղ պատկերված էր բազմոցին ընկողմանած մի մերկ կին: Նրա դիրքը հանդուգն էր, կանչող, միաժամանակ մերժող: Մարմինն անթերի էր, կաթնաթույր մորթը նրբին, ազնվական գունատություն ուներ: Աստվածային թմբիկի անթերի դելտան մի փոքր խախտված էր, քանի որ ձախ ոտքը, ի տարբերություն ձիգ և ուղիղ աջ ոտքի, ծալված էր, փորը ողորկ էր, իսկ պիրկ և ուռուցիկ կրծքերը կարծես անհամաչափորեն մեծ էին այս պատանի և կառուցիկ մարմնի համար: Կնոջ դեմքը չէր երևում: Այն ծածկված էր ճապոնական ընդարձակ մի հովհարով, որի վրա պատկերված էր Ուտամարոյի* էրոտիկ տեսարաններից մեկը: Եվ չնայած ջահել, գրեթե աղջկական մարմնին, դա հասուն կին էր: Այդ էին վկայում նրա նրբին ձեռքերը՝ կնոջ տարիքն ամենից շուտ և անսխալ մատնողը:

Մեղսալի մի մթնոլորտ էր ստեղծում այս ծպտված կինը: Սակայն դա չէր, որ գրավեց Ռուբենին, այլ նրանից արտածվող անբացատրելի խորհրդավորությունը: Ինչ-որ ծանոթ, ինչ-որ ժամանակ ապրված մի բան կար այս ամենում: Թվաց, թե կինը հատկապես իրենից է ծածկել դեմքը, և որ եթե հիմա շրջվի, ապա նկարի վրա հովհարն անպայման կիջնի: Ասես, մի փոքրիկ դավադրություն լիներ իր դեմ, համակ գաղտնիք և խորհրդավորություն:

Թիկունքից հնչեց Կոնրադի ձայնը.

- Դու չես պատկերացնի, թե այսօր ի՜նչ հաջող օր եղավ ինձ համար:

Ռուբենը շրջվեց: Կոնրադի դեմքը փայլում էր.

- Տասը նկար վաճառեցի: Ահա՛ չեկը, մի ամբողջ հարստություն: Այժմ ես կարող եմ երկու տարի միայն իմ ուզածը նկարել... Հետո, պատի տակ դրված մերկ կնոջ նկարը ցույց տալով, ավելացրեց. - Այդ նկարն էլ տասնմեկերորդը կարող էր լինել... Շատ հավանեց, բայց զգուշացավ սեփական տան պատերից մերկություն կախել...

- Այս նկարն ինձ անծանոթ է... Ո՞վ է այս կինը:

- Դու նրան չգիտես... Սա նույնպես պատվեր է, ինքը՝ կինը, պատվիրեց: Երկու օրինակ նկարեցի, մեկն իր մոտ է, առանց հովհարի, մյուսն՝ այստեղ...

- Ինքը տեղյա՞կ է:

- Անշուշտ, հովհարի գաղափարն ինքը հուշեց...

- Չգիտեմ, թե ինչով բացատրեմ, բայց տարօրինակ մի զգացում ունեցա այս նկարից:

- Շոյված եմ, սիրելիս, որ իմ նկարները տարօրինակ զգացումներ են առաջացնում մեջդ: Սակայն ամենատարօրինակն այն կլիներ, եթե մենք արժանավայել կերպով չնչեինք այսօրվա հաղթանակը, - ասաց Կոնրադը, վեր ցցելով սեղանին դրված երկնագույն չեկը:

Օրվա մնացած մասն անցավ լճափնյա ռեստորաններից մեկում: Ճանապարհին, չգիտես որտեղից, երկու արվեստագետ ընկերներ ավելացան: Կոնրադն ավտոմոբիլ էր վարձել: Նա հարբած էր մինչև խմելը: Քեֆը տևեց մինչև կես-

* Ուտամարո Կիտագավա - XVIII դարի ճապոնացի մեծ նկարիչ: Հայտնի է գեյշաների կյանքը ներկայացնող էրոտիկ պատկերաշարով:

գիշեր: Անզուսպ ուրախությունը վերածվում էր աղմկալից հարբեցողության: Այս ռեստորանը, հավանաբար, բարձր հասարակության սիրված վայրերից էր, և նրանք իրենց աղաղակներով պիտի որ գրգռեին ոմանց նյարդերը:

Մի պահ նրան թվաց, թե սրահի հեռավոր անկյունից իրեն նայում են: Կտրուկ շրջվեց և երկու բարձրաշխարհիկ կին տեսավ, որոնք երկու սպաների ուղեկցությամբ դուրս եկան: Սեղաններից ոչ մեկը դատարկ չէր: Նրանք, հավանաբար, ներս չմտած լքում էին ռեստորանը:

Երբ կեսգիշերին վերջապես որոշեցին դուրս գալ, ելքի մոտ, հաճոյակատարությամբ հյուրերին ճանապարհող մետր դ՚օթելը մի ծրար սահեցրեց նրա ափի մեջ, մասնավորապես խնդրելով այն բացել տանը: Դա հաստատության ծրարն էր՝ կատարելապես մաքուր: Չնայած հետաքրքրասիրությանը, նա ենթարկվեց հրահանգին: Ծրարն իր մասին հիշեցրեց տանը, երբ բաճկոնն աթոռին դնելիս ընկավ հատակին: Անմիջապես վերցրեց և հանեց արդեն քաջ ծանոթ այցեքարտը, որի վրա կանացի գեղեցիկ ձեռագրով ասվում էր. «Սիրելի բարեկամ, ես պաշտում եմ պատահականության տրամաբանությունը: Also*, դուք գիտեք իմ հասցեն: Ջերդ՝ Ալիս: Հ.Գ. Դուք պետք է լուրջ փաստարկներ գտնեք ինձ բացատրելու, թե ինչու անցած անգամ չընդունեցիք իմ հրավերը»:

* * *

Հաջորդ օրը «Old India»-ում հանդիպեց Քենանին: Տխուր դեմքով նստած ծխում էր և պատուհանից նայում: Ռուբենը նրան նկատեց դրսից և ներս մտնելուն պես հայտնվեց նրա դրկում: Այս տղան այդպես էլ չհասունացավ, թերևս այն պատճառով, որ իր ժամանակի և դրամի մեծ մասը ծախսում էր Լոզանի պոռնիկների վրա: Այս անգամ, ինչպես երևում էր, իր արկածներով պիտի չհոգնեցներ: Տեսքն իսկապես սոսկալի էր:

- Վատ լուրեր ունեմ Պոլսից..., - ասաց նա: - Հայրս ձերբակալված է և աքսորված:

- Ո՞ր մեղքի համար:

- Տարօրինակ եք դուք՝ հայերդ, մի՞թե չսովորեցիք, որ մեր երկրում անմեղ լինելն արդեն մեղք է:

- Մենք դա վաղուց գիտեինք, սպասում էինք, որ դուք էլ համոզվեք... Իսկ ո՞ւր են աքսորել:

- Ջեն ասում, գաղտնիք է... Ենթադրում ենք, որ Անատոլիայի խորքերը:

- Ոչինչ, մի մտահոգվիր, սուլթանների սովորությունն է՝ պաշտոնազրկել, աքսորել, հետո ավելի բարձր պաշտոնով ետ բերել...

- Երանի այդպես լիներ, սակայն ինձ ասացին, որ վիճակը շատ լուրջ է, ընտանիքն էլ տնային կալանքի տակ է...

- Այդ լուրերը որտեղի՞ց իմացար:

- Երկու օր առաջ, չափազանց կցկտուր, ինձ հայտնեց Մաքթուբը, իսկ այ-

* Այսպիսով(գերմ.):

սօր գերմանական և ֆրանսիական թերթերն են գրել... Ի դեպ, միայն հայրս չէ, բարձրաստիճան ուրիշ պաշտոնյաներ էլ կան:

Քենանի առջև կիտված լրագրերից դժվար էր հասկանալ, թե իսկապես ինչի՞ համար են տեղի ունեցել այդ ձերբակալությունները: Հեռավոր ակնարկ էր արվում ինչ-որ ենթադրվող դավադրության մասին, ֆրանսիացի լրագրողը հատկապես նշում էր, որ «հիվանդ մարդն» արդեն խորը ճգնաժամի մեջ է, որ այդ երկրին օդ ու ջրի պես բարեփոխումներ են պետք: Չնայած տարբեր լեզուներին և թերթերի քաղաքական զանազան ուղղություններին, տպավորությունն այնպիսին էր, թե միևնույն մարդն է շարադրել այդ լրատվությունները:

- Ի՞նչ ես մտադիր անել, - հարցրեց Ռուբենը: - Հանկարծ մտքովդ չանցնի Պոլիս վերադառնալ...

Ասաց և ինքն էլ զարմացավ իր միամտությունից. ծիծաղելի էր այս կաթնակերին պատկերացնել անսահմանորեն նվիրված զավակի դերում: Զավակ, որի միակ նպատակը վայելքն էր, բալզակյան տարիքի կանանց գրկում տաքանալը, մորաքրոջ աղջիկների հետ ունեցած արյունապիղծ կապերով հպարտանալը և, ժամանակ առ ժամանակ, Էվիանի կազինոյում կլորիկ գումար կորցնելը...

- Ոչ, ոչ... Մաքթուբն ասում է, թե պետք է համբերել... Ասում է, որ այսպես չի կարող երկար տևել...

Ռուբենը մի պահ ցանկություն ունեցավ կոմսուհու այցեքարտը ցույց տալ նրան, սակայն իմաստ չուներ, քանզի ոչ միայն չէր պատշաճի նրա հոգեկան այս վիճակին, այլև գուցե պետք չէր տեղյակ պահել սպասվելիք հանդիպման մասին: Ուստի քաջալերանքի մի երկու խոսք ասելով, մոտեցավ հեռախոսին, մի գործիք, որն այստեղ, ի տարբերություն Պոլսի, ավելի արագ էր տարածվում, ավելի մատչելի էր և ավելի էժան, մանավանդ այստեղ՝ սրճարանի մշտական հաճախորդների համար:

Հեռախոսակայանի օրիորդից խնդրեց միացնել այցետոմսի վրա նշված քառանիշ համարին, որն արդեն անգիր գիտեր: Մոտավորապես մեկ րոպե անց, հեռավոր աղմուկներից, զուգահեռ լսվող խոսակցությունների պատառիկներից, ճթճթոցներից ու խշխշոցներից հետո կանացի մի ձայն հնչեց՝ գերմանական շեշտադրությամբ, որը հայտնեց, թե տիկին կոմսուհին Էվիանում է և այսօր երեկոյան ժամը 19-ի շոգենավով կվերադառնա, հարցնողներին խնդրեց ժամը 21-ից հետո այցելել:

Մինչև ժամը ինը բավական ժամանակ կար: Տուն վերադառնալու ցանկություն չուներ, ուրիշ տեղ չէր կարող գնալ անձրևի պատճառով, ուստի ստիպված էր մնալ «Old India»-ում: Ինչպես երևում էր, անձրևն իսկապես որոշել էր նրան պատանդ դարձնել թեյարանում:

...Արդեն ինն անց էր, սակայն երկինքը շարունակում էր պարպել իր ջրերը: Մի բաժակ հին ռոմ պատվիրեց տաքանալու և համարձակություն առնելու համար, զգաց, թե մուգ թեյագույն հեղուկն ինչպես կենդանացրեց մարմինը, որից հետո, անսասան վճիռ ընդունած, դուրս եկավ սրճարանից:

Անձրևը կարծես իրեն էր սպասում, որպեսզի մոլեգնի: Դիմացի գիշերաթիկի աղջնակները, ամառային երկնագույն-ճերմակ համազգեստներով, ոտքից

գլուխ թրջված, խռնվել էին սրճարանի մուտքի մետաղյա ծածկի տակ և սարսափում էին մի վերջին ճիգ գործել՝ վաղքով կտրել-անցնել հրապարակը: «Իմ դեմ է այս անձրևը, - մտածեց Ռուբենը: - Ամեն ինչ անում է, որպեսզի չհանդիպեմ կոմսուհուն»:

Հրապարակով հատուկենտ կառքեր էին անցնում, անիվներով ճեղքում կուտակված ջուրը: Ինն անց քառասուն էր: Տեղ հասած ուղևորները չէին համարձակվում դուրս գալ կառքի միջից և տուն մտնել: Նա պատկերացրեց. կոմսուհին հիմա ճիշտ այսպես տեղ է հասել և մի կերպ, փութով մտել իր առանձնատուն, որ տարաշխարհիկ անուն ունի՝ «L'étoile d'Orient»*, այստեղից ընդամենը մի տասը բոպե քայլելու ճանապարհ: Իսկ եթե կոմսուհին չի եկե՞լ: Ուրեմն անիմա՞ստ կլինի իր հերոսությունը՝ այս հեղեղի տակ հյուր գնալ: Սակայն ինչո՞ւ չպիտի գա: Նավից հանգիստ կիջնի, կնստի կառքը, առանց մի տեղը թրջելու կհասնի առանձնատուն և հանգիստ կսպասի իր հյուրերին, որոնք նույնպես կառքերով կժամանեն: Ինքն է միայն, աղքատ ուսանողը, որ ոտքով պիտի ներկայանա բարձրաշխարհիկ ընդունելության: Պատկերացնում էր, թե ինչ հոյակապ տեսք կունենա՝ ոտքից գլուխ թրջված...

Իսկ եթե հիմա չգնա, ապա իսպառ կկորցնի նրան հանդիպելու հնարավորությունը: Զգաց, որ գլխում խառնաշփոթ է, որ այս ամենը ենթակա է մեկ այլ՝ անտրամաբանական տրամաբանության: Ուստի մնում է միայն վճռել և ահա այսպես մտնել հեղեղի տակ, հրապարակը շեղակի կտրել ու վազել դեպի ավընյու դյու Տեատր, որն ուղիղ գնում և հատում է ռյու Բել Ֆոնտենը, դա ամենակարճ ճանապարհն է:

...Ետքից զարմացած ձայներ հնչեցին. «Խե՞նթ եք, ինչ է...» կամ «Մի՞թե Հիսուսն եք, որ ջրերի վրայով քայլեք...»: Ինքն, անշուշտ, Հիսուսը չէ, ապացույց, որ ոտքերն արդեն լավ թրջված են, բայց որ մեջը սատանա է մտել, ստույգ է: Անձրևանոցը ոչնչով չի օգնում, ընդհակառակը, խանգարում է, քամին մտնում է տակը, ուզում է ձեռքից պոկել: Քանի ուշ չէ, պետք է ծալել և գայիսոնի պես պահել ձեռքի մեջ:

Հրապարակն անցավ, ահա և ավընյու դյու Տեատրը: Իսկ հիմա, երբ կատարելապես թրջված է, վաղելն այլևս անիմաստ է, քանի որ ջուրն ընկածն այլևս չպիտի վախենա անձրևից կամ... հակառակը: Հիմա, իր մաշկի վրա, զգաց այդ ասույթի բուն իմաստը: Մանավանդ որ ճամփի մեծ մասն արդեն անցել է և հասել ռյու Բել Ֆոնտենի խաչմերուկին: Եթե իրեն հարցնեին, թե աշխարհի կործանումն ինչպիսին է լինելու, ապա առանց վարանելու կնկարագրեր այս տեսարանը: Եվ, հավանաբար, ճիշտ այսպես է սկսվել Ջրհեղեղը. «Քառասուն օր ու քառասուն գիշեր պիտի անձրև թափեմ երկրի վրա...»: Մտքով անցավ կոմսուհու և նրա բարձրաշխարհիկ հյուրերի առջև այս համեմատությունն անել և փայլել սրամտությամբ:

...Սակայն սպասի՛ր: Մի քեղ տես: Թրջված մուկ ես դարձել: Այս տեսքո՞վ պիտի ներկայանաս կոմսուհուն և նրա հյուրերին: Հիմա այնտեղ նստած են ան-

* Արևելքի աստղ(ֆրանս.):

թերի հագնված, ձիգ ու կոկիկ, բեղմիրուքը խնամված պարոնայք ազնվականներ, սպաներ, գործարանատերեր, բանկիրներ, բուրումնավետ տիկնայք՝ ձանձրացող և նվաղկոտ հայացքներով, լիվրեներ հագած սպասավորները շամպայն և նրբին աղանդերներ են մատուցում: Նրանցից մեկն էլ հորանջելով նայում է պատուհանից դուրս և կարեկցանքով ասում. «Հապա մի նայեք, պարոնայք, այս խեղճ ու թշվառ երիտասարդին, որն առանց անձրևանոցի այսպես խիզախ քայլում է անձրևի տակ»: Եվ քիչ հետո, «խիզախ երիտասարդը» հայտնվում է ընտիր հասարակության առջև՝ պատկառելի մի լճակ գոյացնելով ջրով լցված ոտնամանների շուրջ:

Կանգնել էր առանձնատան առջև ու չգիտեր, թե ինչ աներ: Շարունակել չէր լինի, հետ գնալ չէր լինի: Սակայն «Արևելքի Աստղը» չէր շողում: Առանձնատան պատուհանները մութ էին, լույսի որևէ նշույլ, մարդու որևէ ներկայություն չէր տեսնում՝ ի տարբերություն մյուս, նույնպես չքեղ առանձնատների, որոնց պատուհաններից առատ լույս էր հորդում:

Այս հիմար ու անորոշ վիճակին ավելացավ ոտքից գլուխ մարմինը ցնցող և ատամներն իրար զարնող դողը: Զգաց, որ եթե հենց հիմա, այս պահին, մի լիքը բաժակ ռոմ և տաք թեյ չխմի, ապա հիվանդությունն ու ջերմն անխուսափելի են: Ձեռքը մեքենայորեն գնաց դեպի մետաղյա ծանր դռան թակիչը:

Սկզբում մեղմորեն, մեկ-երկու զարկով, այնուհետև ավելի ուժգին և ավելի երկարատև թակոցներով փորձեց որևէ մեկին դուրս կորզել խավար առանձնատնից: Երեք-չորս րոպե անցավ: Վերջապես մուտքի դուռը լուսավորվեց, հետո դանդաղ բացվեց և կանացի մի կերպարանք ուրվագծվեց էլեկտրական դեղին լույսի վրա: Նա, անձրևանոցը բացած, տնային փափուկ կոշիկները զգույշ դնելով թրջված աստիճաններին, մոտեցավ և ուշադիր զննեց անկոչ հյուրի դեմքը:

- *Mein Got!** - սոսկումով արտասանեց նա և, առանց հարցնելու եկվորի իսկությունը, չուգունե ծանր դուռը բանալիով բացեց և փութով հրավիրեց ներս: Հետո, զարմացած, գերմաներեն հարցրեց.

- Դուք այսո՞ր ժամանեցիք... Ինչո՞ւ չզգուշացրիք կոմսուհուն: Իսկ ո՞ւր է ձեր ճամպրուկը...

Ռուբենը ֆրանսերեն պատասխանեց, թե ինքը վաղուց Լոզանում է, թե եկել է կոմսուհու հրավերով և աղջկան ցույց տվեց նախորդ օրն ստացած այցեքարտը: Աղջիկն այն ուշադիր զննեց, ապուշ կտրած նայեց Ռուբենին և, գերմանական սոսկալի առոգանությամբ, ֆրանսերեն հարցրեց.

- Ուրեմն, դուք Բուդապեշտից չեք գալի՞ս...

Ռուբենը հիմա հասկացավ աղջկա զարմանքի պատճառը և քրքջաց: Իր հերթին հասկացավ նաև աղջիկը և միացավ նրա ծիծաղին: Հետո միանգամից լրջացավ, Ռուբենի անձրևանոցը վերցրեց, դրեց մի կողմ և ձեռքից բռնած առաջնորդեց ընդարձակ հյուրասրահ:

- Շտապ հանվեք և այդ բուխարիկը վառեք... Ես հիմա կգամ:

Դեպքերի այս անակնկալ ընթացքից ապշել էր: Սակայն մարմնի մեջ մտած

* Աստված իմ(գերմ.):

ցուրտը զգացնել տվեց: Նախ բուխարիկը վառեց, հետո հանեց թրջված բաճկոնը, կոշիկները և վարանումի մեջ կանգնեց: Թրջված էր նաև շալվարը, խոնավացել էր շապիկը, ներքնաշորերը և ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի թոքերի բորբոքում ստանա: Սակայն մի՞թե այս անծանոթ աղջկա ներկայությամբ, ուրիշի տան մեջ, ուր առաջին անգամ է մտնում, պիտի մորե մերկ հանվի...

Անորոշ վիճակից նրան հանեց աղջիկը, որը ներս մտավ՝ ձեռքին մի ընդարձակ և շքեղ խալաթ, հողաթափեր և մի ձեռք... կանացի սպիտակեղեն: Տեսնելով Ռուբենի շվարումը, գրեթե վրդովված, բացականչեց.

- Ես ձեզ ասացի, որ հանվեք... Մինչև վերջ, իսպառ: Դուք ոտքից գլուխ թրջված եք, ուզում եք հիվանդանա՞լ, ինչ է...

Իր հետ բերածը գցեց բազմոցին և, արդարանալով, ավելացրեց.

- Այս տանը տղամարդ չի ապրում... Ես կարողացա միայն կանացի սպիտակեղեն գտնել... Դուք հիմա պետք է մտածեք ձեր առողջության մասին և ոչ թե պատշաճության..., - և դուրս գալով, կարգադրեց. - Ձեր թրջված շորերը փռեք բուխարիկի առջև, որպեսզի շուտ չորանան... Ես հիմա կգամ:

Անցած դարի Երկրորդ Կայսրության ոճով կահավորված պերճաշուք հյուրասրահը՝ բուխարիկի մոտ փռված զգեստներից կորցրել էր իր ամբարտավան փայլը: Կանացի սպիտակեղենին ձեռք չտվեց, բավարարվեց ընդարձակ և տաք խալաթով, որ վերից վար գրկում էր մարմինը: Քիչ հետո վերադարձավ աղջիկը՝ մատուցարանի վրա բերելով բյուրեղապակյա լիքը սրվակը և ընդամենը մեկ բաժակ:

- Ինչո՞վ եք հյուրասիրում ինձ, - հարցրեց Ռուբենը:

- Կոնյակով, դա կտաքացնի ձեզ:

- Ես մենա՞կ պիտի խմեմ:

Աղջիկը ժպտաց, դուրս եկավ ու վերադարձավ երկրրորդ բաժակը ձեռքին: Առաջին բաժակը լիքը լցրեց և մեկնեց Ռուբենին, իսկ իր՝ ավելի փոքր բաժակի մեջ, ընդամենը մեկ ումպ կաթեցրեց:

- Մեր հանդիպման կենացը: Ի դեպ, իմ անունը Ռուբեն է:

- Էրիկա, - ասաց աղջիկը և բաժակը թեթևակի հպեց շուրթերին:

Գեղեցկությամբ չէր փայլում, սակայն համակրելի ու առինքնող մի ժպիտ ուներ և, հավանաբար, պատրաստակամ ու բացսիրտ նկարագիր: Ուշադիր նայեց Ռուբենին և ասաց.

- Կոմսուհին պատմել է ձեր մասին... Ասաց, որ նշանավոր բանաստեղծ եք:

- Օ՛, նա սոսկալի չափազանցրել է:

- Ես նրա մորաքրոջ աղջիկն եմ, եղբորս հետ Բեռլինից հյուր ենք այստեղ:

- Իսկ կոմսուհին որտե՞ղ է:

- Հյուրերի հետ մեկնեցին Էվիան՝ կազինոյում խաղալու: Այսօր երեկոյան պիտի վերադառնային:

- Շատ հնարավոր է, որ չվերադառնան... Այսպիսի եղանակին շոգենավը հազիվ թե ճամփա ընկնի:

Եվ, ասես, ի հաստատումն այդ ենթադրության, ամպրոպն ահեղաձայն դղրդաց, ստիպելով աղջկան ցնցվել:

- Ասիրեցի այս քաղաքը: Կամ ծեր պիտի լինես այստեղ, կամ ուսանող... Հիմա էլ այս սոսկալի անձրևը:

- Սակայն, ենթադրում եմ, որ ձեր կյանքը հետաքրքիր է անցնում կոմսուհու մոտ:

Աղջիկը ծամածռեց դեմքը.

- Շա՜տ հետաքրքիր է... Զանազան ծեր մարդիկ ամբողջ օրը դրամից ու գործերից են խոսում: Խելագարվել կարելի է: Դուք առաջին ուսանողն եք, որին հանդիպում եմ այստեղ:

Հետո նա չարաճճի հայացքով նայեց Ռուբենին.

- Ի դեպ, քաղցած չե՞ք... Խոհանոցում համեղ բաներ կան:

- Գուցե սպասենք հյուրերին... Վերջապես, կոմսուհուն:

- Բայց չէ որ ասացի, թե նրանք չեն վերադառնա, իսկ ես քաղցած եմ:

- Այդ դեպքում հրամայեք, - ժպտաց Ռուբենը:

Ամբողջ օրը գրեթե ոչինչ չէր կերել, և հիմա գայթակղիչ էր ոչ այնքան հյուրերի համար պատրաստված կերակուրների վայելումը, այլ անակնկալ սկսված արկածախնդրության շարունակությունը, խորհրդավոր ընթրիքն այս աղջկա հետ: Զգաց նաև, որ արդեն ընկել է հաճելի և անսպասելի դեպքերի շրջապտույտի մեջ, որից կամ պետք է միանգամից դուրս գալ (սակայն ինչո՞ւ), կամ թողնել, որ քեզ տանի:

Քիչ հետո հյուրասրահի մեծ սեղանին ընտիր կերակուրներ և հին գինիներ հայտնվեցին: «Մեր որոշումը բոլոր դեպքերում ճիշտ է, - ասաց Էրիկան: - Չէ որ այս ամենը հյուրերի համար էր պատրաստված, իսկ հյուրն արդեն այստեղ է»: Միասին պատրաստեցին սեղանը, գինիներն ընտրեց Էրիկան՝ հմտություն և ճաշակ ցուցաբերելով այդ գործում: Զարմանքով նկատեց նաև, թե կապույտ արյուն ունեցող այս աղջիկն ինչպիսի նրբագեղությամբ և հաճույքով էր սպասարկում իրեն, աղջիկ, որը պիտի չփացած լիներ աղախինների ու սպասուհիների մշտական ներկայությամբ:

- Այսպես համեղ վաղուց չէի կերել, - խոստովանեց նա, վարդագույն սաղմոնի երկրորդ պատառը վերցնելով:

Ինքն էլ վաղուց այսպես հաճույքով և հատկապես այսպիսի ընտիր բաներ չէր կերել: Ուսանողի համար դրանք անմատչելի են, իր գիշերօթիկի միապաղաղ խոհանոցի գերին էր: Ինչ տան, այն էլ պիտի ուտի: Իսկապես, երկուսով, ասես, գազանացել էին: Ուտում էին առանց հագենալու, խախտելով հաջորդականությունը և մատուցման կարգը, կարմիր և ճերմակ գինիների հերթականությունը... Խենթություն էր մտել նրանց մեջ, չարաճճի, սատանայական մի բան:

- Թող հյուրերը գան և քաղցած մնան, - ծիծաղեց աղջիկը և ուղղակի ձեռքերով սկսեց խորոված կաքավն ուտել:

Թեյը որոշեցին բուխարիկի մոտ խմել, սքանչելի և նրբին խմորեղենների հետ: Գազանության մի նոր նոպա էլ այստեղ բռնեց: Ուտում էին միանգամից մի քանի կտոր, ուղղակի ձեռքերով, հետն էլ քրքջում, ծիծաղից խեղդվում:

Կաթողիկեի տասներկու զանգերը հիշեցրին, որ ավելի քան երկու ժամ

այստեղ է: Միանգամից սթափվեց, ասես, միաժամանակ արթնացավ քնից ու երազից: Ի՞նչ է անում այս տանը, ո՞վ է այս աղջիկը, ի՞նչ գործ ունի նրա հետ: Այս հարցականները, հավանաբար, արտահայտվեցին նրա դեմքին: Աղջիկը զարմացած հարցրեց.

- Ձեզ ի՞նչ եղավ, դուք վա՞տ եք:

- Ոչ, ոչ, պարզապես ժամն ուշ է... Ես անկոչ հյուրի նման եկա և երկար նստեցի:

- Նախ անկոչ չեք, - կտրուկ ասաց նա, - դուք կոմսուհու հյուրն եք... Եվ հետո, հազար անգամ ավելի լավն եք այն ինքնագոհ տխմարներից, որ ամեն երեկո...

Հետո, իրեն տիրապետելով, ավելացրեց.

- Ուզում եք գնա՞լ... Երևի ձանձրալի է ինձ հետ... Դուք, հավանաբար, գեղեցիկ ընկերուհիներ ունեք, որոնք սպասում են ձեզ... Նրանք չա՞տ գեղեցիկ են, դուք սիրո՞ւմ եք նրանց...

- Ինչո՞ւ «նրանց», երբ ոչ մեկը չկա:

- Իսկապե՞ս, - զարմացավ աղջիկը: - Ձեմ հավատում, որ ձեզ նման գեղեցիկ երիտասարդը ոչ մի ընկերուհի չունենա:

- Հավատացեք, որ չկա:

- Ինչո՞ւ, չեք ուզո՞ւմ...

- Ժամանակ չկա, դասե՛ր, դասե՛ր, շարունակ դասեր:

- Այդ դեպքում ինչո՞ւ եք եկել կոմսուհու մոտ... Առանց այն էլ նրա շուրջը, գիշեր ցերեկ, տղամարդիկ են պտտվում..., - գրեթե պոռթկալով ասաց աղջիկը, հետո, ասես, սթափվեց և ավելացրեց. - Կներեք, իհարկե, դա ձեր գործն է, բայց նրա շուրջն այնքան տղամարդ կա, որ մեկով ավելի կամ պակաս, ոչ մի նշանակություն չի ունենա...

- Ուրեմն, կատարելապես անիմա՞ստ է իմ այցելությունը:

- Ոչ, ոչ, նա ձեր մասին բարձր կարծիքի է: Այնպես որ շարունակեք այցելել նրան:

- Մենա՞կ պիտի մնաք գիշերը... Որևէ մեկին չեք սպասո՞ւմ:

- Ոչ մեկին չեմ սպասում: Կոմսուհին Էվիան մեկնեց սպասուհիների հետ... Այս եղանակին ո՞ւր եք դնալու, ձեր ղդեստները դեռ թաց են:

Այդ մասին մոռացել էր: Իսկական որոդայթ:

- Որքանո՞վ է պատշաճ... Ի վերջո, ես...

- Առաջին անգամը չէ, որ կոմսուհու հյուրերը մնում են գիշերելու: Անհոգ եղեք և զգացեք ինչպես ձեր տանը: Վերևն ազատ սենյակներ կան:

Աղջիկը, ժպիտը դեմքին, մոտեցավ նրան, ձեռքը բռնեց և առաջնորդեց վերև: Ընդարձակ միջանցք էր՝ մի քանի դռներով:

- Այս երկու սենյակներում, սովորաբար, հյուրերն են գիշերում: Ծայրի սենյակը կոմսուհու ննջարանն է: Իսկ այստեղ՝ ձեր դիմացը, ես եմ:

Նա բացեց դռներից մեկը և Ռուբենին հրավիրեց ներս: Կոկիկ և ընդարձակ մի ննջարան էր՝ երկտեղանի լայն մահճակալով, պատերին՝ շվեյցարական բնանկարներ: Պատուհանները նայում էին բակ՝ հարուստ պարտեզի վրա: Խա-

վարի մեջ ուրվագծվում էր բարձր պարսպի մոտ վերջացող ծառուղին: Հավանաբար այդտեղ դուռ կար, որ բացվում էր զուգահեռ փողոցի վրա:

Անսպասելիությո՞ւնն էր պատճառը, թե ուշ ժամին կերած առատ կերակուրը, սակայն պառկել էր և, հավանաբար, մեկ ժամ, արթուն ուղեղով մտածում էր այս խելահեղ օրվա անակնկալների մասին: Կոպերն արդեն սկսել էին ծանրանալ, երբ դռան թակոց լսեց: Կամացուկ, անհամարձակ: Մի՞թե աղջիկն էր: Դուռը բացեց և նրան տեսավ՝ շեմին կանգնած, գիշերանոցով, շալն ուսերին, ոտաբոբիկ:

- Կներեք, որ արթնացրի, այնպիսի մի խոնավ ցուրտ է իմ սենյակում... Եվ հետո, սոսկալի է, ինձ թվում է, թե մեն-մենակ եմ այս հսկա տան մեջ:

Աղջիկն, իսկապես, դողում էր: Վախի՞ց, թե ցրտից: Նա շեմն անցավ, մոտեցավ և հպվեց տղային: Ամուր, իսկապես վախեցած երեխայի պես: «Մրսում եմ», - ասաց նա: Գուցեև ճիշտ էր, քանզի երևում էր, որ նրանում ոչ այնքան ցանկությունն է խոսում, որքան պատսպարված, պաշտպանված լինելու ձգտումը:

Ռուբենը նրան տարավ դեպի մահճակալը: Պառկեցրեց, խնամքով ծածկեց և նստեց կողքին: Հինգ րոպեի չափ աղջիկը դողացնում էր: Հետո հանգստացավ, նրա ձեռքը բռնեց և ասաց.

- Արի մոտս:

Վերմակով ծածկեց Ռուբենին, հետո կրծքին հպվեց: Ի՞նչ էր ուզում այս աղջիկը՝ սե՞ր, թե ապավեն: Գուցե վերջինը, որ նրա պատկերացումներում, հավանաբար, սիրո մարմնավորումն էր, քանզի սերն անպաշտպան չի կարող լինել, մանավանդ կնոջ սերը:

- Ես մտադիր էի վաղն իսկ մեկնել, սակայն ձեզ հանդիպելով, փոխեցի մտադրությունս....

Տղամարդկային արժանապատվությունը չոյող մի զգացում արթնացավ մեջը, որ ինքը՝ օտարական մի ուսանող, կարող է սփոփել մեծ ազգի, մեծ տոհմի ժառանգին՝ գրեթե իր իսկ երկրի մեջ: Նրանում միաժամանակ արթնացավ առնական բնազդը, որը մինչ այդ քնած էր, իր համբույրները և գգվանքները դարձան տիրական, պահանջող, նվաճող: Աղջիկն ավելի ուժգին հպվեց նրան, ասես, կավ լիներ, որ պատրաստ էր ընդունել ամեն մի կերպ: Նրա խոնարհությունից ավելի մոլեգնեցին որձի բնազդները, և աղջիկն ընդունեց նրան պատրաստակամ, քնքույշ, բայց տարօրինակ կերպով բնազդները մտրակող չոյանքներով... Հետո վերջում գլուխը նորից դրեց իր կրծքին և խելոք երեխայի պես իսկույն քնեց:

Փոթորիկը մոլեգնում էր: Քամին ջրի չիթերն անգթորեն խփում էր պատուհաններին: Աղջիկն անխռով քնած էր: Նա գտել էր իր ապահով հենարանը և հոգը չէր, թե կայծակներ կարող են որոտալ, վայրագ քամիներ փչել, հեղեղներ հորդել... Այս կուրծքն ամուր պատնեշի պես նրան մեկուսացրել էր արհավիրքներից:

Ամբողջ գիշեր այդպես կեսքուն-կեսարթուն անցկացրեց: Ադամամութին նրան թված, թե փայտե աստիճաններին ճռռոց լսեց, իսկ քիչ հետո, ավելի հստակորեն, բակի ծառուղու մանրիկ խճաքարերը խշրտացին և ետնամուտքի դռան մետաղյա դուռը չոր չխկաց:

Զգուշորեն վեր կացավ, դուրս եկավ միջանցք և էլեկտրական լույսի կոճակը դարձրեց: Որևե արտակարգ բան չնկատեց, դիմացի կիսաբաց դռնից զատ: Արդյոք աղջի՞կն էր մոռացել ամուր ծածկել, երբ, վախեցած ու մրսած, գալիս էր իր մոտ: Անհասկանալի մի դրդումով մոտեցավ կոմսուհու դռանը և ձեռքը տարավ պղնձյա փայլուն բռնակին: Երկու բան նրան ստիպեց ցնցվել. բռնակի վրա խոնավության հետքեր կային, իսկ դուռը փոքրիկ ճեղք էր բացել, որն անգամ մոտ տարածությունից անմիջապես չէր նկատվում: Ամբողջ օրն այսպե՞ս էր եղել, թե հիմա բացեցին:

Դուռը թեթևակի հրեց և մտավ ներս: Զնայած կիսախավարին, նկատվում էր ընդարձակ ննջարանում տիրող կարգուկանոնը: Կահավորանքն առանձնապես շատ չէր. մի գրասեղան պատուհանի մոտ՝ վրան կիսատ մնացած գերմաներեն մի նամակ, մոդայիկ վեպեր ֆրանսերեն՝ կիսատ ընթերցված, քիչ հեռու, պատի տակ երկու շքեղ բազկաթոռ, մեջտեղում սուրճի փոքրիկ սեղան, դիմացն ընդարձակ մահճակալ՝ մուգ կարմիր և շքեղ ամպհովանու տակ: Պատերին երկու նկար կար, երկուսն էլ մերկ կանայք, ակադեմիական ոճով պատկերված: Երրորդ նկարի գոյությունը մատնում էր ոսկեզօծ շքեղ շրջանակի ծայրը: Հիվանդագին մի հետաքրքրասիրություն մղեց բացել ամպհովանու եզրերը, որպեսզի նկարը դիտի, և այդ գիշեր ցնցվեց երրորդ անգամ. նրա առջև մերկ կնոջ նկարն էր, որ տեսավ Կոնրադի արվեստանոցում, այն տարբերությամբ, որ հովհարն այստեղ չէր ծածկում կնոջ դեմքը, այլ մետաքսյա թելով կախված էր անփութորեն վար գցված ձեռքից: Կնոջ դեմքը, մարմնի պես անթերի, բաց և համարձակ, ուղղված էր նկարը դիտողին: Եվ նա իսկույն ճանաչեց այդ դեմքը՝ կոմսուհու դեմքը: Նկարը պարզապես լույս էր արձակում կիսախավարի մեջ: Կեցցե՛ Կոնրադը: Իսկապես որ մեծ նկարիչ է: Անհնար էր այսպիսի կնոջ, այսպիսի գեղեցկության առջև չծնրադրել, անկարելի էր նրան չսիրահարվել: Իր մարմնական կատարելության մեջ, նրա հայացքում, նրա տիրական անփութության մեջ զգացվում էր հոգեկան խորունկ մի աշխարհ, իշխել, տիրել ցանկացող մի նկարագիր: Սա կատարյալ էգ առյուծ էր:

Վերջին անգամ հմայված նայեց լուսացող խավարի մեջ շողարձակող հաղթական իգության այս պատկերին և զգույշ քայլերով լքեց կոմսուհու ննջարանը: Դուռն իր ետևից ծածկելիս, բռնակը մեքենայորեն քաշեց: Փականքը լուռ գիշերվա մեջ աղմուկով չխկաց: Նա ակամայից ցնցվեց: Ստուգելու համար բռնակը դարձրեց: Դուռն ամուր փակված էր: Ո՞վ էր մտել այստեղ, այս ուշ ժամին: Իրեն թվա՞ց, թե... Հապա բռնակի վրայի թացությո՞ւնը... Ահա ինչու դուռը չի քաշել, իմանալով, որ փակվելիս այնպիսի մի չխկոց կարձակի, որ կարթնացնի բոլորին... Ուրեմն գիտեր, որ այստեղ մարդ կա... Մա՞րդ, թե՞ մարդիկ... Իսկ գիտե՞ր ովքեր են, թե պարզապես զգուշությունից դրդված, որոշել է աղմուկ չանել...

Ոտքի ծայրերին վերադարձավ և կանգնեց իր անկողնու մոտ: Աղջիկը, բարձը գրկած, խորը քուն էր մտել: Կամաց տեղավորվեց կողքին և լուսաբացը մոտեցնող մեկ ժամվա մեջ չկարողացավ աչքերը փակել:

Առավոտյան անձրևը միանգամից դադարեց և մի քանի օր շարունակ եր-

կինքը ծածկած կապարագույն ամպերն անհետացան: Աղջկան հրաժեշտ տալուց առաջ հատուկ խնդրեց, որ իր այցելության մասին ոչինչ չասի կոմսուհուն: Երբ առանձնատնից բավական հեռացել էր, նկատեց, որ անձրևանոցը մոռացել է...

* * *

«Նախապես գիտեինք, որ Տիկին Կոմսուհի Ալիս ...ն իր հյուրերի հետ պիտի մեկնի Էվիան՝ կազինոյում զվարճանալու: Այս լուրն ստույգ էր, քանի որ գալիս էր նրա սպասուհուց, որն, իհարկե, վաղօրոք գիտի իր տիրուհու յուրաքանչյուր քայլի մասին: Սակայն կեսօրվա վերջում պարզ դարձավ, որ հիմնովին փչացած եղանակի պատճառով հազիվ թե նույն օրը վերադառնան, ուստի թվում էր, թե կարող էինք անցած ամբողջ օրը վերջապես տրվել զվարճանալուն: Սակայն չկորցրեցինք մեր զգոնությունը, ոչ մեկ վայրկյան չհեռացանք դիտակետից և մեր համառությունը պարգևատրվեց. երեկոյան ժամը 21.47-ին, անձրևի ամենահորդ պահին, միջերկրականյան արտաքինով մի երիտասարդ ոտքով մոտեցավ առանձնատանը և դուռը բավական երկար ծեծեց: Առաջին անգամ էինք նրան տեսնում: Դուռը վերջապես բացեց կոմսուհու ազգականուհին՝ բարոնուհի Էրիկա Ֆոն ...ը: Դատելով ամեն ինչից, այդ հյուրին սպասում էր, քանի որ անմիջապես ներս տարավ, ստիպեց թրջված զգեստները հանել և չորացնել: Կասկածից դուրս էր, որ բարոնուհին, օգտվելով կոմսուհու բացակայությունից, իր ընկերներից մեկին հրավիրել է մոտը զվարճանալու, և գուցե դա այդպես է, սակայն գիշերվա ժամը 3.45-ին, երբ, պայմանավորվածության համաձայն, եկավ «դերձակը» և ետնամուտքից հեռացավ, կոմսուհու ննջարանում լույս վառվեց և այնտեղ հայտնվեց վերոհիշյալ երիտասարդը: Նա ինչ-որ բան էր զննում կոմսուհու գրասեղանի վրա, հետո մոտեցավ մահճակալին և այնտեղ մնաց ուղիղ տասը րոպե: Ցավոք սրտի, մահճակալի մոտ նա կանգնել էր հակառակ կողմից և մենք չկարողացանք պարզել, թե ինչով էր զբաղված: Օրիորդ բարոնուհու հյուրն առանձնատնից դուրս եկավ առավոտյան ժամը 7-ին: Նա ուղղակի գնաց համալսարան, որտեղ բժշկություն է ուսանում: Նրա անունն է ..., ապրում է ռյու դյու Բուրգ փողոցի վրա, տիկին Շապազի գիշերօթիկում»:

* * *

Խորհրդավոր ու խենթ գիշերվան հաջորդեց սոսկալի ծանր մի օր: Առավոտյան դասերն սկսելուց առաջ հանձնեցին դոկտոր Ռուի երկտողը, որով խնդրում էր կեսօրից հետո անպայման այցելել հիվանդանոց՝ իրեն տեսնելու: Դասերը վերջանալուն պես, առանց մի պատառ բերանը դնելու, վազեց հիվանդանոց: Զարմանքից քարացավ, երբ մի խումբ հայ ուսանողներ տեսավ, որոնց մեջ նաև Լևոնը: Նրանք տխուր դեմքով խոսում էին դոկտոր Ռուի հետ: Վերջինս, Ռուբենի հայտնվելուն պես, բոլորին ներս կանչեց, առաջարկեց նստել հիվանդանոցի կոշտ աթոռներին և հոգնած ձայնով ասաց.

- Երեկ երեկոյան մոտս երկու հոգի եկան: Ձեր հայրենակիցներից էին: Ու-

զում էին անպայման հայ բժշկի հետ խոսել: Ցավոք սրտի, այստեղ հայ բժիշկներ չկան, սակայն հայ ուսանողներ կան: Պարզվեց, որ գրեթե մահամերձ մի հիվանդի համար է... Մի թոքախտավոր... Ձեմ կարծում, թե որևէ բժիշկ ի վիճակի է նրան փրկել: Կարծում եմ, որ ավելի շատ ձեր ներկայության կարիքն ունի: Աշխատեք չշփվել հիվանդի հետ... Նրա առարկաների հետ: Համենայն դեպս, ախտահանող լուծույթ վերցրեք ձեզ հետ:

Դոկտորը հասցեն տվեց և «ցտեսություն» ասաց: Մի քանի ժամով դադարած անձրևը վերսկսել էր և թափվում էր նախկին ուժգնությամբ: Եվ այդ հեղեղի տակ պետք էր հասնել Սալազ՝ քաղաքի հեռավոր ծայրամասերից մեկը: Գրեթե անլուծելի մի խնդիր յուրաքանչյուր սանտիմը հաշվող ուսանողների համար: Այնուամենայնիվ, ստիպված եղան երկու կառք վարձել: Հիվանդը կոչվում էր Համբարձում Փափազյան:

Վերջապես հասան: Անշուք և դժնատեսիլ մի կացարան: Պերճանքի և վայելքի այս քաղաքում նման ողորմելի շինությունները պարզապես աչք էին ծակում, վիրավորում մարդկային արժանապատվությունը: Դրանք, մեծ մասամբ, քաղաքի կենտրոնից հեռու էին, ծայրամասերի կորած-մոլորած փողոցներում: Ռուբենը փաստեց, որ եթե հատկապես այստեղ եկած չլիներ, ապա ամենայն անտարբերությամբ պիտի անցներ այս խարխուլ կառույցի կողքով, որքան էլ որ այն իր տեսքով աչք ծակող է: Թշվառությունն իր կեղտակուր մատներով պիտի կառչի քղանցքիցդ, որպեսզի ստիպված լինես նկատել նրա գոյությունը:

Պանդոկապանը, կասկածելի տեսքով մի անձնավորություն, անմիջապես հարցրեց.

- Դուք նրա ի՞նչն եք:

- Հայրենակիցները..., - անակնկալ հարցից զարմացած պատասխանեց ուսանողներից մեկը:

- Հայրենակիցնե՛ր, հայրենակիցնե՛ր... Իսկ ո՞վ պիտի վճարի նրա պարտքը...

Ավելի քստմնելի կերպարանք կյանքում չէր տեսել: Երեսն ուռած էր և չածիլված, վրայից փսխուքի կծու գարշահոտն էր փչում: Սիրով կապտակեր և եթե չարեց, ապա միայն անլվա և պժգալիորեն ճարպոտ մռութին դիպչելու զզվանքից: Իր անդրադարձը, հավանաբար, չափազանց սաստիկ էր: Տղաներից մեկն ամուր բռնեց նրա ձեռքը, իսկ պանդոկապանի երեսին սարսափի արտահայտություն հայտնվեց, որ ավելի նողկալի դարձրեց նրան:

Մտան մի կեղտոտ ու գարշահոտ միջանցք: Սա պանդոկ չէր, այլ որջ: Թթված ճաշի հոտ էր գալիս: Միջանցք ասածն էլ մի երկար աղիք էր՝ վեցական սենյակ աջ և ձախ կողմերում: Այստեղ էր հավաքված մարդկային տականքը, հասարակության լուսանցքում հայտնված զանազան անձնավորություններ: Անոթի երեխաների աղմուկ ու լաց էր լսվում, ընտանեկան քսու մի վեճ, լրբի անպատկառ մի քրքիջ, հարբածների անկապ խոսակցություն, վայրագորեն անասնացած կենակցող զույգերի բառաչ, չգիտես ինչ հրաշքով այստեղ հայտնված կրոնախևի միալար աղոթք, պառավ ու լքված մարդու հազիվ լսելի տրտունջ, ծեծողի կատաղի հիշոցներ և ծեծվողի լացակումած աղերսանք...

«Գեհենը չէր կարող սրանից ավելի վատ լինել, - մտածեց Ռուբենը , - քանզի մարդը գերազանցելով սատանային, իր համար երկրի վրա ավելի դժոխային պայմաններ է ստեղծել: Եվ մի՞թե այստեղ ապրողը կարող է վախ ունենալ Աստծո պատժից»:

Համբարձումի սենյակը միակն էր, որտեղից աղմուկ չէր գալիս: Միայն լսողությունը լարելով կարելի էր որսալ խեղդված հազը և հայերեն բառեր: Կամացուկ ասված հայերենը այս դժոխքին անհարիր, միաժամանակ սպեղանու պես մի բան էր: Զգուշորեն թակեցին դուռը: Կիսախավար սենյակ էր: Մոմի լույսը երերում էր անկյունում: Խարխուլ սեղան, մի երկու նույնպիսի աթոռ և երկաթյա նեղլիկ մահճակալ, որի վրա պառկած էր Հիվանդը: Նրա կողքին երկու հայ երիտասարդ էին նստած, որոնք անծանոթ էին բոլորին: Նրանցից մեկն ասաց Ռուբենին.

- Լավ է, որ եկաք, դոկտոր, արդեն...

Մթան մեջ հազիվ էր երևում հիվանդի դեմքը, աչքերը՝ փայլից զուրկ, մորուքի վրա արյունը չորացել մակարդվել էր: Արյան բծեր կային նաև մաքրությունը վաղուց կորցրած բարձի վրա: Նա ոչ թե շնչում էր, այլ հևում, խռխռացնում: Նրանում այլևս ոչ թոք էր մնացել, ոչ արյուն: Երևում էր նաև, որ խպառ մեկուսացված է իր շուրջի գործողություններից և խոսակցություններից: Նրա երկու ընկերներից մեկը մոտեցավ և մի քանի անգամ բարձրաձայն ասաց. «Համբարձում, հայ բժիշկը եկավ, լսո՞ւմ ես, հայ բժիշկը...»: Հիվանդը ուժ չուներ նույնիսկ գլուխը դարձնելու: Միայն աչքերը հառեց անորոշ կետի և մրմնջաց... Ռուբենը գլուխը մոտեցրեց, որպեսզի կարողանա կորզել նրա արտասանած բառերը: «Կռունկ...», - երկրորդ անգամ, խզզացող ձայնով արտաբերեց հիվանդը: Նրա ներսում ամեն ինչ տակնուվրա եղավ: Ոտքի կանգնեց և մեքենայաբար կրկնեց այդ բառը, ասես դիմելով իր հետ եկած ընկերներին.

- Կռունկ...

- Կռո՞ւնկ... Ի՞նչ կռունկ..., - մի՞թե երգն է ուզում... - այլայլված հարցրեց կովկասահայ ուսանողներից մեկը:

Լռություն տիրեց: Ամեն ինչ սպասում էին լսել այդ անվերադարձ մեկնողի բերանից, սակայն ոչ այս բառը: Հանկարծ լռությունը խախտեց մի ձայն: Կեղտոտ ու գռեհիկ կրքերի, ղումարի և պոռնկության այս որջում, ասես որպես բոլոր մեղքերի թողություն, հնչում էր ազնվական ու անմեղ «Կռունկը»: Միակ բանն էր, որ հիմա կարող էին տալ այս մեռնող հային, իրենց հասակակցին: Նրանցից յուրաքանչյուրը, մի պահ, իրեն հստակ տեսավ նրա տեղում: Օտարության վայրիվերումները քանիս քանիսին էին հասցրել այսպիսի ողբերգության:

Երգի ավարտից հետո բոլորն անշարժ նստել էին: Հիվանդի ընկերներից մեկը, գրեթե գոռալով, խախտեց լռությունը.

- Դոկտո՛ր:

Ռուբենը մոտեցավ հիվանդին: Նրա ապակե անշարժ աչքերն ասում էին, որ արդեն բացակա է: Ե՞րբ էր ավանդել իր հոգին... Հավանաբար երգի պահին: Համենայն դեպս նկատեց, որ չնայած դեմքին հիվանդության սոսկալի ավերներ կային, սակայն մահվան տառապանք չէր նկատվում: Մի՞թե հայրենակիցների

ներկայությունը, մայրենի լեզվի ու երգի հնչյունները կարող են այդպիսի հրաշագործ ազդեցություն ունենալ՝ անդորր հոգով ընդունել վերջին ուղևորությունը: Որքա՜ն քիչ բան է պետք մարդուն և ինչո՞ւ շատ հաճախ հատկապես այդ քչից է մեզ զրկում բախտը:

Ընկերները պատմեցին, որ Համբարձումը բնիկ վանեցի է, Բրյուսելում համալսարանը փայլուն ավարտելուց հետո, հիվանդության առաջին նշաններն է զգացել: Որոշել է հայրենիք դառնալուց առաջ բուժվել Շվեյցարիայում: Սակայն վիճակը լավանալու փոխարեն, ավելի է վատացել: Առանց միջոցների, ծանր և խորացող հիվանդությամբ հայտնվել է այս որջում: Իրենք նույնպես վանեցիներ են, Ժնևից... Պատահական են իմացել այս տղայի հասցեն, ընդամենը երեք օր է, ինչ այստեղ են:

Հիմա իրենք էին այս տղայի հարազատները, նրա ծնողները, նրա եղբայրները... Լուռ նստել էին և յուրաքանչյուրը որոճում էր իր տխուր մտքերը: Սակայն ո՞վ էր առաջինը, որ լուռ մոտեցավ խարխուլ սեղանին և մի թղթադրամ դրեց: Հետո երկրորդը, երրորդը... Բոլորը... Յուրաքանչյուրը մի բան թողեց. դրամ կամ զարդ: Սակայն հավաքված գումարը հազիվ բավարարեր սպասվելիք ծախսերը, չհաշված պանդոկատիրոջ պարտքը:

- Լոզանում հիսուն հայ ուսանող կա, - ասաց Ռուբենը, - բոլորի հասցեներն ունենք... Այսօր իսկ պետք է նրանց տեսնել և խնդրել, որ յուրաքանչյուրն իր կարողության սահմաններում օգնի...

Նա լռեց, ասես սպասելով ընկերների համաձայնության, և շարունակեց.

- Ամոթ չէ՞ մեզ... Ինչպե՞ս կարող ենք թույլ տալ, որ մեր հայրենակիցը, մեր եղբայրը հայտնվի այսպիսի պայմաններում...

- Ի՞նչ կարող էինք անել այս հիվանդության դեմ:

- Հիվանդության դեմ գուցե անզոր ենք, բայց թույլ չէինք տա, որ այս խայտառակ որջն ընկնի...

Ամբողջ օրը, տեղատարափ անձրևի տակ, քաղաքի մի ծայրից մյուսն էր վազել: Բոլորին չհաջողվեց տանը գտնել, եղածներից էլ ոչ բոլորը կարողացան օգնել... Գոնե մյուս ընկերներն ավելի հաջողակ լինեն:

Ուշ երեկոյան, ջարդված ու թրջված, մի կերպ տուն հասավ: Այստեղ նրան ուրիշ անակնկալ էր սպասում. իր նման ջուր կտրած, գունատված ու խեղճացած Քենանը: Նա դողում էր և, հավանաբար, ոչ միայն ցրտից... Սակայն ամենատարօրինակը նրա գեղջկական հագուստն էր, որը կարելի էր տեսնել՝ կիրակի օրերը, Վո կանտոնի տարբեր անկյուններից շուկա եկած գյուղացիների հագին: Պերեսը, որ մի քիչ գինով էր, ապշած նայում էր թուրքին, իսկ Լևոնը, ձեռքերը տարածեց.

- Քիչ առաջ եկավ:

Ռուբենին տեսնելուն պես, Քենանը փղձկաց, ընկավ նրա վզովը և հեծկլտալով ասաց.

- Հորս խեղդել են... Կոնիայի բանտում... Այդ դահիճը, այդ գազանը...

Տղայի վիշտն, անշուշտ, ահավոր էր: Ինքը, որ գալիս էր մեկ այլ վշտից, դա գիտակցում էր հրաշալի, և չնայած կատարելապես ջարդված էր ու պարպ-

ված, պատրաստ էր մխիթարել նաև այս տղային: Եվ որքան էլ ծանր էր տղայի հոր մահը, այնուամենայնիվ, տարբերվում էր այսօր, իր աչքերի առջև ծավալված ողբերգությունից: Փաշան այդ երկրի տերերից մեկն էր, իսկ Համբարձումն արհամարհված ու հարստահարված ռայան: Սակայն պարզվեց, որ Քենանը միայն մխիթարվելու համար չէր եկել:

- Երկու օր է ինձ հետապնդում են: Անցած գիշեր ինչ-որ անհայտ անձինք փնտրել են ինձ: Հյուպատոսարանից մի նամակ կա... Խնդրում են, որ գնամ և անձնագրի հետ կապված ինչ-որ հարցեր կարգավորեմ...

- Իսկ երբ այստեղ էիր գալիս, չնկատեցի՞ր, քեզ հետապնդում էին, թե ոչ, - հարցրեց Պերեսը:

- Կարծես թե՝ այո... Բայց ինձ թվում է, որ նրանց չփոթեցրի... Գնացի ռյու Սանտրալ, հետո բակերով հասա ձեր ետնամուտքը... Խոհանոցով եմ մտել այստեղ:

- Քեզ որևէ մեկը չտեսա՞վ:

- Այո, մի կին էր խոհանոցում, բայց նա ոչինչ չհարցրեց... Ըստ երևույթին, այս զգեստի պատճառով... Երևի կարծեց, թե տեղացի եմ:

- Իսկ զգեստդ ե՞րբ փոխեցիր, - հարցրեց Պերեսը:

- Մի կես ժամ առաջ, Պալյու հրապարակում ածխավաճառի խանութ կա, այնտեղ միշտ գյուղացիներ են լինում... Ասացի, իբր, դիմակահանդեսի համար է... Մեկ օրով զիջեց, երկու ֆրանկի դիմաց... Պատկերացնո՞ւմ եք, այդ անտաշ գյուղացին իմ սև կոստյումը և ծղոտե թանկարժեք գլխարկը չէր ուզում որպես գրավ պահել:

Պերեսը չափազանց արտահայտիչ հայացքով նայեց հայերին, հետո նորից Քենանին դիմեց.

- Կարծում եմ կռահում ես, թե ովքեր են այդ պարոնայք և ինչի համար են քեզ փնտրում:

Քենանը լուռ գլխով արեց:

- Որքան հասկացա, դու ապահով տեղ ես փնտրում թաքնվելու համար... Այդ դեպքում ինչո՞ւ չես գնում Մաքթուբի մոտ, - հարցրեց Ռուբենը:

- Մեկ շաբաթ է նրանից ոչ մի լուր չունեմ, վախենում եմ գնալ նրա մոտ, վտանգավոր է:

- Իսկ այն օդեսացի ձեր բարեկամը, այն հեղափոխականը...

- Նրա անունը մի տվեք... Դա խաբեբա է... Նրա երեսից հինգ հազար ֆրանկ կորցրի Էվիանում...

- Բայց կարծում եմ հասկանում ես, որ այստեղ մնալն էլ ապահով չէ, - ասաց Պերեսը: - Փոքր քաղաք է, անմիջապես հետքդ կգտնեն:

- Ինձ պետք է միայն այս գիշերն անցկացնել: Վաղը ևեթ մեկնում եմ Ֆրանսիա, Էվիան...

- Իսկ դու պատկերացնո՞ւմ ես, թե ինչ կլինի Ռուբենի հետ, եթե քեզ հետապնդողները պարզեն, որ գիշերը մնացել ես նրա սենյակում, այն էլ այսպես տխմար ձևով ծպտված...

Քենանն, ի պատասխան գլուխը կախեց:

- Ոչինչ, մի հուսահատվիր, - ասաց Պերեսը, - ելք կգտնենք: Դու կգիշերես իմ սենյակում, աշխարհի ոչ մի լրտես չի համարձակվի սենյակիս շեմն անցնել... Հա, ասում էիր, թե քեզ հետապնդողներին տեսար: Ի՞նչ արտաքին ունեին:

- Ընդամենը մեկին տեսա... Նիհար, կոկիկ հագնված, շիկահեր մի պարոն էր, ձեռնափայտով:

- Վստա՞հ ես, որ հետապնդում էր... Այդ պարոնը գուցե... ինչպե՞ս ասեմ, ուրիշ, ավելի բարի նպատակներ ուներ...

Քենանը սկզբում չհասկացավ ակնարկը, հետո միանգամից շառագունեց.

- Ո՛չ, ո՛չ, - դա իսկապես գաղտնի գործակալ էր երևում... Քո ասածներն այդպես համառ չեն հետապնդում և ուրիշ տեղերում են լինում...

Պերեսը մի բոպեի չափ լուռ մտորում էր, հետո դիմեց ընկերներին.

- Դրությունն իսկապես լուրջ է: Եվ շատ վտանգավոր: Ստույգ է, որ առայժմ չի կարող դուրս գալ շենքից, լրտեսները շրջում են մոտակայքում, և ոչ մի դեպքում գիշերը չպիտի մնա այս սենյակում... Մի հանճարեղ գաղափար ունեմ. Խուանիտոյի հետ այսօր չեմ զբոսնել, իսկ նա, ինչպես գիտեք, մեղնից շատ ավելի ազնիվ ու խելացի է... Հետո, գիտե՞ք, նա լրտեսներին տանել չի կարող... Առայժմ, մի կես ժամով...

Խուանիտոն Պերեսի բուլդոգն էր:

Լևոնը սպիրտայրոցի վրա թեյ էր պատրաստել: Ռուբենը գոլորշի արձակող բաժակը դրեց Քենանի առջև: Վերջինս հուզված վեր կացավ և գրկեց նրան.

- Օ՜, սիրելի Ռուբեն, ամբողջ կյանքում երախտապարտ եմ լինելու քեզ, չգիտեմ, թե ինչպես պիտի հատուցեմ քո բարությունը...

Հետո գլուխը ճոճեց ու ասաց.

- Ես չէի ուզում քեզ պատմել, բայց Լոզանում երկու թուրք բարեկամ ունեմ, որոնց շատ եմ օգնել... Երկուսն էլ հորս դրամով եկան այստեղ մարդ դարձան, սակայն երկուսն էլ մերժեցին ինձ գոնե մեկ գիշեր օթևան տալ, ասելով, թե վախենում են...

Լևոնը, որ հենց սկզբից շատ գոհ չէր այս տղայի հայտնվելուց, վերջապես պոռթկաց.

- Ես վախենալու բան չունեմ, իմ ծնողներն Ալեքսանդրիայում են, սակայն Ռուբենի հայրն ու մայրը, քույրերն ու եղբայրները այնտեղ պատանդ են հրեշի ձեռքին... Ի՞նչ էիր մտածում, երբ գալիս էիր այստեղ:

Քենանը խեղճացած նայում էր մեկ Լևոնին, մեկ Ռուբենին: Վերջինս վճռական ձայնով և հայերեն դիմեց Լևոնին.

- Մարդը մեզ է դիմել, պիտի օգնենք... Ես չեմ կարողանա հանգիստ քնել, եթե հիմա մերժեմ նրան... Վե՛րջ, վճռված է...

Քիչ հետո Պերեսը մտավ՝ ծիծաղից խեղդվելով և դիմեց Քենանին.

- Լսիր, պարզվում է, դու ձեր լրտեսներից ավելի խելացի ես... Քիչ առաջ կոկիկ հագնված, գեղեցիկ ձեռնափայտով մի պարոն տիկին Շապազին քնից հանեց և հարցրեց, թե ծղոտե գլխարկով և սև կոստյումով երիտասարդ այստեղ չի՞ մտել... Տիկին Շապազն, իհարկե, ժխտեց նման պարոնի գոյությունն իր հաստատության ներսում և քո պահապան հրեշտակը ներողություն խնդրելով հեռացավ...

Քենանը, սակայն, մեկ գիշերվա փոխարեն ստիպված եղավ երեք գիշեր մնալ, քանի որ եղանակը բարենպաստ չէր նավակով մյուս ափ գնալու համար, իսկ կանոնավոր երթևեկող շոգենավով վախենում էր մեկնել: Եվ նրա երկյուղներն անհիմն չէին. այդ օրերին երեք թուրք ուսանողներ և Շվեյցարիայում բնակվող երկու (առաջադեմ համարվող) մտավորականներ անհետ կորան:

* * *

Ոչ մեկի մտքով չէր անցնի, թե սովորական հարցով հրավիրված ժողովը կարող է հինգ ժամ տևել: Գաղափարը Ռուբենից եկավ. ստեղծել մի հանձնախումբ, որը, հնարավորության սահմաններում, դրամ կհավաքի, որպեսզի անսպասելի դեպքերում կարողանան ինչ-որ օգնություն ցուցաբերել կարիքի մեջ հայտնված հայ ուսանողներին: Այլ խոսքով, փոխօգնության դրամարկղ հիմնել: Սակայն պարզվեց, որ այնքան հարցեր կան, որ մի քանի ժողովն անգամ բավական չի լինի դրանք մանրամասնորեն քննարկելու համար:

Ռուբենին նախ զարմացրեց ժողովականների բազմությունը: Շվեյցարիայում ուսանող բոլոր հայերին հրավիրել էին՝ մոտավորապես հարյուր հոգի, սակայն դահլիճում առնվազն երեք հարյուր մարդ էր նստած: Ովքե՞ր էին մյուսները... Հայեր, որոնք կարոտ են հայի դեմք տեսնելու, հայերեն լսելու, իրենց ներսում կուտակված ցավն ու ասելիքը մյուսին հայտնելու: Բազմաթիվ հայ ընտանիքներ գիտեր, որ Պոլսից, Կովկասից, Եգիպտոսից եկել հաստատվել էին Լոզանում, Ժնևում և այլ քաղաքներում: Հիմնականում մեծահարուստներ: Սակայն դրանցից ոչ մեկին չտեսավ սրահում: Հասարակ մարդիկ էին եկել, մեծ մասամբ երիտասարդներ, որոնք պահանջ ունեին, կռիվ ունեին աշխարհի դեմ, ցանկություն ունեին իրենց համեստ օգնությունը ցուցաբերելու: Նրանց մեջ կուտակված ցասումի կողքին կար նաև բարություն, միմյանց հասկանալու, ծառայելու պատրաստակամություն: Հատկապես աչքի էին ընկնում կովկասահայերը՝ բոլորը փայլուն հռետորներ, ասես հատուկ պատրաստվել էին, որպեսզի ժողովն իրենց ուզած հունով տանեն: Նրանցից մեկը, խռիվ մազերով, պենսնեով և ցից ու կարճ մորուքով, կրակոտ ելույթ ունեցավ.

- Ձեր նախաձեռնությունը ես ողջունում եմ, ընկեր Ռուբեն, ազնիվ բան եք մտածել: Այստեղ բազմաթիվ կարիքավոր հայ ուսանողներ կան... և ոչ միայն ուսանողներ... Նրանք կարոտ են ամեն տեսակի օգնության: Սակայն, հարց եմ տալիս, ի՞նչ աղբյուրներից պիտի լցվի այդ փոխօգնության դրամարկղը: Ուսանողնե՞րը պիտի տան: Այո, այստեղ հայ ուսանողներ կան ունևոր և հարուստ ընտանիքներից, սակայն նրանց գրոշներով դուք ի՞նչ օգնություն պիտի ցուցաբերեք: Ես ձեզ կասեմ, թե որտեղից պետք է վերցնել այդ դրամը: Այստեղ պարապ-սարապ թրև եկող հայ բուրժուաներից, ովքեր Բաքվի նավթահանքերում միջազգային բանվորության արյունն են ծծում, հետո գալիս են այստեղ և պոռնիկների վրա ծախսում...

- Նրանց կեղտոտ դրամը մեզ պետք չէ՛, - ծղրտաց մեկը սրահի խորքից:

- Սիրելի ընկեր, - դիմեց խռիվ մազերով հռետորը, - բոլոր դրամներն են

կեղտոտ, ուստի պետք է նախևառաջ այդ արյուն ծծողների դրամը վերցնել, դոնե այդպես մի քիչ կմաքրենք:

- Այստեղ մեծահարուստ երկու հայ ընտանիք գիտեմ, - ասաց պոլսեցի մի ուսանող: - Ժամանակին դիմեցինք նրանց, ընդամենը ճանապարհածախս խնդրեցինք մեր հիվանդ ընկերոջ համար: Եվ մերժեցին... Մերժելը ոչինչ, վիրավորեցին...

Խռիվ մազերով մորուքավորը ներողամիտ ժպիտով նայեց նրան:

- Մեղավորը դուք եք, - ասաց նա: - Չպիտի խնդրեիք, այլ պիտի պահանջեիք: Եվ պահանջեիք այնպես, որ չկարողանային մերժել:

- Ես աչքովս եմ տեսել, - ասաց ճաշակով հագնված կովկասցի մի երիտասարդ, - թե հայ հարուստներն ինչպիսի առասպելական գումարներ են կորցնում կազինոյում և հետո գոհ ժպտալով դուրս գալիս, ասես, ընդամենը մի տուփ լուցկի կորցրեցին...

- Ես հանձնակատար եմ աշխատում Ժնևի «Hôtel de Bergue»-ում..., - ասաց համակրելի դեմքով մի ուսանող: - Շքեղ մի պանդոկ է, այդտեղ սենյակի մեկ օրվա վարձը իմ մեկ ամսվա աշխատավարձից չորս անգամ ավելին է... Օր չկա, որ մի հայ մեծահարուստ չհայտնվի այդ պանդոկում... Հիմա, այս պահին, այնտեղ վեց հայեր կան, մեկը մյուսի հետ մրցում է, թե ով ավելի տխմար և շռայլ ծախսեր կանի... Սպասավորների և դռնապանների առջև ամաչում եմ, որ հայ եմ... Եվ դուք կարծում եք, թե այդ տականքները ձեզ կօգնե՞ն... Միամիտ չլինեք... Նրանք մեզնից գողացված դրամն են մսխում այստեղ:

Տեղից վեր կացավ երեսունհինգամյա, լուրջ և ծանրակշիռ արտաքինով մի անձնավորություն, որը խորքում նստած ուշադիր լսում էր բոլոր ելույթները:

- Ես խնդրում եմ, որ մեկ բան լավ հասկանաք. եթե ձեր ասած անբարո պարոնները բոլորը մեկտեղ սկսեն օգնել աղքատ ուսանողներին, միևնույն է կմնան նույնը, քանզի ընդամենը մեկ-երկու ցուցադրական բարեգործություններ կանեն, սակայն դրանով չի փոխվի նրանց դասակարգային էությունը, նրանք կմնան նույն արյուն ծծողները, նույն շահագործողները և հարստահարողները... Ուստի այս ամենը արմատական լուծում է պահանջում...

- Միայն հեղափոխությունն ու տեռորը մեզ կփրկեն այդ տզրուկներից, - նորից ծղրտաց այն երիտասարդը, որը հրաժարվում էր հարուստների «կեղտոտ դրամն» ընդունել:

- Պարոնա՛յք, սա անարդար է..., - տեղից ելնելով գոչեց խնամված արտաքինով մի ուսանող: - Այսօր Եվրոպայում հարյուրից ավելի ուսանող կա, որ սովորում է հայ մեծահարուստների դրամով... Ապերախտ չլինենք...

- Եվ հայ եկեղեցու դրամով, - ավելացրեց մեկ ուրիշը:

Կրքերը գնալով բորբոքվում էին, մանավանդ որ, ինչպես երևում էր, նման զրույցը շատերի սրտովն է: Սակայն ժողովն ուրիշ նպատակով էր հրավիրված և վտանգ կար, որ կարող էր վերածվել սկանդալի կամ զավեշտի... Պետք էր մի համոզիչ և գործնական առաջարկով վերջ դնել այս պարապ հայտարարություններին:

- Սիրելի բարեկամներ, հայրենակիցներ... Ես տեսնում եմ, որ ձեր բոլորի

հոգում մեկը չէ՝ մի քանի ցավ կա: Եվ արդարացի են ձեր բողոքները: Սակայն եկեք իրապաշտ լինենք՝ անենք այն, ինչ կարող ենք և ինչն անհետաձգելի է... մինչև որ հերթը հասնի արմատական լուծումներին: Այդ օրն էլ կգա: Առայժմ օգնենք մեր ուսանող ընկերներին: Մեզ մտահոգող հարցերը շատ-շատ են: Մեր ուժերից վեր է այդ բոլորին լրջորեն անդրադառնալ, առավելևս՝ լուծել: Սակայն կարող ենք և պարտավոր ենք պարբերաբար հավաքվել, խոսել բոլորիս մտահոգող խնդիրներից: Վերջապես տեղյակ լինենք, թե ինչ է կատարվում Հայաստանում: Միայն մամուլ կարդալը բավարար չէ, կենդանի վկայություններ են պետք...

Կրքերը նորից բորբոքվեցին, առաջարկում էին մի քանի հանձնախմբեր ստեղծել: Վերջապես եկան այն համոզման, որ մեկը պիտի լինի, պիտի կոչվի «Արմենիա»: Ուսանողների միաձայն առաջարկով նոր միության նախագահ ընտրվեց Ռուբենը:

* * *

Հիմա նստած է այն բազկաթոռին, որից քիչ հեռու, մեկ շաբաթ առաջ չորանում էին իր զգեստները: Երեկոյան հանդիպեցին թատրոնում, և կոմսուհին ներկայացումից հետո առաջարկեց գնալ իր մոտ, ասելով. «Վերջապես պիտի հանդիպե՞նք իմ տանը, թե՞ ոչ...»: Նա խոսում էր այնպես, ասես, հարյուր տարվա ծանոթներ լինեին: Նրա կողքին, օթյակում, երեք տղամարդիկ էին նստած, որոնք հետո, առանձին կառքով եկան: Ինքը մենակ մնաց կոմսուհու հետ կառքում, որը ճանապարհին հավուր պատշաճի հարցեր էր տալիս ուսման, ընկերների, գիշերօթիկի պայմանների մասին: Հարցրեց նույնիսկ, թե ինչ են ուտում այնտեղ, որքան է վճարում իր սենյակի համար և այլն, և այլն: Ամեն ինչ ուզեց իմանալ, սակայն ոչ մի հարց, անգամ ոչ մեկ ակնարկ չհնչեց իր առաջին այցելության վերաբերյալ: Մի՞թե տեղյակ չէ: Իսկ ինքը պարտավո՞ր է ասել, շնորհակալություն հայտնել... Վերջապես, մի ամբողջ գիշեր անցկացրեց նրա տանը:

Երեկոյան ժամը տասնմեկը կլիներ, երբ մտան իրեն քաջ ծանոթ հյուրասրահը, որտեղ երկու անհետաքրքիր կանայք էին նստած և երեք ուրիշ տղամարդ: Էրիկան չկար: Արդյոք այստե՞ղ է, թե մեկնել է: Սրահում նստած տղամարդկանցից մեկը քաջ ծանոթ էր նրան՝ Յուրգեն Կլաուսը, որն արդեն կես տարի կլիներ, ինչ յուր անբաժան ընկերոջ հետ գնացել էր գիշերօթիկից: Նա բազկաթոռին փռված գրեթե շշուկով զրուցում էր արևելցու արտաքինով, բայց եվրոպական զգեստներ հագած մի անձնավորության հետ: Յուրգենը նրան ներկայացրեց Ռուբենին.

- Օսման բեյը քո հայրենակիցն է:

Թուրքի երեսին մեղրածոր մի ժպիտ երևաց: Քերականորեն ճիշտ, բայց սոսկալի շեշտադրությամբ արտասանված ֆրանսերենով իր ուրախությունը հայտնեց: Տեղով սիրալիրություն էր այս էֆենդին, որ գալիս էր Ադանայից և, ինչպես ինքն ասաց, մի փոքրիկ հողակտորից փորձում է բամբակի մեծ բերք ստանալ:

Յուրգենի մյուս զրուցակիցը նուրբ դիմագծերով, խռիվ մազերով մի

անձնավորություն էր: Նրա հագուստը, աղատ, բայց չափազանց վայելուչ շարժուձևը մատնում էին, որ արտիստական միջավայրից է:

- Սիրելի Ջիովաննի, թույլ տուր ներկայացնել իմ ուսանողական ընկերոջը, բանաստեղծ Ռուբենին:

Ա՛յ քեզ բան... Երբեք, ոչ մեկ անգամ առիթ չէր ունեցել այս գերմանացու հետ խոսել բանաստեղծությունից: Նրանց հարաբերությունները «Բարևբարի լույսից» ավելին չէին եղել: Իտալացին ձեռքը մեկնեց և, առանց ժպիտի, անգամ խիստ ձևանալով, հարցրեց.

- Հուսամ բանաստեղծություն ուսանելու համար չեք եկել այստեղ:

- Յուրգենը չափազանցում է, քանզի այստեղ գալուց ի վեր, հազիվ մի քսան բանաստեղծություն եմ գրել, այն էլ վստահ չեմ, թե մի բան արժեն...

- Դե ինչ, երիտասարդ, դա արդեն ինչ-որ հույսեր է ներշնչում:

- Ինչպե՞ս հասկանալ ձեզ:

- Շատ պարզ. այսօր բանաստեղծություն դրելու համար կամ չափազանց միամիտ պիտի լինես, այսպես ասած, ռուսոյական կրետինիզմով լցված, կամ չափազանց ցինիկ... Սակայն ես տեսնում եմ, որ բարեբախտաբար ոչ մեկն եք, ոչ էլ մյուսը:

- Շնորհակալ եմ, բայց մի՞թե երրորդ ճանապարհը չկա:

- Կա՛ այդ ճանապարհն, իհարկե, կա. կասկած և համարձակություն... Սակայն դա երկար խոսելու նյութ է, հուսամ մենք դեռ կհանդիպենք, - շտապեց վերջակետ դնել Ջիովաննին, քանի որ ճիշտ այդ պահին հյուրասրահ էր մտել կոմսուհին և քայլում էր դեպի նա:

- Ափսո՛ս, որ դու չեկար, Ջիովաննի, ի՛նչ հոյակապ ներկայացում էր... Շա՛տ, շատ բան կորցրիր:

- Օ՛, խնայեք ինձ, տիկին, բավական է, որ արդեն մեծ տառապանքի գնով կարդացի այդ պիեսը, մի ստիպեք, որ երկրորդ անգամ դաժան փորձության ենթարկվեմ:

- Սիրելի Ջիովաննի, դուք որ փիլիսոփա եք, առաջին հերթին պիտի հրապուրվեիք այդ գաղափարով, այդ ղարմանալի, անակնկալ սյուժեով...

- Տիկին... Գիտեմ, նորից պիտի ասեք, թե էպատաժի սիրահար եմ, բայց մի՞թե ես նման եմ մեռելապաշտի... Կներեք հանդգնությանս, բայց պիտի ասեմ. մի՞թե նեկրոֆիլական հակումներ եմ ցուցաբերել երբևէ...

- Օ՛, Ջիովաննի, դուք նորից ծայրահեղության եք հասցնում, - միջամտեց անթերի հագնված, համակրելի մի երիտասարդ, որը կոմսուհու հետ թատրոն եկած երեք տղամարդկանցից մեկն էր: - Ես նույնպես հիացած չեմ այդ պիեսով, բայց ներկայացումն իսկապես հոյակապ էր...

- Սիրելի բարոն, ինչպե՞ս կարող է հակաբնականը հրապուրիչ լինել... Այդ որտե՞ղ եք տեսել, որ տասնութամյա առողջ, կյանքով ու սպասումներով լի գեղեցկուհին յոթանասնամյա զառամած ծերունու սիրահարվի:

- Բայց, կներեք, պարոն, ինձ թվաց, թե դուք հասարակացրիք խնդիրը... Ես կարծում եմ, որ այդ աղջկա սերը, արտաքուստ, այո, խիստ անհավանական է... Սակայն պատրվակ է ավելի մեծ դաղափար ցուցադրելու համար...

- Իրավացի եք, ես միտումնավոր հասարակացրի, որպեսզի ցույց տամ այդ, ինչպես բարեհաճեցիք ասել, մեծ գաղափարի փտած աստառը...

- Եվ ո՞րն է այդ աստառը, Ջիովաննի, բացեք մենք էլ տեսնենք, - հարցրեց կոմսուհին:

- Այն, որ Եվրոպան ավելի լավ ապագա չի տեսնում իր համար, քան սիրահարվել սեփական պապիկին... Պատմության ցիկլն, այսպիսով, փակվում է: Օձը խածնում է իր պոչը:

- Ջեմ կարծում, թե Հաուպտմանը նկատի ունի Եվրոպան: Ինձ թվում է, թե սա զուտ գերմանական խնդիր է: Սա երիտասարդ Գերմանիայի հիացական հայացքն է՝ ուղղված դեպի հինավուրց ու փառահեղ Գերմանիան... Այլ խոսքով՝ իդեալի կարոտ..., - ասաց Ռուբենը և անմիջապես նկատեց, թե Յուրգենն ինչպիսի հարգալից հայացքով նայեց իրեն:

- Կարո՞ղ ենք հասկանալ, թե դա նաև գերմանական ոգու զարթոնքն է ազդարարում, առնվազն՝ խոստանում, - հարցրեց Յուրգենը:

- Խոստանալը՝ գուցե, սակայն եթե ազդարարում է, ապա բավական չարագուշակ:

- Ինչպե՞ս հասկանալ ձեզ, - աշխուժորեն հարցրեց իտալացին:

- Շատ պարզ, - պատասխանեց Ռուբենը, դառնալով իտալացուն. - Ի տարբերություն ձեզ, պարոն, այդ պիեսը կարդալու առիթը չեմ ունեցել, բայց այն, ինչ տեսա այսօր բեմի վրա, դա ոչ այլ ինչ էր, քան սեր առ մահ, վախճանականության պաշտամունք, ավարտի դյութանք...

- Դուք հաստատում եք իմ մտքերը, - շտապեց հայտարարել իտալացին:

- Բայց այն տարբերությամբ, որ ես դա համարում եմ բնական, գուցեև անխուսափելի՝ մահվան գերակայությունը եվրոպական իդեալների մեջ... Ինչ-որ գաղտնիք կա...

- Ոչ մի գաղտնիք չկա, սիրելի պարոն, - կտրուկ ասաց իտալացին: - Դուք ինքներդ ճիշտ որոշեցիք հոգնած Եվրոպայի հիվանդությունը... Միայն թե մի խնդրանք. Իտալիան հանեք այդ Եվրոպայից, մենք առողջ իդեալներ ունենք, մեր աղջիկներն, ի տարբերություն գերմանացիների, գերադասում են տրվել երիտասարդներին և կատարելապես առողջ տղամարդկանց:

- Բայց, սիրելի Ջիովաննի, եթե ձեր աղջիկները Գերմանիա գան, կարծում եմ նրանք ևս Ինկենի վիճակում կհայտնվեն, քանզի գերմանացի տղամարդիկ յոթանասուն տարեկանում նույնքան առնական են, որքան քսան տարեկան իտալացիք, - բարեկիրթ ժպիտով միջամտեց կոմսուհուն ուղեկցող մյուս պարոնը՝ սև սմոկինգ հագած, մոտ քառասուն տարեկան մի տղամարդ:

Կոմսուհին զգալով մոտալուտ փոթորիկը, անմիջապես միջամտեց.

- Սիրելի տղամարդիկ, թույլ տվեք, որպեսզի ձեր առնական հատկությունների մասին կարծիք հայտնեն կանայք... Կարծում եմ դա ավելի հավաստի և ավելի մոտիկ կլինի իրական պատկերին... Եվ ընդհանրապես, դուք երբեմն դառնում եք պարզապես տաղտկալի, աշխատեք միշտ հետաքրքիր լինել...

- Բայց, սիրելի Ալիս, դուք անարդար եք, - բողոքեց բարոնը, - երեկ դիշեր ճիշտ հակառակն էիք ասում...

- Իսկապե՞ս, որքա՜ն միամիտն եմ եղել երեկ... Սակայն, ես ուրիշ առաջարկ ունեմ... Այսօր ձեզ մի փայլուն անակնկալ պիտի մատուցեմ: Դուք, անշուշտ, լսել եք այն սոսկալի պայթյունի մասին, որ անցած շաբաթ եղավ...

- Իհարկե, գիտենք, թերթերը միայն այդ մասին են գրում, - ասաց պատկառաչուք տեսքով պարոնը:

- Տխմարություններ և զառանցանքներ, - շպրտեց Ջիովաննին:

- Կեցցե՛ս, Ջիովաննի, միշտ հավատարիմ ես ինքդ քեզ, սակայն ընդունիր, որ այդ պայթյունը չափազանց խորհրդավոր է, առնվազն առեղծվածային:

- Միակ առեղծվածն այն է, որ ձեր հանճարեղ հրետանավորները Պոմերանիայի դաշտերում փորձարկումներ անելու փոխարեն եկել և Ֆրանսիայի սահմանի մոտ են տեղավորվել...

- Սակայն մեր կառավարությունն այլ կարծիքի է, - շտապեց հայտարարել Ֆրանսիացի բարոնը:

- Թերթերից մեկում կարդացի, թե պայթյունից քիչ առաջ աէրոպլան է անցել այդ կողմերով, և լրագրողը ենթադրում էր, թե օդից նետված ռումբ է...

- Այո, Ջինաստանից եկած աէրոպլան, - լրացրեց Ջիովաննին:

- Համալսարանում լուրեր շրջեցին, թե դա անարխիստների գործն է, - ասաց Ռուբենը:

- Սիրելի բարեկամներ, ավելի լավ է վիճելու փոխարեն լսենք առաջին և միակ ականատեսին... Պատիվ ունեմ ձեզ ներկայացնել իմ ազգականուհուն՝ տիկին մարքիզուհի Էլիզաբեթ Կաստել դը լա Նովարդերի: Այդ պայթյունը տեղի է ունեցել նրա դղյակում, բառացիորեն նրա աչքի առջև... Շատ եմ խնդրում, նորից պատմեք, սիրելի Էլիզաբեթ:

Հնդուհավի նման մի կին, մոտ հիսուն տարեկան, չափազանց աշխույժ սկսեց պատմել.

- Օ՜, մի հիշեցրու այդ մղձավանջը, սիրելի Ալիս, իմ խե՜ղճ Ռիքին..., - նա թաշկինակը հանեց և տարավ աչքերին, հետո խորը շունչ քաշելով շարունակեց. - Ռիքին մի սքանչելի պեկինուա էր... Շատ էր սիրում, որ առավոտ կանուխ իրեն ղբոսանքի հանենք: Աղախինս այդ դիշեր գնացել էր գյուղ, քույրը պիտի ծննդաբերեր, իսկ Ռիքին խոհարարուհուս տանել չէր կարող, ուստի առավոտյան ժամը յոթին ստիպված եղա ինքս դուրս տանել: Դուռը բացելուն պես ձեռքիցս դուրս պրծավ և վազեց դեպի ծաղկանոցը: Եվ այդ պահին սոսկալի մի սուլոց լսեցի, ականջ ծակող մի աղմուկ և տեղնուտեղը դժոխային պայթյունը դղրդաց... Լավ է, ես մի պահ մնացել էի դռան ետևը, հովանոցս էի փնտրում, թե ոչ ես էլ խեղճ Ռիքիի բախտին կարժանանայի...

- Իսկ ինչպե՞ս զոհվեց Ռիքին, - հարցրեց Յուրգենը:

- Այդ ռումբը, այդ երկնաքարը... չգիտեմ, ինչպե՞ս ասեմ... այդ պատուհասն ընկել էր ուղղակի Ռիքիի վրա և տեղը երեք մետրանոց կլոր փոս առաջացրել: Դղյակի ապակիները փշուր-փշուր եղան, իսկ կողքի հաստաբուն ծառերն, ասես, հսկա դանակով տաշել էին: Խեղճ Ռիքիից բառացիորեն ոչ մի հետք չէր մնացել... Ի՜նչ դաժան մարդիկ են..., - մարքիզուհին թաշկինակը նորից տարավ աչքերին:

- Այն, ինչ պատմեցիք, տիկին մարքիզուհի, - անմիջապես անդրադարձավ բարոնը, - ենթադրել է տալիս, որ դա իսկապես անարխիստ ահաբեկիչների գործն է:

- Բայց ի՞նչ կապ ունի իմ խեղճ Ռիքին նրանց հետ:

Բարոնը հաղթական ժպտաց.

- Ոչ մի կապ չունի, տիկին մարքիզուհի... Նրանց գործողություններում տրամաբանություն մի փնտրեք...

Կոմսուհին, բավական հմտորեն, կարողացավ զրույցը պայթյունավտանգ նյութից շրջել: Իսկ մարքիզուհին, որ վերջապես ուշադրության կենտրոնում էր հայտնվել, շարունակում էր պատմել, թե ինչպես այդ ահավոր պայթյունից հետո ստիպված է եղել մի քանի ժամ շարունակ ժանդարմների տխմար հարցերին պատասխանել: Հաջորդ օրն ուրիշ մարդիկ են եկել Փարիզից, բարձրաստիճան սպաներ, որոնցից մեկը նույնիսկ հեռավոր ազգական է գալիս իրենց, և շարունակ նույն հարցերը տվել...

Ռուբենին մի պահ թվաց, թե այս հյուրերը շուտով կցրվեն և ինքը, այն օրվա պես, կբարձրանա վերև գիշերելու, գուցեև... Իսկապես, ո՞ւր է Էրիկան: Այստե՞ղ է, թե գնացել է:

Գիշերվա ժամը երկուսից հետո հյուրերն, աստիճանաբար, սկսեցին լքել առանձնատունը: Սկզբում Կլաուսը և Թուրքը գնացին: Խորհրդավոր է այս նախկին սպան, ի՞նչ գործ ունի այդ կալվածատիրոջ հետ: Նրանց հաջորդեցին ֆրանսիացի բարոնը և Ջիովաննին: Ռուբենը ցանկացավ միանալ նրանց, քանզի շատ կուզեր զրույցը շարունակել իտալացու հետ, սակայն կոմսուհին պահեց նրան.

- Խնդրում եմ մի փոքր ավելի ուշ, ես ձեզ շատ հետաքրքիր մի բան պիտի ցույց տամ:

Այս բառերն ասելիս, ձեռքը դրեց նրա դաստակին: Մի ուժգին դող անցավ Ռուբենի մարմնով՝ էլեկտրական հոսանքի պես: Տակնուվրա անող մի ղգայնություն կար այդ շարժումի մեջ, և առաջին բանը, որ անցավ մտքով, հետևյալն էր. «Արդյոք չչառագունեցի՞...»: Իր համար չէր, որ մտահոգվեց, այլ կոմսուհու, քանզի երեսի բոսորագույնով երկիմաստ վիճակի մեջ կդներ նրան:

Գիշերվա ժամը երեքին հյուրասրահում մնացել էին երեք հոգի. ինքը, Ալիսը և Մարքիզուհին:

- Ժամն արդեն ուշ է, կարող եք մնալ այստեղ..., - ասաց կոմսուհին, - Ձեզ նույն սենյակը կառաջարկենք... Անցած անգամ, հուսամ, գոհ մնացիք:

Նրա ձայնում, դեմքի վրա ոչ մի հեգնանք, ոչ մի ակնարկ, ոչ մի երկիմաստություն չկար: Ասում էր որպես սովորական մի բան: Թերևս այդ պատճառով էլ, երրորդ անձի ներկայությամբ ընդգծեց, որ ինքն արդեն գիշերել է այդ սենյակում, որ դա ընդունված սովորություն է այս տան մեջ:

- Եթե հոգնած եք, Իլոնան հիմա ձեզ կառաջնորդի, - ավելացրեց կոմսուհին:

- Ի դեպ, ո՞ւր է մյուս աղախինը, ես նրան չտեսա:

- Ահ, սիրելիս, ես ստիպված եղա նրան ետ ուղարկել... Նա չկարողացավ հարմարվել այստեղի եղանակներին...

Շնորհակալություն հայտնելով հաճելի երեկոյի համար և բարի գիշեր

մաղթելով, նա հետևեց սիրունիկ Իլոնային, որին տեսել էր դեռևս Բուդապեշտի կայարանում: Սենյակն իսկույն ճանաչեց: Ոչ մի փոփոխություն: Այսօր, գարնանային այս լուսնյակ գիշերով, ավելի հաճելի թվաց նրան: Պատուհանին կոթնած ծխում էր և հիանում առջևը բացված գիշերային սքանչելի տեսարանով:

Թակոց լսեց: Մոտեցավ դռանը: Մի՞թե հիմա իր առջև պիտի էրիկան հայտնվի: Կոմսուհին գուցե ուզում էր անակնկալ մատուցել: Սակայն դուռը թակողն Իլոնան էր.

- Տիրուհին խնդրում է, որ եթե քնած չեք, մի քանի րոպեով բարեհաճեք իրեն տեսնել:

Կոմսուհու սենյակի դուռը կիսաբաց էր և այնտեղից լույս էր ընկել միջանցք: Իլոնան առաջնորդեց նրան: Ալիսը, սեղանի մոտ նստած, գրում էր: Նա վերջակետ դրեց, հայացքը կտրեց թղթից և հյուրին առաջարկեց նստել:

- Անցյալ օրը Կոնրադի արվեստանոցում էի, - ասաց նա: Մի հոյակապ կտավ է վերջացրել... Պատմելու բան չէ, պետք է տեսնել... Ես շատ գովեցի նրան... Սակայն գիտե՞ք ինչ ասաց... Նա համեստորեն պատասխանեց. «Այդպես մի գովիր, ես ընդամենը համեստ մի ընդօրինակող եմ...»: Ահա այդպես պատասխանեց նա: Հետո պատմեց այն մասին, թե ոչ մի կերպ չէր կարողանում ավարտել այդ նկարը, և իր բանաստեղծ ընկերներից մեկը հանկարծ մի սոսկալի երազ է տեսնում, որից ոգեշնչված գրում է մի փայլուն բանաստեղծություն, որն էլ, իր հերթին, ոգեշնչում է նկարչին և օգնում վերջապես ավարտելու այդ հոյակապ կտավը: Պարզապես աներևակայելի է...

- Կոնրադը շատ մեծահոգի է... Բայց նա ձեզ չի ասել, որ իմ երազում իր անավարտ կտավը տեսա և ընդամենը մի մանրուք ավելացրի...

- Ես հիշում եմ այդ աշխատանքն անավարտ վիճակում, նա հուսահատված էր և ոչ մի կերպ չէր կարողանում լուծում գտնել:

- Թերևս ավելի ազնիվ կլինի ասել, որ այդ ավարտը միասին գտանք...

- Գուցե... Բայց ես կուզեի, որ հիմա այդ բանաստեղծությունը կարդայիք, Կոնրադն ընդամենը վերապատմել է ինձ:

- Ես վստահ չեմ, թե ֆրանսերեն թարգմանությամբ կկարողանամ ամբողջ իմաստը հաղորդել, սակայն փորձենք...

ՍՏԻՆՔԸ

Կյանքի Տոնն էր: Հոն էին բոլոր որդիքը Մարդուն.
Ո՛ւ անոնք որ դեռ կապրին, ո՛ւ անոնք որ չի ծնան.
Ո՛ւ մեռելները բոլոր: Բաց երկինքին տակ անհո՛ւն,
Կանա՛չ, անծի՛ր վայր մըն էր, սառած ծովու մը նման:

Գետինեն վեր ծառացող ծանըր ծուխ մը գալարուն՝
Արյուն ու կիրք կբուրեր: Կապարի չունչ մ՚անկենդան,
Տարածության վրա անծի՛ր, գիրկ գիրկի, մոտն ու հեռուն.
Տրտում զույգեր Մեծ Կյանքը կբեղմնեին: Լռելյայն:

Ու կույսերու կուրծքին վրա տաք գլուխներ սիրահալ,
Մայրեր որոնք տաժանքով կծնեին, օ՜հ, անդարձ
Մեռելներու նոր սաղմեր, ծիծին հարած փոքրեր ալ:

Արդ կապարի օդին մեջ, հսկայավա՛ռ, ահագի՛ն,
Կրանիթե Բուրգ-Ստինք մը կտիրեր երկնամբարձ,
Սուգի սև խաչ մը ցցած իր գագաթի պտուկին:

Բանաստեղծության ավարտից հետո կոմսուհին մեկ րոպեի չափ լուռ նստել էր: Երևում էր, որ չափազանց տպավորված է: Հետո վեր կացավ, գլանակ վառեց, հրամցրեց նաև Ռուբենին և, շեշտակի նայելով զրուցակցին, հարցրեց.

- Դուք քանի՞ տարեկան եք:

Անակնկալ հարցից Ռուբենը թեթևակի ցնցվեց, բայց տիրապետելով իրեն պատասխանեց.

- Քսաներկու... Սակայն կներեք, մի՞թե դա էական է...

- Այո, էական է և չափազանց: Որտեղի՞ց եք այդքան խիզախություն գտել հասնելու թշվառ գոյի ամենաանողոք ճշմարտությանը և շիտակ նայել երեսին:

- Կներեք, գուցե շատ համարձակ թվա, բայց իմ տողերն իմ տարածքներն են...

- Ես գուցե հստակ չասացի: Խնդիրը միայն համարձակությունը չէ, որ ձեր տարիքին հատուկ է, այլ ես կասեի իմաստուն վճռականությունը... Դուք այդքան երիտասարդ եք, բայց արդեն գիտեք, թե հանուն ինչի պետք է քայլեք մինչև վերջ և չվախենաք նայել դաժան ճշմարտությանը...

- Դուք գտնում եք, որ այդ պատկերը դաժա՞ն է:

- Դաժան է իր մերկության մեջ... Այդպես կարող էր տեսնել շատ բան ապրած, նույնիսկ որոշ իմաստով պատրանաթափ մարդը... Ահա ինչու հարցրի ձեր տարիքը...

- Օ՜, ոչ, ես դեռ պատրանքներ ունեմ և չեմ ուզում կորցնել, սակայն, ասես, ժամանակն ինքն է պատրանաթափվել, կորցրել իր երազները...

- Անգամ Բյոքլինը, որ այդպես խորասուզված էր մահվան առեղծվածների մեջ, մեր վերջին հանդիպմանը հեռացրել է մեզնից և տեղավորել խորհրդավոր մի կղզու մեջ...

- Գիտեք, անցյալի մարդկանց համար կյանքի և մահվան միջև հսկա տարածություն կար, հազարավոր երանգներ կային... Մինչդեռ այսօր բավական է ասել «Սեր» և անմիջապես կողքին տեսնում ես «Մահը»: Նրանց միջև եղած տարածությունը ջնջվել է, նրանք նույնացել են... Բյոքլինի նավակն այլևս պետք չէ:

- Թույլ տվեք հարցնել, դուք ձեր անձնական սիրո մեջ ունեցե՞լ եք նման զգացումներ:

Ռուբենը մի պահ վարանեց.

- Դժվարանում եմ ասել, բայց մի՞թե անձնական փորձը պարտադիր է... Կյանքը մեզ ամեն օր հրամցնում է այդ դաժան նույնությունը...

- Թերևս... Սակայն ինչո՞ւ ֆրանսերեն չեք գրում: Վստահ եմ, որ հայերեն հոյակապ պիտի հնչի, հանպատրաստից թարգմանությունն անգամ ինձ տակնուվրա արեց... Եվ դուք, հավանաբար, այսպիսի բազմաթիվ տողեր ունեք: Ինչո՞ւ եք գաղտնի պահում այդ հարստությունը: Ինքներդ թարգմանեք ֆրանսերեն: Վերջապես, սկսեք ֆրանսերեն գրել: Մեծ հաջողություն կունենաք: Ես Փարիզում հրատարակիչ ընկերներ ունեմ, նրանք ուրախ կլինեն այսպիսի բանաստեղծություններ տպագրել:

- Ձափազանց շոյված եմ, տիկին կոմսուհի...

- Խնդրում եմ, ինձ անվանեք պարզապես Ալիս...

- Սակայն ես... իրավունք չունեմ:

- Այդ իրավունքն Աստծուց եք ստացել... Նաև ես եմ տալիս... Հետո, ինձ այդպես ավելի հաճելի կլինի:

- Շնորհակալ եմ... Ալիս:

- Ուրեմն, ինչո՞ւ չգրել ֆրանսերեն, ինչո՞ւ չդառնալ նշանավոր Եվրոպայով մեկ:

- Դյուրին չէ մեկ բառով պատասխանել... Ես իմ լեզվից եմ գալիս... Նա է ինձ տվել այս ամենը... Լեզուն իմ ճակատագիրն է, ուրիշ լեզուն ուրիշ ճակատագիր կնշանակի, և գուցե այլևս պահանջ չունենամ բանաստեղծություն գրելու... Դուրս գալ այդ լեզվից, նշանակում է դավադրել ոչ միայն իմ ժողովրդի, այլև իմ դեմ... Նշանակում է կորցնել այդ ոգին, դառնալ ուրիշ մեկը...

- Բայց այդպիսով ասիական խավարից դուրս կգաք:

- Ես իմ լեզվի մեջ ինձ զգում եմ Եվրոպայում: Վերջապես, դա է մեր ճակատագիրը. այդ խավարում լույս տալ...

- Սակայն մինչև ե՞րբ:

- Մինչև խավարը ցրվի:

Կոմսուհին նորից սևեռուն նայեց Ռուբենին և գլուխն օրորելով ասաց.

- Նայում եմ ձեզ և շարունակ զարմանում, թե ինչ դաժան կատակ է խաղացել բնությունը՝ միևնույն արտաքինի տակ երկու տարբեր մարդիկ դնելով:

- Դուք նկատի ունեք...

- Այո, այո, նկատի ունեմ այն դատարկագլուխ հարբեցողին, որն իմ աղդականն է... Աղնվականը դուք եք, ոչ թե նա:

Կոմսուհին տեղից ելավ, երկու գավաթ կոնյակ լցրեց:

- Մեր երկրորդ հանդիպման կենացը, - ասաց նա և կում անելուց հետո շարունակեց. - Մեկ այլ տարբերություն էլ կա ձեր և իմ թշվառ ազգականի միջև... Առնվազն ինձ համար էական տարբերություն. այն, որ նա խենթի պես սիրահարված է ինձ... Տանել չեմ կարող, երբ ինձ սիրահարվում են իմ չհավանած տղամարդիկ...

- Իսկ պատահե՞լ է, որ ձեր հավանած տղամարդիկ ձեզ չսիրահարվեն:

- Երբեք:

- Իսկ ինչպե՞ս եք նրանց սիրահարեցրել:

- Օրինակ՝ այսպես, - ասաց կոմսուհին, նորից լցրեց Ռուբենի բաժակը և մեկնեց նրան: - Խմե՛ք մինչև վերջ, - և սպասելով, որ կատարի իր հրահանգը,

ավելացրեց. - Կարող եք սիրո խոստովանություն չանել, ձեր աչքերը վաղուց արդեն ասում են:

Հետո, անխոս, ձեռքի թեթևակի շարժումով մոտ կանչեց Ռուբենին, որը հմայված պես մոտեցավ, ծնկի իջավ և համբուրեց կոմսուհու ձեռքը: Վերջինս, ակնհայտորեն շոյված, նրան ոտքի հանեց և կամացուկ համբուրեց շուրթերը:

Այսքանը բավական էր, որպեսզի առնական բնազդը սանձազերծվեր: Կոմսուհին, ասես, փոխվեց: Նրա նվաղկոտությունը և հլությունը միանգամից վերացան: Նա դուրս պրծավ տղայի գրկից, լույսը հանգցրեց, հետո մոտեցավ և շոյելով, երեսն ու վիզը համբուրելով, սկսեց դանդաղորեն զգեստները հանել: Տղան զգաց, թե ինչպես հզոր մի էություն, անդիմադրելի մի մագնիսականություն գրավեց, խլեց, կամազրկեց իրեն, և հաճելի էր այս անհոգ մեղկությունը, անծանոթ մի բան կար սրանում... Մինչև հիմա միշտ ինքն էր եղել նախահարձակը...

Այս մեկը, սակայն, չէր տրվում: Այս մեկը վերցնում էր: Տիրաբար: Անվերապահորեն: Սա մի հուշկապարիկ էր, որին աշխարհի ոչ մի արու չէր հանդգնի դիմակայել, քանզի անսահմանորեն քաղցր էր լինել նրա բացառիկ նրբության և առեղծվածային կանացիության գերին: Ահա, իսպառ մերկացնելուց հետո առաջնորդեց դեպի ծանոթ մահճակալը, վարագույրի թանձրությունն զգաց դեմքին և չնայած այդ քնքույշ ձեռքերի հպումից մեղրամոմի պես հալվում էր, այնուամենայնիվ, փորձեց ծանոթ պատկերը կորզել խավարի միջից, սակայն լոկ աղոտ ուրվագծեր երևացին, առաջին անգամվա կիսախավարը չկար, վարագույրները գոցված էին: Հնազանդ երեխայի պես անշարժ պառկեց և փակ աչքերով ավելի շատ տեսավ, քան բացով կտեսներ: Զգաց, թե որքան ժամանակ անցավ, միայն թեթև շրշյունից հասկացավ, որ անկողինը ծածկող հովանին բացվեց, և չնայած խավարը մնացել էր նույնը, ստույգ տեսավ, թե ինչպես լուսարձակ մարմինը մոտեցավ իրեն և և տրվեց նվաճելու պես...

Այնուհանդերձ ուզում էր տեսնել այդ ազնիվ գիշատչին, համոզվել, որ այն հրաշք, անձեռակերտ մարմինն է այժմ իշխում իր վրա, ուզում էր համոզվել, որ դա իսկապես այն կինն է, որի պատկերը հիմա կախված էր իր գլխավերևում: Ավելին, ուզում էր համոզվել, որ բնօրինակը չի զիջում պատկերին:

Միայն վաղ առավոտյան, երբ խավարն սկսում էր տեղի տալ, բախտ ունեցավ տեսնելու, թե ինչպես սլացիկ հասակով մի կին, երկար մազերը ջրահարսի պես արձակած, իր կողքից վեր կացավ, մոտեցավ պատուհանին, վարագույրի մեջ ճեղք ՝արեց և մի քանի բոպե կանգնած ծխում էր ու արթնացող թռչունների համերգը լսում:

Գլանակը հանգցնելուց հետո նա կոնյակ խմեց, եկավ պառկեց կողքին և մազերով պարուրեց իր դեմքը: Ծխախոտը խմիչքի հետ միասին մեղք էին բուրում: Նա հիմա բոլորովին ուրիշ կին էր, և գուցե նաև այդ նորությամբ էր, որ կարողացավ միևնույն գիշերվա մեջ արդեն որերորդ անգամ իր «զոհին» վերցնել: Սակայն նա իրեն պարպված չէր զգում, այլ անծանոթ մի երանության մեջ էր, ուստի առավոտյան ժամը յոթին, իր սովորույթի համաձայն, երբ ոտքի ելավ, հոգնածության ոչ մի նշույլ չկար մեջը:

Երբ արդեն հագնված էր և պատրաստվում էր անկողնում պառկած իր

նոր ընկերուհուն «ցտեսություն» ասել, նկատեց, որ արդեն մի քանի ժամ է ոչ մի բառ չեն փոխանակել: Սիրո այս հսկա գործողությունն ընթացել էր անձայն, և հիմա չգիտեր, թե ինչ ասեր: Ալիսն ինքը խախտեց լռությունը: Նա ծանոթ շարժումով մոտ կանչեց, նստեցրեց անկողնի եզրին և, ձեռքը բռնելով, ասաց.

- Ես քեզ այսօր պիտի սլատժեի, սակայն թող մնա հաջորդ անգամ:

- Կարո՞ղ եմ իմանալ, թե ինչու:

Կոմսուհին խորամանկ ժպիտով նայեց նրան.

- Որովհետև չեմ սիրում, երբ առանց իմ թույլտվության այստեղ անձրևանոցներ են մոռանում... Մանավանդ իմ հյուրերի մոտ... Ի դեպ, չմոռանաս Իլոնայից վերցնել:

Հետո ձեռքը տարավ և կողքի գիշերասեղանի վրայից երկու բանալի հանեց՝ մետաքսի թելով իրար կապված:

- Մոտեցիր աջ պատուհանին և վարագույրի ճեղքից նայիր, թե որտեղ է վերջանում ծառուղին:

Ռուբենը չնայած կռահեց, թե ինչի մասին է խոսքը, բայցևայնպես մոտեցավ պատուհանին:

- Այնտեղ տեսնում եմ ճերմակ և բարձր մի պատ՝ բաղեղով ծածկված: Պատի մեջտեղը երկաթյա մի դուռ կա: Ծառուղին վերջանում է այդ դռան մոտ:

- Ահա այդ դռան բանալին, իսկ երկրորդն այս սենյակի բանալին է... Սրանք, ինձնից և ձեզնից զատ, ունի միայն Իլոնան, իմ ամենահավատարիմ աղախինը: Երբ ցանկանամ և հնարավորություն ունենամ քեզ տեսնել, նախորդ օրը նամակ կուղարկեմ, որտեղ գրված կլինի մոտավոր ժամը մեր հանդիպման, իսկ մնացած օրերը կարող ես գալ երեկոյան, նույնիսկ առանց ժամադրվելու...

Ռուբենի համար ելքի դուռը բացեց Իլոնան և մոռացված հովանոցի հետ մեկնեց նաև մի ծրար՝ անծանոթ մի ձեռագրով հասցեագրված իրեն:

* * *

Գրեթե ամբողջ օրն անցկացրեց դոկտոր Ռուի հետ: Մինչև կեսօր ներկա եղավ դիահերձման դասերին: Հիվանդագին քաջողականություն էր ձեռք բերել այս սրահը, քաղաքի դեմքն արդեն սկսել էր նկատել նաև այստեղ: Մարդիկ՝ բոլոր տարիքների, որոնց հաճախակի հանդիպում էր փողոցներում, սրճարաններում, համալսարանի միջանցքներում, որոնցից շատերին գիտեր միայն դեմքով, օրերից մի օր հայտնվում էին այստեղ՝ մերկ, անձնատուր, անպաշտպան: Դրանից հետո, անշուշտ, նրանց այլևս չէր տեսնում, բայց մշտապես կրկնվող այս օրինաչափությունը, դիվական մի հնարքով, իր գիտակցության մեջ նաև հակառակ ընթացք էր ստանում երբեմն: Այսպես, օրինակ՝ կյանքում հանդիպում էր մարդկանց, որոնց, թվում էր, թե մինչ այդ տեսել է դիահերձարանում, երկաթյա, անիվավոր սեղաններին պառկած, ճերմակ սավաններով ծածկված...

Ինչո՞ւ ենք մեր մահը պարտադրում ապրողներին... Մեր նախահայրերը, որոնք ավելի մոտ էին բնությանը, պիտի անպայման ունեցած լինեին փղերի ազնիվ սովորությունը՝ մահվան մոտենալն զգալով հեռանալ և մեռնել բոլորից աննկատ...

Այսօր էլ տեսավ հերթական ծանոթին. սերբ նկարիչ Միրկոյին, ազատ արվեստագետ բառիս բոլոր իմաստներով: Նրան հաճախակի կարելի էր հանդիպել լճափին, Ս. Ֆրանսուայի հրապարակում, Սիտեի նեղլիկ փողոցներում և այլ մարդաշատ վայրերում: Նկարում էր դեմքեր: Իր հավանած դեմքերը: Հետո նվիրում: Դրամը կարող էիր տալ, կարող էիր չտալ: Սակայն վճարվելու դեպքում մեկ ֆրանկից ավելի չէր վերցնում, իսկ վաստակածը շտապում էր ծախսել մոտակա գարեջրատանը: Միրկոն մենակ էր. բոլորը գիտեին նրան, բայց ոչ մեկը նրան ընկեր չէր:

Եվ ահա պարզվեց, որ ազատ արվեստագետ Միրկոն ևս անտեր մեռել է, մարդ, որը շատ-շատերին, առնվազն մեկ անգամ, հրճվանք էր պատճառել: Իսկ հիմա պիտի ծառայեր որպես ուսումնառության իր, առարկա, անկենդան նյութ... Մարգարեի դեմքով այս արվեստագետը:

Ուսանողները, գրեթե բոլորը, ճանաչեցին սառը երկաթին պառկած այդ մարդուն: Նա հիմա ողջ էր իր ստեղծած կերպարի մեջ, և ո՞վ կհանդգներ սովորական ուսումնառության նպատակով այս մարմինը կտրատել:

Մի սրբազան երկյուղ էր պատել ուսանողներին: Դոկտոր Ռուն անմիջապես հասկացավ կացությունը: Նա ժերարին խնդրեց մեկ ուրիշը բերել: Սակայն Ռուբենն արդեն տակնուվրա էր եղել, և դասի ամբողջ ընթացքում անուշադիր էր ու մտացիր: Իսկ նրբանկատ դոկտոր Ռուն, որ, սովորաբար, իրեն և երկու-երեք ուրիշ ուսանողների մշտապես առաջարկում էր ցուցադրական հերձում կատարել, այս անգամ կարծես չէր նկատում իր գոյությունը:

Որոշել էր դասերից հետո գնալ լճափ և գարեջրի գավաթի առջև երեկվա դյութանքի մանրամասները վերհիշել: Եվ հատուկ այս նպատակով, ամբողջ օրվա ընթացքում, ուղեղն ասես կողպեքով փակել էր և չէր թողնում, որ սիրո ժամերին վերաբերող որևէ ակնարկ թափանցեր:

Հիվանդանոցից դուրս գալուն պես նորից հանեց առավոտն ստացած նամակը, որը կարդացել էր հապճեպ, դիահերձարան շտապելիս.

«Սիրելի Ռուբեն,

Այն գիշեր ձեզ Աստված ուղարկեց ինձ մոտ: Ես իզուր սպասեցի ձեր զանգին... Հետո հասկացա, որ Աստծո պարգևներն ամեն օր չեն լինում...

Կուզեի ձեզ փնտրել, բայց ստիպված եմ հեռանալ: Ձեր հասցեն չունեմ, սակայն դուք կունենաք իմը, եթե ձեզ հասնի այս նամակը... Կհասնի՞... Աստված կկամենա՞:

Համբուրում եմ՝ Ձեր Էրիկա»:

«Ի՜նչ սոսկալի, ի՜նչ հրեշավոր էակ եմ ես», - մտածեց նա: Սակայն հիշեց, որ երկու անգամ զանգել է «Old India»-ից և երկու անգամ տանը մարդ չկար: Ուշադրություն դարձրեց ամսաթվի վրա. նամակը գրված էր իրենց հանդիպումից երկու օր հետո: Ի՞նչ է անցել-դարձել այդ ընթացքում, որ աղջկան ստիպել է այսպիսի հուսահատական նամակ գրել: Կռահելը դժվար չէր: Քիչ թե շատ որևէ հետաքրքիր կին հազիվ թե իրեն հարմար դգար կոմսուհու կողքին: Ալիսը կարո՞ղ էր հանդուրժել, որ իր կողքը որևէ մրցակից լինի: Հիշեց նրա թա-

փանցիկ ակնարկը... Այո, նա գիտի անձրևոտ գիշերվա բոլոր մանրամասները: Սակայն որտեղի՞ց: Միայն հովանոցը ոչինչ չի ասում: Մարդիկ ամեն օր, ամեն տեղ հովանոցներ են մոռանում: Հնարավո՞ր է, որ կոմսուհին ինքն է նրանից խոսք քաշել... Շատ նրբին, առանց որևէ ջանք թափելու: Սակայն ինչո՞ւ ոչ, կարող էր նաև ինքը՝ Էրիկան պատմել իր այցելության մասին, առանց որևէ հետին մտքի, իսկ մյուս մանրամասները նրանից կորզելը կոմսուհու համար մեծ դժվարություն չպիտի ներկայացներ:

Ամենայն հավանականությամբ այդպես է եղել, և սեփականատիրոջ խոցված ինքնասիրությունը նրան դրդել է առաջին իսկ առիթով վերստին համոզվել իր կանացի հմայքների բացարձակ հզորությանը:

Այնուհանդերձ, Ռուբենն իրեն ստորացված չէր զգում: Ընդհակառակը, նրա համար քաղցր էր դյուրթիչ այս հնազանդությունը: Ավելին, հոգու խորքում հպարտ էր, որ ընտրվեց, զատվեց մյուսներից և արժանացավ այդ բացառիկ կնոջ շնորհներին: Եվ նա պատրաստ էր ընդմիշտ այդ գեղեցկության խոնարհ հպատակը լինել:

Այո, սա սեր էր, և նա հիմա չնչին կասկածը չուներ, որ այս սերը փոխադարձ է: Եթե բուռն գիշերը բավարար ապացույց չէ, ահա, խնդրեմ, բանալիները: Նման բան միայն վեպերում կարելի է կարդալ: Այսպիսի բացառի՛կ վստահություն... Սակայն կոմսուհին ի՞նչ դիտի իր մասին: Տուն հրավիրել, անգամ դիշերը պահել՝ դեռ ոչինչ: Նման քայլերը հատուկ են այդ դասակարգին: Բայց այն, ինչ հաջորդեց դրան, պարզապես աներևակայելի է... Ո՛չ, ո՛չ, սա միայն քմահաճույք չէ... Եվ հատկապես միայն խոցված ինքնասիրություն չէ... Դրանք պարզապես բորբոքել և հասունացրել են ուրիշ մի բան... Այո, ուրիշ մի բան պիտի լինի այստեղ... Սակայն ի՞նչ... Իսկապե՞ս սեր:

Իսկ ի՞նչ պարտադիր է պարզել: Բանալին ձեռքիդ է, սպասիր ազդանշանին, որպեսզի գնաս և սիրո հազվագյուտ վայելքները ճաշակես աշխարհի ամենագեղեցիկ, ամենախելացի, այո՛, այո՛, նա չափազանց խելացի է և, վերջապես, ամենաազնվական կնոջ հետ... Բոլոր այն փառահեղ, հարուստ և նշանավոր տղամարդիկ կարող են նրա ձեռքը համբուրել, մինչդեռ ինքը... Եվ հետո կոմսուհին հիացած էր իմ բանաստեղծությամբ... Նա, որ բանաստեղծության նուրբ գիտակ է...

Հաճույքից և հպարտությունից կուրծքն ուռչում էր: Օրվա բոլոր տհաճություններն աչքի առջև փոշիացան: Հիվանդանոցի փոքրիկ պարտեզի նստարաններից մեկին էր նստած: Տեղից կտրուկ բարձրացավ, ուսանողական գլխարկը շպրտեց վեր, հետո միանգամից զղջաց ուրախության այս անպատշաճ պոռթկումի համար՝ ցավի և մահվան այս հաստատության առջև, ուստի առանց ետ նայելու շտապեց հեռանալ:

* * *

«Նախորդ զեկուցագրում ես արդեն հիմնավորապես հերքել էի պայթյունի գերմանական վարկածը, այսօր ևս մի քանի փաստեր իմացա, որոնք վերջնա-

կանորեն հաստատում են, որ գերմանացիք այդ գործողությանը չեն մասնակցել և կատարելապես անտեղյակ են դրա նախապատրաստական աշխատանքներից: Երեկ գիշեր Լոզան են ժամանել կայզերական բանակի հետախուզության հինգ բարձրաստիճան սպաներ: Նրանք եկել են Վո կանտոնի Աշխարհագրական ընկերության հրավերով, իբր, հազվագյուտ բույսեր պիտի փնտրեն Իվերդոն լճի մերձակայքում: Այդպիսի հրավեր, իսկապես ուղարկվել էր Յենայի համալսարան, սակայն գերմանացի աշխարհագետները և բուսաբանները գրել էին, որ նյութական դժվարությունների պատճառով, ուղևորությունը հետաձգում են եկող տարի: Պայթյունի հաջորդ օրն անսպասելի հեռագիր է եկել, որ միջոցները գտնվել են և որ տասը հոգիանոց խումբը ժամանում է Լոզան:

Ինչպես ասվեց, տասը հոգուց հինգը հետախուզության սպաներ են: Հինգն էլ հրետանու և բալիստիկայի մասնագետներ: Նրանք եկել են անհրաժեշտ տեխնիկայով զինված: Վաղն առավոտյան ուղևորվում են դեպի լեռները, պայթյունի մոտակա վայրերը:

Խմբի մյուս հինգ անդամների ինքնությունն առայժմ հնարավոր չեղավ պարզել: Նրանք Լոզան չեն մտել, այլ ուղղակի Նեֆչատել են գնացել, պայթյունի տեղանքին ավելի մոտիկ:

Գերմանական բանակի հետախուզության այս չափազանց աշխույժ հետաքրքրությունը հաստատում է նախապես հայտնված մեր ենթադրությունը, որ կիրառված զինամիջոցը թշնամու կենդանի ուժը և տեխնիկան զգալի տարածությունից ոչնչացնելու մեծ հնարավորություն է ստեղծում, հետևաբար հարձակողական հզոր զենք կարող է դառնալ հետևակի համար»:

«...Ինչո՞ւ ենք այդպիսի կարևորություն տալիս տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրությանը: Հարցն այն չէ միայն, թե որտեղի՞ց է արձակվել այդ հրթիռը, այլ, թե ինչպիսի պայմաններում այն հնարավոր կլիներ ավելի օգտակար կիրառել՝ դաշտայի՞ն, թե լեռնային: Շվեյցարական ոստիկանությունը, հավատարիմ իր տխմարությանը, արձակման վայրը փնտրել է սահմանամերձ լեռների լանջերին փռված անտառներում և, իհարկե, չի գտել, քանզի նման հրթիռն անտառային բացատից թողարկելը շատ վտանգավոր կլիներ. նախ, չի երևում թիրախը, երկրորդ՝ հրթիռը, մի փոքր շեղվելով, կարող էր դիպչել ծառերին և հենց այդտեղ պայթել:

Այսպիսով, տարրական տրամաբանությունն ասում էր, որ արձակման վայրը պետք է փնտրել բաց տեղանքում, որը և հայտնաբերվեց մեր մի քանի ժամվա ուշադիր փնտրտուքներից հետո: Այն գտնվում էր լեռան կատարից քիչ ցած, քարքարոտ և հարթ մի տեղում, որն, ինչպես երևում էր, խնամքով մաքրել և ավելի հարթեցրել էին՝ սարքելով հինգ մետր լայնությամբ և վեց մետր երկարությամբ մի փոքրիկ հրապարակ, որի կենտրոնում, անգամ հեռվից, հստակ երևում էր մոտավորապես երկու մետր շառավիղ ունեցող այրվածքը:

Այսպիսով, բացառվում է պայթյունի միջոցով արձակելու վարկածը՝, քանզի այդ դեպքում ոչ թե այրվածք կլիներ, այլ ճագարաձև փոս: Այրված հողից բա-

վականաչափ նմուշներ ենք ուղարկում անալիզի համար: Հուսանք, որ մանրակրկիտ զննումները կհուշեն, թե ինչպիսի վառելիք է օգտագործվել:

Ցավոք սրտի հնարավոր չէ պարզել, թե ինչպիսին է եղել արձակման սարքը, քանզի, ինչպես պետք էր ենթադրել, գործարկելուց հետո այն տարել են իրենց հետ: Ես հակված եմ ենթադրելու, որ հրթիռը փողի միջով չի ուղարկվել: Դա նշանակում է, որ մեծ շեղում կարող էր լինել նպատակակետից, որը և տեղի է ունեցել ամենայն հավանականությամբ:

Եթե սա մահափորձ լիներ մարքիզուհու դեմ, ինչպես գրում են ֆրանսիական թերթերը, ապա անարխիստները կարիք չունեին սահմանն անցնելու, հինգ կիլոմետր խորանալու չվեյցարական տարածքի մեջ և այնտեղից արձակելու մի հրթիռ, որը հայտնի չէ կհասնե՞ր մինչև դղյակ, թե ոչ: Նրանք պարզապես ատրճանակի մի զարկով կամ սովորական մահակով վերջ կդնեին մարքիզուհու կյանքին:

Սա, անկասկած, փորձարկում է եղել, և տեղանքը շատ հաջող է ընտրված. լեռան լանջի առջև ընկած տափարակը, որտեղ շինությունը մարքիզուհու դղյակն է: Նրանք, անշուշտ, ուրիշ թիրախ են ունեցել, սակայն, անկառավարելի հրթիռն ընկել է հենց այդ միակ շինության վրա: Առաջացած մեծ աղմուկը հազիվ թե փորձարկողներին հաճելի լինի, քանզի այն արժանացել է մի քանի մեծ տերությունների սևեռուն ուշադրությանը և վաղ թե ուշ ամեն ինչ հայտնի կդառնա, մինչդեռ նրանք, անպայման, կցանկանային իրենց գործն աննկատ անել...»:

«Ինչպես արդեն հայտնել էինք, "Դերձակը" կարողացել է հավաստի տեղեկություններ հայթայթել ռուսական, օսմանյան և հատկապես հայկական շրջանակներից: Պայթյունի ամենահավանական հեղինակները ռուսական սոցիալիստ-հեղափոխականներն էին, որոնցից շատերը ներկայումս գտնվում են Շվեյցարիայում: Սակայն բուլղարական աղբյուրներից պարզվեց, որ դեռևս մեկուկես ամիս առաջ այստեղ է գտնվել հայ հեղափոխական դաշնակցության հարվածային խումբը, որը մահափորձ է նախապատրաստում սուլթան Աբդուլ Համիդի դեմ: Այդ կուսակցության ղեկավարներից մեկը, մոտավորապես երկու տարի առաջ, զոհվեց ռումբի պայթյունից: Ինչպես երևում է, նրանք չեն հրաժարվել սուլթանին տեռորի ենթարկելու գաղափարից: Ահա ինչու զենքի մի նոր տեսակ են մշակում, որպեսզի հնարավորություն ունենան մեծ տարածությունից հասնել իրենց նպատակին, քանզի Աբդուլ Համիդն, առաջին մահափորձից հետո, ուշադիր հսկողության տակ է:

Հույս ունենք առաջիկա օրերում պարզել հետևյալը. Ա/ Ովքե՞ր են հարվածային խմբի անդամները, Բ/ դրանցից որո՞նք են հրթիռն ստեղծողները և փորձարկողները, Գ/ ներկայումս խումբը Շվեյցարիայո՞ւմ է, թե հեռացել է, և դեպի ո՞ւր:

Պետք է ենթադրել, որ նրանք պիտի շարունակեին իրենց փորձարկումները, սակայն, առաջին պայթյունի հարուցած աղմուկն, ըստ երևույթին, ստիպել է մի որոշ ժամանակ ձեռնպահ մնալ կամ ուրիշ երկիր անցնել, որը քիչ հավանական է, քանզի ժնևում նրանք բավական ամուր են հաստատված, «Դրոշակ»

անունով թերթ են հրատարակում և ծպտված անդամների հսկա մի ցանց ունեն ամբողջ Շվեյցարիայում...»

«Ռուսական բանակի գլխավոր շտաբի հակահետախուզության բաժնին ուղարկված ծածկագրից.

Ժնևի և Վո կանտոնների ոստիկանությունը պարզել է, որ Լոզանի և Ժնևի համալսարանների քիմիական լաբորատորիաներից որոշ նյութեր են անհետացել մեծ քանակությամբ: Նյութերի անվանումները և ճշգրիտ ծավալները խիստ գաղտնի են պահվում, սակայն մենք ստույգ հույսեր ունենք առաջիկա 48 ժամվա ընթացքում ամեն ինչ պարզել...»:

«Ի լրացումն ավստրո-հունգարական բանակի հետախուզության՝ Վիեննա ուղարկված որոշ տվյալների, հայտնում ենք, որ երկու համալսարանների քիմիական լաբորատորիաներից անհետացած նյութերի հետքերը տանում են դեպի կովկասահայ և մակեդոնացի ուսանողները...»:

* * *

Երկտողը, որ ստացավ առավոտյան փոստով, մտահոգիչ էր և անորոշ. «Ուզում եմ քեզ տեսնել, անպայման: Կսպասեմ այսօր: Եթե չես կարող, վաղն արի, բայց անպայման: Համբուրում եմ՝ Ալիս»: Ընդամենը այսքանը, և ոչ մի ամսաթիվ: Ձեռագրից երևում էր, որ գրված է հապճեպ, անհանգիստ, գուցեև նյարդային վիճակում: Դիմացը շարված գրքերի միջից վերցրեց Սամենի հատորը և առաջին էջի ընծայագիրը համեմատեց երկտողի հետ: Երկուսն էլ նույն մարդն էր գրել, ձեռագրերի տարբերությունը սակայն աչք ծակող էր: Ի՞նչ էր պատահել նրան, հոգեկան ի՞նչ ծայրահեղ վիճակում էր հայտնվել, որ շտապել էր այսպիսի անկանոն ձեռագրով լուր ուղարկել, հրավիրել, մոռանալով նշել ամսաթիվը... Մոռանալո՞վ, թե կարևոր չհամարելով... Ուրեմն, իրեն սպասում է ամեն վայրկյան... Սա ժամադրություն չէ, սա օգնության ճիչ է, խեղդվողի աղաղակ... Նա օգնության կարիք է զգացել հենց գրելու պահին... Սակայն, տարօրինակ է, որքան ավելի հուսահատական է լինում վիճակը, այնքան ավելի անորոշ է հնչում օգնության կանչը... Մանավանդ տարածության վրա...

Ուրիշ հանգամանք էլ կար, որ անհանգստացրեց նրան և խորացրեց անորոշությունը. ծրարն ուղարկված էր երկու օր առաջ, լճի մյուս ափից՝ Էվիան-լը-Բենից: Հիմա որտե՞ղ է: Վերադարձե՞լ է, թե առաջարկում է մեկ ափից մյուսն անցնել: Սակայն ո՞ր հասցեով, ո՞ր օրը, ո՞ր ժամին... Իսկ գուցե արդեն վերադարձել է...

Եթե մեկը խուճապի մեջ է, ապա մյուսն ամեն գնով պետք է պահպանի սառը դատողությունը, մանավանդ որ հիմա, առավոտ կանուխ, խոսք լինել չի կարող նրա մոտ գնալու մասին:

Դասերն ավարտվելուն պես շտապեց առանձնատուն: Երկուսն անց կես էր: Այդ ժամին հյուր գնալն անպատշաճ չէր: Մանավանդ եթե մտերիմ ես, եթե

հրավեր ես ստացել, որտեղ ժամը նշված չէ, ուրեմն ինքդ պիտի որոշես, թե երբ... Եվ մանավանդ եթե բանալիներ ունես գրպանումդ:

Ի դեպ: Առաջին անգամ պիտի օգտվեր դրանցից, և չգիտեր, թե երկուսից որն ավելի պատշաճ կլիներ գործածել: Որոշեց պարզապես չքամուտքի զանգի կոճակը սեղմել:

Դուռը բացեց Իլոնան: «Երանի մի քիչ շուտ եկած լինեիք, - ասաց նա: - Տիրուհին քիչ առաջ դուրս եկավ: Սակայն խնդրեց, որ եթե հայտնվելու լինեք, սպասեք իրեն...»: Նա դուրս եկավ հյուրասրահից և քիչ հետո հայտնվեց թեյի սպասքը ձեռքին:

- Դուք միասի՞ն էիք Էվիանում:

Հարցը, հավանաբար, անսպասելի էր աղջկա համար: Նա տարօրինակ հայացքով նայեց Հյուրին, առանց շտապելու թեյ լցրեց և, թեթևակի ժպտալով, ասաց.

- Ոչ, այս անգամ առանց ինձ գնաց:

Անկե՞ղծ էր... Բոլոր դեպքերում իմաստ չուներ նամակի մասին խոսել նրա հետ:

- Տիկին կոմսուհին կարդադրեց հայտնել, որ եթե ցանկանաք, կարող եք իր սենյակում սպասել... Փարիզից մի քանի նոր գրքեր է ստացել, մտածեց, որ կհետաքրքրեն ձեզ:

Իսկապես անհեթեթ էր իր ներկայությունն այս հյուրասրահում՝ մեն-մենակ, առանց տանտիրուհու: Ուստի թեյը խմելով, շտապեց օգտվել սիրալիր առաջարկից:

Զնայած արևոտ օրվան, կոմսուհու սենյակում կիսախավար էր: Պատճառը փակ արտափեղկերն էին, որոնց բարակ ճեղքերից աղեղների պես ներս թափանցող լույսի շողերն ավելի էին ընդգծում խավարը: Մի պահ ցանկացավ գոնե փեղկերից մեկը բացել, սակայն գտավ, որ դա, ի վերջո, տանտիրոջ իրավունքն է: Բացի այդ, կիսախավարը գրավիչ մի խորհրդավորություն ուներ, որը չուզեց ցրել:

Գրասեղանին, իսկապես, գրքերի մի կույտ տեսավ. վեպեր, պատմվածքներ, բանաստեղծություններ, փիլիսոփայական տրակտատներ... Ե՞րբ է հասցնում այս ամենը կարդալ: Բանաստեղծական ժողովածուներից մեկը վերցրեց, փորձեց լույսի չեչտակի շողերի տակ կարդալ, սակայն դիրքը շատ անհարմար էր, բացի այդ չէր կարողանում կենտրոնանալ:

Ետուառաջ քայլեց սենյակում, կանգ առավ մահճակալի մոտ, վարագույրը մի կողմ տարավ և նկարը դիտեց, որը կիսախավարի մեջ ավելի գրավիչ էր թվում...

Ընդարձակ մահճակալը սենյակի անդորը կիսախավարի մեջ քաշում էր, առաջարկում, պարզապես, առանց հանվելու տարածվել վրան և մտորել:

Այդպես էլ արեց: Եվ անմիջապես զգաց, թե ինչպես խառնիխուռն մտքերն ու տպավորություններն անհետացան, ասես տաք թրջոցի պես մի բան հաճելիորեն դրվեց ճակատին: Ամեն ինչ խառնվեց իրար, չնկատեց, թե որտեղ վերջացավ իրականությունը և ինչպես սկսվեց երազը... Անիրականը թվում էր ավե-

լի իրական, իսկ այն, ինչ շոշափելի էր ու հաստատուն, ակնթարթի մեջ անէանում էր, ասես մատդ պաղած մոխրի մեջ մտցնեիր: Հետո իրեն տեսավ կոմսուհու հետ՝ երկուսն էլ մերկ, նավակի մեջ կանգնած: Նավավար չկար, հոսանքը պարզապես տանում էր իրենց... Իսկ նեղ գետակի ափերին խռնված էր բարեկիրթ ու հարգարժան մարդկությունը՝ տոնական զգեստները հագին: Բոլորը վրդովված էին: Տիկնայք իրենց հովանոցներն էին ճոճում, իսկ տղամարդիկ՝ ձեռնափայտերը: Վրդովմունքի խոսքերը դարձան փողոցային հայհոյանքներ, իսկ ազնվազարմ դեմքերը՝ խուժանի ռեխ: Ասես բոլորն, իրենցից զատ, ուրիշ հոգս չունեին, և այդ հոգսն էլ իրենց երկուսին վերացնելն էր:

...Երազն ընդհատվեց: Ինչ-որ մեկն արտափեղկերն էր բացում: Մետաղական չոր աղմուկն էր արթնացրել նրան՝ վերադարձնելով իրականության: Ինչո՞վ պիտի վերջանար այդ տագնապալից երազը, մինչև ո՞ւր պիտի հասցներ նավակը:

Նկատեց, որ արտափեղկերը բացելուց հետո սենյակը չլուսավորվեց: Ուրեմն, արդեն երեկո՞ է... Մի՞թե այդքան երկար է տևել իր քունը և ի՞նչ խորհուրդ ուներ Մորփեոսն իրեն հայտնելու, որ այդքան երկար պահեց իր հպատակության ներքո: Ինչ-որ մեկը քայլում էր սենյակում, արտափեղկերը բացելուց հետո հիմա վարագույրներն էր փակում, ինչ-որ առարկաներ տեղից-տեղ դնում: Ո՞վ էր, Իլոնա՞ն էր, որ սենյակը կարգի էր բերում, թե գուցե ինքը...

- Ես գիտեմ, որ այդտեղ ես, - լսվեց Ալիսի ձայնը: - Դուրս մի արի, այդպես ավելի լավ է... Կարծես և՛ ներկա ես, և՛ բացակա: Հիմա այս փոքրիկ ճեղքն էլ կփակեմ, որպեսզի քեզ բոլորովին չտեսնեմ: Իսկ հետո մի քիչ կզրուցենք: Դու չխոսես, խնդրում եմ, դու չկաս: Պարզապես, լսիր ինձ: Ինչի՞ մասին պիտի խոսենք... Չգիտեմ ինչի մասին, մի՞թե դա կարևոր է, թե ինչ կխոսենք իրար հետ... Կարևորը մեր հանդիպումն է... Կարևորը, որ կանք աշխարհում, թեկուզ այսպես, իրարից բաժանված... Հա, դու տեսա՞ր այս գրքերը... Հատկապես մեզ համար եմ պատվիրել, որպեսզի երեկոները նստենք իրար դիմաց և վայելենք այս հոյակապ տողերը... Ավելի մեծ երջանկություն չեմ ուզում աշխարհից... Ի՞նչ էի ասում... Այս գրքերը... Հիմա քեզ համար բանաստեղծություններ կկարդամ... Այսինքն՝ մեզ համար...

Նա լույսը վառեց և, ըստ երևույթին, սեղանին դրված գրքերից զատեց մեկը:

- Ահա լսիր, թե ինչ հոյակապ բանաստեղծություն է.

Den, Herr, die grossen Städte sind
verlorene und aufgelöste;
wie Flucht vor Flammen ist die gröste, -
und ist kein Trost, dass er sie tröste,
und ihre kleine Zeit verrint[1].

- Հա՛, ես մոռացել էի, որ դու գերմաներեն չգիտես... Ուրեմն, ավելի լավ է ֆրանսերեն կարդամ, ահա այս մեկը, հենց առաջին պատահած էջը...

Dans le vieux parc solitaire et glacé
Deux formes ont tout à l'heure passé.

Leurs yeux sont morts et leurs lèvres sont molles,
Et l'on entend à peine leurs paroles.

Dans le vieux parc solitaire et glacé
Deux spectres ont évoqué le passé.

- Te souvient-il de notre extase ancienne ?
- Pourquoi voulez-vous donc qu'il m'en souvienne ?

- Ton cœur bat-il toujours à mon seul nom ?
Toujours vois-tu mon âme en rêve ? - Non.

- Ah ! les beaux jours de bonheur indicible
Où nous joignions nos bouches ! - C'est possible.

Qu'il était bleu, le ciel, et grand, l'espoir !
L'espoir a fui, vaincu, vers le ciel noir.

Tels ils marchaient dans les avoines folles,
Et la nuit seule entendit leurs paroles[2].

- Ճանաչեցի՞ր, Վեռլենն է... Շատ է տխուր... Բայց հոյակապ է... Ահա, այս մեկը լսիր.

J'ai trois fenêtres à ma chambre:
L'amour, la mer, la mort,
Sang vif, vert calme, violet.

O femme, doux et lourd trésor !

Froids vitraux, cloches, odeurs d'ambre,
La mer, la mort, l'amour,
Ne sentir que ce qui me plaît...

Femme, plus clair que le jour !

Par ce soir doré de septembre,
La mort, l'amour, la mer,
*Me noyer dans l'oubli complet...**

Femme ! femme ! cercueil de chaire ![3]

---

* *Այս բանաստեղծությունների հայերեն թարգմանությունները կարդալ 144-145 էջերում:*

Ընթերցանությունն անսպասելի կտրվեց և լսվեց տղամարդու ծանոթ մի ձայն, որ գերմաներեն ասաց.

- Ի՜նչ հետաքրքիր է մենության պահերին բանաստեղծություն կարդալ... Ես էլ, պատանի տարիներիս սիրում էի այդպես փակվել սենյակում և բարձրաձայն արտասանել...

Մոտեցող ոտնաձայն լսվեց:

- Ուրեմն մի ժամանակ դուք կարգին մարդ եք եղել... Սակայն ինչպե՞ս հայտնվեցիք՝այստեղ, ես Իլոնային կարգադրել էի այսօր հյուր չընդունել:

- Իլոնան մեղավոր չէ, նա չափազանց ճշգրիտ կատարեց ձեր հրահանգը և ինձ ներս չթողեց:

- Ուրեմն, պետք էր ենթարկվել նրան՝ ներս չմտնել և հատկապես այստեղ չբարձրանալ...

Մի պահ լռություն տիրեց, որին հաջորդեց տղամարդու պատասխանը.

- Ես ենթարկվեցի... Սակայն, երբ քայլում էի զուգահեռ փողոցով, ձեր ուրվագիծը տեսա վարագույրի ետևում և հասկացա, որ դուք տանն եք...

Ռուբենը հիմա ճանաչեց տղամարդու ձայնը. դա Յուրգեն Կլաուսն էր... Ինչպիսի՜ լկտիություն, ինչպե՞ս է համարձակվել ետնամուտքից մտնել մի տուն, որի շքամուտքից նրան քաղաքավարի վռնդել են... Հիշեց, որ անցած անգամ կոմսուհին ոչ մի խոսք չփոխանակեց Կլաուսի հետ:

- Եվ այդ գյուտն անելուց հետո որոշեցիք անկոչ հյուրի պես իմ տունը գրոհե՞լ... Հը՜մ, չգիտեի, որ դուք պոեզիայի սիրահար եք... Ես հիմա կկարգադրեմ Իլոնային, որ ձեզ օգնի դուրս գալ այստեղից:

- Կարիք չկա նրան կանչել, տիկին, նա նույնիսկ չգիտի, որ ես այստեղ եմ:

- Հապա ինչպե՞ս մտաք:

- Ձեր սքանչելի պարտեզի խորքում մի գողտրիկ դռնակ կա՝ բաղեղի տակ թաքնված... Ես հանգիստ բացեցի, մտա ներս, այնուհետև նույն բանալիով բացեցի վարի դուռը...

- Շատ հետաքրքիր է... Եվ այդ բանալին, իհարկե, դուք գտաք փողոցում...

- Դա կարևոր չէ, տիկին, ես կուզեի...

- Զգիտեմ, թե դուք ինչ կուզեիք, սակայն ես կուզեի, որ այդ բանալին հենց հիմա հանձնեք ինձ և բարեհաճեք դուրս գալ այստեղից... Եվ աշխատեք այս հասցեն ընդմիշտ մոռանալ:

- Համբերեք տիկին, շատ չէ, մի տասը րոպե հետո ես դուրս կգամ և բանալին էլ կհանձնեմ ձեզ... Բայց ինչ վերաբերում է հասցեին, ապա այդ մեկը խոստանալ չեմ կարող, քանզի, ինչպես ինձ է թվում, մենք միասին դեռ շատ անելիքներ ունենք...

- Դա ինձ շատ կզարմացներ պարոն, հաշվի առնելով հատկապես ձեր որոշ հակումները, ինչի մասին շատ է խոսվում քաղաքում...

- Տիկին, ես ձեր սիրտը նվաճողների շարքում չեմ, իմ նպատակներն ուրիշ են՝ գործնական... Ես շատ որոշակի առաջարկներ ունեմ, որոնք ենթադրում եմ, պիտի հետաքրքրեն ձեզ:

- Պարոն, դուք ղառանցում եք...

- Ամենևին, տիկին, ես շատ գործնական և շատ ազնիվ առաջարկներ ունեմ:

- Դուք շատ տարօրինակ անձնավորություն եք, ես ձեզ մերժում եմ ընդունել, դուք տուն եք մտնում ետնամուտքից... և ինչո՞ւ, որպեսզի գործնական առաջարկներ անեք ինձ... Ասեք, լսում եմ ձեզ, միայն թե, խնդրում եմ, կարճ կապեք...

- Խոսքը վերաբերում է... Ինչպե՞ս ասեմ... Այն ցավալի միջադեպին, որ մի քանի օր առաջ տեղի է ունեցել կազինոյում...

Լռություն տիրեց: Ռուբենը լսեց, թե ինչպես կոմսուհին մոտեցավ սեղանին, գիրքը դրեց, ծխախոտ վառեց և դիմեց անկոչ հյուրին.

- Մեծարգո պարոն, այդպիսի ցավալի դեպքեր, ինչպես բարեհաճեցիք ասել, կազինոյում ամեն օր են պատահում... Ես ոչ առաջինն եմ, ոչ էլ վերջինը... Ինչո՞ւ հատկապես իմ միջադեպը մտահոգեց ձեզ...

- Այո, դուք առաջինը չեք և վերջինը չեք, ինչպեսև ձեզ հետ սա առաջին անգամը չէ... Եթե չեմ սխալվում, անցյալ տարի ևս նման միջադեպ եղավ... Լսեցի, որ մի գիշերվա մեջ հարյուր հազար եք կորցրել...

- Այո, կարծեմ եղավ նման մի բան... Այդպես է... Կյանքը խաղ է, մի տեղ կորցնում ենք, մեկ ուրիշ տեղ՝ շահում...

- Ինչո՞ւ չէ, հետաքրքիր է, մանավանդ եթե կան վեհանձն մարդիկ, որոնք պատրաստ են վճարել ձեր պարտքերը:

- Ձսպեք ձեր լեզուն, պարոն, և նկատի ունեցեք, որ կան նաև ուրիշ վեհանձն մարդիկ, որոնք ձեզնից հաշիվ կպահանջեն այդ բառերի համար:

- Ներող կլինեք, տիկին, ձեզ վիրավորելու ցանկություն չունեի, մանավանդ որ բարի մտադրությամբ եմ եկել ձեզ մոտ... Խնդրում եմ, ուշադիր լսեք ինձ: Ես իմացա, որ այս անգամ անհամեմատ ավելի մեծ գումար եք կորցրել... Երեք հարյուր հազար... Թույլ տվեք... Խնդրում եմ, լսեք մինչև վերջ... Իմացա նաև, որ բարոն Ռոզենֆելդը հրաժարվել է այս անգամ վճարել...

- Որտեղի՞ց իմացաք, այդ մասին միայն ես գիտեմ:

- Ես դա գիտեի մինչև ձեր իմանալը, սակայն դա չէ կարևորը, քանզի, եթե այդ երեք հարյուր հազարին ավելացնենք ձեր մյուս պարտքերը, ապա հսկայական մի գումար կստացվի:

- Ինչո՞ւ եք այդպես մանրակրկիտ զբաղվում իմ անձնական գործերով, ո՞րն է ձեր նպատակը:

- Մեր նպատակն է ձեզ օգնել, ձեզ դուրս բերել այս ծանր կացությունից, որը կարող է չափազանց տխուր ավարտ ունենալ:

- Ենթադրում եմ, որ դա անշահախնդիր չի լինելու:

- Գրեթե անշահախնդիր... Դուք կազատվեք ձեր բոլոր պարտքերից, փոխարենը կօգնեք մեզ, այսպես ասած, կհամագործակցեք մեզ հետ:

- Ո՞ւմ անունից եք խոսում, պարոն:

- Կայզերական բանակի գլխավոր շտաբի անունից:

- Որքան հասկացա, դուք առաջարկում եք, որ ես ձեր լրտեսը դառնամ...

- Ես դա կանվանեի հայրենասիրական ծառայություն: Դուք Ավստրո-

Հունգարիայի քաղաքացի եք, ձեր երկիրը Գերմանիայի դաշնակիցն է, այնպես որ դուք ձեր պարտքն եք կատարելու Հայրենիքի հանդեպ... Կարծում եմ դա ավելի ազնիվ է, քան պարտքերի տակ ճզմված և խայտառակված վերադառնաք Բուդապեշտ... Ի դեպ, ետ դարձի տոմսի համար բավականաչափ դրամ ունե՞ք... Տիկին, դուք թակարդն եք ընկել, և ես չեմ տեսնում, թե ինչպես պիտի դուրս գաք:

- Եվ ի՞նչ պիտի անեմ ձեր անչահախնդիր օգնության դիմաց:

- Շատ բան չենք խնդրելու: Առայժմ ընդամենը երկու փոքրիկ ծառայություն: Առաջինը կապված է ձեր բարեկամներից մեկի՝ այն հայ ուսանողի հետ...

- Ի՞նչ առնչություն ունի այդ տղան կայզերական բանակի հետ:

- Ոչ մեկ առնչություն, տիկին, սակայն կարող է մեզ անգնահատելի տեղեկություններ հայտնել:

- Ձեմ.հասկանում, ի՞նչ տեղեկություն կարող է տալ բժշկականի սովորական ուսանողը, որն ամբողջ օրն անց է կացնում համալսարանում կամ դիահերձարանում:

- Ավելի հստակ ասեմ ձեզ: Վերջին անգամ, երբ այստեղ էի, վարը, եթե հիշում եք, բավական երկար խոսվեց այն առեղծվածային պայթյունի մասին: Մեր ունեցած տվյալների համաձայն, այդ պայթյունը Թուրքիայից եկած հայ հեղափոխականների գործն է... Նրանք մահափորձ են պատրաստում իրենց սուլթանի դեմ: Մի քանի անգամ արդեն ձախողել են: Հիմա, ինչպես երևում է, որոշել են նոր, ավելի զորեղ միջոց կիրառել:

- Ուրեմն վեհափառ սուլթանի կյանքն այդքան մտահոգում է կայզերական բանակին:

- Նրա կյանքն առանձնապես շատ չի մտահոգում մեզ, չնայած սուլթանը մեր կայզերի բարեկամն է... Մեզ ավելի շատ հետաքրքրում է այդ նոր զենքը, որը կարող է չափազանց օգտակար լինել մեր և ձեր բանակների համար, ուստի դրան առնչվող ամեն մի մանրամասնը մեծ կարևորություն է ներկայացնում. զենքի կառուցվածքը, ովքե՞ր են պատրաստել, որտե՞ղ, ինչպիսի՞ նյութերից... Մի խոսքով, ամեն ինչ, անգամ ամենաաննշան մանրամասնը:

- Սակայն ի՞նչ կարող է իմանալ այդ ուսանողը, որքան գիտեմ նա ոչ մի կապ չունի հեղափոխականների հետ, արվեստագետ երիտասարդ է, իսկական բանաստեղծ:

- Ես գիտեմ, որ կապ չունի դրանց հետ, սակայն մեծ հեղինակություն է վայելում հայ ուսանողների շրջանակում, վերջերս հիմնված «Արմենիա» ընկերության նախագահն է և, այդ գործի բերումով, շփվում է Շվեյցարիայում գտնվող բոլոր հայերի հետ, այնպես որ, չի կարող պատահել, որ նա որևէ բան լսած չլինի... Ի դեպ, ես տեղեկություններ ունեմ, որ օսմանյան գաղտնի ծառայություններն ուշադիր հետևում են այդ երիտասարդին, նրանք, անշուշտ, մի բան գիտեն:

- Շնորհակալ եմ, որ ասացիք, պետք է, ուրեմն, զգուշացնել այդ տղային:

- Կարիք չկա, քանզի նրա կյանքին ոչ մի վտանգ չի սպառնում:

- Այդ դեպքում ինչո՞ւ են նրան հետևում...

- Բավական է, որ աչքի ընկնող անձնավորություն լինես:

- Եվ դուք կարծում եք, որ նա իր հեղափոխական ընկերներին կմատնի՞... Ես համոզված եմ, որ նա կատարելապես հեռու է այդ պատմությունից, սակայն, եթե նույնիսկ իմանա, միևնույն է, ոչինչ չի ասի...

- Տիկին, պետք չէ, որ դուք նրան հարցաքննեք, կարծում եմ հրաշալի հասկանում եք, թե ինչպես պետք է խոսել այդ մասին... Կանացի սովորական հետաքրքրասիրություն, ոչ ավելին... Կարծեմ անցած անգամ դուք սկսեցիք այդ զրույցը՝ բազմաթիվ հյուրերի ներկայությամբ... Ես տեսնում եմ, նա սիրահարված է ձեզ... Անպայման կուզի հաճոյանալ... Մի՞թե ես պիտի սովորեցնեմ ձեզ...

- Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ, արդեն բավական բաներ սովորեցրիք այս մի քանի րոպեի ընթացքում... Սակայն դուք, կարծեմ, երկու ծառայություն էիք սպասում ինձնից... Ո՞րն է երկրորդը:

- Երկրորդը, կարծում եմ, անհամեմատ ավելի դյուրին է: Հուսամ, չեք մոռացել Օսման բեյին, այն համակրելի թուրք կալվածատերն Ադանայից, որի հետ հյուր էի եկել ձեզ:

- Այն.ողորմելի կալվածատե՞րը, նա է՞լ դարձավ կայզերական բանակի ուշադրության առարկան...

- Որպես կալվածատեր նա, իսկապես, ողորմելի է, սակայն Բարձր Դուռն Օսման բեյին տվել է մի արտոնություն, որով նա մեզ համար դարձել է գրեթե նույնքան կարևոր անձնավորություն, որքան ինքը՝ սուլթանը. առանց նրա ստորագրության անգամ մեկ ֆունտ բամբակ չեն կարող արտահանել կայսրությունից...

- Պարոն, դուք հավանաբար այսօր որոշել եք ինձ հիմնավորապես զարմացնել... Հիմա էլ բամբակը խնդիր դարձավ:

- Որպեսզի պատկերացնեք իրավիճակի լրջությունը, ձեզ ընդամենը մեկ փաստ կբերեմ. հայտնի է, որ ֆրանսիացիք բամբակի խնդիր չունեն: Նրանց գաղութների բերքը երկու անգամ ավելին է, քան Օսմանյան ամբողջ կայսրությունում հավաքածը, սակայն հիմա, այս օրերին, ֆրանսիական բանակի ներկայացուցիչները, Լոզանի կանտոնալ բանկի միջոցով բանակցություններ են վարում Օսման բեյի հետ, որպեսզի առաջիկա տասը տարվա ամբողջ բերքը գնեն:

- Հա՞, շա՜տ հետաքրքիր է, ես չգիտեի, որ ֆրանսիացիք բամբակի սիրահար են:

- Ոչ, ֆրանսիացիք բամբակի սիրահար չեն, պարզապես նրանք ուզում են, որ մեր զինվորներն առանց համազգեստի մնան:

- Եվ դուք գտնում եք, որ հենց ե՞ս պետք է գութ առաջացնեմ այդ թուրքի մեջ՝ մերկ.ու տկլոր գերմանական զինվորների հանդեպ:

- Մեր զինվորները մերկ չեն, սակայն եթե չուզեք այդ թուրքի ուշադրությունը շեղել ֆրանսիացիներից, ապա շատ հավանական է, որ մի քանի տարի հետո մեր բանակը համազգեստ չունենա... Կրկնում եմ, տիկին, սա չափազանց դյուրին մի բան է ձեզ համար... Առաջինն, ընդունում եմ, դժվար գործ է, քանզի Ռուբենը գաղափարի մարդ է, չափազանց խելացի է, բացի այդ համակրանք ունի այդ հեղափոխականների հանդեպ, մինչդեռ թուրքը միամիտ գավառացի է

և երկու աստվածություն ունի. վայելքն ու փողը...

- Պարո՛ն, անմիջապես հեռացեք այստեղից, - գոռաց Ալիսը:

- Թույլ տվեք, տիկին... Երբ խոսում էի Ռուբենի մասին, ձեր դեմքին զզվանքի արտահայտություն չտեսա... Եվ դուք չընդվզեցիք, չվոնդեցիք ինձ... Ես հասկանում եմ, որ ձեզ սիրահարված երկու տղամարդկանցից, նախընտրում եք առավել հաճելիին, սակայն, տիկին, այն, ինչ առաջարկում ենք մենք, աշխատանք է, ոչ թե հաճելի ժամանց... Ուստի, որպեսզի կարողանանք իրավիճակն առավել սթափ գնահատել և ճիշտ քայլեր անել, ես կուզեի ևս մի տհաճ լուր հայտնել, որը վաղ թե ուշ պիտի իմանայիք... Ոչ մի դեպքում չէի ուզի, որ դա ինձնից լսեիք, սակայն ստիպում եք...

- Կարող եք հանգիստ ասել, արդեն սովոր եմ ձեզնից միայն գարշելի բաներ լսել:

- Եթե չեմ սխալվում, այսօր հեռագիր ուղարկեցիք Բուդապեշտ՝ ձեր ազգականներին... Կարծեմ, դրամ եք խնդրել... Սակայն, ըստ երևույթին, նրանք ի վիճակի չլինեն ձեզ օգնելու: Հավանաբար, չգիտեք, որ ձեր ընտանիքը սոսկալի կացության մեջ է հայտնվել՝ ձեր սիրելի զարմիկի՝ Իշտվանի պատճառով...

- Եթե դա է սոսկալի կացությունը, կարող եք չշարունակել, այդ տղան միշտ տհաճ պատմությունների մեջ է եղել... - կարծես շինծու անհոգությամբ ասաց կոմսուհին:

- Այո, իրավացի եք, սակայն այս մեկը գերազանցում է նախորդ բոլորը... Տղան հսկայական գումար է կորցրել թղթախաղում, գրեթե նույնքան, որքան դուք... Խնայելով ձեր նյարդերը, չեմ ուզում ներկայացնել նրա անձին անմիջականորեն առնչվող մի քանի սկանդալների մանրամասները... Այնպես որ, հույսներդ կտրեք... Բուդապեշտից դուք ոչինչ չեք ստանա:

Լռություն տիրեց: Ինչ-որ մեկը հանգիստ ետուառաջ էր անում սենյակում: Դժվար էր ասել, տղամա՞րդը, թե տանտիրուհին: Մոտ մեկ րոպե տևած ընդմիջումից հետո երկխոսությունը շարունակվեց.

- Ես հասկանում եմ ձեզ, տիկին, ես նույնպես ազնվական եմ...

Այս հայտարարությանն անմիջապես հաջորդեց կոմսուհու քմծիծաղը, սակայն տղամարդն անվրդով շարունակեց.

- Մտածեք, տիկին, սակայն ոչ երկար... Ժամանակը սուղ է, դուք էլ, մենք էլ շտապում ենք... Եվ լավ հիշեք, բավական է ասեք «այո», որպեսզի ակնթարթի մեջ լուծվեն ձեր բոլոր խնդիրները, և դուք նորից կշարունակեք ձեր անհոգ ու երջանիկ կյանքը...

- Ձեր հսկողության ներքո:

- Ես ուրիշ կերպ կասեի. մեզ հետ միասին, բարձրացող Գերմանիայի և ձեր երկրի հետ միասին... Փայլուն ապագա է սպասվում մեզ բոլորիս, և դուք, տիկին, այդ ապագան կերտողներից մեկն եք լինելու... Մտածեք, տիկին, լրջորեն մտածեք:

- Հեռացեք, պարոն ազնվական... - լսվեց կոմսուհու պարտասած ձայնը:

- Վաղը չէ մյուս օրը, կեսօրից հետո, կուզեի ձեզնից լսել վերջնական պատասխանը...

- Պատասխանն արդեն ունեք, ողորմած պարոն, ես ձեզ հստակ ասացի. հեռացե՛ք այստեղից և շատ կուզեի այլևս ձեզ չտեսնել:

- Տիկին, մի շտապեք, դուք բավական ժամանակ ունեք հանգիստ խորհելու և ճիշտ վճիռ ընդունելու:

Տղամարդը եկել կանգնել էր իր կողքին, վարագույրից այն կողմ: Հազիվ մի կես մետր էր նրանց բաժանում: Նրա շնչառությունն էր լսում, հագուստի շրշյունը, իսկ հիմա, ամենայն հավանականությամբ, մատները ճթճթացրեց (հոռի, ռամկական մի սովորություն, որը բնավ վայել չէ ազնվականին և կայզերական բանակի սպային) և վճռական քայլեց դեպի դուռը:

- Ի դեպ, տիկին, ձեր ձախ դարակում կարծեմ փոքրիկ մի ատրճանակ կա: Ինձ թվում է, որ դրա կարիքը պիտի չունենաք, քանզի եթե ընդունեք մեր առաջարկը, ապա կլինեք աշխարհի ամենահզոր բանակի պաշտպանության ներքո, իսկ մերժելու դեպքում դա, առավելևս, ձեզ չի փրկի: Մտածեք, տիկին, ժամանակը սուղ է... Իսկապես փայլուն ապագա է սպասվում մեր երկրներին... Շատ բան կկորցնեք, եթե հրաժարվեք:

Այլևս ոչինչ չլսվեց, ո՛չ ծածկվող դռան թեթևակի ճռռոցը, ո՛չ առաջին հարկ իջնող տղամարդու ոտնաձայնը, ո՛չ ետնամուտքի դռան չխկոցը... Միայն թվաց, թե դեպի պարտեզի խորքը տանող արահետի մանրիկ խճերը խշրտացին: Եվ ուրիշ ոչինչ: Նորից երեքով մնացին այս խորհրդավոր առանձնատանը: Ինքը, Իլոնան, որը հիմա, հավանաբար քնած էր և կոմսուհին, որը սենյակո՞ւմ էր արդյոք: Այո, նա կարծես կոնյակ լցրեց, հետո լուցկին չխկաց և ծուխն անմիջապես լցվեց սենյակը: Երանի վարագույրը քաշեր և տեսներ, որ մեկ ուրիշն է նստած այնտեղ, անծանոթ մի կին, իսկ կոմսուհին չկա, այստեղ չի եղել, գոյություն չի ունեցել ընդհանրապես... Ո՛չ, ո՛չ, ավելի լավ է հիմա հեռավոր ու անմարդաբնակ կղզու վրա լիներ կամ էլ գոնե իր ծննդավայրում, մենակ, լողափին, ավազի վրա պառկած...

Սակայն տեղնուտեղն ամոթ զգաց, որ ջայլամի պես գլուխը թաքցնում է ավազի մեջ, որ խուսափում է չարիքին շիտակ ու անհողդողդ նայել... «Սակայն ի՞նչ կարող ես անել, այդ հսկա, այդ անկերպարան, այդ մարդակուլ մեքենայի դեմ... Ո՞վ ես դու... Մի ազազուն էակ, մի հյուլե... Մի՞թե կկարողանաս փրկել կոմսուհուն...»:

Այս քստմնելի, այս դավաճան ձայնը հնչեց իր ներսից: Եվ նորից ամաչեց, որ հոգու մութ անկյունում ծվարած, տարիներ շարունակ հետը քարշ է տվել այդ անարի, այդ մորթապաշտ կակղամորթին, որը վտանգի հեռավոր ներկայությունն անգամ զգալով, կրիայի պես քաշվում է պատյանի մեջ, չմտահոգվելով բնավ, թե ինչ եղավ մյուսների հետ...

Անկոչ հյուրի մեկնելուց բավական ժամանակ էր անցել: Դժվար էր ասել որքան: Լուցկին նորից չխկաց և սենյակը նորից ծխով լցվեց:

- Գերմաներեն գիտե՞ս, - վերջապես լսվեց կոմսուհու ձայնը:

Ամեն ինչ կախված էր այս հարցի ճիշտ պատասխանից: Այսինքն՝ ոչ թե ճիշտ, այլ համոզիչ պատասխանից... Ավելի շուտ, այն պատասխանից, որը հիմա կուզեր լսել նա՝ շատ լավ իմանալով, որ դա սուտ է, անհամոզիչ, բայց հիմա

պետք է հատկապես այդ պատասխանը տալ... Կոմսուհին, մի՞թե չգիտի, որ արդեն երկու տարի է, ինչ ուսանում է մի երկրում, որտեղ գերմաներենը պետական լեզուներից մեկն է... Սակայն, եթե հարցնում է, ուրեմն, ուզում է, որ չիմանամ:

- Ոչ, Ալիս... Դու գիտես, որ ես գերմաներեն չեմ հասկանում:

- Այո, իսկապես, մոռացել էի, որ Բուդապեշտի կայարանում քեզ գերմաներեն դիմեցի, և դու ապշած նայում էիր ինձ... Մինչդեռ քեզ այնպիսի՛ բառեր ասացի...

- Կարո՞ղ ես հիմա կրկնել:

- Կարող եմ, բայց նույնը չի լինի, այդ պահն արդեն գնաց... Մնա՛ այդտեղ... Դուրս մի արի... Եթե ուզում ես ինձ տեսնել, նայիր իմ նկարին...

Ուրեմն, նա ուզում է, որ ինքը «չհասկանա» գերմաներեն, որ չիմանա, թե ինչպիսի ստորացման ենթարկվեց, թե ինչպես հայտնվեց մեն-մենակ անդունդի եզրին, կյանքի և մահվան սահմանագծին... և ուզում է, որ «չհասկանա» հենց այն պահին, երբ կարոտ է նվիրված բարեկամի օգնության, երբ այդ բարեկամը կողքին է, բավական է կես խոսք ասի, որպեսզի քաջալերի նրան... Սակայն նա ամփոփվում է, փակվում իր ցավի մեջ: Նա գիտի, որ հասկացել եմ, սակայն չի ուզում ստորացված լինել իմ առջև, իմ ներկայությամբ... Ինչպե՞ս կխոսեր Կլաուսի հետ, եթե ինքն այստեղ չլիներ... Ո՛չ, ոչ մի դեպքում չէր համաձայնի նրանց գաղտնի գործակալը դառնալ, դա բացառվում է... Եվ նա՝ այդ հոյակապ, այդ սքանչելի կինը, հատուկ ինձ համար հանդուրժեց այդ մութ անձնավորության ներկայությունը, որպեսզի հասկացնի, թե ինչ վտանգ է կախված իմ գլխին, այդ հեղափոխական ազնիվ տղաների գլխին, վերջապես, իմ ժողովրդի գլխին: Եվ որքա՛ն ցավալի է, որ ծանոթ չէ նրանց, թե ոչ հենց հիմա կգնար նրանց մոտ և կզգուշացներ...

- Ափսո՛ս, որ խանգարեցին մեզ... Հիմա նորից կուզեի կարդալ քեզ համար... Սակայն մեղկ են բանաստեղծություններն այս ապականված օդի մեջ հնչեցնել... Լսի՛ր, ինչպե՞ս ես կարողանում այս դիվական աշխարհում բանաստեղծություն գրել... Ես գիտեմ, որ դու տեսնում ես ամեն ինչ, չես կարող չտեսնել, չզգալ... Ենթադրում եմ, որ ամեն անգամ դիահերձարանում հերթական հանգուցյալին տեսնելիս հրաշալի հասկանում ես, որ նա ոչ միայն ծերության և հիվանդության ճարակն է, այլև այս սոսկալի աշխարհի զոհը... Լռի՛ր... Ջխոսե՛ս... Այսինքն, ես էլ գուցե իզուր եմ խոսում...

- Թող խոսեմ, Ալիս... Ես տեսնում եմ, որ դու հուզված ես... Այդ անձնավորությունը քեզ տխուր լուր հայտնե՞ց:

- Կան անձնավորություններ, որոնց լավ լուրերն անգամ տհաճ է լսել...

Ռուբենը տեղից կտրուկ ելավ և դուրս եկավ վարագույրների միջից:

Կոմսուհին նստած էր գրասեղանի մոտ, դիմացը կոնյակի կիսատ բաժակն էր և բանաստեղծությունների ժողովածուներ՝ խառնիխուռն դրված, էջերը բաց:

- Արի այստեղ, - ասաց կոմսուհին, չնայած տեսավ, որ Ռուբենը մոտենում է իրեն: Հետո տեղից ելավ և զարմացած հարցրեց.

- Դու հենց այդպես՝ հագուստը վրադ պառկե՞լ էիր... Հիմա մրսած կլինես... Սոված չե՞ս...

- Չէ... առանձնապես քաղցած չեմ, - կարկամած և դժվարությամբ պատասխանեց իրար հաջորդած անսպասելի հարցերին:

- Ինչո՞ւ ես խաբում... Ամբողջ օրն այստեղ ես... Իլոնան քեզ ոչինչ չառաջարկե՞ց:

- Թեյ տվեց:

- Ընդամե՞նը... Եվ դու համարձակվում ես ասել, թե քաղցած չես... Ո՛չ մի առարկություն, ես սոսկալի քաղցած եմ, ամբողջ օրը վազվզել եմ, հիմա միասին կընթրենք:

Ինչ ասես կարող էր սպասել, սակայն ոչ այս մեկը: Եվ գուցե ճիշտ էր նա, գուցե սա միակ ձևն էր այդ ստորացուցիչ տեսարանի ճնշող տպավորությունը ցրելու համար: Եվ ինքն, այս պահին, օդ ու ջրի պես անհրաժեշտ էր նրան՝ լրացնելու, համոզիչ դարձնելու այդ մտերմիկ զրույցը, իսկապես ապացուցելու, որ առանձնապես ոչինչ չի պատահել, որ կյանքը շարունակվում է անփոփոխ:

Ամեն ինչ եղավ առաջին հանդիպման պես: Իլոնան վարը մտերմիկ մի սեղան էր բացել, նրանք նորից երկուսով էին՝ դեմ դիմաց նստած: Կոմսուհին պատմում էր, թե ինչպես առաջին անգամ, իր ծնողների հետ եկավ Լոզան: Տասնվեց տարեկան էր, իրեն բերել էին ուսանելու... Այո, այո... Սակայն ոչ համալսարանում, այդ հետո եղավ, Վիեննայում, իսկ մինչ այդ երկու տարի անցկացրեց օրիորդաց հատուկ գիշերօթիկում... Օ, ի՜նչ սոսկալի էր այնտեղ, ասես մենաստանում լիներ: Ավելին, իսկական բանտ էր, ամեն մի քայլը հսկում էին: Սակայն, միևնույն է, հիմա կարոտով է հիշում այդ տարիները:

Հետո անսպասելի իր ծրագրերի, իր ծնողների, քույրերի ու եղբայրների մասին հարցրեց: Հետաքրքրվեց նաև, թե որտեղ է այդքան լավ ֆրանսերեն սովորել: Իսկ երբ պատմում էր, թե հայ մտավորականներն ինչպիսի աշխույժ կյանքով են ապրում Պոլսում և Կովկասում, կոմսուհին միանգամից ընդհատեց նրան և անհանգիստ ասաց. «Միևնույն է, դու պիտի Եվրոպայում մնաս, դու այնտեղ անելիք չունես»:

Ինչ-որ բան էր ակնարկում, քանի որ ավելին ասել չէր կարող, սակայն երևում էր, որ անհանգիստ է իր համար: Դրանից ավելի մեղավոր զգաց, որ հիմա, երբ ինքը պիտի ոգի տար նրան՝ այս խիզախ կնոջը, փոխարենը նա է մտահոգվում իր ճակատագրով, շատ լավ իմանալով, թե ինչպիսի վտանգներ են սպասվում իրեն...

Ալիսը մի նոր խաղ էր սկսել, որից (գոնե ա՛յս անգամ) չէր ուզում պարտված դուրս գալ: Սա կարծես վերջին ընթրիքն էր, որ չափազանց դանդաղ մոտեցավ իր ավարտին:

Հետո վարանոտ քայլերով, լուսնոտների պես մտան ընդարձակ անկողինը ծածկող ծանր վարագույրների ետևը: Կոմսուհին կարծես անփորձ աղջիկ լիներ, որ հնազանդ սպասում էր իր առաջին տղամարդու վճիռներին: Եվ որքան անդիմադրելի էր նրանց փոխհրապույրը, նույնքան էլ թվում էր եթերային, ասես իրենց մարմինները հաղթահարած, հավերժորեն միաձույլ սավառնում էին անեզրության մեջ... Նրանք այդպես էլ քնեցին՝ իրար գրկած, փոխներթափանցված:

Սովորությի համաձայն առավոտ շուտ արթնացավ և, արագորեն լվացվելուց հետո, աշխատեց անաղմուկ հագնվել: Իր հագուստները ցիրուցան թափված էին գրասեղանի վրա: Շապիկը վերցնելիս, աչքն ընկավ ձախ դարակին: Զգուշորեն բացեց: Խավարի մեջ հստակ չէր երևում, թե ներսն ինչ կա: Փորձեց շոշափելով գտնել մահաբեր զենքը: Մանր-մունր բազմաթիվ իրեր կային, սակայն ատրճանակ չգտավ: Չէր կարող ասել, թե շատ մանրակրկիտ փնտրեց: Վախեցավ, որ կարող է աղմուկ անել և կոմսուհուն արթնացնել: Սակայն եթե այնտեղ լիներ, հազիվ թե ձեռքի տակ չընկներ: Դարակը ետ հրելիս նկատեց, որ բանալին վրան է:

Ժամը՛ յոթն անց էր: Երկինքն արդեն սկսում էր գունատվել: Ոտքերի ծայրին մոտեցավ, վարագույրը բացեց և անշարժ կանգնեց՝ չիմանալով, թե ինչ անել: Երանության այնպիսի մի արտահայտություն կար կոմսուհու դեմքին, որ հանցանք կլիներ նրան արթնացնել: Հավանաբար լավ երազներ էր տեսնում: Այնուհանդերձ չկարողացավ զսպել նրան դիպչելու, շոյելու պահանջը: Զգույշ կռացավ և շրթունքները թեթևակիորեն հպեց նրա մատներին, որոնք, ասես, միանգամից կենդանացան և մխրճվեցին իր մազերի մեջ:

- Ուրեմն, առանց ցտեսություն ասելու պիտի գնայի՞ր, - լսվեց նրա քնկոտ ձայնը: Հետո, վերջնականապես արթնանալով, ավելացրեց. - Այս քանի օրը գլուխս մի քիչ խառն է լինելու, գործեր կան... Սպասիր իմ նամակին, ես քեզ կգրեմ... Իսկ հիմա գնա, ես սոսկալի քնել եմ ուզում...

Ձայնը հանդարտ էր, գալիս էր խորքից, ասես երեկվա տագնապը չէր եղել, և գուցե իսկապես նոր օրն իր հետ մի նոր խորհուրդ պիտի բերեր...

* * *

Օրն, իսկապես, լեցուն էր ուրախ լուրերով, որոնցից ամենակարևորները Սիլիվրիից և Պոլսից ստացած մի կույտ նամակներն էին: Հարազատների նամակներն շտապ աչք ածելուց հետո, երեք ծրար առանձնացրեց: Երեքն էլ խմբագրություններից էին. «Լույս», «Արևելյան Մամուլ» և «Մասիս»:

Ամեն անգամ տնից նամակ ստանալիս տարօրինակ զգացում էր ունենում. ուրախություն՝ խառնված մեղավորության տարտամ գիտակցումին: Արդեն երկու տարի կլիներ, ինչ այստեղ էր, սակայն երբեմն-երբեմն տանջալից զգացումներ էին արթնանում մեջը, պղտորելով հազվագյուտ ուրախությունները:

Այս անգամ, սակայն, ուրախությունը կարծես անխառն էր, ավելին, կարծես վերջապես արդարացում ուներ նախկին զանցանքների համար: Ահա, խնդրեմ, «Մասիսի» խմբագիրն անձամբ շնորհավորում է: Իր բանաստեղծությունն է տպագրել: Երկրորդ ծրարը «Լույսի» խմբագրությունից է: Այստեղ էլ շնորհավորական նամակ կա՝ խմբագրի ստորագրությամբ, ավելին, խնդրում է նոր գործեր ուղարկել:

Երրորդ ծրարը վախենում է բացել: Զմյուռնիայից է, «Արևելյան Մամուլից»... Հայկական, թերևս, ամենահեղինակավոր հանդեսն է, մի՞թե այստեղ էլ տպագրել են իրեն... Այս ծրարն ամենամեծն է...

Վերջապես բացեց ծրարը և իրար ետևից հանեց նամակը, իր բանաստեղծությունները՝ արդեն տպվա՛ծ, իրար կողք փառահեղորե՛ն շարված... Միանգամից երեք բանաստեղծություն... Իսկ սա ի՞նչ է... Հոդված է... Տե՛ր Աստված, իր մասին է հոդվածը... Սա արդեն անհավատալի է, աներևակայելի՛... Հանգստացիր, խորը շնչիր և կարդա: Դեռ շուտ է ոգևորվել:

Սակայն ոչ: Ծայրեծայր հիացմունք: Իրեն համեմատում են Եղիայի, Ինտրայի, Սիպիլի հետ... Գրված է, թե ինքը՝ Ռուբեն Զիլինկիրյանը, նրանց հավասար արժեք է, թե «բանաստեղծի հոյակապ մի հայտնություն է... բյուրորեն թանկագին մի գոհար...»:

Հոդվածը դրեց մի կողմ և իր բանաստեղծություններն ուշադիր կարդաց... Կարդաց մի քանի անգամ: Մեկ-երկու աննշան փոփոխություններ նկատեց: Ինչ-որ մեկը, տպագրելուց առաջ, գտել էր, որ այս կամ այն բառը պետք է փոխել մեկ ուրիշով, որ սխալ է դրված ստորակետը և վերջակետը: Սակայն դրանից չէր, որ տրամադրությունն ընկավ:

Փառահեղորեն տպագրված բանաստեղծությունները նրան թվացին խեղճ, անօգնական... Այսինքն՝ գուցե վատ չէին գրված: Նրբին մի գեղեցկություն կար, անդորը հիացում... Սակայն ընդամենը մի քանի ամիս առաջ ծնված գործերը թվացին հնացած, ժամանակից դուրս... Մանավանդ «Լեման» բանաստեղծությունը՝ գեղեցիկ բնանկար, հրաշքին մերձենալու ինքնաբուխ մի մղում: Մի՞թե կարող էր չնկատել բնության այդ կատարելությունը և մի՞թե կարող էր ղսպել բանաստեղծությամբ արտահայտվելու անկեղծ ցանկությունը...

Իսկապես, ամեն ինչ կատարվել է բնական մղումով, ինքը պարզապես ճանապարհ է բացել հորդացող հույզերի համար, մարմին տվել դրանց ու կերպարանք:

Այո, ինչո՞ւ ոչ, թերևս, սակայն ինչո՞ւ հիմա այն ստույգ համոզումն ունի, թե այլևս երբեք այդպես չի գրի, մի՞թե Լեմանը կորցրեց իր գեղեցկությունը, մի՞թե խամրեց Շվեյցարիայի բնանկարի հեքիաթային հմայքը... Ոչ, ամեն ինչ նույնն է մնացել, միայն թե ինքն է փոխվել... Այո, գուցե փոխվել է, բայց այսքան արա՞գ... Եվ ի՞նչն ստիպեց հայացքը շրջել այդ գեղեցկությունից, այդպես կոպիտ ընդհատել անվրդով հիացումը... Այլանդա՞կը, հրեշավո՞րը, սոսկալի՞ն...

Երբ բրտորեն խախտվում է համերաշխությունը, երբ գեղեցկության կողքին հայտնվում է տագնապը, սարսափը, որի ներկայությունն այստեղ կատարելապես անհարիր է, անընդունելի, աղաղակող...

Ավելի քան մեկ տարվա ընթացքում դոկտոր Ռուի հետ հասցրել էր այս երջանկատեսիլ երկրի ստվերոտ կողմերը տեսնել՝ թշվառություն, անարդարություն, մարդկային էության քստմնելի դրսևորումները... Սակայն կոմսուհու սենյակում ակամայից լսած տեսարանը կատարելապես ուրիշ մի բան էր: Այն հիվանդկախ ծերերը, ուռած երեսներով հարբեցողները, ֆրանկախտավոր պոռնիկները բնավ չէին խռովում այս երկրի անդորը բնանկարը: Մինչդեռ Կլաուս Յուրգենը չէր, որ անցած գիշեր ներխուժեց ազնվական կնոջ ննջարան, այլ բարբարոս մի տարերք, որին չգիտեր ինչ անուն տալ, քանզի կատարելապես անծանոթ էր իրեն:

Այն բանաստեղծները, որ իրենից առաջ հիացել էին Լեմանի գեղեցկությամբ, առիթ ունեցե՞լ էին արդյոք բռնության նման դրսևորումների հանդի-

պելու այստեղ, և եթե այո, ապա ինչպե՞ս էին կարողացել նախկին ոգևորությամբ կարապներով և ալպյան լեռներով հիանալ: Չէ, հազիվ թե... Նրանց ժամանակները երանելի էին, բանաստեղծը՝ թեկուզ վտարանդի, պետք էր հասարակությանը, առանց գեղեցիկի մարդիկ չէին կարող ապրել, մինչդեռ հիմա բանաստեղծությունը և արվեստը ստորացված են դրամով, և ոչ միայն... Դիվական մի մութ ուժ է գալիս՝ ծպտված, թաքնված, անդեմ ու անկերպարան, որը սակայն ուզած պահին կարող է մտնել ամեն տեղ:

Յուրգեն Կլաուսը խոսում էր գերմանական բանակի անունից: Բայց միայն գերմանացի՞ք բանակ ունեն... Հապա պարտված և ստորացված ֆրանսիացի՞ք, հապա ամբարտավան անգլիացի՞ք, հապա ավստրիացի՞ք, ռուսնե՞րը, վերջապես, օսմանցի՞ք... Ո՞վ կասեր, որ այդ նախկին սպան, նման մթին առաքելությամբ է արտոնված, իսկ կարո՞ղ է ֆրանսիացի այն երիտասարդ և համակրելի բարոնը նույնպես նման մի խոսակցություն ունենային կոմսուհու հետ... Իսկ ինչո՞ւ ոչ, չէ որ ֆրանսիացիք ռեվանշի են ձգտում, որպեսզի երեսունվեց տարի առաջ կորցրած Էլզասն ու Լոթարինգիան հետ բերեն: Նրանք նույնպես հետաքրքրված կլինեն հայկական ռումբով, մանավանդ որ պայթյունը տեղի է ունեցել իրենց տարածքում... Իսկ այդ թուրք կալվածատե՞րը... Միայն բամբակ ծախելո՞վ է զբաղված... Իսկ այն իտալացի փիլիսոփա՞ն... Մի՞թե նա էլ... Չի՛ կարող պատահել:

Իսկ գուցե իրեն վաղուց հետապնդում են, գուցե նրբորեն որոգայթ է լարվում իր շուրջը, ինքը՝ որ ռումբի մասին միայն թերթերում էր կարդացել: Կեցցե՛ն տղաները: Ովքե՞ր են, չգիտեր, սակայն հպարտություն զգաց, որ մի բուռ հայ հեղափոխականներ կարող են այդպես լրջորեն մտահոգել աշխարհի հզորներին:

Սակայն գոնե մեկ բանի համար կուզեր իմանալ, թե ովքեր են... Այսինքն՝ ոչ, երկու բանի համար. նախ համբուրեր նրանց, իր հիացմունքը հայտներ և զգուշացներ, որ աշխարհի գազաններն իրենց հետքն են հոտոտում... Տե՛ր Աստված, այս ինչպե՞ս ես բաշխել ճակատագրերը. հալածված մի ազգ, որն ուզում է իր ձեռքով արդարություն հաստատել և գազանների մի ոհմակ, որ ուզում է պատժի զենքին տիրանալ, կարծես քիչ է իրենց ունեցածը:

Սակայն ինչպե՞ս պիտի կարողանա նրանց զգուշացնել, որտե՞ղ պիտի գտնի և գտնելուց էլ ինչպե՞ս պիտի ապացուցի իր ասածների հավաստիությունը, մի՞թե կասկածելի չի երևա նրանց աչքին... Եվ, վերջապես, այդ հեղափոխականները միամիտ երեխանե՞ր են, որպեսզի հեշտությամբ գիշատիչների ձեռքն ընկնեն:

Ինքն ավելի շատ իր մասին պիտի մտածի: Արդեն իմացավ, որ նրանց ուշադրության կենտրոնում է, նշանակում է չափազանց զգույշ պետք է լինել, թե ոչ, քեզնից անկախ, կարող ես ուրիշներին պատուհասել և սրբազան գործը տապալել... Հապա Լևո՞նը, մյուս հայերը... Նրանց ինչպե՞ս զգուշացնի: Շատ հնարավոր է, որ նրանք ինչ-ինչ բաներ գիտեն, թեկուզ չնչին մանրամասներ... Չէ որ Կլաուսը հստակորեն ընդգծեց. «Ամեն ինչ, նույնիսկ ամենաաննշան մանրամասնը»:

Հիմա նկատեց, թե որքան անդորր ու գեղեցիկ էր կյանքը երկու օր առաջ, երբ պատկերացում անգամ չուներ իրենից վեր, իր թիկունքում և անգամ

իր շուրջն ապրող ուրիշ կյանքի, ուրիշ աշխարհի գոյության մասին... Մինչդեռ ի՞նչ էր իր տեսածը՝ այդ աշխարհի մի չնչին մասնիկը, այն էլ վարագույրի ճեղքից դիտված, կիսախավարի մեջ: Իսկ ինչե՜ր կտեսներ, եթե վարագույրը լրիվ բացվեր իր առջև... Նման հայտնությունների ականատեսները կուրանում են կամ խելագարվում... կամ ոչնչանում... Իսկ եթե հնարավոր չէ ուղիղ նայել, ինչպես արևին կնայեին կամ մահվան, և բանականությունը պահպանել, ինչպես Ս. Հովհաննեսը Պատմոս կղզում...

Իսկ կարո՞ղ էր պնդել, թե վարագույրն իր առջև բացվեց: Իհարկե, ոչ ամբողջությամբ, ասենք՝ մեկ երրորդով, մեկ քառորդով... Անշուշտ, ոչ: Իր տեսածը նույնպես ճեղքից էր. պարզապես, այս ճեղքը մի քիչ ավելի լայն էր նախորդներից... Աստված ողորմած է և բարեգութ: Հնարավորություն է տալիս, որ ընտելանանք սարսափի պատկերներին, թե ոչ, միանգամից կկուրանանք ու կհամրանանք... Ուրեմն, հաջորդ ճեղքն այս մեկից ավելի լայն կլինի, և այսպես շարունակ, մինչև վերջնականապես հաշտվենք դիվական տեսարաններին... Ուրեմն, ուր որ է մի նոր սոսկումի ականատեսը կլինի...

Քանի՞ րոպե նստեց լուռ և անշարժ: Չէր կարող ասել: Սակայն միանգամից ուշքի եկավ և առաջին բանը, որ շտապեց անել, իր տպագրված բանաստեղծությունները թաքցնելն էր: Թող ընկերները չտեսնեն, թե ոչ առիթ կդառնա մի չքեղ հարբեցողության համար, որից ոչ մի կերպ չի կարողանա խուսափել:

* * *

Ո՛չ, սա իրական չէ, սա պատկեր է, սա գուցե Կոնրադի չար կատակն է կամ խաղը, ինչպես նրա ձեռքով նկարված այն երկու հոյակապ կտավները: Եվ գուցե սա էլ երկու օրինակով է նկարված՝ մեկը դիմակով, մյուսն՝ առանց... Սակայն, իսկապես, ո՞վ է այս պատկերի հեղինակը... Դարձյա՞լ Կոնրադը... Ինչո՞ւ ոչ, քանի որ լավ գիտի այս մարմինը, քանի որ հաճախակի է գալիս այստեղ՝ մեռյալների մոտ, որպեսզի կյանքի գաղտնիքը պարզի: Եվ այդպես էլ չպարզած վերադառնում կյանք:

...Դասի ավարտից հետո Ժերարը նրանից մի փոքրիկ ծառայություն խնդրեց. գիշերվա ընթացքում բերված հանգուցյալների անունները գրանցել մեծ մատյանում և հետո արտագրել ստվարաթղթե քարտերի վրա: Նա ցույց տվեց իր աջ ձեռքը՝ վիրակապված. «Մատներս դռան արանքում են մնացել... Գրել չեմ կարող, - և իր երկու օգնականներին ցույց տալով, ավելացրեց. - Իսկ նրանց չեմ կարող այդպիսի գործ վստահել»:

Բարեբախտաբար «ժամանածները», ինչպես Ժերարն էր անվանում, շատ չէին, ընդամենը վեց հոգի: «Նախ այս չորսը գրանցենք, ուղղակի հիվանդանոցից են բերել...»: Վերջին երկուսի անունները, գլխավոր մատյանից զատ, պիտի գրանցվեին նաև մեկ ուրիշ՝ առանձին մատյանում: «Սրանցով զբաղվում է ոստիկանությունը... Այս անգամ երկուսն էլ օտարական են, մեկ տղամարդ և մեկ կին... Ուրեմն այսպես, խնդրում եմ, գրիր... Ջոշուա Մալքոլմ, Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի, 27 տարեկան, դիակը հայտնաբերվել է Պլաս

դյու Շատոյի վրա, մայոր Դավելի արձանի մոտ, ժամը 01 անց 47 րոպե, մարմնի վրա սուր կտրող առարկայով կատարված երեք հարված կա... Երկրորդը՝ Ալիս Զոկոնայի-Լազար, Ավստրո-Հունգարիայի քաղաքացի...

Գրիչը ձեռքից ընկավ, աչքերը հառեց Ժերարին, սակայն վերջինս ոչինչ չնկատեց և շարունակեց միապաղաղ թելադրել.

- ...քսանինը տարեկան, հայտնաբերվել է իր առանձնատանը, երեկ ժամը 21 անց 15 րոպե, հասցեն՝ 26 ռյու Բել-Ֆոնտեն, հրազենի թափանցող վերք ձախ կրծքի տակ...:

- Որտե՞ղ է, - գոռաց նա:

Ժերարը հայացքը կտրեց թղթից և զարմացած նայեց նրան.

- Արդեն ասացի, իր առանձնատանն են գտել...

- Հիմա՛, հիմա որտե՞ղ է:

- Այստեղ... Երրորդ խցիկում, - ասես վախեցած պատասխանեց Ժերարը:

Նա նետվեց դեպի դուռը, բռնակը կտրուկ դարձրեց, բայց ապարդյուն. դուռը բանալիով փակված էր:

- Քեզ ի՞նչ եղավ, Ռուբեն... - զարմացած հարցրեց Ժերարը: Հետո, կարծես, գլխի ընկավ. - Դու նրան գիտեի՞ր... Կամ... Գուցե մտերիմ էիք...

Նա ոչինչ չէր լսում, խելագարի պես շարունակում էր դուռը ցնցել և պահանջել.

- Բաց արա՛, քեզ եմ ասում, բաց արա՛, շո՛ւտ...

Ժերարը մոտեցավ և ցնցելով ասաց, ինչպես հիվանդ երեխային կդիմեին.

- Հասկացա, սիրելիս, ամեն ինչ հասկացա... Բայց դու գիտե՞ս, որ այդ... ինչպե՞ս ասեմ... այդ կինը ոստիկանության հատուկ հսկողության տակ է... Առանց նրանց թույլտվության իրավունք չունեմ բացելու...

- Բաց արա, խնդրում եմ քեզ, ես պիտի տեսնեմ նրան...

- Լսիր, դու հասկանո՞ւմ ես, թե ոչ, սա չբացահայտված դեպք է: Եթե իմացան, կորած ենք: Ես՝ դեռ ոչինչ, նրանք ինձ լավ գիտեն, բայց դու շատ տհաճ պատմություններ կունենաս ոստիկանության հետ:

- Ինչ ուզում է լինի, ես պիտի տեսնեմ նրան:

- Իսկ նա ի՞նչ էր գալիս քեզ... Ընկե՞ր, բարեկա՞մ, ազգակա՞ն...

- Ամեն ինչ էր, - գոռաց Ռուբենը, ցնցելով Ժերարին, վերջինս ներողամտությամբ նայեց նրան և հոգոց արձակելով, գրպանից հանեց բանալիները:

- Քո բախտից երկուսով ենք, թե ոչ՝ չէի բացի... Հասկանո՞ւմ ես... Օրենքի դեմ բան եմ անում... Այսքան տարի աշխատում եմ այստեղ, սա առաջին դեպքն է... - Հետո, դեմքը խստացնելով, ավելացրեց. - Մեկ րոպեով եմ հանում, լսո՞ւմ ես, մեկ րոպեից ավել թույլ չեմ տա նայել... Եվ իմ ներկայությամբ...

Ժերարը երեք փական բացեց և, ներս մտնելուց առաջ, դարձավ Ռուբենին ու խստորեն ասաց.

- Մնա այդտեղ, հիմա կբերեմ:

Երրորդ խցում լույս չկար, բայց երևում էր, որ չափազանց փոքր է, այնպես որ Ժերարը գրեթե ներս չմտավ, այլ պարզապես ետ-ետ գալով անվավոր սեղանը բերեց սրահի կենտրոն, Ռուբենին ձեռքով նշան արեց, որ մոտենա և

սավանը զգուշորեն բարձրացրեց: Սկզբում գլուխը երևաց: Դեմքին մահվան ոչ մի դրոշմ չկար: Կատարյալ անդորր: Ասես խորը քնի մեջ էր: Աչքերի տակ միայն թեթև կապտուկներ նկատեց, որ մինչ այդ, կարծես, չկային: Ձեռքը մոտեցրեց, որպեսզի սավանն ավելի վար քաշի, սակայն Ժերարը տեղնուտեղը գոռաց.

- Զդիպչես:

Հետո ինքը զգուշորեն և գրեթե ամոթխածությամբ սավանը քաշեց մինչև գոտկատեղը: Ձախ կրծքի տակ, անհարթ եզրերով, կլոր ու վարդագույն մի անցք կար, միակն իրանի ամբողջ ճերմակության վրա, և անկարելի էր հավատալ, թե այդ փոքրիկ բիծն է, այդ կարմրավարդագույն կետն է ամեն ինչի պատճառը:

Այդ մարմնի վրա ամեն ինչ կյանք էր վկայում, նրա ներկայությունն այդտեղ կատարելապես անտեղի էր... Կրծքի տակի վե՞րքը... Դա մի չար կատակ էր, տաղանդավոր նկարչի քմայք, որ ձգտել է մի կերպարի մեջ արտացոլել սիրո և մահվան գաղափարը, և կարողացել է զարմանալի հավասարակշռության հասնել... Ահա՛, ստեղծել է հանճարեղ մի պատկեր, որտեղ սերը մահ է, իսկ մահը՝ սեր... Երկուսն էլ համոզիչ, երկուսն էլ կենդանի...

- Տասնհինգ տարի է այստեղ եմ աշխատում, սակայն այսպիսի գեղեցկություն չեմ տեսել, - ինքնիրեն խոսեց Ժերարը, և նրա ձայնում անսահման մի ափսոսանք կար, նույնիսկ տխրություն... Նա սավանն զգուշորեն բարձրացրեց մինչև ուսերը և, ասես արդարացնելու համար իր այդ շարժումը, ասաց. - Մարմնի վրա ուրիշ վերք չկա, ոչ մի քերծվածք:

- Ո՞վ է սպանել, - հարցրեց Ռուբենը:

- Իսկ ինչո՞ւ ես կարծում, որ սպանություն է, - կտրուկ հարցրեց Ժերարը, հետո, ավելի հանգիստ շարունակեց. - Ոստիկանները ենթադրում են, թե ինքնասպանություն է... Կողքին ատրճանակ են գտել... Բայց ես ինքնասպաններ շատ եմ տեսել... Նրանց դեմքին տառապանքի, չարչարանքի կնիք է լինում... Մինչդեռ տես, որքա՜ն հանգիստ է, կարծես քնել է և դեռ չի արթնացել... - Հետո, Ժերարը, հիշելով իր պարտականությունները, սավանը քաշեց մինչև վերջ, սեղանը գլորեց ներս և, դուռը փակելով, աղաչելու պես պահանջեց.

- Ուրեմն պայմանավորվեցի՞նք, ոչ մեկին ոչ մի խոսք, դու այստեղ ոչինչ չես տեսել, ոչինչ չես լսել:

Այո, իհարկե, չի տեսել, իհարկե, չի լսել... Երանի իսկապես տեսած ու լսած չլիներ... Ո՛չ, ո՛չ, ճակատագրական ինչ-որ բան կար այս ամենի մեջ: Ժերարն ինչո՞ւ հատկապես երեկ ձեռքը թողեց դռան արանքում, ինչո՞ւ այդքան ուսանողի միջից հատկապես իրեն խնդրեց գրագրի պարտականությունը կատարել... Եվ, ահա, խնդրեմ, Աստված կամեցավ, որ ինքն այսօր անպայման այստեղ լիներ...

- Լսիր, Ռուբեն, քեզ մի բան պիտի ասեմ: Չգիտեմ, թե ինչ հարաբերությունների մեջ էիր այդ կնոջ հետ, բայց սա շատ մութ պատմություն է երևում... Հնարավոր է քեզ էլ ոստիկանություն կանչեն...

Շնորհակալություն հայտնեց Ժերարին և դուրս եկավ: Չգիտեր ինչ անել, տո՞ւն գնալ, գրադարա՞ն... Գուցե պետք է կոմսուհու առանձնատուն գնալ, մանրամասներ իմանալ, Իլոնային մխիթարել... Նա շատ էր սիրում իր տիրուհուն, հիմա լրիվ մենակ է այդ սոսկալի առանձնատանը... Հիշեց կոմսուհու հար-

ցը՝ իրենց առաջին հանդիպման ժամանակ. «Դուք սնահավատ չե՞ք»: Ոչ, այն ժամանակ սնահավատ չէր, սակայն հիմա սնահավատ է դարձել... Ընդամենը երկու տարվա ընթացքում... Օրինակ, չափազանց չար մի նախանշան է տեսնում այս մահվան մեջ... Մահվա՞ն, թե սպանության: Պե՞տք է արդյոք գնալ ոստիկանատուն և պատմել նախանցած գիշերվա այցելուի մասին... Սակայն որքանո՞վ օգտակար կլինի այդ տեղեկությունը... Ինչպե՞ս պիտի ապացուցես, թե Կլաուսն է սպանողը... Սակայն իսկապե՞ս նա է... Մի՞թե նրանց համար դժվար կլիներ մի վարձու մարդասպան գտնել... Իսկ գուցե իսկապես ինքնասպանություն է, գուցե վերջ դնելով իր կյանքին, նրա հոգին իսկապես հանդարտվել է և այդ՝ ծանր գնով վաստակած, անդորրն էլ տպվել է դեմքին... Բացի այդ, հանգուցյալի հեղինակության համար որքանո՞վ նպաստավոր կլիներ իր վկայության որոշ մանրամասները...

- Օ՜, Ռուբեն, սիրելի բարեկամ, ի՜նչ լավ է, որ ձեզ տեսա այստեղ...

Ջիովաննին էր՝ խռովված դեմքով: Հիմա նկատեց, որ քայլերն իրեն բերել էին հիվանդանոցի առջև ընկած պուրակը:

- Իմացա՞ր, թե ինչ ահավոր բան է պատահել մեր սիրելի Ալիսի հետ...

Ինքն այսօր առավոտյան է իմացել, ժամը իններին... Իլոնան է եկել իր մոտ՝ այդ սոսկալի լուրը հայտնելու... Իսկ մինչ այդ եղել է տիկին Շապազի գիշերօթիկում:

- Ասել են, որ դուք համալսարանում եք... Պատկերացնո՞ւմ եք, ուրեմն մենք երկուսս ենք նրա իսկական բարեկամները... Ո՞ւր են այն փուչ մարդիկ, որ օրնիբուն շրջապատում էին նրան...

Ջիովաննին պատմեց, որ կոմսուհին երեկ երեկոյան ժամը 21-ին պետք է հյուր գնար: Սովորաբար, նման դեպքերում, Իլոնան, առնվազն մեկ ժամ առաջ, բարձրանում էր, որպեսզի օգներ նրան հագնվելու: Նա սպասել է մինչև ժամը 21-ը, հետո որոշել է բարձրանալ և հիշեցնել երեկոյան հրավերի մասին... Ներս մտնելով, ավա՜ղ, տեսել է նրան հատակին փռված, ատրճանակը կողքն ընկած... Իլոնայի ասելով, նրա մարմինը դեռ տաք էր: Իսկ կրակոցի ձայնը չի լսել, որովհետև այդ երեկո, հակառակի պես, մոտակա առանձնատանը ինչ-որ տարեդարձ էին նշում, ուստի հնարավոր է, որ կրակոցի ձայնը խառնվել է երաժշտության և պետարդների աղմուկին...

- Ես մի վատ բան էի կանխազգում... Ինձ դուր չէր գալիս նրա շրջապատը, նրա խենթ ու արկածախնդիր կյանքը: Սակայն չէի կարծում, թե այսպիսի ողբերգական ավարտ կունենա...

Ջիովաննին լռեց հետո, նրա աչքերի մեջ նայելով, ասաց.

- Դուք գիտե՞ք, որ նա ձեզ շատ բարձր էր գնահատում, ուղղակի հիացմունքով էր խոսում ձեր մասին... Տարօրինակ կին էր և բացառիկ... Միաժամանակ սատանայի և Աստծո միջև էր:

- Ժամանակն է այդպիսին, - պատասխանեց Ռուբենը: - Միայն թե կորցնում ենք Աստծուն և ավելի ենթարկվում սատանային...

- Իրավացի եք... Մեր ապագան ես չափազանց մռայլ գույների մեջ եմ տեսնում... Եվ ուրախ եմ, որ դուք սթափ հայացքով եք նայում այս դիվականացող ժամանակներին, այս հսկա բորդելին, որ կոչվում է Եվրոպա:

- Ափսո՜ս, մենք հայերս, բազմաթիվ հույսեր ունենք Եվրոպայի հետ կապված, և չէինք ուզի պատրանաթափ լինել:

- Ես հասկանում եմ, բայց, ավա՜ղ, պիտի հրաժարվեք ձեր սպասումներից և հույսներդ դնեք միայն ձեզ վրա... Դուք, հավանաբար, վատ գիտեք Եվրոպան... Շվեյցարիայով մի դատեք, սա չեզոք երկիր է, այս խաղաղությունը շատ խաբուսիկ է:

- Թերևս... Այնուամենայնիվ, մենք պահպանում ենք Եվրոպայի մեկ այլ պատկերը:

- Պահպանեք, եթե շատ եք ուզում, սակայն իմացեք, որ Եվրոպան այսօր կարիճներով լցված մի զամբյուղ է: Առայժմ նրանք հանգիստ են... Արտաքուստ... Սակայն շոգերն ընկնելուն պես թույնը պիտի եռա նրանց մեջ և պիտի իրար կծոտեն:

- Կարծում եմ, որ ամառն արդեն եկել է...

- Գուցե, բայց սա դեռ սկիզբն է, մեջտեղը դեռ ոչինչ չկա, սակայն ֆրանսիացիք կատաղած զինվում են, որպեսզի վրեժ լուծեն գերմանացիներից, իսկ գերմանացիք քնած չեն, նրանք էլ ատամներն են սրում ֆրանսիացիների, անգլիացիների և ռուսների դեմ, իսկ ձեր սիրելի թուրքերն էլ, ավստրիացիների հետ միասին, հավանաբար, թնդանոթի միս մատակարարեն կայզերին... Հոյակապ տեսարան է սպասվում Եվրոպայում... Եվ ես հիանում եմ ձեզնով, երիտասարդ, որ շարունակում եք բանաստեղծություններ գրել:

- Եթե այդպես լիներ, սիրելի պարոն, Դանթեն պիտի համրանար դժոխքի պարունակներն իջնելուց հետո:

- Իրավացի եք, սակայն սպասվելիք հայտնությունները վախենամ, թե դանթեական դժոխքից ավելի ահասարսուռ լինեն, քանզի չապաշխարած մարդկությունը պիտի իրականացնի այն, ինչն առ այսօր զուտ երևակայական էր, և այդ ժամանակ հնարավոր է, որ սարսափներից քարանանք:

- Բանաստեղծը Ղովտի կինը չէ, որին արգելված է ետ նայել... Ընդհակառակը, ես սիրում եմ շիտակ նայել իրականության երեսին, ես ուզում եմ հասկանալ, թե ինչ է պատրաստում ինձ համար:

Ջիովաննին աչքերը կկոցած նայում էր նրան: Կարծես հիմա, վերջապես, ճանաչեց իր զրուցակցին:

- Սիրելիս, - ասաց իտալացին սրտանց գորովով, - դա մահկանացուների զբաղմունքը չէ...

- Մի՞թե մահկանացուի բաժինն է կուրորեն ենթարկվել ճակատագրի քմահաճ վճիռներին...

- Կուրորեն, թե՝ ոչ, վախճանը նույնն է լինելու:

- Ո՛չ, - կտրուկ ժխտեց Ռուբենը, - նույնը չէ...

Զրուցելով աննկատ հասան լճափ: Կեսօրն արդեն մոտենում էր ավարտին, ասես, բարեբեր հող նախապատրաստելով մի թանձր գիշերվա համար: Ֆրանսիական ափից մառախուղի ծանր քուլաներ էին սողում, կարծես ընկել էին ճայերի հետևից և ուզում էին վերջնականապես քշել լճի մակերեսից դեպի լեռնոտ ափերը, որտեղ նրանք կդատապարտվեին վերջնական մահացման: Եվ

իսկապես մի սոսկալի ծղրտոց էր ընկել ափին: Թռչունները կատաղի թևաբախումներով խոյահարում էին խտացված օդը, սրընթաց մոտենում սրճարաններ-ի տերրասներում նստած այցելուներին, ասես օգնություն խնդրում նրանցից՝ լավ իմանալով, որ ոչինչ չեն ստանալու:

Բանաստեղծն ու փիլիսոփան լուռ նստել էին իրենց բաժակների առջև:

Երբ գոլորշու լեռնացած քուլաները, լենկթեմուրյան հորդաների պես սկսեցին արդեն ափերը լիզել, Սավոյայի լեռների վրա կուտակված կպչուն ամպերի տակից, պայթյունի պես, արևի հզոր շողերը դուրս պրծան և, թվում էր, թե ուր որ է Աստծո աջը կերևա և վճիռ կարձակի մահկանացուների համար:

Սակայն լուռ էր ամենուր:

1998-2000 թ. Փարիզ-Երևան

** Զի, Տեր, մեծ քաղաքները*
կորուսյալ են և քայքայված
Հրդեհից փախունտը ամենամեծ փախուստն է,
և չկա այն ամոքող ոչ մի ամոքում,
և նրա կարճատև ժամանակը սպառվում է:

Ռ.-Մ. Ռիլկե, Տողացի թարգմանություն

2 Զգացական խոսակցություն

3 Երեք պատուհան ունեմ ես իմ սենյակում.
սերը, ծովը, մահը,
Կրակոտ արյուն, հանդարտ կանաչ, մանուշակադույն:

Օ՜, կին, մեղմանուշ և ծանր գանձ:

Ապակեպատ ցրտեր, զանգակներ, համպարի բույրեր,
Ծով, մահ, սեր,
Զգալ միայն այն, ինչ հաճո է ինձ...

Կի՜ն, օրվա լույսից ավելի լուսավոր:

Սեպտեմբերի այս ոսկեզօծ երեկոյան
Մահը, սերը, ծովը,
Թող սուզվեմ կատարյալ մոռացումի մեջ:

Կի՛ն, կի՛ն, մսե դագա՛ղ:
Շառլ Կրո, *«Հիերոգլիֆ», տողացի թարգմանություն*

Հին պարտեզին մեջ սառած, ցուրտ, մենարա՛ն,
Քիչ մ՝առաջ անցան երկու կերպարան:

Աչքերնին մեռա՛ծ, թո՛ւյլ է շրթունքնին.
Խոսքերնին հազիվ երբեմն կլսվին:

Հին պարտեզին մեջ սառած, ցուրտ, մենարա՛ն,
Արթնցուցին անցյալն երկու ուրվական:

- Հին օրերու մեր հիացումն կհիշե՞ս:
- Ինչո՞ւ ուրեմն զայն մտքին մեջ կձգես:

- Սիրած տրոփե՞ երբ իմ անունս լսկ հընչե:
Երազի մեջ տեսնե՞ս հոգին իմ միշտ: - Չէ՛:

- Երջանկության ա՛հ այն օրեն հրճվալի՝
Ուր բերանիս միացնեինք: - Կարե՛լի:

- Ի՛նչ մեծ էր երկինք, որքա՛ն մեծ էր հույս:
- Հալթված փախա՛վ՝ հույսն երկինքին մեջ անլույս:

Այսպե՛ս դնացին վարսակներուն մեջ անբեր.
Գիշերը միայն լսեց իրենց այդ խոսքեր:
Թարգմ. Ռուբեն Սևակի

Երկրորդ Մաս

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՌԵՎԱՆԳՈՒՄԸ

Wer die Shönheit angeschaut mit Augen,
Ist dem Tode schon anheimgegeben.
*August Graf von Platen, «Tristan»**

* * *

Նամակն ուղարկված էր իրեն, բայց համալսարանի հասցեով: Առաջին անգամ չէր, որ նամակներն այդ ճանապարհով էր ստանում: Դրանք այն ընթերցողներն էին, ովքեր գիտեին, որ ինքը Լոզանում է, բայց չունեին իր հասցեն: Այս մեկը երիտասարդ ուսուցչուհի էր Թիֆլիսից, որ դիմում էր իրեն ոչ միայն որպես տեղի հայկական ընկերության նախագահի, այլև «որպես մեր օրերի տաղանդավոր բանաստեղծներից մեկի»:

Նա մտահոգված էր՝ այդ ուսուցչուհին, տագնապած, քանզի վատ լուրեր էին հասել Թիֆլիս, «շատ վատ լուրեր Սիամանթոյի մասին...»: Ուսուցչուհին խնդրում էր, պահանջո՛ւմ («Դուք բանաստեղծ եք, դուք կհասկանաք»), որ նամակն ստանալուն պես անհապաղ մեկնի Լեյզեն, անձամբ տեսնի և երկու տողով հայտնի նրա առողջական վիճակի մասին («Բարեբախտաբար դուք նաև բժիշկ եք»):

Ծրարը մինչև իրեն հասնելը մոտ մեկ շաբաթ հայ ուսանողները ձեռքից ձեռք էին փոխանցել: Լավ էր, որ ժողովի օրը հանձնեցին իրեն, թե ոչ մեկ շաբաթը կարող էր երեք դառնալ: Այսինքն՝ ժողով ասելը շատ կլիներ. ամեն ամսվա վերջին, սովորույթի համաձայն, հավաքվում էին ավելի շատ իրար տեսնե-

---

*/Նա, ով հայել է գեղեցկությունը սեփական աչքերով, իր դուռն է բացել մահվան առջև:
Աուգուստ Գրաֆ ֆոն Պլատեն, «Տրիստան»

լու, հայերեն խոսելու, հայերեն լսելու, նորություններ, լրագրեր, գրքեր փոխանակելու: Հատկապես աշխույժ էին կովկասահայ ուսանողները, որոնք ամեն անգամ Ավետիք Իսահակյանի և Վահան Տերյանի բանաստեղծություններն էին բերում՝ թերթերից ու ամսագրերից կտրված կամ պարզապես արտագրված: «Լավ բանաստեղծներ Պոլսում շատ կան, բայց էս տեսակ բանաստեղծներ դուք չունեք», - ասում էին մի տեսակ հպարտությամբ:

Նրանք հայրենիքի կարոտն էին առնում իրարից, հայրենիք, որ զարմանալի առաձգականություն էր ձեռք բերել այստեղ՝ օտար եզերքին, տարածվելով Բաքվից, Թիֆլիսից, Շուշիից ու Երևանից մինչև Պոլիս ու Եգիպտոս: Գալիս էին հողի կարոտը մեղմելու, բայց հեռանում ավելի ծարված, և եթե որևէ լուրջ խնդիր չէր լինում քննարկելու, շտապում էին կարճ կապել, որպեսզի «ժողովը» շարունակեն մոտակա գարեջրատանը:

Սակայն այս անգամ աճապարանք չէր նկատվում: Ավելին, շփոթվածություն կար, ասես մեղքի համընդհանուր մի զգացում ապրեին այդ աններելի անուշադրության համար: «Քանի՛ անգամ ենք անցել Լեյզենի կողքով և չենք մտածել, որ հայ մեծ բանաստեղծն է այնտեղ մեն-մենակ տառապում», - ասաց ապագա մի իրավաբան: «Հավանաբար պետք չէր նամակը բարձրաձայն կարդալ, - մտովին մեղադրեց իրեն Ռուբենը, - մանավանդ որ անձամբ ինձ է հասցեագրված»:

Նամակի ծայրահեղ հուզականությունը և տագնապալից շեշտերը ցնցել էին բոլորին: «Մեզ մոտ այսպիսի բան չէր պատահի, - հայտարարեց կովկասահայ մի ուսանող: - Հովհաննես Թումանյանը եթե իր տանը մի անգամ փռշտա, Թիֆլիսի բոլոր հայ բժիշկներն անմիջապես կվազեն մոտը: Իսկ այստեղ, այս կապիտալիստական Եվրոպայում, բոլորս եսասեր ու անտարբեր ենք դարձել»:

«Ի՞նչ կարող էինք անել, - արդարացավ մեկ ուրիշը: - Առանց մեզ հայտնելու Փարիզից ուղղակի գնացել է Լեյզեն... Իսկ այնտեղ գնացողներից քանի՞սն են ետ դարձել...»:

Պարտվողական այս խոսքերը զայրացրին Ռուբենին: Զսպեց իրեն, որպեսզի խիստ բառերով չսաստի այդ ուսանողին, որն, ի դեպ, պատրաստվում էր բժիշկ դառնալ: Սակայն չէր կարող լռել: «Հայտնի է, որ այնտեղից քչերն են ետ դառնում, - ասաց նա: - Սակայն երբ չվերադարձողը մեծ բանաստեղծ է...»: Բառերն ասես մնացին կոկորդում: Մի պահ լռելուց հետո ավելացրեց. «Բոլոր դեպքերում եթե մի բան եղած լիներ... մենք անպայման կիմանայինք: Այնպես որ Աստված մեզ հնարավորություն է տալիս նրան այցելելու և քաջալերելու: Վաղն առավոտյան գնացք կնստեմ... Առայժմ մենակ կգնամ: Պետք չէ պատվիրակությամբ հասնել այնտեղ, ի վերջո այս նամակն անձամբ ինձ է ուղարկված...»:

Նա հասկացավ համընդհանուր լռությունը, որ տիրեց սրահում: Ոչ ոք չառարկեց, ցանկություն չհայտնեց ընկերանալ նրան, և մանավանդ այն ուսանողները, ովքեր արդեն առիթ էին ունեցել իրենց ազգականներին այնտեղ ուղեկցելու:

...Լեյզե՛ն, թոքախտավորների հանրահռչակ բուժարանը կամ առողջարա-

նը, ուր հիվանդներ էին գալիս աշխարհի չորս ծայրերից, չնայած «բուժել» և «առողջանալ» բառերը գրեթե անհարիր էին լեռան կատարին ծվարած այդ գյուղի անվան հետ, որն արտասանում էին զգուշությամբ, մոգական մի երկյուղով: Այնտեղ բարձրանալը գրեթե հավասարազոր էր դժոխք իջնելուն: Ռուբենը վստահ էր, որ եթե խնդրի իրեն ուղեկցեն, առնվազն մի քանիսը հոժարակամ կհամաձայնեն: Պատվի, ազգային արժանապատվության հարց կար մեջտեղը, որն անտեսելը հավասարազոր կլիներ դավաճանության:

Լոզանից մինչև Էգլ ուղևորությունը տևեց երեք ժամ: Գնացքն ամեն կայարանում կանգ էր առնում, և նստողներն ավելի շատ էին, քան իջնողները: Մեծ մասն արտասահմանցիք էին՝ անգլիացիներ, ամերիկացիներ, հոլանդացիք ու գերմանացիք, որ ընտանիքներով կամ աղմկոտ խմբերով ուղևորվում էին դեպի Մորժենի կամ Շամպերիի մոդայիկ պանսիոնատները՝ ձմեռային հանգստի և դահուկ քշելու համար: Նրանցից շատերը գնացք էին նստում արդեն կատարները տաքացած, և տեղավորվելուց հետո, առանց հարևաններից քաշվելու, թունդ խմիչքների շշերը փոխանցում իրար: Խոսում էին բոլորը միաժամանակ, գրեթե գոռգոռալով, խլացնող քրքիջներ արձակում, շարունակ ձգտում ուշադրության կենտրոնում լինել: Հատուկենտ շվեյցարացիներ, գլուխները վիզները քաշած, լուռ հանդուրժում էին այդ տեսարանը: Այդպես համբերատար տանտերն է հանդուրժում սանձերն արձակած հյուրի քմահաճույքները, մանավանդ երբ հյուրը շահութաբեր է, ինչպես այս պարագայում էր: Ճիշտ է նկատել Ավետիս Ահարոնյանն իր հոյակապ գրքում շվեյցարական նկարագիրը: Ո՛չ, վատ իմաստով չէ ասված, երանի մենք էլ մեր փոքրիկ հայրենիքն ունենայինք, երանի հյուրեր գային աշխարհի չորս ծագերից, խմեին, ուրախանային, աղմկեին, երկիրն էլ թող հարստանար ու բարգավաճեր: Ահա՛ շվեյցարացու հայրենասիրությունը, ճշմարիտ հայրենասիրությունը. չնայած այդ դրամն ուղղակի իր գրպանը չի մտնում, բայց նա դոհ է, որ իր երկրի գանձարանն է մտնելու, ահա ինչու չի բողոքում, չի զսպում անգլո-սաքսոնական այս անտանելի, այս հանդուգն ժխորը...

Իրեն էլ առաջարկեցին խմել: Սկզբում հրաժարվեց, սակայն չկարողացավ մերժել կրկնվող առաջարկները, և դուցե լավ էր, որ համաձայնեց, քանզի երկրորդ-երրորդ՝ բաժակից հետո դժոխային աղմուկն ավելի հանդուրժելի դարձավ:

Լեյզեն բարձրացող գնացքը չորրորդ ուղու վրա էր՝ կայարանի իրարանցումից մեկուսացված: Իսկ գնացքին մոտենալու համար պետք էր քայլել կիսախավար գետնուղիով՝ սառը և չոր քամուն հանդիպակաց: Յուրատեսակ no man's land* էր դա, որ կյանքը բաժանում էր մահվան աշխարհից: Եվ երբ նեղ գետնուղին անցնելուց հետո աստիճաններով բարձրացավ կառամատույց, ասես իսկապես ուրիշ աշխարհ ընկներ:

Ուղևորները՝ մոտ երեսուն հոգի, հավաքվել էին փոքրիկ մի սրահում: Կենտրոնում վառարան կար, որ գուրգուրող տաքություն էր տարածում, իսկ անկյունում՝ ճերմակ սփռոցով ծածկված սեղանի մոտ երկաթուղայինի համազ-

*/Ոչ մեկին չպատկանող տարածք(անգլ.):

գեստ հագած, չեկ մորուքով մի երիտասարդ ուղևորներին քաղցր թեյ և կակաո էր մատուցում անվճար՝ ասես դրանով փորձում մեղմել սպասվելիք ծանր հանդիպումը վերևում: Ի տարբերություն կենսախինդ զբոսաշրջիկներով լցված կայարանի մեծ սպասասրահի, ճնշող լռություն էր տիրում այստեղ:

Աչք ածեց ներկաներին: Գրեթե բոլորը երիտասարդ էին: Քսանից, նույնիսկ տասնութից մինչև քսանհինգ-երեսուն տարեկան: Ընդամենը երկու-երեք հոգի էին տարիքով ավելի մեծ: Հարազատներ, որ եկել էին ճանապարհ դնելու կամ գուցե ուղեկցելու մինչև վերջ: Աղջիկներից մեկը ոտքից գլուխ փաթաթված էր մորթիներով: Դեմքը հազիվ էր երևում: Կողքը նստած երկու կանայք՝ քառասունից-հիսուն տարեկան, խոսում էին գրեթե շշուկով, հյուսիսի անծանոթ մի լեզվով՝ շարունակ երկարացնելով ձայնավորները: Ասես երկուսով միաժամանակ աղոթում էին, աղերս հղում անհաղորդ մի աստվածության:

Հրաժարվեց որևէ բան խմել: Մասնագիտական զգուշությո՞ւն էր, թե՞ սովորական վախ... Զնայած բաժակները պիտի ախտահանված լինեին: Նեղված ու անհանգիստ դուրս եկավ կառամատույց, մեքենայորեն մի գլանակ հանեց, վառեց և տեղնուտեղն զգաց դժգոհ, նույնիսկ չարացած հայացքները, որ ընդարձակ պատուհանների միջով ասեղների պես ծակոտեցին մեջքը: Պիտի չաներ այդ բանը: Ասես հեգներ, ծանր մեղադրանք չպրտեր սրահում համբերատար սպասող դատապարտվածների երեսին:

Բարեբախտաբար այդ պահին շոգեքարշը մոտեցավ կառամատույցին՝ ետևից քարշ տալով ընդամենը մեկ վագոն: Այո, իսկապես ուրիշ աշխարհ էր ընկել, որ հեռավոր նմանություն ուներ մյուս՝ իսկական աշխարհի հետ, որ մնաց ստորգետնյա անցքի մյուս ծայրին: Ամեն ինչ այստեղ տարբեր էր, անգամ չափերն ու ծավալները: Շոգեքարշն, օրինակ՝ ավելի փոքր էր, կարծես խաղալիք լիներ հարևան գծերի վրա կանգնած փնչացնող վիշապների համեմատ: Միակ վագոնն էլ մանկական ինչ-որ բան ուներ՝ ավելի փոքր և ընդամենը վաթսունչորս տեղ: Այդքանն էլ շատ էր:

Մեկնելուն քառորդ ժամ էր մնում: Համազգեստավոր երկաթուղայինը մտավ սրահ և հանդիսավորությամբ հայտարարեց.

- Տիկնայք և պարոնայք, խնդրում եմ գրավեք ձեր տեղերը:

Հետո, դուրս գալով սրահից, կանգնեց վագոնի մուտքի մոտ և, ստվարաթղթե ուղղանկյուն տոմսակները դակելով, ուղևորներին թողեց ներս: Սրահում սպասող բոլոր երեսունն էլ տեղավորվեցին, իսկ հսկիչը, վագոնի կիսաբաց դռան մոտ կանգնած, մերթ ժամացույցին էր նայում, մերթ՝ ստորգետնյա անցքից դուրս եկող աստիճաններին: Եվ, իսկապես, մեկնումից երեք րոպե առաջ, ծանր ճամպրուկները կրող բեռնակրի ուղեկցությամբ, երկու երիտասարդ հայտնվեցին՝ շտապելուց, թե... վարդագույն այտերով: Համազգեստավորը սրանց էլ ներս թողեց, մի վերջին անգամ ժամացույցը նայեց և, վագոնի դուռը դրսից փակելով, սուլիչի ականջ ծակող ձայնով ազդարարեց մեկնումը: Ի պատասխան հնչեց փոքրիկ շոգեքարշի հզոր ծուղրուղուն և այնտեղ նստած Քարոնը (հավանաբար նույնպես համազգեստով) վագոնն առաջնորդեց դեպի վեր:

Խաղալիք-շոգեքարշը պարզվեց, որ բավական զորեղ է: Սուլելով և

փնչացնելով, մեկ ժամում հասցրեց նպատակակետին: Ճանապարհին մեկ անգամ կանգ առավ, ընդամենը երկու րոպեով: Կիսակայարանի փոքրիկ կառույցից մուշտակ հագած մի ծառայող դուրս եկավ, վագոնի դուռը բացեց, երկու հոգու ներս թողեց և դարձյալ դրսից փակելով, ճանապարհ դրեց գնացքը:

Բնանկարը չկարողացավ դիտել: Առատորեն տեղացող ձյունն ամեն ինչ թաքցրել էր կաթնամուժի տակ: Զգացվում էր, որ շարունակ բարձրանում են լանջն ի վեր և, ըստ երևույթին, չափազանց արագ: Այնպես որ գրեթե չնկատեց, թե ինչպես անցավ մեկ ժամը: Ուշադրությունից, սակայն, չվրիպեց, որ երկաթուղին միագիծ էր, այսինքն՝ հանդիպակաց շարժումը բացառվում էր. միայն վեր կամ միայն վար:

Լեյզեն հասնելուն պես, առաջին բանը, որ զարմացրեց՝ կատարելապես դատարկ կառամատույցն էր: Ո՛չ մի դիմավորող, ո՛չ մի ժպիտ, ո՛չ մի ծաղկեփունջ... Ոչ ոք, բացարձակապես ոչ մեկը չէր սպասում նրանց այստեղ, եթե չհաշվենք կայարանի ծառայողին, որը դուրս եկավ քարաշեն կառույցի միակ դռնից, ծամելով մոտեցավ, վագոնի դուռը բացեց և բոլորին հրավիրեց ներս՝ մի սպասասրահ, որը Էգլի սրահի ճիշտ պատճենն էր: Պարզվեց, որ սպասողներ, այնուամենայնիվ, կան. առողջարանների ներկայացուցիչները, որոնք եկել էին իրենց «հաճախորդներին» դիմավորելու:

«La belle Espérance», գեղեցիկ կամ, գուցե, բարի Հույս: Այսպես էր կոչվում առողջարանը, ուր պիտի փնտրեր Սիամանթոյին: Բարձրահասակ մի երիտասարդ զարմացած նայեց Ռուբենին և, ձեռքի թղթին նայելով, հարցրեց.

- Պարոնի ազգանունն ինչպե՞ս է:

- Իմ ազգանունը ցուցակում չկա... Ես եկել եմ բարեկամիս այցելելու... Նա ձեզ մոտ է բուժվում:

- Ինչպե՞ս է կոչվում ձեր բարեկամը:

- Ատոմ Յարճանյան, Կոստանդնուպոլսից:

Երիտասարդի դեմքին ժպիտ հայտնվեց.

- Բանաստե՞ղծը, - հարցրեց նա: - Սիամանթո՞ն:

- Դուք նույնիսկ նրա գրական ծածկանունը գիտե՞ք:

- Բոլորը գիտեն, պարոն, ձեզ շատ հաճելի անակնկալ է սպասվում:

Այնուհետև երիտասարդը, կողքը կանգնած երկու հիվանդներին նայելով, բարձրաձայն ավելացրեց.

- Նա մեր առողջարանի պարծանքն է՝ այդ հայ բանաստեղծը... Բժիշկ Վելլերի հպարտության առարկան... Եվ նա միակը չէ:

Երիտասարդի խոսքերը միանգամից ցրեցին ճանապարհին կուտակված մթագին մտքերը: Ի՞նչ էր նշանակում երիտասարդի ժպիտը. սեփական հաստատության գովա՞զդ, քաջալերելու ցանկությո՞ւն, թե իսկապես...

- Այսինքն, քիչ հետո ինքներդ կտեսնեք, - ավելացրեց նա:

«La belle Espérance» առողջարանը կանգնած էր մյուսներից հեռու՝ գյուղի ծայրին և կայարանից հազիվ էր երևում: Երիտասարդը նրան տեղ առաջարկեց կառքում, և հիմա, զանգակների ծլնգոցի ներքո, մյուս կառքերի շարանի հետ դանդաղ բարձրանում էին լանջն ի վեր:

Լեյզենը բաժանվում էր երեք հավասար մասերի: Կայարանից վար բուն գյուղն էր՝ իր մշտական բնակիչներով: Կայարանից քիչ վեր առողջարաններն էին: Այս երկուսի միջև բազմազգ ու բազմադավան գերեզմանոցն էր, որտեղ թաղված էին նրանք, ովքեր եկել էին... ընդմիշտ մնալու համար: Եվ գերեզմանոցը շարունակ նոր տարածքներ էր նվաճում:

Վերելքը տևեց բավական երկար: Առողջարանները գետեղված էին երկու հազար մետր բարձրության վրա՝ եղևնու և սոճու անտառների մեջ: Մինչև տեղ հասնելը երկարուկ կառաշարից մնաց միայն նրանց կառքը, որն արդեն ընթանում էր առատորեն նստած ձյան միջով:

Բժիշկ Մորիս Վելլերին տեսնելը դժվար չեղավ. չորս գամփռներով շրջապատված կանգնել էր մուտքի առջև: Հաղթանդամ և բարձրահասակ մի տղամարդ, որն իր անխնամ մորուքով և հուժկու ուսերով ավելի շատ նման էր լեռնաբնակ փայտահատի: Նոր ժամանած հիվանդներին տեղավորելու համար անհրաժեշտ կարգադրություններ տալուց հետո Ռուբենին հրավիրեց իր աշխատասենյակ:

- Այդ շներին գիտե՞ք ինչու ենք պահում, - անսպասելի հարցով դիմեց հյուրին: - Որովհետև մեզնից այն կողմ ոչ մի շինություն չկա, անտառն է... Եվ հաճախ է պատահում, որ գայլերը, անգամ ցերեկով, հայտնվեն մերձակայքում... Հիվանդները վախենում են դուրս գալ զբոսանքի...

Բժշկի աշխատասենյակն ավելի շատ նման էր որսորդի կացարանի: Պատից երկու հրացան էր կախված՝ մեկը մարտական, մյուսը՝ որսորդական: Ամենուր գայլի և այծյամի մորթիներ էին փռված, իսկ բազմոցը ծածկված էր արջի հոյակապ մորթիով: Իր հյուրին հենց այդտեղ նստեցրեց:

- Շատ հազվադեպ են բարձրանում այստեղ՝ իրենց հիվանդներին այցելելու: Իսկ եթե գալիս են, այլևս չեն իջնում... Մնում են գյուղում՝ սպասելով հիվանդի առողջացմանը:

- Եվ որքա՞ն հաճախ է պատահում այդ առողջացումը:

- Շատ հազվադեպ... Եվ գիտեք ինչ, առողջացողներից ոմանք գերադասում են մնալ այստեղ և չեն ուզում վերադառնալ իրենց նախկին կյանքին... Եթե միջոցները թույլ են տալիս...

Նա լռեց, հանդարտ, բայց հետաքրքրասեր հայացքով նայեց հյուրին.

- Նա ձեր ի՞նչն է... Ազգակա՞ն է, թե՞ բարեկամ:

- Ե՛վ մեկը, և՛ մյուսը, եթե հաշվի առնենք, որ նա մեր ժողովրդի սիրված բանաստեղծներից մեկն է... Սակայն պատիվ չունեմ նրա հետ անձամբ ծանոթ լինելու:

- Բավական էր ասել, որ հայ եք... Իսկ որտեղի՞ց եք գալիս, Կոստանդնուպոլսի՞ց:

- Ոչ, Լոզանից:

- Հա՛, հավանաբար ուսանող եք:

- Այո... Բժշկականի..., - ասաց Ռուբենը, և դա կարծես նրան իրավունք տվեց միանգամից բուն հարցը տալու. - Դոկտոր, ինչպե՞ս է իրեն զգում, այսինքն՝ ինչպիսի՞ն է վիճակը:

- Բավարար, նույնիսկ լավ... Սակայն դեռ չեմ շտապում նրա բուժման ռեժիմը փոխել:

- Այսի՞նքն:

- Դուք ապագա բժիշկ եք, ավելի հեշտ կլինի ձեզ բացատրել, չնայած նրա դեպքը ոչ այնքան բժշկության ասպարեզին է պատկանում, որքան հոգեբանության:

- Ինչպե՞ս հասկանալ:

- Նա մեկ տարի առաջ եկավ այստեղ... Վիճակը սոսկալի էր, հուսահատական... Արդեն արյուն էր թքում... Այդպիսի հիվանդները, սովորաբար, գալիս են այստեղ մեռնելու... Իսկ եթե որոշ բարելավում է լինում, ապա ժամանակավոր, խաբուսիկ, ասես արագացնելու համար վախճանը:

- Սակայն ձեզ, այնուամենայնիվ, հաջողվել է այդ վախճանը զգալիորեն հետաձգել կամ գուցե, ինչպե՞ս ասեմ, ընդհանրապես հեռացնել:

Բժիշկն ուշադիր նայեց զրուցակցի դեմքին և հանգիստ ասաց.

- Երբ առաջին անգամ բարձրացա այստեղ, մոտավորապես ձեր տարիքին էի և ես էլ գալիս էի այն համոզումով, որ մեր մարմնի յուրաքանչյուր հիվանդագին դրսևորման դեմ պետք է պայքարել, արմատախիլ անել:

- Եվ հիմա այդ համոզումը չունե՞ք:

- Իմ համոզումները չեն փոխվել, կիրառման կերպերն են փոխվել... Օրինակ՝ ինչո՞վ կբացատրեք, որ ձեր բարեկամի հետ միաժամանակ եկած երկու երիտասարդները, որոնց վիճակն անհամեմատ ավելի լավ էր, արդեն հանգչում են այնտեղ, - բժիշկը ձեռքն ուղղեց դեպի գերեզմանոցը, - մինչդեռ մեր բարեկամը...

- Մե՞ր:

- Այո, այո, մեր բարեկամը... Հավանաբար պատկերացնում եք, թե այստեղ բաբելոնյան ինչպիսի խառնաժողով է, սակայն Սիամանթոն ստիպեց ձեր՝ բոլոր հայերիդ բարեկամը դառնալ... Առնվազն հասկանալ ձեր ճակատագիրը:

- Դա արդեն մեծ բան է:

- Այստեղ երկու ուրիշ հայեր կան՝ Կովկասից... Հիշում եմ, թե ֆրանսիական թերթերն ինչպիսի ահավոր լուրեր էին տպագրում Բաքվի հայերի... Թաթարների վայրագությունների մասին... Նրանք եկան ինձ մոտ և խնդրեցին, որ լրագրերը Սիամանթոյից թաքցնեմ: Գտնում էին, որ այդ լուրերն ավելի կծանրացնեն նրա վիճակը:

- Եվ կարողացա՞ք թաքցնել:

- Թաքցնելու կարիք չեղավ: Հաջորդ օրը նա ինքը եկավ մոտս և ասաց. «Բժիշկ, ես ամեն ինչ գիտեմ: Եվ լավ է, որ գիտեմ... Ես կատաղած եմ ճակատագրի դեմ: Ես պիտի բուժվեմ այստեղ: Ես ուզում եմ ապրել, որպեսզի ապրեցնեմ մեր ցեղը... Հակառակ բոլոր սուլթանների...»: Հետո սկսեց հաճախակի գալ մոտս: Ահավոր մանրամասներ էր պատմում ձեր կյանքի մասին Օսմանյան կայսրությունում...

Բժիշկն ընդհատեց իր խոսքը և հյուրի աչքերի մեջ շեշտակի նայելով հարցրեց, ասես անկեղծ խոստովանություն էր ուզում կորզել.

- Ասացեք ինձ, սիրելի կոլեգա, բանաստեղծներն իրո՞ք այդպիսի կարևորություն... ինչպե՞ս ասեմ, այդպիսի մեսիանական հեղինակություն ունեն ձեզ համար... այսինքն՝ հայերիդ համար..., - և չսպասելով պատասխանին, շարունակեց. - Տարօրինակ է, պարզապես անհավատալի, ինչպես արդեն ասացի, այստեղ կովկասցի հայեր կան՝ մեծահարուստների զավակներ, արվեստից, գրականությունից հեռու երիտասարդներ... Ես ապշած եմ, թե ինչպիսի ակնածանքով, ինչպիսի պատկառանքով են նայում Սիամանթոյին, ասես եգիպտական քուրմ լինի նրանց համար... Եվ գիտե՞ք թե ինչն էր ամենազարմանալին, որ նույնիսկ չեն կարդացել նրա գործերը, բայց միևնույն է՝ խոնարհվում են նրա առջև: Մեզանում էլ բանաստեղծների հանդեպ պաշտամունք կա, սակայն ոչ այդ աստիճան...

Բժիշկն անկյունում դրված գրապահարանը ցույց տալով, ասաց.

- Այստեղ արդեն մի փոքրիկ հայկական գրադարան կա... Գերմաներեն, ֆրանսերեն... Ես հետաքրքրվեցի ձեր ժողովրդի պատմությամբ... Ես, որ այստեղ շարունակ մահ եմ տեսնում և ողբերգություններ, ցնցված էի ձեր ճակատագրով: Ուզեցի հասկանալ այդ գաղտնիքը, թե ինչպես եք դիմագրավել անէությանը, ո՞րն է ձեր կենսականության աղբյուրը:

- Գիտե՞ք, բժիշկ, դա նաև մեզ համար է առեղծված... Հավանաբար ինչոր առաքելություն ունենք կատարելու այս աշխարհում:

- Սակայն աշխարհը չի թողնում, որ կատարեք, ավելին՝ աշխարհը չի ուզում, որ գոյություն ունենաք, և դուք շարունակ դիմադրում եք, նույնիսկ հաղթում... Ահա թե ինչի մասին էինք խոսում, ժամեր շարունակ, Սիամանթոյի հետ, այս սենյակում... Եվ մենք միասին կարողացանք խաբել մահին:

- Կներեք, բժիշկ, բայց դուք սկսել եք բանաստեղծի պես խոսել:

- Չեմ ժխտում, - ժպտաց բժիշկը: - Բայց հիմա պիտի խոսեմ որպես բժիշկ. արդեն երեք 'ամիս է, ինչ նրա վիճակն սկսեց լավանալ: Մինչ այդ, նա պարզապես դատապարտված էր, և անկեղծ ասած, որևէ հույս չէի տեսնում... Եվ գիտե՞ք ով ստիպեց կարծիքս փոխել... Հենց ինքը:

- Ինչպե՞ս:

- Խաբելով... Այո, խաբելով: Օրինակ՝ երբ գալիս էր կշռվելու, հագին մշտապես արևելյան ընդարձակ խալաթն էր, որն, ինչպես պարզվեց, ներսից գրպաններ ունի, և այդ գրպանների մեջ նա գրքեր էր դնում, մետաղյա առարկաներ: Ես գիտեի, որ այդպիսի խորամանկության է դիմում, սակայն ձևացնում էի, թե չեմ նկատում և մանավանդ բուժքրոջը հանձնարարեցի չտեսնելու դնել: Իսկ ջերմաչափը ցնցում էր, որպեսզի ջերմությունն իջեցներ, որպեսզի ինքնիրեն խաբեր, թե ջերմություն չունի:

- Եվ այդ խորամանկություններն օգնեցի՞ն:

- Պատկերացրեք, որ՝ այո:

- Բայց առանց ստույգ տվյալների ինչպե՞ս էիք կարգավորում բուժման ընթացքը:

- Ես իմ հաշվարկներն ունեմ, երիտասարդ, - ժպտաց բժիշկը: - Այդ կշեռքներն ու ջերմաչափերն, անշուշտ, պետք են, բայց բավական է հիվանդի թոքերը լսեմ, դեմքին նայեմ կամ ճակատը շոշափեմ, որպեսզի անելիքս իմա-

նամ: Նրա հնարքներն ինձ խաբել չէին կարող, սակայն տեսնում էի, որ հոգեկան բեկում է կատարվել նրանում, որ խելագարի պես ուղում է ապրել... Հիվանդին նայելիս ի՞նչ ենք անում. դոտեպնդում ենք, ասում, թե լավ ես, բան չկա, շուտով կանցնի... Ասում ենք՝ շատ անգամ առանց հավատալու մեր ասածներին, որպես հավուր պատշաճի խոսքեր... Տվյալ դեպքում դերերը փոխվել էին, նա ինքն էր գոտեպնդում ինձ, նա էր ասում այդ խոսքերը և դեռ ուրիշ բաներ, և ասում էր խորապես հավատալով, որ եթե հիմա այդպես չէ, ապա շուտով անպայման այդպես կլինի:

- Բայց, ձեզ հետաքրքիր չէ՞ր ստույգ տվյալներ ունենալ հիվանդի մասին:

- Հենց դա էր ինձ ստիպում երբեմն-երբեմն մտնել նրա սենյակ և անձամբ չափել ջերմությունը: Ըստ որում, ջերմաչափը նրան ցույց չէի տալիս, նայում էի և դնում գրպանս: Հիշում եմ, մի անգամ ձեռքիցս խլեց, ուշադիր նայեց և կարծես զարմացած ասաց. «Հապա տես, 37,2 է...»: Ձեք կարող պատկերացնել ինչ կատարվեց. տեղից վեր թռավ, երեխայի պես սկսեց ոտքերը գետին զարկել ու գոռալ. «Սո՛ւտ է, խաբում ես, ես ջերմություն չունեմ»:

- Այդքանը բավակա՞ն եղավ հիվանդության ընթացքը փոխելու համար:

- Ե՛վ դա նպաստեց, և՛ մեր զրույցները, և՛ դեղորայքը, և մանավանդ երբ ամեն կեսօրից հետո, նույնիսկ ցուրտ ձմռանը, ժամերով պառկում էր պատշգամբում... Նրան անչափ օգնեցին սրտապնդող նամակները, որ ստանում էր աշխարհի չորս ծագերից:

Բժիշկը դարակը բացեց և խայտաբղետ ծրարների մի կույտ հանեց:

- Ահա, այսօրվա փոստն էլ երեք նամակ է բերել նրա համար... Հիանալի ժողովուրդ եք դուք: Այստեղ բազմաթիվ նշանավոր արվեստագետներ են եղել ամբողջ աշխարհից, սակայն ոչ մեկն այսպիսի ուշադրության, այսպիսի հոգածության չի արժանացել: Իսկապես իրավունք ունի ասելու, թե ամբողջ ժողովուրդն է իրեն սպասում, իսկապես որ պարտավորված է ապրել: Հիմա եմ հասկանում, որ մեծամոլություն չէր, երբ ասում էր. «Ես պիտի ապրեմ, որպեսզի ապրեցնեմ իմ ժողովուրդը...»:

- Հավատացեք, որ դա զուտ ճշմարտություն է, զարմանալի, անըմբռնելի ճշմարտություն: Ամբողջ աշխարհը մեզ դիտի որպես վաճառական, որպես նյութապաշտ մի ժողովուրդ, և դա, ցավոք հեռու չէ իրողությունից...

- Այո, ձեզ հաճախ են համեմատում հրեաների հետ:

- Այնուհանդերձ մի էական տարբերություն կա մեր և նրանց միջև. հրեաները լսում են իրենց քահանաներին, իսկ հայերն՝ իրենց բանաստեղծներին, այնպես որ Սիամանթոն իրավունք ուներ այդպես ասելու... Նա ուրիշ ելք չունի. պիտի ապրի:

- Մեր բանաստեղծներն օտարացված են հասարակությունից, վերջապես՝ ժողովրդից, մինչդեռ ձեզանում նրանք կիսաստվածներ են:

- Թերևս... Ձնայած այդ կիսաստվածներից մի քանիսը, մեր իրականության մեջ, ապրում են անտեսված, թշվառ ու անոթի:

- Սակայն դառնանք մեր հիվանդին, որը համառորեն չի ուզում հիվանդ լինել: Դուք նրա ազգականների հանձնարարությա՞մբ եք եկել:

- Ոչ, սիրելի պարոն: Ոչ մեկն ինձ չի հանձնարարել... Ես պարզապես այստեղ եմ եկել կովկասահայ մի օրիորդի խնդրանքով և իմ սրտի թելադրանքով, որպեսզի հավաստի տեղեկություն ստանամ Սիամանթոյի առողջական վիճակի մասին:

Բժիշկը ժպտաց և գլուխն օրորեց:

- Ես հասկանում եմ, որ այստեղ հասնելուց հետո կուզեիք նրան անպայման տեսնել, սակայն ժամը հարմար չէ. ճաշից հետո, մորթիներով փաթաթված, պառկում է պատշգամբում, որպեսզի մաքուր օդ շնչի: Խստորեն և հաճույքով կատարում է այս ցուցմունքը, - բժիշկը ժամացույցը նայեց. - Ժամը երկուսն է, արդեն պատշգամբում է և այնտեղ կմնա մինչև ընթրիք:

- Նա քնո՞ւմ է:

- Ոչ միշտ... Սովորաբար, պառկած երազում է, կարդում, երբեմն էլ մենախոսում...

- Իսկ կարո՞ղ եմ նրան տեսնել դրսից... Ո՞ր հարկում է նրա սենյակը:

- Օ՛, վերջին... Ծանր հիվանդների վիճակը թեթևացնելու համար նրանց տեղավորում ենք առաջին կամ երկրորդ հարկում... Սակայն չուզեց, որոշեց վերջին՝ հինգերորդում մնալ: «Տեսարանն այստեղից ավելի գեղեցիկ է», - ասաց նա:

- Ափսո՛ս, բախտ չեմ ունենա նրա հետ միասին այդ տեսարանով հիանալու, ժամը հինգին գնացքով պիտի իջնեմ Էգլ:

Բժիշկը մի պահ մտորելուց հետո ասաց.

- Չեմ խոստանում, թե այսօր ձեզ կհաջողվի նրա հետ երես առ երես տեսնվել, սակայն տեսարանով կհիանաք, գուցե նույնիսկ...

Նա Ռուբենին ուշադիր զննեց վերից վար, հետո, սենյակի խորքում դրված գեղջկական հսկա սնդուկի միջից ոչխարի մի քուրք հանեց ու տվեց նրան:

- Ձեր ուսանողի վերարկուով դուք կմրսեք: Սա հագեք և եկեք ինձ հետ:

Այնուհետև հրացաններից մեկը վերցրեց, և միասին դուրս եկան: Հսկայական եղևնիների ճյուղերը քսվում էին շենքին: Առողջարանն ասես մխրճվել էր լեռան լանջին փռված փարթամ անտառի մեջ: Այդտեղից դժվար էր տեսնել պատշգամբներում մարդ կա՞, թե՞ ոչ: Միայն երկրորդ հարկում երեք հոգու տեսավ՝ հաստ վերմակներով փաթաթված: Ասես պատանքված լինեին կամ, ավելի շուտ, նման էին հսկայական հարսնյակների, որոնց միջից պիտի փրկության թիթեռը դուրս գար:

Նրանց գլուխները նույնպես փաթաթված էին, բայց ճեղքերից գոլորշի էր դուրս գալիս, անսպասելի ծիծաղ էր հնչում, գերմաներեն առանձին բառեր լսվում, որ խուսափում էին նախադասություն դառնալ: Մյուս հարկերում էլ, հավանաբար, այդպիսի շնչող մումիաներ կային, բայց նրանք չէին երևում: Ռուբենը հինգերորդ հարկի պատշգամբը նայեց: Անկարելի էր անգամ որևէ մեկի ներկայությունը ենթադրել այնտեղ: Երևում էր միայն ապակեպատ դռների վերին անկյունը: Դրանցից մեկը բաց էր: Ռուբենը հայացքը հառեց՝ հուսալով որևէ մեկին տեսնել: Բժշկի ուշադրությունից չվրիպեց նրա հայացքը:

- Սիամանթոյի սենյակն է:

- Իսկ դուռն ինչո՞ւ է բաց թողել:

- Որպեսզի սենյակը մշտապես օդափոխվի:

- Իսկ չի վախենո՞ւմ մրսել:

- Հարցը տեղին էր: Բուժման այս եղանակը որքան օգտակար է, նույնքան էլ վտանգավոր: Ամեն հիվանդի խորհուրդ չի տրվում: Նրան էլ սկզբում զգուշացա առաջարկել: Սակայն ինքը եկավ մոտս և պահանջեց, պատրաստ էր նույնիսկ գիշերներն այնտեղ քնել... Գիշերն, իհարկե, արգելեցինք, բայց ցերեկը, անգամ սառնամանիքին մնում է:

Ռուբենը նորից նայեց վերև: Հիմա նա այնտեղ պառկած է: Քնա՞ծ է արդյոք, մտորո՞ւմ է, երազո՞ւմ... Ինչպե՞ս կուզեր անունը տալ, կանչել, ողջույններ հաղորդել, հարազատ եղբոր պես քաջալերել, անսասան մի հույս հայտնել, որ շուտով, շատ շուտով լքելու է այս չքնաղագեղ, բայց տխուր կայքերը և վերադառնա Հայաստան, ուր ամբողջ ժողովուրդն անհամբեր սպասում է նրան: Ինչպիսի՜ անդսպելի փափագ էր խեղդում իր մեջ: Գիտեր, որ մի երկու ժամ հետո, երբ գնացք նստի և Տարտարոսի այս նախադռներից հեռանա, մինչև կյանքի վերջը իրեն չի ների, որ եկավ հասավ այստեղ, գրեթե կողքը կանգնեց և նույնիսկ բարև չասաց, նույնիսկ երեսը չտեսավ... Համոզվա՞ծ է արդյոք, որ սա վերջին հանդիպումը չի լինելու... Մի՞թե չգիտի, որ մահը հետաձգում չունի... Իսկ ի՞նչ կասի Սիամանթոն, երբ իմանա, որ ինքը հասել է այստեղ և առանց տեսնելու, առանց ողջությունը հարցնելու ետ դարձել... Ա՜խ, երանի ապագա բժիշկ չլիներ և չիմանար նման առողջարանների խստագույն կարգուկանոնը, երբ հանցագործության հավասար մի բան է խռովել կյանքի հույսերին կառչած այս մահապարտների անդորրը:

Բժիշկ Վելլերն անտառի միջից դուրս ցցվող ժայռը ցույց տվեց:

- Այդտեղից հրաշալի կտեսնեք... Ես հեռադիտակ եմ վերցրել:

Ժայռը թվում էր մոտիկ, սակայն կես ժամում հազիվ հասան և մի տասը րոպե էլ կորցրեցին կատարը բարձրանալու վրա, ուր երկու հոգու համար բավական տեղ կար:

Առողջարանը ճիշտ իրենց առջևն էր՝ ասես ափի վրա դրված: Հայացքն անմիջապես ուղղեց դեպի վերջին հարկի պատշգամբի միակ բաց դուռը, որի մոտ մորթիապատ մի մարմին էր տարածվել: Դեմքը չէր երևում, լրագիրը ծածկել էր այն: Կողքը գրքերի, թերթերի ու հանդեսների մի կույտ տեսավ և տեղնուտեղը հիշեց, որ կարևոր հարցերից մեկը չի տվել բժշկին. «Արդյոք գրո՞ւմ է այստեղ»:

Ուզեց հիմա հարցնել, բայց բժիշկն, ամենայն ուշադրությամբ, մեկ ուրիշ տեսարան է զննում. երկու հիվանդապահ օգնում էին մի աղջկա ելնելու պատշգամբում դրված թախտի վրայից: Նա հազիվ էր շարժվում, երևում էր, որ չափազանց թույլ է: Հիվանդապահները, թևերը մտած, հոգածությամբ տարան ներս և դուռը փակեցին: Բժիշկն անհանգիստ էր, պատշգամբներում տարածված մյուս հիվանդներին էլ զննեց և, արտակարգ ոչինչ չգտնելով, հեռադիտակը հանձնեց Ռուբենին:

Հիմա ամեն ինչ հրաշալի երևում էր: Ասես առջևն էր պառկել: Նույնիսկ

թերթի անունը կարդաց՝ ճերմակ ձեռնոցների միջև. «ԴՐՕՇԱԿ»: Կողքը թափված թերթերը նույնպես հայկական էին: Ջեն մոռացել նրան: Հավանաբար ամեն տեղից ուղարկում են: Բաց դռան միջով սենյակի մի հատվածը տեսավ ամենայն մանրամասնությամբ: Ձախից երևում էր մահճակալի ծայրը, աջից՝ մի գրասեղան, վրան թղթեր, ապակյա զանգվածեղ մի թանաքաման և մի հաստափոր գիրք, ամենայն հավանականությամբ՝ բառարան: Նամա՞կ է գրում այդ թղթերի վրա, օրագի՞ր, մտորումնե՞ր, թե որոտաձայն իր բանաստեղծությունները... Սենյակը ճերմակ էր ու լուսավոր: Ձմռան արևի ճառագայթները՝ ձյան արտացոլումով կրկնապատկված, կուրացնող մի լույսով էին ողողել ամբողջ առողջարանը: Հեռադիտակը նորից ուղղեց նրա կողմը: Հիմա մեկ ուրիշ թերթ էր կարդում: Ափսո՛ս, առիթը փախցրեց: Թերթը փոխելու պահին կկարողանար երեսը տեսնել: Շուրջբոլորը կատարյալ լռություն էր, որը, սակայն, ժամանակ առ ժամանակ, խախտվում էր երկրորդ հարկի պատշգամբում պառկած դերմանացիների զուսպ ծիծաղով և խոսքային ընդհանուր շղթայից պոկվող առանձին բառերով, որոնք հստակությամբ հասնում էին մինչև ժայռի կատարը: Ասես կողքը խոսեին: Նույնիսկ թվաց, թե լրագրի շրշյուն լսեց, նրա շնչառությունը: Ինքն էլ չզգաց, թե ինչպես, սովորականից ավելի բարձր, արտասանեց. «Ատո՛մ...»: Ասես կողքի սենյակում գտնվող մեկին կանչեր...

Այս անգամ իսկապե՛ս, առանց որևէ կասկածի, լսեց արագորեն ծալվող լրագրի շրշյունը: Հետո արևավառ, կարմրին տվող դեմքը տեսավ, մուգ ակնոցով: Նրա համար, հավանաբար, դժվար չեղավ միանգամից ճշտել ձայնի աղբյուրը, քանզի, առանց շուրջը նայելու, հայացքն ուղղեց իրենց կողմը: Պիտի որ զարմացած լիներ, քանզի, ինչպես նկատեց, այստեղ բոլորը նրան իր գրական ծածկանունով էին դիմում:

Ջննող հայացքն ուղղված էր իրենց կողմը: Բժշկին, իհարկե, ճանաչեց, հիմա ուզում էր պարզել, թե ով է նրա կողքին կանգնածը: Դեմքը չէր տեսնի, տեսնելու դեպքում էլ չէր ճանաչի... Չէ որ ծանոթ չէին: Եվ այն, ինչ արեց, պիտի հետո, սառը դատողությամբ վերլուծեր և գտներ, որ տվյալ իրավիճակում, բանաստեղծին դիմելու միակ հարմար ու ճշմարիտ ձևն էր. արտասանել նրա իսկ տողերը... Ապացուցելով, որ իսկապես պիտի ապրի, որ ժողովուրդը հավատում և սպասում է ապաքինման հրաշքին.

Վասնզի մահն այլևս ուսերուդ վրա չէ, այս իրիկուն...
Ուրեմն, զա՛րկ, Կովկա՛ս, ավերակյալ ու արցունքոտ Հայաստանին
աչքերը քեզի կը նային.
Ան գիտե, որ քու թշնամիդ ատելությունը իր թշնամիներուն
է որ կը բխի,
Երբ իր գերեզմանին մոխիրը իր գուժկան հովերուն հետ
եկավ ճամփաներդ սգավորել,
Երբ իր արյունը եկավ քու եղբայրական տանդ սեմերը թրջել,
Երբ իր կոտրտած բազուկը քու կտրիճի ձեռքերուդ ի խնդիր
քեզի դողդոջեցավ...

Ստիպված էր ընդհատել, քանզի շունչը չդիմացավ դյուցազնական այս տողերին, որ լեռնային բնանկարի մեջ առասպելական ու դաժան մի գեղեցկությամբ էին օծվել... Հեռադիտակը մոտեցրեց աչքերին: Նրա դեմքը տեսավ, որ զարմացած էր, ապշած, որ բացառիկ մի հրճվանք էր արտահայտում: Նա ելավ մոտեցավ բազրիքին, ձեռքով նշան արեց և շարունակեց սկսված բանաստեղծությունը: Առաջին անգամ էր լսում նրա ձայնը, որ նուրբ հնչեղություն ուներ, մի քիչ երգեցիկ, դուցե ավելի սազական նրբին տողերի համար.

Թշնամին նույնն էր այն ատեն, այն որ այսօր, քու պաշտպանի
բազուկեն զարհուրած՝
Կ'ուզե զայն ջախջախել, կարենալ առնելու համար վերջնական
մահացումը մեր Ցեղին...
Ուրեմն զա՛րկ, Կովկա՛ս, թեև գիտեմ, որ քու ասպետական
ձեռքերուդ հարվածին անարժան է նա,
Զա՛րկ, թեև գիտեմ որ քու սուրիդ վեհությունը պետք չէ՛ր
արատավորել
Այդ անբաններու խուժանին թունավոր ու պժգալից
արյունեն...

Հիմա նոր նկատեց, երբ կողքից էր լսում, այն էլ հեղինակի կատարմամբ, որ այս տողերն ավելի սաղական են դաժանորեն գեղեցիկ այս բնանկարի մեջ, ուր վանկերն, ասես, իրար բախվող հսկայական ժայռերի դղրդոցներ լինեին: Սակայն հիացմունքին անմիջապես զուգորդեց տագնապը. այս անակնկալի, այս ոգևորության մեջ ստիպված է բարձր արտասանել, գոռալ, որպեսզի լսելի լինի՝ ժայռի վրա կանգնած զրուցակցին: Արդյոք վտանգավոր չէ՞ այդ լարումը, այդ հուզումնալից ծանրաբեռնվածությունը տկար թոքերին, ուստի, ասես բեռը կիսելու համար, շարունակեց հեղինակի հետ.

Զա՛րկ, թեև գիտեմ որ հերոսները հերոսներու միա՛յն կրնան
ընդհարվիլ,
Զա՛րկ սա անարդ ճակատագիրը ջախջախելու և Զարիքն
ըմբերանալու համար,
Զա՛րկ, որովհետև ամե՛ն Հույս զԲեզ կը հուսա և ամեն Ասպդա
զԲեզ կը պաղատի,
Զա՛րկ, վասնզի ամե՛ն Ազատություն ու ամե՛ն Արև քու հարվածիդ
կայծերեն պիտի ծնանին.
Զա՛րկ, քու անթառամ սիրուդ և ատելությանդ չափին
խորությանը համեմատ.
Զա՛րկ, զա՛րկ, ահավասիկ հորիզոնները կը կապույտնան,
ահավասիկ Առավոտները կճեղքվին,
Զա՛րկ, ազատաբեր հարվածիդ շրմնդը Մասիսեն ի Տավրոս
և մինչև Հայրենիքին խորերը կթնդա:

Քար լռություն տիրեց միանգամից, հետո ծափեր հնչեցին. հիվանդներն

էին, որ մոտեցել էին բազրիքին, մի քանիսն անգամ սենյակներից էին դուրս եկել: Ծափահարում էր նաև բժիշկը: Հետո նորից լռություն տիրեց: Սիմանթոն հանել էր մուգ ակնոցը, ասես խանգարում էր ավելի լավ տեսնել անծանոթ զրուցակցին:

- Ո՞վ ես, զարմանալի մարդ, որտեղի՞ց ես գալիս, Հայաստանի ո՞ր անկյունից... , - հարցրեց Սիմանթոն, հետո, պատասխան չստանալով, անհամբեր ավելացրեց. - Անունդ ինչպե՞ս է, անունդ ասա:

Ի՞նչ անունով պիտի ներկայանար. իր իսկական, թե մի քանի ամիս առաջ հորինված ծածկանունով: Առաջինը ոչինչ չպիտի ասեր նրան. բազմաթիվ չիլինկիրյաններ կան Պոլսում և այլուր: Իսկ եթե ծածկանունով ներկայանա և այդ զույգ վանկերը դարձյալ ոչինչ չասե՞ն... Կողքին դիզված այդ բազմաթիվ հանդեսներից ու թերթերից որևէ մեկի մեջ անպայման իր բանաստեղծությունները կլինեն: Սակայն տպավորե՞լ են իր տողերը, իր ծածկանունը մնացե՞լ է հիշողության մեջ... Նա, որ այստեղ ամեն օր, ամեն ժամ կենաց-մահու պայքարի մեջ է: Բայց ահա կարդում է, հետաքրքրվում կյանքով, ուրեմն, գուցե իր տողերը հիշի, որ բոլորովին վերջերս տպագրեց: Այո, բանաստեղծը բանաստեղծին այդպես պիտի ներկայա. մեր անունը մեր տողերն են.

Վերջալույս է, կքալեմ. հովը վայրագ կփչե.
Միապաղաղ ամպերու սառնության մեջ մարմարի,
Հորիզոնին վրա լուռ, արեգակին ցոլքը չէ՞,
Որ այսօր ալ՝ ինչպես միշտ՝ դողդղալով կմարի:
Բայց ի՞նչ տրտում վերջալույս: Երկնին վրա աչունի
Ո՛չ արևի բյուրակնյա շառավիղներ թրթռուն,
Ո՛չ երանգներ բոցավառ, ո՛չ երակներ ծիրանի,
Ո՛չ իսկ երիզ մ'ոսկին եզերքն ի վար ամպերուն...

Լռեց: Շունչը նորից կտրվեց: Այս անգամ սեփական տողերից: Ավելի շատ անձկալից մի մտատանջության պատճառով. ասես խելագարի կամ նարգիսականությամբ տառապող ինքնահավան գրչակի պես իր տողերն էր պարտադրում համազգայնորեն ճանաչված բանաստեղծին... Զղջաց իր անխոհեմ քայլի համար... Արդեն չորրորդ քառյակից սկսեց արտասանել, որպեսզի չհոգնեցնի անսովոր ունկնդրին, սակայն անմիջապես թվաց, թե իր տողերը պարապի մեջ են հնչում, թե ոչինչ չեն ասում նրան... Եվ նա, իսկապես մեծ բանաստեղծը, հիմա, քաղաքավարությունից դրդված, ճիգ է գործում, որպեսզի քաջալերող, հավուր պատշաճի մի երկու բառ ասի: Ո՛չ, պետք չէ... Իսկապես իզուր կարդաց... Հիմա շտապ հրաժեշտի մի երկու խոսք կասի, այն խոսքերը, որ ասվում են առողջացման ճամփան բռնած հիվանդին, և իր առաքելությունն ավարտելով, կվերադառնա Լոզան: Եվ արդեն ձեռքը բարձրացրել էր, որպեսզի հրաժեշտի շարժումով ավարտի այս տարօրինակ հանդիպումը, երբ վերջին հարկի պատշգամբում բազրիքին մոտեցած բանաստեղծը հայտնություն արածի պես ժպտաց, ձեռքի պատասխան շարժում արեց և շարունակեց կիսատ մնացած բանաստեղծությունը.

Անշրջագիծ, անորոշ, սառած ծովու մը նման՝
Հորիզոնը համորեն գորշ անհուն մ՚է կապարի,
Ուր աշնային օրերու տժգույն արևն անսահման
Զգալաբար կհա՛լի, կտարտամնա՛, կը մա՛րի...

Նորից լռություն տիրեց: Հաջորդ քառյակները չարտասանվեցին, այսինքն՝ այլևս պետք չէր, այսքանը բավական էր այս հրաշալի, այս անձեռակերտ կամուրջը կառուցելու համար: Սակայն ձայնը նորից հնչեց.

- Ողջույն քեզ, Ռուբեն, իմ բանաստեղծ եղբայր... Հարյուր տարվա կյանք պարգևեցիր ինձ այսօր... Ինչպե՞ս պիտի երախտահատույց լինեմ:

- Ողջ և առողջ վերադարձիր այստեղից: Դա կլինի քո ամենաշքեղ նվերը բոլորիս:

- Քիչ մնաց, եղբայրս, շուտով կգամ, անպայման պիտի գամ... Իսկ հիմա ե՛կ այստեղ... Այդ լեռը քեզ համար արժանի պատվանդան է, բայց հանուն ինձ վար իջիր, գոնե երեսդ տեսնեմ մոտիկից:

Վայրէջքը նույնքան դժվար եղավ, որքան վերելքը: Բայց ծովափին ծնված ու մեծացած երիտասարդն արդեն հասցրել էր մտերմանալ լեռների հետ, ուստի բնավ հոգնություն չզգաց:

Առողջարան մտնելուց առաջ բժիշկը ժամացույցը նայելով ասաց.

- Նկատի ունեցեք, որ ձեզ շատ քիչ ժամանակ է մնացել, կարծում եմ, որ տասնհինգ րոպեն բավական է... Թե ոչ ստիպված կլինեք գիշերը գյուղի պանդոկում անցկացնել:

Եվ գուցե ճիշտ էր, որ նրանց հանդիպումը երկար չտևեց: Մեկ օրվա համար այդքան տպավորությունները շատ կլինեին... «Մենք անմահների նման զրուցում էինք լեռների կատարներին նստած, - ասաց Սիամանթոն: - Իսկ հիմա իջնենք ներքև և խոսենք որպես հասարակ մահկանացուներ»: «Դու ներքևում էլ աստված ես...»:

Հիմա մոտիկից տեսավ երեսը՝ արևավառ, դիմագծերը խստացած: Պատանիների դեմքերն էին այդպես վառվում ամռանը՝ իր հայրենի գյուղաքաղաքում, որովհետև օրնիբուն ծովափին էին: Իսկ այստեղ, համալսարանում, ամերիկացի ուսանողներ կային, որոնք ձմեռային արձակուրդներին գնում էին լեռները դահուկ քշելու և վերադառնում այսպես թխացած, աղյուսագույն դեմքերով: Գեղջկական վայրենի առողջության դրոշմն էր տպվում նրանց երեսին, մի տեսակ ազնիվ առնականություն, որը հիմա հիացմունքով տեսնում էր՝ ժամանակին դալկահար բանաստեղծի դեմքին: «Տողերիդ նման ես դարձել, Ատոմ, քարակոփ և պողպատյա... Դու գրիչո՞վ ես գրում, թե դարբնի մուրճով»: «Գրիչը մուրճից ավելի զորեղ է, Ռուբեն... Նայած թե ում ձեռքերի մեջ է»: «Սակայն քո ձեռքերը նուրբ են, Ատոմ, քո հոգիդ էլ նուրբ է»: «Մեր բոլորիս հոգիներն էլ նուրբ են, սիրելի եղբայր, ժամանակներն են դաժան, ուստի մեզ երկաթի կոկորդներ են պետք, որպեսզի մեր տողերը չեփորի պես հնչեն...»:

Նույնիսկ չհասցրեցին նստել: Զրույցը ոտքի վրա էր, հապճեպ, խոսում էին իրար ընդհատելով, յուրաքանչյուրն շտապում էր իրենն ասել: Բժիշկը մի-

ջամտեց՝ զգուշացնելով, Ռուբենին, որ գնացքից ուշանում է, վերջինս արդեն դուրս էր եկել սենյակից, երբ Սիամանթոն, որպես հրաժեշտի խոսք, ասաց. «Քիչ մնաց մոռանամ... Մեկ շաբաթ է քո բանաստեղծություններն եմ կարդում և չեմ հագենում... Որքա՜ն նրբին ու անպաշտպան է գեղեցիկը քո տողերում... Այս եվրոպացի բանաստեղծների պես չես, որոնք գեղեցիկը սիրում են շոշափել, նույնիսկ վայելել... Քոնը եթերային է, եթե ձեռք տաս՝ կանհետանա...»:

Հիմա խաղալիք գնացքով իջնում էր ներքև: Վագոնի միակ ուղևորն էր: Մեքենավար-Քարոնն օրվա տուրքը բերելով Թանատոսին, մթնշաղից առաջ շտապում էր իջնել հովիտ, որպեսզի հաջորդ օրերի բաժինները հաներ վերև: Հսկիչը նույնիսկ տոմսակը նայեց, և բավական ուշադիր: Արդյոք հիշե՞ց, որ էգլի կայարանում արդեն ստուգել էր, թե ծառայողական այդ արարողությունը յուրատեսակ պարգև էր այստեղից անվնաս վերադարձողների համար: Եթե իրոք այդպես էր, ապա մահու-կենաց այս գիծն սպասարկող ընկերությունը մեկ ուրիշ նվեր էլ արեց՝ փառահեղ տեսարանը, որ վերադարձին նայում էր վագոնի մաքրված պատուհանների միջով:

Հիշեց, թե առավոտյան ինչպիսի տրամադրությամբ բարձրացավ այստեղ և որքան մռայլ ու վախճանական էր թվում ամեն ինչ: Հիմա ինչո՞ւ է կատարելապես ուրիշ կերպ նայում կյանքին: Անշուշտ, հիմնական «մեղավորը» Սիամանթոն է, որ իր օրինակով համոզեց, թե ապրելը ոչ թե մահվան քմահաճույքից, այլ մարդու կամքից է կախված:

Սակայն չէր ուզում այս հայտնության համար պարտական մնալ միայն նրան, քանզի առավոտ կանուխ, երբ Լոզանի կայարանում գնացք էր նստում, ապա լոկ մի նպատակ ուներ. բանաստեղծի մոտ գնալ կյանքի գաղափարը ներարկելու: Այսինքն՝ պատրաստ էր նրա հետ կիսել այդ գյուտը, սակայն ոչ մի դեպքում չէր զիջի ամբողջովին: Այո, այդպես ավելի արդար կլինի, հաշվի առնելով այն կարևորագույն հանգամանքը, որ իրենց կյանքը միայն իրենց մասնավոր իրավունքը չէ, այլև, ինչպես ասվեց օտարի բերանով, ժողովրդին ապրեցնելու միջոց:

* * *

Առաջին օրվանից չսիրեց Ս. Ֆրանսուայի հրապարակը: Նախ, առանձնապես ոչ մի գեղեցիկ բան չկար այնտեղ. մի քանի անհրապույր տներ, մի երկու աղքատիկ խանութ, մի քանի անշուք սրճարան, իսկ կենտրոնում տնկված էր Ս. Ֆրանսուայի գորշ, փոքրիկ և տձև եկեղեցին: Ասես ճարտարապետը պահեստ էր շինում, բայց կեսից որոշել է եկեղեցի կառուցել: Շաբաթը երկու անգամ իրենց բերում են այստեղ՝ երեկոյան ժամերգության մասնակցելու:

Միակ հետաքրքիր բանը, թերևս, տրամվայն է, որ Բենժամեն Կոնստանի փողոցից խուճապահար զնգզնգոցով մտնում է հրապարակ և անմիջապես անհետանում: Ինքն, օրինակ՝ շատ կուզեր, որ իրենց Կաթողիկե տանեն, չէ որ այնտեղ էլ ժամերգություն է լինում: Ընդամենը մեկ անգամ էր մտել այդ եկեղեցին և հիացմունքից համրացել: Այնտեղ կուզեր իր աղոթքն անել: Երեկ չէ առաջին

օրը, երբ իրենց դարձյալ զինվորների պես շարել էին (հենց սկզբից չսիրեց հաստատության այդ սովորությունը), որպեսզի եկեղեցի տանեն, ընդգծված քաղաքավարությամբ դիմեց տիկ. Սպիեսին. «Իսկ ինչո՞ւ մեզ Կաթողիկե չեք տանում, այնպե՛ս գեղեցիկ է այնտեղ»: Ակնոցավոր մի օձ հայացքը հառեց և գրեթե ֆշշացնելով ասաց. «Այդ մե՛նք ենք որոշում, օրիորդ Ապել, թե որ եկեղեցին պիտի գնաք, բացի այդ, լավ հիշեք, - պսպղուն երկու ապակի հերթով սահեցին շարք կանգնած աղջիկների վրայով. - ձեզ գեղեցկության համար չենք տանում այնտեղ»: Այդ ժամանակ խորամանկ Բետտին լացակումած ձայնով դիմեց տիրուհուն. «Սակայն, տիկին Սպիես, Սուրբ Ֆրանսուայի եկեղեցում սոսկալի ծանր օդ է, պարզապես անկարելի է շնչել, ասես մուկ է սատկել... Հիշո՞ւմ եք, անցյալ անգամ վատ զգացի, գրեթե ուշաթափվեցի... Իսկ Կաթողիկեում այնպե՛ս ընդարձակ է և օդը մաքուր»: Ապակիներն անշարժացան, հետո երախը բացվեց և երկճյուղանի լեզուն երևաց. «Իրավացի եք, օրիորդ Սիմփսոն, Կաթողիկեի ներսն իսկապես ընդարձակ է, օդն էլ՝ գուցե ավելի մաքուր, որովհետև մշտապես միջանցահով կա, և ձեզ նման փխրուն օրիորդները հեշտությամբ կարող են մրսել: Սակայն դուք մոռացաք նշել Կաթողիկեի ամենակարևոր արժանիքը, անշուշտ, ըստ ձեզ. այնտեղ մերձակայքում պարապ ուսանողներ են շրջում, որոնք հատուկ եկել են Շվեյցարիա, որպեսզի ձեզ նման միամիտ օրիորդներին գլխից հանեն»: «Իսկապե՞ս, - հրեշտակի միամտությամբ պատասխանեց Բետտին, - ես այնտեղ վանականներից զատ ուրիշ ոչ մեկին չտեսա»:

Մանկապարտեզի երեխաների պես շարք-շարք հանում են փողոց և տանում եկեղեցի: Դաստիարակ օրիորդներից մեկը քայլում է առջևից, մյուսը՝ ետևից, իսկ մնացած երկուսը՝ աջ և ձախ կողմերից: Քսաներկու մատղաշ օրիորդներին հսկում են չորս պառաված օրիորդներ: Ասես կալանավորներ տեղափոխեն: Մնում է, որ մեր ձեռքուոտքին շղթաներ հագցնեն, իսկ այդ վերակացու օրիորդներն էլ՝ հրացաններ բռնեն, մանավանդ որ ժանդարմների պես չոր ու կոշտ են: Եվ ամեն ինչ նկատում են, ոչինչ չի վրիպում նրանց հայացքից. «Օրիորդ Anissimoff, ինչո՞ւ ժպտացիք այն ուսանողին, օրիորդ Քյոնիգ, ի՞նչ տվեց ձեզ այն երիտասարդը... Օրիորդ Սիմփսոն, մի՞թե ձեզ չեն ասել, որ պատշաճ չէ ուրիշի պատուհաններից ներս նայել... Մի՛ հակաճառեք, օրիորդ Սիմփսոն, սրճարանի պատուհանները ձերը չեն, դրանք նույնպես ուրիշինն են՝ մանավանդ պատվավոր ընտանիքներում մեծացած օրիորդների համար»:

Նկատողությունները, սակայն, ոչ մի ազդեցություն չեն ունենում: Այսօր էլ, սրճարանի առջևով անցնելիս, աչքերը չռեց կիսաբաց պատուհանի կողմը, բացահայտ ժպտաց և նույնիսկ կարողացավ պատուհանի մոտ նստած մի ուսանողի ձեռքով նշան անել: Հետո դարձավ իր կողքից քայլող կոմսուհի Մաշա Անիսիսմովային. «Տեսա՞ր, ժպտաց ինձ»: «Քեզ չժպտաց, այլ՝ ինձ», - պատասխանեց տասնյոթամյա ռուս կոմսուհին: «Ոչ, ինձ ժպտաց, - մեղմ ձայնով իրենը պնդեց անգլիացի բանկիրի դուստրը»: «Սխալվում ես, ինձ ժպտաց, - մեղրածոր ձայնով պատասխանեց ռուս կոմսուհին: - Նա իտալացի է, ես նրան վաղուց գիտեմ, նույնիսկ անունը գիտեմ»: «Մի վիճեք, - հանդիստ ձայնով միջամտեց Դեբորան՝ ամերիկյան միլիոնատիրոջ դուստրը: - Ոչ մեկիդ էլ չժպտաց, նա Յան-

նիին ժպտաց... Արդեն երկու օր է աչքերով ուտում է նրան, հատուկ նստում է այդ պատուհանի մոտ... Ահա, նայեք, աչքերը չռել է վրան»:

Քիչ մնաց ամոթից գետինը մտնեի, որովհետև ճիշտ էր ասում: Իսկապես, երեկ, նույն ժամին, «Old India»-ի առջևով անցնելիս, աչքի պոչով նկատեցի, որ պատուհանի մոտ նստած այդ տղան նայում է ինձ: Իսկ երեկ չէ նախորդ օրը, մի բարձրահասակ ընկերոջ հետ, մեր ետևից մտավ եկեղեցի: Գլխարկներից երևաց, որ ուսանող են: Մենք տեղավորվել էինք խորանի առջևի նստարաններին և մեր կողքը ոչ մի ազատ տեղ չկար: Ուսանողները մոտեցան, ձևացնելով, թե ուզում են նստել, սակայն որոշակիորեն երևաց, որ նրանց նպատակն ինձ նայելն էր: Բարձրահասակի կողքինը՝ միջահասակը, շատ գեղեցիկ էր. խոշոր ու բարի աչքեր ուներ, թանձր, սև մազեր, նույնպիսի բեղեր, որ նրան շատ էին սազում և՝ գունատ դեմք: Սակայն գունատությունը, հավանաբար, եկեղեցու լուսավորությունից էր: Նա ինձ ժպտաց և բացեց իր գեղեցիկ ատամները: Շատ նման էր Մինայի ընկերոջը, բայց ավելի գեղեցիկ, ավելի ազնվական... Դեբորան կողքից բոթեց ինձ և ականջիս չշնջաց. «Տես ի՜նչ գեղեցիկ տղա է, քեզ է նայում... «Old India»-ի տղան է...»: Ես ձևացրի, թե անտարբեր եմ, հայացքս իջեցրի ներքև և սկսեցի աղոթել: Մտովին: Հիսուսից խնդրում էի, որ ինձ արժանի դարձնի այդ տղային: Իսկ նրանք՝ երկու ուսանողները, մոտեցան խորանին, խաչակնքեցին: Բարձրահասակը ցածրաձայն աղոթք մրմնջաց: Նա իսպաներեն էր աղոթում: Մյուսը՝ լուռ էր: Մաշան ասաց, թե իտալերեն է: Գուցե, համենայն դեպս, նրանք և՛ իտալացու նման էին, և՛ իսպանացու: Հետո միջահասակը, կողքովս անցնելիս, ծալծլված մի թուղթ գցեց ոտքերիս տակ: Ձափազանց զգույշ, գրեթե աննկատ: Վախեցա վերցնել, սակայն, կեցցե՛ Դեբորան: Աղոթագիրքն իբր ձեռքից վայր ընկավ: Նա կռացավ, թուղթը դրեց բացված գրքի էջերի արանքը և անվրդով բարձրացրեց: Հետո, համոզվելով, որ օրիորդները չեն նայում մեր կողմը, զգուշորեն բացեց և այնպես դրեց, որ կարողանամ կարդալ: Ծոցատետրից պատռված էջի վրա քիմիական մատիտով գրված էր. «Ո՜վ հրաշք գեղեցկուհի՝ ցորենագույն մազերով, եթե ուզում եք դաժան մահից փրկել ինձ, անմիջապես, այս հասցեով, ուղարկեք ձեր լուսանկարը և ձեր անունը: Հավերժ ձերդ՝ Ռուբեն, բժշկականի ուսանող, 6 ռյու դը Բուրգ, Լոզան»:

* * *

Երկտողը Պերեսը գրեց, հապճեպ, եկեղեցու մուտքի առջև: Նա էր, որ առաջինը տեսավ այդ աղջկան, որ նկատեց, թե ինչպես է նայում իրենց կողմը: «Ճիշտ է, դու փորձ ունես, Ռուբեն, բայց ես կանանց քեզնից ավելի լավ գիտեմ... Ասում ես ինչո՞ւ... Շատ պարզ, որովհետև դու կնոջ մեջ նախ հոգին ես փնտրում, հետո մարմինը, նախ փոխադարձ զգացմունքը, հետո միասին ապրված վայելքը... Գիտեմ, գիտեմ, մի նեղացիր, հետո մի կռվիր հետս, ես քո եղբայրն եմ, իրավունք ունեմ քեզ խրատելու, վերջապես երկու տարով քեզնից մեծ եմ... Երկու տարվա փորձը գիտե՞ս, թե ինչ է տղամարդու համար... Լավ, լավ, վերջացնենք, այլևս ոչինչ չեմ ասի, բայց գոնե մի վերջին հարցը տամ. եթե սխալ

եմ, հապա ինչո՞ւ էիր տառապում, քեզ մեղավոր համարում, ինքդ քեզ սրիկա անվանում, ինչ է թե այն գերմանուհու հետ առանց հստակ զգացմունքի մի գիշեր պառկեցիր... Ինչպե՞ս էիր ասում. առանց «հասունացած զգացմունքի»... Լավ, լավ, մոռանանք, արի խոսենք այն աղջկա մասին, որ հիմա եկեղեցում աղոթում է քեզ համար... Գրազ կգամ, որ այդպես է, հավատա ինձ, Ռուբեն, կանանց ես լավ գիտեմ, գլխիս մազերի չափ կին եմ ճանաչել... Հիմա երկու չնաշխարհիկ կանայք, միաժամանակ, ընկել են ետևիցս... Անգլուհիներ են, մեծահարուստների կանայք, մեկը երեսուն տարեկան, մյուսը՝ երեսունհինգ... Օ՜, ես այդ տարիքի կանանց եմ սիրում, քեզ նման մանկավարժ չեմ, որ խակ աղջիկներին սիրո դասեր տամ... Ես սիրում եմ, երբ կինն է զբաղվում ինձնով... Լսիր, բավական է այդ գրքերի մեջ մկաններ ու ոսկորներ ուսումնասիրես, արի միասին գնանք Շամպերի, անգլուհիներն են հրավիրում... Գնանք մի խելահեղ շաբաթ անցկացնենք... Քեզ որ տեսնեն, կսիրահարվեն... Որին կուզես ընտրիր, մեկը մյուսից գեղեցիկ է... Լավ, լավ, հասկացա, մենակ կգնամ... Բայց արի այս աղջկա գործն սկսենք... Դու մի խառնվիր, ես գիտեմ, թե ինչ եմ անում... Այո, այո, հենց այդպես պետք է գրել, հնարավորություն չտալ նրան երկար-բարակ մտածելու... Սեր կամ Մահ, ահա այսպես... Ուրիշ ոչինչ... Հավատա ինձ, Ռուբեն. քո բոլոր սերերն այս աղջկա կեսը չարժեն...»:

Հոգու խորքում ընդունում էր, որ Պերեսն իրավացի է, արդեն համոզվել էր, որ եղբոր պես սիրում է իրեն և որ երբեմն-երբեմն արտասանվող կոշտ բառերի տակ բարի սիրտ կա և ազնիվ հոգի: Այո, Պերեսի խոսքերը ճիշտ իր սրտից էին գալիս, ինքը նկատել էր այդ աղջկան, որ տեր և տիկին Սպիեսների սանուհիների հետ շարք կազմած, շաբաթը երկու անգամ գնում է եկեղեցի, հետո, նույն ճամփով վերադառնում գիշերօթիկ, որ հրապարակից երկու քայլ էր՝ Պտի-Շեն փողոցի վրա:

Մոտակայքում մի քանի նման հաստատություններ կային՝ ազնվական, հարուստ կամ պարզապես բարեկեցիկ ընտանիքների համար: Գալիս էին աշխարհի տարբեր ծայրերից, ահագին դրամ ծախսում, և այդտեղ ստացած ավարտական վկայականը, օրիորդի տոհմական տիտղոսի, ընտանիքի հեղինակության և հարսնացուի սնդուկի հետ օժիտի կարևոր մասն էր կազմում:

Անցած երկու տարիների ընթացքում արդեն սովորական էր դարձել՝ պատվավոր ընտանիքներից սերած այդ օրիորդների մշտական և, որպես կանոն, խմբական երթուղարձը քաղաքի զանազան վայրերում: Ուսանողների վերաբերմունքը նրանց հանդեպ փոքր ինչ հեգնական էր, լավագույն դեպքում՝ հանդուրժող: Հիմնական պատճառը սոցիալական այն անջրպետն էր, որ ուսանողների մեծամասնությանը բաժանում էր «վերին արտի» այդ դուստրերից:

Կար նաև մեկ այլ հանգամանք, ոչ պակաս կարևոր. համազգեստը: Յուրաքանչյուր գիշերօթիկ որոշակի գույնի և գրեթե միանման կարվածքի զգեստ էր հագցնում աղջիկներին, որի տակ կորչում էր ամեն մի անհատականություն, նրբերանգ ու նկարագիր: Նիհարն ու գիրուկը, շեկն ու թուխը, բարձրահասակն ու ցածրահասակը, բոլորը դառնում էին միատեսակ: Համազգեստի միապաղաղությանն ավելանում էր ազնվազարմ օրիորդներին կուռ ու կարգապահ շար-

քերով տանել-բերելու ավանդույթը, որ հաստատվել էր այս քաղաքում գիշերօթիկների հայտնվելու օրվանից:

Այսպիսով, սանուհիները դարձել էին մի յուրատեսակ կաստա քաղաքի մեջ, գուցեև ամբողջ երկրում (քանզի նման գիշերօթիկներ դործում էին նաև Շվեյցարիայի մյուս քաղաքներում) և այդ ամենը քաջ ծանոթ էր նրան, ահա ինչու, երկու տարվա ընթացքում այդ օրիորդները նրա համար դարձել էին լոկ շարժվելու ունակությամբ օժտված անկենդան արարածներ՝ խստագույն արգելքների զրահով մեկուսացված:

Եվ հանկարծ, այս անդեմության, այս միապաղաղության միջից մի դեմք էր առանձնանում, որ մեկուսացնող աներևույթ պատնեշի միջով համառորեն փնտրում էր իր հայացքը, իսկ ինքը՝ նրանը:

«Old India»-ի երկրորդ հարկում երեք ընդարձակ պատուհան կար, որ նայում էին Ս. Ֆրանսուայի հրապարակին: Աջ կողմի պատուհանի մոտ դրված սեղանն արդեն դարձել էր իր մշտական տեղը: Գրեթե ամեն օր գալիս էր այստեղ, բանաստեղծություններ գրում, լրագրեր նայում կամ հաստափոր դասագրքերը սերտում: Արդեն ընտելացել էր կյանքի այս կերպին. յուրատեսակ մեկուսացում բազմության մեջ՝ հիմնովին յուրացնելով մարդկային դեմքերին չնայելու, իսկ նայելու դեպքում չտեսնելու արվեստը: Եվ, հանկարծ, մի դեմք, կրակոցի պես, միանգամից ճեղքում է պատնեշները, մեխի պես մխրճվում սրտիդ մեջ:

Երեք դեմք, աղջկական երեք հայացք նայում էին իրենց պատուհանին, սակայն զգաց, որ այդ երեքից միայն մեկն է իրեն փնտրում, կանչում... «Տե՛ս, ինչ գեղեցիկ մազեր ունի այն աղջիկը, ասես ցորենի խուրձ լինի», - նկատեց Լևոնը:

Մազերն իսկապես գեղեցիկ էին, հրաշալի և երկար, երկա՛ր... իջնում էին մինչև գոտկատեղը: Ցորենագույն այդ սքանչելի ալիքները զսպելու համար, ծոծրակի մոտ սպիտակ ժապավեն էր կապել, սակայն ոչ թիթեռնահանգույց, ինչպես մյուս սանուհիները, և դրանով իսկ առանձնացել նրանցից: Իսկ հեքիաթային աչքերը լուռ ու անմեղ գոռում էին: Այո, այո, նա տեսավ աչքերը տարածության վրա, հստակ, ասես դիմացը կանգնած լիներ: Հապա մարմի՛նը, շարժուձևը... Ասես արքայադուստր քայլեր: Կուսական ամոթխածության հետ մեկտեղ, մի ողջամիտ իգականություն ուներ, որ հրապույրներ էր արձակում, կանչում, գրգռում, միաժամանակ, արտաքուստ մնալով զարմանալիորեն զուսպ ու առաքինի:

Նա տեսավ այդ ամենը, զգաց, ենթարկվեց անդիմադրելի կանչին, բայց իրենից անկախ հայացքն իջեցրեց: Ոչ թե շարունակեց ընդհատված ընթերցանությունը, այլ, պարզապես, իջեցրեց, փախցրեց: Ինչո՞ւ... Չէ որ հոգու անմատչելի անկյուններում ինչ-որ բաներ շարժվեցին, որ մեռած էր կարծում, չէ որ անմիջապես զգաց (նաև հասկացավ), որ ճակատագիրն է իրեն նայում այդպես... Սակայն ինչո՞ւ լիաբերան չժպտաց այդ աղջկան, երբ ժամանակին ժպիտը շռայլելով քայլում էր այս քաղաքի փողոցներում, հիմա է, որ դարձել է անտարբեր:

Գլուխն իջեցրեց, որովհետև չէր կարող միևնույն ուժգնությամբ պատաս-

խանել այդ հայացքին: Հսկայական, համապարփակ, տիեզերակա՛ն սերը տեսավ աղջկա հայացքում, և իրեն այնքա՛ն փոքր ու չնչին զգաց ահագնացող զգացմունքի առջև... Կկարողանա՞ր արդյոք հզոր ժայռի պես դիմակայել սիրո օվկիանի կատաղի ալիքներին, որ արդեն սկսել էին արշավել այդ աղջկանից և փրփրաբաշ գալիս հասնում էին իրեն... Ոչ, ոչ... Պարզապես սոսկաց, այո, սարսափը համակեց նրան...

Գլուխն իջեցնելը թուլամորթություն էր թերևս ուրիշ, ավելի մի ծանրակշիռ պատճառով, քանզի հայացքը փախցնելու փոխարեն պիտի գոռար. «Զգո՛ւյշ, ետևդ նայիր: Տե՛ս, այդ ի՞նչ ուրվական է, որ մայիսյան արևոտ օրով քայլում է ետևիցդ, ստիպում ժպտալ, արյունդ վազեցնում երակներովդ, շուրթերդ պատրաստում համբույրի: Դու դեռ ոչինչ չգիտես, անմե՛ղ հոգի, սակայն ես ճանաչում եմ այդ ուրվականին, կարելի է նույնիսկ ասել, որ մտերմացել ենք, նա այլևս առանց ինձ, ավելի ճիշտ, ես առանց նրա կյանք չունեմ...»:

Այդպե՞ս պիտի ասեր աղջկան. «Կյանք չունեմ...»: Ուրեմն, նա պետք է, որպեսզի ապրես, ուրեմն, աղջիկն իր պատանեկան արդար ավյունով հարյուր անգամ իրավացի է, հապա ինչո՞ւ ես պատրաստվում խրատ կարդալ նրա անմեղ գլխին... Սպասիր, ինչպե՞ս ասաց Պերեսը քիչ առաջ, երբ նույնպիսի մի խրատ էր կարդում քո զառամած գլխին. «Սեր կամ Մահ... Ուրիշ ոչի՛նչ»: Անշուշտ, նա ուրիշ իմաստ է դնում այս հակադրության (հակադրությո՞ւն...) մեջ, սպառնում է, վերջնագիր ազդարարում. եթե չսիրես՝ կմեռցնես: Օ՜, սիրելի Պերես, ճի՛շտ հակառակն է՝ կմեռցնի, եթե սիրի... Այո, այո... Ես տեսնում եմ, թե թիկունքին կանգնած ուրվականն ինչպես է լարում իր թակարդը, ուր արդեն ընկել եմ մի քանի անգամ... Եվ նույնիսկ գիշերային անակնկալ արկածը գերմանուհու հետ, որին սիրեցի առանց սիրելու, նույնպես ուրվականի լարած թակարդն էր... Օ՜, սիրելի Պերես, քո արբշիռ կենսասիրությամբ, մարմինդ շարունակ խթանող քո եռանդով, բալզակյան տարիքի կանանց բուդուարներում, հավանաբար, հեռու մնաս նրա որոգայթներից... Քեզ դյութողը սերը չէ, այլ սիրո ղումարը... Այնպես որ, մենակդ վայելիր այդ անգլուհիներին...

Ահա՛, քեզ բռնացրի հանցանքի վրա. այդ ինչո՞ւ կամքի ուժ ունեցար անգլուհիներից հրաժարվելու (որոնք, ամենայն հավանականությամբ, չափազանց համեղ պատառներ են, քանզի այդ արգենտինացին ճաշակ ունի և կյանքը վայելել գիտի, ի տարբերություն քեզ, որ արդեն կուսակրոն ես դարձել) և ինչո՞ւ կատարելապես կամազուրկ դարձար, երբ նա իր ծոցատետրից պոկված էջի վրա, իր ձեռագրով, բայց քո անունից երկտող էր գրում ցորենագույն մազերով աղջկան (հետաքրքիր է, աչքերն ի՞նչ գույնի են: Կապո՞ւյտ: Այդպիսի մազերի հետ, սովորաբար, կապույտ աչքեր են լինում: Բայց ինչո՞ւ թվաց, թե մեղրագույն են), միակ առարկությունը, որ լսվեց քո բերանից, առնչվում էր լուսանկարին. «Լսիր, Պերես, պատշաճ չէ այդպես միանգամից լուսանկար խնդրել...»: Ինչո՞ւ սպանդանոց տարվող ոչխարի պես հնազանդ դուրս եկար սրճարանից, ընկերոջդ հետ կտրեցիր-անցար հրապարակը, մտար եկեղեցի, այդ խաչակնքելու թատրոնը խաղացիր և, հարմար պահը որսալով, ծալծլված թուղթը ճարպկորեն գցեցիր աղջկա ոտքերի տակ: Դա հասարակ մի բան չէր, տղա-

յական կատակ, որը մեկ ժամ հետո պիտի իսպառ մոռանայիր: Դու հասկացար, որ եկեղեցի մտնելով, մտնում ես սիրո ընդարձակ ու անվերջ մի արարողության մեջ, որն անգամ մահը չի կարողանա ընդհատել, քանզի սերը միակ կերպն է մահվան վրայով հավերժության հասնելու...

Դա կոչվում է ճակատագիր, որը, սովորաբար, մարդիկ չեն տեսնում, չեն հասկանում, և պատահում է, որ ամբողջ կյանքն ապրում են առանց հասկանալու, թե Տիրոջ կամքն ինչ վիճակվեց իրենց:

Դե, բավակա՛ն է այսպես ծանրացնես ամեն ինչ... Դարձել ես կյանքն ապրած ու վերջացած մի ծերունի, չնայած ընդամենը քսաներկու տարեկան ես: Բավակա՛ն է ինքդ քեզ համար խնդիրներ սարքես ամեն ինչից: Ահա, հոյակապ աղջիկը քեզ սիրո մարտահրավեր է նետում, կարո՞ղ ես ստանձնել պատասխանատվությունը սիրված լինելու և սիրելու՝ ի հեճուկս ամեն ինչի, և մանավանդ աղջկա ու քո թիկունքին կանգնած ուրվականների: Թող որ կյանքի հոսանքն ինքը տանի քեզ և, հավանաբար, հանգիստ ու ապահով մի ափ կհանի...

Սակայն հանկարծ մի խուճապ, մի անհանգստություն ծնվեց ներսում: Իսկ եթե աղջիկը չպատասխանի՞, եթե չուզարկի՞ լուսանկարը, եթե ընդհանրապես մոռանա՞ իր գոյությունը... Հետո ի՞նչ, որ մի երկու անգամ նայեց իրեն... Ի՞նչ պիտի անի, եթե աղջիկը մերժի ամեն ինչ. լուսանկար, նամակ, ժպիտ և անգամ պարզ հայացք... Չէ, չէ, այդպիսի բան չի կարող լինել, դա կլինի աշխարհի վե՛րջը:

* * *

- Ոչ մի լուսանկար, - կտրուկ հայտարարեց Մաշան: - Միայն մտերիմ մարդիկ են լուսանկար փոխանակում, իսկ դու նրան ընդամենը դեմքով գիտես, նույնիսկ չես իմանում, թե որ երկրից է, ի՞նչ ազգից...

- Անունը գրել է՝ Ռուբեն, իսպանացի կլինի, - պատասխանեց Բետտին:

- Ավելի շուտ՝ լատինամերիկացի, - լրացրեց Դեբորան: - Տեսքով էլ նման է, մեր կողմերը դրանցից շատ կան...

- Այո, այո, - ոգևորվեց Բետտին: - Ես հստակ լսեցի, թե ինչպես նրա ընկերն իսպաներեն աղոթեց...

- Լսեք, հիմա կարևոր չէ՝ իսպաներեն էր, թե իտալերեն... Նախևառաջ պետք է որոշել, թե ինչ անել. լուսանկար ուղարկե՞լ, թե՞ ոչ... Ես գտնում եմ, որ պետք չէ, - նորից իր վճռական խոսքն ասաց Մաշան:

- Թող ուղարկի, բայց առանց ստորագրության, - առաջարկեց Դեբորան:

- Ի՞նչ տարբերություն՝ ստորագրած, թե անստորագիր, - հարցրեց Մաշան:

- Գտա՛, - հաղթական գոչեց Բետտին, հետո աղջիկների գլուխներն իրար բերելով, շշուկով ասաց. - Եկեք օրիորդ Հեմլերի լուսանկարն ուղարկենք, պատկերացնո՞ւմ եք՝ ի՛նչ հոյակապ բան կլինի, ես կարող եմ...

Բետտիի մնացած բառերը կորան ընդհանուր քրքիջի մեջ:

Օրիորդ Հեմլերը գիշերաթիկի դաստիարակ-օրիորդներից մեկն էր՝ ամենախիստը, իսկ աղջիկների կարծիքով՝ ամենաանգութը. քանոնի պես ցից, երկա-

բահասակ, չոր, ցանցառ մազերով, սուր քթով, բարակ շրթունքներով, ակնոցի տակ մտած մանրիկ ու ծակող աչքերով, որ նկատում էին ամեն ինչ: Ահա, նրա դեմքը երևաց այն ուղղանկյունի մեջ, ուր պիտի դուռ լիներ.

- Ի՞նչ եք կարծում, պատշա՞ճ է արդյոք այս ժամին, այդպես հոհոալ և խանգարել մյուսների հանգիստը:

Այո, այնտեղ, ուր պիտի դուռ լիներ, ոչինչ չէր երևում, մանավանդ դուռ: Վեց այդպիսի սենյակ կար իրենց հարկում, վեցն էլ առանց դռան և նույնիսկ առանց վարագույրի: Յուրաքանչյուր սենյակում չորս մահճակալ էր դրված, և արգելված էր, որպեսզի մեկ երկրից երկու հոգի լինեին սենյակում: Տիկ. Սպիեսի հաստատությունում խստորեն հետևում էին ոչ միայն կարգուկանոնին, այլև քաղաքական հավասարակշռությանը: Ժամը տասից հետո սանուհիները պետք է անկողնում լինեին: Միջանցքում ամբողջ գիշեր թեթև լույս էր վառվում, իսկ օրիորդ-հսկիչը կարող էր ուզած վայրկյանին հայտնվել սենյակում, և նրա ոտնաձայնն անկարելի էր լսել, քանի որ հատակին հաստ ուղեգորգեր էին փռված, հսկիչ-օրիորդն էլ հողաթափ էր հագնում: Հատկապես խստորեն պատժվում էին այն աղջիկները, որոնց մի վերմակի տակ էին բռնացնում: Տիկ. Սպիեսի գիշերօթիկը համարվում էր խստագույններից մեկն ամբողջ Շվեյցարիայում: Այստեղ հատուկ նպատակով էին աշխատանքի ընդունում պառաված և մասնավորապես հակակրանք առաջացնող օրիորդներին: Գիշերօթիկի տիրուհին գտնում էր, որ ամուսնացած և մանավանդ մայրությունը ճանաչած կինը, որքան էլ խիստ լինի, այնուամենայնիվ, այդ աղջիկներին, ինչ-որ առումով, իր զավակի տեղ կարող է դնել, իսկ դա կխախտի կարգուկանոնը, այնինչ պառաված օրիորդը մինչև վերջ կառչելու է օրենքի տառին: Եվ հենց այս զորանոցային կարգուկանոնի շնորհիվ էր, որ տիկ. Սպիեսի գիշերօթիկը համաեվրոպական, կարելի էր ասել, նույնիսկ, համաշխարհային համբավ էր ձեռք բերել:

Օրիորդ Հեմլերը մի քանի անգամ էլ գլուխը խոթեց սենյակից ներս՝ վերջնականապես, համոզվելու, որ քրքիջը կտրվել է, որ յուրաքանչյուրն իր անկողնում է: Եվ լավ էր, որ կարգի հրավիրեց, թե ոչ մինչև հիմա պիտի քննարկեին՝ լուսանկար ուղարկի՞, թե ոչ: Տարօրինակ է, երկտողն իրեն է հասցեագրված, իր լուսանկարն են ուզում, սակայն իր կարծիքը հարցնող չկա: Ամբողջ երեկոյի ընթացքում վիճեցին, նույնիսկ հարևան սենյակների աղջիկներին մասնակից դարձրին, և ոչ մեկի մտքով չանցավ իր կարծիքը հարցնել:

Հիմա բոլորը նախանձում են իրեն: Այսինքն՝ ոչ բոլորը: Այդ ռուս կոմսուհին շատ ազնիվ հոգի ունի. նշանված է մի տղայի հետ, որը հիմա ուսանող է Վիեննայում: Լուսանկարը ցույց տվեց, հոյակապ տղա է: Ամերիկուհին էլ շատ ազնիվ աղջիկ է: Իսկ Բետտիից՝ անգլուհուց, ոչինչ չես հասկանա: Այնպիսի բան ասաց, որ քիչ մնաց հետը կռվեի. ասում է, թե այդ տղային... Ռուբենին, ինքն է առաջինը տեսել... Իբր երբ առաջին անգամ ծնողների հետ եկել են Լոզան, որպեսզի իրեն գիշերօթիկում տեղավորեն, պատահաբար մտել են «Old India» և սեղան գրավել այդ տղայի հարևանությամբ, իբր երկու ժամ են անցկացրել այդտեղ և այդ ընթացքում, իբր, տղան շարունակ ժպտացել է նրան... «Աչքերով ուտում էր ինձ», - ասում էր Բետտին: Իսկ Փարիզից եկած Ժենեվյե-

վը, հեծելազորի գեներալի դուստրը, ասաց, թե երկու անգամ տեսել է Ռուբենին Բել-էր հրապարակի փոքրիկ գրախանութում և որ նույնիսկ մի քանի խոսք են փոխանակել...

Պարզվում է, որ բոլորը գիտեն նրան, բոլորը հանդիպել են Լոզան դալու առաջին իսկ օրվանից, միայն ինքն է, որ նոր տեսավ... Ինչո՞ւ մինչ այդ չէր նկատում... Երկու ամիս է այդ հրապարակով գնում-գալիս են, սակայն չի տեսել, չի նկատել նրան... Իսկ տղան իրեն նկատե՞լ էր...

Աղջիկներն ասում են, թե միշտ այդտեղ է՝ այդ պատուհանի մոտ նստած: Իսկապես, ինչո՞ւ միայն այսօր նկատեց: Որովհետև իրեն չէր նայո՞ւմ: Իսկ ինչո՞ւ չէր նայում, ինչո՞ւ որոշեց երեկ չէ նախորդ օրը նայել: Առաջինն ո՞վ նայեց, ի՞նքը, թե տղան: Ոչ, առաջինն ինքը նայեց, դուցե հենց այնպես, որովհետև այդ գորշ, այդ տաղտկալի հրապարակում նայելու բան չկա: Հիմա հիշեց, այո, տղան պատուհանի մոտ նստած կարդում էր, և հանկարծ գլուխը բարձրացրեց ու նայեց ուղիղ իր աչքերի մեջ: Թվաց, թե իր առջևն է, մի կես մետրի, ոչ, մի երեսուն, քսան սանտիմետրի վրա կանգնած, որ եթե մի քիչ էլ առաջ գա, ապա իրենց... Ասես հրապարակը, քաղաքը, աշխարհը գոյություն չուներ նրանց միջև... Քիչ մնաց տեղում քարանար... Մինչև հիմա ոչ ոք այդպես չէր նայել իրեն: Զգաց, որ այտերը վառվում են: Լավ է, որ տղան գլուխն իջեցրեց, թե ոչ այլևս չէր դիմանա այդ հայացքին: Նա չէր ժպտում, բայց դեմքը շատ բարի էր... Ասես հեռվից էր նայում, բայց այնքան մոտիկ էր, ասես գիտեր նրան, ասես հին ծանոթներ էին, բայց վաղուց իրար չէին տեսել... Այո, ինքը գիտի նրան, տեսել է ինչ-որ տեղ... Մեկ շաբաթ առաջ երազ տեսավ, մի տղայի հետ հեռավոր կղզու վրա էին... Մենակ... Լուսնի լույսով համբուրվում էին կիպարիսների տակ... Տղայի դեմքն ընդամենը մի ակնթարթ տեսավ, այն ժամանակ չճանաչեց... Իսկ տղան երազում տեսե՞լ է իրեն...

Չէ, այսպես չի լինի: Հասկանալի խելագարվում է: Իրեն լրիվ մոլորեցրին: Հիմա չգիտի, թե ինչ անի, մինչդեռ նամակն ստանալուն պես արդեն գիտեր, թե ինչ է անելու... Իսկ հիմա պիտի հաշիվ տա բոլորին, այսինքն՝ ոչ բոլորին, բայց առնվազն երեք հոգու կարծիքի հետ պիտի հաշվի նստի... Մանավանդ անգլուհին... Պարզապես վիրավորվում է, երբ իր խորհուրդներին չեն հետևում... «Մաշա, թեյը քաղցր չեն խմում, դա ի՞նչ տարօրինակ ճաշակ է... Յաննի, կարագ շատ քսեցիր հացին... Դեբորա, այդ դիրքը մի կարդա, այլ այս մեկը»: Բոլորը պիտի իր կամքին ենթարկվեն... Անտանելի է պարզապես...

Շատ լավ... Դուք շարունակեք վիճել, իսկ ես գիտեմ, թե ինչ պիտի անեմ. ես նկարը կուղարկեմ՝ առանց ուղարկելու, դա էլ թող իմ փոքրիկ գաղտնիքը լինի, մանավանդ որ լուսանկար էլ չունեմ: Վերջին երկուսը, որ նկարվել էի այստեղ Պեպինե փողոցի լուսանկարչատանը, ուղարկել եմ Էրֆուրտ՝ զարմուհիներիս: Բոլորն իմ նկարն են ուղում, տասներկու հատից այլևս ոչ մեկը չմնաց: Եվ լավ է, որ վերջացան: Այդ նկարը շատ չսիրեցի: Բնավ գեղեցիկ չէի այնտեղ, աչքերս կարծես շիլ լինեին, դեմքիս ոչ այն է ժպիտ էր, ոչ այն է՝ զարմանք: Մի տեսակ ապուշ արտահայտություն, մազերս էլ խառնված էին: Ես գիտեմ, թե ինչ կանեմ, և այդպես հրաշալի կլինի:

* * *

Մարիամն արդեն երրորդ անգամն էր հրավիրում, ավելի ճիշտ, ժամադրում իրեն, և յուրաքանչյուր հրավերի միջև նկատելի մի ժամանակահատված կար, ասես առնվազն երկու շաբաթ էր պետք, որպեսզի հաջորդ հանդիպման անհրաժեշտությունը հասունանար:

Աղջիկն իր ոտքով եկավ տիկ. Շապազի գիշերօթիկ: Նախորդ օրն էր եկել, բայց իրեն չէր գտել և խնդրել էր, որ համալսարանից վերադառնալուն պես մնա և նրան սպասի: Հենց այդպես կտրուկ ու վերջնական: Եվ, իսկապես, հետմիջօրեի ավարտին հայտնվեց: Միջահասակ, կաթնագույն մաշկով, սև աչքերով և սև մազերով աղջիկ էր Մարիամը՝ մեղմ շարժումներով, քչախոս: Մի երկու բառ կասեր, կլռեր, և չգիտեիր՝ պիտի շարունակի՞, թե ոչ: Գուցե պատճառն իր ընտրած արվեստն էր՝ երաժշտությունը, ուր խոսքերն, իրոք, շատ հաճախ ավելորդ են: Եղբոր հետ քիչ թե շատ մտերիմ էին, միասին ուսանել էին Պերպերյանում: Մի երկու անգամ հյուր եղավ նրանց տանը: Ընկերական հավաք էր՝ ինչ-որ մեկի տարեդարձի առթիվ: Հիշում էր, որ Մարիամը դաշնամուր նվագեց՝ առաջացնելով բոլորի հիացմունքը: Տարօրինակ բան. փորձեց նրա դեմքը հիշել, բայց չկարողացավ... Աղջկան շարունակ տեսնում էր մեջքից, դաշնամուրի մոտ նստած: Ոչինչ չէր դրոշմվել հիշողության մեջ: Ոչ մի դիմագիծ: Հիշում էր միայն, որ Շուբերտից ինչ-որ բան նվագեց:

- Շարունակո՞ւմ եք նվագել, - հարցրեց աղջկան, զգալով իր ասածի անիմաստությունը, եթե ոչ հիմարությունը, քանզի դեռևս այն օրերին խոսք էր գնում, որ աղջիկը պետք է մեկնի Եվրոպա ուսանելու:

- Այո... Կոնսերվատորիա ընդունվեցի...

- Այստե՞ղ, - զարմացած հարցրեց Ռուբենը: - Բայց կարծեմ մտադիր էիք Փարիզ գնալ... Եղբայրդ գրել էր, թե նույնիսկ Հայր Կոմիտասն է խոստացել միջնորդագիր տալ:

Աղջիկը չպատասխանեց: Նա թեթևակի ժպտաց և ձեռքի փոքրիկ փաթեթը մեկնեց Ռուբենին: Վերջինս զարմացած վերցրեց և, մետաքսյա ժապավենը քանդելով, մի տուփ «Հաջի Բեքիր» լոխում հայտնաբերեց և մի նամակ:

Հայրը՝ Հովհաննես աղան, հայատառ թրքերենով հայտնում էր, որ բոլորը ողջ-առողջ են, մի թեթև բողոքում էր գործերից և վերջում նշելով, թե օրիորդ Մարիամի հետ լոխում է ուղարկել, հանձնարարում էր օգնել աղջկան, նեցուկ լինել օտարության մեջ:

Ռուբենը կարկամած էր: Հայրն, անշուշտ, ձգտել էր նրբանկատ լինել, բայց մտահոգ ծնողի անմեղ դավադրությունը հստակորեն ընթերցվում էր տողերի տակից: Հոր տրամաբանությունը հետևյալն էր. ինքն արդեն քսաներկու տարեկան է, դա նշանակում է, որ արդեն պիտի լրջորեն մտածեն նրա ապագա կողակցի մասին, այո, մտածեն, և ոչ թե ինքը մտածի: Քերականական այս նրբերանգն արտահայտում էր ազգային-հասարակական կառույցի արմատական բաղադրիչներից մեկը, եթե ոչ հիմքերի հիմքը՝ ընտանիքը: Հրաշալի գիտեր, թե ինչ

դեր ունի ընտանիքն այդ կառույցի մեջ, հասկանում և գնահատում էր նրա դերն ազգային ինքնության պահպանման հարցում, և այնուհանդերձ, հիմա, այս պահիս, ասես ինչ-որ մեկը բռնանար իր անձին:

Մտովի ծիծաղեց հոր խորամանկության վրա և ցավով նկատեց, թե ինչպես է ինքն իր ձեռքով խանգարել իր իսկ նպատակին. սեր, համակրանք առաջացնել որդու մեջ այս աղջկա հանդեպ:

Մարիամը գեղեցկուհի չէր, սակայն ազնվական մի շուք ուներ դեմքին, իսկ աչքերում էգի առինքնող հնազանդություն կար: Դիմագծերը կանոնավոր էին, մարմնով նրբին էր, սակայն, դատելով նրա ծնողներից, որոշ ժամանակ հետո պիտի դառնա գիրուկ մի տանտիկին՝ արևելյան կնոջ բնորոշ տեսակը:

Եթե հոր նամակը չլիներ (առաջարկվող հարսնացուի ծնողական լուռ հավանությամբ), եթե Մարիամին պատահաբար հանդիպեր ուսանողական շրջանակներում, որտեղ հաճախ կարելի էր տեսնել Պոլսից, Կովկասից և անգամ Ռուսաստանից եկած հայ օրիորդների, ապա շատ հավանական է, որ համակրելի գտներ նրան և մեջը ցանկություններ, զգացմունքներ արթնանային: Եվ հնարավոր է, որ չսպասեր աղջկա հրավերներին և նախահարձակ լիներ: Մինչդեռ որձի իր բնազդները կարծես բթացել էին, կարծես առջևը ոչ թե կին էր, այլ պացիենտ:

Ի՞նչն էր պատճառը, միայն հոր նամա՞կը, թե նաև աշխարհագրական հեռացումը ընտանիքի հայկական այդ մտայնությունից: Եվ եթե այս երկու տարիները Պոլսում անցկացրած լիներ, կարող է ներողամիտ նույն ժպիտով ընդուներ հոր գործարքը... Գործա՞րքը... Այո, իհարկե... Հապա ի՞նչ անուն տալ սրան:

Սպասվող ամուսնության գաղափարը նրա գլխում եղել էր և կար, ինչպես ատամների փտելը՝ ժամանակի ընթացքում, մազերի թափվելը, գիրանալը (կամ չոր ու ջղուտ դառնալը, ի դեպ, այս վերջինն ավելի հատուկ էր նրանց ցեղին) և անգամ... անգամ (ավա՜ղ) առնականության անխուսափելի կորուստը... Այսինքն՝ այդ գաղափարը նրանում ապրում էր այլևայլ բնազդների հետ մեկտեղ, որպես բիոլոգիական պարտադիր մի երևույթ: Եվ ինքը՝ ապագա բժիշկը, հիմա էլ փաստում էր, որ չժխտելով այդ ամենը, երևույթին նայում էր արդեն մեկ այլ (գուցեև երկու) տեսանկյունից. հասարակական... Այո, մենք հլու-հնազանդ ծառաներն ենք բնության, բայց ամուսնությունը ոչ միայն բնական, այլև հասարակական արարք է, որը կատարում են երկու անհատներ:

Խեղճ Մարիամն արդյոք մտածե՞լ էր այս ամենի մասին, արդյոք ծնվե՞լ էր նրանում գիտակցված պահանջ տարբեր տեսանկյուններից նայելու այն ծիսակատարությանը, որին այսպես գլուխը կախ եկել էր մասնակցելու, ասես ինքն էլ մի իր էր, հայրենի քաղաքից ուղարկված նվեր, որ նամակի և թուրքական լոխումի հետ հասել էր այստեղ: Մնում էր զարմանալ, թե ինչո՞ւ էին մոռացել պատշաճորեն փաթեթավորել աղջկան:

Այս հանգամանքն էր, որ ընդվզեցրեց նրան, այն, որ աղջիկը գիտի ամեն ինչ: Ոչ, նամակը չի կարդացել, կարիք էլ չուներ կարդալու, քանզի արդեն գիտի խաղի կանոնները, քանզի աչքերը փակ կատարում է այն, ինչը չի կարող չկատարել...

Գուցե չափազանց խիստ է դատում այս համակրելի օրիորդի մասին,

գուցե հոգու խորքում սեր ունի պահած, որ աղջկա երկչոտությունը չի թողնում միանգամից բացել: Ի վերջո, արվեստագետի հոգի ունի: Ճիշտ է, նրա նվագը կարգին չէր լսել, բայց գովեստով էին խոսում նրա մասին:

Նրանք նստած էին գիշերօթիկի ճաշասրահում: Դա միակ տեղն էր, ուր կարելի էր իգական սեռի այցելուներ ընդունել: Թույլատրվում էր միայն արական սեռի այցելուներին հրավիրել սենյակ, այն էլ կարճ ժամանակով:

Բարեբախտաբար, միայն իրենք էին սրահում: Լևոնը և Պերեսը բացակայում էին, սակայն ամեն վայրկյան կարող էին հայտնվել: Մի բան, որը բնավ նրա սրտովը չէր լինելու: Երկու տարվա ընթացքում ամեն տեսակի աղջիկների հետ չփվեց, սակայն ամեն անգամ, նրա կողքին, իգական սեռի մի նոր էակ տեսնելուն պես, գրգռված մի հետաքրքրասիրություն էր ծնվում նրանցում և սկսում էին այնպիսի հարցեր տալ, որ քիչ էր մնում գլուխն առներ ու փախչեր: Ուստի որոշեց այս տաղտկալի զրույցը կարճ կապել: Այնպիսի տպավորություն էր, թե քայլում են կլանող ճախճախուտի միջով և արտասանված ամեն մի բառ նրանց ավելի էր քաշում ներս: Կտրուկ շարժումով տեղից ելավ և, տպավորությունը մեղմելու համար, սովորականից ավելի լայն ժպիտով ասաց.

– Շատ ուրախ եմ, օրիորդ, ձեր հաջողությունների համար, հուսամ հետագայում էլ ամեն ինչ լավ կլինի, սակայն եթե որևէ խնդիր ծագի, հիշեք, որ այստեղ հավատարիմ բարեկամ ունեք, գրեթե մեծ եղբայր... Այո, հենց այդպես...

Աղջիկն այս հանդիպման ընթացքում առաջին անգամ շառագունեց և, տարտամ ժպիտը դեմքին, շնորհակալության խոսքեր մրմնջաց:

Այս պաղած զրույցին փոքր ինչ զգացմունք հաղորդելու համար, որոշեց աղջկա հետ դուրս գալ և ուղեկցել մինչև փողոցի անկյունը, և հենց այդտեղ աղջիկն աչխուժացավ: Նրա աչքերը փայլեցին, ոգևորված սկսեց պատմել, թե ինչպես դաշնակահար երեք ընկերուհիներով որոշել են առաջիկա շաբաթներից մեկում համերգ տալ. «Չէի՞ք ուզի, արդյոք, ներկա լինել...»: Եվ, առանց պատասխանին սպասելու, ավելացրեց. «Ձեզ նախապես հրավիրատոմս կուղարկեմ»:

Երբ ոյու Կարոլինի անկյունում աղջկան հրաժեշտ տալով շրջվեց, որ տուն վերադառնա, քիչ հեռվում, դիմացի մայթի գարեջրատան շեմին, երկու չափազանց ժպտադեմ երիտասարդ տեսավ՝ Պերեսը և Լևոնը: Եվ այդ պահին իսկ, նրա ուղեղում, իրենից անկախ ձևակերպվեց մարդու հոգին քրքրող կպչուն հարցերի միակ պատասխանը. «Այդ աղջկա հետ ոչ ժամանակ անցկացնելու, ոչ էլ, առավել ևս, ամուսնանալու մտադրություն ունեմ»: Եվ տեղնուտեղը, ժամանակից շուտ, նրա ականջին հասավ Պերեսի չափազանց հավանական հարցը. «Ցորենագույն մազերով աղջկա պատճառո՞վ»:

* * *

Կլաուս Յուրգենն արդեն մեկ տարի կլիներ, ինչ գնացել էր տիկ. Շապազի գիշերօթիկից, սակայն, երբեմն-երբեմն, այցելում էր, քանզի նամակներ էին գալիս հին հասցեով: Հայտնի չէ, թե ինչու իր նոր հասցեն զլացել էր հայտնել այդ անձանց, գուցե մոռացել էր կամ յուրատեսակ առիթ ստեղծել ամիսը մեկ-

երկու անգամ հագուրդ տալու իր կարոտախտին՝ նախկին հասցեի հանդեպ:

Աղջկա ողբերգական մահից հետո, տիկ. Շապազը, հեռավոր ազգականուհիներից մեկին գործի էր վերցրել՝ փարթամ մի աղջիկ, ընդգծված կոնքերով, հսկա կրծքերով և մշտաժպիտ կարմիր երեսներով: Գեղջկական ծանր աշխատանքին սովոր աղջիկը հասցնում էր մենակն ամեն ինչ անել: Տիրուհուն մնում էր միայն ցուցմունքներ տալ և անձամբ զբաղվել գնումներով, մի գործ, որը ոչ մեկին չէր վստահում:

Ժամը տասը կլիներ, երբ Կլաուսը սեղմեց գիշերօթիկի դռան զանգի կոճակը: Կենվորները բոլորը դասի էին, տիկ. Շապազն էլ դուրս էր եկել գնումներ անելու: Դուռը բացեց Ուրսուլան՝ սպասուհին, թաց լաթը ձեռքին, կարմրատակած ու քրտնած: Բոլոր գեղջկուհիների և ծանծաղամիտ քաղքենուհիների պես, նա հատուկ համակրանք ուներ հեծելազորային այս նախկին սպայի հանդեպ, միայն թե նրա աղջկական բոլոր կանչերն ու ակնարկները բախվում էին անտարբերության անսասան ժայռին, և պարզամիտ գեղջկուհին ամենևին չպատկերացնելով բուն պատճառը, ամեն հաջորդ հանդիպմանն ավելի էր խթանում գայթակղելու իր եռանդը: Գերմանացուն տեսնելով, ատամները բացեց և հրավիրեց ներս:

- Բարև, օրիորդ... Այս կողմերն էի, որոշեցի անցնել՝ հարգանքներս հայտնելու տիկ. Շապազին և տեսնելու, թե արդյոք նամակ չկա՞ ինձ համար:

- Ճիշտ ժամանակին եկաք, պարոն, - պատասխանեց սպասուհին, անչափ ուրախ, որ վերջապես կարող է մի բանով օգտակար լինել նախկին սպային: - Փոստատարը քիչ առաջ եկավ, մի կույտ նամակ բերեց... Ահա այնտեղ է...

Ճաշարանի անկյունում մի փոքրիկ սեղան կար, որի վրա, ամեն առավոտ, թարմ լրագրեր էին դնում և օրվա փոստը: Դասերից վերադարձող ուսանողներն, ուղղակի այդտեղից, իրենց հասցեագրված նամակները կամ փաթեթներն էին վերցնում: Գերմանացին լավ գիտեր այդ սեղանը, ուստի միանգամից մոտեցավ, հարմար տեղավորվեց և ձեռքն առավ տարբեր գույների ու տարբեր չափերի ծրարները: Սպասուհին մի պահ կանգնեց շվարած, հետո, վառարանին թափվող ապուրի թշշոցը լսելով, շտապեց խոհանոց:

Կլաուսի համար ոչ մի նամակ չկար: Սակայն իր հայրենի քաղաք Էրֆուրտից ուղարկված մանուշակագույն մի ծրար գտավ, որն անմիջապես գրավեց ուշադրությունը և նույնիսկ ստիպեց զարմանքից բերանը բացել: Ուղարկողն, անկասկած, աղջիկ էր: Այդ էր վկայում կլորիկ և խնամքով գրված ձեռագիրը. «Լոտտա Ռայնհարդտ, Լյութերշտրասե, 7»: Սակայն նրան ավելի մեծ զարմանք պատճառեց հասցեատիրոջ անունը և հենց հատկապես անունը՝ առանց ազգանունի. «Պարոն Ռուբենին, Բժշկականի ուսանող»:

Երկուսին էլ հավասարապես լավ գիտեր. թե՛ հասցեատիրոջը, թե՛ նամակն ուղարկողին: Շատ ավելի լավ ուղարկողի հորը գիտեր՝ Էրֆուրտի հարգված անձնավորություններից մեկը, նախկին քաղաքապետ, գործարանատեր: Մի քանի անգամ առիթ էր ունեցել հյուր լինելու այդ տանը և այդտեղ էր ծանոթացել տանտիրոջ տասնյոթամյա աղջկան: Հայ ուսանողը որտեղի՞ց գիտի օրիորդ Լոտտային, ընդհանուր ի՞նչ կարող է լինել նրանց միջև... Սա ի՞նչ առեղծված է:

Ուշադիր նայեց շուրջբոլորը և հատկապես խոհանոցի մուտքը: Ապուրը թափվել ու կեղտոտել էր վառարանը, այրված մսաջրի հոտը լցնելով ճաշասրահ: Ուրսուլան շտապում էր իր անփութության հետքերը վերացնել և նրա մտքով անգամ չէր անցնի ստուգել, թե ինչով է զբաղված նախկին կենվորը, որն, առանց աչքերը թարթելու, փոքրիկ ծրարը տեղավորեց ծոցագրպանում: Հետո վեր կացավ, երախը լայն բացած, մոտեցավ խոհանոցի դռանը:

- Կարո՞ղ եմ, արդյոք, օգնել օրիորդին:

- Օ՜, ոչ, պարոն, ի՜նչ եք ասում, - անակնկալից նվաղած ու շշկլած պատասխանեց սպասուհին: - Արդեն վերջացրի... Շնորհակալ եմ...

- Ես էլ նայեցի վերջացրի:

- Նամակ ունեի՞ք:

- Ոչ, այս անգամ չկար:

Հրաժեշտ տալով դուրս եկավ փողոց, ձեռքերը գրպանները խոթած, ինքնագոհ, փողոցը վերից վար չափեց և ատամների արանքից, հազիվ լսելի, ասաց. «Կեցցե՛ս... ինչպե՞ս է, որ մինչև հիմա չէիր մտածել այդ մասին... Չէ որ ուսանողական գիշերօթիկները տեղեկությունների անսպառ գանձարան են... Ութ երկրից այստեղ ուսանողներ կան, և մանավանդ այն երկրներից, որոնք առանձնահատուկ ուշադրության են արժանի... Օրինակ՝ Ռուսաստանից...»:

Կլաուսը, փողոցի մեջտեղը կանգնած ցուցամատով մի քանի անգամ ճակատին խփեց (սեփական տխմարությունն ընդունելու պերճախոս նշան), հետո, ինքնիրեն մխիթարելով, վճռեց. «Ոչինչ, կորցրածը ետ կբերենք»:

Էրֆուրտից ուղարկված ծրարի գոյությունը չէր մոռացել: Ժամը չափազանց հարմար էր: Քաղաքի սրճարաններում հիմա ոչ մի ուսանող չէիր գտնի, ուստի մտավ առաջին պատահածը, գարեջուր վերցրեց և տեղավորվեց հեռավոր մի անկյունում՝ սրահում նստած միակ հաճախորդից յոթ-ութ սեղան հեռու:

Ծրարի ներսում ստվարաթղթի պես ամուր մի բան կար: Լուցկու սրած ծայրն անկյունից մտցրեց և փորձեց զգուշորեն բացել: Սոսինձը, բարեբախտաբար, առատ չէր քսված և ծրարն առանց վնասվելու բացվեց: Ներսից՝ ստվարաթղթի վրա փակցված մի լուսանկար դուրս եկավ, տասնյոթ-տասնութ տարեկան մի աղջիկ, որը, սակայն, ամենևին նման չէր Լոտտա Ռայնհարդտին, ավելին, նրա կատարյալ հակապատկերն էր: Նախկին քաղաքապետի դուստրը չորուկ, թխահեր, իր տարիքին ու սեռին անհամապատասխան կոշտ դիմագծերով մի օրիորդ էր: Մինչդեռ այս մեկը կատարյալ գեղեցկուհի էր՝ կանոնավոր և նուրբ դիմագծերով, երազկոտ աչքերով և բաց գույնի երկար մազերով:

Կլաուսը զարմանքից քրտնել էր:

Լուսանկարը շրջեց: Ետևը ոչ մի գրություն չկար: Մինչև ծրարը բացելը արդեն մի վարկած էր մշակել՝ այս զարմանալի կապը բացատրելու համար. Ֆրոյլեյն Ռայնհարդտը, հավանաբար, ժամանցի է եկել շվեյցարական լեռնային ամառանոցներից մեկը, որտեղ և նրա հետ ծանոթացել է մեր Դոն-Ժուանը... Հը՛մ, շատ հավանական է, այդ արևելցին մեծ հաջողություն ունի այստեղի բարձրաշխարհիկ կանանց մոտ, չասած, որ օրիորդ Լոտտայի սպասվելիք օժիտը կարող էր պարզապես նրա գլուխը դարձնել...

Սակայն ծրարը բացելուց հետո, այս անակնկալ և զարմանալի պատմությունը խորհրդավոր բնույթ էր ընդունում: Ստույգ էր, որ լուսանկարի աղջկան չգիտեր, սակայն չէր կարող պնդել, թե կատարելապես անծանոթ է: Այդ դեմքն ինչ-որ բան էր ասում նրան...

Կլաուս Յուրգենի հիմնական գործունեությունն այս երկրում խստորեն կանոնակարգված ու սահմանափակված էր որոշակի հրահանգներով. նա անում էր այն, ինչ կարգադրվում էր, այնտեղ, ուր պետք էր, այնքան, որքան պետք էր: Հանձնարարություն տվող անձինք իրենք էին գտնում նրան՝ օրվա ուզած ժամին և ուզած վայրում: Նրան կտրականապես արգելված էր սեփական նախաձեռնությամբ վերադասների հետ հանդիպել, սակայն արտոնել էին հազվագյուտ դեպքերում, անհետաձգելի և առանձնապես կարևորություն ներկայացնող գործի համար ներկայանալ Լոզանի գերմանական հյուպատոսին կամ փոխ-հյուպատոսին:

Մինչև հիմա առիթ չէր ունեցել նման հարցով հյուպատոսի մոտ մտնելու, սակայն հիմա գտավ, որ առանց հապաղելու պիտի ներկայանա հյուպատոսարան:

- Այս աղջկան գիտե՞ք, - հարցրեց Կլաուսը, լուսանկարը դնելով հյուպատոսի առջև:

- Ավելի տրամաբանական կլիներ, որ այդ հարցը ես ուղղեի ձեզ, - նկարը թեթևակի նայելով և ժպտալով պատասխանեց հյուպատոսը: - Քանզի դուք երկուսդ էլ էրֆուրտից եք և գրեթե նույն թաղում եք ապրում:

Կլաուսը զարմանքից բերանը բացեց:

- Այո, սիրելի բարեկամ, այս աղջիկն ապրում է Շտայգերշտրասեի վրա, իսկ ձեր հասցեն, եթե հիշողությունս չի դավաճանում, Լոյզենշտրասե 21 - ն է: Այդպե՞ս է:

- Իսկապես որ մի թաղից ենք... Սակայն դուք փայլուն հիշողություն ունեք:

- Ես պարզապես իմ ծառայողական պարտականություններն եմ կատարում, - համեստորեն պատասխանեց հյուպատոսը:

- Իսկ ինչպե՞ս է կոչվում այդ աղջիկը:

- Յաննի Ապել:

Կլաուսը քիչ մնաց տեղից վեր ցատկեր:

- Գնդապետ Ֆրանց Ապելի դո՞ւստրն է:

- Ճիշտ այդպես: Ի դեպ, նա հիմա այստեղ է:

- Այստեղ որտե՞ղ, - անակնկալ հայտնություններից ապուշ կտրած հարցրեց Կլաուսը:

- Այստեղ՝ Լոզանում, տիկին Սպիեսի գիշերօթիկում, և արդեն ութ ամիս կլինի... Տարօրինակ է, որ մինչև հիմա չեք նկատել...

Կլաուսը լուռ նստել էր, պարզապես չգիտեր, թե ինչ ասեր: Հիմա հասկացավ, որ արածը կատարյալ տխմարություն էր՝ դրդված սովորական նախանձից, եթե ոչ խանդից: Հայտնի չէ, թե այս պատմությունն ինչով կվերջանար, և այսպիսի անհարկի ինքնագործունեության համար նրան կարող էին պատժել:

- Սիրելի Կլաուս, այժմ, երբ պատասխանեցի ձեր բոլոր հարցերին, կարո՞ղ եմ մեկ հարց տալ:

- Իհարկե, խնդրեմ:

- Այդ աղջկա մասին տեղեկանում եք անձնակա՞ն նկատառումներով, թե՞...

Կլաուսը հասկացավ, որ իրողությունը ծածկելով ավելի կբարդացնի վիճակը, ուստի մանրամասնորեն պատմեց, թե լուսանկարն ինչպես է ընկել ձեռքը: Եվ եզրափակելով իր սխրանքի նկարագրությունը, ավելացրեց.

- Ռուբեն Չիլինկիրյանին լավ գիտեմ, մեկ տարի նրա հետ միևնույն գիշերօթիկում եմ ապրել, բացի այդ, հաճախակի հանդիպում ենք համալսարանում... Ես ստույգ տվյալներ ունեմ, որ թուրքական գաղտնի ոստիկանությունն աչալուրջ հետևում է նրան:

Կլաուսը նկատեց, որ հյուպատոսն ուշի ուշով լսում է, ուստի շարունակեց ավելի ոգեշնչված, աշխատելով խորհրդավորություն հաղորդել իր ասածին.

- Ինձ զարմացնում է այս եռանկյունը. օսմանյան հպատակ հայազգի ուսանող և գերմանական պատվավոր ընտանիքների երկու դուստր:

Հյուպատոսը գլխով արեց և հարցրեց.

- Դուք կարո՞ղ եք նախորդ նամակների բովանդակությանը ծանոթանալ, եթե այդպիսիք, իհարկե, եղել են:

- Դա առանձնապես դժվար չէ, - մի թեթև մտորելով պատասխանեց Կլաուսը:

- Ուրեմն, աշխատեք հնարավորին չափ շուտ ծանոթանալ և մանավանդ նկատի ունեցեք, հաջորդ նամակներն են կարևոր: Ուստի աշխատեք, որ այս ծրարը վաղվա նամակների կույտի մեջ լինի: Որևէ նորություն իմանալու դեպքում, անմիջապես հայտնեք ինձ:

Հյուպատոսը տեղից վեր կացավ, որպեսզի այցելուին ուղեկցի մինչև դուռը, դրանով իսկ կարծես ընդգծեց ստացված տեղեկության կարևորությունը: Սակայն, երկու քայլ չարած, կանգ առավ և մտերմաբար Կլաուսի թևը մտնելով, ավելացրեց.

- Ինչ վերաբերում է այդ հայ ուսանողին, ապա պիտի խնդրեի, որ հնարավորին չափ ընդարձակ և մանրամասն տեղեկություն տայիք նրա մասին... Ես չեմ զարմանա, եթե վաղը կամ մյուս օրը երկու միամիտ օրիորդների հարգարժան հայրերն ինձնից տեղեկություններ խնդրեն այդ արկածախնդիր երիտասարդի վերաբերյալ: Բացի այդ, կա երկրորդ, ավելի կարևոր մի հանգամանք...

Կլաուսը, որ անչափ հուզվել էր այս ուշադրությունից, գրեթե չլսեց վերջին բառերը և խանդավառված գոչեց.

- Ես կարող եմ հենց հիմա, ուղղակի այստեղ գրել:

- Մի շտապեք, սիրելի բարեկամ, մենք դեռ ժամանակ ունենք, ուստի կուզեի, որ այդ փաստաթուղթը շարադրելիս նկատի ունենայիք նաև հետևյալ հանգամանքը. անշուշտ, տեղյակ եք, որ մեր կայզերի և Աբդուլ Համիդի երկու հանդիպումների ժամանակ հիմնականում քննարկվել է Բեռլին-Բաղդադ երկաթուղուն առնչվող խնդիրները:

- Դա հայտնի է բոլորիս:

- Իսկ գիտե՞ք, թե ինչ պահանջ է դրել կայզերը. «Հայկական բնակավայրերն առնվազն հիսուն կիլոմետր պետք է հեռու լինեն երկաթուղուց...»: «Քիչ է, - պատասխանել է սուլթանը. հարյուր կիլոմետր...»:

- Դարձյալ քիչ է. հարյուր հիսո՛ւն, - դիվական ժպիտով ավելացրեց Կլաուսը, և երկուսով քրքջացին:

- Ես տեսնում եմ, որ դուք շատ ճիշտ եք հասկանում երկրորդ նկատառումի կարևորությունը, ուստի լրացուցիչ մեկնաբանություններ չեմ անում:

Հաջորդ օրը, առավոտյան նույն ժամին, Կլաուսը նորից այցելեց գիշերաթիկ: Նրա բախտից տիկ. Շապազը դարձյալ բացակա էր, իսկ առավոտյան փոստը, նախորդ օրվա պես, դրված էր անկյունի սեղանին:

- Օ՜, պարոն Կլաուս, ինչպիսի՜ հաճելի անակնկալ... Բնավ չէի կարծում, թե այսօր էլ կպատվեք ձեր այցելությամբ:

Գերմանացին, ցուցամատով, թեթևակի թփթփացրեց սպասուհու այտը և գրեթե չչնջալով ասաց.

- Իզո՜ւր, սիրելի օրիորդ, պետք է պատրաստ լինել հաճելի անակնկալներին:

Նոր ստացված ծրարների կույտն ուշադիր նայեց և նախորդ օրվա գողոնն զգուշությամբ սահեցրեց նրանց մեջ:

Ոգևորված սպասուհին սուրճ առաջարկեց հյուրին, և երբ քիչ հետո, կաթնասուրճի խոշոր գավաթը, կարկանդակի պատկառելի կտորի հետ սեղանին դնելով պատրաստվում էր խոհանոց գնալ, ապա ամենևին չդիմադրեց, որպեսզի գերմանացին իր կողմը քաշի նրան, նստեցնի ծնկներին և, թիկունքից ծանր շնչելով, կրծքերը տրորի: Ավելին, նա կտրուկ դարձավ և իր մսեղ շուրթերով կալանեց Կլաուսի բերանը: Գերմանացին անմիջապես ըմբռնեց, որ այս խաղը վտանգավոր զարգացում կարող է ունենալ: Ո՛չ այնքան իր հեղինակության, որքան գործի համար: Եվ ճիշտ ժամանակին մտածեց այդ մասին, քանզի արդեն անհնար էր դառնում՝ կուտակված զգացմունքների պոռթկումից խենթացած աղջկան խելքի բերել, և միայն տիկ. Շապազի անունը նրան սթափեցրեց և, իհարկե, առաջիկա օրերին, ավելի հարմար մի տեղում հանդիպելու խոստումը:

Հետո աղջկան նստեցրեց իր առջև և մի նրբանկատ ծառայություն խնդրեց, որն, անշուշտ, շատ վայելուչ չէ, բայց հանուն իրենց՝ Կլաուսների ազնվական տոհմի պատվի, աղջիկը պիտի համաձայնի ստանձնել... Այո, այո, դա չափազանց ազնիվ, չափազանց պարկեշտ...

- Պատկերացրու, որ դու, միամիտ ու մաքուր սրտով սիրում ես մեկին, և նա, իր հաճույքներն ստանալուց, քո մարմինը վայելելուց հետո, ստորաբար լքում է քեզ... Օ՜, ոչ, իհարկե, ես գիտեմ, որ այդ հայը պարկեշտ տղա է... Ի՞նձ ես ասում... Չէ որ նրա հետ մեկ տարի ապրել եմ այստեղ, սակայն այդ աղջկա պատիվը չափազանց թանկ է ինձ համար... Եթե սիրում են իրար, և տղան միայն ազնիվ նպատակներ ունի, թող միանան և ապրեն երջանիկ, եթե՝ ոչ, ուրեմն, մեր միջամտությունն անհրաժեշտ է... Ահա, տես այս ծրարը իմ հայրենի քաղաքից է գալիս... Հիմա հասկացա՞ր, թե ինչու եմ անհանգիստ: Քեզնից ընդամենը երկու բան ունեմ խնդրելու. այսօր, նրա սենյակը մաքրելիս, աշխատիր պարզել, թե այս ձեռագրով նամակ արդեն ստացե՞լ է, թե ոչ: Երկրորդ՝ հաջորդ նա-

մակն ստանալուն պես դիր մի կողմ և անմիջապես բեր ինձ մոտ... Ոչ, ոչ, անհոգ եղիր, մենք մաքուր գործ ենք անում... Դու առատորեն կվարձատրվես քո բարի ծառայության համար: Եվ լավ հիշիր. այս մասին ո՛չ մեկին՝ ո՛չ մի խոսք: Հիշիր նաև, որ այս աղջկա բախտը քո ձեռքին է:

Կլաուսը վերջին անգամ համբուրեց նրան, բռի մեջ մի հինգ ֆրանկանոց դրեց (համբույրը՝ համբույր, սակայն գյուղացին մնում է գյուղացի. իր բռնած գործի շոշափելի օգուտը պետք է անմիջապես տեսնի) և դուրս եկավ: Նա չափազանց գոհ էր, միաժամանակ, մի քիչ տխուր: Ուր որ է, աղջիկը, հաջորդ նամակը ձեռքին կհայտնվի իր մոտ, և այդ ժամանակ միայն հինգֆրանկանոցով չի կարողանա գլուխն ազատել: Հարկ կլինի ուրիշ կերպ վարձատրել, և այդ դեպքում կկարողանա՞ արդյոք հաղթահարել կանացի մարմնի հանդեպ նրանում արդեն վաղուց արմատացած հակակրանքը...

* * *

Շվեյցարական համադաշնության տարածքում գտնվող գերմանական հյուպատոսարաններին

ԽԻՍՏ ԳԱՂՏՆԻ

...Ռուս, լեհ և հրեա հեղափոխականներից զատ ձեր ուշադրության դաշտում պիտի պահեք նաև հայ ազգայնական հեղափոխականներին, այսպես կոչված, դաշնակներին և հնչակյաններին: Վերջին երկու տարիների ընթացքում նրանք առանձնահատուկ ուժգնությամբ քայքայիչ-տեռորիստական գործունեություն են ծավալել Ռուսական կայսրության դեմ՝ Կովկասում և Օսմանյան կայսրության դեմ՝ Կոստանդնուպոլսում և մասնավորապես Ռուսաստանին մոտ գտնվող վիլայեթներում: Մեզ հատկապես հետաքրքրում է նրանց գործունեության երկրորդ դաշտը, քանզի Թուրքիան մեր դաշնակիցն է և մենք՝ մեր հերթին, պիտի օգնենք բնի մեջ խեղդելու այդ շարժումը, որը հետագայում կարող է որոշակի և լուրջ սպառնալիք դառնալ Բեռլին-Բաղդադ երկաթուղու համար:

Պակաս վտանգավոր չեն հեղափոխական այդ կուսակցությունների խաղաղ նախաձեռնությունները: Նրանք աշխատում են «Սոցիալիստական Ինտերնացիոնալի» գործունեության առաջնահերթ խնդիրներից մեկը դարձնել «Հայկական հարցը»: Եվ արդեն կարողացել են միջազգային ասպարեզում որոշ հաջողություններ հասնել: Օրինակ՝ հինգ տարի առաջ, սոցիալիստներ Բեբելի և Գրադնաուերի ջանքերով, նույնիսկ փորձ արվեց «Հայկական հարցը» մտցնել Ռայխստագի օրակարգի մեջ: Եվ եթե նրանք հակահարված ստացան Գերմանիայում, ապա անցած վերջին տարիների ընթացքում կարողացան Ֆրանսիական Սենատի և անգլիական պառլամենտի մշտապես արծարծվող հարցերից մեկը դարձնել:

Այսու հրահանգվում է ձեզ աշխատել առավելագույն չափով ընդարձակ և մանրամասն տեղեկություններ հավաքել Շվեյցարիայի տարածքում գտնվող հայկական ազգային կուսակցությունների գործունեության վերաբերյալ»:

«...պարզվեց, որ արդյունաբերող Վիլլի Ռայնհարդտի դուստրը ոչ մի կապ չունի խնդրո առարկա՝ օսմանյան հպատակ հայազգի ուսանողի հետ, որ նրան չի ճանաչում և երբեք չի տեսել: Սակայն շատ հնարավոր է, որ մտերմական մի կապ ստեղծվի Էրֆուրտում բնակվող գնդապետ Ֆրանց Ապելի դստեր՝ օրիորդ Հելեն-Յաննի Ապելի և վերոհիշյալ օսմանյան հպատակ հայազգի ուսանողի միջև: Հրահանգվում է հետևել և պարզել՝ եթե այդ կապը երիտասարդների միջև ծնված համակրանքի կամ սիրո արդյունքն է, եթե հայազգի ուսանողն այդ կապը չի օգտագործում ուրիշ՝ Գերմանիայի և նրա դաշնակիցների շահերին հակասող նպատակներով, ապա մեզ համար հետաքրքրություն չի ներկայացնում»:

«...Ինձ հատկապես զարմացնում է քո անզգուշությունը. դու այդ տղային ծանոթ չես, նրա մասին ոչինչ չգիտես՝ անունից բացի (վստա՞հ ես, որ դա նրա իսկական անունն է) և միանգամից այդպիսի անլուրջ քայլի ես դիմում: Իսկ եթե պարզվի, որ նա ամուսնացած է կամ, ասենք՝ հիվանդ, ի՞նչ պիտի անես: Ես դեռ չեմ խոսում ավելի սոսկալի բաների մասին: Աստված մի արասցե՛: Լավ է, գոնե այդքան խոհեմ ես եղել՝ ինքդ չես ստորագրել և միանգամից նրան ուղարկել: Ինձ զարմացնում է նաև քո միամիտ վստահությունը: Նախ, պիտի իր նկարը պահանջեիր, հետո նոր քոնն ուղարկեիր, բայց եթե ուզում ես ինքդ առաջինն ուղարկել, ապա ինչո՞ւ ես կարծում, թե քո նկարն ստանալուն պես՝ իրենը պիտի ուղարկի: Ես քեզ չեմ հասկանում, Յաննի, պայմանավորվե՞լ եք, ինչ է: Ըստ երևույթին ինչ-որ բան թաքցնում ես ինձնից: Մի խոսքով, հայտնում եմ, որ բնավ խանդավառված չեմ քո այս երեխայական խաղերով, սակայն քանի որ խնդրում ես, ապա նրա նկարն ստանալուն պես, նույն օրը քեզ կուղարկեմ: Լավ է, գոնե այդպես հնարավորություն կունենամ տեսնելու, թե այդ տղան իրենից ինչ է ներկայացնում: Քո Լոտտա»:

* * *

Այս փողոցն իրեն սկզբում փոքրիկ թվաց, սակայն այսօր կարծես Լոզանի ամենաերկար փողոցը լինի: Միայն այսօր, իսկ վաղը (համոզված է) նորից նախկին փոքրիկ փողոցը կդառնա: Ի դեպ, հենց այդպես էլ կոչվում է. ռյու դյու Պտի-Շեն, այսինքն՝ փոքրիկ կաղնու կամ, գուցե, կաղնուտի փողոց: Երկու օր առաջ ստացավ Լոտտայի խրատական նամակը: Ուրեմն, Ռուբենը նույնպես ստացել է... Չէ որ երկու ծրարն էլ նույն օրն է ուղարկել: Պիտի անպայման ստացած լինի: Կհավանի՞ ինձ, այնքան, որքան ես եմ նրան հավանում: Դա իմ ամենալավ լուսանկարն է: Երանի՜ կյանքում էլ, միշտ այդպես գեղեցիկ լինեի... Այսօր առավոտյան հայելու մեջ նայեցի և չհավանեցի ինձ: Երանի այսօր եկեղեցի չգա և միայն հեռվից նայի ինձ, թե ոչ պիտի համեմատի լուսանկարի հետ և հիասթափվի: Իսկ եթե չի ստացե՞լ... Ասենք, ծրարներից մեկը կորել է ճանապարհին... Չէ որ այդպիսի բաներ պատահում են երբեմն... Կամ փոստատարի պայուսակից ընկել է... Իսկ եթե այդ տղան իսկապես ամուսնացած է, ինչպես Լոտտան է գրում, և Էրֆուրտից եկած նամակն ընկել է խանդոտ կնոջ ձե՞ռքը...

Եվ նա պատռել է, այրել... Տե՛ր Աստված, հիմա կխելագարվեմ: Այսօր էլ, կարծես, դիտմամբ դանդաղ են քայլում... Միայն փողոցը չէ, որ երկար է...

Այս մի խաչմերուկն էլ անցան: Եվս մի հիսուն քայլ, և դուրս եկան հրապարակ: Քիչ մնաց, հիմա կնայի ձախ և... Իսկ տղան, Ռուբենն, այնտե՞ղ է... Այո, այնտե՛ղ է: Նա ժպտում է, ի՛նչ հոյակապ ժպիտ ունի... Ձեռքը թեթևակի շարժում է... Բաճկոնի գրպանից մի մանուշակագույն ծրար է հանում ու մոտեցնում շուրթերին: Ճիշտ այդպիսի մի ծրար ինքն ստացավ երկու օր առաջ: Ամեն ինչ պարզ է ու հասկանալի:

Սակայն ակնթարթի մեջ կասկածը նորից գլուխ բարձրացրեց. իսկ հավանե՞լ է... Պիտի որ հավանի... Հապա ինչո՞ւ է այդքան զուսպ ժպտում... Ինչո՞ւ ավելի աշխույժ շարժումներ չարեց: Գուցե, որպեսզի օրիորդ-հսկիչների ուշադրությունը չգրավի: Գուցե... Եթե այդպես է, նշանակում է խելացի է ու շրջահայաց:

Եվ հանկարծ անբացատրելի մի վստահություն տածեց այդ տղայի հանդեպ, ինչպես կրտսեր քույրն իր մեծ եղբոր հանդեպ, նույնիսկ ավելին... Ասես համոզված էր, որ նրանից երբեք, ոչ մի վատ բան չպիտի սպասի: Եղբայր չունի ինքը, միայն մեկ քույր, Մինան, իրենից վեց տարով մեծ, բայց եթե եղբայր ունենար, այն էլ իրենից մեծ, ճիշտ այսպես ապահով պիտի զգար նրա կողքին:

Աղջիկներն իրար են անցել: Բոլորը չշուկով հարցնում են, թե դա ինչ ծրար է: «Վերջը ուղարկեցիր, հա՞, նկարդ», - հարցնում է Մաշան մի տեսակ վրդովալից զարմանքով: «Ոչ, - ասում եմ: - Ես նրան ոչինչ չեմ ուղարկել»: «Հապա ի՞նչ է ցույց տալիս... ինչո՞ւ...»: «Գուցե ինքն է ուզում ուղարկել», - ժպտալով պատասխանում եմ ես: Բոլորը զարմացած են, իսկ ես գոհ եմ, որ իմ գաղտնիքն ունեմ, որ նրանց չլսեցի և ուղարկեցի... առանց ուղարկելու: Ճիշտ է, այս գաղտնիքը չեմ կարողանա երկար պահել, բայց թող մի քիչ էլ գլուխնեբը կոտրեն:

Շրջվեց, որ մեկ անգամ էլ նայի, և նրա ժպիտը տեսավ, մի տեսակ հաղթական ժպիտը: Նա ժպտում էր և դարձյալ ծրար ցույց տալիս, բայց ճերմակ ծրար, ոչ թե մանուշակագույն: Ձեռքի պերճախոս շարժումով հասկացրեց, որ այդ ծրարը պիտի փոստարկղ գցի: Կռահումը միանգամից փայլատակեց գլխում. պատասխան նամակն է, գուցեև նկարն էլ հետը: Այս ամենը մի քանի վայրկյան տևեց, սակայն չվրիպեց զգոն հայացքներից. «Օրիորդ Ապել, ձեր առջևը նայեք և ոչ թե սրճարանի պատուհաններին»:

Տարօրինակ բան. օրիորդի դիտողությունն այս անգամ շատ հանգիստ ընդունեց, նույնիսկ հաճույքով ներողություն խնդրեց: Իսկապես, գեղեցիկ բան չէ՝ քայլել փողոցով և աչքերը չռել պատուհաններին: Բայց ինքը հանուն դատարկ հետաքրքրասիրության չէ, որ նայում է, այլ որոշակի նպատակով: Մյուս պատուհաններին, օրինակ՝ բոլորովին չի նայում:

Ժամերգության ընթացքում կլանված հետևում էր խորանում ընթացող արարողությանը: Իրենց ընտանիքն աչքի չէր ընկնում շեշտված բարեպաշտությամբ: Մայրն էր, որ իր երկու դուստրերին կանոնավոր տանում էր եկեղեցի, իսկ հայրը, որ սպա էր և ժամանակ չուներ, միայն բացառիկ դեպքերում էր ու-

ղեկցում նրանց: Համենայն դեպս, ընտանիքում, չափավոր ու բանական վերաբերմունք էր հաստատվել հավատի հանդեպ: Աստծուն հավատալ, բայց հույս դնել նախևառաջ սեփական ուժերի վրա: Այսինքն՝ ցանկա և գործիր, և այդժամ միայն Աստված քեզ արժանի կդարձնի քո ճակատագրին: Մայրը՝ Գրետա-Սոֆի-Մարի Ապելը, հավատ և խոնարհություն էր տվել իր դուստրերին, իսկ հայրը՝ Ֆրանց-Բեռնարդ-Անտոն Ապելը, կամք և հավատ սեփական ուժերի հանդեպ: Հիմա, ժամագիրքը ձեռքին, մրմնջում էր աղոթքն առ Աստված, երախտագիտությունն արտահայտում լռիկ, որ Տերն իր ցանկությունը լսել ու կատարել է:

* * *

Պերեսը, ոտքից գլուխ անթերի հագնված, ծաղկեփունջը ձեռքին, ամենայն հանդիսավորությամբ ներկայացավ տիկ. Սպիեսին, ցույց տվեց իր հոր՝ Արգենտինայի վարչապետի այցեքարտը և Բեռնում հավատարմագրված Արգենտինյան դեսպանի նամակն առ այն, որ ինքն այստեղ՝ Լոզանում, ուսանելու հետ մեկտեղ, ներկայացնում է արգենտինյան կառավարությունը:

- Սակայն ես անձնական, ավելի շուտ, մեր ընտանիքին առնչվող մի հարցով պիտի դիմեմ ձեզ:

- Խնդրեմ, - սիրալիր պատասխանեց գիշերօթիկի տիրուհին, անմիջապես կռահելով, թե ինչի մասին է գնալու խոսքը:

- Հայրս հանձնարարել է, որպեսզի մեր դիրքին վայել մի գիշերօթիկ գտնեմ Լոզանում քրոջս համար, որ շուտով տասնյոթ տարեկան պիտի դառնա: Մինչև այստեղ գալը հարցուփորձ արեցի և, պատկերացրեք, բոլորը խորհուրդ տվեցին ձեզ դիմել:

- Անչափ շոյված ենք, - զուսպ պատասխանեց տիկ. Սպիեսը:

- Սակայն վերջնական վճիռ ընդունելուց առաջ որոշեցի այցելել ձեզ և ծանոթանալ պայմաններին: Ուստի պիտի խնդրեմ, որ ամենայն մանրամասնությամբ պատմեք, թե ինչպես են ուսանում, ինչպես են դաստիարակվում, ինչպես են սնվում, ուր են հաճախում օրիորդները... Մի խոսքով, կուզեի ամեն ինչ իմանալ:

Տիկ. Սպիեսը հաճույքով պատասխանեց բոլոր հարցերին, ավելին՝ ցույց տվեց խոհանոցը, ճաշարանը, դասարանները, փոքրիկ գրադարանը («ի դեպ, մեծարգո պարոն, մենք խստորեն հետևում ենք, որպեսզի աղջիկների միտքը պղտորող գրականություն այստեղ չմտնի...») և անգամ փոքրիկ դահլիճն ու սենյակները:

Արգենտինացին, իր հիացմունքն արտահայտելով, հրաժեշտ տվեց և շտապեց ընկերների մոտ:

- Ես չգիտեմ, եթե քույր ունենայի, կհամաձայնեի՞ արդյոք, որ այդ հրեշների ձեռքն ընկներ, - հայտարարեց նա: - Սակայն հորս պիտի գրեմ և առաջարկեմ, որ տիկին Սպիեսին նշանակի Բուենոս-Այրեսի գլխավոր բանտապահ:

Հետո ընկերոջը նայելով ասաց.

- Կներես, Ռուբեն, սակայն ոչ մի հնարավորություն չկա, որպեսզի թեկուզ հինգ բոպեով այդ աղջկան տեսնես... Փաստորեն օրվա քսանչորս ժամվա

ընթացքում անդադար հսկողություն է... Ինձ թվում է, թե այդ խեղճ սանուհիներն անգամ պետքարանում իրենց մենակ չեն կարող զգալ... Ներող կլինես, եղբայրս, որ այս կրակը բորբոքեցի քո սրտում, սակայն չգիտեմ, թե ինչպես պիտի մարես...

Պերեսը ճիշտ էր, որ կրակ բորբոքեց իր սրտում, սակայն ինչո՞ւ մարել: Շատ լավ հասկանում էր, թե այդ բառն ասելով ինչը նկատի ունի. նրա պատկերացմամբ, ցանկության ծնունդին պիտի անմիջապես հաջորդի վայելումը: Մեծացած երեխա, որ հավանելուն պես ուզում է ունենալ:

Այո, իսկապես որ տարբեր իմաստներով էին ընկալում բառերը, մանավանդ վերջին բառը՝ «մարելը», նրան ստիպեց սարսռալ: Եթե արգենտինացու համար այն նշանակում էր անմեղ հագեցում, ապա իր համար՝ սոսկալի, անդառնալի, վախճանական մի բան: Ուստի քաջալերեց նրան, որ իսկապես տխրել էր.

- Անհոգ եղիր, Պերես, մի ճար կգտնենք: Եվ հետո, գուցե լավ է, որ այդպես հսկում են, նշանակում է աղջկան ոչ մի վտանգ չի սպառնում...

- Ի՞նչ վտանգ կարող է սպառնալ, նա ոտքով գլխով սիրահարված է քեզ... Ի դեպ, լուսանկարդ ուղարկեցի՞ր...

Այո, ուղարկել է, սակայն կհասնի՞ արդյոք աղջկան: Ինչպես Պերեսին էին հայտնել, նամակները չեն ընթերցվում, սակայն որևէ կասկածի դեպքում կարող են ծրարը բացել կամ ուղարկել աղջկա ծնողներին:

- Բայց մինչև ե՞րբ պիտի լուսանկարներ փոխանակեք... Վերջապես պիտի հանդիպե՞ք մի օր, գոնե իրար երես նայեք մոտիկից:

- Ճակատագիրն ինքը կորոշի, Պերես, պետք չէ դեպքերն արագացնել և մանավանդ աղջկան անխոհեմ արարքների դրդել:

Պերեսը լուռ էր: Հետո խորհրդավոր ժպտաց ու ասաց.

- Վերջին անգամ որտե՞ղ լուսանկարվեցիր... Պեպինե հրապարակի լուսանկարչատա՞նը... Հրաշալի է: Ես մի գաղափար ունեմ, այդ մարդը գրեթե բարեկամս է, կարծում եմ՝ իմ խնդրանքը չի մերժի:

* * *

Երկտողն ուղարկված էր զորանոցի հասցեով: Ռայնհարդտն էր, որ ստվարաթղթե այցեքարտի մյուս երեսին գրված մի քանի նախադասությամբ խնդրում էր հնարավորին չափ շուտ այցելել՝ խիստ կարևոր մի գործի առնչությամբ:

Այդ ի՞նչ անհետաձգելի գործ կարող էր ունենալ իր հետ՝ մանկության և դպրոցական ընկեր Ռայնհարդտը, եթե ոչ, ժամանակ առ ժամանակ, որևէ տաքուկ անկյունում հանդիպել և ընկերական նեղ շրջանակում գարեջուր կոնծել, սակայն նման դեպքերում ժամադրությունները խորհրդավորության այսպիսի քողով չէր ծածկում, այլ ուղղակի հայտնում էր՝ այսինչ ժամին, այսինչ տեղը: Կարելի էր ենթադրել, թե գործի բերումով քննարկելիք հարցեր ունի գնդապետի հետ, չէ որ հաջողակ գործարանատերն այժմ ռազմական նախարարության պատվերն էր կատարում, չափազանց շահութաբեր մի գործարք, որի համար, սակայն, հազիվ թե իր օգնության կարիքն զգար, քանզի գործ ուներ ուղղակի

բարձրագույն հրամանատարության հետ: Արդ ի՞նչ ունի իրեն ասելիք, ինչո՞ւ այս պաշտոնական գաղտնիությունը...

Վերջին ժամանակներս գրեթե ամեն ինչ նրան անհանգստություն, անգամ տագնապ էր պատճառում: Կենցաղային չնչին մանրուքներ կային, որ կարող էին նրան՝ ծայրահեղորեն հավասարակշռված մարդուն, հունից հանել, երբեմն նույնիսկ տրտմության, դեպրեսիայի մեջ գցել: Ամեն ինչ սկսվեց այն օրը, երբ ականջին լուրեր հասան գլխավոր շտաբից, թե իրեն մտադիր են մոտ ժամանակները զորացրել և ուղարկել թոշակի: Ճիշտ է, հիսունյոթ տարեկան էր, բայց միտքն արթուն էր մշտապես, ուժերը տեղը, գնդի լավագույն հրաձիգն էր, քանզի, չնայած այդ տարիքին, ձեռքը չէր դողում: Բայց ո՞ւմ հոդն էր: Առանց հաշվի առնելու իր անթերի ծառայությունը, իր սխրանքները, առանց վարանելու թոշակի կուղարկեին, որպեսզի իր տեղը երիտասարդ մի կարիերիստի հանձնեն: Դա նշանակում էր, որ պիտի վերջնականորեն հրաժարվեր գեներալական ուսադիրներով հանգստի գնալու այդքան փայփայված հույսից:

Արդեն մի քանի օր տևող վատ տրամադրության պատճառը, սակայն, միայն սա չէր... Մեկ շաբաթ առաջ ավագ դուստրը՝ Մինան, բարեհաջող ծննդաբերել էր Բազելում: Հեռագիրն ստանալու օրը, բարեբախտաբար, սպասուհիները տանը չէին, թե ոչ ամբողջ քաղաքի համար բամբասանքի նյութ պիտի դառնար: Այսինքն՝ վաղ թե ուշ կիմանան...

Մեղավորն ինքն էր: Ինչպե՞ս չկարողացավ կանխել, աղջկան ետ պահել այդ արկածախնդրությունից, մանավանդ գիտեր, որ իրեն կենթարկվեր, քանզի ոչ միայն հարգում, այլև սիրում է հորը:

Սակայն մի՞թե չէր արել ամեն ինչ ըստ օրինաց կարգի և ըստ ծնողական սրտի թելադրանքի, աշխատելով, որ ամեն բան բոլորի և ամենից առաջ աղջկա սրտով լինի: Այսօրվա պես հիշում է, որ նշանդրեքից առաջ ուղիղ մեկ ժամ խոսեց Մինայի հետ և հատուկ ընդգծեց, որ աղջիկը պարտադրված չէ ենթարկվել հոր կամքին, որ, այո, փեսացուն պատվավոր ընտանիքից է, խելացի, համակրելի, բայց եթե չի սիրում, պարտավորված չէ...

Ամեն ինչ կարգին էր, ամեն ինչ որոշված, և հանկարծ հայտնվեց այդ խառնածինը, այդ արևելցին, հոլանդուհու և աբորիգենի խառնուրդը, որն ընդամենը վեց ամիս ապրեց այս քաղաքում, բայց հասցրեց պղտորել բոլոր աղջիկների մտքերն ու հոգիները... Զարմացել էին չտեսները, որ կապուտաչյա թխամորթ էլ կա: Մինան եկավ ու ասաց, որ այդ տղայի հետ որոշել են ամուսնանալ և մեկնել Սումատրա: Աշխարհի մյուս ծայրը: Այդ կիսավայրենու... Այդ լրիվ վայրենու հետ... Ասաց, որ սիրում են իրար: Հետո ի՞նչ: Ամեն սեր չէ, որ կարող է բախտավորություն բերել: Հետո այդ խառնածինը չքվեց, բայց կարճ ժամանակից հետո նրա թողած դժնի հետքերը հայտնվեցին: Կինը՝ Ֆրաու Բերտան հայտնեց, որ Մինան հղի է և որ մտադիր է երեխան պահել: Եվ պահեցինք, հապա ի՞նչ պիտի անեինք... Աղջիկը մի հիմարություն էր արել, մենք էլ երկրորդը անեինք ու դառնայինք ոճրագո՞րծ... Ինչպե՞ս կարող էինք Աստծո դեմ գնալ և օրենքի... Ա՜խ, այդ օրենքը, որ «անհայր զավակներին» ծննդաբերությունից հետո պետականացնում է, ասես մարդու զավակ չէ, այլ ձիու քուռակ... Սա ի՞նչ տխմարություն է՝

«անհայր զավակ», եթե մեջտեղը երեխա կա, ուրեմն հայր է եղել:

Բայց միայն օրենքի տխմարությունից չէր, որ փախավ, այլ ավելի շատ մարդկային դաժանությունից, այս քաղաքի բարքերից: Պատկերացնում եմ, թե ինչպիսի վրդովմունքով պիտի ընդունեին այդ լուրը քաղաքի «հարգարժան» տիկնայք և պարոնայք... Եվ ինչպիսի՜ չարախնդությամբ... Այո, իր դստեր արարքը դատապարտում էր հոգու խորքում, սակայն չէր ընդունում նաև այս կեղծ բարեպաշտ մերժումը:

Ահա ինչու խեղճ աղջիկը գնաց Բազել, որովհետև չվեյցարացիք մեզնից ավելի իմաստուն են և ավելի բարի. յուրաքանչյուր ծննդաբերող կին արժանի է հարգանքի և հոգատար վերաբերմունքի՝ անկախ այն բանից օտարական է, թե ոչ, ամուսնացած է, թե ոչ... Նրանք գտնում են, որ կարևորը մայրն է և երեխան, մնացած ամեն ինչը երկրորդական է... Մնացած ամեն ինչը պիտի ծառայի ծննդաբերող կնոջը և երեխային, և ոչ թե հակառակը:

Ինչը ամիս առաջ արդյոք այսպես կդատե՞ր: Թերևս ոչ: Մի՞թե ցավն անպայման պիտի մեր մաշկին զգանք, որպեսզի կարեկցենք մերձավորին: Հարազատ աղջիկն ստիպեց նրան կյանքին ուրիշ կերպ նայել:

Մեղավորության զգացումը տանջում էր նրան: Տխուր էր և ընկճված, որ չկարողացավ աղջկան ետ պահել արկածախնդրությունից: Սակայն ավելի շատ մեղավոր էր զգում, որ չթողեց աղջկան խառնածինի հետ մեկնել Սումատրա: Հիմա իր միակ մխիթարությունը կրտսեր դուստրն էր՝ Յաննին: Մինայի պատմությունից գոնե մի հետևություն արեց. քանի որ իրենք՝ ամուսինները, իրենց սրտի բարությամբ չեն կարողանում հարկ եղած դեպքում բավականաչափ խիստ լինել, ապա ավելի լավ է, որ այս երկու-երեք ամենավտանգավոր տարիներն անցկացնի տիկ. Սպիեսի գիշերօթիկում, որը հայտնի է իր դրակոնյան կարգուկանոնով: Կինը՝ Ֆրաու Բերտան, չէր ուզում, որ Յաննին այդ «անգութ օրիորդների» ձեռքն ընկնի: Սակայն ինքն անդրդվելի մնաց. «Ավելի լավ է մի երկու տարի այնտեղ նեղվի, քան ամբողջ կյանքում տառապի»:

Հիմա էլ Ռայնհարդտի երկտողը մեջտեղ եկավ իր տագնապահարույց խորհրդավորությամբ: Նման «խիստ կարևոր», նույնիսկ «գաղտնի» բազմաթիվ հրավերներ էր ստացել ամբողջ կյանքում, սակայն դրանցից ոչ մեկն այսպիսի սիրտ մաշող մտահոգության առիթ չէր տվել:

Կես ժամ չանցած գնդապետն արդեն նստած էր գործարանատիրոջ ընդարձակ աշխատասենյակում: Քաղաքավարական մի քանի բառերից և սիգար ու կոնյակ առաջարկելուց հետո, Ռայնհարդտը միանգամից հայտնեց, թե ինչու է կանչել:

- Զզարմանաս, խնդրում եմ, սիրելի բարեկամ, բայց հարցը վերաբերում է ձեր կրտսեր աղջկան:

- Ի՞նչ է պատահել նրան, - գրեթե գոռալով հարցրեց գնդապետը:

- Հանգստացիր, Ֆրանց, - ընկերոջ ուսերից բռնելով ասաց Ռայնհարդտը: - Բան չկա, առայժմ ոչինչ չկա, սակայն եթե միջոցներ չձեռնարկենք, հետո կարող է ուշ լինել:

Եվ նա հանգամանալից ներկայացրեց լուսանկարների պատմությունը, ասե-

լով, որ այդ ամենն իրեն է հայտնել գաղտնի ծառայությունների մի պաշտոնյա:

- Երեկ մոտս եկավ, ահա այդտեղ էր նստած, որտեղ հիմա դու ես... Ես իմ զարմանքն ու վրդովմունքը հայտնեցի, որ կարևոր գործերը թողած տասնյոթ տարեկան աղջիկների նամակներն են կարդում, և գիտե՞ս ինչ ասաց... «Մենք ոչ մի նամակ չենք կարդացել: Մենք առանց կարդալու էլ կարող ենք ամեն ինչ իմանալ... Ամենայն մանրամասնությամբ...»: Եվ ընդգծեց. «Ամենայն մանրամասնությամբ»:

- Հապա ինչպե՞ս են իմացել, - հարցրեց գնդապետը:

- Նույն հարցը ես տվեցի, սակայն հրաժարվեց հայտնել, ասելով, թե դա ծառայողական գաղտնիք է:

- Բայց ինչո՞ւ էր եկել քեզ մոտ և ոչ թե ինձ մոտ... Եվ հետո, իսկապես, ի՞նչ հետաքրքրություն կարող է ներկայացնել այդ հիմար պատմությունը նրանց համար...

- Նա ուղղակի ասաց, որ առանձնապես մեծ կարևորություն չեն տալիս դրան: Նրա ասելով, սա երիտասարդների սովորական մի պատմություն է, սակայն հանձնարարեց ուշադիր հետևել դեպքերի հետագա ընթացքին և որևէ կասկածելի բան նկատելու դեպքում հայտնել իրենց: Այդ ծառայողը հատկապես խնդրեց, որ ուշադրություն դարձնեմ մասնավոր անձանց միջոցով ուղարկվող նամակներին, ինչ վերաբերում է փոստով առաքվող թղթակցությանը, ապա այն, որքան հասկացա, այսուհետև պիտի հսկողության տակ լինի...

- Ինչպիսի՜ տխմարություն, - շպրտեց գնդապետը:

- Իրավացի ես, - համաձայնեց Ռայնհարդտը: - Ես համոզված եմ, որ նրանք որևէ լուրջ բան չեն գտնելու, բայց, անշուշտ, գիտես, թե այդ մեքենան ինչպես է գործում. ինչ-որ մեկի խելքին փչել է զեկուցագիր գրել, և ահա ստուգում են, մինչև որ համոզվեն, թե դա իրենց զբաղվելու բանը չէ... Սակայն, սիրելի Ֆրանց, կարծում եմ ճիշտ եմ անում, որ տեղյակ եմ պահում քեզ...

- Այո, իհարկե, շնորհակալ եմ...

- Ի դեպ... ոչ միայն իմ ընկերական պարտքն եմ կատարում, այլև այդ պարոնի հանձնարարությունը... Նա, իմիջիայլոց ասաց, որ մեր դիվանագիտական ծառայությունները հատուկ հանձնարարություն ունեն ստուգելու, թե մեր քաղաքացիներն ինչով են զբաղված արտասահմանում և ինչպիսի կապեր են հաստատում օտարների հետ:

«Օտարներ» բառն ասես մտրակեց նրան: Ռայնհարդտն անպայման պիտի լսած լիներ իր ավագ դստեր և այդ կիսահոլանդացու կապի մասին: Իսկ հիմա, խնդրեմ, կրտսեր դուստրն է տհաճ անակնկալ մատուցում: Ընկերոջ ազնվությանը չէր կասկածում, դրանից զատ վստահ էր, որ այս վերջին լուրը քաղաքով մեկ տարածվելու դեպքում կարող է վնասել նաև նրա դստեր՝ Լոտտայի հեղինակությանը: Ուստի հայրն ամեն ինչ կանի, որպեսզի երկու ընտանիքներից զատ ուրիշ ոչ ոք չիմանա այդ մասին: Այնուհանդերձ, ցավալի էր այդ մասին լսել կողմնակի անձից:

- Միայն մեկ և ամենակարճ ճանապարհը կա այդ պարոններին վերջնականապես ապացուցելու, որ սա իրոք երկու անփորձ աղջիկների ձեռնարկած

տխմար մի խաղ է: Վաղն իսկ կմեկնեմ Լոզան, աղջկաս ետ կբերեմ և ամեն ինչ կվերջանա... Եվ այդ պարոններն այլևս մտահոգվելու պատճառ չեն ունենա, - վճռական, մի քիչ էլ վիրավորված հայտարարեց գնդապետը:

- Հանգստացիր, Ֆրանց, մեջտեղը դեռ ոչինչ չկա: Ամենաչատը երկու-երեք նամակ կփոխանակեն, և ամեն ինչ կվերջանա, մինչդեռ, եթե արգելես, ավելի պիտի գրգռես նրա հետաքրքրությունն այդ տղայի հանդեպ: Թող լուսանկարներ փոխանակեն, թող նամակներ գրեն իրար, միևնույն է՝ այդ նամակները մեր ձեռքի տակով են անցնելու: Իսկ այնտեղ՝ Լոզանում, տիկին Սպիեսն է նրան աչալուրջ հսկում: Ապացույց, որ նրանց թղթակցությունն էրֆուրտով է անցնում, նշանակում է, հնարավորություն չունեն գոնե մի քանի վայրկյան իրար տեսնելու:

- Ինչպե՞ս չունեն, - վրդովված առարկեց գնդապետը: - Հապա ինչպե՞ս է այդ տղայի անունն իմացել, հասցեն...

- Այդպիսի աննշան վրիպումներ կարող են լինել: Եվ հետո, ավելի լավ, վտանգի աղբյուրն արդեն գիտենք: Ի դեպ, դու կարող ես բողոքել գիշերօթիկի տիրուհուն և նույնիսկ այդ պարոնի հասցեն և նկարագրությունը տալ, որպեսզի իմանան, թե ումից պիտի զգուշանան:

- Ցավոք, միայն հասցեն ունենք և անունը:

- Համբերիր, և մենք ամեն ինչ կիմանանք, - խորհրդավոր ժպտալով պատասխանեց Ռայնհարդտը:

- Հա, ասացիր, թե լուսանկարն ուղարկել էր աղջկաղ: Առիթ ունեցա՞ր նայելու, ի՞նչ տեսք ուներ:

- Դժբախտաբար, այդ պարոններն ինձ մոտ եկան այն ժամանակ, երբ աղջիկս լուսանկարն ստացել և ուղարկել էր: Սակայն նա հիացած էր, - նորից ժպտալով ավելացրեց Ռայնհարդտը: - Անգամ մորն էր պատմել նախանձով, ասել էր՝ հավատս չի գալիս, թե այդ բարբարոս երկրում նման ազնվական և գեղեցկատես երիտասարդներ կան...

- Գուցե ավելի վատ, որ այդպես է, - մռայլ ասաց Ֆրանց Ապելը:

- Տրամադրությունդ մի փչացրու, սիրելի Ֆրանց, երիտասարդ են, թող ընկերություն անեն, թող նամակներ գրեն իրար, վերջին խոսքը քոնն է լինելու, - փորձեց քաջալերել Ռայնհարդտը:

«Երբ բանը բանից անցած լինի, իմ վերջին խոսքն այլևս ոչ մի արժեք չի ունենա, - մտովին պատասխանեց գնդապետը: - Սակայն Ռայնհարդտի խորհուրդներին գուցե արժե ականջ դնել, մանավանդ որ ներկա կացության մեջ չեմ տեսնում, թե ինչ քայլի պիտի դիմեմ»:

Իսկ գործարանատերը, մի փոքր նեղվելով, լրացրեց.

- Ի դեպ, այդ պարոնը... Նա խորհուրդ չտվեց միանգամից հայրական իշխանություն բանեցնել և վերջ դնել այդ նամակագրությանը...

- Դե, ինչ արած, թող շարունակեն, - ասաց գնդապետը, տեղից ելնելով: - Շնորհակալ եմ այս կարևոր տեղեկությունների համար... Շարունակիր հսկողության տակ պահել աղջկաղ, և մանավանդ, որքան հնարավոր է, թող շատ բան իմանա այդ ուսանողի մասին:

- Անհոգ եղիր, արդեն ասված է, - պատասխանեց Ռայնհարդտը՝ ճանապարհելով ընկերոջը:

* * *

Յաննիին տեսնելու միակ հնարավորությունը դա է, եթե չհաշվենք երթուղարձը Ս. Ֆրանսուայի հրապարակով: Շաբաթը մեկ անգամ գալիս են այստեղ՝ գեղեցիկ արվեստների այս սրահը՝ նկարչության դասեր առնելու: Սրահը մեծ է, նկարել սովորողների մի բազմություն կա այստեղ, սակայն սանուհիներին բոլորից առանձին են նստեցնում, այնուամենայնիվ, սա գերադասելի է հրապարակի երկուրոպեանոց երթուղարձից: Այստեղ գոնե մեկ ժամվա ընթացքում կարող էին միմյանց ներկայությունը վայելել, երբեմն-երբեմն, գաղտագողի, հայացքներ փոխանակել, վերջապես, կարող էր նրա դիմանկարը գծել:

Պերեսի բոլոր հնարամտություններն արդյունք չտվեցին: Առաջինը լուսանկարչատունն էր, որ դարձյալ արգենտինացու «գյուտն» էր: Հետևյալ նախագիծը մշակվեց. Յաննին դիմում է օրիորդ-Հսկիչին և թույլտվություն խնդրում կիրակի կեսօրից հետո հրապարակի լուսանկարչատուն գնալու: Իբր հարազատներն իրենից նոր նկարներ են խնդրել: Արգենտինացին հասցրել էր լուսանկարչի հետ մտերմանալ, ուստի դժվար չեղավ նրան համոզել, որ Ռուբենն այդ ժամին լինի ներսում՝ վարագույրով պաշտպանված փոքրիկ սենյակում, ուր այցելուները, լուսանկարվելուց առաջ, բարձր հայելու մոտ մազերն էին շտկում, իրենց կարգի բերում: Հաջողվեց նաև այդ ծրագիրը ներկայացնող մի նամակ սահեցնել Յաննիի ժամագրքի մեջ: Այս անգամ նրանք ուսանողների յոթ-ութ հոգանոց խմբով մտան եկեղեցի, և շշկլված օրիորդ-Հսկիչները չնկատեցին, թե ինչպես մի ուսանողուհի նամակն անվրդով դրեց բացված ժամագրքի վրա:

Նշանակված օրը Յաննին իսկապես եկավ լուսանկարչատուն, սակայն, ավա՜ղ, ոչ մենակ: Տարօրինակ էր, նույնիսկ լուսանկարիչը զարմացավ: Նրա ասելով, գիշերթիկի աղջիկները, սովորաբար, մենակ են գալիս իր մոտ՝ առանց հսկողության: Չէ որ ընդամենը մի քանի քայլ է, նույնիսկ գիշերթիկի պատուհաններն են երևում այստեղից: Բայց դարձյալ գոհ էր, քանզի կարողացավ վերջապես մոտիկից տեսնել նրան, նույնիսկ ձեռքե՛րը վերցնել իր ձեռքերի մեջ:

Ռուբենը փոքրիկ սենյակում էր: Մի՞թե օրիորդ-Հսկիչը կմտնի այստեղ: Պերեսը և Լևոնը, ընդարձակ սպասասրահում հարմարավետ բազկաթոռներին նստած, սուրճ էին խմում և սիգար ծխում: Լուսանկարիչը սուրճ առաջարկեց օրիորդ-Հսկիչին: Վերջինս հաճույքից հալվեց: Իսկ Յաննիին ասաց.

- Իսկ դուք, օրիորդ, անցեք կողքի սենյակը և ձեր մազերը շտկեք:

- Սակայն նրա մազերը խնամքով սանրված են, - միջամտեց օրիորդ-Հսկիչը:

- Իրավացի եք: Բայց փորձը ցույց է տալիս, որ կանայք որքան էլ խնամքով սանրվեն, առիթը չեն փախցնում նկարվելուց առաջ հայելու մեջ նայել: Բացի այդ, վերջին պահին միշտ ինչ-որ բան է լինում շտկելու, - անտարբեր նկատեց լուսանկարիչը, որը նախազգուշացված էր: - Այնպես որ, բարի եղեք,

օրիորդ, մի վերջին անգամ աչք ածելու, իսկ ես գործիքը պատրաստեմ:

Յաննին անհամարձակ մտավ կողքի սենյակը և, բարեբախտաբար, չփոթմունքից մոռացավ դուռը ծածկել: Ռուբենը հազիվ հասցրեց մոտենալ, ձեռքերը բռնել, նայել աչքերի մեջ, երբ նախասրահից հնչեց Պերեսի բարձր ձայնը.

- Օրիորդ-հսկիչ, դուք է՞լ եք ուզում ձեր մազերը շտկել:

Ինչպե՞ս կարողացավ հուզմունքից հրկիզվող իր գլխում այդքան ողջախոհություն՝կամքի այդպիսի ուժ գտնել և ավելի չմոտենալ, չգրկել, չհամբուրել, և նույնիսկ, նույնի՛սկ բացել իր բռունցքների փականքը և ուռենու նրբին ճյուղերի պես թրթռացող մատներն աղատել, երազային հայացքը դեմքին հեռանալ և պատի տակ դրված շիրմայի ետևը մտնել: Իսկ որտեղի՞ց այս անփորձ աղջիկն ուժ գտավ իրեն տիրապետելու, անմիջապես դուրս գալու սենյակից և կատարելապես հանդիստ ձայնով հայտարարելու.

- Ես պատրաստ եմ, պարոն:

Պերեսը հետո պիտի պատմեր, թե ինչպես օրիորդ-հսկիչը, Յաննիի դուրս գալուց հետո, սուրճը կիսատ թողած, մոտեցել և խուզարկող մի հայացք է գցել ներս:

Լուսանկարիչը երեք տարբեր նկարներ արեց, և ամեն անգամ չէր զլանում գովեստներ շռայլել աղջկան՝ շնորհալի դիրքով նստելու համար: Վերջում չափազանց հստակ լսելի հայտարարեց.

- Վաղը չէ մյուս օրը, կեսօրից հետո ժամը չորսին կարող եք գալ լուսանկարները վերցնել:

- Օ, այդ օրը կեսօրից հետո դաշնամուրի դաս ունեմ, կարո՞ղ եմ հինգշաբթի նույն ժամին գալ:

- Իհարկե, կարող եք:

Սակայն օրիորդ-հսկիչի ձայնը հնչեց.

- Անհոգ եղեք, օրիորդ Յաննի, վաղը չէ մյուս օրը ես կգամ կվերցնեմ... Չէ որ ասացիք, թե շտապում եք ձեր ազգականներին ուղարկել...

Ինչ որ է, այս հանդիպումից գոհ էր, չնայած ընդամենը մի կես րոպե կարողացավ նրա աչքերի մեջ նայել, նրբին ձեռքերը բռնել և հուզմունքից էլեկտրականացած աղջկական մարմնի թրթիռն զգալ: Նա տեսնում էր, որ աղջիկը պատրաստ է, սպասում է, որ նաև իրենց շուրթերը միանան... Նրա մարմինը, նրա ամբողջ էությունն անձնատուր էր, և եթե չօգտվեց առիթից, չառավ իր թևերի մեջ, ապա պատճառը ոչ միայն Պերեսի զգուշացնող նախադասությունն էր, այլև հավերժության ստույգ գիտակցումը, որ այդ պահին, լեռան թիկունքից անսպասելի հայտնվող արևի հղոր ճառագայթի պես իր իմաստացնող լույսն սփռեց... Ասես մի ամբողջ դարաշրջանի առաջին վայրկյաններն էր ապրում նրա հետ միասին, ուստի շտապելն առնվազն երեխայություն կլիներ:

Այս ի՞նչ զարմանալի փոփոխություն է կատարվել նրանում, նա, որ նախկինում նման պատահարը կանվաներ վրիպած, իր տղամարդկային արժանապատվությունը խոցող: «Ծեր եմ արդեն, - մտածեց նա, հետո ծիծաղեց ինքն իր վրա: - Ինչե՛ր են անցնում մտքովս, քսաներկուսս նոր լրացավ... Ծեր չեմ, անշուշտ, բայց տարիքն առած, մի ամբողջ կյանք ապրած մարդու պես եմ մտա-

ծում... Դոն Ժուանը շտապում է, քանզի անցավորի հետ գործ ունի միայն... Աշխատում է առավելագույնը կորզել ակնթարթից... Նա որսն է հետապնդում՝ մինչև մարմնի վերջնական նվաճումը: Նա ապրում է այս պահով, հավերժության հետ գործ չունի, չգիտի, թե դա ինչ բան է, քանզի չի սիրում, և դրանով իսկ դժբախտ է, մինչդեռ հավերժությունը սերն է մահից առաջ, մահվան մեջ և անգամ մահից հետո... Ահա ինչու իսկապես իմաստուն մարդիկ անվրդով դիտում են կյանքը, նրանք կարիք չունեն աճապարելու...»:

Արդյոք աղջի՞կն էր, որ իրեն այսպես իմաստնացրեց, թե անցած վերջին երկու տարիները: Հավանաբար երկուսը միասին:

Պերեսը շատ դժգոհ էր, իսպաներեն ինչ-որ հիշոցներ էր մռլտում օրիորդ-հսկիչի հասցեին, Ռուբենին մխիթարում, որն, իր հերթին, փորձում էր նրան մխիթարել, շարունակ ասելով, թե ամեն ինչ հրաշալի անցավ և որ անչափ գոհ է: Սակայն արգենտինացին գտնում էր, որ պետք է անպայման երկրորդ հանդիպումը կազմակերպել: Նորից ձեռքը ճակատին զարկեց և ուրախությունից փայլող աչքերով ասաց. «Գտա, Ռուբեն, այնպես կանեմ, որ դուք մի քանի ժամ երկուսով առանձին բնակարանում կլինեք... Եվ շատ շուտով»:

Նա իր շիտակ և կենսախինդ բնավորությամբ, մարդկանց հետ միանգամից մտերմանալու բացառիկ տաղանդով, գրավիչ արտաքինով, վերջապես, սոցիալական իր բարձր դիրքով կարճ ժամանակում կարողացել էր բաղձալի հյուր դառնալ Լոզանի մի շարք բարձրաշխարհիկ ընտանիքներում: Նրան սիրում էին և նրա խնդրանքը դժվար կլիներ մերժել:

Լուսանկարչատան արկածից մեկ շաբաթ հետո, շքեղ հագնված, երեսնամյա գեղեցիկ մի կին ներկայացավ տիկ. Սպիեսին: Նա ասաց, որ իրենք շատ մոտիկ են Ապել ընտանիքին, որ առաջիկա կիրակի իրենց դստեր ծննդյան տարեդարձը պիտի նշվի և որ այդ առթիվ օրիորդ Ապելին ուզում են հրավիրել իրենց տուն:

Տիկ. Սպիեսն ընդգծված քաղաքավարությամբ պատասխանեց, թե սիրով կընդառաջեր հարգելի տիկնոջ խնդրանքին, սակայն, ցավոք սրտի, տեր և տիկին Ապելներն իրեն չեն նախազգուշացրել նման հնարավոր այցելության մասին, ուստի չի կարող թույլ տալ, որ օրիորդ Ապելը ներկա գտնվի տարեդարձի հանդիսությանը: Սակայն եթե, Ապել ամուսիններն առանձին մի նամակով տնօրինությանն արտոնեն, ապա, հաջորդ անգամ, խնդրեմ, հրամմեցեք:

Ահա այսպես անհաջող ավարտվեց Պերեսի մյուս՝ «առավել հանճարեղ մտահղացումը»: Նա հուսահատ հայտարարեց.

- Այդ հրեշն ինձնից ավելի խորամանկ է... Այլևս որևէ բան չեմ կարող հուշել... Մնում է հույսդ Աստծո վրա դնես, Ռուբեն:

Սակայն Ռուբենը գոհ էր, նույնիսկ ուրախ, քանզի տիկ. Սպիեսը, Պերեսի բարեկամուհուն հայտնել էր, թե տեր և տիկին Ապելները հունիսի վերջին պիտի գան Լոզան և որ մտադիր են ամառն անցկացնել Շվեյցարիայում, նույնիսկ հուլիսի 1-ից արդեն հարկաբաժին են վարձել Շամպերիի «Էգլանտին» ամառանոցում: Բացի այդ, Յաննիի ընկերուհու միջոցով արդեն երկու ծրար էր ստացել և իր լուսանկարն ուղարկել՝ ներկայացնելով իրեն և, անշուշտ, ընդգծե-

լով, որ ինքը հայ քրիստոնյա է: Ճիշտ է, նամակները երկու-երեք օր ավելի ուշ էին հասնում, սակայն դա երկրորդական բան էր:

Կար նաև մեկ ուրիշ հանգամանք: Հունիս ամիսն էր սկսվել՝ քննությունների թեժ շրջանը, և նա մտադիր էր, ինչպես միշտ, բարձր գնահատականներով ավարտել տարին: Մասնագիտական պատվախնդրությանն ավելացել էր նաև ազգային արժանապատվության հանգամանքը: Համալսարանն ակամա մրցասպարեզ էր դարձել տարբեր ազգերի ու պետությունների երիտասարդների համար, ուստի ամեն մի ուսանող աշխատում էր աչքի ընկնել, ապացուցել, որ եթե ինքն առաջինը չէ, ապա ստույգ վերջինն էլ չէ: Ահա ինչու անցած ձմռան և դարնան բոլոր ամիսներին շարունակ հիվանդանոցում էր, դիահերձարանում կամ դասագրքերի հետ: Ուրեմն, նրան մեկ ամիս հետո արժանի հատուցում էր սպասվում իր ջանասիրության համար: Պետք էր միայն դիմադրել նրան տեսնելու ցանկությանը և քննություններով զբաղվել, համոզված, որ մեկ ամիս հետո հնարավորություն կունենա Շամպերիում, ուզածի չափ տեսնել, նույնիսկ հանդիպել...

Նրա հոգեկան անդորրը կատարելապես անհասկանալի էր ընկերների համար: «Մի բան արա, ինչո՞ւ ես այդպես անտարբեր նստել», - շարունակ հարցնում էր Պերեսը: Հետո, կարծես իրավիճակը վերլուծելով, տխուր եզրակացնում էր. «Այսինքն, ի՞նչ կարող ես անել, խեղճ աղջիկը բանտարկված է... Այս ի՞նչ արգելքներ են շրջապատել ձեզ, Աստվա՜ծ իմ... Աշխարհը չի ուզում, որ դուք միանաք: Սա փորձություն է, Ռուբեն, հանկարծ չհուսահատվես... Պիտի դիմանաս...»:

Արգելքնե՞ր... Մի՞թե դրանք արգելքներ են: Նա գիտեր, որ այս ամենը ժամանակավոր է և, այո, Պերեսն իրավացի է, սա փորձություն է, պարտադիր մի քննություն: Մեծ նպատակներին այսպես են հասնում. նախ պիտի քո մեջ քանդես այդ արգելքը, համոզվածություն ձեռք բերես, որից հետո նույնիսկ չես նկատի, թե պատնեշներն ինչպես փոշիացան: Սակայն այսօր, երբ Լևոնի հետ սենյակում հանգստանում էին, մի անմեղ ղրույց տեղի ունեցավ, և նրան թվաց, թե այդ անսասան համոզվածությունն ուր որ է կխարխլվի:

- Ուրեմն, դերմանուհի է, այդ աղջիկը, - մի տեսակ անտարբեր ասաց Լևոնը:

- Նոր իմացա՞ր, - ծիծաղելով պատասխանեց Ռուբենը:

- Ոչ, իհարկե...

- Հապա ինչո՞ւ հիմա հիշեցիր:

- Ես այդ մասին մտածել եմ առաջին իսկ օրվանից, երբ Պերեսը քո ուշադրությունը հրավիրեց աղջկա վրա... Միանգամից երևաց, որ օտար է:

- Ես էլ տեսա, որ օտար է, բայց նա այնքա՜ն գեղեցիկ էր, որ այդ պահին... Ես հիացած նայում էի և ոչ մի բանի մասին չէի մտածում... Ինչպե՞ս կարող ես մտածել հրաշքի առջև, այդ պահին միայն սիրտդ է խոսում, միտքը հետո պիտի գա:

- Հետո ե՞րբ:

- Չգիտեմ, Լևոն, տարօրինակ հարցեր ես տալիս:

- Ոչ, Ռուբեն, ինքդ էլ հասկանում ես, որ իմ հարցերը շատ տեղին են:

- Սակայն ինչո՞ւ հիմա որոշեցիր այդ մասին խոսել և ոչ թե առաջին օրը:

- Որովհետև առաջին օրը դու մի տեսակ անտարբեր, կրավորական կեցվածք ունեիր, ես հիացմունք, հափշտակվածություն չէի տեսնում քո դեմքին, ասես Պերեսին չնեղացնելու համար մտար այդ խաղի մեջ...

- Խաղի՞, - ցնցվելով հարցրեց Ռուբենը:

- Լավ, ինչպե՞ս ասեմ... կարծես քո հերթական արկածներից մեկն էր լինելու... Սակայն հիմա տեսնում եմ, որ ամեն ինչ ավելի լուրջ է և որ քո զգացմունքներն ավելի խորն են, ծրագրերդ էլ ավելի... Չգիտեմ, գուցե սխալվում եմ...

Լևոնը միշտ գործում էր չափազանց կշռադատված, երբեք, ոչ մի դեպքում, ծայրահեղությունների մեջ չէր ընկնի: Պերեսի ճիշտ հակապատկերն էր: «Իսկական եգիպտացի ես», - կատակով ասում էր Ռուբենը: Բայց կատակը մի կողմ: Հասկանում էր, թե ինչ է ուզում ասել Լևոնը, թե ինչն է մտահոգում նրան... այն, ինչն ավելի շատ իրեն պիտի մտահոգեր: Իհարկե, չէր կարող ասել, թե օտարության փաստն իսպառ անտեսել էր, սակայն երբեք, հատուկ մի նպատակով, չէր մտորել դրա շուրջ: Ավելին, գուցե հենց օտարության հանգամանքն էր, որ յուրահատուկ հմայք էր հաղորդել այս արկածին: Այո, սա արկած էր, սերն ինքը արկած է և ոչ թե Լևոնի հաշվապահությունը... («Հերթական արկածներից մեկը...»: Վա՜յ, Լևոն, Լևոն, նվիրված և ազնիվ ընկեր, սակայն բավականաչափ խորաթափանց չէ անկեղծ, մաքուր և բնականոն հրապուրվածությունն արկածից զանազանելու համար... Մանավանդ որ տղան մեծ հաջողություն չունի իգական սեռի մոտ, ուստի առիթը չէր ստեղծվում սեփական փորձով զանազանելու): Սակայն տվյալ պահին նա խոսում էր մի կոպիտ իրողության մասին, որի հետ վաղ թե ուշ պիտի հաշվի նստեր, եթե, իհարկե...

- Կներես, Ռուբեն, ի վերջո ամեն ինչ կախված է քո վերջնական նպատակներից, եթե մտադիր ես ամուսնանալ նրա հետ, ապա կարծում եմ՝ գիտակցում ես, որ դյուրին չի լինի ծնողներիդ համոզել, դեռ չեմ խոսում...

Այո, այդ մասին էլ էր մտածել, առանց շատ խորանալու, առանց պատկերացնելու դժվարությունները:

- Դու արդեն միանգամից գործը հասցրիր ամուսնության, ես այդ աղջկա հետ նույնիսկ մեկ բառ չեմ փոխանակել:

- Ամեն ինչ պարզ է, Ռուբեն... Մի՞թե դու իսկապես չես նկատում, թե ինչպիսի հայացքով ես նայում նրան և նա ինչպես է նայում քեզ... Անգամ «Old India»-ի գարսոններն են նկատել, անգամ այցելուները... Այսօր դու այնտեղ չէիր, և աղջիկը հրապարակով անցնելիս նայեց մեր պատուհաններին ու ժպտաց, և բոլորս հասկացանք, որ դա ուրիշ ժպիտ է, որ դա մեզ չի պատկանում, այլ քեզ... Իսկ տղաներից մեկն ասաց. «Ի՜նչ հոյակապ զույգ կլինեն Ռուբենը և այս աղջիկը»: Եվ բոլորը համաձայնեցին:

- Դու նույնպե՞ս:

- Ես նույնպես... Ահա ինչու ցանկացա հիշեցնել, որ նա գերմանուհի է:

- Լսիր, Լևոն, զարմանալի բաներ ես խոսում, երիտասարդին ոչ սազական... Ես գիտեի, որ նա գերմանուհի է, բայց հիմա մտածեցի այդ մասին... Իս-

կական սերն ազգություն չի հարցնում... Համաձայն եմ, ծնողներիս խնդիրը կա, վերջապես հայկական միջավայրը կա, որը լավ աչքով չի նայում օտար կանանց հետ ամուսնացած տղամարդկանց... Գիտեմ նաև, որ շատ դժվար կլինի հորս և մորս համոզել, հնարավոր է նույնիսկ դեմ լինեն... Բայց ե՛ս եմ ուզում, հասկանո՞ւմ ես, ես պիտի ապրեմ այդ աղջկա հետ, մի՞թե սրանից ավելի համոզիչ բան գոյություն ունի...

- Լավ, ծնողներիդ հանգիստ թող, նրանք բարի են, ի վերջո կզիջեն, իսկ ի՞նչ կասես աղջկա ծնողների մասին:

- Ոչինչ, քանի որ նրանց չգիտեմ... Նույնիսկ չի մտահոգում ինձ:

- Շատ իզուր: Ես, իսկապես, զարմանում եմ, Ռուբեն, դու որ այդպես վերլուծող ես, երևույթների մեջ թափանցող, վերջապես, քաղաքական հարցերից այդպես հասկացող, ինչպե՞ս է, որ չես տեսնում հիմնական դժվարությունը:

- Ո՞րն է, աղջկա ծնողնե՞րը:

- Այո, աղջկա ծնողների ամբարտավան ազգությունը, նրանց թիկունքին կանգնած հզոր պետությունը և այդ պետության վտանգավոր քաղաքականությունը... Ի դեպ, քո խոսքերը պիտի կրկնեմ. «Ստույգ է, որ Աբդուլ-Համիդը հայերին չի սիրում, բայց նա այդքան հայատյաց չէր լինի, եթե թիկունքին չզգար կայզեր Վիլհելմի հովանավորությունը»:

- Հիմա էլ նույնը պիտի ասեմ, սակայն դա ի՞նչ կապ ունի տասնյոթամյա գերմանուհու հետ:

- Այն, որ տիկին Սպիեսի գիշերօթիկում դաստիարակվող աղջիկները պատահական ընտանիքներից չեն, այդ աղջիկը հավանաբար նշանավոր մի ազնվականի, մեծահարուստ գործարանատիրոջ կամ բարձրաստիճան պաշտոնյայի դուստրն է, ուստի վաղ թե ուշ, իր ծնողների, իր ցեղի պես ամբարտավանությամբ պիտի նայի մեզ... Ես գիտեմ, թե գերմանացիք ինչեր են մտածում հայերի մասին: Վերջերս գերմանացի հարբած մի ուսանող ինձ խոստովանեց. «Այո, թուրքերը բարբարոս են, բայց նրանք մեր բարեկամներն են, իսկ մեր բարեկամի թշնամին մեր թշնամին է»: Ի դեպ, աղջկան գրե՞լ ես, որ հայ ես:

- Այո, առաջին իսկ նամակում:

- Եվ նա շարունակո՞ւմ է պատասխանել...

- Այն էլ ինչպե՜ս... Եվ գիտե՞ս թե ի՜նչ պատասխան է ուղարկել: Տես, թե ինչ է գրել հայերի մասին իր վերջին նամակում:

- Հայերի՞...

- Այո, հայերի... Ահա, լսիր. «Պիտի ձեր ներողամտությունը հայցեմ տգիտությանս համար. հայերի մասին գրեթե ոչինչ չգիտեի: Նույնիսկ կարծում էի, թե դուք մահմեդական եք: Ձեր նկարն ու նամակն ստանալուն պես շտապեցի մեր գիշերօթիկի գրադարանը և այնտեղ եղած մի քանի հանրագիտարանների օգնությամբ որոշ տեղեկություններ ստացա: Ես ապշած եմ ձեր պատմությամբ, ձեր ոգու մեծությամբ... Ի՜նչ դաժան է ձեր ճակատագիրը... Սակայն ժամանակն է, որպեսզի դուք՝ բոլոր հայերդ միավորվեք և ազատագրեք ձեր երկիրը...»:

Լևոնը, որ զարմացած ու հմայված լսում էր այդ տողերը, միանգամից բացականչեց.

- Բայց այդ աղջիկը դանձ է:

- Սա դեռ ամբողջը չէ, լսիր, թե ինչ է գրում. «Ես երախտապարտ եմ ճակատագրին, որ տեսանք իրար: Երբ հանդիպենք, իսկ ես վստահ եմ, որ կհանդիպենք, այդ ժամանակ պիտի խնդրեմ, որ ինձ հայերեն սովորեցնեք»:

- Տուր տեսնեմ, - ասաց Լևոնը՝ նամակը գրեթե խլելով Ռուբենի ձեռքից: Այնուհետև, ուշադիր կարդալով, հարցրեց. - Ուրեմն, ի՞նչ է ստացվում:

- Ստացվում է այն, որ եթե տասնյոթամյա աղջիկը պատրաստ է դեմ դնալ ծնողների հնարավոր մերժմանը, ուրեմն, ես էլ պետք է պատրաստ լինեմ իմ ծնողներին համոզել:

- Ուրեմն, այլևս հետդարձի ճանապարհ չունես:

- Ես էլ այդպես եմ կարծում և հույս ունեմ, որ դու կկարողանաս ծնողներիս համոզել... Նրանք քեզ շատ են սիրում, և քո կարծիքը կարևոր կլինի նրանց համար:

* * *

«...Ձեր նախազգուշական նամակը ճիշտ ժամանակին հասավ, քանզի բառացիորեն նույն օրն ինձ այցելեց հարգարժան մի տիկին և, ներկայանալով որպես ձեր ընտանիքի բարեկամ, ցանկություն հայտնեց օրիորդ Յաննիին երկու ժամով իրենց տուն տանել, որպեսզի ներկա լինի իրենց դստեր ծննդյան տարեդարձին: Ես մերժեցի, պատճառաբանելով, թե դուք ինձ չեք արտոնել ձեր դստերը, թեկուզ կարճատև, անծանոթ մարդկանց վստահել:

Ինչ վերաբերում է ձեր դժգոհությանը՝ մեր գրադարանում պահվող գրքերի առնչությամբ, ապա հարկ եմ համարում հայտնել ձեզ, որ դրանք ընտրված են ծայրագույն խստապահանջությամբ և որ տասնհինգ տարվա մեր անբասիր գործունեության ընթացքում առաջին անգամ եմ այդպիսի բողոք լսում ծնողներից: Այնուհանդերձ, կիսում ենք ձեր արդարացի մտահոգությունը, և որպեսզի օրիորդ Յաննիին իսկապես կարողանանք հեռու պահել անօգտակար ընթերցանությունից, շատ կուզեինք, որ ձեր հաջորդ նամակում մանրամասնորեն նշեիք, թե ինչ տեսակի գրականությունն եք ավելորդ կամ վնասակար համարում»:

«...Հեղափոխական այդ կուսակցություններն, իրենց գաղափարների պրոպագանդը, զինյալ պայքարին ու ահաբեկչությանը համազոր միջոց են համարում, և այնպես են հմտացել, որ կարողանում են նույնիսկ համախոհներ ու զինակիցներ գտնել անգամ օտարների մեջ: Օրինակ՝ Աբդուլ-Համիդի դեմ իրականացված մահափորձի գործուն մասնակիցներից մեկը բելգիացի սոցիալիստ Յորիսն էր, որը հետաքննության և դատավարության ընթացքում ոչ մեկին չմատնեց:

Ինչպես ցույց է տալիս օր. Յաննի Ապելի նամակը, խնդրո առարկա անձն աշխույժ հետաքրքրություն, համակրանք և կարեկցանք է առաջացրել հայ ժողովրդի հանդեպ: Իմիջիայլոց, հատկապես այս զգացմունքներն են աշխատում արթնացնել և նույնիսկ բորբոքել հեղափոխական պրոպագանդիստները՝ եվրոպական հասարակության տարբեր խավերի մեջ:

Մեզ հաջողվեց պարզել, որ Ռ. Զ.-ն անդամագրված չէ և մշտական կապեր չունի հեղափոխական ոչ մեկ կուսակցության հետ, սակայն որոշակի համակրանքով է նայում նրանց գործունեությանը և ջերմորեն պաշտպանում նրանց գաղափարները»:

* * *

Տղամարդու և կնոջ հարաբերություններում «այո»-ի և «ոչ»-ի սահմանները չափազանց հստակ պիտի լինեն: Զգացմունքների ամալգամը համարում է կատարելապես անընդունելի, քանզի մերժում է տղամարդու դիվական այն նկարագիրը, որը մոլեգին հրապուրվածությանը մերժումի դառնանուշ երանգներն է խառնում: Սակայն նկարագրի վատթարը կար, իր ամենաատելի տեսակը. տղամարդ, որը կնոջն է մոտենում պարզապես, որովհետև լսել է, որ այդպես է արվում:

Իր արածը հիմա, թերևս, երրորդ տեսակն էր. եկել էր այստեղ՝ առանց հստակ իմանալու սիրո՞ւմ է, թե ոչ, զգացմունքի թելադրանքո՞վ, թե լոկ որպես քաղաքավարական մի այց, բարոյական մի պարտավորություն, որը կատարելուց հետո, հանգիստ խղճով գնում ես տուն: Եվ եթե վերջինն է, ինչո՞ւ է շարունակում մնալ այստեղ, ինչո՞ւ հրաժեշտ չտվեց և չգնաց տուն:

Ճիշտ է գրել վիպասանը, որ կինը ճահիճ է, բավական է ոտքդ դնես, մնացածն ինքը կանի, և այլևս չես նկատի, թե ինչպես խրվեցիր ու կուլ դնացիր: Ուրեմն, քանի դեռ ժամանակ կա, պետք է հեռանալ, փոխել ճամփան:

Սակայն միամիտ մի ձևացիր, ինքդ քո առջև խոստովանիր, որ գիտեիր, թե ուր ես գալիս, թե ում մոտ ես գալիս և թե ինչ է սպասվում քեզ: Սակայն ինչ-որ բան, վզիդ կապված պարանի պես, քաշեց բերեց այստեղ:

Նախ, հրավերն ստացավ փոստով: Կոնսերվատորիայի ուսանողների քննական համերգը: Երկու անուն, որոնցից մեկը Մարիամն էր, որ երկրորդ բաժինը պիտի լցներ Շոպենով ու Լիստով: Եվ զարմանալին այն է, որ ինքն ազատ չէր, քննություններն են սկսվել, ի՜նչ համերգ, ի՜նչ ժամանց: Սակայն եկավ, համերգը լսեց, հաճույքո՞վ, թե ոչ, չէր կարող ասել: Մարիամը վարժ էր նվագում, բայց ինչո՞ւ ինքը վերացում չապրեց, ինչո՞ւ չվարակվեց այդ նվագով, այլ միայն փաստեց, որ աղջիկը բավական առաջադիմել է: Եթե անձնապես չճանաչեր դաշնակահարուհուն, պիտի այդպես սառը դատողությա՞մբ լսեր նրան, պիտի սարսուռ չզգա՞ր...

Համերգից հետո, ուսանողների փոքրիկ մի խմբով, հայտնվեցին մի բնակարանում: Բոլորն անծանոթ էին, անշուշտ, Մարիամից բացի: Կոկիկ մի հարկաբաժին էր՝ երեք հարկանի առանձնատան մեջ, որն, ինչպես Մարիամն ասաց, վարձել էր իր եղբոր և զարմուհու համար: Բայց երեկոյի ընթացքում ոչ զարմուհին երևաց, ոչ էլ եղբայրը: Իսկ ժամուկես հետո, երբ հյուրերն իրար ետևից հեռացան, ընդարձակ բնակարանում մնացին երկուսով:

Ինչո՞ւ չհեռացավ հյուրերի հետ, ի՞նչն էր նրան պահում, ինչո՞ւ էր անվճռական նստել, հրաշալի հասկանալով, թե ինչով է ավարտվելու այս հան-

դիպումը: Գուցե մի քիչ գինով էր, շամպայն խմեցին համերգի առթիվ, և բավական շատ: Իր չսիրած խմիչքն էր, որ ծանրացնում էր գլուխը և խառնում ցանկությունները: Մարիամն էլ կարծես գինով էր՝ նախ համերգի հաջողությամբ...

- Կուզե՞ս քեզ համար նվագեմ, - փայլող աչքերով և շառագունած այտերով հարցրեց նա և, առանց պատասխանի սպասելու, նստեց ռոյալի առջև:

Նկատեց, թե Մարիամի դեմքն ինչպես ակնթարթի մեջ փոխվեց: «Այս աղջիկն իսկապես արվեստագետ է», - մտածեց նա և անմիջապես մեղքի մի ծանր զգացում ճնշեց նրան... Հատկապես նրա համար էր նվագում, նվագում էր ոգեշնչված, բայց զարմանալիորեն թեթև, անկաշկանդ, ավելի ազատ, քան համերգի ընթացքում: Երաժշտական կտորները հաջորդում էին իրար, երբեմն առանց ընդմիջման: Եվ նա կախարդված լսում էր, նվագողի կենդանի ներկայությունն զգում անմահ գործերի մեջ: Երանի չընդհատվեր այս երաժշտությունը, երանի չվերադառնար իրականության, երանի երբեք չիմանար, որ այս հնչյուններն արձակողը, դրանց ստեղծողներից ընդմիշտ անջատված է տարածությամբ ու ժամանակով: Բայց նա կտրուկ ընդհատեց, մի քանի վայրկյան գլուխն ստեղների վրա կախած նստեց, հետո ժպտալով նայեց Ռուբենին: Վերջինս ոգևորված տեղից ելավ, մոտեցավ և ծնկի իջնելով ասաց.

- Այս ի՜նչ հրաշք էր, Մարիամ, դու իսկապես փայլուն երաժիշտ ես:

Մարիամը, նրա զույգ ձեռքերից բռնած բարձրացրեց, ինքն էլ հետը ոտքի կանգնեց: Հետո, համարձակ նայելով աչքերի մեջ, հարցրեց.

- Միայն այդքա՞նը... Ուրիշ ի՞նչ կասեիր:

- Ուրի՞շ..., - զարմացած թոթովեց նա և չզգաց, թե ինչպես հայտնվեց աղջկա գրկում:

Ինքը չէր, որ համբուրում էր, նրան էին համբուրում: Ասես լուցկիով ցանկանային թաց փայտը վառել: Մեղավորության զգացումը, որ երաժշտության շնորհիվ ցրվել էր, նորից սկսեց ճնշել նրան: Աղջիկը չարչարվում էր՝ առանց կարողանալու որևէ զգացմունք արթնացնել նրա մեջ:

Եթե այս հանդիպումը տեղի ունեցած լիներ Յաննիին տեսնելուց առաջ, կարող է ուրիշ կերպ պահեր իրեն, առաջնորդվեր պարզապես որձի բնազդներով և առանց հապաղելու նվաճեր այս աղջկան՝ չմտածելով անգամ հետևանքների մասին: Եվրոպա ժամանող արևելցի բոլոր ուսանողները, գիտելիքներ, վկայական և մասնագիտություն ձեռք բերելու հետ մեկտեղ, նաև թաքուն երազն ունեին այստեղի չիկահերներին վայելելու: Երազանք, որն ի կատար ածվելուց հետո էլ հագուրդ չէր գտնում, անգամ եթե մարմինը կշտանար, աչքը մնում էր անկուշտ:

Բայց միայն մարմնական ցանկությո՞ւնն էին բավարարում այդ կրակոտ երիտասարդները, որ վայելելուց անմիջապես հետո դուրս էին գալիս փողոց և ծարաված աչքերով, ամբոխի մեջ, հերթական զոհին փնտրում: Չէ որ մարմինն իր անսասան օրենքներն ունի, հագեցումին կարող է հաջորդել հափրացումը, և այն, ինչ բաղձանքի առարկա էր, կարող է զզվանք առաջացնել և երբեմն ընդմիշտ փակել ճամփան դեպի կինը: Մինչդեռ այս անխոնջ որսորդները, որոնց մեջ հատկապես կովկասահայ ուսանողներն էին աչքի ընկնում, ասես պատվախնդիր

ալպինիստներ լինեին, որ ամեն անդամ մի գագաթ նվաճելուց հետո, ձգտում են ավելի բարձրին: Իսկապես որ դա մշտական մի նվաճում էր, անվերջ մի խաղ, և միայն մարմի՞նն էին նվաճում այդ անդադար վազքի մեջ, թե նաև երկիր, ոգի, նկարագիր, վերջապես մշակույթ և քաղաքակրթություն: Հնարավո՞ր էր արդյոք այդ ամենը ճանաչել ու յուրացնել, առանց ճանաչելու անծանոթ երկրի կանանց: Դա, հավանաբար, ոչ այլ ինչ էր, քան Եվրոպայի տևական և դանդվածային առևանգում: Լսարանները, գրադարանները, դիահերձարաններն ու լաբորատորիաները քիչ էին Եվրոպան նվաճելու համար, այդ ամենի հետ մեկտեղ պիտի կատարվեր սիրո արարքը՝ պսակը ճանաչումի:

Հիմա չէր, որ հայտնագործում էր այս ճշմարտությունը, քանզի միշտ մտորել էր դրա շուրջ, փորձել ինչ-ինչ երևույթներ հասկանալ, սակայն հիմա էր, կարծես, որ վայրկյանների ընթացքում, արտառոց այս իրավիճակի մեջ, հստակվեց ու ձևակերպվեց միտքը: Եվ հիմա փաստեց, որ անցած երկու տարում, այստեղ երբեք առիթ չէր ունեցել, անգամ չէր ձգտել մտերիմ կապեր հաստատել երիտասարդ հայուհիների հետ, չնայած քիչ չէին Պոլսից ու Իզմիրից, Բաքվից ու Թիֆլիսից եկած հրապուրիչ ու գեղեցիկ օրիորդները: Նրանք ոչ մի առեղծված, ոչ մի գաղտնիք չէին կրում իրենց մեջ, հետևաբար ի սկզբանե սեռական որևէ գրգիռ չէին արթնացնում նրանում: Ասես քույրեր էին կամ մոտիկ ազգականներ:

Հիմա, այս պահին, նման մի զգացում էր ապրում, ասես իրեն հեռու էր պահում արյունապղծումի մեղքից: Սեփական արյունը հիմա խորթ էր նրան, նույնիսկ վանող, ինչպես մագնիսի միևնույն բևեռները: Օտարն էր, որ հարազատ էր թվում և անծանոթը, որը սեփական էությունը ճանաչելու խոստում էր ու հեռանկար:

Մարիամի գգվանքներն ու համբույրներն արդեն անտանելի էին: Թվում էր, թե շնչահեղձ կլինի: Մինչդեռ աղջիկը ոչինչ չէր զգում և ավելի էր բորբոքվում: Իսկապես խղճահարությամբ լցվեց նրա հանդեպ, հասկացավ, որ անզգույշ մի քայլով կամ չմտածված բառով կարող է ծանր վերք հասցնել աղջկան: Պետք էր նրա հետ լինել մեղմ, բայց այնպես, որ զուր հույսեր չփայփայեր, այլապես մելոդրաման կարող էր վերածվել ողբերգության: Ուստի աղջկան զգուշությամբ հեռացրեց իրենից և մեղմորեն ասաց.

- Ես կուզեի ընդմիշտ քո արվեստի երկրպագուն մնալ, քո ընկերը...

Աղջիկը, սպասվածին հակառակ, հանգիստ ընդունեց այդ խոսքերը: Նույնիսկ ասաց.

- Այդպես էլ գիտեի...

Հետո, ուղղակի զրուցակցի դեմքին նայելով, ավելացրեց.

- Ուրեմն, ճիշտ են ասում, որ այդ աղջիկն ամբողջությամբ գրավել է քո սիրտն ու հոգին:

Ռուբենը ցնցվեց.

- Ովքե՞ր, - հարցրեց կտրուկ:

- Բոլորը..., - անտարբեր և ընդամենը մեկ բառով պատասխանեց աղջիկը, ասես այնպիսի հանրահայտ իրողություն էր, որ կարիք չկար փաստերը մանրամասնել:

- Բոլորը, բայց ովքե՞ր... Օրինակ՝ ո՞վ:

- Հայ ուսանողներից շատերը... Եվ ոչ միայն հայերը, օտարներից էլ եմ լսել:

- Եվ ի՞նչ են խոսում:

- Օ, մի բարկացիր, Ռուբեն, վատ բաներ չեն խոսում... Ասում են, որ սիրահարված եք իրար և որ պատրաստվում ես հետը հեռանալ այստեղից:

- Ո՞ւր:

- Զգիտեմ, ինչ-որ ընկեր ունես Ամերիկայից, ասում են՝ իբր իր մոտ է կանչում ձեզ, - շարունակ նույն շինծու, թե բնական անտարբերությամբ, պատասխանեց աղջիկը:

- Երևի սխալ չեն ասում, - սրտնեղած պատասխանեց Ռուբենը: - Հավանաբար արժեր այդ բամբասող լեզուներից հեռանալ, դնալ այդպիսի մի տեղ...

Ցնցված էր աղջկա խոսքերից: Ընդամենը մեկ ամիս է, ինչ տեսել է Յանիին, սակայն պարապ բերաններն արդեն հասցրել են առասպելներ հորինել: Գուցե նաև ուրիշ լուրեր են շրջում, որոնք աղջիկը դեռ չի հասցրել լսել կամ քաշվում է ասել... Գուցե սոսկալի, գարշելի հերյուրանքներ... Ամբոխի ամենասիրած զվարճալիքը: Սակայն այս աղջիկն է զարմանալի. եթե այդպիսի լուրեր են հասել ականջին, ի՞նչ հույսով է իրեն բերել այս դատարկ բնակարանը և փորձում իր սիրտը նվաճել: Հիշեց, թե քիչ առաջ ինչպիսի հիացմունքով էր լսում նրա նվագը: Այդպիսի արվեստագետ աղջիկն ինչպե՞ս կարող էր զազրախոսություններին ականջ կախել... Ի՞նչ է սա, կանացի մշտական հետաքրքրասիրություն, որը տվյալ դեպքում, հասկանալի պատճառներով ավելի է բորբոքվել, թե որոշակի նպատակ հետապնդող համառ կնոջ խորամանկ մի հնարանք...

- Միևնույն է, դու իմն ես լինելու, - անվրդով ասաց աղջիկը, ասես հստակ պատասխան տալով նրան տանջող հարցականներին:

Սոսկաց աղջկա հանգիստ ու անվրդով ձայնից: Սերը չէր, որ խոսում էր, այլ ավատատիրոջ ինքնավստահությունը, որն արդեն իր խարանն է դրել ստրուկի ճակատին և քմծիծաղով նայում է փախուստի անիմաստ փորձերին, քանզի ուր էլ որ գնա, պիտի բռնեն և բերեն տիրոջ մոտ, այս անգամ արդեն կրկնակի ստրկության դատապարտելով:

- Ուր կուզես գնա, ում մոտ կուզես գնա, միևնույն է, վերջն ինձ մոտ ես գալու, - ավելի հանգիստ շարունակեց աղջիկը, խորացնելով իր իսկ պատճառած սոսկումը:

- Ինչո՞ւ ես այդպես համոզված... Վերջապես, ի՞նչն է քեզ իրավունք տալիս այդպես խոսելու:

Մարիամի աչքերում դիվական մի լույս փայլատակեց, նրա դեմքի հանդարտությունն անհետացավ.

- Որովհետև այդպես եմ ուզում... որովհետև այդպես եմ վճռել... Վաղուց, երբ եղբորս հետ գալիս էիք մեր տուն, և ես հատկապես քեզ համար էի նվագում...

Նրա հայացքում խելագար վճռականություն կար: Այդպիսի մարդիկ ամեն ինչի կարող են գնալ:

- Բայց, սիրելիս, ժամանակի հետ ամեն ինչ փոխվում է, վաղը դու կարող ես ինձնից ավելի լավին գտնել...

- Ոչ, Աստված մեզ ստեղծել է իրար համար... դու նրա հետ բախտավոր չես լինի... Նա քեզ չի հասկանա, չի սիրի... Ինձ նման չի սիրի...

Աղջիկը նորից մոտեցավ՝ ձեռքերը մեկնած, ասես իրեն պատկանող ապրանքը վերցնելու, սակայն Ռուբենը կտրուկ շրջվեց ու քայլեց դեպի ելքը:

- Լավ... գոնե մի հարցի պատասխանիր, պարոն բանաստեղծ...

Աղջկա ձայնը փոխվել էր, նախկին հանդուգն ինքնավստահությունն այլևս չկար: Թերևս սա ստիպեց Ռուբենին, մի պահ դառնալ և նայել նրան:

- Ընդամենը մեկ հարց, բայց անկեղծ եղիր... Եթե այդ աղջիկը չլիներ, դու ինձ կսիրեի՞ր...

Մի պահ սևեռուն նայեց աղջկա դեմքին և կտրուկ շրջվելով հեռացավ, քանզի ոչ մի պատասխան չէր կարող տալ. «այո» չէր կարող ասել, իսկ «ոչը» կսպաներ նրան: Եվ նա դուռն զգույշ փակելուց հետո լսեց աղջկա ձայնը, որ հնչեց տրտունջի պես.

- Շնորհակալ եմ լռությանդ համար...

* * *

Յուրգեն Կլաուսը շատ դժգոհ էր իր բռնած գործից, թափված ջանքերի ողորմելի արդյունքներից: «Նախրիխտենդինստում» ծառայության վերցնելիս, ի թիվս մի շարք կարևոր հրահանգների, նրան հատուկ ասացին, որ անձնական համակրանքներն ու հակակրանքները պետք է մի կողմ դնի, խստագույնս առաջնորդվի միայն գործի շահերով և տրված հանձնարարության կատարումից զատ ուրիշ ոչինչ չձեռնարկի: Մինչդեռ հայ ուսանողի անձնական նամակագրության մեջ խցկվելը զուտ անձնական նախաձեռնություն էր, և այդ տղայի հանդեպ ունեցած հակակրանքն ու արհամարհանքն էր ստիպել նրան դիմել նման քայլի:

Սկզբում դա որոշ չափով հետաքրքրեց իր վերադասներին և հյուպատոսին, սակայն մի քանի նամակ կարդալուց հետո հանձնարարեցին այլևս չզբաղվել այդ գործով և ուրիշ, բավական ծանր մի գործ տվեցին: Ստիպված էր վազվզել քաղաքով մեկ, գիշերը հազիվ մի երկու ժամ քնել և շատ հաճախ նույնիսկ չհասցնել մի պատառ գցել բերանը:

Այսինքն՝ ուրիշ բան չէր սպասում, և ոչինչ, եթե գործը սրանով վերջանար: Մեջտեղն սպասուհին էր մնացել, որին անզգուշորեն, հիմարաբար ներքաշել էր դավադրության մեջ և որը հիմա, գեղջկական բարեխղճությամբ արտագրում էր յուրաքանչյուր նամակն ու առավոտ կանուխ բերում իր մոտ: Ստիպված էր գնալ գիշերօթիկ և խստորեն պահանջել, որ դադարեցնի լրտեսել հայ ուսանողի նամակագրությունը:

Սպասուհին քիչ մնաց խելագարվեր: Ասես ձեռքից մի թանկագին խաղալիք խլեին: Նա կառչեց Կլաուսի թևից:

- Իսկ ես կարո՞ղ եմ ձեզ այցելել... Շատ չէ, երբեմն-երբեմն...

Կլաուսը սահմռկեց, սակայն տիրապետելով իրեն, քնքշորեն ասաց.

- Այո, իհարկե...

- Ուրեմն, այլևս չպիտի արտագրե՞մ նամակները:

- Արդեն ասացի՝ չպիտի արտագրես:

- Շնորհակալ եմ, պարոն Կլաուս, չեք պատկերացնի, թե ինչպիսի ծանր քար ընկավ իմ ուսերից:

- Իսկապե՞ս... Մի՞թե այդքան դժվար էր:

- Գիտե՞ք ինչ, հարցը դժվարությունը չէր... Սկզբում, երբ խնդրեցիք, ձեզ չէի կարող մերժել, բայց երբ սկսեցի նամակները բացել և կարդալ, հասկացա, որ մեծ մեղք եմ գործում...

- Ես ձեզ բացատրեցի, որ դա ազնիվ և մաքուր նպատակներով է արվում... Այդ աղջիկն իմ ազգականն է, և ես պետք է համոզվեի, որ նրա պատվին, վերջապես, մեր ընտանիքի պատվին ոչինչ չի սպառնում... Որ այդ պարոնն իսկապես սիրում է և իսկապես ազնիվ նպատակներ ունի:

- Օ... ի՜նչ եք ասում, պարոն Ռուբենը շատ ազնիվ է... Երանի ձեր ազգականուհուն...

- Այո, թերևս... Ես էլ համոզվեցի, որ ազնիվ է... Այնպես որ, քեզ մեղավոր մի զգա:

Սպասուհին, սակայն, գլուխը հակած կանգնել էր:

- Ի՞նչ կա, ուրիշ ի՞նչ ունես ասելու:

- Պարոն Կլաուս, չգիտեմ, ճի՞շտ եմ արել, թե ոչ, բայց անցյալ կիրակի, երբ խոստովանահոր մոտ էի, թողություն խնդրեցի այդ մեղքիս համար:

- Ո՞ր մեղքիդ, - սարսափահար հարցրեց գերմանացին:

- Նամակները բացելու...

- Բայց զգուշացրել էի, որ ոչ մեկին ոչինչ չասես, - գոռաց գերմանացին:

- Սակայն հայր սուրբից ինչպե՞ս թաքցնեի:

Մեղավորն ի՛նքն էր, որ այս տխմար գեղջկուհուն նման հանձնարարություն տվեց: Պիտի մտածած լիներ այդ մասին: Կոպիտ սխալ է, աններելի՛:

- Իմ անունը տվե՞լ ես խոստովանահորը:

- Ոչ մի անուն չեմ տվել... Պարզապես ասացի, որ ուրիշի նամակներն եմ բացում... Բարի նպատակներով...

- Հայր սուրբն ի՞նչ ասաց:

- Ասաց, որ մեղք եմ գործում, որ այլևս չբացեմ:

- Ուրիշ բան չհարցրե՞ց, չուզե՞ց իմանալ, թե ում նամակներն են:

- Ոչ մի հարց չտվեց, միայն ասաց, որ դադարեցնեմ:

«Փա՜ռք Աստծուն, կարծես թե լավ պրծանք, եթե, իհարկե, այս տխմար աղջիկը ճիշտ է ասում», - մտածեց Կլաուսը:

- Լավ իմացիր, եթե վաղը, քո անզգուշության պատճառով մի տհաճություն դուրս գա, ես քեզ ոչինչ չեմ ասել և ամեն ինչ ինքդ ես արել, քո ցանկությամբ... քո նախաձեռնությամբ:

Հետո տեսնելով, որ աղջիկն արդեն սոսկումից գունատվում է, ավելացրեց.

- Հանգիստ եղիր, առայժմ բան չկա, սակայն եթե հանկարծ այս պատմու-

թյունը մեջտեղ գա, մեր երկուսի շահն է, որ իմ անունը չտաս, եղա՞վ... Ի դեպ, տուժողը դու կլինես, որովհետև չես կարողանա ապացուցել, թե քեզ այդպիսի հանձնարարություն եմ տվել, հասկացա՞ր:

- Իսկ ի՞նչ կարող է պատահել, - հարցրեց սպասուհին, որն, այնուամենայնիվ, անհանգիստ էր:

- Եթե բերանդ փակ պահես, ոչինչ էլ չի պատահի, - հանգստացրեց նրան Կլաուսը և գերադասեց իր երախտագիտությունը ոչ թե համբույրով, այլ հինգ ֆրանկանոց դրամով հայտնել:

Երբ, վերջապես, հրաժեշտ տալով դուրս էր գալիս, սպասուհին ետևից կանչեց.

- Պարոն Կլաուս... Լավ է հիշեցի... Դուք նամակ ունեք, Էրֆուրտից է ուղարկված:

- Հուսամ չես բացել, - կատակեց գերմանացին:

- Չէ; ի՜նչ եք ասում, - շառագունեց սպասուհին՝ մեկնելով ծրարը:

Նամակն իսկապես Էրֆուրտից էր: Սակայն նրան զարմացրեց ուղարկողի ազգանունը. Ֆրանց Ապել, հայրն այն օրիորդի, որի պատճառով սկսվեց այս տխմար պատմությունը:

Գնդապետը հայտնում էր, որ հասցեն վերցրել է Վիլլի Ռայնհարդտից և որ դիմում է նրա իսկ խորհրդով: Այնուհետև գրում էր, որ հունիսի 27-ին, յուր տիկնոջ հետ, ժամանում է Լոզան, որ մինչև հունիսի 30-ը պիտի ապրի Ուշիի «Օտել դը լ'Անկրը» հյուրանոցում, ուստի խնդրում էր հունիսի 28-ին, կեսօրից հետո այնտեղ հանդիպել:

Նամակն ուղարկված էր հունիսի քսանին, իսկ այսօր քսանութն է: Ուրեմն, եթե այսօր չանցներ այստեղով, պիտի փախցներ ժամադրությունը: Ինչո՞ւ է այս հասցեով ուղարկել, որովհետև մյուսը չունի՞, թե կարծում է, որ այստեղ ժամանակին կստանամ:

Այս ժամադրությունն ինչ-որ բան էր խոստանում: Դեռևս առավոտվանից փչացած տրամադրությունն սկսեց լավանալ, և հետաքրքիր էր, որ այն, ինչ դարձել էր գլխացավանքի պատճառ, հիմա կարծես նորից գրավիչ էր դառնում:

Ժամը երեքին, ալրն. Ապելի հետ, արդեն նստած էր «Օտել դը լ'Անկր»-ի սրճարանում: Գնդապետը մոխրագույն ամառային կոստյում էր հագել: Նա միանգամից անցավ բուն նյութին.

- Իմ մանկության ընկեր Վիլլի Ռայնհարդտի խորհրդով եմ դիմում ձեզ: Նա բարձր կարծիք ունի ձեր մասին... Խնդիրն, անշուշտ, կարող է թվալ զուտ ընտանեկան և, ըստ էության, այդպես է, սակայն հաշվի առնելով որոշ կարևոր հանգամանքներ, կտեսնեք, որ դա առնչվում է մեզնից յուրաքանչյուրին, իսկական գերմանացիների սրբազան զգացմունքներին...

Գնդապետը համառոտ ներկայացրեց իր աղջկա և «արևելցի» ուսանողի սկիզբ առած «մտերմությունը» (նա գիտակցաբար խուսափեց «սեր» բառից) և խնդրեց, որպեսզի Կլաուսը հնարավորին չափ ընդարձակ տեղեկություններ տա այդ ուսանողի մասին: Իհարկե, չասաց (և իրավունք էլ չուներ), որ ստիպված է նրան դիմել, քանի որ գաղտնի ծառայություններն այլևս չեն հետաքրքրվում

այդ կապով, հետևաբար անկարելի դարձավ նրանց միջոցով ստանալ բաղձալի տեղեկությունները:

- Ինչո՞ւ որոշեցիք հատկապես ինձ դիմել, - հարցրեց Կլաուսը: - Այստեղ, ի դեպ, ուրիշ ուսանողներ էլ կան Էրֆուրտից, որոնց պարոն Ռայնհարդտը լավ գիտի...

- Պատճառը շատ պարզ է... Ես և Վիլլին շատ պատահական պարզեցինք, որ դուք և այդ ուսանողը միևնույն գիշերօթիկում եք ապրում: Վիլլին երբ հետադարձ հասցեն տեսավ, ասաց. «Սպասիր... Սա կարծես ծանոթ է ինձ»: Հետո իր ծոցատետրը նայեց, և պարզվեց, որ դուք և երիտասարդը միևնույն տանն եք ապրում, հնարավոր է նույնիսկ հարևան սենյակներում:

- Այո, մենք իսկապես հարևաններ էինք... Սակայն հասցես փոխեցի և հիմա հանդիպում ենք միայն համալսարանում:

- Ուրեմն, այդ երիտասարդին լավ գիտեք:

- Ես նրան լավ գիտեմ, նույնիսկ շատ լավ: Սակայն չեմ պատկերացնում, թե ինչով կարող եմ օգտակար լինել, որոշակի ի՞նչ եք սպասում ինձնից:

- Տեղեկություններ, սիրելի պարոն... Ամեն ինչի մասին, հնարավորին չափ շատ, հնարավորին չափ մանրամասն և մանավանդ ճշգրիտ, փաստերի վրա հենված: Ի դեպ, ես մոռացա հարցնել, ինչպիսի՞ հարաբերությունների մեջ եք այդ պարոնի հետ:

- Մենք բարեկամներ չենք... Բայց թշնամիներ էլ չենք, - ժպտալով պատասխանեց Կլաուսը: - Սակայն, եթե ճիշտ հասկացա, այդ տեղեկությունները հետաքրքրում են ձեզ որպես ընտանիքի հոր, որն ուզում է ամեն ինչ իմանալ իր դստեր երկրպագուների մասին:

- Ճիշտ այդպես, սիրելի պարոն:

- Այդ դեպքում, կարո՞ղ եմ ձեզ մի հարց տալ:

- Թեկուզ տասը, - մեծահոգաբար պատասխանեց գնդապետը:

- Որպեսզի իմ օգնությունն առավել օգտակար լինի, ես, հավանաբար, որոշ չափով, պիտի տեղյակ լինեմ ձեր ընտանեկան ծրագրերին, այդ ծրագրերի ինչ-ինչ մանրամասներին...

Գնդապետն, այդ խոսքերից կարծես նեղված, անհանգիստ մի շարժում արեց:

- Խնդրում եմ ճիշտ հասկացեք, ձեր ընտանիքի գաղտնիքներն ինձ չեն հետաքրքրում, սակայն մի բան է, երբ «արևելցու» մասին տեղեկություններ հավաքելուց առաջ ես իմանամ, թե արդյոք դուք նրան չե՞ք նայում որպես ձեր հավանական փեսայի և բոլորովին ուրիշ բան է, երբ իմանամ, որ նման հավանականությունը բացառվում է... Հուսամ, հասկացաք, թե ինչն է ինձ հետաքրքրում:

Գնդապետը մի ծանր հոգոց հանեց.

- Ավա՛ղ, լավ հասկացա, սիրելի Կլաուս, - միանգամից «դու»-ին անցնելով պատասխանեց գնդապետը: - Հրաշալի հասկացա..., - հետո, կարծես ուշքի գալով, ավելացրեց. - Ներողամիտ եղեք, որ առանց թույլտվության «դու»-ին անցա:

- Իրավունք ունեք, պարոն դնդապետ, ձեր որդու տեղն եմ գալիս... Սակայն, եթե ճիշտ հասկացա, առայժմ անորոշության մեջ եք:

- Ճիշտ այդպես, սիրելիս, քանզի եթե վճռականորեն դեմ լինեի նրանց մտերմությանը, ապա բնավ հարկ չէր լինի ձեզ անհանգստացնել:

- Ուրեմն, կարո՞ղ եմ ենթադրել, թե դուք չեք բացառում ձեր աղջկա ամուսնությունն այդ հայի հետ:

Գնդապետը, որն իր նոր-նոր ամառային կոստյումով ինքնագոհ քաղքենու տեսք ուներ, Կլաուսի հարցից կծկվեց, խեղճացավ.

- Որպեսզի ձեզ համար ամեն ինչ պարզ լինի, հավանաբար պիտի պատմեմ իմ ավագ աղջկա՝ Մինայի հետ տեղի ունեցած ցավալի արկածի մասին...

Գնդապետը, չնայած դժկամությամբ, բայցևայնպես որոշեց զրուցակցին ծանոթացնել իրենց ընտանեկան գաղտնիքին, որն, ի դեպ, այլևս գաղտնիք չէր, քանզի ամբողջ Էրֆուրտը գիտեր, իսկ եթե այս երիտասարդը չէր լսել, ապա ավելի լավ է, որ իրենից իմանա: Եվ իր ավագ դստեր «դժբախտ սիրո» (ինչպես ինքն էր որակում) պատմությանը ծանոթացնելուց հետո, հայտնեց նաև, որ մինչև Լոզան գալն այցելել է Բաղել՝ Մինային և իր թոռնիկին տեսել, որը «չա՜տ, չա՜տ նման է իրեն...»: Եվ նա, ամփոփելով, ասաց.

- Ես նայում էի այդ երեխային, այդ առողջ, հրաշալի զավակին և մտածում, որ իմ մեղքով իմ հարազատ աղջիկը չի կարող արդար վաստակած մայրությամբ հրճվել... Ինչո՞ւ պիտի թաքնվեր հասարակության աչքից, գնար օտար երկիր, այնտեղ գաղտնի ծննդաբերեր... Եթե ժամանակին ավելի ուշադիր լինեի, հավանաբար իմ աղջիկն էլ ավելի բախտավոր կլիներ... Էհ, փառք տանք Աստծուն, որ մայրն ու զավակն առողջ են և աշխատենք, որ մյուս աղջիկս նման պատմության մեջ չընկնի:

- Հիմա ամեն ինչ հստակ դարձավ... Այդ դեպքում ի՞նչն է ձեզ խանգարում հայրական կտրուկ վետոն դնել ձեր աղջկա առջև ու մեկանդամընդմիշտ վերջացնել այս պատմությունը:

- Ես դա միշտ կարող եմ անել, բայց նախևառաջ ուզում եմ իմանալ, թե ով է այդ հայը:

- Իսկ եթե հանկարծ պարզվի, որ նա առաքինությունների մարմնացում է, ի՞նչ վճիռ պիտի ընդունեք:

Գնդապետը քիչ մնաց խոստովաներ, թե որքա՜ն կուզեր, որ այդ տղան հարբեցող, սրիկա, դատարկապորտի մեկը լիներ, թե նման պարագայում որքա՜ն դյուրին կլիներ վճիռ ընդունելը, թե որքա՜ն արդար և իրավացի կլիներ՝ աղջկան հեռու պահելով նման բացասական անձնավորությունից: Մինչդեռ, եթե իսկապես բարի, ազնիվ, աշխատասեր մեկն է և այդքանի հետ սիրում է մաքուր ու անաղարտ սիրով, բարոյական ի՞նչ իրավունքով, ի՞նչ սրտով աղջկան պիտի արգելի ամուսնանալ նրա հետ... Օ, ի՜նչ գլխացավանք է աղջիկ զավակ ունենալը, Տեր Աստված, այնպես արա, որ այդ հայը ստոր, սրիկա, ավազակի մեկը դուրս գա...

Սակայն հանգիստ ու չափավոր տոնով պատասխանեց Կլաուսին.

- Ես ոչինչ չեմ կարող ասել... Առայժմ մեկ խնդիր ունենք. պարզել, թե

ինչ տեսակ մարդ է այդ հայը... Եվ կարծում եմ, որ ձեզնից զատ ուրիշ ոչ ոք չի կարող այդ ծառայությունն ինձ մատուցել:

- Պարոն, ինձ համար մեծ պատիվ է աննշան մի ծառայությամբ երախտագիտությունս հայտնել պարոն Ռայնհարդտին... Նրան ես շատ եմ պարտական: Դրանից զատ, խորին հարգանք ունեմ ձեր անձի և ձեր ընտանիքի հանդեպ... Վերջապես, մի քաղաքից ենք և օտարության մեջ պիտի իրար թև-թիկունք լինենք... Այնպես որ, չնայած իմ սոսկալի զբաղվածությանը, պիտի աշխատեմ հնարավորին չափ մանրամասն և, մանավանդ, ինչպես բարեհաճեցիք նշել, առավելագույն անաչառությամբ տեղեկություններ տալ այդ անձի վերաբերյալ:

Ապելը, հուզված, զրուցակցի ձեռքերն առավ իր ափերի մեջ և ասաց.

- Դու շա՜տ ազնիվ ես, սիրելի Կլաուս, շատ... Հա, քիչ մնաց մոռանայի... Ես պատրաստ եմ նաև հաճույքով քեզ կանխավճար տալ... Հենց հիմա, այստեղ:

- Ոչ մի դեպքում, պարոն գնդապետ: Ես ձեզնից անգամ մեկ պֆենինգ չեմ վերցնի:

- Սակայն, սիրելիս, դու ուսանող ես, և հետո իմ խնդրանքը կատարելիս, հավանաբար, ստիպված կլինես չնախատեսված ծախսեր անել:

- Սա պատվի հարց է, պարոն գնդապետ, և ես կտրականապես մերժում եմ դրամ առնել:

Գնդապետը, հուզմունքը հազիվ զսպելով, ոտքի կանգնեց և ամուր գրկեց Կլաուսին: Հետո ծոցատետրում մի հասցե դրելով էջը պատռեց ու մեկնեց նրան.

- Երեք օր հետո մեկնում եմ Շամպերի և մինչև հուլիսի երեսունմեկը պիտի մնամ այնտեղ... Այնպես որ շտապելու հարկ չկա, դուք բավական ժամանակ ունեք ձեր տեղեկությունները գրելու և ուղարկելու:

- Կարծում եմ, ավելորդ է հիշեցնել, պարոն գնդապետ, որ այս ամենը մեր մեջ պիտի մնա:

Նա ոտքի կանգնեց և, կիսախոնարհվելով ու «պատիվ ունեմ» մրմնջալով, հրաժեշտ տվեց:

Կլաուս Յուրգենը բարձր տրամադրությամբ դուրս եկավ հյուրանոցից: Այս հանձնարարությունը լիովին նրա սրտովն էր, և մի քանի առումով: Այդ հայն ի սկզբանե նրան դուր չեկավ: Նախ, որ հայ էր: Խորին հակակրանք ուներ այդ ազգի հանդեպ: Իսկական հռոմեացու պես արհամարհում էր թույլերին ու ճնշվածներին, գտնելով, որ այդ ողորմելի վիճակը աստվածների արդար պատիժն է նրանց համար: Երկրորդ՝ այդ հայը վայելում էր բոլորի սերն ու հարգանքը, անգամ այդ ցինիկ բոլշեվիկը, այդ խաղամոլ և արկածախնդիր օդեսացի հրեան, որն ատում և արհամարհում է բոլորին, որի համար ոչ մի սուրբ բան չկա աշխարհում, այնուամենայնիվ, ինչ-որ ակնածանքով է նայում նրան: Ուր որ մտներ, անմիջապես հայտնվում էր ուշադրության կենտրոնում: Հատկապես տանել չէր կարող նրա մշտական հաջողությունները կանանց մոտ, ինքը, որ պատանի տարիներից ի վեր խորհրդավոր մի երկյուղ ուներ կանանցից: Իսկ մի քանի օր առաջ, գրեթե որպես անձնական վիրավորանք ընդունեց այն փաստը, որ արդեն, երկրորդ անգամ անընդմեջ, համալսարանի բժշկական բաժնի լավագույն

ուսանողը ճանաչվեց: Դասախոսները հիացմունքով էին արտահայտվում նրա մասին, և այդքանն էլ կարծես քիչ էր, լուրեր էին շրջում, թե տաղանդավոր բանաստեղծ է, չնայած չէր պատկերացնում, թե այդ կիսավայրենի երկրում, այդ թշվառ ազգի լեզվով ինչպե՞ս կարելի է տաղանդավոր բաներ գրել, և մանավանդ բանաստեղծություն...

Ինչ որ է, չէր սիրում հաջողակներին, աստղով մարդկանց, նրանց, ովքեր թեթև, ժպիտը դեմքներին, ասես մատի մի շարժումով անում են այն, ինչ ինքը չի կարողանում շաբաթների, նույնիսկ ամիսների ընթացքում անել... Այո, տանել չէր կարող ակնառու մարդկանց, մանավանդ երբ հայ էին... Ինքը լավ գիտի, թե ինչ է պետք անել: Գնդապետը փաստորեն խոստովանեց, որ անորոշության մեջ է, նշանակում է՝ չգիտի, թե ինչպես վարվել, նշանակում է վճիռը պիտի ընդունի համաձայն ստացված տեղեկության: Այո, նա իսկական գերմանացի է և շատ կուզեր իր աղջկան հեռու պահել այդ հայից, բայց ուզում է անաչառ լինել, իր հայրական խստությունը հիմնավորել զորավոր փաստարկներով: Որ այդպես է, սիրելի գնդապետ, դուք կունենաք այդ փաստարկները՝ անաչառ և չափազանց զորավոր... Եվ, իհարկե, մանրամասն... Եվ իհա՛րկե, ճշգրիտ... Հա՛, հավանաբար Ուրսուլային պետք է ասել, որ շարունակի այդ հայի նամակներն արտագրել... Դուք անպայման կունենաք այդ փաստարկները, սիրելի գնդապետ... Այդ էր պակաս, որ հայերը գան և աղջիկներ տանեն Գերմանիայից, այն էլ ինչպիսի՛ աղջիկ:

Ինչ վերաբերում է անշահախնդիր ծառայությանը՝ Կլաուսը չէր խաբում: Նա, իսկապես, ակնկալիք չուներ Ֆրանց Ապելից, որը լավագույն դեպքում մի երկու հարյուր մարկ կվճարեր: Ոչ, նա իր վարձը կստանա ուրիշից՝ Ռայնհարդտից, և ոչ թե դրամով, այլ մի լուրջ, հիմնավոր ու ծանրակշիռ բարեխոսությամբ, որպեսզի իրեն՝ Կլաուսին, եվրոպական մի մաքուր ու կոկիկ երկրում նշանակեն հյուպատոս կամ դոնե փոխ-հյուպատոս:

Զափազանց գոհ օրվա գործարքից, Կլաուսը գտավ, որ բոլոր իրավունքներն ունի Ուշիի լճահայաց տերրասներից մեկում նստել, հեզասահ կարապներին նայելով ու վարդագույն հեռանկարների վրա մտորելով գարեջուր խմել, մինչդեռ նրա զրուցակիցը, նույնպես գոհ գժվարին բանակցության արդյունքներից, հաջորդ օրը, յուր տիկնոջ հետ, այցելեց տիկ. Սպիեսին:

Գիշերօթիկի տիրուհին գովեստով արտահայտվեց օրիորդ Ապելի մասին, մասնավորապես նշեց նրա աշխատասիրությունը, համեստությունը, կարգապահությունը, հայտնեց նաև, որ դաշնամուրի վարժուհին շատ գոհ է նրանից և փայլուն երաժշտի ապագա է խոստանում: Որևէ բանից դժգո՞հ է... Ոչ առանձնապես, հա... Կողմնակի գրքեր շատ է կարդում, մանավանդ բանաստեղծություններ: Հայնեի հատորից չի բաժանվում: Ոչինչ, տարիքի հետ կապված բան է: Այնուհետև տիրուհին հայտնեց, որ պրն. Ապելի զգուշացնող նամակն ստանալուց հետո, առավել աչալրջությամբ են հսկում օրիորդին, անգամ չթողեցին, որ մենակ գնա լուսանկարչատուն, այնպես որ ամենայն վստահությամբ կարող է ասել, թե այս ընթացքում օրիորդն ուսանողի հետ չի հանդիպել:

Այնուհետև տիկ. Սպիեսը, որպես փորձված մանկավարժ, հարկ համարեց

մի քանի օգտակար խորհուրդներ տալ տեր և տիկին Ապելներին: Հատկապես խնդրեց, որ օրիորդին ամեն վայրկյան հետևեն: Նույնիսկ ընդգծեց. «Ամեն վայրկյան»:

- Դա այն տարիքն է, երբ նրանցից ամեն ինչ կարելի է սպասել, - ասաց տիկ. Սպիեսը: - Իսկ այս քաղաքը մի զարմանալի հատկություն ունի՝ աղջիկներն այստեղ շատ են սիրահարվում... Հավանաբար, տղաները՝ նույնպես...

- Այսպիսի գեղեցիկ բնության մեջ, իսկապես, դժվար է չսիրահարվել, - համաձայնեց պրն. Ապելը:

- Իսկ այնտեղ, ուր պատրաստվում եք մեկնել հանգստանալու, բնությունն ավելի գեղեցիկ է, - բաղմանշանակալից ժպտալով պատասխանեց տիկ. Սպիեսը: Սակայն չեմ կարծում, թե դժվար կլինի հսկել ձեր աղջկան, քանզի երբ աղջիկները սիրահարվում են մեկին, ուրիշներին այլևս չեն նկատում:

- Դուք կարծում եք, թե Յաննին սիրահարվե՞լ է, - մի տեսակ զարմացած հարցրեց տիկ. Ապելը:

- Այո, տիկին, նա իսկապես սիրահարվել է, շատ խորը, հիմնավորապես:

- Գուցե հրապուրվել է այդ երիտասարդով... Ասենք՝ ժամանակավոր..., - կարծես արդարանալով նկատեց պրն. Ապելը:

- Ոչ, հարգելի պարոն, կան բաներ, ինչը դուք՝ ծնողներդ, չեք նկատում: Ձեր աղջիկը չափազանց զգայուն է, միաժամանակ խելացի, նա հիմա աշխարհը տեսնում է այդ սիրո միջով... Ավելին՝ նրա համար այդ սիրուց զատ ուրիշ բան գոյություն չունի... Հավատացեք ինձ, այդպիսի բաները ես լավ գիտեմ:

- Իսկ կարո՞ղ է այնպես պատահել, որ որոշ ժամանակ հետո նա ուրիշ կերպ նայի աշխարհին և այդ զգացմունքը թուլանա:

- Ոչ, պարոն, այդ զգացմունքը եթե չփոխադարձվի, ավելի կսաստկանա և կարող է ծանր հետևանքներ ունենալ: Սա այն դեպքն է, երբ ուժգին սերը երջանկացնում է աղջկան կամ ընդմիշտ դժբախտացնում:

Գնդապետն ապշած նայում էր այդ կնոջը, որի մասին առասպելներ էին շրջում՝ որպես անգութ ու անողորմ մի արարածի, այնինչ նրա դիմաց նստած էր խորաթափանց, հմուտ, նրբանկատ, գուցեև բարի մի դաստիարակ, որը յուրովի սիրում է իր սանուհիներին:

- Համենայն դեպս, - ավելացրեց դիշերօթիկի տիրուհին, - մի շտապեք վերջնական վճիռներ ընդունել, բաներ կան, որ ժամանակ է պետք լիովին հասկանալու համար:

Գնդապետն, իր տիկնոջ հետ, թեթևացած սրտով դուրս եկավ դիշերօթիկի տիրուհու մոտից: Նույնիսկ մի տեսակ մեղավորություն զգաց, որ շտապեց Կլաուսին հանձնարարել՝ լրտեսելու այդ տղային: Սակայն մի քիչ մտորելուց հետո գտավ, որ, այնուամենայնիվ, ճիշտ է արել: Չէ որ տիկ. Սպիեսը խորհուրդ տվեց վերջնական վճիռ ընդունելիս չշտապել... Իսկ դա նշանակում է, որ պետք է ամեն ինչ մանրամասնորեն ուսումնասիրել և նոր որոշել:

* * *

Հուլիսն սկսվեց մի տհաճ լուրով. ամեն ամսվա վերջին կանոնավորապես ուղարկվող կրթաթոշակը չստացավ: Դա իր ծախսերի ուղիղ կեսն էր՝ 75 շվեյցարական ֆրանկ: Մնացած կեսն ուղարկում էր հայրը՝ Հովհաննես աղան: Լոզանում, իրենից զատ, այդ կրթաթոշակն ստանում էին ևս մի քանի հայ ուսանողներ, որոնցից մեկը Լևոնն էր: Հունիսի 30-ին փոստատարը բերեց Լևոնի թոշակը, սակայն Ռուբենի համար ոչինչ չկար՝ առաջին անգամ երկու տարվա մեջ: Լևոնը մռայլվեց, սակայն ոչինչ չասաց, իսկ Ռուբենը գրեթե անտարբեր էր: «Անպայման մի թյուրիմացություն է պատահել, - ասաց նա: - Կարծում եմ՝ վաղն անպա՛յման կստանամ»: Սակայն երբ կեսօրից հետո համալսարանում հանդիպեց նույն թոշակն ստացող մյուս ուսանողներին և պարզեց, որ նրանց գումարներն առոք-փառոք տեղ են հասել, ավելի շատ մռայլվեց, քան Լևոնը:

Երեկոյան կողմ երկուսով նստած մտմտում էին, թե ինչ հեռադիր ուղարկեն կրթաթոշակի հանձնաժողովին, երբ Ուրսուլան բարձրացավ ու հայտնեց, թե մի օրիորդ ուզում է տեսնել պրն. Զիլինկիրյանին: Ռուբենն անակնկալի եկած ներքև իջավ և Մարիամին տեսավ՝ մի անկյունում կծկված: Աղջիկն անմիջապես ոտքի ելավ, եկավ ընդառաջ և, նրա ձեռքերը բռնելով, հուզմունքից աղավաղված դեմքով ասաց.

- Ռուբեն, ես լսեցի այդ ցավալի լուրը... Միայն խնդրում եմ հավատաս, որ ես կապ չունեմ այդ պատմության հետ...

Հետո, տեսնելով տղայի զարմացած դեմքը, թախանձագին ավելացրեց.

- Հավատա ինձ, Ռուբեն, ես գիտեմ, դու հավանաբար կարծում ես, թե այդպիսով վրեժ եմ լուծել այն օրվա համար, բայց իսկապես կապ չունեմ այդ պատմության հետ... Այսօր իմացա, իմ ընկերուհուց... Ես վրդովված եմ... Դա շատ անարդար է...

Ռուբենը, Եվրոպայում գտնվող մի երկու տասնյակ ուսանողների հետ արժանացել էր Ջունդյան կտակի կրթաթոշակին: Հնդկահայ մեծահարուստը, մահվանից առաջ, շարադրել և վավերացրել էր մի կտակ, որտեղ ի թիվս մի շարք հայանպաստ բարեգործությունների, նաև կլորիկ մի գումար էր հատկացված հայ ուսանողների համար: Հատուկ հանձնաժողովը, որ որոշում էր արժանավորներին, դե յուրե նախագահում էր Պոլսի պատրիարքը, սակայն վճռական ձայնը, դե ֆակտո, պատկանում էր Մարիամի հորը և փաստորեն նրանից էր կախված, թե բազմաթիվ ուսանողներից ով կարժանանա կրթաթոշակին: Ահա ինչու, լուրն առնելուն պես, Մարիամն շտապել էր գալ դիշերօթիկ և արդարանալ:

- Ես հավատում եմ քեզ, - ասաց Ռուբենը հուզմունքից դողացող աղջկան: - Սակայն ինչպե՞ս հասկանալ թոշակի այս տարօրինակ ուշացումը... Այո, առայժմ կարծում եմ, որ սա ուշացում է... Մի անփութության կամ թյուրիմացության հետևանք... Հնարավոր է՝ վաղը կամ մյուս օրը ստանամ...

- Երանի՜ այդպես լիներ, - մարած ժպիտով պատասխանեց աղջիկը:

- Դու այնպես ես հուզվում, Մարիամ, այնպես ես տանջվում, ասես իրոք

կտրել են իմ թոշակը... Գուցե մի բան գիտես և չես ուզում ինձ հայտնել: Ասա, մի վախեցիր:

Աղջիկն սկսեց լուռ արտասվել, արցունքները դանդաղ գլորվում էին նրա այտերով: Ռուբենը հավատում էր, որ անմեղ է, սակայն տեսնում էր, որ մի բան տանջում է նրան: Թաշկինակը հանեց, սրբեց արցունքները, գլուխն առավ ձեռքերի մեջ և սկսեց մազերը շոյելով հանգստացնել: Աղջիկը դրանից ավելի հուզվեց և, Ռուբենի ձեռքերն ամուր բռնելով, դժվարությամբ ասաց.

- Ես գիտեմ, որ նամակ է ուղարկվել այստեղից... Մի վատ նամակ, որտեղ անարդար բաներ կան քո մասին...

- Ի՞նչ նամակ, ե՞րբ, ո՞վ է ուղարկել... Վերջապես ո՞ւմ, - հարցերի տարափ տեղաց Ռուբենը:

Աղջիկը լուռ էր: Հետո մի կերպ, հայացքը շարունակ ցած գցած, արտաբերեց.

- Եղբայրս...

- Հորդ է գրե՞լ...

Աղջիկը գլխով արեց:

- Սակայն ի՞նչ կարող էր գրել, ինչի՞ մասին... Թոշակը կտրելու համար պետք է լուրջ պատճառներ ունենային... Ո՞ր մեղքիս համար են կտրել... Դու կարդացե՞լ ես այդ նամակը:

- Ոչ, բայց մոտավորապես գիտեմ... Իբր ուսանելու փոխարեն օտար աղջիկների հետ գինարբուքների մեջ ես անցկացնում ժամանակդ... Հետո, կարծեմ, այդ բամբասանքներն է գրել քո և գերմանուհու մասին...

Ապշած էր, զարհուրած այս ահավոր անարդարությունից, բիրտ կամայականությունից, զրպարտությունների և ստերի այս հեղեղից: Եվ առավել սոսկալին այն էր, որ նման քսու նամակ շարադրողն իր ընկերներից մեկն էր, որին վերջերս ճանապարհեց Փարիզ, հրաժեշտից առաջ, արցունքն աչքերին, ողջագուրվեց հետը... Մինչդեռ նա արդեն ուղարկել էր իր զրպարտագիրը... Սակայն ինչո՞ւ, ո՞ր հանցանքի համար... որ նրա քրոջ՝ Մարիամի սերը մերժե՞ց... Մի՞թե դրա համար է վրեժ լուծում, այն էլ այսպես քսու միջոցների դիմելով... Տարօրինակ է, նա, ով իրավունք ուներ վիրավորվելու, իրեն պահում է արժանավայել, մինչդեռ պարզվեց, որ եղբայրը կատարելապես զուրկ է առնական արժանապատվությունից:

Հրեշավոր անարդարությանը և սոսկալի վիրավորանքին ավելանում էր վիճակի անելանելիությունը: Այդ ստահակը՝ Մարիամի եղբայրն, այստեղ չէր, որ գնար, օձիքից բռներ, մի երկու ապտակ հասցներ ու հանգստանար: Մյուս կողմից էլ, որևէ հաստատություն, պատասխանատու որևէ անձնավորություն չկար, որին բողոքեր և պահանջեր իր վաստակած իրավունքները վերականգնել: Անարդարությունն առավել անհանդուրժելի էր դառնում, երբ հիշում էր, թե ինչպես ինքը լավագույն ուսանողը հայտարարվեց, և առաջիններից մեկն այդ ստոր արարածն էր, որ եկավ շնորհավորելու: Անհեթեթ, անհասկանալի վիճակ... Ինքը, որ լավագույնն էր ոչ միայն հայ, այլև բոլոր ուսանողների մեջ, որպես պարգև զրկվում է թոշակից...

Այս մեկ տարվա ընթացքում, որպես «Արմենիա» ընկերության նախա-

գահ, տասնյակ հայ ուսանողների էր օգնել, հիմա պիտի գլուխ կոտրի, թե ինչպես դուրս գա ավելացող ծախսերի բեռան տակից, ինչպես վճարի իր գիշերօթիկի վարձը: Ուրիշի համար պատրաստ էր առյուծ կտրել, համոզել, փաստարկներ գտնել, պահանջել, մինչդեռ, երբ գործը հասնում էր իրեն, համրանում էր, պարզապես կորցնում գործելու կարողությունը:

Աղջիկը, որ գլխիկոր կանգնած նայում էր և ասես կարդում նրա մտքերը, վճռականորեն հայտարարեց.

- Պիտի նամակ գրեմ հորս, ամեն ինչ բացատրեմ և պահանջեմ, որ վերականգնեն արդարությունը:

- Արդեն ուշ է, որոշումն ընդունված է... Եվ հետո չէի ուզի, որ դու խառնվես այս գործին:

- Ճշմարտության համար ուշ կամ շուտ չկա, թող իմանան, որ անարդար վճիռ են հանել:

- Պետք չէ, Մարիամ, որ իմ պատճառով գժտվես հորդ հետ... Սակայն եթե պիտի գրես նրան, խնդրում եմ հայտնես, որ այս էլ երկրորդ անգամ լավագույնն եմ համարվել բոլոր ուսանողների մեջ... Միայն այդքանը և ուրիշ ոչինչ:

Մարիամը սրբել էր արցունքները, նրա դեմքին հիմա ուրիշ արտահայտություն էր, վճռական, աչքերի մեջ ինչ-որ կրակ կար, որ տարաշխարհիկ մի դեղեցկություն էր՝ հաղորդում նրան: Ռուբենը մի ջերմ համակրանքով լցվեց նրա հանդեպ և ինքն էլ չնկատեց, թե ինչպես մի անմեղ համբույր դրոշմեց շուրթերին, մի համբույր, որը չհրկիզվեց կրքի կրակով, այլ դարձավ մաքուր ու անշահախնդիր բարեկամության յուրատեսակ մի վկայություն:

- Կներես, Ռուբեն, այն օրվա համար... Քեզ չար խոսքեր ասացի... Շատ սիրելուց էր...

- Հասկանում եմ:

- Հետո, խնդրում եմ, եղբորս վրա քեն չպահես... Նա հոգով չար չէ... Պարզապես դյուրաբորբոք է և անխելք... Համոզված եմ, որ հիմա զղջում է իր արածի համար:

Տարօրինակ էր, փոխանակ իրեն մխիթարեին, ինքն էր մխիթարում ուրիշին: Եվ գուցե լավ էր, որ այսպես եղավ, քանզի զգաց, թե ինչպես թեթևություն իջավ հոգուն: Կարծես ոչինչ չէր պատահել: Նույնիսկ մոռացավ, որ ամբողջ օրը վատ տրամադրության մեջ էր:

Սակայն երբ աղջկան ճանապարհեց և վերադարձավ սենյակ, հոգեկան այդ անդորրը միանգամից ցրվեց: Նրա առջև, ամենայն անողոքությամբ, կանգնեց մեկ այլ իրողություն. ինչպե՞ս պիտի մեկնի Շամպերի... Անգամ թոշակն ստանալու դեպքում, ստիպված պիտի լիներ մի որոշ գումար պարտք անել, որպեսզի այդ ծախսի տակից դուրս գար:

Չէ, Շամպերին աղքատ ուսանողների համար չէ, Եվրոպայի ունևոր դասն է գալիս այնտեղ ամառային հանգստի, ուրախ ժամանցի կամ, ինչպես իր կովկասահայ ընկերներն են ասում՝ «փող շաղ տալու համար»: Տղայական երազներ էր փայփայում արդեն, իրեն պատկերացնում Յաննիի հետ միասին՝ հեքիաթային բնության գրկում:

Բայց զարմանալին այն էր, որ այս հաճելի գիշերօթիկից հրաժարվելու, ավելի էժան, ավելի համեստ սենյակ վարձելու, մի բաժակ կաթով և մի պատառ հացով ապրելու հեռանկարն այդքան սոսկալի չթվաց նրան, որքան Շամպերի մեկնելու գաղափարից հրաժարվելը:

Ըստ էության առանձնապես շատ բան չէր կորցնելու, եթե չգնար: Նրանց զգացմունքները դրանից չպիտի պաղեին, ընդհակառակը, ավելի կբորբոքվեին: Եվ դեռ հարց էր, եթե գնար, կկարողանա՞ր արդյոք նրա հետ գոնե մեկ ժամ անցկացնել, չէ որ աղջիկը շարունակ ծնողների կողքին է լինելու: Իսկապես, արժե՞ր այդքան դրամ ծախսել՝ աղջկան մի քանի օր հեռվից նայելու համար:

Սակայն հենց այս, առաջին հայացքից երկրորդական դրկանքն էր, որ սոսկալի վիրավորում էր նրա ինքնասիրությունը: Ասես կոպտորեն դուրս էին հանում մի սրահից, որը հատկացված էր միայն ընտիր հասարակությանը:

Վրեժի մի բուռն ցանկություն ցնցեց նրան, ընդվզեց, ուզեց աղաղակել այդ անարդարության դեմ, որ անտանելի, ավելի անհանդուրժելի էր, քան մյուս բոլորը: Երբեք նրա աչքերը չէին շլացել ուրիշի հարստությամբ, երբեք նախանձոտ կամ ընչաքաղց հայացքով չէր նայել Շվեյցարիայում թրև եկող ազնվականների, մեծահարուստների կամ պարզապես արկածախնդիրների շքեղ ու ցոփ կյանքին, քանզի այն համոզումն ուներ, թե այդ հարստությունները, որպես կանոն, արցունքի, արյան կամ խաբեության վրա են դիզվել: Դրանից զատ, գրեթե ամեն օր, տեսնում էր, թե մահն ինչպես է անողոքությամբ իր արդարությունը հաստատում՝ աղքատին ու մեծահարուստին մերկ ու անօգնական դնելով կողք-կողքի: Եվ վերջապես, վստահ էր իր ուժերին, իր կարողությունները լավ գիտեր և համոզված էր, որ աշխատանքով, գիտելիքներով հասնելու է ամեն ինչի:

Ժամացույցը նայեց: Մի պահ երկմտելուց հետո քայլերն ուղղեց դեպի հիվանդանոց: Դոկտոր Ռուն այդ ժամին դեռ այնտեղ կլիներ:

Հիվանդապահ...

Այդ պարտականությամբ մշտական աշխատանքի ընդունվելու համար հատուկ վկայական էր պետք, սակայն ուսանողներից ոմանց ժամանակավոր վերցնում էին: Վճարն առանձնապես մեծ չէր, բայց իր նման դրամական անձուկի առջև հայտնվողների համար փրկություն էր:

Բախտը բերեց: Դոկտոր Ռուն դեռևս այնտեղ էր, սիրով ընդունեց և ուշադիր լսեց նրան: Ռուբենը հատուկ չեշտեց, որ նման խնդրանքի դրդապատճառը հիվանդանոցի ներքին կյանքին ավելի լավ ծանոթանալու ցանկությունն է:

- Ողջունում եմ ձեր որոշումը... Հավանաբար համալսարանում անցկացրած ժամերը չեն հագեցնում ձեր ծարավը... Ինչո՞ւ չէ, կարելի է և հիվանդապահ աշխատել, անշուշտ, ժամանակավոր...

Դոկտոր Ռուն լռեց և իր ամենաթափանց աչքերն ուսանողին հառելով, շարունակեց.

- Սակայն կարծում եմ, որ սխալ կլիներ ձեր նման ուսանողին օգտագործել որպես պարզ հիվանդապահ...

- Ցավոք, ես առայժմ ուրիշ աշխատանք չեմ կարող խնդրել..., - կարծես արդարանալով պատասխանեց Ռուբենը:

- Գիտեմ... Ես էլ հենց դա նկատի ունեմ...

Նա մի հսկայական մատյան հանեց և սկսեց թերթել:

- Իմ օգնականներից մեկը վերջերս տեղափոխվեց ուրիշ հիվանդանոց... Նրա տեղն ազատ է, և ես չգիտեմ, թե ում վերցնեմ: Գուցե դո՞ւք գաք...

- Անչափ շոյված եմ ուշադրության համար, դոկտոր, սակայն դա իմ ուժերից վեր է, ես փորձ չունեմ...

- Ինչ վերաբերում է փորձին և գիտելիքներին, ապա ձեր նման ուշիմ և աշխատասեր ուսանողը կարճ ժամանակում կյուրացնի, սակայն դուք ունեք մի բան, որն այստեղ աշխատողներից հազիվ մեկ-երկուսն ունեն:

- Ինչի՞ մասին է խոսքը, դոկտոր:

- Հասարակ մի բանի, երիտասարդ, սի՛րտը, - բարի ժպիտով պատասխանեց դոկտոր Ռուն:

- Շնորհակալ եմ, դոկտոր, բայց միայն սիրտը բավակա՞ն է:

- Բավական չէ, անշուշտ, սակայն երբ դրան ավելանում է գիտելիքներով հարստացած միտքը, ապա ոչ միայն հիվանդներին կարելի է առողջացնել, այլև աշխարհը փրկել... Բայց, ավա՛ղ...

Դոկտոր Ռուն լռեց և մատյանի էջերը նորից թերթելով շարունակեց.

- Հանկարծ չկարծեք, թե միանգամից վիրահատություն պիտի անեք: Ոչ, առայժմ պարզ հանձնարարություններ են լինելու: Ի դեպ, մի երկու անգամ արդեն ներկա եք եղել:

- Այո, դոկտոր, ես պարզապես կանգնած նայում էի, և վիրահատությունից առաջ գործիքներն ախտահանեցի:

- Այս անգամ էլ նույնը կանեք, գուցեև ուրիշ հանձնարարություն ստանաք, և կամաց-կամաց կընտելանաք... Ես էլ այդպես եմ սկսել, այս նույն հիվանդանոցում... Վիրահատությունը չափազանց պատասխանատու և վտանգավոր գործ է, և պետք է մանրակրկիտ ու երկար նախապատրաստվել դրան: Ուրեմն, պայմանավորվեցինք: Հիմա ձեզ կներկայացնեմ իմ գլխավոր օգնականին և նա ձեզ որոշակի հանձնարարություններ կտա:

- Շնորհակալ եմ, դոկտոր, այդպիսի բարձր վստահության համար:

- Ջարժե, երիտասարդ... Եթե կուզեք իմանալ, ես մի քիչ էլ եսասիրական մղումներով եմ ձեզ վերցնում... Ինչպե՞ս բացատրեմ... Իմ նախնիները ժամադործներ են եղել... Բարձրակարգ, արվեստագետ ժամագործներ: Հիշում եմ, պապս, ֆրանսիացի մի դքսի պատվերով, հատուկ ժամացույց էր պատրաստում՝ բաղկացած յոթ հարյուր դետալներից... Հինգ տարի աշխատեց, բայց չկարողացավ գործն ավարտին հասցնել: Տարիքն առել էր և ձեռքերն արդեն դողում էին: Հայրս վերջացրեց այդ աշխատանքը: Այդպիսին է կյանքը, միշտ գործեր ենք թողնում մեզնից հետո, ուստի ուզում ենք մեր կողքին մեկին տեսնել, որին կկարողանանք հանգիստ սրտով մեր անավարտ ժամացույցները վստահել:

- Կներեք, դոկտոր, բայց դուք եռանդի մարմնացում եք, և վաղ է այդ մասին խոսել:

- Եռանդս տեղն է, դժգոհ չեմ, բայց արդեն հիսունն անց եմ և երբեմն-երբեմն, վիրահատության ժամանակ, ձեռքերս դողում են... Զգիտեմ, հուզմունքից, թե տարիքից... Սակայն, բնական է, կյանքի օրենքն է և դրանում ողբերգական ոչինչ չկա:

Նա լռեց, հետո, սևեռուն նայելով զրուցակցի աչքերի մեջ, հարցրեց.

- Խնդրում եմ անկեղծորեն պատասխանեք. միայն մասնագիտական հետաքրքրասիրությո՞ւնն է, որ ձեզ բերեց այստեղ, թե ավելի շատ դրամական հարցերը լուծելու անհրաժեշտությունը:

Դոկտոր Ռուի թափանցող հայացքից անկարելի էր որևէ բան թաքցնել, բացի այդ, եթե առայժմ չգիտի, ապա մոտ օրերս կարող է նրա ականջին հասնել թոշակի անհեթեթ և ցավալի պատմությունը: Ուստի պատմեց ամեն ինչ, բացառությամբ Շամպերի մեկնելու անհրաժեշտության մասին: Դոկտորն, ուշադիր լսելով, գլուխն օրորեց և դառը ժպիտը դեմքին, ասաց.

- Մարդկային ստորություններն ու տխմարությունները վաղուց արդեն ինձ չեն զարմացնում, բայց ես ապշած եմ, թե դուք՝ հայերդ, ինչպիսի ստոյիկյան հանդարտությամբ եք ընդունել այդ հրեշավոր անարդարությունը:

- Ի՞նչ կարող էին անել:

- Այդ հինգ հոգին, որ նույն թոշակն են ստանում այստեղ, բայց իրենց ուսման մակարդակով զիջում են ձեզ, որպես բողոքի նշան թող հրաժարվեին իրենց թոշակից, այստեղի հայ ուսանողությունը թող իր վրդովմունքն արտահայտեր հեռագրերով և նամակներով, վերջապես, մամուլ ունեք, թող աղմուկ բարձրացներ, պահանջեր անհապաղ վերականգնել արդարությունը:

- Հայկական թերթերից մեկը գրել է այդ մասին, բայց, ավա՜ղ, այդ բողոքը հնչում է որպես ձայն բարբառո հանապատի:

- Դուք թուրքերի անարդարությունից եք բողոքում, բայց իրար հանդեպ ավելի անարդար եք... Կներեք, գուցե շատ խիստ եմ, բայց ի՞նչ ապագա կարող է ունենալ մի ժողովուրդ, որը մերժում, ստորացնում է իր լավագույնին:

Նրա աչքերը փայլում էին: Ասես բոցաշունչ հեղափոխական լիներ, որ ճառախոսում էր ամբոխի առջև: Հետո ժպտաց և գլուխը հաստատական շարժելով լրացրեց.

- Ինչ որ է, չկա չարիք առանց բարիք: Ես շնորհակալություն պիտի հայտնեմ այդ պարոններին, որ իրենց ամենալավ ուսանողին նվիրեցին ինձ:

* * *

Մի նոր աշխարհ բացվեց նրա համար՝ արդեն ծանոթ աշխարհի մեջ: Բարեբախտաբար արձակուրդներ էին և նա գրեթե ամեն օր մասնակցում էր վիրահատություններին: Շամպերի գնալու մասին միայն տասն օր հետո համարձակվեց խոսք բացել, երբ դոկտորն ինքը հայտնեց, որ հուլիսի 15-ից սկսած մեկ շաբաթով բացակայելու է: Հարցը լուծվեց ինքնիրեն, ասես ամեն ինչ արվում էր, որպեսզի հնարավորություն ստանար այնտեղ մեկնելու:

Հիմնական արգելքը վերացված էր, այժմ այնքան դրամ ուներ, որ կարող

էր նույնիսկ «Էգլանտին» ամառանոցում սենյակ վարձել: Առանց հապաղելու հեռագիր ուղարկեց և մեկ շաբաթով սենյակ պատվիրեց: Նույն օրը դրական պատասխան ստացավ:

Հաջորդ օրը, կեսօրից հետո, Շամպերի մեկնող գնացքը նստեց և երեկոյան կողմ տեղ հասավ: Լոզանի ծույլ ու հանդարտ կյանքից հետո (ուսանողները, մինչև հոկտեմբեր, լքել էին քաղաքը) ասես միանգամից ուրախ տոնավաճառ ընկներ, ուր աշխարհի չորս ծագերից մարդիկ էին հավաքվել: Եվրոպական բոլոր լեզուները կարելի էր լսել այդտեղ: Տոնական մի տրամադրություն էր տիրում փողոցներում, անթիվ ու անհամար ժպտացող, համակրելի դեմքեր էին երևում: Մարդիկ հագնված էին առանձնահատուկ մի խնամքով, իսկ արևն ասես շոյում էր՝ զվարթության իր հսկա բաժինը բերելով այս անվերջ ուրախությանը:

Սակայն պատահում է, որ դյուրազգաց և մտածող էակները միանգամից ավելորդ են զգում իրենց կյանքի այս խրախճանքի մեջ: Անձկալից միայնության մի զգացում է համակում, մանավանդ, եթե իսկապես մենակ ես եկել, երբ դիմավորող չկա: Թվում է, թե անկոչ հյուր ես, թե այս տոնն ուրիշինն է, քոնը չէ, և որքան ավելի շուտ հեռանաս այդտեղից, այնքան ավելի լավ քեզ համար:

Սակայն երկու ստույգ բաներ կային, որ նրան ուժ տվեցին ցրելու այդ մռայլ տրամադրությունը. «Էգլանտին» ամառանոցի տիրուհու՝ տիկ. Բերրայի հեռագիրը և այդ ամառանոցում բնակվողներից մեկը: Ինքն էլ չնկատեց, թե ինչպես դարձավ այդ ուրախության մասնակիցը: Կայարանի առջև, բացօդյա սրճարանում, Վալեի կարմիր գինին խմեց, մի պատառ կերավ և որոշեց ոտքով բարձրանալ ամառանոց, որ դիմացի լանջին էր՝ ծառերով շրջապատված:

Հեռվից մի երաժշտություն էր լսվում, ակորդեոնով պարեղանակ էին նվագում, որ մոտենալու հետ ուժեղանում էր: Քիչ հետո հասկացվեց, որ նվագում են «Էգլանտին» ամառանոցում: Այժմ նվագախումբը վիեննական մի վալս էր հնչեցնում: Պարահանդե՞ս էր, թե հատուկ մի առիթով էին հավաքվել: Մտավ ներս և ուրախ, գինով բազմություն տեսավ: Տարբեր տարիքի զույգեր պտտվում էին ընդարձակ սրահում: Մի պահ նույնիսկ մոռացավ, թե ինչու է եկել այստեղ: Ասես հրաշագործության ներկա գտնվեր: Բոլոր ծանր մտքերը, անտանելի հոգսերը և նվաստացնող հնհնուքները, որ վերջին ժամանակներս պաշարել էին նրան, միանգամից չքվեցին, և թվում էր, թե այսուհետև այլևս երբեք չեն հայտնվելու: Մեղմօրոր երաժշտությունը կարծես համոզում էր մոռանալ ամեն ինչ և հավատալ միայն հավերժական երջանկությանը, ուստի, ասես հակառակ Դանթեի, կոչ էր ամեն մի եկվորին զինվել «հույսերով համայն»: Ժպիտները զարդարում էին բոլոր դեմքերը, աչքերի մեջ կենսական վարակիչ մի լույս կար, շարժումները կարծես եթերային էին, իսկ երաժիշտներն էլ ասես սովորականից մի քիչ ավելի դանդաղ էին նվագում երազային վալսը: Արդար հոգիներին խոստացված դրախտը եթե իսկապես գոյություն ուներ, ապա հազիվ թե սրանից ավելի գեղեցիկ և հրապուրիչ լիներ: Համենայն դեպս, այնտեղ սիրո համար մարդ արարածը պատժվեց, մինչդեռ այստեղ համատարած սեր էր:

Երաժշտության և պարի արբեցումին ավելանում էր ճերմակ, փրփրուն

գինին, որ վարդագույն այտերով մի կին և համակրելի մի օրիորդ անվճար մատուցում էին պատի տակ դրված սեղանից:

Ռուբենը, մոտենալով նրանց, մի գավաթ վերցնելով հարցրեց իմիջիայլոց.

- Տիկին Բերրային ինչպե՞ս կարելի է տեսնել:

- Իսկ ի՞նչ եք ուզում նրանից, - ժպտադեմ հարցրեց կինը:

- Սենյակ եմ վարձել այստեղ:

- Դուք պարոն Զիլինկիրյա՞նն եք... Լոզանից, - հարցրեց կինը:

- Այո:

- Բարի գալուստ, պարոն, տիկին Բերրան ես եմ.:. Մի բոպե խնդրում եմ սպասեք:

Նա դուրս եկավ սրահից և վերադարձավ՝ ձեռքին մի բանալի:

- Ահա, խնդրեմ, երկրորդ հարկի հինգերորդ սենյակն է: Կարող եք տեղավորվել, հանգստանալ, եթե հոգնած եք ճանապարհից, իսկ մեկ ժամ հետո ընթրիք կմատուցվի, այստեղ՝ այս սրահում:

Հանգստանալու ցանկություն չուներ: Որոշեց սրահում մնալ և պարերը դիտել, մանավանդ որ երաժիշտներից մեկը հայտարարեց, թե վերջին երեք եղանակն են նվագելու և որ այս պարը կանայք պիտի հրավիրեն տղամարդկանց: Հիացական ընդհանուր մի աղաղակ արձակվեց: Սակայն, չնայած դրան, սկսված պարեղանակը պարապի մեջ էր հնչում, քանզի ասպարեզում ոչ մի զույգ չկար: Բայց, ահա, հայտնվեց առաջին... երկրորդ... երրորդ զույգը, և քիչ հետո արդեն իրար քսվելով էին պտտվում վալսի ռիթմի տակ: Հայացքով նրան էր փնտրում պարողների մեջ, սակայն չէր գտնում: Պատի տակ նստած օրիորդների մեջ էլ չտեսավ: Մի՞թե սխալ է տեղի ունեցել: Կարո՞ղ է նա այստեղ չէ... Իսկապես, ինչո՞ւ պիտի ներկա չլիներ պարահանդեսին... Գուցե տկար է... Գուցե... Քիչ մնաց մոտենար տիկին Բերրային և հարցներ, երբ առջևը տեսավ նրան կանգնած, հրավերի համար ձեռքը մեկնած, շատ թեթև մի ժպիտ դեմքին... Երկնագույն գեղեցիկ զգեստ էր հագել, որ հրաշալիորեն համերաշխվում էր ճերմակ, բարձր, ծնկների մոտ ժապավենով կապված գուլպաներին, կապույտ, նուրբ կոշիկներին և մանավանդ ցորենագույն մազերին, որ ժապավենով հնազանդեցվել էին ծոծրակի մոտ:

Թվաց, թե ինքն ամպի պես թեթև է և ոչ թե ինքն է պարի մեջ տանում նրան, այլ նա է առաջնորդում, տանում դեպի հավերժություն: Դեմքը մոտեցրեց և շշնջաց.

- Ես քեզ սպասում էի, որ պարի հրավիրեմ:

Նրանից գինու թեթև բույր էր գալիս, որ խառնվել էր աղջկական մարմնի, մազերի արբեցնող բույրերին:

- Կներես, որ ուշացա:

- Երբեք ուշ չէ, քանզի գիտեի, որ պիտի գաս:

- Բայց ափսո՜ս, մեկ շաբաթով:

- Բավական չէ՞ միթե...

- Զգիտեմ:

- Ո՞ւր ենք շտապում, ժամանակն այսուհետև մերն է լինելու:

Ուզո՛ւմ էր պատասխանել, թե նրա հետ անցկացրած ամեն մի վայրկյանը հավերժություն է, սակայն աղջիկը մատով փակեց բերանը և հարցրեց.

- Ո՞ր սենյակում ես տեղավորվել:

- Հինգերորդ:

- Ընթրիքից հետո բարձրացիր սենյակդ և ժամը տասից սպասիր ինձ... Ծնողներս դուրս եկան զբոսնելու... Նրանք կարծում են, թե դու այստեղ չես... Հա, ճաշարան որ իջնես, կխնդրես, որ քեզ այն անկյունում նստեցնեն... Այդպես ավելի հեռու կլինես մեզնից, թող ծնողներս առայժմ քեզ չտեսնեն...

Պարը վերջանալուն պես նա շնորհալի ռեվերանս արեց և անհետացավ: Ռուբենը շշմած էր դեպքերի այս գլխապտույտ և անակնկալ զարգացումից: Մանավանդ նրան զարմացրեց աղջկա հրեշտակային եթերայնությունը, երազային անկշռելիությունը, միաժամանակ հաշվենկատ կազմակերպվածությունը, մի պահի մեջ միաժամանակ երկու տեսակ լինելը: Նրա երկար ու քնքույշ մատները, որ ասես ստեղծված էին տավղի լարերին նրբորեն դիպչելու համար, միաժամանակ զորավոր կամքի ներկայությունն էին հաստատում: Սակայն զգացվում էր, որ այդ կամքը աղջկական քմայք չէ, այլ վերին մի բանականություն, որն իր անխուսափելի մարմնավորումն էր գտել նրա մեջ և նրա միջոցով, որպես հրաման, հաղորդվում էր իրեն:

Բարձրացավ վերև և ուրախությամբ հայտնագործեց իր սենյակը. մաքուր, ու հարմարավետ մի անկյուն՝ գեղեցիկ մի պատշգամբով, որ նայում էր անտառին: Այսօր կարծես ամեն ինչ արվում էր, որպեսզի տոնական տրամադրությունը ճիշտ բարձր լինի: Հանգստանալու ոչ մի ցանկություն չուներ, ուստի լվացվեց, զգեստը փոխեց և իջավ ներքև:

Սրահը դեռ դատարկ էր, երկու-երեք հոգի կային սեղանների մոտ: Ինչպե՞ս էին հասցրել պարասրահը կարճ ժամանակում ճաշասրահի վերածել: Տիկին Բերրան, միշտ ժպտադեմ, դիմավորեց նրան և իր խնդրած տեղում նստեցրեց: Մի տասը րոպե հետո սրահ մտավ՝ երեկոյան մուգ կոստյում հագած պատկառելի տեսքով մի պարոն՝ տիկնոջ և դստեր հետ: Նրանք նստեցին սրահի հակառակ ծայրում և բնավ չնկատեցին նորեկի ներկայությունը: Հայրը և մայրը նստած էին մեջքով, իսկ ինքը և նա՝ կարող էին հանգիստ իրար նայել, չնայած նրանց միջև մի քանի սեղան կար:

Նա աշխուժորեն ինչ-որ բան էր պատմում ծնողներին և ընդամենը մեկ անգամ նայեց իր կողմը, այն էլ չափազանց հպանցիկ, ասես ոչ թե իրեն, այլ իր միջով պատուհանին էր նայում: «Այո, նա տեսել է ինձ, բայց ոչ մի շարժումով, դեմքի ոչ մի արտահայտությամբ չմատնեց իրեն», - փաստեց Ռուբենը, հիացած նրա ինքնատիրապետումով:

Աճապարանքով էր ուտում, որպեսզի ժամ առաջ բարձրանա սենյակ և սպասի նրան... Նրա՞ն... Մի՞թե մտադիր է իր սենյակը գալ: Ինչպիսի՜ խենթություն: Չէ որ ծնողներն այստեղ են... Սակայն ինչպիսի՜ հանդիպում կլինի, անցած երկու ամիսների տանջալից սպասումները միանգամից կհատուցվեն... Հնարավո՞ր է միթե այդպիսի բախտի արժանանալ... Բայց, սպասիր, զսպիր երևակայությանդ թռիչքը... Գուցե գալիս է մի հինգ րոպեով զրուցելու, որպիսությունդ հարցնելու...

Հետո հանկարծ ձեռքը ճակատին տարավ, քանզի հենց այդ պահին հիշեց, որ դատարկ ձեռքով է եկել, որ վազվզոցի մեջ մոռացավ նվեր բերել նրան... Ի՜նչ վատ ստացվեց... Հենց սկզբից այսպիսի կոպիտ, աններելի վրիպում...

Իսկ ի՞նչ նվեր պիտի բերեր տասնյոթամյա այս աղջկան: Գուցե լավ է, որ մոռացավ, չէ որ ծանոթ չէ նրա ճաշակներին, հնարավոր է՝ հակառակ ազդեցությունն ունենար: Կարող էր, իհարկե, բանաստեղծությունների մի գրքույկ նվիրել, հիմա դա ընդունված է, ինչպես իրեն ժամանակին նվիրեցին: Բայց ամենալավ նվերը կլիներ էդելվեյսների փոքրիկ փունջը: Այս կողմերը պիտի անպայման լինի այդ ծաղիկը:

Վերջապես վերկացավ, մոտեցավ աստիճաններին, որ բարձրանա սենյակ: Մի վերջին անգամ աչք ածեց սրահին: Այո, նա տեսավ իր հեռանալը, իսկ ծնողները, որ շարունակ մեջքով էին նստած, այդպես էլ չնկատեցին իր ներկայությունն այս ամառանոցում:

Մտավ սենյակ և անմիջապես զգաց, որ հիմա կխենթանա: Տասին քառորդ էր պակաս: Որքա՞ն պիտի սպասեր: Մինչև սենյակ մտնելն արդեն գիտեր, որ յուրաքանչյուր րոպեն մեկ ժամ է դառնալու, որ սիրտը պիտի պայթի անհամբերությունից: Պատշգամբում, բազրիքին կռթնած ծխեց, մի քիչ հանգստացավ և իր կարծիքով գտավ ամենաճիշտ լուծումը. հենց այսպես, առանց հանվելու, տարածվել մահճակալին ու երազել:

Ձեռքերը գլխի տակ դրած պառկել էր: Գլուխն իսկական մրջնանոց էր, սակայն չզգաց, թե կոպերն ինչպես փակվեցին: Քնի և արթնության միջև էր շարունակ, թվում էր ուր որ է երազի տարածքները պիտի մտնի, և մտնում էր, և տեսնում նրան այնտեղ՝ իրեն կանչելիս, և չէր կարողանում նրան մոտենալ, որովհետև ահասարսուռ անդունդ կար նրանց միջև... Միաժամանակ, գրեթե արթուն, փաստում էր, որ սա երազ է, և այլևս ոչ մի անդունդ, ոչ մի արգելք չի կարող նրանց խանգարել... Մի քանի անգամ այդպես դեգերեց տեսլաշխարհի և իրականության միջև, երբ հանկարծ թղթի շրշյուն լսեց դռան տակից, հետո երեք զուսպ թակոց, իսկ հետո՝ հեռացող ոտնաձայն:

Ընդոստ ելավ տեղից և դռան տակից սահեցրած երկծալ թուղթը տեսավ: Դուռն անմիջապես բացեց. միջանցքում ոչ ոք չկար: Մտավ ներս և բուրավետ թղթի վրա կարդաց ծանոթ ձեռագիրը. «Ամառանոցի ետևը, անտառի եզրին, մի ճերմակ տաղավար կա: Ժամը 23.30 ինձ սպասիր այնտեղ: Յ. Ա.»:

Նկատեց, որ առաջին անգամ է իրեն գրավոր «դու»-ով դիմում: Գրավո՞ր... իսկ բանավոր որքա՞ն էին հասցրել զրուցել... Քանի՞ րոպե, քանի՞ վայրկյան... Իրենց սերն առայժմ թղթի վրա էր... Ասես ռոմանտիկ վեպերի հերոսներ լինեին՝ կյանքից, գարշ իրականությունից այնպե՛ս զարհուրած, որ միայն գրի մեջ կարող էին անաղարտ պահել իրենց զգացմունքները: Եվ, իսկապես, կյանքի բերումով էր այդպես ստացվել:

Ժամացույցը նայեց: Կես ժամ կար, սակայն որոշեց դուրս գալ և այնտեղ սպասել:

Լիալուսին էր: Արծաթադույն լույս էր սփռված ամենուր: Զորս հարկանի ամառանոցի բոլոր պատուհանները սև էին: Կատարյալ լռություն էր, քամու

նշույլ չկար, և թվում էր, թե անգամ խոտի վրայով քայլելիս աղմուկ է բարձրանում: Տաղավարը դժվար չեղավ գտնել: Փայտաշեն մի զրուցարան էր՝ ոզոբահյուս աթոռներով: Երբ փորձեց նստել, այնպիսի ճռճռոց բարձրացավ, որ թվաց, թե ամբողջ ամառանոցը հիմա կարթնանա:

Այստեղ, իհարկե, հարմար է ժամադրության համար, պայմանով, որ զգուշանան աղմուկ անելուց: Տաղավարն ընդարձակ մի շինություն էր՝ տախտակե հատակով, ապահով տանիքով և ընդարձակ պատուհաններով: Հովեկներն այստեղ հավաքվում ժամանակ էին անցկացնում: Սեղաններից մեկին նույնիսկ խաղաթղթեր էին մնացել և մատիտով նշումներ՝ տետրակից պոկված վանդակավոր թղթի վրա:

Ցնցվեց: Տաղավարի պատուհանը թեթև ճռռոցով բացվեց դրսից: Մարմնով մի սարսուռ անցավ: Կտրուկ շրջվեց և ոտքից գլուխ սև մի ուրվագիծ տեսավ պատուհանի բացվածքի մեջ: Նա էր: «Գնացինք», - ասաց նա: Լուսնի լույսը նրա թիկունքից էր, ուստի դեմքը չէր տեսնում, մանավանդ որ գլուխը ծածկել էր սև, ընդարձակ մի շալով, որ իջնում էր ուսերն ի վար: Հետո լսվեց, թե նա ինչպես շրջանցեց տաղավարը և հայտնվեց դռան առջև: Այս անգամ նրա դեմքը լուսավորված էր: Եվ սակայն մի գունատություն կար, որի պատճառը, հավանաբար, լուսնի մոխրագույն շողերն էին: Նորից սարսռաց. նրա առջև կանգնած էր բարձրահասակ, եղեգի պես սլացիկ, ոտքից գլուխ սև մի ուրու, մի հուշկապարիկ, որը կրկնեց. «Գնացինք»: Հետո համոզվելով, որ իրեն հնազանդ հետևում է, քայլեց առաջ:

Ճանապարհն ընդարձակ էր և բարձրանում էր լանջն ի վեր: Լուսնի լույսը բավական էր կողմնորոշվելու համար, սակայն աջից ու ձախից անտառն էր, սև, անթափանց, խորհրդավոր ու սարսափելի: Ո՞ւր է տանում այս աղջիկը, ինչո՞ւ երկու բառով չզգուշացրեց, որպեսզի հանուն ապահովության մի ձեռնափայտ, մի մ՝ահակ վերցներ, չէ որ այս մութ անտառում ամեն ինչ կարող է պատահել:

Նա քայլում էր թեթև, ինքնավստահ: Երևում էր, որ ճանապարհը լավ գիտի: Ընդամենը երկու անգամ ետ նայեց: Առաջին անգամ հարցրեց. «Զհոգնեցի՞ր»: Իսկ մի երկու բոպե անց սրտապնդեց. «Քիչ մնաց, արդեն հասնում ենք»: Հետո, մի քանի վայրկյան կանգ առավ, շալը հանեց գլխից և մազերի մի ջրվեժ իջեցրեց ուսերն ի վար: «Քնից առաջ հյուսքերս միշտ քանդում եմ, մայրիկս ասում է, որ պետք չէ մազերն այդպես կապել ու կաշկանդել, որ գլխացավեր կլինեն...»: «Քնից առա՞ջ...», - զարմացած հարցրեց Ռուբենը: «Այո, քնից առաջ, չէ որ ես հիմա պիտի անկողնում լինեի»:

Քիչ հետո անտառը վերջացավ, և նրանք հայտնվեցին ընդարձակ մի տափարակի վրա: Ասես հսկա դանակով լեռան լանջից մի կտոր էին հանել՝ ստեղծելով իդեալական հարթությամբ մի տարածք և ուղղահայաց մի ժայռապատ, որ դարերի ընթացքում մամռակալել ու կանաչել էր:

Տեսարանն, իսկապես, հեքիաթային էր: Շունչը կտրվել էր հիացմունքից: Տափարակի եզրին, ձախ կողմից, քարե մի հսկա խաչելություն էր կանգնեցված՝ բարձրությունը մոտ երեք մետր: Դա գրանիտե զանգվածեղ մի խաչ էր՝

տաշված քարի ամբողջական կտորից: Խաչին ամրացված էր փայտից տաշված Հիսուսի արձանը՝ բնական չափերով, հավանաբար ինքնուս քանդակագործի մի աշխատանք՝ միամիտ, բայց վավերական: Մարդու Որդին գլուխը թեքել էր մի կողմ և ասես պատրաստվում էր վերջին հայացքն ուղղել Ամենաբարձրյալին: Նրա դեմքին այլևս տառապանք չկար, այլ երանություն էր, ասես իր մարդեղեն-ության չարչարանքներից հետո ուղևորվում էր դեպի հավերժություն:

Հմայված կանգնել էին Խաչելության առջև: Հետո ծնկի իջան, և անլսելի հրամանին ենթակա, խաչակնքեցին, այնուհետև, իրար ձեռք բռնած ոտքի կանգնելով, արդեն մեկ ուրիշ հրամանին ենթակա, շուրթերը մոտեցրին իրար: Դա դեռ համբույր չէր, նրանք առայժմ կանգնել էին դեմ դիմաց՝ դեմքերն իրար բերած, և շրթունքները, որ մի պահ դտել էին իրար, միմյանց կորցրին: Ձեռքով նրա դեմքն էր շոյում, ճակատը համբուրում, այտերը, երկյուղածությամբ իջնում մինչև պարանոցը: Հետո նա էր խլում նախաձեռնությունը, համբույրներ դրոշմում աչքերին... Ասես անվարժ լողորդներ լինեին, որ վախենում էին միանգամից ջուրը մտնել, ասես մի անդունդի վրայով պիտի ցատկեին և վարանում էին, թափ առնում, մոտենում, հետո ետ քաշվում: Խաչելությունը նրանց զդացմունքներին զարմանալի մի ողջամտություն էր հաղորդել, այնուհանդերձ, ամեն ինչ տանում էր դեպի անբիծ ու անարատ համբույրը, որ նրանց ի վերջո միացրեց հսկայական Խաչի հովանու ներքո:

Նրանք, ժամանակ առ ժամանակ, ընդհատում էին այդ արդար ու վաստակած համբույրը, լուսնի լույսով նայում իրար, հետո նորից շարունակում: Որքա՞ն ժամանակ էր անցել: Հավանաբար կես ժամ: Սակայն նրանք ոչ մի բառ չէին արտասանել: Առաջինը նա խախտեց լռությունը. «Արդեն երկու շաբաթ է՝ ամեն օր գալիս եմ այստեղ, ծաղկեփունջ բերում և մոմ վառում... Եվ դիտե՞ս ինչ խնդրեցի Իրենից... Ասացի՝ այնպես արա, որ առաջին անգամ այստեղ հանդիպենք»:

- Եվ Նա կատարեց քո ցանկությունը...

- Ես Նրան դեռևս Լոզանում էի խնդրել: .

- Արդեն գիտեի՞ր, որ այստեղ պիտի հանդիպենք:

- Ոչ, - ժպտաց նա: - Ես Նրան խնդրեցի այնպես անի, որ մենք բոլորից հեռու, բնության մեջ, անմարդաբնակ կղզում հանդիպենք և ընդմիշտ միասին ապրենք այնտեղ:

- Բայց ինչո՞ւ... Այո, հրաշալի է ապրել բնության մեջ, բայց ինչո՞ւ ես ուզում հեռանալ մարդկանցից:

- Մարդիկ չար են, նախանձ...

Նստած էին Խաչելության տակ, քարե ընդարձակ ու հարթ պատվանդանին: Զարմացած նայեց աղջկա դեմքին: Այնտեղ տառապանք չկար և չէր կարող լինել, սակայն ապշեցնող կենտրոնացում նկատեց: Ամուր սեղմեց նրան կրծքին և մազերը շոյելով ասաց.

- Մարդիկ այնպես են, ինչպես կան, պարզապես մենք ենք ուրիշ... Ինչպե՞ս ասեմ... Երբ սիրում ես, ասես փոխվում ես, առօրյան, շրջապատդ, դադարում ես տեսնել, կյանքն ուրիշ արժեք է ստանում:

- Սակայն ինչո՞վ ենք խանգարում նրանց, ինչո՞ւ են այդպես չարանում մեր դեմ:

- Ոչ, սիրելիս, բոլորը չար չեն, բարի մարդիկ այնքա՜ն շատ են... Պարզապես ի՞նչ է կատարվում... Ընդհանուր շարքից բավական է մեկը դուրս գա, անմիջապես նկատում են և պահանջում, որ բոլորին հավասարվի... Կամ, ասենք, մեկը, օրը ցերեկով, բոլորի աչքի առջև մերկանա... Մենք այդ օրինազանցներն ենք, այդ մերկերը:

- Ուրեմն, թող մեզ հանգիստ թողնեն:

- Ձեն կարող, քանզի մենք օրենքից դուրս ենք, իսկ հասարակությունն ուզում է ամեն ինչ իր շրջանակների մեջ պահել, անգամ սերը:

- Մի՞թե սերն ապօրինի բան է:

- Ընդհակառակը, բոլորը երազում են սիրո մասին, սակայն սերը փաստորեն արտաքսված է հասարակությունից... Նա դարձել է մեր օրերի խորթ զավակը... Դա նման է այն բանին, որ ծանր հիվանդը ոչնչացնի այն միակ դեղը, որի շնորհիվ պիտի փրկվեր..., - Հետո ձեռքը բարձրացրեց վեր. - Ահա, նա սեր էր քարոզում, բայց խաչին արժանացավ...

- Ուրեմն, հիվանդը պիտի մահանա՞ շուտով...

- Գուցե չմահանա, բայց նրա կյանքը տևական ու անվերջ հոդեվարք կդառնա:

- Նշանակում է՝ ճիշտ արեցինք, որ հանդիպեցինք այստեղ... Առաջին անգամ...

- Օ՜, սա հանճարեղ որոշում էր:

- Ես հիմա հավատում եմ, որ Նա այնպես արեց, որ իրար տեսնենք Լոզանում, որպեսզի կարողանանք բոլորից գաղտնի նամակներ փոխանցել...

- Եվ Նա չուզեց, որ մենք այնտեղ՝ քաղաքում, մարդկանց մեջ հանդիպենք, քանզի ի սկզբանե, իրենց հայացքներով, իրենց բարի՜ խորհուրդներով, իրենց կպչուն միջամտությամբ պիտի արատավորեին մեր սերը:

- Եվ Նա մեզ բերեց այստեղ, որպեսզի ուղղակի իրենից ստանանք մեր սերը՝ մաքուր, չպղծված: Եվ այդպես պահենք ամբողջ կյանքում: Այն սերը, որն ուզեց առատորեն բաշխել բոլորին, բայց չար ու նախանձ մարդիկ խաչեցին Նրան... Հիմա Նա մեզ է հանձնում այդ զգացմունքը... Պատկերացնո՞ւմ ես, թե դա ինչ վստահություն է... Մենք Նրա ընտրյալներն ենք...

- Բայց գիտե՞ս, թե որքան դժվար է լինելու անաղարտ պահել այդ սերը, որովհետև վաղն այստեղից ստիպված ենք լինելու իջնել ներքև, ապրել մարդկանց մեջ, հաշվի նստել հասարակության տխմար օրենքների և անհեթեթ պայմանականությունների հետ... Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ դաժան փորձություն է սպասվում մեզ... Պատրա՞ստ ես դրան, այդքան ուժ կունենա՞նք մեր սերն անաղարտ պահելու մինչև վերջ:

- Այդքան ուժ կունենանք... Մենք արդեն ուժեղ ենք...

- Ուրեմն երդվենք հիմա այստեղ, այս խաչելության առջև... Հանդիսավորությամբ երդվենք, որ չնայած ամեն ինչին, չնայած բոլոր փորձություններին, մենք միշտ կլինենք միասին... Մենք կսիրենք իրար մինչև մահ և անգամ մահից հետո:

- ...Մենք կսիրենք իրար մինչև վերջ, մինչև մահ և անգամ մահից հետո:

- Երդվո՛ւմ եմ:

- Երդվո՛ւմ եմ:

Նրանք ծնրադրած, լուռ, մի երկու բոպե մնացին անշարժ խաչելության ներքո: Հետո վերկացան և երկարատև համբույրով վավերացրին իրենց երդումը, իսկ նա ձեռքի պայուսակից մի փոքրիկ շիշ հանեց՝ ճերմակ հեղուկով լի:

- Դա ի՞նչ է:

- Օղի, - պատասխանեց նա: - Այստեղ գնեցի, հատուկ այսօրվա համար, որպեսզի նշենք մեր առաջին հանդիպումը:

Ռուբենը սրտանց ծիծաղեց.

- Ի՜նչ հոյակապ աղջիկ ես դու... Իսկ երբևէ օղի խմե՞լ ես... Հավանաբար սիրում ես կամ կարծել ես, թե ես եմ սիրում:

- Օ, ոչ, կյանքումս ընդամենը երկու անգամ եմ խմել... Բերանս այրեց:

- Հապա ինչո՞ւ հատկապես օղի, կարող էիր գինի վերցնել կամ լիկյոր...

- Այն շիշը շատ հավանեցի...

Մի փոքրիկ և գեղեցիկ շիշ էր՝ խնամքով և առատորեն զմռսված, որի պարունակությունն ընդամենը երկու-երեք գավաթ լիներ, ուստի հաղիվ թե հետաքրքրեր խմիչքի հանդեպ հակում ունեցող անձին, այլ կարող էր գնվել միայն որպես հուշանվեր:

Նա հիմնովին էր պատրաստվել: Հետը բերել էր նաև գրչահատ դանակ և մի նուրբ խցանահան: Այդ բոլորը շշի հետ հանձնեց՝ հատուկ խնդրելով.

- Խցանը զգույշ կհանես, հետո պետք է գալու:

Ի՞նչ էր մտադրել այս աղջիկը, որ առաջին իսկ հանդիպումից զարմացրեց իր կազմակերպվածությամբ և, ինչո՞ւ ոչ, նաև խելքով, իր նրբին զգայնությամբ, միաժամանակ զգացմունքները զսպելու, բանական հունի մեջ դնելու՝ այդ տարիքի համար անհավատալի կարողությամբ: Եվ որքա՜ն հեռատես է:

- Շիշը պիտի հետ տանե՞ս, - կատակով հարցրեց Ռուբենը:

- Ընդհակառակը, պիտի թողնեմ այստեղ... Հա, խնդրում եմ այդ զմուռսն էլ գետին չթափես:

Նա մի թուղթ հանեց, խցանը և զմուռսի կտորները խնամքով հավաքեց վրան, հետո շիշը մեկնեց Ռուբենին:

- Առաջինը դու խմիր:

Ընդամենը մի կում արեց: Թունդ օղի էր: Ինչպե՞ս է խմելու այս հրդեհը: Պետք է թեթևացնել նրա բեռը: Եվս մի կում արեց, հետո՝ երրորդը:

- Ամբողջը չխմե՛ս, ինձ էլ թող, - բողոքեց նա՝ շիշը խլելով: Հետո մի պահ կենտրոնացավ և միանգամից բավական մեծ կում արեց:

Ռուբենին թվաց, թե հիմա շնչահեղձ կլինի: Սակայն ուշքի եկավ և երկրորդ կումն արեց: Դեմքն անմիջապես շառագունեց, աչքերը լայն բացվեցին: Շիշը դրեց պատվանդանին և բառացիորեն հարձակվեց տղայի վրա, շրթունքներով խլեց նրան: Նրա տիրապետումն ասես անհետացավ օղու երկու կումի հետ, սակայն քիչ հետո զգաստացավ, շիշը մեկնեց տղային, հրամայելով.

- Վերջացրո՛ւ... Մեր սիրո կենացը խմիր:

- Իսկ դու չես խմելո՞ւ մեր սիրո կենացը:

- Արդեն խմեցի... Լուռ... Մտքումս:

- Ինչո՞ւ բարձր չասացիր, որ ես էլ լսեմ...

- Գաղտնիք չունեմ քեզնից թաքցնելու: Նույն բաները կրկնեցի՝ միասին մինչ ի մահ և անգամ մահից հետո:

Սպասեց մինչև խմի վերջացնի, հետո շիշն առավ, շրջված պահեց մինչև վերջին կաթիլները թափվեն, և դրեց մի կողմ: Այնուհետև պայուսակից թուղթ ու մատիտ հանեց և տվեց Ռուբենին:

- Այս թղթի վրա մեր հանդիսավոր երդումը կգրենք, կստորագրենք և կդնենք շշի մեջ:

- Հետո՞:

- Հետո այդ շիշը խորը կթաղենք Խաչելության տակ, որպես հավերժ վկայությունը մեր սիրո:

Լուսնի լույսով Ռուբենը գրեց քիչ առաջ միասին արտասանված երդումը և ստորագրեց: Նա վերցրեց, ինքն էլ ստորագրեց և ամիս-ամսաթիվ դրեց. «17 հուլիսի, 1907 թ., Շամպերի»: Թուղթը մինչև շշի մեջ դնելը, մկրատ հանեց պայուսակից, իր և Ռուբենի մազերից փոքրիկ փնջեր կտրեց, սև ու ցորենագույնը խառնեց իրար, փաթաթեց երդումի թղթով և սահեցրեց շշի մեջ: Խնամքով հանված խցանը նորից տեղը դրվեց: Վերջապես զմուռսը հալեցրեցին և փակեցին շշի բերանը: Նա գտավ, որ այդքանը քիչ է, ուստի մի մոմ հանեց և զմուռսի վրայից լրացուցիչ շերտեր ավելացրեց:

Փոս փորելը դժվար չեղավ: Հողը խոնավ էր ու փափուկ: Երկուսի ձեռքերն էլ հողոտվել էին: Զթողեց, որ Ռուբենը մենակ անի այդ դործը, պնդեց, որ ինքն էլ մասնակցի: «Մեր սերն է, երկուսով պիտի անենք», - ասաց նա:

- Այս ամենի մասին դու արդեն մտածե՞լ էիր Լոզանում, - հարցրեց Ռուբենը:

- Իհարկե, ոչ... Բայց երբ առաջին անգամ բարձրացա այստեղ, ես ապշած էի այս գեղեցկությամբ... Նույնիսկ չէի ուզում իջնել ներքև... Ցերեկով, լույսի տակ, գիտե՞ս ինչ գեղեցիկ է...

- Հիմա էլ գեղեցիկ է:

- Հիմա ուրիշ է, խորհրդավոր... Մի խոսքով, հենց այդ օրը որոշեցի, որ մեր առաջին հանդիպումը պետք է այստեղ լինի... Չէ որ գիտեի, որ անպայման կգաս: Իսկ մնացած բաներն այսօր վերցրի, երբ տեսա, որ արդեն եկել ես...

Հետո իր ձեռքերին նայեց, Ռուբենի ձեռքերին և ավելացրեց.

- Այնտեղ աղբյուր կա, գնանք լվացվենք:

Հարթ ու ողորկ ժայռի տակից աղբյուր էր բխում: Սառնորակ ջուրն աշխուժացրեց նրանց, կարծես օրը նոր պիտի սկսվեր: Ռուբենը սոթտեց թևքերը, օձիքը բացեց և դեմքն ու պարանոցը լվաց պաղ ջրով: Նա մոտեցավ, սև շալը հանեց և սկսեց խնամքով սրբել, ասես մայր լիներ, որն իր երեխային լողացնելուց հետո չորացնում է: Հետո շալը գցեց նրա գլխին, ուսերին, ասես համբույրը թաքցնելու համար լուսնի կլոր ու հետաքրքրասեր հայացքից: Եվ դուցե պատճառ ուներ այդպես անելու, քանզի նրա շուրթերը սահեցին իջան դեպի

պարանոցը, այնուհետև շապկի կոճակները լրիվ բացեց և առնական իրանը ծածկեց խենթ համբույրներով: Մարմնի բույրն արբեցրել էր նրան, ուզում էր ավելի խորը շնչել, ավելին ճանաչել՝ մինչև ամենահետին գաղտնիքները՝ նույն ցանկությունն առաջացնելով դիմացինի մեջ: Խաչելության սրբազան երկյուղով առաջնորդված չափավոր համբույրները վերջապես մտնում էին անխուսափելի հունի մեջ, և ոչինչ չէր կարող դրանք զսպել...

Նա գլուխը հանեց շալի տակից և, Ռուբենի ձեռքը բռնելով, ասաց.

- Արի այստեղ:

Եվ նրան առաջնորդեց դեպի խորքում՝ ժայռապատին կոթնած մարագը, որտեղ գյուղացիք, մերձակա արոտավայրերից ու դաշտերից հավաքած խոտն էին պահում: Բարեբախտաբար լրիվ լցված չէր, իսկ հատակին չոր խոտի մի հաստ շերտ կար: Լուսնի լույսը պատուհանից ընկնում էր ուղղակի այդտեղ, ասես ցույց տալով, թե ուր պետք է տեղավորվեն:

Նրանք կանգնել էին, ապշած, այս անհասկանալի պարգևից: Խոտի բուրմունքն այստեղ առավել ուժգին էր և զգլխիչ, և նրանք, որ տեղական թունդ օղուց չէին հարբել, հիմա ասես միանգամից գինովացան և հայտնվեցին եթերային մի աշխարհում: Աղջիկը, որ քիչ առաջ, բնության անդիմադրելի կանչով իր իրավունքն էր պահանջում, հիմա վարանոտ կանգնել էր, փաթաթվել շալի մեջ, ծայրերն իրար բերել և երկու ձեռքով ամուր բռնել:

Տղան զգուշորեն վերցրեց այդ շալը նրա ուսերից և փռեց խոտի վրա: Լուսինն ասես միանգամից մերկացրեց աղջկա պարանոցը և հասուն կրծքերը, և նրանք երկուսով միաժամանակ, այս հրաշալի բնության մեջ, մարդկությունից հեռու ճանաչեցին իսկական սերը: Նրանցից մեկն անաղարտ սիրո էքստազի մեջ կարծեց, թե սերն այսուհետ ընդմիշտ այս հրճվանքն է պարգևելու, մյուսը փաստեց, որ սա է իսկական և առաջին սերը:

* * *

Գնդապետ Ֆրանց Ապելը գոհ էր դեպքերի ընթացքից: Նրա մտավախությունները բարեբախտաբար չարդարացան և նա յուրատեսակ երախտագիտությամբ լցվեց հայ ուսանողի հանդեպ, որը խոստացել էր (անշուշտ, ոչ իրեն) հուլիսի մեկից լինել Շամպերիում, բայց ահա չկա, չնայած երկու շաբաթից ավելին էր անցել: Շամպերին, իհարկե, այս օրերին մարդաշատ էր, բայց եթե եկած լիներ, անպայման կնկատեր: Ինքը և կինը, որին լուսանկարն արդեն ցույց էր տվել: Այդպիսի դեմքն անկարելի էր չնկատել: «Ափսո՜ս, գեղեցիկ է այս տղան», - հոգոց հանելով նկատեց Ֆրաու Ապելը: «Ինչո՞ւ ափսոս», - հարցրեց նա: «Որովհետև, եթե գեղեցիկ չլիներ, Ցաննին այդպես չէր սիրահարվի», - բացատրեց կինը: Այս կանացի տրամաբանությունը մարդու կարող է խելքից հանել...

Ինքն անձամբ, տղամարդու գեղեցկությունից բան չէր հասկանում: Համենայն դեպս, միջերկրականյան այդ տիպերն իր սրտովը չէին: Ոչ, ոչ, Մինայի ցավալի արկածը չէր պատճառը: Հենց սկզբից չէր սիրել այդ արևելցիներին:

Ինչ որ է, հիմա անչափ գոհ էր, որ չեկավ, չերևաց այս կողմերում, որ

չպղտորեց իր հանգիստը, թե ոչ, տուժողն իր խեղճ աղջիկն էր լինելու. կամ պիտի շարունակ սենյակում պահեր, ինչը շատ անարդար և դաժան կլիներ տիկ. Սպիեսի բանտային պայմաններից հետո, կամ պիտի շարունակ կողքից չհեռանար, ինչը խիստ հոգնեցուցիչ կլիներ բոլորի համար: Հիմա Յաննին այստեղ նոր ընկերուհիներ է գտել և նրանց հետ հաճելի ժամանակ է անցկացնում:

Նա իսկապես համոզված էր, որ հայ ուսանողը Շամպերիում չէ: Մեկ շաբաթ առաջ իրենց ամառանոցի հանձնակատարին տասը ֆրանկ տվեց՝ հայ ուսանողի անուն ազգանունի և լուսանկարի հետ և պատվիրեց ստուգել, թե այդ անձնավորությունն արդյոք սենյակ չի վարձել Շամպերիի ամառանոցներից մեկում: Նույն օրը երեկոյան հանձնակատարը հայտնեց, թե նա այս կողմերում ընդհանրապես չի երևացել: Գնդապետը հանդիստ շունչ քաշեց և որոշեց առաջիկա օրերին մտածել միայն հանգստի մասին, իսկ տղան, իր ամենօրյա վազվզոցի մեջ, իսպառ մոռացավ այդ անունը և չիմացավ, թե ինչպես նշված անձը, մի քանի օր հետո սենյակ վարձեց հենց իրենց քթի տակ:

Մի խոսքով, գոհ էր դեպքերի ընթացքից և հատկապես Յաննիի տրամադրությունից, որ գնալով ավելի էր լավանում: Խեղճ աղջիկը վերջապես ազատ շունչ էր քաշում: Նույնիսկ խղճի խայթ զգաց, որ նամակ էր գրել տիկ. Սպիեսին՝ խնդրելով խստացնել հսկողությունը: Բացի այդ, ծնողներին էր կարոտել... Եվ վերջապես այս մաքուր օդը, այս հեքիաթային բնությունը, որը կարող է ամենասև մտքերն անգամ ցրել: Այո, հատկապես այս լեռնային օդը, որը վերջապես բացեց նրա ախորժակը: Առաջին օրերը, երբ եկան այստեղ, ոչինչ չէր ուտում: Հիմա մայրը գոհ էր, քանի որ սկսել էր ախորժակով ուտել, նույնիսկ այն բաները, որ չէր սիրում:

Միայն մի բանից էր դժգոհ. Յաննիի ահավոր ընթերցասիրությունը: Այսինքն՝ առաջ էլ ընթերցասեր էր, գիրքը պարզապես խլում էին ձեռքից: Իսկ հիմա արդեն չափ ու սահմանը կորցրել է, գիշերներ է լուսացնում գրքերի պատճառով: Առիթից օգտվում է, որ առանձին սենյակ ունի: Ասում է. «Ես ձեզ չեմ խանգարում, դուք հանգիստ քնեք»: Մի երկու անգամ արթնացավ և դռան արանքից տեսավ, որ լույսը վառվում է: Ժամը երկուսն էր, և այդ ժամին դեռ շարունակում էր կարդալ:

Սակայն անցած գիշերվա պատահարը համբերությունից հանեց նրան: Արդեն սկսում էր լուսանալ, երբ արթնացավ: Առավոտյան վեցը կլիներ, թռչունները սոսկալի ճռվողյուն էին դրել: Դռան կողմը նայեց և վրդովմունքով նկատեց, որ լույսը դեռ վառվում է: «Չէ, չեղավ այս աղջիկն իրեն սպանում է... Այդ հայից հեռացրինք, որպեսզի գրքերի զոհը դառնա՞»: Հետո մտածեց, թե հավանաբար քնով է ընկել և մոռացել լույսը հանգցնել: Զուզեց կնոջն արթնացնել: Զգույշ վերկացավ, որպեսզի լույսը հանգցնի: Դուռը բացեց և զարմանքից քարացավ. բարձի վրա կիսաբաց գիրքն էր, վերմակը մի կողմ էր ընկած, սակայն անկողինը դատարկ էր, Յաննին չկար:

Անհանգիստ սրտով դուրս եկավ սենյակից և աղջկան տեսավ, որ միջանցքի ծայրից հանդիստ գալիս էր: «Ո՞ւր էիր գնացել», - մոտենալուն պես հարցրեց նրան: «Գլուխս ցավում էր, - անվրդով պատասխանեց նա: - Դուրս

եկա մի քիչ զբոսնեմ»: «Արդյոք չես կարծո՞ւմ, որ այս ժամին, քո տարիքի աղջկա համար զբոսնելը շատ պատշաճ չէ, եթե չասենք վտանգավոր», - խստորեն ասաց նա: «Հայրիկ, բայց ոչ ոք չկա այնտեղ, հիմա ավելի անվտանգ է, քան ցերեկը, և այնպե՛ս գեղեցիկ...»:

Նույն օրը, կնոջ հետ խորհրդակցելով, որոշեցին խստորեն արգելել գիշերային ընթերցանությունները: «Աչքերիդ տակը սևացել է, աղջիկս», - ասաց մայրը: Անսպասելին այն էր, որ Յաննին լուռ ու մունջ հնազանդվեց և սենյակում եղած բոլոր գրքերը տարավ հանձնեց գրադարան, մոտը թողնելով միայն Հայնեի հատորը, որից երբեք չէր բաժանվում:

Բայց, ինչպես երևում էր, մտահոգություններից իսպառ չէր թոթափվելու: Կեսօրին մի նամակ ստացավ: Կլաուսն էր ուղարկել: Բավական մանրամասն տեղեկություններ կային հայ ուսանողի մասին, անգամ հայրական տան հասցեն էր գրել և ընկերների անունները: Ըստ նամակի, կարելի էր կարծել, թե դրական անձնավորություն է և կյանքում անպայման մի բանի կհասնի: Նրա աշխատասիրության մասին էր խոսվում, նշվում էր, որ անընդմեջ լավագույն ուսանողն է համարվել: Միաժամանակ գրում էր, որ թուլություն ունի խմիչքի և կանանց հանդեպ և որ սկզբից Շվեյցարիա է եկել ոչ այնքան ուսումնառության նպատակով, որքան բուժելու մի հիվանդություն, որի բնույթն առայժմ անհայտ է:

Ի՞նչ հիվանդության մասին է խոսքը: Ամբողջ աշխարհից Շվեյցարիա են գալիս միայն մեկ հիվանդություն բուժելու. թոքախտը: Սակայն Կլաուսը մեկ տարի նրա հետ մի տան մեջ է ապրել, ամեն օր հանդիպել նրան, ուրեմն պիտի որևէ ախտանշան նկատեր, մանավանդ որ ինքն էլ բժշկականի ուսանող է: Իսկ գուցե ուրիշ հիվանդություն նկատի ունի, չէ որ գրում է, թե կնամոլ է...

Որոշեց անմիջապես պատասխան գրել Կլաուսին, շնորհակալություն հայտնել և հատկապես խնդրել, որ իր ուշադրությունը սևեռի միայն հիվանդության վրա և անպայման պարզի, թե ինչ բնույթի է, և եթե դա կապված է ծախսերի հետ, թող չքաշվի, թող գրի, թե որքան է պետք:

* * *

Հայ իրականությունը, որ կարծես իսպառ ջնջվել էր սիրո ամիսների ընթացքում (եթե չհաշվենք կրթաթոշակի տխուր պատմությունը), պիտի նրա կյանքի մեջ ներխուժեր անսպասելի և դարձյալ իր ողբերգական ու արյունալի կերպարանքով: Երեկոյան դժվարին վիրահատությունից հետո երբ մտավ բժիշկների սենյակ, որպեսզի հանգստանա, հիվանդանոցով մեկ լուր տարածվեց, թե «Բո-Ռիվաժ» հյուրանոցում, այսօր, անհայտ չարագործները, թե ռուս հեղափոխականները սպանել են կովկասցի մի մեծահարուստի, որի դիակը քիչ առաջ, ոստիկանները բերել են դիահերձարան:

Սպանվածի դիակը՝ շարժասեղանին դրված, ճերմակ սավանով ծածկված (որի վրա, երեք տեղ, արդեն արյան բծեր էին հայտնվել) գտնվում էր ընդհանուր սրահում: Ոստիկանության ներկայացուցիչը ժերարի հետ վերջացնում էին գրանցումները: Վերջինս, Ռուբենին տեսնելով, ասաց.

- Երևի ճիշտ ժամանակին եկար, այս ողբացյալը կարծես թե քո հայրենակիցն է, - և ցույց տվեց սպանվածի փաստաթղթերը, որ դրված էին սեղանին:

Շքեղ հյուրանոցում սպանվածն իսկապես որ հայ էր. Djahanguire Chahamirian, Ջհանգիր Շահամիրյան... Անմիջապես հիշեց այս անուն-ազգանունը, որը ոչ միայն «Դրօշակի» էջերում էր կարդացել, այլև բազմիցս հիշատակվել հայ ուսանողների մասնավոր զրույցներում, «Արմենիա»-ի նիստերում. ազգությամբ հայ հայատյաց մի հրեշ, դավաճան, որը հայ-թաթարական բախումների օրերին ոչ միայն հրաժարվել էր դրամական իր նպաստը բերել հայերի ինքնապաշտպանական ջոկատներին, այլև հայ հեղափոխականներին ոստիկանությանն էր մատնել և համագործակցել թաթար բեգերի հետ: Նրա դեմ արդեն մեկ անգամ մահափորձ էր արվել Մոսկվայում, բայց անհաջող, ավելին, երկու հայ երիտասարդներ ընկել էին ոստիկանության ձեռքը և աքսորվել: Տեսնելով, որ հետապնդումը շարունակվում է, դավաճանը փորձել էր թաքնվել Եվրոպայում, սակայն վրիժառու ձեռքն այստեղ կարողացել էր պատժել նրան:

Ռուբենն այս ամենը հարկ համարեց պատմել Ժերարին: Վերջինս մեծ հետաքրքրությամբ էր լսում:

- Ես մի բան չհասկացա, - ասաց նա: - Ինչպե՞ս կարող է պատահել, որ մի երկրում ապրող տարբեր դավանանքների քաղաքացիներ, փաստորեն երկու տարի անդադար պատերազմ մղեն իրար դեմ... Կառավարությունն ինչպե՞ս է թույլ տալիս:

- Հենց կառավարությունն է կազմակերպել այդ բախումը..., - պատասխանեց Ռուբենը:

- Ինչպե՞ս...

- Մի կողմից զինելով ու գրգռելով թաթարներին, մյուս կողմից զինաթափելով հայերին: Ահա ինչու հեղափոխականները փող էին հավաքում հայ մեծահարուստներից, որպեսզի թաթարների վայրագություններից պաշտպանվեն:

- Հը՛մ... Ստոր և հին քաղաքականություն է, - եզրակացրեց Ժերարը: - Բաժանիր, որ տիրես:

- Ձեմ կարծում... Հայերն առանց այն էլ հնազանդ են ցարին և հավատարիմ: Արդեն բազմիցս ապացուցել են իրենց նվիրվածությունը: Անհավատարիմը և ուխտադրուժը թաթարներն են, որոնք ատում են քրիստոնյա ցարին և կարոտով սպասում իրենց արյունակից և դավանակից Թուրք եղբայրներին:

- Եվ նա՝ ցարը, չգիտի՞ այդ մասին:

- Պետք է որ իմանա:

- Հապա ինչո՞ւ է այդպես հալածում հավատարիմներին և հովանավորում ուխտադրուժներին... Եվ այդպես ստորաբար:

- Սա կոչվում է բյուղանդական քաղաքականություն, երբ կարծում են, թե խորամանկ մի հնարքով կարող են սիրաշահել անհավատարիմին՝ թույլ տալով, որ նա մի քիչ կոտորի հավատարիմներին... Ավա՛ղ, տխմար և ինքնասպան քաղաքականություն... Սակայն ի՞նչ ասաց ոստիկանը, ինչպե՞ս են սպանել, ովքե՞ր են և արդյոք բռնե՞լ են նրանց:

- Ոստիկանը շատ բան չգիտեր... Ենթադրում են, որ երեք հոգի են եղել...

Երկուսն, իբր ներքևում սուրճ խմելով սպասել են, իսկ երրորդը վերևում, հյուրանոցի համարում, սպանել և անհետացել է, նույնիսկ չգիտեն, թե ինչպես... առայժմ ոչ մի հետք չկա:

- Հապա այն երկո՞ւսը:

- Այդ երկուսն էլ չկան... Սակայն եթե սա իսկապես քո ներկայացրած մարդն է, ապա... անկեղծ ասած, չնայած կտրականապես դեմ եմ նման հաշվեհարդարներին... բայց շատ չէի ուզի, որ բռնեն...

Ռուբենը ժպտալով նայեց նրան և ասաց.

- Ես նույնպես... Եվ կարծում եմ, որ այդպես էլ կլինի:

Երեկոյան վիրահատությունն ուշ վերջացավ, և նա գիշերեց հիվանդանոցում: Իսկ առավոտյան ուրիշ անակնկալ էր սպասվում: Նրան և բժշկության մի թեկնածուի ժամը յոթին արթնացրին, հայտնելով, թե ծանր վիրավոր են բերել՝ գիտակցությունը կորցրած: Ասացին, թե գտել են անտառում, ծառի տակ ընկած: Առավոտյան շուկա եկող գյուղացիներն են նկատել և իրենց սայլակով հասցրել մինչև հիվանդանոց: Վիրավորի գրպանում բուլղարական անձնագիր է եղել:

Վերքը ծանր էր, բայց ոչ վտանգավոր: Ձախ ուսին, ուղղակի անրակի տակ, հրազենի թափանցող վերքը կարմրին էր տալիս: Դեմքը գունատ էր, երևում էր, որ բավական արյուն է կորցրել:

Հիվանդանոցում այդ ժամին բժիշկ չկար: Հապաղել չէր կարելի, մանավանդ վիրահատության կարիք չէր զգացվում: Ուստի անմիջապես վերքը մաքրեցին մակարդված արյունից, ախտահանեցին և վիրակապելով պառկեցրին առանձին սենյակում, այնտեղ, ուր ոստիկանական քննության ենթակա հիվանդներին էին պառկեցնում:

Հաջորդ օրը միայն հիշեց այդ տարօրինակ բուլղարացու մասին: Բուժքույրն ասաց, թե անհայտ չարագործներ են հարձակվել, որպեսզի կողոպտեն, սակայն դիմադրության հանդիպելով, կրակել են, մոտը եղած ամբողջ դրամն ու արժեքավոր իրերը վերցրել ու անհետացել:

Մինչև վիրահատություն բավական ժամանակ կար: Որոշեց այցելել հիվանդին: Վերջինս արդեն ուշքի էր եկել և հարցական նայեց նրան:

- Ձեր բախտը բերել է, պարոն, - դիմեց նա բուլղարացուն: - Դուք պարզապես հրաշքով եք փրկվել: Մի քանի օր հետո կարծում եմ ոտքի կկանգնեք:

- Շնորհակալ եմ, դոկտոր, - պատասխանեց նա - Երեկ կարծեմ այստեղ էիք...

- Այո, այստեղ էի, - զարմացած հաստատեց Ռուբենը: - Ինչպե՞ս ճանաչեցիք ինձ, դուք անգիտակից վիճակում էիք:

- Երբ իմ վերքն էիք լվանում, մի պահ ուշքի եկա... Ձեզ տեսա, հետո, հավանաբար, գիտակցությունս նորից կորցրել եմ, որովհետև ուրիշ ոչինչ չեմ հիշում...

- Սակայն միայն ես չէի, երեք հոգով էինք ձեզ խնամում, ինչո՞ւ միայն ինձ հիշեցիք:

- Չգիտեմ, դոկտոր, հավանաբար մի ակնթարթ է տևել և այդ պահին միայն ձեզ եմ տեսել...

Հետո հայացքը հառեց «Դրօշակի» վերջին համարներին, որ Ռուբենը հետը վերցրել էր՝ ազատ ժամերին կարդալու: Բուլղարացու դեմքին տարօրինակ ժպիտ փայլեց:

- Այդ թերթերը դո՞ւք եք կարդում, - հարցրեց նա անթերի ֆրանսերենով:

- Այո:

- Ուրեմն, հա՞յ եք:

- Այո, բայց ի՞նչ իմացաք, որ սա հայերեն է:

Բուլղարացին խորհրդավոր ժպիտով պատասխանեց.

- Ես բազմաթիվ հայ բարեկամներ ունեի Բուլղարիայում... Այդ թերթն այնտեղ հաճախ եմ տեսել:

Հետո, նորից ժպտալով, ավելացրեց.

- Թույլ տվեք ներկայանալ. Իվան Ստոյանով:

- Շատ ուրախ եմ, Ռուբեն Զիլինկիրյան:

Բուլղարացու դեմքը երկարեց:

- Ուրեմն, դուք Ռուբեն Սևա՞կն եք...

- Այո, ես եմ, որ կամ... Բայց որտեղի՞ց գիտեք ինձ, այն էլ ծածկանունով... Դարձյա՞լ ձեր հայ ընկերներից եք լսել:

- Այո, հայ ընկերներից, բայց ոչ Բուլղարիայում, այլ այստեղ... Այսինքն՝ մինչև այստեղ գալն արդեն հասցրել էի մի երկու բան կարդալ ձեզնից:

- Բայց ինչպե՞ս հասկանալ այս ծպտումը... Այդ բուլղարական անձնագիրը, վերջապես այդ վերքը:

- Արդեն գիտեք ամեն ինչի մասին... Մնում է ընդամենը մի մանրուք ավելացնել...

Ռուբենն ուշադիր նայեց նրան:

- Այն լեշը, որ դիահերձարանում էր... Դեռ չեն տարե՞լ:

- Ջհանգի՞րը..., - հազիվ արտաբերեց Ռուբենը:

- Այո:

- Պիտի որ այնտեղ լինի, ոստիկանությունը կարծեմ դեռ խնդիրներ ունի պարզելու:

- Թող պարզեն, մենք արդեն մերը պարզեցինք, - նույն խորհրդավոր ժպիտը դեմքին ասաց «բուլղարացին»:

Ռուբենը զարմանքից քիչ մնաց գոռար: Անմիջապես վեր կացավ, դուռը բացեց, միջանցքը նայեց, հետո եկավ նստեց տեղը:

- Ուրեմն, դուք այն երեքից մեկն եք, որ «Բո-Ռիվաժում»...

- Երե՞ք... Ինչո՞ւ երեք... Մի հոգին քի՞չ է այդ չանը սատկացնելու համար, - հանդուգն ասաց «բուլղարացին» և տեղնուտեղը ճակատին քրտինքի կաթիլներ հայտնվեցին:

- Հանգիստ, հանգիստ, ձեզ չի կարելի հուզվել:

Ռուբենն ապշած էր անակնկալից և վիրավոր երիտասարդի անխոհեմ անկեղծությունից, եթե չասենք միամտությունից: Մի՞թե չհամոզվեց, որ հայ լինելը քիչ է նման գաղտնիքը բացահայտելու համար... Գուցե իսկապես հաստատվում է այն կարծիքը, թե ահաբեկիչներն, արտիստների նման, կարոտ են հան-

դիսատեսի ծափահարությանը: Տղան ընդամենը քսան տարեկան կլիներ, հավանաբար առաջին հանձնարարությունն է կատարում և ուզում է անմիջապես դովեստներ լսել:

- Առաջին անգա՞մն է, որ դուք...

- Ոչ, ես շատ հանձնարարությունների եմ մասնակցել, բայց առաջին անգամ մենակ կատարեցի:

- Ինչո՞ւ մենակ, վտանգավոր չէ՞ր:

- Հենց այդ պատճառով, որպեսզի ձախողելու դեպքում շատ մարդ չտուժի, ինչպես Մոսկվայում եղավ:

Նա ծանր էր շնչում: Լռեց, մի քիչ հանգստացավ և ավելի ցածր ձայնով շարունակեց.

- Վեց ամիս հետապնդել եմ նրան... Մոսկվայից փախավ Բեռլին, այնտեղից Բրյուսել, հետո երեք ամիս թաքնվեց Նորմանդիայի գյուղերից մեկում... Այդտեղ իմացա, որ հեռագրով Լոզանում սենյակ է վարձել... Իրենից ավելի շուտ եկա այստեղ... Երկու շաբաթ, քայլ առ քայլ հետևել եմ նրան... Մի պահ, նույնիսկ, գիտե՞ք ինչ անցավ մտքովս... Որ, ի վերջո, սա էլ հայ է, ինչպես մենք ենք ասում՝ 'շունուգել՝ էլի մերն է, հերն անիծած, թող ապրի... Բայց երբ հիշում էի, թե ինչպես իմ ընկերներին մատնեց, թե սրա մեղքով Շուշիում և Նախիջևանում քանի՜-քանի հայ գյուղացիներ թաթարների զոհերը դարձան, արյունս եռում էր և երազում էի միայն վրեժի մասին...

Նա նորից սկսեց հևալ և մի քիչ հանգստանալով շարունակեց.

- Գիտե՞ք երբ վերջնական վճիռ ընդունեցի, որ պիտի սատկացնեմ... Մեկ շաբաթ առաջ էր, Էվիանի կազինոյում այդ տականքն ընդամենը մեկ ժամվա մեջ երեսուն հազար ռուբլի կորցրեց... Որքա՜ն զենք կառնեինք այդ դրամով, քանի՜ կյանքեր կփրկեինք մարդակեր թաթարներից... Իսկ Բեռլինում և Բրյուսելում որքա՜ն դրամ մսխեց պոռնիկների վրա... Մինչդեռ մենք նրանից ընդամենը հինգ հազար ռուբլի էինք խնդրել...

- Իսկ ինչպե՞ս վիրավորվեցիք:

- Իմ անզգուշության պատճառով... Առաջինը նա կրակեց... Ես գիտեի, որ մոտը միշտ զենք է պահում... Բայց հասցրեցի երեք անգամ կրակել նրա վրա, ատրճանակը խլել և փախչել: Մենք երկուսով էինք միջանցքում... Իր դռան առջև... Բացի այդ ես ծպտվել էի, բեղմորուք կպցրել, ակնոց դրել, կեղծամ... Տանիքով փախա... Ընկերներս փողոցում սպասում էին կառքով... Տարան քաղաքից դուրս, այնտեղ մի տուն կար: Կարծում էինք, թե վերքը թեթև է և շուտով կանցնի... Սակայն գործը լրջացավ... Ես պնդեցի, որ բերեն այստեղ և այդ կողոպուտի պատմությունը հորինեն:

- Բայց գիտե՞ք, շատ վտանգավոր և հանդուգն քայլ եք արել, ձեր մասին արդեն հայտնել են ոստիկանությանը... Պարտավոր էին... Եվ ուր որ է կարող են գալ այստեղ:

- Արդեն եկան, բայց բուժքույրը նրանց ետ զրկեց, ասաց, թե դեռ ուշքի չեմ եկել...

- Նորից կգան:

- Թող գան, ես օտարական եմ և ե՛ս պիտի պահանջներ ներկայացնեմ:

Ռուբենը լուռ էր: Անհանգիստ էր տղայի համար: Ոչ, նրա կյանքին վտանգ չէր սպառնում, սակայն չափազանց հանդուգն էին նրա քայլերը: Մի՞թե նրանք բոլորն այսպես են գործում:

- Իսկ չեք վախենո՞ւմ, որ այդ ամենը պատմում եք ինձ:

- Ի՞նչ կա վախենալու, - զարմացավ «բուլղարացին»:

- Ասենք, կարող է հայտնեմ ոստիկանությանը: Ի դեպ, պարտավոր եմ... Այստեղ բերված վիրավորների միջոցով նրանք բավական գաղտնիքներ են իմանում, նույնիսկ իրենց մարդիկն ունեն այստեղ:

- Այդ ամենի մասին ես գիտեմ, գիտեմ նաև, որ պարտավոր եք հայտնել, այլապես կդատվեք որպես հանցակից: Բայց գիտեմ նաև, որ դուք երբեք այդպիսի բան չեք անի...

- Որտեղի՞ց է այդ համոզումը, դուք ինձ բնավ չեք ճանաչում, չնայած լսել եք իմ մասին:

- Մենք գիտենք այստեղ սովորող յուրաքանչյուր հայ ուսանողին՝ մեկ առ մեկ... Եվ հատկապես գիտենք, որ դուք այդպիսի ստորություն չեք անի: Իմիջիայլոց, մինչև ինձ այստեղ բերելը, ընկերներս բժշկականի բոլոր հայ ուսանողների ցուցակը նայեցին, որպեսզի դրանց միջից ամենավստահելիին կանչեն: Եվ առաջինը ձեր անունը տվեցին:

- Սակայն գերադասեցիք այստեղ գալ:

- Այո, որովհետև կանչելով ձեզ ուղղակի վտանգի կենթարկեինք... Իսկ այստեղ վտանգ չի կարող լինել: Ես ձեզ ոչինչ չեմ պատմել, դուք ոչինչ չգիտեք, և վե՛րջ: Ես Բուլղարիայի քաղաքացի Իվան Ստոյանովն եմ:

Հետո տեսնելով իր զրուցակցի մտահոգ արտահայտությունը, հարցրեց.

- Սակայն դուք անհանգիստ եք, դոկտոր, իմ առողջական վիճակը լավ չէ՞:

- Ոչ, ոչ, ձեր առողջության համար մտահոգվելու պատճառներ չեմ տեսնում, իսկ ոստիկանության հետ հուսանք, թե խնդիրներ չեք ունենա, եթե, իհարկե, ձեր անձնագիրը...

- Իմ անձնագիրը կեղծ չէ, - խոսքը խլելով հայտնեց «բուլղարացին»: - Ես այն ստացել եմ Սոֆիայում:

- Ուրեմն, փառք Աստծո... Ինձ ուրիշ բան է մտահոգում. մինչև ե՞րբ պիտի մեր ներքին հարցերն այսպես՝ զենքով լուծենք... Ես կարդում եմ ձեր մամուլը և գիտեմ, որ սա առաջին դեպքը չէ և, ցավոք սրտի, վերջինը չի լինի: Հնարավոր չէ՞ արդյոք ստեղծել մի մարմին, որը կարողանար համախմբել մեր ցաքուցրիվ ուժերը, մեր հիվանդ հոգին բուժել:

- Չկարծեք, թե հաճույքով ենք դիմում այս քայլին: Սա ծայրահեղ միջոցն է արդարություն հաստատելու և անպաշտպան ժողովրդին ցույց տալու, որ ինքն անտեր չէ: Եվ մենք գերազանցապես մատնիչներին ու դավաճաններին ենք պատժում: Ինքներդ եք ասում, որ մեր վիճակը հիմա շատ ծանր է... Իսկապես ճակատագրական օրեր ենք ապրում, փաստորեն երկու հզոր երկիր անվերջ մի պատերազմ են սկսել մեր դեմ... Ամեն առիթով մեր արյունն են հեղում, փակում մեր դպրոցները, մեր եկեղեցիները թալանում... Ռուսներն ու թուրքերը վաղեմի

թշնամիներ են և իրար տանել չեն կարող, սակայն նրանց ոստիկաններն իրար հետ լեզու են գտել, որպեսզի մեզ վնասեն:

- Բայց պատիժները դաս չեն լինում և մատնիչներն ու դավաճանները մեղանում, ավաղ, չեն պակասում:

- Նույնիսկ ավելանում են, մեզ էլ մեղադրում են, թե գրգռում ենք թուրքին, թաթարին, ցարի ոստիկանությանը... Ստրկությունը տխմարացրել է մեր ժողովրդի մի մասին: Եթե հայ մատնիչները չլինեին, մեր ընկերներից ոչ մեկը չէր ընկնի ռուսական կամ օսմանյան ոստիկանության ձեռքը:

Երիտասարդի դեմքին մի վեհ գեղեցկություն էր հայտնվել, աչքերում մի կրակ կար, իսկ դեմքի գունատությունը ազնվական մի երևույթ էր հաղորդել նրան:

- Գուցե մի քիչ չափազանցում եք, - ասաց Ռուբենը, - բայց ընդհանուր առմամբ իրավացի եք... Այդ ստրկական մտայնությունը բնորոշ է ոչ միայն հասարակ ժողովրդին, այլև մեր մտավորականներից շատերին... Սակայն, բացատրեք խնդրեմ, ինչո՞ւ եք շարունակում զինյալ պայքարը, չէ որ ցանկալի արդյունքը չի տալիս, Ջհանգիրի նման հատուկենտ տականքները պատժվում են, բայց չարիքը չի վերանում, այլ, ինչպես ասացիք, նույնիսկ շատանում է:

- Ես մտածել եմ այդ մասին, - պատասխանեց երիտասարդը: - Ինձ թվում է, թե մարդիկ էլ կենդանիների նման են. քստմնելի ու գարշահոտ բորենիներ կան և ամեհի ու վեհապանծ առյուծներ, գիշակեր անգղեր կան և անհաս բարձունքներում սավառնող արծիվներ... Տեսակի հարց է... Ասում են, թե մեր ժողովրդի նկարագիրը վերջին հինգ հարյուր տարում խաթարվել է: Սուտ է, չեմ հավատում... Հապա ինչպե՞ս է պատահում, որ նույն գյուղում ապրող մի գերդաստանից հերոս է դուրս գալիս և միաժամանակ վախկոտ ու մորթապաշտ... Տեսակից է... Եթե նույնիսկ իմանամ, որ այս աշխարհում ազատությունն այլևս ոչ մեկին պետք չէ, միևնույն է՝ պիտի կռվեմ հանուն ազատության...

Ռուբենը ժամացույցը նայեց: Մի քանի րոպե հետո պիտի մասնակցեր վիրահատության, ուստի հրաժեշտ տալով ասաց.

- Մենք դեռ առիթներ կունենանք շարունակելու այս զրույցը, ուստի կուզեի հեռանալուց առաջ ձեր իսկական անունն իմանալ:

- Պետք չէ, դոկտոր, իմ իսկական անունն այսօր հետաքրքրում է միայն ոստիկաններին ու գաղտնի ծառայություններին: Այնպես որ, շարունակեք ինձ կոչել Իվան Ստոյանով և հետս խոսեք միայն ֆրանսերեն...

Ռուբենը ծիծաղեց:

- Կներեք, բայց տարօրինակ եք: Դուք ինձ այսօր բաղմաթիվ գաղտնիքներ վստահեցիք, սակայն հրաժարվում եք ձեր իսկական անունն ասել:

- Խնդրում եմ, մի պնդեք, դոկտոր, այդպես ավելի խոհեմ կլինի... Մանավանդ որ ես այլևս իրավունք չունեմ սեփական անուն ունենալու և մանավանդ որ սեփական ոչինչ չունեմ՝ իմ գաղափարներից զատ:

* * *

Ֆրանց Ապելը չափազանց գոհ վերադարձավ շվեյցարական արձակուր-

դից: Դեռևս Հուլիսի կեսերին, տեսնելով, որ ամեն ինչ բարեհաջող է ստացվում, որոշեց օգոստոսն էլ Շամպերիում անցկացնել, մանավանդ որ Յաննին ավելի հնազանդ էր դարձել և իսպառ հրաժարվել գիշերները կարդալու իր հոռի սովորությից:

Ծնողներն, ի դեպ, հենց սրանով էին բացատրում իրենց դստեր բնավորության դրական փոփոխությունները: Նա իսկապես կազդուրվել էր, դեմքի մաշկը լեռնային օդից ու արևից դարձել բրոնզագույն և շատ էր սազում ցորենագույն մազերին: Աչքերի տակի սևը՝ անքնության ուղղակի հետևանքը, անհետացել էր: Նա դարձել էր ավելի հեզաբարո, ծնողների հանդեպ ավելի գորովալից: Այս փոփոխությունները թերևս նպաստել էին, որ դառնա համընդհանուր ուշադրության առարկա: Եվրոպայի տարբեր կողմերից եկած բազմաթիվ մեծահարուստ, նշանավոր և ազնվական ընտանիքների դստեր կային Շամպերիում՝ մեկը մյուսից գեղեցիկ, սակայն բոլորի կարծիքով Յաննին լավագույնն էր: Մայրական հպարտությանը չափ ու սահման չկար:

Նաև այս հանգամանքն էր, որ դրդեց գնդապետին մեկ ամսով երկարացնել հանգիստը: Իրենց աղջկա շուրջ սկսել էին արժանավոր փեսացուներ պտտվել, նրանցից մի երկուսն արդեն սիրահարված էին: Յաննիին մնում էր պարզապես այդ խմբի միջից որևէ մեկին ընտրել, որոշել, թե բարոնուհի՞ է ուզում դառնալ, միլիոնատեր բանկիրի ընտանիքում հարս լինել, թե բեռլինցի երիտասարդ, գեղեցիկ և փայլուն ապագա խոստացող կապիտանին նախապատվություն տալ... Այդ տղաները բոլորն էլ դուր էին գալիս Ապել ամուսիններին, սակայն լավ իմանալով Յաննիի անըմբռնելի, ըմբոստ նկարագիրը, բացարձակապես չէին խառնվում: Մայրն ընդամենը մեկ անգամ գովեստով խոսեց երիտասարդ և մի դիվանագետի մասին, և Յաննին չհապաղեց իր վերջնական դատավճիռը հայտարարել. «Ապուշի մեկն է, ինքնասիրահարված թութակ, տանել չեմ կարող այդպիսիներին»: Ահա ինչու համբերատար սպասում էին, թե այդ համակրելի երիտասարդներից որ մեկն է իրենց փեսան դառնալու և այդպիսով ընդմիշտ մոռացության մատնելու հայ ուսանողին: Սակայն Յաննին չէր շտապում:

Այնուհանդերձ, բավարարված վերադարձավ Էրֆուրտ, որտեղ նրան էր սպասում Կլաուսի վերջին տեղեկատվությունը: Առանձնապես նոր բան չկար այդ նամակում, չհաշված վերջին պարբերությունը, որը տակնուվրա արեց Շամպերիի երկու ամսվա իդիլիան. «...Ես հասկանում եմ, թե ինչու եք ուզում անպայման պարզել, թե նա հատկապես ինչ հիվանդություն բուժելու համար է եկել Շվեյցարիա: Չնայած սիրային բազմաթիվ արկածներին, նա կարծես զերծ է մնացել հանրահայտ ախտից: Սակայն նրան մոտիկ մի շարք անձինք ինձ ասացին, որ մինչև Լոզան գալը, մի քանի ամիս անց է կացրել լեռնային առողջարաններից մեկում: Թե հատկապես որտեղ, հավանաբար հեշտ չի լինի պարզել, քանզի նման առողջարանները սփռված են երկրով մեկ և դրանց թիվը հարյուրից ավելին է: Այնուամենայնիվ, ես շարունակում եմ որոնումները»:

Գնդապետը թեթևացած շունչ քաշեց: «Փառք Աստծո, որ այն հիվանդությունը չէ...»: Իր աղջկան աղտոտված, արատավորված կհամարեր հիմա, եթե նույնիսկ միայն նամակագրություն ունեցած լիներ նման հիվանդությամբ տա-

ռապողի հետ: Մյուսն, իհարկե, նույնքան ամոթալի չէր, նույնիսկ բնավ ամոթալի չէր, բայց հավասարապես կործանարար: Հիմա բարոյական բոլոր իրավունքներն ուներ և պարտավոր էր վճռականորեն արգելել ամեն տեսակի շփումն այդ ուսանողի հետ, և հոգու խորքում զգում էր, որ արդար կլինի նման որոշում ընդունելիս, որ իր արգելքը կլինի անհերքելի փաստերից բխող տրամաբանական մի եզրակացություն և ոչ թե հայրական իրավունքի չարաշահում:

Մյուս կողմից, ամառվա ընթացքում, իրենց բացակայությամբ կուտակված փոստն՝ ստիպում էր վերջնական վճիռն ընդունելիս լինել չափազանց շրջահայաց և մանրակրկիտ ստուգել փաստերը: Հայ ուսանողից երկու նամակ կար: Առաջինը սիրառատ մի ուղերձ էր, որտեղ երիտասարդը խոսում էր հավերժական սիրո, անմնացորդ նվիրվածության մասին և խոստանում հավատարիմ մնալ մինչ ի մահ և անգամ մահից հետո: Վերջին բառերն ընդգծված էին և կրկնվում էին երեք անգամ:

Խառը զգացմունքներով էր կարդում այդ նամակը: Մի կողմից խանդի նրբին ասեղներ կարծես ծակոտում էին սիրտը, ասես ոտնձգություն էին կատարել նրա ունեցվածքի հանդեպ, մյուս կողմից թաքուն մի հպարտությամբ էր կարդում այդ տողերը, գոհունակություն զգալով, որ իր դուստրը կարող էր այդպիսի ազնիվ զգացմունքներ արթնացնել, արժանանալ նման գովեստների: Նամակը գրված էր գալանտ ոճով, բարձր թռիչքով և երևում էր, որ դրա հեղինակը հասարակ մեկը չէ:

Երկրորդ նամակը, չնայած կարճ էր և գործնական, դարձյալ երկակի զգացմունքներ էր արթնացնում: Ըստ երիտասարդի, նամակը գրված էր հիվանդանոցում, երկու վիրահատությունների արանքում: Գրում էր, որ սոսկալի զբաղված է, որ օրը երկու-երեք վիրահատությունների է մասնակցում, որ դոկտոր Ռուն շատ բարձր է գնահատում նրան: Իսկ վերջում գրում էր, թե «լավ եղավ, որ վճռեցիք մի ամսով երկարաձգել ձեր հանգիստը Շամպերիում»:

Որտեղի՞ց է իմացել այդ մասին: Վա՜հ, մի՞թե պարզ չէ. ուրիշ ումի՞ց պիտի իմանար, եթե ոչ Յաննիից: Ահա թե որտեղ է թաղված շան գլուխը: Երբ նրանք ամուսիններով հույսեր էին փայփայում, թե իրենց դուստրն, այդ արժանավոր փեսացուներից մեկին ընտրելով, բախտավոր կդառնա, կսրբի իրենց ընտանիքի ամոթը և կերջանկացնի իր ծնողներին, պարզվում է այդտեղից գաղտնի նամակներ էր ուղարկում հային: Ահա ինչու մերժեց այն հրաշալի երիտասարդներին, որոնք օրնիբուն հետապնդում էին նրան: Հանդո՜ւգն աղջիկ:

Իսկ հայը, եթե հավատանք իր գրածին, կարճ ժամանակում բավական առաջադիմել է, որ արդեն մասնակցում է վիրահատություններին, այն էլ «աշխարհահռչակ» (ինչպես ինքն է գրում) դոկտոր Ռուի կողքին: Ուրեմն, արժանիքներ ունի, աշխատասեր է, գուցեև պատվախնդիր... (գնդապետը սիրում էր պատվախնդիր մարդկանց): Երկու տարվա ուսանողին չեն թողնի հենց այնպես վիրահատությունների մասնակցել: Ուրեմն, վաստակել է այդ իրավունքը... Գուցե ուզում է գլուխ գովել իր սիրած աղջկա մոտ... Բայց կարծես այդ պատմությունը բավական անպաճույճ է ներկայացվում, նամակն ավելի շատ գրված է արդարանալու համար... Ուրեմն, Կլաուսն անաչառ չէ... Կանանց ետևից վա-

ղողը մի՞թե ժամանակ կունենար այդքան կարդալու, դասերին հաճախելու, վիրահատություններին մասնակցելու: Չէ որ կանայք խժռում են ոչ միայն գրպանիդ դրամը, այլև ամբողջ ժամանակդ... Ըստ երևույթին պետք է Կլաուսին հատկապես խնդրել, որ բացատրի այս հակասությունը. ինչպե՞ս է կարողանում այդ հայը կանանց մոտ ունեցած հաջողությունները համատեղել ուսման հաջողությունների հետ:

* * *

Անբացատրելի մի բան էր կատարվում իր հետ: Նախ այդ սրտխառնուքներն սկսվեցին և շարունակվեցին երեք օր: Առաջին օրը ոչ ոք չնկատեց: Առավոտյան նախաճաշին, սեղան նստելուն պես, ներսը կարծես շուռ եկավ, սիրտը տրորվեց, իսկ մեջքը սառը քրտինքով պատեց: Սակայն կարողացավ տիրապետել իրեն, և պատրվակ բռնելով, թե մոռացել է ձեռքերը լվալ, անփույթ քայլվածքով մտավ զուգարան և... Լավ է ճաշարանում տիրող աղմուկը խլացրեց ործկալու ձայները:

Միևնույն անփույթ քայլվածքով վերադարձավ և ոչ մի կտոր բերանը չդրեց: Սնունդին նայել անգամ չէր կարող: Միայն սուրճ խմեց, դառը, առանց կաթի: Մաշան, որ դիմացն էր նստած, իմիջիայլոց հարցրեց. «Ինչո՞ւ ես այդքան դունատ»: «Հավանաբար լույսից է», - պատասխանեց նա: Հաջորդ օրն էլ կարողացավ թաքցնել սրտխառնուքը: Բայց այս անգամ նկատեցին, որ ոչինչ չկերավ և բավարարվեց ընդամենը դառը սրճով: Երրորդ օրը նույն ժամին, նույն տեղում, ամեն ինչ կրկնվեց: Նրան թվաց, թե ուր որ է ստամոքսն այրող լավան դուրս կհորդա և կծածկի ամբողջ սեղանը... Հազիվ հասցրեց տեղից վեր կենալ և, բոլորի ուշադրությունը հրավիրելով, վազել դեպի զուգարան: Դաստիարակ-օրիորդներից մեկն շտապեց հետևել նրան: Եվ ճաշարանում տիրող բացարձակ լռության մեջ հստակ լսվում էին զուգարանից եկող բոլոր աղմուկները:

Գիշերօթիկն իր առանձին և մշտական բժիշկը չուներ: Պարզապես, անհրաժեշտության դեպքում, դիմացի տանը գտնվող ծեր բժշկին էին կանչում կամ տանում նրա մոտ: Ուստի Յաննիին պառկեցրին, քանի որ իսկապես թույլ էր և մարդ ուղարկեցին բժշկի ետևից: Քիչ հետո նա եկավ, ուշադիր քննեց աղջկան, ջերմությունը չափեց, հարցրեց, թե ինչ է կերել և եկավ այն եզրակացության, որ աղջիկն ստամոքսն է մրսեցրել: Ուստիև ոչ մի դեղ չգրեց, խորհուրդ տվեց պարզապես խոտերով թեյ խմել և հատկապես տաք հագնվել, քանի որ արդեն հոկտեմբերի սկիզբն էր, և երեկոները սառը քամի էր փչում լճի կողմից: «Լոզանը սոսկալի քաղաք է, սիրելի օրիորդ, - նկատեց բժիշկը: - Այստեղ կլոր տարին քամիներ են փչում և ձեզ նման փխրուն աղջիկները հեշտությամբ կարող են մրսել»: Բժիշկը գնաց, խոստանալով հաջորդ օրը՝ կեսօրից հետո, նորից այցելել: Սակայն նույն օրը նրան նորից պիտի կանչեին:

Երեկոյան կողմն իսկապես լավ էր: Լեռնային խոտերից պատրաստված թեյը հրաշալի ազդեցություն ունեցավ և իրեն կատարելապես կազդուրված զգաց, ուստի որոշեց բաց չթողնել դաշնամուրի դասը, որ ժամը յոթին էր, ընթ-

րիքից առաջ: Հաճույքով էր գնում այդ դասերին, քանզի դաշնամուրի դասատուն չափազանց բարի մի կին էր, շատ էր սիրում նրան և բարձր կարծիքի էր նրա մասին: Գտնում էր, որ եթե լրջորեն պարապի, մեծ դաշնակահար կդառնա: Նույնիսկ խորհուրդ էր տալիս միայն դաշնամուրով զբաղվել:

Այդ օրը պիտի նվագեր Բեթհովենի ամենադժվար սոնատներից մեկը՝ 27-րդը: Մի քիչ դժվար սկսեց, սակայն անմիջապես տիրապետեց իրեն և մատները վարժ սահեցին ստեղների վրայով: Ներքին մի թռիչք ոգևորում էր նրան: Դահլիճում ժողովուրդ կար, բոլոր սանուհիներն այդտեղ էին, նույնիսկ տիկ. Սպիեսն էր եկել: Զգում էր դահլիճի լարված ուշադրությունը, հասկանում, որ իր խաղով գրավել է բոլորին: Հանկարծ նրան թվաց, թե ինչ-որ մեկն իրեն կոպտորեն հրեց մի կողմ և ցած գցեց փոքրիկ աթոռից: Ձեռքերն ստեղներին քսվելով մի խժալուր աղմուկ առաջացրին, և մինչև փոքրիկ բեմի գորգածածկ հատակին հայտնվելն ու գիտակցությունը կորցնելը հասցրեց սարսափահար ճիչերը լսել:

Երբ աչքերը բացեց, առաջին բանը, որ տեսավ, օրիորդ Հեմլերի դեմքն էր՝ կռացած իր վրա: Ձեռքին գարշահոտ մի բամբակ կար, որ դրել էր քթի տակ: Գլուխը դարձրեց մի կողմ, որպեսզի այդ սուր հոտը չշնչի: Տիկ. Սպիեսին տեսավ՝ ձեռքերը կրծքին սեղմած: «Ի՞նչ պատահեց աղջիկս, - ասաց նա: - Դու այնպես լավ էիր նվագում... Երևի լարված էիր և հուզված...»: Ընկերուհիները քիչ հեռվում, սոսկումի արտահայտությունը դեմքներին, շարվել էին պատի տակ:

Իրեն պառկեցրել էին դահլիճի անկյունում դրված կաշեպատ բազմոցի վրա: Ուրեմն, այսքան ժամանակ անգիտակից վիճակում է եղել: Քանի՞ րոպե էր պետք, որպեսզի կարողանային բեմից հասցնել մինչև բազմոց... Սառը կաշվի հպումն զգաց վզին: Ուզեց վերկենալ: Ջթողեցին: «Համբերիր, սիրելիս, - չափազանց քնույշ ձայնով ասաց օրիորդ Հեմլերը: - Բժիշկը հիմա կգա»:

Իսկապես, քիչ հետո հայտնվեց բժիշկը: Նա ձեռքը դրեց ճակատին, զարկերակը չափեց և հարցրեց. «Ինչ որ պատվիրել էի, արեցի՞ք»: «Այո, դոկտոր, - պատասխանեց օրիորդը Հեմլերը: - Եվ նա շատ գոհ էր, իրեն լավ էր զգում»: «Առաջին անգա՞մն է, որ սրտխառնուք ունեցար... գլխապտույտ», - հարցրեց բժիշկը: «Այո, դոկտոր, առաջին անգամն է, - շտապեց միջամտել տիկ. Սպիեսը: - Այստեղ միշտ լավ է զգացել»:

Բժիշկը խնդրեց, որ մենակ թողնեն աղջկա հետ: Սանուհիներին կարգադրեցին գնալ ճաշարան: Ընթրիքի ժամն արդեն մոտենում էր: Տիկ. Սպիեսը գնաց աշխատասենյակ, նախապես խնդրելով բժշկին վերջում գալ իր մոտ:

Մի քանի րոպե կլիներ արդեն, ինչ բոլորը հեռացել էին՝ լռություն և անդորր պարգևելով գիշերօթիկի փոքրիկ դահլիճին: Ծեր բժիշկը, ձեռքերը գրպանները խոթած, մտահոգ կանգնել էր: Նա սկսեց ետուառաջ քայլել, հետո, դռանը մոտենալով, կտրուկ բացեց, միջանցքը նայեց, մոտեցավ աղջկան, բռնեց ձեռքը և աչքերի մեջ նայելով մեղմորեն հարցրեց.

- Աղջիկս, մի հարց ունեմ քեզ տալու, շատ կուզեի, որ անկեղծ պատասխանես, խոստանում եմ, որ մեր մեջ կմնա:

Յաննին գլխով արեց, կռահելով, թե ինչի մասին է լինելու հարցը:

- Ասա ինձ, սիրելիս, դու ճաշակե՞լ ես մեղքի պտուղը... Այսինքն, արդեն ճանաչե՞լ ես մարմնական սերը:

Յաննին երեսը ծածկեց ձեռքերով և սկսեց ծանր շնչել: Հետո ուսերը ցնցվեցին և արցունքի կաթիլ հայտնվեց մատների արանքում:

- Մի հուզվիր, աղջիկս... Ես եկել եմ, որպեսզի քեզ օգնեմ: Եթե չես ուզում, կարող ես չպատասխանել, բայց որպեսզի իսկապես կարողանամ օգնել, պիտի դու էլ ինձ օգնես, անկեղծ լինես ինձ հետ: Հնարավոր է՝ այդ սրտխառնուքն ու գլխապտույտները վաղը դադարեն և դու կարողանաս թաքցնել ամեն ինչ, սակայն ամիսներ հետո ուրիշ նշաններ կերևան, որոնք անհնար կլինի թաքցնել... Եվ այդ ժամանակ ես շատ կվշտանամ, որ ինձնից թաքցրել ես ճշմարտությունը:

Յաննին ձեռքերով շարունակ երեսը փակած, գլխով արեց և նրա ուսերը նորից ցնցվեցին:

- Ե՞րբ էր, աղջիկս... Վերջին անգամ ե՞րբ եղավ:

Յաննիի պատասխանը լսվեց՝ խուլ, ափերի արանքից.

- Օգոստոսի երեսունմեկին:

- Իսկ ամիսդ ե՞րբ պիտի լրանար:

- Սեպտեմբերի քսանին-քսաներկուսին...

- Եվ մինչև հիմա ոչ մի նշան չեղա՞վ:

Աղջիկը գլուխը ժխտական շարժեց:

Բժիշկը լուռ էր: Նա նորից սկսեց ետուառաջ քայլել, նորից ստուգեց մի-ջանցքը և մոտեցավ աղջկան.

- Սիրելիս, - ասաց նա: - Այսօր արդեն հոկտեմբերի հինգն է, և բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ կատարվել է այն, ինչ պիտի կատարվեր նման դեպքում... Այլ խոսքով, ևս մի ութ ամիս, և դու մայր կդառնաս...

Յաննին ձեռքերը հեռացրել էր երեսից և լարված ուշադրությամբ լսում էր: Բժիշկն ավելի մոտիկ նստեց և շարունակեց.

- Աղջիկս, ես տեսնում եմ, որ դու շատ չզարմացար, երևի դու էլ այդպես էիր կարծում:

- Դուք համոզվա՞ծ եք, դոկտոր:

- Եղած նշաններն առայժմ այդ մասին են ասում, սակայն չեմ կարող պնդել, թե հարյուր տոկոսով համոզված եմ... Չեմ կարող... Քանզի ձեր կյանքում, ձեր հոգում, վերջապես, ձեր մարմնի մեջ չափազանց կարևոր մի բան է կատարվել և դա կարող է բազմաթիվ փոփոխություններ առաջացնել... Դուք սկսել եք հիմա ուրիշ կյանքով ապրել... Այնպես որ պետք է մի քիչ էլ սպասել:

- Որքա՞ն, դոկտոր:

- Չգիտեմ, գուցե վաղը պարզվի, որ ոչինչ չկա, գուցե մեկ շաբաթ հետո... Մի քիչ էլ սպասենք:

- Իսկ եթե մեկ շաբաթ հետո ոչ մի նշան չերևա և պարզվի, որ... Այն ժամանակ ի՞նչ պիտի անենք...

- Դու սիրո՞ւմ ես նրան:

- Այո, դոկտոր, մենք սիրում ենք իրար:

- Նշանվա՞ծ եք:

- Ոչ:

- Աղջիկս, ամեն ինչ Աստծո կամքով է կատարվել, և Աստծո օրենքը պահանջում է, որ սիրո պտուղը լույս աշխարհ գա... Սակայն մարդիկ իրենց օրենքներն են սահմանել... Դաժան օրենքներ, անմարդկային օրենքներ...

- Ես չեմ ուզում ենթարկվել այդ օրենքներին, - վճռական հայտարարեց Յաննին:

Բժիշկը զարմանքից ասես ցնցվեց, հետո բարի ժպիտով ասաց.

- Ապրե՛ս, աղջիկս, բայց դու մենակ կլինես այդ ծանր պայքարում, նկատի ունեցիր:

- Ինչո՞ւ մենակ, մենք միասին կլինենք:

- Դու վստա՞հ ես, որ նա քո կողքին կմնա:

- Այո, ոչ մի կասկած չունեմ:

- Կեցցե՛ս, աղջիկս, սակայն սպասենք, մի քիչ էլ սպասենք... Իսկ մեր զրույցի մասին, իմ ենթադրությունների մասին առայժմ ոչ մեկին ոչինչ չասես՝ ոչ այդ տղային, ոչ ընկերուհիներիդ, ոչ էլ ծնողներիդ...

Բժիշկը Յաննիին հրաժեշտ տվեց և գնաց գրասենյակ, որտեղ տնօրինուհին անհամբեր նրան էր սպասում:

- Ի՞նչ կասեք, դոկտոր, - հարցրեց տիկ. Սպիեսը:

- Առայժմ ոչինչ:

- Այդ սրտխառնուքները, այդ գլխապտույտը ձեզ ոչինչ չեն ասո՞ւմ:

- Գիտեք ինչ, սրտխառնուքներ հաճախ են լինում՝ վատ խմիչքից, վատ սնունդից, մրսելուց, ծանր օդից... պատճառները շատ են...

- Բայց նկատի ունեցեք, դոկտոր, արդեն երրորդ օրն է, նույն ժամին այդ օրիորդը սրտխառնուք է ունենում, մենք միայն այսօր տեսանք, որովհետև չկարողացավ զսպել, սակայն դաստիարակները նկատել են, որ նախորդ երկու օրերը, սեղան նստելուն պես, շտապել է զուգարան, այնտեղ մնացել սովորականից ավելին, դուրս եկել գունատ դեմքով, ոչինչ չի կերել և ընդամենը սուրճ խմել, այն էլ առանց կաթի և առանց շաքարի: Ի՞նչ կասեք այդ մասին, դոկտոր:

- Հետաքրքիր է...

- Ասեմ նաև, որ այդ օրիորդը, սովորաբար, չափազանց ժուժկալ էր սեղանի մոտ, սակայն Շամպերիից հետո ախորժակը բացվել է, շատ անգամ նույնիսկ կրկնակի բաժին է խնդրում...

- Դուք, ուրեմն, այդպես ուշադիր և մանրակրկիտ եք հսկո՞ւմ ձեր սանուհիներին, - զարմացած հարցրեց բժիշկը:

- Ոչ, բոլորին և ոչ միշտ, սակայն չնչին կասկածի դեպքում հսկում և ստուգում ենք ամեն ինչ, քանզի մեզ նաև դրա համար են վճարում: Սակայն ինչպե՞ս կբացատրեք ախորժակի այս կտրուկ փոփոխությունը:

- Շամպերիի օդն, ինչպես գիտեք, ախորժակ է բացում:

- Լոզանի օդն էլ վատը չէ... Ինչ որ է... Դուք չեք կարծո՞ւմ, որ այնտեղ մի փոքրիկ սիրային արկած է ունեցել և հիմա հետևանքներն սկսում են երևալ:

- Այդպիսի հավանականությունը ժխտել չեմ կարող... Ես կուզեի մեկ շա-

բաթ, մի տասը օր սպասել, որպեսզի վերջնական պատասխանը տամ...

- Ես այդքան սպասել չեմ կարող: Քիչ հետո պիտի գնամ փոստ և հեռադիր ուղարկեմ ծնողներին, որպեսզի անհապաղ գան և իրենց աղջկան տանեն:

- Գուցե շտապում եք, տիկին:

- Ոչ, ուշացել եմ, դոկտոր, երկու օր առաջ պիտի ուղարկած լինեի, երբ ինձ զեկուցեցին նրա տարօրինակ պահվածքի մասին: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ կլինի ինձ հետ, այս հաստատության հետ, երբ, ձեր ասածի պես, մեկ շաբաթ հետո պարզվի, որ այդ օրիորդը հղի է... Ես մեկ օրվա մեջ կսնանկանամ, ոչ մի պատվավոր ընտանիք իր աղջկան այլևս չի վստահի ինձ:

- Սակայն դժվար չէ ապացուցել, որ նա սիրային արկած է ունեցել Շամպերիում, դիշերօթիկից հեռու:

- Կարծում եմ՝ իրոք այդպես է եղել, սակայն եթե նույնիսկ կարողանամ հարյուր տոկոսով ապացուցել, որ այդ արկածը դիշերօթիկից հեռու է կատարվել, որ մեղավորը ծնողներն են, միևնույն է դա մեզ չի փրկի, քանզի սիրային արկածի հետևանքները բացահայտվել են այստեղ, ի դեպ, նրա ընկերուհիներն արդեն փսփսում են գլուխ-գլխի և կարելի է անսխալ ենթադրել, թե ինչի մասին են խոսում:

- Ես նրան հատուկ զգուշացրի, որ մեր զրույցի մասին ոչ մեկին ոչինչ չասի:

- Ուրեմն, այնուամենայնիվ, ինչ-որ բան կա թաքցնելու, որը չեք ուզում ինձ հայտնել:

- Առանձնապես ոչինչ չկա, տիկին, բացի այդ բժշկական գաղտնիք գոյություն ունի:

- Գաղտնիքն արդեն բացվել է, սիրելի դոկտոր, այնպես որ ես իմ անելիքը գիտեմ: Միայն մի բան կուզեի խնդրել ձեզնից. այն, ինչ տեսաք այստեղ առավոտյան ու երեկոյան, անհրաժեշտության դեպքում կկամենայի՞ք վկայել ուրիշների ներկայությամբ:

- Կարող եք հույս դնել ինձ վրա:

Տիկ. Սպիեսը գործը վաղվան չթողեց: Բժշկի հեռանալուց հետո իջավ կայարան և այնտեղից հեռագիր ուղարկեց Յաննիի ծնողներին՝ հետևյալ բովանդակությամբ. «Մեծարգո տեր և տիկին, արդեն երեք օր է ձեր դուստրը սրտխառնուք և դլխապտույտ ունի, որոնց պատճառն ամենայն հավանականությամբ գալիս է Շամպերիից. կարծում եմ ձեր ներկայությունն այստեղ խիստ անհրաժեշտ է, հարգանոք Շառլոտ Սպիես»:

* * *

Հիմա նրան միայն մի բան էր վախեցնում, սոսկում պատճառում. ինչպե՞ս պիտի.վերադառնա սենյակ, ինչպե՞ս պիտի դիմադրի ընկերուհիների անպատշաճ հարցերին, հարցեր, որ իրենց մեջ արդեն պատասխան ունեն: Որքան կուզես անվրդով ասա «ոչ, այդպես չէ», միևնույն է, պիտի հարցախեղդ անեն: Ա՜խ, ինչ բարի մարդ էր այն ծերուկ բժիշկը... Այդպիսի մարդուն ամեն տեսա-

կի գաղտնիք կվստահի... Օ, հիմա է հասկանում Ռուբենին, որքա՜ն իմաստուն է, խելացի, կյանքի ի՜նչ մեծ փորձ ունի... «Ոչ մեկին ոչինչ չպատմես», - ասաց վերջին հանդիպման ժամանակ՝ օգոստոսի 31-ին: Հատուկ եկավ Լոզանից, որպեսզի վերջին դիշերը միասին անցկացնեն: Նրանց թիկունքին, խավարի մեջ, գծագրվում էր Դան դյու Միդիի փառահեղ գագաթը, որտեղ, ամենածայրին, փոքրիկ սառցադաշտի կապույտ շողերն էին առկայծում, իսկ ներքևը հովտի անդորրն էր՝ գյուղերից հասնող շան հաջոցով և գիշերվա կեսին անպատեհ կանչող աքաղաղի ծուղրուղուով: Այդ պահին էր, որ նա կրկնեց. «Լսո՞ւմ ես, ոչ մեկին, բացարձակապես ոչ մեկին չպատմես»: «Ինչո՞ւ», - հարցրեց ինքը: «Որպեսզի կարողանանք մեր սերը հեռու պահել մարդկանց ճղճիմ հաշիվներից... Նրանք չեն հասկանա մեզ, նրանք կպղծեն մեր սերը...»: Հիմա էր հասկանում, թե որքան հեռատես էր:

Ճաշարանում հարցեր չտվեցին: Պարզապես կարեկցանքով նայում էին: Դեբորան միայն հարցրեց. «Հիմա լա՞վ ես»: Իսկ Մաշան ասաց. «Ոչինչ չես ուտում, այդ պատճառով էլ գլխապտույտ ունես»: Եվ, ասես ապացուցելու համար իր ասածը, ախորժակով ընթրեց և նույնիսկ լրացուցիչ բաժին ուզեց՝ զարմացնելով բոլորին: Իսկ մյուսներն անհամբեր սպասում էին, որպեսզի գնան սենյակ և սկսեն հարցաքննությունը: Եվ, ինչպես ենթադրվում էր, առաջինը Բետտին հարձակվեց.

- Բժիշկն ի՞նչ ասաց, - հարցրեց նա:

- Ոչինչ... Առանձնապես ոչինչ, - կարկամած պատասխանեց Յաննին: - Ասաց, որ տաք պահեմ... Հետո ասաց, որ առայժմ դաշնամուր չնվագեմ:

- Այդ բաները տիկին Սպիեսի համար կպահես... Դու մեզ պատմիր, թե իսկապես ինչ ասաց:

- Երդվում եմ, այդքանը:

- Հապա ինչո՞ւ երկար մնացիք:

- Զգիտեմ, ղանազան հարցեր էր տալիս:

- Դու էլ կարծում ես հավատացի, որ Շամպերիում երկու ամիս միայն վեպեր ես կարդացել և ուսանողիդ այնտեղ չես հանդիպել:

- Չէի կարող հանդիպել, նա հիմա աշխատում է հիվանդանոցում և հետո՝ ծնողներս շարունակ կողքիս էին:

- Ես էլ եմ ծնողներիս հետ եղել, բայց ինչ ուզել՝ արել եմ, - հաղթական հայտարարեց անգլուհին: - Մի խոսքով, չես ուզում մեզ վստահել, քո ամենամոտիկ ընկերուհիներին, բայց որ մի երկու ամիս հետո փորդ ուռի, պիտի ասես, թե անարատ հղիությո՞ւն է:

- Հանգիստ թող ինձ, - կտրուկ ասաց Յաննին և ափերը երեսին դնելով սկսեց արտասվել:

- Հեռացիր, - ասաց Մաշան Բետտիին, հետո նստեց Յաննիի կողքը և ուսերը գրկեց: - Հանգստացիր, բան չկա, պարզապես բոլորս անհանգիստ ենք քեզ համար, և եթե կուզես իմանալ գիշերօթիկի բոլոր աղջիկները նախանձում են քեզ:

Բետտին մոտեցավ, ներողություն խնդրելու պես համբուրեց և սիրաշահելով ասաց.

- Ճիշտ է ասում, մենք բոլորս նախանձում ենք քեզ:

- Ինչո՞ւ, - զարմացած հարցրեց Յաննին:

- Որ այդպիսի հոյակապ տղա է սիրում քեզ, որ դու էլ նրան ես սիրում, որ արդեն հանդիպել եք, որ արդեն ճանաչել եք սերը, - թվարկեց Բետտին:

- Լավ, այդ բոլորը մի կողմ, հիմա պատմիր, թե ինչ պիտի անես... Իսկապես, բժիշկն ի՞նչ ասաց..., - հարցրեց Մաշան:

- Ոչինչ... Իսկապես ոչինչ... Ասաց, որ դեռ պետք է սպասել:

- Որքա՞ն սպասել, - վրա տվեց Բետտին:

- Մի շաբաթ, գուցե մի տասը օր...

- Իսկ հետո՞, - հարցրեց Դեբորան:

- Դե հետո՝ հետո...

- Իսկ եթե պարզվի, որ հղի ես, ի՞նչ պիտի անես, - հարցրեց Բետտին:

- Չգիտեմ:

- Նա գիտի՞, - հարցրեց Մաշան:

- Ոչ ոք չգիտի:

- Հապա ի՞նչ պիտի անեք:

- Ի՞նչ եք միամիտ հարցեր տալիս, - սթափության կոչեց Մաշան: - Նրանք դեռ ամուսնացած չեն:

- Եթե ամուսնացած լինեին, այդպիսի հարցեր չէի տա, - խայթեց Բետտին: - Չէ որ մեջտեղը երեխա կա:

Յաննին հանկարծ ոտքի կանգնեց և, բռունցքները սեղմած, վճռական հայտարարեց.

- Մեջտեղը դեռ երեխա չկա, բայց երբ եղավ, կպահենք և կամուսնանանք: Մենք բոլոր դեպքերում պիտի ամուսնանանք:

Դեբորան, որ կանգնած էր անդուռ բացվածքի մեջ, դլուխն զգուշորեն դուրս հանեց, հետո վազեվազ մտավ անկողին և շշուկով ասաց. «Գալիս է»: Քիչ հետո, իսկապես, օրիորդ Հեմլերի ուրվագիծը երևաց: Երկու րոպե անշարժ կանգնեց, հետո հեռացավ, և դա բավական էր, որպեսզի զրույցն այդ գիշեր այլևս չվերսկսվեր:

* * *

Հեռագիրը բերեցին ճիշտ այն պահին, երբ պատրաստվում էին անկողին մտնել: Ժամը տասներկուսն էր: Նախ փողոցի դարպասը բախեցին, որն այդ ժամին արդեն փակ էր լինում: Պատուհանից նայեց և փոստի ցրիչին ճանաչեց համազգեստից: Քիչ հետո սպասուհին «Շտա՛պ» մակագրությամբ հեռագիրը բերեց վերև: Կինը զարմացած վերցրեց և դիմեց ամուսնուն.

- Լոզանից է... Տիկին Սպիեսն է ստորագրել:

- Կարդա տեսնենք ինչ է:

Կինը կարդաց, վախեցած նայեց ամուսնուն և մեկ անգամ էլ կարդաց:

- Չեմ հասկանում, Ֆրանց, կարդա տես ինչ է ասում, - տրտնջաց նա և հեռագիրը մեկնեց ամուսնուն:

Վերջինս, որ կեսգիշերային այցելությունից անհանգիստ էր և վատ նախազգացումներով լի, հեռագիրը կարդալուց հետո իսպառ կորցրեց իրեն: Հուսահատությունից և դառնությունից քիչ էր մնում գոռար: Զդաց, որ դարձյալ ինքն է մեղավորը, որ ճակատագրական մի սլահի, ինչ-որ սխալ է թույլ տվել, որը մի նոր պատուհաս է բերելու ոչ միայն իր սիրասուն դստեր, այլև ամբողջ ընտանիքին: Եվ որքա՜ն դաժան էր հեռագիրը, որքա՜ն անգութ, մի՞թե հնարավոր չէր մի քիչ խնայել ծնողներին: Հետո մտածեց, որ եթե այսպես բացահայտ չգրեր, այլ սքողված, մեղմաբանությամբ, գուցե ավելի անհանգստանային, մտքներով հազար ու մի բան անցներ, այնինչ այսպես, գրեթե որոշակի ստուգությամբ արդեն գիտեին, թե ինչ է պատահել: Այսինքն, էլ ի՞նչ «գրեթե», ամեն ինչ պարզ է:

Կնոջ այլայլված դեմքին նայեց: Շատ լավ հասկացել էր հեռագրի բովանդակությունը և հիմա լուռ կանգնած ամուսնուց ոչ թե բացատրություն էր սպասում, այլ տրամաբանված վճիռ, գործողությունների հստակ ծրագիր, և ասես լուռ աղերսում էր, որ այս անգամ ավելի խոհեմ լինի, ավելի ուշադիր և ավելի զգույշ: Եվ արդյոք յուրատեսակ դասալքություն չէ՞, որ իր մեծ դստեր ճակատագիրը խափանելուց հետո, այս փոքրին ուղում է ոտքով-գլխով հանձնել մորը, որովհետև չգիտի, թե ինչ վճիռ ընդունի, չգիտի, թե...

- Ի՞նչ պիտի անենք, Ֆրանց:

- Պիտի գնանք, - խուլ ձայնով պատասխանեց նա: - Վաղը ևեթ:

- Այո, պիտի գնանք, բայց հետո՞...

Հենց այդ «հետո»-ն է, որ ինքը չգիտի, որից խուսափում է, որովհետև չի ուզում երկրորդ անգամ սխալվել: Սակայն պետք չէ կնոջ առջև հուսալքված ու թևաթափ երևալ, առանց այն էլ խեղճն իսպառ կորցրել է գլուխը:

- Առայժմ պետք է հնարավորին չափ շուտ հասնել Լոդան, և այնտեղ էլ կորոշվի մեր անելիքը:

Գիտեր, որ ընդամենը շատ կարճ ժամանակով է հետաձգում պատասխանատվություն ստանձնելը, ճակատագրի վայրիվերումներին սթափ ու անհողդողդ նայելը: Չէ որ, ի վերջո, իր դստեր ճակատագիրը նաև իրենն էր:

Առավոտյան կարողացան բոլոր գործերը կարգավորել, երեկոյան գնացք նստել և հաջորդ օրը, կեսօրից հետո, արդեն տիկ. Սպիեսի մոտ էին: Գնացք նստելուց առաջ, հեռագրով ժամադրվել էր և հատկապես խնդրել, որ Յաննիին առայժմ չհայտնեն իրենց գալստյան մասին: Դա կնոջ դաղափարն էր: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է նախ գիշերօթիկի տնօրինուհուն լսել: «Գուցե մեջտեղը ոչինչ չկա... Բացի այդ, ամենայն հավանականությամբ, բժիշկ կանչած կլինեն: Պետք է նաև այդ բժշկի հետ խոսել»:

Տիկ. Սպիեսը նրանց չափազանց սիրալիր ընդունեց, հարցրեց, թե ինչպես է անցել ճամփորդությունը, ներողություն խնդրեց անսպասելի հեռագրի համար և միանգամից հայտարարեց.

- Կարծում եմ, որ խոհեմ կլինի առայժմ նրան տանել Էրֆուրտ:

Տիկ. Սպիեսը մանրամասն պատմեց ամեն ինչ և վերջում կիրթ ինքնավստահությամբ ավելացրեց.

- Մեծարգո պարոն, քսան տարեկանից ես զբաղվում եմ օրիորդների դաստիարակությամբ, և նրանց սովորական մի շարժումից, հասարակ մի խոսքից կարող եմ ամեն ինչ տեսնել: Հավատացեք՝ իմ դիտարկումները միշտ անսխալ են եղել և դա օգնել է ինձ ժամ առաջ կանխել բաղմաթիվ տհաճ պատմություններ: Ձեր աղջիկը մի շարք զորավոր հիմքեր է տալիս ենթադրելու, որ արդեն կենակցել է տղամարդու հետ և ամենայն հավանականությամբ հղի է, և ես ուզում եմ հատկապես ընդգծել, որ այդ արկածը տեղի է ունեցել Շամպերիում, երբ նա ձեր հսկողության տակ էր: Ի դեպ, բժիշկը, որ նրան քննել է, կես ժամ հետո կլինի այստեղ: Ենթադրում եմ, որ կհաստատի իմ կասկածները:

- Նա՞ է ձեզ ասել այդ բաների մասին:

- Ոչ: Նա մոտ քսան րոպե մենակ մնաց ձեր աղջկա հետ, այնուհետև, հայտարարելով, որ իրենց զրույցը բժշկական գաղտնիք է, խորհուրդ տվեց մի շաբաթ էլ սպասել, սակայն ես գտնում եմ, որ դա անիմաստ է:

- Ինչո՞ւ:

- Որովհետև, կներեք, գիշերօթիկում արդեն շշուկով են խոսում ձեր աղջկա մասին: Այս լուրը կարող է տարածվել քաղաքով մեկ և սոսկալի հարված հասցնել իմ հաստատությանը, մեր անբասիր հեղինակությանը: Եթե այս դեպքը պատահած լիներ մեկ ուրիշ օրիորդի հետ և դուք իմանայիք այդ մասին, կշարունակեի՞ք արդյոք ձեր աղջկան, վերջապես, ձեր ընտանիքի պատիվը վստահել մեզ:

Գնդապետն ընդունում էր այս փաստարկը: Սակայն նվաստացնող, ստորացնող մի բան կար այս անհոգի կնոջ դատողությունների մեջ, և նա դտավ, որ իր աղջկան այստեղ թողնելն իսկապես վիրավորական կլինի իր համար՝ անկախ այն բանից՝ այս կնոջ կասկածները կարդարանան, թե ոչ:

- Տիկին Սպիես, - արժանապատվությամբ դիմեց նա տնօրինուհուն, - անկախ ձեր կասկածների հիմնավորվածությունից, որոշեցինք մեր աղջկան տանել այստեղից:

- Ես ողջունում եմ ձեր որոշումը, - պատասխանեց տիկ. Սպիեսը, ժամացույցը նայելով: - Սակայն մինչև բոլոր փաստաթղթերը ստորագրելը, կխնդրեի ձեզ հանդիպել դոկտորին, նա արդեն պիտի եկած լինի: Հուսամ ձեզ կասի այն, ինչը թաքցրեց ինձնից:

Բժիշկը կրկնեց իր նախկին կարծիքը. պետք է սպասել:

- Իսկ ինչո՞ւ հաստատապես չեք ասում, թե այդ սրտխառնուքը վատ մարսողության կամ մրսելու հետևանք է, - հարցրեց մայրը: - Ի դեպ, նա շատ նուրբ աղջիկ է և նախկինում էլ նրա հետ այդպիսի դեպքեր են եղել:

- Շատ հնարավոր է, որ սա էլ ստամոքսի սովորական խանգարում է, որը երբեմն մի քանի օր է տևում:

- Եթե ստույգ իմանայիք, որ ուրիշ, կողմնակի պատճառներ չեն եղել, դարձյա՞լ պիտի սպասեիք վերջնական ախտորոշման համար, - հարցրեց հայրը: - Նա ձեզ ի՞նչ ասաց:

- Երկրորդական բաներ, պարոն... Գիտեք ինչ, հիմա դա չէ կարևորը: Ես կխնդրեի, որ դուք իսկապես համբերությամբ լցվեք և չափաղանց նրբանկատ

լինեք ձեր աղջկա հետ: Նա զգայուն և ազնիվ մի էակ է, և ձեր չմտածված չնչին խոսքն անգամ կարող է խոցել նրան... Նա հիմա ծանր մի պահ է ապրում, և ես խորհուրդ կտայի անհարկի հարցերով չճնշել նրան... Հավատացեք իմ խոսքերին, իմ մազերը ճարմակել են այս գործի մեջ:

- Մենք որոշել ենք նրան տուն տանել:

- Շատ ճիշտ եք անում, հոգեկան այդ վիճակում նրա այստեղ մնալը կատարելապես անիմաստ է և նույնիսկ վտանգավոր:

Բժշկի աչքերում մի խորունկ իմաստություն կար: Գնդապետն ամեն ինչ հասկացավ, քանզի բժիշկը նրբանկատությամբ ասաց այն, ինչը մերժել էր հայտնել գիշերօթիկի տիրուհուն: Ուստի այդ ամենից զգացված, դիմեց նրան, ինչպես իր խոստովանահորը.

- Շնորհակալ եմ, դոկտոր, որ ամեն ինչ չեք ասել տնօրինուհուն:

Երբ բոլոր ձևականություններն ավարտված էին, տիկ. Սպիեսը գնդապետին մի թուղթ տվեց ստորագրելու, որտեղ գրված էր. «Սույնով հաստատում ենք, որ տեր և տիկին Սպիեսների գիշերօթիկն անթերի է եղել իր պարտականությունների կատարման մեջ, որ մենք ոչ մի պահանջ և ոչ մի դժգոհություն չունենք վերոնշյալ գիշերօթիկին ներկայացնելու և որ մեր դուստր օրիորդ Յաննի Ապելին տանում ենք այստեղից ընտանեկան պատճառներով, որոնք բացարձակապես ոչ մի առնչություն չունեն գիշերօթիկի հետ»:

Չնայած գնդապետն այս զգուշավորությունը համարեց ծիծաղելի և նույնիսկ ողորմելի, այնուամենայնիվ ստորագրեց, որպեսզի վերջնականապես հաշիվները փակի հաստատության հետ: Բացի այդ, շտապում էր բոլոր ձևականություններից թոթափած իր աղջկան գրկել և համբուրել: Սոսկալի մի կարոտ ու անսահման քնքշանք կար նրա հոգում: Ասես մի ամբողջ հավերժություն չէր տեսել նրան, և հիմա վախենում էր, որ հուզմունքից կարտասվի: Սակայն, աղջկան տեսնելուն պես, զարմանալի մի բան կատարվեց. որքան բժշկի հետ անցկացրած մի քանի րոպեն նրանում զգացմունքներ արթնացրեց, որոնց գոյության մասին գրեթե մոռացել էր, այնպես էլ աղջիկը՝ իր տասնյոթ տարիներով, ասես միանգամից սովորեցրեց կյանքին նայել փիլիսոփայորեն, ճակատագրի վճիռներն ընդունել այնպես, ինչպես կան:

Յաննին բնավ զարմացած չէր նրանց ներկայությամբ, ասես մեկ գիշերվա ընթացքում այստեղ հասնելը սովորական մի բան էր, ասես ամեն ինչ այդպես էլ պիտի լիներ: Տիկ. Սպիեսն, անշուշտ, նրան չէր հայտնել: Պարզապես այս երկու ամսում սերը նրան ուրիշ մարդ էր դարձրել: Երևում էր, որ ներքուստ պատրաստ է Լոզանից ընդմիշտ հեռանալուն, պարզապես ծնողներից խնդրեց մի վերջին գիշեր անցկացնել ընկերուհիների հետ: Զհասցրեցին նույնիսկ մանրամասներից հարցնել, և տեղն էլ շատ հարմար չէր: Գիշերօթիկի պատերն ասես ճնշում էին, բացի այդ անմիջապես հիշեցին բժշկի խորհուրդը՝ նրբանկատ և հոգատար լինել նրա հետ:

Հետո, ուշ երեկոյան, գնդապետը հյուրանոցի պատշգամբում նստած, լճի հանդիպակաց ափում կայծկլտացող լույսերն էր նայում և փորձում հանրագումարի բերել վերջին մի քանի ամսվա իր ձեռնարկումները: Արդյունքը ցավալի

էր. այն, ինչից ուզում էր խուսափել, տեղի ունեցավ հակառակ իր բոլոր ջանքերին: Արդյոք թերացա՞վ ինչ-որ հարցում, անուշադիր եղա՞վ... Նրան թվաց, որ եթե նույնիսկ կրկնապատկված ու եռապատկված նախանձախնդրությամբ գործեր, համակ ուշադրություն դառնար, դարձյալ պիտի ձախողեր: Անըմբռնելի և աներևույթ մի ուժ ի սկզբանե որոշել էր ամեն ինչ, իսկ ինքը, համառ ցուլի պես, ուզում էր դիմադրել: Ինչպիսի՜ միամտություն:

Եվ նա հիմա հստակորեն տեսնում էր, որ բնության մեջ, տիեզերքում կա հավերժական մի տարերք, որն անդառնալիորեն վճռում է կյանքի մեր ուղին, և դա շատ հազվադեպ է համընկնում մեր պատկերացումների ու ցանկությունների հետ: Իսկ այն վճիռը, որն ինքը պիտի ընդուներ իր աղջկա համար, անմեկնելի ու անմատչելի տարերքն արդեն վճռել ու սկսել էր ի կատար ածել: Սակայն մինչև ո՞ւր... Զգիտեր: Ինքը ի՞նչ պիտի աներ: Չէր պատկերացնում: Եվ նա գտավ, որ այս անգամ կրտսեր աղջկա ճակատագիրն ավելի խոհեմ կլինի վստահել մորը:

* * *

Դոկտոր Ռուն այդ օրը վատառողջ էր, ուստի ուսանողներին ազատեցին դասերից: Ռուբենը որոշեց օգտվել առիթից, վերադառնալ տուն, փակվել սենյակում և կուտակված նամակներին պատասխանել: Ինն անց կես կլիներ, երբ հասավ գիշերօթիկ և փոստատարին հանդիպեց: Վերջինս, խորամանկ ժպիտը դեմքին, դիմեց նրան.

- Բարի լույս, պարոն Ռուբեն: Այսօր մի շատ լավ նամակ եմ բերել ձեզ համար, ենթադրում եմ, որ պիտի հաճույք պատճառի ձեզ:

Ճաշասրահ մտնելով անմիջապես մոտեցավ անկյունի սեղանին և նամակը փնտրեց: Կռահում էր, թե ումից է: Սակայն իր անունով ոչ մի նամակ չկար: Մեկ անգամ էլ նայեց, ամենայն ուշադրությամբ: Իսկապես չկար: Մի պահ ուզեց վազել փոստատարի ետևից, նույնիսկ նետվեց դեպի դուռը, երբ այդ պահին Ուրսուլային տեսավ, որ խոհանոցից նայում էր իրեն:

- Փոստատարը քիչ առաջ ասաց, թե նամակ է բերել ինձ համար, կարո՞ղ է Լևոնն է վերցրել, որպեսզի հանձնի ինձ:

Ուրսուլան քարացած կանգնել էր: Տարօրինակ էր նրա լռությունը:

- Դու այստե՞ղ էիր, երբ փոստատարը եկավ:

- Այո:

- Որևէ մեկը չի նայե՞լ փոստը:

- Ո՛չ..., - ծոր տալով ասաց սպասուհին:

- Չեմ հասկանում... Կատա՞կ էր, ինչ է, - սրտնեղած ասաց նա և բարձրացավ սենյակ:

Տրամադրությունը միանգամից փչացավ: Սպասուհու պահվածքը տարօրինակ էր: Ինչ-որ բան էր թաքցնում: Սակայն ի՞նչ: Ի՞նչ կարող էր պատահել այս հինգ րոպեի ընթացքում: Որոշեց իջնել ճաշասրահ և նորից հարցնել: Սակայն մինչև խոհանոց մտնելը աչք ածեց անկյունի սեղանին: Թվաց, թե ծրարների դասավորությունը փոխվել է: Դրանք հիմա հովհարաձև փռված էին սե-

զանին և զանազան չափերի ու գույների միջից առանձնանում էր մանուշակագույն մի ծրար (ծանո՜թ գույնը), որը քիչ առաջ չկար: Մոտեցավ, վերցրեց և զարմանքից քարացավ. այո, իրեն էր հասցեագրված, Էրֆուրտից էր (ինչպես ենթադրում էր): Բայց ավելի շատ զարմացրեց ուղարկողի անունը. Յաննի Ապել: Սակայն պիտի շարունակեր զարմանալ. բացահայտորեն երևում էր, որ ծրարը նոր են սոսնձել, նույնիսկ թաց հետքն էր երևում: Շենքում այս ժամին Ուրսուլայից զատ ուրիշ ոչ ոք չկար: Ամեն ինչ պարզ էր. սպասուհին բացել է ծրարը, հետո տեսնելով, որ աղմուկ կլինի, շտապել է սոսնձել և տեղը դնել: Տիկ. Շապազի գիշերօթիկում նման դեպք չէր պատահել: Համենայն դեպս այս երկու տարվա ընթացքում: Սա ի՞նչ արտառոց հետաքրքրասիրություն է: Ինչո՞ւ է այդ աղջիկն իր նամակները կարդում: Եվ արդյոք առաջի՞ն անգամ:

Ուրսուլան երևաց խոհանոցի շեմին: Մեղավոր հայացքը դցել էր ցած, ասես ուզում էր ամոթից գետինը մտնել:

- Տիկին Շապազին չասեք, պարոն Ռուբեն, - մի կերպ արտաբերեց նա: - Շատ եմ խնդրում:

Աղջիկը լուռ արտասվում էր:

- Եթե իսկապես զղջում ես արածիդ համար, չեմ ասի, սակայն ինչո՞ւ ես կարդում իմ նամակները:

Աղջիկը լուռ էր:

- Եվ սա առաջին անգա՞մն է, թե նախորդ նամակներն էլ ես կարդացել:

Աղջիկը մի անորոշ շարժում արեց, սակայն Ռուբենը չհասկացավ և կրկնեց հարցը: Այս անգամ գլխով արեց: Ռուբենը վրդովված էր: Ուրեմն մի քանի ամիս է, ինչ այս անմիտ գեղջկուհին լրտեսում է իր մտերմությունը: Բայց ինչո՞ւ, Տեր Աստված... Սիրահարվե՞լ է... Դժվար էր ասել, քանզի նրա պահվածքի, վերաբերմունքի մեջ նման բան չէր նկատել: Այդ դեպքում ինչո՞ւ: Մի՞թե սա գեղջկական պարզ հետաքրքրասիրություն է:

- Միայն իմ նամակներն ես կարդո՞ւմ:

- Այո, միայն ձերը, - պատասխանեց աղջիկը և սկսեց հեծկլտալ:

- Հանգստացիր, Ուրսուլա, ես ոչ մեկին չեմ հայտնի, սակայն խնդրում եմ անկեղծորեն ասես, թե ինչո՞ւ հատկապես իմ նամակներն սկսեցիր կարդալ:

- Որովհետև... Որովհետև ինձ ստիպեցին...

- Ո՞վ ստիպեց:

- Չեմ կարող ասել, պարոն Ռուբեն, խնդրում եմ..., - բառերը մնացին չարտասանված, քանզի հեծկլտոցն արդեն խեղդվում էր նրան:

Ռուբենը նրան նստեցրեց խոհանոցի աթոռին, արցունքները սրբեց և հանգստացնելով ասաց.

- Ես տեսնում եմ, որ դու ազնիվ աղջիկ ես, մեղքի զգացումը հիմա տանջում է քեզ... Չեմ պնդում, կարող ես չտալ անձնավորության անունը, իսկ ես, ինչպես խոստացել եմ, ոչ մեկին չեմ ասի, սակայն հարցը սրանով չի փակվում, քանզի այդ մարդը, որը տգեղ արարքի է դրդել քեզ, ինձ համար պիտի մնա անհայտ և իր չար գործը շարունակի: Լավ բաների համար մարդու կյանքը չեն լրտեսում... Այդ անձնավորությունն անպայման ինչ-որ ստոր նպատակներ ունի, և դու

նրա անունը չտալով, հովանավորում ես հանցագործին, օգնում նրան, իսկ ինձ հնարավորություն չես տալիս պաշտպանվելու:

Աղջիկը, զարմանքին խառնված մի սոսկումով նայեց Ռուբենի աչքերի մեջ, հետո, հայացքը նորից գցելով ներքև, մրմնջաց.

- Կլաուսը...

Եթե մերկ ձեռքերով չիկացած երկաթը բռներ, երևի այդպես չցնցվեր: Սակայն տիրապետեց իրեն և շատ հանգիստ, գրեթե անտարբեր հարցրեց.

- Իմ նամակագրությունը մեծ է, ենթադրում եմ, որ ինձ ուղարկվող բոլոր նամակներով չէ, որ հետաքրքրված է:

- Ոչ, պարոն Ռուբեն, միայն Էրֆուրտից եկող նամակներով:

Սպասուհին այնուհետև մանրամասնորեն պատմեց, թե ինչպես է ընկել նրա թակարդը, թե ինչպես է գնացել խոստովանահոր մոտ, թե վերջինս ինչպես է համոզել վերջ տալ այդ ամոթալի զբաղմունքին: Եվ որ այլևս չէր կարդում, սակայն նորից եկավ և պահանջեց, որ շարունակի արտագրել նամակները:

- Ես շատ մեղավոր եմ, պարոն Ռուբեն, խնդրում եմ, ասեք, որ իսկապես ներում եք ինձ:

- Ես ներում եմ քեզ, Ուրսուլա, բայց այդ պարոնը չափազանց վտանգավոր մի անձնավորություն է, նրանից ամեն ինչ կարելի է սպասել... Եթե իմանա, որ տեղյակ եմ այս պատմությանը, չգիտեմ, թե ինչ կլինի քո վիճակը:

- Հիմա ի՞նչ պիտի անեմ:

- Առայժմ ոչինչ, շարունակեք առաջվա պես՝ ձևացնելով, թե կատարում ես նրա պահանջները:

- Իսկ նամակների հետ ի՞նչ պիտի անեմ... Ի դեպ, նա երբեմն գալիս է և նամակների կույտը նայում, մի քանի հոգի շարունակում են նրա հետ թղթակցել այս հասցեով:

- Իմ անունով երբ նամակ գա Էրֆուրտից, անմիջապես տար վերև և դիր իմ գրասեղանին, իսկ նրան ասա, թե ոչինչ չի եկել:

Ուրսուլայի հետ ունեցած ծանր խոսակցությունից հետո, ի վերջո, բարձրացավ սենյակ և շտապեց նամակը կարդալ, որն իսկապես Յաննին էր ուղարկել Էրֆուրտից: Նա գրում էր, որ վերջնական հրաժեշտ է տվել Լոզանին, տիկ. Սպիեսի գիշերօթիկին, քանզի ծնողներն անսպասելի եկել և տարել են Էրֆուրտ: Գրում էր, թե այսպես գուցե ավելի լավ է, որ այսուհետ ազատ կլինի գիշերօթիկի բանտային հսկողությունից, որ կարող է ուղղակի իրեն նամակ ուղարկել՝ վստահ, որ այն միանգամից հասնելու է հասցեատիրոջը: Ճիշտ է, այլևս չի կարողանա Ս. Ֆրանսուայի հրապարակով անցնելիս մի քանի վայրկյանով նրան տեսնել՝ պատուհանի մոտ նստած, բայց փոխարենը կկարողանա ամեն օր նամակ ուղարկել: Ինչ վերաբերում է Լոզանից եկող նամակներին, ապա որպեսզի դրանք հասնեն հասցեատիրոջը, Ռուբենը պետք է նամակ գրի տեր և տիկին Ապելներին՝ խնդրելով, որ իրենց նշանեն և թույլ տան թղթակցել: «Նշանել» բառը Յաննին ընդգծել էր, կողքն էլ՝ փակագծի մեջ գրել. «Նրանք ամեն ինչ գիտեն, ես ասել եմ, որ մենք հավերժական սիրո խոստում ենք տվել իրար, պատմել եմ նաև մեր հանդիպումների մասին»:

Իրար ետևից մատուցվող անակնկալներն իսկապես չշմեցրել էին նրան, մեկը չմարսած, մյուսն էր իջնում գլխին: Ինչո՞ւ է Կլաուսը լրտեսում... Ըստ որում, ոչ թե ամբողջ նամակագրությունը, այլ միայն Էրֆուրտից եկող նամակները, այսինքն՝ իր և Յաննիի կապը: Կարո՞ղ է որոշակի դեր խաղացած լինի այն հանգամանքը, որ ինքը՝ Կլաուսը նույնպես Էրֆուրտից է... Հետո ի՞նչ, որ այնտեղից է... Խանդի հա՞րց կա մեջտեղը: Սակայն Կլաուսը հայտնի է որպես կնատյաց, բացի այդ, սեփական նախաձեռնությամբ հազիվ թե նման գործ ձեռնարկեր: Ուրեմն, հանձնարարությո՞ւն է ստացել: Բայց ինչո՞ւ, մի՞թե իր սերը նույնպես կարող է հետաքրքրել այդ զարհուրելի հաստատությանը... Մտածելն անգամ սոսկալի է... Ուրեմն, իրավացի էր Յաննին, երբ խաչելության առջև ասաց, թե ուզում է ապրել մարդկանցից հեռու: Նա, անշուշտ, նկատի ուներ մարդկային նախանձը, չարությունը, հիվանդագին հետաքրքրասիրությունը, ուրիշի գործերի մեջ մշտապես քիթը խոթելու ախտագին մոլուցքը, բայց հավանաբար բնազդով զգում էր դիվական սևեռուն հայացքը, որն իր մթադին հաշիվներից ելնելով հետևում է մեր յուրաքանչյուր շարժումին:

Թերևս կարելի էր որոշ ներողամտությամբ նայել առօրյա հոգսերի մեջ մանրացած մարդկանց կապկային հետաքրքրասիրությունը: Չէ որ սիրահարներն անմիջապես առանձնանում են հասարակության միապաղաղությունից, սկսում են ուրիշ տեսակ քայլել, ուրիշ ձայնով խոսել, ուրիշ հայացքով նայել աշխարհին, նրանցից սկսում է մի լույս ճառագել, որը գրգռում, կուրացնում է մարդկանց, որոնք արդեն վաղուց հաշտվել են խավարի մեջ ապրելուն: Սերն աստվածային բարձր պարգև է, որ, բացառիկ ձիրքերի պես, տրվում է ընտրյալներին, ուստի պետք է խղճալ նրանց, ովքեր դատապարտված են մի ամբողջ կյանք ապրելուն՝ առանց իմանալու, թե ինչ բան է սերը: Սակայն պետական գաղտնի մարմիններն ինչո՞ւ են լրտեսում սերը... Որովհետև Զարի մարմնավորումն են և ուղղված են հենց դրա դեմ, ստեղծված են այն ոչնչացնելու համար: Ուրեմն, ամեն վայրկյան կարող են մեջքից հարվածել... Սակայն ինքն արդեն մի աննշան առավելություն ունի նրանց նկատմամբ, քանզի գիտի, թե ով է իրեն լրտեսողը: Իսկ նման հաստատությունների առավելությունը գաղտնիությունն է: Ուրեմն, նրանք ոչ մի դեպքում չպիտի իմանան, որ ինքը գիտի...

Այնպես էր տակնուվրա եղել ճաշասրահում արված հայտնագործությունից, որ չկարողացավ բավականաչափ խորությամբ ընկալել մյուս առեղծվածը՝ Յաննիի անակնկալ մեկնումը, նրա ծնողներին դիմելու պահանջը, վերջապես տրամաբանության նկատելի բացակայությունը նամակում:

Յաննին չէր գրել մոտ մեկ շաբաթ տևած տանջալից ապրումների, բժշկի այցելությունների, իր վճռականության մասին՝ ստանձնել սպասվող մայրությունը՝ իր բոլոր դժվարություններով հանդերձ, վերջապես (հուրախություն ծնողների) վերջնական հաստատումը, որ ինքը չի հղիացել:

Չէր գրել նաև, որ դրանից հետո ամեն ինչ տեղն էր ընկել, որ վրդովված հայրը բուռն խոսակցություն էր ունեցել տիկ. Սպիեսի հետ և պահանջել, որ ներողություն խնդրի իր դստեր հասցեին արվող երկիմաստ ակնարկների համար, որ նույն օրը երեկոյան մեկ այլ բուռն տեսարան էր եղել՝ այս անգամ Յաննիի և

ծնողների միջև, որ հորն ու մորը դրել էր կատարված փաստի առջև՝ պատմելով իրենց հանդիպումները Խաչելության մոտ, Դան դյու Միդիի լանջերին, որ ինքը՝ Յաննին, սպառնացել էր, թե թույլ չի տա, որ իր հետ վարվեն այնպես, ինչպես Մինայի հետ վարվեցին, որ ինքն արդեն հավերժական սիրո երդում է տվել և իր կյանքը ցմահ պիտի կապի «այդ ուսանողի հետ», որ ծնողները, անակնկալ դեպքերի շարանից, իրենց դստեր վճռական կեցվածքից և, վերջապես, ավագ դստեր հանդեպ ունեցած մեղավորության զգացումից ճնշված, իրավունք էին տվել Յաննիին առայժմ թղթակցել, մինչև որ պարզեն. թե ինչն ինչոց է... Սակայն Յաննին տեսնելով, որ կարողանում է իր կամքը թելադրել, կտրուկ պահանջել էր, որ իրենց նշանեն... Շշմած ու խեղճացած ծնողներն ընդունել են նաև այդ պահանջը, հոգու խորքում փայփայելով հույսի նշույլ, թե Աստված, հավանաբար, մեկ այլ, իրենց կարծիքով ավելի արժանավոր փեսացու կուղարկի այդ ընթացքում...

Այս ամենի մասին պիտի իմանար ավելի ուշ: Եվ գուցե լավ էր, որ այդպես եղավ, որ կարողացավ ուշադրությունը կենտրոնացնել Կլաուսի երկրորդ հայտնությանը:

* * *

Յաննիի համար փոստատարը դարձել էր Էրֆուրտի ամենասիրելի մարդկանցից մեկը: Ամեն առավոտ, ժամը իններից սկսած, պատուհանի մոտ, կազմ ու պատրաստ, սպասում էր նրա հայտնվելուն և նրա համազգեստը տեսնելուն պես, իջնում էր ներքև, որպեսզի դարպասին ամրացված արկղի միջից առավոտյան փոստը հանի: Այս առավոտ էլ, ժամը իններից մի քանի րոպե անց, փոստատարի կարմրաերիզ գլխարկը երևաց հարևան առանձնատան մոտ, այնուհետև մոտեցավ իրենց դարպասին, և Յաննին չտապեց իջնել ներքև: Նա կրկնապատկված անհամբերությամբ էր սպասում Ռուբենի այն նամակին, որը պիտի հասցեագրված լիներ իր ծնողներին: Տասնյոթամյա, կյանքի փորձ չունեցող աղջիկն ավագ քրոջ խորտակված ճակատագրից մի կարևոր դաս էր քաղել. որպեսզի դժբախտությունը չկրկնվի, սկզբից ևեթ պետք է օրինական բնույթ տալ այդ կապին: Լոզանում, ծնողների հետ ունեցած ծանր տեսարանի ժամանակ հենց այդպես էլ հայտարարեց. «Եթե ուզում եք, որ Էրֆուրտում բամբասանքներ չլինեն, ասեք, որ մենք նշանված ենք, և բոլոր անհարկի խոսակցությունները կվերջանան»: Եվ նրա խոսքերը կարծես համոզեցին ծնողներին:

Փոստատարն, օրվա թերթերի հետ, երեք նամակ էր բերել՝ շվեյցարական դրոշմանիշներով ծածկված: Մեկն իրեն էր հասցեագրված, երկուսը՝ հորը: Ռուբենը կատարել էր իր պահանջը և նրա խնդրագիրը հավանաբար այս ծրարի մեջ է, սակայն ո՞վ է այս երկրորդ նամակի հեղինակը, որ ուղարկված է Լոզանից: Հետաքրքիր հասցեն ոչինչ չէր ասում, J. K. սկզբնատառերը՝ նույնպես: Շամպերիում իր ծնողները գերմանացի մի քանի ընտանիքների հետ մտերմացան, հավանաբար դրանցից մեկն է, որ մինչև հիմա մնացել է Լոզանում: Ինչ որ է, գտավ, որ պատշաճ չէ ավելորդ հարցասիրությամբ մորն անհանգստացնել, իսկ

քանի որ հայրն արդեն դուրս էր եկել տնից, ծրարները դրեց նրա դրասեղանին:

Հետո փակվեց իր սենյակում և անմիջապես կլանեց Ռուբենի նամակը, որտեղ հայտնում էր, թե կատարելով իր պահանջը, մի ընդարձակ խնդրագիր է ուղարկել պրն. Ապելին և որ անհամբեր պատասխանին է սպասելու: «Ի՜նչ տարօրինակ տղա է, - իր սենյակի մենության մեջ մտածեց Յաննին: - Նամակի պատճենն ինչո՞ւ չի դրել իմ ծրարի մեջ, հիմա ամբողջ օրը պիտի անհամբեր սպասեմ, որպեսզի իմանամ, թե ինչ է գրել հորս»:

Օրն անցավ տանջալից սպասումների մեջ: Դաշնամուրի դաս ուներ այդ օրը և ընկերուհուն պիտի այցելեր: Սակայն թե՛ նվագելիս, թե՛ ընկերուհիների հետ զրուցելիս շարունակ Լոզանից եկած ծրարն էր աչքերի առջև: Երեկոյան հայրը վերջապես տուն վերադարձավ հոգնած, սակայն բարի ժպիտը դեմքին: Նա, սովորաբար, հանում էր համազգեստը, տան շորերը հագնում և մի կես ժամ հանգստանում: Այնուհետև իջնում էր հյուրասրահ և, ընթրիքին սպասելով, օրվա թերթերը կարդում: Սակայն այսօր սովորականից ավելի մնաց իր սենյակում և երբ այնտեղից դուրս եկավ, նորից ժպտաց Յաննիին և նույնիսկ հարցրեց, թե դաշնամուրի դասն ինչպե՞ս անցավ: Պատասխանելով նրան, Յաննին ուզում էր իր հերթին հարցնել, թե արդյոք կարդա՞ց նամակը, սակայն զսպեց իրեն:

Տանջալից սպասումը տևեց մինչև երեկո, խորացավ ժամուկես տևած ընթրիքի ընթացքում և ծանրացավ ընթրիքից հետո: Յաննին համոզված էր, որ հայրը նամակը կարդացել է, սակայն ոչինչ չէր ասում այդ մասին: Ի՞նչն էր պատճառը: Գուցե ուզում է որոշում առնելուց առաջ ծանրութեթև անել, խորհրդակցել մոր հետ: Այո, շատ հավանական է, մանավանդ որ նամակը հասցեագրված էր «Տեր և Տիկին Ապելներին»: Նշանակում է խոհեմ կլինի համբերել և սպասել ծնողների պատասխանին, ի վերջո նրանք Լոզանում իրենց համաձայնությունը տվեցին:

Իսկ ինչպե՞ս է գրել Ռուբենը: Վստահ եմ, որ նա ճիշտ բառեր կգտնի՝ իր ծնողներին համոզելու համար: Բայց որքա՜ն կուզեր կարդալ նրա նամակը: Ծնողների ննջարանը ճիշտ իր գլխավերևն էր: Նրանք, սովորաբար, ժամը տասին մտնում էին անկողին և պատահում էր, որ մինչև տասնմեկը խոսում էին զանազան հարցերից: Օրվա մեջ դա միակ ժամն էր, երբ բազմազբաղ գնդապետը կարող էր հանգիստ խոսել կնոջ հետ: Եվ որքան էլ ցածր խոսեին, գրեթե շշուկով, այնուամենայնիվ, գիշերվա անթերի լռության մեջ նրանց ձայները երբեմն հասնում էին մինչև վարի սենյակը: Յաննին ընտելացել էր այդ աննշան աղմուկին և չէր նեղվում դրանից:

Այդ գիշեր, սակայն, զրույցը սովորականից ավելի տևեց, և ոչ թե շշուկով, այլ նույնիսկ բարձր էին խոսում: Կաթողիկեի զանգակատունը տասներկու զարկով նոր օրվա սկիզբն ազդարարեց, սակայն շարունակում էին զրուցել:

Դժվար չէր կռահել, թե ինչի մասին են խոսում: Եվ եթե անցած օրվա ընթացքում իր նյարդերն այդքան բորբոքված չլինեին տանջալից սպասումից, հավանաբար մի քանի էջ կարդալուց հետո հանգիստ քուն մտներ, վստահ, որ վաղը դրական պատասխան է տրվելու Ռուբենի խնդրանքին: Սակայն նա դուրս եկավ միջանցք, բարձրացավ երկրորդ հարկ և մոտեցավ ծնողների ննջարանին:

Առաջին անգամն էր, որ դռան ետևից ականջ էր դնում: Սակայն արդարացում գտավ. չէ որ խոսակցությունն, ամենայն հավանականությամբ, առնչվում է իր անձնական խնդիրներին և որ իրեն վաղ թե ուշ պիտի տեղյակ պահեն:

Երրորդ հարկի միջանցքում արդեն բավական հստակ լսվում էր նրանց ձայնը, իսկ երբ ականջը հպեց դռանը, թվաց, թե իր ներկայությամբ են խոսում:

- ...սակայն, եթե այդ տղան հիվանդ է, - ասաց մայրը: - Ինչպե՞ս է իրավունք ստացել հիվանդանոցում աշխատելու...

- Գուցե թաքցրել է:

- Միամիտ բաներ ես ասում, Ֆրանց, այդպիսի հիվանդությունը հասարակ մարդկանցից չես կարող թաքցնել, ուր մնաց հիվանդանոցի բժիշկներից:

- Բայց, սիրելիս, ես ստույգ տեղեկություններ ունեմ, որ այդ տղան մեկ տարվա մեջ մի քանի անգամ գնացել է Լեյզեն, դոկտոր Վելլերի մոտ: Ես պարզել եմ նաև, որ նամակագրություն ունի նրա հետ:

- Էհ, եթե հիվանդ լիներ, կմնար և կբուժվեր, ինչո՞ւ պիտի հետ գար:

- Հավանաբար դրամ չունի, Լեյզենում բուժվելու համար միջոցներ են պետք:

- Զգիտեմ, թե ինչ ասեմ, Ֆրանց, դեռ ստուգել է պետք...

- Ստուգում ենք, սիրելիս: Սա դեռ ամբողջը չէ: Իմացել ենք, որ նա բավական վատ տպավորություն է թողել նախկին գիշերօթիկում, որտեղ մեկ ամիս է մնացել:

- Ի՞նչ է արել, որ վատ տպավորություն է թողել:

- Շարունակ հիվանդ է եղել, ամեն առիթով վիճել է գիշերօթիկի տիրոջ հետ:

- Հավանաբար դժգոհելու պատճառներ է ունեցել: Ի դեպ, կարող է հենց այդպես է եղել, քանզի քո ստացած տեղեկությունների համաձայն, մեկ ամիս է մնացել այդտեղ:

- Այո, որովհետև գիշերօթիկի տերը վռնդել է նրան:

- Որտեղի՞ց գիտես:

- Իմ խնդրանքով մի անձնավորություն գնացել զրուցել է գիշերօթիկի տիրոջ հետ:

- Ես ճանաչո՞ւմ եմ այդ անձնավորությանը:

- Ոչ:

- Իսկ կարո՞ղ եմ իմանալ, թե ով է:

- Կներես, սիրելիս, չեմ կարող ասել... Խոստացել եմ, որ մեր մեջ պիտի մնա:

- Գուցե ճանաչում եմ այդ անձնավորությանը:

- Չեմ կարծում... Բավական է, Գրետա, այդ մասին այլևս մի հարցրու:

- Լավ, մի վերջին հարց. որքա՞ն ես վճարում այդ ծառայության համար:

- Ոչ մեկ պֆեննինգ, նա անշահախնդիր է օգնում:

- Եթե դրամ տված լիներիր, հավանաբար ավելի ճշգրիտ տեղեկություններ ստանայիր:

- Ինչո՞ւ ես այդպես կարծում:

- Որովհետև ինձ թվում է, թե այդ մարդն ինչ-որ շահ ունի այդպիսի անշահախնդիր ծառայություն մատուցելու համար:

- Լսիր, Գրետա, կարծես այդ ուսանողի փաստաբանը լինես:

- Դու էլ կարծես դատավորը լինես, - ծիծաղելով հակադարձեց մայրը:

- Լավ, կատակը մի կողմ, բայց ես տեսնում եմ, որ այդ տղային սկսում ես հավանել:

- Ոչ, Ֆրանց, դու չափազանցում ես... Ես պարզապես նշեցի, որ բարեկիրթ և խելացի մարդու տպավորություն է թողնում:

- Այդ նամակը բավական հմուտ է շարադրված, եթե, իհարկե, ինքն է գրել:

- Սակայն ինքն է ստորագրել... Լավ, դա չէ կարևորը, հիմա ի՞նչ պատասխան պիտի գրենք:

- Ես չեմ շտապում պատասխանել:

- Ինչո՞ւ:

- Տեսնենք այս լուրերը ճիշտ են, թե ոչ:

- Սիրելիս, այդպես չի լինի, վաղն էլ կարող է լուր ստանաս, թե այդ ուսանողը մարդասպան է:

- ...

- Այսպես անորոշ չենք կարող թողնել: Մեր աղջկան էլ պիտի պատասխան տանք՝ այո, թե ոչ:

- Ես այդ տղային նամակ չեմ գրի:

- Եթե անգամ պարզվի, որ հիվանդության լուրը սո՞ւտ է...

- Զգիտեմ:

- Ես հասկանում եմ, դու խոսափում ես պատասխանատվությունից, բայց հիշիր, որ Լոզանում Յաննիին խոստումներ տվեցինք:

- Ես չեմ հրաժարվում իմ խոսքերից, պարզապես ուզում եմ որոշ բաներ ճշտել:

- Դու Լոզանում նաև ասացիր, որ Յաննիի ճակատագիրը հանձնում ես իմ տնօրինությանը:

- Այո, կանացի խնդիրներ կային, որոնց չէի ուզում խառնվել:

- Շատ լավ, դու շարունակիր ճշտել քո ստացած լուրերը, իսկ ես վաղը նրան կհայտնեմ, որ կարող է շարունակել նամակագրությունը:

- Իսկ նշանվելու հարցը...

- Դա ավելի շատ մեզ է պետք, քան նրան, որպեսզի այստեղ կարողանանք բամբասողների բերանները փակել:

- Միևնույն է, պիտի խոսեն:

- Սակայն նույնը չի լինի, ինչ Մինայի պարագայում էր: Յաննին մեզնից ավելի խելացի է, իր ընկերուհիներին արդեն ասել է, թե նշանված են: Այնպես որ, եթե մերժենք, ծիծաղելի դրության մեջ կհայտնվենք բոլորս:

- Այդ դեպքում ասա, որ կարող են շարունակել նամակագրությունը:

- Իսկ պատասխա՞նը:

- Պատասխանն առայժմ կուշանա:

Ամուսինները փոխեցին իրենց գիշերային զրույցի նյութը, իսկ Յաննին վերադարձավ սենյակ: Նա հասկացավ, որ քայլ առ քայլ մոտենում է իր նպատակին:

* * *

Մեծագույն զզվանքով հաղթահարեցին տեր և տիկին Բորժաների հաստատության՝ իր նախկին գիշերօթիկի շեմը: Լևոնն անպայման ցանկացավ ուղեկցել նրան, ավելին՝ ներկայանալ որպես Պոլսից նոր ժամանած ուսանող, որն էժան գիշերօթիկ է փնտրում: Այլ խոսքով, Ռուբենը նրան հաճախորդ էր բերում: Մի բան, որն անպայման պիտի հաճույք պատճառեր կիսով չափ դատարկ այդ հաստատության տիրոջը: Դա Լևոնի գաղափարն էր և նա գտնում էր, որ միայն այդ կերպ կկարողանա իր ուզած տեղեկությունն ստանալ գիշերօթիկի տիրոջից: Իսկ իր գաղափարն էր գնալ այնտեղ և այդ «ստոր արարածի» մռութը ջարդել: Վերջնական խոսքը մնաց Պերեսին: Նա գտավ, որ Լևոնը ճիշտ է և վասն գործի կատարյալ հաջողության, խորհուրդ տվեց մի փոքրիկ ծաղկեփունջ տանել տիկ. Բորժային: «Ոչ մի դեպքում», - գոռաց նա, այս վերջին առաջարկը լսելով:

Ներս մտնելուն պես ծանոթ ճենճահոտն առավ և քնձռոտ ու մշտապես սոված կատուներին տեսավ, որոնց մազերը տարածված էին գիշերօթիկով մեկ: Պրն. Բորժան նրան տեսնելով այնպես ժպտաց, հիացական այնպիսի ճիչ արձակեց, ասես տարիներով իրենից բաժանված հարազատ եղբորն էր հանդիպում:

- Օ, ի՜նչ հաճելի անակնկալ մատուցեցիք, պարոն Ռուբեն, կարոտել էինք ձեզ:

- Շնորհակալ եմ, պարոն Բորժա, - մի կերպ արտաբերեց նա: - Ահա, ինչպես տեսնում եք, հիշեցինք ձեզ և կարծում եմ լավ առիթով:

- Օ՜, մեծ պատիվ է: Ինչո՞վ կարող եմ ծառայել:

- Պարոնն իմ ազգականն է, - ասաց նա՝ Լևոնին ներկայացնելով: - Մի քանի օր առաջ եկավ Կոստանդնուպոլսից այստեղ ուսանելու, ուստի հարմար գնով մի պատշաճ գիշերօթիկ է փնտրում, ես էլ որոշեցի ձեզ մոտ բերել:

- Շատ ճիշտ եք արել, պարոն Ռուբեն, բառացիորեն երեկ մի սենյակ ազատվեց և կարո՞ղ եք գուշակել, թե որը... Այն մեկը, որտեղ դուք էիք ապրում... Ձեր ազգականը վաղն իսկ կարող է դալ և գրավել այդ սենյակը:

- Կարո՞ղ եմ արդյոք նայել, - համեստորեն հարցրեց Լևոնը:

- Իհարկե, պարոն, - ասաց պրն. Բորժան և բանալին հանձնելով, ավելացրեց. - Խնդրում եմ առաջնորդեք, պարոն Ռուբեն:

Հինգ րոպե հետո Լևոնը, բանալին վերադարձնելով, ասաց.

- Համաձայն եմ, վերցնում եմ այդ սենյակը:

Հետո երկու թղթադրամ հանելով ավելացրեց.

- Ստացեք, խնդրում եմ, կանխավճարը:

- Օ, ոչ, պարոն, բնավ պարտադիր չէ, կարող էիք ամսվա վերջին վճարել...

- Ոչ, ոչ, ես պնդում եմ:

- Բայց դուք տասը ֆրանկ ավել եք տվել...

- Ընդունեք իմ կողմից որպես նվեր, - մեծահոգաբար հայտարարեց Լևոնը:

- Ի՜նչ ազնիվ է ձեր ազգականը, պարոն Ռուբեն... Ամեն առիթով ասում եմ, որ ձեզ նման կենվոր չեմ ունեցել...

- Գիտեմ, գիտեմ, - խաղի մեջ մտավ Ռուբենը: - Իմացա, որ բոլորովին վերջերս ինչ-որ մեկը եկել էր այստեղ տեղեկություններ հարցնելու իմ մասին:

- Ձեր մասի՞ն...

- Այո, այո, իմ մասին, և ականջիս հասավ, որ գովեստով եք արտահայտվել:

- Հա, հիշեցի... Իսկապես, մի տասը-տասներկու օր առաջ մեկը եկավ հարցրեց ձեր մասին:

- Ձներկայացա՞վ:

- Ոչ... Մի երիտասարդ էր՝ ակնոցով, ցանցառ մորուքով, նիհար ու բարձրահասակ:

Լևոնն ու Ռուբենը հարցական իրար նայեցին:

- Այստեղ հաճախ են գալիս և հարցնում իմ նախկին ու ներկա կենվորների մասին... Մանավանդ ոստիկանությունից... Ի՞նչ կարող ես անել, անհանգիստ ուսանողներ են... Բայց այդ տղան մի քիչ տարօրինակ թվաց ինձ. իմ բոլոր խոսքերը գրանցում էր ծոցատետրի մեջ: Դա ինձ դուր չեկավ: Դուրս գալուց հետո որոշեցի հետևել նրան, և տեսա, թե ինչպես թեքվեց հարևան փողոց, քայլեց մինչև վերջ, մտավ գարեջրատուն, որտեղ հավանաբար սպասող կար... Նստեց նրա առջև, գլուխ-գլխի խոսեցին մի տասը րոպե, այնուհետև այդ սպասող պարոնը ծոցատետրն առավ, մի քանի մետաղադրամ գցեց ակնոցավորի առջև, դուրս եկավ գարեջրատնից և քայլեց դեպի Սիտե-Դեվան:

- Ի՞նչ տեսք ուներ այդ պարոնը:

- Կլիներ մոտ երեսուն տարեկան, չիկահեր, կարճ կտրած մազերով, կարճ բեղերով, միջահասակ, ճերմակ ձեռնոցներ էր հագել և մի նուրբ ձեռնափայտ բռնել:

Լևոնը խոսուն հայացքով նայեց Ռուբենին: Վերջինս զվարթ ձայնով ասաց.

- Շնորհակալ եմ, պարոն Բորժա... Ուրեմն, վաղվանից սպասեք իմ ազգականին:

- Ինչո՞ւ եք չտապում պարոնայք, մնացեք միասին ընթրենք:

- Թող մնա մյուս անգամ, պարոն Բորժա:

Նրանք դուրս եկան, լուռ քայլեցին մինչև փողոցի անկյուն, ետ նայեցին ասես համոզվելու, որ պրն. Բորժան իրենց չի հետևում:

- Հուսամ ճանաչեցիր այդ չեկ պարոնին:

- Այո, կարող ես անունը չտալ, - պատասխանեց Ռուբենը:

Լուռ քայլեցին մինչև նշված գարեջրատունը և նորից ետ նայեցին:

- Այդ տղան ո՞ր քաղաքից է, - հարցրեց Լևոնը:

- Էրֆուրտից:

Լևոնը կանգնեց փողոցի մեջտեղում և Ռուբենի աչքերի մեջ նայելով վրդովված ասաց.

- Ինչո՞ւ ավելի շուտ չասացիր, նույնիսկ կարիք չէր լինի այստեղ գալու:

- Ես կասկածում էի, բայց ուզում էի հարյուր տոկոսով համոզվել:

- Հիմա ի՞նչ ես անելու... Պիտի խոսե՞ս Կլաուսի հետ:

Լևոնին չէր պատմել Ուրսուլայի հետ ունեցած տեսարանի մասին, խնայելով աղջկան և, անշուշտ, հիշելով իր խոստումը, որ գաղտնիքն իրենց մեջ կմնա:

- Զգիտեմ, - ասաց նա: - Բայց հավանաբար արժեր մի երկու ապտակ հասցնել...

- Ի՞նչ պիտի շահես դրանից... Դու մտածիր, թե այդ գերմանացին ինչու է խառնվել այս պատմությանը...

- Ինձ դա չի հետաքրքրում, - գրգռված պատասխանեց Ռուբենը:

- Իզուր... Ես կարծում եմ, որ նա պարզապես պատվեր է կատարել և ամենայն հավանականությամբ Յաննիի ծնողների պատվերը: Դա նույնիսկ քո օգտին է, նշանակում է նրանք հետաքրքրվում են քեզնով... Ուզում են ամեն ինչ իմանալ իրենց ապագա փեսայի մասին, և սրան են դիմել, քանի որ իրենց համաքաղաքացին է:

- Սակայն այդ սրիկան ստերով է լցրել նրանց գլուխը... Նրանք նույնիսկ չբերահաճեցին իմ նամակին պատասխանել:

- Հասկացիր, այդ տղան նախանձում է քեզ, ավելին, նրանք մեզ արհամարհում են... Դու նրանց քթի տակից իրենց գեղեցկուհուն ես փախցնում՝ քո արժանիքներով... Այդ զրպարտությունները քո առավելությունն են, քանզի դրանով ապացուցում է, որ ստից զատ ուրիշ փաստարկ չունի քո դեմ: Քեզ մնում է ամենայն հանգստությամբ, առանց վրդովվելու, ճշմարտությունը ներկայացնել...

- Ես իմ անելիքը լավ գիտեմ, - լարված հանդարտությամբ պատասխանեց Ռուբենը, - և ես խոհեմ կլինեմ, չափազանց խոհեմ:

Հաջորդ օրը, համալսարանում, հանդիպեց Կլաուսին և մշտական չոր քաղաքավարությամբ բարևեց: Գերմանացու դեմքին անփոփոխ ամբարտավան արտահայտությունն էր: Դասերի ժամանակ մի քանի անգամ ծածուկ հայացք նետեց նրա կողմը: Շարունակ նույն արտահայտությունն էր դեմքին: Զգաց, որ առաձգական մի տարտամություն կա գլխում, որ կատարելապես անդամալուծել էր նրան: Մի պահ թվաց, թե մոռացել է երեկվա վրդովմունքի պատճառն ու դրա մեղավորին և որ այդ անակնկալ մոռացումը հաճելի մի անդորր է պարգևում, ազատում ինչ-որ բան ձեռնարկելու ծանր պարտադրանքից:

Դասերի ընթացքում կարծես մոռացավ փքուն լրջությամբ զարդարված այդ կերպարանքը: Սակայն դասերից հետո, երբ նրան տեսավ ուսանողների մի խմբի հետ մերձակա սրճարանը մտնելիս, ամոթի ու մեղավորության սաստիկ մի զգացում մտրակեց նրան: «Կորչի՛ Լևոնը՝ իր եգիպտական դիվանագիտությամբ», - որոշեց նա և քայլերն արագացրեց: Հատկապես մի մանրուք նկատեց,

որ ավելի սրեց նախորդ օրվա զայրույթը. ուսանողների անհոգ, ուրախ և համակրելի դեմքերի կողքին նրա խրոխտ ամբարտավանությունը պարզապես ծիծաղելի էր և զզվելի: Ասես քայլող արձան լիներ՝ կենդանի, աշխույժ և բարի մարդկանց մեջ: Բայց ինքը լավ գիտեր, թե ինչպիսի ստորություններ, ինչպիսի ողբերգություններ և որքան արյուն կա այդ շինծու ծանրախոհության տակ... Հենց դա էր, որ խարազանեց նրան:

Խմբի ետևից մտավ սրճարան: Բազմաթիվ ծանոթ դեմքեր տեսավ: Մի քանի սեղաններից նրան կանչեցին: Մի պահ վարանեց, հետո մոտեցավ այն խմբին, որտեղ գերմանացին էր: Քիչ հետո գարեջրի գավաթները հայտնվեցին սեղանին: Ուրախ մթնոլորտն ավելի բորբոքվեց: Ռուբենը գավաթն առավ, ոտքի կանգնեց, մի կում արեց, երկրորդը, հետո բարձրաձայն ու հստակ արտասանեց.

- Յուրգեն Կլաուս:

Գերմանացին, որ այդ պահին ինչ-որ բան էր պատմում կողքի նստածին, ամբարտավանությանը հարցական երանգ հաղորդած նայեց Ռուբենին: Վերջինս անսպասելի և կտրուկ մի շարժումով գավաթի ամբողջ պարունակությունը լցրեց նրա երեսին և նույն պահին տեսավ, թե ինչպես չքվեց, փոշիացավ խրոխտ դիմակը: Անակնկալը խեղճացրել էր նրան: Գրպաններում խուճապահար ու ձախավեր շարժումներով թաշկինակ էր փնտրում: Կլաուսի կողքը նստած ուսանողն իրենը հանեց և տվեց նրան:

- Ինչո՞ւ լցրեցիր գարեջուրը, - մեղադրական շեշտերով հարցրեց ուսանողներից մեկը: - Քեզ ի՞նչ է արել որ...

- Ինքը լավ գիտի, թե ինչու, - անվրդով պատասխանեց Ռուբենը: - Ես կուզեի, որ ինքն ասեր:

- Իսկ ի՞նչ է պատահել... Ի՞նչ պիտի ասի...

- Նա լավ գիտի, թե ինչ պիտի ասի, և եթե ապացուցեց, որ ես իրավունք չունեի այդպես վարվելու, բոլորիդ ներկայությամբ ներողություն կխնդրեմ նրանից:

- Իսկ եթե չապացուցե՞ց...

- Այդ դեպքում երկու լուծում կա. կամ նա կուլ է տալիս այս ամոթանքը, կամ ինձ հրավիրում մենամարտի, - միևնույն պաղարյունությամբ պատասխանեց Ռուբենը և շարունակեց՝ դիմելով Կլաուսին. - Պատվի հարցերը կարծեմ այդպես են լուծվում ձեր միջավայրում, պարոն ազնվական:

- Իրավացի եք, պարոն, - պատասխանեց Կլաուսը, որն արդեն հասցրել էր ոչ միայն երեսը սրբել, այլև նորից ամբարտավանության դիմակի ներքո պատսպարվել: - Մեր միջավայրում ընդունված է նաև մեծահոգաբար հակառակորդին թողնել զենքի ընտրությունը, ինչ վերաբերում է մյուս մանրամասներին, ապա այսօր երեկոյան երկտող կստանաք ինձնից:

- Ընդունում եմ ձեր առաջարկը, - ասաց Ռուբենը, առաջ գցելով իր բռունցքը: - Ահա իմ զենքը:

Հետո մոտեցավ մատուցասեղանին, կոնյակ պատվիրեց և, դիմելով սրահում նստած ուսանողներին, ասաց.

- Մեր կենացը:

* * *

Լուրն իրենից շուտ էր հասել տիկ. Շապազի գիշերօթիկ: Առաջինը Ուրսուլան դեմը դուրս եկավ՝ տագնապը դեմքին: «Հանգիստ կաց, ես նրան ոչինչ չեմ ասել», - շշնջաց ականջին: «Ես ձեզ համար եմ անհանգստանում, պարոն Ռուբեն», - պատասխանեց աղջիկը: Տիկին Շապազը հայտարարեց, որ այդ պարոնին երբեք չի սիրել: «Բայց լսել եմ, որ ուզում է վերադառնալ այստեղ», - կատակով ասաց Ռուբենը: «Իմ դռները փակ են նրա առջև»: Էֆրաիմ Կացը հայտնվեց:

- Գարեջուրն ափսոս էր, - ասաց նա: - Պետք էր պարզապես թքել նրա երեսին:

- Թերևս...

- Եթե պետք է, կարող եմ վկայություն տալ, որ հայհոյել է ձեզ:

- Շնորհակալ եմ, Կաց, բայց առայժմ թող պատասխան տա իր արածի համար:

Ինչպես սպասվում էր, Լևոնը դատապարտեց Ռուբենի քայլը:

- Արածդ կատարյալ հիմարություն է, - ասաց նա: - Ինչո՞ւ ես մատդ խոթում մեղվի փեթակը: Բախտդ բերել է, որ քեզ է թողել զենքի ընտրությունը, ի՞նչ պիտի աներիր, եթե ասեր, որ ատրճանակով եք կռվելու... Նա քեզ պարզապես կսպաներ, չէ որ նախկին սպա է:

Պերեսն, ընդհակառակը, ոգևորված էր այդ միջադեպով:

- Ափսո՜ս, որ այնտեղ չէի, պատկերացնում եմ, թե ինչ հոյակապ տեսարան է եղել... Ես համոզված եմ, որ դու նրա ռեխը կջարդես, վախկոտի մեկն է, հետո ի՞նչ, որ նախկին սպա է:

Երեկոյան ժամը իններին, երբ գիշերօթիկի կենվորներն ընթրելուց հետո նստած զրուցում էին, ծխում կամ օրվա լրագրերը նայում, մի երիտասարդ դուռը զանգեց և ասաց, որ ծրար ունի պարոն Ջիլինկիրյանի համար: Ստվարաթղթի պես հաստ և ընդարձակ այցետոմսի վրա գրված էր հետևյալը. «Հաճեցեք վաղն առավոտյան ժամը 8.00 ձեր մարտավկաների հետ ներկա լինել Սովաբլեն անտառի լճակի ափին գտնվող տաղավարի մոտ: Հարդանքներով՝ Յուրգեն Կլաուս»:

Այս անտառի տխուր հոչակն առավել քան ծանոթ էր նրան: Դիահերձարանում հաճախ կարելի էր տեսնել այնտեղից բերվող խեղանդամված, խեղդված կամ խեղդամահ, կամ պարզապես հրազենի հետքեր կրող դիակներ: Բնության այդ հրաշք անկյունը գտնվում էր քաղաքից վեր, զգալի հեռավորության վրա: Լիճը և անտառը գեղեցկության յուրատեսակ մրցույթ էին հայտարարել՝ թողնելով մարդուն որոշելու՝ ցամաքի տարերքն է ավելի հոյակապ, թե ջրինը: Մարդը, սակայն, յուրովի էր լուծել այդ վեճը՝ երկուսի արանքում կառուցելով Լոզան քաղաքը, որն սկիզբ էր առնում լճի ափից և թեք լանջերով տարածվում դեպի վեր, և երբ նավակով հեռանում էիր դեպի լճի կենտրոն ու նայում վեր, ապա հստակ տեսնում էիր, որ քաղաքը միտում ունի ծավալվելու ոչ այնքան դեպի աջ կամ ձախ, որքան դեպի կանաչի այդ զանգվածը:

Երկտողի բովանդակությունը հնարավոր չեղավ թաքցնել ճաշասրահում նստած ուսանողներից, որոնցից մի քանիսը ներկա էին աղմկահարույց տեսարանին: Զարմանալի մի խանդավառությամբ էին համակվել նրանք: Ուսանողները Կլաուսին չէի սիրում, մինչդեռ Ռուբենի հանդեպ նկատելի համակրանք կար: Կռիվները, զանազան բախումները և անգամ ծեծկռտուքները հազվադեպ երևույթներ չէին ուսանողների կյանքում: Մշտական բողոքներ էին գալիս սրճարաններից, գարեջրատներից, հասարակական զանազան վայրերից: Գործը հասնում էր մինչև ոստիկանատուն, այնուհետև ռեկտորատ, որտեղ մեղավորի գլխին գայլի ավետարան կարդալով ազատ էին արձակում, երբեմն-երբեմն տուգանում, իսկ շատ հազվադեպ վտարում համալսարանից և երկրից:

Կռիվները զանազան պատճառներով կարող էին լինել, սակայն սրճարանի միջադեպը մեկնաբանվեց որպես բախում խանդի կամ, ավելի շուտ՝ նախանձի հողի վրա, մանավանդ որ դասական եռանկյունի էր կազմվում. մի կողմից Ռուբենի և գերմանուհի աղջկա սերը, ինչի մասին ուսանողներից շատերը գիտեին, մյուս կողմից աղջկա համաքաղաքացին, որը խանդում է կամ, ավելի շուտ, ծուռ աչքով նայում այդ մեզալյանսին, որը վիրավորում է նրա տեվտոնական ինքնասիրությունը: Գրեթե բոլորը պաշտպանում էին Ռուբենին և արդարացնում նրա ծայրահեղ քայլը: Սրան գումարվում էր նաև համալսարանական շրջանակներում ծնունդ առած խիստ բացասական վերաբերմունքը գերմանացի ուսանողների հանդեպ, որոնք, կարելի էր ասել, կռիվների հիմնական հրահրողներն էին:

Առավոտյան ժամը յոթին գիշերօթիկի ուսանողները երեք կառքով ճամփա ընկան դեպի Սովաբլեն անտառ: Սպասվածին հակառակ Ռուբենը գիշերը հանգիստ քնեց և արթնացավ առույգ տրամադրությամբ: Տեղ հասան նշանակված ժամից քառորդ պակաս և այնտեղ ուսանողների ստվար մի խումբ տեսան, որը գնալով աճում էր: Գալիս էին քաղաքի տարբեր ծայրերից, մի քանիսն արդեն կոնծել էին, մյուսներն էլ կատարները տաքացնում էին տեղում, շշերը ձեռքից-ձեռք էին անցնում, իսկ դատարկվելուց հետո շպրտվում լճակի մեջ: Նրանք մոտենում էին Ռուբենին, քաջալերում և պահանջում, որ «Վիլհելմ կայզերի ռեխը ջարդուխուրդ անի»:

Ուղիղ ժամը ութին, Սովաբլեն անտառի հյուսիսից, մի կառք մոտեցավ: Բոլորը նայեցին այդ կողմը, աղմուկը դադարեց: Կառքի միջից երեք հոգի դուրս եկան և, ուսանողների խումբը տեսնելով, զարմացած կանգ առան: Ի դեմս այդ երեքի ուսանողները ճանաչեցին Կլաուսին և նրա մարտավկաներին և, միահամուռ «հու» բարձրացնելով, արժանի ընդունելություն ցուցաբերեցին, որն, ի վերջո, վերածվեց գոռում-գոչյունների, սպառնալից ու վիրավորական արտահայտությունների: Ռուբենը մի կողմ տարավ իր մարտավկաներին՝ Լևոնին և Պերեսին:

- Լսեք, - ասաց նա, - սա վերածվում է զավեշտի:

- Մեղքն իրենն է, - պատասխանեց Պերեսը: - Եթե ես ու դու կռվելու լինեինք, ոչ ոք այստեղ չէր գա հասնի, որովհետև մեզ չեն ատում... Ուստի եկել են, որ տեսնեն, թե ինչպես է ծեծ ուտելու:

Կլաուսի մարտավկաներից մեկը՝ բարձրահասակ, ձիգ, մոտ քառասուն տարեկան տպավորիչ տեսքով մի պարոն, մոտեցավ Պերեսին ու Լևոնին, սև ցիլինդրը թեթևակի բարձրացնելով ողջունեց:

- Պատիվ ունեմ ներկայանալու, պարոնայք, չեք կարծո՞ւմ, որ անհրաժեշտ է վերջնական եզրակացության գալ մենամարտի պայմանների վերաբերյալ:

- Սիրով կլսենք ձեզ, մեծարգո պարոն, - պատասխանեց Պերեսը:

- Նախ կուզեի իմանալ, - սկսեց Կլաուսի մարտավկան: - Արդյոք պատշա՞ճ եք համարում այս բազմության ներկայությունը և չեք գտնո՞ւմ, որ նրանց պահվածքը բավականաչափ վայելուչ չէ... Զասած այն մասին, որ իրենց աղմուկաղաղակներով կարող են խանգարել մենամարտի բնական ու արդար ընթացքը:

- Մենք չենք կանչել նրանց... Դուք, անշուշտ, գիտեք, որ միջադեպը տեղի է ունեցել սրճարանում, ուր այդ պահին նվագագույնը հիսուն ուսանող կար... Սակայն գտնում ենք, որ լիովին արդարացի են ձեր պահանջները մենամարտի հավասար պայմանների վերաբերյալ, ուստի բնավ դեմ չենք լինի, եթե պարոն Կլաուսն այստեղ հավաքի Լոզանում բնակվող իր բոլոր բարեկամներին, սակայն վստահ չենք, թե նրանք իրենց թվով կգերազանցեն ուսանողների այս խմբին:

Ի վերջո պայմանավորվեցին հետևյալ կերպ. մենամարտը տեղի կունենա լճակի ճիշտ կենտրոնում գտնվող փոքրիկ կղզու վրա, հավաքված բազմությունը ափից կարող է դիտել, պայմանով, որ պահպանի բացարձակ լռություն և քաջալերական կամ ծաղրական արտահայտություններ չհնչեն: Նկատի ունենալով, որ Ռուբենը որպես զենք առաջարկել է բռունցքը, ապա մենամարտող կողմերը պիտի առաջնորդվեն անգլիական բոքսի կանոններով, այսինքն՝ հարվածել կարելի է միայն բռունցքներով, գոտկատեղից ցած հարվածն արգելվում է, այս պայմանները խախտողը կհամարվի պարտված: Հակառակորդից մեկի ընկնելու դեպքում, մյուսը տասը քայլի վրա սպասելու է մարտավկաների վճռին: Պարտված կհամարվի նա, ով տասը վայրկյանից ավելի կմնա գետնին ընկած:

Մարտավկաներն ուսանողներին բացատրելուց հետո, Ռուբենի և Կլաուսի հետ, երկու նավակով, լողացին դեպի կղզի, որն ասես ճիշտ կենտրոնում էր դրված և կղզու բոլոր ափերից զրեթե միևնույն հեռավորությունն ուներ՝ հիսուն-վաթսուն մետր: Իդեալական վայր մենամարտերի համար. կլոր, հարթ տարածք՝ ծածկված փափուկ խոտով:

Ափ հասնելուն պես խմբերը կանգնեցին դեմ դիմաց, իրարից քսան մետր հեռավորության վրա: Կլաուսը հանդիսավորությամբ հանեց լայնեզր, սև գլխարկը, թիկնոցը, ճերմակ ձեռնոցները և գավազանի հետ տվեց մարտավկաներից մեկին, այնուհետև, մի փոքր վարանելուց հետո, հանեց նաև բաճկոնը և նոյեմբերյան պաղ ու խոնավ օդի մեջ սկսեց մարզիկի պես թևերը շարժել, առաջացնելով ափին մնացածների զուսպ ծիծաղը: Ռուբենը հետևեց նրա օրինակին, ավելին, սոթտեց շապկի թևքերը, փողկապը հանեց և մի քանի կոճակ բացեց, որպեսզի շարժումները չկաշկանդվեն: Այնուհետև մարտավկաները նրանց բերեցին կենտրոն, կանգնեցրին իրար առջև: Ցիլինդրավոր պարոնը ձեռքով նշան արեց և մարտն սկսվեց:

...Վերջին անգամ ե՞րբ էր բռնցքամարտել: Մեկ տարի առաջ էր: Ուսանողներով նստած էին սրճարանում: Ուշ երեկո էր: Կողքի սեղանին աղմկոտ մի խումբ կար: Գոռգոռում էին ոչ այնքան գինովությունից, որքան ուշադրության կենտրոնում լինելու համար: Գռեհիկ ու տափակ անեկդոտներ էին պատմում և ցուցադրաբար հռհռում: Հետո սկսեցին խմբովին երգել՝ խլացնելով բոլորին: Սրահը շուտով դատարկվեց: Սրճարանի տիրոջ դիտողություններն օգուտ չունեցան, ընդհակառակը, նրանք ավելի լկտիացան: Ընկերներից մեկն ասաց. «Եկեք գնանք, այստեղ մնալն այլևս անկարելի է»: Մյուս ընկերը բարձրաձայն պատասխանեց. «Իսկ ինչո՞ւ պիտի մենք գնանք, թող սրանք գնան»: Խոսքակռվին անմիջապես հաջորդեց իսկական կռիվը: Ջորսը չորսի դեմ: Հաղթանդամ և ցմփոր մի կարմրամորուս իրեն բաժին ընկավ: Երկու անգամ կարողացավ խուսափել նրա հարվածներից, մուրճի պես հուժկու բռունցքներն ականջին քսվելով կորչում էին պարապի մեջ: Երրորդ հարվածից հազիվ խուսափեց և ինքն էլ չզգաց, թե ինչպես բռունցքը դիպավ կարմրամորուսի ծնոտին... Զարմանքից կախված նրա բերանը տեսավ... Երկրորդ հարվածը դիպավ քթին, և արյունը հորդեց... Կարմրամորուս հսկան տապալվել էր սեղանի կողքին: Պատասխանատվության և հանցանքի սոսկալի մի զգացում ստիպեց նրան կռանալ և անձեռոցիկով արյունը սրբել, իսկ նա վախվորած ու զարմացած նայում էր հաղթողին: Ընկերներին տեսավ, որ իրենց ախոյաններին ծեծելուց և քշելուց հետո հավաքվեցին սեղանի շուրջ և սկսեցին ծիծաղել...

Մանկության տարիների կռիվները հիշեց, երբ թաղը դուրս էր գալիս թաղի դեմ... Կռվում էին ամեն ինչով՝ քարերով, փայտերով, պարսատիկներով և, իհարկե, բռունցքներով... Հարվածներ ստացավ, նույնիսկ վիրավորվեց, բայց ոչ մի անգամ չծեծվեց... Կռիվներից հետո ընկերները պատմում էին, որ ինքը կատաղի, երբեմն առանց նայելու, թե դիմացինն ինչ ուժի տեր է, նետվում է առաջ...

Պերեսը, որպես վերջին հրահանգ, ասաց. «Հանգիստ եղիր, տարածություն պահիր, մի շտապիր առաջինը հարվածել, իսկ երբ ինքն ուզենա հարվածել, պիտի ստիպված մոտենա քեզ, այդ ժամանակ կռացիր և հասցրու փորին...»: Նա միաժամանակ ցույց էր տալիս, թե ինչպես պետք է անել: Իր ասելով մեկ տարի անգլիական բոքս է պարապել:

Մարտավկանները հեռացան և թողեցին նրանց մենակ՝ դեմ առ դեմ: Կլաուսի դեմքին այլևս դիմակ չկար, բայց մի բութ, ատելավառ չարություն էր տպվել: Ցուլի պես առաջ խոյացավ և սկսեց իրար ետևից անկանոն հարվածներ տեղալ, որոնցից դժվար չէր խուսափել, սակայն չէր կարողանում պահը զատել՝ Պերեսի հրահանգը կատարելու համար... Ավելին, մի հարված դիպավ ուսին, մյուսը թևին, իր բռունցքն էլ ինչ-որ բանի դիպավ, կրծքի՞ն, թե ուսին... Կլաուսն ընկրկեց... Ոչ, նա ետ քաշվեց, որպեսզի երկրորդ հարվածը չստանա և դա արեց բավական հմուտ շարժումով:

Փոքրիկ կղզու մակերեսին աճած թանձր խոտը թրջվել էր առավոտյան ցողից և դարձել սոսկալի սայթաքուն: Հանկարծ մի հարված զգաց ծնոտին, ոչ շատ ուժգին, առանձնապես ցավ չպատճառող, սակայն փաստեց, որ արդեն ըն-

կած է գետնին, որ մետաղալարերի պես ամուր ու առաձգական աշնանային խոտի թացությունն է զգում մեջքին, որ ցիլինդրավոր պարոնը վազեվազը մոտենում է և սկսում հաշվարկը. «Մեկ...»: Պերեսը հայտնվեց նրա կողքին և ձեռքուոտքը շարժելով հրամայեց. «Վեր կաց, շուտ արա, վեր կաց»: Ո՞վ հարվածեց... Մի՞թե Կլաուսը... «Երկու...»: Ահա նա, քիչ հեռու կանգնած ինքնագոհ նայում է... Դիմակը նորից հայտնվել է դեմքին... «Երեք...»: Կլաուսը տեղում դարձավ, լողորդի պես թևերը շարժեց...«Չորս...»: Հետո ձեռքերն իրար մեջ հագցրեց... Մատների ծանոթ ճթճթոցը լսվեց և հանդուգն ու լկտի ժպիտը տեսավ նրա դեմքին... «Հինգ...»: (Առաջին անգամ միայն ճթճթոցը լսեց, իսկ դեմքի այս rictus-ը, այս մահաժպիտը սպանեց նրան և ոչ թե խորհրդավոր կրակոցը... Ինքը չէր կարող վարագույրի ետևից դուրս գալ և նրան պաշտպանել, փրկել... Ինքն այնտեղ նստած, նրանց հետ, նրանց կողքին, կատաղությունից իրեն ուտում էր, որ իրավունք չունի միջամտելու, որ իր ձեռքերը փաստորեն շղթայված են... Իսկ հիմա՞... Հիմա ինչո՞ւ ես լեշի պես տարածվել, երբ արդեն հնչել է հատուցման ժամը, երբ ոչ մի վարագույր ձեզ չի բաժանում, երբ ձեռքերդ այլևս շղթայված չեն... Երբ ցանկացար սրբազան վրեժն ինքդ, քո ձեռքով իրագործել...):

Ցիլինդրավոր պարոնը բերանը բացեց, որպեսզի «տասը» հաշվելով մենամարտի ավարտն ազդարարի, երբ զսպանակի պես վեր թռավ, ամեհի աղաղակ արձակելով.նետվեց առաջ և հարվածների մի տարափ տեղաց Կլաուսի գլխին, կրծքին, փորին, ուր որ պատահի... Վերջինս, որ ձեռքերը կրծքին խաչած, չտապում էր իր հաղթանակը վայելել, չհասցրեց նույնիսկ պաշտպանական կեցվածք ընդունել և փորձելով կատաղի հարվածներից փրկվել, սկսեց ետ-ետ գնալ... Արյուն էր հոսում քիթբերանից, հոնքը բացվել էր... Շարունակ նահանջում էր, չկարողանալով գոնե պատասխան մի հարված հասցնել... Եվ այդպես ընկրկելով հայտնվեց կղզյակի եզրին, ուր մի քանի ուռիներ կային կանգնած: Փորձեց դրանց ետևն անցնել, սակայն ոտքը սայթաքեց ափի լպրծուն քարերից մեկի վրա և հայտնվեց լճի պաղ ջրի մեջ:

Դիմացի ափից հաղթական ճիչեր լսվեցին և ծաղրական արտահայտություններ: Հովվերգական անտառի այս սքանչելի լճակը, ինչպես երևում էր, կատարյալ մի որոգայթ էր: Ըստ երևույթին ջուրը միանգամից էր խորանում ափի մոտ, քանզի ամեն անգամ, երբ փորձում էր հատակին կանգնել, գլուխը հայտնվում էր ջրի տակ, բարեբախտաբար լողալ գիտեր, թե ոչ կարող էր հենց ափի մոտ խեղդվել:

Լևոնն մինչև տասը հաշվեց և ձեռքերը հաղթական վեր տնկելով, արագորեն մոտեցավ, որպեսզի իրեն խլի Պերեսի գրկից: Կլաուսի մարտավկաները մի չոր ճյուղ մեկնելով նրան մի կերպ ափ հանեցին, հետո մոտեցան հակառակորդ եռյակին և լուռ սեղմեցին նրանց ձեռքը: Կլաուսը թրջված, մամուռներով ծածկված, նստել էր ափին և գլուխը թաքցրել ձեռքերի մեջ: Իսկ ուսանողների բազմությունը սուլում էր և գլխարկները գցում վեր:

Քիչ հետո կղզուց երկու նավակ ուղևորվեցին՝ երկու տարբեր ուղղությամբ: Հաղթանակով ու խմիչքից գինովացած բազմությունն սկսեց խլխլել Ռուբենին: Ջածիլված այտեր, օղի և ծխախոտ բուրող բազմաթիվ բերաններ դի-

պան նրա դեմքին, մի լիքը բաժակ մատուցվեց, պահանջեցին, որ մինչև վերջին կաթիլը խմի հաղթանակի կենացը, տեղնուտեղը երկրորդը լցրեցին... Հետո միևնույն խանդավառությամբ Լևոնի և Պերեսի հետ ողջագուրվեցին:

Դիմացի ափից տոհմական զինանշաններով զարդարված մի կառք ճամփա ընկավ դեպի անտառի հյուսիսային կողմը, իսկ այս ափից ուսանողների մի խումբ, գոռում-գոչյուններով, ուղղակի անտառի միջով, քայլեց դեպի հարավ՝ դեպի Լոզան: Համալսարանում դասերն արդեն սկսվել էին, սակայն նրանցից ոչ մեկն այդ օրը լսարան չմտավ: Օրն անցկացրին Բելվո արվարձանի գինետներից մեկում՝ նշելով վաստակած հաղթանակը:

* * *

Գերմանական հյուպատոսը զայրույթից տեղ չէր գտնում իր ընդարձակ աշխատասենյակում: Երեք րոպեից ավելին կլիներ, ինչ արտառոց այցելուն մտել էր ներս և գլխահակ կանգնել գրասեղանի առջև, որի տերը գազանանոցի վագրի պես դեսուդեն էր նետվում: Հյուպատոսն իր զայրույթը մեղմելու համար մոտեցավ սենյակի անկյունում դրված ցածրիկ սեղանին, բյուրեղապակյա գրաֆինից կոնյակ լցրեց, մի ումպով խմեց, հետո, ութերորդ, թե իններորդ անգամ նրա կողքով անցնելով, ուշադիր նայեց դեմքին և ասաց.

- Հիմա տեսնում եմ, որ ես պիտի գայի քեզ մոտ...

- Ոչ, ի՜նչ եք ասում..., - հեգնանքը չնկատեց գլխահակ կանգնածը:

- Չէ՛, չէ, ես պիտի գայի, - նորից իրենն ասաց հյուպատոսը: - Չկարծես, թե քեզ պատիվներ մատուցելու համար... Եթե իմանայի, որ կերպարանքդ այդպես զարդարել են, ոչ մի դեպքում թույլ չէի տա, որ տնից դուրս գաս: Ասպետի՜ս տեսեք, մենամարտե՜ր է անում... Քեզ բերել են այստեղ, որպեսզի խիստ որոշակի հանձնարարություններ կատարես և ոչ թե ծեծկռտուքների մասնակցես:

- Ես ուրիշ ելք չունեի... Նա ամբողջ սրճարանի ներկայությամբ ինձ անպատվեց:

- Ճիշտ արեց, որովհետև ապուշի մեկն ես... Քիթդ խոթում ես ուրիշի անձնական կյանքի մեջ և այնպես անշնորհք գործում, որ անգամ անփորձ ուսանողներն են բացահայտում քո խորամանկությունները:

- Պարոն, ձեզ սխալ են ներկայացրել...

- Լռի՛ր, ես ամեն ինչ գիտեմ... Եվ դու ուզում էիր քո տխմար նախանձը մեր վզին փաթաթել որպես հույժ կարևոր մի գործ..., - հյուպատոսը Բեռլինը ցույց տվեց՝ պատին կախված հսկայական քարտեզի վրա: - Այնտեղ գրասենյակներում նստած առնետներին գուցե կարողանայիր խաբել քո զեկուցագրերով, բայց ինձ չես խաբի:

Հյուպատոսը վերջապես նստեց իր աթոռին և շեշտակի հայացք նետեց Կլաուսի կողմը:

- Բայց մի բան չհասկացա: Դու ի՞նչ պատճառ ունեիր խանդելու այդ հային: Քո հակումները հայտնի են բոլորիս, և հենց դրա համար են քեզ բանակից վռնդել:

- Ես ամեն ինչ արել եմ հանուն մեր ցեղի մաքրության, - հպարտությամբ

պատասխանեց Կլաուսը՝ վերջապես բարձրացնելով գլուխը: - Ի՞նչ կմնա մեր ազգից, եթե թույլ տանք, որ բարբարոսներն այդպես հեշտությամբ մեր աղջիկներին առևանգեն:

- Այդ բարբարոսը քեզնից ավելի զորավոր դուրս եկավ ոչ միայն խելքով և առնական հմայքներով, այլև բռունցքով: Եվ հիմա, քեզ անպատվելով ու ծեծելով վերջնականապես նվաճեց աղջկան: Լուրն անպայման կհասնի գնդապետին և կարող է նրանում համակրանք առաջացնել հայի հանդեպ:

Հյուպատոսը վերկացավ, նորից մոտեցավ ցածրիկ սեղանին, թավշապատ բազկաթոռին հարմար տեղավորվեց և դիմեց Կլաուսին.

- Լավ, վերջացնենք... Այս անգամ ներում եմ քեզ և կփորձեմ մի հնարավորություն տալ սխալդ շտկելու... Մի դժվարություն կա, իհարկե: Քո սխրանքը մեծ աղմուկ է հարուցել: Այնուհանդերձ, կաշխատեմ փոքր ինչ մեղմացված ներկայացնել իմ զեկուցագրում:

- Շնորհակալ եմ, - թոթովեց Կլաուսը: - Խորապես շնորհակալ եմ:

- Տարօրինակ բաներ են կատարվում, - մորուքի հետ խաղալով մտահոգ ասաց հյուպատոսը: - Վերջին երկու ամիսները զարմանալի աշխուժություն է նկատվում երիտթուրքերի շրջանակներում... Ինչպես դիտես, նրանք իրենց հիմնական գործունեությունը ծավալել են Փարիզում, այստեղ՝ Շվեյցարիայում և, որքան էլ տարօրինակ թվա՝ Վիեննայում:

- Ինչո՞վ է արտահայտվում այդ աշխուժացումը:

- Նախևառաջ նրանց բացահայտ և հաճախակի հանդիպումներով: Երիտթուրքերը մի շրջան ընդհատակ էին մտել, բայց հիմա բացեիբաց հանդիպումներ են կազմակերպում, սոցիալիստներից ընդօրինակած, ավելի շուտ կապված գաղափարներ ու ծրագրեր ազդարարում... Եվ ամենազարմանալին՝ նրանց քաղաքական դաշնակիցներն են դարձել ռուսական բոլշևիկները, և լուրեր կան, որ բանակցություններ են սկսել սիոնիստների հետ, որոնք նույնիսկ երիտթուրքերի մամուլն են վարկավորում...

- Բոլշեվիկները պատրաստ են թեկուզ սատանայի հետ դաշնակցել, իսկ սիոնիստներն ի՞նչ ունեն երիտթուրքերի հետ մտերմանալու...

- Որովհետև սուլթանը չուզեց Պաղեստինը նրանց ծախել, ուստի հիմա ամեն ինչ անում են, որպեսզի վրեժ լուծեն և գուցե նույնիսկ տապալեն:

- Պե՞տք է արդյոք դա մեզ:

- Թուրքերի հալցում մեզ պետք է ընդամենը մեկ բան. որպեսզի մնան մեր դաշնակիցը:

- Անկախ այն բանից, թե ով կլինի այդ պետության գլխի՞ն:

- Իհարկե, չպետք է մոռանալ, որ սուլթանը մեր կայզերի բարեկամն է:

- Սակայն եթե սուլթանի դիրքերը խարխլեն, կայզերը կմիջամտի՞ արդյոք:

- Կարծում եմ՝ այո... Բայց լոկ այն դեպքում, եթե համոզվի, որ երիտթուրքերը մտադիր են մեջքով դառնալ մեզ և նոր դաշնակիցներ փնտրել Եվրոպայում, ինչն անհավանական չէ...

- Հետևաբա՞ր:

- Առայժմ պետք է սևեռուն ուշադրությամբ հետևել նրանց յուրաքանչ-

յուր քայլին, յուրաքանչյուր խոսքին: Պետք է աշխատել իմանալ ամեն ինչ: Ահա ինչու հարմար գտանք, որպեսզի ձեր ուսումը շարունակեք Վիեննայի համալսարանում: Ենթադրում եմ, որ ձեր սրտովն է... Զասած արդեն այն մասին, որ այստեղ այլևս չեք կարող մնալ հասկանալի պատճառներով:

- Համենայն դեպս չպիտի ափսոսամ, որ Լոզանը փոխում եմ Վիեննայի հետ:

- Ես էլ այդպես եմ կարծում, մանավանդ որ դրան գումարվում է մեկ ուրիշ հանգամանք. դուք կարծեմ այստեղ առիթներ ունեցաք շփվելու Քենան անունով մի օսմանցի ուսանողի հետ... Եվ եթե չեմ սխալվում՝ թղթախաղի սեղանի շուրջ՝ Էվիանում...

Կլաուսն շտապեց արդարանալ.

- Գիտեք ինչ, ես խաղամոլ չեմ, ինձ հանձնարարություն էր տրված կապեր հաստատել մի ռուս ազնվականի հետ, և դա միակ հնարավորությունն էր նրա հետ ծանոթանալու:

- Այնուհանդերձ, դուք այդ օրը կարողացաք, բավական հմտորեն, մի խոշոր գումար շահել օսմանցուց, որը, կարծեմ, առ այսօր ձեզ չի վճարել:

- Գումարի մի մասը վճարեց, սակայն կեսից ավելին մինչև օրս չեմ ստացել, քանզի անսպասելիորեն անհետացավ Լոզանից:

- Այո, որպեսզի որոշ ժամանակ հետո հայտնվի Վիեննայում: Նա երիտթուրքերի ակտիվ գործիչներից մեկն է դարձել, և չնայած օսմանյան գաղտնի ծառայությունների պահանջներին, ավստրիացիք չտեսնելու են դնում ամեն ինչ: Եվ գիտե՞ք ինչու... որովհետև ամուսնացել է ավստրիացի մի մեծահարուստ ազնվականի աղջկա հետ, այնպես որ ճիշտ ժամանակն է, որպեսզի Վիեննա հասնելուն պես՝ թղթախաղի ձեր առնելիքը հիշեցնեք, միաժամանակ, նրա միջոցով, աշխատեք թափանցել նրանց շրջանակների մեջ:

- Շատ կուզեի նրա հասցեն ունենալ:

- Վիեննայի հյուպատոսարանում ձեզ ամեն ինչ կտան: Եվ աշխատեք հնարավորին չափ շուտ մեկնել այստեղից:

Կլաուսը, երախտագիտական մի պոռթկումով, տեղից ելավ, մոտեցավ հյուպատոսին, նրա ձեռքը խլեց և քիչ էր մնում համբուրեր:

- Դուք ինձ փրկեցիք... Զգիտեմ, թե ինչպես երախտահատույց լինեմ:

Հյուպատոսը ձեռքն զգուշորեն ետ քաշեց, տեղից ելավ և Կլաուսի մեջքին թփթփացնելով ասաց.

- Լավ աշխատանքով և հիմարություններից խուսափելով... Հա, վերջացրեք ձեր նամակագրությունն այդ գնդապետի հետ, դա արդեն կատարելապես անիմաստ է:

Կլաուսը լուռ գլխով արեց և դուրս եկավ:

* * *

Սա կործանում էր, վերջնակա՛ն, անդառնալի՛, իսկ ավելի ճիշտ՝ խայտառակ պարտություն: Այս դառը դեղահաբը դեռ կարելի էր սուսուփուս կուլ տալ, եթե իրողությունը հայտնի մնար միայն իրեն, սակայն երբ առավոտ կա-

նուխ, նախաճաշի սեղանի շուրջ, սեփական աղջիկդ է քեզ ազնվության դասեր տալիս (թեկուզ անուղղակի), երբ, մանավանդ, ղդում ես, որ նա իրավացի է, իսկ դու մեղավոր, ապա հայրական իրավունքի կիրառումն այս պարագայում (սաստել, լռեցնել, ձայնդ բարձրացնել, դոռալ, պատժե՛լ... բաներ, որոնք երբեք չի կիրառել իր տանը, գտնելով, որ տունը զորանոց չէ) կնչանակեր ստորագրել անվերապահ կապիտուլացիան և անձնատուր լինել: Հայրական իշխանության... Ոչ, իշխանություն այլևս չկար, մնացել էր լոկ հայրական հեղինակությունը, որի հետ աղջիկն առայժմ ուզում է հաշվի նստել, այլապես չէր զսպի իր զայրույթը (արդարացի՛ զայրույթը), սակայն ձայնը բարձրացնում է, սպառնում...

Ամեն ինչ սկսվեց առավոտյան փոստն ստանալուց հետո, երբ Յաննին իր հերթական, ամենօրյա բաժին ծրարն ստացավ: Ամեն օր նամակ էր ուղարկում այդ տղան, պատահում էր՝ օրը մի քանի հատ (բացիկները չհաշված), ամեն նամակն էլ առնվազն հինգ-վեց էջ էր: Բան ու գործ չունի՞... Ե՞րբ է հասցնում... Առաջին օրերը դեռ քաշվում էր ծնողներից, նամակներն իր սենյակում կարդում: Իսկ հիմա այլևս բանի տեղ չի դնում մեզ: Ինքն է ընդունում փոստը, իր նամակները զատում և շատ անգամ կարդում մեր ներկայությամբ:

Այսօր էլ, սեղան նստելուց առաջ, իջավ փոստը բերեց, առանձնացրեց իրեն հասցեագրված պատկառելի հաստությամբ ծրարը, անհամբերությունից դողալով, ուղղակի սեղանի մոտ բացեց և սկսեց կարդալ (անկի՛րթ, տգե՛ղ և մանավանդ վնասակա՛ր մի սովորույթ, որը երբեք ընդունված չի եղել այս տանը):

Առաջին իսկ տողերից նրա դեմքը մռայլվեց, այնուհետև, ընթերցելու հետ միաժամանակ, վախի, զարմանքի և վրդովմունքի հառաչներ ու ճիչեր արձակեց, իսկ վերջում, ձեռքը բռունցք դարձրած, հաղթական մի շարժում արեց՝ վախեցնելով ու ապշանքի մատնելով մեզ՝ իր ծնողներին:

Այնուհետև պահանջեց, որ ուշադիր լսենք այդ նամակը, որը ոչ այլ ինչ էր, քան իր՝ հայրական կոպիտ սխալի, իր միամտության դաժան փաստագրումը: Ինչպե՞ս կարող էր դործ բռնել այդ անճարակ Կլաուսի հետ, որը պարզվեց ոչ միայն չար է, նախանձ և մանրախնդիր, այլև վախկոտ ու թուլամորթ: Ասպետիս տեսեք... Մենամարտի է կանչում, հետո հարյուր հոգու ներկայությամբ ծեծ ուտում... Հապա այդ ջուրն ընկնե՛լը... Ինչպիսի՛ խայտառակություն... Եվ դեռ դլուխ էր գովում, որ սպա է եղել... Վա՛յ մեր բանակին, եթե այսպիսի սպաներ պիտի ղեկավարեն: Թող այդ հայն ամբողջ Լոզանի մռութը ջարդեր, միայն այս ապուշի հետ գործ չունենար: Ողորմելի լրտու... Դրան տեսեք, ազնվականիս նայե՛ք... Ինքը ծեծ ուտի, իսկ պատասխանն աղջկա հայրը տա... Այո, այո, իրեն որոգայթն է քաշել, փակուղի է մտցրել, որտեղից միայն մեկ ելք կա՝ հետ գառնալ նույն ճանապարհով և թքածը լիզել... Քանզի երբ երկու ասպետ մեկ աղջկա համար մենամարտում են, ապա աղջիկը հաղթողին է հասնում, և ոչ միայն աղջկա հայրը, այլև թագավորը պարտավոր են ենթարկվել այդ օրենքին: Այո, ճիշտ օրենք է. կնոջ կողքին պետք է քաջարի և ուժեղ տղամարդ լինի... Այդ ուսանողը և՛ գեղեցիկ է, և՛ խելացի, և՛ աշխատասեր, և՛ ուժեղ, և՛ քաջարի, և՛ պատվախնդիր: Մի խոսքով, կատարյալ տղամարդ է, իսկական ասպետ... Միայն ափսո՛ս, որ հայ է... Իսկ եթե այդպիսի արժանիքներով մեկտեղ գերմանացի լի-

ներ, ինչպիսի՜ հրճվանք կպարգևեր մեզ՝ կյանքից հոգնած ծնողներին, ինչպիսի՜ փայլուն ապագա կունենար Բեռլինում:

Սոսկալի է գիտակցել, որ սեփական աղջիկդ հիմա իրավունք ունի հաշիվ պահանջելու քեզնից, առնվազն բացատրություն՝ թե ինչո՞ւ է վստահել այդ ոչնչությանը, ինչո՞ւ է հավատ ընծայել նրա ստերին: Տղային հունից հանել է հատկապես այդ հիվանդության սուտ պատմությունը: Ապո՜ւշ: Ուզում էր նրան վարկաբեկել, բայց ճիշտ հակառակն է ստացվել. պարզվում է, որ այդ հայը մի քանի անգամ գնացել է Լեյզեն, բայց ոչ թե իր առողջության խնդիրներով, այլ ինչ-որ բանաստեղծի այցելելու համար:

Բայց խորամա՜նկն է այդ հայը... Նամակը, փաստորեն, Յաննիի միջոցով հասցեագրել է իրեն՝ Ֆրանց Ապելին, և հիմա կրկնակի ծանր է. պարզապես նվաստացուցիչ, հոգու խորքում ընդունել, որ նա լիովին իրավացի է, որ ինքն էլ՝ նրա տեղը լիներ, այդպես կվրդովվեր, իրավունք կպահանջեր, բարոյական հատուցում...

Մի պահ ցանկացավ մոտենալ աղջկան, ճակատը համբուրել և, գլուխը շոյելով ու մի քիչ էլ կատակի տալով (և փաստորեն ներողություն խնդրելով) ասել. «Հանգստացիր, աղջիկս, ես հանուն քո երջանկության եմ դա արել, հանուն քո բախտավորության... Եղածը եղած է, մոռանանք, խաչ քաշենք այս ամենի վրա...»: Սակայն անմիջապես հասկացավ, որ դրանով ուղղակի, թե անուղղակի, ներողություն էր խնդրելու այդ հայից: Դա կնշանակեր նաև վերջնականապես ընդունել, որ իր ձեռքով սեփական աղջկան հանձնել է նրան, երբ իր նպատակը ճիշտ հակառակն էր:

Նամակն արդեն ընթերցվել էր, հիմա Յաննին առանձին կտորներ էր կարդում, որոնք ավելի էին ծանրացնում առանց այն էլ լարված մթնոլորտը: Պետք էր մի բան ասել, մի պատասխան տալ, որքա՞ն կարելի էր այդպես լուռ նստել: Միայն Գրետան էր, որ խոսեց: Նամակն ամբողջությամբ լսելուց հետո խամրած ձայնով հարցրեց. «Ֆրանց, հիմա ի՞նչ պիտի անենք»: Ու պատասխան չստացավ: Հետո նորից հարցրեց. «Ֆրանց, ճի՞շտ է գրում այդ տղան...»: Այդ պահին էր, որ աղջիկն սկսեց առանձին տողեր կարդալ ընդարձակ նամակից: Ասես նրա փաստաբանը լիներ: Ոտքի, նամակի թերթերը թափահարելով... Այո, համեմատությունը ճիշտ էր. մի փաստաբան, որը քիչ հետո իր պաշտպանյալի և իր սեփական դատը պիտի շահեր: Ինքն այս ամբողջ տեսարանի ընթացքում լուռ նստել էր: Եվ ոչ միայն, որ ցնցված էր նամակի պարունակությունից, այլև սեփական աղջիկն էր նրան ապշեցրել, հմայել, նույնիսկ կախարդել: Ասես մեկ ուրիշ մարդ էր նրա առջև Յաննիի կերպարանքով. ամեն ինչ փոխվել էր՝ և՛ ձայնը, և՛ շարժումները, և՛ դեմքը, և՛ անգամ հասակը, որ կարծես ավելի էր երկարել: Նրա առջև ուրիշ մարդ էր կանգնած, և արտաքինի նույնությունն ավելի էր ընդգծում ներսում կատարված և իր հայացքից վրիպած փոփոխությունը:

Այլևս անկարելի էր լռել և շարունակ շաքարը խառնել սուրճի բաժակի մեջ: Նա հազիվ լսելի քրթմնջաց. «Դեռ պետք է ստուգել, թե որքանով են հավաստի այդ հայի գրածները...»: Ասաց և անմիջապես զգաց, թե ինչպիսի զենք դրեց աղջկա ձեռքը: «Իհարկե, պետք է ստուգել, - իր տարիքին կատարելապես

անհարիր պաղ և անվրդով պատասխանեց Յաննին: - Եվ ստուգի՛ր... Անպայման ստուգիր»: «Կստուգեմ, կստուգեմ, հանգիստ կաց», - պատասխանեց ինքը, ասես իրենից հեռու վանելու, օձիքն ազատելու համար: «Իսկ ստուգելուց հետո, երբ պարզվի, որ այս նամակը ճիշտ է, այդ ժամանակ ի՞նչ պիտի անես», - չհապաղեց հակահարված տալ Յաննին: «Ճիշտն ու սխալը պարզելուց հետո կորոշենք մեր անելիքը», - հուսահատ պաշտպանվեց ինքը: «Հուսամ միևնույն անձնավորության միջոցով չես ստուգելու», - հաղթական հեգնանքով արտասանեց Յաննին: Օ, ի՜նչ անգութ են դավակներն իրենց ծնողների հանդեպ... «Ձևը կգտնենք, աղջիկս... Ժամանակ տուր մի քիչ մտածելու»: Հենց այդ պահին էր, որ Գրետան հղացավ իր հանճարեղ գաղափարը. «Ֆրանց, ինձ թվում է՝ պետք է այդ տղայի հետ անձնապես խոսես... Ես չեմ պնդում, թե նա հարյուր տոկոսով ճշմարիտ է, բայց այն մյուսը... ինչպե՞ս էր անունը... Հա, Կլաուսը, իսկապես խաբեբայի մեկն է երևում...»: «Այո, մայրիկը ճիշտ է, շատ լավ կլինի, որ դու խոսես Ռուբենի հետ», - վճռական ու անբեկանելի ազդարարեց Յաննին: «Ես չեմ կարող շարունակ Լոզան գնալ ու գալ...», - հուսահատ ասաց ինքը: «Իսկ ո՞վ է ասում, թե դու պիտի գնաս, - զարմացավ Յաննին: - Թող նա գա այստեղ»: «Ո՛չ, ո՛չ, ո՛չ, - պոռթկաց ինքը: - Ես այդ տղայի հետ խոսելիք չունեմ...»: Հերթակա՛ն տխմարությունը: Ավելի լավ էր լռեր: Ինչ ասում է՝ իր դեմ է դուրս գալիս: Այդ հայը de facto նվաճել, տիրացել է քո աղջկան, իսկ դու ասում ես, թե խոսելու բան չունես: Նշանակում է ամբողջ նախաձեռնությունը տալիս ես կանանց, և նրանք չեն հապաղում օգտվել դրանից: «Իսկապես, Ֆրանց... Ճիշտ է ասում Յաննին... Թող տղան Կաղանդին գա այստեղ: Հանդիպենք, տեսնենք, թե ով է, ինչ է»: Չէ, կանայք պետք է ղեկավարեն բանակը. ինչպիսի՜ արագությամբ և ինչպիսի՜ վարպետությամբ են կարողանում օգտվել իրենց նվազագույն առավելություններից: Թիզ առ թիզ գրավում են տարածքը, հետո հանկարծ տեսնում ես, որ քեզ ետ են մղել, շպրտել դուրս:

Ոչինչ չպատասխանեց: Պատճառ բռնելով, թե ուշանում է, նախաճաշը կիսատ թողեց ու վերկացավ: Զորանոց հասավ, իսկապես, կես ժամվա ուշացումով: Համհարզը, ի թիվս մի քանի կարևոր փաստաթղթերի, նրա սեղանին դրեց նույն օրն առավոտ շուտ ստացված հեռախոսագիրը, որտեղ ասվում էր. «Սիրելի Ֆրանց, Շատ ուրախ կլինեի այսօր քեզ հետ ճաշել Մյուլլերի պանդոկում: Սպասում եմ քեզ մեր մշտական տեղում՝ ժամը 12.30-ին: Քո՝ Ռայնհարդտ: Հ. Գ. Անպայման կգաս, կարևոր բաներ ունեմ ասելու»:

Այդ օրը, բարեբախտաբար, գործեր շատ կային զորանոցում, ուստի չնկատեց, թե ժամերն ինչպես անցան, և երբ ծանր օրվա կեսին, քաղաքի լավագույն խոհարարի անվիճելի տաղանդի ապացույցներն էին վայելում՝ Մոզելի սքանչելի գինիով առատորեն ցողված, իր մանկության ընկերը, բառ առ բառ կրկնեց խայտառակ մենամարտի պատմությունը, որը մի քանի ժամ առաջ էր լսել: Նա հասկացավ, որ այս հրավերն ավելի շատ ներողություն խնդրելու, սիրտը շահելու նրբին մի ձև է: Եվ սոսկալի էր ընկերոջ բերանից լսել միևնույն հարցը. «Հիմա ի՞նչ պիտի անես, Ֆրանց»:

Հարցը լսելուն պես գլուխը կախեց և բավական երկար չգիտեր, թե ինչ

պատասխան տար իր մտերիմ բարեկամին, քանզի այդ պահին, առավել քան երբեք, գիտակցեց, որ մեր արարքների, գործողությունների, խոսքերի և անգամ մտքերի խթանները ծնունդ են առնում ոչ այնքան մեր կամքի ու բանականության մեկանգամընդմիշտ հաստատված սահմաններում, որքան առաջնորդվում են անհայտ, անորոշ, բայց ահռելի ու ամենակարող մի տարերքի թելադրանքով, որին հնազանդ են բոլորը, ազգերն ու պետությունները... Եվ գուցե նույնիսկ վեհապետներն ու բանակները... Եվ հիմա ինքն իր առջև, ընկերոջ առջև ամոթահար էր, որ կյանքի դասերն իրեն սովորեցնում է իր կրտսեր դուստրը:

* * *

Թունելները հաջորդում էին իրար: Կարճ ու երկար: Արդեն մտել էր Սև Անտառի՝ Շվարցվալդի սիրտը: Բազելից հետո գեղեցիկ և անթերի համազգեստ հագած ուղեկցողը հերթով մտավ բաժնեխցիկները և ստիպողական քաղաքավարությամբ խնդրեց, որ պատուհանները չբացեն: Եվ հիմա, թեթև, բայց իսկապես ջերմացնող վերմակի տակ, գլուխը պատուհանի մոտ, զգում էր, թե որքանով էր իրավացի. կծու և անախորժ ծուխը, թույլ, բայց համառորեն լցվում էր բաժնեխցիկ: Ընկերների խորհրդով երեկոյան գնացքը նստեց, որպեսզի լավ քնի և հաջորդ օրը կեսօրից առաջ հասնի Էրֆուրտ: Սակայն հիմա, այս պահիս, քնելու մասին խոսք լինել չէր կարող: Ուղեղը զարմանալիորեն արթուն էր, և զգում էր, գիտեր, որ ամբողջ գիշեր արթուն է մնալու: Բորբոքվա՞ծ էր: Այո, մի քիչ: Հարևանի խոմփոցն էր խանգարո՞ւմ: Հազիվ թե, իր ընկերներն ավելի սոսկալի էին խոմփացնում: Մութն էր, խավարը, որ մարտակոչի պես մտրակում էր նյարդերը, արթնացնում թաքնված բոլոր բնազդները. պահանջում վերլուծել անստույգն ու անորոշը, լարում մտավոր ամբողջ կարողությունը՝ առխարխափ պարզելու ոչ այնքան շուրջդ սփռված անտեսանելին, այլ հնարավորին չափ շուտ և անսխալ գտնել լույսի աղբյուրը:

Ուրեմն, խավարը խոստում է, սպասում, հոգևոր, մտավոր և մարմնական ուժերի կուտակում: Քեզ զրկում են ամեն ինչից, միաժամանակ ստիպում ունեցածդ կենտրոնացնելու, հավաքելու մի տեղ, և պարզվում է ուժեղ ես, հաղթող ես: Սակայն մինչև ե՞րբ պիտի մի խավարից դուրս գա, որպեսզի մտնի մեկ ուրիշ խավարի մեջ...

Հիմա էլ գնացքը մխրճվում է թունելի անթափանց մթան մեջ, հետո ժամանակավոր փրկություն գտնում գիշերվա խավարում: Արդեն հաշիվը կորցրեց, թե քանի թունել անցան: Իսկապես որ Սև Անտառ: Սև է ներսից, թե դրսից: Բայց այդ անունը պիտի որ ցերեկով դրած լինեն: Այնպես որ գիշերը մեղավոր չէ: Բայց, թեկուզ անքուն, նա գիտի, որ այս գիշերը, օրվա մեկ երրորդի մեջ զետեղված այս խավարն ավարտվելու է ժամը 10.30-ին Էրֆուրտի կայարանում: Արդեն գիտի, որ մինչ այդ ընթանալու է մթան միջով, սակայն ինչպիսի՞ն է լինելու խավարի թանձրությունն այդ պահից հետո:

Այս ուղևորությունը կարող էր տեղի ունեցած լինել ավելի շուտ՝ Կաղանդին և Նոր Տարուն: Դեռևս անցյալ տարվա դեկտեմբերի սկզբին մի նամակ

ստացավ Յաննիից, որտեղ հրամայելու պես հրավիրում էր Կաղանդն ու Նոր Տարին անցկացնել Էրֆուրտում:

Տարօրինակ էր այդ հրավերը, և ոչ միայն իր անսպասելիությամբ: Չէ որ դրանից երկու ամիս առաջ, դարձյալ Յաննիի թախանձագին պահանջով մի նամակ գրեց նրա ծնողներին՝ խնդրելով, որ իրենց համարեն նշանվածներ և իրավունք տան առայժմ նամակագրական կապ հաստատելու: Այդ խնդրանքը մնաց անպատասխան: Սակայն նամակները կանոնավոր ու ժամանակին դնում գալիս էին և պետք էր ենթադրել՝ Յաննիի ծնողների գիտությամբ: Այսինքն՝ ստացվում էր, որ նրա երկու խնդրանքներից մեկին լուռ համաձայնություն տվեցին: Իսկ ինչո՞ւ լուռ, չէ՞ որ գրել, դիմել էր նրանց, և ըստ բարեկրթության եվրոպական օրենքների, հասցեատերերը պարտավոր էին պատասխանել... Իսկ եթե չեն պատասխանում, նշանակում է ոչ միայն մերժում են, այլև մարդու տեղ չեն դնում... Այդ դեպքում ինչո՞ւ են աչք փակում ամեն օր գնացող ու եկող ծրարների վրա... Սա ի՞նչ երկդիմի կեցվածք է, սա ի՞նչ կեղծավորություն է՝ ուզել չուզելով, համաձայնել լռելով... Ուրեմն, չեն կարող «ոչ» ասել, սակայն չեն ուզում, չեն շտապում «այո» ասել, ընդունել անդառնալին:

Մենամարտից հետո երկրորդ նամակը գրեց տեր և տիկին Ապելներին՝ հիշեցնելով իր խնդրանքը, հատկապես ընդգծելով, որ ուզում է ամեն ինչ ծնողների թույլտվությամբ և օրհնանքով լինի: Նամակը, չնայած գրված էր զուսպ և ծայրահեղ հարգալից, այնուամենայնիվ, իրեն թույլ տվեց պնդել, պահանջել, որ երկրորդ խնդրանքն անպատասխան չմնա: Սակայն Յաննիի ծնողներն այս անգամ էլ լռեցին: Փոխարենը Յաննիի նամակները դարձան ավելի հաճախակի, ծավալով ավելի մեծացան, ասես հասկացնելով, թե ծնողների համաձայնությունն ու օրհնանքը զուտ ձևական բաներ են և որ ամեն ինչ կախված է իրենից, և ասես ի հաստատումն դրա, ուղարկեց այդ նամակը՝ պահանջելով, որ Կաղանդը և Նոր Տարին միասին դիմավորեն: Սակայն, ցավոք, դա անկարելի էր: Նախ, որ այդ շրջանում զբաղված էր քննություններով և քաղաքից բացակայելու մասին խոսք լինել չէր կարող: Երկրորդ՝ սոսկումով պատկերացրեց անկոչ հյուրի իր վիճակը. գնում է Էրֆուրտ և Յաննիի հետ ներկայանում նրա ծնողներին, որոնք կատարելապես անտեսում են իր գոյությունը: Ինչպիսի՜ խայտառակություն, ինչպիսի՜ նվաստացում կլինի, եթե գնա հասնի այնտեղ և այդ ամբարտավան տեր և տիկինը հրաժարվեն ինքնակոչ հյուրին ընդունել իրենց տանը:

Ուստի որոշեց փորձության չենթարկել իր ինքնասիրությունը և բավարարվել միայն շնորհավորական բացիկ ուղարկելով: Այս անգամ պատասխան ստացավ: Մի դեղեցիկ բացիկ էր՝ ստորագրված հունվարի 6-ին, հայկական Ծնունդի օրը: Զուգադիպությո՞ւն էր արդյոք: Տեր և տիկինը շնորհակալություն էին հայտնում շնորհավորանքների համար և, իրենց հերթին, հաջողություններ մաղթում ուսման մեջ և անձնական կյանքում:

Սառույցը կոտրվել էր: Այսքան ամիսներ լռելուց հետո պատասխանելով իր շնորհավորական քարտին, ոչ միայն ընդունում էին իր գոյությունը, այլև լռելյայն ընդունում, որ իր հետ այլևս չեն կարող հաշվի չնստել: Հաղթելը քիչ է: Պետք է նաև ստիպել պարտվածին, որ ընդունի իր պարտությունը:

Սա այլևս մենամարտ չէ, այլ դիրքային համառ ու ծանր մի առճակատում, որտեղ դիմացինը լիովին գիտակցելով իր փաստարկների կատարյալ սնանկությունը, այնուամենայնիվ, համառում է, և ոչ միայն դժկամությամբ է ղիջում իր դիրքերը, այլև սպասում հաղթողի հավանական վրիպումներին և սխալներին: Ուրեմն, պետք է իր ամեն մի քայլը կշռադատի: Նորից հիշեց Լևոնի խոսքերը՝ ասված Լոզան գալու իր առաջին օրերին. «Մեր ամենափոքրիկ սխալն անգամ չեն ների»:

...Արթնացավ առավոտյան ժամը իններին: Խցիկի հարևանը բուռն գործունեություն էր ծավալել, շարունակ ներողություն էր խնդրում և հայտնի չէ ինչի համար շնորհակալություն հայտնում: Ճերմակ հագած մի երիտասարդ նեղ միջանցքով սայլակ էր գլորում և սուրճ ու թեյ մատուցում՝ գերմանական գայթակղիչ խմորեղենների հետ: Պատուհաններից ձյունածածկ դաշտեր էին երևում, որ արևի ճառագայթների տակ շլացնող անդրադարձեր էին տալիս: Ամեն ինչ խոստանում էր բերկրանք ու վաստակած երջանկություն: Մանավանդ երբ խնամքով ածիլվելուց հետո երեսը շփեց ֆրանսիական օծանելիքով և հատուկ այդ ուղևորության համար գնված նոփ-նոր զգեստները հագավ, իրեն զգաց արդեն հաղթողի պատվանդանին կանգնած՝ ամբոխի հիացական հայացքների ներքո:

Ամբոխն իսկապես հրճվալից հայացքներով դիմավորեց գնացքը: Կառամատույցում ասեղ գցելու տեղ չկար: Թվում էր, թե կառաշարը կայարան է մտնում դիմավորողներին բառացիորեն քսվելով: Պատուհանը բացել և գլուխը հանել էր դուրս: Բազմության մեջ Յաննիին տեսավ՝ ձեռքին մի փոքրիկ ծաղկեփունջ՝ մի կնոջ և մի երիտասարդի հետ: Յաննին ձեռքով արեց: Մյուս երկուսն անշարժ էին և դեմքներին կարծես ոչ մի արտահայտություն չկար: Սակայն մի երկու բոպե հետո, երբ փոքրիկ ճամպրուկը ձեռքին մոտեցավ դիմավորող եռյակին, նկատեց, որ կնոջ դեմքին բարեհամբույր մի ժպիտ կա, և փորձված աչքով փաստեց, որ դա եվրոպացիներին հատուկ զուտ քաղաքավարի ժպիտը չէ:

- Ծանոթացիր, - ներկայացրեց Յաննին, - մայրս է: - Հետո դարձավ երիտասարդի կողմը: - Իսկ սա Յոհանն է, իմ զարմիկը, նա ցանկություն հայտնեց միանալ մեզ:

Յաննին չափազանց զուսպ էր, հանդիսավոր: Ասես պաշտոնական պատվիրակություն դիմավորեր: Վզովը չընկավ, չհամբուրեց (ինչից շատ էր վախենում), այլ շնորհալի շարժումով ձեռքը մեկնեց և կնիքսեն արեց: Ընտանիքի գլխավորը՝ հայրը, չկար, չնայած շաբաթ օր էր և պիտի որ գործից ազատ լիներ: Յաննիի մայրը կարծես կարդաց նրա մտքերը.

- Ամուսինս, Ֆրանցը, ցավոք սրտի չկարողացավ գալ, - արդարացավ նա:

Ահա.թե ի՜նչ... Սա կարևոր պահ էր: Պարոն Ապելը գտել է, որ շատ կլիներ ամբողջ ընտանիքով դիմավորել նրան, սակայն կինը հարկ է համարում (արդյոք ամուսնու գիտությա՞մբ) հիմնավորել նրա բացակայությունը: Ահա, մի փոքրիկ տարածք էլ նվաճվեց: Զգո՜ւյշ, չկորցնես: Ավելի լավ է շահածիդ վրա ամուր հաստատվես, քան պատրանքների ետևից վազելով ունեցածդ կորցնես:

- Ես քիչ առաջ մի գաղտնիք իմացա:

Ռուբենը ցնցվեց, բայց դեմքի ժպիտն անփոփոխ պահելով նայեց տիկ. Ապելին:

- Պարզվում է վաղը դուք դառնում եք քսաներեք տարեկան... Բառացիորեն ձեր ժամանելուց հինգ րոպե առաջ իմացա... Յաննին ասաց:

- Որտեղի՞ց գիտես, - անկեղծ զարմանքով հարցրեց Յաննիին:

- Անցյալ տարի նամակներից մեկում գրել էիր, թե քանի տարով, քանի ամսով և քանի օրով ես ինձնից մեծ, ես էլ հաշվեցի և տեսա, որ փետրվարի 15-ին ես ծնվել:

- Օ, պարոն Ռուբեն, ինչո՞ւ նախապես չգրեցիք, որպեսզի կարողանայինք ինչպես հարկն է նշել ձեր տարեդարձը, - ասաց նրան տիկ. Ապելը:

- Ես մոռացել էի այդ մասին, տիկին Ապել, բայց եթե հիշեի, դարձյալ չպիտի գրեի, որպեսզի հոգս չպատճառեմ ձեզ:

- Ի՜նչ եք ասում, միայն հաճույք կպատճառեիք: Բայց, ոչինչ, մենք ամեն ինչ կանենք:

Ասես միանգամից հայտնվեր հարազատների միջավայրում, որոնցից մի քանի օր առաջ էր բաժանվել, երևում էր, որ տիկ. Ապելն իսկապես ջերմ է ու անկեղծ, իսկ Յոհանը՝ զարմիկը, հարգալից, նույնիսկ հիացական ժպիտով էր նայում: Հենց նա էլ բոլորին նստեցրեց բացովի ծածկով մի ավտոմոբիլ և շարժվեց դեպի «Սիլվեր» պանդոկ, ուր Ռուբենը նախապես, հեռագրով, սենյակ էր պատվիրել. .ի դեպ, Յաննիի խորհրդով, քանզի շատ հեռու չէր իրենց տնից: Նույնիսկ մոր հետ նախապես եկել և ստուգել էր, թե արդյոք պատշաճ պանդոկ է՞, սենյակները բավականաչափ մաքո՞ւր են:

Կեսօրից հետո ճաշեցին միասին: Յոհանը եկավ ավտոմոբիլով և տարավ դեպի Շտայգերշտրասե, որի վրա Ապելների եռահարկ առանձնատունն էր: Նկատեց, որ այստեղ ավտոմոբիլներն անհամեմատ ավելի շատ են, քան Շվեյցարիայում: Մանավանդ քաղաքի հարուստ այս թաղում, ուր հիմնականում բավական բարետես առանձնատներ էին շարված՝ քարե բարձր պարիսպների ուղղանկյունների մեջ:

Տիկին Ապելը նրանց դիմավորելով շտապեց հայտնել.

- Ֆրանցը ներողություն խնդրեց, որ չի կարող ճաշին ներկա լինել:

Սա արդեն շոշափելի նվաճում էր. ներողությո՜ւն խնդրել թեկուզ կնոջ միջոցով: Գնդապետը միանգամից չի հանձնվում, չնայած կորցրել է ճակատամարտը... Ուրեմն, պետք է մեծահոգի լինել պարտվածների հանդեպ.

- Ափսո՜ս, իսկ ես կարծում էի, թե հիմա պատիվ կունենամ պարոն Ապելի հետ ծանոթանալու...

- Ավա՜ղ, այսօր առիթ չի լինի, - չափազանց զուսպ նկատեց Յաննին:

- Ինչո՞ւ:

- Ճաշից հետո պիտի զբոսնենք, քաղաքին ծանոթացնենք քեզ, հետո պիտի հանգստանաս, որովհետև երեկոյան թատրոն պիտի գնանք:

- Թատրո՞ն... Հուսամ ֆրանսերեն է ներկայացումը:

- Ոչ՝ գերմաներեն... Եվ գիտե՞ս ինչ են խաղալու... Իբսեն, քո սիրած հեղինակը:

Տիկ. Ապելը, մինչև սեղանի մոտ հրավիրելը, սկսեց տունը ցույց տալ հյուրին՝ երրորդ հարկից սկսած: Ապշեցնող մաքրություն և կարգուկանոն էր

տիրում ամենուր և, անշուշտ, նկատվում էր, որ նախորդած օրերին մեծ աշխատանք է կատարվել այդ տանը: Տանտիրուհու հետ քայլելով սենյակից սենյակ, իջնելով հարկից հարկ, Ռուբենը մի զարմանալի հարազատություն զգաց այդ տան հանդեպ: Նրան թվաց, թե տիկ. Ապելն ուր որ է սլիտի բացի այդ մաքուր և հարմարավետ սենյակներից մեկի դուռը և ասի. «Ահա այստեղ եք ապրելու այսուհետ»:

Գնդապետը, ճիշտ է, տանը չէր, բայցևայնպես նրան տեսավ: Երկրորդ հարկում մի սենյակ մտան՝ վարագույրները փակ, և չնայած արևոտ օրվան, խորհրդավոր կիսախավար էր տիրում այնտեղ. կաղնեփայտի ծանր գրասեղանի ետևը, պատն ի վեր կանգնած էր նա՝ ամբողջ հասակով, հանդիսությունների համազգեստով, գույնզգույն շքանշանները կրծքին, ձախ ձեռքը սուսերի դաստապանին դրված: Բարեհոգի բյուրգերի տեսք ուներ: Մարտական հարակցությունները չէին փոխել նրա ներքինը: Համենայն դեպս՝ նկարի վրա: Դիմացի պատին, հավանաբար, նրա նախնիների նկարներն էին՝ բոլորը համազգեստներով, բոլորն էլ ռազմաշունչ արտահայտությունը դեմքին: Պրուսական սպայական այս գերդաստանը եկել հասել էր տասնյոթամյա օրիորդին, որը բնության անտեղիտալի թելադրանքին հլու, իր ձգտումների մեջ նախնիներից ոչ պակաս ռազմաշունչ, հոր (և հայրության) դեմ սկսած մենամարտը հմուտ մի ռազմավարությամբ հասցնում էր հաղթական ավարտին: Իսկ ինքն ո՞վ է... Ինքը նրա հրամանին ենթակա նվիրված զինվոր է, սիրո զինվորը:

Որքանո՞վ էր կանխամտածված տունը, օջախը ցույց տալու այս ծեսը, սակայն դա խելացի և բարի մի քայլ էր, և Ռուբենը, որ մի երկու ժամ առաջ գնացքի խցիկի մեջ մտահոգված էր, թե ինչպես չարժվի, ինչպես խոսի անծանոթ միջավայրում, հիմա զգաց, թե ինչպես անհետացան չափազանցված պատասխանատվության ճնշումները, թե ինչպես իրեն զգաց գրեթե հարազատ, առնվազն ծանոթ միջավայրում: Տան մթնոլորտն էլ նրան համակրելի թվաց. զինվորական ասկետություն՝ բյուրգերական կենցաղով մեղմացված: Եվ ոչ մի սլերճանք, ոչ մի ցուցամոլություն, այլ միայն անհրաժեշտը, և այնքան, որքան պետք է մարդավայել ապրելու համար:

Եվ նա զգաց, որ հանձինս տիկ. Ապելի, մի զորավոր ու հավատարիմ դաշնակից ունի: Տղամարդու բնազդը նրան ասաց, որ այդ համակրանքը ձևավորվեց այսօր, կայարանում և ամրացավ հետագա ժամերի ընթացքում: Եվ արդյոք դրա արտահայտությունը չէ՞ր, որ իրեն ու Յաննիին սեղանի մոտ իրար կողք նստեցրեց: Եվ դա միայն զգացմունք չէր, այլ ավելի շատ առողջ մի բանականություն, որը կարգավորում և իմաստ է հաղորդում կյանքին: Դա այն մեծ խորհուրդն էր, որը բնությունն է հայտնում մեզ սիրո միջոցով: Եվ նա այդ բանականության դրսևորումը տեսավ անգամ սեղանի մոտ, որ պատրաստված էր զուսպ ու ճաշակով, առանց զարմացնելու ցանկության, ասես իրենց վաղեմի ծանոթներից մեկին էին ընդունել: Իսկ ճաշից հետո, երբ ոտքով զբոսնում էին քաղաքում, Սուրբ Սեվերինի հոյակապ տաճարի քանդակները նայելիս, զարմանքով նկատեց, որ Սուրբ Բարբարան նման է տիկ. Ապելին, ասես նրա երիտասարդ տարիքը լիներ: «Բոլորն այդպես են ասում», - համաձայնեց Յաննին:

Եվ իսկապես, քուրձերով ծածկված, մորեխակեր, ոսկրոտ ու անմիս Հովհաննես Մկրտչի, պնմարդկային տառապանքները մարմնավորող Խաչյալի և մյուս սրբերի կողքին այդ կարմրաթուշ, մարմնեղ և թագակիր սուրբը ոչ միայն կենսականության, այլև առողջ բանականության մարմնավորումն էր, մանավանդ առաջ մեկնած աջ ձեռքով, որ լուսավորող ջահն էր պահում:

Յաննին հավանեց նրա զգեստները, սակայն խորհուրդ տվեց անգլիական մուգ գորշավուն կոստյումի հետ անպայման մուգ կարմիր փողկապ հարմարեցնել: «Հուսամ բերել ես, - ասաց նա: - Եթե ոչ, երբեք ուշ չէ, կարող ես այստեղից գնել... Ես ուզում եմ, որ այսօր երեկոյան թատրոնում դու comme il faut* լինես»:

Հետը մի քանի փողկապ էր բերել, որոնց մեջ նաև մուգ կարմիրը կար: Այնուամենայնիվ, Յաննին չլսելու դրեց և քարշ տվեց նրան Ս. Սեվերինի եկեղեցուց քիչ հեռու գտնվող հագուստի շքեղ ու մեծ խանութը, որտեղ այդ ժամին բավական այցելուներ կային: Նա ցուցադրաբար խոսում էր ֆրանսերեն, այս կամ այն զգեստը ցույց տալիս, կարծիքը հարցնում: Հետո մի շքեղ, սև մուշտակ փորձեց, որը շատ սազեց նրան, և հայելու առջև դառնալով ասաց. «Երբ որ բժիշկ դառնաս, ինձ համար ճիշտ այսպիսի մուշտակ կգնես»: Այնուհետև իրեն ստիպեց մորթե օձիքով վերարկու փորձել, կլոր գլխարկ գնել՝ եզրերը ծալված և չգիտես հիացած, թե հիասթափված ասաց. «Ի՜նչ լուրջ ես»: Նա ուշադրության կենտրոնում էր: Այցելուներից մի քանիսը բարևեցին նրան, իսկ մի քանիսը, հատկապես կանայք, դլուխ-գլխի փսփսում էին և հետաքրքրասեր հայացքներով զննում:

Դժվար չէր հասկանալ, որ Յաննիին հանդիսատես էր պետք, որպեսզի ցույց տար իր «նշանածին», անմիջապես ռևանշ վերցներ քրոջ չստացված ճակատագրի համար: Նա հատուկ ընտրեց այս խանութը, որովհետև այստեղի հաճախորդները գերազանցապես քաղաքի ունևոր խավերից էին, ուստի, դիտակցաբար, քաղաքի բամբասանքների անդուլ մեքենային հսկայական նյութ էր տալիս որոճալու, վստահ, որ այս անգամ կարեկցող կամ հեգնական հայացքներով չեն նայի իրեն:

Շամբերիում, Խաչելության մոտ անցկացրած գիշերների ընթացքում, Յաննին պատմել էր քրոջ անհաջող սիրո պատմությունը: Բոլոր մանրամասներով: Ուստի հիմա Ռուբենը լիովին հասկանում էր կրտսեր քրոջ վրեժի այս ցանկությունը: Որոշ չափով հաճելի էր, որ Յաննին հպարտ է իր նման տղայի հետ հասարակության մեջ լինել, որ իր օգնությամբ կարողանում է վերջապես իր ընտանիքի խոցված ինքնասիրությունն ամոքել: Եվ դժվար չէր ենթադրել, որ այսօր երեկոյան ոչ միայն Վիեննայից եկած նշանավոր դերասաններին տեսնելու ցանկությամբ է գնում թատրոն, այլև իրեն Էրֆուրտի ընտիր հասարակության առջև հանելու նպատակով:

---

*/Ինչպես որ հարկն է (ֆր.):

* * *

Էրֆուրտի հասարակությանը ներկայացվելու ծեսը չարունակվեց հաջորդ օրը՝ առավոտյան, երբ Յաննիի և տիկ. Ապելի հետ ներկա եղավ ժամերգությանը՝ Ս. Սեվերին եկեղեցում: Անգամ այստեղ, ուր մարդը ներամփոփվում է, որպեսզի մերձենա Աստծուն կամ գոնե ցույց է տալիս, որ վերացած է կյանքի ունայնությունից, նա զգաց, թե ինչպես հետաքրքրասեր հայացքներ էին ուղղվում իրենց կողմը: Նման դեպքերում տիկ. Ապելի դեմքին աննշմար մի ժպիտ էր հայտնվում, իսկ Յաննին, որ հայացքը հառել էր բեմում ծավալվող արարողությանը, չեր նկատում կամ չնկատելու էր դնում: Ասես Խաչելության կողքին կանգնած Յաննին չէր, որը ձգտում էր հեռանալ չար ու նախանձ մարդկանցից, որպեսզի կարողանա իր սերն անարատ պահել: Հիմա նա ճիշտ հակառակն էր անում, բայց դարձյալ միևնույն նպատակով: Եվ գուցե այս քայլի մեջ վաղահաս մի իմաստություն կար: Նա ընդունում էր հասարակության խաղի կանոնները և ձգտում հատկապես այդ ճանապարհով հաստատել ու վավերացնել իր իրավունքները: Բնազդով, թե բանականությամբ հասկացել էր կարևոր մի բան. որպեսզի վերջնականապես համոզի իր հորը, պետք է նախևառաջ համոզել այն հասարակությանը, որի ծնունդն էին իրենք բոլորը:

Որ այս աղջիկը հուզականությամբ շաղախված ողջամիտ մի նկարագիր էր՝ իր ցեղին հատուկ բացառիկ կազմակերպվածությամբ ու նպատակասլացությամբ, առավել քան համոզիչ ապացուցում էր իրենց ծանոթության ինը ամիսը. նա հղանում էր՝ առաջին հայացքից խենթ մի ծրագիր, այնուհետև պաղարյուն հետևողականությամբ իրագործում: Նրա առաջին նամակներից մեկը հիշեց, որտեղ տասնյոթամյա օտարուհին փորձում էր կշռադատված ու խիստ բանական մի ծրագիր ներկայացնել հայ ժողովրդի վերածննդի համար: «Գուցե մեզ՝ հայերիս, այդ ծրագիրը միամիտ թվար, - մտածեց Ռուբենը: - Մենք, որ հույսներս դրել ենք միայն Աստծո և Արևմտահայաստանի լեռներում, ժամանակ առ ժամանակ, հերոսական ու անհավասար կռիվ մղող մի քանի հայդուկների վրա: Բայց եթե այս աղջկա ձեռքին լիներ այդ ծրագրի իրագործումը, ո՞վ գիտե, գուցե իր նպատակասլաց կամքով կարողանար կյանքի կոչել»:

Արարողության ավարտից հետո մի քանի կանայք մոտեցան տիկ. Ապելին և նրանց ժպտերես զրույցից ու ձեռք սեղմելու մասնավորեցված ձևից դժվար չէր կռահել, թե խոսակցությունն ինչի շուրջ կարող է ընթանալ: Նախորդ օրվա տպավորությունների մի մասն, ինչպես երևում էր, հասել էր եկեղեցի, որպեսզի այստեղ հարստանալուց և առանձնահատուկ երանգ ստանալուց հետո, արդեն տիկ. Ապելի բերանից, որպես հավաստի լուր, հասներ ընտանիքի գլխավորին: Եվ նա համոզվեց դրանում, երբ եկեղեցուց դուրս եկան ու դանդաղ զբոսնելով դեպի տուն ուղղվեցին: Տիկ. Ապելը, պատճառ բռնելով, որ խոհանոցում շտապ գործեր ունի, կառք նստեց, իսկ երիտասարդներին խորհուրդ տվեց, եղանակից օգտվելով, մի քիչ զբոսնել:

Այս փոքրիկ խորամանկությունը հեշտությամբ վերծանվում էր և որոշ

չափով էլ հանուն իրենց էր սրվում: Այս աշխարհում քիչ էր իրար սիրելը, իրար արժանի լինելը, պետք էր պաշտպանական լուրջ միջոցներ ձեռնարկել, այդ սիրո շուրջբոլորը հզոր պատնեշներ կանգնեցնել: Գիտնականները, ճիշտ այսպես, խնամք են տածում աներևակայելի պայմաններում անսպասելիորեն ծիլ տված հազվագյուտ ու թանկագին բույսի հանդեպ: Իրենց սերն այդ բույսն էր, որ կարիք ուներ մշտական հոգածության: Պետք էր մեկմել, քնացնել հասարակությունն կոչված հրեշին, որպեսզի նա հանդուրժեր նման սիրո գոյությունը:

Զբոսանքը երկարաձգվեց: Պատճառը եկեղեցուց հեռու ընկած պարտեզն էր, որ կանչեց իր դատարկ ծառուղիներով, հետաքրքրասեր աչքերից պատսպարված անկյուններով, ուր կարող էին թաքնվել և փորձել մի քանի րոպեի նեղ սահմաններում վեց ամսվա իրենց սիրո ծարավը հրկիզող համբույրներով փոքր ինչ հագեցնել: Գուցե անխոհեմ էր նման բան անելը՝ օրը ցերեկով հազարաչյա քաղաքի առջև, բայց նկատեց, որ շաբաթ օրով, կեսօրից առաջ, պարտեզում իրենց նման սիրահար ուրիշ զույգեր կային:

Տուն՝հասան ուշացումով և սոսկալի քաղցած: Նրանց միանգամից սեղան նստեցրին: Պրն. Ապելն այնտեղ էր՝ քաղաքացիական զգեստ հագած, ճաշասրահում, սեղանից քիչ հեռու նստած լրագիր էր կարդում: Հյուրին տեսնելով, ոտքի կանգնեց և ժպիտը դեմքին եկավ ընդառաջ: Նրա ձեռքսեղմումը զորավոր էր և անկեղծ:

- Իմացա, որ բարեհաջող հասել եք և հասցրել նույնիսկ զվարճանալ մեր երիտասարդների հետ:

- Այո, շնորհակալ եմ, Յաննին երեկ փառահեղ նվեր արեց ինձ՝ այդ ներկայացումն իսկապես հոյակապ էր...

- Թատրոնը Յաննիի թուլությունն է...

- Թուլությունը չէ, - բողոքեց Յաննին: - Պարզապես սիրում եմ այնտեղ գնալ... Մանավանդ երբ հյուրախաղեր են լինում...

- Բայց, սիրելիս, դու կարծեմ բոլոր ներկայացումները նայել ես, այն էլ մի քանի անգամ, իսկ անցած օրը ընկերուհուդ հետ, կարծեմ, փորձերին եք ներկա եղել...

- Հայրիկ, դու քո սիրած գիրքը մի քանի անգամ չես կարդո՞ւմ... Նույնն էլ ներկայացումն է...

- Էհ, ժամանակ ունենո՞ւմ եմ, որ կարդամ, աղջիկս... Սպասիր, շուտով թոշակի կանցնեմ և այդ ժամանակ գրադարանիդ բոլոր գրքերը հերթով պիտի կարդամ, - ծիծաղելով պատասխանեց պրն. Ապելը:

- Ավելի լավ կլինի, որ այդ բոլոր գրքերը տանես քո սենյակ և փակի տակ պահես, - առաջարկեց տիկ. Ապելը: - Աղջիկդ վերջապես ժամանակին կքնի:

- Ես միշտ ժամանակին եմ քնում, - արդարացավ Յաննին: - Պարզապես քնելուց առաջ սիրում եմ մի քիչ բանաստեղծություն կարդալ:

- Սիրելիս, երկու օր առաջ պատահմամբ անցա քո սենյակի կողքով, գիշերվա մեկն էր, և դու շարունակում էիր կարդալ քո այդ գիրքը, որ երևի արդեն հարյուր անգամ կարդացել ես:

- Ի՞նչ գիրք է, - հարցրեց Ռուբենը:

- Հայնեի հատորն է... Շատ եմ սիրում. մանավանդ նրա «Քնարական միջնարարը»:

- Իմիջիայլոց, պարոն Ռուբեն, դուք բժիշկ եք, հավանաբար կիմանաք, ճի՞շտ է, որ էլեկտրական լույսի տակ կարդալը վնասակար է տեսողության համար:

- Չէի ասի, թե էլեկտրական լույսը վնասակար է, սակայն քնից առաջ այդքան կարդալն իսկապես վնասակար է: Մանավանդ երբ Յաննիի պես տպավորվող նկարագիր ունեն, - հետո, կատակի տալով, շարունակեց. - Գիշերները վատ երազներ կտեսնես:

- Օ, դավաճա՜ն, - նեղացած ձևացրեց Յաննին: - Չէի կարծում, թե բանաստեղծը բանաստեղծի դեմ կխոսի:

Տանտիրուհին այս անգամ Ռուբենին նստեցրել էր ամուսնու կողքը: «Տղամարդիկ թող իրար կողք նստեն», - կեսկատակ, կեսլուրջ ասաց նա: Գնդապետը զրուցասեր անձնավորություն էր երևում: Նա հիացմունքով էր խոսում Շվեյցարիայի բնության մասին: Հետո հանկարծ հարցրեց.

- Համալսարանն ավարտելուց հետո մտադիր եք վերադառնալ Կոնստանդնուպոլիս, թե՞ պիտի մնաք Լոզանում:

- Շիտակն ասեմ, այդ մասին դեռ չեմ մտածել... Դեռ վերջնական որոշում չունեմ:

- Ասում են, թե Կոստանդնուպոլիսն էլ դեղեցիկ քաղաք է, բայց կարծում եմ, որ ձեզ համար՝ որպես ապագա բժշկի, ավելի ճիշտ կլինի Լոզանում մնալ:

- Ինչո՞ւ եք այդպես կարծում:

- Որովհետև Յաննին ասում է, թե ձեր ուսուցիչը՝ բժիշկ Ռուն բարձր է գնահատում ձեզ, որ արդեն մասնակցում եք նրա վիրահատություններին...

- Թերևս ավելի ճիշտ կլիներ ասել, որ առայժմ ներկա եմ լինում որպես օգնական:

- Թեկուզ այդպես, դարձյալ մեծ պատիվ է ձեզ համար, չէ որ դուք դեռ ուսանող եք... Հարյուրավոր ուսանողների միջից ինչո՞ւ հատկապես ձեզ ընտրեց... Նշանակում է լուրջ հույսեր է կապում ձեզ հետ...

- Այո, իսկապես, բժիշկ Ռուն գնահատում է ինձ և, ինչպես բարեհաճեցիք արտահայտվել, հույսեր է կապում ինձ հետ... Ավելին, անհամեստություն չհամարեք ասածս, նա նույնիսկ ուզում է ինձ տեսնել իր փոխանորդի դերում... Անշուշտ, ապագայում... Հիշում եմ, մի քանի ամիս առաջ խոստովանեց, որ արդեն ձեռքերը դողում են, ուստի մտադիր է մոտ ժամանակներս թողնել վիրահատությունները և միայն դասախոսությամբ զբաղվել:

- Հրաշալի՜ է, - թնդաց պրն. Ապելը: - Այդպիսի վիրաբույժի հովանավորության ներքո, ձեր աշխատասիրությամբ, մեծ հաջողությունների կհասնեք, ձեր ուսուցչի նման Եվրոպայով մեկ հայտնի անուն կդառնաք, գուցե նույնիսկ գերազանցեք նրան:

- Շնորհակալ եմ, պարոն Ապել... Նման ապագա գուցե ինձ սպասեր, եթե հակում ունենայի վիրաբուժության հանդեպ, սակայն կարծում եմ, որ նշտրակը ծայրահեղ դեպքերում պետք է դիպչի մարմնին:

- Այո, իրավացի եք, բայցևայնպես պիտի դիպչի, և լավ կլիներ, որ այդ գործը դո՛ւք անեիք:

- Սկզբունքի հարց է... Ես կարծում եմ, որ բժշկությունը մինչև այսօր սխալ ճանապարհով է գնացել: Մարդու օրգանիզմը, նրա հոգին գաղտնիք են եղել բժշկի համար և նա՝ բժիշկը, շարունակ կատարված իրողության, post factum-ի առջև է հայտնվել, ասես սպասել է, որ հիվանդությունը բուն դնի մարդու մարմնի մեջ, քայքայի, և նոր հույսը մնա նշտրակի վրա... Լավագույն դեպքում, փոշիներ կամ լուծույթներ առաջարկվեն, որոնց հրաշագործ զորությանը ոչ բժիշկն է շատ հավատում, ոչ էլ հիվանդը:

- Սակայն ավելին ի՞նչ կարող է անել բժիշկը:

- Շատ բան: Նախ, գիտությունն արդեն հրաշքներ է գործում, շատ հիվանդությունների դեպքում բժշկին հնարավորություն տալիս առանց դանակի օգնության մարդու մարմնի ներսը թափանցել: Մանրադիտակը մի քանի հարյուր անգամ մեծացնում է մանրէները: Մարդու մարմինն այլևս գաղտնիք չէ... Անբուժելի համարվող բազմաթիվ հիվանդություններ այսօր բուժվում են, շուտով մյուսների գաղտնիքն էլ կբացվի:

- Դուք չափազանց լավատես եք, երիտասարդ: Ձեզ լսելով, կարելի է կարծել, թե բժիշկները շուտով անելիք չեն ունենալու:

- Ընդհակառակը, - ոգևորված առարկեց Ռուբենը: - Նրանց անելիքները շատանալու են... Պարզապես գործունեության դաշտը պիտի փոխվի...

- Կներեք, չեմ հասկանում:

- Դա շատ պարզ է. ծառը երբ հիվանդանում է կամ չորանում՝ կտրում են: Սակայն եթե ժամանակին ջրեն, խնամք տածեն, վնասատուներից զերծ պահեն, այլևս սղոց բանեցնելու կարիք չի լինի: Մարդու պարագան ավելի դյուրին է, քանզի նա գիտակցություն ունի և հոգի, հետևաբար բժշկի գործը պիտի լինի ոչ այնքան մարմինը բուժելը, որքան հիվանդություններից հեռու պահելը:

- Դուք բժիշկներին այդպիսով մարդկային մարմնի պահակներ եք դարձնում:

- Գուցե, բայց նաև դաստիարակներ, կրթողներ... Ոգի տվողներ... Հիվանդությունը տեղ չի գտնի այն մարմնում, որտեղ արդեն կայք են հաստատել զորավոր կամքը և անսասան ոգին: Սպարտացիք չգիտեին, թե հիվանդությունն ինչ բան է, որովհետև ոչ միայն ոչնչացնում էին ի ծնե թույլերին, այլև օրնիբուն կոփում ոգին ու մարմինը, հիվանդությունը դարձնում իրենց համար օտար ու անհարիր մի բան:

- Բայց այդպես զինվորներ են պատրաստում, - համակրալից ժպիտը դեմքին պատասխանեց գնդապետը, որն ամենայն ուշադրությամբ լսում էր զրուցակցին:

- Իսկ մի՞թե մարդը պիտի իր ոգին զորացնի միայն պատերազմելու համար, մի՞թե սիրելու և լիարժեք ապրելու համար կամքն ու ոգին անհրաժեշտ չեն:

Տիկ. Ապելը և Յաննին լուռ հետևում էին և չէին միջամտում, քանզի երկուսն էլ տեսնում էին, որ «տղամարդկային» այս զրույցը կարծես համակրան-

քի և մտերմության մթնոլորտ էր ստեղծում, որը թվում էր, թե իրենց միջամտությամբ կարող է անհետանալ:

- Անչափ հետաքրքիր է ձեզ լսել: Բայց թույլ տվեք ասել, որ ձեր արդիական և որոշ չափով էլ արտասովոր գաղափարները ջերմ համախոհներ կգտնեն Եվրոպայում, մանավանդ մեզ մոտ՝ Գերմանիայում, սակայն ոչ ձեր ասիական երկրում: Ճիշտ է, ձեր սուլթանը մեր հավատարիմ դաշնակիցն է, սակայն այդպիսին է իրողությունը... Ափսոս չէ՞ խոզերի առջև մարգարիտներ թափել...

Հասկանալի էր, որ գնդապետը մտահոգված է ոչ այնքան «մարգարիտների», որքան իր դստեր ճակատագրով, և այդ մտահոգությունը կարելի էր ձևակերպել հետևյալ նախադասությամբ. ամուսնանալուց հետո որտե՞ղ է ապրելու իմ աղջիկը. Շվեյցարիայո՞ւմ, «բարբարոսների» երկրո՞ւմ, թե՞ Էրֆուրտում, որտեղ իր «գաղափարները համախոհներ կգտնեն»:

- Ավա՛ղ, մենք հայերս բարբարոսների մեջ ենք ապրում:

Այդ պատասխանը կարծես բավարարեց գնդապետին, որը գարեջրի գավաթը բարձրացնելով ասաց.

- Ձեր հաջողությունների կենացը..., - հետո ժպիտը դեմքին ավելացրեց: - Հուսամ՝ չեք մոռացել, որ գարեջուրը խմելու համար է:

Գարեջրով ցողված համեղ և առատ ճաշից հետո, մուգ սուրճի երկու գավաթն անգամ անկարող եղավ օգնելու գնդապետին, որպեսզի սիեստի զորավոր պահանջներին դիմադրի: Բազմոցի վրա կիսապառկած, սկսեց խռմփացնել: Տիկ. Ապելի մեղավոր ժպիտների ներքո դուրս եկան միջանցք: Յաննին մորն ասաց, թե գնում են սենյակ լուսանկարների ալբոմը նայելու, սակայն չհամբերեց մինչև սենյակ հասնեն և ուղղակի աստիճանների վրա մոլեգին համբույրով փակչեց Ռուբենին: Վերջինս իզուր էր ջանում համոզել, որ համբերի: Հորդորներն ավելի էին գրգռում նրան: Ճաշասրահում սպասուհին, տիկ. Ապելի օգնությամբ, աշխատում էր անաղմուկ հավաքել սեղանը, այնուհանդերձ, շշուկով ասված բառերը և ամանեղենի չխկոցը հասնում էր մինչև սանդուղք:

Աստիճանների վրա այդպես կանգնելն ու համբուրվելը վտանգավոր էր: Սպասուհիներից որևէ մեկը կամ հենց ինքը՝ տիկ. Ապելը կարող էր դուրս գալ միջանցք, և նրանք գողության մեջ բռնված երեխաների պիտի նմանվեին: Մի կերպ կարողացավ ազատվել Յաննիի գրկից, հետո ձեռքը բռնեց և զգույշ քայլերով առաջնորդեց ներքև: Վերջինս, իր սենյակը հասնելուն պես, սպրդեց ներս և տղային ետևից տարավ:

Սենյակը բավական ընդարձակ էր: Անմիջապես աչքի էր զարնում սև ու փայլուն դաշնամուրը, որ զետեղվել էր երկու գրապահարանների միջև: Աջից մի բազմոց էր, իսկ անկյունում՝ գրասեղան: Դաշնամուրի և բազմոցի միջև դուռ կար, որ տանում էր Յաննիի ննջարան: Ներս մտնելուն պես ընդհատված համբույրը շարունակվեց, և ավելի մոլեգին: Կիսաբաց դուռը նրանց գայթակղում էր, հրավիրում, համոզում ներս գալ... Եվ նրանք անսացին այդ հորդորներին:

Կես տարի սպասել էին այս ակնթարթին և ամեն օր պայքարել այդ համբույրի իրավունքը վաստակելու համար... Հիմա ամեն մի շփումից լուցկու պես հրկիզվում էին, վառվում մի կրակով, որը գնալով ավելի էր թեժանում և ստի-

պում բյուրգերական հետկեսօրյա անդորրի մեջ վերստեղծել հոգեկան ու մարմնական սիրո այն բացառիկ թրթիռները, որ ապրեցին ամռան գիշերվա երկնքի տակ՝ Խաչելության օրհնությամբ մաքրված: Եվ երբ մարմինն ամպրոպի պես ցնցող գերագույն հրճվանքից հետո, նվաղկոտ շարժումով գլուխը բնազդաբար դարձրեց, ննջարանի պատին Յաննիի ծնողներին տեսավ, որ հետևում էին նրան: Մոր հայացքն ուղղված էր պարապին, ասես ուզում էր իմանալ, թե ինչ է հաջորդելու իր տեսածին, մինչդեռ հայրը, որ այստեղ քաղաքացիական զգեստով էր, շիտակ նայում էր իր աչքերի մեջ: Նրա հայացքը տխուր էր, բայց աշխարհի հետ հաշտված: Գնդապետի դեմքն անհետացավ շրջանակի միջից և տեղը զիջեց Հովհաննես աղային, որը ռոկոկո ոճով պատրաստված ոսկեփայլ շրջանակի միջից խիստ ու պախարակող հայացքով նայում էր որդուն: Եվ այդ պահին երանքների միջով մի պաղություն անցավ, որն իսպառ անհետացրեց հոգեկան երկնասլաց թռիչքով բարեխառնված մարմնական հազվագյուտ սիրո կախարդանքը: Եվ թիկունքից իզուր էր հնչում հուշկապարիկի դյութող ձայնը.

- Մոտեցիր, սիրելիս, այդքան շո՞ւտ հագեցար ինձնից... Ես քեզ վեց ամիս սպասել եմ... Հանգիստ կաց, այստեղ ոչ ոք չի մտնի... Դե, մոտ եկ...

* * *

Ծրարը բացեց և Հովհաննես աղայի նկարը դուրս եկավ միջից, յուր տիկնոջ՝ Արմավենի Գրաբոսյանի հետ նկարված Պոլսի հայկական «Cabinet-Portrait»-ներից մեկում: Հայատառ թուրքերենով գրված նամակում հայրը շնորհավորում էր իր ծննդյան տարեդարձը և պատմում, թե ինչպես մոր հետ մի հոյակապ շաբաթ են անցկացրել Պոլսում, և, ի վկայություն, նամակին կցված էր լուսանկարը: Այնուհետև հայրը գրում էր, թե մի քանի ամիս առաջ իրենց լուրեր հասան, թե որդին սիրահարվել է մի օտար աղջկա: Եվ չնայած լուրը գալիս էր հավաստի աղբյուրից, իրենք՝ ծնողները, որոշեցին չաճապարել, գտնելով, որ իրենց որդին երիտասարդ է, իսկ այդ տարիքում հեշտությամբ են սիրահարվում և հեշտությամբ մոռանում...

Հիշում էր, որ սեպտեմբերի առաջին օրերին, Շամպերիից վերադառնալուն պես, Յաննիի լուսանկարներն ուղարկեց հորը և մի նամակ գրեց՝ պատմելով, որ Խաչելության ներքո հավերժական սիրո երդում են տվել միմյանց: Հոր պատասխանը չուշացավ: Նա ընդունում էր, որ աղջիկը գեղեցիկ է, նույնիսկ շատ գեղեցիկ, որ լավ ընտանիքից է, բայց ափսոս, որ օտար է... Ե՛վ աղջկա համար դժվար կլինի, և՛ մեզ համար, գրում էր հայրը սեպտեմբերին:

Սակայն հիմա անհանգիստ էր, նույնիսկ տագնապած, քանզի խայտառակ, ամոթալի լուրեր են հասնում նրան... Իր որդին թրև է գալիս սրճարաններում, այստեղ-այնտեղ սկանդալներ սարքում օտարների հետ, ծեծկռտուքների մասնակցում, տհաճ պատմությունների մեջ ընկնում, և այդ ամենը տեղի է ունենում օտար աղջկա պատճառով... Հայրը զայրացած էր, վրդովված, պահանջում էր անմիջապես վերջ դնել ամոթալի ընթացք ստացած այդ կապին, որը կարող է ավելի հեռուն տանել և ավելի խայտառակ բնույթ ստանալ, քանզի հայը

և գերմանացին չեն կարող ընտանիք կազմել և մի հարկի տակ ապրել... Նրանք այս աշխարհի տերերն են, իսկ մենք ո՞վ ենք, ի՞նչ ենք նրանց համեմատ...

Քանի դեռ ուշ չէ, գրում էր հայրը, պետք է վերջնականորեն խզել կապերն այդ օտարուհու հետ... Իրենք՝ ծնողները, շատ կուզեին, որպեսզի Մարիամի հետ ամուսնանա, նույնիսկ ժամանակին հասկացրին, որ լիովին համաձայն են այդ դաշինքին, սակայն եթե իրենց որդու սրտովը չէ, թող ուրիշ աղջիկ գտնի, բայց անպայման հայ, պատվավոր ընտանիքից, այլապես իրենց օրհնությունը չեն տա: Փա՜ռք Աստծու, այստեղ՝ Պոլսում, բազմաթիվ գեղեցիկ ու շնորհալի աղջիկներ կան՝ նշանավոր ու հարուստ ընտանիքներից... Որի վրա մատը դնի՝ իրենը կլինի... Իրենց որդին հիմա հասարակ մեկը չէ, վաղը-մյուս օրը բժիշկ է դառնալու՝ եվրոպական վկայականով, բոլորը կերազեն այդպիսի փեսա ունենալ:

Հայրը նաև խոստովանում էր, որ Պոլիս են եկել հատուկ այդ նպատակով, որ մեկ շաբաթ մնացել են իրենց ազգական Համբիկ աղայի տանը և երեք անգամ հանդիպել Մաքրուհի տուտուին, որ ազատ ելումուտ ունի Պոլսի և Իզմիրի բոլոր հայ մեծահարուստների ընտանիքներում: Ինքը՝ Մաքրուհի տուտուն էր ցանկացել տեսնել Հովհաննես աղային, որպեսզի մի հոյակապ հարսնացու առաջարկի որդու համար... Մի փառահեղ ընտանիքի դուստր, հրեշտակի պես աղջիկ... Պոլսի ամենահարուստ ընտանիքներից մեկը համաձայն է իրենց աղջկան ամուսնացնել նրա հետ... Սրանից ավելի մեծ բախտ հնարավո՞ր է արդյոք երազել: Ուստի հայրը պահանջում էր, որպեսզի իր զավակը «խելքը դլուխը ժողվի» և մի քիչ էլ ծնողների մասին մտածի, որոնք օր ծերության ուզում են ապրել հանգիստ ու ապահով կյանքով և ուզում են իրենց զավակներին բախտավորված տեսնել...

Ենթադրում էր, որ ծնողները հավանություն չեն տա իր և Յաննիի ամուսնությանը, որ կարող է նույնիսկ ընդդիմանան, գուցեև մերժեն ծնողական իրենց օրհնությունը: Հայկական միջավայրի օրենքները մի՞թե ծանոթ չէին նրան: Ահա ինչու դանդաղ, առանց շտապելու ջանում էր ընտելացնել նրանց այդ գաղափարին, և եթե մինչև այսօր խրախուսանքի որևէ բառ չէին գրել այդ կապի վերաբերյալ, չէր նշանակում, թե կտրականապես դեմ են: Առկախ մի վիճակ էր, ուր մի կողմը կաթիլ առ կաթիլ փաստարկներ էր կուտակում հօգուտ իրեն, իսկ մյուս կողմը պահպանում մի լռություն, որն ամենևին համաձայնության նշան չէր: Ինչ որ է, այդ վիճակը երկու կողմին էլ բավարարում էր: Մինչդեռ այս նամակով ամեն ինչ կտրուկ փոխվում էր:

Նամակը նորից կարդաց, առանց շտապելու, որոշ պարբերություններ ու նախադասություններ մի քանի անգամ վերընթերցելով: Հայրը, չնայած ամբողջ Ժամագիրքն ու Ավետարաններն անգիր գիտեր, սակայն թրքախոս էր և որդուն նամակ գրելիս միշտ հայատառ թուրքերենն էր գործածում: Մեսրոպատառ այդ թուրքերենը՝ հայկական միջավայրի ընտանեկան ինքնապաշտպան զգուշավորությանը սոսկալի մի ասիականություն էր հաղորդել: Մեկ այլ տարօրինակություն նկատեց. ընդդեմ օտարի խոսվում էր օտար լեզվով:

Զուզեց անգամ մտածել, թե ով կարող էր այդպիսի աղավաղված լուրեր հասցնել իր ծնողներին, սակայն մի վերջին անգամ պաղարյուն ընթերցելուց հե-

տո գտավ, որ այդ նամակն ավելի շատ իր օդտին է, քանզի ի՞նչ էր ստացվում. որդու նամակները կարդալուց հետո հայրը ոչ մի կերպ չէր անդրադարձել, այսինքն՝ ճշմարտությունը հոր մեջ մերժելու կամ արգելելու ոչ մի ցանկություն չէր առաջացրել, մինչդեռ զրպարտությունը, սուտն էր հունից հանել և ստիպել այդպիսի նամակ գրել որդուն: Ուրեմն, եթե ինքը՝ կանխելով այդ բամբասանքները, ժամանակին հորը գրած լիներ և վերջին ամիսների իրողությունները ներկայացներ՝ այնպես, ինչպես եղել է, հնարավո՞ր է, որ հայրը շարունակեր սպասողական լռությունը պահպանել... Դժվար է ասել: Կռիվը մնում է կռիվ, ինչպես կուզես ներկայացրու: Սակայն հիմա, երբ հայտնի չէ, թե ինչպիսի հրեշավոր խեղաթյուրումներով են ներկայացրել այդ պատմությունը, երբ նոր է վերադարձել Էրֆուրտից՝ աղջկա ծնողների բարեհաճ վերաբերմունքին արժանացած, պարզապես պարտավոր էր հորն ու մորը պատմել այդ ուղևորության մասին և հոգատար նրբանկատությամբ բացատրել, որ ինքն ստիպված էր իր անձի, վերջապես իր ցեղի պատիվը պաշտպանել, որ հաղթող է դուրս եկել այդ մենամարտից՝ վաստակելով բոլորի համակրանքը:

* * *

Զարմանալի մի հանդարտություն էր իջել նրա հոգուն: Աշխարհին ու մարդկանց նայում էր հանդուրժող ու ներողամիտ մի հայացքով, ասես ամեն ինչ հարմարվել էր իրեն, ուստի այլևս տագնապելու, զայրանալու կամ մարտնչելու պահանջ չուներ: Հավանաբար զինվորն է այսպես ներողամիտ դառնում ծանր ու հաղթական պատերազմից հետո կամ զավակներ մեծացրած ու բարեհաջող ամուսնացրած ծերունական ամոլը, որն աշխարհի անցուդարձին փիլիսոփայորեն նայելով, համբերատար սպասում է, թե Տերը երբ է իրենց կանչելու վերջին ուղևորության:

Ժամերով նստում էր «Old India»-ի իր սիրած անկյունում, պատուհանի մոտ՝ գրքերի ու ձեռագրերի առջև, մի տեսակ եղբայրական խանդաղատանքով նայում՝ գարնան թիթեռնիկների նման Ս. Ֆրանսուայի հրապարակով անցնող գիշերօթիկների սանուհիներին, որոնք արդեն հաստատված ավանդույթի համաձայն, իրենց երթուդարձի ընթացքում, հայացքներն ուղղում էին դեպի նշանավոր պատուհանը, սպասելով, որ մեկ ուրիշ ասպետ-ուսանող կգա և իրենց կփրկի դաստիարակ-կախարդների ճիրաններից: Իր և Կլաուսի բախման պատմությունը քաղաքով մեկ տարածվել ու հասել էր մինչև գիշերօթիկները՝ անշուշտ հրաշապատում երանգներով հարստացված: Հանուն իր սիրեցյալի մենամարտի դուրս եկող ասպետի կենդանի կերպարը խելացնոր ոգևորության էր հասցրել Լոզանի և մերձակայքի հարյուրավոր սանուհիներին և ուսանողուհիներին, և զարմանք ու վրդովմունք առաջացրել քաղքենիների միջավայրում:

Էրֆուրտից վերադառնալուց հետո շնորհակալական մի նամակ գրեց Յաննիի ծնողներին, մասնավորապես չեշտելով, որ այցելության ընթացքում իրեն այնպես զգաց, ասես «հայրական տանն էր, իր հարազատ ծնողների կողքին»: Մի քանի օր հետո ստացավ տեր և տիկին Ապելների պատասխանը, որ-

տեղ, իրենց հերթին, շնորհակալություն էին հայտնում իր հետ անցկացրած հաճելի ժամերի համար և վերջացնում նամակը հետևյալ նախադասությամբ. «Հուսանք, որ նոր առիթներ կունենանք հանդիպելու այստեղ և գուցե Շամպերիում»: Իսկ որոշ ժամանակ անց ստացավ Հովհաննես աղայի գրեթե մեղայական նամակը՝ ծնողական օրհնության հետ միաժամանակ: Նրանք հիացած էին Յաննիի բացառիկ արժանիքներով: Սա արդեն իսկական հաղթանակ էր, քանզի լավ գիտեր հոր բնավորությունը և հրաշալի գիտակցում էր, թե որքան դժվար է նման մարդուն դեմ գնալ հանրային կարծիքին («օտարը մնում է օտար, որքան էլ լավը լինի...»), անսասան ավանդություններին, վերջապես սեփական երաղանքին՝ իր որդուն տեսնել հայ օրիորդի հետ ամուսնացած... Գնդապետը մի բերդ էր, որի դռներն արդեն բացվել էին, մնում էր համբերատար սպասել բանալիների հանձնման արարողությանը, մինչդեռ հայրն իրասածի մարդ էր և այդքան արագ չէր հրաժարվում իր վճիռներից:

Սակայն գիտեր, թե ում էր պարտական Հովհաննես աղայի տրամադրության այս կտրուկ փոփոխության համար՝ իր հավատարիմ ընկերոջը՝ Լևոն Ազնավուրյանին: Նա էր, որ նախորդ, խստաշունչ նամակը կարդալով գտավ ամենաճիշտ լուծումը. «Սիրահարվածի կողքին միշտ մեկը պետք է լինի, որպեսզի ճիշտ խորհուրդներ տա: Հորդ, իհարկե, խեղաթյուրված են մատուցել իրողությունը, սակայն որքան էլ ջանաս ճշմարտությունը ներկայացնել, միևնույն է, կասկածի ստվեր է մնալու նրանում: Պետք է որ կողմնակի մեկը մատուցի փաստերը և անաչառորեն նրբությունները բացատրի: Սակայն դա էլ քիչ է. պետք է որ Յաննին գրի ծնողներիդ»: «Յաննի՞ն, - զարմացած հարցրեց Ռուբենը: - Սակայն նա շատ քիչ բան գիտի մենամարտի մասին...»: «Իսկ ի՞նչ պարտադիր է, որ հանդես գա քո փաստաբանի դերում... Այդ գործը ես կանեմ: Թող պարզապես նամակ գրի. խոսի ձեր սիրո մասին, թող խոստովանի, որ երդում եք տվել ցմահ լինել միասին... Եվ անպայման թող իր լուսանկարը նվիրի»:

Հիմա էր տեսնում, թե Լևոնը որքան հեռատես էր: Ծնողների նամակից երևում էր, որ բեկումը կատարվել է հիմնականում Յաննիի նամակի շնորհիվ: Իսկապես, հնարավո՞ր էր արդյոք չհուզվել ու տեղի չտալ, երբ հզոր ցեղի, ազնվական ընտանիքի խելացի, գեղեցիկ, բարեկիրթ ու շնորհալի դուստրը նամակ է գրում իր ապագա ամուսնու ծնողներին՝ կոչելով նրանց Հայր իմ և Մայր իմ... Ամենաքար սիրտը կփափկեր այսպիսի նամակ ստանալուց հետո:

«Վե՛րջ, - ասում էին ընկերները: - Քեզ հիմա մնում է մտածել բժշկական վկայականիդ և ամուսնության մասին: Միայն թե չմոռանաս մեզ հարսանիքիդ կանչել»: Նա ժպտում էր ի պատասխան և մտովին, որերորդ անգամ, ընտանեկան օջախի երջանիկ պատկերները գծում. մեկ, երկու, երեք... երեխաներ, անպայման չարաճճի, բայց ուշիմ, առողջ և հատկապես գեղեցիկ, անպայման գեղեցիկ... Եվ երջանի՜կ... Երանելի այս պատկերները գծագրվում էին մերթ Սիլիվրիի ծովափին՝ հարազատներով շրջապատված, մերթ Պոլսի հարուստ թաղերից մեկում, մերթ Լոզանում՝ մի գեղեցիկ առանձնատան մեջ... Սակայն ոչ մի անգամ ընտանեկան իր օջախը չտեսավ Էրֆուրտի ընդարձակ առանձնատան պարիսպներից ներս:

Երանավետ անդորրի այս օրերին էր, որ Քենանի նամակն ստացավ Փարիզից: Գրում էր, որ ամուսնացել է վիեննացի մի գործարանատիրոջ աղջկա հետ (Հարսանյաց հրավերն, ի դեպ, ուղարկել էր ժամանակին), որ Փարիզ են եկել՝ հարսանեկան ուղևորության և մտադիր են նաև այցելել Ժնև ու Լոզան: Նույնիսկ ժամադրություն էր նշանակել «Բո-Ռիվաժ-Պալասում», ուր պիտի հանգրվանեին մեկ շաբաթով: Խնդրում էր, որ անպայման հանդիպեն և ընդգծում, թե կարևոր նորություններ ունի Հայրենիքից:

Հանդիպեցին իսկական բարեկամների պես: Բարի մի հավատ կար հիմա նրանում մարդկանց հանդեպ, պատրաստ էր նույնիսկ ներել այդ տղայի ցեղակիցների պատճառած անլուր տառապանքներն իր ժողովրդին:

Քենանը բավական փոխվել էր. դեմքի արտահայտությունն ավելի էր լրջացել, իսկ կարճ կտրած մազերն ու շեկ բեխը իսկական եվրոպացու կերպարանք էին տվել: Շարժումներն էլ դարձել էին ավելի հանդարտ, ծանրումեծ, փոքր ինչ գիրացել էր: Մի խոսքով դարձել էր տիպական քաղքենի, որպիսիք այստեղ՝ Շվեյցարիայում, լեցուն էին՝ ֆրանսիական, գերմանական կամ ավստրիական անձնագրերը գրպաններում: Մինչդեռ նրա կինը տիպար արևելցի էր՝ իր սև մազերով, թխավուն մաշկով, մի քիչ կոր քթով և մսալի ու զգայնոտ բերանով: Միայն սլացիկ հասակը, կանոնավոր ու համաչափ մարմինն էր վկայում նրա եվրոպական ծագումը: Նրա դիմագծերը, հանդարտ ու ինքնավստահ շարժումներն առիթ էին տալիս ենթադրելու, որ իշխելու կամք և տիրապետելու ձգտումներ ունեցող անձնավորություն է և մշտապես կարոտ է որևէ թույլ արարածի ներկայության: Թերևս այս հանգամանքն էր բացատրում նրա ամուսնական կապը Քենանի հետ: Երևում էր նաև, որ ամուսնուց առնվազն յոթ-ութ տարով մեծ է:

- Ռենատա Ցոլինգեր, - ներկայացավ նա՝ Ռուբենի ձեռքը սեղմելով և իր աղջկական ազգանունն ընդգծելով: - Գիտե՞ք, որ ես համաձայնեցի Լոզան գալ հատկապես ձեզ տեսնելու համար:

- Տիկին... Մեծ պատիվ է:

- Այո, այո, հավատացեք... Քենանն այնքան է պատմել ձեր մասին, որ պարզապես անվայել կլիներ չծանոթանալը:

- Նա, անշուշտ, չափազանցրել է... Դա հատուկ է արևելցիներին... Ինչ որ է, շնորհակալ եմ:

- Քենանի ասելով, դուք նրա լավագույն բարեկամն եք:

- Տիկին, պետք չէր այդպես կուրորեն հավատալ, որովհետև եթե հիասթափվեք, ես ինձ մեղավոր կզգամ:

- Ոչ, ոչ, նա իրավացի է, - անժպիտ, բայց բարյացակամ պատասխանեց Ռենատան: - Համենայն դեպս ոչ մի համեմատություն չի կարող լինել Փարիզում ապաստան գտած նրա ընկերների հետ, որոնց հանձնարարությամբ կարծեմ եկել է Շվեյցարիա...

Այս կինն, անշուշտ, խորաթափանց էր, դիտողականություն ուներ և իր ամուսնուց ակնհայտորեն բարձր էր ոչ միայն տարիքով, այլև խելքով, և ինչպես երևում էր, չէր վարանում նրան, երբեմն-երբեմն, խրատել օտարների ներկայությամբ:

- Սիրելիս, - փորձեց առարկել Քենանը: - Դու նրանց հետ ընդամենը մի քանի րոպե մնացիր, և հիմա այդպիսի անարդար և հապճեպ կարծիք ես կազմում:

- Եթե նրանք անհետաքրքիր չլինեին ավելին կմնայի... Չեմ սիրում քաղաքական դավադիրներին... Հիմա կպատմի, պարոն Ռուբեն, կարծեմ հենց այդ նպատակով է ժամադրել ձեզ... Միայն թե մի քիչ համբերեք, ես քիչ հետո կհեռանամ, նոր կխոսեք քաղաքական խնդիրներից:

Իսկապես, տասը րոպե հետո Ռենատան լքեց սեղանը՝ նրանց թողնելով դեմ առ դեմ նստած:

- Ո՞ւմ նկատի ուներ կինդ, - հարցրեց Ռուբենը:

- Ա՜հ, այս եվրոպացիք ոչինչ չեն հասկանում մեր խնդիրներից: Փարիզում հանդիպեցինք մի քանի վտարանդիների... Երիտթուրքերը... Խոսում էինք մեր երկրի ապագայից, մեր հոգսերից, իսկ նրա համար այդ ամենը տաղտկալի է լսել:

- Իսկ դու կարծում ես, որ ինձ համար հետաքրքիր կլինի՞:

- Իհարկե, պիտի հետաքրքիր լինի, եղբայր, ի վերջո դա նաև քո երկիրն է, մի՞թե չես ուզում իմանալ, թե այնտեղ ինչ է կատարվում:

- Բայց ես տեղյակ եմ... Թերթեր եմ կարդում, նամակներ ստանում, վերջապես, մարդիկ են գնում-գալիս...

- Մի՞թե այդքանը բավական է հիմնավորապես իմանալու համար, թե ինչ է կատարվում այնտեղ... Եվրոպացիք ծուռ հայելու մեջ են ներկայացնում մեր երկիրը: Նրանք իրենց հաշիվներն ունեն: Նրանց միայն իրենց շահն է հետաքրքրում և ոչ թե արյունոտ բռնապետության տակ տառապող երկիրը: Սակայն նոր ուժեր են ձևավորվում, որոնք չեն ուզում հաշտվել այդ վիճակի հետ:

- Որո՞նք են այդ ուժերը:

- Լուսնի վրա ես ապրո՞ւմ, ինչ է... Եվրոպական լրագրերն ամեն օր գրում են երիտթուրքերի մասին, և բոլորը միաձայն նշում են, որ միայն նրանք կփրկեն Օսմանյան կայսրությունը վերջնական կործանումից: Մի՞թե ծանոթ չես նրանց ծրագրերին:

- Ծանոթ եմ, եթե ծանոթ չլինեի, գուցե հավատայի և քեզ նման ոգևորվեի...

Վերջին մեկ տարում հայ ուսանողների շրջանակներում գնալով ավելի հաճախակի էին դառնում զրույցները երիտթուրքերի և հակահամիդյան մյուս ուժերի վերաբերյալ: «Ֆերյադ» և «Թերաքի» լրագրերը ձեռքից ձեռք էին անցնում: Իրենք՝ երիտթուրքերն էլ ամեն ինչ անում էին, որպեսզի Փարիզում և Ժնևում հաստատված կենտրոնների միջոցով իրենց պրոպագանդայի մշտական ազդեցության ոլորտում պահեն թուրք և թրքահպատակ այլազգի և այլադավան ուսանողներին: Զանազան մարդիկ էին հայտնվում սրճարաններում, ուսանողական գիշերօթիկներում, համալսարանում կամ պարզապես փողոցում, լրագրեր, գրքեր, բրոշյուրներ բաժանում, զրույցի բռնվում, համոզում, վիճում... Հստակորեն երևում էր, որ հետևողական ու կազմակերպված աշխատանք է կատարվում, ինչ-որ բան է նախապատրաստվում, հասունանում: Եվ այնքան անվրեպ

էին աշխատում, որ փաստորեն որևէ թուրքահպատակ չէր կարող դուրս մնալ նրանց ուշադրությունից: Առանձնապես ակտիվ էին հայ, հույն, հրեա և մակեդոնացի ուսանողների շրջանակներում: Իրեն էլ մի քանի անգամ մոտեցան, լրագրեր, գրականություն առաջարկեցին, խնդրեցին նույնիսկ, որ ինքը՝ որպես «Արմենիա» ուսանողական միության նախագահ, հանդիպում կազմակերպի հայ ուսանողության հետ, և միայն կտրուկ մերժումով կարողացավ օձիքն ազատել դրանց կպչուն պահանջներից: Սակայն, ինչպես վկայում էր այս հանդիպումը, ոչ վերջնականապես:

- Կարդացե՞լ ես մեր վերջին համաժողովի հայտարարությունը:

- Մե՞ր...

- Այո, մեր նաև ձեր, որովհետև այդ համաժողովին մասնակցում էին նաև հայերը, մակեդոնացիք, օսմանյան կայսրության բոլոր ճնշված ժողովուրդների ներկայացուցիչները:

- Այո, կարդացել եմ, այստեղ տարածում էին: Նույնիսկ թարգմանել էին մի քանի լեզուներով:

- Եվ ի՞նչ, այդ ծրագրերն իսկապե՞ս չեն ոդևորում քեզ:

- Անկեղծ ասեմ՝ ոչ:

- Ես քեզ չեմ ճանաչում Ռուբեն: Դու փոխվել ես, դարձել պահպանողական, զգուշավոր մի մարդ:

- «Պահպանողականի» հետ համաձայն չեմ, բայց «զգուշավոր»՝ թերևս:

- Եղբայր, հսկա փոփոխություններ են կատարվելու մեր երկրում: Օսմանյան կայսրությունը պիտի դարձնենք աշխարհի ամենաառաջադեմ, ամենալուսավոր և ամենաերջանիկ երկիրը:

- Ի՞նչ ուժերով, ովքե՞ր պիտի իրականացնեն այդ հոյակապ գաղափարները:

- Ես, դու, մեր մյուս ընկերները... Ես Փարիզից եմ գալիս, Ահմեդ Ռիզա բեյին հանդիպեցի այնտեղ... Աղնվագույն, առաջադեմ, լուսավոր մի մարդ, որի նմանը անգամ այստեղ՝ Եվրոպայում շատ չես գտնի... Եվ նա միակը չէ: Ես քեզ կարող եմ տասնյակ անուններ տալ, մարդիկ, որոնք պատրաստ են ուզած վայրկյանին իրենց անձը զոհել հանուն մեր երկրի փրկության:

- Նրանց բարի ցանկություններին ես հավատում եմ... Բայց՝ մասամբ... Քանզի դուք ընդամենը մեկ նպատակ ունեք՝ ազատվել սուլթանից, և հանուն դրա ուզում եք վերականգնել սահմանադրությունը:

- Մի՞թե այդքանը քիչ է:

- Քիչ չէ, սակայն ինչի՞ համար է արվում... Ձեր ծրագիրը ոչինչ չի ասում այդ մասին, և դժվար է հասկանալ, թե ինչպիսին է լինելու երկրի ապագան:

- Ես գիտեմ, թե ինչն է քեզ մտահոգում, հայերի ապագան: Բայց հստակորեն գրված է, որ մտադիր ենք հավասար իրավունքներ տալ բոլոր ազգություններին, բոլոր կրոններին: Ի՞նչ հիմքեր ունես չհավատալու:

- Հիմքեր չունեմ, բայց փորձը ցույց է տալիս, որ մեր երկրում որքան ավելի շատ են ուզում բարեփոխություններ անել, այնքան ավելի է ծանրանում հայերի վիճակը: Այնպես որ երաշխում ենք, որ ամեն ինչ անփոփոխ մնա:

- Ուրեմն ուզում եք, որ արյունոտ սուլթանը դահին մնա՞:

- Ես քեզ պիտի հին հայկական մի առակ պատմեմ: Մի դաժան և անարդար թագավոր է լինում: Զբոսանքներից մեկի ժամանակ տեսնում է, թե ինչպես ծեր ու աղքատ մի կին աղաչելով դիմում է Աստծուն. «Տեր Աստված, այնպես արա, որ մեր թագավորը հավերժ ապրի, Տեր Աստված, այնպես արա, որ մեր թագավորը միշտ մեր գլխին լինի...»: Թագավորը զարմացած դիմում է կնոջը. «Կին, չէ՞ որ ես քո լծկան եզները խլեցի, ինչո՞ւ ես աղոթում ինձ համար»: «Քո պապը մեր տունը խլեց, քո հայրը ամուսնուս սպանեց, իսկ դու իմ միակ լծկանը խլեցիր, ահա ինչու եմ սրտանց աղաչում Աստծուն, որպեսզի քեզ անմահություն չնորհի, թե չէ քո որդին կգա և այս այծը կտանի՝ իմ վերջին հույսը»:

Լռություն տիրեց, և Քենանը, գլուխն օրորելով, ասաց.

- Եթե բոլոր հայերն են քեզ նման մտածում, նշանակում է չեք ուզում, որպեսզի Օսմանյան կայսրությունում որևէ բան փոխվի:

- Հավանաբար, այո:

- Հապա ինչո՞վ կբացատրես, որ ձեր հեղափոխական կուսակցությունները պատրաստ են մեր կողքին պայքարել սուլթանի դեմ:

- Զգիտեմ... Նրանք իրենց հաշիվներն ունեն... Սակայն եթե ինձ հարցնես, ես կգերադասեի, որ պատմության անիվը մեր երկրում ետ գնա, քանզի սուլթան Ֆաթիհ Մեհմեդի օրոք մենք ավելի շատ արտոնություններ ունեինք, քան այսօր...

- Ես դեմ չէի լինի, որ այդ ժամանակները վերադառնային, - ծիծաղելով ասաց Քենանը: - Բայց քեզ հանգիստ չեմ թողնի, մենք դեռ կխոսենք, և ինձ թվում է, որ պիտի կարողանամ քեզ համոզել:

- Իզուր ժամանակ ես ծախսելու... Այդ բաների մասին ես շատ երկար եմ մտածել:

- Կխոսենք, կխոսենք... Դու մեզ պետք ես, քեզ նման մարդիկ շատ չունենք... Բազմաթիվ ծրագրեր կան, ես դեռ ամեն ինչ չեմ ասել... Առայժմ այսքանով բավարարվենք և տիկնոջս կանչենք, որպեսզի նրա ներկայությամբ քո սիրային արկածների մասին պատմես... Եվ քո սխրանքների:

Նրանք հաճելի երեկո անցկացրին, և Ռուբենին երկու բան զարմացրեց. Քենանը ամեն ինչ գիտեր վերջին մեկ տարում անցած-դարձածի մասին և երկրորդ՝ նա բավական փոխվել էր, իսկապես ուրիշ մարդ էր դարձել:

* * *

Նամակը: Դա է միակ շոշափելի իրականությունը: Երկու շաբաթ առաջ մի գեղեցիկ տուփ առավ: Մեջը՝ մետաքսյա ժապավենով փաթաթված հարյուր ծրար՝ վարդագույն և երկնագույն թղթերի հետ: Յուրաքանչյուր ծրարին՝ մեկ թերթ: Տարօրինակ հաշվարկ են արել: Նրանց մտքով չէր կարող անցնել, որ իր նամակները երեք էջից պակաս չեն լինում: Ի՞նչ տրամաբանությամբ են առաջնորդվել այդ տուփը պատրաստողները, որ յուրաքանչյուր ծրարին մեկ թերթ է ընկնո՞ւմ: Իսկ եթե իր ասելիքը երեք... չորս... հինգ թերթի վրա հազիվ է տեղավորվո՞ւմ... Սկսեց մանր ձեռագրով գրել, հետո՝ մեկ թերթի երկու երեսին, բայց

միևնույն է, թղթերը վերջացան, և մոտ հիսուն ծրար մնաց անթուղթ, գեղեցիկ, բուրումնավետ (սանդալի նրբին անուշահոտություն), ներսից բարակ, թափանցիկ թղթե աստառը նրբորեն սոսնձած:

Նամակը միակ իրականությունն է: Այդ իրականությունը երկու երես ունի: Մեկը՝ երբ նամակ է ստանում, մյուսը՝ երբ ինքն է գրում: Երկուսով, իրարից հեռու, տարածության վրա կառուցում են այդ իրականությունը: Թե գուցե ավելի ճիշտ՝ կլիներ ասել՝ մտնում են, քայլ առ քայլ նվաճում անձեռակերտ շինությունը, իրենց սիրո պալատը: Տարբերություն չկա, երկուսն էլ ընդունելի են, կարևորն իր կամքն է, որ արտահայտվում ամեն մի նամակի յուրաքանչյուր տողի և անգամ բառի մեջ:

Նա սկսեց Լոզանի գիշերօթիկի կյանքը կարոտել: Ընկերուհիներին էր հիշում շարունակ, և նկատեց նույնիսկ, որ ոչ մի քեն կամ ատելություն չունի տիկ. Սպիեսի և դաստիարակ-օրիորդների հանդեպ: Սերը, Լոզանը, գիշերօթիկը, ընկերուհիներն ու դաստիարակները միասնական մի իրականություն էին, անգամ տիկ. Սպիեսն իր խստությամբ ասես յուրովի նպաստում էր այդ սիրուն: Մինչդեռ սիրո իրականությունն այստեղ կարծես անջատված էր կյանքից, առօրյայից, չնայած իր մեջ թշնամական ոչինչ չուներ: Ժամացույցի պես անխափան գործող առօրյան նրան դրել էր սովորույթ դարձած մի կանոնավորության մեջ. դասեր, դաշնամուր, հանդիպումներ՝ որոշակի պարտականությամբ, ընկերուհիների, ազգականների հետ, ընթերցանություն, ծնողների հետ անցկացրած ժամուկեսը նախաճաշի և ընթրիքի սեղանի շուրջ... Այս անթերի կանոնավորությունը երբեմն-երբեմն խախտում էր՝ թատրոն կամ համերգներ հաճախելով, որը սակայն նրա առօրյայի մեջ էական փոփոխություն չէր մտցնում. դրանք ավելի հոգեկան ու բարոյական խթաններ էին, որ վերջապես նյութ էին դառնում նամակագրության համար:

Այդ ի՞նչն էր, որ այդպես անջրպետում էր նրա առօրյան իրենց սիրուց, մանավանդ՝ որ այդ առօրյան իր հոլովույթով թշնամական ոչինչ չուներ, ավելին, նույնիսկ որոշ դեպքերում բարենպաստ պայմաններ էր ստեղծում: Գաղտնիքը բացահայտեց աստիճանաբար, Լոզանից եկող յուրաքանչյուր նամակի և իր յուրաքանչյուր պատասխանի հետ: Կամաց-կամաց նկատեց, որ Ռուբենի նամակներն իրենց հետ բերում են հոգեկան բարձրագույն մի վիճակ, զգացմունքների մշտական մի շիկացում, սովորականից տարբեր, բայց շարունակ նորոգվող մի ոճ, անհասանելի իդեալի, վսեմ կատարելության մի ծարավ, որն անմիջապես, զորավոր մի ձեռքով, իրեն հանում էր դեպքերի (թեկուզ ոչ թշնամական) շարանի միջից և ստիպում ուրիշ կերպ նայել ինքնիրեն, աշխարհին, կյանքին, նույն առօրյային, պահանջում ենթարկվել խաղի նույն կանոններին, հավասարվել կատարելության շարունակ վեր ձգտող մակարդակին, ստանձնել մշտապես և ամեն ինչում ավելին լինելու մի դժվարին պարտավորություն: Ասես ամեն օր, երբեմն օրը մի քանի անգամ զգեստափոխվում էր, դիմահարդարվում, ուրիշ մարդ դառնում, որպեսզի բեմ դուրս գար դժվարագույն և ամեն անգամ նորովի ընթացող մի դերակատարման համար:

«Ես իդեալական բաներն եմ սիրում, - գրում է նա իր վերջին նամակում:

- Դա իմ խենթությունն է: Եվ ազնիվ արարքի, վսեմ բաների, հպարտ նայվածքի համար պատրաստ եմ կյանքս նվիրաբերել: Իդեալն իմ տկարությունն է»:

Կամ այս տողերը, որ պարզապես պարտավորեցնող են. «Ընդհանրապես, կարդալով նամակներդ, ինձ զգում եմ մաքուր հույզերի բարձր ոլորտի մեջ: Եվ դու իսկապես այն հոգին ես, որ իդեալական ներդաշնակություն պիտի կազմի իմ հոգու հետ...»:

Երբ առաջին անգամ սիրեցին իրար Խաչելության մոտ, Ռուբենն իրեն անվանեց սիրո աստվածուհի և պատմեց, թե ինչպես հին Հայաստանում կույս աղջիկները, տարին մեկ անգամ, գնում էին սիրո աստվածուհու տաճարը և ընտրում իրենց տղամարդուն: «Դու վերականգնեցիր հին ծեսը, դու ինձ ընտրեցիր, դու ինձ աստվածացրիր...»: Ինքը պատասխանեց. «Իսկ մեր տաճարն այստեղ է...»: «Սա ավելին է, քան տաճարը... Մենք Աստծո մոտ ենք... Աստված ինքն է օթևանել քո մեջ...»: Եվ համբույրներով ծածկեց ամբողջ մարմինը: Նրա շրթունքների ամեն մի հպումը՝ խառը զգացմունքներով համեմված, անծանոթ սարսուռներ էր հաղորդում՝ վախ, հաճույք, ցանկասիրություն, քաղցր ու դառնագին հրայրքներ... Եվ նա սերը ճանաչելով (իսկակա՜ն սերը) ցավ չզգաց, չնայած ասում էին, որ ցավոտ է լինում... Գուցե այնպիսի վերացումի մեջ էր, որ այլևս ոչինչ չէր զգում, որ արդեն անցել էր ցավից, վայելքից ու հաճույքից անդին... Գուցե հենց այդպիսին է աստվածային վիճակը...

Ա՜հ, բայց ի՜նչ անարդարն է... Ինչո՞ւ է իրեն պախարակում, ինչո՞ւ է գրել. «Բայց խնդրում եմ, այլևս այսպիսի տարօրինակ հարցեր չտաս. «Նեղացա՞ր, որ ժիլետդ անմիջապես չուղարկեցի...»: Խոսքն այն ժիլետի մասին էր, որ մոռացել էր այստեղ՝ Էրֆուրտում: Մի՞թե չի հասկանում, որ ուզեցի մի քանի օր էլ պահել մոտս, որովհետև իր բույրն էի շնչում և այդպիսով կենդանացնում այն թանկագին բոպեները, որ միասին ապրեցինք իմ ննջարանում... Նա մոռացավ այնտեղ... Հետո հաջորդ օրը, երբ ճանապարհ էի դնում, ականջիս չշնջաց, որ փոստով անհապաղ ուղարկեմ («Պատկերացնո՞ւմ ես, թե ինչ զգացումներ պիտի ունենա մայրդ, երբ իմ զգեստը տեսնի քո սենյակում...»): Բայց մոռացա, ուղարկեցի երկու շաբաթ հետո: Գուցեև չէր նեղացել ուշացնելուս համար, սակայն մասնավոր գրեցի այդ մասին, որպեսզի հասկացնեմ, թե իրեն պատկանող, իր հետ կապված ամեն ինչը որքան թանկագին է ինձ համար («Դու հասկանո՞ւմ ես, թե դա ինչ է ակնարկում... Նշանակում է՝ ես հանվել եմ քո ննջարանո՜ւմ... Խնայիր ծնողներիդ ինքնասիրությունը...»): Եվ դեռ մեղադրում է ինձ... Ափսո՜ս:

Սակայն չարացած չէ նրա դեմ և ոչ մի քեն չունի, քանզի ինչպես Լոտտան ասաց, նա «սրբացնում է» ինձ, «իդեալականացնում»: Այդպես ասաց անցյալ շաբաթվա նամակներից մեկը կարդալուց հետո: Ռուբենը գրել էր, թե հին ժամանակներում մոլեռանդ մահմեդականներ կային, որոնք Մուհամմեդի մզկիթը տեսնելուց հետո իրենց աչքերը հանում էին, որպեսզի մինչ ի մահ ավելի գեղեցիկ բան չտեսնեն... «Շատ կոպիտ, չա՜տ բարբարոս օրինակ է, - շարունակում էր նա: - Բայց լավ է բացատրում իմ առանձնահատուկ վերաբերմունքը քո հանդեպ»:

«Նա աչքերը հանելու կարիք չունի, - չգիտես հեղնական, թե բարի ժպիտով ասաց Լոտտան: - Քանզի սերն արդեն կուրացրել է նրան»:

Ի՞նչ է նշանակում «կուրացրել» է: Ռուբենի բերած օրինակն ուրիշ բան է ասում. մոլեռանդ մահմեդականն ինքն իրեն է կուրացրել... Գիտակցված... Իսկ Լոտտան լրիվ ուրիշ բան է ասում, այսինքն՝ Ռուբենը հայտնի չէ, թե ինչու այլևս չի տեսնում... Եվ հայտնի չէ, թե ինչպես է կորցրել՝ ինքնակա՞մ, թե ոչ... Գուցե ուրիշներն են կուրացրել: Ասենք՝ ես: Բայց ինչո՞ւ... Պստիկ Ցախեսը կուրացրել էր բոլորին, որպեսզի իր տխեղծ ու գարշելի արտաքինը չտեսնեն, մինչդեռ ես ուզում եմ, որ նա ինձ տեսնի, որովհետև վախենալու բան չունեմ, որովհետև դիտեմ, որ գեղեցիկ եմ... Եվ ուզում եմ, որ շարունակ համոզվի դրանում:

Սակայն ճիշտ հակառակն է կատարվում. ինձ չի տեսնում, բայց ամեն օր կարդում է... Ողբալի՜ կացություն... Մի՞թե իմ նամակները կարող են նրան ավելի դյուրթել, քան իմ մազերը, իմ դեմքը... Իմ համբույրնե՛րը... Տարածության վրա կմոռանա այս ամենը... Ավելին, ամեն օր եկող իմ դժգո՛ւյն, իմ տխմա՛ր նամակներն խսպառ կջնջեն իմ արտաքինից մնացած տպավորությունները, և սիրելու, պաշտելու փոխարեն կսկսի արհամարհել ինձ և ի վերջո կմոռանա...

Օ՜, ես կորցրեցի նաև մեկ ուրիշ զենք, որը բոլորովին նոր էի ձեռք բերել. դաշնամուրը: Երբ այստեղ էր, երկու անգամ նվագեցի նրա համար՝ Շոպեն և Շուման: Հմայված լսում էր: Ամենայն համոզվածությամբ եմ ասում: Ոչ միայն որ հիացմունքից քիչ էր մնում արտասվեր, այլ որ զգում էի: Այո, ես զգում եմ, որ իմ նվագը դուր է գալիս ունկնդիրներին, և այդ ժամանակ սկսում եմ ավելի լավ նվագել, ասես ուժ ստանամ նրանցից: Երբ վերջացրի նվագելը, ասաց, թե ես մեծ արվեստագետ եմ, որ մեծ, շատ մեծ հոգի ունեմ և որ ինքն իմ համեմատ փոքր է, չնչին... Խնդրեց, որ երբ ամուսնանանք, իր համար ամեն օր նվագեմ, և որ այդպիսով մենք ամենաերջանիկ զույգը կդառնանք աշխարհում:

Հիմա զրկվել եմ նրան հմայելու իմ զորավոր զենքից: Փոխարենը մնացել է ընդամենը մեկ բան՝ նամակը՝ իմ ամենաթույլ, ողորմելի միջոցը... Մանավանդ այս ֆրանսերենը, որ չի հնազանդվում ինձ, չի կարողանում հոգուս մեջ կուտակվածը, ամենաէականն արտահայտել: Ինքն էլ է դժգոհում, ինքը, որ ինձնից ավելի լավ գիտի ֆրանսերեն: Այդ ո՞ր նամակում էր... Ահա թե ինչ է գրում. «Յաննի, ատում եմ նամակներս, որ այնքա՜ն հասարակ են: Նոր բառեր են պետք քեզ գրելու համար, երբեք չգործածված, փայփայող խոսքեր, որ արժանի լինեն քո հրեշտակային, անհավատալի և առասպելական գեղեցկությանդ... Իմ իշխանուհի Յաննի... Բայցևայնպես, պիտի գրեմ քեզ և պիտի ջանամ լավ գրել: Սակայն միշտ հիշիր, որ իմ բոլոր նամակները ոչինչ են, ոչինչ, ոչինչ քո անհունորեն հեշտագին զգացումների հետ համեմատած...»:

Երբ միասին էինք գիշերը, լեռան լանջին, աղբյուրի խշշոցի տակ, բառերը մեզ պետք չէին: Մենք մեր լռությամբ իրար ավելի շատ բան էինք ասում... Մեր փոխարեն խոսում էին մեր շարժումները, մեր համբույրները... Երբ համբուրում ես՝ այլևս վերջանում է խոսքը...

Այս նամակները բանտ են ինձ համար: Ինձ ստիպում են խոսել, երբ ես կուզեի լռել կամ գոնե միայն նրա նամակները կարդալ: Սակայն ուրիշ ելք չու-

նեմ, ստիպված եմ ամեն օր մտնել այդ բանտը և սպասել... սպասել... Համբերել, մինչև որ նորից հանդիպենք Շամպերիում: Այս անգամ անցած տարվա պես չի լինի, այլևս ստիպված չենք լինի գիշերով, գաղտնի հանդիպել, չնայած գիշերային հանդիպումներն իրենց հմայքն ունեն... Քիչ մնաց, արդեն պայմանավորվել ենք՝ հուլիսին մեկնում ենք Շամպերի... Քիչ մնաց...

* * *

Երիտթուրքական էմիսարները բուռն գործունեություն էին ծավալել Շվեյցարիայում ապրող և ուսանող թուրքահպատակների մեջ: Ամենայն ճշգրտությամբ գիտեին, թե ով որտեղ է ապրում, ում հետ է շփվում, որ սրճարանն է հաճախում: Նրանք առանձնահատուկ նախանձախնդրությամբ էին հետապնդում ուսանողներին և ընդհանրապես երիտասարդներին, բացահայտորեն խոսում այն մասին, որ բռնապետությունն՝ ի դեմս Աբդուլ-Համիդի, իր վերջին օրերն է ապրում, կոչ էին անում պայքարել, զոհաբերել սեփական կյանքը հանուն ազատության, նույնիսկ ֆեդայի բառն էր հնչում ժամանակ առ ժամանակ:

Ապշեցնող եռանդ էին ցուցաբերում այդ պրոպագանդիստները և աշխատում անվրեպ: Նրանք կարողացան կարճ ժամանակում ոչ միայն բազմաթիվ համախոհներ գտնել և ամեն անգամ իրենց պայքարի համար մարտիկներ զինվորագրել, այլև մթնոլորտը լցրեցին մոտալուտ և չափազանց կարևոր փոփոխության մի սպասումով: Ըստ որում՝ այլևս շշուկով չէին խոսում կամ իրենց սենյակներում փակված, ինչպես առաջին օրերին էր, այլ բացահայտ, բարձրաձայն, հասարակական վայրերում, հրաշալի իմանալով, որ համիդյան լրտեսները վխտում են ամենուր:

Թուրքահպատակ հայ ուսանողները գրեթե բոլորը չեզոք, սպասողական դիրք էին բռնել և աշխատում էին ամեն կերպ հեռու մնալ այդ ղրույցներից, բայց իրար հետ խոսելիս ընդունում էին, որ իսկապես փոփոխություն է հասունանում: Հարցն այն էր, թե դա ինչ է բերելու հայերին: Դարերի ընթացքում, Օսմանյան կայսրության մեջ, նրանք կրել էին ամենասոսկալի անարդարությունները և բռնությունները, ուստի թվում էր, թե գրկաբաց պիտի ընդունեն արդարության, հավասարության և ազատության կոչերը, սակայն նենգ ու արյունարբու իշխանության ներքո անցկացրած հարյուրավոր տարիները նրանց ետ էին պահում թուրքերի ձեռնարկած քաղաքական ամեն տեսակի աշխուժությունից և մանավանդ նախաձեռնությունից: Բոլորը գիտեին, որ այստեղ՝ Շվեյցարիայում ,արված անզգույշ մի քայլը կարող է ճակատագրական հետևանքներ ունենալ այնտեղ՝ Թուրքիայում ապրող իրենց հարազատների համար: Եվ վերջապես կար հիմնական պատճառը. օսմանյան իրականությանը քիչ թե շատ ծանոթ մարդը հրաշալի գիտեր, որ եվրոպական ժողովրդավարության ավանդական կարգախոսներն առնվազն անհեթեթ էին հնչում վայրենի ասիականության մեջ հիմնովին թաղված կայսրության համար, յուրաքանչյուր հայի գիտակցության մեջ թուրքը և ժողովրդավարությունն իրար անհարիր, նույնիսկ թշնամական բաներ էին:

Ավանդական այդ զգուշավորությունը սաստկանում էր նաև տեղեկատվական անորոշության պատճառով: Պոլսից եկող կցկտուր լուրերը ոչինչ չէին ասում, հայկական մամուլը լցված էր Նորին Վեհափառության Աբդուլ Համիդի փառաբանությամբ, եզովպոսյան լեզվով գրված անշուք հոդվածներով կամ թաղական գզվռտոցներով, նամակներում էլ զգուշանում էին անգամ հեռավոր ակնարկներ անել՝ իմանալով, որ գրաքննությունն ուշադիր կարդում է ամբողջ թղթակցությունը: Եվրոպական մամուլն էլ այդ օրերին հիմնականում գրում էր Մակեդոնիայում սկսված խռովությունների մասին, իսկ երբ Ռեվելում հանդիպեցին երկու վեհապետները՝ Էդուարդ Ութերորդը և Նիկոլայ Երկրորդը, սկսեցին որոշակիորեն գրել ռազմական միջամտության հավանականության և Մակեդոնիայի անկախության մասին:

Փոփոխությունների հավանականությունը գնալով ավելի համոզիչ էր դառնում, հույսեր ներշնչում և շատ անգամ ցանկալին ստիպում ընդունել որպես հնարավոր: Դարերի ընթացքում կուտակված դառը փորձը մի պահ մոռացվում էր, զգուշավորության և խոհեմության պահանջներն՝ անտեսվում, մանավանդ որ հմուտ ձեռքերով վարժված պրոպագանդիստները կարողանում էին բարեկամության հորդառատ զեղումներով ու պայծառ ապագայի շռայլ խոստումներով միամտության և դյուրահավատության աննշան դրսևորումներն իսկ խրախուսել: Ապագա պաշտոնները, դրամական պարգևներն ու տիտղոսները հորդում էին առատության եղջյուրից, ոչ ոք անմասն չէր մնում, պետք էր պարզապես ականջ կախել էմիսարների անդուլ հավաստիացումներին:

Այս օրերին էր՝ հուլիսի սկզբին, երբ Ռուբենն անսպասելի բովանդակությամբ մի նամակ ստացավ Էրֆուրտից: Յաննին գրում էր, որ այս ամառ չպիտի կարողանա գալ Շամպերի, քանի որ «նշանավոր բժիշկ Լեյդելն» արգելել է այնտեղ գնալ, պատճառաբանելով, որ կարող է վնասակար լինել իր առողջության համար: Իսկ բժշկի մոտ է գնացել, որովհետև թեթև տկարություն ուներ, գլխացավեր...

Որքան էլ համառոտ էր ներկայացված բժշկին այցելելու պատճառները, նրա խորհուրդները և մյուս մանրամասները, այնուամենայնիվ նկատվում էր ծնողների բացահայտ միտումնավորությունը՝ իրենց աղջկան խանգարել, որպեսզի իր նշանածի հետ մեկ կամ երկու ամիս գտնվի նույն տեղում: Նախ այդ տկարությունները, ավելի ճիշտ՝ գլխացավերը, նրա անկանոն և բազմաժամյա ընթերցանությունների հետևանքն էին, գումարած դրան վատ ախորժակը, որ հաճախ է լինում այդ տարիքի զգայուն աղջիկների մոտ: Այս բաները շատ հստակ բացատրեց Յաննիի ծնողներին, և նրանք լիովին համամիտ էին: Նույնիսկ շնորհակալություն հայտնեցին ճիշտ խորհուրդների համար: Եվ հիմա տարօրինակ է՝ տկարության բուն պատճառներն իմանալուց հետո, այնուամենայնիվ, հարկ են համարել տանել բժշկի... Մի բժիշկ, որը չի եղել Շամպերիում, չգիտի նույնիսկ, թե որտեղ է, բայց արգելում է այնտեղ գնալ: Առավել տարօրինակ է, որ Յաննիի ծնողներն անմռունչ ենթարկվում են նրա հրահանգներին, նրանք, որ իրենց աչքով տեսան, թե լեռնային այդ հրաշք ամառանոցի օդը որքան առողջարար եղավ իրենց աղջկա համար...

Պարզ է մի բան. գնդապետը չարունակում է իր դիրքային պատերազմը, ձգձգում կապիտուլացիան՝ հույս ունենալով վճռական հակահարձակման հնարավորություն ստանալ, և քանի որ չի համարձակվում բացեիբաց արգելել, թաքնվում է բժշկի կարծիքի ետևը: Ինչպիսի՜ վախկոտություն...

Ի՞նչ անի... Ելնի գնա Էրֆուրտ և փորձի տարհամոզե՞լ... Օ, ոչ, դա ահավոր ստորացում կլինի, քանզի եթե դիմել են նման խաբեության, ապա իրենց խոսքից ետ չեն կանգնի: Գուցե նամակ գրի... (Սակայն իր նախորդ նամակներին չպատասխանեցին, ինչո՞ւ պիտի այս մեկին պատասխանեն):

Ծանր, բուլթ գլխացավի նման անսպասելի մի հոգնություն պատեց նրան: Ասես մեն-մենակ հարյուր գլխանի վիշապի դեմ կռվեր: Մեկ կտրած գլխի տեղը երկուսն էր աճում: Մոտ երկու տարի պետք եղավ, որպեսզի կարողանա իր ծնողների համառությունը կոտրել, և թվում էր, թե արդեն բոլոր դժվարություններըը թիկունքում մնացին, և ահա պատերազմի մի նոր ճակատ է բացվում... Հնարավոր է՝ վաղն իր ծնողներն ամենահաս մի նոր բամբասանքի ականջ կախելով, փոխեն իրենց կարծիքը, և այս անգամ ամեն ինչ իսկապես զրոյից սկսվի, բայց մինչև ե՞րբ և ինչո՞ւ: Մի՞թե իրենց սերն այդպիսի հանդուգն մարտահրավեր է մարդկային անհեթեթ պայմանականություններին, որոնք աշխարհը, ազգերն ու ժողովուրդները բաժանել են ոչ միայն պետական սահմաններով, մաքսատներով, բանակներով ու ոստիկաններով, այլև քարացած ու անմարդկային ավանդույթներով, որ կացնի պես արմատից կտրում են բողբոջել սկսող ամեն մի ազնիվ զգացմունք: Հրեշավոր պայմանականություններ, որոնք ոչ մի մաքուր բան չեն կարող հանդուրժել, որ արնախում գազանի պես շտապում են մեռցնել այն, ինչ կոչված է ապրեցնել հասարակությունը, մարդկությունը, տիեզերքը՝ սերը:

Ոչինչ չանելու մի վճիռ սկսեց հասունանալ նրանում: Պահ է գալիս, երբ պիտի դադարեցնես կռիվը և թողնես, որ մի քիչ էլ ժամանակը քո օգտին աշխատի: Բացի այդ, ուզեր թե չուզեր, պիտի հաշվի նստեր այն իրողության հետ, որ ամառային հանգստի իր բոլոր ծրագրերը հօդս են ցնդում. եթե Յաննին Շամպերի չի գալու, անիմաստ է այնտեղ գնալը:

Կանգնած էր հիմա մի պարապի առջև, որը պետք էր լցնել իմաստալից մի գործողությամբ: Ճակատագիրը երբեմն կտրուկ փոփոխությունների առջև է մեզ դնում, հավանաբար, որպեսզի ստիպի փոքր ինչ ուշքի գալ, շուրջբոլորը նայել, և այն, ինչ թվում էր աղետ, պարզվում է, որ կարող է բարեբախտություն բերել: Եվ իսկապես, փաստեց, որ առիթ է ընձեռվել կողքից նայելու ինքնիրեն, իր արարքներին, իր վիճակին: Նրան թվաց, թե ինքը եսասեր մի հրեշ է, որ արդեն մեկ տարուց ավելի ոտքով գլխով տրվել է իր սիրուն՝ մոռացության մատնելով գրեթե ամեն ինչ՝ ուսումից զատ: Նկատեց նաև (անշուշտ, գոհունակությամբ), որ բանաստեղծության մեջ կարողացել է պահպանել իր սթափ հայացքը, սիրային-հիացական քերթվածների կողքին ստեղծելով խորը, նույնիսկ ողբերգականության հասնող գործեր: Երիտասարդ, խենթ սիրահարը չի կարողացել մոլորեցնել կյանքի առեղծվածներին արթուն հայացքով նայող բանաստեղծին: Բայց մի՞թե կարող էր նա խենթ լինել իր սիրո մեջ, մի՞թե այդ ներելի չռայլությունը երբևէ թույլատրվեց նրան, մի՞թե նրա սերը ճատրակի խաղ չէր մի-

անգամից մի քանի հոգու, շատ դեպքերում՝ աներևույթ մի զանգվածի հետ, մի՞թե դա կենաց-մահու պայքար չէր...

Անշուշտ, մտածել էր սիրո այս վազքի մեջ կարճատև մի դադար անել՝ հանգիստ և անշտապ հանրագումարի բերելու անցած-գնացածը և հետագայի մասին մտածելու, սակայն բնավ չէր ցանկանա, որ ժամանակավոր այդ կանգառը կատարվի նման բիրտ անակնկալով և (ամենավա՛տը) միանգամից մտցնի փակուղի:

Հիմա հասկացավ, խենթացնող հույզերից թոթափված ուղեղով, որ առջևում ընկած երեք ամսվա արձակուրդի ընթացքում նախևառաջ պիտի այցելի ծնողներին: Դեռևս անցյալ տարի այդպիսի ցանկություն ունեցավ, բայց երկու կարևոր հանգամանք նրան ստիպեցին հետ կանգնել նման վճռից. անփողությունը և մանավանդ Պոլսից եկող տագնապալի լուրերը. հայրը վստահելի մարդու միջոցով հայտնել էր, որ առայժմ մնա Եվրոպայում և չմտածի, թեկուզ ժամանակավոր, տուն դառնալու մասին:

Կացությունը հիմա կտրուկ փոխվել էր. բժիշկ Ռուի շնորհիվ բավական դրամ էր վաստակել, կարող էր նույնիսկ ծնողներին օգնել, ինչ վերաբերում է քաղաքական իրադրությանը, ապա զգուշանալու պատճառներ չուներ, քանզի հայտնի էր, որ օսմանյան ոստիկանությունը և գաղտնի ծառայությունները հիմնականում զբաղված էին երիտթուրքերով, և բոլորը գիտեին, որ ինքը կտրուկ մերժել է նրանց ամբիոն տրամադրել «Արմենիա» ընկերության նիստերի ժամանակ, անշուշտ, ոչ հանուն վեհափառ սուլթանի:

Վճիռը կայացրեց միանգամից: Որոշեց նույնիսկ ոչ մեկի հետ չխորհրդակցել, որպեսզի զանազան բացատրություններից խուսափի և մանավանդ՝ մտադրությունը հանկարծ չփոխի: Հաջորդ օրն առավոտյան գնացքի տոմս վերցրեց. «Արևելյան ճեպընթացով» դեպի Պոլիս:

* * *

Տարօրինակ մի համակերպվածությամբ ընդունեց հոր որոշումը՝ այս ամառ չգնալ Շամպերի: Դա, իհարկե, նորություն չէր իր համար, քանզի բժիշկ Լեյդելը, որ իրենց ընտանիքի բարեկամներից էր, արդեն հայտնել էր իր վճռական կարծիքը: Մեկ ամիս առաջ անպայման կընդվզեր, կբողոքեր, կհիշեցներ ծնողներին, թե անցյալ տարի ինչպիսի դժկամությամբ էին հեռանում, ասես հարազատ տունը լքեին՝ անգութ մի պարտադրանքի տակ: Սակայն լուռ մնաց, բացարձակապես ոչ մի բառ չարտասանեց:

Առավոտյան նամակ ստացավ, որտեղ Ռուբենը, մի քանի տողով, հայտնում էր, թե որոշել է ամառն անցկացնել ծննդավայրում և Պոլսում, թե կարոտել է ծնողներին, հարազատներին, ընկերներին, ծովը և, վերջապես, Պոլսի մթնոլորտը: Գրում էր նաև, որ տոմս է վերցրել հուլիսի 20-ի համար, ուստի խնդրում էր նամակներն այսուհետ ուղարկել Սիլիվրի: «Ավելի շուտ կգնայի, - գրում էր նա: - Սակայն դեռևս գործեր ունեմ հիվանդանոցում»: Հանգիստ և գործնական տոնով գրված այս նամակը դրան նախորդածի կտրուկ հակադրու-

թյունն էր... Նախորդը տեղով վրդովմունքի պոռթկում էր: Սակայն վերջին նամակով փաստորեն հայտնում էր, որ այդքան փայփայված, անքուն գիշերներին բաց աչքերով երազված Շամպերիի ծրագիրը հօդս է ցնդում...

Չէր պատկերացնում, թե ինչ կլիներ իր հետ, եթե մեկ շաբաթ առաջ ստանար այս նամակը, թե ինչպիսի դառնագին հուսահատություն կպատեր իրեն, ինքը, որ արդեն օրերը, նույնիսկ ժամերն էր հաշվում... Նույն է, թե տասը տարի մութ զնդանում փակված բանտարկյալին իր ազատագրվելու օրը հայտնեին, թե ևս մի տասը տարի պիտի մնա ճաղերի ետևում... Այդպիսի պահերին ամենաերանելի բանը դառնում է մահը: Ինքն էլ բանտում էր, գրության բանտում, նամակների անխորտակելի պատերի ետևը... Սակայն երեկ ջարդեց ճաղերը, քանդեց պարիսպները և դուրս եկավ իր մենախցից...

Ամեն ինչ սկսվեց երեք շաբաթ առաջ, երբ ընկերուհիների հետ իրավունք ստացավ ներկա գտնվելու Մատիաս Յոլլերի՝ Բեռլինից եկած ճանաչված ռեժիսորի բեմական փորձերին: Էրֆուրտի թատրոնը նրան հատուկ հրավիրել էր Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետը» բեմադրելու, վերջինս համաձայնել էր՝ պայմանով, որ Ջուլիետի դերակատարին իր հետ պիտի բերի Բեռլինից: Դա քսան-քսաներկու տարեկան մի աղջիկ էր՝ տիկնիկի նման կլոր ու կապույտ աչքերով, չեկ խոպոպներով, ծեքծեքուն շարժումներով և ծիտիկի ծլվլոցը հիշեցնող արտասանությամբ: Զար լեզուներն ասում էին, թե բեմադրիչի սիրուհին է և որ վերջինիս հետը բերել է պարզապես հաճելի ժամանցի համար: Համապատասխանում էր դա իրականությանը, թե՞ ոչ, սակայն հենց սկզբից թատրոնում մի զուսպ հակակրանք առաջացավ այդ աղջկա հանդեպ: Այնուհանդերձ հանդուրժում էին, քանի որ նրա մասնակցությունը հաստատված էր պայմանագրով: Դրանից զատ, այդ տարիքի դերասանուհի չկար Էրֆուրտի թատրոնում, որպեսզի կարողանային արժանավոր մրցակցություն ստեղծել:

Յաննին երեք ընկերուհիների հետ հետևում էր բեմական փորձերին: Սկզբում չորս հոգով էին, մեկ շաբաթ հետո արդեն մենակ էր մնացել: Ընկերուհիները գտան, որ այդ փորձերը չափազանց տաղտկալի են: Այո, հանուն հետաքրքրասիրության կարելի էր մեկ-երկու անգամ ներկա գտնվել, բայց ամե՜ն օր... Ոչ մի դեպքում: Այնուհետև նույնիսկ ցանկություն չի մնա ավարտված ներկայացումը դիտելու: Իսկ ընկերուհիներից մեկն այսպես ասաց. «Մի՞թե հետաքրքիր է ճաշն ուտելուց առաջ խոհարարի կողքը կանգնել ու նայել, թե ինչպես է պատրաստում»: Ի դեպ, այդպես ասողը թատրոնի տնօրենի դուստրն էր և նրա շնորհիվ էր, որ կարողանում էին ներկա գտնվել փորձերին:

Ընկերուհին իրավացի էր. խոհարարի կողքին կանգնելը բնավ հետաքրքիր չէ, սակայն դահլիճի կիսախավարից բեմական փորձերին հետևելը չափազա՜նց հետաքրքիր էր: Գուցե ավելի հետաքրքիր, քան պատրաստի ներկայացում նայելը: Այսպես մենակ ավելի հաճելի էր, մանավանդ առանց ընկերուհիների մշտական փռթկոցների, տխմար կատակների և անտեղի հարցերի: Ասես ինքն էլ բեմի վրա լիներ, ասես փորձը տեղի էր ունենում իր մասնակցությամբ: Առաջին օրն իսկ գնեց Շեքսպիրի հատորը և մի գիշերվա մեջ կլանեց: Պիեսն արդեն անգիր էր արել, մանավանդ Ջուլիետի ռեպլիկներն ու մենախոսություննե-

ը: Տեսարան առ տեսարան, դահլիճի խորքում կիսախավարի մեջ նստած, դերասանների հետ միաժամանակ շշուկով արտասանում էր:

Բեմադրիչն իր՝ հատուկ տեսություն էր մշակել: Նա գտնում էր, որ բառերն արտասանելու հետ պետք է մարմինը զուգահեռ շարժվի, այսինքն՝ բառերով արտահայտվող մտքի շարժմանն ընկերակցի մարմնի շարժումը, և որքան նրանք իրար հակասեն, այնքան ավելի խորը և իմաստալից կլինի բեմական ընդհանուր գործողությունը: Հատկապես տանել չէր կարողանում ստատիկ տեսարանները, արձանային կեցվածքով արտասանված մենախոսությունները:

Լավ թե վատ, այս սկզբունքը կարծես մարմնավորվում էր բեմում, և թվում էր, թե այդպես հանգիստ էլ կընթանա: Սակայն մի տասն օր էր անցել, երբ բեմադրիչը սոսկալի մի տեսարան սարքեց՝ իր դժգոհությունը հայտնելով դերասաններից: Նրան հատկապես դուր չէր գալիս գլխավոր դերակատարուհու քայլվածքը բեմի վրա: «Սա բալետ չէ, - գոռում էր նա: - Ինչո՞ւ ես ոտքի ծայրերին քայլում...»: Սակայն նախկին պարուհին բեմում քայլելու ուրիշ ձև չգիտեր: Հերթական պոռթկումներից մեկի ժամանակ բեմադրիչն ասաց. «Հիմա դուրս կգամ փողոց, առաջին պատահած աղջկան կբերեմ և քեզնից ավելի լավ կքայլի... Եվ ավելի լավ կխաղա...»: Հետո գլուխը բռնած սկսեց ետուառաջ անել դատարկ դահլիճով մեկ: Վերջապես, Յաննիին նկատելով, հարցրեց.

- Ո՞վ է այս աղջիկը, - հետո, անմիջապես պատասխան չստանալով, դիմեց ուղղակի Յաննիին: - Ո՞վ ես, ի՞նչ ես անում այստեղ:

Յաննին, ասես հանցանքի մեջ բռնված, շառագունած ոտքի կանգնեց, կնիքսեն արեց և արդարանալով պատասխանեց.

- Ես պարոն տնօրենի թույլտվությամբ եմ մտել... Բայց եթե իմ ներկայությունը խանգարում է ձեզ... Ես ներողություն եմ խնդրում... Ես կարող եմ հեռանալ...

Ցոլլերը ոտքից գլուխ ուշադիր նայեց նրան և մի տեսակ շինծու խստությամբ հարցրեց.

- Այդ ի՞նչ գիրք է...:

- Շեքսպիր...

- Ձեզ հետաքրքրո՞ւմ են մեր փորձերը:

Յաննին լուռ գլխով արեց և ժպտաց:

Բեմադրիչը շարունակեց գնահատող հայացքով աղջկան նայել: Մի երկու քայլ ետ գնաց, թիկունքից նայեց, կողքից, վերջապես հարցրեց.

- Կարո՞ղ եք մի տեսարան կարդալ:

- Թույլ կտա՞ք անգիր ասեմ, - ոգևորված պատասխանեց Յաննին:

- Արդեն անգի՞ր եք արել, - զարմացավ Ցոլլերը: - Ջուլիետի տեսարանն՞ը...

- Ոչ... ամբողջը...

Բեմադրիչը ժպիտը դեմքին գլուխն օրորեց և ասաց.

- Բարձրացեք բեմ և ձեր ընտրությամբ որևէ տեսարան արտասանեք:

- Հիմա՞... Հենց հիմա՞..., - զարմացած, թե վախեցած հարցրեց Յաննին:

- Այո, հենց հիմա... Իսկ այդ գիրքը տվեք այստեղ... Մոռացեք գիրքը...

Դուք Ջուլիետն եք, դուք ծնվել եք Իտալիայում՝ Վերոնա քաղաքում...

Յաննին աթոռների միջով քայլեց դեպի բեմ:

- Բոլորը թող իջնեն... օրիորդից բացի, - կարգադրեց բեմադրիչը, հետո դիմեց Յաննին. - Խնդրեմ, օրիորդ, որոշեք, թե որ հատվածը պիտի արտասանեք, կենտրոնացեք և հատկապես մոռացեք մեզ, մենք չկանք, գոյություն չունենք:

Յաննին ետուառաջ արեց, հետո կանգնեց կենտրոնում և ձեռքերը մեկնելով սկսեց.

Սիրաբուխ գիշեր, ե՛կ և տարածիր վարագույրդ թավ,
Որ լրտեսների աչքերը գոցվեն, և իմ Ռոմեոն
Ցատկի գրկիս մեջ, անտե՛ս, անպարսա՛վ:
Սիրահարները կարող են սիրել ու պաշտել իրար
Պերճ գեղեցկության սեփական լույսով: Թե սերը կույր է
Գիշերը սաստիկ հարմար է դրան: Եկ, պարկեշտ գիշեր,
Եկ դու, սևազգեստ ամոթխած տիկին,
Եվ սովորեցրու՝ ինչպե՞ս վաստակեմ խաղի մեջ մի սեր,
Երբ նրա համար վիճում են երկու անարատ կույսեր:
Եկ դու, քողարկիր քո սև թիկնոցով իմ արյունը կույս,
Որ այտերիս մեջ թափահարվում է. կորով տուր հոգուս,
Որ անզուսպ սերը պարզ զգաստություն համարի միայն:
Եկ դու, ով գիշեր, եկ դու, Ռոմեո, գիշերվա լույս,
Գիշերվա թևին դու շատ ավելի սպիտակ կերևաս,
Քան թե նոր ձյունը ագռավի մեջքին:
Եկ, քնքուշ գիշեր, եկ, դու սիրագեղ, սևաչյա գիշեր,
Տուր ինձ Ռոմեոն: Եվ երբ նա մեռնի,
Կտրատիր նրան, աստղիկներ չինիր
Եվ նա կպճնի երկնքի դեմքը այնքան փառավոր,
Որ աշխարհն համայն կսիրահարվի չքնաղ գիշերին
Եվ էլ չի պաշտի չքեղ արևին:
Օ՜, ես գնել եմ մի սիրո դղյակ,
Բայց դեռ չեմ տիրել: Եվ թեպետ ինքս էլ արդեն ծախված եմ,
Բայց չեմ վայելված: Ի՜նչ տաղտուկ օր է.
Կարծես մի տոնի նախորդ գիշեր է,
Մի խիստ անհամբեր մանուկի համար, որ նոր շոր ունի
Եվ տոնից առաջ չի կարող հագնել: Ահա դայակս...*

Արտասանեց հստակ, բառերը հատուկ ընդգծելով և հուզական լիցք հաղորդելով: Շարժումները զուսպ էին, բայց չափազանց արտահայտիչ: Մենախոսության ամբողջ ընթացքում գրեթե միշտ նույն կետում էր կանգնած՝ բեմի կենտրոնում, միայն մեկ անգամ գնաց դեպի խորքը և նորից տեղը եկավ: Ավարտից հետո դերասանները ծափահարեցին: Առանձնահատուկ մի եռանդով էր ծափահարում Ռոմեոյի դերակատարը, նրա դեմքին մի բարի և անկեղծ ժպիտ կար, որ չվրիպեց Յաննիի ուշադրությունից: Տասնութամյա աղջիկն, անշուշտ,

---

* *Շեքսպիր. «Ռոմեո և Ջուլիետ», Արարված III, Տեսարան երկրորդ, թարգմ. Խ. Դաշտենցի:*

վաստակեց այդ բարձր գնահատությունը, սակայն, հավանաբար, դա նաև առիթ էր, որպեսզի այդ կերպ իրենց դժգոհությունն արտահայտեն Ջուլիետի ձախողած դերակատարումից:

- Լռությո՛ւն, տիարք և տիկնայք, - տեղնուտեղը միջամտեց բեմադրիչը: - Դեռ առիթներ կունենաք ծափահարելու... , - հետո դարձավ Յաննիին. - Առաջին անգա՞մ ես այդ մենախոսությունն արտասանում:

- Ոչ, տանը փորձել եմ երկու անգամ, - մեղավոր ժպիտով պատասխանեց Յաննին:

- Երկու անգամվա համար վատ չէ, օրիորդ, նույնիսկ լավ է... Իսկ հիմա իջեք բեմից և ձեր տեղը գրավեք դահլիճում...

Նա լռեց, ասես ուրիշ մի բան էլ ուներ ասելու, որը չէր կարողանում մտաբերել:

- Հա՛, - հիշեց նա: - Տնօրենն, ի դեպ, առանց ինձ հարցնելու էր ձեզ արտոնել իմ փորձերին ներկա գտնվելու... Այժմ ես եմ իրավունք տալիս, օրիորդ, կարող եք գալ և նայել իմ փորձերը:

Յաննին բեմից իջավ և մոտեցավ կենտրոնական միջանցքին, որպեսզի իր տեղը գնա: Առաջին կարգում նստած դերասանների համակրալից ժպիտները նկատեց: Միջանցքի կեսն անցել էր, երբ թիկունքից Ցոլլերի ձայնը լսեց.

- Այդքան հեռու մի նստեք, օրիորդ, դա հանդիսատեսի տեղն է, մոտեցեք մեզ:

- Որքա՞ն, - շոյված ու զարմացած հարցրեց Յաննին:

- Այնքան, որքան մոտիկ եք զգում մեզ, - կատակով պատասխանեց բեմադրիչը, հետո դառնալով դերասաններին ասաց. - Ես կուզեի, որպեսզի ոմանք իրենց անփոխարինելի չհամարեն: Արվեստը, կյանքը, վերջապես, փողոցը, ամեն վայրկյան կարող են մեզ անակնկալներ մատուցել՝ ոմանց համար հաճելի, իսկ ոմանց համար՝ տհաճ... Ուստի շարունակենք մեր աշխատանքը:

Փորձի ավարտից հետո բեմադրիչը մոտեցավ և մի քանի հարցեր տվեց: Նա մասնավորապես հետաքրքրվում էր, թե ծնողներն ինչպե՞ս են նայում այս հրապուրվածությանը թատրոնով, թույլ կտա՞ն արդյոք, որպեսզի հետագայում մասնակցի ներկայացումներին: Ասաց նաև, որ մտադիր է առաջիկայում երիտասարդների մի խումբ հավաքել և թատերական դասընթացներ անցկացնել, և եթե իր ծնողները չհակառակվեն, իրեն սիրով կընդգրկի այդ խմբի մեջ, ուստի պետք է այժմվանից իսկ ծնողների թույլտվությունն ունենալ:

Ցոլլերը գիտեր, թե ինչ էր ասում: Քաղքենի հասարակությունը դերասանների, մանավանդ դերասանուհիների հանդեպ երկդիմի, զգուշավոր, իսկ որոշ դեպքերում ժխտողական կեցվածք էր ընդունում և որոշակի տարածություն պահպանում: Քիչ թե շատ կանոնավոր կրթություն ստացած, որոշակի կարողության տեր դարձած և հասարակական դիրք գրաված քաղաքացին առիթը չէր փախցնում ներկայացումներ դիտելու՝ ճանաչված դերասանների մասնակցությամբ, երբեմն նրանց բարեկամությունը փնտրելու, ընկերների մոտ հպարտանալու մտերմական այդ կապերով: Մամուլը չէր հապաղում հանգամանալից անդրադառնալ թատերական կյանքի յուրաքանչյուր նորությանը: Հա-

սարակությունն առանց թատրոնի անկարելի էր պատկերացնել: Այո, քաղքենին հաճույքով և սիրով համաձայն էր, որպեսզի թատրոնը անբաժանելի լիներ հասարակությունից, սակայն պայմանով, որ հեռու մնար ընտանիքից: Երկուսն էլ՝ թատրոնն ու ընտանիքը, հասարակության հավասարազոր բաղադրիչներն էին, երկուսն էլ՝ միմյանց կարիքն ունեին, սակայն նրանց միջև բարոյական գրեթե անհաղթահարելի մի պատնեշ կար: Եվ այդ պատնեշն առավել անհաղթահարելի էր դերասանուհիների պարագայում:

Օ՜, նրանց կյանքը ծածկված էր խորհրդավորության մի շղարշով: Նրանց մասին շարունակ իրապատում և մանավանդ հրաշապատում առասպելներ էին հորինվում, նրանցից ամենագեղեցիկները շռնդալից սկանդալների մշտական հերոսուհիներն էին, իսկ հերոսները, որպես կանոն, բարձր հասարակությունից էին. նախարարներ, դեսպաններ, դեպուտատներ, բանկիրներ, գործարանատերեր, բարձրաստիճան զինվորականներ կամ պարզապես «ոսկե երիտասարդությունը»: Նրանց հետ զվարճանում էին, նրանց վրա անխնա դրամ ծախսում, շքեղ նվերներ անում, սակայն հազվադեպ, չափազանց հազվադեպ էր, որպեսզի բարձր խավի ներկայացուցիչներից որևէ մեկն ամուսնանար դերասանուհու հետ: Նման ամուսնությունը դառնում էր մեկ այլ սկանդալ, նախորդ սկանդալի շարունակությունը, սակայն ավելի շռնդալից, ավելի հանդուգն ու վրդովվալից, քանզի «ընտիր» հասարակությունը դեռ կարող էր մի կերպ հանդուրժել ապօրինի վայելքները դերասանուհու հետ, սակայն ոչ ամուսնական առագաստը: Դա յուրատեսակ մեզալյանս էր դառնում, սակայն ավելի խայտառակ, քանզի ստորին խավի աղջիկը՝ զուրկ լինելով կապույտ արյունից և հարստությունից, կարող էր զարդարված լինել գեղեցկությամբ, պարկեշտությամբ և ուրիշ առաքինություններով, մինչդեռ դերասանուհու հետ ամուսնացողի առջև որոշ տների դռներն ընդմիշտ փակվում էին:

Ահա ինչու, այսպես կոչված, պատվավոր ընտանիքների հայրերն արգելում էին իրենց դուստրերին դերասանուհի դառնալ: Ցոլլերը լավ գիտեր, որ գավառում բարքերն ավելի խստականոն են: Իմացել էր նաև, որ Ֆրանց Ապելը քաղաքի հարգված անձնավորություններից է, հետևաբար պիտի կտրականապես դեմ լինի, որպեսզի բազմաթիվ առաքինություններով ու անվիճելի գեղեցկությամբ օժտված իր դուստրը բեմ բարձրանա: Ներկայացումների թող գնա, փորձերին թող ներկա գտնվի, կարող է նաև սիրողական խմբերում մեկ-երկու ներկայացում խաղալ, սակայն ոչ ավելին... Թատրոնով ոգևորված այդպիսի օրիորդներ բեմադրիչը շատ էր տեսել: Նրանց ոգևորությունը մարել էր (կամ մարեցրել էին) հենց այն պահին, երբ պարզվել էր, որ իրենց երազը կարող է իրականություն դառնալ: Չէր ուզի, որ նույնը կատարվեր Ցաննիի հետ, քանզի շատ հավանեց նրան՝ նրա յուրահատուկ գեղեցկությունը, սլացիկ հասակը, բարեձև ու համաչափ մարմինը, շնորհալի և սահուն շարժուձևը: Հապա ձայնը՝ զրնգուն, միաժամանակ խորհրդավորությամբ ու նրբերանգներով լի: Հապա նրա ներկայությունը բեմի վրա... Մեն-մենակ իրենով լցնում էր բեմը... Հապա ներքին կրակը, աշխատասիրությունը, խենթ նվիրվածությունը: Բացարձակապես անշահախնդիր, առանց որևէ ակնկալության նստել և անգիր է արել ամբողջ պիեսը...

Աստված այս աղջկան բեմի համար է ստեղծել, և եթե նրա հետ մի քանի ամիս աշխատի, փայլուն դերասանուհի կդարձնի, և ինչե՜ր կկարողանան անել միասին... Դերասանները ճիշտ էին, որ ծափահարեցին, նրանց անդրադարձը բնական էր, և ինքը դիտմամբ խիստ խոսեց, պետք չէ երես տալ, շփացնել... Հետո տեսնենք, թե ինչ կասի հայրը: Եթե ամեն ինչ բարեհաջող գնա, ապա երեք ամիս հետո պրեմյերան կխաղա Յաննի Ապելը... Լավ էլ բեմական անուն-ազգանուն ունի... Յաննի Ապե՛լ... Մեկ տարի հետո այդ անունը հայտնի կդառնա ամբողջ Գերմանիայում... Սակայն չշտապենք, տեսնենք, թե ինչ կասի պատվարժան հայրը:

Ինչ վերաբերում է հորը, ապա արդեն մեկ անգամ իր դժգոհությունն էր հայտնել բեմական փորձերին ներկա գտնվելու առիթով: Դա մի քանի ամիս առաջ էր, Ռուբենի առաջին այցելության օրերին: Հայրն ավելի շատ զարմացած էր, քան բարկացած: «Ի՞նչ կա այնտեղ նայելու, - հարցրեց նա: - Ներկայացումները՝ հասկացանք, բայց փորձե՞րը...»:

...Եվ Յաննին աշխատեց իր զարմանքը թաքցնել, երբ դստեր խնդրանքը լսելուց հետո, հայրը, գրեթե անտարբեր, պատասխանեց. «Խնդրեմ, մասնակցիր այդ փորձերին, եթե ուրիշ ավելի հետաքրքրիր զբաղմունք չունես...»:

Հետո, կարծես ուշքի գալով, հարցրեց.

- Իսկ հետո ի՞նչ է լինելու... Պիտի խաղա՞ս... Պիտի մասնակցե՞ս ներկայացումներին...

- Չգիտեմ... Բեմադրիչը որևէ ստույգ բան չասաց:

- Լավ, առայժմ գնա, հետո կտեսնենք:

* * *

Ո՞վ է ասել, թե նույն գետը երկու անգամ չես մտնի: Կարելի է մտնել, եթե գետը փոխել է հոսանքը: Լոզանի կայարանն ավելի փոքր է Սիրքեջիի կայարանից, այստեղ համետն ուսերին գցած բեխավոր համալներ չկան, սակայն երբ կառամատույցի վրա Քենանին տեսավ, նրան թվաց, թե 1905 թվականի հոկտեմբերն է, և ինքը ոչ թե վերադառնում է Պոլիս, այլ այնտեղից պիտի գա Լոզան: Որքան էլ տարօրինակ է, այդ խարկանքն ստեղծում էր նաև անթերի համազգեստ հագած, հելվեթյան համադաշնության ոստիկանների պես կեպի դրած, կրծքին էլ կլոր մետաղյա համարը փակցրած բեռնակիրը, որ ճամպրուկներով ծանրաբեռնված սայլակն էր գլորում: Նրա ետևից քայլում էր Քենանը՝ իր կնոջ հետ թևանցուկ: Վերջինս նրա մոր ազնվական վայելչագեղությունն ու շնորհը չուներ, բայց քանի որ կնոջ պարտականություններին հավասար ստանձնել էր նաև մայրականը, ապա կարելի էր ասել, որ երեք տարի առաջվա պատկերի կրկնությունը ոչ միայն տեսլական էր, այլև իրական:

Քենանը շռայլ ժպիտը դեմքին մոտեցավ և Ռուբենին գրկեց.

- Ձես կարող պատկերացնել, թե ինչ հաճելի անակնկալ մատուցեցիր... Ինչո՞ւ չասացիր, որ պատրաստվում ես Պոլիս գնալ:

- Ամեն ինչ միանգամից որոշվեց, անսպասելի:

- Հոյակապ որոշում ես ընդունել՝ հատկապես հիմա վերադառնալ Հայրենիք... Կեցցե՛ս, - հետո դարձավ կնոջը. - Իսկ դու վախենում էիր, թե երկու օր պիտի ձանձրանանք գնացքում:

Հետո ժամացույցը նայեց և, մատը տնկելով, ասաց.

- Ժամը տասներկուսին հանդիպում ենք ռեստորանում, հենց հիմա սեղան կպատվիրեմ: Բավական ժամանակ ունենք տեղավորվելու, և այնտեղ հանդիպելու համար:

«Բավական ժամանակը» քսան րոպե էր: Նա մտավ երկրորդ կարգի իր խցիկը՝ ճիշտ նախորդի պես, որով եկավ այստեղ, պատուհանից մի վերջին հայացք գցեց միջօրեի արևի տակ լեռան լանջերն ի վեր մագլցող Լոզանին և շարժվեց դեպի ռեստորան:

Քենանն արդեն այնտեղ էր և գարսոնի հետ բանակցություններ էր վարում:

- Քեզ հաճելի լուր ունեմ հայտնելու, - ասաց նա Ռուբենին: - Մեր արևելյան լավագույն կերակուրները կարող ենք պատվիրել: Կարծում եմ, որ դու էլ ինձ պես հոգնել ես Եվրոպայի անհամ ճաշերից:

- Կերակուրների ընտրությունը թողնում եմ ձեզ, - ասաց Ռենատան: - Բայց մի պայմանով, որ թուրքերեն չպիտի խոսեք, ոչ մեկ բառ:

- Այդպիսի պայման դնելու կարիք չկա, - ասաց Ռուբենը: - Մենք գիտենք, որ դուք չեք հասկանում թուրքերեն:

- Ինքն էլ գիտի, - ասաց Ռենատան՝ ցուցամատն ուղղելով դեպի Քենանը: - Բայց ամեն անգամ հայրենակիցներին հանդիպելիս սկսում է թուրքերեն խոսել... Գիտե՞ք ինչու, որովհետև քաղաքականությունից է խոսում, իսկ ես տանել չեմ կարողանում այդ խոսակցությունները:

- Բայց քաղաքականության շուրջ կարելի է նաև ֆրանսերեն խոսել, - նկատեց Ռուբենը:

- Թերևս... Գոնե ես կհասկանամ, թե ինչի մասին է խոսվում:

Երևում էր, որ այս կինը հիմար չէ և հատկապես չի սիրում հետին դիրքերում գտնվել: Սա այն նկարագիրն էր, որը ձգտում է միշտ ուշադրության կենտրոնում լինել, զրույցին և դեպքերին իր ուզած ընթացքը հաղորդել, և հենց սկզբից նախընտրում է լքել ասպարեզը, երբ տեսնում է, որ ինքը չի շահելու:

Ռուբենը ցանկություն ունեցավ նրան մոտիկից ճանաչելու: Գուցե գեղեցիկ չէր, բայց կարողանում էր ուշադրությունը սևեռել իր վրա:

- Քեզ տեսնելով այստեղ, շատ ուրախացա, - բաժակը բարձրացնելով ասաց Քենանը: - Գիտեմ քո համառությունը, դու հավանաբար մինչև հիմա էլ թերահավատ ես մեր ծրագրերի հանդեպ, բայց այս օրերին քո հայրենիք մեկնելն ինձ համար ավելի մեծ արժեք ունի, քան եթե այստեղ մնայիր և մեր անվերապահ համախոհը դառնայիր:

- Պիտի անկեղծորեն խոստովանեմ, որ հայրենիք գնալուս պատճառները չափազանց անակնկալ հայտնվեցին, և եթե մանրամասներին ծանոթացնեմ, ոգևորությունդ հավանաբար մի քիչ մարի..., - ժպտալով պատասխանեց Ռուբենը:

- Մի ասա, չեմ ուզում լսել, կարևորն այն է, որ գնում ենք այնտեղ... Հա՛,

ինձ շատ դուր եկավ, որ մեր երկիրն ինձ պես անվանում ես Հայրենիք...

- Ի՞նչ կա դրանում ուրախանալու, - զարմացավ Ռենատան:

- Քենանն իրավացի է, տիկին, - պատասխանեց Ռուբենը: - Սակայն թույլ տվեք այդ ուրախության պատճառները ձեզ չասել:

- Պիտի ասես, թե ոչ՝ ես կասեմ... Ամեն ինչ կպատմեմ, - սպառնաց Քենանը:

- Հրաշալի է, - ասաց Ռենատան: - Ես ձեր դատավորը կդառնամ... Երկուսիդ էլ կլսեմ, հետո կորոշենք, թե ով է ավելի ճշմարիտ:

- Եվ ավելի արդարացի, - լրացրեց Քենանը:

- Թող այդպես լինի... Առաջինը դու կխոսես, Քենան:

- Ես արդեն պատրաստվում էի խոսել... Այո, չեմ թաքցնում. ես զարմացած եմ, ավելի ճիշտ կլիներ ասել՝ հիացած եմ, որ հայերն այսքան դառնություններից, այսքան հալածանքներից, որ կրեցին սուլթանի երեսից, վերջապես, արյունահեղություններից, կոտորածներից հետո շարունակում են մեր երկիրն իրենց հայրենիքը համարել: Բայց քիչ մնաց, այսպես շարունակվել չի կարող, մենք կազատվենք բռնակալից, և բոլոր հայերը կհամոզվեն, որ իսկապես հայրենիք ունեն:

- Վե՞րջ... Ուրիշ ասելիք չունե՞ս, - հարցրեց Ռենատան:

- Առայժմ ոչ:

- Այժմ ձեզ ենք լսում, Ռուբեն:

- Ես լրացնելու բան չունեմ, Քենանը ճիշտ բացատրեց իր զարմանքի պատճառը: Միայն թե մի հարցում, կարծում եմ, չափազանց լավատես է և չի նկատում չարիքի արմատը. այո, սուլթանը մեղավոր է գավառներում և մայրաքաղաքում տեղի ունեցած ջարդերի համար, սակայն սուլթանը հրաման արձակողն էր, իսկ կատարողնե՞րը... Նրանց է՞լ պիտի փոխեք:

- Բանա՞կը նկատի ունես... Ոստիկանությո՞ւնը...

- Ոչ, սիրելիս, այն խուժանը, այն հրոսակը, որն ամեն անգամ, սուլթանի մատի մեկ շարժումով, դուրս է գալիս փողոց, կոտորում հայերին, թալանում նրանց ունեցվածքը, բռնաբարում կանանց ու աղջիկներին... Դրանց ինչպե՞ս պիտի փոխեք, քանի՞ հարյուրամյակ է պետք, որպեսզի այդ մութ ու չարաղետ զանգվածը վերջապես մարդկային զգացմունքներով համակվի...

- Իրավացի ես, համաձայն եմ... Ես հասկանում եմ քո վրդովմունքը... Նույնիսկ կիսում այն... Մանավանդ որ մենք՝ առաջամիտ թուրքերս, նույնպես տուժում ենք այդ մութ զանգվածից... Սակայն պետք է փոխել այդ խուժանին, պետք է բարեկրթել... Այո, լիովին գիտակցում եմ, որ դժվար է, որ մեկ օրվա գործ չէ... Բայց անկարելի ոչինչ չկա, կարևորը ցանկանալն է... Իսկ մենք իսկապես ուզում ենք փոխել մեր երկիրը, և դու հասկանում ես, որ այդ նպատակին հասնելու համար նախևառաջ պետք է ազատվել բռնակալից...

- Եթե դուք՝ երիտթուրքերդ, իսկապես ուզում եք փոխել մեր երկիրը, եթե իսկապես ուզում եք ազատություն շնորհել ճնշված ազգերին, ապա ինչո՞ւ բողոքեցիք ռուսաց և անգլիացվոց վեհապետների նախաձեռնությունների դեմ, չէ որ նրանք ինքնավարություն էին պահանջում մակեդոնացիների համար: Հրաշ-

ալի առիթ էր աշխարհին ցույց տալու, որ իսկապես նոր դարաշրջան եք բացելու Օսմանյան կայսրության հալածված ժողովուրդների համար: Սակայն պարզվեց, որ ձեր խոսքերն ու գործերն իրարից արմատապես տարբերվում են:

- Մեր ցանկությունը շատ պարզ է. ուզում ենք, որ մակեդոնացիք մեզ հետ հավասար ապրեն ապագա Թուրքիայում: Ինչո՞ւ մեկուսանալ մեզնից, ինչո՞ւ մասնատել մեր երկիրը:

- Բուլղարներին ու սերբերին էլ ուզում էիք եղբայրաբար մի ընտանիքի մեջ պահել: Բայց նրանք համառորեն չէին ուզում, մինչև որ կարողացան վերջապես ազատվել ձեր խեղդող գրկախառնումից:

- Այն ժամանակ ուրիշ էր, հիմա ուրիշ է: Բոլորս մեկ ընտանիք պիտի դառնանք և միասին կառուցենք ապագա երկիրը:

- Բայց եթե մեկը չուզենա մաս կազմել այդ ընտանիքին, բռնությա՞մբ պիտի պահեք նրան:

- Բռնության ոչ մի խնդիր չկա, մակեդոնացի հեղափոխականները մեր կողքին են, մեր ամենամերձավոր դաշնակիցներն են, ձերը՝ նույնպես:

- Հենց դա է ինձ մտահոգում:

Որոշ ժամանակ լռություն տիրեց, և Ռենատան մտածկոտ դեմքով ասաց.

- Ես ուշադիր լսում էի ձեզ: Եվ հիմա դժվարանում եմ որոշել, թե ձեզնից ով է ավելի ճշմարիտ: Երկուսիդ ասածներն էլ համոզիչ են:

- Թերևս իրավունք ունեք, տիկին, այդպես ասելու: Մնում է միայն պարզել, թե մեզնից ով է ավելի զորեղ:

Ռենատան պերճախոս ժպիտով գնահատեց Ռուբենի դիտողությունը և եզրափակեց վեճը.

- Թողնենք, որ ժամանակն իր խոսքն ասի:

Նկատվում էր, որ Փարիզում և Ժնևում երիտթուրքերի ղեկավարները բավականաչափ «մշակել» են Քենանին, անշուշտ, հաշվի առնելով նրա անձնական վրեժը սուլթանի հանդեպ: Ճիշտ է, պետության կողմից բռնագրավված կալվածքները վերադարձվել էին (ինչի համար, իր ասելով, հիմա գնում էր Պոլիս), բայց տանջամահ արված հորն այլևս «վերադարձնել» չէին կարող: Հենց այսպիսի մարդկանցով էին ստվարանում երիտթուրքերի շարքերը: Սրանից զատ, նկատելի էր, որ նա խոսում է նորահավատի մոլեռանդությամբ, շատ հաճախ չհասկանալով իր ասածը, չխորանալով իր իսկ արտահայտած մտքերի մեջ և, հատկապես, չպատկերացնելով, որ կարող է նաև ուրիշ տեսակետ գոյություն ունենալ:

Ահա ինչու Ռուբենը որոշեց ճամփորդության ընթացքում խուսափել նման բանավեճերից, մանավանդ որ նա սեփական տեսակետը չէր ներկայացնում, այլ թութակի պես կրկնում էր կուսակցության ղեկավարության կողմից իր գլուխը մտցված մի քանի ֆրազները:

Այս ամենից զատ, ուղևորությունն իսկապես հաճելի էր, հետաքրքիր և նույնիսկ առեղծվածային: Գնացքում գրեթե ամենուր թուրքերենն էր լսվում, իսկ եթե գերմաներեն կամ ֆրանսերեն, ապա մեծ մասամբ արևելյան նկատելի կամ թեթև շեշտադրությամբ: Մի՞թե վերադարձի պահին տան ոգին ավելի իշխող է դառնում: Կային նաև անգույն ու աննկարագիր անձնավորություններ,

որոնց հարազատ մայրերն անգամ չէին զանազանի միմյանցից: Սահուն և անշտապ շարժումներով վխտում էին նրանք ամենուր, լսում, նայում և տեսնում ամեն ինչ, բայց ոչինչ չէին խոսում:

Սահմանն անցնելիս գնացքը մոտ մեկ ժամ ուշացրեցին: Գաղտնի ոստիկանության ծառայողները՝ քաղաքացիական զգեստ հագած, սվինները մերկացրած զինվորների ուղեկցությամբ, անշտապ և մանրակրկիտ զննում էին ուղեբեռները: Կասկածելի որևէ գիրք, լրագիր, անգամ ձեռագիր գտնելուն պես, ուղևորին իջեցնում էին գնացքից: Յուրաքանչյուր վագոն առանձին խումբ էր ստուգում: Պատուհանները փակել էին, իսկ վագոնի մուտքերի առջև զինվորներ կանգնեցրել: Սպառնալից այս ցույցերն ավելի շատ խոսում էին կառավարության հուսահատ քայլերի մասին:

Ուղևորներից մի քանիսը փորձեցին բողոքել, սակայն զինվորները կոպտորեն նրանց մի կողմ հրեցին, իսկ գաղտնի ոստիկանն անվրդով շարունակեց իր մանրակրկիտ խուզարկությունը: Ճամփորդության ընթացքում աննկատ մնացած անշուք արարածներն աշխուժացան: Նրանք ազատ շրջում էին վագոնից-վագոն, մոտենում գաղտնի ոստիկանին և ինչ-որ բառեր շշնջում ականջին:

Գնացքը վերջապես շարժվեց, սակայն մեկ ժամ հետո նորից կանգնեց: Ավելի շուտ կանգնեցրին: Խուզարկությունը վախեցրել էր բոլորին, և ուղևորները սուսուփուս նստած սպասում էին, թե այս անգամ ինչ է լինելու: Բորբոքված ձայներ լսվեցին դրսից, կրակոցներ թնդացին, հրամաններ արձակվեցին և նորից լռություն տիրեց: Հետո վագոնի դուռը դղրդոցով բացվեց, գեղեցկադեմ երիտասարդ մի սպա մտավ ներս՝ երկու զինվորների ուղեկցությամբ, պատիվ տվեց միջանցքում խռնված ուղևորներին և ոգեշնչված արտահայտությամբ հայտարարեց.

- Ողջո՜ւյն ազատ Թուրքիայի քաղաքացիներին... Մենք ներողություն ենք խնդրում ձեր ուղևորության չնախատեսված ընդհատումի համար... Մեզ պատմեցին, թե ինչպիսի կամայականություններ եք ենթարկվել մեկ ժամ առաջ, մենք կիսում ենք ձեր վրդովմունքը, ավելին՝ մտադիր ենք վերջ դնել ամեն տեսակի բռնություններին: Այդ նպատակով ենք կանգնեցրել գնացքը: Այժմ ձեզ հետ դեպի Պոլիս պիտի ուղևորվեն սուլթանի բռնության դեմ ապստամբած զորամասերը: Անհոգ եղեք, ձեր կյանքին, ձեր պատվին և ունեցվածքին ոչ մի վտանգ չի սպառնում, այդ զինվորները գնում են Պոլիս, որպեսզի սուլթանին ստիպեն մեր երկրում վերջապես արդարություն, հավասարություն և ազատություն սահմանել:

Այնուհետև սպան շարունակեց ավելի հուզված ու ոգևորված.

- Սա ազատության գնացքն է, սիրելի եղբայրներ ու քույրեր, մեզ բոլորիս դեպի նոր դարաշրջան է տանելու...

Հետո ձեռքը բարձրացրեց և, թատերական կեցվածք ընդունելով, աղաղակեց.

- Յաշասըն Հյուրիեթ, յաշասըն Մուսավաթ վե Ադալեթ*:

Միջանցքում հավաքվածների միջից պատասխան աղաղակներ չհնչեցին:

---

* Կեցցե՛ Ազատությունը, կեցցե՛ Հավասարությունը և Արդարությունը (Թուրք.):

Ավելին՝ քար լռություն տիրեց: Սակայն դա բնավ չպաղեցրեց սպայի բոցաշունչ խանդավառությունը: Նա ոգևորությունից փայլող աչքերով, հուզմունքից շառագունած այտերով, կրունկներն իրար խփեց ու պատիվ տվեց և կտրուկ շրջվելով զինվորների հետ հեռացավ:

Սպայի դուրս գալուն պես, միջանցքում խռնված ուղևորները, մի մարդու նման, փակվեցին բաժնեխցիկներում: Ռուբենի հարևանն իջել էր Սոֆիայում, նրան մենակ թողնելով խցիկում: Քիչ հետո դուռը բացվեց և Քենանը երևաց՝ շողարձակ երեսով:

- Տեսա՞ր, - հուզմունքից խեղդվելով արտաբերեց նա: - Իմացա՞ր ինչ է կատարվում:

- Զափազանց կցկտուր...

- Ահմեդ Նիյազի բեյը և Էնվեր բեյն իրենց գնդերով արշավում են Յելդըզի վրա: Եվրոպական մասում տեղակայված բոլոր զորամասերն իրենց աջակցությունն են հայտնել հեռագրով: Փաստորեն ամբողջ բանակը մեզ հետ է... Հիմա հավատո՞ւմ ես իմ ասածներին... Չէ որ աչքովդ տեսար:

- Առայժմ շատ բան չտեսա:

- Համբերիր, դեռ կտեսնես... Ամեն ինչ նոր է սկսվում... Դեռ շատ բան կտեսնես: Կներես հիմա շտապում եմ, մի ժամ հետո նորից կգամ, նոր լուրեր կբերեմ...

Մարդկային հետաքրքրասիրությունն, այնուամենայնիվ, զորեղ է բոլոր տեսակի զգուշավորություններից: Բաժնեխցիկներում ծվարած ուղևորները քիչ հետո նորից դուրս եկան միջանցք: Սկզբում պատուհանից վախվորած նայում էին դուրս, չեղակի հայացքներ նետում իրար: Հետո միջանցքի ծայրում ինչ-որ մեկը, ըստ երևույթին օտարական, անգույն ձայնով ֆրանսերեն հայտարարեց.

- Ասում են, թե սուլթանին ձերբակալել են...

Շքեղ հագնված երկու պարոն գերմաներեն սկսեցին մեկնաբանել այդ լուրը, հետո, հավանաբար, վասն զգուշության, անցան հունգարերենին: Թուրքերեն ոչինչ չլսվեց: Բոլորը նորից քաշվեցին իրենց բները:

Գնացքի ընթացքը մեկ դանդաղում էր, մեկ արագանում: Երկու անգամ կանգնեցրին փոքրիկ կայարաններում, զինվորները գրավեցին տամբուրը, լցվեցին միջանցք, մտան բաժնեխցիկները, ազատ տեղերը գրավեցին: Մարդիկ սկսեցին հյուրասիրել նրանց, ծխախոտ առաջարկել: Սպաները խանդավառված ետուառաջ էին անում միջանցքով, վագոնից-վագոն գնում:

Լուրերը, հավանաբար, գնացքից առաջ էին անցել: Բնակավայրերով անցնելիս, ճանապարհի եզրին հավաքված ժողովուրդը ծաղիկներով էր դիմավորում, հրճվանքի ճիչեր արձակում, ձեռքերն ուրախ թափահարում: Մարդկանց մեջ կուտակված, բայց տասնամյակներ շարունակ զսպված դառնությունը դուրս էր հորդում հրճվանքի տեսքով, տարածվում, լցվում ամենուր: Ապագան կախված էր այն բանից, թե այդ եռանդը կծավալվեր ու կխորտակեր ամեն ի՞նչ, ճիշտ ու կառուցողական հունով կընթանա՞ր, թե՞ դարձյալ կսզպվեր մի նոր ու ավելի ամրակուռ պատնեշների մեջ:

Գնացքն արդեն մոտեցել էր Պոլսի եվրոպական մասի արվարձաններին,

երբ հարևան վագոն տանող դուռն անսպասելի բացվեց և մի սպա մտավ՝ հուզմունքից ու հրճվանքից շողարձակ դեմքով: Նա ձեռքը մեկնեց դեպի մոտեցող քաղաքը և հանդիսավորությամբ հայտարարեց.

– Պարոնայք և տիկնայք, մենք մտնում ենք նոր դարաշրջան:

* * *

Բեռներն ուղարկեց Սիլիվրի՝ տան հասցեով և որոշեց Սիրքեջիի կայարանից ուղղակի մտնել Պոլիս: Չէր կարող դիմադրել այդ գայթակղությանը, չնայած անակնկալ իրադարձությունների հետ նրանում ավելի էր աճել կասկածն ու ղգուշավորությունը: Ոչ միայն ամբոխն էր նրան տանում, այլև ներքին մի ուժ, ահռելի մի խթան, պոռթկացող մի եռանդ մղում էր առաջ: Իրեն զգաց այդ հրճվալից բազմության անտրոհելի մասնիկը: Ասես մայթերին հավաքված ամբոխն անհամբեր սպասում էր իրեն, որպեսզի վերջապես շարժվի, գործի, ընթանա առաջ և փոխի ժամանակի դեմքը, ուստի նրանց չմիանալը, կառք նստելն ու միանգամից տուն գնալը կդառնար փոքրոգություն, դավաճանություն, դասալքություն: Ավելին, անդիմադրելի պահանջ զգաց ներկա գտնվելու և իր ներկայությամբ այդ հզոր տարերքին ոգի և իմաստ հաղորդելու:

Անծանոթ մարդիկ մոտենում էին իրար, ողջագուրվում, համբուրվում, շնորհավորում միմյանց: Հայերեն, հունարեն և թուրքերեն էր լսվում: Հուլիսյան շոգ օրն ավելի էր ջերմացել համընդհանուր խանդավառությունից: Թվում էր, թե բնությունն էլ հրճվում էր մարդկանց հետ:

Պատանիների մի հոծ խումբ տեսավ, որ ծաղիկներ բռնած գալիս էր ընդառաջ: Նրանք խոսում էին հայերեն և թուրքերեն: Պատանիներից մեկը թուրքերեն բացականչեց. «Այլևս վե՛րջ եղբայրասպան ընդհարումներին... Հարգելի քաղաքացիներ, եկեք մեզ հետ գնանք սուլթանի զոհերի, ջարդված հայերի հիշատակը հարգելու...»: Թուրք և հայ վարժարանների աշակերտներն էին, տասնչորս-տասնհինգ տարեկան, որ հանդիսավորությամբ գնում էին գերեզմանոց՝ 1896 թ. հայկական ջարդերի զոհերի շիրիմներին ծաղկեփնջեր դնելու: Նրանք հրավիրում էին տարեկիցներին միանալ իրենց: Հայ պատանիներից մեկը խորհուրդ տվեց գնալ Ս. Երրորդության եկեղեցի, որի առջև հայ և թուրք բարեկամության մեծ հանդիսություն էր սկսվել:

Ամբողջ քաղաքը դարձել էր հայերի, թուրքերի և մյուս ազգերի եղբայրության ցույցի ասպարեզ: Սակայն, ըստ երևույթին, ուրիշ խորհուրդ ուներ, երբ հայկական եկեղեցու տարածքում էին տեղի ունենում այդ ցույցերը, ուստի չտապեց գնալ այնտեղ, և կարճ ժամանակից տեղ հասավ: Քաղաքի այս հատվածում բոլորովին ուրիշ մի տեսարան էր ծավալվել: Նախ նկատվում էր, որ չնայած մարդկային ծփացող զանգվածին, այնուամենայնիվ, ամեն ինչ նախապատրաստված է և ընթանում է ցանկալի հունով: Ամբոխից վեր, երկար ձողերին փակցված սև պաստառներ էին բարձրանում՝ հայերեն և թուրքերեն գրերով. «Ազատություն, արդարություն, հավասարություն»: Իսկ մեկ այլ պաստառի վրա գրված էր. «Ընդ աստէղօք ի՞նչ կայ սիրուն քան զանձկալի եղբայր զա-

նուն»: Փողոցի ծայրից մի կառք էր մոտենում եկեղեցուն՝ թուրք մոլլան և հայ քահանան մեջը նստած: Կառապանը չէր կարողանում առաջանալ, բոլորն շտապում էին մոտենալ քահանային աջհամբույր ստանալու կամ մոլլայի ձեռքը համբուրելու, և հեռվից դժվար էր որոշել՝ հայն է մոլլայի ձեռքը համբուրում, թե թուրքն աջհամբույր ստանում քահանայից: Իսկ եկեղեցու մուտքի առջև, տախտակաշեն պատվանդանի վրա, հայ և թուրք հռետորներն իրարից խոսք խլելով, բոցաշունչ ճառեր էին արտասանում երկու ժողովուրդների եղբայրության մասին:

Հանկարծ մեկն զգուշորեն դիպավ ուսին: Շրջվեց և մոտ երեսուն տարեկան, արտիստիկ կերպարանքով մի անձնավորություն տեսավ: Նա երկար ու ցրված մազեր ուներ, կարճ բեղմորուք, իսկ սև աչքերը թաքնվել էին ակնոցի փայլփլուն ապակիների տակ: Հագնված էր խնամքով ու կոկիկ, բայց մի քանի մանրուքով ասես ոչ միտումնավոր, խախտված ու անհատականացված էին մոդայիկ-դասական գծերը. սովորականից ավելի երկար և ավելի ազատ սյուրտուկ, թիթեռնափողկապի փոխարեն՝ բաց-դեղնավուն թաշկինակ, ծղոտե գլխարկի եզրերը սովորականից ավելի լայն էին, լայն էր նաև գլխարկը բոլորաձև եզերող ժապավենը՝ չգիտես ինչու հատկապես երկնագույն: Սև ու երկար ձեռնափայտը լաքապատ էր, իսկ գլխիկը ճչացող Մեդուզայի արծաթյա գլուխն էր, որի բաց երախի մեջ արտառոց տեսքով պարոնն իր ցուցամատն էր մտցրել: Ասես «Անկախների սալոնից» դուրս գալով ուղղակի եկել էր այստեղ, և իր բոհեմիկ արտաքինով կատարելապես խորթ էր եռուզեռվող ամբոխին:

- Դուք Ռուբեն Սևա՞կն եք, - վարանոտ ժպիտով հարցրեց նա:

Զարմացած գլխով արեց:

- Զգիտեի, որ Պոլսում եք, վաղո՞ւց եք եկել:

- Այսօր, մի կես ժամ առաջ:

- Եկաք ու միանգամից նոր Պոլիս տեսաք...

- Հավանաբար, այո..., - շարունակ զարմացած պատասխանեց Ռուբենը:

- Կներեք, ես չներկայացա. Հրանտ Նազարյանց, հուսամ ստացել եք իմ նամակը... երկու ամիս առաջ եմ ուղարկել:

- Այո, ստացա: Ներողամիտ եղեք, որ չհասցրեցի պատասխանել: Սակայն շատ շնորհակալ եմ քաջալերանքի համար... Վերջապես, գովեստի խոսքերի համար...

- Գովեստի մասին խոսք լինել չի կարող: Դուք իսկապես արտասովոր բանաստեղծ եք... Լալկան քերթվածների կողքին, որ այսօր լցրել են մամուլը, ձերը կատարելապես ուրիշ բան է:

- Իմ տողերը շատ առնական չեն...

- Հենց դա է ինձ դուր գալիս... Իրական կյանքի մի ներկայություն կա, որը նրբին է, միաժամանակ ամուր և իմաստալից՝ առանց ծեքծեքումների...

- Ես կարծում եմ, որ հիմա ավելի կարևոր է խոսել ոչ թե այն մասին, թե ինչ ենք գրել մինչև հիմա, այլ թե այսուհետ ինչպես ենք գրելու և ինչու:

Հրանտ Նազարյանցը երկու քայլ ետ գնաց և շեշտակի նայեց զրուցակցին, ասես հիմա ճանաչեց, թե ով է իր առջև, և մարգարեի կեցվածքով բարբառեց.

- Ահա՛ խնդիրը, և թերթողները վերջապես պիտի ուշքի գան և, եթե քաջություն ունեն, դիմագրավեն նոր ժամանակներին:

- Արդեն ուշ է, Հրանտ, ով չի ղգացել մինչև հիմա, չի զգա և այսուհետ... Պետք է կանխատեսած լինեին:

- Ոսկի խոսքեր են, Ռուբեն... Այո, ճշմարիտ ես ասում. բանաստեղծի ոտքերն անցյալում են խորասուղված, մարմինը ներկայում է, իսկ գլուխն ամեն ինչից վեր նայում է հեռուն...

- Խեղճ բանաստեղծին երեք կտոր արեցիր: Տես, այնպես չլինի, որ գլուխը մոռանա, թե իրանն ու ոտքերը որտեղ են և առանձին, իր համար մեն-մենակ ապագայի մեջ ապրի:

- Լսիր, Ռուբեն, ես վերջապես մի հասկացող զրուցակից գտա: Գուցե գնանք մի հանգիստ տեղ և զրուցենք, այս ամբոխի աղմուկն ինձ խանգարում է:

Քայլեցին դեպի Ոսկեղջյուր՝ ծովափնյա սրճարանները: Սակայն բախտը կարծես չէր ուզում ժպտալ նրանց: Սրճարանները պարզապես լեփլեցուն էին: Վերջապես մի տեղ հարմար անկյուն գտան: Սրահը լցված էր ամենաբազմազան մարդկանցով: Ունևոր և կարող մարդկանց կարելի էր տեսնել այստեղ, եվրոպացիների՝ կին թե տղամարդ, մանր առևտրականների, ձկնորսների, մութ ու կասկածելի անձնավորությունների և անգամ ուղտապանների, համալների ու սլքտացող գրպանահատների: Իսկապես հավասարության դարաշրջան էր հաստատվել այդ սրահում:

Աղմուկն այստեղ քիչ թե շատ հանդուրժելի էր: Բայց հազիվ էին տեղավորվել, երբ մազախռիվ մի երիտասարդ կանգնեց սեղանի վրա և ագռավի պես թևերը թափահարելով, խզված սոպրանոյով աղաղակեց. «Ցաշասըն Հյուրիեթ, յաշասըն Մուսավաթ վե Ադալեթ»: Բոլորը տեղներից վեր ցատկեցին և թութակի պես կրկնեցին այդ բառերը, ասես բավական էր վարագույրի ետևից ինչ-որ մեկը թելը քաշեր, որպեսզի ունևորն ու աղքատը, կրթվածն ու անգրագետը, քաղքենին ու լյումպենն իրար խառնված միևնույն շարժումն անեին և միևնույն բառերն արտասանեին:

- Բոլորին օղի մատուցեք և սուրճ, - ձեռքի անփույթ շարժումով կարգադրեց աղաղակող երիտասարդը: - Ես վճարում եմ...

Հետո տեսնելով, որ կարգադրությունը կատարելապես անհետևանք մնաց, որ սրճարանատերն ու սպասավորներն անհաղորդ, նույնիսկ թշնամաբար նայում են իրեն, վրդովված հարցրեց.

- Ինչո՞ւ չեք կատարում իմ պատվերը, ստրկությունից ազատագրված ժողովրդին ինչո՞ւ օղի չեք մատուցում:

- Դրամը տվեք՝ կմատուցենք, - անվրդով պատասխանեց մեխանեջին:

- Ես ձեզ ասացի, որ կվճարեմ:

- Երկու ժամ առաջ մեկն էլ ձեզ նման բոլորին օղի հյուրասիրեց, ինքն էլ լավ կոնծեց, հետո առանց վճարելու անհետացավ:

- Ճիշտ է արել, քանզի դուք պարտավոր եք բռնության տակ տառապած ժողովրդին օղին անվճար բաժանել:

Մազախռիվ երիտասարդի խոսքերը հրճվալից աղաղակներով ընդունեց

սրահում հավաքված խուժանը: Նրանք այլևս չսպասեցին, թե ինչ պատասխան կտա չլմորած սրճարանատերը, մատուցասեղանի ետևն անցան և էքսպրոպրիացիայի ենթարկեցին այնտեղ շարված օղու բոլոր շշերը: Ահավոր մի խլրտոց ընկավ սրճարանով մեկ, քրքիջը, գոհունակության ճիչերը, կարգի հրավիրելու կերկերուն հորդորները և օգնության հուսահատ կանչերը խառնվեցին իրար:

Այդտեղ մնալն արդեն անիմաստ էր ու վտանգավոր: Երկու բանաստեղծ իրար նայեցին լուռ և դուրս եկան:

- Այլևս հանգիստ խոսելու տեղ չմնաց այս քաղաքում, - ասաց Հրանտը:

- Առաջ լռությունն էր մեզ խանգարում խոսել, իսկ հիմա աղմուկը... Գնում եմ Սիլիվրի, հավանաբար մեկ շաբաթ մնամ ընտանիքիս հետ... Հասցեդ ունեմ, Պոլիս գալուց առաջ քեզ կգրեմ:

- Այդպես ավելի լավ կլինի և ավելի արդար. մենակս չվայելեմ քո ներկայությունը... Բոլորով կհավաքվենք:

* * *

Ծնողներին գտավ երկյուղների և անորոշության մեջ: Ամենահակասական լուրերն էին հասել Սիլիվրի, չնայած մայրաքաղաքը հեռու չէր: Այս անստուգությունն անդրադարձել էր ամեն ինչի վրա: Օրինակ՝ ծնողներն իրեն մի տեսակ չափավորված հրճվանքով դիմավորեցին. ասես զգուշանում էին շատ ուրախանալ: Փորձեց իր տեսածները պատմել, քիչ թե շատ հավաստի տեղեկություններ հայտնել: Հայրն ուշադիր լսում էր: Նրան ավելի շատ հետաքրքրեցին Քենանի հետ ունեցած զրույցները և գնացքի միջադեպերը: Նա մտահոգ դեմքով բավական երկար լուռ նստեց, վերջապես, հատ-հատ ասաց.

- Զավակս, մութ խաղեր են... Որքան հասկանում եմ, Թուրքերի ներքին հարցերն են: Զգիտեմ, դրանից հետո ավելի լավ կլինի, թե ավելի վատ, սակայն մենք՝ հայերս պիտի հեռու մնանք այդ խաղերից:

- Իրենց ասելով մակեդոնացիք ու հայ հեղափոխականները, և անգամ ալբանացիք ու հրեաներն արդեն միացել են երիտթուրքերին:

- Առնավուտների և հրեաների մասին ոչինչ չեմ կարող ասել, նրանք իրենց հաշիվներն ունեն, բայց քրիստոնյաները, մանավանդ մենք՝ հայերս, պիտի հեռու մնանք այս պատմություններից: Թուրքերին լավ գիտեմ: Այդ դեղնակտուցներն ինչպե՞ս կարող են սուլթանին քշել, Թուրքն առանց սուլթանի ապրել չի կարող, նրա գլխին միշտ մեկը պիտի նստած լինի: Արդեն ինչի որ հասան սուլթանների շնորհիվ էր...

- Ուրեմն, հույս չկա՞, որ այս երկիրը մի օր քաղաքակրթվի...

- Ինչպե՞ս պիտի քաղաքակրթվի, զավակս... Թուրքն առայժմ զբաղված է ուրիշների ստեղծածը կործանելով, թալանելով, մահ ու սարսափ սփռելով: Սուլթանների ուժը միայն բանակը չէ, այլև մութ ու խավար զանգվածը, որին անհնար է քաղաքակրթել...

- Ավա՜ղ, այդպես է: Բանակը դրսի համար է, խուժանը՝ ներսի...

- Եվ երկուսն էլ հլու-հնազանդ սպասում են սուլթանի հրամանին:

- Բայց ահա բանակի մոտ կեսը, համենայն դեպս բազմաթիվ զորամասեր ապստամբել են, և ես դրսից տեսնում էի, թե ինչպես է կատարվում նախապատրաստական աշխատանքը... Նրանք միամիտ դործ չեն բռնել, այդ երիտթուրքերի թիկունքին շատ զորավոր ուժեր կան...

- Քո պատմածից երևում է, որ նրանք նաև այստեղ են նախապատրաստվել... Երեկ ամեն ինչ խաղաղ էր ու հանդիստ, իսկ այսօր Պոլիսը տակնուվրա է եղել... Ինչպե՞ս կարողացան մի քանի ժամում այդքան բազմություն հանել փողոց...

- Դա մի քանի ժամվա գործ չէ, նրանք ամիսներով աշխատել են դրսից:

- Ասում ես՝ դրսից... Բայց չէ որ այդ Եվրոպայում բոլորը մեր սուլթանի բարեկամներն են: Նրանք չգիտեի՞ն, թե երիտթուրքերն ինչով են զբաղված, ինչո՞ւ չձերբակալեցին, ինչո՞ւ չխանգարեցին:

- Եվրոպայում ազատություն է, բոլոր հեղափոխականները գնում են այնտեղ:

- Ազատ են, եթե եվրոպացիների հաշիվներին բռնում են, եթե նրանց չեն խանգարում...

Նա լռեց մի պահ, հետո ավելացրեց.

- Ես մի բան գիտեմ. Թուրքը երբեք մեզ իրեն հավասար չի համարի, այդ աղալեթն ու հյուրիեթն իրենց մութ հաշիվների համար են հանել մեջտեղ... Նորից եմ ասում՝ մենք գործ չունենք դրա հետ... Ոչինչ պետք չէ փոխել, այսպես էլ որ մնա, դարձյալ գոհ ենք...

Ինքն էլ գրեթե նույն բաներն ասաց Քենանին, սակայն տարօրինակ էր, որ այստեղ, հարազատ տան մեջ հորը լսելով, մի պոռթկում էր արթնանում ներսը. մինչև ե՞րբ պիտի այս երկիրն ասիական բարբարոսության ճիրանների մեջ մնա և մինչև ե՞րբ հայերն ու բարձր քաղաքակրթության տեր մյուս ժողովուրդները ենթարկվեն իրենցից ցածր այս գաղանին... Համոզված էր, որ Թուրքիայում ապրող հայերի բացարձակ մեծամասնությունը հոր պես է մտածում: Միայն կուսակցական մի քանի գործիչներ, չգիտես ինչ հաշիվներից ելնելով, շտապել են դաշնակցել հեղափոխական թուրքերի հետ: Հեղափոխակա՞ն... Թուրքիա և հեղափոխությո՞ւն... Բառերն այսպես դյուրությամբ կարելի է իրար կողք դնել, սակայն իրական կյանքում այդ երկու անհարիր երևույթներն ինչպե՞ս կարող են իրար լրացնել, գոնե իրար հետ հաշտ ապրել: Ի՞նչ հեղափոխություն կարող է լինել մի պետության, մի ազգի համար, որի ամբողջ պատմությունը կառուցված է ստրկացնելու, բռնանալու, կողոպտելու, ավերելու և մշտական արյունահեղությունների վրա... Կուզենա՞ արդյոք մարդկային ցեղի այս պատուհասը հրաժարվել իր համար այդքան սովորական դարձած զենքերից և փոխարենը որդեգրել սեր, հավատ, հանդուրժողականություն... Թուրքի հետ դարեր ապրած և նրանից շարունակ խժդժություններ տեսած որևէ ժողովուրդ (իսկ կա՞ մի ժողովուրդ, որն ուրիշ բան տեսած լինի Թուրքից) միանգամից կասի՝ «ո՛չ» և իրավացի կլինի:

- Այդպես մի տխրիր, Ռուբեն, - լսեց հոր ձայնը, որն ասես կարդում էր որդու մտքերը: - Այսքան տարիներ ապրել ենք Թուրքի հետ, նորից կապրենք... Այսպիսի քամիներ շատ են եկել ու անցել, այս մեկին էլ կդիմանանք...

Նայեց մորը, քույրերին, եղբայրներին, որ հյուրասրահի ընդարձակ սե-

ղանի մոտ նստած, ժպիտները դեմքներին, համբերատար սպասում էին, թե երբ է հերթը հասնելու իրենց, որպեսզի իրենք էլ հարցեր տան, վերջապես տարիների կարոտն առնեն:

- Հոգնած կլինես, որդիս, ահագին ճամփա ես կտրել, գուցե մի քիչ հանգստանայիր...

- Ոչ, ոչ, մայրիկ, հոգնած չեմ, ընդհակառակը...

Քույրերն, ասես այդ խոսքերից քաջալերված, միանգամից անցան հարձակման.

- Նոր լուսանկարներ բերե՞լ ես...

- Ես այստեղ եմ, - զարմացավ Ռուբենը: - Լուսանկարի ի՞նչ պետք ունեք:

- Քո լուսանկարը նկատի չունեք, այլ...

- Հա՜, հասկացա... Այո, բերել եմ... Դրանից զատ, այստեղի հասցեով պիտի գրի և նոր լուսանկարներ ուղարկի:

- Այդ հրեշտակի նման աղջկան ինչպե՞ս գտար, որդիս, շա՜տ անուշն է... Գիտե՞ս ինչ լավ նամակ է գրել մեզ... Ինձ ու հայրիկիդ անվանել է «իմ սիրելի ծնողներ»:

- Ե՞րբ պիտի ամուսնանաք, - հարցրեց քույրը:

- Օ՜, դեռ կանուխ է... Սպասեք մինչև բժշկի վկայականս ստանամ:

- Ամուսնանալուց հետո որտե՞ղ պիտի ապրեք, - հարցրեց մեծ եղբայրը՝ Քերոբը:

- Անշուշտ այստեղ... կամ Պոլսում... Չգիտեմ, դեռ չենք որոշել:

- Պոլսում, իհարկե, լավ կլինի, սակայն գուցե ճիշտ կանես, եթե գաս այստեղ, և՛ գործդ շատ կլինի, և՛ պատիվդ... Մենք էլ միշտ կողքիդ կլինենք և կուրախանանք:

Հոր խոսքերն առանձնահատուկ մի կարոտ արթնացրին նրանում կյանքի պարզ վայելքների հանդեպ՝ ինչպիսիք են հայրական օջախը, մանկության տարիների հետ կապված դեմքերն ու վայրերը... Զգաց, որ առանց այս ամենի դժվար կլինի իր հետագա կյանքը, մինչդեռ նրան մնում էր ընդամենը մի վճիռ կայացնել, որպեսզի Աստծո կողմից իրեն շնորհված հետագա տարիներն ապրեր այս թանկագին ու հարազատ միջավայրի մեջ: Հոգու խորքում, անշուշտ, վճիռը կայացրել էր, սակայն անլսելի մի ձայն ասում էր՝ սպասիր: Եվ այդ ձայնն էր, որ ստիպեց ի պատասխան արտաբերել.

- Ճիշտ ես, հայրիկ, բայց սպասենք տեսնենք, թե ինչով է ավարտվելու այս պատմությունը...

* * *

Ինչպես փոթորկից հետո ապշեցնող մի անդորր է հաստատվում, այնպես էլ հուլիսյան հուզումնալից օրերից հետո կյանքը նորից շարունակվեց ընթանալ սովորական հունով: Սակայն 1876 թ. սահմանադրության վերահաստատումից կարճ ժամանակ հետո անսպասելի մի աշխուժություն ծավալվեց հասարակու-

թյան գրեթե բոլոր շերտերում և հատկապես մտավորականության մեջ: Իրար ետևից թերթեր ու ամսագրեր էին բացվում, ակումբներ հիմնվում: Զնայած ամառվա տապին և արձակուրդներին, թատերական կյանքն աշխուժացավ, գրողներն ու արվեստագետներն ավելի հաճախակի սկսեցին տեսնվել, նրանց զրույցների նյութն ավելի բազմազան դարձավ, ավելի անկաշկանդ և ավելի համարձակ: Հանդուգն ծրագրեր էին կազմվում, որոնք կարճ ժամանակում մարմին էին առնում: Կյանքը դարձավ գրավիչ, ապրելը՝ հաճելի, անցած դառնությունները մոռացվեցին, և թվաց, թե այսուհետ սկսվելու է հավերժական երջանկության մի դարաշրջան:

Ընտանեկան անդորը ու չափավորված կյանքը, հարազատների հետ ծավալվող անվերջ զրույցները, ազգականների այցելությունները մի շրջան մոռացնել տվեցին քաղաքական բուռն անցուդարձերը, մանավանդ, երբ հազվագյուտ ժամեր էր ունենում մենակ մնալու և իր սենյակում փակված ընթերցանության տրվելու կամ բանաստեղծությունների տետրակը նոր տողերով ավելացնելու: Վայելքներ, որոնց համար Լոզանում գրեթե ժամանակ չէր ունենում:

Երանելի անդորրի այս օրերին էր, որ Հրանտ Նազարյանցի նամակն ստացավ. ժամադրություն էր նշանակել նոր բացված «Սուրհանդակ» օրաթերթի խմբագրությունում, թվարկում էր անուններ, որոնց հետ պիտի ծանոթացներ այնտեղ:

Խմբագրություն ասվածն ընդամենը երկու նեղլիկ սենյակ էր՝ թղթերով լցված: Պատուհանից եկող առատ լույսն ընկել էր սեղանի վրա, որի մոտ, նուրբ դիմագծերով, խոհուն դեմքով ակնոցավոր մի երիտասարդ էր նստել: Նրա առջև օրվա փոստն էր՝ հայերեն, թուրքերեն և ֆրանսերեն լրագրեր, ծրարներ և զանազան փաստաթղթեր:

- Լսիր, Գեղամ, քսան օր չկա, ինչ թերթդ բացել ես, բայց խմբագրությունդ ամբողջովին թղթերով ու նամակներով է լցված:

- Ի՞նչ կարող եմ անել, սիրելի Հրանտ, - արդարացավ ակնոցավոր երիտասարդը: - Ամբողջ ազգը բանաստեղծություն է գրում... Ահա, տես, այսօր էլ մի հիսուն հատ ստացա... Աղետ է պարզապես:

- Լավ ես դիմավորում մեզ՝ երկու բանաստեղծներիս, - կատակեց Հրանտը: - Ծանոթացիր, Ռուբեն, Գեղամ Բարսեղյանն է, «Սուրհանդակի» խմբագիրը:

- Ահա թե որն է քո անակնկալը... Շնորհակալ եմ, Հրանտ, որ Ռուբեն Սևակին իմ համեստ թերթը բերեցիր... Սակայն ներողամիտ եղեք, իմ տրտունջները ձեզ չեն վերաբերում: Խնդրեմ, անտիպ քերթվածներ տվեք՝ վաղվա համարում կդնեմ:

- Ոչ, ոչ, իրավացի եք, - հանգստացրեց նրան Ռուբենը: - Ժամանակը բանաստեղծության համար նպաստավոր չէ, ուստի կնախընտրեի ձեզ համար արձակ գրել, հոդվածներ... Ժողովրդի հետ պետք է խոսել ավելի իրապաշտ, ավելի մատչելի լեզվով, մանավանդ որ ժամանակը խրթին հարցեր է դնում մեր առջև:

- Այո, սիրելիս, ապագան հետաքրքիր հեռանկարներ է խոստանում, - միջամտեց Հրանտը: - Ես կուզեի այդ ամենը մարմնավորել իմ տողերում... Ես դրանք զգում եմ, տեսնում, շոշափում...

- Ռուբենն իրավացի է: Զգա և շոշափիր քո ապագան որքան ուզում ես,

սակայն ժողովրդին այսօր առարկայական ճշմարտություն է պետք:

- Վերջապես, մեկը մյուսին չի խանգարում, պայմանով, որ բանաստեղծությունները չինական գրեր չլինեն, ինչպես ոմանց գործերում է...

- Ես տեսնում եմ, որ երկուսով ինձ պիտի հոշոտեք, մանավանդ երբ բանաստեղծ ընկերս ինձ մենակ թողեց և խմբագրի դաշնակիցը դարձավ, - անձնատուր լինելու պես ձեռքերը տարածեց Հրանտ Նազարյանցը, հետո, գրպանի արծաթյա ժամացույցը նայելով, ավելացրեց. - Այս խոսակցությունը դեռ կշարունակենք, ինձ այդպես դյուրությամբ չեք համոզի... Իսկ հիմա գնանք մոտիկ մի տեղ, ես ձեզ պիտի մի հրաշք ներկայացնեմ:

- Եկեղեցի՞ պիտի տանես մեզ, - կատակեց Գեղամը:

- Ոչ, ոչ, «Կաֆե-չանտան», Փափազն է սպասում մեզ այնտեղ:

- Ի՞նչ փափազ...

- Վահրամը, եղբայր... Վահրամ Փափազյանը: Մի նոր Ադամյան է, և Աստված տա, նրանից ավելի զորավոր է լինելու: Ես նրան Իտալիայում եմ տեսել, իտալերեն էր խաղում, մեծ դերասանների կողքին և նրանց հավասար... Կատարյալ հրաշք էր...

- Լսեցի, որ խումբ է հավաքում... Ե՞րբ է խաղալու, - հարցրեց Ռուբենը:

- Հենց այդ մասին պիտի խոսենք:

«Կաֆե-չանտանները» Պոլսի բարձր խավի և հատկապես եվրոպացիների զվարճանալու հազվագյուտ վայրերից էին: Երեկոներն այնտեղ երգ ու երաժշտություն էր լինում, երգացանկը հիմնականում ֆրանսիական էր, իսկ ցերեկները դրանք սովորական սրճարաններ էին, այն տարբերությամբ, որ ստորին խավի մարդիկ այնտեղ մուտք չունեին:

Նրանք մտան բարձր ցանկապատի մեջ ամփոփված զովասուն մի պարտեզ, որտեղ ծառերի ստվերների ներքո լավ հագնված այցելուներ էին նստել: Անմիջապես աչքի էր զարնում բարետես կանանց ներկայությունը, որոնց մեծ մասը եվրոպացիներ էին և հագնված վերջին նորաձևությամբ: Ասես ոչ թե Պոլսում գտնվեին, այլ եվրոպական մայրաքաղաքներից մեկում:

Պարտեզի կենտրոնում ճաշակով հագնված մի երիտասարդ էր նստել և ֆրանսերեն լրագիր էր կարդում: Ձեռնափայտը, գլխարկը և ճերմակ ձեռնոցները դրված էին կողքի աթոռին: Նա այնպիսի շնորհալի շարժումով էր ոտքը գցել ոտքին, թերթն այնպես էր բռնել (անչափ բնական, բայց միաժամանակ ի ցույց դնելով իր կարդալը), ընթերցելու հետ մեկտեղ գլխով այնպիսի համոզչությամբ էր հավանության շարժումներ անում, որ սրճարանում նստած որևէ մեկը չէր կարող նրան չնկատել, ուշադրություն չդարձնել: Մակերեսային և գռեհիկ մարդը դա պիտի համարեր ցուցամոլություն, սակայն Ռուբենն անմիջապես նկատեց, որ սա ինքնասիրահարված մի պճնամոլ չէ, այլ բնածին և հուժկու անհատականության տեր մի արտիստ, որի համար խաղը՝ որպես կեցության վավերական մի կերպ, երբեք չի դադարում, այն չի սկսվում բեմ մտնելուց անմիջապես առաջ և չի ավարտվում բեմից անմիջապես իջնելուց հետո, այլ խաղի մի վիճակին հաջորդում է մյուսը: Նա մշտապես պիտի իր ներկայությունը հաստատի՝ բեմի վրա, թե կյանքում, լռությամբ, թե շարժումով, խոսքով, թե անշարժությամբ:

Հիմա հանգիստ ու անփույթ նստած էր, բայց նրանից զորավոր մի մագնիսականություն էր տարածվում, որն ստիպում էր շրջվել ու նայել, եթե անգամ մեջքով ես կանգնած: Այո, նա խաղում էր, սակայն խաղում էր նրբորեն, աննկատ և փայլուն՝ իր ներկայությունը մեղմորեն, սակայն վերջնական պարտադրելով: Մինչև հիմա առիթներ էր ունեցել զանազան նշանավոր դերասանների տեսնելու կյանքում, սակայն ոչ մեկն այսպես զորավոր չէր իր հմայքով, ոչ մեկն այսպես աննկատ չէր գրավում իր հանդիսատեսին: Ահա, նշմարեց իրենց մոտենալը, ըստ երևույթին վաղուց՝ պարտեզ մտնելուն պես, սակայն տեղից չբարձրացավ, ձեռքերը չթափահարեց, չգոռգոռաց՝ իբր այստեղ եմ, այլ համբերատար սպասեց, որ մուտքի գործողությունը հասունանա, բառը պատրաստվի, ռեպլիկը, շարժումը... Ահա, կարծես ավարտեց էջի ընթերցումը և պատրաստվում էր շրջել, երբ (երեք-չորս մետրի վրա) տեսավ իրենց: Ամեն ինչ չափված ու պատճառաբանված է. նա հիմա ստիպված չի լինի ընդգծված շարժումներ անել, ձայնը բարձրացնել, պարզապես, բարեկամներին տեսնելուն պես թերթը ծալում է, անփույթ շարժումով գցում մի կողմ (իբր ստիպված էի կարդալ, քանի որ ձեղ էի սպասում) և չափազանց հմայիչ մի ժպիտով դիմավորում ընկերներին.

- Հրա՜նտ, Գեղա՜մ... Ոչ մի կին ինձ այսքան չի սպասեցրել...

Քիչ է ասել, թե անթերի գեղեցկություն ունի և չափազանց բարեձև մարմին. ձայնի, շարժումների մեջ մի տոհմիկ ազնվականություն կա, նկարագրի առինքնող շիտակություն...

- Սպասի՜ր, Հրանտ, չասես, թե ով է կողքինդ... Ռուբե՞նն է... Սևակը... Նկարդ ունեմ, Սիամանթոն է ուղարկել՝ բանաստեղծություններիդ հետ... Եվ ի՜նչ գովեստներ էր գրել քո մասին... Անցած օրը մի քանի ուրիշ գործեր կարդացի քեզնից «Մասիսում» և նորից համոզվեցի, որ Ատոմն իրավացի է...

Ապշեցնող տիրապետում ուներ բառի, արտասանության: Յուրաքանչյուր ելևէջին առանձնահատուկ ուժականություն էր հաղորդում, ոչ մի հնչյուն չէր կորչում, վանկերն ասես լսվում էին զատ-զատ: Ձայնը բարձր չէր, բայց ասես տարածվում էր պարտեզով մեկ՝ գրավելով մասնավորապես իգական կեսի ուշադրությունը, և նա հրաշալի զգում էր, խաղարկում էր դա, բայց իմիջիայլոց, որպես անչափ բնական մի բան: Պատկերացրեց, թե բեմի վրա, համապատասխան հագուստով և հարուստ դեկորների մեջ ինչպիսի տպավորություն է գործելու հանդիսատեսի վրա, ինչպես է գերելու նրան:

- Շատ եմ լսել ձեր մասին, բայց, ավա՜ղ, բախտ չեմ ունեցել բեմում տեսնելու:

- Համբերիր, Ռուբեն, - միջամտեց Հրանտը: - Շուտով կտեսնես... Շատ շուտով... Հենց այդ գործով ենք եկել այստեղ:

- Օ՜, խոստումներ չտաս, Հրանտ, ես երկյուղներ ունեմ, որ ոչինչ չի ստացվելու:

- Քեզ ի՞նչ պատահեց, Վահրամ, երկու օր առաջ ոգևորված էիր, իսկ այսօր իսպառ հուսահատված ես...

- Եթե այսօրվա փորձս տեսնեիր դու էլ կհուսահատվեիր... Անելանելի վիճակում եմ... Ասես արձանների հետ աշխատեմ:

- Այո, այդպես է, Վահրամ, սիրող դերասանների հետ ես աշխատում, - փորձեց մխիթարել նրան Գեղամը:

- Այո, սիրող, բայց ոչ անհոգի... Արդեն տոմսեր են վաճառվում, աֆիշներ են փակցվում... Եթե այսպես գնաց, հնարավոր է ներկայացումը նշանակված օրը չհասցնենք:

- Այդպիսի բաներ մի ասա, Վահրամ, պիտի հասցնես: Պոլսի այս մեռյալ կյանքի ավարտից հետո մենք՝ հայերս պիտի առաջին ներկայացումը տանք: Ինքդ ասացիր, որ հույներն էլ են պատրաստում, եվրոպացիք էլ, բայց առաջինը մերը պիտի լինի, հասկանո՞ւմ ես, և՝ լավագո՛ւյնը:

- Կլինի, կլինի, անհոգ եղեք, բայց հարցրեք, թե ի՞նչ գնով... Մենակս պիտի անեմ ամեն ինչ:

- Եվ կանես, հրաշալի կանես, - քաջալերեց Հրանտը:

- Իսկ այն գաղափա՞րդ... Խոսե՞լ ես Ռուբենի հետ:

- Դեռ ոչ, - պատասխանեց Հրանտը: - Հիմա կխոսենք:

- Ի՞նչ գաղափար է, - հետաքրքրվեց Ռուբենը:

Վահրամը մի պահ լռեց, թեթևակի ժպտալով նայեց Հրանտին, ասես հարցնում էր. «Ես ասե՞մ, թե՞ դու կասես», հետո միանգամից դիմեց Ռուբենին.

- Պիտի խնդրեմ, սիրելի Ռուբեն, որ վարագույրը բացելուց առաջ ողջույնի խոսք ասես, հայ թատրոնի նոր դարաշրջանն ազդարարես:

- Ինչո՞ւ ես, - զարմացավ Ռուբենը: - Անարդար է, որ այդ պատվավոր առաքելությունը ես ստանձնեմ... Հները կան, վաստակ ունեցողները... Մի խոսքով, շատուշատ պատվավոր անձինք, որոնց ավելի կպատշաճեր:

- Քեզնից ավելի պատշաճ մեկը չկա, - ասաց Գեղամը: - Նախ դու արդեն բավական նշանավոր ես, որպեսզի երիտասարդ դերասանի առաջնորդը դառնաս, հետո հներն ասպարեզում չկան... Ո՞ւր են նրանք, ո՞ր բեմերի վրա է Մնակյան էֆենդին... Թուրքերի՞... Թող այնտեղ էլ մնա... Ասպարեզը մերն է, գործը մենք. ենք անում, ուստի մեր միջից պիտի լինի ողջունողը:

- Գեղամն իրավացի է մի կարևոր հարցում. իսկապես հայ թատրոնի նոր դարաշրջան է բացվում, և այդ գործը մենք պիտի անենք՝ նորերս... Հներին փառք ու պատիվ, սակայն հիմա մեր հերթն է հասել:

Հետո Վահրամը բարեկամական ժպիտով նայեց Ռուբենին և լրացրեց.

- Դրանից զատ կարևոր մի հանգամանք կա. ողջույնի խոսք ասողը պետք է ներկայանալի մեկը լինի... Ի վերջո, սա թատրոն է, բեմ է... Պիտի կարողանա համակրանք առաջացնել:

- Մի խոսքով, ուզում ես ինձ հանել բեմ և քո ներկայացման մասնակիցը դարձնել, - կատակեց Ռուբենը:

- Կեցցե՛ս, ճիշտ հասկացար, - հաստատեց Վահրամը: - Միայն թե քո առաքելությունն ավելի կարևոր է, քան իմը. քո խոսքով պիտի տրամադրես հանդիսատեսին, պիտի ճամփա հարթես ինձ համար, և որքան ավելի լայն լինի այդ ճանապարհը, այնքան ավելի արագ կընթանամ դեպի հաղթանակ:

- Ջես վախենո՞ւմ այդ ծանր բեռն իմ ուսերին դնել:

- Ոչ, սիրելի Ռուբեն, քանզի քո հռետորական տաղանդի մասին առաս-

պելներ են շրջում, և ես վստահ եմ, որ այս անգամ էլ պիտի փայլես:

- Դու քո պերճախոսությամբ բոլորին կարող ես համոզել, սակայն զարմանում եմ, որ խմբիդ անդամները չեն վարակվում քո ոգևորությամբ, - նկատեց Ռուբենը:

- Ոգևորվում են, սիրելիս, ձգտում են անթերի կատարել իմ պահանջները, սակայն ոգի չկա նրանց արածի մեջ, թռիչք չկա:

- Ինչո՞ւ ես պահանջում, որ այդ խեղճ ճնճղուկներն արծվին հավասար սավառնեն: Դու ձգտիր դեպի անհաս բարձունքները, իսկ նրանք թող իրենց տեղում մնան:

- Ես կձգտեմ դեպի անհաս բարձունքները, սիրելի Հրանտ, պայմանով, որ Ռուբենն առջևս լինի:

- Համոզեցիր, եղբայր, բայց ասա գոնե, թե որն է խաղացվելիք գործդ:

- Շեքսպիր, «Օթելլո»:

- Կատակ ես անո՞ւմ... Քեզ նման տղամարդը խանդոտ ամուսին չի կարող լինել:

- Զգո՛ւյշ, Ռուբեն, խանգը ոչ մեկին չի խնայում... Եվ հետո, հենց դա է արվեստի ուժը, - ճչտեց Վահրամը: - Կարողանաս ուրիշ լինել:

- Բայց մի՞թե ավելի պատշաճ չէր լինի այսպիսի բացառիկ առիթն օգտագործել հայ հեղինակ ներկայացնելու համար, - հարցրեց Ռուբենը: - Որևէ նյութ վերցնեիք հայկական անցյալից, ժողովրդին ոգեշնչեիք հերոսական կերպարներով:

- Ո՞ւր է այդ թատերախաղը, - պոռթկաց Վահրամը: - Ես մտածել եմ այդ մասին, բայց, ավա՜ղ, ձեռքի տակ եղածը լոկ հայրենասիրական քարոզ է... Արվեստ է պետք ներկայացնել ժողովրդին, կենդանի կերպարներ... Վարդովյանական թատրոնի ժամանակներն անցան, հիմա նոր թատրոն է պետք ստեղծել:

- Նոր թատրոնն առանց հայ հեղինակների չի ստեղծվի, - նկատեց Գեղամը:

- Գրեք այդ թատերախաղերը... Ասպարեզում առայժմ Պեշիկթաշլյանի և Դուրյանի գործերն են...

- Ես տեսնում եմ, Վահրամ, - ժպտալով ասաց Ռուբենը, - որ դու ինձ ոչ միայն խմբիդ անդամը կդարձնես, այլև կստիպես թատերախաղեր գրել քեզ համար:

- Եթե ինձ համար ես գրելու, համոզված եղիր, որ հաջողության կհասնես...

Վահրամի պատասխանն ընդհանուր ծիծաղ առաջացրեց, քանզի նա իր ինքնավստահությունն էր արտահայտում՝ ձայնին հաղորդելով հեգնական մի երանգ, դեմքին էլ տալով մի արտահայտություն, որը ներելի է դարձնում նույնիսկ չափազանցված անհամեստությունը:

- Անշուշտ, իրավացի եք, ես էլ կուզեի հայկական մի լավ թատերախաղով ազդարարել այս վերածնունդը, սակայն կա մի հանգամանք, որը պարզապես պարտադրում է ինձ նորից Շեքսպիրին դիմել... Ասում եմ նորից, որովհետև այն օրը, երբ մեր փառապանծ սուլթանն արգելեց թատերական ներկայացում-

ները, այստեղ, այս թատրոնի բեմում, որտեղ մի քանի օր հետո պիտի հանդես գանք, հենց Շեքսպիրի «Օթելլոն» էին խաղում...

- Որտեղի՞ց գիտես, - հարցրեց Հրանտը: - Դու այն ժամանակ երևի ծնված չէիր...

- Զգիտեի, բայց իմացա: Երկու շաբաթ առաջ, երբ այնտեղ հավաքվեցինք, - ձեռքի անփույթ շարժումով ցույց տվեց քիչ հեռվում կանգնած «Օդեոն» թատրոնի շենքը, - մեր առջև, սեղանին, Հյուգոյի «Ռյուի Բլազն» էր, մի գործ, որն, անկեղծ ասած, ինձ շատ չէր ոգևորում... Փորձը նոր էինք սկսել, երբ տարեց մի դերասան մտավ... Կարծես Աստված էր ուղարկել նրան... Նա սեղանին դրեց «Օթելլոյի» հայերեն ձեռագիրը և ասաց, որ հայերեն վերջին ներկայացումը Պոլսում եղել է Շեքսպիրի այդ պիեսը՝ Ֆասուլաճյանի դերակատարությամբ, ուստի հիմա մենք պարտավոր ենք հայաշունչ թատրոնի դռները բացել նույն «Օթելլոյով», այդ նույն թատրոնում, որտեղ ընդհատվել էր... Եվ ես առանց երկմտելու ընդունեցի այդ առաջարկը:

- Ի դեպ, Վահրամ, քանի որ «մեր փառահեղ սուլթանին» հիշեցիր, Ռուբենին պատմիր, թե ինչպես ես խաղացել նրա համար՝ Յելդըզում, - խնդրեց Հրանտը:

- Ես ձեզ ավելի հետաքրքիր մի զավեշտ կպատմեմ Աբդուլ Համիդի հետ կապված, որ իտալացի դերասաններից եմ լսել... Օպերային իտալական խումբ էր եկել այստեղ հյուրախաղերի: Սուլթանին համոզում են, որ հրավիրի Յելդըզ՝ «Ֆաուստ» օպերան ներկայացնելու: Դերասաններին բերում են, հրահանգներ տալիս, թե կայսեր ներկայությամբ ինչպես պետք է պահեն իրենց բեմում և հատկապես զգուշացնում, որ հանկարծ թիկունքով չկանգնեն վարագույրի ետևը նստած սուլթանին... Այո, այո, մի զարմացեք, սուլթանը վարագույրի ետևից էր նայում ներկայացումները... Մի խոսքով, օպերան սկսվում է... Իտալացի երգիչ-երգչուհիները ջանք չեն խնայում գոհացնելու բռնակալին, բայց նա ձանձրանում է հենց առաջին գործողությունը չավարտված և հրամայում մեկ ուրիշ բան խաղալ: Դերասանները «Ֆաուստի» զգեստներով սկսում են «Կարմենը» ցուցադրել: Սա էլ չի բավարարում սուլթանին... Խումբը հարկադրված անցնում է «Տրուբադուրին», բայց դարձյալ արքան չի գվարճացել...

Երբ բավական զրուցելուց հետո դուրս էին գալիս սրճարանից, դարպասի մոտ, ներսի կողմից փակցված աֆիշներ տեսան. հայերեն, ֆրանսերեն, հունարեն և թուրքերեն հայտնվում էր, որ 1908 թ. օգոստոսի 22-ին, Բերայի «Օդեոն» թատրոնում իտալական և ֆրանսիական բեմերի նշանավոր դերասան Վահրամ Փափազյանը խաղալու է «Օթելլո»: Վարը, փոքր տառերով ասվում էր, որ տոմսերը կարելի է գնել նաև այստեղ և որ «Կաֆե-շանտանի» այցելուներին 10 տոկոս զեղչ է արվում:

Ռուբենը համոզված էր, որ սրճարանի այցելուներից շատերը կգան, քանզի նրանց կգայթակղի ոչ այնքան զեղչը, որքան նշանավոր, գեղեցիկ ու խորհրդավոր դերասանը, որն ամեն օր կեսօրին, բեմական հոգնեցուցիչ փորձերից հետո գալիս էր այստեղ՝ իր մշտական տեղում, սառը ջրի հետ մատուցված արևելյան սուրճը վայելելու և օրվա լրագրերը կարդալու:

* * *

- Զավակս, հիվա՞նդ ես, - մտահոգ հարցրեց մայրը:

Ոչ, հիվանդ չէր, սակայն սրտի վրա, հոգու վրա մի ցավ կար, ահավոր մի ծանրություն, որը հայտնվեց հիմա, անսպասելի, այս նամակը կարդալուց հետո:

Պոլիս գալուց ի վեր ընդամենը երկու-երեք ծրար էր ստացել Յաննիից, մի թիվ, որն ուղղակի ծիծաղելի էր նախկինում եկող հեղեղի հետ համեմատած: Պատահել էր, որ մեկ օրում էր երկու-երեք նամակ էր եկել: Իսկ հիմա՝ ամբողջ ամսվա ընթացքում... Քանակը դեռ մի կողմ: Նամակները հազիվ մեկ էջ էին գրավում, հավուր պատշաճի, առօրյա լուրեր հայտնող տողեր՝ առանց կրքի, առանց հույզի, առանց տխրության կամ հիացմունքի, ասես դրանց հեղինակը ոչ թե տասնութամյա սիրահարված մի աղջիկ է, այլ կյանքն ապրած ու հոգնած մի կին, որ հնուց մնացած սովորույթին հնազանդ, երբեմն-երբեմն, մի կարճ գրություն է ուղարկում իր հին բարեկամին: Այսպես սերն է մարում, մտերմությունն՝ անհետանում:

Նկատեց, որ այս մեկ ամսվա ընթացքում ինքն էլ շատ չէր գրել. ընդամենը երկու-երեք նամակ, նույնքան, որքան Յաննին: Եվ հետաքրքիր է, որ չէր տագնապում, չէր անհանգստանում, ասես որոշել էին հարաբերական դադար տալ՝ ստուգելու համար իրենց զգացմունքների ուժգնությունը՝ ստույգ իմանալով, որ այս վաստակած անդորրին հաջորդելու է հուզական հաջորդ պոռթկումը:

Սակայն քիչ առաջ ստացած նամակը խախտում էր կրքերի արձակուրդը, պատասխանատվությունների այս հավասարակշռությունը և հնչում որպես անսպասելի, դավադիր մի կրակոց: Առնվազն իր՝ Ռուբենի համար:

Գտավ, որ ինքն է մեղավորը, որ ինքն է հասունացրել նամակում նկարագրված դեպքերը՝ իր լռությամբ, իր անլրջությամբ, երբեմն էլ իր տխմար գովեստներով: Երբ առաջին անգամ իրեն առաջնորդեց դեպի Խաչելություն և սիրո այն ծեսը մատուցեց, այսօրվա պես հիշում է, որ ասաց, թե «դու սիրո մեծ բեմադրիչն ես»: Իսկ նա պատասխանեց. «Ոչ, ես սիրո դերակատարն եմ և ուզում եմ դերասանուհի դառնալ... մեծ դերասանուհի, որը պիտի աշխարհի բեմերը նվաճի»: Եվ ինքը պատասխանեց. «Դու կդառնաս, քանի որ դու մեծ ես հոգով»: Եվ հիշում է, որ խոստացավ նրան օգնել, ամեն ինչ անել, որպեսզի իր երազն իրականացնի:

Արդյոք ճիշտ արե՞ց, որ անխառն ոգևորության մեջ այդպիսի խոստում տվեց... Իսկ կարո՞ղ էր միթե վերերկրային այդպիսի բացառիկ խանդավառության մեջ չխոստանալ: Նրանք հեռու էին մարդկանցից, հասարակությունից, առօրյայից, և ամեն ինչ նրանց թվում էր իդեալական ու անաղարտ:

Իսկ հետո, երբ նամակներում «բեմ», «թատրոն», «դերասան», «արտասանություն» և այլ նման բառեր էին հոլովվում շարունակ, ինչո՞ւ էր չտեսնելու դնում, իսկ երբեմն նույնիսկ խրախուսում, ինչպես մի քանի ամիս առաջ, երբ Իբսենի պիեսներն ուղարկեց՝ հատուկ նշելով, թե «այդ կերպարները քեզ համար են գրված»: Իսկ երբ Էրֆուրտի թատրոնում նույն Իբսենի «Նորան» նա-

յելիս ականջին չչնջաց, թե այդ բեմում պիտի սկսի թատերական իր կարիերան, ինչո՞ւ ժպիտը դեմքին լուռ գլխով արեց: Ո՞ւմ մեղադրի հիմա, իրե՞ն, թե Յաննիին, որ նպատակդրված քայլում էր դեպի իր իդեալը և արդեն հաջողություններ ունի, առնվազն՝ հրապուրիչ հեռանկարներ: Բեռլինից եկած ինչ-որ հայտնի բեմադրիչ, ոչ ավել ոչ պակաս Ջուլիետի դերն է առաջարկել նրան: Դարձյա՛լ Շեքսպիր... Կոգևորվի, իհարկե, կոգևորվի: Եվ իրավիճակի ամբողջ տրագիկոմիզն այն է, որ իրեն՝ Ռուբենին ընդունելով որպես նվիրված համախոհ, որպես միակ հովանավոր ու խրախուսող, պատմում է իր գլխապտույտ հաջողության բոլոր մանրամասները՝ առաջին իսկ փորձերին ներկա գտնվելուց մինչև ամբողջ տեքստն անգիր անելը, բեմում արտասանելը և փորձերին մասնակցելը... ճիշտ է, առայժմ որպես երկրորդ դերակատար: Մոռանալով, թե ում է նամակ գրում, պատմում է, թե ինչպես բեմադրիչը գժտվել է իր սիրուհու՝ Ջուլիետի հիմնական դերակատարի հետ և իբր ցանկացել է նրանից դերն առնել ու իրեն տալ, բայց հետո որոշել է, որ երկուսն էլ կխաղան՝ փոխնիփոխ... Իբր բոլոր դերասանները ոգևորված են իր հայտնությամբ և ուզում են բեմադրիչին համոզել, որ պրեմյերային ինքը խաղա... Իսկ բեմադրիչը, պարզվում է, ուրիշ ծրագրեր ունի, իբր մտադիր է մի քանի ամիս հետո «Օթելլոն» (Տե՛ր Աստված, դարձյալ «Օթելլո», սա ի՞նչ աղետալի զուգադիպություն է) պիտի սկսի և ուզում է իրեն Դեզդեմոնայի դերն առաջարկել... Իսկ հետագայում գուցե Օֆելյա խաղա... Իբր ասել է, թե ինքն ստեղծված է շեքսպիրյան կերպարներ մարմնավորելու համար...

Զգիտի՝ խնդա՞, թե լա: Հիմա Յաննին այնտեղ հիացական մի նամակ է սպասում, բուռն կեցցեներ, սրտանց շնորհավորանքներ, մինչդեռ միակ բանը, որ կուզեր սրտանց անել՝ արգելելն է, կտրուկ, անվերապահ շեշտերով. կա՛մ ես, կա՛մ թատրոնը: Ահա այսպես:

Իսկ եթե Յաննին թատրոնը ընտրի, և այդպիսով կորցնի նրան վերջնականապե՞ս... Չէ՞ որ դա շատ հավանական է, այն էլ այդպիսի շշմեցնող հաջողությունից և այդպիսի հեռանկարներից հետո... Կկարողանա՞ արդյոք ուշքի գալ այդ սրընթաց վերելքի պահին, ուղեղն սթափեցնել այդ արբեցումի մեջ (օ՜, արվեստագետի արբեցումը...), ստեղծագործական սլացքը կասեցնել, որպեսզի չդրժի սիրո իր երդումը... Կունենա՞ արդյոք այդքան ողջախոհություն և հեռատեսություն... Արդյոք անկարելին չէ՞, որ պիտի պահանջի նրանից, անփորձ աղջկանից... Զափազանց չնչին է հավանականությունը, որպեսզի խնդիրն այդպես կտրուկ դնելու դեպքում հավատարիմ մնա իրենց սիրուն:

Ինքը նման է հիմա այն զորավարին, որը կարծում էր, թե փայլուն հաղթանակ է տարել, ուստի կարող է իր զինվորներին դադար տալ, սակայն պարզվում է, որ ավերիչ մի ուժ անսպասելի մտել է թիկունքից և կործանարար հարվածներ է հասցնում, և արյունով նվաճված հաղթանակն ուր որ է կփոշիանա, կկորչի: Միամիտ չէր, անշուշտ, գիտեր, որ դեռ փոքրիկ, աննշան մարտեր կլինեն, բայց համոզված էր, որ հիմնական ճակատամարտը շահել է:

Գոնե այսօր չգար այս նամակը... Վաղը թող գար, մյուս օրը... Այսօր, երբ երեկոյան իր բացման խոսքից հետո հայ նոր թատրոնի վարագույրը պիտի բարձրանա, երբ իրեն պատիվ է տրված հայ մշակույթի վերածնունդն ազդարա-

բել Պոլսո ընտրանիի ներկայությամբ, երբ քանի օր է, ծայրահեղ պատասխանատվությամբ լցված, վերաշարադրում, խմբագրում, վերախմբագրում է իր ելույթը, որը նույնիսկ Գեղամին կարդալուց, նրա հիացական կարծիքը լսելուց հետո դարձյալ չէր բավարարում իրեն... Թվում էր վերամբարձ, ընդհանուր տեղիքով լեցուն, կենդանի շնչից զուրկ...

Հիմա, այս նամակից հետո, վերացավ ամեն մի ցանկություն ելույթ ունենալու պատվարժան հասարակության առջև: Նրա ոգևորության վրա ասես պաղ ջուր լցրեցին, ամեն ինչ կորցրեց իր իմաստը: Ասես օճառի պղպջակ լիներ, որ թեթևակի հպումից պայթեց անհետացավ...

Մեղավորության զգացումին ավելանում էր նաև այն ըմբռնումը, որ Յաննիի պահվածքը տվյալ պահին ճշմարիտ է, բնական, արդար, որ սա ստեղծագործական սրբազան արարումն է, որն իր գոյությամբ պարտական է միայն Աստծուն և ոչ մի մահկանացու իրավունք չունի խանգարելու դրան: Համոզված էր, որ Յաննին չի դրժել իրենց խոստումը, որ աշխատել է այդ հաջողությանը հասնել հանուն իրենց սիրո, ավելին՝ հասկանում էր, որ այդ հաղթանակն իրենց սիրո պտուղն է: Սակայն ինչո՞ւ է այսպես ջախջախված, կամազուրկ, կյանքի իմաստը կորցրած, ասես ծանր, անբուժելի հիվանդության ճարակն է դարձել և հաշվված օրեր են մնում նրան ապրելու, ուստի ցանկություն չունի որևէ բան անելու:

Մահվանից ավելի վատ վիճակ էր սա, քանզի մահը գիտակցության կորուստը չէ, սրտի գործունեության դադարը չէ և անգամ մարմնի քայքայումը չէ... Այդ ամենից հետո դարձյալ կյանք կա... Իսկական մահը նախորդում է սրանց՝ ոչնչացնելով որևէ բան անելու ցանկությունը, նվազագույն շարժումը կատարելու կամքը և առաջացնում զզվանք, արհամարհանք, վերջապես, խորշանք կյանքի հանդեպ: Բավական է սերը կես քայլ նահանջի, որպեսզի մահն անմիջապես գրավի նրա տեղը: Մահը սիրո բացակայությունն է:

Ծանր, տաժանելի փորձության էր ենթարկվում ոչ միայն ինքը, այլև իր պաշտած արվեստի մուսան, նա, որին անմնացորդ հանձնել էր իր միտքն ու հոգին և դարձել նրա խոնարհ սպասավորը: Եվ այդ մուսան, որին պարտական էր հազվագյուտ վերացումների համար, որը նրան փրկում էր մահաշունչ կյանքից, այժմ իր սերն էր խլում, որպեսզի մեկով ավելացնի իր անհամար սպասավորների թիվը... Մուսաները խանդեցին իրեն, որ ինքը նրանցից զատ մեկ ուրիշին է սիրում:

Իսկ ինքն արդյոք խանդի կրակով չի այրվո՞ւմ հիմա, մի նոր Օթելլո չէ՞, որ հանիրավի մեղադրում է նրան: Ինչպե՞ս ասաց Վահրամը մի քանի օր առաջ... «Զգո՛ւյշ, Ռուբեն, խանդը ոչ մեկին չի խնայում»: Իսկապես, ինչո՞վ է տարբերվում քաղքենի այն ամբոխից, որից ուզում էին փրկել իրենց սերը... Եվ ամենից շատ Յաննին էր սոսկում մարդկանցից, իսկ ինքը փորձում էր նրան հասկացնել, որ ստիպված ենք մարդկանց մեջ մնալ, հաշվի նստել նրանց ներկայության հետ և որ այդ ամենով հանդերձ կա փրկության մի մեծ հույս՝ վերանալու առօրյայի գետնաքարշ կրքերից. դա արվեստն է:

Դյուրին է ասել խոսքերով, բայց դժվար է գործերով ապացուցել: Խնդրեմ, հետևելով քո խորհուրդներին, վերջապես՝ իր առողջ բնազդներին,

Յաննին փրկվում է արվեստի ճանապարհով, և ո՞վ է ուզում զսպել նրա խոյանքը. բանաստե՛ղծը, ոչ թե քաղքենին: Ընդհակառակը, քաղքենի հայրն իր օրհնությունն է տվել, անշուշտ, ոչ գեղեցիկի հանդեպ ունեցած երկյուղած պաշտամունքից ելնելով, այլ որպեսզի այս կերպ իր աղջկան հեռու պահի օտար փեսայից... Փեսա, որ հավակնում է երկու տարի հետո ամուսին դառնալ և վախենում է, որ թատրոնը կխանգարի իրենց ընտանեկան երջանկությանը: Հետամնաց և բռնակալ արևելցու մտավախությունը չէ սա, այլ իրենք՝ լուսավորյալ եվրոպացիք են այսպես մտածում... Դեմ չէ, որ իր ապագա կինը դաշնակահարուհի դառնա, մանավանդ որ մասնագետները փայլուն ապագա են խոստանում նրան կամ թե՝ նկարչուհի, բնատուր կարողություններ ունի, հոյակապ պեյզաժներ է նկարում, տեսնողները չեն հավատում, որ ինքնուս է: Սակայն թատրո՛նը...

Դերասանուհի և ընտանիք հասկացություններն իրար հակադիր են: Բնավ չի կասկածում, որ Յաննին հավատարիմ կմնա իրենց սիրուն, սակայն չի կարողանա հավատարիմ մնալ ընտանեկան օջախին, եթե անգամ շատ ցանկանա... Ի՞նչ ընտանիք, երբ դերասանուհիներն ամիսներով գնում են հյուրախաղերի: Ճիշտ այսպիսի ապագա է խոստանում նրան այդ բեռլինցի բեմադրիչը: Կարո՞ղ է արդյոք օրինակելի և սիրասուն մայրը շաբաթներով և ամիսներով չտեսնել իր զավակին...

Եթե հիմա հասկացող մեկը լիներ այդ միամիտ աղջկա կողքին և այս բաները հոգատարությամբ ու համբերատար բացատրեր նրան, ինքն այստեղ՝ հեռվում բնավ չէր տառապի: Մինչդեռ գիտեր, որ այդպիսի մեկը չկա, ընդհակառակը, նրա առջև բացել են բոլոր դռները: Եվ ամեն մի օրը պիտի ավելի խորացնի նրա արբեցումը, և ավելի դժվար է լինելու նրան բացատրել, թե ինքը՝ Ռուբենը՝ իր փեսացուն ինչու է դեմ, որպեսզի իր ապագա կինը, իր երեխաների մայրը բեմին նվիրվի: Ուրեմն, պետք է այսօր իսկ բացատրող և արգելող նամակ ուղարկի... Պետք է շտապել, քանի դեռ իր խոսքը նշանակություն ունի նրա համար, քանի դեռ իրավունք ունի ասելու՝ «ոչ»:

Բայց միանգամից չգրեց: Որոշեց մտորել դրա շուրջ, ընկերների հետ խորհրդակցել, մանավանդ Վահրամի, նա կարող էր օգտակար խորհուրդներ տալ: Ուստի, առանց հապաղելու, նամակն ու լուսանկարները գրպանը դրեց և դուրս եկավ: Մինչև ներկայացման սկիզբը բավական ժամանակ կար, և նա շտապում էր Վահրամին հենց հիմա տեսնել, թե ոչ, ներկայացումից հետո ժամանակ չի ունենա նրա հետ, երես առ երես, թեկուզ մեկ րոպե խոսելու:

* * *

Վահրամը նամակն ուշադիր կարդալուց և վերընթերցելուց հետո մի քանի րոպե հմայված լուսանկարներն էր նայում:

- Եթե այսպիսի Դեզդեմոնա ունենայի, աշխարհի բոլոր բեմերը կնվաճեի... Եվ հրաշալի Ջուլիետ կլինի... Հապա ինչպիսի՜ Օֆելյա... Ինչպիսի՜ Կորդելիա... Քիմե՜ն...

- Լսիր, Վահրամ, ինձ օգնելու փոխարեն գործս ավելի ես դժվարացնում:

- Դեռ հարց է, թե ով ում գործը դժվարացրեց: Մի երկու ժամ հետո պիտի բեմ բարձրանամ և մի խղճուկ Դեղդեմոնա տեսնեմ կողքիս... Ինչպե՞ս պիտի կարողանամ կլքերս բորբոքել, ինչպե՞ս պիտի խաղամ... Գոնե ներկայացումից հետո ցույց տայիր:

- Ոչինչ, դու մենակդ բավական ես, որպեսզի քո ներկայությամբ բեմը լցնես:

- Այո, իմ ներկայությամբ և նրանց փաստացի բացակայությամբ... Սակայն վերքս մի քրքրիր ներկայացումից առաջ, քո գործերից խոսենք:

Վահրամը նորից նայեց նկարները և ասաց.

- Հարցնում ես, թե ինչպես կընդունի քո արգելքը... Պատկերացրու, որ հիմա, ներկայացումից առաջ, դան և ինձ ասեն, թե այսօր չեմ խաղալու:

- Նույն բանը չէ, Վահրամ:

- Նույնիսկ ավելի վատ է: Եթե ինձ ասեն, թե չեմ խաղալու, առանձնապես շատ չեմ տխրի, քանզի դիտեմ, որ ավելի ուշ կխաղամ, մինչդեռ նա նորնոր պիտի վայելի բեմի հրապույրները, նա պատրանքների աշխարհում է, և կես ճանապարհից նրան բռնի ետ բերելը կարող է չափազանց ծանր անդրադառնալ, մանավանդ եթե զդայուն հոգու տեր է...

- Ես բռնությամբ չեմ ուզում անել, ես ուզում եմ համոզել:

- Անգամ ամենաքնքույշ խոսքերով ասված արգելքը հիմա դիտվելու է որպես բռնություն... Եվ նա ճշմարիտ կլինի... Երեխան հմայված մտնում է հրաշքների աշխարհ, իսկ դու նրան շոյելով ասում ես՝ ոչ, վերադարձիր դորշ իրականությանը... Դա մեռցնելու պես մի բան է:

- Այդքան անդութ մի եղիր, Վահրամ:

- Դու ինձնից խորհուրդ հարցրեցիր, ես էլ աշխատում եմ ճշմարտությունը ներկայացնել ամբողջ մերկությամբ... Չէ՞ որ ինքդ խնդրեցիր...

- Շնորհակալ եմ շիտակության համար... Բայց ստացվում է, որ այսպես, թե այնպես, կորցնում եմ նրան. կամ թատրոնը նրան կխլի ինձնից կամ էլ, եթե կարողանամ կես ճանապարհից ետ պահել, նրա մարմինը կունենամ լոկ, իսկ հոգին կլինի վիրավոր, սիրտը՝ փշրված:

- Կարող է ավելի վատ վերջանալ:

- Վահրա՜մ...

- Նման նրբանկատ գործողության դիմելուց առաջ պիտի աչքիդ առջև ամեն ինչ ունենաս: Որքան էլ հոգատար լինես հիմա, միևնույն է, չես կարող պատկերացնել, թե ինչպիսին է լինելու հետևանքը...

Նա մի պահ լռեց և շարունակեց.

- Մյուս կողմից էլ, գուցե սա դաժան, բայց օգտակար փորձություն լինի նրա համար:

- Ի՞նչ առումով:

- Այն առումով, որ եթե ծնվել է իսկապես դերասան դառնալու, ապա անպայման կդառնա, և ոչ մի ուժ չի կարողանա նրան կասեցնել՝ ո՛չ ծնողները, ո՛չ սիրող փեսան, ոչ էլ անգամ նյութական դժվարությունները, միայն մահը կկարողանա նրա ճանապարհը կտրել...

- Այդ դեպքում ի՞նչ պիտի անեմ:

- Պիտի որոշես. եթե ուզում ես զավակներիդ համար օրինակելի մայր ունենալ, որն ամեն վայրկյան նրանց կողքին լինի, ապա անմիջապես պիտի արգելես, իսկ եթե կարող ես հանդուրժել, որ նրա սերը նախևառաջ պատկանի բեմին, ապա պիտի պատրաստ լինես ամեն օր մրցելու այնպիսի մի հզոր ախոյանի հետ, ինչպիսին թատրոնն է:

Հաջորդած լռությունը տևեց բավական երկար, և դուցե ավելի երկարեր, եթե նորից չհնչեր Վահրամի ձայնը.

- Ավելի լավ է հիմա այդ մասին չմտածես: Երկու ժամ է մնացել... Դու հիմա պիտի սիրես թատրոնը, հայկական թատրոնը և այսօր պիտի ազդարարե՛ս, որ նոր դարաշրջան ենք սկսում: Ես համոզված եմ, դու կարող ես դա անել: Ժողովրդին արթնացնել է պետք, առաջնորդել, և դա կարող է անել միայն թատրոնը... Դուք հրաշալի բանաստեղծություններ եք գրում՝ դու, Ատոմը, Վարուժանը, բայց քերթվածներն ընտրանիի վայելքն են, իսկ թատրոնն ամբողջ ժողովրդի հացն է:

Նա ժամացույցը նայեց և ասաց.

- Ես գնամ թատրոն: Դու կարող ես քիչ ավելի ուշ գալ..., - հետո ժպտալով նայեց Ռուբենին և ավելացրեց. - Իսկ աղջկա համար անհոգ եղիր. որքան որ գերմանական բեմն է քեզ համար զորեղ մրցակից, այնքան էլ դու ես՝ բեմի համար, և սիրտս վկայում է, որ պիտի հաղթես:

* * *

Նամակում ինչո՞ւ ոչ մի տող չգրեց այդ մասին, ինչո՞ւ հեռավոր ակնարկ անգամ չարեց... Ինքը, որ մինչև հիմա մանրամասնություններով էր լցնում իր նամակները, երբեմն հանգամանալից պատմում, թե ում հետ ուր գնաց, ինչ կերան, որքան կերան, անգամ գարեջրի տեսակն էր նշում, ճաշարանի անունը... Ինչո՞ւ չգրեց այդ մասին, երբ օրը օրին գրված նամակներում բարեխղճորեն հայտնում էր, թե ինչ գիրք կարդաց, որ թատրոնը գնաց, ինչ համերգներ լսեց... Գրում էր անկարևոր, երկրորդական բաների մասին, մինչդեռ թաքցրեց այս բացառիկ իրադարձությունը, որի մեջ ինքը կարևոր դեր ունեցավ: Այո, թաքցրեց, ոչ թե մոռացավ (այդպիսի բանը կմոռացվի՞)... Ինքը, որ չտապում է ժամ առաջ նրան պատմել իր կյանքում տեղի ունեցած քիչ թե շատ նշանակալից փաստի մասին, ինչո՞ւ պապանձվեց այս անգամ: Ինչո՞ւ չգրեց, թե ինչպես ամբողջ քաղաքը զարդարված էր իրենց ներկայացման ազդագրերով, թե ներկայացումից առաջ ինչպիսի հետաքրքրություն էր բորբոքվել ամենուր, որ վարագույրը բացվելուց դեռևս երկու ժամ առաջ «Օդեոն» թատրոնը պաշարված էր բազմությամբ... Վերջապես առիթ էր եկել ոչ միայն իր նշանածի, այլև խրոխտ գերմանացիների առջև հպարտանալու, որ հայերն էլ եվրոպացիների չափ քաղաքակիրթ և նրբաճաշակ ընտրանի ունեն, որոնց չնչին մասն էր այդ օրը կարողացել տոմս ճարել, իսկ մի հսկա բազմություն նախանձով նայում էր ներս մտնողներին... Ինչո՞ւ չգրեց բառացիորեն լեփլեցուն դահլիճի, օթյակներում նստած,

չքեղ հագնված գեղեցիկ կանանց մասին, ինչո՞ւ չհայտնեց անհավատալի այն լուրը, որ գրեթե բոլոր դեսպանատները տոմսեր էին պատվիրել և որ բոլորին չկարողացան բավարարել...

Մի՞թե պետք էր լռության մատնել իր փայլուն ելույթը, երբ ներկայացումն սկսելուց առաջ մեն-մենակ դուրս եկավ բեմ և շլացնող լույսերից, վտանգավոր լռությամբ նստած հանդիսատեսներից և իր ուսերին դրված կարևորագույն առաքելությունից քիչ մնաց համրանար...

Սակայն եթե նկարագրելու լիներ իր խուճապը՝ հանդիսատես կոչված հազարագլուխ վիշապի առջև, ապա կգրե՞ր արդյոք, թե ինչպես կարողացավ ակնթարթի մեջ հաղթահարել ու ճզմել այդ սարսափը, կխոստովանե՞ր, որ հենց նրան հիշելով, նրա նամակը մտովին վերընթերցելով և ի հեճուկս նրա բեմական հաջողության, նրա մեծադղորդ ու ամբարտավան ազգի, ոգի առավ, ասես արծվի թևեր զգաց մեջքին և առյուծի սիրտ կրծքի տակ... Եվ երբ վճռական քայլերով մոտենում էր բեմառաջքին, արդեն գիտեր, որ իր խոսքը յուրատեսակ հատուցում է լինելու այդ նամակի համար, վրեժ՝ բարեխառնված թաքուն մի երախտագիտությամբ... Պե՞տք էր արդյոք խոստովանել, որ հենց այն պահին հստակորեն պատկերացնում էր, թե ինչպես հեռավոր գերմանական քաղաքում նա է քայլում բեմի վրայով և, որ այդ քայլերը հեռացնելու են նրանց իրարից, որ ինքն արդեն զգում է ահավոր կորուստը և սարսռում...

Ափսո՜ս, որ այդ նամակում չկարողացավ գրել, թե ինչպես գրավոր ելույթը ծալեց ու դրեց գրպանը և խոսեց բանավոր... Ի՞նչ խոսեց, որքա՞ն խոսեց, ինչպե՞ս խոսեց... Ոչինչ չէր հիշում... Ասես հրաբուխ հորդեր իր միջից, մտքի, պերճախոսության, հայրենասիրության հրաշեկ մի լավա, որ ոգևորության կրակով այրեց հանդիսատեսին՝ ստիպելով ոտքի կանգնել և ծափահարել գրեթե նույնքան, որքան իր բացման խոսքն էր տևել... Եվ երբ ծափերն ընդունելուց հետո շառագունած մտավ կուլիսներ, ապա առաջինը Վահրամը մոտեցավ. «Այն վագրը, որ վախենում էիր, թե կհոշոտի մեզ, այժմ պատրաստ է մեր ոտքերը լիզել»: Հետո գրկեց և շարունակեց. «Աքանչելի էր, Ռուբեն, կկարողանա՞մ ավելի լավ խաղալ, քան դու խոսեցիր»: Արդեն սև էր ներկել երեսն ու ձեռքերը, մավրիտանական ճեփ-ճերմակ զգեստ հագել և ահասարսուռ մի դաշույն կապել մեջքին, որի նրբանախշ բռնակի ծայրին վառ կարմիր սուտակն էր փայլում:

Ինչպե՜ս կուզեր պատմել ներկայացման մասին, որը ցնցող տպավորություն գործեց բոլորի վրա, քանզի բռնապետության ճնշումներից ազատագրված հոգիները ծարավի էին գեղեցկության: Ինչպիսի հպարտությամբ պիտի պատմեր Վահրամ Փափազյան հայտնության մասին, որն առաջին իսկ տեսարանից նվաճեց հանդիսատեսի սիրտը, և նրա յուրաքանչյուր մուտքն ընդունվում էր ծափերով, հիացմունքի բացականչություններով... Թե ինչպես աղավնիներ արձակեց դահլիճում նստած հանդիսատեսներից մեկը՝ Պոլսի թատրոնների հինավուրց մի ավանդույթ, և ճերմակ թռչունները եկան ու թառեցին նրա ուսերին... Անգամ նրանք էին հմայված դերասանի փայլուն խաղով... Իսկ վարագույրն իջնելուց հետո հանդիսատեսը կես ժամից ավելի ծափահարում էր և ծաղկեփնջեր մատուցում... Իր ժողովրդի աննշան հաջողությունների մասին էջեր

էր լցրել, սակայն նման իրադարձությունը լռության մատնեց, այնինչ պիտի խոշոր գրերով ազդարարեր, որ սա հայերի խաղաղ ու անքեն, վեհանձն ու դեղեցիկ պատասխանն էր սուլթանի արյունոտ տասնամյակներին, արյուն, որը հիմնականում հայի վերքերից էր հոսել... Եվ դեռ քանի՜ նման պատասխաններ պիտի տան հայերը, միամտորեն հուսալով քաղաքակրթել այդ երկիրը...

Ի՜նչ հրաշալի առիթ փախցրեց իր նշանածին (և նրա ծնողներին) իմիջիայլոց պատմելու, թե ինչպիսի հարգանք է վայելում ինքը Պոլսի մտավորական ընտրանիի շրջանակներում, մտավորականներ, որոնք պատիվ կբերեին եվրոպական ուզած երկրին... Հապա ինչպիսի՜ հոյակապ գիշեր անցկացրին Վահրամի տանը, երբ ներկայացումից հետո, մի հոծ խմբով խուժեցին այնտեղ և խրախճանքը տևեց մինչև լուսաբաց... Բոլորը խմում էին Վահրամի կենացը, իսկ վերջում, հանդիսավորությամբ, նրան հռչակեցին հայ բեմի արքա...

Ուրիշ շատ ու շատ բաների մասին պիտի անպայման գրած լիներ, բաներ, որ նրան պիտի հետաքրքրեին, սիրտը լցնեին ուրախությամբ, զորացնեին իրենց սերը և նոր՝ իմաստ հաղորդեին...

Սակայն գիտակցաբար չգրեց, քանզի եթե գրեր, այլևս իրավունք չէր ունենա նրանից պահանջելու, որ (հանո՜ւն իրենց սիրո) հրաժարվի բեմական գայթակղիչ հեռանկարներից, դադարեցնի իր փորձերը և թատրոն գնա միայն որպես հանդիսատես: Այդպիսով նա չիմացավ իր կյանքի (իրենց կյանքի) կարևոր մի իրադարձության մասին: Գուցե հետո պատմի, երբ տարիներ անց միասին գնան «Օդեոն», հավանաբար նորից Վահրամին նայելու... Այդ օրը, երբ ընկերների հետ միասին գնան Թոքատլյանի պանդոկ՝ ընթրելու կամ գուցե հենց Վահրամի տուն, իմիջիայլոց կասի. «Հիշո՞ւմ ես, Վահրամ, այն երեկոն, պատմիր, թող Յաննին իմանա...»:

Իսկ հիմա, վերջնագիր հիշեցնող իր նամակը շարադրելիս, հոգու խորքում ընդունում էր, որ իր արածը փոքրոգություն է, որ ինքը դրժում է իր խոստումը: Սակայն ուրիշ կերպ չէր կարող, քանզի գտնում էր, որ եթե այդպես չգրի, կկորցնի նրան, իսկ ապրել առանց նրա կնշանակեր ապրել մեռած... Եվ այդ ամենի դիմաց ընդամենը մեկ արդարացում ուներ. այն հսկայական զոհաբերությունը, որ պահանջում էր նրանից, համոզված էր, որ կհատուցի հավերժական մի սիրով, որն անպայման ավելի զորավոր կլինի մնացած բոլոր սերերից:

* * *

Ներկայացումից մոտ մեկ շաբաթ էր անցել, երբ նամակ ստացավ Քենանից. շնորհավորում էր ներկայացման հաջողությունը, ցավ հայտնում, որ զբաղվածության պատճառով չի կարողացել ներկա գտնվել և ժամադրություն նշանակում Նուրի Օսմանիեի կողմերը՝ չեշտելով, որ շատ կարևոր խոսելիք ունի իր հետ:

Ինչպես միշտ, Քենանը հայտնվում էր անսպասելի և ինչ-որ չափով առեղծվածային հանգամանքներում: Սակայն այս անգամ խորհրդավորությանը մի ուրիշ հմայք էր հաղորդել, որի ակունքը Ռուբենն իսկույն նկատեց. նրա խելացի կինը Վիեննայից: Մեկ էջանոց նամակին կցված էին լրագրային բազմաթիվ

կտրոններ՝ Պոլսում լույս տեսնող դրեթե ամբողջ բազմալեզու մամուլից: Անգամ հայկական «Սուրհանդակ» օրաթերթից կտրված իր բացման խոսքը կար, որ տպվեց ամբողջությամբ (ինչպե՞ս է ձեռքն ընկել), իսկ անգլերենով լույս տեսնող «Լեվանտ հերալդ»-ի բավական տպավորիչ անդրադարձից կարմիր մատիտով ընդգծված էին հետևյալ բառերը. «կոչված է բացառիկ արժեքով մի ողբերգու լինելու»:

Պարզվեց, որ ժամադրությունը նշանակված է «Միություն և Առաջադիմություն» կուսակցության ակումբի առջև: Դա չքեզ մի առանձնատուն էր՝ խնամված պարտեզի մեջ, որ հավանաբար բռնագրավել էին սուլթանի որևէ հովանավորյալից: Քենանը երկար չսպասեցրեց: Կառքից իջավ, արագ քայլերով մոտեցավ և ողջագուրվեց:

- Ո՞ւր ես կորել, - մեղադրական շեշտով հարցրեց նա: - Կարոտել ենք քեզ, այնքա՜ն բան կա խոսելու...

Դեմքից անկեղծություն էր թափվում, անխառն ջերմություն: Շարժումների մեջ վճռականություն էր հայտնվել, նմանվել էր այն մարդկանց, որ չափազանց սեղմ ժամկետում պիտի հասցնեն մի քանի հույժ կարևոր գործեր կատարել: Նրանք ժամանակ չունեն երկար-բարակ խոսելու, ուստի միանգամից անցնում են բուն գործին:

Մտերմական մի շարժումով Ռուբենի թևը մտավ և առաջնորդեց դեպի մուտքը: Այստեղ նրան բարձրաստիճան մի զինվորական բարևեց և պատկառաչուք տեսքով մի պարոն: Ընդունարանում ևս մի քանի հոգի բարևեցին: Անմիջապես երևաց, որ հարգանք ու պատիվ է վայելում կուսակցության մեջ:

Անթերի հագնված բարետես երիտասարդ մոտեցավ նրանց և առաջնորդեց սրահ: Այստեղ այցելուները ցածրադիր սեղանների շուրջ նստած զրուցում էին: Եվրոպական զգեստներ հագած սպասավորները, հեզաճկուն և բարեկիրթ շարժումներով սուրճ, աղանդեր և խմիչք էին մատուցում:

- Ես չգիտեի, որ դու հայերեն լրագրեր ես կարդում, - ասաց Ռուբենը, երբ տեղավորվեցին անկյունում դրված սեղանի մոտ:

- Հայերեն լրագրե՞ր... Հա՜, ներկայացումը նկատի ունես... Ոչ, թուրքերեն լրագրերից եմ իմացել և ուրիշ աղբյուրներից: Օրինակ՝ ավստրիական դեսպանատնից: Ռազմական կցորդի կինը կնոջս բարեկամուհին է: Ի դեպ, նա հիացած էր ներկայացումով և ասում էր, որ այդ դերասանը... Ինչպե՞ս էր անունը...

- Փափազյան:

- Հա, Փափազյան... Ասում էր, որ անգամ Վիեննայում այդպիսի դերասան չկա... Բացի այդ, մեր կուսակցության պատասխանատու ընկերներից մի քանիսն էին ներկա եղել, նրանք էլ հիացած էին, հատկապես քո ելույթով:

- Նրանք հայերեն գիտե՞ն:

- Նրանցից ընդամենը մեկն է հայերեն հասկանում, սակայն գիտե՞ս ինչ էին ասում. որ առանց հայերեն իմանալու էլ բոլորը տպավորված էին քո խոսքով, և որ հատկապես կանայք էին ոգևորված ծափահարում... Մի՞թե չնկատեցիր բեմից:

- Ախտեղից այդպես մանրամասն չէր երևում:

- Եվ գիտե՞ս, թե ինչ ասացին մեր ընկերները. որ դու փայլուն հռետոր ես, որ կարող ես ազդել, ուղղություն տալ զանգվածներին, նույնիսկ եթե ասածներդ չեն հասկանում:

- Տարօրինակ է, նույնիսկ առանց հասկանալու...

- Այո, ասում էին, որ դու կարողանում ես ունկնդիրներին համակել գաղափարով և որ հիմա մեր կուսակցությանը քեզ նման մարդիկ են պետք:

- Բայց ես ցանկություն չունեմ որևէ կուսակցության անդամագրվել:

- Ինձ սխալ հասկացար, խոսքն այդ մասին չէ... Ուրիշ ծրագրեր կան, չէ որ սահմանադրությունը նորից կյանք առավ, հիմա պիտի ամեն ինչ օրենքով լինի, Օսմանյան կայսրությունը պիտի օրինականության երկիր դարձնենք, իսկ դրա համար անհրաժեշտ է ոչ միայն անկաշառ դատավորներ ունենալ, այլև ազնիվ, հայրենասեր և բանիմաց մարդկանցից կազմված խորհրդարան՝ մեջլիս:

- Լավ բաներ ես ասում, Քենան, բայց հավատո՞ւմ ես, թե դա հնարավոր է իրականացնել այս երկրում:

- Նորից քո հոռետեսությունը... Եթե կարողանանք մեր խորհրդարանը քեզ նման մարդկանցով կազմել, ապա Թուրքիան տասը տարի հետո աշխարհի ամենաառաջադեմ երկիրը կդառնա:

- Իսկ եթե չկարողանա՞ք կազմել:

- Պիտի կարողանանք, արդեն կազմվում է, արդեն բանակցություններ ենք սկսել անհրաժեշտ մարդկանց հետ, և կարող եմ ասել, որ հայերից մի քանի նշանավոր անձնավորություններ համաձայնել են իրենց թեկնածությունն առաջադրել:

- Ովքե՞ր են:

- Զոհրապ էֆենդին, դոկտոր Տաղավարյանը, Վարդգեսը... Դու լիովին արժանի ես նրանց կողքին ներկայացվելու և վստահ եմ, որ կշահես... Մենք էլ կօգնենք, մենք շահագրգռված ենք, որ դու մեբուս* ընտրվես, քանզի ուզում ենք, որ հայերի լավագույն զավակները մասնակցեն երկրի կառավարմանը: Մի՞թե սա քեզ չի ոգևորում:

- Գաղափարն ինձ ոգևորում է, սակայն ցավոք չեմ կարող ընդունել ձեր առաջարկը, քանի որ շուտով պիտի վերադառնամ Լոզան՝ ուսումս շարունակելու:

- Բավական է, որքան սովորեցիր, մոռացիր այդ Լոզանը... Այստեղ բազմաթիվ անելիքներ կան, կարևոր դիրքեր կան գրավելիք, քեզ համար կմիջնորդեմ ուր որ պետք է, մի լավ պաշտոն կգտնենք, ապրիր ու վայելիր:

- Տարօրինակ բաներ ես խոսում, մի՞թե մեր երկրին բժիշկներ պետք չեն: Ինձ քիչ մնաց, որպեսզի վկայականս ստանամ, կգամ և այդ ժամանակ էլ վերջնականապես կհաստատվեմ Պոլսում:

- Գուցե իրավացի ես, բայց նկատի ունեցիր, սուլթանի մտերիմներին հեռացնում են ասպարեզից, բազմաթիվ յուղոտ պաշտոններ են ազատվում, հիմա շատ հեշտ է մի հարմար աթոռ գրավել, հետո կդժվարանա...

- Շնորհակալ եմ Քենան, բայց դու լավ գիտես, որ քաղաքական գործու-

* Պատգամավոր, դեպուտատ (թուրք.):

նեությունն ինձ չի հետաքրքրում, բացի այդ, լավ մասնագիտությունը հազար պաշտոն արժե:

- Ափսոս... Այս օրերին քանի՜-քանի անարժանների լավություններ արեցի, քեզ էլ կօգնեի:

- Ինչո՞ւ ես այդպես ուզում օգնել ինձ:

- Ինչպե՞ս թե, դու հավանաբար մոռացել ես, բայց ես չեմ մոռանա երբեք, թե ինչպես դժվար պահին օգնեցիր ինձ... Ես պարտական եմ քեզ:

- Եղածը մի բան չէր, Քենան... Բայց եթե ուզում ես անպայման վարձահատույց լինել, ապա կյանքն առջևում է, դեռ առիթներ կլինեն:

Քենանին հրաժեշտ տալուց հետո որոշեց այցելել «Սուրհանդակի» խմբագրություն: Օր չկար, որ այդ հասցեով իրեն ուղղված նամակներ չգային: Բացի այդ թերթի տպաքանակն աճել էր, համապատասխանաբար շատացել էին գործերը, ուստի առիթը չէր փախցնում մի երկու ժամով այցելելու խմբագրություն, օրվա նորություններն իմանալու, նոր ծանոթություններ հաստատելու, հին ծանոթներին տեսնելու և, վերջապես, Գեղամ Բարսեղյանին օգնելու: Հարազատ մի մթնոլորտ կար, համատեղ գործ անելու հաճույքը մի անսպառ եռանդ էր ծնում, որն արդեն իր պտուղներն էր տալիս: Գիտեր, որ այս ամենն այնտեղ չի գտնելու:

Տուն վերադարձավ սովորականից ավելի ուշ և զարմանքով տեսավ, թե ինչպես ամբողջ ընտանիքը սեղանի մոտ հավաքված ինչ-որ հարց է քննարկում:

- Մի քիչ շուտ գայիր, որդիս, - ասաց մայրը: - Հյուրեր էին եկել քեզ տեսնելու, քիչ առաջ գնացին:

- Ի՞նչ հյուրեր, ովքե՞ր էին:

- Ռոդոստոյի «Պայքար» ակումբի նախագահ պարոն Միհրանիկ Լյուլեճյանը:

- Բայց ես նրան չեմ ճանաչում և ժամադրված չէի հետը:

- Ինքը քեզ լավ գիտի և ուզում էր անպայման խոսել հետդ:

- Ինչի՞ մասին պիտի խոսեր, - փորձեց գուշակել Ռուբենը: - Զլինի՞ ուզում է, որ դասախոսություն կարդամ իրենց համար:

- Ոչ, - ասաց հայրը, որ մինչ այդ լուռ լսում էր: - Դասախոսության խնդիր չկա: Նրանք ուզում են, որ դու մեր մեբուսը դառնաս մեջլիսում, Թրակիայի հայությունը ներկայացնես այնտեղ:

Ռուբենը քահ-քահ ծիծաղեց:

- Իսկ չասացի՞ն, դա իրե՞նց ցանկությունն է, թե՞ դրդել են... խորհուրդ տվել:

- Այդ մասին խոսք չեղավ, - ասաց ավագ եղբայրը: - Բայց դա ի՞նչ կարևոր է, եթե եկել են, նշանակում է ուզում են, և ես կարծում եմ, որ լավ գաղափար է:

- Ոչ, Քերոբ, իսկապես կարևոր է, մանավանդ որ այսօր՝ կեսօրին նույն առաջարկով ինձ դիմեց «Միություն և Առաջադիմություն» կուսակցության հեղինակավոր դեմքերից մեկը: Նա բացեիբաց հայտնեց, որ իրենք շահագրգռված են իմ թեկնածությամբ և որ ամեն ինչ կանեն, որպեսզի ես ապագա խորհրդարանում լինեմ:

- Համաձայնեցի՞ր, - հարցրեց եղբայրը:

- Ոչ, մերժեցի:

- Շա՜տ իզուր, - դժգոհեց Քերոբը: - Ինչպե՞ս կարելի էր այդպիսի առիթը բաց թողնել: Հիմա ամեն ինչ նրանց ձեռքին է, նրանք իսկապես քեզ մերուս կդարձնեին, և դա հոյակապ կլիներ բոլորիս համար, դու կօգնեիր մեզ, մեր բոլոր գործերը կշտկեինք... Հիմա ամեն մի թղթի համար պիտի կաշառք տաս: Ափսո՜ս... Դեռ ուշ չէ, գուցե համաձայնեի՞ր:

- Ոչ, Քերոբ, իմ վճիռը վերջնական է: Ինձ համար հիմա ամենակարևորն իմ դասերն են, բժշկի իմ վկայականը:

- Ճիշտ ես մտածում, զավակս, - խոսեց Հովհաննես աղան: - Այդ ակումբի նախագահը շատ լուրջ մարդ չէ և նրա առաջարկն ինձ բնավ չոգևորեց, բայց ասացի, թե դա քո որոշելիք բանն է: Իսկ հիմա, երբ իմացա, որ երիտթուրքերն են շահագրգռված, ապա ինչպե՞ս ասեմ... Դա ինձ դուր չեկավ:

- Ի՞նչ կա զարմանալու, - բացականչեց եղբայրը: - Իշխանությունը հիմա իրենց ձեռքին է, ուզում են երկիրը փոխել, հայերին սիրաշահում են:

- Մի շտապիր, Քերոբ, համբերիր, սպասիր տեսնենք, թե ինչ են փոխելու, ինչպես են փոխելու... Առայժմ միայն խոստումներ են տալիս:

- Մեկ օրում այս հսկա երկիրը չես փոխի:

- Համաձայն եմ, Քերոբ, բայց զգուշացիր խոստումներ շռայլողից... Հետո ես մի բան գիտեմ. այն ինչ լավ է Թուրքի համար, չի կարող լավ լինել հայի համար... Այնպես որ ճիշտ ես որոշել, Ռուբեն... Մի քիչ էլ մնա, որպեսզի կարոտներս առնենք, հետո վերադարձիր և ուսումդ շարունակիր:

* * *

- Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ, - աղաղակեց Կոնրադ Ցոլլերը՝ տեղից վեր ցատկելով: - Այդ ի՞նչ մեռելային տխրություն է դեմքիդ: Երեկ ավելի ճիշտ խաղացիր այդ տեսարանը, դու վերացած էիր, երանություն էր դեմքիդ, որովհետև գնում ես հավերժի մեջ միանալու քո սիրեցյալին, իսկ այսօր դու մահ ես խաղում, տխրություն, վիշտ... Այդպես սպանում ես ամեն ինչ... Ոչ մի դեպքում չի կարելի մահ խաղալ...

Երրորդ օրն էր դամբարանի տեսարանն էին փորձում: Առաջին երկու օրը բեմադրիչը գոհ էր, նույնիսկ չափազանց գոհ: Ըստ որում ամեն ինչ բնական ստացվեց, գրեթե առանց ցուցմունքների: Բեմադրիչը միայն ասաց. «Հիշո՞ւմ ես այն կտորն ինչպես արտասանեցիր, այդպես էլ խաղա, ազատ, ինչպես սիրտդ կհուշի»: Բայց դա որոգայթ էր: Ի՞նչ է նշանակում «այդպես»: Այդպես ինչպե՞ս... Մանավանդ որ սիրտն այդ պահին նրան ոչինչ չէր հուշում:

Առաջին օրն ինքն էլ չզգաց, թե ինչպես մտավ դերի մեջ, բառն իր հետ վիճակ բերեց, գործողություն, դիմախաղ, և ոգևորության մի ալիք նրան կլանեց, տարավ, և դա մի երջանիկ ոգևորություն էր, սիրո պես զգլխիչ:

Հիմա ինչպե՞ս խոստովանի, որ այս պահին չի կարողացել թամբել այդ ալիքը, այլ խեղդվող ձկան պես ափին ընկած մի կաթիլ ջուր է երազում, որպես-

զի շնչահեղձ չլինի: Իսկ դեմքին, այո, բնական է, որ մեռելական տխրություն լինի, քանզի այն նամակը, որն այսօր առավոտյան ստացավ, ավելի լավ զգացումներ չէր կարող արթնացնել:

Օսմանյան դրոշմանիշներով ծրարը սպասուհին հանձնեց նախաճաշից հետո, որովհետև, վերջին մեկ տարվա ընթացքում, արգելված էր նախաճաշի ժամանակ որևէ բան կարդալ սեղանի մոտ՝ լրագիր, նամակ, թե գիրք: Եվ հետո, այլևս չէր հսկում փոստատարի առավոտյան այցելությունը:

Մոտավորապես կռահում էր նամակի բովանդակությունը, ուստի որոշեց հաճույքը վայելել առանց մյուսների ներկայության, իր սենյակում: Եվ լավ է, որ այստեղ եկավ, որովհետև մոր մշտական հարցին («Ի՞նչ է գրում Ռուբենը»:) չպիտի կարողանար որևէ պատասխան տալ: Մայրը հարցնում էր իմիջիայլոց, երբեմն նույնիսկ մինչև վերջ չլսելով աղջկա պատասխանը: Բայց ինքը չպիտի կարողանար կեղծել ձայնը, դեմքի արտահայտությունը, և մայրը պիտի ամեն ինչ իմանար... Այլապես ինքն ի՞նչ կերպ պիտի բացատրեր, թե ինչ է կատարվում, թե ինչու է տխուր, թե ինչու բերանը բացելու ցանկություն անգամ չունի...

Հարվածն անսպասելի էր և անգութ: Համոզված էր, որ ամենայն արդարությամբ վաստակել է խրախուսված լինելու իրավունքը, որ իսկապես նշանակալից մի բան է արել և չնայած որ մենակ է արել, բայց իրենց երկուսի հաղթանակն է, ուստի երկուսով պիտի կիսեն ուրախությունը... Այնպես, ինչպես համբույրը, ինչպես սերը մարմնական... Սակայն երբ կիսող չկա, երբ մյուս կեսը հրաժարվում է, արգելքն ու մեղադրանքը շպրտում ապտակի պես, համբույրը մնում է չտրված ու չստացված, սերը դառնում է լեղի, և ամեն ինչ իմաստազրկվում է, նույնիսկ ապրելու ցանկությունն է կորչում... Մինչդեռ ինքը պատրաստվում էր մի նամակ գրել այսօր և պատմել, թե ինչ հաջող են ընթանում փորձերը, որ բոլորը հիացած են, իսկ ծնողներն անհամբեր սպասում են, թե երբ պիտի գա պրեմյերայի օրը:

Փակվել էր սենյակում և ոչ մեկին չէր ուզում տեսնել, ոչ մի տեղ չէր ուզում գնալ, մանավանդ չէր ուզում վերադառնալ այն աշխարհը, որից կարծես կարողացան փրկվել՝ իրար գտնելով, միմյանց հայտնաբերելով: «Քեզ իմ մեջ եմ զգում», - գրել էր Ռուբենը երկու ամիս առաջ՝ մինչև Պոլիս մեկնելը: Հետո գրեց. «Դու ես եմ»: Զգում էր, որ այս խոսքերը ճշմարիտ են, քանզի ինքն էլ այդպես կգրեր, քանզի այդ բառերը հարազատորեն ներկայացնում էին այն հազվագյուտ հոգեվիճակները, որ պարգևում են մեզ գեղեցիկի և վեհի մշտական որոնումները: Եվ երբ բեմի վրա ոգևորված արտասանում էր՝ աչքի ծայրով տեսնելով բեմադրիչի և դերասանների հիացական դեմքերը, նույնացման, երկուսը մեկի մեջ միավորվելու այդ պահն ապրեց, «նրան» իսկապես զգաց իր մեջ: Ահա ինչու չէր ուզում սենյակից մենակ դուրս գալ, մենակ քայլել քաղաքի փողոցներով, մենակ բարձրանալ բեմ, մենակ խաղալ... Ինչպե՞ս չի հասկանում, որ ինձ արգելելով՝ արգելում է իրեն... Նրանց միջև վաղուց տարածություն չկա, նրանք ապրում են միասին, միաժամանակ, և ամեն մի լավ բան ստեղծվում է երկուսի ջանքերով: Եթե չլինեին Ս. Ֆրանսուայի հրապարակում գողացված հայացքները, դաստիարակ-օրիորդների զգոն հսկողության տակ մի

կերպ փոխանցված երկտողերը, նրանց պատճառած հրճվանքները, սպասումները, տառապանքները, արցունքները, այնուհետև Խաչելության մոտ անցկացված սիրո սրբազան արարողությունները, դրանց հաջորդած հուզումնալից ոդիսականը, վերջապես այս հսկա նամակագրությունը, որ երեք մեծ տուփի մեջ հազիվ է տեղավորվում, եթե չլիներ այս ամենը, չէր լինի նաև բեմական այս մարմնավորումը... Եվ երբ իր մեջ զգում էր Վերոնայի դժբախտ աղջկան, երբ ինքը դառնում էր նա, ապա այդ պահերին, այնտեղ՝ Պոլսում, պիտի նա անպայման ինչ-որ բան զգացած լիներ, նրա մարմնի, նրա հոգու միջով սրբազան թրթիռներ պիտի անցած լիներին: Այո՛, համոզված էր, որ այդպես է, որովհետև պատահել էր, որ օրվա տարբեր ժամերին, հարթմնի, անսպասելիորեն անիրական պատկերներ էին հայտնվել նրա առջև կամ երանավետ ինչ-որ սարսուռներ էր զգացել... Հետո իմացել էր, որ օրվա նույն պահին Ռուբենն այնտեղ մի գեղեցիկ բանաստեղծություն կամ հրաշալի մի նամակ է գրել իրեն: Ստուգելու համար սկսեց գրի առնել իր տեսիլքների ու սարսուռների պահերը, օրը, ժամը և Ռուբենին խնդրեց, որպեսզի իր նամակների տակ ոչ միայն ամսաթիվն ու շաբաթվա օրը նշի, այլև ճշգրիտ ժամը, և ստուգելուց հետո համոզվեց, որ իր զգացողությունները պատահական չեն եղել: Երբ Էրֆուրտում հանդիպելիս պատմեց այդ մասին, նա ժպտաց և ասաց, որ շատ հավանական է: Ասաց նաև, որ ինքը վաղուց, իրենց ծանոթանալուց առաջ, օրվա ընթացքում վերացումի հազվագյուտ պահեր էր ունենում... «Այդ ես էի քեզ փնտրում, - ասաց: - Հիմա տեսնո՞ւմ ես, որ Աստված մեզ ստեղծել է իրար համար, և ես քեզ փնտրում էի»: Հետո հարցրեց Ռուբենին. «Իսկ հիմա լինո՞ւմ են նման պահեր»: «Շատ հազվադեպ, - պատասխանեց նա: - Հիմա ավելի շատ բանականության ճանապարհով է գալիս իմ ոգևորությունը, սակայն քոնն ավելի անսխալ է, քանզի կանայք ավելի մոտիկ են բնությանը»: Մի՞թե միայն բանականությամբ, ասել է թե՝ ուղեղով է առաջնորդվել այս նամակը գրելիս, այս դաժան veto-ն ազդարարելիս, սիրտը հապա չխոսե՞ց... Չէ՞ որ սա ինքնասպանություն է, այո, իրեն սպանեց, վերացրեց այն գործի մեջ, որը միասին էին ստեղծել...

Մայրը դուռը ծեծեց և հիշեցրեց, որ ուշանում է փորձից: Ինչպե՜ս չէր ուզի այդ փորձին գնալ... Ի՞նչ սրտով գնա... Ներսում ինչ-որ բան փշրվեց, որը հավանաբար վերականգնել չի լինի այլևս: Կուզեր այսպես փակված մնալ սենյակում և միայն կարդալ կամ նվագել: Սակայն հիմա պիտի թաքցնի իր անկյալ տրամադրությունը, դիմակ հագնի, ձևացնի, թե ոչինչ չկա... Բայց ինքն ատում է այդ դերասանությունը, չի կարող, չի ուզում կեղծել, քանզի դա դեմ է ազատ, բնական ապրելու իր սկզբունքին: Ահա ինչու էր ասում, թե մարդկանց մեջ չի կարող ապրել: Նրանք ստիպում են, որ իրենց ուզածով լինես, դեմ գնաս հարազատ բնությանդ:

Չէր ուզում գնալ փորձի, որովհետև այլևս չգիտեր, թե ինչպես պիտի խաղա այն տեսարանը, որը նախորդ օրերն այդպես հոյակապ կատարեց: Չգիտեր, թե ինչպես պիտի կանգնի, ինչպես շարժվի, անգամ ինչպես արտասանի այն տեքստը, որը ծայրեծայր անգիր էր արել: Բոլորը լքել էին նրան, մնացել էր մենակ, անգամ Ջուլիետն էր «դուրս եկել» իր միջից:

...Ընդունեց, որ բեմադրիչն իրավացի է: Մյուսների հայացքից հասկա-

ցավ, որ համաձայն են նրա հետ: Մի տեսակ ցավակցական արտահայտություն կար նրանց դեմքին: Լավ է Ցոլլերը բարի եղավ և ընդմիջում հայտարարեց: Հետո մոտեցավ, տարավ մի կողմ և, ուշադիր նայելով, հարցրեց.

- Ի՞նչ է պատահել, հիվա՞նդ ես:

- Գիշերը լավ չեմ քնել, սոսկալի գլխացավ ունեի:

- Միայն դա՞ է, ուրիշ պատճառ չկա՞:

- Չէ... Ուրիշ պատճառ չկա:

- Եթե գլխացավն է պատճառը, ոչինչ... Ինձ թվաց, թե տրամադրությունդ ուրիշ բանից է ընկել...՝

Գլուխը կախեց, որովհետև Ցոլլերն անհանգիստ, հոգատար, բայց թափանցող հայացքով նայում էր մինչև հոգու խորքը:

- Եթե գլխացավն է պատճառը, ոչինչ, կանցնի... Հիմա գնա տուն, ասպիրին խմիր և հանգստացիր... Բայց եթե ուրիշ պատճառ կա, վիճակը դժվարանում է...

Լուռ էր, որովհետև եթե խոսեր, պիտի ճշմարտությունն ասեր, սակայն չէր ուզում ասել:

- Լավ, չեմ պնդում, - ասաց Ցոլլերը: - Եթե նույնիսկ ուրիշ պատճառ կա, ապա քո այս տրամադրությամբ իմաստ չունի խոսել...

- Ես հավանաբար այլևս չգամ փորձերին, - հազիվ արտաբերեց ինքը:

Ցոլլերը չցնցվեց: Ըստ երևույթին սպասում էր նման մի պատասխանի: Պարզապես մի քայլ ետ գնաց, ասես՝ ավելի ամբողջական նայելու իրեն և թափանցող հայացքն ավելի խորքերը հասցնելու:

- Այդքան շուտ հուսահատվեցի՞ր, այդպես միանգամից անձնատուր ես լինո՞ւմ:

- Ոչ, ոչ, - հազիվ թոթովեց ինքը:

- Անկեղծ ասա. իմ դիտողությունը քեզ վշտացրե՞ց:

- Օ, ի՜նչ եք ասում, - պատասխանեց՝ վերջապես բարձրացնելով գլուխը և շիտակ նայելով նրա աչքերին: - Դուք իրավացի էիք:

- Հապա ինչո՞ւ այլևս չես ուզում փորձերին գալ:

Ամենադժվարն այդ հարցին պատասխանելն էր: Մեկ բառով չէր կարող ասել: Սակայն իրավիճակը բացատրություն էր պահանջում: Խոսելու, պարզաբանելու, գուցեև արդարանալու ոչ մի ցանկություն չուներ, ուստի անխոս ձեռքի պայուսակից հանեց առավոտյան ստացած նամակը և պարզեց բեմադրիչին: Վերջինս պերճախոս հայացքով օսմանյան դրոշմանիշը նայեց, հետադարձ հասցեն և, նամակը կարդալով, մեղմորեն հարցրեց.

- Նա իրավունք ունի՞ քեզնից այսպիսի զոհաբերություն պահանջելու:

- Մենք հավերժական սեր ենք խոստացել իրար:

- Այո, բայց ոչ ստրկություն... Կներես՝ սա թուրքական բռնություն է:

- Բայց նա թուրք չէ, հայ է:

- Ավելի վատ, ուրեմն ստրկացված է բարբարոսի կողմից:

Հիմա տեսավ, որ նամակը չպիտի ցույց տար. իրավիճակը պարզելու փոխարեն ավելի խճճեց:

- Նա դեռ ամուսինդ չէ, - շարունակեց Ցոլլերը, - և արդեն նման պա-

հանջներ է դնում, իսկ երբ ամուսնանաք, կարգելի նաև դաշնամուր նվագել, նկարել, նույնիսկ կարդալ...

- Ոչ, ոչ, նա այդպիսին չէ, նա առաջադեմ անձնավորություն է, վերջապես, տաղանդավոր բանաստեղծ է...

- Այո, կներես, իսկապես երևում է, որ անտաչ մեկը չէ... Բայցևայնպես, վերջնագիր է ներկայացրել քեզ՝ բեմ կամ ընտանիք...

- Իսկ մի՞թե այստեղ նույնը չէր լինի:

- Այո, թերևս դժվար է նրան մեղադրել... Իսկ դու ի՞նչ ես մտածում, ո՞րն է քեզ համար ավելի կարևոր՝ բե՞մը, թե՞ ընտանիքը:

- Ես ուզում եմ երկուսն էլ ունենալ՝ և՛ բեմը, և՛ սերը: Կամ երկուսը միասին կամ ոչինչ:

- Այսինքն, եթե ճիշտ հասկացա, չպիտի զիջես նրա պահանջներին և պիտի շարունակես փորձերին մասնակցել:

- Հավանաբար այո... Գուցե մեղքն իմն է, որ այսպիսի կտրուկ պահանջներ է դրել: Երևի ուրիշ կերպ պիտի դրեի, բացատրեի, որ սա մեր սիրո շարունակությունն է, որ բեմը մեր սերը չի քանդի...

Ցոլլերն ուշադիր նայեց նրան:

- Վստա՞հ ես, որ կկարողանաս նրան համոզել:

- Վստահ եմ, քանի որ երկուսս նույն բաներին ենք հավատում:

- Սակայն շատ դժվար է լինելու...

- Գիտեմ, բայց ես ուզում եմ պահպանել և՛ բեմը, և՛ նրան:

Ցոլլերը, որ հիացական հայացքով նայում էր աղջկան, հայրական մի համբույր դրոշմեց նրա ճակատին և, կարծես խրատելով, ասաց.

- Ինձնից քեզ մի խորհուրդ. ազնիվ մնա, մաքուր մնա, բայց մի քիչ խորամանկ եղիր, աշխատիր ուշացնել պատասխանը... Հնարավորին չափ ուշ... Հանուն ձեր սիրո եմ ասում: Իսկ պատասխանելիս էլ խոսիր զանազան երկրորդական բաներից, գուցե նույնիսկ ոչինչ չգրես փորձերիդ մասին... Թող սպասի, թող մի քիչ մտմտա իր գրած նամակի վրա: Գուցե բարկությունն անցնի, գուցե կարծիքը փոխի: Ամեն ինչ հնարավոր է:

Աղջիկը երախտագիտությամբ նայեց նրան և ասաց.

- Կներեք, որ այսօր չստացվեց:

- Օ, մի մտահոգվիր: Այդպիսի բաներ պատահում են, անգամ փորձված դերասանների հետ:

- Իսկ կկարողանա՞մ նորից նախկին օրերի պես խաղալ:

- Նույնիսկ ավելի լավ կխաղաս, համոզված եղիր: Հիմա նորից կերպարի մեջ մտար:

* * *

Ծանուցումը ռազմական նախարարությունից էր: Ոմն գնդապետ Նուրի բեյ պահանջում էր ներկայանալ զորակոչի հանձնաժողովին: Նման թուղթ արդեն ստացել էր մեկ անգամ՝ երեք տարի առաջ, երբ պատրաստվում էր մեկնել

Լոզան: Այն ժամանակ հարցը հեշտ լուծվեց. Հովհաննես աղան քառասունհինգ ոսկի վճարեց, այսպես կոչված բեդել գնելու համար, որն ազատում էր զինվորական ծառայությունից: Պարզվեց, որ հիմա էլ նույն գումարը մուծելով կարող էր օձիքն ազատել օսմանյան բանակի զինվոր դառնալու պատվից:

Որոշեց գործը կարճ կապել և նշանակված օրվանից առաջ հանդիպել գնդապետին: Վերջինս բարյացակամ ընդունեց «զորակոչիկին» և հարցրեց, թե ինչով կարող է օգտակար լինել:

Ռուբենը ցույց տվեց ծանուցումը, հայտնեց, որ ուսանող է, որ երկու տարի է մնացել վկայականն ստանալուն, ուստի պատրաստ է բեդելը վճարել, քանի որ չէր ուզի կիսատ թողնել ուսումը:

- Արդեն երեք տարի սովորել եք, էֆենդիս, - բարեհամբույր ժպիտը դեմքին պատասխանեց գնդապետը: - Այդքանը լիուլի բավական է մեզ:

- Բայց դեռ շատ բան կա սովորելու, բացի այդ, առանց վկայականի իրավունք չունեմ որպես բժիշկ աշխատելու:

- Մեզ մոտ կարող եք աշխատել, բանակին բժիշկներ են պետք:

- Իրավունք չունեմ, բեյս:

- Անհոգ եղեք, մենք կտանք այդ իրավունքը, - շարունակ նույն ժպիտը դեմքին պատասխանեց գնդապետը:

- Շնորհակալ եմ այդպիսի վստահության համար, սակայն կգերադասեի փրկագինը վճարել և մեկնել Շվեյցարիա:

- Ցավում եմ, էֆենդիս, սակայն իրավունք չունեմ ձեզ փրկագնով ազատելու, ձեր ազգանունը հատուկ ծառայությունների ցուցակում է:

Գնդապետի մոտից դուրս եկավ մռայլ տրամադրությամբ: Բոլոր ծրագրերը տակնուվրա էին լինում՝ ուսում, մասնագիտություն, սեր, ընտանիք... Կանգնել էր մայթին շլմորած և չգիտեր, թե ուր գնար, ինչ աներ, երբ հանկարծ, գյուտ արածի պես, ձեռքը ճակատին խփեց. ինչպե՞ս էր մոռացել... Քենա՛նը... Ահա միակ մարդն իր ծանոթներից, որ կարող էր հեշտությամբ կարգադրել այս հարցը, մանավանդ որ վերջերս զրույց ունեցավ հետը, նա իր պատրաստակամությունը հայտնեց, որևէ կերպ երախտահատույց լինելու:

Որոշեց չհապաղել և անմիջապես նրա մոտ գնալ, մանավանդ որ երիտթուրքերի ակումբը հեռու չէր: Եվ իսկապես, ընդամենը մի քանի րոպե էր անցել, երբ դեմ առ դեմ նստած էին:

- Նուրի բե՞յը, - ժպտալով հարցրեց Քենանը: - Բախտդ բերեց, երիտասարդ տարիներին հորս համհարզն էր: Իմ խնդրանքը չի մերժի, հայրս նրան այնքա՛ն է օգնել:

Առաջարկեց գործը չթողնել վաղվան և անմիջապես գնալ ռազմական նախարարություն: Գնդապետը նրանց տեսնելով ուղղակի շողշողաց.

- Ռուբեն էֆենդի, ինչո՞ւ չասացիք, որ Քենանը ձեր բարեկամն է...

Տեղից ելավ, ողջագուրվեց Քենանի հետ, սուրճ առաջարկեց և քաղցր զրույց սկսեց նրա հետ: Խոսում էին իրենց կուսակցության խնդիրներից, ապա անցան մեջլիսի առաջիկա ընտրություններին, կառավարական պաշտոնները բաժանելուն: Իր գոյությունն ասես մոռացել էին: Գնդապետն ակնհայտորեն սի-

բաշահում, նույնիսկ քծնում էր երիտասարդ հյուրին: Մոտ մեկ ժամ զրուցելուց հետո, երբ արդեն հրաժեշտ էին տալիս, գնդապետը նույն սիրառատ ժպիտը դեմքին ասաց.

- Հարցը լուծված է, Քենան էֆենդի, ձեր ընկերը կգնա Շվեյցարիա՝ ուսումը շարունակելու... Մեկ շաբաթ հետո թող գա՝ ծանուցման մեջ նշված օրը, այդ ձևականությունները կանենք և թուղթը կտանք:

Յոթ օր հետո նորից գնդապետի սենյակում էր: Դարձյալ ջերմորեն ընդունեց, սուրճ հյուրասիրեց, ոգևորված խոսեց երկրի բարեփոխումների մասին, իր համակրանքը հայտնեց հայերի հանդեպ՝ հատուկ ընդգծելով, որ երկիրն առանց հայերի չի կարող առաջադիմել, և այլն, և այլն: Զրույցը գնալով երկարում էր, ուստի հարկ համարեց գնդապետին հիշեցնել այցելության հիմնական նպատակի մասին: Վերջինիս դեմքը նորից շողշողաց.

- Հարցը լուծված է, Ռուբեն էֆենդի, արտոնագիրն արդեն ստորագրված է:

- Իսկ կարո՞ղ եմ ստանալ:

- Իհարկե, դա ի՞նչ հարց է, բարի եղեք անցնել կողքի սենյակ և քառասունհինգ ոսկի վճարել:

Կողքի սենյակում համազգեստ հագած քարտուղարը վաթսուն ոսկի գանձելուց և անդորրագիրը հանձնելուց առաջ, մեղավոր դեմքով մրմնջաց.

- Ներողամիտ եղեք, էֆենդիս, մոտս մանր դրամ չկա, որպեսզի տասնհինգ ոսկին վերադարձնեմ:

- Զավակներ ունե՞ք, - հարցրեց Ռուբենը:

- Այո, էֆենդիս, երեքը...

- Իմ կողմից նվերներ կառնեք նրանց համար:

Քարտուղարը, շնորհակալություն հայտնելով, տեղից ելավ և գնդապետի աշխատասենյակի դուռը բացեց նրա առջև:

- Ամեն ինչ կարգուկանոնով եղա՞վ, - հարցրեց գնդապետը:

- Այո, ամեն ինչ կարգուկանոնով էր, - պատասխանեց Ռուբենն անդորրագիրը մեկնելով նրան:

- Այդ ավազակը ձեզնից դրամ չչորթե՞ց:

- Ոչ, ոչ, ի՞նչ եք ասում:

- Մի թաքցրեք, էֆենդիս, եթե այդպիսի բան է եղել, ասեք, որպեսզի պատժենք, ապա թե ոչ սուլթանի թողած տխուր ժառանգությունից՝ կաշառակերությունից չենք կարողանա ազատվել:

- Ոչ, ոչ, բեյս, ամեն ինչ կարգին է:

- Դեհ, փառք Ալլահին, ուրեմն ձեր ամբողջ դրամը չառավ:

Ի՞նչ էր նշանակում. «ամբողջ դրամը»:

- Ոչ, բեյս, մոտս դեռ դրամ մնաց:

- Հրաշալի է, ուրեմն բարի եղեք անդորրագրին կցել նույնքան, որքան այն ավազակին վճարեցիք:

Այս բառերն արտասանվեցին հանգիստ, մեղրածոր մի ձայնով, հրեշտակային ժպիտով: Ի՜նչ իմաստուն էր Հովհաննես աղան, երբ առավոտյան, տնից դուրս գալուց առաջ, ասաց. «Վճարելիք գումարիդ կրկնապատիկը վերցրու հետդ, մի

քիչ էլ ավելին»: Հոր խորհրդին անսալով, վեց հատ քսան ոսկիանոց թղթադրամ վերցրեց: Կենն արդեն չկար: Մյուս կեսի գլխին էլ ամպեր էին կուտակվել:

- Ասում եք նույնքան, որքան արտոնագրի համար եմ վճարե՞լ:

- Այո, ճիշտ այդքան և ոչ մի ղուրուշ ավելի:

Հետո, Ռուբենի վարանումը, թե զարմանքը տեսնելով, ավելացրեց.

- Հասկանում եք, այն քառասունհինգ ոսկին, որ քարտուղարի մոտ թողեցիք, պիտի մտնի պետական գանձարան, մինչդեռ մենք բազմաթիվ ծախսեր ունենք...

- Իհարկե հասկանում եմ, բեյս, - պատասխանեց Ռուբենը և մնացած երեք թղթադրամները հանելով մեկ առ մեկ դրեց սեղանին: Բառացիորեն երեք վայրկյան հետո արտոնագիրը հանձնվեց նրան: Այնուհետև գնդապետը, տեղից վերկենալով և այցելուի ձեռքը սեղմելով ասաց.

- Ներողամիտ եղեք, էֆենդիս, ես հիմա անհետաձգելի գործեր ունեմ... Հուսամ բավարարված եք:

- Այո, իհարկե, բեյս, անչափ շնորհակալ եմ, - պատասխանեց Ռուբենը և շրջվելով քայլեց դեպի դուռը:

Թիկունքից հանկարծ գնդապետի ձայնը հնչեց.

- Մի րոպե, էֆենդիս, դուք տասնհինգ ոսկի ավել եք տվել:

- Բայց չէ որ ասացիք՝ վճարեմ այնքան, որքան քարտուղարին էի տվել:

- Այո..., - համաձայնեց գնդապետը: Հետո գլխի ընկնելով հռհռաց. - Հապա ասում էիք, թե ամեն ինչ կարգուկանոնով արվեց:

- Հիմա էլ նույնը պիտի ասեմ:

- Հա՜, հասկացա... Շատ ազնիվ եք, էֆենդիս, իսկ այդ ավազակին անպայման պետք է պատժել:

- Քանի որ այդքան ազնիվ եղաք, բեյս, կարո՞ղ եմ արդյոք մի հարց էլ ես տալ:

- Խնդրեմ, սիրով կպատասխանեմ:

- Եթե Քենանը չխառնվեր գործին հնարավո՞ր է... ինչպե՞ս ասեմ... գործն ավելի փափկությամբ կարգվեր:

- Այո, իհարկե: Գիտեք չէ՞, որքան ավելի բարձրից ես բռնում, այնքան ավելի թանկանում է:

Գնդապետին հրաժեշտ տալով դուրս եկավ փողոց և գրպանում մնացած մետաղյա դրամները հաշվեց: Գտավ, որ եղածը բավական է Ոսկեղջյուրի «Պտիշանում» նստելու սուրճի և օղու բաժակի առջև ու մտորելու այն մասին, որ այս երկրում որքան էլ բարձրագոչ հայտարարություններ անեն, միևնույն է ոչինչ չի փոխվելու:

* * *

Դժվարանում էր ասել՝ սա վերադա՞րձ է, թե հեռացում: Պահանջեց, որ ծնողները, եղբայրներն ու քույրերը կայարան չգան: Վերջին գիշերն անցկացրեց Հրանտ. Նազարյանցի տանը՝ նրա իսկ հրավերով: Տունը հեռու չէր Սիրքե-

ջիի կայարանից, որտեղից գնացքներ էին մեկնում Եվրոպա: Գրեթե արթուն գիշեր էր: Հրանտի իտալուհի կինը պարզապես խոհարարական հրաշքներ էր գործել, իսկ Թրակիո կարմիր գինին դյուրացրեց ոչ միայն մարսողությունը, այլև գրական բանավեճ խթանեց: Խոսում էր հիմնականում Հրանտը՝ օգտվելով տանտիրոջ և ավագի իրավունքից:

- Սա ոչ հեռացում է, ոչ էլ վերադարձ, - բարբառեց նա՝ մարգարեի նման պսպղացնելով պենսնեի ապակիները:

Զինական վառ նարնջագույն խալաթ էր հագել, գլխին դրել տիբեթական, թե մոնղոլական սրածայր գդակ, մի ձեռքով համբիչն էր բռնել, մյուսով՝ բամբուկի երկար ու նեղ խողովակի ծայրին հագցրած ծխամորճը, որը քաղցրավուն և մի քիչ էլ թմրեցնող ծուխ էր արձակում:

- Դա նույնն է, թե ես իմ բնակարանի մի ծայրից մյուսը գնամ:

Նրա չորս սենյականոց բնակարանը լցված էր հյուրերով՝ հիմնականում բանաստեղծներ, նկարիչներ, դերասաններ և խմբագիրներ: Բոլորը եկել էին Ռուբենի հրաժեշտի երեկույթին մասնակցելու:

- Երեկ նամակ ստացա Մարինետիից... Պատմում է, թե ինչպես երեք ժամում, դ՝Անունցիոյի հետ, աէրոպլանով Միլանից հասել են Հռոմ... Դուք պատկերացնո՞ւմ եք, թե դա ինչ է... Եվ գրում է, որ ավելի արագ ընթացող աէրոպլաններ կան... Այլևս վե՛րջ այս փակված, այս անշարժ կյանքին, այս գավառական նեղմտությանը... Շարժում է պետք երգել, հարափոփոխ կյանքը, տարածությունների անսահմանությունը...

- Բայց սավառնակը մշտապես չի կարող շարժվել, երկաթուղին էլ կայարաններ ունի, - նկատեց մի խմբագիր: - Հետևաբար շարժումը ժամանակավոր վիճակ է երկու կայարանների, երկու դադարների միջև:

- Այդպես էր մինչև այսօր, երբ ավելի շատ ժամանակ էինք հատկացնում դադարին, քան շարժումին, - շարունակեց մարգարեանալ Հրանտը: - Սակայն հիմա գլխիվայր շրջվում է ամեն ինչ... Մարդն այլևս չի կարող ծառերին նմանվել և արմատ ձգել մի տեղում... Պրոթեոսյան ոգին է դառնալու իշխողը... Լեզուները պիտի կորցնեն իրենց իմաստը, բառն այլևս չենք հասցնելու լսել, այն պիտի խտանա մեկ հնչյունի մեջ, իսկ առարկաներն՝ ընթացքի մեջ դիտված, կորցնելու են իրենց կերպերը և պիտի դառնան ընդամենը գունային բծեր...

- Դա հակառակ է իմ նկարագրին, Հրանտ, - ես սիրում եմ կայք հաստատել և հանդարտության, նույնիսկ անշարժության մեջ մտորել... Ես ուզում եմ իմ ներսի շարժումը զննել... Նկատե՞լ ես, թե ինչպիսի հանգստություն կա Բուդդայի դեմքին, թե ինչպես է անշարժ նստել, մինչդեռ որքա՜ն բան գիտի աշխարհի մասին:

- Այդ անշարժության պատճառով էլ Հնդկաստանը թաղվել է ասիականության ճահճի մեջ, իսկ մեզ էլ ոմանք ուզում են պահել գավառականության մահաթմբիրի մեջ... Մինչդեռ Եվրոպան սրընթաց գնում է առաջ, նայում է ապագային:

- Այդ ապագան շատ մշուշոտ է, Հրանտ, ես կասեի նույնիսկ արյունալի...

- Այդ արյունը, որ պիտի թափվի, նոր ծնունդ է բերելու, մի նոր կյանք...

Հրանտը ոգևորված էր, նա խոսում էր առօրյայից վերացած մարգարեի պես: Երիտասարդներից ոչ բոլորն էին ընդունում նրա մտքերը, սակայն համեստաբար լռում էին: Միայն Ռուբենն էր, որ փորձում էր երբեմն առարկել նրան:

- «Արյուն» բառն ղգույշ արտասանիր, Հրանտ, - ասաց Ռուբենը: - Դու ինձ ասա, թե երբ կերևաս մեր կողմերը:

- Հավանաբար եկող տարվա գարնանը... Բայց ավելի լավ է Վենետիկում հանդիպենք, կարծեմ չես եղել այնտեղ, գարնանը հոյակապ է...

- Որոշել ես վերջնականապես հաստատվել Վենետիկո՞ւմ:

- Լենան է ուզում, - արդարացավ Հրանտը: - Չի կարողանում մերվել Պոլսի կյանքին... Տե՛ս, այդ փորձությունը նաև քեզ է սպասվում, այնպես որ ավելի լավ է այժմվանից որոշես... ինչպե՞ս ասացիր քիչ առաջ՝ թե որտեղ ես կայք հաստատելու:

- Արդեն որոշված է, սիրելի Հրանտ, Պոլսում պիտի կայք հաստատեմ, և շատ կտխրեմ, երբ վերադարձիս քեզ այստեղ չտեսնեմ:

- Ճիշտ ես անում, Ռուբեն, ես էլ կմնայի, բայց կինս այլևս չի կարողանում թուրքերի մեջ ապրել..., - նա աչքի պոչով նայեց կողքի սենյակում հյուրերի հետ զրուցող Լենային և մտերմաբար շշնջաց. - Ասում է՝ չեմ կարողանում դրանց կերպարանքը հանդուրժել, դրանց լեզուն լսել, անգամ դրանց օդը շնչել...

- Հապա մենք՝ հայերս, ի՞նչ պիտի ասենք, որ հինգ հարյուր տարուց ավելի սոսկալի բաներ ենք հանդուրժում...

- Նույն հարցը ես տվեցի նրան, իսկ նա պատասխանեց, թե դա ձեր գործն է... Բայց ես կուզեի մնալ, մթնոլորտն իսկապես փոխվում է, այնպիսի հրաշալի գործեր կարելի է անել հիմա...

Հրաժեշտի կերուխումը երկարեց մինչև կեսգիշեր: Գնացքն առավոտ կանուխ էր մեկնում: Հյուրասեր տանտերերը նրան թողեցին առանձին սենյակում, որպեսզի գոնե մի քանի ժամ հասցնի քնել: Սակայն նա բաց աչքերով մտածում էր այն մասին, թե ինչպես պիտի հարմարվի Յաննին այստեղի կյանքին, եթե, իհարկե, կարողանա նրան հետ պահել թատրոնի արբեցումից:

* * *

«Մի՞թե հույս ունես, որ մեկ անգամ էլ մենք կհանդիպենք»:

Շեքսպիր, «Ռոմեո և Ջուլիետ»

Նրանից ոչ մի նամակ չկար: Սակայն պիտի լիներ, քանզի հատկապես խնդրել էր, որ հետագա թղթակցությունն ուղարկի Լոզան: Ստացվում էր, որ մեկ ամսվա ընթացքում ոչ մի նամակ չէր եկել: Սա չլսված, արտակարգ դեպք էր: Որոշեց ևս մի քանի օր համբերել, մանավանդ որ Սիլիվրիում զգուշացրել էր, որ եթե պատահմամբ այնտեղ նամակ գա իր անունով, անմիջապես ուղարկեն Լոզան: Բարեբախտաբար այս զարմանքը չդարձավ մտասևեռում և մանավանդ՝ տագնապ, քանզի չէին թողնում, որ մենակ մնա. հայ ուսանողները, ընկերներն

ու բարեկամները բառացիորեն պաշարել էին նրան: Բոլորին հետաքրքրում էր, թե իսկապես ինչ է կատարվում Պոլսում: Բացի այդ, առավոտից երեկո զբաղված էր համալսարանում և հիվանդանոցում: Սրան գումարվում էր Պոլսի բաղմաթիվ թերթերին ու հանդեսներին տրված խոստումները՝ հոդվածներ ու բանաստեղծություններ ուղարկել:

Սոսկալի զբաղվածությունն իսկապես օգնեց, որպեսզի ժամանակ չունենա լրջորեն մտահոգվելու Յաննիի լռությամբ: Ավելին՝ գուցե հնարավորություն տվեց երևույթին նայել սառը դատողությամբ և նույնիսկ օգտակար հետևություններ անել: Օրինակ՝ մտածեց, որ գուցե պետք չէր այդպես կտրուկ պատասխանել, այդպիսի դժվարին երկընտրանքի առջև կանգնեցնել արվեստով հմայված անփորձ աղջկան: Արդեն պատրաստ էր մեղքը քավել, աղջկա սիրտն առնող մի նամակ գրել, սակայն գոնե մի կես էջանոց նամակ, թեկուզ մի բացիկ ստանալուց հետո:

Վերադարձից արդեն երկու շաբաթ էր անցել, երբ վերջապես նամակ ստացավ: Հետաքրքրվում էր, թե ինչպես հասավ, ինչպես են ընկերները, դասերը, վիրահատությունները... Մինայի նկարն էր ուղարկել երեխայի հետ, գրում էր, որ մեկ ամիս հյուր էր իրենց տանը, որ սքանչելի երեխա է, որ ինքն էլ կուզեր այդպիսի երեխաներ ունենալ, և այլ անկարևոր բաներ: Սակայն ոչ մի խոսք Պոլսից ուղարկած իր վերջնագիր-նամակի, թատերական փորձերի, վերջապես իր ծրագրերի վերաբերյալ, ասես նամակը գրվել էր այդ դեպքերից շատ առաջ, մոռացվել էր դարակում և հիմա նոր ուղարկվել: Սակայն ամսաթիվն ուրիշ բան էր ասում: Տարօրինակ էր նաև նամակի ոճը. անշուք, անգույն, հարթ ու միապաղաղ... Եթե ձեռագիրը չճանաչեր, կարող է կարծեր, թե մեկ ուրիշն է գրել նրա փոխարեն: Առանց հապաղելու հեռագիր ուղարկեց՝ պահանջելով անմիջապես պատասխանել Պոլսից առաքված նամակին:

Հեռագրից հետո սկսեց օրերը հաշվել: Էրֆուրտից նամակը Լոզան էր հասնում առավելագույնը երկու օրում: Առավոտյան փոստը հսկում էր, որպեսզի առաջինը ստուգի ստացված նամակները և այդ պատճառով ուշանում էր դասերից: Փոստատարին նվեր խոստացավ, եթե առաջիկա հինգ օրում Էրֆուրտից նամակ բերի: Սակայն մեկ շաբաթ անցավ, տասը օր, բայց սպասվող պատասխանը չէր գալիս: Կարծես ծաղր լիներ. այդ օրերին նամակներ էր ստանում աշխարհի տարբեր ծայրերից, անգամ անծանոթ մարդկանցից, բայց այն միակը, որը տվյալ պահին ամենակարևորն էր, չէր գալիս: Տանը տեղ չէր գտնում, ամբողջ օրն անց էր կացնում հիվանդանոցում, որպեսզի մի բանով զբաղվեր և մեղմացներ այդ տանջալից սպասումը:

Այդ օրը հիվանդանոցում անելիք չուներ: Որոշեց զբոսնելով իջնել Ուշի և երեկոն անցկացնել լճափին: Կայարանի կողքով անցնելիս մտավ սպասասրահ և չվացուցակը նայեց: Քսան րոպե էր մնում Հայդելբերգ մեկնող գնացքի շարժվելուն: Նույն գնացքը, որով արդեն մեկ անգամ մեկնել էր Էրֆուրտ: Հաջորդ օրը կեսօրից հետո կլիներ այնտեղ: Առանց երկար-բարակ մտածելու տոմս գնեց և մի քանի րոպե չանցած, արդեն ընթանում էր դեպի հյուսիս:

Գտավ, որ շատ ճիշտ որոշում ընդունեց. զանազան ենթադրություններ

անելու, օրերն ու ժամերը հաշվելու փոխարեն գնալ ու հենց տեղում պարզել ամեն ինչ: Ավելի շուտ պիտի արած լիներ, չէ որ հիմա վտանգավոր ու վճռական շրջան է, ամեն մի օրը կարող է նրան այնպես հեռացնել, որ վերադարձն այլևս անկարելի լինի:

Նախորդ անգամվա պես տեղ հասավ առավոտյան տասն անց կեսին: Կանգնել էր կայարանում ու չգիտեր, թե ինչ աներ. հյուրանոցում սենյակ վարձե՞ր, թե Ապելների տուն գնար... Բայց որքանո՞վ պատշաճ կլիներ՝ առանց նախազգուշացման... Հետո ի՞նչ, որ նշանածն է... Կայարանամերձ հրապարակում տնկված, զանազան աֆիշներով պատած թատերական թումբը նրան հուշեց ուղղակի գնալ թատրոն: Սպիտակ թղթի վրա վառ կարմիր խոշոր տառերն ազդարարում էին, որ շաբաթ օրը երեկոյան, Էրֆուրտի քաղաքային թատրոնում տեղի կունենա Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության պրեմյերան: Աֆիշի վրա շեղակի սոսնձված թղթի լայն երիզը հայտնում էր, որ տոմսերն արդեն վաճառված են:

Մինչև տեղ հասնելը տարբեր անկյուններում նույն աֆիշը տեսավ: Երևում էր, որ քաղաքի համար կարևոր իրադարձություն է տեղի ունենալու: Դժվար չեղավ թատրոնը գտնել: Այստեղ կարծես ոչինչ չէր ասում սպասվելիք պրեմյերայի մասին: Ամեն ինչ սովորական էր և գործնական: Մուտքն անցավ անարգել և բարձրացավ վեր: Կատարյալ դատարկություն էր ամենուր: Մեկ-երկու հոգի անցան՝ թատրոնի ծառայողներից, իրենց գործերի վրա կենտրոնացած, առանց որևէ ուշադրություն հատկացնելու իրեն: Հիշեց փետրվարյան երեկոն, երբ այստեղ շարժվել չէր լինում շքեղ հագնված տիկնանց և սեփական արժանապատվությամբ լեցուն տղամարդկանց միջով:

Հանկարծ մի ծանոթ ձայն լսեց: Հարազատ ձայն, որ ասես դիմում էր իրեն, բայց մի տեսակ ուրիշ կերպ: Ձայնը նրանն էր, բայց խոսում էր ուրիշ լեզվով, ավելի ճիշտ՝ ուրիշի... Եվ այդ ձայնը վսեմ շեշտեր ուներ... Այո, կասկած չկար, դա Յաննին էր... Եվ նա սարսուռ զգաց, բառացիորեն քարացավ հարազատ ձայնով խոսող ուրիշ մարդու կենդանի ներկայությունից:

Դահլիճի դռներից մեկը կիսաբաց էր: Դռան ճեղքից լուսավորված բեմը տեսավ, տեսավ նրան՝ ճերմակ ու երկար զգեստով, մազերն ուսերն ի վար թափված, ասես իտալական Վերածննդի վարպետների կտավներից իջած մի պերսոնաժ: Առավելագույն զգուշությամբ ճեղքը լայնացրեց այնքան, որ կարողանա մտնել ներս և վերջին շարքում խավարի մեջ աննկատ տեղավորվել:

Դահլիճը գրեթե դատարկ էր: Միայն առջևի շարքերի կենտրոնական տեղերում մի խումբ էր նստած: Նրանց մեջ մեկը կար՝ սև հագած, նիհար ու բարձրահասակ, որ մի երկու անգամ տեղից վեր կացավ, զուսպ շարժումներով ինչոր բան հասկացրեց և նորից տեղը նստեց:

Վերջին փորձերից մեկն էր: Արդեն դեկորներ էին դրված, դերասանները բեմական զգեստներով էին: Սև հագած տղամարդը, որն ամենայն հավանականությամբ բեմադրիչն էր, հազվադեպ էր միջամտում: Հավանաբար ամեն ինչ ընթանում էր իր ուզածով, առանց անակնկալի: Ձնկատեց, թե ինչպես ավարտվեց առաջին արարը: Իսկական ներկայացում էր, միայն թե ծափեր չկային:

Դերասանները կուլիսներ չգնացին: Բեմից ուղղակի իջան դահլիճ:

Յաննին աշխուժորեն զրուցում էր մի պարոնի հետ, որի թիկունքն էր միայն տեսնում: Առանձին բառեր էին հասնում: Սակայն դիմացից հստակ տեսնում էր Յաննիի դեմքը, որը հիմա կատարելապես ուրիշ էր: «Այս ինչպե՞ս փոխվեց մի ակնթարթի մեջ, - մտածեց նա: - Այո, բեմից իջավ և դարձավ այսօրվա աղջիկ»: Նկատեց, որ դեմքին հարդարանք կա. աչքերն ընդգծված էին, իսկ այտերը՝ սովորականից ավելի վարդագույն, ճիշտ գերմանական մայոլիկայի աղջիկների նման, շրթունքները ներկվել, ավելի կարմիր էին դարձել, իսկ մազերին, հավանաբար, ոսկեփոշի էին ցանել, որը պսպղում էր լույսի տակ, սակայն, ափսո՜ս, կորել էր նրա ցորենագույնը, որն ավելի սազական կլիներ կերպարին:

Սուզվեց բազկաթոռի մեջ, որպեսզի Յաննին իրեն չտեսնի, սակայն միջնարարն ավարտվեց, դերասանները բարձրացան բեմ և երկրորդ արարն սկսվեց: Տեսարանները հաջորդեցին իրար, չնկատեց, թե ինչպես համակվեց բեմում ծավալվող մոգությամբ և ավելի շատ հիմնական դերակատարուհու ներկայությամբ, տեսքով, ձայնով, շարժումներով, նրա մարմնավորման անսպասելիությամբ: Մի նոր մարդ տեսավ՝ իրեն այդքան ծանոթ, այդքան մտերիմ անձնավորության մեջ: Եվ այդ անձնավորությունը որքան ավելի հարազատ էր մտնում ուրիշ կերպարի մեջ, այնքան ավելի հստակ էր զգում, թե ինչպես է աստիճանաբար հեռանում իրենից՝ մնալով սակայն ավելի հարազատ, ավելի թանկագին, ավելի բաղձալի: Պահեր էին լինում, երբ զգում էր, թե ինչպես ինքն էլ համակվել է մի վսեմ վերացումով, որը նրան խորթ էր, իսկ երբեմն էլ, առանձին բառեր, ասես մոգության շղարշը պատռելով, գալիս և դաշույնների պես խոցոտում էին նրան.

Մնացեք բարով, Աստծուն է հայտնի, թե ե՛րբ մենք իրար կտեսնենք մեկ էլ,
Մի թույլ պաղ երկյուղ գալարվում է իմ երակների մեջ,
Որ սառեցնում է գրեթե բոլոր իմ ջերմությունը...*

Նա դիտեց այդպես ամբողջ ներկայացումը՝ մինչև վերջ, մինչև ծափերը, որ հնչեցին բավական երկար: Ծափահարում էին դահլիճի առաջին շարքերում նստած երեսուն-քառասուն հոգին: Նրանց միացան դերասանները, որ շարունակ առաջ էին մղում գլխավոր դերակատարներին: Ծափահարում էին նաև թատրոնի ծառայողները, որոնք տեղավորվել էին հետին շարքերում, բեմի բանվորները՝ որ հայտնվեցին գեկորների ետևից: Չէր ծափահարում միայն մեկ հոգի՝ ինքը, չնայած որ նրանց չափ, գուցե նրանցից ավելի շատ էր ադդված: Չէր ծափահարում ոչ թե, որ դա ուրիշի տոնն էր, ոչ, նա գիտեր, որ արվեստն անկոչ հյուր չունի, այլ որովհետև տարտամորեն գիտակցում էր, որ Գեղեցիկին մատուցված այս ծեսին զուգահեռ մեկ այլ, ոչ պակաս արարողություն կատարվեց իր ներսում՝ դարձյալ առ ի Գեղեցիկը...

Ուստի դուրս եկավ թատրոնից լուռ ու աննկատ, ինչպես որ մտել էր, և

* Շեքսպիր. «Ռոմեո և Ջուլիետ», արարված չորրորդ, տեսարան երրորդ, թարգմ. Խ. Դաշտենցի:

քայլեց դեպի կայարան: Քայլում էր և աշխատում ոչինչ չմտածել, որպեսզի հանկարծ սխալ վճիռ չընդունի և անխոհեմ քայլեր չանի: Միայն երբ արդեն տեղավորվել էր հակառակ ուղղությամբ ընթացող գնացքի բաժնեխցիկներից մեկում, իր համար հստակ ձևակերպեց, որ ներկայացմանը զուգահեռ ծավալված իր արարողությունը ոչ այլ ինչ էր, քան զոհաբերության մի ծես, որ նա Գեղեցիկին զոհաբերեց իր սերը: Քանզի կարողացավ հանուն իր սիրո պայքարել ամեն ինչի դեմ և հաղթող դուրս գալ, սակայն Գեղեցիկն աշխարհում միակ բանն էր, որին ենթարկվել էր ի սկզբանե, և պայքարել նրա դեմ կնշանակեր դավաճանել իր բուն էությանը, կնշանակեր սպանել իր հոգին: Եվ հավանաբար նա երբեք չիմանա, որ այդ օրը, խավար դահլիճի հեռավոր անկյուններից մեկում ունեցավ մի հանդիսատես, որը ոչնչով նման չէր մյուսներին:

* * *

Այժմ նամակներին սպասում էր փիլիսոփայական մի հանդարտությամբ՝ պատրաստ միանման ընդունելու թե՛ չափազանց ուրախ, թե՛ չափազանց տխուր լուրը, երկուսն էլ վաղօրոք համարելով Աստծո արդար վճիռ: Կյանքի վայրիվերումներին այսպես հաշտ ու խաղաղ նայում են աշխարհից անվերադարձ հեռացած անապատականները և ընդմիշտ հրաժեշտ տալու պատրաստ մահապարտները: Սակայն քանի որ ինքը ոչ մեկն էր, ոչ էլ մյուսը, այլ ավելին՝ կյանքի պարտապանն էր, ապա ապրում էր չապրողի պես, երբեմն-երբեմն իր վրա հրավիրելով մտերիմների չափազանցված ուշադրությունը: Պատահում էր, որ նրանք անտեղի հարցեր էին տալիս և շատ հաճախ ոչ մի պատասխան չստանալով, ներողամտությամբ նայում էին նրան: Սակայն ոչ ոք չէր տեսնում, չէր կռահում, թե ինչպիսի ծանր պայքար է ծավալվել նրա ներսում՝ տառապանքի ու երանության զգացումների միջև: Ծանր կորստի ցավը փոքր ինչ մխիթարվում էր վերին աստվածությանը մատուցված զոհաբերությունից ծնված մի անդորրով: Մեկն անդադար հիշեցնում էր նրան, որ ինքը լոկ աղազուն մի հողեղեն է, մյուսն ազդարարում էր, որ ընտրյալների համար փակ չէ ճամփան դեպի վերին ոլորտները: Հաճախակի գործածությունից դռեհկացված, կենցաղային տափակ ճշմարտության մակարդակին հասցված՝ «Արվեստը զոհ է պահանջում» ասացվածքի բուն իմաստն ամենայն սաստկությամբ զարկում էր նրան: Եվ այդ ցավն առավել ուժգին էր դառնում, երբ հիշում էր Պոլսից ուղարկված իր նամակը: Երանի՜ գրած չլիներ, երանի տեղ հասած չլիներ, այդժամ գուցե կարողանար ամենայն համարձակությամբ հայտարարել, որ կամովին և ոչ թե ստիպողաբար զոհաբերեց իր սերը Գեղեցիկին, և այդժամ երանության զգացումն այնքան հորդուն և այնքա՜ն ամոքիչ կլիներ, որ կխեղդեր ցավի բոլոր զգացումները, և այդժամ աստվածայինն իր մեջ կգերազանցեր մարդկայինին:

Սակայն պահեր էին լինում, երբ տող առ տող վերհիշում էր իր նամակը, այսօրվա պես տեսնում, թե ինչպիսի տրամադրության մեջ գրեց, թե ինչպիսի հիմնավոր արդարացումներ ուներ այդպես անվերապահ գործելու, պատճառներ, որոնք այսօր էլ գուցե ընդունելի լինեին նրա համար: Բացի այդ, հիմա ար-

դեն գիտեր, որ կորցնողը միայն ինքը չի լինելու, որ կորուստը երկուսինն է, չասած արդեն այն մասին, որ իրենց սերը հույզերի հասարակ մի բռնկում չէր, այլ առ Աստված տանող մեկ ուրիշ, թերևս ավելի անսխալ ուղի:

Երկու շաբաթ կլիներ, ինչ վերադարձել էր Էրֆուրտից, երբ մի ստվար ծրար ստացավ՝ տասը էջանոց մի նամակ՝ մանր ձեռագրով շարադրված: Յաննին ներողություն էր խնդրում Պոլսից եկած նամակին և հեռագրին չպատասխանելու համար, քանզի խելագար զբաղված էր և ոչ միայն ժամանակ չուներ, այլև հոգով ու մարմնով ուրիշ տեղ էր, ուրիշ ժամանակների մեջ, և որ դա անկրկնելի զգացում էր: Այնուհետև ոգևորված պատմում էր, թե ինչպիսի փայլուն հաջողություն ունեցավ իրենց վերջին փորձերից մեկը, որը գրեթե պատրաստի ներկայացում էր, որ փաստորեն խաղում էին երկու թատրոնների տնօրինության համար՝ Բեռլինի և Էրֆուրտի, և հատկապես քաղաքապետարանի համար: Ներկայացման, այսինքն՝ փորձի ժամանակ սրահում նաև լրագրողներ են եղել: «Ձես պատկերացնի, թե ինչպիսի հաջողություն էր, և բոլորն ասում էին, թե ներկայացման աստղը ես եմ, թե իմ դերակատարությունը հայտնություն է, իսկ լրագրողներից մեկն ասաց, թե հատուկ ինձ համար պետք է պիեսներ գրել... Ամենակարևորը, որ պրն. Յոլլերը շատ գոհ է ինձնից, նա գտնում է, որ իր բոլոր հանձնարարությունները ճիշտ եմ կատարել...»: Այնուհետև պատմում էր, թե ինչպիսի գեղեցիկ զգեստներ են կարել իր համար (որոնք. իսկապես հոյակապ էին), որ թատրոնի զգեստ հագցնողն ինչպես է սիրում իրեն, իսկ դիմահարդարը պարզապես պաշտում է (երևում էր, տիկնիկի դեմք էր դարձրել): Գրում էր, որ երեք օր հետո, շաբաթ երեկոյան պրեմյերան է նշանակված, որ բոլոր տոմսերն արդեն վաճառված են, որ հազիվ երկու տոմս է ճարել ծնողների համար: «Իսկ քեզ համար, սիրելիս, մեկ տոմս կպատվիրեմ Կաղանդի օրերին, որովհետև վճռել եմ, որ 1909 թ. միասին պիտի դիմավորենք՝ մեր տանը... Հուսամ թե մինչ այդ կհամբերես: Իսկ հիմա, ներողամիտ եղիր, պիտի ընդհատեմ նամակը: Քնելու ժամն է: Վաղն առավոտ փորձ ունեմ, պիտի ուժ հավաքեմ: Համբույրներ»:

«Հինգշաբթի, 21.30: Այսօրվա փորձը հաջող չանցավ: Ես շատ դժգոհ եմ ինքս ինձնից: Բայց պրն. Յոլլերը շատ հանգիստ էր: Ասաց, որ դա բնական է, քանզի երեկ փաստորեն հանդիսատեսի համար խաղացի, իսկ այսօր ոչ ոք չկար: Տեսնենք, թե վաղն ինչպես կանցնի փորձը: Բարի գիշեր, համբույրներ»:

«Ուրբաթ, 14.00: Այսօր պրեմերային նախորդող օրն էր, վերջին շտկումները պիտի անեինք: Բոլորս եկանք՝ դերասաններով, զգեստավորվեցինք, պատրաստվեցինք, որպեսզի ժամը 11-ին կազմ ու պատրաստ սպասենք պրն. Յոլլերին: Սակայն 11.30 եղավ, բայց նա չկար: Բոլորս անհանգիստ էինք՝ չլինի մի բան է պատահել, գուցե հիվանդ է... Արդեն տասներկուսին քառորդ էր պակաս, երբ վերջապես երևաց: Դեմքն ահավոր գունատ էր, հազիվ էր խոսում: Բոլորիս հավաքեց և ասաց, որ այսօր փորձ չի լինի: Ասաց, որ նաև երեկոյան չի լինի: Հետո լռեց և ավելացրեց, թե վաղն էլ չի լինի: «Բայց վաղը փորձ չկա, - հիշեցրեց դերասաններից մեկը: - Վաղը պրեմյերան է»: Պրն. Յոլլերը գլխով արեց և ասաց, թե պրեմյերան նկատի ուներ: Հետո լռեց և նորից ասաց, թե շաբաթ օրը պրեմյերա չի լինի: «Իսկ ե՞րբ կլինի», - հարցրեցին նրան: «Չգիտեմ, - պատաս-

խանեց նա: - Հավանաբար ավելի ուշ»: Հետո ասաց, որ լավ չի զգում, ներողություն խնդրեց սպասեցնելու համար: Առաջարկեց շաբաթ օրը հավաքվել թատրոնում՝ լրացուցիչ բացատրություններ լսելու համար, և գլխիկոր հեռացավ: Սարսափելի լուրը ճնշել էր բոլորիս, անորոշության մեջ էինք, չգիտեինք ինչ անել: Պատգամավորություն կազմեցին և գնացին տնօրենի մոտ: Սակայն տնօրենը չէր ընդունել՝ ասելով, թե վիճակը դեռ անորոշ է, թե հաջորդ օրն անձամբ կբացատրի ամեն ինչ:

Ես տուն եկա անսովոր տրամադրությամբ: Ասես սպանված լինեմ: Ոչ մեկին չեմ ուզում տեսնել, ոչինչ անել չեմ կարող, հազիվ այս մի քանի տողը գրեցի, սակայն մխիթարություն չստացա... Ինչպե՜ս կուզեի, որ հիմա կողքիս լիներիր: Միայն քո ներկայությունը, քո խոսքը կօգներ ինձ: Պրն. Ցոլլերի վիճակն ահավոր էր, հազիվ էր խոսում, հազիվ էր շարժվում, կարծես ծանր հիվանդ լիներ: Երևի իսկապես հիվանդ է: Ինչո՞ւ, ի՞նչ է պատահել... Կկարողանա՞ արդյոք վաղը գալ: Ինչո՞ւ հանկարծ այդպես վատացավ նրա վիճակը... Ի՞նչ է նշանակում այս ամենը... Համբուրիր ինձ, ուժ տուր, որպեսզի դիմանամ այդ ծանր փորձությանը, գոնե մինչև վաղը կեսօր...»:

«Շաբաթ, ժամը 14.00: Վե՛րջ ամեն ինչին, կործանո՛ւմ, աղետ: Պրեմյերան իսկապես չի կայանա այսօր: Կեսօրին հավաքվել էինք թատրոնում: Պրն. Ցոլլերը դարձյալ չկար: Մտածեցինք, որ նախորդ օրվա պես ուշանում է, մանավանդ որ հիվանդ էր: Հետո հայտնվեց թատրոնի տնօրենը և ասաց, որ պրն. Ցոլլերը չի գա, քանի որ երեկ երեկոյան մեկնել է Բեռլին, որպեսզի պարզի, թե ինչու է հետաձգվել պրեմյերան: Խոստացել է այնտեղից մանրամասնորեն հեռագրել, ահա այսրանը, համբերեք մինչև հեռագիրն ստանալը: «Իսկ ե՞րբ կլինի պրեմյերան», - հարցրեցինք մենք: «Հավանաբար մեկ ամիս հետո», - պատասխանեց տնօրենը և շտապ հեռացավ, որպեսզի ուրիշ հարցեր չտանք: Ահա այսպես, կատարյալ անորոշություն, ոչ ոք չի հասկանում, թե ինչ է կատարվում: Սակայն տարօրինակ մի բան նկատեցի այսօր: Դերասանները կարծես մի տեսակ կարեկցանքով են նայում ինձ: Իսկ Դայակի դերակատարը, չափազանց բարի մի կին, մոտեցավ ինձ գրկեց և ասաց, որ չտխրեմ, որ թատրոնում այսպիսի բաներ հաճախ են պատահում»:

«Օ, ինչպե՜ս եմ փոշմանել, որ այդ թատրոնը մտա, երանի, հաղա՜ր երանի մտած չլինեի... Այսօր այնպիսի բաներ իմացա, որ տակնուվրա եմ... Երանի չիմանայի, երանի մնայի նախկին միամիտը՝ իմ երանելի անգիտության մեջ... Խե՜ղճ պրն. Ցոլլեր, պարզվում է ամեն ինչ իմ պատճառով է: Ինձ պատմեցին բոլոր մանրամասները... Ամենաստույգ աղբյուրներից եմ իմացել, չէ որ թատրոնի տնօրենի դուստրն իմ ընկերուհին է: Այսօր նրանց տանն էի: Ինձ ահավոր բաներ պատմեց, խիստ գաղտնի, պայմանով, որ ոչ մեկին չասեմ, անգամ հայրիկիս ու մայրիկիս, սակայն քո պարագան ուրիշ է: Այո, պարզվում է, որ ամեն ինչ կատարվել է իմ պատճառով: Ջուլիետի դերակատարն ինձնից առաջ մի պարուհի էր, որին պրն. Ցոլլերն էր հետը բերել Բեռլինից: Ոչ մեկը չէր հավանում նրան, և հենց ինքը՝ պրն. Ցոլլերը շատ դժգոհ էր նրանից: Ահա ինչու, երբ իմ արտասանությունը լսեց, առաջարկեց, որ ես փորձեմ: Այստեղ լուրեր

էին տարածվել՝ իբր այդ աղջիկը պրն. Ցոլլերի սիրուհին է: Պարզվում է, որ սուտ է: Այդ նախկին պարուհուն Բեռլինից էին պարտադրել բեմադրիչին: Դերասանները ծիծաղում էին նրա վրա, պրն. Ցոլլերն էլ գոհ չէր, ահա ինչու նրան ետ ուղարկեց Բեռլին, պայմանավորվելով, որ նա այնտեղ կխաղա, իսկ Էրֆուրտում ես կխաղամ: Բոլորը գոհ էին այդ որոշումից, հատկապես ինքը՝ բեմադրիչը, նա ինձ ասաց, որ ես թատրոնի համար եմ ծնված, որ պիտի հերթով չեքսպիրյան դերերը խաղամ: Նույնիսկ բանակցություններ էր սկսել այստեղի թատրոնի տնօրենի հետ, որպեսզի սրանից հետո «Օթելլոյի» բեմադրությանն անցնի: Բայց նախանձը և չարությունը ոչ մի լավ բան չեն կարող հանդուրժել... Եվ ինչպիսի՜ երկերեսանություն, ինչպիսի կեղծավորություն... Բեռլինի թատրոնի տնօրենը հիացած էր մեր փորձով, սակայն վերադառնում է և նույն օրը հեռագիր ուղարկում՝ արգելելով շաբաթ օրվա պրեմյերան, և ընդհանրապես այստեղ պրեմյերա չի լինելու, այլ Բեռլինում, հետո ներկայացումը կբերեն այստեղ, իսկ Ջուլիետի դերը պիտի խաղա այն անտաղանդ պարուհին, որը, պարզվում է, ոչ միայն Բեռլինի թատրոնի տնօրենի զարմուհին է, այլև ինչ-որ նախարարի սիրուհին... Ահա արդյունքը մեր անքուն գիշերների, մեր ամենօրյա ծանր աշխատանքի, մեր անդուլ փնտրտուքների... Մի՞թե կարելի է Գեղեցիկի տաճարում, որ Թատրոնն է, այսպիսի այլանդակ բաներ անել, ի՞նչ արվեստ կարող է մնալ մի վայրում, ուր անբարոյությունն է իշխում, գծուծ հաշիվները և մութ խաղերը... Ես ինձ պղծված եմ զգում, կեղտոտված, ասես թունավորված՝ լինեմ... Խե՜ղճ պրն. Ցոլլեր, որ իմ պատճառով այդպիսի տհաճ պատմությունների մեջ ընկավ, նա զտարյուն արվեստագետ է, և ես պատկերացնում եմ, թե ինչպես է տառապում հիմա»:

«Երեքշաբթի, 13.55: Արդեն պատրաստվում էի նախորդ նամակն ուղարկել, երբ այսօր առավոտյան մի ծրար եկավ Բեռլինից, որ պրն. Ցոլլերն էր ուղարկել: Ներողություն է խնդրում, որ չկարողացավ ինձ հասցնել մինչև հաղթական դափնիները, որոնց, իր ասելով, լիովին արժանի եմ, սակայն ցավոք սրտի տաղանդը և արժանիքները չեղան որոշողը, այլ ստոր և ցածր կրքերը: Հորդորում է, որ չհուսահատվեմ, որ շարունակեմ պայքարել, քանզի արվեստն անվերջ պայքար է: Հույս է հայտնում, որ մենք անպայման կհանդիպենք... Ոչ հիմա, գուցե մի փոքր ավելի ուշ, քանզի հիմա որոշել է հեռանալ Բեռլինից և գնալ Վիեննա՝ այնտեղի թատրոններում բախտը փորձելու, չնայած այնտեղ էլ, իր ասելով, տաղանդը և նվիրվածությունը չեն որոշում արվեստագետի ճակատագիրը, այլ կապերը, դրամը և մթին հաշիվները... «Սակայն դա է մեր խաչը, - գրում է նա: - Եվ պիտի մինչև վերջ տանենք»: Օ, ես չեմ ուզում այդ խաչն իմ ուսին առնել, ոչ թե որ վախենում եմ դժվարություններից, այլ որ չեմ ուզում կեղտի և անբարոյության աշխարհը մտնել, քանզի հնարավոր է մի՞թե արվեստ արարել այդ ապականված մթնոլորտում: Ոչ, ես չեմ կարող այդ միջավայրում գտնվել: Եվ հիմա եմ հասկանում, որ աշխարհում միայն մեկ տեղ կա, ուր մարդկային ճղճիմությունները չեն կարող մուտք գործել՝ դա մեր սիրո տարածքն է, միայն այդտեղ կարող ենք պաշտպանված զգալ բոլոր ապականություններից... Հեռու պահենք, Ռուբեն, մեր սերը մարդկային չարությունից ու նախանձից...

Ես հիմա հիշեցի քեզ և անչափ ուժեղ զգացի ինձ, մեր սերը մեր միակ սպաստանն է այս աշխարհում»:

«Հինգշաբթի, ժամը 21.15: Ես ապրել չեմ ուզում այս աշխարհում, ես չեմ կարող: Ինչպիսի՜ ստորություններ, ինչպիսի զաղրելի բամբասանքներ... Ամեն օր կեղտի մի ալիք է զարնվում թատրոն կոչված հաստատությանը, որտեղ հույս ունեի իմ երջանկությունը գտնել, բայց առայժմ կյանքիս ամենասոսկալի օրերն եմ ապրում: Ինչպե՞ս կարողացա հավատալ, ինչպիսի՜ մանկական երազանքով էի մտնում այդ շենքը...

Լեզուս չի դառնում, որ ասեմ, թե ինչ ի՜նչ քստմնելի լուրեր են շրջում քաղաքով մեկ, իբր ես պրն. Ցոլլերի սիրուհին էի, և այդ պատճառով էլ Ջուլիետի դերը վստահել էր ինձ, և իբր այնքա՜ն վատ եմ խաղացել, որ Բեռլինից եկած տնօրենը որոշել է հետաձգել պրեմյերան... Եվ այս զառանցանքը չարախնդալով, ձեռքները հաճույքից շփելով տարածում են քաղաքով մեկ, հրճվում, որ պրեմյերան չկայացավ, որ իմ փոխարեն անտաղանդ մի պարուհի է խաղալու՝ ծվծվան ձայնով... Զէ որ ես տեսել եմ նրան՝ փորձերի առաջին օրվանից... Դա ահավոր մի բան էր, ծիծաղաշարժ, գռեհիկ... Խեղճ բեմադրիչը հուսահատությունից գլուխն էր բռնում, ժամերով աշխատում էր հետը, բայց՝ ապարդյուն: Իսկ հիմա, չարահոգի մարդիկ, ուրախանում են, որ այդ խրտվիլակը պիտի խաղա, քանզի պիտի նախանձից պայթեին, եթե պրեմյերային ես բեմ դուրս գայի... Օ՜, գավառական թունավոր մթնոլորտ, ինչպե՞ս կարող է արվեստ գոյություն ունենալ այս միջավայրում... Նրանք չեն հանդուրժի որևէ գեղեցիկ, որևէ աղնիվ ու մաքուր բան: Ես վախենում եմ տնից դուրս գալ, ուզում եմ փակվել և ոչ մեկի երեսը չտեսնել... Հիմա եմ հասկանում, որ մեր սերն Աստծո պարգև է, որ լեսզի կարողանանք դիմանալ այս աշխարհում...»:

Ցավով ու տառապանքով գրված այս տողերը նրա սիրտը խոցոտեցին նույնքան, որքան մարդկային չարությունն ու ստորությունն էր ցնցել աղջկան: Երկրորդ անգամ ընդունեց, թե ինչպիսի կոպիտ սխալ էր՝ Պոլսից ուղարկված այն նամակը, քանզի նորից տեսավ, որ կան ճշմասրտություններ, որոնց դեմ ոչ մի ուժ չի կարող կանգնել: Այդպիսի ճշմարտություն էր Յաննիի խաղն այն փորձ-ներկայացման մեջ: Ճիշտ այդպիսի ճշմարտություն էր, բայց դառը և հուսահատեցնող, որ այսօր, արվեստի ամեն մի օջախ, մանավանդ թատրոնները, քսու կրքերի, մութ դավերի և անվերջանալի ինտրիգների որջեր են, որ ամեն մի հաջողության ետևն անպայման մի կեղտոտ պատմություն կա, որ արվեստագետը տաղանդի հետ մեկտեղ, նախևառաջ, պետք է ունենա զորավոր թիկունք, դիվանագետի հմտություն և կեղտն ու անբարոյությունը չտեսնելու ինքնակամ կուրություն:

Սակայն տաղանդը, նախևառաջ բարոյական մաքրություն է, կեղծիք և բռնություն տեսնելուն պես իսկույն ընդվզում է, շատ դեպքերում կործանվում կամ մեկուսանում հասարակությունից, ամփոփվում, ինչը կատարվել է Յաննիի պարագայում: Եվ հավատում էր, որ Յաննին իսկապես զրպարտության զոհ է դարձել, քանզի եթե առաջին իսկ քայլերից յուրացներ զարտուղի ճամփաներով

իր նպատակին հասնելու «արվեստը», ապա այսօր բարոյական այդպիսի ծանր ճգնաժամ չէր ապրի և չէր տառապի սովորական բամբասանքներից, որոնցով լցված է մարդկային հասարակությունը:

Այնուհանդերձ համոզիչ արդարացում էր գտնում իր համար, որ վերջնագիր-նամակ է ուղարկել. նա նպատակ ուներ փրկել իրենց սերը: Չէ որ ինքը՝ Յաննին, կոպիտ իրականությանը բախվելուց հետո շտապում է փրկություն գտնել այդ միակ ապաստանում, նշանակում է ինքը ճիշտ էր: Եվ հիմա, երբ աղջիկը, դառը ճշմարտության երեսին նայելուց հետո, բնազդաբար, իր անաղարտ հոգու մղումով, շտապում է փրկվել իրենց ձեռքով կառուցած աննյութեղեն կացարանում, ոչ մի դեպքում չպետք է նրանից պահանջի մեղա գալ, չպետք է երեսին շպրտի, թե ժամանակին զգուշացրեց, փորձեց ետ պահել: Նա եկել է փրկվելու Սիրո տան մեջ, որի պատերը կանգնեցրել է իր հետ հավասար:

* * *

Մի՞թե սերը կարող է դառնալ աշխատանք: Թվում է, թե այդ բառերն իրար կողքի չեն դրվի: Քանզի վերացում և վայելք արտահայտողը տառապանքին զուգընկեր կդառնա, սակայն ոչ հողեղեն իմաստներ արտահայտող մյուս բառերին: Բայց վերջին ամիսների իր գործունեությունը դժվար էր ուրիշ բառերով որակել: Ավելին՝ դա տքնանք էր, տևական մի հոգս՝ ամենօրյա միապաղաղ զբաղումների մեջ՝ Յաննիին և գուցե ինքն իրեն հիշեցնել, որ «իրենք մարդկային երևույթներից անդին են, մարդկային կրքերից անդին»: Ստիպված էր իր նամակներում շարունակ գրել, որ իրենք արդեն վերևներում են, իրենց իդեալների մեջ, բայց պարտավոր են ապրել առօրյա կյանքով, առտնին հոգսերով, որոնք չես կարող անտեսել: Ուստի պետք է արժանավայել ապրել ամեն մի օրը՝ աշխատելով հեռու մնալ կյանքի արյունող փչերից:

Երբեմն նրան թվում էր, թե ծանր հիվանդի սնարին է, որին պետք է ամեն րոպե հսկի և օգնի բարեհաջող դուրս գալու ճգնաժամից: Եվ հակառակի պես այդ ամիսներին սոսկալի զբաղված էր՝ թե՛ համալսարանում, թե՛ հիվանդանոցում: Յաննիին խոստացել էր 1909 թվականը միասին դիմավորել Էրֆուրտում: Սակայն չկարողացավ: Եվ միայն ապրիլին, Զատկի տոներին հաջողվեց մեկ շաբաթվա արձակուրդ պոկել և նույն օրը մեկնել Էրֆուրտ:

Օրեր անցան միանման ու միապաղաղ: Եվ գոհ էր, որ այդպես է, որ կարող են երեկոներն անվերջ թափառել միջնադարյան թաղերի նեղ ու մութ փողոցներով, ժամերով նստել տաճարում և երգեհոնի երաժշտությունը լսելով վերանալ կամ փակվել սենյակում՝ անվերջ զրուցել, համբուրվել, իսկ երբեմն էլ իրար կողք նստած լուռ մտորել: Այդպիսի պահերից մեկին էր, որ Յաննին ասաց.

- Ռուբեն, երբ ամուսնանանք, միշտ այսպե՞ս պիտի ապրենք:
- Ինչպե՞ս, սիրելիս:
- Այսպես՝ պարզհոգի մարդկանց նման:
- Սակայն դա է երանելի կյանքը:

- Բայց ես կուզեի ապրել արվեստագետի կյանքով, հետաքրքիր, զգացմունքներով լեցուն...

- Սիրելիս, արվեստագետներն ամենահոռի մարդիկ են, նրանք հրեշներ են:

- Բայց դու նույնպես արվեստագետ ես:

- Այո, բայց ես սիրում եմ պարզ կյանքը, անշուք ու լուռ երջանկությունը... Ես սիրում եմ անտառի ստվերն ու մենության խորհուրդը:

- Սակայն չես վախենո՞ւմ այդպես ապրելով անշուք ու աննկատ մարդ դառնալ:

- Ոչ, լավագույն մարդիկ պարզ հոգիներն են: Ինձ համար ամենաիդեալական մարդը Հիսուսն էր, և նա բնավ արվեստագետ չէր: Նա էր, որ ասաց. «Երանի՛ հոգով աղքատներին»:

- Բայց դու բանաստեղծություններ ես գրում, մի՞թե չես ուզում իմանալ, թե ինչպես են ընդունվում քո տողերը, մի՞թե չես ձգտում ընթերցողներիդ սրտերը նվաճել:

- Անշուշտ ձգտում եմ, բայց ես չեմ ուզում հաջողության ետևից վազել, փառքի մուրացկան դառնալ, ինչպես շատերն են անում...

Զուզեց ավելացնել, որ դերասանի վիճակն ուրիշ է, որ նա ծափերի, դափնիների պահանջ ունի իր արվեստն արարելու պահին... Դա դառնում է նույնիսկ հոգեկան պահանջ, մշտական, երբեք չհագեցող ծարավ, ահա ինչու այդ արվեստը մոլորեցնում է շատերին, ստիպելով երբեմն հանուն փառքի հոգին ծախել սատանային, և հազվադեպ են մեծ դերասանները, որոնք կարողանում են հավասարակշռություն պահպանել հոգու մեծ պարզության և ամենօրյա ծափերի վաղանցուկության միջև:

Ցանկություն չուներ նրա գլխին քարոզ կարդալու, քանզի տեսավ, որ հոգեկանի ատաղձն ամուր է, որ ճակատագրական պահին կարողանում է ճիշտ կողմնորոշվել, զանազանել սևը սպիտակից: Ահա ինչու հանգիստ հոգով էր վերադառնում Էրֆուրտից, վաստակած մարդու իրավունքով, համոզված, որ այս այցելությունն էլ մի հաստատուն քար դարձավ իրենց սիրո կառույցի մեջ:

Եվ որքա՜ն տարբեր էր այս վերադարձը նախորդից, երբ ծպտված, թաքուն, արյունող սրտով հետ էր դալիս, ասես վերջնական հրաժեշտի մի ծանր արարողությունից... Մինչդեռ հիմա միևնույն դնացքը կարծես մոտեցնում էր Մեծ Հույսին, և դժվարանում էր ասել՝ գերմանական մաքուր ու կոկիկ կայարանները երազի մեջ են հաջորդում իրար, թե իրականում:

Արթնացավ առավոտ կանուխ՝ առույգ և տրամադրությունը բարձր: Գնացքը կանգնել էր Բազելի կայարանում, շրջիկ լրագրավաճառները ֆրանսերեն և գերմաներեն լրագրեր էին վաճառում: Մոտ կանչեց նրանցից մեկին, ֆրանսերեն լրագրեր առավ, դրեց դրպանը և ուղղվեց ռեստորան՝ այնտեղ, նախաճաշի հետ աչք ածելու համար:

Վերջին երեք ու կես տարում, ինչ այստեղ էր, քանի՞ անգամ էր այսպիսի երանելի պահեր ապրել. գարնան սքանչելի, արևոտ օրով, գնացքի միապաղաղ, բայց հաճելի աղմուկի ներքո, նստել ռեստորանում, համեղ նախաճաշի վրայից ազնիվ օղին կուլ տալ և բուրումնավետ ծխախոտի հետ սուրճն ըմպե-

լով, ծույլ ու անդորը գոյությունը վայելել ցմրուր, քաջ գիտենալով, որ մի երկու ժամ հետո նորից սկսվելու է խելագար վազքը:

Թերթերը հիշեց, որ նստելիս դրել էր կողքի աթոռին: Վերցրեց, անտարբեր հայացքով աչք ածեց: Կարծես հետաքրքիր ոչինչ չկար: Դրեց դրպանը՝ որոշելով հետը տանել հիվանդանոց և ազատ պահերին ավելի ուշադիր նայել: Ինչպես երևում է, գնացքի տեստորանը թերթ կարդալու համար ամենաանհարմար վայրն է: Ահա, կողքի սեղանի պարոնն էլ գերմաներեն, թե՞ ուրիշ մի լեզվով լրագիրն արագ-արագ, նյարդայնորեն խշխշացնելով նայեց և անփույթ գցեց սեղանին:

Եվ ճիշտ այդ պահին, մի դեմք չեչտակի նայեց նրան: Երեխայի մի դեմք, հինգ-վեց տարեկան, ահավոր խղճալի հայացքով, ավերակների մեջ կանգնած: Այդ դեմքը կարծես քանի՛ օր է իրեն էր փնտրում, Գերմանիայի ամբողջ տարածքն էր կտրել, որպեսզի վերջապես իրեն գտներ: Եվ հիմա Բեռլին-Ժնև գնացքի ռեստորանի սեղանից սևեռուն, աղաչող հայացքով նայում էր իրեն, թվում էր, թե հիմա կխոսի, և եթե խոսի, ապա անպայման հայերեն:

Թերթն, անշուշտ, գերմանական է կամ մեկ այլ երկրից: Ծավալից է երևում: Շվեյցարական լրագրերն ավելի փոքր են, ավելի համեստ, հեռվից ջոկվում են մյուս թերթերի կողքին: Սա երևում է, որ հոխորտացող, ծավալապաշտ երկրի մամուլ է:

Անպաշտպան աղջնակը հայացքը հառել էր, իսկ ինքը՝ տագնապի և այրող հետաքրքրասիրության ճարակ դարձած, չգիտեր ինչ անել այդ պատկերի, այդ տեսարանի, այդ պատմության առջև, որն ասես մեկ անգամ արդեն լսել, տեսել ու ապրել էր:

Հարևան սեղանի պարոնը, որ սպասավորին կանչել ու հաշիվն էր փակում, նկատեց իր սևեռուն հայացքը և, ժպտալով, գերմաներեն հարցրեց.

- Թերթը հետաքրքրո՞ւմ է ձեզ:

Նա մեքենայորեն գլխով արեց:

Պարոնը, սիրալիր ժպիտը դեմքին, մոտեցավ, թերթը դրեց իր սեղանին և անծանոթ լեզվով ինչ-որ բան հարցրեց: Հետո, հավանաբար, նույն հարցը կրկնեց գերմաներեն.

- Դուք չվեդերեն կարդո՞ւմ եք:

- Դժբախտաբար, ոչ, - ֆրանսերեն պատասխանեց նա:

Պարոնն այս անգամ տարօրինակ ժպտաց և, գլխարկը թեթևակի բարձրացնելով, հրաժեշտ տվեց:

Թերթն այժմ իր առջև էր: Այժմ մոտիկից էր տեսնում լուսանկարը: Տակի չորստողանոց մակագրությունից բան չհասկացավ, սակայն մեկ բառ ջոկեց, որն ասում էր ամեն ինչ. «Adana»: Լուսանկարին կից հոդված կար, որից դարձյալ բան չհասկացավ, սակայն կարողացավ մի քանի բառեր դատել. «Կիլիկիա», «Հայեր», «քրիստոնյա», «Թուրքեր», նորից «Ադանա», «Տարսոն», «Օսմանիե», «Դորթ-Յոլ»... Ծանոթ տեղանուններ, որոնք տարօրինակ էր կարդալ հյուսիսային այդ լեզվի տառադարձությամբ: Նրա ուշադրությունը գրավեց մի թիվ. «20.000-25.000»: Ի՞նչ էր նշանակում այդ թիվը: Քսան հազար ի՞նչ... Հայե՞ր...

Հայացքով փնտրեց թերթի տիրոջը՝ շվեդացուն: Գուցե թարգմաներ այս լրատվությունը... Հիմա որտե՞ղ պիտի գտնի նրան... Ի՞նչ է կատարվել այս քանի օրը Կիլիկիայում, ամենայն հավանականությամբ, այնտեղ ապրող հայերի հետ:

Բազելի կայարանում գնված թերթերը վերցրեց: «Լա Սյուիս»-ը բացեց, Շվեյցարիայի ֆրանսալեզու թերթերից ամենահեղինակավորը: Ամենայն ուշադրությամբ սկսեց թերթել և անմիջապես մի թղթակցություն գտավ՝ ուղարկված Ադանայից: Բողոքական մի պատվելի մանրամասնորեն պատմում էր, թե գաղազած ամբոխն ինչպես է հրկիզել Ս. Ստեփաննոս եկեղեցին, թե ինչպես ժամեր շարունակ ցախեր ու բամբակի հակեր են դարսել եկեղեցու պատերի տակ, նավթ լցրել ու հրկիզել: Եվրոպացի հոգևորականին զարմացրել էր, թե մոլեռանդ ամբոխն ինչպիսի ջանասիրությամբ էր կատարում կրոնական չինության ավերը, նրան սոսկում էր պատճառել այդ բարբարոս անհանդուրժողականությունը, խելագար հրճվանքը, ավերելու վայրենի մոլուցքը:

Ինչո՞ւ է թուրք ամբոխը հրդեհել Ս. Ստեփաննոս եկեղեցին, այդ ի՞նչ խժդժություններ են տեղի ունեցել Ադանայում և, հավանաբար, վերջերս... Մինչդեռ ինքն այդ օրերին զվարճանում էր Էրֆուրտում՝ բանից անտեղյակ:

Մյուս թերթը վերցրեց՝ «Գազետ դը Լոզան»-ը: Այստեղ էլ թղթակցություն կար, դարձյալ Ադանայից: Հեղինակը նախորդից ավելի մեծ սոսկումով ներկայացնում էր, թե ինչպես մոլեռանդ ամբոխին ճնշելու նպատակով կանչված բանակը միացել է նույն ամբոխին և ավելի մեծ չափերով շարունակել նախորդի սև գործը: Լրատվությունն ասում էր, որ զոհերի թիվն արդեն հասել էր 30.000-ի, այրվել ու հրհդեհվել են հազարավոր տներ, տասնյակ գյուղեր, որ ամենուր հայերի դիակներ են թափված, որ տասնյակ գյուղեր են դատարկվել իսպառ, որ Սիհուն գետը մինչև հիմա դիակներ է բերում ծով, որ ամբողջ Կիլիկիայից նեխող դիակների և այրվածի հոտ է գալիս:

Թղթակցության վերջում երկու հայտարարություն կար: Մեկն ասում էր, որ թերթի խմբագրությունում գումարներ են հավաքվում՝ Կիլիկիայի աղետյալ հայերին օգնելու համար, մյուսը, որ խմբագրության առջև ջարդի տեսարանները ներկայացնող լուսանկարներ են փակցված՝ անհրաժեշտ բացատրություններով:

Ի՞նչ է տեղի ունեցել Կիլիկիայում, ինչո՞ւ են նորից հայերին ջարդել: Հայտնի է, որ մոլեռանդ ամբոխը Թուրքիայում երբեք չի համարձակվի ինքնակամ, առանց վերին հրահանգի հայերի զանգվածային ջարդին մասնակցել: Սակայն նոր իշխանություններն ինչո՞ւ պիտի այդպիսի քայլի դիմեին, երբ քաղաքակիրթ աշխարհին ուզում են համոզել, որ իսկապես նոր և առաջադեմ երկիր են կառուցում, երբ հայերի առջև բացում են խորհրդարանի դռները, երբ հայերը նախարարական պաշտոններ են գրավում, երբ շարունակ խոսում են այն մասին, թե ազգերի և կրոնների հավասարության դարաշրջան է սկսվել Օսմանյան կայսրությունում... Երեսո՜ւն հազար, և ընդամենը երկու շաբաթում... Կացին է թուրքն իր էությամբ, ջարդի մեքենա, որ անխափան գործում է՝ առանց մտածելու, թե ինչու, առանց զղջալու իր արածի համար...

Մատուցողին խնդրեց գերմանական թերթեր բերել: Ուշադիր նայեց բո-

լոր էջերը: Զանազան թղթակցություններ կային Պոլսից, Իզմիրից, Տրապիզոնից, Էրզրումից, սակայն Կիլիկիայի մասին՝ ոչ մեկ խոսք: Հասկանալի է, ուրիշ կերպ չէր կարող լինել, Գերմանիան իր սիրասուն զավակին չի նեղացնի, չտեսնելու կդնի նրա բոլոր «քմահաճույքները»... Ահա ինչու գերմանական հողի վրա յոթ օր շարունակ կատարյալ անգիտության մեջ էր:

Լոգան հասնելուն պես քայլեց ուղղակի թերթի խմբագրություն, որ բարբեախտաբար կայարանից երկու քայլի վրա էր: Հեռվից արդեն նկատեց փողոցում հավաքված ամբոխը: Լուսանկարները շատ էին, մոտ հիսուն հատ, մեծ, հստակ: Այրված ու ավերված տներ, նույնիսկ թաղեր, դիակների կույտեր, խոշտանգված մարմիններ, մարմնի կտրատված մասեր, գետաբերանի մոտ հավաքված հարյուրավոր, հազարավոր դիակներ, դիակներով ծանրաբեռնված սայլեր, անպաշտպան դիակների կողքին խրոխտ կեցվածքով կանգնած թուրք սպաներ, սպանված մոր դիակից կառչած և սվինահարված ծծկեր երեխա, կտրատված գլուխներ՝ ձմերուկի պես իրար վրա դարսված, և կողքին դարձյալ սպաներ ու զինվորներ...

Խմբագրությունը մարդաշատ և աշխույժ մի խաչմերուկի վրա էր գտնվում, սակայն լուսանկարները սոսկումով դիտող բազմությունը լուռ էր, ապշանքի մեջ, իսկ եթե խոսում էին, ապա շշուկով: Ինչպես երևում էր, լուսանկարներն ուղեկցող մակագրությունները բավական չէին հասկանալու՝ մարդկային բանականության համար անհասանելի հրեշավոր այս երևույթը: Ամուսնական մի զույգ էր կանգնած իրենից քիչ հեռու: Կինը հազիվ լսելի հարցրեց ամուսնուն.

- Հայերն ինչո՞ւ են գնացել և այդ բարբարոսների երկրում հաստատվել, թող հեռանան այդտեղից:

Ահասարսուռ լուսանկարներից ճնշված, ամուսինը չպատասխանեց, միայն թեթևակի ուսով արեց:

Ռուբենը չկարողացավ զսպել իրեն.

- Կներեք, տիկին, այդ թուրքերն են գնացել և հաստատվել հայերի երկրում, և ինչպես տեսնում եք, հայերի ներկայությունը չեն հանդուրժում:

Սակայն քանի՞ հոգու կարող էր բացատրել: Փա՜ռք Աստծուն, որ Եվրոպայում դեռ այսպիսի թերթեր կան, որ մանրամասնորեն ներկայացնում են: Եվ այժմ պարզ էր, թե ինչ էր կատարվել Կիլիկիայում: Սակայն ինչո՞ւ և ինչպես էր նյութվել այս աղետը, ի՞նչ ուժեր կային դրա ետևը... Դժվար էր այդ հարցերի պատասխանը գտնել:

Մարդիկ մոտենում, նայում էին նկարները և սարսափահար հեռանում: Երկու աղջնակ մոտեցան: Մեկը կլիներ յոթ-ութ տարեկան, մյուսը՝ տասը-տասնմեկ: Հավանաբար առաջին անգամ էին տեսնում այսպիսի դժնի լուսանկարներ: Նրանց երեսին սարսափի հետ միաժամանակ տպվել էր զարմանքը: Եվ փոքրի հարցն իսկապես վախեցած էր, կիսատ, անհամարձակ.

- Ովքե՞ր են այս...

- Հայերը, - պատասխանեց մեծը, որ ուշադիր կարդում էր յուրաքանչյուր լուսանկարի մակագրությունը:

- Իսկ ովքե՞ր են արել այս...

Երեխան բառը չէր գտնում, և դա բնական էր, քանզի իր կարճատև կյանքում առիթ ունեցել էր, հավանաբար, ավելի մեղմ իրավիճակներում լսել և նույնիսկ արտասանել «մահ» և «սպանել» բառերը, բայց հազիվ թե լսած, առավել ևս արտասանած լիներ «եղեռն», «նախճիր», «արյունահեղություն» բառերը, և հիմա այդ երևույթները ներկայացնող սոսկալի պատկերների առջև նրա լեզուն ու միտքը համրացել էին:

- Թուրքերը, - պատասխանեց մեծը:

- Ինչո՞ւ...

Այդ անմեղ, մանկական «ինչուն» տակնուվրա արեց նրան: Աղջիկը պատասխան չստացավ, բայց ո՞վ կարող էր գտնել ճիշտ պատասխանը... Իսկապես ինչո՞ւ են նորից կոտորել հայերին և ինչո՞ւ հատկապես հայերին... Որովհետև «ռայա՞» են, «գյավո՞ւր» են, որովհետև չե՞ն ուզում դավանափոխ լինել, ինչպես հրեաներից շատերը, որովհետև պետություն չունե՞ն իրենց թիկունքին... Այո, այդ բոլորը պատճառներ են, սակայն ոչ հիմնական: Կար մեկը, ընդամենը մեկ պատճառ, որ թուրքին ամեն անգամ դրդում էր անպատիժ կոտորել հայերին. դա զոհի ֆաթալ հնազանդությունն է, ամեն անգամ, առանց ընդվզելու, վիզը դանակի տակ դնելը... Եվ մի՞թե սա վերջին կոտորածն է... Այսպես է եղել բոլոր սուլթանների օրոք և հավանաբար այսպես էլ կգնա, եթե... Ճիշտ էր ասում Մաքթուբ կոչված այն թուրքը. «Բանկ Օտտոմանը» գրավեցիք և չպայթեցրիք...»: Այո, ճիշտ էր ասում: Ինչո՞ւ մտանք, եթե չպիտի պայթեցնեինք... Եվ դեռ այդքան զոհեր եղան Պոլսում, գավառներում... Իսկ եթե պայթեցնեինք, եթե թուրքերը, եվրոպացիք էլ հետը, նյութական մեծ վնասներ կրեին, ապա հիմա կզգուշանային Ադանայի հայերի մազին անգամ դիպչել:

Իսկապես, որտեղի՞ց է սկսվում շրջադարձային այն կետը, երբ զոհի մշտական կերպար ունեցող ազգն իր դահճին ստիպում է կացինը ետ քաշել... Ընդվզումի՞ց... Բայց ահա, արդեն հիսուն տարի կլինի, ինչ Զեյթունում, Սասունում, Վանում, Խանասորում և ուրիշ շատ տեղերում հայ ֆիդայիներն ընդվզումի բացառիկ, հերոսական օրինակներ տվեցին, սակայն թուրքը չփոխեց իր քաղաքականությունը... Ամբողջ աղղը չես կարող զինել, ամբողջ ազգը չես կարող ապստամբ դարձնել... Սակայն հնարավոր է մտքերը փոխել, դաստիարակել ժողովրդին այնպես, որ իր ներսում, իր հոգու մեջ ոչնչացնի ստրուկի այն կերպարը, որը թուրքը, մեր իսկ ձեռքով կերտել ու դրել է մեր մեջ: Եվ հաշտվել ենք այդ կերպարի հետ, չենք ուզում փոխել... Ֆիդայիները, որքան էլ հերոս լինեն, վաղ թե ուշ պիտի նահանջեն կազմակերպված բանակի դեմ, մինչդեռ եթե ամբողջ ազգն առողջացնես հոգեպես և մարմնապես... Եթե ստրուկի խարանը ջնջես... Բայց ինչպե՞ս, ե՞րբ, երկու ջարդերի արանքո՞ւմ...

Արդեն մի ժամ կլիներ, ինչ կանգնել էր այստեղ՝ նորից ու նորից լուսանկարներն էր նայում և փաստում, որ շատ մանրամասներ միանգամից չէր նկատել... Իսկ հնարավո՞ր էր արդյոք այդ մղձավանջը միանգամից, մի հայացքով ընդգրկել... Բոլոր պատկերները խառնվեցին նրա գլխում, և այն աղջնակի դեմքը մնաց, որ շարունակում էր իրեն կանչել, հալածել, հետապնդել... Եվրոպայի

ոլորապտույտ ճամփաներն ընկած փնտրում էր մեկին, որ իր ցավին ականջ անի... Նրա մանկական, անմարդկային սարսափներ տեսած դեմքը պակասում էր այս վավերական ու դատապարտող պատկերաշարին:

Կանգնել էր ու չգիտեր, թե ուր գնար: Թվաց, թե հեռուներից գնացքով հատուկ եկել էր այստեղ՝ այս լուսանկարները նայելու, և հիմա կորցրել էր թելը, հաջորդ քայլն անելու վճռականությունը: Կայարանից արդեն իրերն ուղարկել էր տուն, սակայն հիմա տուն գնալու ցանկություն չուներ: Հիվանդանոցում և համալսարանում ոչ ոք չէր սպասում նրան: Մեծ հաճույքով նորից կիջներ կայարան և գնացք կնստեր, բայց դեպի ո՞ւր:

Որոշեց, որ միակ վայրը լճափն է, ուր հիմա կարող է նստել, մեկուսանալ ամեն ինչից, ամփոփվել և փորձել սառը դատողությամբ վերլուծել կատարվածը: Սակայն Լեմանի ափին, Ալպյան լեռների հեքիաթային բնանկարի առջև Կիլիկիայում կատարվածն ավելի սոսկալի կերպարանք ստացավ, և նա երախտապարտ էր խավարին, որ օգնում է գոնե ժամանակավոր ծածկել օրվա ընթացքում կուտակված սարսափները:

* * *

Առջևը պոլսահայ թերթերի մի կույտ էր՝ ապրիլ և մայիս ամիսների համարները: Ժողովից առաջ հավաքել էր, որպեսզի տեսներ, թե ինչ է գրում հայկական մամուլը կատարվածի մասին: Դրանց մի մասն արդեն հասցրել էր կարդալ մինչև Էրֆուրտ գնալը, սակայն նորից էր նայում, ենթադրելով, թե ինչ-որ բան ուշադրությունից վրիպել է: Մանրամասնորեն կարդում էր վերնագրերը, հատկապես գավառներից ուղարկված լուրերն էր նայում: Բայց իզուր էր փնտրում: Հայ մամուլը լուռ էր: Հրեշավոր իրողությունն անդրադարձ չէր գտել այնտեղ: Հայ մամուլը ջայլամի պես գլուխը թաքցրել էր ավազի մեջ:

Սեղանի անկյունում դարսված էին Կիլիկյան աղետին վերաբերող մի քանի տասնյակ կտրոններ. ֆրանսերեն, անգլերեն, իտալերեն, դանիերեն, հոլանդերեն, ռուսերեն, շվեդերեն և անգամ գերմաներեն ու թուրքերեն... Բայց հայերեն ոչինչ չկար: Ամբողջ Եվրոպան սահմռկած էր, հանգանակություն էր անում աղետյալների համար, խմբեր ուղարկում՝ տեղում օգնություն ցուցաբերելու, մինչդեռ պոլսահայ մամուլը շարունակում էր իր անդամալույծ գոյությունը... Եթե չէին կարող բացեիբաց խոսել, գոնե լռեին... Սակայն, ո՛չ, զանազան տխմար երեկոների փքուն ու մեծ նկարագրություններ են տպել, սիրային տափակ ոտանավորներ և անգա՜մ երգիծական էջեր...

Զզվանքով մի կողմ հրեց հայերեն լրագրերի կույտը: Այդ ընթերցումը ոչ միայն ժամանակի կորուստ եղավ, այլև վիրավորանք: Այս ի՞նչ համատարած անտարբերություն է, ի՞նչ ապագա կարող է ունենալ վտանգված ժողովուրդն այսպիսի մտավորականությամբ...

Ժողովականները կամաց-կամաց սկսում էին հավաքվել, մինչդեռ ինքը կարծես մոլորված, մտքի թելը կորցրած լիներ: Սակայն մյուսներն էլ նույն վիճակում էին՝ շշմած, սոսկումի և անորոշության մեջ: Հայ ուսանողներից զատ

հրավիրել էին նաև կուսակցությունների ներկայացուցիչներին: Նրանց երեսին շփոթություն չկար և բավական ճարտար էին խոսում:

- Մինչև չլուծվեն կիսաֆեոդալական այդ երկրի սոցիալական հարցերը, չի լուծվի ազգային հարցը, - անվրդով հայտարարեց մի հայ բոլշևիկ:

- Իսկ ե՞րբ կլուծվեն սոցիալական հարցերը:

- Երբ բանվոր դասակարգ ձևավորվի այդ երկրում:

- Այո, սկզբունքով ճիշտ եք, - համաձայնեց մի հնչակյան: - Բայց մենք չենք կարող այդքան երկար սպասել... Մինչև բանվոր դասակարգ ձևավորվի Օսմանյան կայսրությունում, այնտեղ այլևս հայ չի մնա: Ներկա կացության մեջ ընդամենը մեկ ելք եմ տեսնում. վերսկսել տեռորը:

- Քաղաքական կոպիտ սխալ կլինի տեռորը վերսկսելը, - հայտարարեց ՀՀԴ-ի ներկայացուցիչը, որ ժնևից հատուկ եկել էր ժողովին մասնակցելու, - քանի որ «Առաջադիմություն և Միություն» կուսակցությունը դատապարտում է կոտորածը, իսկ մեջլիսն էլ հատուկ հանձնաժողով է կազմում, որպեսզի հանգամանալից ուսումնասիրեն ողբերգական դեպքերը, այնպես որ մեղավորները կհայտնաբերվեն և կպատժվեն:

- Ես համակարծիք եմ ընկերոջ հետ, - լրացրեց մեկ ուրիշը, - մանավանդ որ հիմա պաշտոնապես հայտարարվում է, թե հայերի սպանդը սուլթանի մերձավորների ուևանչն էր:

- Սուլթան, թե երիտթուրքեր՝ նույն բանն են, - ձեռքը թափ տալով նկատեց կովկասահայ մի ուսանող:

- Սուլթանն ի՞նչ կապ ունի, - հայտարարեց մեկ այլ ուսանող: - Ֆրանսիական թերթերը գրում են, որ ամենասոսկալի կոտորածը բանակն է արել, որ զինվորները միացել են ամբոխին:

- Իսկ ո՞ւմ է ենթարկվում բանակը:

- Երիտթուրքերի կառավարությանը, մի՞թե պարզ չէ:

- Այսօր վերջնական հաշվարկն էին տպագրել. ավելի քան երեսուն հազար զոհ կա...

- Եվ զոհերը միշտ կլինեն. Զեյթունում եղավ, հետո Սասունում, Պոլսում, հիմա էլ Կիլիկիայում, իսկ հաջորդը որտե՞ղ կլինի, - հարցրեց Ռուբենը:

- Այդ երկրում ապրելն անհնարին է դառնում...

- Սակայն պիտի ապրենք, - պնդեց Ռուբենը: - Որքան թուրքինն է այդ հողը, այնքան էլ մերն է: Պիտի մեր իրավունքը հաստատենք:

- Ինչպե՞ս պիտի հաստատենք, երբ թուրքն ամեն առիթով կոտորածներ է սարքում:

- Մեկ օրվա գործ չէ, անշուշտ, - պատասխանեց Ռուբենը: - Սակայն պետք է սկսել այսօրվանից իսկ... Նախևառաջ պետք է հրաժարվել պարտվողական տրամադրությունից, փոխվել ներքնապես, էականորեն, փոխել կրթությունը և դաստիարակությունը, վերջապես, դուրս մղել եկեղեցու ներարկած թույնը մեր հոգիներից:

- Անաստվա՞ծ դառնանք:

- Ոչ, շարունակենք պաշտել մեր Աստծուն, բայց դադարեցնենք հնազան-

դության թույնով սերունդներն ամորձատել... Նոր սերունդ պետք է կրթել, որ առողջ լինի ոչ միայն հոգեպես, այլևս մարմնապես:

- Դա անկարելի է, չնայած գաղափարը շատ հրապուրիչ է:

- Ամեն ինչ կարելի է անել. վտանգի առջև կանգնած ժողովուրդը պետք է համակվի մեկ գաղափարով, պետք է ենթարկվի երկաթյա կարգապահության, այլապես նոր և ավելի սոսկալի աղետներ կլինեն:

- Հայն ո՜ւր, կարգապահությունն ո՜ւր...

- Չէ, Ռուբեն, դու իսկապես բանաստեղծ ես...

- Ռուսաստանը պիտի օգնի մեզ...

- Ոչ, Եվրոպան...

- Պետք է թուրքերի հետ լեզու գտնել...

Կրքերը բորբոքվել էին, բոլորն ուզում էին ելույթ ունենալ, բոլորն ասելիք ունեին, սակայն որքան ելույթ, այնքան կարծիք հնչեց՝ մեկը մյուսին հակասող: Մինչդեռ գիտեր բոլորին, խելացի տղաներ էին, նվիրված, արյունոտ դեպքերից տակնուվրա եղած... Աղետը նրանց միավորելու փոխարեն ավելի էր մասնատել: Եվ ահավոր էր մտածել, որ նրանք են ազգի ապագա մտավորականները, որոնք այսօր, ճակատագրական պահին, չեն կարողանում իրար լսել և միաբանել մի ծրագրի շուրջ: Որոշել էր նրանց հավաքել, մտորել, խելք-խելքի տալ, վերջապես պիտի անպայման հավաքվեին նման ողբերգական դեպքերի առիթով, սակայն խորհրդակցությունը վերածվում էր խառնաժողովի...

Բոլորն սկսեցին խոսել միաժամանակ, յուրաքանչյուրի համար իր ճշմարտությունն էր կարևորը, ուստի ոչ մեկը մյուսին չէր լսում... Լուռ հետևում էր Բաբելոնյան այդ խառնաշփոթությանը և մեծագույն ցավով փաստում, որ սոսկալի դեպքերը ոչնչով չեն փոխել այս մարդկանց, որոնք տվյալ պահին, հավանաբար արդեն մոռացել են, թե ինչու են հավաքվել այստեղ: Եթե այս աղետը նրանց չմիաբանեց, ապա ուրիշ ի՞նչ կարող է... Ուստի այդ իրավիճակում կատարեց, ինչպես ինքն էր համոզված, ամենաճիշտ քայլը. առանց մի բառ ասելու, ձեռնունայն դուրս եկավ սրահից:

* * *

«...Այս միջոցին Շվեյցարիայի տարածքում գտնվող մեր գործակալները մանրամասն տեղեկություններ են հավաքում այն մասին, թե տեղի հայությունն ինչպիսի անդրադարձ է ցուցաբերել այդ դեպքերի հանդեպ: Ստացված զեկուցագրերը վկայում են, որ առանձնահատուկ վերաբերմունք չկա և սպասվածին հակառակ, հավաքական գործողություններ չեն եղել, եթե չհաշվենք «Արմենիա» ուսանողական ընկերության ժողովը, որտեղ ոչ մի որոշում չի ընդունվել: Ավելի նկատելի են մի քանի անձանց անհատական նախաձեռնությունները, որոնցից հատկապես մեր ուշադրությունը գրավեց վերոհիշյալ ուսանողական միության նախագահ Ռուբեն Զիլինկիրյանը, որն այստեղ և Պոլսում առավել հայտնի է Ռուբեն Սևակ գրական ծածկանունով: Վերջին երկու ամսում նա հետևողականորեն զարգացնում է այն միտքը, որ Կիլիկյան դեպքերն ընդամենը սկիզբն են հե-*

տագա՝ ավելի մեծ աղետների, որ չնայած այդ ամենը նախապատրաստվել է սուլթանի հավատարիմ ուժերի ձեռքով, սակայն, իբր, երիտթուրքերի գաղտնի ծառայություններն ամեն ինչ գիտեին և կարող էին կանխել, թե պետք չէ հավատալ պաշտոնական այն հայտարարություններին, թե մեղավորները խստորեն կպատժվեն, իսկ եթե դատավարություն լինի, ապա ըստ Ռ. Ջիլինկիրյանի, դա կլինի ծաղրուծանակ, ոչ թե արդարադատություն:

Բացի այդ, նա ամենուր խոսում է այն մասին, թե հայ մտավորականությունը եկեղեցու և կուսակցությունների հետ անհապաղ պետք է մի ծրագիր մշակի, որպեսզի հնարավոր լինի հայերին պահպանել հետագա, իր կարծիքով, շատ հավանական կոտորածներից, որոնք, ըստ նրա պնդման, պիտի տեղի ունենան Օսմանյան կայսրության տարածքում: Շատ դեպքերում նա վրեժի, զինված դիմադրության կոչեր է անում: Դրանից զատ, հայ ուսանողների մեջ տարածվել են «Կիլիկյան երգեր» բանաստեղծությունները, որտեղ վրեժի և զինված պայքարի ուղղակի կոչեր կան: Այդ բանաստեղծություններն ուսանողներն արտագրում են իրարից, սրճարաններում նստած արտասանում և հատկապես ուղարկում Պոլիս՝ իրենց ազգականներին ու ընկերներին: Ըստ գրաքննության տնօրինության տվյալների, վերջին մեկ ամսում՝ Շվեյցարիայից եկած ծրարներից 27-ի մեջ հայտնաբերվել են այդ բանաստեղծությունների արտագրված օրինակները: Կից ներկայացնում եմ այդ բանաստեղծությունները...»:

* * *

Առավոտյան ժամը ինը կլիներ, երբ գիշերօթիկի կենվորներից մեկը գունատված մտավ ճաշասրահ և ճերմակ ձայնով հայտարարեց.

- Պարոնայք, արդեն երրորդը նետվեց:

- Միայն չասես, թե դարձյալ այդ գիսաստղի պատճառով, - սպառնալից զգուշացրեց ամերիկացի մի ուսանող:

- Ավա՜ղ, պարոն, նա մի նամակ է թողել, որտեղ հենց այդ պատճառն է նշում:

- Ես չգիտեմ, - նկատեց ավստրիացի մի ուսանող, - «Պոչավորի» հետ հանդիպելուց հետո այդքան զոհեր կունենա՞նք, որքան ունենք հիմա, հանդիպումից առաջ:

- Իսկապես... Երեկ կարդացի, որ Բեռլինում ինքնասպանությունների մի շարք է սկսվել, և դարձյալ նույն պատճառով:

- Ասում են, որ Փարիզում էլ նման դեպքեր են եղել:

- Եվ Վարշավայում...

- Սա ի՞նչ մտագարություն է, պարոնայք, - պոռթկաց ամերիկացին և նորից դիմեց գուժկանին: - Դարձյալ նույն տեղի՞ց է նետվել:

- Այո, Բեսիեր կամրջից:

- Տեր Աստված, ժամանակ գտան կառուցելու...

Այս զրույցից բառացիորեն մի քանի օր առաջ, 1909 թ. մայիսի սկզբին, Լոզանի քաղաքապետարանը հանդիսավորությամբ բացեց Բեսիեր կամուր-

ջը՝ բլուրի մի լանջը միացնելով մյուսի լանջին: Այդ լանջերը ժամանակի ընթացքում ծածկվել էին տներով, փողոցներով, իսկ նրանց միջև ընկած ձորակով ոչ թե դետ էր հոսում, այլ պողոտա էր անցնում: Կամուրջն, այսպիսով, օգտակար դեր էր կատարում, ըստ որում, ոչ միայն հետիոտների, այլև կառքերի և ավտոմոբիլների համար: Սակայն քաղաքացիների ուրախությունը նույն օրը մթագնեց ողբերգական միջադեպով. հանդիսավոր բացումից մի քանի ժամ հետո տասնինամյա մի երիտասարդ կամրջից ցած նետվեց: Մայթի վրա, քարի տակ, մի նամակ էր թողել, որտեղ իր ծայրահեղ քայլը բացատրում էր անպատասխան սիրով և Հալլեի գիսավորով: «Եթե իմանայի, որ առջևս մի քսան-երեսուն տարվա կյանք կա և որ այդ ընթացքում, ըստ երևույթին, ես կարժանանամ նրա ուշադրությանը, ապա լուռ ու համբերատար կսպասեի, սակայն գիսավորը սպանում է իմ բոլոր հույսերը»: Հաջորդ օրը մեկ ուրիշ երիտասարդ նետվեց կամրջից: Նա պարզապես գրել էր. «Ձեմ ուզում Գիսավորի զոհը դառնալ: Ինքս եմ հեռանում»: Եվ ահա, բացումից չորս օր հետո երրորդ զոհն էր հայտնվում և դարձյալ անպատասխան սերն ու Հալլեի գիսավորն էին մեղավորները:

- Քաղաքապետարանը մտադիր է մեկական ոստիկան կանգնեցնել յուրաքանչյուր մայթին, - հայտնեց տխուր լրաբերը:

- Ավելի մեծ տխմարություն չէին կարող որոշել, - մռայլորեն ասաց ավստրիացին: - Ոստիկանները ոչնչով չեն կարող խանգարել ինքնասպաններին և նրանց ներկայությունն ավելի գայթակղիչ կդարձնի այդ արարքը:

- Իսկ մտքերը կարո՞ղ են հսկել, կարո՞ղ են այնպես անել, որ ինքնասպանության գաղափարը չհասունանա մարդկանց մեջ...

- Այդքան շատ բան մի պահանջեք խեղճ ոստիկաններից, նրանք անգամ գրպանահատներին չեն կարողանում հսկել...

- Նրանք լավ գիտեն, թե ում են հսկում...

- Քանի՞ օր մնաց այդ գիսավորի գալուն:

- Ուղիղ երկու շաբաթ:

- Ինձ թվում է՝ դա գիտնականների զառանցագին ուղեղի արգասիքն է, - որոշեց իտալացի մի ուսանող, որն առավոտվանից արդեն հասցրել էր «տաքանալ»: - Մի օր մի լավ բան չլսեցինք դրանցից, շարունակ աղետների մասին են խոսում...

- Թույլ տվեք ասել, պարոն, որ հավանաբար սխալվում եք, - միջամտեց սրածայր, խնամված մորուքով մի ռուս ուսանող: - Վիճակն իսկապես շատ լուրջ է, նույնիսկ ճակատագրական, և այն, ինչ ասում են գիտնականները, ավա՜ղ հեքիաթներ չեն: Երկու տարի առաջ մի երկնաքար ընկավ Սիբիրում՝ Տունգուսկայի կողմերը...

- Այո, այո, լսել եմ, - համաձայնեց ավստրիացի ուսանողը: - Ասում են սոսկալի ավերածություններ է արել:

- Քիչ է ասել՝ սոսկալի... Ես առիթ ունեցա զրուցելու դեպքի վայրերը գնացած գիտնականների հետ, նրանք ցնցված էին... Հայտնության աղետները, հավանաբար, ավելի սոսկալի չեն նրանց տեսածի համեմատ: Պատկերացնո՞ւմ եք, Ֆրանսիայի չափ մի տարածք իսպառ ոչնչացված է, այրված, մոխրացած...

Բարեբախտություն է, որ երկնաքարն անբնակ վայրերում է ընկել, պատկերացրեք, թե ինչ կլիներ, եթե Եվրոպայի վրա ընկներ...

- Քաղաքակրթությունը կավարտվեր...

- Ի դեպ, պարոնայք, - նշեց ավստրիացին: - Համաձայն գիտնականների հաշվարկի, Հալլեի գիսավորը մեր մոլորակի հետ պիտի բախվի հենց Եվրոպայի կենտրոնում:

- Այսինքն, այստեղ՝ Շվեյցարիայում:

- Պարոնայք, վերջ տվեք սնահավատություններին, - գոչեց մի գերմանացի, որը մինչ այդ անկյունում նստած լրագիր էր կարդում: - Ձեր ասած գիտնականները, պարոն, սովորական շառլատաններ են, քանզի բազմաթիվ լուրջ աստղագետներ պնդում են, որ միլիոնից մեկ հավանականություն կա բախման համար... Առաջին անգամը չէ, որ այդ գիսավորն, այսպես ասած, հայտնվում է մեր տեսադաշտում... Յոթանասունվեց տարին մեկ մոտենում է մեր մոլորակին և առանց որևէ վնաս պատճառելու հեռանում...

- Իրավացի եք, - համաձայնեց ամերիկացին: - Բախում հազիվ թե լինի, սակայն սխալ եք, թե հեռանում է առանց որևէ վնաս պատճառելու... Երբ ետ ենք նայում դեպի դարերի խորքը, ապա սոսկալի մի օրինաչափություն ենք նկատում. այդ գիսավորի հայտնությունից անմիջապես հետո զանգվածային հրդեհների, հսկայական ավերածությունների և զանազան աղետների մի շրջան է սկսվել, ժանտախտ և այլ վարակիչ հիվանդություններ են տարածվել մայրցամաքներով մեկ, թագավորություններ կործանվել, պետություններ վերացել, ազգեր ոչնչացվել... Այս փաստերը պատմականորեն վավերացված են, և չեք կարող դրանք սնահավատությունների շարքը դասել:

- Եվ ամեն անգամ աղետները նախորդից ավելի սոսկալի են եղել..., - լրացրեց ռուսը:

- Ուզում եք ասել, որ նախորդներից ավելի սոսկալի աղետներ են մեզ սպասվո՞ւմ, - թերահավատությամբ հարցրեց գերմանացին:

- Այդ աղետներն արդեն սկսվել են, պարոն, - ճչտեց ռուսը:

- Ես ոչ մի աղետ չեմ տեսնում, ընդհակառակը, գիտությունները զարգանում են աներևակայելի արագությամբ, բժշկությունն արդեն հրաշքներ է գործում, տեխնիկան՝ նույնպես, մարդիկ արդեն օդով են ճամփորդում, քաղաքից քաղաք կարող ես հեռախոսով խոսել... Ես համոզված եմ, որ երջանիկ ապագա է սպասվում մարդկությանը... Ասենք՝ մի քսան, գուցե երեսուն տարի հետո:

- Եթե մինչ այդ մարդկությունը պահպանվի, - դառը ժպիտով պատասխանեց ռուսը:

- Պարոն, դուք անչափ հոռետես եք, հավանաբար այս ինքնասպանությունները նկատի ունեք:

- Նաև ինքնասպանությունները:

- Դրանք ցավալի, բայց սովորական բաներ են... Ինքնասպանները միշտ եղել են, կան և, ավա՜ղ, կլինեն:

- Սակայն սա ուրիշ է, մենք միայն սառցալեռան ծայրն ենք տեսնում, մինչդեռ ջրի տակ ավելի ահավոր բաներ պիտի լինեն...

- Այո, հիվանդության դրսևորումները շատ հաճախ ավելի անմեղ տեսք են ունենում, քան բուն հիվանդությունը, - համաձայնեց մի երրորդը:

- Սակայն ո՞րն է այդ հիվանդությունը, - հարցրեց գերմանացին:

- Վա՜հ, մի՞թե չեք տեսնում, մարդկությունը հոգնել է ապրելուց, - պատասխանեց ռուսը:

- Ես կասեի՝ կյանքից, - ճշտեց ամերիկացին: - Tædium vitæ... Ինչպես հռոմեացիք կբնորոշեին:

- Այո, ճիշտ այդպես...

- Սակայն պատերազմն է փրկարար ելքը, և ոչ թե ինքնասպանությունը:

- Այսինքն՝ ավելի մեծ ինքնասպանությունը...

Առաջին անգամ չէր, որ ունկնդիր էր դառնում նման զրույցների: Վերջին ժամանակներս դրանք գնալով շատացել էին: Անցած գիշեր տեղի ունեցած ինքնասպանությունը նորից բորբոքեց կրքերը և, առանց զարտուղի ճամփանների, բերեց ու մոտեցրեց հիմնական խնդրին: Ամենուր նույն տագնապն էր՝ համալսարանում, հիվանդանոցում, սրճարաններում, տներում և անգամ անկողնում (ինչո՞ւ սիրել, երբ առջևում մոտալուտ և անխուսափելի վախճանն է կամ՝ հակառակը, ավելի մոլեգին, ավելի խենթ սեր, քանզի վաղը...): Չկար մեկը, որն օրվա ընթացքում առնվազն մեկ անգամ չմասնակցեր նման զրույցների: Եվ որքան ավելի էր մոտենում բախման հավանական օրը, կրքերն այնքան ավելի էին բորբոքվում: Օր չկար, որ մեկը չնետվեր Բեսիեր կամրջից: Եվ դարձյալ գիսավորն էր պատճառը: Մարդիկ արդեն վախենում էին անցնել այդտեղով, իսկ եթե ստիպված էին, ապա մինչև մյուս ծայրը հասնելը մի քանի անգամ խաչակնքում էին, խուսափում մոտենալ բազրիքին և մանավանդ՝ նայել ներքև:

Փողոցներում, հրապարակներում, սրճարաններում և քաղաքի հասարակական այլ վայրերում զանազան խենթեր, կրոնախևներ, կեղծ մարգարեներ, շառլատաններ, սուտ սրբեր և ուրիշ խաբեբաներ հայտնվեցին, որոնց մեծ մասը մինչ այդ, անշուք ու աննկատ կյանքով ապրում էր մյուսների կողքին: Հալլեի գիսավորը նրանց դուրս բերեց անհայտության և անդեմության խավարից, օժտեց մի առաքելությամբ (թեկո՛ւզ մշուշոտ, թեկո՛ւզ կասկածելի) և միանգամից գցեց ասպարեզ: Նրանք, որ նախկինում ուրբաթախոսներ էին, մեկ օրվա մեջ դարձան ճարտար հռետորներ: Նրանք, որ մինչ այդ հագնվում էին միայն զանգվածի մեջ անհետանալու բնազդով, այսինքն՝ գորշ և անգույն, հիմա սկսեցին վառ ու արտասովոր պատմուճաններ, թիկնոցներ և պարեգոտներ հագնել, նրանք, որ մարդկանց հետ խուսափում էին խոսել, իսկ խոսելիս գետին էին նայում կամ երեսները շրջում (քանզի դժգոհ էին Աստծուց ստացած իրենց աչքուերեսի համար), այժմ ծածկվեցին մաթուսայելյան փրկարար, անգամ բացահայտ տխմարին իմաստուն տեսք պարգևող մորուքներով և իրենց շանթարձակ աչքերն սկսեցին համարձակորեն մարդկանց հոգու խորքերը մխրճել:

Ոչ ոք չէր համարձակվում նրանց առջև դուռ փակել, ճանապարհը կտրել, չլսել: Օրվա տարբեր ժամերին հայտնվում էին քաղաքի մարդաշատ վայրերում, բարբառում աշխարհի մոտալուտ կործանման մասին, անգութ մի ոգևորությամբ նկարագրում սպասվելիք աղետները և կոչ անում ապաշխարել:

Բոլորն իրար նման չէին: Նրանցից ոմանք սպառնում էին և շանթ ու որոտ արձակում, մյուսները՝ հորդորում, մի երրորդն էլ մխիթարում էր, իսկ կար մեկը, որ կուրծքն էր ծեծում ու լալիս:

Ոստիկաններն սկզբում փորձում էին դրանց քշել, նույնիսկ ձերբակալել, բայց մարդիկ միջամտում էին՝ ասելով, թե ոչ մեկի կյանքին կամ ունեցվածքին վտանգ չեն սպառնում: Սակայն հոգևորականները գտնում էին, որ այդ պարականոն քարոզիչները վտանգավոր են, որ ունայն ու վնասակար խոսքերով պղտորում են խռովված հոգիները, կոչ էին անում համախմբվել եկեղեցու շուրջ, հավատալ միայն բարի հովվի հորդորներին:

Այս անարծաթասեր խենթերի կողքին հայտնվեցին նաև ճարպիկ դրամաշորթներ, որոնք գործում էին անվրեպ: Նրանք թակում էին Շվեյցարիայում ծվարած բազմազգ մեծահարուստների դռները՝ հրաշալի իմանալով, թե այդ ոսկիների տակ որքա՜ն արյուն ու հարստահարումներ կան: Ներկայանում էին զանազան բարեգործական և մարդասիրական ընկերությունների անունից և այնպիսի հուզիչ բառեր ասում, որ կարողանում էին շարժել ոչ միայն կրեսոսների քար սրտերը, այլև նրանց քսակի բերանը լայնորեն բացել:

Ամեն մեկն իր տեղում սպասում էր մահվան, որն այլևս հեռավոր մի գաղափար չէր, այլ ճշգրտված անխուսափելիություն: Ոմանք փորձեցին փախուստ տալ, ուղևորվեցին Աֆրիկա, Ամերիկա, Չինաստան, Ավստրալիա, մտածելով, որ տարածություններն այնտեղ լայնարձակ են, ուստի փրկության հավանականությունն ավելի մեծ կլինի: Իսկ նրանք, ովքեր չէին ճամփորդում, գերադասեցին մայիսի 17-ն անցկացնել տանը, չնայած այդ օրը երեքշաբթի էր: Տունը, այնուամենայնիվ, կայունության, ապահովության մարմնավորում է և, բնականաբար, վստահություն էր ներշնչում:

Տասնյոթը եկավ ու անցավ մյուս օրերի պես և մարդիկ վերջնականապես համոզվեցին, որ Հալլեի գիսավորը չբարեհաճեց բախվել մեր մոլորակի հետ և, պատկառելի հեռավորության վրա անցնելով մեր կողքից, գնաց նորից դեպի տիեզերքի անհունը: Նրանք, որոշ առումով, հուսահատության պես մի բան ապրեցին. չէ որ արդեն պատրաստ էին մահը գրկել, սակայն անմիջապես մոռացան ամեն ինչ, նույնիսկ այն սոսկալի նախազգուշացումները, որ ասվել էին խենթերի շուրթերով...

* * *

Ամեն ինչ սկսվեց հասարակ և իր կարծիքով անմեղ միջադեպից: Ինքն ընդամենը ասաց. «Սիրելիս, դու այդ կտորն արդեն քսաներեք անգամ նվագեցիր, ես ոչ մի տարբերություն չտեսա առաջինի և վերջինի միջև, ինչո՞ւ ես քեզ այդքան չարչարում»: Նա չասաց, թե անգամ ամենահանճարեղ գործը, թեկուզ հրաշալի կատարմամբ, քսաներեք անգամ լսելուց հետո դառնում է անտանելի... Չասաց, թե կատարյալ տանջանք է առավոտյան ժամը իններից մինչև մեկը, այնուհետև ժամը երկուսից մինչև յոթը երաժշտական նույն գործը լսել քսան, երեսուն, քառասո՜ւն անգամ իրար ետևից: Խելագարվել կարելի է... Սրբի համ-

բերություն է պետք դիմանալու համար: Գոնե Շոպենի կամ Շուբերտի երազային մեղեդիները լինեին... Սակայն, ոչ, Լիստի դիվական երաժշտությունն է նվագում, որը նույնիսկ ամեն տղամարդու չէր սազի: Թվում է, թե գերմանական ամրակուռ դաշնամուրը հիմա ջարդուփշուր կլինի...

Զասաց, թե, սիրելիս, պետք չէ չարաշահել հարևանների համբերությունը... Զասաց, թե այդ դաշնամուրի պատճառով խոհանոցն ամբողջովին հանձնել է սպասուհու ձեռքը, և որ այդ ապաշնորհ աղջկա պատրաստած գեղջկական ծանրամարս ճաշերից ստամոքսն արդեն ցավում է... Զասաց, որ դաշնամուրի այդ վարժություններից հետո հնարավոր չէ անգամ մեկ բառ հետը փոխանակել, քանզի ոչ միայն ուժասպառված է լինում, այլ վատթարը՝ գրգռված, և այդ պատճառով էլ անկարելի է հետը հաղորդակցվել... Վերջապես չասաց, թե տասնյակ թերթեր ու ամսագրեր սպասում են իր բանաստեղծություններին, պատմվածքներին ու հոդվածներին, որ ինքը կոչված է իր ժողովրդին կարևոր ճշմարտություններ հայտնելու, կորով ու ոգի հաղորդելու... Ուրիշ բաներ էլ կարող էր ասել, բայց չասաց, այլ պարզապես մեղմաձայն արտաբերեց. «Ինչո՞ւ ես քեզ այդքան չարչարում»:

Ասես լուցկի բռնկվեր:

- Ուզում ես ասել, որ ընդհանրապես չնվագե՞մ, - հարձակողական շեշտերով հարցրեց Յաննին:

- Ես այդպիսի բան չասացի, - պաշտպանվեց Ռուբենը: - Պարզապես տեսնում եմ, որ դու արդեն պատրաստ ես համերգին, ուստի բնավ կարիք չկա այդքան շատ վարժություններ անելու... Դա հոգնեցնում է քեզ:

- Իսկ ես գտնում եմ, որ քիչ եմ նվագում, որ պետք է ավելի շատ պարապեմ, որովհետև շատ պատասխանատու, շատ վտանգավոր համերգ է, ես պիտի շատ լավ նվագեմ:

- Սակայն դու արդեն հրաշալի ես նվագում:

- Ոչ, ոչ, ոչ... Դու ընդհանրապես չես ուզում, որ ես նվագեմ, ուզում ես, որ տապալվեմ...

- Ինչե՛ր ես խոսում, Յաննի, սիրելիս, ինչպե՞ս կարող են այդպիսի բաներ անցնել մտքովդ:

Սակայն իր խոսքերը հակառակ ազդեցություն ունեցան, և պարզվեց, որ ամուսնության երկու ամսվա մեջ բավական վիրավորանք ու դժգոհություն է կուտակվել նրանում: Եվ այս դաշնամուրն էր պատճառը, որ արդեն երկու շաբաթ, ամեն օր, ամեն ժամ թունավորում էր նրան, այսինքն՝ ինչո՞ւ միայն նրան, իրենց երկուսին: Ինքն էր, որ այդ համերգի գաղափարն ունեցավ, առաջարկեց նրան, ոգևորեց, քանզի մեղքի զգացում ուներ, քանզի իրենց ամուսնության նախօրեին Յաննիի մեջ նորից արթնացավ թատրոնի սերը, և ինքն ամենակտրուկ պահանջները ներկայացրեց: Այս անգամ այլևս երկընտրանք չէր առաջարկում նրան՝ կամ ես, կամ թատրոնը, այլ պարզապես պահանջում էր: Ինքն էր, որ գրեց Յաննիին, թե «հնազանդությունը լավ է, երբ կամավոր է»: Բայց իսկապե՞ս կամավոր էր Յաննիի հնազանդությունը, վստահորեն չէր կարող ասել... Քանզի տեսնում էր, թե ամուսնությանը նախորդող ամիսների ընթացքում ինչ-

պես էր իր մեջ խեղդում թատրոնի հանդեպ վերածնվող սերը, այն սերը, որը պղծեցին մի երկու տարի առաջ, քանզի գիտեր, որ եթե մեկն իր ներսում մուսաների ձայնն է լսել, պիտի անսա այդ կոչին կամ պիտի խլացնի, խեղդի իր մեջ, իսկ դա նման է ինքնասպանության... Ուստի այս գաղափարը հղացավ, որպեսզի այդ կերպ կարողանա արվեստի ծարավը հագեցնել: Չէ որ սա էլ բեմ է, վերջապես, ուրիշ կերպարի մարմնավորում է: Յաննին ոգևորվեց, հաճույքով սկսեց պարապել, սակայն երրորդ, թե չորրորդ օրն էր, խոստովանելու պես ասաց. «Գիտես, բեմում ավելի հեշտ էր, ես սահում էի, թռչում, իսկ այս դաշնամուրը կարծես տանջանքի գործիք լինի...»: «Սիրելիս, բայց բոլորը հիացած են քո նվագով»: «Գուցե, բայց ես դաշնակահար չեմ»: Այնուհանդերձ շարունակեց պարապել՝ նվիրված, խելագարի պես, ասես մեկի պակասը մյուսով լրացնելու համար:

...Այսպիսի անդրադարձ, սակայն, չէր սպասում: Պսակադրությանը հաջորդող ամիսների անամպ երկինքը միանգամից մթագնեց: «Ընտանեկան կռիվ» կամ «սկանդալ» բառերը գուցե չափազանցված լինեին՝ այդ տեսարանը որակելու համար, թերևս «վեճը» կսազեր: Վիրավորական ոչ մի բառ չհնչեց, ոչ մեկի ձայնը չբարձրացավ: Շեչտերը միայն սրվեցին, օդը միանգամից էլեկտրականացավ, դեմքի արտահայտությունները փոխվեցին և ձեռքերի շարժումները սովորականից ավելի կտրուկ դարձան: Բայց այդքանն արդեն բավական էր, որ երկարաձգված մեղրամիսն ավարտված համարվեր: Ճիշտ է, մի քանի րոպե հետո Յաննին մոտեցավ նրան և համբույրներով փորձեց մեղմել քիչ առաջվա տեսարանը, սակայն նա հասկացավ, որ արդեն սկսվեց ընտանեկան առօրյա կյանքը՝ ավա՛ղ, պրոզայիկ, գործնական, իրար հաջորդող հոգսերով, տաղտուկներով, երբեմն էլ վեճերով ու գժտություններով: Ողբերգական ոչինչ չկա դրանում, այսպիսին է ընտանիքը և անգամ՝ բանաստեղծի...

Մինչդեռ վաղուց սկսած նրանց սերը, երջանկության բարձր ալիքի վրա հասել էր ընտանիք կոչված բաղձալի հանգրվանին: Որոշեցին ամուսնանալ Լոզանում: Թղթերի մի քաշքշուկ սկսվեց այդ պատճառով: Յաննիի հայրը մինչև վերջ շարունակեց իր կամակոր ու միամիտ ռազմավարությունը. բավական երկար ուշացումով էր ստորագրում անհրաժեշտ փաստաթղթերը, չէր պատասխանում ապագա փեսայի նամակներին ու շնորհավորական բացիկներին, որոնք, այնուամենայնիվ, օրինակելի կանոնավորությամբ գալիս էին:

Իսկապես, ի՜նչ երջանիկ օրեր էին: Բյուրոկրատական քաշքշուկները, դանազան թղթեր պատրաստելն ամենևին տհաճ չէր թվում, ավելին՝ ինչ-որ հետաքրքրություն էր մտցնում, քանզի գիտեր, որ յուրաքանչյուր թուղթն ստորագրելուց հետո ավելի է մոտենում վերջնական նպատակին: Զվարճալի, նույնիսկ զավեշտալի մի նոր կյանք սկսվեց, երբ Լոզանի քաղաքապետարանում պաշտոնապես հայտնեցին, որ իրենց ամուսնության օրը նշանակված է հուլիսի 17-ին: Լուրը տպագրվեց քաղաքային թերթում, որտեղ մահերի և ծնունդների կողքին ներկայացվում էին նաև կայացած և կայանալիք պսակները: Կույտերով նամակներ սկսեցին գալ Շվեյցարիայի տարբեր անկյուններից: Նորակազմ ընտանիքին «շահավետ պայմաններով» և «հրապուրիչ գներով» առաջարկում էին կահույք, անկողնի սպիտակեղեն, հարսանեկան և այլ զգեստներ, խոհանոցի պի-

տույքներ, սեղանի սպասք, օծանելիք, զարդեր, էլեկտրական զանգ, հեռախոս, հարսանիքի խոհարարական սպասարկում, մեղրամիսի ուղևորություններ, բնակարաններ ու առանձնատներ՝ վարձելու կամ գնելու համար: Կարելի էր կարծել, թե ամբողջ Շվեյցարիան զբաղված է վաճառելով:

Նամակների հետ միաժամանակ սկսեցին այցելել առևտրական գործակալները: Դուռը թակում էին օրվա տարբեր ժամերին, շատ հաճախ մտնում ներս առանց հարցնելու, ստիպում համտեսել, հագնել, ստուգել, հոտոտել...

Պրն. Ֆրանց Ապելը մինչև վերջ չհրաժարվեց այծի իր համառությունից: Պայմանավորվել էին, որ Յաննին Լոզան կժամանի ամուսնությունից երեք օր առաջ, հուլիսի 14-ին: Ինքնին հասկանալի էր, որ մենակ չի գալու, ուստի, համենայն դեպս, երկու սենյակ պատվիրեց տիկ. Մորֆոյի նշանավոր գիշերօթիկում, որտեղ հիմնականում ունևոր մարդիկ էին ապրում՝ երբեմն ընտանիքներով: Սակայն ամսի 14-ին պարոն գնդապետը Լոզան չժամանեց: Յաննին եկավ՝ իր քրոջ և մոր ուղեկցությամբ: Գործերն, իբր, չէին թողել, որ պարոն գնդապետը նրանց ուղեկցեր, ուստի Լոզան կգա հարսանիքի օրը: Նա ձգտում էր հնարավորին չափ քիչ ժամանակ անցկացնել իր փեսայի հետ, քանզի նախապես որոշված էր, որ ամսի 20-ին նորապսակները մեկնելու են Շամպերի: Այնպես որ գնդապետը երեք օր շահում էր:

Շամպերիում հեքիաթային քառասուն օրեր անցկացրին: Ամեն մի ժամը, ամեն մի խոսքն ու քայլը հրճվանք էր բերում իր հետ, այդ օրերի ընթացքում որևէ տհաճ միջադեպ տեղի չունեցավ: Բնությունն էլ կարծես հոգացել էր, որպեսզի ամեն ինչ լինի չափավոր ու հաճելի: Իսկ երբ կեսգիշերն անց, առաջին անգամվա պես գաղտագողի բարձրացան Խաչելություն, ապա փոքրիկ ջրվեժի խշշոցի ներքո, Հիսուսի առջև հսկելուց և տանձի օղու փոքրիկ շիշը (այն առաջին չշի չափ, որ թաղեցին Խաչելության տակ) կում-կում կլսելուց հետո Ռուբենն անսպասելի ոտքի կանգնեց և ձեռքերն առ երկինք տարածելով աղաղակեց. «Աստված, այս որքա՜ն երջանկություն ես տվել մեզ, բայց տես, թե որքան թշվառներ ու զրկյալներ կան այս աշխարհում, նրանց էլ ուրախացրու...»:

Օգոստոսի վերջին օրն էր: Գնացքի մեկնելուն ընդամենը մեկ ժամ էր մնացել, սակայն դեռ չէին հավաքել իրենց ճամպրուկները: Չէին ուզում հեռանալ այդտեղից, ասես Դրախտից արտաքսվեին: Հետո տոմսերը չէին դտնում: Երեք րոպե էր մնում գնացքի շարժվելուն, երբ հասան կայարան և հազիվ հասցրեցին վագոն մտնել: Ամբողջ ճանապարհին լուռ էին: Միայն, երբ Էգլի կայարանում, գնացքը փոխելուց առաջ, ուղղակի կառամատույցին, Վալեի ճերմակ մուսկատ էին խմում, բաժակը զարկելով ասաց. «Հիմա կգնանք մեր բույնը և նոր կյանք կսկսենք»: Յաննին ժպտաց վերջապես, գլխով արեց և հենց այդտեղ համբուրվեցին:

Հիմա էր հասկանում, թե ինչու չէին ուզում հեռանալ Շամպերիից: Հավանաբար բնազդով արդեն զգում էին, որ այստեղ՝ վարը, «ընտանեկան այս անդորը բույնի մեջ» պիտի ամեն օր ստիպված լինեն դիմագրավել առօրյայի մանրիկ, բայց տևական գրոհներին: Մինչդեռ ինքը չէ՞ր, որ Հունվարյան ցուրտ մի գիշեր, Լամարտինի «Գրացիելան» կարդալուց հետո, այսպիսի տողեր գրեց

նրան. «Երբ դիրքը դրեցի մի կողմ, նախանձի տարտամ մի զգացողություն ծնվեց հոգուս մեջ. «Մի՞թե սա ավելի իդեալական է, քան մեր սերը», - հարցնում էի ինքս ինձ... Եվ ակամա աչքերս դարձան դեպի քեզ, ձեռքս երկարեցի, դիմանկարդ առա, սեղմեցի կրծքիս և գգվեցի շրթներովս, դու սարսռացիր և հուշիկ հծծեցիր ինձ. «Ո՛չ, սիրելիս, մեր սերն է ամենաիդեալականը»: Այսօրվա պես հիշում էր այդ գիշերը, երբ ընթերցումից բորբոքված գլխով չէր կարողանում քնել: Հետո վեր թռավ տեղից հայտնություն արածի պես, Լևոնին հանեց քնից և, կարծես արդարանալով, գոչեց. «Բայց սա գիրք է ընդամենը, թուղթ, երևակայություն, մինչդեռ երեք տարի է մենք ապրում ենք իդեալական սիրով... Կարելի՞ է միթե... Իրականությո՞ւն է իսկապես սա, թե՞ հավերժական երազ... Սա չափազանց իրական է՝ իրական լինելու համար...»:

Իսկ հետո, երբ ի պատասխան այդ նամակին Յաննին խորհուրդ տվեց կարդալ Գյոթեի «Վերթերը», վեպ, որը հրաշալի գիտեր, հիշում էր, որ գրեց այդ մասին՝ համեմատելով Վիկոնտ դը Վոգյուեի «Ժան դ'Ագրեվ» վեպի հետ՝ դարձյալ նամակներով գրված մի գործ: Գուցե հանդուգն թվար, բայց անկեղծորեն գրեց, որ այդ նամակները ճանձրալի են, որովհետև հորինովի են, երևակայական, նույնիսկ ծիծաղելի... Դրանք երբեք գոյություն չեն ունեցել, դրանք հեղինակն է գրել՝ գիրք ստեղծելու համար, մինչդեռ իրենց նամակները ճշմարիտ սիրո արտահայտությունն են, սեր, որ իրենք են ստեղծել, սեր, որը միաժամանակ ստեղծում է իրենց... Մի՞թե սա վեպ չէ՝ իրենց սերը, իր բոլոր նրբերանգներով, իր ամբողջ հարստությամբ... Եվ դա մի վեպ է, որ դեռ պիտի շարունակվի:

Եվ իրենք էլ չնկատելով, սկսեցին ապրել այդ վեպի երկու իրականությունների մեջ. գրված և գրվող: Ուշ աշնան երեկոներին, երբ Լոզանում սկսում են փչել ցուրտ քամիները, նրանք նստում էին բուխարիկի մոտ և ժամանակին իրար գրած նամակները կարդում: Նրանք, որ հիմա ապրում էին բոլորովին այլ մի իրականության մեջ, նայում էին այդ ամենին որպես վաղուց և գրեթե ուրիշների հետ պատահած դեպքերի: Ժամանակը և իրադարձությունները հնարավորություն էին տվել, որպեսզի իրենք իրենց նայեն տարածությունից:

Այդպիսի երեկոներից մեկի ժամանակ էր, որ Յաննին մի նամակ կարդաց՝ գրված մարտի 29-ին, ամուսնությունից մի չորս ամիս առաջ: Յուրաքանչյուրը կարդում էր իր ստացած նամակները: Յաննին՝ խնամքով դարսված, տարիների, ամիսների բաժանած ու թելով կապած կույտի միջից առանձնացրեց այդ մեկը և տվեց նրան: Նամակի վրա բազմաթիվ նշումներ կային կարմիր մատիտով, իսկ մի պարբերություն ծայրեծայր ընդգծված էր. «Եվ պիտի ներես ինձ քեզ սիրահարված լինելու մեծ ոճիրիս համար: Ինչո՞ւ սիրեցի քեզ: Ի՞նչ իրավունքով հափշտակեցի քո այնքա՜ն երիտասարդ ու այնքան հրեշտակային սիրտդ: Ո՞վ թույլ տվեց ինձ դառնալ ամբողջ անձիդ տերն ու տիրակալը, ես, որ արժանի չեմ քո սպասավորներից ամենահետինն անգամ լինելու: Ո՞վ կարողացավ ինձ հրամայել, որ կոպտորեն խուժեմ մտածմունքներիդ և հոգուդ հեզիկ պարկեշտության մեջ: Ի՞նչ իրավասությամբ կապեցի քեզ Սիրույս սյունին և կարգադրեցի, որ տարիներ շարունակ մնաս անշարժ՝ չունենալով ժպտալու սիրտ և արտասվելու թույլտվություն: Ի՞նչ իրավունքով տակնուվրա արի խաղաղ կյանքդ, քնա-

սույզ երազներդ, ապագայի հեշտագին հույսերով օրորվող սիրտդ, երիտասարդությամբ ու խնդությամբ լեցուն հոգիդ... Թերևս ապագան ավելի շողշողուն բացվեր առջևդ: Թերևս Բախտը քեզ օծեր կախարդական խինդ ու հրճվանքով...

Եվ հիմա, խեղճ աղջիկ, դու այդտեղ ես արդեն երեք տարի, մենակ, անընկեր սպասում ես ինձ և աշխարհում ոչ մի նեցուկ չունես՝ հեռավոր մի խեղճ սիրահարից բացի... Ի՜նչ ահռելի ոճիր... Պիտի ներե՞ս ինձ»:

Կարդաց ու ցնցվեց իր իսկ տողերից: Դժվարանում էր հիշել, թե ամեն օր գրվող նամակների հոսանքի մեջ ինչպես և ինչու էր սպրդել այս ընդարձակ և արտառոց պարբերությունը: Լինում էին պահեր, երբ ասես ուրիշ մի ձեռք էր շարժում իր գրիչը, և մանավանդ բանաստեղծություններ գրելիս: 1909 թ. ամռանը, երբ Պոլսում Հրանտի հետ մտմտում էին իր առաջին ժողովածուի բովանդակության մասին և մամուլում տպված գործերը վերանայում, հանկարծ նրանց ուշադրությունը գրավեց 1908 թ. օգոստոսին տպված մի բանաստեղծություն: Հրանտը երկու անգամ կարդաց և դարձավ նրան. «Հիշո՞ւմ ես, թե երբ ես գրել այս բանաստեղծությունը»: «Երիտթուրքերի հեղափոխության օրերին», - պատասխանեց նա: «Նշանակում է՝ այն օրերին դու արդեն գիտեիր, որ Ադանայի կոտորածն է լինելու», - գրեթե գոռալով արտաբերեց Հրանտը: «Ինչպե՞ս կարող էի իմանալ, ինչե՞ր ես խոսում, Հրանտ... Ես մարգարե չեմ»: «Հապա ինչո՞ւ ես այսպիսի տողեր գրել.

Կարմիր կտեսնեն աչքերս նորեն...
Վերջին հառաչներ կուրծքերու խորեն.
Մեռե՛լ, հոգե՛վարք, կույտ-կույտ քով-քովի
Կռկռացող սև խումբեր ագռավի...»:

Արդյոք սա չի՞ նշանակում, թե իր ներսում, իրենից զատ կա մեկ ուրիշը, որ իր անունը, իր ձեռքը, իր ձայնն ու գրիչն օգտագործում է սեփական մտքերն արտահայտելու համար: Այդ մտքերը հակառակ չէին իր էությանը, իր սկզբունքներին... Վերջապես, այդ «մյուսի» բանաստեղծությունը ընավ վատը չէր, նույնիսկ լավն էր, հրաշալի, սակայն շատ կուզեր նրան դուրս բերել անհայտությունից, տիրանալ նրա հեռատեսությանը, իմաստությանը... Բայց, ավա՜ղ, գիտեր, որ դա գրեթե անկարելի է, որ դա կատարելապես ենթակա չէ մարդկային կամքին, որ Տերն է ընտրում մեզ, անհրաժեշտ պահերին գրիչը դնում մեր ձեռքը և շարժում իր ուզածով: Ուստի ինչո՞ւ ենք մեղադրում մյուսներին, թե ականջալուր չեղան մեր զգուշացումներին, երբ ինքներս շատ հաճախ չենք հասկանում, թե ինչ և ինչու գրեցինք...

Անգիր հիշում էր այդ բանաստեղծությունը, սակայն երբ լրագրի էջին՝ Կիլիկյան դեպքերից ութ ամիս առաջ տպագրված տեսավ, սոսկումի հետ խառնված զանազան զգացումներ համակեցին նրան: Նույնիսկ թվաց, որ եթե այդ բանաստեղծությունը գրած չլիներ, աղետը հազիվ թե պատահեր:

Համանման և գուցե ավելի մի ծանր զգացում ապրեց այդ նամակը կարդալուց հետո: Այո, պահեր էին եղել, երբ մենության մեջ՝ ինքն իր հետ մտորելիս, գտել էր, որ Յաննին իսկապես մեծ է իրենից հոգով, արվեստագետի իր խո-

բունկ ներքինով, սերն ապրելու և սեր կերտելու իր անսպառ տաղանդով: Եվ միշտ հրճվանքով էր փաստել այդ աղնիվ գերակայությունը: Եվ հրաշք էր կատարվում ամեն անգամ, երբ նրան արժանին մատուցելով, զգում էր, թե ինչպես հարստանում, կենսական ինչպիսի ուժերով է լցվում ինքը:

Սակայն որտեղի՞ց են ծնվում ցավի և կորստյան կանխազգացումները և ինչո՞ւ հատկապես ամուսնությունից առաջ: Ինչո՞ւ... Մի՞թե պիտի սպասեր ամիսներ, գուցե տարիներ, որպեսզի post factum՝ կատարված դեպքերի հետքերով վերծաներ կանխազգացվածը: Իսկ եթե դա բանաստեղծության պես լինի՞... Օ, ոչ, կարիք չկա գույները թանձրացնել, երբ արդեն իր «մարգարեությունը» կատարվում է, երբ Յաննին ողբում է իր մեջ մեռնող արվեստագետին: Մեռնո՞ղ, թե՞ մեռցվող... Ի՞նչ տարբերություն...

Բայց ինչո՞ւ «մեռնող», երբ իրոք հրաշալի է նվագում: Դա միայն իր կարծիքը չէ, լուրջ մասնագետներ են վկայել, ըստ որում բեմական տաղանդի հայտնվելուց շատ ավելի առաջ: Ուրեմն, պետք է օգնել նրան, քաջալերել, որ շարունակի աշխատել: Նա անպայման հաջողության կհասնի, և առաջին հերթին իր օգնությամբ: Ուստի այդ երեկո, իրենց առաջին բուռն տեսարանից հետո (լավ էր, որ արվեստի պատճառով եղավ) նա մոտեցավ, գրկեց Յաննիին և ականջին շշնջաց.

- Կներես, որ անզգույշ խոսքերով վիրավորեցի քեզ... Հիմա գլխավորը քո համերգն է, ամեն ինչ պիտի անենք, որ փայլուն անցնի:

- Իսկապես ուզո՞ւմ ես, որ մասնակցեմ:

- Այդպիսի հարց մի տուր, դու գիտես, որ պիտի ասեմ՝ «այո»: Բայց ասելը քիչ է:

Յաննիին նստեցրեց բազմոցին, ինքը հարմար տեղավորվեց կողքը և ուսերից բռնելով շարունակեց.

- Հիշո՞ւմ ես այն չորս հարկանի հոյակապ առանձնատունը ավընյու Մոն-Ռեպոյի վրա... Անցած շաբաթ հյուր էինք այնտեղ՝ դոկտոր Բուրժեի մոտ:

- Այո, հիշում եմ, ասացի, թե Լոզանի ամենագեղեցիկ առանձնատունն է:

- Նաև ասացիր, թե ինչ լավ կլիներ, եթե այդտեղ վարձած լինեինք մեր բնակարանը:

- Դա կատակ էր, սիրելիս, պատկերացնում եմ, թե որքան թանկ կլինի:

- Էժան չէ, բայց երեկ դոկտոր Բուրժեն հիվանդանոցում ինձ քաշեց մի կողմ և բարեկամաբար ասաց հետևյալը. «Սիրելի Ռուբեն, երեք ամիս հետո ամբողջ երրորդ հարկը կարող եք վարձել, չորս սենյականոց հրաշալի բնակարան է, հաճույք պատճառեք ձեր տիկնոջը»: «Բայց իմ աշխատավարձը թույլ չի տա, դոկտոր», - ասացի: «Ես խոսել եմ տանտիրոջ հետ, նա պատրաստ է ձեզ զիջել մատչելի գնով, մինչև որ հիվանդանոցում վերջնականապես հաստատվեք որպես բժիշկ...»: Եվ հետո գիտե՞ս ինչ ասաց. «Կարծեմ հեռու չէ այդ օրը...»:

- Ես շատ գոհ եմ այս բնակարանից, այստեղ ինձ համար շա՜տ հաճելի է...

- Այնտեղ ավելի լավ կլինի, կտեսնես, ամեն մեկս իր սենյակը կունենա, փաստորեն կլինենք և՛ միասին, և՛ իրարից հեռու, որպեսզի յուրաքանչյուրն ազատ ստեղծագործի:

- Բայցևայնպես, չորս սենյակը շատ է:

- Համոզվա՞ծ ես... Իսկ ես կարծում եմ, որ շուտով երեք հոգի կդառնանք, չորս, հինգ...

Յաննին մոտեցավ և ցուցամատով փակեց նրա բերանը.

- Լռի՛ր, այդքանը բավական է:

Հետո խիստ ձևանալով ավելացրեց.

- Իսկ հիմա թող աշխատեմ... Հա, ի դեպ, այդ ինչպե՞ս էիր կարողանում «Old India»-ում տիրող ժխորի և ծխի մեջ բանաստեղծություններ գրել...

Նա բազմանշանակալից ժպտաց, դուռը փակեց և մոտեցավ դաշնամուրին:

Համերգը հաջող անցավ: Կոնսերվատորիայի դահլիճում էր, քննության պես մի բան էր: Բոլոր մասնագետ երաժիշտներն այստեղից էին սկսել իրենց գործունեությունը: Առաջարկներ եղան ուրիշ սրահներում էլ նվագելու: Իսկ կոնսերվատորիայի պրոֆեսորներից մեկն ասաց.

- Ես հասկանում եմ, այդ առաջարկները գուցե հրապուրիչ են, սակայն ձեր տեղը լինեի՝ չէի շտապի... Ձեր նվագն, անշուշտ, տպավորիչ է, որոշ կտորներ նույնիսկ փայլուն էին, բայցևայնպես դա ինքնուսի նվագ էր... Ես ձեզ խորհուրդ կտայի մեկ տարի պարապել որևէ լավ ուսուցչի մոտ, որից հետո դուք կկարողանաք համերգներ տալ... Վաղը եկեք կոնսերվատորիա՝ լրջորեն խոսենք այդ մասին:

Հաջորդ օրը երեկոյան երբ Ռուբենը տուն եկավ հիվանդանոցից, առաջին հերթին հարցրեց, թե ինչ որոշեցին կոնսերվատորիայում:

- Ես չգնացի այնտեղ:

- Ինչո՞ւ, չէ որ ժամադրված էիր:

- Այո, բայց չուզեցի:

- Ինչո՞ւ, ինքդ տեսար, թե ինչպես էին հիացել քո նվագով, դա իսկապես անկեղծ էր:

- Այո, հավատում եմ:

- Այդ դեպքում ի՞նչ կա... ինչո՞ւ ես հրաժարվում:

- Ես երկար մտածեցի և գտա, որ ամենաճիշտը կլինի ամբողջովին նվիրվել մեր սիրուն, մեր ընտանիքին:

- Սիրելիս, դու արդեն նվիրված ես և պետք չէ, որ հանուն մեր սիրո զոհաբերես քո երաժշտական տաղանդը:

Նա մի պահ անքեն հայացքով նայեց Ռուբենին և ջերմորեն գրկելով ասաց.

- Ամենամեծ զոհաբերությունն արդեն արել եմ... Սա ի՞նչ է որ նրա համեմատ...

- Անկեղծ ասա, սիրտդ շա՞տ է ցավում:

- Ցավում է, իհարկե, սակայն այդպես է կյանքը... Ամբողջ երջանկությունը չես կարող միանգամից ստանալ... Պիտի պահպանես հիմնականը, և ես տեսա, որ առանց թատրոնի ծանր կլինի ապրել, շա՜տ դժվար, բայց առանց մեր սիրո ես չեմ կարողանա ապրել:

* * *

- Այլևս ոչ մի բանի չես հավատում, Ռուբեն, ո՛չ Աստծուն, ո՛չ մարդուն, ո՛չ Գեղեցիկին, ոչ էլ անգամ Սիրուն..., - պոռթկաց Հրանտ Նազարյանցը: - Բանաստեղծն առանց պաշտամունքի նույնն է, ինչ մարդն առանց օդի կամ ծաղիկն առանց լույսի:

- Սակայն ինչպես տեսնում ես՝ չեմ խեղդվում և չեմ թոշնում:

- Կատակը մի կողմ, Ռուբեն, ինձ զարմացնում է այն փոփոխությունը, որ վերջին տարիներս կատարվեց քեզանում...

- Լսիր, Հրանտ, մի քանի տարում անգամ անշարժ քարն է փոխվում, ուր մնաց գիշեր-ցերեկ շարժվող մարդը:

- Ես չեմ հասկանում, որտեղի՞ց այդ հոռետեսությունը, այդ կասկածը, նույնիսկ ատելությունը Եվրոպայի, արևմուտքի քաղաքակրթության հանդեպ... Իսկ այսօր պարզեցի նաև, որ հավատ չունես մեր ազգի հանդեպ:

- Ո՞վ ասաց քեզ:

- Դու ասացիր քիչ առաջ... Ինչպե՞ս էր վերնագրված այն բանաստեղծությունը, որ քիչ առաջ կարդացիր, - հարցրեց Հրանտը՝ սեղանին դրված ձեռագրերի կույտը թերթելով: - Հա, այս մեկը՝ «Իրենց պատմությունը»... Դու կյանքի ես կոչում մեր նախնիներին, և ի՞նչ են անում նրանք՝ հարություն առնելուց հետո... Խնդրում եմ վերջին քառյակները նորից կարդա:

Ռուբենը վերցրեց ձեռագիրը և սովորական ձայնով կարդաց՝ առանց որևէ կիրք հաղորդելու.

Բայց հազիվ կյանքի վերստացան շունչ
Այդ հազարդարյան ոսկրերն անշշունջ
Սկսան իրար պատռտել դժխեմ,
Ամենքն իրար հետ, զավակը հոր դեմ...

Երբ քիչ վերջ բոլորն ալ ինկան արդեն.
Խոր հառաչանքով հծծեցի. «Մարդ են...»
Բայց մի ծերունի՝ իրենց վրայեն
Կոխոտեց անցավ ու լացավ «Հայ են...»:

- Բայց, սիրելիս, դու շատ դաժան ես... «Վերջին հայերը» հրաշալի բանաստեղծությանդ մեջ արշալույս ես խոստանում մեր ժողովրդին, իսկ այստեղ փշրում ես բոլոր հույսերը:

- Ես ավելի դաժան չեմ, քան իրականությունը... Դու ինքդ այսօր սոսկալի բաներ էիր պատմում Պոլսի մասին՝ մեր մտավորականների ու երեսփոխանների քաղաքական կուրությունը, մեր կուսակցությունների ու աղաների գծուծ հաշիվներն ու մշտական գզվռտոցը, դատարկաբանությամբ լցված մեր մամուլը և անտարբերությունը գավառում ապրող հայության հանդեպ... Քո պատմածներն ավելի դաժան էին, քան իմ տողերը:

- Այն տարբերությամբ, որ իմս ընկերական զրույցի մեջ ասված խոսքեր

էին, մինչդեռ քոնը բանաստեղծական պատկեր է:

- Ի դեպ «Վերջին հայերը». այնտեղ նաև ասում էի, թե «Աստված չիկա... Հայ կա, հայություն չիկա...»:

- Այդ պատճառով էլ քո բարեկամ Թեոդիկն զգուշացավ տպագրել:

- Բայց «Ժամանակը» տպագրեց, և մինչև այսօր քաջալերական նամակներ եմ ստանում:

- Իսկ այդ մեկը վստա՞հ ես, որ կտպագրեն:

- Զգիտեմ..., - հայացքն անորոշ կետի հառած պատասխանեց Ռուբենը:

- Իսկ առաջարկե՞լ ես խմբագիրներից որևէ մեկին:

- Դեռևս ոչ... Եվ մտադրություն էլ չունեմ:

- Իսկապես, չեմ հասկանում, թե ինչ է կատարվում հետդ, Ռուբեն... Դու գիտես, որ բոլոր խմբագրությունները դռները բացել են քո առջև, իսկ դու այստեղ նստած պատմվածքներ ես գրում և հոդվածներ «Ազատամարտի» համար...

- Հավանաբար դա միակ ձևն է այսօր օգտակար լինելու մեր ժողովրդին:

- Իսկ բանաստեղծություններդ, վերջապես գրքե՞րդ... Մի քանի ամիս առաջ գրել էիր, թե երեք ժողովածու ես պատրաստում միանգամից... Ի՞նչ եղավ, ինչո՞ւ չես ուզում տպագրել:

- Զգիտեմ... Հավանաբար դրանք այնքան էլ պիտանի չեն այսօր... Թերթե՞րը... Թող թերթերում տպվեն բանաստեղծություններս, բայց ուրիշ, ավելի զորավոր, ավելի ազդեցիկ մի ձև է պետք ժողովրդին շարժելու, ոգի տալու... Մանավանդ այստեղից, այս հեռավորությունից...

Հրանտը և նրա իտալուհի կինը՝ Լենան եկել էին Շվեյցարիա, որպեսզի այնտեղից անցնեն Իտալիա: Եվ չնայած հրաժեշտ էր տվել իր օսմանյան քաղաքացիությանը և որոշել վերջնական բնակություն հաստատել Իտալիայում, այնուամենայնիվ, վասն զգուշության, որոշել էր նախ Շվեյցարիա գալ: Պատճառը վերջերս ավարտված թուրք-իտալական պատերազմն էր: Թուրքերը նորից խայտառակ պարտություն կրեցին և ստիպված եղան իտալացիներին զիջել Տրիպոլիտանիան և Կիրենաիկան: Ահա թե ինչու Թուրքիայից ուղղակի Իտալիա ուղևորվելը պարզապես դարձել էր անհնար: Հրանտն այդ առթիվ մի կծու դիտողություն արեց. «Եթե պարտվողն Իտալիան լիներ, Պոլսից ծովով դեպի Վենետիկ մեկնելը դարձյալ դժվար կլիներ... Թուրքերը ոչ հաղթելուց են մեծահոգի, ոչ էլ պարտվելուց»:

Չնայած վերջին երկու տարում իր կապերը Պոլսի հետ բավական աչխուժացել էին և օր չկար, որ մի նամակ, թերթ կամ նոր հրապարակում չստանար, այնուամենայնիվ, կենդանի վկայությունը, այն էլ բանաստեղծ բարեկամի, ուրիշ արժեք ուներ:

- Ես չգիտեմ, այդ հեղափոխությունը Թուրքերին օգնեց, թե ոչ, բայց մեզ համար գոնե որոշ բաներով օգտակար եղավ:

- Եթե չհաշվենք Կիլիկյան աղետը, - հիշեցրեց Ռուբենը:

- Այո, իրավացի ես... Բայց անցավ-գնաց, մտածենք ապագայի մասին... Եվ հետո իրենք՝ Թուրքերն էլ հասկացան, որ կոպիտ սխալ են թույլ տվել, որ առանց մեզ երկիրը չեն կարող այդ միջնադարից դուրս բերել:

- Երանի՜ այդպես լիներ...

- Ինքդ ես տեսնում, Ռուբեն, թե ինչպիսի աչխուժություն է տիրում Պոլսում, Իզմիրում, անգամ հեռավոր գավառներում... Հապա գրական կյանքն ինչպես է փոխվել, հապա թատրոնները, որքա՜ն թերթեր ու հանդեսներ են հայտնվել, նույնիսկ ծրագիր կա հայկական սինեմա ստեղծելու:

- Չի կարող պատահել:

- Իսկապես, Փափազն ասաց, միայն թե դրամի խնդիր կա մեջտեղը, բայց լավատես են... Պատկերացնո՞ւմ ես՝ ի՜նչ հոյակապ բան կլինի. Թուրքերն այդպիսի հսկա երկիր ունեն, դրամ ունեն, բայց սինեմա չունեն...

- Արդեն թատրոն տվեցինք նրանց, հիմա էլ՝ սինեմա, մնում է՝ որ գնահատեն:

- Հապա գրերի գյուտի 1500-ամյակն ի՜նչ մեծ շուքով նչեցինք... Փառահեղ հանդիսություններ եղան, անգամ Թալյաթը եկավ և փայլուն ճառ ասաց ի նպաստ մեզ... Թուրքերի բերանից այդպիսի ջերմ խոսքեր՝ մեր հասցեին ասված դեռ չէի լսել...

- Իսկ ես լսում եմ քեզ և զարմանում, սիրելի Հրանտ: Դու ոգևորված պատմում ես, թե ինչպիսի փայլուն հեռանկարներ են բացվում Պոլսի հայության, մանավանդ մտավորականության առջև, սակայն թողնում ես այդ ամենը և ընդմիշտ մեկնում Իտալիա, իսկ ես, որ առանձնապես ոգևորված չեմ, որ շարունակ կասկած ունեմ սրտումս, մտադիր եմ մեկ-երկու տարի հետո գնալ և հաստատվել այնտեղ: Ինչպե՞ս հասկանալ քեզ:

- Հարցդ տեղին է, Ռուբեն... Չկարծես, թե շատ դյուրին էր ինձ համար նման վճիռ ընդունելը, բայց հասկացիր, այդ պատերազմից հետո Լենան այլևս չէր կարող Պոլսում մնալ: Հարևաններն այլևս չէին բարևում նրան՝ ինչ է թե իտալուհի է, ավելին՝ սպառնալիքներ էին չպրտում ետևից... Անգամ նպարավաճառը նրան վռնդեց իր խանութից... Եվ գումարած այս ամենին՝ ամուսինը հայ է: Ես նրան արգելել էի այլևս տնից դուրս գալ, բայց այդպես անկարելի էր ապրել, հասկանո՞ւմ ես:

- Այո, մեզ դա լավ ծանոթ է՝ այդ վիճակը: Սակայն չես վախենո՞ւմ, որ քեզ՝ բանաստեղծիդ համար դժվար կլինի այնտեղ՝ օտար միջավայրում:

- Այդպես մի ասա, Ռուբեն, մի նոր դարաշրջան է սկսվում բանաստեղծների համար, լեզուն չէ, որ պիտի դառնա կարևորը, այլ ասելիքը... Նայիր տես, երեք տարի առաջ իտալացիք ֆուտուրիզմի ծնունդն ազդարարեցին՝ նոր, ապագա դարաշրջանի արվեստը, դեկադենտ ֆրանսիացիք, պահպանողական անգլիացիք և թանձրամիտ գերմանացիք արհամարհանքով երես ծռեցին, բայց գիտե՞ս որտեղից լսվեց մեր գյուտերի արձագանքը... Ռուսաստանից և Հայաստանից... Այո, այո, ես միայն ինձ նկատի չունեմ, չնայած իմ գրքույկը, որ երկու տարի առաջ տպագրեցի Պոլսում, առաջինն է, հասկանո՞ւմ ես, առաջին ուսումնասիրությունն է ֆուտուրիզմի մասին...

- Իսկապե՞ս:

- Այո առաջինն է: Ե՛ս տեսա առաջինը, ե՛ս հասկացա, որ մի մեծ շարժում է ծնվում Իտալիայում... Վերջապես, առաջինը մենք՝ հայերս գնահատեցինք:

Մենք ավելի հեռատես եղանք, քան զառամախտի մեջ փտող ամբողջ Եվրոպան:

- Իսկ մենք ովքե՞ր ենք:

- Հարցդ շատ տեղին էր: Իսկական Եվրոպան մենք ենք, քանզի ստեղծելու պահանջ ունենք, ասելիք ունենք և անմիջապես հասկանում ենք մյուսների ասելիքը, գնահատում, զարգացնում:

Հրանտը նորից ոգևորվել էր, նա գինով էր ոչ միայն շվեյցարական զորավոր օղուց, այլև ինքն իրենից, իր խոսքերից:

- Եվրոպան այն գեղեցկուհին է, որ անզոր ծերունիների ձեռքն է ընկել, նրանք չեն կարող ոչինչ անել, նրանք մոռացել են, թե այդ աղջկան ինչու բերեցին այստեղ... Պետք է նրան հետ առևանգել, Ռուբեն, նա մեր սերմի կարիքն ունի, միայն մենք կարող ենք բեղմնավորել նրան... Դու արդեն փրկել ես Եվրոպային և նա քեզ համար նոր արքա է ծնել՝ Լևոնը... Ես հասկանում եմ՝ ինչու ես քո առաջնեկին այդպես կոչել՝ մեր «Վերջին արքայն», որ մեռավ այստեղ, անհայտության մեջ հիմա վերածնվում է քո շնորհիվ... Հրաշալի ես գրել՝*

...Ու առյուծն իր առջևի մեկ թաթին վրա անմըռունչ
Արձանացած՝ կթարթե իր մութ նայվածքը հեռո՛ւն,
Արշալույսի առաջին արյունոտող գիծերուն:

*Կիլիկյան առյուծն է, որ նորից պիտի մռնչա:***

- Եթե չլիներ թուրքը... Ատված թուրքին մեզ շատ բաժին հանեց:

Հրանտը վհատվեց միանգամից, աչքերի փայլի հետ միաժամանակ ասես ակնոցի ապակիներն էլ խամրեցին, և նա մեղավոր մրմնջաց.

- Հապա ես ինչո՞ւ եմ այստեղ...

Հետո հայացքը բարձրացրեց, նայեց կողքի սենյակ և շշուկով ասաց.

- Լավ հիշեցրիր, քեզ կարևոր ասելիք ունեմ:

Յաննին ու Լենան ամենածայրի սենյակում էին՝ վեց ամսական Լևոնի կողքին: Այնուհանդերձ շարունակեց շշուկով պատմել.

- Այստեղ գալուց մեկ շաբաթ առաջ երկու պարոն եկան մոտս, գաղտնի ոստիկանությունից էին... Եկան առանց նախազգուշացնելու... Շատ քաղաքավարի էին խոսում հետս, նույնիսկ հարգալից: Ասացին, որ երկու հարցով են այցելել. ուզում էին իմանալ, թե Շվեյցարիայում ում պիտի հանդիպեմ և երկրորդ՝ ովքեր են իմ թղթակիցներն Իտալիայում: «Ձեզ ո՞վ ասաց, թե Շվեյցարիա պիտի գնամ, - հարցրեցի ես: - Մենք առայժմ գնում ենք Վիեննա»: «Իսկ Լոզան կամ Ժնև չեք այցելելո՞ւ, - հարցրեց նրանցից մեկը և, առանց իմ պատասխանին սպասելու, ավելացրեց. - Օրինակ, դոկտոր Ջիլինկիրյանին չե՞ք հանդիպե-

---

** Հրանտ Նազարյանցը նկատի ունի հայ վերջին թագավոր Լևոն VI Լուսինյանին(1340-1399թթ). որ հայոց թագավորության վերջնական անկումից հետո (1375 թ.) գերեվարվեց Եգիպտոս, այնուհետև, Կաստիլիայի և Արագոնի թագավորների շնորհիվ անցավ Եվրոպա: Նրա գերեզմանն այժմ գտնվում է Փարիզից հյուսիս ընկած Սեն-Դենի արվարձանի բազիլիկի արքայական գամբարանում:*

*** Ակնարկում է Կիլիկյան թագավորության զինանշան առյուծը, որն առջևից հենված է մեկ թաթի վրա, իսկ մյուս թաթով բռնել է գայիսոն-խաչը:*

լու»: Ես շատ զարմացա, որովհետև ընդամենը երկու-երեք հոգու էի ասել մեր սպասվող հանդիպման մասին: Ուստի խուսափողական պատասխան տվեցի. «Չգիտեմ, եթե գնամ Շվեյցարիա, գուցե հանդիպեմ... Եթե, իհարկե, այնտեղ լինի»: Այդ գործակալը խորհրդավոր ժպիտով ասաց. «Անհոգ եղեք, էֆենդիս, այնտեղ է, ասում են՝ փառահեղ առանձնատուն է վարձում, այնպես որ կարող եք նրա հյուրը լինել»:

Այնուհետև խնդրեցին, որ իմ ստացած նամակները ցույց տամ: Պատկերացնո՞ւմ ես, հարյուրավո՛ր նամակներ: Նստած մեկ առ մեկ նայում էին: Ես կարծում էի, թե իսկապես իտալացի ընկերներովս են հետաքրքրված: Սակայն բավական անտարբեր էին նրանց հանդեպ: Եվ նկատեցի, թե դեմքներն ինչպես փայլեցին, երբ հերթը հասավ քո նամակներին: Նրանցից մեկը հայերեն գիտեր... Հնարավոր է նույնիսկ, որ հայ էր: Ուշադիր կարդում էր յուրաքանչյուր նամակը և առանձնացնում...

- Իմ ուղարկած բոլոր նամակները պահե՞լ ես:

- Այո, նույնիսկ այն նամակները, որ ուղարկել էիր Իտալիա և առանց կաշկանդվելու քո կարծիքն էիր հայտնում երիտթուրքերի մասին:

- Այդ նամակները հետդ տարել էիր Պոլի՞ս:

- Այո, Ռուբեն... Հիմա եմ հասկանում, թե ի՜նչ կոպիտ սխալ եմ թույլ տվել... Տեսնեիր, թե ինչպես հրճվեցին, երբ այդ նամակները տեսան, ասես գանձ գտնեին... Ներիր, Ռուբեն, ես շատ անհանգիստ եմ քեզ համար:

- Հոգ մի արա, ես հիշում եմ այդ նամակները: Այն, ինչ գրել եմ քեզ, ասել եմ նաև շատերին՝ և՛ այստեղ, և՛ Պոլսում... Նույնիսկ ավելի սոսկալի բաներ: Բավական է մեկ անգամ ներկա լինես «Արմենիա»-ի ժողովին, կզարմանաս, թե ինչեր են ասվում երիտթուրքերի հասցեին, և գիտենք, ստույգ գիտենք, որ լրտեսներ կան այնտեղ նստած, որոնք ամեն ինչ՝ բառ առ բառ գրանցում և հանձնում են հյուսպատոսարան:

- Քո անզգուշությունն ինձ սարսափելիս զարմացնում է:

- Անզգուշության հարց չկա, Հրանտ, ոչինչ չես կարող անել, եթե հսկա մի պետություն որոշել է լրտեսել իր քաղաքացիներին և հատկապես դրանց մի մասին... Մոտ երկու հարյուր հայ ուսանող կա այստեղ, և առնվազն մի տասը լրտես է հսկում նրանց... Արդեն բոլորին գիտենք դեմքով... Ուսանողներից մեկը խոստովանեց, թե ուզում է դրանց մեկ առ մեկ խեղդել: «Այդպիսի հիմարություն չանես, - ասացի նրան: - Հիմա գոնե գիտենք, թե ովքեր են, իսկ որ խեղդես, պիտի նորերը գան, և մինչև ճանաչենք դրանց ահագին բաներ կխոսենք ի վնաս մեզ»: Փրկություն չկա դրանցից, Հրանտ... Եթե լուռ մնաս, չխոսես, կգան ուղեղդ կմտնեն, որպեսզի պարզեն, թե ինչ ես մտածում... Ի՞նչ է, նոր իմացա՞նք, որ գազանի հետ ենք ապրում:

- Գիտեինք, բայց հույս ունեինք, թե գազանը կբարեկրթվի:

- Զո՜ւր հույսեր են, գիշատիչ գայլը երբեք խոտաճարակ չի դառնա... Պարզապես պիտի նրան հասկացնենք, որ մենք ոչխար չենք:

- Փորձեցինք ապացուցել, բայց գայլն ավելի արյունարբու դարձավ:

- Որովհետև մինչև վերջ համոզված չէինք, որ մորթվելու ոչխար չենք:

Ռուբենը լռեց: Զնայած սաստիկ ցրտին, մոտեցավ, ընդարձակ պատուհանը բացեց, որպեսզի ծխով լցված սենյակն օդափոխի: Հետո, գիշերվա խավարում թաղված պարտեզը նայելով, շարունակեց.

- Ես գիտեմ, որ դա մեզ համար շատ դժվար, գրեթե անկարելի առաքելություն է... Եգիպտացիք, հույներն ու իտալացիք վերջնականապես քշեցին նրանց Միջերկրական ծովից, եվրոպական տարածքներն իրար ետևից կորցնում է... Շուտով այնտեղից էլ կվտարվի: Արևելքում, արաբները՝ անգլիացիների և ֆրանսիացիների դրդումով անկախանալու մասին են երազում և ամեն վայրկյան պատրաստ են ապստամբել, հրեաները փորձեցին իրենց Ավետյաց Երկիրը փողով ետ բերել՝ չստացվեց, հիմա էլ հայտնի չէ, թե ինչ գաղտնի ծրագրեր են մշակում, որպեսզի թուրքերի ձեռքից խլեն... Բոլորն ազատվեցին կամ շուտով կազատվեն գազանի թաթերից, մնացինք միայն մենք: Նախորդ կորուստների հետ թուրքն արդեն հաշտվել է, սակայն ոչ մի գնով չի համաձայնի Հայաստանը կորցնել:. Ամեն ինչի կգնա՝ պահպանելու համար... Շա՜տ ծանր տարիներ են սպասում մեզ:

Հրանտը մոտեցել էր նրան, և երկուսով, լուռ ու անշարժ զննում էին խավարի մեջ թաղված ընդարձակ ու փարթամ պարտեզը: Յաննիի ձայնը լսվեց հանկարծ նրանց թիկունքից.

- Ուրեմն, սենյակը հատուկ ցրտացնում ես, որպեսզի ես չկարողանամ կատարել Լենայի խնդրանքը:

- Իսկ ի՞նչ է խնդրել Լենան, - հարցրեց Ռուբենը:

- Ուզում է իմ նվագը լսել:

- Մենք էլ ենք ուզում, - պատասխանեց Ռուբենը: - Սակայն չես կարծո՞ւմ, սիրելիս, որ ավելի լավ կլինի ընթրիքից հետո նվագես...

- Ահա խնդրեմ, - կես-կատակ, կես-լուրջ ասաց Յաննին: - Երկու իդեալիստ բանաստեղծներ, որոնց համար իրենց ստամոքսն արվեստից ավելի կարևոր է:

- Սիրելիս, մեղավորը դու ես, քո խոհարարությունը նույնպես արվեստ է, - պատասխանեց Ռուբենը: - Այնպես որ հանցանք չէ՝ նախապատվությունը տալ դրան:

- Եթե մեղքն իմն է, նշանակում է պիտի բոլորս միասին այն քավենք, - ժպտալով ընդունեց Յաննին՝ առաջարկելով անցնել ճաշասրահ:

* * *

Որոշել էին, որ ամառը կանցկացնեն Պոլսում: Ծնողներն անհամբեր էին իրենց թոռնիկին՝ Լևոնին տեսնելու: «Մինչև ե՞րբ պիտի լուսանկարներով բավարարվենք», - դժգոհում էր հայրը: Իսկ որդու լուսանկարներն իսկապես շատ էին և բազմազան: Այլևս պետք չէր լուսանկարվելու համար հատուկ օր ընտրել, նախապատրաստվել, մի քանի ժամ կորցնել: Հրաշալի մի գործիք էին գնել՝ «Կոդակ», այժմ օրվա ուզած պահին կարող էին լուսանկարվել, սեփական ձեռքերով նեգատիվը հայտածել և կարմիր լապտերի մոգական լուսավորության ներքո

պատկերներ դուրս բերել անհայտության միջից: Այդ լուսանկարներում իրենք իրենց տեսնում էին ավելի բնական, անմիջական, առանց արհեստական-հանդիսավոր կեցվածքների և անգամ ժպիտները դեմքներին, մի բան, որը խստիվ արգելված էր «cabinet-portrait»-ներում:

Հուլիս-օգոստոս ամիսները պիտի անցկացնեին Սիլիվրիում և Պոլսում: Ծնողները շարունակ Լևոնին տեսնելու ցանկությամբ էին հիմնավորում այդ հրամայական պահանջը, սակայն նույնքան գուցեև ավելի մեծ էր Յաննիին տեսնելու ցանկությունը, որը փոխադարձ էր: Առկախված ինչ-որ բան կար, վերջնականորեն չընդունված մի որոշում, կիսատ մնացած մի գործ, որը կարող էր իր ավարտին հասնել միայն Ռուբենի ծնողներին տեսնելուց հետո: Թոռնիկն ընդունված էր ծնվելու պահիցն իսկ, նա սիրո պտուղն էր, նրանից հրաժարվելը ծանր մեղք կլիներ, մինչդեռ Յաննիի պարագան փոքր ինչ տարբեր էր, և նրա վերջնական, անդառնալի ընծայումը որպես լիիրավ մայր ու կին պիտի տեղի ունենար Ռուբենի ընտանիքի և մանավանդ նրա ծնողների անկեղծ հավանությամբ: Նա ուզում էր, որ ընտանիքն անպայման իրեն ընդունի որպես յուրային և ոչ միայն Լոզանի քաղաքապետարանի կնիքով վավերացված կին: Գիտակցում էր, որ բազմաթիվ հաղթահարված արգելքներից հետո դա կարող էր դառնալ ամենալուրջ և ամենավտանգավոր փորձությունն իրենց՝ Փրկչի լուռ օրհնությամբ կայացած սիրո առջև: Կայացա՞ծ... Մի՞թե... Կյանքը ցույց էր տալիս, որ սերը միայն սկսվել ունի, և կայանում է ամեն օր, մարդկանց հաստատած օրենքներին դեմ հանդիման, հերթական որոգայթից խուսափելով, շարունակ փոփոխվող փորձություններին դիմադրելով, անվերջանալի դժվարությունները հաղթահարելով: Եվ տարօրինակ է. որքան ավելի չնչին են թվում այդ փորձությունները, այնքան ավելի վտանգավոր են սիրո համար: Ինչպես ժանգի աննշան հետքը, որ ժամանակի ընթացքում կարող է ցեցի պես ուտել երկաթը:

Ուստի չբավարարվեց միայն քաղաքապետարանի թղթով և պահանջեց, որ անպայման գնան Փարիզ և հայկական եկեղեցում, հայկական ծեսով օրինականացնեն իրենց ամուսնությունը:

Վերջապես երրորդ, թերևս ամենակարևոր պատճառը կար՝ 1914 թվականի ամառը Պոլսում անցկացնելու համար. որտե՞ղ են նրանք վերջնականապես հաստատվելու, Շվեյցարիայո՞ւմ, Մարմարայի՞, թե Բոսֆորի ափին: Ճիշտ է, Ռուբենը ժամանակ առ ժամանակ ասում էր, որ Շվեյցարիան իրենց վերջնական հանգրվանը չէ, սակայն նրա ձայնում վճռականությունը գնալով նվազում էր, քանզի Թուրքիայից շարունակ հակասական լուրեր էին գալիս և ավելի խորացնում անորոշությունը: Ուստի միակ ճիշտ քայլը կլիներ երկուսով գնալ և տեղում որոշել: Եվ որպեսզի հանկարծ մտադրությունը չփոխեն, դեռևս մայիս ամսին հուլիսի 5-ի համար «Արևելյան ճեպընթացի» տոմսեր պատվիրեց:

Չնայած բավական ժամանակ կար առջևում, բայց խելագար մի վազք սկսվեց: Յաննիին թվում էր, թե ոչինչ չի հասցնելու: Օրվա մեծ մասն անց էր կացնում դերձակների մոտ կամ խանութներում, և իր փնտրածը չգտնելով, դժգոհ վերադառնում էր տուն: Կարողացավ ամուսնուն էլ ներգրավել իր որոնումների մեջ և հատկապես ստիպեց, որ նոր զգեստներ պատվիրի: Հետը գնում

էր դերձակի մոտ, մանրակրկիտ հետևում ամեն ինչին՝ ցուցաբերելով ճաշակ, կարուձևի գաղտնիքների իմացություն և ծայրահեղ խստապահանջություն: Ճամպրուկներն աստիճանաբար լցվում էին, և դժվար էր ասել, թե դրանց թիվը մինչև քանիսը կհասնի:

Հունիսի 24-ին առավոտյան ժամը իններին Յաննին պիտի գնար դերձակուհու մոտ: Երեկոյան շքեղ զգեստ էր պատվիրել՝ սև մետաքսից, ոսկեթելով կարված, որը պիտի շատ սազեր իր ցորենագույն մազերին: Վերջապես հասավ, անհամբերությունից վառվելով հագավ, մասնավոր այդ զգեստի համար Փարիզից բերված գլխարկը դրեց, և հիմա հայելու առջև կանգնած հիանում էր: Հրաշալի՜ էր, ոչ մի զգեստ այսպես չէր սազել... Այսպիսի հագուստով ոչ միայն Պոլիս, այլև Բեռլին, թեկուզ Փարիզ կարող էր գնալ և փայլել:

Երախտագիտությամբ լցված շրջվեց, որպեսզի դերձակուհուն գրկի և շնորհակալություն հայտնի, երբ տեսավ, թե ինչպես վերջինս պատուհանի մոտ կանգնած, հետաքրքրված նայում է դուրս: Դիմացի մայթին Ավստրո-Հունգարիայի հյուպատոսարանի շենքն էր: Մուտքի մոտ մի քանի հոգի էին հավաքվել: Ծառայողներից մեկը, դանդաղորեն, սևով երիզված մի հայտարարություն էր փակցնում պատին, իսկ մյուսը սև ժապավեն էր կապում ավստրիական դրոշի փայտին: Մի մռայլ հանդիսավորություն կար նրանց գործողություններում: Բազմությունը գնալով շատանում էր, անցորդները կանգ էին առնում հայտարարությունը կարդալու, այնուհետև չէին հեռանում, այլ շփոթված, մտահոգ, չափազանցված շարժումներով կարծիքներ փոխանակում:

- Ի՞նչ է պատահել, - հարցրեց Յաննին:

- Զգիտեմ, չեմ հասկանում... Հավանաբար կարևոր մի մարդ է մահացել, - պատասխանեց դերձակուհին:

- Բայց ինչո՞ւ են այդպես բորբոքված...

Տագնապալի հետաքրքրասիրությամբ մղված դուրս եկան փողոց: Սևով շրջանակված ազդագիրը հայտնում էր, որ երեկ, հունիսի 23-ին, Սարաևո քաղաքում, սերբ ազգայնականների դավադիր կրակոցների զոհն են դարձել գահաժառանգ Ֆրանց-Ֆերդինանդը և նրա կողակիցը՝ կոմսուհի Կոտեկը, և որ այդ առթիվ ամբողջ կայսրությունում սուգ է հայտարարված:

Հաճոյակատար մի պարոն, մետաքսյա սև ժապավեն կապած, սգավոր արտահայտությունը դեմքին, մոտենում էր ազդագիրը ընթերցողներին և գրեթե շշուկով հայտնում, որ հյուպատոսարանի հանդիսությունների սրահում սգո մատյան է դրված, որտեղ ցանկացողները կարող են իրենց ցավակցությունները հայտնել գրավոր:

Ամենևին մտադրություն չուներ ցավակցական խոսքեր գրելու, սակայն ինքն էլ չհասկացավ, թե ինչպես հայտնվեց հյուպատոսարանի նախասրահում, այնուհետև, ճնշող լռության մեջ, մարմարյա աստիճաններով բարձրացավ երկրորդ հարկ և մեքենայորեն մոտեցավ սրահի կենտրոնում, կաղնեփայտի ծանր սեղանին բացված մատյանին, գրիչը վերցրեց և երբ մոտեցրեց թանաքամանին, հայացքն ընկավ սեղանից մի երեք մետր հեռավորության վրա պատվանդանին դրված, սև ժապավեններով երիզված երկու զոհերի մեծադիր նկարներին: Կոմսուհին գեղեցկու-

հի չէր, սակայն դեմքին մի թախծոտ ժպիտ ուներ, որն ի հետնագույնս, այս եղերական միջադեպից հետո նահատակի էր նմանեցրել նրան: Թագաժառանգի դեմքին, մինչդեռ, ամբարտավան մի արտահայտություն կար, և դժվար էր հավատալ, թե այդպիսի խրոխտ ու ինքնահավան մարդը երբևէ կարող էր ահաբեկչի զոհը դառնալ: Հիշեց, որ այդ դեմքը հաճախակի է տեսել պատկերազարդ հանդեսներում և երբեք համակրանք չի առաջացրել իր մեջ: Այնուհանդերձ, ինչո՞ւ...

- Madame...

Ուշքի եկավ: Կողքին սևազգեստ մի կին տեսավ, որ տխուր ու հարցական նայում էր իրեն: Հավանաբար երկար էր կանգնել այդպես՝ աչքերը նկարներին հառած: Ներողություն խնդրելու պես գլխով արեց, խաչակնքեց և դերմաներեն ցավակցական մի քանի բառ գրեց մատյանում: Հետո լուսնոտի պես դուրս եկավ այդ սրահից, որտեղ մահվան ճնշող ներկայությունն էր հաստատվել:

Փողոցում հայտնվելուն պես բնազդական մի մղումով շտապեց տուն հասնել: Երեխան քնած էր, երբ դուրս եկավ, սպասուհին էլ տանն էր, և առաջին անգամը չէր, որ հանգիստ սրտով թողնում էր նրա խնամքին: Սակայն հիմա նրան թվաց, թե երեխան մենակ է տան մեջ՝ երկու տարեկան, անհանգիստ, չարաճճի, և որ այս պահին, հազար տեսակ վտանգ է կախվել նրա գլխին:

Գրեթե վազելով հասավ խաչմերուկ և այստեղ միայն նկատեց, որ երեկոյան շքեղ զգեստն է հագին և մուգ կարմիր վարդերով զարդարված սև, լայնեբիզ գլխարկը: Մի հանդերձանք, որը պահանջում է համապատասխան միջավայր և հանդիսավոր քայլվածք, սակայն ոչ այս խուճապահար վազքը: Մոլորված կանգ առավ և չգիտեր, թե ինչ անել. ետ դառնա՞լ, թե՞ շարունակել ճամփան դեպի տուն: Բայց քանի որ շատ չէր հեռացել դերձակուհու արհեստանոցից, որոշեց շտապ վերադառնալ և զգեստը փոխել:

- Ո՞ւր գնացիք, տիկին Զիլինկիրյան, ես կանչում էի ձեր ետևից...

- Ա՜հ, չգիտեմ... Պարզապես գլուխս կորցրեցի...

- Այո, իսկապես, դուք շատ հուզված էիք... Բոլորը նկատեցին... Մանավանդ այդ սև զգեստով...

- Չգիտեմ, չհասկացա, թե ինչ կատարվեց ինձ հետ... Սոսկալի էր...

- Պետք չէ այդպես սրտին մոտ ընդունել, տիկին Զիլինկիրյան: Ցավալի դեպքերը կդան ու կանցնեն:

- Գուցե... Թերևս... Բայց միևնույն է, սոսկալի էր...

Հետո, զգեստը հիշելով, ավելացրեց.

- Ուրեմն, մնաց վաղը:

- Այո, տիկին Զիլինկիրյան, դեռ մի փոքր գործ կա: Վաղը կեսօրից հետո կբերեմ:

Դերձակուհու մոտից դուրս եկավ փոքր ինչ հանդարտված և փողոցի անկյունում տրամվայ նստեց, որպեսզի ավելի շուտ տուն հասնի:

Փոքրիկ Լևոնը հանգիստ խաղում էր հյուրասրահում: Յաննին նրան տեսնելով վերջապես թեթևացած շունչ քաշեց: Սովորականից ավելի ամուր դրկեց երեխային և սպասուհուն մանրամասնորեն հարցրեց, թե երբ է վերկացել, ինչ է կերել; որքան է կերել, թե երեխայի ձեռքերն ինչու են կարմրած, այդ ի՞նչ

բշտիկ է հայտնվել մանչուկի այտին, իսկ վերջում արգելեց, որպեսզի կեսօրից հետո ամենօրյա զբոսանքի տանի՝ զարմանք պատճառելով սպասուհուն և լացացնելով փոքրիկին:

- Դուրսը սառը քամի կա...

Երեխային տեսավ, սիրտը հանգստացավ, հիմա էլ սկսեց անհամբեր ամուսնուն սպասել: Այնուամենայնիվ ներսն ինչ-որ անբացատրելի տագնապ էր մնացել: Բազմաթիվ ընկերուհիներ ուներ Լոզանում, սակայն ոչ մեկի հետ չէր ուզում կիսվել, սպասում էր ամուսնուն: Միայն նա կհասկանար և բոլոր մտահոգությունները կցրեր:

Հակառակի պես այդ օրը ուշ վերադարձավ: Զնայած հոգնած էր երևում, բայց մեղմ ժպիտով մոտեցավ, գրկեց և հարցրեց.

- Զգեստդ բերեցի՞ր: Գոհ ե՞ս:

- Օ, ոչ, Ռուբեն: Դեռ աշխատանք կար անելու... Խոստացավ վաղը տալ:

Հետո շուտասելուկով պատմեց իր այցելության մասին՝ ավստրիական հյուպատոսարան և ամուսնու աչքերի մեջ նայելով հարցրեց.

- Դու էլ գիտես, չէ՞... Ի՞նչ կասես, Ռուբեն, մի տեսակ անհանգիստ եմ:

- Մի մտահոգվիր, սիրելիս, - ժպտալով պատասխանեց նա և հետը բերած թերթերը ցույց տալով ավելացրեց. - Ընթրիքից հետո միասին կկարդանք:

Նրա ժպիտը, նրա հանգիստ, բարություն արտահայտող դեմքը միանգամից մոռացնել տվեց բոլոր տագնապները, և նա, ներողություն խնդրելու պես, խոստովանեց ամուսնուն.

- Գիտես, այսօր չթողեցի, որ Լևոնին զբոսանքի տանի, երեխան ամբողջ օրը տանը մնաց:

- Ինչո՞ւ... Այդ ի՞նչ չարություն էր արել, - շարունակ նույն ժպիտով հարցրեց Ռուբենը:

- Ոչ, ոչ, ոչինչ չէր արել... Նա շատ խելոք է՝ մեր Լևոնը: Պարզապես անհանգիստ էի... Զէի ուզում, որ կողքիցս հեռանա:

- Անհանգստանալու բան չկա, սիրելիս, թող ավստրիացիք անհանգստանան: Բայց եթե մայրական բնազդդ այդպես է թելադրել, ուրեմն, ճիշտ ես արել, - պատասխանեց նա նորից համբուրելով:

Հետո ավելացրեց.

- Շա՜տ ափսոս, որ զգեստդ չբերեցիր: Արդեն տրամադրվել էի, որ այսօր, առաջին անգամ կհագնես ինձ համար: Պատկերացնում եմ, թե ինչպես է քեզ սազելու:

- Օ, շա՜տ է սազում, և շատ լավ է կարել, ոսկի ձեռքեր ունի այդ կինը...

Հետո հանկարծ լռեց և տխուր նայեց Ռուբենին.

- Արդեն մի պատմություն կա դրա հետ կապված... Մենք փութով դուրս եկանք արհեստանոցից, մոռացա զգեստը փոխել: Հյուպատոսի կինը և ինքը՝ պարոն հյուպատոսը կարծել էին, թե ողբերգական դեպքի առթիվ մասնավոր սև եմ հագել: Դերձակուհուս ասելով, շատ էին հուզվել: Մանավանդ երբ իմացել էին, որ ես գերմանուհի եմ: Տեսնո՞ւմ ես, թե ակամայից ինչպիսի զավեշտ եմ սարքել այդ տխուր պահին...

Ընթրիքից հետո, երբ սրահի մի անկյունում, բաղկաթոռներին թիկնած օրվա լրագրերն էին կարդում, առավոտվա տագնապը նորից արթնացավ: Շվեյցարիայի ֆրանսագիր մամուլը, չնայած զուսպ և անկողմնակալ մեկնաբանությամբ էր ներկայացնում, այնուհանդերձ, արհամարհանք էր նկատվում Հաբսբուրգների հանդեպ: Պատկերը հակառակն էր Բեռնի և Ցյուրիխի գերմանագիր թերթերում, որտեղ ցավակցական խոսքերի կողքին ռազմաշունչ, նույնիսկ վիրավորական արտահայտություններ կային սերբերի հասցեին, իսկ թերթերից մեկը, սերբերին անվանելով «բարբարոսներ», առաջարկում էր ահաբեկման պատվիրատուներին փնտրել ոչ թե Բելգրադում, այլ Պետերբուրգում: Թերթն այն հաստատ համոզմունքն էր հայտնում, որ Վիեննան, հետագա նման միջադեպերից վերջնականապես խուսափելու համար, ստիպված կլինի Ռուսաստանի հետ իր հարաբերությունները պարզել ոչ միայն դիվանագիտական, այլև ուրիշ միջոցներով: Երբ Ռուբենի ուշադրությունը հրավիրեց այդ տողերի վրա, վերջինս մտահոգ արտաբերեց.

- Բավական կեղտոտ պատմություն է ստացվում, մաղթենք, որ առանց լուրջ հետևանքների վերջանա:

Հետո թերթերը սեղանից հավաքելով գցեց մի կողմ:

- Գրողի ծոցը գնան այս թագաժառանգներն ու թագավորները, ավելի լավ է մեր գործերով զբաղվենք... Վաղը չմոռանաս զգեստդ բերել... Իսկ Լևոնին անպայման զբոսանքի կտանեք:

Քիչ հետո, երբ մռայլ տրամադրություններից խպառ ձերբազատված արդեն անկողին էին մտել, Յաննին գլուխը դրեց նրա կրծքին և շշուկով ասաց.

- Գիտես, Ռուբեն, մենք հավանաբար երկրորդ երեխան կունենանք...

* * *

Հաջորդող օրերի ընթացքում տագնապը գնալով ահագնանում էր: Խաղաղ ու չեզոք Շվեյցարիայում բոլորը զբաղված էին ահաբեկության մանրամասներն և հնարավոր հետևանքները քննարկելով: Մամուլն իր հերթին չիկացնում էր մթնոլորտը: Առանձնապես նախանձախնդիր էին գերմանական թերթերը, որոնք գրեթե միաձայն գտնում էին, թե խայտառակությունն ու ամոթը հնարավոր է սրբել միայն ռազմական միջամտությամբ: Այս տագնապահարույց վիճակը հարցականի տակ էր դնում նրանց ուղևորությունը դեպի Պոլիս: Վերջնական որոշումն ընդունվեց հուլիսի 5-ին, այն օրը երբ պիտի արդեն «Արևելյան ճեպընթացում» լինեին: Յաննին նամակ ստացավ ծնողներից: Հայրը մի շարք երկիմաստ նախազգուշացումներից հետո պարզապես արգելում էր նրանց այդ վտանգավոր ուղևորությունը ձեռնարկել Ավստրիայի և մանավանդ Սերբիայի տարածքներով: Փոխարենն առաջարկում էր իրենց հետ ամառն անցկացնել Շվարցվալդի գյուղաքաղաքներից մեկում, որն «ամենևին չի զիջում շվեյցարական ամառանոցներին»:

Յաննին գտավ, որ հայրն իրավացի է, որ Պոլիս կարող են ավելի ուշ մեկնել, իսկ այս պահին ավելի խոհեմ կլինի գնալ այդ ապահով ու խաղաղ անկյու-

նը և հանգիստ սպասել, թե դեպքերն ինչ ընթացք են ստանալու:

«Մեր հոգեբանությունը զարմանալի մի հատկություն ունի, - ասում էր Ռուբենը Յոաննիին: - Աղետին սպասող մարդը որոշ ժամանակ հետո ականջ է դնում, շուրջը նայում և տեսնելով, որ ոչ մի վտանգ չկա, տեսադաշտում ոչինչ չի երևում, ասես վրեժ լուծելու երկյուղի մեջ անցկացրած օրերի համար, միանգամից լցվում է մի խենթ լավատեսությամբ, և այդ պահին է, որ տեղի է ունենում աղետը...»:

Յաննին չէր ուզում նրան լսել: Դերերը փոխվել էին: Հիմա նա էր իր լավատեսությամբ հանգստացնում ամուսնուն, որն օրեցօր ավելի ու ավելի էր մռայլվում: Որոշեցին հուլիսի 15-ին մեկնել Էրֆուրտ, մի երկու շաբաթ մնալ այնտեղ, այնուհետև ամբողջ օգոստոս ամիսն անցկացնել Շվարցվալդում, որն ընկած էր վերադարձի ճանապարհին, Շվեյցարիայի սահմանից քիչ հեռու:

Բազել հասան ճիշտ ժամանակին, կես գիշերին անցան գերմանական սահմանը և մեկ ժամ դանդաղ ընթանալուց հետո գնացքն անսպասելի կանգ առավ: Ուղևորները տասը-տասնհինգ րոպե սպասելով և տեսնելով, որ շարունակ կանգնած են, դուրս եկան միջանցք և զարմացած իրար էին հարցնում, թե ինչ է պատահել: Կանգառը տևեց մոտ մեկ ժամ: Պարզվեց, որ ճանապարհ են տալիս հանդիպակաց ընթացող մի գնացքի: Ամառային գիշերվա կապույտ խավարի միջից կայծեր ու բոց արձակող պողպատյա մի վիշապ դուրս ցատկեց: Ահավոր մի դղրդոց ու շաչյուն ընկավ: Իրար կցված երկու հզոր քարշակներ տանում էին պողպատով, ձիերով ու համազգեստավոր մարդկանցով բեռնված մի քանի տասնյակ վագոններ ու հարթակներ: Կառախումբն ընթանում էր հարևան ռելսերով, սակայն խավարը թույլ չէր տալիս հստակորեն տեսնել, թե ինչ է թաքցված կոշտ բրեզենտի տակ: Այնուհանդերձ կարելի էր գուշակել, որ ռազմական ծանր տեխնիկա է տեղափոխվում մեծ քանակությամբ: Վագոնների պատուհաններում լույս չկար, սակայն թանձր վարագույրների ճեղքերից դուրս պրծնող լույսի բարակ շերտերն այնուամենայնիվ մատնում էին մարդկանց առկայությունը:

Ինչո՞ւ էին այդքան զենք ու զինամթերք տեղափոխում, ովքե՞ր էին թաքնվել վարագույրների ետևում և ինչո՞ւ էին գիշերով գնում և ոչ թե ցերեկով, և դեպի ո՞ւր է ընթանում այդ ահասարսուռ գնացքը: Գերմանացիք արդեն չտապում են օգնե՞լ ավստրիացիներին: Սակայն ավստրիական սահմանն այստեղ չէ: Այս կողմերում ընդամենը երկու սահման կա՝ շվեյցարականը և ֆրանսիականը: Շվեյցարիան չեզոք երկիր է և հեռու է ռազմական բոլոր դաշինքներից: Ուրեմն կառաշարն ուղղվում էր դեպի ֆրանսիական սահմա՞նը... Գերմանացիք այնտեղ առանց այն էլ ահագին զորքեր ունեն կուտակած, ինչո՞ւ են նորերն ավելացնում...

Հավանաբար այս հարցերը մտահոգում էին բոլոր ուղևորներին, որ լուռ նայում էին խրոխտ աղմուկով ընթացող գնացքին և խուսափող հայացքներ նետում իրենց հարևանների վրա:

Ճանապարհին գնացքը ևս երեք անգամ կանգ առավ՝ նորից զիջելով հանդիպակաց ընթացող ռազմական կառաշարերին: Էրֆուրտ հասան տասնչորս ժամվա ուշացումով: Սա չլսված բան է՝ վայրկյանների ճշգրտությամբ աշխատող

գերմանական երկաթուղու համար: Երկրի բնականոն ռիթմը, գերմանական նշանավոր կարգապահությունը խախտվել էր: Անթերի համազգեստ հագած, միշտ բարեհամբույր և ամեն մի հարցին սիրահոժար պատասխանող ծառայողները խուսափում էին ուղևորների երեսին նայել, անորոշ պատասխաններ էին տալիս:

Երբ անսովոր ճամփորդությունից հետո Յաննին նյարդայնացած ու բորբոքված ծնողներին պատմում էր այդ կանդառների մասին, հայրը շատ հանգիստ պատասխանեց.

- Զարմանալի ոչինչ չկա, այդպես էլ պիտի լիներ: Վտանգավոր վիճակ է, պետք է պատրաստ լինել ամեն ինչին:

- Բայց ի՞նչ կարող է պատահել, ի՞նչ կարիք կա այդքան զենք ու զորք կուտակել ֆրանսիական սահմանի մոտ, - հարցրեց Ռուբենը:

- Տա Աստված, որ ոչինչ չպատահի, բայց դրությունը լարված է... Ես ձեզ կարող եմ ասել, ռազմական գաղտնիք չէ, արդեն թերթերն են գրում այդ մասին... Արևելյան սահմաններում ավելի շատ զորք կա կուտակված:

- Ուրեմն, ռուսներն ավելի վտանգավո՞ր են թվում ձեզ:

- Ձեն թվում, այլ պարզապես հիմնական վտանգն այնտեղից է սպասվում, քանզի ռուսները սերբերի առաջին դաշնակիցն են և հիմա մեզնից ավելի եռանդուն են պատրաստվում, ահագին զորքեր են կուտակել սահմաններին:

- Մի կրակոցը բավական էր, որպեսզի ամբողջ Եվրոպան տակնուվրա լինի, - ցավագին զարմանքով փաստեց Ռուբենը:

- Այո, բայց ինչպիսի՞ կրակոցը:

- Լավ, հասկացա, - միջամտեց Յաննին: - Ավստրիացիների կայսերական ինքնասիրությունն է խոցված, Գերմանիան ինչո՞ւ է այդպես իրար անցել:

- Որովհետև Ավստրիան մեր դաշնակիցն է, հավանական է, որ նա պատերազմ հայտարարի Սերբիային, իսկ եթե հայտարարեց, Ռուսաստանն անմիջապես կկանգնի սերբերի թիկունքին, այսինքն՝ պատերազմ կհայտարարի Ավստրիային, իսկ եթե դա տեղի ունենա, մենք՝ գերմանացիներս, չենք կարող հանդիսատեսի դերում մնալ, ստիպված կլինենք ավստրիացիների թիկունքին կանգնել և պատերազմ հայտարարել Ռուսաստանին...

- Հապա ֆրանսիացի՞ք, անգլիացի՞ք, իտալացի՞ք, վերջապես, թուրքե՞րը, - հարցրեց Ռուբենը:

- Ֆրանսիացիք ռուսների դաշնակիցներն են, նրանք վաղուց են պատրաստվում ռեվանշի, ուստի կարծում եմ առիթն անմիջապես կօգտագործեն և պատերազմ կհայտարարեն մեզ:

- Բայց դա կծանրացնի ձեր դրությունը, - նկատեց Ռուբենը: - Ստիպված կլինեք երկու ճակատի վրա կռվել:

- Դա առանձնապես մտահոգիչ չէ, ֆրանսիացիք մեծ ուժ չեն ներկայացնում: Մեր բանակը հիմա շատ հզոր է, մենք կարող ենք երկու ճակատներում էլ հաջողությամբ կռվել:

- Բայց դուք մոռացաք անգլիացիներին, - հիշեցրեց Ռուբենը:

- Ինչպես և թուրքերին, որոնք անպայման մեր կողքին կլինեն, - լրացրեց գնդապետը: - Միայն թե արժանի հակակշիռ չեն լինի անգլիացիներին:

Եվ գլուխը մտախոհ տմբտմբացնելով ավելացրեց.

- Չէի ուզի, որ անգլիացիք մեջտեղ ընկնեն... Գործը շատ կդժվարանա: Միայն նրանց նավատորմը բավական է, որպեսզի պատերազմի ճակատագիրը շրջվի ի վնաս մեզ: Բայց հուսանք, որ այդպես չի լինի, մեր հետախուզական տվյալներն ասում են, որ անգլիացիք պատերազմի դեպքում մտադիր են չեզոքություն պահպանել:

- Բայց դուք արդեն քանի՛ անգամ պատերազմ բառը գործածեցիք, - նկատեց Ռուբենը:

- Իսկ ուրիշ ի՞նչ բառ կասեր այն ամենին, որ սպասվում է մեզ բոլորիս, - պատասխանեց գնդապետը:

- Ուրեմն պատերազմն անխուսափելի է՞, - հարցրեց Յաննին:

- Չէի ասի, թե անխուսափելի է, - պատասխանեց հայրը: - Կասեի՝ շատ հավանական է:

Ռուբենը հիմա նկատեց, որ ավելի քան երկու տարի առաջ թոշակի անցած պրն. Ապելը նորից իր սպայական համազգեստն է հագել: Գնդապետի աչքից հավանաբար չվրիպեց նրա զարմանքը, ուստի շտապեց բացատրել.

- Դուք զարմացա՞ծ եք, որ համազգեստով եմ: Ոչ, սա հայրենասիրական մղումներով չեմ հագել, պարզապես պահեստի սպաներին կանչել և գործ են տվել:

- Նույնիսկ ձե՞զ, - շարունակեց զարմանալ Ռուբենը:

- Այո, նույնիսկ մեզ, - մի տեսակ նեղված պատասխանեց գնդապետը:

- Մի՞թե վիճակն այնքան հուսահատական է, որ գործը ձեզ հասավ:

- Վիճակը, փառք Աստծո, ամենևին էլ հուսահատական չէ, պարզապես աշխարհազորայիններին ենք վարժեցնում:

- Արդեն աշխարհազոր կա՞, - գնալով ավելի ու ավելի էր զարմանում Ռուբենը: - Այսքան արա՞գ...

- Այո, պատկերացրեք, որ արդեն աշխարհազոր կա, քառասունից-հիսուն տարեկան տղամարդիկ կամավոր են գրվում, ուզում են վերականգնել իրենց մարտական ունակությունները...

Գնդապետը երևում էր, որ իր ասածներին շատ չի հավատում, երբեմն-երբեմն հայացքը գցում էր ցած, նույնիսկ բառերը ծամծմում:

- Բայց, որքան գիտեմ, աշխարհազորը կազմվում է այն ժամանակ, երբ բանակն այլևս անկարող է պաշտպանել իր ժողովրդին, երբ արյունաքամ պատերազմի հետևանքով երկիրը հայտնվում է պարտության եզրին, բայց դուք, փառք աստծո, հանգիստ ու խաղաղ ապրում եք, ի՞նչ կարիք կա այդպես առաջ անցնել դեպքերից...

Գնդապետը չպատասխանեց, ընդամենը լուռ գլխով արեց, ինչը կարելի էր ամեն կերպ հասկանալ: Մի ճնշող լռություն տիրեց ամառային վառվռուն արևով ողողված հյուրասրահում: Ներկաների դեմքներին նայելով դժվար չէր գուշակել, որ դատապարտվածության մի ծանր զգացում է ճնշում բոլորին: Տիկ. Ապելի ձայնը հնչեց այդ պահին որպես փրկության անսպասելի մի կանչ.

- Ի՜նչ եք այդպես տխուր նստել... Ամբողջ կյանքս այդ խոսակցություն-

ներն եմ լսել իմ փառահեղ ամուսնուց, բայց առայժմ, Աստծո օգնությամբ, ոչինչ չի պատահել և չի էլ պատահի... Գնա գարեջուրը բեր, Ֆրանց, թող երեխաները պաղ-պաղ խմեն զովանան:

Մռայլ մտքերը ցրելու նպատակով ասված խոսքերն այդ պահին իրենց բարերար ազդեցությունն ունեցան, սակայն հետագա օրերի ընթացքում պիտի տեսնեին, որ դրությունը գնալով ծանրանում է: Ինչ-որ առումով գուցե լավ էր, որ եկան այստեղ, քանզի չեզոք Շվեյցարիայի չափավոր ու զգույշ մամուլից դժվար էր հասկանալ, թե իսկապես ինչ է կատարվում, մինչդեռ այստեղ բավական էր գերմանական մամուլը կարդալ, որպեսզի հստակորեն տեսնեին կուտակվող ամպերը: Հպպա փողոցը, սրճարանը, խանութները, վերջապես մարդիկ...

Անհասկանալի, հիվանդագին մի էյֆորիա էր համակել բոլորին, որն օրեցօր ավելի բորբոքվում, ավելի ռազմաշունչ էր դառնում: Լրագրերն էլ չէին զլանում իրենց բաժին յուղը լցնել արծարծվող կրակին: Հիմնական խոսակցությունն այն մասին էր, որ ահաբեկումը ռուսների գործն է, և որ Գերմանիան ոչ մի դեպքում չի կարող իր հավատարիմ դաշնակցին մենակ թողնել անխուսափելի բոլոր վտանգների առջև: Որոշակիորեն երևում էր, որ ամբողջ երկիրը դարձել է պատերազմի հսկայական խոհանոց և որ հմուտ «խոհարարների» ձեռքով եփվում է մահաբեր մի ճաշ, որը մոտ ժամանակներում պիտի մատուցվի...

Հուլիսի 23-ին թերթերը հրապարակեցին Ավստրո-Հունգարիայի վերջնագիրը Սերբիային, վիրավորական, բռի ուժի դիրքերից շարադրված մի փաստաթուղթ, որն, ըստ էության, վերջ էր դնում սերբական պետականությանը, դարձնելով նրան ավստրիացիների ողորմելի խամաճիկը:

Ժողովրդի ցնծությանը չափ ու սահման չկար, սրճարաններում ու գարեջրատներում հավաքված իրենց հիացմունքն էին արտահայտում Ֆրանց-Իոսիֆով:

- Վերջապես ապացուցեց, որ մեր Վիլհելմին արժանի դաշնակից է, թե չէ կարծում էինք, որ զառամել է ու խելքը թոցրել...

Պրն. Ապելը, սակայն, ուրիշ կարծիքի էր.

- Խելքը թոցրել է ծերուկը, - մռայլ նշեց նա: - Սա փաստորեն պատերազմի հայտարարություն է, ոչ մի երկիր չի կարող այդպիսի պայմաններ ընդունել:

Շվարցվալդ գնալու մասին այլևս խոսք լինել չէր կարող: Եթե առաջին օրերն այդ ծրագիրը դեռ փայփայում էին, հուսալով լեռնային անդորրի մեջ մի քանի շաբաթ անցկացնել, ապա օր օրի վրա բարդացող իրավիճակն անորոշության մեջ էր պահում նրանց: Իսկ հիմա, ավստրիական վերջնագիրը Ռուբենին ստիպեց իսպառ հրաժարվել այդ գաղափարից:

- Ի՞նչ կա, ինչի՞ց ես վախենում, - հարցնում էր Յաննին: - Այնտեղ հանգիստ կլինենք, հեռու այս մտահոգություններից:

- Այս մտահոգություններից հեռանալ չես կարող: Ես այնտեղ ինձ ավելի վատ կզգամ՝ աշխարհից մեկուսացված... Իսկ այստեղ գոնե ծնողներիդ կողքին ենք, կարողանում ենք դեպքերին հետևել:

Տարօրինակ մի զգացում էր համակել նրան. ուզում էր ամեն ինչ ժամ առաջ իմանալ, վերլուծել, հասկանալ իրադարձությունների պատճառները: Եր-

բեմն-երբեմն մեղավորության մի տարտամ զգացում էր տանջում նրան, ասես վաղուց գիտեր դեպքերի նման զարգացման մասին, ասես տարիներ առաջ իր ականջին չչնջացել էին զարհուրելի գաղտնիքը, և ինքը զլացել կամ վախեցել էր անմիջապես տեղեկացնել մարդկանց, կանխել արհավիրքը: Այդ մտատանջությունը հանգիստ չէր տալիս նրան: Այդպիսի պահերին պահանջ էր զգում որևէ մեկի հետ կիսվելու, իսկապես համոզվելու, որ բանականությունն աշխարհի երեսից իսպառ չի անհետացել: Եվ որքան զարմանալի թվար, հանձինս պաշտոնաթող գնդապետի մի համախոհ էր գտել, որը չափազանց մտահոգված էր բարդացող իրավիճակով: Նա գտնում էր, որ գերմանացիք պետք է հեռու մնան ավստրիացիների արկածախնդրությունից, որ հիմա նրանց կողքին կանգնելը կնշանակեր դեմ գնալ ամբողջ Եվրոպային: «Ձպետք է ոգևորվել 1871 թվականի դյուրին հաղթանակով, - ասում էր նա: - Այն ժամանակ ֆրանսիացիք մեզ ստիպեցին պատերազմի մեջ մտնել, դա արդար պատերազմ էր: Սակայն հիմա կացությունն ուրիշ է, ուստի ավելի ճիշտ կլիներ հեռու մնալ անզգույշ քայլերից»: «Բայց հնարավո՞ր է արդյոք, - հարցնում էր Ռուբենը: - Ձնագունդն արդեն գլորվում է...»: «Ցավն էլ այն է, որ արդեն ուշ է, շատ ուշ...», - հառաչելով համաձայնում էր գնդապետը:

Այդպես էին մտածում նաև նրա զինակից ընկերներից շատերը, մարդիկ, որ պատերազմ էին տեսել և գիտեին, թե դա ինչ բան է: Նրանք գտնում էին, որ Գերմանիան ոչ մի շահ չունի նոր պատերազմի մեջ մտնելու: «Փաստորեն ամբողջ Եվրոպայի դեմ պիտի կռվենք», - ասում էին նրանք:

Այլևս պետք չէր մամուլը կարդալ, գարեջրատներում օրնիբուն ծավալվող զրույցները լսել, պարզապես պետք էր ուշադիր հետևել, թե համազգեստավոր մարդկանց թիվն ինչպես է շատանում քաղաքացիական բնակչության մեջ: Ձիավորական շարասյունները, որ սկզբում մեծ բնակավայրերից դուրս և գիշերով էին տեղաշարժ կատարում, այժմ լույս ցերեկով մտնում էին քաղաք, ժամերով, օրերով խցանում փողոցները, խափանում երթևեկությունը: Ռազմական տեխնիկան եթե սկզբում կրկնակի ծածկոցի տակ էր տեղափոխվում (խավարի և բրեզենտի), այժմ փողոցներում և հրապարակներում բացեիբաց ներկայացվում էր ժողովրդի տեսության: Սոսկալի հրանոթներ՝ լայն երախներով, մահ ու սարսափ թքող գնդացիրներ, զրահապատ, ծանր մեքենաներ, որ դժոխային աղմուկ գցելով անսպասելի հայտնվում էին փողոցներում, հետո, մարդաշատ մի խաչմերուկ ընտրելով, կանգ առնում, զարհուրելի ճռնչոցով երկաթյա մի դուռ էր բացվում և պողպատյա հրեշի ընդերքից՝ կաշվե զգեստ հագած, կաշվե սաղավարտ դրած, բեխավոր արարածներ էին դուրս գալիս, որոնք ժպիտը դեմքներին, սիրահոժար պատմում էին այդ զահանդական մեքենաների հրաշք կարողությունների մասին, իսկ ամբոխը, բերանը բաց լսում էր և թշնամական հազարավոր դիակներ պատկերացնում պողպատյա հրեշի թրթուրների տակ:

Ձիավորականները խրոխտ ու տիրական քայլում էին քաղաքի փողոցներով՝ վայելելով ժողովրդի և հատկապես իգական կեսի բացառիկ հարգանքն ու հիացմունքը: Նվաղկոտ աչքերով կանայք ու աղջիկներն ասես պատրաստ էին նույն պահին և հենց այդտեղ տրվելու: Նոր համազգեստներին սկսեցին ավելա-

նալ հները: Քաղաքն ասես դարձել էր բանակի պատմության կենդանի ցուցահանդես: Պահեստի սպաներին ավելացան հարյուրավոր և հազարավոր շարքայինները: Թվում էր, թե ուր որ է Ֆրիդրիխի ժամանակների համազգեստն էլ կհանեն փոշիների տակից: Ժողովուրդը, մոռացած բոլոր նախկին պատերազմների սարսափները, առաջիկա հավանական պատերազմը պատկերացնում էր որպես զվարճալի մի դիմակահանդես, որպես արկածալի ու հետաքրքիր մի արշավ: Մահը, արյունը, հաշմված անդամները դուրս էին մղված այդ պատկերների միջից: Սթափության որևէ կոչը ոչ միայն անիմաստ կլիներ, այլև վտանգավոր: Նման խիզախին պարզապես դասալիք կհամարեին, նույնիսկ դավաճան:

Զանգվածային այս տխմարացումն, անշուշտ, կազմակերպվում և ղեկավարվում էր: Կրքերն աստիճանաբար ու հետևողականորեն բորբոքվում էին, ուստի երբ հուլիսի 28-ին Ավստրիան պատերազմական գործողություններ սկսեց Սերբիայի դեմ, խելացնոր հրճվանք պոռթկաց փողոցներում: Հակառուսական տրամադրություններն ամբոխի մեջ գնալով սկսեցին սաստկանալ: Ահասարսուռ լուրեր էին շրջում ռուսների գործած վայրագությունների մասին: Իբր Սանկտ-Պետերբուրգում հարբած ամբոխը հարձակվել է ավստրիական դեսպանատան վրա, տղամարդկանց մորթել, իսկ կանանց՝ բռնաբարել: Թերթերն էլ, հետ չմնալով հակառուսական այդ հիստերիայից, զանազան հերյուրանքներ էին տպագրում, իբր Ավստրիայի և Գերմանիայի զանազան քաղաքներում ռուսական և ֆրանսիական լրտեսներ են հայտնաբերվել: Փողոցում, սրճարաններում, հասարակական այլ վայրերում սկսեցին թշնամական հայացքով նայել օտարականներին, հրաժարվում էին նույնիսկ նրանց սպասարկել, վիրավորական արտահայտություններ շպրտում: Ոստիկանությունն էլ իր հերթին կոչ արեց քաղաքացիներին զգոն լինել և լրտեսներ հայտնաբերելու դեպքում անմիջապես հայտնել պաշտոնական մարմիններին: Բառացիորեն երկու օրում բարեկիրթ և ղուսպ գերմանացիք վերածվեցին վայրենացած մի ամբոխի:

Միակ ուրախացնող բանն այդ օրերին ամառային զարմանալիորեն մեղմ ու հաճելի եղանակն էր, որն ասես ավելի էր արթնացնում կյանքը լիարժեք վայելելու հաճույքը: Կարծես Աստված մարդկանց մի քիչ խելք շնորհելու փոխարեն, որպես սթափության կոչ, որպես զգուշացնող նշան պարգևել էր կապույտ մի երկինք, սյուքով թեթևակիորեն խռոված հաճելի մի օդ, սիրո հրավերներ ուղարկող բուրավետ երեկոներ և եթերային գիշերներ: Այդ կողմերում, սովորաբար, հուլիս-օգոստոս ամիսներին ծանր ու հեղձուցիչ տապեր էին լինում, խոնավ օդը դառնում էր անշնչելի, քիչ թե շատ ունևոր բնակիչները հեռանում էին դեպի զովասուն ամառանոցները և քաղաքն առնվազն երկու ամսով ամայանում էր: Մինչդեռ հիմա էրֆուրտը ոչ միայն չէր դատարկվել, այլև բնակչությունը կարծես կրկնապատկվել էր: Փողոցները խռնված էին բազմությամբ, սրճարաններում անկարելի էր աղատ տեղ դտնել, զբոսայգիներում ծիծաղ ու երաժշտություն էր մինչև ուշ գիշեր:

Օգոստոսի առաջին օրն էր: Յաննին ու Ռուբենը նստած էին սրճարանի ստվերով պաշտպանված տերրասում: Քաղաքի խաղաղ անկյուններից մեկն էր, այդ պատճառով էր թերևս, որ գալիս էին այստեղ լռություն և անդորր վայելե-

լու: Սակայն այսօր մի տարօրինակ տեսարան էր ծավալվել: Երկու բանվոր, մուրճի հուժկու հարվածներով փորձում էին ցուցանակը հանել: Իսկ ներսում, սպասուհիները, դանակները ձեռքներին, ջանում էին ապակու վրա դրոշմված ոսկեգույն տառերը ջնջել: Ցուցանակն ավելի քան հարյուր տարի առաջ էին ամրացրել, հիմա պետք էր խնամքով և ամենայն ուշադրությամբ հեռացնել, որպեսզի պատերը չվնասվեին: Ժամանակ պահանջող, նույնիսկ նյարդայնացնող մի աշխատանք: Ահա, վերջապես կարողացան ծանր ու ժանգոտած մեխերը հանել: Իսկ հիմա զգույշ և ուշադիր նոր ցուցանակն են ամրացնում նախկինի տեղում: Մի քանի րոպեում «Café Sans-Souci»-ն դարձավ «Café Potsdam»: Սույն փոփոխությունը ոչնչով չանդրադարձավ մատուցվող կերակուրների կամ գարեջրի գնի վրա: Պարզապես ֆրանսիական անվանումը փոխվեց գերմանականով: Իսկ եթե հաշվի առնենք, որ այն ըստ էության ֆրանսերեն էր, բայց ոչ ֆրանսիական, քանզի Պոտսդամում գտնվող «պրուսական Վերսալ» հորջորջված պարտեզը ֆրանսասեր Մեծն Ֆրիդրիխն էր այդպես անվանել, ապա կարելի էր ասել, որ առանձնապես մեծ փոփոխություն չկատարվեց: Սակայն առօրյա այս գործողությունը սրճարանի հաճախորդները և անցորդներն ընդունեցին բուռն ծափերով:

- Տեր Աստված, մինչև ո՞ւր կարող է հասնել մարդկային տխմարությունը, - գլուխն օրորելով, ասես ինքն իրեն, հարցրեց Ռուբենը:

- Բավական է, սիրելիս, - փորձեց հանգստացնել նրան Յաննին: - Ինչո՞ւ ես քեզ տանջում:

- Չեմ ուզում բոլորի պես խենթանալ:

- Ուրեմն, պահպանիր մտքիդ պայծառությունը և կողքից նայիր աշխարհին:

- Երբ փլվում է ամեն ինչ, չես կարող կողքից հանգիստ նայել:

- Բայց ի՞նչ կարող ես անել:

- Ամենաշատը, որ կարող եմ անել՝ մերժել այդ կործանումը և աշխարհի ամբողջական պատկերը պահել իմ մեջ, իսկ դրա համար ամեն վայրկյան պիտի հակադրվեմ այս ավերին:

- Մի՞թե այդքանը բավական է:

- Բավական է, եթե համոզված լինես մինչև վերջ, չթողնես, որ աշխարհը փլվի նաև քո մեջ... Հենց որ դադարեմ դիմադրել տխմարության և բարբարոսության գրոհներին, ես էլ կսկսեմ նմանվել այս ամբոխին:

- Բայց դու մենակ ես, մնացած բոլորն ուրիշ կերպ են մտածում:

- Նախ ես մենակ չեմ... Բայց եթե նույնիսկ միակը լինեմ, որը ժխտում է մարդկության այս դավադիր կործանումը, ապա այդքանը բավական է, որպեսզի հույսեր մնան վաղվա վերածննդի համար:

- Դու հավատո՞ւմ ես վաղվան... Դու վստա՞հ ես, որ այս խենթացած մարդկությունը խելքի կգա, - հետաքրքրված հարցրեց Յաննին:

- Ինչպե՞ս կարող եմ չհավատալ, երբ ամեն օր տեսնում եմ, թե ինչպես է ծաղկում բնությունը, ինչպես են մայրանում կանայք, երբ շարունակ ուզում եմ համբուրել և սիրել քեզ... Մի՞թե այսքանը բավական չէ, որպեսզի հավատաս վաղվա օրվան...

- Սակայն շատերը գոհ չեն, նրանք ավելին են ուզում:

- «Ավելին» չի կարող լինել, «ավելինը» մահն է...

Նրանք զրուցում էին ֆրանսերեն: Մինչև այժմ այդ լեզվի դործածությունը գերմանական միջավայրում որևէ խնդիր չէր հարուցել: Ավելին, դիտվում էր որպես բարեկրթության, առանձնաշնորհյալների դասին պատկանելու մի վկայություն: Սակայն վերջին շաբաթվա դեպքերը կտրուկ փոխել էին մտայնությունը նաև այդ հարցում: Ֆրանսերենի գործածությունն ամբոխը չէր խրախուսում: Ահա ինչու Յաննին չչուկով ասաց.

- Այդքան բարձր մի խոսիր, տես, բոլորը մեզ են նայում:

Իսկապես, կողքի սեղանին երկու տղամարդ էին նստած, որոնք աննրբանկատ հետաքրքրասիրությամբ նայում էին նրանց:

- Պարոնը ֆրանսիացի՞ է, - հարցրեց նրանցից մեկը Յաննիին:

- Ոչ, նա օսմանյան քաղաքացի է, - շտապեց գերմաներեն պատասխանել վերջինս: - Մենք ամուսնացած ենք:

- Ի՜նչ եք ասում, շատ հաճելի է, - քաղցր ժպիտով իր հիացմունքը հայտնեց պարոնը: - Բայց չեք կարծո՞ւմ, տիկին, որ այս օրերին այնքան էլ պատշաճ չէ, երբ բարեկամ երկրի քաղաքացին թշնամու լեզվով է խոսում իր գերմանացի կնոջ հետ, այն էլ մեր հողի վրա:

- Գիտեք ինչ, նա բավականաչափ չի տիրապետում մեր լեզվին, որպեսզի...

Նրա խոսքը կիսատ մնաց, քանզի ճիշտ այդ պահին հարևան փողոցից մի բազմություն դուրս պրծավ՝ հրճվանքի աղաղակներ արձակելով: Նրանց առաջնորդում էր պրուսական բանակի համազգեստով, սրածայր սաղավարտով տարիքավոր մի սպա: Նա տանում էր 1870-71 թթ պատերազմի հերոս զորավար Ֆոն Մոլտկեի դիմանկարը և, չնայած առաջացած տարիքին, բավական աշխույժ էր: Կողքից քայլում էր մեկ այլ հին զինվոր, որն ասես ամեն ինչով առաջինի պատճենը լիներ, այն տարբերությամբ, որ այս մեկը Բիսմարկի նկարն էր բռնել: Երբ բազմությունը մոտեցավ սրճարանին, Ֆոն Մոլտկեի նկարը պահող ծերունին, իր ետևից եկողներին ձեռքով նշան արեց, որ կանգ առնեն, հետո, հուզմունքից խեղդվող ծերունական ձայնով ազդարարեց.

- Սիրելի հայրենակիցներ, պատիվ ունեմ ձեզ հայտնելու, որ մեր պաշտելի, վեհապանծ կայզեր Վիլհելմն այսօր վերջապես պատերազմ է հայտարարել Ռուսաստանին...

Պատերազմի ծարավ այցելուները ցնծագին ճիչերով դիմավորեցին լուրը: Մի քանիսը տեղներից ելան ու միացան բազմությանը, իսկ սրճարանատերը, որն արդեն ամրացրել էր նոր ցուցանակը, անձամբ երկու գավաթ գարեջուր մատուցեց հին զինվորներին: Նրանք հաճույքով խմեցին և շարունակեցին երթը: Քաղաքն ակնթարթի մեջ փոխվեց. պատուհանները բացվեցին, պատշգամբներում դրոշներ հայտնվեցին, խանութները փակվեցին, մարդիկ շտապեցին տներից դուրս գալ և խումբ-խումբ քայլել դեպի գլխավոր հրապարակ: Բոլորը եղբայրացել էին, ողջագուրվում էին, ծաղիկներ նվիրում:

Սրճարանում մնալն անիմաստ էր: Նրանք էլ վերկացան և քայլեցին դե-

պի գլխավոր հրապարակ, որտեղից արդեն, քաղաքով մեկ, տարածվում էր ծովածավալ ամբոխի հանդիսավոր երգը. «Deutschland, Deutschland, über alles!»: Տպավորությունը ցնցող էր, անգամ օտարականի համար: Ռուբենը պատկերացրեց, թե յուրաքանչյուր գերմանացի այս երգը լսելիս ինչպիսի սրբազան սարսուռ է ապրելու: Այդ երգը սոսկում էր պատճառում: Դա մի հրեշավոր ուժ էր, որ պատրաստ էր ամեն ինչ սրբել իր ճանապարհին: Ահավոր մի կասկած տրորեց նրա սիրտը. կկարողանա՞ արդյոք Ռուսաստանը դիմադրել այս վայրագ ու կազմակերպված ուժին, մանավանդ երբ սրանց միանա նենգաբարո թուրքը, որն այնտեղ՝ Բոսֆորի ափին դարան մտած սպասում է: Եվ եթե այս քաղաքակիրթ գազանին միանա բարբարոս գազանը, ապա ամբողջ հայության ապագան...

Թևքից քաշեցին: Յաննիի ձայնը լսեց: «Գնանք այստեղից, Ռուբեն», - ասաց նա: Միաժամանակ աղեխարշ մի ճիչ ստիպեց կտրուկ շրջվել: Յոթ-ութ հոգի, փայտերով ու երկաթյա ձողերով զինված, հետապնդում էին պատառոտված զգեստներով մի տղամարդու: Նա վազում էր դեպի զբոսայգի, հավանաբար, հուսալով այնտեղ փրկություն գտնել: Սակայն հենց մուտքի առջև երկու հաղթանդամ տղամարդ կտրեցին ճանապարհը, գցեցին գետին, և նրանցից մեկը հարցրեց.

- Ինչո՞ւ եք վազում սրա ետևից, գողություն է արե՞լ:

- Ոչ, ռուս է, - պատասխանեց պատկառաչուք տեսքով, լավ հագնված մի պարոն:

- Իսկ դրանից զատ որևէ վատ բան արե՞լ է:

- Այո, նա անպատվեց մեր դրոշը:

- Սուտ է, ես չեմ անպատվել, - աղիողորմ բացականչեց ռուսը, որի երեսին արդեն ծեծի հետքեր կային:

- Ձայնդ կտրիր, խոզ, - ընդհատեց պատկառաչուք պարոնը և ձեռնափայտով սաստիկ հարվածեց մեջքին:

- Ոստիկան կանչեք, - գոռաց հաղթանդամ երիտասարդը և փորձեց ձեռնափայտով պարոնին զսպել:

Սակայն այս խորհուրդը ոչ մի ազդեցություն չունեցավ, ավելին, հետապնդողները նրան հրեցին մի կողմ և հարձակվեցին տապալված զոհի վրա: Հարվածներ տեղացին՝ փայտով, երկաթով, ուր որ պատահի: Հետապնդողներին ևս մի քանիսը միացան, որոնք բավարարվում էին աքացու հարվածներով: Որևէ մեկը չփորձեց միջամտել, բանականության կոչել նրանց: Ականատեսներից մեկը միայն հարցրեց.

- Իսկ ստուգե՞լ եք, հաստատ գիտե՞ք, որ ռուս է:

- Այո, ստուգել ենք, ահա նրա անձնագիրը, - պատասխանեց պատկառաչուք պարոնը՝ ռուսի անձնագիրը ցույց տալով որպես իրեղեն ապացույց:

Ռուբենը մղվեց առաջ, դեպի գետնատարած զոհը և նույն պահին մի հուժկու ձեռք նրան պահեց տեղում: Շրջվեց և ետևը բարձրահասակ մի տղամարդ տեսավ:

- Մի խանգարեք պարոն, ես բժիշկ եմ, ես պարտավոր եմ օգնել , - ասաց Ռուբենն:

- Նրան հիմա նույնիսկ Աստված չի կարող օգնել, - դեմքի տխուր արտահայտությամբ ասաց պարոնը:

Իսկապես, ղոհի մարմինը վերածվել էր արնաշաղախ մի մսակույտի: Հետապնդողները հասկացան, որ արդեն դիակ են ծեծում: Նրանք կանգ առան, աչքերը չռած նայեցին իրենց ձեռքի գործին և մահակներն ու ձողերը գցելով անհետացան տարբեր ուղղություններով:

Նորից քաշեցին նրա թևքից: Դարձյալ Յաննին էր.

- Գնանք այստեղից, Ռուբեն, - հազիվ արտաբերեց նա՝ արցունքները սրբելով:

* * *

Գնա՛նք, բայց ո՞ւր: Աշխարհում մնացե՞լ է արդյոք մի անկյուն, որտեղ մարդիկ դեռևս չեն մոռացել, որ իրենք մարդ են: Պատկերացրեց, թե ինչեր կկատարվեն Պոլսում, երբ թուրքերը պատերազմ հայտարարեն Ռուսաստանին: Իսկ դա շատ հավանական է: Գերմանական մամուլն արդեն որոշակի հույսեր է կապում... Նրանք չա՛տ են ուզում, որ հայերը միանան Կովկասի մահմեդականներին և ապստամբեն ռուսների դեմ: Սակայն նման դաշինքը բացառվում է, հայերը երբեք չեն ապստամբի ռուսների դեմ: Եվ գերմանացիք պիտի որ լավ իմանան այդ բաները, իսկ թուրքերն ավելի լավ գիտեն: Ուրեմն ի՞նչ... Ուրեմն այն, որ հայերն արդեն դարձել են գերմանացիների և թուրքերի թշնամին: Տեր Աստվա՛ծ, թուրքը մեզ քիչ էր, հիմա էլ այս սպառազինված հրեշին հանեցիր մեր դեմ...

«Վերադարձեք Շվեյցարիա, - խորհուրդ էր տալիս գնդապետը՝ մի քիչ նեղված, որ աղջկան ու փեսային փաստորեն քշում է իր տնից: - Ճիշտ է այս խառն օրերին շատ կուզեինք, որ մեր կողքին լինեիք, բայց ձեզ համար եմ ասում, այնտեղ ավելի հանգիստ կզգաք»:

Այո, բոլոր դեպքերում պիտի վերադառնային, սակայն արդեն գիտեր, որ այնտեղ էլ հանգիստ չի գտնելու: Մղձավանջն արդեն թափանցել էր հոգու մեջ, և արդեն գիտեր՝ որտեղ էլ լինի, միևնույն է պիտի տառապի:

Պատերազմի հայտարարությունները հաջորդում էին իրար: Օգոստոսի երեքին Գերմանիան պատերազմ հայտարարեց Ֆրանսիային՝ ցնծության մի նոր ալիք առաջացնելով բնակչության մեջ: Սակայն երբ հաջորդ օրը հայտնի դարձավ, որ Անգլիան է պատերազմ հայտարարել Գերմանիային, քաղաքում սոսկալի իրարանցում սկսվեց, ժողովուրդը գրոհեց բանկերի և խանութների վրա, որպեսզի մթերքի պաշարներ հավաքի: Մեծ դժվարությամբ կարողացան գնացքի տոմս ձեռք բերել վերադարձի համար: Երկաթուղին անցել էր բանակի հսկողության տակ, անգամ երկրի ներսում ճամփորդելը դարձել էր խնդիր: Գնդապետի կապերն օգտակար եղան: Սակայն պարզվեց, որ տոմսակ ձեռք բերելն ընդամենը գործի կեսն է, քանզի գնացքների չվացուցակը խախտվել էր, մարդիկ երբեմն ստիպված էին լինում մի քանի օր սպասել, որպեսզի կարողանան պարզապես գնացք նստել, իսկ նստելուց հետո էլ պատահում էր, որ ժամերով սպասում էին շարժվելուն:

...Մեկնումը փախուստի նման էր: Կայարան եկան կեսգիշերին: Փաստաթղթերի երկար-բարակ ստուգումներ պիտի անցնեին: Երիտասարդ մի սպա Ռուբենի անձնագիրը նայելով, համակրանքով դիմեց նրան.

- Ձեր փոխարեն, պարոն, ես կշտապեի վերադառնալ Կոստանդնուպոլիս և պահանջել կառավարությունից, որ անհապաղ պատերազմ հայտարարեն Ռուսաստանին:

- Անհոգ եղեք, պարոն կապիտան, վաղ թե ուշ կհայտարարեն:

- Ժամանակը թանկ է, պարոն, մեր զինվորները նոր տարին պիտք է իրենց տներում դիմավորեն, - համոզված ասաց նա և բարի ճանապարհ մաղթեց:

Կայարանի սպասասրահում ահավոր մի խճողում էր: Նորակոչիկներից կազմված մի զորամաս մեկնում էր ֆրանսիական ճակատ: Տասնութից-քսան տարեկան երիտասարդներ էին, մի քանիսը նույնիսկ անբեղ-անմորուք: Կառամատույցի կողմից մի բարձրաստիճան սպա մտավ ներս, սուլիչի զիլ աղդանշանով լռություն հաստատեց և ձայնին մտերմիկ երանգ հաղորդելով, դիմեց ճանապարհ դնող հարազատներին.

- Սիրելի ծնողներ, սիրելի եղբայրներ ու քույրեր, դուք չեք հասցնի նույնիսկ ձեր որդիներին, ձեր եղբայրներին կարոտել, նրանք շատ շուտով հաղթական կվերադառնան տուն...

Հետո կատակի տալով և խորամանկ ժպտալով շարունակեց.

- Իսկ եթե հանկարծ այնպես պատահի, որ մինչև սեպտեմբերի երկուսը* չվերադառնան, շատ չմտահոգվեք, պարզապես նամակ կգրեք հետևյալ հասցեով. «Փարիզ, Կենտրոնական փոստ, ց՛պահանջ», և համոզված եղեք, որ անմիջապես պատասխան կստանաք...

Սպայի սրամտությունը ծափերով, հռհռոցներով և հիացմունքի աղաղակներով ընդունվեց: Զինվորները դասակ առ դասակ շարվեցին վագոնների մոտ և սպայի հրամանով մտան ներս: Հարազատներին թույլ էին տվել դուրս գալ կառամատույց: Իսկապես հուզիչ և հանդիսավոր պահ էր: Ռուբենն ապշած էր, թե ծնողներն ինչպիսի զսպվածությամբ և սպարտական խստամբերությամբ են ուղարկում իրենց որդիներին դեպի մահ: Մի՞թե նրանք այդպես վստահ էին մոտալուտ և դյուրին հաղթանակին, մի՞թե այդ աստիճան կուրացել էին... Թե՞ սա հոչակավոր տևտոնական ոգին էր, որ բացառիկ ուժ էր հաղորդել նրանց: Միայն մի քանի աղջիկների աչքերում արցունք հայտնվեց, հավանաբար նոր-բապսակներ էին:

Զինվորներին ռազմաճակատ ուղարկելուց հետո, միևնույն սպան, որը կայարանի պարետն էր, ուղևորության պատրաստվող օտարականներին հրավիրեց սպասասրահ և զվարթ ձայնով ասաց.

- Հարգելի տիկնայք և պարոնայք, դուք տեսաք, թե գերմանացի զինվորն ինչպիսի հրճվանքով է գնում իր հայրենիքը պաշտպանելու թշնամիներից:

Հետո դեմքին մի պաշտոնական ժպիտ դնելով հայտարարեց.

---

* 1870 թ. սեպտեմբերի երկուսին Նապոլեոն Երրորդ կայսրը, ֆրանսիական բանակի ջախջախիչ պարտությունից հետո, գերի ընկավ գերմանացիներին: Ծ.Հ.

- Կես ժամ հետո ձեր գնացքը կմատուցվի առաջին գիծ, և դուք հնարավորություն կստանաք վերադառնալու ձեր երկիրը և պատմելու գերմանացի զինվորի անկոտրում կամքի մասին: Բարի ճանապարհ ձեզ:

Սպան գլխով արեց և դուրս եկավ: Նա գիտեր, թե ինչ էր ասում և ում էր ասում: Սրահում հավաքված չեղոք երկրների քաղաքացիների հետ կային նաև բազմաթիվ ռուսներ և ֆրանսիացիներ: Գերմանական զինվորի առասպելն ուռճացվում էր հիմնականում նրանց համար, պատերազմը մղվում էր ոչ միայն ռազմի դաշտում, այլև կայարանի այս սրահում:

Սակայն իրենց տները վերադարձող օտարականները պիտի պատմեին նաև մեկ այլ տեսարանի մասին: Գերմանական անթերի կազմակերպվածությունն այդ օրը նորից խափանվեց: Սպայի դուրս գալուց ուղիղ հինգ րոպե հետո մի մեծ շարժակազմ, փնչացնելով ու ամբողջ կայարանը ցնցելով մոտեցավ կառամատույցին: Դեռևս հեռվից հասնող դղրդոցը առիթ էր տալիս ենթադրելու, որ գնացքն ընթանում է մեծ արագությամբ, ուստի պիտի թափով գա ու անցնի: Սակայն եկավ ու կանգնեց: Ուղևորները կարծելով, թե դա իրենց գնացքն է, միանգամից դուրս թափվեցին կառամատույց: Ավաղ, հրճվանքը չափազանց կարճատև եղավ. նրանց անմիջապես և նույնիսկ կոպտորեն ետ մղեցին, սպասասրահի դուռը փակեցին և զինվոր կանգնեցրին մուտքի առջև: Նրա մերկացրած սվինն, այնուամենայնիվ, չխանգարեց, որպեսզի ընդարձակ պատուհաններից տեսնեն, թե ինչպիսի իրարանցում սկսվեց կառամատույցում: Չորս կողմից հրամաններ էին լսվում, զինվորներն ու սպաները, գլուխները կորցրած, ետուառաջ էին վազում: Կարելի էր կարծել, թե թշնամին անսպասելի հարձակվել է կայարանի վրա: Ամեն ինչ պարզ դարձավ, երբ կարմիր խաչ կրող վագոնների դռները բացվեցին. սկզբում վիրակապով զինվորները դուրս եկան, որոնք ի վիճակի էին առանց օգնության քայլելու, նրանց հաջորդեցին հենակավորները, այնուհետև, սանիտարները, պատգարակներով, ծանր վիրավորներին դուրս բերեցին: Տեսարանն առավել քան ճնշող էր: Կանանցից մի քանիսն սկսեցին լուռ արտասվել, սպասասրահում հավաքված բազմության միջով մի շշուկ անցավ, իսկ ծերունազարդ մի պարոն տխրագին ձայնով նկատեց.

- Լավ է, որ ճանապարհ դնող հարազատներն այստեղ չեն:

Գնդապետը, որն իր փեսայի և դստեր կողքին կանգնած լուռ նայում էր այդ տեսարանը, շտապեց առարկել.

- Մի չափազանցրեք, պարոն, սա պատերազմ է, վիրավորներ կլինեն, սպանվածներ էլ կլինեն, բայց կլինեն նաև հերոսներ: Ինչ վերաբերում է հարազատներին, նրանք լավ գիտեն, որ իրենց որդիները գնում են ոչ թե զվարճանալու, այլ հայրենիք պաշտպանելու:

Գնդապետի ձայնում հանդիսավորություն չկար, նա ասես հայրական իրատ կարդար, և գուցե դա էր պատճառը, որ թշնամական երկիր դարձած Գերմանիայից հեռացող ռուսների և ֆրանսիացիների դեմքներին հրճվանք չնկատվեց, այլ ավելի շատ սարսափ, գուցեև ցավակցություն: Այս հաշմված երիտասարդներին նայելով, հավանաբար նույնպիսի մի տեսարան էին պատկերացնում իրենց երկրների կայարաններում:

Սրահում հավաքվածների միջով չչուկ անցավ: Փսփսալով հայտնում էին, որ վիրավոր զինվորներին բերում են Ֆրանսիական ռազմաճակատից: Ցավոք սրտի պրն. Ապելը դուրս էր եկել, ուստի դժվար էր պարզել, թե որքանով էին ստույգ այդ չչուկները: Բայց ի՞նչ կարևոր էր, թե որ ռազմաճակատից էին բերում այդ խեղանդամված երիտասարդներին:

Գնդապետը վերադարձավ այլայլված դեմքով և հայտնեց, որ քիչ հետո գնացք կնստեն: Եվ իսկապես, սպասասրահի դռները բացվեցին, և ուղևորներին հրավիրեցին կառամատույց: Մուտքի մոտ նորից ստուգեցին փաստաթղթերը, և երբ բոլորը տեղավորվել էին, մի սպա մտավ վագոն՝ երկու զինվորի ուղեկցությամբ, և միապաղաղ սկսեց ուղևորության պայմանները թվարկել. ուղևորության ամբողջ ընթացքում բաժնեխցիկի պատուհանները պիտի փակ լինեն, վարագուրված, արգելվում է դուրս նայել, խստիվ արգելվում է կանգառների ժամանակ՝ բաց դաշտում, թե կայարաններում, վագոնից դուրս գալ, չի թույլատրվում նաև վագոնից-վագոն անցնել, հավաքվել տամբուրներում կամ միջանցքներում:

- Հապա ինչպե՞ս պիտի ռեստորան գնանք, - հարցրեց ուղևորներից մեկը:

- Գնացքում ռեստորան չկա, - անվրդով պատասխանեց սպան:

Ուղևորությունը կատարյալ մղձավանջ դարձավ: Չնայած գիշեր էր, բայց օգոստոսյան շոգը մնացել էր վագոնների մեջ, միջանցքը, խցիկները, վագոնն ամբողջությամբ ներծծված էր գարշահոտով, կպչուն քրտինքը պատում էր մարմինը, զրկում շարժվելու, անգամ տրտնջալու կամքից: Այս տանջանքներին գումարվում էր գնացքի դանդաղ ընթացքը, անկանոն և մանավանդ երկարատև կանգառները: Կայարաններում շարունակ զինվորական հրամաններ էին լսվում, զինվորների ծիծաղ, խոսակցություններ, հայհոյանքներ և մշտապես զնգացող, շաչող, դղրդացող մետաղը, ասես շարունակ ընթանում էին մի հսկա ու անծայր զորանոցի միջով: Եվ թվում էր, թե գնացքն ընդմիշտ պիտի այսպես ընթանա և որ իրենց կյանքի մնացած մասը պիտի անցնի փակ դռների ու սև մոմլաթով վարագուրված պատուհանների ետևում՝ մարդկային արտաթորանքներով թունավորված մթնոլորտի մեջ:

* * *

Փոստարկղն այնքան էր լցված, որ հազիվ կարողացավ ծրարներն ու բացիկները հանել: Ասես բոլորը որոշել էին հատկապես իր բացակայության ժամանակ գրել, ըստ որում ոմանք մի քանի անգամ, գրեթե իրար ետևից: Օրինակ՝ ծնողները, չնայած զգուշացրել էր, որ մեկնում է Գերմանիա, Լևոն Ազնավուրյանը երեք պատկառելի ծրար է ուղարկել, որոնց ներսում մտահոգ ու տագնապալի նամակների կողքին անպայման լուսանկարներ դրած կլինի և ուղտեր ու բուրգեր պատկերող բացիկներ: Պերեսի մեկ բացիկը Բուենոս-Այրեսից՝ համառոտ բովանդակությամբ. «Եվրոպան այլևս ապրելու տեղ չէ: Առանց հապաղելու եկեք այստեղ և սարսափներից հեռու կյանքը վայելեք: Ճիշտ է, Արգենտինայում հիվանդ մարդիկ շատ քիչ են, բայց դա չի խանգարում, որպեսզի բժիշկ-

ներն այստեղ միլիոնատեր դառնան»: Չէ, այս տղան ոչ մի իրավիճակում իր կենսախինդ նկարագիրը չի փոխի: Գուցեև իրավացի է, անշուշտ, յուրովի:

Նամակների կույտից զատեց մի ծրար, մյուսներից ավելի փոքր, որ դոկտոր Ռուն էր ուղարկել: Զարմանալի է, նա էլ գիտեր, որ Լոզանից բացակայելու է մինչև օգոստոսի վերջը, սակայն, չգիտես ինչու, օգոստոսի սկզբին հարկ է համարել իր այցեքարտի վրա երկու տողով խնդրել, որ վերադառնալուն պես հանդիպի:

Դոկտորը կանչում էր իր տուն: Սա հրավեր չէր, ոչ էլ սովորական ժամադրություն, այլ գործնական այցելության առաջարկ:

Ճիշտ այդպիսի ուրիշ ծրար հիշեց, որ ստացավ մոտ ութ տարի առաջ: Հիշեց այն զրույցը, որը կարևոր դարձավ իր կյանքում: Սնահավատ չէր, բայց չգիտես ինչու հակասական ինչ-ինչ զգացումներից սիրտը տրորվեց: Մի՞թե հիմա էլ, արհավիրքի այս օրերին, վճռական մի բան պիտի տեղի ունենա իր կյանքում:

Դոկտորի տանը կարծես ոչինչ չէր փոխվել. նույն սպասուհին էր, մահվան հուսահատ պայքարը պատկերող նույն կտավը, նույն կարկանդակը, արծաթյա նույն գավաթներով մատուցված կիրշը: Թերևս դոկտորն էր մի քիչ փոխվել: Սակայն եռանդը նույնն էր, նույն աչքերն էին՝ թափանցող և ամեն ինչ տեսնող:

- Լիովին հասկանում եմ ձեզ, - համբերատար լսելով իր հյուրին ասաց նա: - Սակայն խորհուրդ կտայի պատասխանի համար չշտապել, մտմտալ իմ առաջարկների շուրջ, ի վերջո դեռ բավական ժամանակ կա վերջնական վճռի համար:

- Վերջնական վճռի մասին խոսք լինել չի կարող, - պատասխանեց Ռուբենը: - Ես ինքս էլ առայժմ չգիտեմ, թե ինչ եմ անելու...

- Այո, դժվար է այսպիսի կացության մեջ ընդհանրապես որևէ վճիռ ընդունել, և գուցե լավ է, որ այդպես է, գուցե վաղը որոշես ընդմիշտ այստեղ հաստատվել... Ոչինչ հայտնի չէ: Համենայն դեպս լավ հիշիր, որ չորս ամիս հետո ես թոշակի եմ անցնում, ուստի այժմվանից իսկ կուզեի իմանալ, թե ով է փոխարինելու ինձ այն հիվանդանոցում, որտեղ կյանքիս ուղիղ կեսն եմ անցկացրել:

- Սակայն լուրջ պատասխանատվություն է, դոկտոր, այս տարիքիս այդպիսի մեծ հիվանդանոց ղեկավարել, ես գրեթե փորձ չունեմ:

- Նախ, առաջին երկու տարին մենակ չեք ղեկավարի, դոկտոր Բուրժեն ձեր կողքին կլինի, և հետո, արդեն բազմիցս ասել եմ, որ փորձը գալիս է ինքնաբերաբար, տարիների հետ, բայց սիրտը, հոգին, պատասխանատվության զգացումը կամ լինում է, կամ չի լինում:

- Մի՞թե դրանք այսօր որևէ արժեք ունեն:

- Չէի ուզի ձեր բերանից այդպիսի խոսքեր լսել... Ես հասկանում եմ, թե ինչու եք այդպես խոսում, Գերմանիայում ապրած մղձավանջը դեռ թարմ է ձեր մեջ, բայց կյանքը պիտի շարունակվի, և մենք նախևառաջ դրանց կարիքը պիտի զգանք, և ես համոզված եմ, որ դուք գիտակցում եք դա:

- Գիտակցելը քիչ է, ուժ է պետք սիրտ ու հոգի տալու համար:

- Կգտնվի այդ ուժը, - հայտարարեց դոկտորը: - Մենք ունենք այդ ուժը մեր մեջ, պարզապես չշմած ենք դեպքերի նման զարգացումից: Ժամանակ է պետք խելքի գալու համար... Եվ ո՞վ գիտի, գուցե այս պատերազմը երկար չտևի, գուցե այդ կայսրերը և թագավորները հասկանան, որ աշխարհը կանգնած է կործանման եզրին:

- Աստված տա, բայց ես վախենում եմ, թե հակառակը լինի և պատերազմը գնալով ավելի ծավալվի:

- Սակայն ձեր երկրում խաղաղություն է: Թուրքերը եվրոպացիներից ավելի խոհեմ եղան, հեռու մնացին այս արկածախնդրությունից:

- Բայց մինչև ե՞րբ... Վաղ թե ուշ նրանք էլ կմտնեն պատերազմի մեջ և, անշուշտ, հօգուտ գերմանացիների:

- Ուրեմն, առավելևս առանց վարանելու պիտի ընդունեք իմ առաջարկը:

- Հենց դա է, որ ինձ ստիպում է հրաժարվել:

Դոկտոր Ռուն նորից իր թափանցող հայացքը հառեց նրան:

- Տարօրինակ մարդ եք դուք, սիրելի կոլեգա, - ասաց նա: - Արդեն իննը տարի է ծանոթ ենք և ինձ թվում է, թե հիմնովին ճանաչում եմ ձեզ, սակայն շարունակում եմ ձեզ հայտնագործել: Մինչև այսօր ձեր անակնկալ վճիռներն ինչ-որ տրամաբանություն ունեին: Ես հիշում եմ մեր առաջին հանդիպումն այս սենյակում, երբ հայտարարեցիք, որ այլևս չեք ուզում շարունակել ուսումը, որ չեք ուզում բժիշկ դառնալ: Սակայն ոչ մի տրամաբանությամբ չեմ կարողանում բացատրել ձեր ցանկությունը՝ այս վտանգավոր ժամանակներում վերադառնալ հայրենիք: Այո, հասկանում եմ, կարոտել եք հարազատներին, ընկերներին, ձեր միջավայրին, վերջապես, ձեր ժողովրդին, բայց ավելի խոհեմ չէր լինի՞, որ ձեր հարազատներին բերեիք այստեղ, մինչև այս ծանր ժամանակներն անցնեն ու գնան:

- Նրանք չեն գա, ես ձեզ արդեն պատմել եմ: Այդքան աղետներ են եկել ու անցել հայերի գլխով, բայց շարունակում են մնալ այնտեղ:

- Բայց կա նաև մեկ ուրիշ հանգամանք, թերևս ավելի կարևոր, քան ձեր անձնական ճակատագիրը... Ինձ ասացին, որ ձեր կինն այսօր եկել էր մանկաբարձուհու մոտ՝ քննության: Իմացա, որ երկրորդ զավակին եք սպասում...

- Այո, իսկապես, ես եմ խորհուրդ տվել, որ ժամանակ առ ժամանակ այցելի, ի վերջո մասնագետի կարծիքը կարևոր է:

- Որպես բժիշկ ճիշտ եք վարվել, բայց որպես ամուսին և որպես հայր՝ որքանո՞վ է խելացի այդ վիճակում գտնվող կնոջը տանել մի երկիր, որն, ինչպես դուք եք ասում, վաղ թե ուշ պատերազմի դաշտ է դառնալու, սա անտրամաբանական է, վերջապես, վտանգավոր:

Դոկտոր Ռուն վերջին բառերը գրեթե գոռալով արտասանեց:

- Հենց այդ հանգամանքն է, որ ինձ թույլ չի տալիս ճամպրուկները վերցնել և վաղն իսկ վերադառնալ Պոլիս, - արդարանալով պատասխանեց Ռուբենը: - Կինս դեռ ոչինչ չգիտի այս մասին, հետը դեռ չեմ խոսել:

- Իսկ եթե համաձայնի, վերջապես, ենթարկվի ձեզ, պիտի երկուսով ելնեք ու գնա՞ք: Շիտակորեն ասեմ, դուք խենթացել եք, Ռուբեն, չգիտեմ, թե ինչ է

կատարվում՝ ձեզ հետ: Միշտ հիացել եմ ձեր երկաթյա տրամաբանությամբ, ձեր մտածված գործողություններով, վերջապես, ձեր կշռադատված խոսքերով: Այդ ամենն անհետացել է:

Դոկտոր Ռուն արդեն խոսում էր հանգիստ, խրատական տոնով, մեծ եղբոր պես:

- Մենք դեռ նորից կխոսենք, - շարունակեց նա: - Թող մի քանի օր անցնի, որպեսզի այդ ծանր ուղևորության տպավորությունը ցրվի:

Հրաժեշտ տալուց առաջ, ձեռքը սեղմելով ասաց.

- Զգիտեմ, թե ձեր վերջնական որոշումն ինչպիսին կլինի, սակայն հիմա կարող եմ ասել, թե երախտապարտ եմ ճակատագրին, որ մեզ հանդիպեցրեց... Եվ իմացիր, ես կտխրեմ, եթե գնաս, բայց նաև գոհ կլինեմ, քանզի դու կանես այն, ինչ պահանջել եմ քեզնից այս անցած տարիների ընթացքում:

* * *

«Այդ մարդը կարծես ճակատագիր լինի, - մտովին ասաց Ռուբենը՝ դոկտոր Ռուի տնից դուրս գալուց հետո: - Միանգամից բերում մոտեցնում է այն վճիռներին, որոնք ենթագիտակցությանդ մեջ նոր-նոր սկսել են խմորվել»:

Հիշեց, թե այս տան մեջ, առաջին հանդիպման ժամանակ ինչպես ստիպեց ազդարարել մի վճիռ, որի մասին մտածել էր որպես չափազանց հեռավոր մի հավանականություն: Միևնույն բանը տեղի ունեցավ այսօր: Պոլիս վերադառնալու և այնտեղ հաստատվելու մասին խոսել էին բազմիցս, սակայն վերջին երկու ամսվա դեպքերն ստիպեցին առայժ ոչինչ չձեռնարկել, սպասել, թե այս խելագարությունը մինչև ուր կարող է հասնել: Հետագա կյանքի բոլոր ծրագրերը եթե չէին ջնջվում, ապա առնվազն վերանայվում էին: Եվ թվում էր, թե նույնը պիտի աներ ինքը. այո, վերադարձ, բայց ե՞րբ, ինչպե՞ս...

Հիվանդանոցի ղեկավարությունն ստանձնելն, անշուշտ, ինքնասիրությունը շոյող առաջարկ էր, և նա փաստորեն հրաժարվեց ոչ թե, որ չէր ուզում, այլ տեսավ, որ հասունացել է մյուս՝ իր կյանքի ամենակարևոր հարցին պատասխան տալու ժամանակը: Դոկտորը հասկացավ ամեն ինչ, չնայած կոչ էր անում անսալ տրամաբանությանը, ավելի շուտ, այսպես կոչված առողջ բանականությանը: Նա ամեն ինչ հասկացավ և գնահատեց, այլապես հրաժեշտի պահին այդպիսի բառեր չէր ասի:

Երեկոյան տուն վերադառնալուն պես Յաննին նրան գրկեց նախասրահում և խորհրդավոր ժպտալով ասաց.

- Գիտե՞ս, մանկաբարձը բառացիորեն նույն խորհուրդները տվեց:

- Հիմա համոզվեցի՞ր, որ ամուսինդ լավ բժիշկ է, - կատակեց Ռուբենը:

- Օ՜, այնքան լավ, որ հրաժարվում է դոկտոր Ռուի առաջարկից:

- Լուրն արդեն հասել է քե՞զ... Որտեղի՞ց իմացար:

- Դոկտոր Բուրժեի կինն ասաց, քիչ առաջ այստեղ էր, եկել էր Թոռնիկին տանելու, որ խաղում էր Լևոնի հետ: Ի դեպ, դոկտոր Բուրժեն ընթրիքից հետո ուզում է գալ այստեղ, հետդ խոսելիք ունի:

Յաննին մի պահ լռեց և ուշադիր նայելով հարցրեց.

- Ճի՞շտ է, որ իմ պատճառով ես հրաժարվել... Իբր ուզում ես ինձ հետ խորհրդակցելուց հետո պատասխանել:

- Ճիշտ է: Միայն թե քեզ հետ ուրիշ բանի մասին պիտի խոսեմ: Բայց ավելի ուշ, ոչ հիմա...

Սակայն չկարողացան երկուսով առանձին մնալ, քանի որ դոկտոր Բուրժեն, ինչպես խոստացել էր, դուռը զանգեց:

Սա դոկտոր Ռուի հակապատկերն էր. խոշորամարմին, բարձրահասակ, ասկետիզմից հեռու, համեղ կերակուրների և լավ խմիչքների սիրահար, բայց և հայտնի էր որպես հմուտ վիրաբույժ:

Ներս մտնելուն պես միանգամից հայտարարեց.

- Ես ամեն ինչ գիտեմ, դոկտոր Ռուն պատմել է ձեր զրույցի մասին, սակայն ուզում եմ ինձ բացատրես, թե ինչու ես մերժել:

- Ես չեմ մերժել... Պարզապես հետաձգել եմ պատասխանը:

- Դու մոռացել ես հավանաբար, - ասաց դոկտոր Բուրժեն՝ տեղավորվելով բազկաթոռին, - որ մեր տանը, մի քանի ամիս առաջ, երբ երկուսս էլ մի քիչ գինով էինք, քո երազանքն էիր պատմում՝ գնալ, վերջնականապես հաստատվել քո ծննդավայրում, ծովի ափին բանաստեղծություններ գրել և երբեմն-երբեմն հիվանդներ ընդունել... Ճի՞շտ եմ ասում:

- Այո, ես երազել եմ այդ մասին և հիմա էլ շարունակում եմ երազել:

- Հասկանում եմ քեզ, սիրելի Ռուբեն, մանավանդ որ ես էլ վաղուց նման մի երազանք ունեմ, բայց շուրջդ նայիր, տես, թե ինչ է կատարվում աշխարհում... Եվ հետո, պարզապես հրաշք հնարավորություն ես ստացել...

- Բայց ինչո՞ւ հատկապես ես, - անկեղծորեն զարմացավ Ռուբենը: - Հիվանդանոցում ինձնից ավելի լավ և ավելի փորձված բժիշկներ կան:

- Շատ պարզ, սիրելի կոլեգա, որովհետև հաշվել և տեսել ենք, որ վերջին երկու տարում ամենից շատ հիվանդ դուք եք ընդունել, և ոչ մեկը ձեզնից դժգոհ չի մնացել, նույնիսկ ուրիշ քաղաքներից են գալիս:

- Հա՜... Դրանք հայեր էին, որոշել էին հատկապես հայ բժշկի մոտ գնալ:

- Լոզանում և ժնևում ուրիշ հայ բժիշկներ կան, ինչո՞ւ որոշեցին ձեզ մոտ գալ: Ձէ, սիրելի կոլեգա, հիմա մեզ համար երջանիկ ժամանակներ են սկսվում: Դուք գիտե՞ք, թե ինչ է կատարվում Լոզանում, հյուրանոցներում և գիշերօթիկներում այլևս տեղ չկա... Այն ողբալի կրակոցների հաջորդ օրն իսկ բոլոր խելացի մարդիկ իրենց դրամներն առան և ամբողջ Եվրոպայից եկան այստեղ: Դրանք բոլորը մեր հաճախորդներն են դառնալու:

- Ինչո՞ւ եք այդպես համոզված:

- Որովհետև մի պարզ օրինաչափություն կա. մարդիկ որքան հարստանում, այնքան ավելի են հիվանդանում: Ի դեպ, նրանք հատկապես սիրում են ձեզ մոտ գալ, օրինակ՝ այդ ամերիկուհին, միլիոնատիրոջ կինը... Ո՞րն է գաղտնիքը, կոլեգա, կարո՞ղ եք ինձ բացատրել:

- Առանձնապես բան չկա բացատրելու, որքան նկատել եմ, այդ մարդկանց տանջում են ոչ այնքան որոշակի հիվանդությունները, որքան առաջացող

տարիքի հետ հայտնվող անորոշ ցավերն ու տագնապները: Ես երբեմն նույնիսկ դեղատոմս չեմ գրում, ավելին, խորհուրդ եմ տալիս հնարավորին չափ դեղերից խուսափել:

- Եվ դա օգնո՞ւմ է:

- Հավանաբար օգնում է, եթե շարունակում են հավատալ և կատարել իմ խորհուրդները: Օրինակ՝ ձեր ասած ամերիկուհին գրեթե ամեն օր գալիս զրուցում է ինձ հետ, և իր ասելով գլխացավերն իսպառ անհետացել են:

- Եվ այդպիսի հաջողություններից հետո թողնում եք ձեր հիվանդներին ու հեռանո՞ւմ: Այդպիսի մի ամերիկուհին բավական է, որպեսզի վաղը, Շվեյցարիայում գտնվող բոլոր մեծահարուստ հիվանդները լցվեն ձեր կաբինետ, դուք մեկ տարի հետո կդառնաք Լոզանի ամենահարուստ բժիշկը:

- Բայց դուք գիտեք, սիրելի կոլեգա, որ այդ հիվանդներից շատերին մենք անվճար ենք բուժում:

- Գիտեմ, սիրելի Ռուբեն, ես կատակ եմ անում, դուք նշանավոր անպայման կդառնաք, բայց հարուստ՝ չգիտեմ... Ձեր բնավորությամբ երբեք չեք դառնա: Այնուամենայնիվ, լրջորեն մտածեք, այդպես միանգամից մի մերժեք:

Հետո դարձավ Յաննին.

- Տիկին Զիլինկիրյան, ձեր խոսքից է կախված ամեն ինչ, համոզեք ձեր ամուսնուն, որ անմիտ որոշումներ չընդունի:

Դոկտոր Բուրժեի գնալուց հետո մինչև ուշ գիշեր, մինչև անկողին մտնելը նրանցից ոչ ոք չէր շտապում խոսել հիմնական նյութից: Երբ արդեն պառկել էին և խավարի մեջ, օրվա անցած էին վերանայում, Յաննին հարցրեց.

- Վաղն ի՞նչ պատասխան ես տալու դոկտոր Ռուին:

- Չգիտեմ, հնարավոր է վաղը չպատասխանեմ, այլ մյուս օրը կամ ավելի ուշ:

- Սպասում ես իմ խոսքի՞ն:

- Թերևս:

- Իսկ դու ի՞նչ ես որոշել, ի՞նչ է մտքինդ:

Ռուբենը հոգոց հանեց.

- Դու գիտես, Յաննի, ինչո՞ւ ես հարցնում:

- Եթե ասեմ՝ ոչ, պիտի փոխե՞ս մտադրությունդ:

- Մտադրությունս կփոխեմ, բայց ցանկությունս կմնա:

- Բայց դա նաև իմ ցանկությունն է, մենք միասին ենք որոշել:

- Այո, բայց այն ժամանակ կացությունն ուրիշ էր:

- Ես հասկանում եմ, թե ինչ ես ուզում ասել... Կացությունը վաղն էլ կարող է փոխվել:

- Այո, դեպի վատը, - նկատեց Ռուբենը:

- Եվ ցանկությունդ դարձյալ նո՞ւյնը պիտի մնա:

- Կարծում եմ՝ այո:

- Ուրեմն, ինչո՞ւ ես սպասում վաղվան, Ռուբեն, մի՞թե դու չէիր, որ ասում էիր, թե չես ուզում դառնալ իրադարձությունների գերին, թե ուզում ես մարդկանց հաստատած օրենքներից վեր ապրել և միշտ լինել ազատ:

- Այո, բայց դու տեսար, թե ինչ է կատարվում... Այս դեպքերն ուրիշ են:

- Ուրիշ չեն, Ռուբեն, միևնույն մարդիկ սարքեցին այս դժոխքը... Նրանք երեկ բարի էին, սիրալիր, ժպտում էին իրար, բայց մեկ օրվա մեջ փոխվեցին, դարձան գազան, վաղն ավելի վատ կլինի, այո, բայց մի՞թե դա նշանակում է, թե մենք էլ պիտի փոխվենք:

- Ես այդպիսի բան չասացի, սիրելիս:

- Եթե հրաժարվում ես քո ցանկություններից, նշանակում է փոխվում ես, իսկ վաղը չես նկատի, թե ինչպես կսկսես նրանց նման մտածել:

- Մի՞թե կարող է այդպիսի բան պատահել:

- Ես էլ չեմ հավատում նման հավանականության, սակայն եթե այդպես հեշտությամբ հրաժարվենք մեր ծրագրերից, հնարավոր է, որ մենք էլ ենթարկվենք այս աշխարհի օրենքներին:

- Իսկապես, Յաննի, ի՞նչ կպատահի, եթե որոշենք վերջնականապես հաստատվել այստեղ, ոչ Գերմանիա գնանք՝ քո հայրենիքը, ոչ էլ Պոլիս՝ իմ հայրենիքը:

- Առանձնապես ոչինչ չի պատահի, նույնիսկ ավելի լավ կլինի, քան Էրֆուրտում կամ Պոլսում... Դոկտոր Ռուին կփոխարինես կամ մասնավոր կլինիկա կբացես, և բոլոր մեծահարուստ պառավները կգան մոտդ միլիթարվելու, էլ չեմ ասում իգական սեռի ավելի երիտասարդ և հմայիչ պացիենտների մասին, որոնք իրենց երևակայական հիվանդություններով արդեն պաշարել են քեզ...

- Յաննի, դու չափազանցում ես, ինձ համար երիտասարդ կամ ծեր, գեղեցիկ կամ տգեղ հիվանդներ չկան:

- Շա՜տ իզուր, սիրելիս, շատ իզուր...

- Ինձ համար բոլորը մարդկային արարածներ են՝ ենթակա բնության միևնույն օրենքներին:

- Անշուշտ այդպես է, բայց ընդունիր, որ այդ արարածների մեծագույն մասը իգական սեռի ներկայացուցիչներ են:

- Յաննի, ես չեմ հավատում ականջներիս... Մի՞թե խանդում ես, մի՞թե մտքովդ անցնում է, թե ես կարող եմ երբևիցե...

- Իմ մտքով ոչինչ չի անցնում, ավելին՝ ես գիտեմ, որ դու նույնիսկ չես նկատում նրանց կանացի հրապույրները:

- Փա՜ռք Աստծու... բայց որտեղի՞ց գիտես, ո՞վ է քեզ պատմել:

- Իրենք՝ կանայք, իհարկե, ոչ ինձ: Մի գեղեցիկ անգլուհի կա, որին մի քանի անգամ հանդիպել եմ դերձակուհուս մոտ, նույնիսկ ծանոթացել: Երեկ նորից հանդիպեցի: Առանձնակի մի ջերմությամբ ինձ համբուրեց, ձեռքս ուժգին սեղմեց և հրաժեշտի պահին խորհրդավոր ժպտաց: Զարմացած նայեցի դերձակուհուս՝ հուսալով նրանից բացատրություն ստանալ...

- Եվ ստացա՞ր այդ բացատրությունը:

- Պատկերացրու՝ այո: Նա պատմեց հետևյալը. իբր անգլուհին դերձակուհուս ասել է. «Տիկին Զիլինկիրյանին տեսնելով վերջապես հասկացա, թե նրա ամուսինն ինչու է անտարբեր մեր հանդեպ»:

- Ինչո՞ւ «մեր»:

- Որովհետև նրանք երկու ընկերուհիներ են և երկուսն էլ մի քանի անգամ եղել են քեզ մոտ:

- Հա, հիշեցի, - ծիծաղելով պատասխանեց Ռուբենը: - Բայց կարծում եմ, որ այլևս չեն գա:

- Ինչո՞ւ ես այդպես կարծում:

- Նախևառաջ առողջական որևէ լուրջ խնդիր չունեին, երկրորդ՝ ինքն է արդեն ընդունել, որ... Բայց սիրելիս, մենք ուրիշ բաներից էինք խոսում:

- Այո, իսկապես, մենք խոսում էինք այն մասին, թե ինչ կլինի մեզ հետ, եթե որոշենք մնալ այստեղ: Ուրեմն, այսպես, այդ կանայք կշարունակեն քեզ գրոհել:

- Ես էլ կշարունակեմ իսկական հիվանդներին բուժել, իսկ երևակայական հիվանդներին բացատրել, որ բժշկի կաբինետը ճանճրույթ ցրելու տեղ չէ:

- Հետո կսկսես ծերանալ, մազերդ կսպիտակեն, գուցեև թափվեն, փորդ կճարպակալի, հոգիդ՝ նույնպես, կդադարես բանաստեղծություններ գրել, նույնիսկ՝ կարդալ, շատ հնարավոր է՝ ձեռագրերդ այրես և արդարանաս որդիներիդ ու թոռներիդ առջև, որ երիտասարդ էիր, չէիր հասկանում, թե ինչ ես անում...

- Ի՜նչ անգութ ես, Յաննի... Ես ընդունում եմ, որ հասակ առնելու հետ տղամարդը կարող է մազերը կորցնել, աչքերի լույսը, հնարավոր է նաև, որ ճարպակալի, բայց ինչո՞ւ պիտի դադարի բանաստեղծություններ գրել:

- Որովհետև չեմ կարող ծերացած, ճաղատ և մանավանդ հաստափոր բանաստեղծ պատկերացնել:

- Յաննի, խոստանում եմ՝ ինչ էլ պատահի, ես կշարունակեմ գրել:

- Գրելը պարտադիր չէ, բայց բանաստեղծ մնա, և ամբողջ կյանքումդ... Եթե մի վայրկյան անգամ մոռանաս, որ բանաստեղծ ես, կդադարեմ քեզ սիրել, ինձ համար այլևս գոյություն չես ունենա:

- Իսկ եթե ինձ կորցնես, դու կշարունակե՞ս գոյություն ունենալ:

- Իհարկե, ոչ... Ես քեզ երազանքիս մեջ ստեղծեցի, հետո տեսա, որ իրականը համապատասխանում է երազածիս... Իսկ դու գիտես, թե ինչ է լինում մարդու հետ, երբ կորցնում է իր երազանքը...

- Կյանքը նրա համար դառնում է պատիժ, - տխուր ձայնով պատասխանեց Ռուբենը:

- Հիմա ժամանակն է կորցրել իր երազանքը, ժողովուրդներն են կորցրել, մարդիկ... Ահա ինչու նրանք բոլորը կյանքին ձգտելու փոխարեն, խելագար վազքով գնում են դեպի մահ...

- Մենք խոսում ենք այնպես, կարծես տասնյոթ տարեկան լինենք, - ծիծաղելով նկատեց Ռուբենը:

- Տա Աստված, որ այդպես էլ մնանք և չծերանանք երբեք:

- Այս խավարն օգնում է, որպեսզի չկեղծենք ու հարազատ մնանք ինքներս մեզ:

- Այո, Ռուբեն, լույսը կստիպեր մեզ ուրիշ կերպ խոսել, քանզի կթվար, թե նայում են մեզ և կզգուշանայինք ծիծաղելի երևալ:

- Լույսը միևնույն է կբացվի, և ես չգիտեմ, թե վաղն ինչ պատասխան պիտի տամ:

- Բայց դու արդեն ունես այդ պատասխանը, միասին որոշեցինք:

- Ես չէի ուզի քեզ ստիպել, որ հանուն ինձ անձնազոհության դնաս:

Յաննին տեղից ելավ և վրդովված ասաց.

- Ինչպե՞ս ես համարձակվում այդպիսի բաներ խոսել, որտեղ դու՝ այնտեղ էլ ես պիտի լինեմ, և ես գիտեմ՝ ամբողջ կյանքումդ քեզ չես ների, որ վճռական պահին փոքրոգի եղար և չգնացիր հայրենիք...

- Ես մտահոգված եմ քեզ համար, Լևոնի համար, վերջապես մեր սպասվող զավակի համար:

- Ինչո՞ւ ես միամիտ բաներ խոսում, մի՞թե չես հասկանում, որ քեզ ընտրելով, ընտրել եմ նաև քո ճակատագիրը, քո երկիրը, քո ժողովրդին... Ես ամեն ինչ տեսնում եմ, Ռուբեն, դու արդեն նեղվում ես այստեղ, միտքդ շարունակ ուրիշ տեղ է... Այսպես որ շարունակվի, դու կխելագարվես...

- Իսկ դու ասում էիր, թե կճարպակալեմ և կդառնամ հաստափոր ու ճաղատ բանաստեղծ, - կատակով նրան ընդհատեց Ռուբենը:

- Ոչ, դու չես ճարպակալի, քանի որ երբեք չես կարողանա անտարբեր նայել աշխարհին:

- Իսկ դու կարո՞ղ ես...

Յաննին մնաց լուռ, քանի որ հարցի մեջ արդեն պատասխան կար, սակայն հասկացավ, որ գիշերային այս երկարաձգված զրույցի, վերջակետն այնուամենայնիվ, ինքը պիտի դնի.

- Ես տեսնում էի, որ մինչև այսօր իմ պատճառով էիր վարանում որոշում ընդունել: Դու արդեն գիտես իմ կարծիքը:

* * *

Ճանապարհը թվում էր անվերջ: Մի պահ նույնիսկ մոռանում էին, թե որտեղից են եկել և դեպի ուր են գնում: Կարծես ամբողջ կյանքն ապրել էին այդ փակ ու անլույս վագոններում և չգիտեին, որ աշխարհում արև կա, ուրախություն և կյանք: Եվրոպան ասես դարձել էր անվերջ մի թունել: Ամեն ինչ նման էր գերմանական ուղևորության ավարտին, միայն թե ավստրիական երկաթուղին մի փոքր ավելի մեծահոգի էր. կայարաններում գնացքը կանգ էր առնում անորոշ ժամանակով, և ուղևորներին թույլ էին տալիս դուրս գալ գարշահոտ ու խավար վագոններից, մաքուր օդ շնչել, արևի լույսը վայելել և նույնիսկ տաք կերակուր ճաշակել: Թերթերը գրում էին ավստրիական և գերմանական զորքերի սխրանքների մասին, սակայն վիրավորներով լցված գնացքները, որ ժամանակ առ ժամանակ հայտնվում էին կայարաններում կամ անցնում նրանց կողքով, ուրիշ բան էին ասում: Իսկ քանի՞սն էին մնացել ռազմի դաշտում անվերադարձ, կարելի էր գուշակել ամենուր հանդիպող մռայլ դեմքերից և սևազգեստ կանանց անմխիթար կերպարանքներից, որոնց թիվը՝ կայարանից-կայարան, գնալով շատանում էր: Կյանքը պակասել էր ամենուր: Ճիշտ է, ռումբերը դեռ չէին պայթել ավստրիական այդ փոքրիկ ու գեղեցիկ քաղաքներում, սակայն ճնշող լռությունը և մարդկանց, հատկապես կանանց դեմքերին տպված բացակա հայացքներն

ավելի սոսկալի ավերածություններ էին վկայում, ասես ամեն ինչ տեղի էր ունենում անդենականում, ուր դեմքերը քարացած են, իսկ շարժումները դանդաղ, քանզի այլևս կարիք չկա շտապելու, արդեն հասել են վերջնական հանգրվանին: Ասես շարունակ ընթանային հավերժական սգո մի հանդեսի միջով, որ ձգվել ու տարածվել էր երկրից-երկիր և դեռ պիտի գնար ու շարունակվեր: Միայն զինվորականներն էին աչխույժ ու եռանդուն: Կայարաններն ամբողջովին նրանց հսկողության տակ էին: Վերջապես գերիներ երևացին: Գնացքը կանգնեցրին բաց դաշտում, որտեղ մոտ քառասուն ռուս զինվորներ կարտոֆիլ էին հավաքում: Այս կանգառը հավանաբար հատուկ նպատակ էր հետապնդում. ուղևորներին ուզում էին համոզել, որ պատերազմն իսկապես հաղթական է ավստրիացիների և գերմանացիների համար: Սակայն զինվորների պատառոտված համազգեստները, կմախացած մարմինները և հողագույն դեմքերն ուրիշ բան էին ասում: Դրանք հաղթական բանակի գերիներ չէին, ասես նրանց մի կերպ ճարել էին, որպեսզի ստորացումներով ու ծանակելով բարոյական այն բավարարությունն ստանան, որը չէին կարողացել ձեռք բերել ռազմի դաշտում: Գերիներից մեկ-երկուսը ուղևորներից ծխախոտ մուրացին, այնուհետև, իրենց ուզածն ստանալով, մոտեցան հրացանավոր պահակին և «ավարը» կիսեցին նրա հետ: Վերջինս առանց քաշվելու ընդունեց իր բաժինը:

Եվ հանկարծ պատերազմի նշաններն անհետացան, վագոնի պատուհանները բացվեցին, ծանր օդն անմիջապես թարմացավ և ամառային լույսը հորդեց ներս: Նրանք սպասում էին այս փոփոխություններին, քանզի գնացքի չվերթում կարևոր խմբագրում էր կատարվել. Սերբիայի տարածքով անցելու փոխարեն, պիտի ընթանային Ռումինիայով: Միանգամից հավատ ծնվեց լուսավոր ապագայի հանդեպ, քանզի տեսան աշխարհի այն պատկերը, որն արդեն սկսել էր ջնջվել նրանց հիշողության մեջ: Ուղևորները հավաքվում էին միջանցքներում, կարոտով պատմում նախապատերազմյան իրենց փոքրիկ ուրախությունների մասին և հույս հայտնում, որ շուտով ամեն ինչ իր տեղը կընկնի և կյանքը նորից գրավիչ կդառնա: Այդպիսի պահերին հանկարծ անբացատրելի մի տխրություն էր համակում Ռուբենին, մեղքի զգացումն էր տանջում, որ քանդեց Լոզանում այդքան դժվարությամբ հաստատված բույնը և բռնեց անհայտի ճամփան: Խուսափում էր այդ մասին կիսվել Յաննիի հետ, քանզի գիտեր նրա պատասխանը, նրա աներեր համոզվածությունը՝ որ իրենք ամենաճիշտ որոշումն են ընդունել: Եվ գիտեր, որ չի կեղծում, որ այդ քայլին դիմում է կշռադատված, սթափ ուղեղով: Մինչդեռ ի՞նչ կաներ ինքը, եթե Յաննին հրաժարվեր նրա հետ գալ Պոլիս: Կմնար հետը Շվեյցարիայո՞ւմ, թե՞ մենակ կգնար: Սակայն տեղնուտեղը փաստեց, որ նման բան չէր կարող լինել, քանզի միշտ նկատել էր, որ նրա վճիռներն առաջնորդվում են մի վերին բանականությամբ, որն անհասանելի է մարդկանց: Ոչ, իրենց աստվածներ չէին համարում, ընդհակառակը հողեղեն էությունը հարազատ էր նրանց, բայց պարզվեց, որ մարդ մնալն էլ արդեն աստվածային մի բան է: Գուցե դա էր պատճառը, որ շարունակ դիմագրավման վիճակում էին: Նրանց սերը շարունակ դեմ գնաց մարդկանց սահմանած ու սրբագործած տխմարություններին, ամեն անգամ միասին լինելու համար պիտի մի

հերթական արգելք հաղթահարեին: Արդյոք ուրիշ տեսակի մարդ լինելու մշտական այդ ղգացումը չէ՞ր պատճառը(իրենք այդպես չէին կարծում, ուրիշներն էին շարունակ նրանց ստիպում այդպես կարծել), որ ամուսնական կյանքի առաջին ամիսներից նրանց մեջ հասունացրեց փախուստի գաղափարը, երկրի վրա վերերկրային կյանքով ապրելու երազանքը:

Եվրոպայում անցկացրած տարիները նրան շարունակ ապացույցներ էին բերում, որ մարդկությունը տենդագինորեն պատրաստվում է հրեշավոր մի ոճրագործության: Ժորժ Սորելի դժնի մարգարեություններն էր հիշում շարունակ, որը յոթ-ութ տարի առաջ ապշեցնող ճշգրտությամբ գուշակել էր այս պատերազմը, ուրիշ նման վկայություններ ու կանխատեսումներ էր հիշում, որոնք մարդկանց օգնելու փոխարեն կարծես ավելի էին մոտեցնում աղետին: Իսկ մի՞թե ինքն էլ չմարգարեացավ (թող անհամեստ չհնչի), երբ երեք տարի առաջ «Պատերազմ» բանաստեղծությունը գրեց. «Կ՚երթան... Ո՞ւր կ՚երթան // Բյո՛ւր, բյո՛ւր այս տժգույն դեմքերն անկենդան... // Մահահրավեր կոչն իրենց խըթան, // Կարգո՛վ, գլխահա՛կ, լսե՛ք, ո՞ւր կ՚երթան... // Հրաժեշտ տված հայրենի սուրբ տա՛ն, // Մանգաղին համար հասունցած տատա՛ն // Հասկերու նման մեռնելու կ՚երթան...»: Այդ թվականին աշխարհում ոչ մի տեղ պատերազմ չկար և դրա հավանականությունը չէր երևում, բայց ինչո՞ւ այդ անդորր ու իսկապես երանավետ օրերում այդ բանաստեղծությունը գրեց. «Առջևեն կ՚երթա Դրոշակն ապավեն // Մահը կապարյա կ՚երթա ետևեն...»:

Ուրեմն, վաղուց գիտեր, որ պատերազմն սկսված է, մնում էր պատրվակ փնտրել, սպասել, որ հարմար ժամը գա և հայտարարարվի: Ուրեմն, այս պատերազմից փրկություն չկար՝ ոչ տեղի, ոչ էլ ժամանակի առումով... Եթե իմանար, որ գնալով հեռավոր Արգենտինա, կազատվի այդ մղձավանջից, եթե համոզված լիներ, որ իրոք այդպես է, թերևս գնար, սակայն ի՞նչ գնով պիտի ազատվեր... Անտեսելո՞վ, խուլ և կույր ձևանալո՞վ, այդ դեպքում ի՞նչ կարիք կար աշխարհի ծայրը հասնել, այդպիսի մարդն ամեն տեղ կկարողանա անխռով ապրել:

Ավելի քան չորս օր տևած տանջալից ճամփորդությունից հետո վերջապես հասան Կոնստանցա, որտեղից շոգենավը նրանց պիտի տաներ Պոլիս: Սահմանապահ զորքերի սպան գերմանական և թուրքական անձնագրերը մանրակրկիտ ուսումնասիրելուց հետո անբարյացակամ արտահայտությունը դեմքին հարցրեց.

- Դոկտոր, չեք կարծո՞ւմ, որ ավելի խոհեմ կլիներ Շվեյցարիայում մնալ:

Ռուբենը գիտեր, որ ռումինացիների քաղաքական համակրանքը Ֆրանսիացիների կողմն է, բայցևայնպես հարմար գտավ չիտակորեն պատասխանել.

- Ես տուն եմ վերադառնում, պարոն, այնուամենայնիվ դա իմ հայրենիքն է:

- Այո, այնուամենայնիվ..., - հեգնական ժպիտը դեմքին համաձայնեց սպան և վերադարձրեց անձնագրերը: Անշուշտ, հասկացավ, որ առջևը հայ է:

Փոքրիկ շոգենավը զարմանալի մի բազմություն էր տանում Պոլիս: Եվրոպական բոլոր լեզուները կարելի էր լսել այնտեղ: Մեղմ արևը և հանդարտ ծովը բոլորին հավաքել էին տախտակամածի վրա և դյուրացրել հարաբերությունները: Անմիջապես ծանոթություններ հաստատվեցին, աշխույժ զրույցներ սկս-

վեցին: Թվում էր, թե սա ուղևորություն է դեպի Արկադիա, որտեղ մարդիկ անհոգ ու երջանիկ պիտի վայելեին իրենց կյանքի մնացած տարիները: Գերմանացի մի ինժեներ էր կանգնած Յաննիի և Ռուբենի կողքին, որն իմանալով նրանց ինքնությունը միանգամից անցավ մտերմական զրույցի:

- Շատ ճիշտ եք անում, դոկտոր, որ վերադառնում եք հայրենիք, ճիշտ ժամանակն է...

- Իսկապե՞ս, - զարմացած հարցրեց Յաննին գերմաներեն: - Մինչդեռ բոլորն ասում են, թե մեր արածն անխոհեմություն է, որ պետք էր մնալ Շվեյցարիայում և հանգիստ սպասել պատերազմի ավարտին:

- Սխալվում են, տիկին, մեզ՝ գերմանացիներիս մեծ ապագա է սպասվում այնտեղ... Բանակը, երկաթուղին, և գործարաններն արդեն մեր ձեռքին են, պատերազմը շուտով կվերջանա, և ամբողջ երկիրը մերը կդառնա, քանզի թուրքերն առանց մեզ ոչինչ չեն կարող անել:

Լուսաբացի հետ շոգենավը հասավ Ղալաթիո նավահանգիստ: Ուղևորներն, անքնությունից տրորված երեսներով, ծույլ շարժումներով մոտենում էին մաքսատան պաշտոնյաներին, որոնք անժպիտ, անտարբեր հայացքով անձնագրերն էին նայում, երբեմն ճամպրուկները քրքրում և ձեռքի շարժումով հասկացնում, որ անցնեն առաջ: Նրանցից մեկը, ծղոտե գլխարկով, բարեկիրթ և համակրելի արտաքինով, նուրբ բեղերով սեղանից-սեղան էր անցնում, հայացք նետում բացված ճամպրուկներին և անհրաժեշտ կարգադրություններ տալիս: Թաղբեհը եթե չլիներ, կարելի էր կարծել, թե ռումինական նավով ժամանած եվրոպացիներից մեկն է:

Հանկարծ նրա ուշադիր հայացքը բազմության միջից որսաց Յաննիին, հետո Ռուբենին, հետո ճամպրուկների վրա նստած Լևոնին: Մի քանի վայրկյան զննելով նայեց, հետո սիրալիր ժպիտը դեմքին մոտեցավ նրանց:

- Տիկին, երեխան մեղք է, քունը տանում է, - ասաց անթերի ֆրանսերենով: - Տվեք ձեր անձնագրերը, - հետո դարձավ ծառայողին. - Գնա համալներ կանչիր:

Այնուհետև առաջնորդեց դեպի սեղաններից մեկը և, կնիքը դնելուց առաջ, անձնագրերն ուշադիր թերթեց.

- Մեծ պատիվ է, դոկտոր, որ այս պատմական օրերին ձեզ նման մարդիկ վերադառնում են հայրենիք:

Յաննիի գերմանական անձնագիրը կնքելուց առաջ մի վերջին անգամ ակնածանքով թերթեց և խոնարհվելով ասաց.

- Թուրքիան ձեզ նվեր, տիկին:

ՎԵՐՋ

2 հունվարի-30 դեկտեմբերի,
2002 թ. Փարիզ,

Երրորդ Մաս

«ԵՐԹԱ՛Լ...»

* * *

Գնացքը վերջապես շարժվեց:

Տապից թմրած հսկայական ճանճերն աշխուժացան և սկսեցին սաստիկ բզզոցով պտույտներ գործել գարշահոտ վագոնում: Դրանցից մեկը, անտրացիտի փայլուն թևերով ու բրդոտ փորով, եկավ նստեց մերկացված սվինի ծայրին և սկսեց առջևի թաթերը շփել, ասես ուզում էր զենքի սրությունն ստուգել: Սակայն հերթական ցնցումից թռավ, կատաղի արագությամբ մի երկու պտույտ արեց առաստաղի տակ և իջավ մրափող զինվորի ճակատին:

Գնացքը շարժվում էր դանդաղ, հաճախակի ցնցումներով, կարճատև ու անհասկանալի կանգառներով, ասես փոշմանել էր, որ երկար սպասումից հետո տեղից շարժվեց, ասես հակառակ իր կամքի էր գնում: Զինվորը, հրացանը երկու ձեռքով գրկած, արտաշնչելու հետ կամաց սուլում էր: Ճակատին նստած ճանճն անկարող էր նրան քնից հանել: Անքուն գիշերն իրենն էր առնում:

Մյուս զինվորը, որ կրտսերն էր, ջանում էր ամեն կերպ պայքարել քնի դեմ, իրար ետևից ծխախոտ էր փաթաթում՝ ավելի ծանրացնելով առանց այն էլ անշնչելի օդը:

Ինքն էլ չէր քնել, երկու օր իրար վրա: Անցած գիշեր մասնակցեց ծանր վիրահատության, հետո մինչև լուսաբաց նստել էր հիվանդի կողքին, որպեսզի առավոտ կանուխ, թեթև նախաճաշ անելուց հետո մասնակցի վիրահատությունների անվերջանալի հարահոսին: Երեկոյան ժամը յոթն էր, երբ կանչեցին տնօրինուհու տնյակ՝ հեռախոսի մոտ: Յաննին էր զանգողը, սրտնեղած, մի քիչ էլ պախարակող շեշտերով հայտնեց, որ Շամիրամն արդեն երկրորդ օրն է անհանգիստ է, թեթև տաքություն ունի, ոչինչ չի ուզում ուտել, շարունակ լալիս է... «Մի քիչ

էլ զբաղվիր քո երեխայով, նա էլ հիվանդ է, նա էլ բժշկի կարիք ունի...»: «Այո, իհարկե», - մեքենայաբար պատասխանեց նրան: «Երկու օր է սպասում ենք, որ գաս տեսնենք, թե ինչ է պատահել աղջկաղ... Այսօր տուն կգա՞ս...»: «Զդիտեմ, սիրելիս...»: «Հապա ի՞նչ անենք, թողնենք, որ երեխան այսպես տանջվի՞...», - լացակումած հարցրեց մայրը: «Դոկտոր կանչիր...», - հազիվ պատասխանեց նա, մի կերպ զսպելով կեսօրից հետո սկսված գլխացավը: «Մոռացա՞ր, ի՛նչ է, որ մեր թաղում այլևս դոկտոր չի մնացել», - գոռաց Յաննին:

Իսկապես որ մոռացել էր: Հետո տեղնուտեղը հիշեց, որ երկու օր առաջ դոկտոր Մինասյանին է տեսել՝ ծերունազարդ բժիշկը, որին հավանաբար տարիքի պատճառով բանակ չէին կանչել:

«Սիրելիս, մի քիչ էլ համբերիր, հենց հիմա համհարզիս կուղարկեմ, որպեսզի դոկտոր Մինասյանին առաջնորդի մեր տուն, նա հոյակապ բժիշկ է և մանավանդ մանկաբույժ...»:

Հեռախոսը դրեց և մեքենայաբար ձեռքը տարավ գրպանը: Ասպիրինի թղթե տոպրակն ընկավ մատների տակ, որ երկու ժամ առաջ վերցրեց բուժքրոջից և այդպես էլ ժամանակ չունեցավ խմելու:

«Դու ե՞րբ ես խելքի գալու, Ռուբեն», - թիկունքից հնչեց Ռենատայի ձայնը, որ նրբանկատորեն դուրս էր եկել սենյակից: Նա ցնցվեց և դարձյալ մեքենայորեն հարցրեց. «Ի՞նչ է պատահել»: «Պատահել է այն, որ դու..., - վրդովված պատասխանեց Ռենատան, հետո, կարծես ուշքի գալով, ավելի մեղմորեն շարունակեց. - Կներես, Ռուբեն, չկարծես, թե ականջ էի դնում... Մինչև քո մոտենալը Յաննին ինձ պատմեց ամեն ինչ... Զարմանալի չես համարո՞ւմ, որ տանը բժիշկ կա, բայց դու կնոջդ խորհուրդ ես տալիս ուրիշ բժիշկ կանչել...»: «Ինչո՞ւ ես այդպիսի հարց տալիս, մի՞թե չես տեսնում իմ վիճակը... Ես զինվոր եմ, պատերազմ է»: «Ռուբեն, մենք խոսել ենք այդ պատերազմի մասին: Ուզում ես նորի՞ց խոսենք...»: «Ոչ, կարիք չկա»: «Պատկերացրու, որ կարիք կա, չնայած գիտեմ, թե ինչ ես պատասխանելու, բայց դարձյալ չպիտի համոզես... Այս պատերազմը որքան ռուսների ու ֆրանսիացիների՝ նույնքան էլ ձեր դեմ է»: «Ես կասեի, որ ավելի շատ մեր դեմ է, քան նրանց»: «Եվ այդքանից հետո շարունակում ես անձնվիրությամբ ծառայե՞լ...», - Ռենատան ձեռքի արհամարհական շարժումով հիվանդասենյակները ցույց տվեց. «Նրանք մինչև այստեղ հասնելը մտածել են միայն մահվան մասին, ձե՛ր մահվան մասին... Իսկ դու մտածում ես միայն կյանքի մասին...»: «Հրաշալի է, որքա՜ն ճիշտ բնորոշեցիր զինվորին և բժշկին»: «Ռուբեն, ես միայն քեզ չեմ կարողանում բնորոշել... Իսկապես, չեմ հասկանում քեզ... Գիտե՛մ, գիտե՛մ, համազգեստ ես կրում, դու երդում ես տվել թե՛ որպես բժիշկ, թե՛ որպես զինվոր, այնուհանդերձ... գոնե այդքան հոգատար մի եղիր, այդքան անձնվիրաբար մի ծառայիր... Գիտեմ, թե ինչ պիտի ասես: Գոնե երեկոները ժամանակին տուն գնա և այդքան հաճախ այստեղ մի անցկացրու գիշերները, վիրավորների կողքին: Գոնե երբեմն հիշիր, որ քո տանն էլ կարող է հիվանդ լինեն և որ նրանցով էլ պետք է զբաղվել... Լռի՛ր, բերանդ չբացես և ուշադիր լսիր ինձ. որպես այս հիվանդանոցի պատասխանատու պահանջում եմ, որ հենց հիմա գնաս տուն և զբաղվես քո հիվանդ երեխայով»:

Տուն հասավ դոկտոր Մինասյանի հեռանալուց մի քանի րոպե հետո: Զնայած սոսկալի հոգնածությանը և համեցող գլխացավին, ժպտալով դիմեց կնոջը. «Ամեն ինչ լա՞վ է»: Յաննին տանջված ժպիտը դեմքին լուռ գլխով արեց: «Կուզե՞ս ասեմ, թե ինչ ունի մեր Շամիրամը. կաթնատամներն են դուրս գալիս, կարծում եմ դա է պատճառը... Մի երկու օրից իրեն-իրեն կանցնի, ըստ երևույթին, նույնիսկ դեղ տալու կարիք չկա»: Յաննին գլուխը կրծքին հպելով հարցրեց. «Որ այդքան խելոք ես, ինչո՞ւ հեռախոսով չասացիր»:

...Արդեն ուշ երեկո էր, ժամացույցի սլաքը կեսգիշերին էր մոտենում: Առատ ընթրիքից հետո, բազմոցին նստած, կիսաձայն զրուցում էին: Պատճառը քնած երեխաները չէին: Բնակարանը բավական մեծ էր և նույնիսկ հյուրերի աղմուկը նրանց չէր խանգարում: Այդ սովորույթը վերջերս ձեռքբերեցին, ինքնաբերաբար: Եվ, անշուշտ, վախը չէր, որ ստիպում էր այդպես՝ գրեթե շշուկով զրուցել, այլ սոսկումը, իրար ետևից վրա հասնող արհավիրքները: Դա համրանալու նախադուռն էր, քանզի այն, ինչ կատարվում էր աշխարհում և այն, ինչ սկսել էր կատարվել այս երկրում, միայն պասլանձում կարող էր առաջ բերել որպես անդրադարձ:

Մոր ուշադիր ականջը երեխայի լացը որսաց և նետվեց ննջարան: Քիչ հետո հայտնվեց՝ Շամիրամը գրկին: «Զգաց, որ եկել ես, որ գրկես, լացը կկտրի», - ասաց Յաննին՝ երեխային մեկնելով: Վերջինս հոր գրկում հայտնվելուն պես իսկույն լռեց և թաթիկներով սկսեց մորուքից քաշել: «Հասկանում ես, չէ՞, ուզում է, որ մորուքդ սափրես... Անցյալ օրը ծակծկել էիր երեսը... Ամբողջովին կարմրել էր...»: «Ոչ, սիրելիս, ես քեզ բացատրեցի գիտականորեն, որ մորուքը չէր պատճառը, այլ նյութափոխանակությունը...»: «Զգիտեմ, մինչև չածիլվես, այլևս չեմ թողնելու, որ երեխային համբուրես»: «Վաղն իսկ կածիլվեմ, խոստանում եմ, բայց հիմա թող գոնե վերջին անգամ համբուրեմ»:

Ինչո՞ւ այդպես ասաց. «Վերջին անգամ»:

Դա նույնիսկ համբույր չէր: Պարզապես շուրթերը հպեց երեխայի ճակատին, այնուհետև պարանոցին՝ ստուգելու համար, թե իսկապես տաքություն ունի՞: Հենց այդ պահին դռան զանգը հնչեց: Լուռ գիշերվա մեջ դիլ ու չարագուշակ: Նրանք ցնցվեցին և նայեցին իրար: Զանգը կրկնվեց: Կեսգիշերն անց էր արդեն: Առաջին անգամ չէր, որ այդ ժամին, երբեմն նույնիսկ ավելի ուշ անակնկալ գալիս էին հիվանդի մոտ տանելու: Մանավանդ վերջերս, երբ աշխատանքի անցավ ավստրիական հիվանդանոցում, որ վերածվել էր հոսպիտալի: Ճիշտ է, նման դեպքերում նախապես զանգում էին տուն:

Յաննին շտապեց նախամուտք և քիչ հետո անհանգիստ վերադարձավ. «Ռուբեն, այնտեղ երկու զինվոր քեզ են հարցնում»: «Ներս կանչիր»:

Իսկապես երկու ժանդարմ մտան հյուրասրահ՝ հրացանները ձեռքներին: «Ինչո՞ւ են զինված եկել», - հարցրեց Յաննին: «Պատերազմական ժամանակներ են, սիրելիս», - պաղարյունությունը պահպանելով պատասխանեց ինքը: «Հապա սվիններն ինչո՞ւ են մերկացրել»: Պատասխան տալու փոխարեն դիմեց ժանդարմներից ավագին, որ տասնապետի տարբերանշաններ ուներ. «Ինչո՞վ կարող եմ օգտակար լինել»:

Հարցը հավանաբար շփոթեցրեց տասնապետին: Նա ընդգծված քաղաքավարությամբ ասաց. «Դոկտորս, խնդրել են, որ ձեզ տանենք հիվանդի մոտ»: «Ի՞նչ հիվանդ է, կի՞ն է, թե...»: «Չգիտենք, դոկտորս»: «Իսկ ո՞ւր պիտի գնանք»: «Հեռու չէ, այստեղ, Բերայի մեջ»:

Լուռ գլխով արեց և գնաց հագնվելու: Երբ վերադարձավ՝ բժշկի պայուսակը ձեռքին, ժանդարմները նրա սպայական համազգեստը տեսնելով, ձգվեցին:

Տան մուտքի առջև մի կառք էր կանգնած: Կառապանի կողքին երրորդ ժանդարմին տեսավ: Բերան անցել էին և արդեն նավամատույցին էին հասնում, երբ կառապանի կողքը նստած ժանդարմը շրջվեց ու ասաց. «Ներող կլինեք, դոկտորս, հիվանդը Բերայում չէ, պետք է Սկյուդար անցնենք»:

Դիմացի ափին նրանց մեկ ուրիշ կառք էր սպասում՝ կառապանի կողքին նստած մեկ ուրիշ ժանդարմով: Այս մեկը նույնիսկ հարկ չհամարեց բացատրել, թե ուր են գնում: Ինչո՞ւ միանգամից չասացին: Զգուշանո՞ւմ էին: Ինչի՞ց: Ինչո՞ւ այսպես ծածուկ, այսպես սմսեղուկ...

Քաղաքի ասիական թաղերի կեղտոտ ու անխնամ փողոցների մեջ խորանալով մոտեցան Հայդար փաշա կայարանին: Ծանոթ միջավայրը մի պահ ցրեց տխուր մտորումները: Երեք օր առաջ այստեղ էր: Եկել էր վիրավորների հերթական խմբաքանակն ընդունելու: Հենց դրանցից մեկն էր, որ անցած գիշեր վիրահատեց: Հիմա պիտի որ լավացած լինի վիճակը, եթե, իհարկե, հիվանդապահներն իր հանձնարարությունները ճիշտ են կատարել:

Կայարանն ամբողջովին հանձնված էր բանակին: Քաղաքացիական զգեստով մարդ գրեթե անկարելի էր տեսնել: Ուրախ, ժպտացող, գոնե գոհունակություն արտահայտող ոչ մի դեմք, միայն հոգնածություն, դժգոհություն, մաշված անտարբերություն, չասած արդեն քացախած ու մաղձոտ հայացքների մասին, որ հուսահատության և պարտվողականության ուղղակի վկայությունն էին:

Հիմա փաստեց, որ բանակի և ամբողջ երկրի պարտվողական ոգին այն անթիվ ու անհամար վիրավորները չէին, որ գալիս ու լցվում էին հիվանդանոցները (հաղթական բանակն էլ վիրավորներ ունի), այլ սևամաղձության այս կնիքը, որ տպված էր բոլորի դեմքին...

* * *

Մի՞թե անսպասելի էր այս ամենը, կեսգիշերային այս ուղևորությունը, ժանդարմների ողբալի պահվածքը: Ստոր բան կար դրանում: Ո՛չ, անսպասելի չէր: Նույնիսկ զարմացած էր, որ ուշանում է: Արդեն երկու ամիս կլիներ, ինչ պատրաստվում էր դրան... Այո՛, պատրաստվում էր, և կարող էր ասել, որ լիովին պատրաստ էր: Հոգեբանորեն:

Արդեն մեկ ժամ կլիներ, ինչ կանգնած էին կայարանի մուտքերից մեկի առջև: Կառապանի կողքը նստած ժանդարմը մտել էր ներս ու դուրս չէր գալիս... Մազութի, այրվող քարածխի և քրտինքի անջնջելի հոտերին խառնվել էր վերքերի, թարախի, փտող մսի գիշահոտը, որը զտվելով կայարաններին հատուկ հոտերից տարածվում էր քաղաքով մեկ... Երկրով մեկ... Պարտությա՛ն հոտը:

Ո՞ւր է հիվանդը: Ե՞րբ պիտի տեսնի նրան և որտե՞ղ...

Վերջապես հայտնվեց ժանդարմը՝ երկու սպաների ուղեկցությամբ: Նրանցից մեկը՝ կապիտանը, մոտեցավ, ձեռքը սեղմեց և ժպտալով ասաց. «Ներող կլինեք, դոկտոր, թյուրիմացություն է պատահել: Ձեզ ուղարկում ենք Էնկյուրի, տեղի զինվորական հիվանդանոցը ձեզ նման մասնագետների կարիք ունի... Գնացքը կես ժամ հետո մեկնում է»:

Կես ժամին ավելացան հինգ երկա՛ր ու ձիգ ժամեր:

Ինչո՞ւ միանգամից չեն ասում: Ինչո՞ւ շղթայակապ չեն անում, չէ որ սվինները մերկացրած այս զինվորների ներկայությունն արդեն ամեն ինչ ասում է: Հապա բաժնեխցիկի մշտապես փակ դուռը: Անհեթեթ տեսարան կլիներ, եթե երկու պահապանների ուղեկցությամբ երրորդ կարգի՝ զինվորներով լցված վագոնը մտցնեին: Ինչո՞ւ թողեցին, որ սպայական համազգեստը հագնի: Հենց սկզբից թող պահանջեին, որ քաղաքացիականով դուրս գա: Պատասխանը շատ պարզ է. որովհետև այս երկուսը չգիտեին, թե «հիվանդն» իսկապես որտեղ է: Նրանց կարգադրել էին հասցնել մինչև նավամատույց... Եվ ահա այսպես ձեռքից ձեռք են հանձնում:

Հիմա էլ «հիվանդը» Սկյուդարից տեղափոխվեց Էնկյուրի: Իսկապե՞ս այնտեղ է, թե... Այսինքն՝ դա ի՞նչ կարևոր է...

* * *

Տարօրինակ է այս գնացքը: Արդեն երեք, թե չորս կայարան անցան: Ոչ մեկում կանգ չառավ: Ինչ որ պետք էր արդեն բարձել էին Պոլսում: Շատ բան չտեսավ: Բայց որքան կարողացավ նկատել, հիմնականում ռազմական տեխնիկա էր. նոր, հեռահար հրանոթներ՝ Կրուպպի դրոշմը վրան, ավստրիական կարճափող ու լայներախ հաուբիցներ: Ծիծաղելի չեչտադրությամբ գերմաներեն և գերմանական չեչտադրությամբ տաճկերեն: Գերմանացի և ավստրիացի սպաների առատություն: Գերմանացին հուսահատ փորձեր է անում իր երկաթյա ոգին ու անթերի կարգապահությունը ներարկել մշտապես քայքայվող և ուծացող այս երկրին: Ապարդյուն: Արդեն հարյուր տարի է, ինչ ֆրանսիացիք ու գերմանացիք փորձում են ոտքի հանել բաշիբոզուկային այս զանգվածը, որ կոչվում է թուրքական բանակ և արդեն հարյուր տարի է, ինչ այդ բանակը մեկը մյուսի ետևից պարտվում է քիչ թե շատ լուրջ պատերազմներում: Այս պատերազմն էլ նոր սկսած՝ բանակի կեսն արդեն կոտորված է կամ հաշմված:

Տարօրինակ է, իսկապես: Գնացքը գնում է, գնում և կանգնում բաց դաշտի մեջ: Գոնե կայարաններում կանգներ: Եթե բանակում դժվար է գերմանացիների աշխատանքի պտուղները տեսնել, ապա կայարանները պարզապես նրանց բարեխիղճ՝ջանքերի լավագույն վկայությունն են: Սկսած Հայդար փաշա կայարանի հոյակապ շենքից և այդպես շարունակ՝ երկաթգծի ամբողջ երկայնքով:

Այլ կերպ էր պատկերացնում այս ուղևորությունը... Մի պահ արդեն թվաց, թե ճակատագիրն ուրիշ ելք է որոշել իր համար, և արդեն չգիտեր, թե ինչպիսի ընթացք բռներ... Ի՞նչ էր անում վերջին երկու ամիսը: Ոչինչ: Հիվան-

դանոց... Տուն... Հազիվ հասցնում էր երկու բառ փոխանակել Յաննիի հետ, երեխաներին գրկել համբուրել, եթե քնած չէին... Բոլորովին նման չէր այն մարդուն, որը պատրաստվում է մեկնելուն... Ընդմիշտ... Այո, ընդմիշտ: Ուրեմն, ճիշտ էր, որ ճամպրուկ չէր պատրաստում, կիսատ գործերն ավարտին չէր հասցնում, հանձնարարություններ չէր տալիս մնացողներին: Արդեն երկու ամիս էր, ինչ ապրում էր մեկնած, չվերադառնալու պայմանով մեկնած մարդու պես, և Յաննին զգում էր, տեսնում այդ երկիմաստ վիճակը... Եվ ոչ մի անգամ չմատնեց իր տագնապը:

Օ, ո՛չ, ոչ մի դեպքում չէր ցանկանա, որպեսզի այս պահին իր կողքին լինի, սակայն գոնե մեկ րոպեով, ոչ ավելին, հայտնվեր այստեղ, որպեսզի իրեն հատուկ սառնասրտությամբ և արիությամբ կարողանար ցրել հոգին ու սիրտը կրծող մեղքի այն զգացումը, որ հենց Պոլիս վերադառնալուց հետո սկսեց առավել ուժգնությամբ չարչարել... Ինչպե՞ս էր կարողանում աներևույթ մի զորությամբ, ակնթարթի մեջ ջնջել տանջալից բոլոր մտորումները:

Ի՜նչ արագ անցան ամիսները: Նույնիսկ մեկ տարի չհասցրեցին ապրել այս քաղաքում, որն առաջին իսկ պահից սոսկում պատճառեց նրան: «Ռուբեն, այս ի՞նչ քաղաք է, ոչ մեկի երեսին ժպիտ չկա»: Այս բառերն այնուհետև պիտի տարածվեին փոփոխված, սաստկացված, արդեն բոլորովին ուրիշ իմաստ ստացած... Իբր. «Հետ դառնանք այս նույն շոգենավով, որովհետև ոչ մեկի երեսին ժպիտ չկա»:

Հիշո՛ւմ էր, որ այդպես չասաց և համոզված էր, որ չէր կարող ասել՝ ոչ միայն, որ այդ պահին իրար կողք էին կանգած, այլև հրաշալի գիտեր նրա նկարագիրը. երբեք չհրաժարվել վերջնականապես ընդունված վճիռներից:

Ավագ եղբայրը՝ Քերոբն էր եկել նրանց դիմավորելու: Արդեն մի հրաշալի բնակարան էր վարձել նրանց համար Պոլսի եվրոպական մասում, սակայն պնդեց, որ մինչև այնտեղ հաստատվելը, մեկ շաբաթով մեկնեն Սիլիվրի, և նրանք սիրով համաձայնեցին:

Ինչպե՞ս կարողացավ Յաննին բոլորի սիրելին դառնալ... Գիտեր, որ ծնողները, ամբողջ ընտանիքը պիտի գրկաբաց ընդունեն նրան: Այնուհանդերձ հեռավոր մի տագնապ կար, որ օտարության հանգամանքը երկուստեք ինչ-որ սահման է գծելու (թեկուզ աներևույթ) պատշաճության և անկեղծության միջև: Սակայն Յաննին էր, որ կարողացավ իր բնածին խոհեմությամբ, իր բացառիկ նրբանկատությամբ, վերջապես, իր հոգու մեծությամբ բոլորի սիրտը շահել: Հովհաննես աղան խորաթափանց հայացքով մի ավելորդ անգամ համոզվեց, որ այդ օտարականը ամեն ինչով հարազատ է իրենց, որ իր որդուն սիրում է առանձնահատուկ նվիրվածությամբ: «Որդիս, Աստված է ուղարկել այդ աղջկան... Հիմա եմ հասկանում, թե ինչպիսի մեղք պիտի գործեի, եթե մերժեի իմ օրհնությունը...»: Հոր համար այդպիսի խոստովանություն անելը դյուրին չպիտի լիներ, սակայն նա խոսեց սրտանց և ինքնաբուխ, ասես հաճույք ստանար որդու ներկայությամբ խոստովանելուց... Պատճառը Յաննին էր, որ ճառագող սիրով ու մաքրությամբ միանգամից մանկացրեց բոլորին և ասես վերացրեց նահապետական պատնեշները:

Սիլիվրիում անցկացրած այդ մեկ շաբաթը հավանաբար իրենց կյանքի ամենաերջանիկ օրերը եղան, և Յաննին չէր ուզում վերադառնալ Պոլիս: «Հրաժարվիր այդ բնակարանից, Ռուբեն, մի՞թե ավելի լավ է լինելու, քան այստեղ»: Միակ փաստարկն էր, որ այդ գյուղաքաղաքում չի կարողանա իր մասնագիտությամբ զբաղվել: «Այստեղ հիվանդ չկա, բժիշկներն անգործության են մատնված»:

...Ի՞նչ է անում հիմա Յաննին: Հաստատ անքուն գիշեր է անցկացրել: Նա ամեն ինչ հասկացավ: Օ, Տեր Աստված, նրա չարչարանքներն իմից ավելի սոսկալի են լինելու...

* * *

Երեխան գրկին վազեց դեպի պատուհանը: Կառապանի կողքը մի ժանդարմ էր նստած, դարձյալ զինված: Նա տեղից ելավ, ծանր մարմինը մի կերպ իջեցրեց, քայլեց դեպի մուտքը: Ահա՛, Ռուբենը երևաց՝ երկու ժանդարմների միջև: Ո՞վ է տեսել ժանդարմ ուղարկեն բժիշկ կանչելու, այն էլ երեք, այն էլ զինվա՛ծ... Ծանրամարմին ժանդարմը պատիվ չտվեց սպային, այլ ինչ-որ բան ասաց և ձեռքի շարժումով հրավիրեց կառք նստել:

Առաջին օրվանից չսիրեց այս երկրի ոստիկաններին: Ատելի շատ բան կար այստեղ... Զկարողացավ ընտելանալ, ո՛չ մի կերպ... Որովհետև չի ուզում ընտելանալ... Որովհետև ընտելանալ, նշանակում է համակերպվել, հաշտվել, աչք փակել շատ բաների վրա... Այս կեղտոտ ու գարշահոտ քաղաքի փողոցներում վխտացող ոջլոտ շների, այս քծնող կամ ստորացնող ոստիկանների, վերջապես թուրքական անսկիզբ ու անվերջ բարբարոսության վրա, որ երևում է ամենուր, ամեն ինչում և որից թուրքերը ոչ մի կերպ չեն ուզում հրաժարվել... Հիշում էր, երբ հայրը Լոզանից հետ բերեց Էրֆուրտ, հաջորդ օրն իսկ չքեղորեն հրատարակված մի հատոր դրեց սեղանին՝ զորավար Ֆոն Մոլտկեի հուշերը, որտեղ բազմաթիվ էջեր կային Օսմանյան կայսրության վերաբերյալ: Մեծ զորավարը, ազնվականը, վերջապես օրինակելի եվրոպացին սոսկումով և բացահայտ արհամարհանքով էր ներկայացնում այդ երկիրը: Կարդում էր դժկամությամբ՝ անհնար էր չհամաձայնել հեղինակի հետ: Բայց ինչպե՛ս ուրախացավ, երբ թուրքերին ոչնչացնող էջերի կողքին հանկարծ հիացական կարծիքներ կարդաց այդ երկրում բնակվող հայերի մասին: Մի՞թե հայրը չէր նկատել: Ուրախացած ցույց տվեց նրան: «Այո, - ընդունեց հայրը: - Բայց տես, թե ինչպիսի երկրում են ապրում»: Վերջերս նորից կարդաց զորավարի հուշերը և համոզվեց, որ այս երկիրը յոթանասուն տարում չի փոխվել, մնացել է նույն բարբարոսը:

...Ռուբենը կառք նստելուց առաջ նայեց վերև՝ երրորդ հարկի լուսավոր պատուհանին և իր առատ, լավատես ժպիտը դեմքին, ձեռքով հրաժեշտի նշան արեց: Հետո համբույրներ ուղարկեց նրան, երեխային, որին բարձրացրել էր, որպեսզի ավելի լավ տեսնի: Ա՛հ, այդ ժպիտը, որն ի զորու էր միանգամից, անխոս վերացնել բոլոր մտատանջությունները: Հիմա էլ թեթևություն պարգևեց, սակայն ոչ այնքան, որպեսզի երեխային քնեցնի և ինքն էլ գոնե մի երկու ժամով

աչք փակի: Այնուամենայնիվ, երեխային պառկեցրեց, հետո վերադարձավ հյուրասրահ, նստեց բազմոցին, գլուխն առավ ձեռքերի մեջ: Հավանաբար ժպիտն էր, որ սառնասիրտ մտածելու հնարավորություն տվեց, այլապես հիմա անիմաստ գործողությունների մի շարք պիտի սկսեր, այլ խոսքով, ձեռքը պիտի մեկներ ծղոտին... Չէ որ ամեն ինչ պարզ է արդեն: Ի տարբերություն Պոլսի հայերի, առաջին օրվանից իսկ երբե՛ք, ոչ մի պատրանք չէր ունեցել Թուրքերի հանդեպ... Մի՞թե այդ ոստիկանների երկդիմի ժպիտներն ուրիշ բան էին ասում... Այո, այո, շատ կարևոր է խուճապի չմատնվել և հանգիստ որոշել անելիքը:

Իսկ ի՞նչ կարող է անել այս ժամին: Տասներկուսն անց կես է: Ո՞ւր կարող է գնալ, ո՞ւմ կարող է դիմել... Ոստիկանատո՞ւն... Օրվա ուշած ժամին կարող ես մտնել, մանավանդ այսպիսի հարցով, մանավանդ իր գերմանական անձնագրով: Բայց երեխաներին չի կարող թողնել մենակ, ափսո՛ս, որ աղախնին թույլ տվեց այս գիշեր բացակայել...

Հետո ձեռքը թափ տվեց: Գնալ ոստիկանների մոտ, որոնք իր անձնագիրը տեսնելուն պես քծնանքով պիտի ժպտան, խոստումներ շռայլեն և անտեղյակ ձևանան: Ի վերջո, իրենք են տարել, ուրեմն, կարգադրություն ունեին վերևից: Հապա ո՞ւր գնա, դեսպանատո՞ւն: Հիմա այնտեղ ոչ ոք չկա, իսկ մինչև առավոտյան ժամը ինքը կխելագարվի այս անորոշությունից: Զասած արդեն, որ հյուպատոսի՝ Ֆոն Նոյրաթի մոտ ոչ մի դեպքում չէր ցանկանա մտնել: Նրա երկիմաստ հայացքները... Իսկ դեսպա՞նը... Այս խելագար օրերին նրան տեսնելը պարզապես անկարելի կլինի... Ռենատային կզանգեր հենց հիմա, առանց վարանելու, բայց գիտեր, որ Քենանն այստեղ չէ: Հապա ո՞ւմ... Ուրիշ ո՞վ կա, ո՞ւմ կարելի է խնդրել՝ վստահ լինելով, որ իսկապես կցանկանա օգնել:

Ինչպե՛ս էր մոռացել. Հիլմի փաշան, Ռուբենի լավագույն բարեկամներից մեկը, իսկապես ազնվական մի մարդ, որն առիթ էր փնտրում վարձահատույց լինելու: Ռուբենը պարզապես կյանք պարգևեց այդ մարդուն, որ ծանր վիճակում, մի կերպ հասել էր Լոզան և վստահ չէր, թե իր ոտքով կվերադառնա: Հիմա բարձր պաշտոն է գրավում և կապեր ունի: Նա կարող է Ռուբենին անմիջապես ետ բերել, ուստի պետք չէ հապաղել, պետք է ամեն ինչ անել, քանի դեռ չեն հասցրել...

Հեռախոսակայանի օրիորդին գերմաներենով փաշայի համարը հայտնեց: Վերջին ժամանակները գնալով ավելի հաճախակի էր գործածում այդ լեզուն և, որպես կանոն, հասնում էր իր նպատակին:

Երկար սպասեցնելուց հետո հեռախոսավարուհին հայտնեց, որ պատասխանող չկա: Կարգադրելու պես խնդրեց զանգը կրկնել: Վերջապես կանացի մի ձայն պատասխանեց, ամենայն հավանականությամբ սպասուհին, որը ոչ ֆրանսերեն էր հասկանում, ոչ էլ գերմաներեն, սակայն Հիլմի փաշայի անունն, անշուշտ, հասկացավ:

Մոտ մեկ րոպե ստիպված էր ճթճթոցներ, խշշոցներ, հեռավոր խոսակցությունների ձայներ լսել, մինչև որ Հիլմի փաշան վերջապես մոտեցավ հեռախոսին: Ներողություն խնդրելուց հետո ջանաց երկու բառով և առանց հուզվելու եղելությունը պատմել:

- Ժամը քանի՞սն էր, երբ գնացին, - հարցրեց փաշան:

- Տասներկուսն անց քառորդ:

- Հիմա ժամը մեկն է... Գուցե մի քիչ էլ սպասենք: Եթե...

- Եթե ի՞նչ, - անմիջապես հարցրեց Յաննին:

- Եթե ուշացավ..., - բառերը կախվեցին, հետո փաշան ավելացրեց: - Չեմ կարծում, թե անհանգստանալու լուրջ պատճառներ կան, տիկին Զիլինկիրյան, գուցեև իսկապես հիվանդի մոտ են տարել:

- Այո, բայց ինչո՞ւ այդպես զինված, երեք ժանդարմների հսկողության ներքո...

- Գիտեք ինչ, պատերազմական օրեր են, ամեն ինչ կարող է պատահել... Դուք, հավանաբար, գիշերները տնից դուրս չեք գալիս, փողոցներում բազմաթիվ զինված ոստիկաններ կան:

- Բայց ես անհանգիստ եմ, փաշա, սիրտս վատ բան է գուշակում, մանավանդ երկու ամիս առաջ կատարված ձերբակալություններից հետո... Հասկանո՞ւմ եք...

- Հասկանում եմ, տիկին, բայց Ռուբենի պարագան ուրիշ է: Հանգստացեք, մի քիչ էլ համբերեք, հավանական է, որ մեկ ժամից վերադառնա:

- Իսկ եթե ուշացա՞վ... Չվերադարձա՞վ...

- Եթե մինչև ժամը վեցը չեկավ, անհապաղ զանգեք ինձ: Ես կարող եմ հիմա զանգել ոստիկանապետին, սակայն եթե Ռուբենն իսկապես մեկ կամ երկու ժամ հետո տուն գա, պատկերացնո՞ւմ եք ինչ ծիծաղելի վիճակում կհայտնվեմ ես:

Ի՞նչ կարող էր անել մինչև ժամը վեցը: Ուղիղ հինգ ժամ: Մի՞թե ափսոս չեն այդ ժամերը, որպեսզի ապարդյուն սպասումի վրա ծախսվեն: Ի՜նչ ստոր են, որ գալիս են և ուշ ժամին տանում մարդկանց՝ ամբողջ գիշեր հարազատներին թողնելով ահավոր մտատանջությունների մեջ... Սպասումը խավարի մեջ մահվան պես ծանր է... Հիմա սեփական մաշկի վրա զգաց այն հարյուրավոր կանանց վիճակը, որոնց ամուսիններին մի գիշերվա մեջ այսպես նենգորեն տարան և նրանցից միայն մեկը կարողացավ վերադառնալ, այն էլ սեփական աչքերով տեսած մղձավանջներից ցնորված...

Սակայն ինչո՞ւ է անգործ նստել, ի՞նչ կարող է անել հիմա, որ չի անում... Ինչ-որ վճիռ պետք է ընդունել...

Մոտեցավ պատուհանին: Դիմացի մայթին դատարկ մի կառք տեսավ: Կառապանը կանգնած զրուցում էր ոստիկանի հետ: Հաճախ էր տեսնում այդ կառքը, որ գիշերային այցելուներին էր սպասարկում: Կտրուկ շրջվեց, գնաց երեխաների մոտ, համոզվեց, որ երկուսն էլ խորը քուն են մտել, պայուսակն առավ, զգույշ քայլերով դուրս եկավ, դուռը կամաց փակեց, փութով իջավ ներքև, վճռական մոտեցավ կառքին, նստեց և առարկություն չընդունող ձայնով կարգադրեց.

- Հեռագրատո՛ւն:

Ոստիկանն ապշած նայում էր նրան, իսկ կառապանն՝ ուրախ, որ ուշ ժամին եվրոպացի հաճախորդ է գտել, հաճույքով ճամփա ընկավ:

Արածը կատարյալ խենթություն էր: Քաղաքում պատերազմական դրություն էր հայտարարված. կեսգիշերից հետո առանց արտոնագրի դուրս գալը

նշանակում էր ուղղակի ոստիկանության ձեռքն ընկնել և քաշքշուկներից հետո միայն կարողանալ օձիքն ազատել, չասած պարտադիր կաշառքի մասին: Դրանից զատ, նույնիսկ խաղաղ օրերում, երիտասարդ կնոջ համար պարզապես արկածախնդրություն էր կեսգիշերն անց մենակ քաղաք դուրս գալ: Կանանց այդ ժամերին կարելի էր տեսնել միայն որոշակի թաղերում, այն էլ կարմիր լապտերի տակ: Իր միակ հույսը գերմանական անձնագիրն էր, որն այդ օրերին, թուրքերի համար, արտոնագրին հավասար բան էր:

Հեռագրատունը բարեբախտաբար հեռու չէր, մանավանդ որ կառապանը դատարկ փողոցներով արագորեն տեղ հասցրեց: Պատվիրեց, որ սպասի մուտքի առջև և արագորեն մտավ ներս: Ոչ մի անգամ առիթ չէր ունեցել այս շենքը մտնելու, այն էլ գիշերով, սակայն գիտեր, որ քաղաքացիական այս հաստատությունն այժմ լիովին գտնվում է բանակի տնօրինության տակ: Պատուհանի ետևը նստած երիտասարդ զինվորը զարմացած էր կանացի շիկահեր գլուխ տեսնելով իր առջև, այն էլ ուշ ժամին.

- Ինչո՞վ կարող եմ ծառայել ձեզ, հանիմ, - հաճոյակատարությամբ հարցրեց թուրքերեն:

- Շտապ հեռագիր ունեմ ուղարկելու Լոզան, - գերմաներեն պատասխանեց Յաննին՝ մեկնելով լրացրած բլանկը, որտեղ ընդամենը չորս բառ կար. «Sofort mutter kome: Janni»: («Մայրիկ, անմիջապես արի. Յաննի»): Հետո շրջվեց և սրահում գտնվող սպաների հետաքրքրված հայացքների միջով քայլեց դեպի ելքը: Կառքն իր տեղում էր: Նույն արագությամբ վերադարձավ, վճարեց կառապանին և նետվեց դեպի մուտքը: Անհամբերությունից չէր կարողանում դուռը բացել: Մի պահ նույնիսկ մտածեց, թե սխալ բանալի է վերցրել, բորբոքված երևակայությունն արդեն սոսկալի պատկերներ գծագրեց՝ փակված տան մեջ մենակ մնացած անպաշտպան երեխաներ... քիչ մնաց հուսահատությունից գոռար, օգնություն կանչեր: Բայց ականջը հպեց դռանը. ոչ մի ձայն չկար, բացարձակ լռություն էր բնակարանում: Հենվեց պատին, մի պահ մնաց այդպես կանգնած, խորը շունչ քաշեց և բանալու մի պտույտով բացեց:

Ներսում իսկապես կատարյալ անդորր էր: Կոշիկները հանեց և զգույշ մոտեցավ երեխաներին: Իրենց տեղում էին՝ քնած: Ինչպե՜ս կուզեր հիմա գրկել նրանց, մոռանալ մի պահ այս ահավոր տագնապը... Երեխաների մոտից քայլերը տարան դեպի Ռուբենի աշխատասենյակը: Ի՜նչ ճիշտ արեց, որ եկավ այստեղ: Գրասեղանին օրագրի ստվար տետրակն էր, որ սկսել էր վերադարձի առաջին օրերից: Բանաստեղծություն արդեն չէր գրում: Այդ օրագիրն էր միայն, որը սակայն չէր կարողանում օրը օրին շարադրել: Ահա, վերջին էջի վրա ամսաթիվ կար. 19.6.1915: Ափսո՜ս, որ այդպես էլ հայերեն չսովորեց, թե ոչ հիմա ինչպիսի՜ մխիթարություն կլիներ այս էջերի ընթերցումը... Հեռագրի ստացականը, թվերին նայեց՝ 24.6.1915, 03.30: Հետո հայացքն ընկավ առջևը կանգնած «մորբիերին», որ բերեցին Լոզանից: Սլաքներն ուղիղ ժամը չորսն էին ցույց տալիս:

Զգուշորեն օրագիրը բացեց: Վե՜րջ: Իսկապե՞ս վերջ: Այլևս չի շարունակվի՞... Այլևս չի վերադառնա՞ նոր էջեր լցնելու լաթակազմ այս տետրակի մեջ...

Չէր ուզում, դիմադրում էր, ատամները սեղմել էր... Ո՛չ մի դեպքում

թույլ չէր տա, բայց արցունքներն սկսեցին հոսել: Դավաճան, ստոր արցունքները: Սկզբում սրբեց, փորձեց արմատից չորացնել, բայց հոսում էին համառորեն... Այլևս ոչ մի արդելք, երկաթյա ոչ մի կամք չէր կարողանա կանգնեցնել դրանց հոսքը... Արցունքներից թրջված թաշկինակը դրեց բերանին, ատամներին սեղմեց... Միայն թե չհեծկլտա, միայն թե չաղաղակի, չոռնա սոսկալի ցավից...

Արցունքները վերջապես դադարեցին: Պարտասած նստել ու անորոշ մի կետի էր նայում: Հետո վեր կացավ, լուսնոտի պես մոտեցավ Շամիրամին, տարավ ննջասենյակ, դրեց այնտեղ, ուր հիմա Ռուբենը պիտի լիներ: Ինքը սլառկեց իր տեղում, երեխայի կողքին, սկսեց լսել նրա հանդարտ շնչառությունը և չգդաց, թե ինչպես այդ անմեղությամբ հովանավորված ինքն էլ խորը քուն մտավ:

* * *

Եթե այդ լուրը չչանթահարեց, եթե ցավից չքարացավ, պատճառն այն էր, որ արդեն գիտեր, կարելի էր նույնիսկ ասել, թե վաղուց գիտեր այդ մասին: Գիտեր, որ պիտի լինի... Որ հասունանում է վաղուց: Արդեն վեց տարի էր՝ այդ մասին էր դրում, խոսում, ապացուցում, փորձում հասկացնել... Մի՞թե Կիլիկիան մեզ դաս չեղավ, 30.000 զոհերի արյունը մի՞թե բավական չէր սթափվելու համար: Վեց տարին մի՞թե քիչ էր ճիշտ քայլեր անելու համար... Իր խոսքերն, ավաղ, մնացին ձայն բարբառո հանապատի, իսկ նրանք, ովքեր միջոցներ ունեին, կոչված էին ճիշտ քայլեր ձեռնարկելու, ավելի մոտեցրին աղետը: Նա նման էր այն գիտնականին, որ հրաբխի լանջերին կայք հաստատող մարդկանց փորձում էր հասկացնել, որ այդտեղ ապրելը մահացու վտանգ է ներկայացնում, որ ընդերքից արդեն դղրդոցներ են լսվում, որ արդեն զոհեր են եղել, սակայն ոչ ոք չի լսում նրան: Հասնում է օրը, հրաբուխը ժայթքում է՝ մոխրացնելով գյուղերն ու մարդկանց: Եվ գիտնականը ցավով նայում է, թե մարդկային հսկայական զանգվածներն ինչպես են անհետանում իրենց անխոհեմության պատճառով...

Ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերն էր: Հիվանդանոցից վերադառնում էր իր ճերմակ ձին նստած: Տարօրինակ աշխուժություն նկատեց քաղաքում: Մի քանի ծածկված կառքերի հանդիպեց, որ հեծյալ ոստիկանների ուղեկցությամբ արագ ընթանում էին: Ոստիկաններն էլ կարծես սովորականից ավելի շատ էին փողոցներում: Երեք տեղ կանգնեցրին և դեմքներին խոժոռ արտահայտություն տված ուշադիր զննում էին փաստաթղթերը: Վերջին անգամ, ստուգելու ժամանակ, մի կառք մոտեցավ, և կառապանի կողքին նստած զինյալն իջավ ու ինչոր բան հարցրեց ոստիկանության սպային: Ռուբենն, ասես հրամանի ենթակա, շրջվեց և հայացք գցեց կառքից ներս: Նա ցնցվեց: Երկու զինված ոստիկանների միջև նստած էր Վարդգեսը: Նա իջեցրել էր գլուխը, երեսն էլ թեքել, սակայն երևում էր նրա սրածայր բեղը: Ինչո՞ւ էր շրջել հայացքը...

- Հեռացեք, պարոն հարյուրապետ, - գրգռված դիմեց նրան ոստիկաններից մեկը, որն ընդամենը շարքային էր և իրավունք չուներ սպայի հետ այդպես հանդուգն խոսելու:

Սակայն, դա չէր կարևորը: Երկու քայլ հետ գնաց, բայց շարունակ նա-

յում էր այնտեղ: Երբ կառքը տեղից շարժվեց, Վարդգեսը հայացքը դարձրեց, և նրա խոշոր ու արտահայտիչ աչքերը տեսավ կիսախավարի մեջ, որ շեշտակի նայում էին իրեն...

- Խնդրեմ, պարոն հարյուրապետ, կարող եք շարունակել ձեր ճամփան, ներողամիտ եղեք ուշացնելու համար, - փաստաթղթերը մեկնելով ասաց ոստիկանության սպան, որն իր քաղաքավարությամբ ասես ուզում էր մեղմել նախորդի կոպտությունը:

Արդեն ձին էր տանում նրան: Պատահարն այնպես էր ցնցել, որ մոռացել էր ամեն ինչ և ակամայից իրեն հանձնել խելացի ու զգայուն կենդանու հույսին, որն իր պայտած սմբակների միալար աղմուկով տանում էր ուր որ պետք է, քանզի լավ գիտեր ճանապարհը:

Կասկած չկա, Վարդգեսը տեսավ իրեն, ճանաչեց: Բայց ինչո՞ւ շրջեց հայացքը: Ոստիկաններն ինչո՞ւ էին նստել նրա կողքին, այն էլ զինված, մի երրորդն էլ՝ կառապանի մոտ: Ինչո՞ւ չբարևեց, չուզե՞ց ցույց տալ, թե ծանոթ է... Հապա նրա՝ հրաժեշտի տխուր հայացքը... Դրանից առաջ տեսած կառքերում նույնպես զինված ոստիկաններ կային... Նրանք ո՞ւմ էին տանում... Քանի՞սը տեսավ... Հինգը... Վեցը... Այս վերջինն էլ հետը եղավ յոթ... Արդյոք բոլո՞րը տեսավ... Ընդամենը կես ժամ է, ինչ դուրս է եկել հիվանդանոցից... Մյուսներում ովքե՞ր էին նստած...

Իր տան մերձակայքում ևս մի կառք տեսավ: Աչխատեց հնարավորին չափ մոտենալ և ներսը նայել: Նույն պատկերն էր, միայն թե այս դեպքում ոստիկանների կողքին մի հոգևորական էր նստած:

Գիշերվա ժամը երեքն էր, երբ մտավ տուն: Բորբոքված ուղեղով ետուառաջ էր անում հյուրասրահում: Չնայած հոգնածությանը չուզեց անկողին մտնել, համոզված, որ չպիտի կարողանա քնել: Կիսաբաց պատուհանի մոտ կանգնած ծխում էր, երբ Ցաննին զգուշորեն դիպավ ուսին:

- Ինչո՞ւ չես պառկում:

Ոչինչ չասաց, պարզապես այտը համբուրեց և շարունակեց ծխել:

- Ինչ-որ բան է պատահե՞լ:

- Այո... Գուցե... Արդեն..., - կցկտուր պատասխանեց նա՝ մանրամասնորեն պատմելով իր հանդիպումը Վարդգեսի հետ:

- Ինքդ ես ասում, թե նա մեջլիսի անդամ է, նշանակում է անձեռնմխելի անձ է:

- Հենց դա է ինձ մտահոգում:

- Չեմ կարծում, թե մտահոգվելու լուրջ առիթ կա... Դեպուտատ է, գիշերով, հավանաբար, տեղ ուներ գնալու և պահանջել է, որ ոստիկաններն ուղեկցեն... Չէ որ վտանգավոր ժամանակներ են:

- Հապա ինչո՞ւ էր տխուր, ինչո՞ւ չբարևեց, ինչո՞ւ չճանաչելու դրեց...

- Զգիտեմ, սիրելիս, մութ է, խավար է... Դու էլ չնչին պատահարները հիվանդագին ես ընդունում: Բնական է, այդքան մահ, այդքան հաշմանդամ, որ դու ես տեսնում ամեն օր...

- Հապա մյուս կառքե՞րը... Հապա այն հոգևորակա՞նը...

- Դե, սիրելիս, հոգևորականի պաշտոնն էլ քոնի նման է, գիշերվա ուզած

ժամին կարող են քնից հանել և տանել մահամերձի մոտ հաղորդության...

- Զինված ոստիկանների ուղեկցությա՞մբ...

Ոչ, Յաննին այդքան միամիտ չէ, նա էլ հասկացավ, որ ահավոր մի բան է տեղի ունենում, սակայն տեսնելով իր բորբոքված վիճակը, հավանաբար ուզում էր այդ կերպ հանգստացնել: Բայց ապարդյուն, քանզի ահա նա էլ մնաց կիսաբաց պատուհանի մոտ՝ իր նման, անշուշտ, ենթադրելով, թե այդ չարաղետ կառքերից որևէ մեկը կարող է անցնել իրենց պատուհանների տակով և որ իրենք՝ երրորդ հարկի բարձրությունից գուցե կարողանան տեսնել, թե ով կա ներսում:

Մինչև առավոտյան հինգը մնացին այդպես կանգնած: Սմբակների հեռավոր աղմուկ հասավ, կողքի փողոցից զինվորական հրամաններ լսվեցին, նույնիսկ մի կրակոց պայթեց հեռավոր թաղում, սակայն, բարեբախտաբար, ոչ մի կառք չանցավ:

Յաննին ուշադիր նայեց նրան և ասաց.

- Արի, Ռուբեն, աշխատենք մի քիչ քնել, վաղը մեզ ծանր օր է սպասվում:

Առավոտ կանուխ հիվանդանոցում էր: Ամենօրյա մշտական պարտականությունները փոքր ինչ մոռացնել տվեցին անցած գիշերվա տագնապալից տեսարանները: Ժամը տասնմեկը կլիներ, երբ կանչեցին տնօրենուհու մոտ: Ներս մտնելով Քենանին տեսավ, որը հուզված մոտեցավ ու գրկեց:

- Ձես պատկերացնում, թե որքան ուրախ եմ՝ քեզ ողջ-առողջ տեսնելով: Քիչ առաջ զանգեցի Յաննիին, ասաց, որ այստեղ ես... Հատուկ եկա, որ քեզ տեսնեմ... Իսկապես հրաշք է, Ռուբեն...

Նրա ձայնը անկեղծ էր:

- Կարծում էիր այլևս չես տեսնի՞...

Քենանը մի պահ նայեց աչքերի մեջ, հետո, հայացքը փախցնելով, դժվարությամբ արտաբերեց.

- Հավատա, որ՝ այո...

- Եվ զարմացա՛ծ ես:

- Զարմացած եմ: Բայց, ամենակարևորը, ուրախ եմ, չափազա՛նց ուրախ:

- Կարո՞ղ ես բացատրել, թե ինչ է կատարվում:

Քենանն ապշած նայեց:

- Մի՞թե չգիտես..., - հարցրեց նա: - Այսինքն՝ որտեղի՞ց իմանաս, հավանաբար գիշերը հանգիստ քնած էիր քո տանը:

- Ո՛չ, - կտրուկ պատասխանեց Ռուբենը: Հետո, հանդարտվելով, պատմեց իր հանդիպումը Վարդգեսի հետ՝ չմոռանալով մյուս մանրամասները:

- Երանի միայն նա լիներ, - ուշադիր լսելուց հետո բացականչեց Քենանը: - Բոլոր հայ մեբուսներն են ձերբակալված, անգամ Զոհրապը՝ Թալյաթի մտերիմ բարեկամը... Բոլոր խմբագիրները, բարձրաստիճան հոգևորականները, գրողները և անգամ բժիշկները...

- Ինչո՞ւ, ի՞նչն է պատճառը:

- Ոչինչ չեմ կարող ասել... Մեր կենտրոնից եմ գալիս, այնտեղ ոչ ոք չէր կարողանում հստակ բացատրություն գտնել:

- Ուրեմն, առանց ձեր գիտության է արվել այս ամենը:

- Կուսակցության ղեկավարները, հավանաբար, ինչ-որ բան գիտեին, բայց նրանք էլ շշմած են... Հարյուրավոր մարդկանց են ձերբակալել:

- Եվ միայն հայերին... Սակայն ո՞վ է հրաման տվողը:

Քենանը դառն կողմը նայեց և դժվարությամբ արտաբերեց.

- Այդ ավազակը, այդ գնչուն, որ մեր երկիրը տանում է կործանման...

- Թալյա՞թը:

Քենանը լուռ գլխով արեց:

- Չեմ հասկանում, ինչո՞ւ:

- Ինձ զարմացնում ես, Ռուբեն: Մի՞թե դու չէիր սոսկալի լուրեր պատմում գավառներում կատարվող խժդժությունների մասին: Հիմա այդ միամիտ հարցն ես տալիս... Հապա լուրջ մտածիր, ո՞ւմ են ձերբակալել անցած գիշեր. Պոլսի բոլոր հայ երևելիներին, ձեր ազգի սերուցքը, գլուխը, միտքը...

- Սակայն ի՞նչ կարող է անել այդ գլուխը, երբ մարմինը մաս-մաս ոչնչացվում է... Գավառներում արդեն հայություն չմնաց, բոլորին տեղահանել ու քշել են դեպի անապատները... Եվ հայտնի չէ, թե դրանցից քանիսը տեղ կհասնեն:

- Բայց դու գիտես, Ռուբեն, որ այդ տեղահանումները հանուն ձեր ապահովության արվեցին...

- Եվ դու հավատո՞ւմ ես Էնվերի ու Թալյաթի ստախոսությանը... Այդ դեպքում կարո՞ղ ես բացատրել, թե ինչու ռուսները չտեղահանեցին Կովկասի մահմեդականներին, չէ որ նրանք էլ կարող էին թուրքական բանակին օժանդակել:

- Իսկապես, չէի մտածել այդ մասին:

- Չէիր մտածել, որովհետև ռուսները նպատակ չունեն իրենց մահմեդականներին բնաջնջելու:

- Հավատս չի գալիս...

- Դու լավ գիտես, որ Պոլսից դուրս ապրող բոլոր հայերին արդեն տեղահանել են, թալանել, բռնաբարել, մորթել... Ես ստույգ լուրեր ունեմ, ավստրիացի և նույնիսկ թուրք սպաներն ահավոր բաներ են պատմել ինձ:

- Պիտի ասեմ, որ մեր կուսակցության մեջ շատերը զարմացած էին և նույնիսկ վրդովված գիշերվա իրադարձություններից... Հատուկենտ մարդիկ տեսա, որ չարախնդում էին, ասում, թե քիչ են ձերբակալել, թե պետք է բոլոր հայերին տարած լինեին... Ահա ինչու զարմացա և ուրախացա՝ տեսնելով քեզ այստեղ ողջ և առողջ:

- Ես էլ եմ զարմանում, - մտահոգ ասաց Ռուբենը: - Սա նույնիսկ անհեթեթ է...

- Ի՞նչը նկատի ունես:

- Չեմ հասկանում, թե ինչու են ինձ խնայել: Ես հիմա պիտի այստեղ չլինեի...

- Կարծում եմ երկու հանգամանք կարևոր դեր են խաղացել. նախ դու սպա ես, զինվորական բժիշկ և հետո..., - Քենանը ցուցամատը տնկեց: - Քո կինը գերմանացի է:

- Միամիտ բաներ ես խոսում: Նրանք բոլոր հայ դեպուտատներին են ձերբակալել, որոնց մազին դիպչելու իրավունք չունեին:

- Դեպուտատներն ուրիշ, նրանք մերն են: Իսկ քեզ ձերբակալելու դեպքում լավ գիտեն, որ հաջորդ օրն իսկ պիտի ազատ արձակեն... Բավական է, որ գերմանական դեսպանը զանգի Թալյաթին... Նույնիսկ չեն հասցնի քեզ բանտ տանել:

- Ի դեպ, ձերբակալվածներին ո՞ւր են տարել:

- Պոլսի բանտում են հավաքված... Վաղօրոք նախապատրաստել էին:

- Ինչպե՞ս թե:

- Չես պատկերացնի, թե ինչեր է արել այդ Թալյաթը... Բոլոր ոճրագործներին ազատել է բանտերից և ուղարկել գավառները, իսկ նրանց տեղը հայ երևելիներին տվել:

- Իսկ ի՞նչ պիտի անեն այդ ավազակները գավառներում, - հեգնական հարցրեց Ռուբենը:

- Մի՞թե չես կռահում, թե ինչով պիտի զբաղվեն այնտեղ...

- Ես կռահում եմ, բայց կուզեի քո կարծիքը լսել:

- Շատ պարզ է, պիտի զբաղվեն տեղահանված հայերով:

- Ուրեմն, քրդերի հրոսակախմբերը, ժանդարմների անգթությունները, սովն ու հիվանդությունները քի՞չ են:

- Թալյաթի համար, հավանաբար, քիչ են:

- Հետաքրքիր է այդ բաները լսել հատկապես քեզնից:

- Միայն ես չեմ, որ այսպես եմ մտածում, ես բազմաթիվ թուրք դեպուտատներ, սպաներ գիտեմ, որոնք դատապարտում են այդ բռնությունները...

- Ես էլ գիտեմ և հավատում եմ նրանց անկեղծությանը, սակայն այդ մարդիկ, հավանաբար, շատ չեն, որպեսզի կարողանան երկրի քաղաքականությունը փոխել:

- Եթե նույնիսկ շատ լինեին, վախենում եմ դարձյալ չպիտի կարողանային փոխել... Մեր երկիրը մենք չենք կառավարում...

* * *

Զանգը քնի մեջ էր լսո՞ւմ, թե՞ հարթմնի... Երկարատև, համառ զանգը... Պետք է վեր կենալ, եթե նույնիսկ քնի մեջ է, և մի կերպ հասնել միջանցք:

- Ալո...

- Արդեն վեցն անց կես է, տիկին Զիլինկիրյան... Տեսա չեք զանգում, որոշեցի ինքս զանգել...

Հիլմի փաշան էր:

- Հուսամ Ռուբենը վերադարձել է:

- Ոչ, փաշա, դեռ չի վերադարձել:

Մի պահ լռություն տիրեց:

- Տարօրինակ է... Վստա՞հ եք, որ ժանդարմներ էին, գուցե բանակն էր, գուցե տարել են ծանր հիվանդի մոտ:

- Ոչ, փաշա, իսկապես ժանդարմներ էին:

- Եթե այդպես է, նշանակում է երկու հոգի կան, որ կարող են մեզ օգնել. Թալյաթը և Բեդրի բեյը՝ Պոլսի գլխավոր ոստիկանապետը... Կարծում եմ, որ ավելի ճիշտ կլինի վարից սկսել... Ուրեմն, այսպես, ութն անց կեսին պատրաստ եղեք, ես կառքով կգամ ձեզ կվերցնեմ... Կգնանք ուղղակի Բեդրի բեյի մոտ, նա չի կարող իմ խնդրանքը մերժել:

...Բեդրի բեյի օգնականը՝ երիտասարդ մի սպա, նրանց առաջնորդեց աշխատասենյակ:

- Օ՜, Հիլմի փաշա, ես նեղացած եմ ձեզնից, եթե բարեկամիդ հարցով է ինչո՞ւ գիշերը չզանգեցիր... Հիմա արդեն ձեր խնդիրը կարգադրված կլիներ:

- Բեյս, չուզեցի քունդ խանգարել:

- Եղբայր, ի՜նչ քուն, ի՜նչ հանգիստ, եթե լավագույն բարեկամներիցս մեկը խնդիրներ ունի:

Բեդրի բեյը չորուկ էր և միջահասակ, մոտ հիսուն տարեկան: Նրա երեսը համակ բարություն էր, բնավ չէիր ասի, թե այդպիսի մարդը կարող է ոստիկան լինել: Ամենայն ուշադրությամբ լսեց երկուսին էլ, բազմաթիվ հարցեր տվեց, գրառումներ արեց, կանչեց օգնականին և հանձնարարեց պարզել: Հետո դառնալով Յաննիին ասաց.

- Մի մտահոգվեք, տիկին, եթե այսօր երեկոյան ձեր ամուսնու հետ միասին ձեր տանը չընթրեք, ապա համոզված եղեք, որ առավոտյան սուրճը միասին եք խմելու:

Հետո, նայելով Հիլմի փաշային, ավելացրեց.

- Միայն թե մի խնդիր կա... Ոչ, ոչ, առանձնապես լուրջ բան չէ... Ձեր ամուսինը սպա է, զինվորական բժիշկ... Հնարավոր է նրան բանակի պետքերի համար շտապ կանչել են: Ինչ որ է, մի մտահոգվեք, տիկին, մենք ամեն ինչ կպարզենք:

Նա տեղից ելավ՝ հասկացնելով, որ ժամադրությունն ավարտված է: Դռան մոտ դիմեց Յաննիին.

- Համենայն դեպս տալիս եմ իմ օգնականի համարը, եթե այսօր ոչ մի նորություն չեղավ, առավոտյան կարող եք զանգել:

Հիլմի փաշան շատ ոգևորված չէր երևում:

- Տի՛կին Զիլինկիրյան, մեզ մնում է միայն համբերել:

Տուն վերադառնալուն պես սպասուհին մի հեռագիր մեկնեց նրան: Մայրն էր: Գրում էր, որ գալիս է առաջին իսկ գնացքով՝ Վիեննայով: Խղճի խայթ ղգաց, որ այս ահավոր օրերին ստիպել է նրան այդպիսի վտանգավոր ճամփորդություն ձեռնարկել: Ասում էին, որ երթևեկությունը քիչ թե շատ կարգավորվել է, բայց դարձյալ պատերազմ է, ամեն ինչ կարող է պատահել:

Պատուհանից նայեց դուրս: Իսպառ մոռացել էր... Ռուբենի ճերմակ ձին կանգնած էր այնտեղ՝ համհարզը կողքին: Վաղո՞ւց է սպասում... Ամեն օր առավոտյան գալիս էր, որպեսզի Ռուբենին տանի հիվանդանոց: Միայնակ ձիուն տեսնելով քիչ մնաց փղձկար: Ասես նա էլ կենդանու իր անսխալ բնազդով ինչոր վատ բան էր զգում: Իր փառահեղ տեսքով, իր անբիծ ճերմակությամբ բարության միակ մարմնավորումն էր չարությամբ լցված այս քաղաքում... Իջավ և համհարզին ասաց, որ դոկտոր էֆենդին այսօր հիվանդանոց չի գալու: Համ-

հարզը, որ հազիվ մի քանի բառ գիտեր ֆրանսերեն, պաղած ժպիտը դեմքին գլխով էր անում: Հետո նստեց իր ձին և ճերմակ երիվարին՝ առանց հեծյալի, տարավ իր հետ: Նա հնազանդ ենթարկվեց, հավանաբար զարմացած տիրոջ բացակայությունից:

Տուն մտնելուն պես հեռախոսը զնգաց: Ռենատան էր: Զարմացած էր, որ Ռուբենը մինչև հիմա չկա:

- Հավանաբար տկա՞ր է, - հարցրեց և ինքը պատասխանեց. - Զարմանալի չէ, քանի որ նախորդ օրն այստեղ ծանր գիշեր անցկացրեց:

Զգիտեր, թե ինչ պատասխան տար: Լռությունը երկարաձգվեց: Ռենատան ինչ-որ բան կռահեց.

- Յաննի... Ռուբենը տանը չէ՞...

Լռությունը դարձյալ երկարեց:

- Յաննի... Չի կարող պատահել... Ե՞րբ...

- Գիշերը... Արդեն տասներկու ժամ կլինի...

- Օ՜, Ռուբեն, միամիտ երեխա... Հիշո՞ւմ ես, Յաննի, նոր էիք եկել: Ես քեզ ի՞նչ ասացի... Ասացի՞ ամուսնուդ վերցրու և հետ գնա... Ասացի՞... Հապա նրան որքա՜ն եմ ասել, որքա՜ն եմ համոզել... Նույնիսկ ամուսինս էր ինձ համամիտ... Ի՞նչ ես անում, որևէ բան ձեռնարկե՞լ ես:

Յաննին պատմեց իր այցելության մասին:

- Հենց հիմա Քենանին կփնտրեմ:

Օրվա ընթացքում տարբեր զանգեր եղան: Լուրը տարածվել էր: Զանգում էին թուրք բարձրաստիճան պաշտոնյաներ, դեպուտատներ, սպաներ, որոնց մեծ մասը Լոզանում կամ Պոլսում նրանից բժշկական օգնություն էր ստացել և հիմա իրենց երախտագիտությունն էին հայտնում՝ քաջալերական մի քանի խոսք ասելով: Նրանց անկեղծությանը Յաննին չէր կասկածում, բայց զգում էր, որ չեն ուզում կամ չեն կարող գործնական քայլեր ձեռնարկել:

Զանգերը շարունակվեցին մինչև ուշ երեկո, սակայն ամենակարևորը՝ ոստիկանության զանգը, որին սպասում էր անհամբեր, այդպես էլ չհնչեց: Եվ նրանում գնալով աճում էր խուճապը, որ Ռուբենը գուցե այստեղ է՝ Պոլսում, ոստիկանության կամ նույնիսկ բանտի խցերից մեկում, և ինքը չի կարող որևէ բանով օգնել, գոնե պարզել, թե որտեղ է, թե ո՞ր մեղքի համար է ձերբակալվել: Չնայած ամեն օր խոսում էին այդ մասին, չնայած ահագին գրականություն էր կարդացել՝ թուրքերի մշտական վայրագությունները նկարագրող, բայց, այնուհանդերձ, հույսի, լավատեսության մի շող կար, որ նրանց ապրեցնում էր այստեղ, սակայն հիմա ամեն ինչ փշրվում էր: Նա տեսնում էր այս երկրի հրեշավոր դեմքը և ամոթով փաստում, որ իր մաշկին դիպչելուց հետո միայն զգաց ողջ ահավորությունը... Մի՞թե քիչ էին մշտական զրույցները հայերի դժնի վիճակի մասին, վերջին ամիսներին հեռավոր նահանգներից մայրաքաղաք հասնող սահմռկեցուցիչ լուրերը: Հապա ամոթը, որ տանջում էր նրան՝ Ռուբենին: Արդեն երկու ամիս նույն հարցն էր տալիս. «Ինչո՞ւ եմ այստեղ»: Գտնում էր նույնիսկ, որ սադայելական մի ծրագիր է, ծաղր՝ իրեն այստեղ թողնելը, երբ իր բոլոր ընկերները, քիչ թե շատ արժանավոր մարդիկ աքսորված են: «Հասկացիր, - ասում էր, - քեզ նման բժիշկը պետք է նրանց»: «Ինձնից ավելի լավ բժիշկներ

են աքսորել», - պատասխանում էր տարակուսած: «Վերջապես իմ հանգամանքը կա, հորեղբորս տղայի հանգամանքը կա, չէ որ նա Ֆոն Գոլց փաշայի հանձնակատարն է: Թուրքերը չեն կարող այս բաներն անտեսել»:

Ի՜նչ միամիտն էր... Ոչ միայն անտեսում են, այլև արհամարհում: Նրանք թքած են ունեցել Եվրոպայի, աշխարհի վրա, երբ հարցը վերաբերում է հայերին: Արդեն ութ տարի է գրականություն է կարդում հայերի և Հայաստանի վերաբերյալ, մի ամբողջ գրադարան կարդաց գերմաներեն և ֆրանսերեն, չհաշված այդ տարիների ընթացքում մամուլի քիչ թե շատ կարևոր հրապարակումները, չհաշված ամենօրյա զրույցները Ռուբենի և նրա բարեկամների հետ, չհաշված Պոլսում անցկացրած այս ամիսները, երբ սեփական աչքերով կարող էր տեսնել շատ ու շատ բաներ... Գնալով ահագնանում էր սոսկումը և ավելի անըմբռնելի դառնում մի բան. ի՞նչն էր պատճառը Թուրքերի անասնական, չմարող ատելության հայերի հանդեպ:

Ռուբենը զանազան բացատրություններ էր տալիս՝ մեկը մյուսից ավելի տրամաբանական, բայց դարձյալ հարցը մնում էր անպատասխան: Այո, հասկանում էր՝ բարբարոսի նախանձն իրենից ավելի լավի, քաղաքակրթվածի հանդեպ, Թուրքերի արնախում թշնամությունը քրիստոնյաների հանդեպ, ավազակի վայրագ ընչաքաղցությունը և ամեն ինչին բռնությամբ կամ նենգությամբ տիրանալու բնազդը, վերջապես հասկանում էր հայերի պատմական ծանրագույն ճակատագիրը և աշխարհագրական անբարենպաստ դիրքը... Բայց դարձյալ կարևոր մի բան մնում էր անհասկանալի, մանավանդ ատելության այդ ահռելի չափերը, հայերին ոչնչացնելու այդ անհագուրդ ծարավը... Ինչո՞ւ, մինչև ե՞րբ... «Մինչև մենք չփոխվենք, Թուրքը չի փոխվի, - ասում էր Ռուբենը: - Դեռ երեկ էր, որ բուլղարներին կոտորում էր հայերի պես, մինչդեռ այսօր այդ փոքրիկ պետության հետույքն է լիզում... Եթե մենք էլ մեր պետությունն ունենայինք Ռուսաստանի կողքին, Թուրքերը կփորձեին մեզ էլ սիրաշահել...»: «Սակայն ե՞րբ, ինչպե՞ս, վերջապես որտե՞ղ պիտի հիմնվի այդ պետությունը», - անհամբեր հարցնում էր նրան: «Օ՜, այդքան շատ հարց մի տուր Յաննի... Շա՜տ բան կա անելու, ծայրը չես տեսնում... Մարդ քիչ է մնում հուսահատվի... Շատ քիչ բան է արված: Երբեմն էլ ինչ որ արել ենք եղել է ի վնաս մեզ... Ոչինչ, նորից կանենք, մի տեղից պետք է սկսել... Միայն թե Կիլիկյան աղետը չկրկնվի...»: «Իսկ կարո՞ղ է կրկնվել»: «Զգիտեմ, Յաննի, այդ հարցը մի տուր... Երբ մտածում եմ այդ մասին, քիչ է մնում խելագարվեմ...»:

...Կեսգիշերն անց էր և չնայած նախորդած անքուն գիշերներին, քնելու ցանկություն չուներ: Այնուհանդերձ, պառկեց ականջը զանգին պահած: Իր սպասած զանգը վերջապես հնչեց. առավոտյան ութն էր, Բեզրի բեյի օգնականը հայտնեց, որ բեյը ժամը տասին սպասում է իրեն:

Հրճվանքի մի ալիք համակեց Յաննիին:

- Գտա՞ք... Դոկտորը որտե՞ղ է:

- Ոչինչ չեմ կարող ասել, տիկին, ինձ հանձնարարված է լոկ ժամը 10-ին ձեզ հրավիրել բեյի մոտ:

Օգնականի ձայնը զուսպ էր և քաղաքավարի, ինչն ամենևին չպաղեցրեց Յաննիի ոգևորությունը:

Նշանակված ժամից տասը րոպե առաջ այնտեղ էր արդեն: Մուտքն անց-

նելուն պես հայտնվեց ոստիկանի առջև, որն ստուգում էր բոլոր ներս մտնողների փաստաթղթերը: Անցած անգամ չկար, թե գուցե կար, բայց չնկատեց, քանի որ Հիլմի փաշայի հետ էր:

Ոստիկանը ո՛չ ֆրանսերեն գիտեր, ո՛չ գերմաներեն: Ապուշ հայացքով անձնագիրը ընկեց, հետո գոռալով ինչ-որ մեկին կանչեց միջանցքի խորքից, անձնագիրը հանձնեց նրան և դեմքի դժկամ արտահայտությամբ հասկացրեց, որ սպասի: Առաջին անգամն էր, որ իր՝ գերմանական անձնագիրն այսպիսի ընդունելության էր արժանանում Պոլսում: Ստիպված եղավ կես ժամ սպասել: Վերջապես միջանցքի խորքից մի ծառայող եկավ և առաջնորդեց դեպի Բեդրի բեյի ընդունարանը: Այստեղ էլ մեկ ուրիշ տհաճ անակնկալ էր սպասվում.

- Ցավում եմ, տիկին, Բեդրի բեյը հենց նոր դուրս եկավ, - հայտնեց օգնականը: - Նա ձեզ սպասում էր ժամը տասին:

- Բայց մեղքն իմը չէ, ես նույնիսկ տասը բոպե առաջ էի եկել, ձեր ծառայողն ինձ սպասեցրեց:

- Ավա՜ղ, տիկին...

- Կարո՞ղ եմ նրան սպասել:

- Կարող եք, անշուշտ... սակայն չգիտեմ, թե երբ կվերադառնա, գալուց հետո էլ հայտնի չէ՝ կկարողանա՞ արդյոք ձեզ ընդունել...

Օգնականն, ասես, փորձեց արդարանալ.

- Հասկանում եք, այս օրերին այնքա՜ն գործ կա... Հիլմի փաշային եք պարտական, որ երեկ անմիջապես ընդունեց:

- Ինչպե՞ս եք համարձակվում այդպիսի բաներ խոսել, պարոն, իմ ամուսինը սպա է, հոյակապ բժիշկ, արդեն քանի՜ ամիս է անքուն ու անդադար աշխատում է ղինվորական հիվանդանոցում, բազմաթիվ կյանքեր է փրկել... Մի՞թե այդքանը բավական չէր, որպեսզի անմիջապես լսեիք իմ բողոքը, մի՞թե պիտի սնպայման Հիլմի փաշան միջամտեր:

- Իրավացի եք, տիկին, - խոնարհաբար պատասխանեց օգնականը: - Անշուշտ, միայն Հիլմի փաշայի ներկայությունը չէր պատճառը, մենք նաև այդ ամենը հաշվի առանք, երբ որոշեցինք անմիջապես ընդունել ձեզ:

Հետո սիրալիր ժպիտով ավելացրեց.

- Սպասեք, տիկին, մի քիչ էլ համբերեք:

Ուրիշ ելք չուներ, ստիպված էր սպասել, մանավանդ որ օգնականը խոստացավ բեյի վերադառնալուն պես հայտնել, որ ինքն այստեղ է:

Ժամերն ահավոր ծանր էին հոսում: Կեսօրն անց էր, երբ չդիմացավ այլևս և օգնականին նայեց հարցական: «Դեռ չի եկել, տիկին, ես խոստումս հիշում եմ... Բացի այդ, պարտավոր եմ»: Ժամը մեկն էր: Տարօրինակ է: Հիմա նկատեց, որ միակ այցելուն է, որ իրենից զատ ուրիշ սպասող չկա... Օ՜, տեղով սիրալիրություն է այս երիտասարդ օգնականը և բավական սահուն ֆրանսերեն է խոսում... Փոքրիկ մատուցարանին սուրճի գավաթ կար, փախլավա և լոխում, մի բաժակ պաղ ջուր և եգիպտական երկար ու բարակ գլանիկներ. «Աբդուլլահ»: Այս ամենը դրվեց նրա առջև: Հիմա հիշեց, որ առավոտ կանուխ ոչինչ չկերավ, շտապում էր շուտ տեղ հասնել... Կարողացավ միայն սուրճ խմել... Տնից դուրս գալիս մի խենթ հույս էր փայփայում. հնարավոր է նույնիսկ Ռուբենի հետ մի-

ասին վերադառնան տուն, և այդ ժամանակ մի փառահեղ նախաճաշ կպատրաստի... Իզուր տեղն է թուրքերի մասին այդքան վատ մտածում...

Զորավոր սուրճը և արևելյան քաղցր խմորեղենն իր առավոտյան լավատեսությունը հիշեցրին, որն անհետացել էր ոստիկանության չեմն անցնելուն պես: Հիմա նորից ծիլ էր տալիս: Զգիմացավ գայթակղությանը և նույնիսկ մի գլանիկ վառեց, մի բան, որ շատ հազվադեպ էր անում՝ միայն Ռուբենի ներկայությամբ... Զնայած ծխող կանանց այստեղ շատ ավելի հաճախ էր հանդիպում, քան Եվրոպայում:

Ժամը երկուսն անց էր, երբ ոստիկանական մի սպա հայտնվեց թղթապանակը ձեռքին և արագորեն մտավ Բեդրի բեյի աշխատասենյակը: Ուրեմն, վերադարձել է, փառք Աստծո... Աղերսող դեմքով նայեց օգնականին, որը գլխով արեց՝ հայացքն ուղղելով դեպի աշխատասենյակի դուռը: Համբերությո՛ւն, համբերությո՛ւն, քիչ մնաց... Համենայն դեպս հասցրեց մի հուսախաբություն ապրել. Ռուբենն այստեղ չէ. զգում է բնազդով... Ոչինչ, գոնե մի լավ լուր ասեն, հույս տան... Թող վաղը լինի, մյուս օրը, բայց վերադառնա ողջ-առողջ...

Իրար ետևից մարդիկ էին ելումուտ անում: Ոմանք գալիս և անվարան մտնում էին ներս, ոմանք էլ սպասում էին հնազանդ, որպեսզի օգնականն առաջնորդի: Երևում էր, որ բոլորն էլ ոստիկանության ծառայողներ էին: Միայն ինքն էր կողմնակի, սպասող, աղերսող...

Ժամը յոթը եկավ, և դարձյալ հույսի ոչ մի շող: Ընդունարանում գործնականորեկ ետուառաջ անող օգնականն արդեն չէր նայում իրեն: Ինքն այլևս չկար, գոյություն չուներ նրանց համար: Դիմացի պատից կախված մեծ ժամացույցը յոթն անց կես էր ազդարարում, երբ օգնականը վերջապես մոտեցավ և մեղավորությունը դեմքին ասաց.

- Ներողամիտ եղեք, տիկին, որ ձեզ այսքան սպասեցրինք, սակայն բեյը շատ է ցավում, որ այսօր չի կարող ձեզ ընդունել:

- Իսկ ի՞նչ լուր կա ամուսնուս վերաբերյալ, - ասես մի վերջին հույսից կառչելով հարցրեց նրան: - Պարզեցի՞ք, թե որտեղ է:

- Ոչինչ չեմ կարող ասել, տիկին... Բեյն ինքը ձեզ կհայտնի:

Օգնականի դեմքը ոչինչ չէր արտահայտում: Անիմաստ էր ուրիշ հարցեր տալը: Ոչ մի որոշակի բան նրանից չէիր լսի: Սակայն...

- Իսկ վա՞ղը... Բեյը ոչինչ չասա՞ց վաղվա համար:

- Ոչ, տիկին... Եթե նորություն եղավ, ես ինքս ձեզ կզանգեմ:

* * *

Այս գնացքը կարծես առաջ գնալու փոխարեն ետ է շարժվում: Բաժնեխցիկում թանձրացած օդն այլևս անկարելի էր շնչել: Խնդրեց, որ պատուհանը գոնե մի քանի բոպեով բացեն: «Արգելված է, դոկտորս, եթե տեսան, մեզ խստորեն կպատժեն»: Սակայն գաղափարը հավանաբար նրանց էլ հրապուրեց: Ավագն իր ստորադասին կարգադրեց հինգ բոպեով միջանցք դուրս գալ և ոստիկան սպա՛ տեսնելուն պես զգուշացնել: Արդեն երկու անգամ մտան խցիկ և

փաստաթղթերն ստուգեցին: Ամեն անգամ ավագը կնքված մի թուղթ էր մեկնում սպային: Երկու անգամ էլ նույն անդրադարձը եղավ. ուշադիր կարդալուց հետո, վերից վար լուռ զննում էին իրեն և անխոս հեռանում: Ի՞նչ էր գրված այդ թղթի վրա: Հարցնելն անիմաստ էր: Միևնույն է չէին ասի: Հատուկենտ բառերը չհաշված, ճամփորդում էին կատարյալ լռության մեջ, կարծես ամեն ինչ արդեն ասել ու վերջացրել էին: Մաքուր օդը սակայն լեզուները բացեց: Առաջինն ավագն էր, որ խոսեց: «Քաղցած չե՞ք, էֆենդիս»: Իհարկե, քաղցած էր: Նախորդ օրվա ընթրիքից հետո բերանը բան չէր դրել: Մի երկու ժամ առաջ ժանդարմներից մեկը դուրս եկավ և փարչով ջուր բերեց: Խմեցին երկուսով՝ ուղղակի պռունկից, իրեն էլ առաջարկեցին: Սակայն հրաժարվեց զուտ հիգիենիկ նկատառումներով. հայտնի չէ՝ ջուրը որտեղից է, անոթի մաքրությունն էլ խիստ կասկածելի էր, չասած այն մասին, որ արդեն նրանց բերանն էր դիպել: Սակայն հաճույքով մի բան կուտեր: Բայց որտեղի՞ց և ի՞նչ: Նրանք էլ ամբողջ օրը ոչինչ չեն կերել: «Գնացքը քիչ հետո կանգնելու է կայարանում, կարող ենք այնտեղ համեղ բաներ գտնել: Միայն թե...»: Ժանդարմը խեղճացավ: Պետք չէր իմաստուն լինել՝ կռահելու համար, թե ինչու խոսքը կիսատ մնաց: «Միայն թե ի՞նչ», - հարցրեց նրան: Ժանդարմի երեսը ակնկալիք հաճույքից չողաց: Գլուխը մի քիչ խոնարհելով, ներքևից վերև նայելով, ազդարարեց. «Միայն թե, էֆենդիս, մի քիչ դրամ է պետք, որպեսզի ձեզ վայել կերակուր ճարենք: Մեզ ընդամենը հաց ու պանիր են տալիս, այն էլ ոչ միշտ...»:

Մի դառը ժպիտ գծագրվեց Ռուբենի դեմքին: Այսպիսի լպիրշություն միայն Թուրքիայում կարող ես տեսնել: Բավական չէ, որ երկու միլիոն հայություն տեղահանել են, նրանց ունեցվածքը կողոպտել, հետո էլ չեն խորշում «գյավուրից» իրենց օրապահիկը մուրալ: Քիչ է զոհ լինել այս երկրում, պիտի նաև դահճիդ որկորը լցնես:

Ոստիկանն այդ ժպիտն ուրիշ կերպ մեկնաբանեց և միանգամից անցավ բուն նյութին. «Այդ կայարանը ես լավ գիտեմ, դոկտորս, այնտեղ հոյակապ ճաշարան կա... Դուք ինձ վստահեք, և այսօր համեղ բաներ կուտենք»:

Գնացքը Հերեքե կայարան հասնելով իսկապես կանգ առավ: Ժանդարմները դռան մոտ կանգնած անհամբեր մի ոտքից մյուսն էին ճոճվում:

Կայարանի ընդարձակ սրահում մի մաքուր ճաշարան կար: Հատկանիշ, որով անգամ մայրաքաղաքի ոչ բոլոր ճաշարաններն էին աչքի ընկնում: Դա ամենևին Թուրքերի արժանիքը չէր, այլ գերմանացիների, որոնք օրինակելի կարգուկանոն էին հաստատել երկաթուղու ամբողջ երկայնությամբ: Կայարանների աղյուսաշեն շենքերը նայելիս թվում էր, թե Գերմանիայում ես, սակայն շենքից անդին ընկած կեղտոտ ու անխնամ թաղերը, Թուրքական իրականությունից անբաժան համալները, քնձռոտ շները և անթիվ ու անհամար մուրացկաններն իսպառ ցրում էին այդ պատրանքը:

Ժանդարմների երջանկությանը չափ ու սահման չկար: Սեղանը միանգամից ծածկվեց զանազան համադամներով: «Դոկտորը եթե ցանկանում է, կարող է նաև օղի պատվիրել, - ոգևորված ասաց կրտսեր ժանդարմը և ափսոսանքով ավելացրեց. - Մեզ արգելված է ծառայության պահին...»: Ավագը, որ յուղոտ հարիսա-

յի երկրորդ ափսեն էր վերջացնում, լրացրեց ստորադասի առաջարկը («Ճիշտ է ասում, էֆենդիս, կարող եք նույնիսկ մի երկու շիշ վերցնել ձեզ հետ»), իսկ փայլեցնելու աստիճան լպստելուց հետո, յուրովի զարգացրեց այդ միտքը. «Էֆենդիս, երկար ճամփա ենք գնալու, հայտնի չէ, թե այսպիսի բախտավոր առիթ կունենա՞նք դարձյալ... Լավ կլիներ, որ մեզ հետ մի քանի օրվա մթերք վերցնեինք»:

Ժանդարմի «բարի» խորհուրդը մի կարևոր տեղեկություն էր պարունակում, որի համար թերևս արժեր մեկ օրվա ընթացքում երկու անգամ վճարել: «Երկա՜ր ճամփա...»: Երկա՞ր, թե՞ դանդաղ: Իսկապե՞ս Էնկյուրի են տանում իրեն... Քանի որ ինքն է վճարողը, ապա լիովին իրավունք ուներ հարցնելու.

- Ասում եք երկար, իսկ քանի՞ օր է տևելու:

- Դժվար է ասել, դոկտորս, - պատասխանեց ավագը: - Գնացքն ամեն վայրկյան կարող է կանգնել... Կանգնելիս էլ չգիտես, թե երբ է շարժվելու:

- Այո, էֆենդիս, ոչ ոք չի կարող ասել, թե որքան կտևի... Հինգ օր, յոթ օր, գուցե տասն օր...

- Իսկ մենք իսկապե՞ս Էնկյուրի ենք գնում:

- Երդվում եմ հինգ զավակներովս, էֆենդիս, հրամայված է ձեզ հասցնել մինչև այնտեղ, թղթում էլ այդպես է գրված:

- Իսկ հետո՞:

- Հետո չգիտեմ: Ձեզ պիտի հանձնենք այնտեղի ժանդարմներին ու վերադառնանք:

Հետո, նայելով Ռուբենի մտածկոտ դեմքին, ավելացրեց.

- Դուք պիտի գոհ լինեք, ձեր վիճակը դեռ լավ է, գնացքով հանգիստ ճամփորդում եք, հապա եթե մյուսներին տեսնեիք...

«Մյուսներն» ովքե՞ր էին, ուրիշ ո՞ւմ են ուղեկցել... Արդեն ամեն ինչ լսել էր, ամենազարհուրելի մանրամասները, և պատմողներն իրենք՝ թուրքերն էին... Իսկ սա կպատմի՞, կցանկանա՞ արդյոք, չի վարանի՞ ստորադասի ներկայությունից... Ջուզեց արագացնել դեպքերը, իսկապես երկար ճամփա ունեն կտրելու... Բացի այդ, մի հետաքրքիր տեսարան նրա ուշադրությունը գրավեց. պատկառելի տեսքով մի ծերունի փորձում էր կայարանի շենքը մտնել, սակայն մուտքի առջև կանգնած զինվորը չէր թողնում: Հետո հրացանը վրան ուղղելով սպառնաց և կոպտորեն հրեց: Ծերունին համառում էր, ձեռքով իրեն ցույց տալիս, ինչ-որ բան խնդրում: Տեսքն անխնամ էր, զգեստը տրորված ու փոշոտ, մորուքը՝ գզգզված: Այնուհանդերձ, իր բարձր հասակով, մտավորականի դեմքով աղդեցիկ կերպարանք ուներ:

Իրենից անկախ վեր կացավ և մոտեցավ դռանը:

- Ներողամիտ եղեք, պարոն հարյուրապետ, պատիվ տալով ասաց զինվորը, այս մուրացկանն ուզում է ձեզ մոտենալ, ասում է՝ ծանոթ եք:

- Այո, ծանոթ է, թողեք ներս գա, - կարգադրեց Ռուբենը:

- Ներող կլինեք, պարոն հարյուրապետ, բայց ինձ հրամայված է հայերին ներս չթողնել, - արդարացավ զինվորը:

Այդ պահին մի ձայն հնչեց Ռուբենի թիկունքից.

- Այստեղ հրամայողը ես եմ, ներս թողեք այդ մարդուն:

Ռուբենը շրջվեց և բարձրահասակ, շիկահեր ու կապուտաչյա մի տղամարդ տեսավ՝ գերմանական երկաթուղային համազգեստով: Նրա թուրքերենը սահուն էր, բայց օտար շեշտադրությամբ: Սիրալիր, Ռուբենին դիմեց.

- Վերջապես մի թուրք սպա տեսա, որ մարդկային վերաբերմունք է ցուցաբերում այս թշվառների հանդեպ:

Նա Ռուբենի ձեռքը սեղմեց և հեռացավ: Դեռևս պատերազմից առաջ թուրքական երկաթուղին հիմնականում աշխատեցնում էին գերմանացիները, իսկ հիմա ամբողջությամբ գտնվում էր գերմանական բանակի հսկողության տակ: Պատերազմի զարկերակն էր այս գիծը, հանձնել այն թուրքերի տնօրինությանը, կնշանակեր դատապարտել կատարյալ ձախողման:

- Ո՞վ էր այս մարդը, - հարցրեց Ծերունուն հայերեն:

Վերջինս վախեցած շուրջբոլորը նայեց, հետո մոտեցավ Ռուբենին և շշուկով ասաց.

- Կայարանապետն է...

Հետո նորից շուրջը նայեց.

- Հայերեն մի խոսեք, պարոն Զիլինկիրյան, վտանգավոր է...

Նա ցնցվեց և զարմացած նայեց Ծերունուն.

- Մենք ծանո՞թ ենք:

- Այո, վաղուց, բայց դուք չեք հիշի... Հինգ-վեց տարեկան էիք, երբ ձեր պատվարժան հայրիկը՝ Հովհաննես աղան ձեզ գրկած բերեց ինձ մոտ... Բարձր ջերմություն ունեիք...

Ռուբենը հուզված գրկեց Ծերունուն.

- Դոկտոր Դանիելյա՜ն...

Հետո վճռական հրավիրեց.

- Եկե՛ք, պատիվ արեք ճաշելու մեզ հետ:

- Ո՛չ, ո՛չ, ի՜նչ եք ասում, զավակս... Ժանդարմները որ տեսնեն չատ վատ կլինի ինձ համար... Ձեզ համար էլ...

- Սրանից ավելի վատ ի՞նչ կարող են անել... Եկե՛ք:

Իր պահապան հրեշտակները հետաքրքրված ու զարմացած դիտում էին այդ տեսարանը: Ռուբենը բժշկի թևը մտնելով գրեթե ստիպողաբար մոտեցրեց սեղանին, նստեցրեց և դիմեց ավագին.

- Ուրեմն, ասում էիք, որ մեզ սնունդի պաչար է պետք:

Ժանդարմի դեմքին հայտնված դժկամ ու խոժոռ արտահայտությունն անհետացավ, նա գրեթե խոնարհվելով պատասխանեց.

- Ճիշտ այդպես, էֆենդիս:

- Շատ լավ, ահա վերցրեք, ձեր ուզած գումարի կրկնապատիկն եմ տալիս... Մի լեցուն տոպրակ էլ այս պարոնի համար կբերեք:

Ձեռքի հարգալից շարժումով դոկտոր Դանիելյանին ցույց տվեց:

- Դոկտորս, խորհուրդ չեմ տա, այդ տոպրակը ձեռքից կխլեն: Կարող է նույնիսկ ավելի վատ վերջանալ, - արդարանալով բացատրեց ժանդարմը: - Ճիշտ կլինի, որ դրամ տաք, այդպես ավելի անվտանգ է:

Ժանդարմը գիտեր, թե ինչ էր ասում:

Լիքը լցված ափսեն դրվեց ծերունու առջև: Նա դդալը ձեռքին, մոլորված նայում էր ախորժալի բույրեր տարածող ապուրին: Քանի՞ օր, քանի՞ շաբաթ տաք կերակուր չէր կերել, մարդկային վերաբերմունք չէր տեսել: Արցունքներն սկսեցին տառապած երեսն ակոսել...

- Այս ի՜նչ արեցիք ինձ հետ, պարոն Զիլինկիրյան, ես արդեն մոռացել էի, որ մարդ եմ եղել... Ուղիղ մեկ ամիս առաջ էր, առավոտ կանուխ մտան մեր տները և երկու ժամ տվեցին պատրաստվելուն... Կատարյալ անակնկալ էր: Մենք գիտեինք, որ տեղահանում են ռուսական սահմանին մոտիկ գտնվող վիլայեթների հայերին, սակայն մենք Ռոդոստոյում ենք ապրում, Բուլղարիային ենք մոտիկ, մեր երկրի դաշնակիցը...

Ծերունին խոսում էր հայերեն, սակայն ժանդարմն ուշադիր լսում էր:

- Հինգ հազար հոգի հավաքեցին քաղաքից դուրս՝ Ռոդոստոյի ամբողջ հայությունը... Չգիտեմ, այդ հինգ հազարից քանիսն է հիմա ողջ...

Արցունքները նորից սկսեցին հոսել: Նա մի պահ լռեց, հետո հեծկլտոցից խեղդվելով շարունակեց.

- Իմ երկու թոռնուհիներին տարան: Հրեշտակի նման երկու գեղեցիկ աղջնակներ... Հայրը փորձեց պաշտպանել՝ տեղնուտեղը մորթեցին... Մայրը գիտակցությունը կորցրած տարածվել էր գետնին... Հետո զգացի, որ աքացի են տալիս կողերիս... Աչքերս բացեցի և ժանդարմին տեսա, որ պատրաստվում էր մի գնդակ արձակել ճակատիս...

Ծերունին մտացրիվ նայեց առջևը դրված ափսեին և սկսեց մեքենայորեն ուտել, ասես մենակ էր և իրեն ընդհանրապես նայող չկար: Հետո, հավանաբար, փորձելով պատմածի թելը գտնել, ավելացրեց.

- Օրհնվի այս գերմանացին, մեզնից շատերին փրկեց... Ասաց, թե իրեն բանվորներ են պետք... Բայց չգիտեմ, թե մինչև երբ կարող ենք մնալ նրա մոտ... Թուրքերին դուր չի գալիս... Եթե վերն Աստված կա, թող պատժի նրանց, որ այս չարիքները բերեցին մեր գլխին...

Ծերունին լռեց: Վերջապես գտել էր մեկին, որի առջև կարող էր սիրտը մի քիչ թեթևացնել: Այդքանն էլ բավական էր... Մենախոսության ամբողջ ընթացքում ժանդարմն ուշադիր նայում էր նրանց: Եթե նույնիսկ հայերեն չգիտեր, հրաշալի հասկացավ, թե խոսքն ինչի մասին է: Ոստիկանն արդեն եկել էր՝ պաշարով բեռնված: Նա ընդգծված քաղաքավարությամբ խնդրեց. «Դոկտորս, գուցե շտապենք, գնացքը քիչ հետո շարժվելու է»:

* * *

- Վստա՞հ ես, որ այստեղ է, - հարցրեց Հիլմի փաշան Բեդրի բեյին:

- Այո, փաշաս, առաջին անգամը չէ...

Կառքն ընթանում էր քաղաքի ասիական հատվածի նեղ ու կեղտոտ փողոցներից մեկով, որ գնալով ավելի էր նեղանում: Թվում էր, թե տների իրարահայաց ճակատներն ի վերջո կմերձենան ու իրար կդիպչեն: Վերջապես մտան փոքրիկ մի հրապարակ, որտեղ լույս կար ու մաքրություն: Կառքից իջնելով մոտեցան տնե-

րից մեկի անշուք մուտքին, որի առջև երկու հոգի նստած նարդի էին գցում և մերթ ընդ մերթ սուրճը ֆոթացնում: Բեդրի բեյին տեսնելուն պես, տեղներից ելան, իսկ նրանցից մեկը հաճոյակատարությամբ շտապեց դուռը բացել: Երկու հոդու էլ դռան մյուս կողմում տեսան, երկու ոստիկան, որ զգաստ կանդնեցին և պատվի առան: Նրանցից մեկն առաջ անցավ և Բեդրի բեյին խոնարհաբար դիմելով ասաց.

- Խնդրում եմ հետևեք ինձ:

Երկրորդ դուռը բացվեց և ոստիկանը հյուրերին առաջնորդեց մի նախասրահ, որտեղ բաղնիքի գաղջությունն էր զգացվում՝ արևելյան անուշահոտությամբ թեթևակիորեն բարեխառնված: Նախասրահն ապակեպատ միջնորմով բաժանված էր երկու մասի: Ձախ կողմը հատկացված էր մարմնի նրբին վայելքներին՝ քիմքին ու ստամոքսին: Այստեղ արդեն մի սեղան կար պատրաստ՝ առնվազն հինգ-վեց հոգու համար: Աջ կողմը հատկացված էր մարմնի արտաքին վայելքին ու մաքրությանը: Անուշահոտությունների սրվակներ, օճառներ, սրբիչներ, սպիտակեղեն և բաղնիքի զանազան պարագաներ պարունակող հսկա պահարանի կողքին սպիտակ խալաթ հագած երկու քիսաջի, հարմարավետ բազկաթոռներին ընկողմանած, նարգիլե էին ծխում: Բեդրի բեյը գլխի շարժումով խորքի զարդարուն դուռը ցույց տալով հարցրեց. «Այնտե՞ղ է»: Քիսաջիները նույնպես գլխի շարժումով հաստատեցին: Այնուհետև նրանցից մեկը հյուրերին օգնեց հանվելու, սաղափազարդ երսանկներ հագցրեց, գոտկատեղից վար սավան կապեց և առաջնորդեց բուն համամը:

Ջանգվածեղ մի տղամարդ տարածվել էր մարմարի հղկված ու բարձր ուղղանկյունի վրա: Ասես կաթոլիկ տաճարներում հանդիպող բարձր գերեզմաններին տեղադրված արձան լիներ: Չնայած մուտքից շատ հեռու չէր, բայց գոլորշու միջով դիտելիս թվում էր, թե նրա ճարպոտ ու մերկ մարմինը ձուլվել է քարին: Սակայն նա շարժվեց, գլուխը բարձրացրեց և ներս մտնողներին տեսնելով թանձր ու կրծքային ձայնով ասաց.

- Ողջույն իմ եղբայր Հիլմի փաշային: Դու գիտես, թե քեզ ինչպես եմ սիրում...

- Գիտեմ, Թալյաթ բեյ, այդ սերն է, որ ինձ համարձակություն տվեց գալ այստեղ և հանգիստդ խանգարել:

- Այդպես մի խոսիր, փաշաս, քեզ տեսնելն ինձ համար հազվագյուտ մի վայելք է... Կեցցես, Բեդրի, որ փաշային բերեցիր այստեղ:

Հետո պառկած տեղից ելավ, հաստ ու մազոտ ոտքերը կախ գցեց և ձեռքերը տարածելով ասաց.

- Գիտեմ ինչու ես եկել, փաշաս, անպայման կլսեմ քեզ, բայց մինչ այդ վայելենք այս հաճույքը...

Քիսաջիներն անմիջապես գործի անցան: Բարձրաստիճան մարմինները հիմնավորապես տրորելուց, օճառելուց և մի քանի անգամ ցողելուց հետո, թևերից բռնած տարան նախասրահ և պառկեցրին վաղօրոք պատրաստած հարմարավետ օթոցների վրա: Այստեղ նրանց օշարակներ և մրգեր մատուցվեցին: Թալյաթը, որ հաճույքից մռմռալով ագահորեն ըմպում էր, անսպասելի դիմեց Հիլմի փաշային.

- Ասա տեսնենք, փաշաս, ինչո՞վ կարող եմ օգնել քեզ:

- Թալյաթ բեյ, արժանավոր մարդու համար եմ եկել միջնորդելու, նույնիսկ շատ արժանավոր...

- Այո, գիտեմ, թե խոսքն ում մասին է: Իսկապես արժանավոր է... Իրավացի ես, նույնիսկ շատ արժանավոր:

- Օ, որքա՜ն ուրախ եմ, բեյս, որ համամիտ եք ինձ, որ արժանավոր մարդկանց գնահատել գիտեք...

- Այո, եղբայրս, արժանավորին գնահատել գիտենք...

- Ուրեմն, սիրելի բեյ, խնդրանքս դժվար չի լինի կատարել:

Թալյաթը, որ ուղղակի սափորից էր խմում, տեղավորեց այն կողքը դրված արծաթյա ընդարձակ մատուցարանին և գլուխն օրորելով ասաց.

- Դժվար կլինի, փաշաս, քո խնդրանքը կատարել, շա՜տ դժվար, գրեթե անկարելի:

- Բեյս, ներող կլինես, բայց չեմ հասկանում, ինչո՞վ պիտի դժվար լինի, եթե արժանավոր մեկն է, եթե օգտակար գործ է անում հայրենիքի համար... Հավանաբար Բեդրի բեյը քեզ ամեն ինչ չի պատմել:

Թալյաթը ծիրանը մեջտեղից կիսեց, ուշադիր նայեց ներսը, ասես ամբողջ գաղտնիքն այնտեղ էր թաքնված, հետո քահ-քահ ծիծաղելով դիմեց Բեդրի բեյին.

- Դե՛ ասա, Բեդրի, խոստովանիր, թե ինչու ամեն ինչ չես պատմել այդ դոկտորի մասին:

Բեդրի բեյը, որ իր թերասնված ու կմախքատիպ մարմնով ասես ոսկորների կույտ լիներ շքեղ գահավորակի վրա, խեղճացած պատասխանեց.

- Խնայեք, բեյս, մի ստիպեք...

- Սիրելի փաշա, - ծիրանի կորիզի հետ խաղալով ասաց Թալյաթը, - Բեդրին ինքը եկավ ինձ մոտ դոկտորի մասին տեղեկություններ հարցնելու:

Հետո կտրուկ դարձավ Բեդրիին.

- Դե, ասա, Բեդրի, քանի՞ թղթապանակ կարդացիր այն օրը ինձ մոտ...

- Ի՞նչ ասեմ, բեյս, արդեն ինքդ ասացիր:

- Չես հավատա, փաշա եղբայրս, - շարունակեց Թալյաթը: - Տասը տարի է այդ մարդը մեր ուշադրության կենտրոնում է:

- Ո՞ր մեղքերի համար, բեյս, - հարցրեց Հիլմի փաշան: - Ես նրան վաղուց գիտեմ, նա իր օսմանյան հայրենիքին նվիրված, օգտակար մարդ է, երանի մենք՝ թուրքերս, նրա նման մի տասը մտավորական ունենայինք:

- Ոսկի խոսքեր են, փաշա, երանի ունենայինք... Այո, անչափ օգտակար է, բայցև վտանգավոր, փաշա, անչափ վտանգավոր... Նա առաջնորդ լինելու բոլոր արժանիքներն ունի. փայլուն հռետոր է, խելացի է, համոզել գիտի և վերջապես հմայիչ մարդ է, նրա արտաքինը միայն վստահություն է ներշնչում:

- Եվ չափազանց պարկեշտ է, - լրացրեց Բեդրի բեյը:

- Չեմ հասկանում, եղբայրներ, - բացականչեց Հիլմի փաշան: - Դուք ինձանից ավելի՛ շատ գովեցիք նրան: Այդպիսի մարդուն ձեռքերի վրա պիտի պահենք, իսկ մենք նրան խաբեությամբ տնից հանում և աքսորում ենք:

- Հայերը պիտի պահեին, բայց չպահեցին... Եթե այդպիսի մարդը մեբուս դարձած լիներ, կուսակցության լիդեր կամ թեկուզ խմբագիր, շատ խնդիրներ

պիտի դներ մեր առջև, բարեբախտաբար հայերը նրա իսկական արժեքը չհասկացան, մենք էլ այնպես արեցինք, որպեսզի հայկական շրջանակներից հնարավորին չափ հեռու մնա:

- Բեյս, արդեն հայ չմնաց, որպեսզի ոտքի հանի:

- Հապա Պոլի՞սը, Իզմիրը... Չէ, մեղավորը ես եմ, պիտի երկու ամիս առաջ գնացած լիներ: Վերջին պահին անունը հանեցի ցուցակից, գերմանացիներից զգուշացա:

- Բեյս, իմաստուն բան ես արել, հիմա էլ հրաման տուր, որ հետ ուղարկեն: Հասկացիր, ես նրան կյանքովս եմ պարտական, նա իմ փոքր եղբայրն է...

Թալյաթն իր ծանր հայացքը հառեց Հիլմի փաշային.

- Ասում ես եղբայրդ է... Գիտեմ... Հապա Զոհրապն իմ եղբայրը չէ՞ր... Ավելին էր, քան եղբայրը... Ամբողջ մեջլիսը մի Զոհրապի հետ չեմ փոխի, բայց ձեռքս չդողաց, որովհետև այդպես էր պետք... Մի՞թե պետք է բացատրել...

Նա ձեռքը թափ տվեց, և մոտ մեկ րոպե լուռ նստել էր: Հետո գլուխը բարձրացրեց և ասաց.

- Հիլմի փաշա, հիմա հասկացա՞ր, որ քո խնդրանքը չեմ կարող կատարել, իրավունք չունեմ... Բաներ կան, որ մեղնից վեր են, դու լավ գիտես, թե ինչ եմ ասում: Բայց գիտես նաև, որ քեզ մերժել չեմ կարող. ես նրան հետ չեմ բերի, թող գնա այնտեղ, ուր որ պիտի գնա... Նրա մաղին առայժմ դիպչող չի լինի, մինչև որ տեսնենք, թե...

Թալյաթը լռեց և նորից հայացքը գցեց ցած:

- Մինչև ո՞ր..., - անհամարձակ հարցրեց Հիլմի փաշան:

- Մինչև որ տեսնենք, թե գերմանացիք ինչ կասեն:

- Իսկ ո՞ւր պիտի գնա:

- Շուտով կիմանաք, - պատասխանեց Թալյաթը:

* * *

Ի՞նչ պիտի անի, որ մինչև հիմա չի արել... Այս անիմաստ, անօգտակար, խուճապային խոսքերից ու վազքից զատ կա մի բան, որ կարող է մի հարվածով բացել հանգույցը: Թեկուզ աշխարհը լինի թշնամիդ, կա՛ այդ խոսքը, կա՛ այդ քայլը, պետք է գտնել: Ոչինչ որ մենակ ես, կարևորն արիությունդ չկորցնես:

Արդեն չորս օր անցավ, արդեն չորս օր է Ռուբենը բացակա է և ոչ մի լուր չունի նրանից: Եթե այն չարաբաստիկ գիշերն իմանար, որ չորս օր բացակայելու է, ոչ մի դեպքում չէր թողնի, որ գուրս գա: Եկել են, որ հիվանդի մոտ տանե՞ն... Կեսգիշերի՞ն, զինվա՞ծ... Կասեր, կգոռար, որ իրենց տանն էլ հիվանդ կա, որ իրենց զավակը հիվանդ է, և բժիշկ-հայրն իրավունք չունի կողքից հեռանալու: Մի՞թե չգիտեր, մի՞թե մոռացել էր... Գիտեր և չէր մոռացել, բայց գործեց ուրիշ կերպ, ասես ճակատագիրն ինքն էր եկել թուրք ժանդարմների կերպարանքով...

Մայրն էլ չկա և հայտնի չէ, թե երբ կհասնի: Խե՜ղճ կին, չթողեց, որ օր ծերության, չեզոք երկրում սպասի պատերազմի ավարտին. ստիպեց, որ իրենց

պես ելնի ու վտանգավոր ճանապարհը բռնի: Որտե՞ղ է հիմա, ո՞ր կայարանում... Աղոթենք, որ անվնաս տեղ հասնի: Շատ էր զղջում բնազդական իր մղումի համար՝ առաջին իսկ վտանգի դեպքում «մայրի՛կ» դոռալ:

Ի՞նչ պիտի անի, որ մինչև հիմա չի արել... Հիլմի փաշային զանգելը ճի՞շտ էր... Իհարկե, նա Ռուբենի թուրք բարեկամներից ամենաազդեցիկն է: Ի դեպ, Քենանը երբ իմացավ, որ նրան եմ դիմել, շիտակորեն ասաց. «Եթե Հիլմի փաշան մինչև հիմա հետ չի բերել Ռուբենին, ապա...»: Այսօր էլ խոսեց հետը, քիչ առաջ: Ինքը զանգեց, հարցնում էր, թե ինչով ավարտվեց հերթական հանդիպումը Բեդրի բեյի հետ... «Ապարդյուն... Այդ մարդն ամեն անգամ մի բան է ասում: Նախ ասաց, որ Ռուբենը Պոլսում է, հետո ասաց, որ մայրաքաղաքից հեռու է, ինչ-որ զինվորական հիվանդանոցում, իբր այնտեղ որակյալ բժիշկների մեծ պահանջ կա... Իսկ այսօր հայտնեց, թե ամենայն հավանականությամբ դոկտորին պիտի ուղարկեն Գերմանիա, իբր գերմանացիք շատ գոհ են նրա աշխատանքից...»: «Ինչպե՞ս հասկանալ, բեյ, - վրդովված հարցրեց նրան: - Երեկ ասում էիք, թե մենք բժիշկների կարիք ունենք, իսկ այսօր պարզվում է այնքան բժիշկ ունենք, որ կարող ենք նույնիսկ գերմանացիներին նվիրել»:

Միայն թե ողջ լինի, միայն թե նրան ոչինչ չպատահի: Նույնիսկ համաձայն է, որ վերադարձը մի քիչ ուշանա, բայց թող անվնաս հետ գա, և ինքը գիտի, թե այս անգամ ինչ է անելու: Իր անելիքը լա՜վ գիտի: Ո՛չ մի օր չի թողնելու, որ մնա այս արնախում վայրենիների մեջ: Ռենատան իրավացի էր, հիմա սկսեց հասկանալ, իսկ մինչ այդ զուսպ լռությամբ էր լսում նրան: Մի անգամ նույնիսկ չհամբերեց, խայթելու պես հարցրեց. «Չեմ հասկանում քեզ, Ռենատա, ինքդ ինչո՞ւ եկար այստեղ: Չէ որ մեր կացությունը բացարձակապես նույնն է: Ինձ խորհուրդ ես տալիս հեռանալ, բայց ինքդ մնում ես»: «Նույնը չէ, սիրելիս, իմ ամուսինը թուրք է, քոնը՝ հայ: Եվ հետո, հայրս մեծ գումարներ ունի դրած այս երկրում»:

Հիլմի փաշան ասում է, թե «անհոգ եղիր, Ռուբենը ողջ է»: «Ի՞նչ գիտես, փաշա, ենթադրո՞ւմ ես, թե ինչ-որ բան գիտես»: «Սիրտս է վկայում... Համենայն դեպս, եթե մի վատ բան լիներ, անմիջապես կիմանայինք»:

...Ի՞նչ պիտի աներ, որ չի արել մինչև հիմա: Ուրիշ ո՞ւմ պիտի դիմեր: Սեղանի վրա մի մեծ ցուցակ կա՝ տասներկու հոգի, քիչ թե շատ ազդեցիկ մարդիկ՝ դեպուտատներ, նախարարներ, զինվորականներ... Ուզիզ կեսը նույնիսկ հրաժարվեց մինչև վերջ լսել: Կամ արդեն գիտեին, կամ չէին ուզում իմանալ (որովհետև գիտեին, թե ինչ պիտի իմանան): Միանգամից կտրում էին խոսքը, անցնում ուրիշ նյութի, իսկ մեկ-երկուսը վերջում ավելացրին. «Կներեք, տիկին Զիլինկիրյան, դա մեր ուժերից վեր է»: Շնորհակալությո՛ւն, որ շիտակ եղաք, որ զուր հույսեր չտվեցիք: Մնացած վե՞ցը... Այսպես թե այնպես շարունակում են գոնե հետաքրքրվել, քաջալերել, խորհուրդներ տալ: Միայն Հիլմի փաշան է, որ իսկապես շարունակում է ինչ-որ բան անել:

Տասներկու հոգի և ոչ մեկ հայ: Իսկ հայերից ո՞ւմ կարող էր դիմել: Դեպուտատների՞ն, բայց նրանք վաղուց աքսորված են: Հատուկենտ անհատներ են մնացել քաղաքում, սակայն նրանք վախենում են անգամ տնից դուրս գալ, ո՞ւր

մնաց ուրիշի համար միջնորդեն: Հասկանում էր նրանց վիճակը և մեղադրել չէր կարող: Անգամ փոստի նախարար Ոսկան Մարտիկյանին չէր փորձել դիմել, որ իրենց զավակի կնքահայրն էր: Ահավոր ժամանակներ են, նույնիսկ թուրքերն են վախենում: Իրենք իրենցից: Կատարվում են նաև տարօրինակ բաներ: Օրինակ՝ Հիլմի փաշան, որ առաջին օրերին կտրականապես դեմ էր, որպեսզի մեր դեսպանատան օգնությամբ փորձեմ հետ բերել («Ոչ մի դեպքում, սա մեր ներքին հարցն է, դրանով դու կբարկացնես Թալյաթին, խնդիրն ավելի կբարդանա...»), այժմ ճիշտ հակառակն է ասում («Իսկ ինչո՞ւ չես փորձում գերմանական դեսպանատուն դիմել: Նրանց միջամտությունը պիտի որ անհետևանք չմնա: Չէ որ գերմանացի ես, նրանք պարտավոր են զբաղվել քո խնդիրներով : Բավական է, որ դեսպանը մեկ անգամ զանգի Թալյաթին...»):

Այո, գերմանական դեսպանատունն այս երկրի փաստացի տեր-տիրականն է... Միայն Հիլմի փաշայի առաջին օրվա խորհրդով չէր, որ չցանկացավ դնալ այնտեղ, այլև մի նրբին հանգամանք կար, արժանապատվության հարց: Գնալ և օգնություն խնդրել հայ ամուսնու համար, կնշանակեր մեղա գալ նրանց առջև... Բոլորը, առաջին իսկ օրվանից այդ էին ասում, միայն Հիլմի փաշան էր հետ պահում այդ քայլից... Իսկ հիմա ճիշտ հակառակն է ասում... Արդյոք սխա՞լ էր, որ նույն օրը, առավոտ կանուխ, չվազեց այնտեղ... Թերևս... Եվ շատ հնարավոր է Ռուբենն արդեն տանը լիներ: Հպարտությունը, գոռոզությունը թույլ չտվեց: Դա կնշանակեր նրանց ասել, թե դուք ճիշտ էիք... Թեկո՛ւզ: Ինչ կա որ...

Շրջեց տասներկու անուն պարունակող էջը, մյուս երեսին երեք անուն կարդաց.

1. Յոհան Ապել
2. Բարոն ֆոն Վանգենհայմ
3. Բարոն Կոնստանտին ֆոն Նոյրաթ

Առաջինն իր հորեղբորորդին է, թուրքական բանակի գլխավոր հրամանատար ֆոն դեր Գոլց փաշայի համհարզը, գերզբաղված մի երիտասարդ, որին ընդամենը մեկ անգամ կարողացավ տեսնել: «Ես քեզ չեմ մեղադրում այդ հայի հետ ամուսնանալուդ համար, բայց այստեղ գալուց առաջ պիտի անպայման խորհրդակցեիր ինձ հետ, - գրեթե հանդիմանելով ասաց նա: - Եվ եթե ինձ հարցրած լիներիր, ապա կասեի ո՛չ, ո՛չ և դարձյալ ոչ»: Հանդիպեցին նոյեմբերին, թուրքերն արդեն պատերազմում էին գերմանացիների կողքին: Յոհանը գտնում էր, որ թուրքերն ավելի շատ հոգսեր են ստեղծելու գերմանացիների համար, իսկ Էնվեր փաշայի մասին խոսում էր անթաքույց հեգնանքով, ասելով, որ եթե գերմանական բանակում լիներ, նույնիսկ ֆելդֆեբելի աստիճանին չէր արժանանա...

Բոլորովին վերջերս, մի տասն օր առաջ, փորձեց Յոհանին գտնել: Ուզում էր հրավիրել Լևոնի և Շամիրամի մկրտության հանդեսին, ի վերջո, մոտիկ ազգական է, հետո կարոտել էր իր հայրենակիցներին... Սակայն նրան գտնելը պարզապես անկարելի եղավ: Մանրամասնորեն հետաքրքրվում էին, թե ով է հարցնում, ինչի համար, և վերջում միայն ասացին, որ Պոլսում չէ և հայտնի չէ,

թե երբ կգա: Համենայն դեպս խնդրեց, որ վերադառնալուն պես զանգի իր զարմուհուն: Առ այսօր դեռ չի զանգել... Վաղվանից իսկ պետք է փնտրել նրան:

Երկրորդը՝ բարոն Ֆոն Վանգենհայմը, գերմանական դեսպանը, կայզերի (որը, տվյալ պահին, Թուրքերի համար, Ալլահից ավելի մեծ է) շուքն է Օսմանյան կայսրությունում, սակայն իր տիրոջից ավելի ամբարտավան և չափազանց անբարեհամբույր... Կաղանդի տոնին հրավիրված էին դեսպանատուն: Մուտքի մոտ այնպիսի խոժոռ դեմքով էր ընդունում հյուրերին, ասես սգո արարողության էր կանչել: Հետո, հանդիսության ընթացքում, մի պահ իրար կողք հայտնվեցին: «Ես կգերադասեի ձեզ Vaterland*-ում տեսնել, - վերջապես ժպտալով նկատեց դեսպանը: - Դուք այստեղի բնանկարին չեք պատշաճում, մանավանդ ձեր մազերի գույնով»: «Ի՞նչ արած, մազերս կներկեմ», - պատասխանեց նրան: Երկրորդ անգամ չէր ուզի տեսնել այդ մարդուն: Սակայն հիմա վիճակն ուրիշ է, պիտի հաղթահարի իր հակակրանքը: Գործն, անշուշտ, նրան չէր հասնի, եթե հյուպատոսն ավելի վատը չլիներ...

Կոնստանտին Ֆոն Նոյրաթ... Առաջին անգամ նրան հանդիպեց Պոլիս գալուց մի քանի օր հետո: Գնացել էր քաղաքացիական պարտքը կատարելու՝ գրանցվելու իր երկրի հյուպատոսարանում: Ռուբենի հետ էր: Նոյրաթը նրանց ընդունեց, մոտ կես ժամ հարցուփորձ արեց, թե Պոլսում ինչով է զբաղվելու և ամենայն սիրալիրությամբ պատրաստակամություն հայտնեց օգնել ամեն հարցում: Չափազանց համակրելի երիտասարդ էր, բարձրահասակ, գեղեցիկ և առնական դեմքով, աղնվականի հղկված շարժուձևով, թավ ու փափուկ ձայնով, որը կարող էիր ժամերով լսել ու չձանձրանալ:

Երկրորդ հանդիպումը տեղի ունեցավ գարնանը: Հազվագյուտ օրերից մեկն էր, երբ որոշեց ցերեկով մենակ դուրս գալ գնումներ անելու: Պիտի գնար հեռու՝ «Սամարիտեն» հանրախանութը՝ ֆրանսիական նորաձևության կենտրոնը:

Գնումներն արդեն վերջացրել ու տոպրակները ձեռքին դուրս էր գալիս, երբ վարորդի կաշվե բաճկոնով, կաշվե սաղավարտով և դեմքի մոտ կեսը ծածկող ակնոց դրած մի երիտասարդ նրբորեն դիպավ թևին և գերմաներեն ասաց.

- Ավտոմոբիլը սպասում է ձեզ, ֆրաու, բարեհաճեք նստել:

Վարորդը շնորհալի մի շարժումով խոնարհվեց և ձեռքով ցույց տվեց մայթի մոտ կանգնած մեքենան, որի դռանը Հոհենցոլեռների խրոխտ զինանշանն էր փայլում: Գերմաներենն այս օրերին հազվագյուտ երևույթ չէր Պոլսի փողոցներում, սակայն սիրալիր առաջարկին միացած հաճելի զգացմունքներ պատճառեց:

- Շնորհակալ եմ, պարոն, սակայն ո՞ւմ հետ պատիվ ունեմ խոսելու:

Երիտասարդը հուսահատական մի շարժում արեց.

- Այդպես էլ գիտեի, որ ինձ անմիջապես մոռանալու եք...

- Բարոն Ֆոն Նոյրա՛թ, բացականչեց Յաննին մի պահ ուշադիր զննելուց հետո:

- Այո, նույնինքը, - պատասխանեց «վարորդը»՝ սաղավարտն ու ակնոցը

* Հայրենիք (գերմ.):

հանելով: - Ես վշտացած եմ, տիկին դուք ինձ սպանեցիք վերջնականապես:

- Օ՜, ներող կլինեք, բարոն, որ ձեզ միանգամից չճանաչեցի... Մեղավորն այդ ակնոցն էր և սաղավարտը:

- Հրամայեք, տիկին, ո՞ւր կկամենայիք գնալ:

- Ընդամենը տուն:

Զափազանց գոհ էր, որ բախտն այդպես ժպտաց, թե ոչ, պիտի կանգներ հանրախանութի խճողված մայթին և փորձեր կառք վարձել:

- Եղա՛վ, տիկին, հրամանն ընդունված է... Միայն թե ափսոս, որ ձեր տունը մոտիկ է... Ես կուզեի ձեր ներկայությունը մի քիչ ավելին վայելել: Եթե չեք առարկում, մինչև ձեր տուն հասնելը մի քանի պտույտ անենք այս քաղաքի գեղատեսիլ վայրերում...

- Պայմանով, որ շատ չհեռանանք մեր թաղից և որ դա երկար չտևի:

- Մի մտահոգվեք, տիկին, ամենաուշը կես ժամից տանը կլինեք:

Ավտոմոբիլը խրոխտ աղմուկով կտրեց-անցավ քաղաքի եվրոպական թաղերը և բարձրացավ Շիշլի: Այստեղ մի գեղեցիկ ծառուղի մտավ և քիչ հետո կանգ առավ:

- Գիտե՞ք, թե ինչ կա այս ծառերից անդին, - հարցրեց Նոյրաթը:

- Ոչ, քաղաքին դեռ չեմ հասցրել ծանոթանալ:

- Գերեզմանոց է, - ժպիտը դեմքին ասաց Նոյրաթը:

- Դեռ կանուխ չէ՞ մեզ համար այստեղ գալ:

- Անհոգ եղեք, այդ վտանգը մեզ չի սպառնում:

- Ինչո՞ւ:

- Որովհետև սա հայկական գերեզմանոց է:

Ժպիտն անհետացավ Յաննիի դեմքից.

- Լսեք, բարոն, ինչո՞ւ որոշեցիք այստեղ գալ, մի՞թե սա է գեղատեսիլ վայրը...

- Տիկին, այստեղ եվրոպական գեղեցիկ և մաքուր սրճարաններ կան, սիրով կհրավիրեի ձեզ, սակայն պատկերացնո՞ւմ եք, թե ինչպիսի նյութ կտայի պարապ բերաններին...

- Իմ ամուսինն առաջադեմ մարդ է, այդպիսի բամբասանքներին ականջ չի դնի:

- Հնարավոր է, բայց դուք չգիտեք այս կեղծ եվրոպական, կեղծ արևելյան քաղաքի սոսկալի բարքերը... Ձեր ցորենագույն մաղերը, ձեր սլացիկ հասակը, ձեր գեղեցկությունը և ընդհանրապես ձեր ներկայությունը տակնուվրա է արել այս քաղաքը, մանավանդ նրանց, ովքեր հույս ունեն իրենց վերջին հանգրվանը գտնել այս կիպարիսների ետևում... Մանավանդ դրանց իգական մասը, դուք դարձել եք այդ կանանց աչքի փուշը, դուք ներխուժել եք նրանց տարածքները և նրանց Ապոլոնին խլել... Նրանք ամեն ինչ կարող են ներել՝ ձեր աղնվական ծագումը, ձեր բացառիկ գեղեցկությունը, սակայն ձեր մաղերը... Այդ մեկը ներել չեն կարող...

Յաննին հիշեց Պոլիս գալու առաջին օրերը, երբ մեկ շաբաթ ապրեցին Սիլիվրիում: Ռուբենին կարոտել էին, անշուշտ, սակայն ինքն էր ուշադրության

կենտրոնում: Հաջորդ օրն առավոտյան, երբ սանրվում էր հայելու առջև, Ռուբենի քույրը մոտեցավ և իր օգնությունն առաջարկեց: Սովորաբար մենակ էր սանրվում, սակայն չուզեց նրան մերժել... Եվ տեսնում էր, թե սև ու խոշոր աչքերով այդ աղջիկն ինչպիսի հիացմունքով էր դիպչում իր մազերին: Նա չոյում էր, դանդաղ սահեցնում մատների արանքով: Նրա աչքերում զարմանալի հրճվանք կար, մանկական անզուսպ մի ուրախություն: Այդպես հրճվում են բացառիկ գեղեցկություն տեսնելիս:

- Որտեղի՞ց գիտեք այդ բաները և ինչո՞ւ եք այդպիսի մռայլ գույներով ներկայացնում:

- Տիկին, նախ մեր պարտականությունն է՝ ամեն ինչ իմանալ մեր քաղաքացիների մասին, և հետո, ձեր պարագայում, սլետք չէ առանձնապես ջանք թափել, լուրերն իրենք են հասնում մեզ:

- Դատելով ձեր խոսքերից, մեր հյուպատոսարանը շատ չի տարբերվում ձեր ասած չար ու նախանձ կանանցից, այն տարբերությամբ, որ նրանք բամբասանքներ են տարածում, իսկ դուք հավաքում եք և դրա համար ռոճիկ ստանում, պարգևներ, պատիվներ...

- Տիկին, դուք անգութ եք... Մի կարևոր տարբերության մասին չխոսեցիք. նրանք այդ լուրերը տարածում են նախանձից մղված, ձեզ արատավորելու, վնասելու նպատակով, մենք այդ լուրերը հավաքում ենք բարի նպատակներով՝ մեր քաղաքացիներին հավանական վտանգներից պաշտպանելու համար:

- Իսկ ի՞նչ վտանգ կարող է սպառնալ:

- Ամեն տեսակի. մանավանդ ձեր ամուսնուն և ձեզ՝ ամուսնու պատճառով... Այս երկիրը տեղով վտանգ է:

- Հիմա վտանգն ամենուր է, մանավանդ Եվրոպայում:

- Ձեմ առարկում, սակայն այստեղ միշտ վտանգավոր է եղել, հատկապես հայերի համար: Մի՞թե չգիտեիք այդ մասին:

- Ես գիտեի և այստեղ գալով ուրիշ բաներ էլ իմացա:

- Եվ այդքանից հետո շարունակում եք հանգիստ ապրե՞լ այստեղ:

- Ես հանգիստ եմ իմ ամուսնու, իմ երեխաների կողքին...

- Հուսամ գիտեք, թե ինչ է կատարվում գավառներում հայերի հետ...

Յաննին լուռ էր:

- Ձեք կարող չիմանալ, արդեն բոլորը գիտեն այդ մասին... Եվ լավ իմացեք, դա սկիզբն է, վաղ թե ուշ հրդեհը հասնելու է Պոլիս:

- Եթե գիտեիք այդ մասին, ինչո՞ւ չբռնեցիք թուրքի ձեռքը, - պոռթկաց Յաննին: .

- Ավա՜ղ, մենք չգիտեինք, - արդարացավ Նոյրաթը: - Մենք փաստի առջև հայտնվեցինք:

- Հիմա էլ ուշ չէ:

- Մեր կարելին անում ենք, սակայն ժամանակները սոսկալի են, պատերազմ է, հասկացեք:

- Հասկանում եմ, բայց ինչո՞ւ որոշեցիք այդ մասին խոսել հատկապես ինձ հետ:

- Այստեղ ապրող բոլոր գերմանացիների հետ եմ խոսում այդ մասին, սակայն ձեր պարագան մի փոքր տարբեր է. դուք հայերի հետ եք կապել ձեր ճակատագիրը, հետևաբար ձեզ սպառնացող վտանգն առավել հավանական է, և հետո...

- Հետո ի՞նչ, - նյարդային հետաքրքրությամբ հարցրեց Յաննին:

- Հետո այն, որ ձեր դեպքում պաշտոնական շահագրգռության կողքին կա նաև անձնականը, և ես դժվարանում եմ որոշել, թե դրանցից ո՞րն է ավելի ուժգին:

- Ահա թե ի՜նչ... Կարո՞ղ եմ սա ընդունել որպես...

- Ընդունեք առայժմ որպես ջերմ համակրանքի արտահայտություն մի մարդու կողմից, որը չի կարող անտարբեր նայել, թե ինչ վտանգներ են կուտակվել ձեր գլխին: Ձեք կարող ժխտել, թե այդպես չէ:

- Ձեմ ժխտում, սակայն ի՞նչ ելք եք տեսնում:

- Ընդամենը մեկ ելք. հնարավորին չափ շուտ հեռանալ այստեղից: Երեխաներին առնել ու հեռանալ: Ես ձեզ կօգնեմ: Պարտավոր եմ օգնել... Նաև ի պաշտոնե:

- Իսկ ամուսի՞նս:

- Ամուսինդ, ցավոք սրտի, առայժմ չի կարող, - աննկատելիորեն «դու»-ին անցնելով, պատասխանեց Նոյրաթը: - Նա բժիշկ է, սպա: Սակայն նրան էլ կարելի է փրկել... Ձեր մեկնելուց հետո:

Յաննին գլխիկոր նստել էր: Մի երկար լռություն տիրեց: Նոյրաթը կարծես չէր շտապում պատասխանը լսել: Նա ծույլ շարժումներով մի ծխախոտ վառեց և հայացքն անորոշ կետի հառած սկսեց քուլաներ արձակել:

- Ես հասկանում եմ ձեր մտահոգությունը... Շատ շնորհակալ եմ... Բայց իրավունք չունեմ, չեմ կարող նրա կողքից հեռանալ...

- Ֆրաու Ապել...

- Ջիլինկիրյան, - գրեթե անկիրք ձայնով ճչտեց Յաննին:

- Թող այդպես լինի... Ֆրաու Ջիլինկիրյան, զգացմունքները մի կողմ դրեք, հիմա սիրավեպի ժամանակը չէ:

- Ավա՜ղ, իրավացի եք, և ես հիմա զգացմունքներով չեմ առաջնորդվում, այլ սառը տրամաբանությամբ:

- Հետաքրքիր է, եթե գաղտնիք չէ:

- Ամենևին, - պատասխանեց Յաննին: - Գավառներում սկսված կոտորածների մասին մենք գիտենք, ամեն օր այդ մասին ենք խոսում... Սարսափահար... Շշուկով... Ենթադրում ենք նաև, որ այդ «հրդեհը», ինչպես ասացիք, վաղ թե ուշ հասնելու է Պոլիս... Հայերը գիտե՞ք ինչ են ասում. «Թուրքերը պատեհ առիթի են սպասում»: Եվ այդ առիթը հավանաբար կունենան:

- Ուրեմն, առավելևս պիտի շտապեք փրկվել:

- Ընդհակառակը, առավելևս պարտավոր եմ մնալ այստեղ և վտանգի պահին նրա կողքին լինել:

- Որպեսզի ի՞նչ անեք, - զարմացած հարցրեց Նոյրաթը:

- Որպեսզի թիկունք լինեմ նրան: Թուրքերը չեն համարձակվի մտնել գերմանական քաղաքացու տունը:

.

- Օ, միամի՜տ երեխա, - գլուխն օրորելով ասաց Նոյրաթը: - Ափսո՜ս, որ իրավունք չունեմ քեզ ամեն ինչ ասելու... Սակայն մի երկու փաստ կբերեմ, որպեսզի իսպառ ցրվեն քո պատրանքները գերմանական անձնագրի վերաբերյալ այս երկրում: Եթե մենք թուրքերի կողքին չլինեինք, ռուսներն ու ֆրանսիացիք արդեն կուլ տված կլինեին նրանց, սակայն դա չի խանգարում, որպեսզի այս Թուրքիայի որևէ անկյունում գերմանական քաղաքացի չսպանեն. միսիոներներ, առևտրականներ, բժիշկներ, ինժեներներ...

- Եվ դուք իսկապե՞ս չեք կարող մեր քաղաքացիների կյանքը պաշտպանել այստեղ, - թերահավատ հարցրեց Յաննին:

- Թուրքերն ամեն անգամ մեղքը գցում են մոլեռանդ ամբոխի, քրդերի կամ հենց հայերի վրա և ներողություն խնդրում... Վաղն այդ նույն ամբոխը կարող է խժդժություններ սարքել այստեղ, դրա զոհը, Աստված մի արասցե, կարող եք լինել նաև դուք, մենք անմիջապես կբողոքենք և հերթական ներողությունը կլսենք նրանցից... Բոլոր դեպքերում պիտի գաք և մեզնից օգնություն հայցեք, ուրեմն, ինչո՞ւ ուշացնել:

- Դուք գերմանական բոլոր քաղաքացիների ճակատագրով եք այսպես մտահոգվա՞ծ, - հարցրեց Յաննին որոշ լռությունից հետո:

- Ոչ, առայժմ միայն ձեզ եմ զգուշացնում:

- Ինչո՞ւ:

- Որովհետև ամենամեծ վտանգը ձեր գլխին է կախված: Բացի այդ, չէի ուզի, որ ձեզ որևէ վատ բան պատահեր:

Երբ արդեն տուն էր հասել և պիտի իջներ, հյուպատոսը խնդրեց.

- Ֆրաու Զիլինկիրյան, չէի ցանկանա, որ մեր զրույցի մասին պատմեիք ձեր ամուսնուն:

Նախազգուշացումն ավելորդ էր, քանզի որոշել էր Ռուբենին ոչինչ չասել, որովհետև նրան այստեղ մենակ թողնելու մասին խոսք լինել չէր կարող: Նույն օրը երեկոյան դարձյալ այդ նյութն էր արծարծվում. գավառներից եկող սոսկալի լուրերը: Ռուբենը, որ սկզբում ցնցված էր, ցավից քարացած, այժմ ընկնում էր անզգայության մեջ, հետո ասես արթնանում և սկսում հույս ներշնչել իրեն՝ Յաննիին, ասելով, թե չնայած սոսկալի կորուստներին, այնուամենայնիվ, փրկության դուռ պիտի բացվի հայերի համար... Ամենածանր զրույցներից հետո կարող էր մոտենալ, քնքշորեն համբուրել և այնպես ժպտալ, որ սկսում էիր հավատալ, թե Արդարն ու Բարին վերջապես պիտի մի օր հաղթանակեն: Շոշափելի ուժ չկար նրա ձեռքին, այլ միայն հավատ, բայց դա բավական էր քաջալերելու համար: Մինչդեռ Նոյրաթը, որ նյութական ամենահզոր ուժի ներկայացուցիչն էր և մի խոսքով, անգամ լուռ հայացքով ապահովություն կարող էր ներշնչել, խուճապ է սերմանում և հուսահատություն:

Մեղադրելու ցանկություն չուներ Նոյրաթին: Գուցե իսկապես ձգտում է բարի գործ անել, երևում է նաև, որ այդ բարությունը դուրս է գալիս պաշտոնական պարտականությունների շրջանակներից, որ դա համակրանքից ավելին է... (Համենայն դեպս շնորհակալ է, որ նա ազնվականին պատշաճ զսպվածություն ցուցաբերեց և չգռեհկացրեց իրենց հանդիպումը սիրո խոստովանություն-

ներով), սակայն նա մի բան չի հասկանում, մոտալուտ աղետի զգացումն ավելի է համախմբում ազնիվ հոգիները, ստիպում ավելի մոտիկ լինել յուրայիններին: Յուրայի՞ն:.. Այսինքն՝ Նոյրաթն իրավացի էր յուրովի, նա իր հետ խոսեց որպես գերմանացի, մոռանալով, որ ինքը նաև հայ է... Այո, հիմա առավել հստակությամբ զգաց, որ այսուհետ ընդմիշտ ստանձնել է երկրորդ ինքնությունը և առաջին իսկ կամ-կամի դեպքում նախընտրեց երկրորդը: Եվ այդ ընտրությունը կատարվեց բնազդական մղումով, ինքնին, կշեռքի վրա չդրվեց մեկը կամ մյուսը: Դա նրա ներքինն էր, նրա գերմանական հարազատ էությունը՝ հարստացած մի նոր՝ հայկական էությամբ, որ նույնքան հարազատ էր... Իսկ տվյալ պահին գուցե ավելի հարազատ, որովհետև վտանգված էր... Ահա ինչու հիմա ավելի հայ էր, քան գերմանացի: Նշանակում է դուրսն էլ պետք է համապատասխաներ ներսին:

Հաջորդ օրը գնաց Բերա, Մեծ փողոցը, Monsieur Joseph-ի մոտ...

- Տիկին, ինձ ստիպում եք ոճրագործություն կատարել, - ասաց մսյո Ժոզեֆը՝ նրա մազերը մասունքի պես բռնելով: - Հավանաբար, սխալ լսեցի, բարի եղեք կրկնել:

- Ոչ, դուք ճիշտ լսեցիք, խնդրում եմ մազերս սև ներկեք, - բառերը մեկ առ մեկ արտաբերեց Յաննին:

- Մադամ Ժերմեն, հապա այստեղ եկեք, բացատրեք, որ իրավունք չունի այդպիսի բան պահանջելու ինձնից... Դա հանցագործություն է բնության դեմ: Ինչպե՞ս կարող եմ այս հրաշքը փչացնել: Գուցե լավ մտածեք, տիկին, գուցե փոխեք ձեր մտադրությունը:

- Ես երկար եմ մտածել, մսյո Ժոզեֆ, խնդրում եմ սև ներկել:

- Տեր Աստված, - հոգոց հանեց մսյո Ժոզեֆը: - Կանացի քմայքներ շատ եմ տեսել, բայց այսպիսի՜ն... Պոլսի բոլոր գեղեցիկ կանայք իմ հաճախորդն են, տիկին, նրանք ամեն ինչ կտային, որպեսզի այսպիսի մազեր ունենային, հիմա դուք եկել՝ Աստծո այս պարգևից հրաժարվում եք...

Monsieur Joseph-ը Պոլսով մեկ հայտնի կանացի վարսավիր էր: Ասում էին, թե Փարիզից է եկել, թե ֆրանսիացի է, ոմանք էլ պնդում էին, թե ընդամենը հույն է և հայտնի չէ որտեղից է եկել: Սակայն դա չէր կարևորը, այլ որ մայրաքաղաքի բոլոր բարձրաշխարհիկ կանայք նրա հաճախորդն էին: Հիմա կանգնել էր Յաննիի թիկունքում, նրա արձակ ու երկար մազերը հովհարաձև տարածել ու մերթ հայելու մեջ էր նայում, մերթ իր առջևը:

- Դուք պահանջում եք, որ լույսը հանգցնեմ և տեղը խավար հաստատեմ... Է՛հ, ի՞նչ արած, կանեմ, եթե պահանջում եք...

Monsieur Joseph-ն իր գործի վարպետն էր: Մեկ ժամ հետո Յաննին ասես մեկ ուրիշին տեսներ հայելու մեջ: Դեմքը երկարել ու հավաքվել էր մազերի սև շրջանակի մեջ, դիմագծերն ավելի էին նրբացել: Մսյո Ժոզեֆը թիկունքից փորձում էր ինչ-որ ձև տալ մազերին, հետո թողեց ու ասաց.

- Այսպես ազատ, ուսերն ի վար թափեք... Հրաշալի կլինի...

Եվ ավելացրեց.

- Զարմանալի է... Սև մազերով դուք դարձյալ գեղեցիկ եք, մի ուրիշ գեղեցկությամբ... Համենայն դեպս, հիշեք, տիկին, եթե ցանկություն ունենաք ձեր

նախկին գույնը վերականգնել, առանց վարանելու եկեք, անվճար կանեմ:

Որոշեց ոտքով վերադառնալ տուն: Մանավանդ որ հեռու չէր: Առաջվա պես շարունակում էին նայել: Երբեմն ընդգծված ուշադրությամբ և որոշ տարածություն պահպանելով, այնպես, ինչպես եվրոպացիներին կնայեին: Ստացվում էր, որ մեկ ուրիշ կնոջ, (դարձյալ եվրոպացի) կերպար էր մարմնավորում, ասես հիմա, տուն վերադառնալուն պես այդ սև մազերը պիտի հանի կեղծամի պես և նորից իրեն վերադտնի... Այնուամենայնիվ գոհ էր, քանզի այսպես ավելի էր մոտեցել իր երկրորդ՝ հայկական էությանը:

Երեկոյան անհամբեր սպասում էր Ռուբենին: Բարեբախտաբար այդ օրը չուշացավ: Անմիջապես նկատեց փոփոխությունը. «Դու բարբարոս ես, Յաննի, այդ ի՞նչ ես արել մազերիդ հետ»: «Չես հավանո՞ւմ»: «Եթե առաջին անգամ այս մազերով տեսած լինեի, քեզ չէի սիրահարվի», - ասաց Ռուբենը կատակով: «Ուրեմն, ճիշտ էր ներկելը... Ստացվում է, որ մազերիս համար ես ինձ սիրել»: «Անգութ մի եղիր, Յաննի, հեռվից ի՞նչ իմանայի, որ այդպիսի մեծ սիրտ ունես»: «Այս մազերով քո քույրերի նման դարձա»: «Այո, - համաձայնեց Ռուբենը՝ հայելու մեջ նայելով: - Հիմա կարծես քույր ու եղբայր դարձանք»: Հետո հանկարծ ինչ-որ բան հիշեց ու ասաց. «Լսիր, ինչպիսի՜ զուգադիպություն: Այսօր մեր «Կոդակի» համար ապակիներ գնեցի, ափսոս, արդեն ուշ է, մթնում է, վաղն առավոտյան քեզ կնկարեմ այս մազերով»:

Տասը նկար արեց, բայց հավանեց միայն մեկը: Ահա այդ նկարը, շրջանակված, դրել է սեղանին, որպեսզի ամեն օր տեսնի. գլուխը մի քիչ թեքել է, դեմքին տխրություն կա, որ դուր է գալիս Ռուբենին, մազերն արձակ թափվում են ուսերն ի վար... Տուփի մեջ տասներկու ապակի կար. տասը նկարեց, մեկը լույս տեսավ, իսկ այն մեկը... Այդ վերջին ապակիով Վարուժանին նկարեց: Այդ օրն անսպասելի իրենց տուն եկավ...

* * *

...Երեկոյան անսպասելի Վարուժանը եկավ: Երևում էր, որ հուզված է, նույնիսկ տակնուվրա եղած, բայց Յաննիին տեսնելով տիրապետեց իրեն և իր մշտական կնամեծար սիրալիրությամբ ձեռքը համբուրեց: Յաննին խորամանկ ժպիտով նայեց նրան, հետո Ռուբենին աչքով արեց և շշուկով ասաց. «Զնկատեց»: Ռուբենն, ի պատասխան ժպտալով, հյուրին առաջնորդեց ներս և ասաց.

- Ճիշտ ժամանակին եկար, Դանիել, մեզ հետ կընթրես: Ափսոս, որ մենակ ես:

- Ոչ, ոչ, Ռուբեն, ընդամենը մի քանի րոպեով մտա... Պարզապես այս կողմերն էի, կներես, որ առանց ժամադրության եմ եկել...

- Եղբայր, ի՞նչ ժամադրություն... Ես քեզ բաց չեմ թողնի, և խնդրում եմ չասես, թե այս երեկո կարևոր գործեր ունես:

Վարուժանն, իսկապես, խռովահույզ վիճակում էր և, անշուշտ, եկել էր խոսելու, սիրտը թեթևացնելու համար: Վաղուց էր նկատել, որ նրա առնական տողերի տակ մանկական զգայուն, խոցվող մի սիրտ կա: Սիամանթոն էլ նույնն էր:

Որքան էլ անսպասելի էր՝ ընթրիքն անցավ զվարթ մթնոլորտում: Թրա-

կիր կարմիր գինին հաճույքով խմվում էր և չէր արբեցնում: Արդեն բավական ժամանակ էր անցել, երբ Վարուժանը գլուխն օրորելով ասաց.

- Լսիր, Ռուբեն, որքա՜ն անուշադիր եմ, հիմա նկատեցի...

- Հավանո՞ւմ ես:

- Ինչպե՞ս ասեմ... Միայն թե չթարգմանես... Հեթանոս աստվածուհին երկնքից իջավ ու դարձավ հողեղեն, բայց գեղեցկությունը մնաց:

- Դա է կարևոր... Եվ ավելի մարդկային:

Յաննին հասկացավ, թե ինչի մասին են խոսում և պահանջեց, որ թարգմանեն: Վարուժանը, մի փոքր նեղված, կատարեց նրա պահանջը: Յաննին հիացած էր.

- Շնորհակալ եմ, Դանիել, շատ ճիշտ ես նկատել. աստվածները հիմա մարդկանց լքել են, ահա ինչու գերադասում եմ ձեր կողքին լինել:

Վարուժանը, յուրովի հասկանալով, տեղից ելավ և նորից համբուրեց նրա ձեռքը:

Ընթրիքից հետո հյուրասրահում մնացին երկուսով: Վարուժանը մի պահ Այվազովսկու ծովանկարներն էր դիտում, հետո կտրուկ շրջվելով ասաց.

- Ռուբեն, ես շատ անհանգիստ եմ... Սարսափելի լուրեր են հասնում ինձ... Հայկական գյուղերն ամբողջությամբ դատարկվել են, քաղաքները նույնպես, ասում են, թե գավառներում այլևս հայ չի մնացել:

- Նոր լսեցի՞ր այդ մասին:

- Ոչ, մի երկու շաբաթ առաջ: Սկզբում կարծեցի, թե չափազանցություն է, նույնիսկ հավատս չէր գալիս: Հետո մտածեցի, թե առանձին պատահարներ են, իսկ հիմա պարզվում է, որ այս ամենի ետևը պետությունն է:

- Այս երկրում հայերին միշտ մորթել են պետության հավանությամբ, եթե նույնիսկ առանձին պատահարներ են եղել:

- Սակայն ամբողջ հայությունն է տեղահանվում:

- Առայժմ ամբողջը չէ... Պոլիսը կա, շրջակայքը, բայց հնարավոր է մենք էլ պատուհասվենք:

- Այդ մեկն անկարելի է, Ռուբեն, այստեղ բազմաթիվ եվրոպացիներ կան, նրանց ներկայությունից կզգուշանան:

- Աբդուլ-Համիդն զգուշացա՞վ, երբ քսան հազար հայ կոտորեց այստեղ, այդ նույն դեսպանների ներկայությամբ:

- Դա վաղուց էր և հետո «Բանկ օտոմանը» կար մեջտեղը:

- Իսկ հիմա պատերազմը կա:

Վարուժանն ընկճված էր:

- Պետք է մի բան անել, այսպես չի լինի:

- Ինչ-որ քայլեր արվում են: Զոհրապը Թալյաթի մոտ է եղել մի քանի անգամ: Նա հերքել է, ասելով, թե ոչ մի բռնություն չկա, թե եղածը սովորական տեղահանություն է վասն մեր իսկ ապահովության:

- Հապա այս լուրե՞րը... Ո՞վ է ճիշտ, ո՞ւմ հավատանք, - շփոթված հարցրեց Վարուժանը:

- Կարծում եմ լուրերին:

Վարուժանը լուռ սկսեց ետուառաջ անել:

- Կարողանո՞ւմ ես գրել, Ռուբեն:

- Միայն օրագիր:

- Հետաքրքիր է... Կուզեի կարդալ, եթե մտերմիկ բաներ չեն:

- Խնդրեմ, վերցրու, մտորումներ են ամեն ինչի մասին... Սակայն, սպասիր, ես մի բան հիշեցի:

Նա դուրս եկավ և վերադարձավ «Կոդակը» ձեռքին:

- Քո այցելությունից կուզեի մի հիշատակ պահել... Նստիր այնտեղ, Դանիել, լույսին մոտիկ... Կարող ես օրագիրը թերթել...

Արդեն ուշ երեկո էր: Սուրճը և ծխախոտը կարծես մի քիչ հանգստացրեցին նրանց նյարդերը: Վարուժանը մեղավոր ժպիտով դիմեց նրան.

- Ուզում եմ մի բան խնդրել քեզ, միայն թե շատ չզարմանաս:

- Ասա, սիրելի եղբայր, հիմա ինձ ոչինչ չի կարող զարմացնել:

- Հրաշալի՛ է, - ոգևորվեց Վարուժանը: - Որ այդպես է, կարո՞ղ ենք ոգեհարցությամբ մեր նախնիներին կանչել:

- Մեր նախնիներին դու ես մտերիմ, նրանց ոգիներն արդեն բազմիցս խոսել են քո տողերում, այնպես որ...

- Ոչ, ոչ, Ռուբեն, այդ մասին չէ խոսքը... Ես ուզում եմ Հայաստանի ճակատագիրն իմանալ նրանցից... Թող ասեն, թե ինչ է լինելու մեր ժողովրդի հետ:

...Վերջին անգամ ոգեհարցությամբ էր զբաղվել Լոզանում, յոթ-ութ տարի առաջ, ուսանող ընկերների հետ: Տարածված զբաղմունք՝ այդ շրջանակների մեջ: Ոգիներ էին կանչում շատ դեպքերում չհավատալով, պարզապես անձնատուր լինելով արտառոց զբաղմունքի խորհրդավորությանը: Սակայն հիմա կացությունն ուրիշ էր: Մի՞թե նրա բանաստեղծությունը, նրա հեթանոս տարերքն ինչ-որ առումով ոգեհարցություն չէր, մի՞թե նախնիներին չէր ապավինում ներկային ոգի տալու համար: Վարուժանը մնում էր բանաստեղծի իր բնազդին հավատարիմ:

- Իսկ ո՞ւմ ոգին ես ուզում կանչել:

- Դժվարանում եմ ասել, - միանգամից պատասխանեց Վարուժանը՝ ուրախացած, որ իր տարօրինակ խնդրանքը չի մերժվում: - Գիտես ինչ, անցյալ անգամ Զամչյանի հատորները տեսա սեղանիդ... Հիմա այստե՞ղ են:

- Այո, - ասաց Ռուբենը, հատորներից մեկը բերելով:

- Ուրեմն, այսպես կանենք: Բացում ենք պատահական էջը, ընթերցում սկզբից և առաջին հանդիպած անունը կանչում: Համաձա՞յն ես:

- Համաձայն եմ, միայն թե գրքի առաջին էջերը բաց, մեծ անուններն այնտեղ են, - կատակով ասաց Ռուբենը:

Վարուժանը հատորը վերցրեց, բացեց առաջին էջերից մեկը և մոմի թրթռուն լույսի ներքո կարդաց.

- Ահա, հրաշալի է, Արտաշես Աշխարհակալը...

Կլոր սեղանն սկսեց դառնալ և կանգ առավ «Յ» տառի վրա, դրան հաջորդեցին «ա», «ւ», «ե», «ր», «ժ», «ո», «ւ», «թ», «ի», «ւ», «ն» տառերը:

- Տեսնում ես, Դանիել, «հավերժություն» է պատգամում մեզ Աշխարհակալը:

Սակայն Վարուժանն արդեն նոր անուն էր փնտրում:

- Հայկ Նահապետ:

Ռուբենն սկսեց կանչել ոգուն: Նորից «Ց» տառը գրվեց, հաջորդեց «ա»-ն... Ռուբենն անհամբեր բացականչեց.

- Լսիր, Դանիել, նույն բառն է գրում:

- Չի կարող պատահել, - հիացած ու զարմացած բացականչեց Վարուժանը:

- Ոչ, Դանիել, ավելի ուժգին է. դա, թո, այբ, նու, այբ... Հաղթանա՜կ, Դանիել, տեսնո՞ւմ ես, հաղթանակ:

Սակայն Վարուժանը, որն արդեն ուրիշ անուն էր փնտրում, հանկարծ կարկամեց:

- Ի՞նչ եղավ, Դանիել, ինչո՞ւ պապանձվեցիր:

- Լսիր, Ռուբեն, Հազկերտն է... Ի՞նչ պիտի անենք:

- Պիտի հարցնենք, ուրիշ ի՞նչ կարող ենք անել:

Արիաց Արքայի ոգին, սակայն, լուռ էր: Համառորեն չէր ուզում խոսել, հետո սեղանը ցնցվեց և երեք անգամ «Վ» տառը գրվեց:

- Ձեմ հասկանում, Դանիել, ի՞նչ է ուզում ասել:

- Այստեղ մի խորհուրդ կա, Ռուբեն, սպասիր հաջորդ անունը փնտրեմ նույն էջի վրա... Վասակը պիտի լինի կամ Վարդանը... Ահա՛, Քաջ Վարդան, այդպես էլ գիտեի:

- Օ՛, իհարկե, Վարդան, ինչպե՞ս չհասկացա միանգամից...

Տառերն իրար ետևից գրվեցին. «Պայքար»:

- Կեցցե՛ս, Քաջ Վարդան, - միաժամանակ գոչեցին նրանք և վեր ցատկելով ողջագուրվեցին:

- Շարունակիր Դանիել, - ոգևորված հրահանգեց Ռուբենը: - Ավելի մոտիկ ժամանակները նայիր:

Վարուժանը մեկ ուրիշ հատոր վերցրեց, մեջտեղից բացեց ու կարդաց առաջին իսկ անունը.

- Լևոն Զ...

- Օ՛, այդ տառապյալ արքային որտեղի՞ց գտար, ուրիշ մեկը չկա՞ր:

- Մեր ճակատագիրն է, Ռուբեն, հնազանդվիր:

Վերջին Արքային դժվար չեղավ կանչել: Նա եկավ ու անմիջապես ազդարարեց. «Աքսոր»:

- Ուրիշ բան չէի սպասում, իզուր տեղը խռովեցինք խեղճ արքայի հոգին:

- Դեն նետիր այդ մատյանը, Դանիել, մեր օրերին մոտենանք, մեր վերջին նահատակներին:

- Ո՞ւմ ես ուզում, որ կանչեմ:

- Չգիտեմ, ինքդ որոշիր, մեր հերոսներից որևէ մեկին:

Վարուժանն էքստազի մեջ կանգնեց, քայլեց դեպի սենյակի կենտրոնը և քուրմի պես ձեռքերը բարձրացնելով ասաց.

- Սպասիր... Սպասիր... Ես արդեն տեսնում եմ մեկին... Նա՛ է, Քրիստափոր Միքայելյանը...

- Ի՜նչ անգութ ես, Դանիել, - գոռաց Ռուբենը: - Հաղթական հերոսներին կանչիր, ինչո՞ւ ես տառապյալ հոգիների հանգիստը խռովում:

- Ի՞նչ անեմ, Ռուբեն, մեր բոլոր հերոսները տառապյալ են... Խոսեցրու նրան, նա այստեղ է...

- Ո՛չ, Դանիել, Բաֆֆու հոգին պիտի կանչեմ:

Վարուժանը մոտեցավ և գրկեց նրան:

- Կանչի՛ր, Ռուբեն, խնդրում եմ:

Աթոռը բերեց և քիպ նստեց Ռուբենի կողքին: Անհամբերությունից դողում էր, ձեռքը մոտեցնում սեղանին, հետո ասես խայթվածի պես հետ քաշում: Սեղանն սկսեց ցնցվել, տառերը հաջորդում էին իրար, մոմի բոցը երերում էր, սպառնալից ճարճատում, պատի վրա ստվերներ շարժվեցին... Հետո անսպասելի մի հարված եղավ և սեղանը դղրդոցով շրջվեց... Խավար... Մոմը մարել էր... Պատուհանից միայն լիալուսնի արծաթագույն լույսն էր ծորում...

Վարուժանը սարսափած ոտքի ելավ:

- Ի՞նչ կատարվեց, Ռուբեն, սա ի՞նչ է նշանակում:

Ոգեհարցության պահին շրջված սեղանը նշանակում էր մահ: Վարուժանը գիտե՞ր այդ մասին, թե չարագուշակ տեսարանն էր նրան սարսափեցրել:

- Հավանաբար ոտքի անզգույշ շարժումով սեղանը շրջեցինք...

- Ռուբեն, ես վստահ չեմ, թե ոտքս դիպավ սեղանին... Խորհրդավոր մի բան կատարվեց...

Ինքն էլ վստահ չէր, թե դիպավ, սակայն դա է խորհրդավորության տրամաբանությունը. շարժումներ ես անում, որոնց տերը չես, իսկ հետո դժվարանում ես որևէ ստույգ բան հիշել:

- Անզգույշ շարժում արեցի, Դանիել, ոտքս դիպավ, լավ հիշում եմ:

Վարուժանն ընկճված նստել էր, նույնիսկ չէր լսում նրան:

- Դանիել, սա ընդամենը խաղ է, մի՞թե լրջորեն հավատում ես...

Զթողեց, որպեսզի այդ տրամադրությամբ, գիշերով մենակ տուն գնա: Եվ շա՜տ ճիշտ արեց, քանզի առավոտյան, նախաճաշի ժամին, Վարուժանն անկեղծ ժպիտը դեմքին պատմում էր Յաննիին գիշերվա իրենց խորհրդավոր զբաղմունքի մասին...

* * *

Վերջապես տեսան, որ այս գնացքը կարող է նաև արագ շարժվել: Մի քանի ժամ շարունակ Նիկոմեդիայում բեռնավորվելուց հետո շեշտակի ուղղություն վերցրեց դեպի արևելք: Կողմնացույց պետք չէր համոզվելու համար, որ անիվի յուրաքանչյուր պտույտով մխրճվում են կատարյալ ասիականության մեջ: Միայն խոժոռ ու անբարեհամբույր դեմքերը չէին, որ վկայում էին կտրուկ անցումը քաղաքակրթությունից դեպի բարբարոսություն, այլև ճանապարհի եզրին թափված զանազան աղբն ու անպետքությունները, շների լեշերն ու զանազան ոսկորները: Օսմանյան կայսրությունն ասես դարերի ընթացքում կուտակված հսկա մի աղբանոց էր, որի միջով, ժամացույցի պես գործող գերմանական քաղաքական մեքենան իր հաշիվն էր առաջ քշում:

Զարմանքով փաստում էր, թե ինչպիսի ընդգծված հակադրություն կա այստեղի ու Եվրոպայի բանկարների միջև, ուր հողի յուրաքանչյուր թիզը վկայում է բանական ու քրտնաջան աշխատանքի մասին: Մինչդեռ այստեղ, անխնամ դաշտերի ու խեղճուկրակ գյուղերի միջև մարդկային գործունեության հատուկենտ հետքեր էին նշմարվում: Աշխարհի ամենաբարեբեր հողերն է խլել այս ցեղը, սակայն մերկ է ու անոթի, ձեռքն էլ շարունակ տանում է ուրիշի գրպանը: Եվ որքան ավելի շատ է թալանում, այնքան ավելի ընչաքաղց է դառնում:

Ժանդարմները Նիկոմեդիայի կայարանում էլ սնունդի պաշարներ կուտակեցին: Կարելի էր կարծել, թե շուրջերկրյա ճանապարհորդության են պատրաստվում: Բաժնեխցիկը լցված էր բաստրմայով ու մսի սուջուխով, զանազան հացերով, բլղուրի, լոբու, ոսպի և սիսեռի տոպրակներով, յուղի և մածնի կճուճներով, լոխումի և փախլավայի արկղիկներով: Ժանդարմները կայարաններում առատորեն ուտելուց հետո, գնացքի մեջ էլ շարունակում էին ատամներն աշխատեցնել: Դարձել էին զրուցասեր, հարցեր էին տալիս, հաճույքով պատասխանում, պատմում իրենց ընտանիքների, իրենց հոգսերի մասին: Ավագը, կարծես արդարանալով, պատմում էր, որ հինգ երեխա ունի, շուտով վեցերորդն է ծնվելու, և չգիտի, թե ինչպես է լցնելու այդքան բերանը: Վեց ամիս է աշխատավարձ չի ստացել: Կրտսերը լուռ գլխով էր անում, ասես սպասելով իր հերթին՝ ցավերի անհատնում տոպրակի բերանը բացելու: Քիչ հետո օղու շիշը հայտնվեց՝ ավելի բացելով լեզուները:

Նայում էր այս մարդկանց, լսում նրանց զրույցները և նույնիսկ արգահատում նրանց դատապարտյալ թշվառության համար: Ինքը զոհն էր՝ իր հալածյալ ու երիցս ջարդված ժողովրդի հետ, իսկ սրանք՝ դահիճները... Եվ զոհը կարեկցում էր իր դահիճներին... Տարօրինակ, եթե ոչ հիվանդագին զգացում: Պատճառն այն չէր, որ այս երկուսն ի սկզբանե քիչ թե շատ հարգալից վերաբերմունք ցույց տվեցին, իսկ հյուրասիրվելուց ու պաշարներ հավաքելուց հետո ներողություն հայցելու պես ասացին. «Դոկտորս, այս մերկացված սվիններ բանի տեղ մի դրեք... Կարգն է պահանջում, եթե չանենք, մեզ կպատժեն: Բայց դուք անհոգ եղեք», այլ որ այս ժողովուրդն Աստծո դառը ճակատագիրն էր հայերին վիճակված, ուստի հայը երբեք չպիտի կարողանար իր ապագան շինել, առանց իմանալու, թե ինչ գաղափարներ է որոճում թուրքը: Թերևս սա էր պատճառը, որ պեզճյանները, պալյաններն ու օտյաններն անմնացորդ ծառայեցին այս երկրին՝ հուսալով խավարից դեպի լույս տանել, մտածելով, որ հայի վերջնական փրկության մասին կարելի է մտածել միայն թուրքի քաղաքակրթվելուց հետո:

Տիրական մի թակոց լսվեց: Ավագ ժանդարմը, որն իր ստորադասին պատմում էր, թե վերջին անգամ երբ է պալամուտ* կերել, ասես զգալով, թե ով է դռան ետևը, տեղից կտրուկ ելավ, ձգվեց, առանց հապաղելու բացեց և դիմացն իսկապես մի սպա տեսավ: Վերջինս այլայլված էր երևում: Նա միանգամից դիմեց ժանդարմին.

---

*Սևծովյան համեղ ձուկ:

- Ինձ ասացին, որ այստեղ բժիշկ կա:

Ժանդարմը քաշվեց մի կողմ, ասես հնարավորություն տալով, որ անկյունում նստած Ռուբենին տեսնի: Վերջինս գլխարկը դրեց և տեղից ելնելով պատվի առավ:

- Խնդրում եմ, դոկտոր, անմիջապես եկեք ինձ հետ:

- Կարո՞ղ եմ իմանալ, թե ինչ է պատահել:

- Եկեք, - հուզված կրկնեց սպան: - Այնտեղ կտեսնեք:

Ռուբենը բժշկական պայուսակը վերցրեց և հետևեց սպային: Ավագ ժանդարմն սկզբում ուզում էր հրացանը ձեռքին միանալ նրանց, սակայն զենքը թողեց ստորադասի մոտ:

Վագոնները լցված էին զինվորներով: Անջնջելի գոզահոտին ավելացել էր վատորակ ծխախոտի և քրտինքի հոտը: Սպան զինվորներին հրելով ճանապարհ էր բացում: Քայլում էին ընթացքին հակառակ: Վերջապես դուրս եկան խճողված ու հեղձուցիչ միջանցքներից և մտան մի վագոն, որը տարբերվում էր նախորդներից: Դա մի շքեղ սալոն-վագոն էր: Մուտքի առջև զինված ժամապահ էր կանգնած, որն սպային տեսնելով քաշվեց մի կողմ: Դուռը բացվեց և խմիչքի ու հաշիշի թմրեցնող հոտը փոխարինեց կեղտոտ ու անխնամ վագոնների գարշաբույրին: Այստեղ կատարյալ շքեղություն էր, հարուստ կահավորանք, թավշապատ բազմոցներ, մետաքսյա վարագույրներ: Կենտրոնում մի սեղան կար՝ անզուսպ խրախճանքի վկայություններով ծանրաբեռն: Էլեկտրական անբավարար լուսավորությունը մեղքի և խորհրդավորության մթնոլորտ էր ստեղծում: Սալոնի խորքում ավստրիացի բարձրաստիճան երկու սպաներ գլուխ-գլխի, կիսաձայն խոսում էին մի թուրք սպայի հետ: Նրանցից քիչ հեռու, թավշապատ շքեղ բազմոցին, շիկահեր մի աղջիկ էր պառկած, որի մորեմերկ մարմինը ծածկված էր փառահեղ, ծոպավոր սփռոցով: Ավստրիացի երկու երիտասարդ բուժքույր, աղջկա գլխավերևը կանգնած, անուշադրի լուծույթով փորձում էին նրան ուշքի բերել: Սպան մոտեցավ բազմոցին և ձեռքի շարժումով Ռուբենի ուշադրությունը հրավիրեց աղջկա վրա:

- Ի՞նչ է պատահել, - հարցրեց նա:

Ի պատասխան, բուժքույրերից մեկն զգուշությամբ բարձրացրեց սփռոցը: Աղջկա ճերմակ մարմինը ծածկված էր քերծվածքներով ու կապտուկներով, իսկ ազդրամիջից արյուն էր հոսում՝ ներկելով ոտքերը և ծծվելով բաց կանաչ թավշի մեջ: Այնտեղից, ուր կյանք պիտի ծնվեր, մահ էր ծորում: Ռուբենը զարկերակն ստուգեց: Սիրտը շարունակում էր բաբախել, բայց հազիվ: Փորձեց արյունահոսության պատճառը պարզել: Երևում էր, որ աղջիկը սեռական վայրագ քմայքների զոհն է դարձել: Այդ էին վկայում կապտուկներն ու քերծվածքները, սակայն արյունահոսությունն ավելի բիրտ միջամտության հետևանք պիտի լիներ: Հարցական նայեց բուժքրոջը: Վերջինս բազմոցի ետևից, անխոս, մատների ծայրով արյունոտված մի սվին հանեց: Ռուբենը սոսկումից խամրած ձայնով հարցրեց.

- Ո՞վ է այդ հերոսը:

Բուժքույրը գլխի շարժումով ցույց տվեց սեղանի մոտ նստած մեկին: Մի

երիտասարդ կապիտան էր, ըստ երևույթին մեկը նրանցից, որն այդ կոչումն ստացել էր ոչ թե սխրանքի կամ արժանիքների, այլ իր ծագումի համար կամ ազդեցիկ միջամտության շնորհիվ: Շփացած մի լակոտ, որի դեմքին տպված էր լկտի ամենաթողության և անպատժելիության կնիքը: Առիթներ ունեցել էր այդ-պիսիներին Եվրոպայում հանդիպելու, գռեհիկ վայելքը սլաշտամունք դարձրած արարածներ, որոնք իրենց մարմինն էին մսխում պոռնիկների գրկում և թմրա-խոտի արհեստական դրախտներում: Հիմա նստած էր սեղանի մոտ, հայացքը բութ, գլխահակ, ոչ այնքան գործած ոճրի գիտակցումից, որքան հաշիշից ու առատորեն խմված կոնյակից, վկա բյուրեղապակյա շիշը, որն ստեպ-ստեպ տա-նում էր բերանը: Թշվառ արարած, որի համազգեստը պարտավորեցնում էր միևնույն արիությամբ և մանավանդ ասպետականությամբ ծառայել և՛ Վենե-րային, և՛ Մարսին, բայց որն անկարող էր թե՛ մեկ, թե՛ մյուս ասպարեզում:

- Պարոն կապիտան, այդ զենքը ռազմի դաշտում պիտի գործածեիք, - չկարողացավ իրեն զսպել Ռուբենը:

Կապիտանի բութ դեմքին ինչ-որ արտահայտություն նշմարվեց, գլուխը բարձրացրեց և չարությամբ, փաթ ընկնող լեզվով ասաց.

- Ինչպես ես համարձակվում վերադասին վիրավորել... Ես քեզ դատի կտամ...

Ձեռքը տարավ, որպեսզի ատրճանակը հանի, որը, հավանաբար, արդեն խլել էին նրանից, հետո որոշեց կոնյակի շիշն օգտագործել որպես զենք, սակայն գործը դրան չհասավ: Ավստրիացի գնդապետը, որն ուշադիր հետևում էր այդ տեսարանին, թիկունքից մոտեցավ, կոնյակի շիշը խլեց, հետո անձեռոցով կա-պիտանի ականջից բռնած ոտքի հանեց և մի շառաչուն ապտակ հասցնելով ասաց.

- Այսքանից հետո դեռ հանդգնում եք հոխորտալ... Տակա՛նք... Այս աղ-ջիկը կամավոր եկել էր այստեղ, որպեսզի ձեր վիրավոր զինվորներին խնամեր:

Հետո, դառնալով Ռուբենին, ընդգծված քաղաքավարությամբ հարցրեց.

- Դոկտոր, հնարավո՞ր է աղջկա կյանքը փրկել, խնդրում եմ, արեք ինչ որ կարող եք:

- Դժվարանում եմ ասել, պարոն գնդապետ, չգիտեմ, թե վերքը որքանով է խորը... Համենայն դեպս հիմա կաշխատեմ արյունահոսությունը կանգնեցնել, որից հետո հարկ կլինի հնարավորին չափ շուտ վիրահատել:

Գնդապետը երախտագիտությամբ նրա ձեռքը սեղմեց.

- Արեք ինչ որ կարող եք, լեյտենանտ, մնացածը թողեք ինձ:

Աղջիկն արդեն բավական արյուն էր կորցրել: Երկու բուժքույրերի օգ-նությամբ պիտի փորձի կանգնեցնել արյունահոսությունը, և եթե հաջողի, ապա ի՞նչ երաշխիք, որ ներքին արյունահոսություն չկա որովայնում, որ պատերազ-մական այդ թոհուբոհի մեջ, ասիական այս մթագին տարածքներում կգտնվի մի կարգին հիվանդանոց, մի կարգին վիրաբույժ, որ փրկի այս աղջկա կյանքը: Նույնիսկ Պոլսում դժվար կլիներ նման վիրահատություն իրականացնել, ուր մնաց այս թշվառ գավառում:

Արդեն ուշ էր, երբ հաջողությամբ ավարտված միջամտությունից հետո,

քնած զինվորների միջով, ժանդարմի հետ վերադառնում էին: Բաժնեխցիկ մտնելուց առաջ ժանդարմը զուսպ շարժումով կանգնեցրեց նրան և, գրեթե խոնարհվելով, հարգալից ասաց.

- Դոկտոր էֆենդի, ձեզ նման մարդուն... Ափսո՜ս, որ հայ եք...

Հետո խոսքը կիսատ թողնելով, ձեռքը թափ տվեց ու մտավ ներս:

* * *

Այսօր վերջապես մի որոշակի բան լսեց Բեդրի բեյից. «Տիկին, ձեր ամուսինը ողջ-առողջ է և նրան ոչ մի մեղադրանք չունենք ներկայացնելու»: «Հրաշալի՜ է, ուրեմն այնպես արեք, որ վերադառնա տուն»: «Այդ մեկը չեմ կարող խոստանալ, տիկին, դա իմ ուժերից վեր է»: «Ուրեմն, ապօրինություն է կատարվում... Անմեղ մարդուն, հիվանդի մոտ տանելու պատրվակով, ձերբակալել և աքսորել եք, ո՞ւր... Գոնե կարո՞ղ եմ իմանալ, թե որտեղ է»: «Հասկացեք, տիկին, նա սպա է, նա ենթարկվում է բանակի կարգուկանոնին... Այդ հարցում ես ոչինչ անել չեմ կարող»: Հետո, խորհուրդ տալու պես, ասաց. «Փորձեք ձեր դեսպանատան միջոցով պարզել, նրանց հնարավորություններն ավելի մեծ են»:

Բեդրի բեյի մոտից ուղղակի եկավ դեսպանատուն: Ընդունարանի քարտուղարը, մշտական ժպիտը դեմքին, ուշադիր լսեց և միանգամից պատասխանեց.

- Պարոն դեսպանն այսօր չի կարող ձեզ ընդունել, խիստ զբաղված է: Բացի այդ, սա քաղաքացիական հարց է, կարծում եմ՝ ավելի ճիշտ կլինի ֆոն Նոյրաթի հետ խոսել:

Նորից ֆոն Նոյրաթը: Սակայն ընտրություն չուներ: Եվ հետո, չէր ուզում ձեռնունայն վերադառնալ, եթե մտել էր այստեղ, ապա ինչ-որ մեկի հետ պիտի խոսեր, մի բանից պիտի սկսեր:

Նոյրաթը նրան ընդունեց ցավակցական արտահայտությունը դեմքին:

- Հիշո՞ւմ եք մեր վերջին հանդիպումը, - հարցրեց նա:

Յաննին գլխով արեց:

- Տիկին, պետք չէր մարգարե լինել այսպիսի ելք կանխատեսելու համար... Հենց սկզբից պիտի ասեմ, որ մեզ հետ շատ հույսեր չկապեք: Կացությունը բավական խրթին է: Նախ, նա մեր քաղաքացին չէ, այլ մեր քաղաքացու ամուսինը, երկրորդ՝ պատերազմ է, երրորդ՝ սպա է և ենթարկվում է ռազմական օրենքներին:

- Եվ դուք կատարելապես անզո՞ր եք:

- Մենք անզոր չենք, պարզապես կարող ենք միջնորդել այնքանով, որքանով մեր քաղաքացու ամուսինն է: Սակայն նույնիսկ չեմ պատկերացնում, թե ո՞ւր պիտի·դիմենք:

- Բեդրի բեյն ասում է, թե Գերմանիա պիտի ուղարկեն:

- Նշանակում է նախևառաջ Յոհանի հետ պիտի խոսեք:

- Նրան գտնելն անկարելի է:

- Ձեզ համար, թերևս, - նկատեց Նոյրաթը: - Այսօր իսկ կփորձեմ նրան փնտրել: Կասեմ նաև, որ ձեզ զանգի:

Նոյրաթը, չնայած շարունակում էր իրենը պնդել, բայց այս անգամ համակրելի թվաց:

- Կարո՞ղ եմ ինչ-որ բան հուսալ, - հարցրեց Յաննին:

- Տիկին, ի տարբերություն թուրքերի, չեմ ուզում պարապ խոստումներ տալ, սակայն հնարավոր ամեն ինչ կանենք:

Նա ճանապարհ դրեց մինչև ելք և ասաց.

- Եթե նորություն լինի, ինձ անմիջապես տեղյակ կպահեք:

Տանն անակնկալ էր սպասում նրան. մոր հեռագիրն՝ ուղարկված Սոֆիայից. «Կարծում եմ վաղը կլինեմ Կոնստանդնուպոլսում»: Խե՜ղճ կին, խե՜ղճ մայրիկ, մեկ շաբաթում հազիվ Բուլղարիա է հասել: Ճանապարհի ամենաապահով հատվածն է մնացել, բայց դարձյալ չգիտի, թե ստույգ երբ է ժամանելու: Տեղահան արեց նրան: Յոթ-ութ օրվա ճամփորդական չարչարանքները դեռ մի կողմ: Հիմա պատկերացնում էր, թե ինչպիսի ահավոր մի տագնապ է նրա սրտում... Ինչե՜ր են անցնում մտքով... Հեռագիրն ուղարկելիս ուզեց գրել, թե ինչու է կանչում, սակայն անմիջապես հասկացավ, որ տեղ չի հասնի: Ամբողջ երկիրը, մանավանդ փոստն ու հեռագրատունը գտնվում են խստագույն գրաքննության տակ, և եթե մինչև հիմա հորը չի գրել Ռուբենի ձերբակալության մասին, ապա նույն մտավախությունից: Որքա՜ն անհանգստություն պատճառեցին ինքն ու քույրն իրենց ծնողներին: Մեր երջանկության բնական ձգտումն ինչո՞ւ է դառնում չարչարանքների անսպառ աղբյուր մեր հարազատների համար, իսկ հաճախ նաև մեզ համար: Իզուր կանչեց մորը, չա՜տ իզուր: Ի՞նչ կարող է անել այստեղ Ռուբենի համար: Դեռ մի բան էլ ավելին. պիտի գա և սոսկումից քարանա: Սակայն արդեն ուշ է:

Երեկոյան ընթրիքի պահին Լևոնն սկսեց տրտնջալ, թնկթնկալ, ի վերջո հրաժարվեց ուտել: Սպասուհին սիրով և գուրգուրանքով փորձում էր համոզել, սակայն երեխան համառորեն նույն բանն էր ասում: Եվ չնայած հայերեն էր խոսում սպասուհու հետ, այնուհանդերձ, ծանոթ բառ որսաց, որ կրկնվում էր շարունակ. «Հայրիկ»: Մեջքով սարսուռ անցավ, ասես հիմա գիտակցեց կատարվածը: Ձերբակալությունից առաջ պատահել էր, որ Ռուբենը գիշերն անցկացներ հիվանդանոցում, սակայն երեխան երբեք չէր նկատել հոր բացակայությունը: Մեկ-երկու օրվա ընթացքում չէր հասցնում կարոտել: Բայց արդեն մեկ շաբաթ անցավ:

- Երեկ ամբողջ օրը հորն էր փնտրում, - բացատրեց սպասուհին:

Երեխաներին չէր սիրում շփացնել: Իր ծնողներն իրենց դաստիարակել էին զուսպ գորովանքի և տրամաբանված խստապահանջության ոգով, ինչի համար երախտապարտ էր նրանց: Ինքն էլ աշխատում էր հետևել այդ իմաստուն սկզբունքին, մանավանդ որ երեխաների դաստիարակությունն ամբողջովին իր ուսերին էր ընկած: Բայց հիմա ջանաց ավելի մեղմ լինել: Լևոնին գրկեց և համբուրելով ասաց.

- Եթե չես ուզում, մի կեր, բայց ինչո՞ւ ես լալիս:

- Հայրիկին եմ ուզում:

- Դու մոռացե՞լ ես, նրանից խնդրեցիր, որ իսկական ձի բերի քեզ համար:

Երեխայի աչքերը փայլեցին:

- Այո, ինձ խոստացավ...

- Ահա, տեսնում ես, հիմա գնացել է քեզ համար մի հրաշալի ձի բերի:

- Հապա նրա ճերմակ ձին ինչո՞ւ չի գալիս:

- Որովհետև, սիրելիս, այդ ձիով գնացել է հեռու, որ աշխարհի ամենագեղեցիկ ձին բերի քեզ համար...

* * *

Նոյրաթը խոսքի տերը եղավ: Երեկոյան ուշ Յոհանը զանգեց: Ասաց, որ Նոյրաթն է իրեն փնտրել և զարմացավ, որ Յաննին մինչև հիմա իրեն չի հայտնել կատարվածի մասին:

- Բայց քեզ գտնելն անկարելի է:

- Հիմա ինչպե՞ս գտար... Դու ես մեղավոր, հենց սկզբից պիտի գնացած լինեիր այնտեղ:

- Ես ուզում էի, բայց Ռուբենի բարեկամներից մեկը, ազդեցիկ մի մարդ, գտավ, թե դեսպանատան միջնորդությունը կարող է հակառակ արդյունքը տալ, գրգռել թուրքերին:

- Սակայն որքան հասկացա Նոյրաթի պատմածից, առայժմ ոչ մի արդյունք չկա: Գոնե կարողացա՞ր պարզել՝ Ռուբենը ողջ-առողջ է:

- Սկզբում ոչինչ չէին ասում, իսկ հիմա ասում են, իբր Ռուբենին ուղարկում են Գերմանիա՝ զինվորական հիվանդանոցում աշխատելու:

Յոհանը ծիծաղեց.

- Դա զառանցանք է... Ես կստուգեմ համենայն դեպս, բայց որքան գիտեմ, այստեղից որևէ բժիշկ առայժմ չի գնացել մեր հիվանդանոցներում աշխատելու, դրա կարիքը չունենք, ընդհակառակը, մեր բժիշկներն են գալիս թուրքերին օգնելու:

- Իսկ կարո՞ղ եք միջամտել նրա համար:

Գծի մեջ մի պահ լռություն տիրեց:

- Մի քիչ դժվար եմ պատկերացնում այդ միջամտությունը: Նա թուրքական բանակի սպա է: Դեսպանատան միջնորդությունն ավելի տրամաբանական կլինի, դու գերմանական քաղաքացի ես և մեր հյուպատոսը պարտավոր է քեզ օգնել: Նա նույնիսկ իրավունք ունի բացատրություններ պահանջելու:

Արցունքներն սկսեցին հոսել: Յոհանի հանդարտ, պաշտոնական տոնն անհետացավ, նա զարմացած հարցրեց.

- Յաննի, դու լա՞լիս ես...

- Ոչ, ոչ, Յոհան... Ոչինչ, բան չկա... Պարզապես հասկանում ես, դու ես այստեղ իմ միակ հարազատը... Դու իմ եղբայրն ես... Խնդրում եմ, աղաչում եմ, օգնիր ինձ, արա ինչ որ կարող ես... Նույնիսկ անկարելին արա, քանի դեռ ողջ է... Այդ վայրենիների ձեռքից փրկիր նրան...

- Կանենք, համոզված եղիր... Նոյրաթն ինչ-որ բաներ է մտմտում:

- Դու համոզվա՞ծ ես, որ նա իսկապես ուզում է օգնել:

- Այո, իհարկե, ինձ թվում է, որ ուզում է և կարող է: Ձեմ ասում արդեն Վանգենհայմի մասին, նրա մի զանգը բավական կլինի:

- Յոհան, աղաչում եմ քեզ, դու էլ հետապնդիր, զանգիր, հիշեցրու:

- Հանգստացիր, Յաննի, քեզ մենակ չենք թողնի, ամեն ինչ կանենք:

Յոհանը լռեց, հետո, ասես անսպասելի հիշելով, հարցրեց.

- Հայրդ գիտի՞:

- Ոչ, ինչպե՞ս կարող էինք հայտնել, նամակը տեղ չէր հասնի:

- Իրավացի ես, - ընդունեց Յոհանը, հետո ավելացրեց. - Վաղն առավոտյան մի նամակ բեր նրա անունով, ես միջոց կգտնեմ հնարավորին չափ արագ հասցնելու:

- Ձէի ուզի հորս անհանգստացնել այդ հարցով և հետո նա ի՞նչ կարող է անել Լոզանից:

- Նախ, հայրդ պիտի ամեն ինչ իմանա և հետո շատ բան կարող է անել, ամեն տեղ նրա ընկերներն են նստած... Ամեն ինչ կգրես, մանրամասնորեն:

- Ուրեմն, այստեղից հույսներս կտրենք և օգնություն սպասենք դրսից:

- Ոչ, Յաննի, պարզապես բոլոր միջոցները պիտի գործի դնենք:

Հաջորդ օրը որոշեց տանը մնալ: Մայրը պիտի գար: Բարեբախտաբար չուշացավ: Կեսօրից քիչ անց էր, երբ դուռը զանգեցին: Մայրն էր՝ դռան շեմին կանգնած, մրոտված, շորերը տրորված, ծանր ու երկարատև ճամփորդությունից հալումաշ: Նրա առաջին հարցը եղավ.

- Երեխաներն ո՞ւր են:

- Այստեղ են:

- Լավ ե՞ն:

Յաննին լուռ գլխով արեց: Մայրը մի պահ սևեռուն նայեց աղջկան, հետո ասես միանգամից կոտրվեր: Յաննիին թվաց, թե հիմա կընկնի: Մոտեցավ, նստեցրեց բազմոցին: Նա շարունակում էր հարցական նայել աղջկան:

- Ռուբե՞նը..., - վերջապես արտաբերեց նա:

- Հանգստացիր, մայրիկ, առայժմ վատ բան չկա, նա ողջ և առողջ է...

Եվ ամեն ինչ պատմեց, բոլոր մանրամասներով: Վերջում ասաց.

- Կներես, մայրիկ, որ քեզ անհանգստացրի:

Մայրը նստած գլուխն էր օրորում:

- Մենք ենք մեղավոր, մենք՝ ես և քո հայրը, որ թողեցինք գաք այս...

- Նրա հայրն էր կանչում, զավակ էր կորցրել, Ռուբենի եղբայրը:

- Ի՞նչ ստացավ, - անգթորեն հարցրեց մայրը: - Մի որդին ընդմիշտ գնաց, մյուսն էլ հայտնի չէ, թե երբ հետ կգա...

- Այդպես մի ասա, մայրիկ, - գոռաց Յաննին:

- Ես սոսկալի բաներ եմ լսել... Դուք երևի չգիտեք, թե Թուրքիայի գավառներում ինչե՛ր են անում հայերի հետ...

- Գիտենք, - հազիվ լսելի ընդհատեց նրան Յաննին: - Ամեն ինչ գիտենք... Բայց դու որտեղի՞ց իմացար:

- Վիեննայում բողոքական մի պատվելի նստեց մեր վագոնը... Հինգ տարի ապրել էր Թուրքիայի հայաշատ գավառներում: Ամեն ինչ տեսել էր, գրել,

թվերով, փաստերով, վկայություններ հավաքել նաև մյուս հոգևորականներից... Եկել էր Եվրոպա՝ Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի կայսրերից խնդրելու, որ դատապարտեն այդ կոտորածները:

- Եվ ի՞նչ, - անհամբեր հարցրեց Յաննին:

- Է՛հ... Հիասթափված էր, հուսահատ... Բողոքներ էր ուղարկել ամենուր, վկայություններ կցել, բայց որևէ լուրջ բան չէր սպասում: Ասում էր՝ չեն ուզի նեղացնել իրենց դաշնակցին... Ի՛նչ սոսկալի բաներ էր պատմում այդ պատվելին, հավատս չէր գալիս, որ մարդ արարածը կարող է այդպիսի գազանություններ գործել...

- Եվ ամոթ մեզ, որ այդ գազանի դաշնակիցը դարձանք, - ցավով նկատեց Յաննին:

- Այո... Դու էլ եկար, բախտդ կապեցիր աշխարհի ամենադժբախտ ժողովրդի հետ...

Մայրը պախարակելով չասաց, այլ ցավով իրողությունը փաստեց: Ասելուց հետո էլ նստել էր արձանի պես՝ աչքերը մի կետի հառած: Հետո ասես ուշքի եկավ ու հարցրեց.

- Ծնողները գիտե՞ն:

- Ոչ...

- Ինչպե՞ս թե:

- Սկզբում չուզեցի անհանգստացնել նրանց, կարծում էի մեկ-երկու օրից կվերադառնա... Բայց, ինչպես տեսնում ես... Հիմա էլ գրեթե անկարելի է հայտնել, ճամփաները փակված են:

- Սիլիվրին կարծեմ Պոլսին մոտիկ է:

- Այո, բայց Պոլսից դուրս գալն արգելված է, հատուկ արտոնություն է պետք:

- Նամակ գրիր:

- Նամակը տեղ չի հասնի և դեռ կարող է ուրիշ բարդությունների պատճառ դառնալ:

- Ուրեմն, խեղճ մարդիկ չգիտեն, թե իրենց որդուն ինչ է պատահել:

- Կարծում եմ՝ այս կացության մեջ այդպես ավելի լավ է. նրանք ոչնչով չեն կարող օգնել և իզուր պիտի տանջվեն:

- Բայց մինչև ե՞րբ:

- Մինչև որ Ռուբենը հետ գա:

Մայրը քիչ էր մնում հարցներ՝ «Իսկ եթե...», բայց լեզուն կծեց և ընդամենը ասաց.

- Դա լինելու բան է՞, Յաննի, դու հավատո՞ւմ ես դրան:

- Այո, հավատում եմ:

- Բայց դու մենակ ես այս գազանների դեմ:

- Ես այլևս մենակ չեմ, մայրիկ, և մենք ամեն ինչ կանենք, որպեսզի Ռուբենը հետ գա:

* * *

Բաժնեխցիկ մտնելուն պես, ավագ ժանդարմն սկսեց մանրամասնորեն պատմել սալոն-վագոնի խայտառակ պատահարը: Պատմելու հետ շարունակ գլուխն էր ճոճում և ցավով կրկնում. «Վախ, վախ, վախ, ի՜նչ էին արել այդ հրաշք աղջկան»: Հետո դարձավ Ռուբենին. «Դոկտոր էֆենդի, դուք շատ համարձակ մարդ եք, որ այդպես ամոթանք տվեցիք կապիտանին, բոլորի սրտովն էր»: Հետո նորից «վախ-վախ» արեց, օղու շիշը հանեց թաքստոցից, լցրեց միակ բաժակի մեջ և լուռ առաջարկեց: Ցերեկը հրաժարվել էր: Հիմա սակայն ընդունեց և նույնիսկ խնդրեց, որ ջրով չբացի: Թունդ խմիչքի կարիք ուներ: Խմեց միանգամից, ինչպես ռուս ուսանողներն էին կոնյակը խմում շվեյցարական սրճարաններում՝ առաջացնելով տեղացիների լուռ զարմանքը: Երկրորդն էլ խմեց, դարձյալ անխառն՝ արժանանալով ժանդարմների հիացական հայացքներին: Թերևս այսպես կարող է թոթափվել մղձավանջային տեսարանից, մանավանդ Սամսունի այդ դեղնավուն ծխախոտի օգնությամբ... Սակայն քստմնելի պատկերից դյուրին չէր ազատվել... Գուցե նման մեկ ուրիշ պատկերով, երբ դարձյալ խարտյաշ մի կին էր պառկած, դարձյալ քսան տարեկան, ոտքերը լայն բացած, և կյանքի ակունքից Մարդը լույս աշխարհ ելավ, և ինքն օգնեց այդ կնոջը... Առաջին անգամ... Զարմանալի զուգադիպություն... Այդ օրն էլ երկու բաժակ օղի խմեց իրար ետևից: Ծննդաբերող կնոջ ամուսինն ստիպեց... Կրակի պես թունդ օղի, որ գիշերները, ուսանողական հարբեցողությունների ժամանակ, լցնում էին պղնձյա մոխրամանի մեջ և լուցկու փոքրիկ բոցը թեթևակի մոտեցնելով հրկիզում, հետո մութ սենյակում, բոլորաձև, շուրջը նստած հմայված նայում՝ ծովի հանդարտ ալիքները հիշեցնող կապտավուն բոցերին... Այրվող սպիրտն իր հետ բերում էր տանձի հեռավոր մի բույր, որ խառնվում էր հանգցրած ծխախոտի ծանր հոտին և գրգռում ռունգերը... Անիսոն բուրող այս օղին ավելի փափուկ է՝ Սամսունի ծխախոտի պես, և հիմա տանում է դեպի համեմատաբար ավելի մոտիկ ժամանակները... Անցյալ տարվա հոկտեմբերին էր, մեկ ամիս կլիներ, ինչ վերադարձել էր Շվեյցարիայից: Արդեն սկսել էր իր բժշկական դործունեությունը, և հաճախորդները գնալով շատանում էին, մանավանդ կանայք ունևոր խավերից: Ազատ ժամանակ գրեթե չուներ, բայց չհրաժարվեց, երբ առաջարկեցին առողջագիտություն դասավանդել Կեդրոնական վարժարանում:

Ինչպիսի՜ բծախնդրությամբ էր նախապատրաստվում առաջին դասին: Նույնիսկ կրճատեց հիվանդների ընդունելությունը, որպեսզի ազատ ժամանակ ունենա դասերի համար:

Առաջին դասն ավարտական խմբի ուսանողների հետ էր, որոնց թիվն ընդամենը պիտի քսան լիներ: Սակայն լսարանը լեփ լեցուն էր: Վարժարանի տեսուչից և մի քանի ուսուցիչներից զատ, կային նաև կոզմնակի անձինք, որոնց ընավ չէր ճանաչում... Անգամ թերթերից էին եկել: Լսարանին ողջունելուց հետո մոտեցավ գրատախտակին և գունավոր կավիճներով սկսեց արական և իգա-

սեռանդամներ գծել՝ աշխատելով հնարավորին չափ ճշգրիտ հաղորդել մանրամասները: Գծելու ընթացքում ականջին շշուկներ հասան, իսկ երբ վերջացրեց ու քաշվեց մի կողմ, ասլա պատկառելի տեսքով մի պարոն աղաղակեց. «Խայտառակությո՛ւն»: Նախապատրաստվել էր այդպիսի անդրադարձին, ուստի անվրդով նայեց պարոնին, սպասեց մի քանի վայրկյան և համոզվելով, որ ուրիշ բողոքողներ չկան, հանդարտ ասաց. «Ովքեր գտնում են, որ սա խայտառակություն է, կարող են դուրս գալ... Ի դեպ, ուսանողների ներկայությունը պարտադիր է»: Պարոնը տեղից ելավ, մոտեցավ դռանը և դուրս գալուց առաջ հայտարարեց. «Դուք աղտոտում եք երիտասարդների ուղեղները»:

Նրա օրինակին հետևել ցանկացող չեղավ: «Ես շնորհակալ եմ պարոնին, որ միանգամից ճիշտ ուղղություն տվեց այսօրվա դասախոսությանը. այո, ուղեղների մաքրությունն անչափ կարևոր է, իսկ առողջապահության պարագայում բավական չէ միայն մարմնի մաքրությունը, պետք է նաև միտքը մաքուր լինի ամեն տեսակի նախապաշարումներից, մինչդեռ այդ պարոնի միտքը հիվանդ էր... Այս պատկերները բոլորս ենք նայել գաղտնի, ծածուկ, ախտաժետ հետաքրքրասիրությամբ, վախենալով հանցանքի մեջ բռնվել, քանզի այդ բնական հետաքրքրասիրությունը համարել ենք մեղսալից մի զբաղմունք: Ինչպիսի՜ անհեթեթություն, ինչպիսի հանցավոր մոլորություն: Նայեք, սա է կյանքի ակունքը, և եթե մենք այսօր խպնանքով ենք նայում այս անդամներին, ապա պատճառն այն է, որ սերը, կյանքը շարունակելու բնական մղումը դարձրել ենք քաղքենիական առևտուր, թաքցրել կեղծ բարեպաշտության քողի տակ կամ՝ վատթարը, հեռացրել հասարակության աչքից դեպի վատահամբավ թաղերը, դրել կարմիր լապտերի տակ... Հեռո՛ւ մեզնից այդ ախտագին մտքերը: Դուք պետք է վաղվա մտավորականությունը դառնաք, պետք է միտք ու հոգի հաղորդեք ժողովրդին, սակայն ձեր սրբազան առաքելությունն իսպառ կձախողվի, եթե այսօրվանից իսկ չթոթափվեք նախապաշարումներից և սրբազան սարսուռով չնայեք կյանքն արարող սիրո այս գործարաններին...»:

Ոգևորվել էր անչափ, չզգաց, թե ինչպես խոսեց մոտ երկու ժամ: Եվ բոլորը լուռ լսում էին: Հարցերի համար ժամանակ չէր մնացել, այնուհանդերձ մի քանիսը մատները տնկել էին վեր, և իրավունք չուներ նրանց չլսելու:

- Ճի՞շտ է, որ ձեզ առաջարկվել է երկու առարկա դասավանդել՝ գրականություն և առողջագիտություն, բայց դուք նախընտրել եք երկրորդը:

- Ճիշտ է:

- Ինչպե՞ս կբացատրեք այդ ընտրությունը:

- Նախ, չափազանց զբաղված եմ և չէի կարողանա երկու առարկա դասավանդել, երկրորդ՝ գտնում եմ, որ առողջագիտությունն այսօր ավելի կարևոր է աճող սերնդի համար:

Հարցուպատասխանը շարունակվեց միջանցքում և, հավանաբար, երկար տևեր, եթե մի երիտասարդ աղջիկ չմոտենար նրան.

- Պարոն Գավաֆյանը խնդրում է հինգ րոպեով իրեն տեսնեք:

Տնօրենը՝ պրն. Գավաֆյանը ժպիտով դիմավորեց նրան:

- Ուզում էի ձեզ տեղյակ պահել, որ մի պարոն մտավ մոտս և բողոքեց,

թե խայտառակ պատկերներ եք գծել գրատախտակին և անվայել բաներ պատմել ուսանողներին:

- Պատկերներն, այո, նա տեսավ, սակայն իմ բանախոսությունը չէր կարող լսել, քանի որ դուրս եկավ սրահից:

- Հավանաբար դռան ետևից ականջ է դրել:

Նրանք ծիծաղեցին:

- Ահա այդ պարոնների բարոյականությունը. փոխանակ բացեիբաց, շիտակորեն, վերջապես առանց հետին մտքի խոսեն ու լսեն այդ կենսական խնդիրների մասին, գերադասում են դռան ետևից, գաղտագողի ականջ դնել:

- Իրավացի եք, պարոն Զիլինկիրյան, սակայն գուցե պետք չէր առաջին իսկ դասից այդ մասին խոսել, գուցե ավելի ուշ, ղգուշորեն մոտենալով...

- Մենք արդեն շատ ենք ուշացել, պարոն տնօրեն, ուստի որոշեցի հենց սկզբից ուղեղները թոթափել ավելորդ բեռից...

Հաջորդ օրը ժամադրություն ուներ «Ազատամարտի» խմբագրությունում: «Բժիշկին գիրքեն փրցված էջերի» հերթական դլուխն էր խոստացել խմբագրին՝ Ռուբեն Զարդարյանին: Մի մտավորական, որի հանդեպ բացառիկ հարգանք ուներ և որին պարտական էր իր գրական համբավի համար: Թերթը կուսակցական էր, բայց շնորհիվ խմբագրի լայնախոհությանը դարձել էր բոլոր տաղանդների հավաքատեղին՝ անկախ նրանց քաղաքական համոզմունքներից:

- Ճիշտ ժամանակին եկար, Ռուբեն...

Շվեյցարիայում անցկացրած տարիներին ինչպե՞ս էր երազել այդ թանկագին, այդ հազվագյուտ պահերի մասին. մտնել «Ազատամարտի» խմբագրություն՝ որպես դրողների, մտավորականների վսեմ եղբայրակցության լիարժեք մի անդամ, ողջագուրվել, նրանց ձեռքը սեղմել, շնորհավորել նոր տպված գրքի, հոդվածի, ֆանաստեղծության առթիվ, նույնպիսի շնորհավորանքներ ու գովեստներ լսել սեփական գործերի մասին, մեկ-երկու ժամ անցկացնել այդ քաղցր մթնոլորտի մեջ և հեռանալ ծարավը լիովին չհագեցրած: Իսկ այդ այցելությունից հետո վերադառնալ տուն՝ հպարտ, որ գնահատված ես, որ սպասում են քո գործերին, որ արդեն համեստ մի զինվորն ես հայ դրականություն կոչված փառահեղ բանակի... Հասյա մյուս խմբագրությունները՝ մեկը մյուսից հետաքրքիր, հարուստ... Եվ բոլորի դռները բաց էին իր առջև: Սակայն «Ազատամարտն» ուրիշ էր: Ոչ միայն, որ գրականությանն ու արվեստին ընդարձակ էջեր էր տրամադրում, այլև որ Ռուբեն Զարդարյանի նման անձնավորություն կար այնտեղ՝ իսկական արվեստագետ, բացառիկ խմբագիր, որ տաղանդներին տարածության վրա էր զգում, ոչ միայն տեղ տալիս թերթի էջերում, այլև խրախուսում, ստիպում թղթակցել, նոր նյութեր ներկայացնել:

Ահա, տեղից ելավ, ձեռքը սեղմեց և բարի ժպիտով նորից ասաց.

- Ճիշտ ժամանակին եկար... Երեկվա սխրանքիդ մասին էինք խոսում... Մեր Հակոբիկն այնտեղ էր:

- Թույլ տվեք, պարոն Սևակ, շնորհակալություն հայտնել: Երեկ, ցավոք սրտի, չկարողացա ձեզ մոտենալ:

Խանդավառ մի երիտասարդ էր առջևը՝ գունատ, գրեթե կանացի նրբին դեմքով, ուրախությունից փայլող աչքերով:

- Դուք, որ այդքան շատ եք գրում մահվան մասին, ինձ զարմացրիք, թե ինչպես կարողացաք բոլորիս կյանքի գաղափարով տոգորել:

- Սիրելի բարեկամ, արդեն երեք տարի ձեր թերթի էջերից այդ գաղափարն եմ աղաղակում:

- Իրավացի եք, սակայն ուրիշ բան էր ուղղակի ձեր բերանից լսել:

- Ռուբեն, քո հոդվածները մեծ արձագանք ունեն, - միջամտեց Զարդարյանը: - Դու ինձ հարցրու, թե ինչպիսի հիացական կարծիքներ եմ լսում, ինչ նամակներ ստանում, սակայն դժգոհ եմ, որ իսպառ լքել ես բանաստեղծությունը և անցել հրապարակախոսության... Մի՞թե ճշմարիտն ու օգտակարը գեղեցիկի կորստյամբ է ձեռք բերվում:

- Արդեն գրել եմ, որ ամենամեծ վտանգն է մեզ սպառնում՝ ուծացումը, ահավոր մի վտանգ՝ ուրիշ վտանգների կողքին... Պետք է ցնցել ժողովրդին, պետք է փոխել նրա ֆաթալիստ մտայնությունը, դատապարտվածության նրա զգացումը, հանել այդ թմբիրից և պատրաստել մյուս վտանգները դիմագրավելու, ուստի մեզ ոչ թե չինարեն տաղեր են պետք, այլ փրկության ճշմարիտ խորհուրդներ:

- Սակայն ինչպե՞ս պիտի մեր ցիրուցան ժողովրդին այդ գաղափարները սովորեցնենք... Հարյուրամյակներ են պետք դրա համար, - նկատեց Հակոբիկը:

- Այդքան սպասել չենք կարող, արդեն ուրիշ վտանգներ են կախվել մեր գլխին... Պիտի նախ ինքներս՝ մտավորականներս արմատապես փոխվենք, պիտի նոր գաղափարներով պատանիներին կրթենք և վերջապես մեր եկեղեցու բեմերից հրաշապատում առասպելներ պատմելու փոխարեն օգտակար ճշմարտություններ քարոզենք:

...Հավատո՞ւմ էր արդյոք իսկապես, վստա՞հ էր, որ հնարավոր է դրանք իրականացնել, կարճ ժամանակում մտքերը փոխել, դարերի ընթացքում մեր հոգիներին նստած ժանգը մաքրել... Վերջապես, որքանո՞վ էր իրական «Նոր Ոսկեդար» ստեղծելու այդ հոյակապ գաղափարը... Չէ՞ որ զգում էր ժողովրդի գլխին կախված ահավոր վտանգը, որ հիմա դարձավ դժնի իրականություն: Այո, գիտեր, որ անչափ դժվար է, գրեթե անկարելի: Ոչ միայն, որ միջոցները չափազանց սուղ էին, ժամանակն էլ քիչ, այլև որ գրեթե մենակ էր իր գաղափարների հետ: Սակայն գիտեր, համոզված էր, որ ուրիշ ելք չկա... Բանակը, որ սպասում է թշնամու հարձակմանը, ուղղակի հրահանգների կարիքն ունի, ոչ թե գեղեցիկ, մանավանդ շղարշված խոսքերի: Այդպիսի մի բանակ էր հայ ժողովուրդը՝ Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում: Նրան ասես հայտնել էին, որ մեկ օր հետո քաղաքն իր բնակիչներով կրակի ճարակ է դառնալու, և նա ջանում էր այդ չնչին ժամանակահատվածում հնարավորին չափ շատ ժողովուրդ փրկել...

Որքա՞ն կարողացավ փրկել, քանի՞ հոգու, ինքը, որ հիմա գնում է դեպի գեհեն... Անդառնալիորե՞ն... Ի՞նչ իմանաս: Այս թուրք ժանդարմները ոչինչ չեն ասում... Իսկ գիտե՞ն, որ ասեն... Ո՞վ պիտի մտածի իր փրկության մասին: Յաննի՞ն: Բայց ինչպե՞ս: Հիշեց, որ տնից դուրս գալուց առաջ ուզեց հուշել Յաննին («Եթե մինչև առավոտ չգամ, զանգիր Հիլմի փաշային...»:), սակայն զգաց, որ դրանով պիտի սոսկալի տագնապի մատնի նրան, չնայած Յաննին հասկացել էր

ամեն ինչ, այդ անկոչ հյուրերին սպասում էին վաղուց և նույնիսկ զարմանում մտովի, որ ուշանում են... Բայց դարձյալ չասաց, չուզեց չարիքի մասին բարձրաձայն խոսել: Առանց այդ էլ ամեն ինչ հասկանալի էր:

Վստահ էր, որ Յաննին արդեն դիմել է Հիլմի փաշային և իր մյուս թուրք բարեկամներին: Բայց կարողացա՞ն որևէ բանով օգնել: Ենթադրում էր նաև, որ գերմանական դեսպանատուն է գնացել, բայց գերմանացիք ի՞նչ շահ ունեն իրեն հետ բերելու աքսորից... Ապրիլի 24-ին աքսորվածներից քանի՞սը հետ եկան... Միայն Կոմիտաս վարդապետը, այն էլ ջարդի տեսարաններից այնպես էր ցնցվել, որ բանականությունը խախտվել էր: Մեկ շաբաթ առաջ միասին էին Կոմիտաս Վարդապետի հետ... Հարևան էին, նույն թաղում էին ապրում՝ Պանկալթիում: Խնդրել էր, որ Լևոնի կնքահայրը դառնա... Հունիսի 19-ին էր կնունքը, Պանկալթիի Ս. Լուսավորիչ եկեղեցիում: Երեքամյա Լևոնին ծնողների հետ տեսնելով, գրկեց և ճակատը համբուրեց, հետո, հայացքն ինչ-որ կետի հառած, շշուկով դիմեց Ռուբենին. «Կեցցես, որ զավակիդ ետ բերեցիր աքսորից...»: Ինքն էլ, Յաննին էլ արդեն գիտեին, որ Վարդապետը մթագնումի կարճատև պահեր է ունենում, սակայն այդ խոսքերը սարսռեցրին նրան: Բարեբախտաբար Յաննին ոչինչ չհասկացավ...

Միայն Կոմիտասը վերադարձավ, այն էլ կես մարդ դարձած... Մյուսները հետ կգա՞ն՝ Զոհրապը, Սիամանթոն, Վարուժանը, Զարդարյանը, Երուխանը... Եվ ի՞նչ վիճակում... Այն, ինչի համար վերադարձել էր Պոլիս, այլևս չկա... Ծնողներից զատ... Ժողովրդի մի փոքրիկ հատվածից զատ... Վե՛րջ հայկական լրագրերին, թատրոններին, մտավորականությանը, վերջ լիարժեք հայ կյանքին... Մի քանի՝ դեռևս չմորթված հայերը զնդանում փակված մահապարտներ են, որոնք ամեն ժամ սպասում են, թե դահիճը երբ պիտի գա... Մի՞թե այդպիսին չէր իր կյանքը՝ կրկնակի ստորացման ենթակա... Նախ, ամոթ էր զգում, որ իր բոլոր ընկերներին տարել են և, չգիտես ինչու, խնայել իրեն... Սակայն մինչև ե՞րբ... Ստորացուցիչ մի սպասում: Շարունակ պահանջ ուներ արդարանալու, որ ինքը նրանց կողքին չէ: Մայիսի սկզբներին էր, փողոցում հանդիպեց գրչակից բարեկամներից մեկին, որ նույնպես զարմանալիորեն խուսափել էր աքսորից, և մեղավոր տեսքով ասաց. «Ամոթ չէ՞, որ մենք այստեղ ենք»: Մեղավորության այդ զգացումով էր լցված, երբ այցելեց Ռուբեն Զարդարյանի տիկնոջը՝ զարմանք պատճառելով նրան. «Պարոն Սևակ, անչափ շնորհակալ եմ, որ եկել եք, բայց անխոհեմ և վտանգավոր է ձեր արածը, մի՞թե չգիտեք, որ մեզ հետևում են...»: «Գիտեմ, Տիկին, բայց չէի կարող չգալ»: Սարսափը թափանցել էր բոլորի սիրտը, մարդիկ վախենում էին իրար հանդիպել, խոսել թեկուզ անմեղ բաների մասին... Յուրաքանչյուրն սպասում էր իր հերթին...

* * *

Առավոտյան Յոհանը զանգեց.

- Մեր բժշկական ծառայության պետից կարողացա պարզել, որ ոչ մի բժիշկ այստեղից չենք ուղարկել Գերմանիա և մտադրություն չունենք ուղարկելու:

- Ուրեմն, Բեդրի բեյը ստում էր, - ասաց Յաննին և հարցրեց. - Կարո՞ղ եմ ասել, որ քեզնից եմ ստացել այդ տեղեկությունը:

- Կարող ես, իհարկե, բայց չեմ կարծում, թե դա կօգնի գործին: Նա անմիջապես մի նոր սուտ կհորինի: Սակայն ուրիշ մի բան կա...

- Ասա տեսնեմ, ի՞նչ է, - անհամբեր հարցեց Յաննին:

- Այդ ոստիկանապետը, կամա թե ակամա, մի լավ գաղափար հուշեց, միայն թե չգիտեմ՝ կարո՞ղ ենք այստեղից գլուխ բերել...

- Յոհան, պիտի ասե՞ս վերջապես, թե ինչ ես մտածել, - պոռթկաց Յաննին:

- Գաղափարը հետևյալն է. լավ կլիներ, եթե Գերմանիայի հիվանդանոցներից մեկն իսկապես հրավիրեր ամուսնուդ այնտեղ աշխատելու: Եթե այդպիսի հրավեր գա, մենք կպահանջենք, որ Թուրքերն ազատեն նրան, և նույն օրը միասին, պետության ծախսով, կմեկնեիք Գերմանիա:

- Յոհան, դու հրաշք ես, դու փրկարար հրեշտակ ես, դու..., - Յաննին սկսեց ուրախությունից արտասվել:

- Համբերիր, Յաննի, հանգստացիր... Սա առայժմ գաղափար է, դեռ լուրջ անելիք կա առջևում... Առայժմ երկու առավելություն ունենք. որ նա Շվեյցարիայում է ուսանել և որ ռազմական հիվանդանոցում աշխատելու փորձ ունի:

- Իսկ ինչո՞ւ դուք չեք ուղարկում:

- Իրավունք չունենք այստեղից թելադրելու, պահանջը պետք է այնտեղից լինի:

- Յոհան, ինչպե՞ս կարող եմ այստեղից բանակցել հիվանդանոցների հետ:

- Դու չես կարող զբաղվել, բայց հորդ պիտի նամակ գրեիր, ավելացրու նաև այս մանրամասնը: Նա զորավոր բարեկամներ ունի, հեշտությամբ կարող է այդ հրավերը կազմակերպել:

Մայրը, որ նախորդ օրը հոռետես էր, այժմ միանգամից ոգևորվեց.

- Յաննի, ինչպե՞ս չէինք մտածել այդ մասին: Յոհանը ճիշտ է ասում, Ֆրանցը բազմաթիվ բարեկամներ ունի...

Որոշեց, որ ինքն էլ իր կողմից կգրի ամուսնուն: Հետո առաջարկեց, որ անպայման գնան դեսպանատուն:

- Արդեն եղել եմ, մայրիկ: Խոստացան նորություն լինելու դեպքում զանգահարել:

- Ոչ՝, ես ուզում եմ դեսպանին տեսնել:

Դեսպանատանը գրեթե ամեն ինչ նախորդ օրվա պես եղավ, այն տարբերությամբ, որ Վանգենհայմը տեղում էր: Ընդունարանի քարտուղարն ուշադիր լսեց տիկին Ապելին և հինգ րոպե բացակայելուց հետո վերադարձավ ու ընդգծված քաղաքավարությամբ հայտնեց

- Նորին գերազանցություն դեսպանը չի կարող ձեզ ընդունել, որովհետև այդ հարցով պարոն ֆոն Նոյրաթն է զբաղվում:

Ֆոն Նոյրաթը նրանց ընդունեց իր մշտական սիրալիրությամբ: Տիկին Ապելին բարի գալուստ ասելուց հետո հայտնեց.

- Ես խոսել եմ Բեդրի բեյի հետ: Նա շատ զարմացած էր, ասես առաջին

անգամ էր լսում այդ ձերբակալության մասին: Խոստացավ ամեն ինչ պարզել և ինձ տեղյակ պահել:

- Ասացի՞ք, որ իմ խնդրանքով եք զանգել:

- Այո, տիկին:

- Ի՞նչ եք կարծում, որքա՞ն կտևի այս սպասումը:

- Դժվար է ասել... Ուրիշ գործերով էլ առիթ եմ ունեցել դիմելու նրան: Շարունակ նույն պատճառաբանությունն է. պատերազմ է, էֆենդի, դյուրին չէ միանգամից պարզել...

- Եվ դուք հանդուրժո՞ւմ եք այդ խայտառակությունը, - վրդովված հարցրեց տիկին Ապելը:

- Տիկին, մենք դիվանագիտական ներկայացուցչություն ենք, մենք կարող ենք հարցում անել, միջնորդել, խնդրել... Մեր հնարավորություններն այդքան մեծ չեն: Ի դեպ, Յոհանը զանգե՞ց:

- Այո, շնորհակալ եմ, - պատասխանեց Յաննին:

- Ինչո՞ւ եմ հարցնում, որովհետև մարշալն անսահման իշխանություն ունի այս երկրում: Թալյաթը կամ Էնվերը չեն համարձակվի հակառակվել նրա կամքին: Մենք կշարունակենք մեր միջնորդությունը, բայց փրկության ամենակարճ ուղին միակն է. Յոհանը պետք է խնդրի ֆոն դեր Գոլցին միջնորդել ձեր ամուսնու համար:

Յաննին մտածկոտ գլուխն օրորեց:

- Ի՞նչ կա, ի՞նչ ես ուզում ասել, - հարցրեց տիկին Ապելը:

- Չեմ կարծում, թե Յոհանը կհամարձակվի այդպիսի բան խնդրել ֆոն դեր Գոլցից:

- Ես կխոսեմ նրա հետ, - վճռական ասաց տիկին Ապելը:

* * *

Գիշերվա կեսին հանեցին քնից: Թուրք սպան էր, որ արդեն եկել էր նախորդ օրը: «Կներեք, դոկտորս, գնդապետն ուզում է ձեզ տեսնել»: Ավագ ժանդարմը տեղից ելավ, սակայն սպան նշան արեց տեղում մնալու: Մի կերպ ճանապարհ բացեցին խռմփացնող, ոտքուգլուխն իրար խառնած մարմինների միջով և նորից հայտնվեցին սալոն-վագոնում: Գնդապետը տեղից ելավ և ողջունեց.

- Կներեք, դոկտոր, որ ձեր քունը խանգարեցի, կարևոր մի հարցի շուրջ կուզեի խորհրդակցել:

- Խնդրեմ, պարոն գնդապետ:

- Վաղը երեկոյան, հավանաբար, հասնենք Էնկյուրի: Այնտեղ զինվորական հիվանդանոց կա, ուր կարող ենք թողնել այս դժբախտ աղջկան, սակայն կուզեի նախ ձեր կարծիքը լսել:

- Դա կախված է այն բանից, թե վաղն առավոտյան ինչ վիճակում կլինի... Հնարավոր է նույնիսկ այլևս գործողության կարիք չզգացվի:

Գնդապետը մի պահ շեշտակի նայեց Ռուբենին, հետո գրեթե շշուկով հարցրեց.

- Դուք կարծում եք, որ մինչև վաղն առավոտ չի ապրի՞:

- Ամենևին, պարոն գնդապետ, այդ չէր իմ ասածը... Կարո՞ղ եմ նորից տեսնել նրան:

- Այո, իհարկե, - պատասխանեց գնդապետը, բացելով սալոնը երկու կեսի բաժանող վարագույրը:

Աղջիկը շարունակ նույն բազմոցին էր: Նրա հանդարտ շնչառությունից երևում էր, որ խորը քուն է մտել: Կողքը նստած բուժքույրը, որ գլուխը կախ մրափում էր, ցնցվեց և մեղավոր տեսքով ոտքի կանգնեց: Ռուբենը նրան մի կողմ տարավ:

- Վաղո՞ւց է քնած:

- Այո, պարոն կապիտան, ձեր գնալուն պես:

- Իսկ ստուգե՞լ եք, արյունահոսությունը կտրվե՞լ է:

- Այո, կարծես թե:

- Լավ նշան է... Սպասենք, եթե մինչև առավոտ վերջնականապես կտրվի, գուցե վիրահատության կարիք չլինի:

Հետո նորից դարձավ բուժքրոջը.

- Ուշադիր եղեք, որ վարակ չանցնի:

Գնդապետի դեմքին գոհունակություն կար.

- Ժամը շատ հարմար չէ, բայց կարո՞ղ եմ մի բաժակ կոնյակ առաջարկել:

- Հաճույքով, - համաձայնեց Ռուբենը:

Գնդապետը մի կում անելուց հետո ասաց.

- Կուզեի ձեզ մի հարց տալ:

- Խնդրեմ, պարոն գնդապետ:

- Ինչո՞ւ եք ճամփորդում զինված ժանդարմների ուղեկցությամբ:

Ռուբենը ժպտաց:

- Ինձ տանում են հիվանդի մոտ:

- Հա՞, - զարմացավ գնդապետը: - Շա՜տ սրամիտ է... Պոլսի՞ց եք գալիս:

- Այո, պարոն գնդապետ:

- Եվ որտե՞ղ է այդ հիվանդը:

- Սկզբում Բերայում էր, հետո պարզվեց, որ Էնկյուրիում է:

Գնդապետը գլուխը բազմիմաստ վերուվար արեց, ասես հիմա հասկացավ ամեն ինչ:

- Ենթադրում եմ, որ հայ եք:

- Ճիշտ այդպես, պարոն գնդապետ:

Գնդապետը նորից շեշտակի հայացքը մեխեց ղրուցակցի աչքերի մեջ.

- Դուք տեղյա՞կ եք, թե թուրքերն այնտեղ ինչ են անում ձեր ցեղակիցների հետ, - հարցրեց նա՝ ձեռքով գնացքի ուղղությունը ցույց տալով:

- Տեղյակ ենք, և ահավորն այն է, որ ոչինչ չենք կարող անել... Հույսներս միայն Աստծո վրա է...

- Աստված վաղուց լքել է այս երկիրը:

Նա երկրորդ բաժակը խմեց միանգամից և ասաց.

- Ես ներողություն պիտի խնդրեմ ձեզնից, որ մենք դահճի դաշնակիցն ենք...

Դուռն անսպասելի բացվեց, Ռուբենին ուղեկցած լեյտենանտը մտավ ներս և ինչ-որ բան շշնջաց գնդապետի ականջին, վերջինս գլուխն օրորելով Ռուբենին դիմեց.

- Ձեր պահապան հրեշտակները դռան մոտ անհամբեր սպասում են... Ափսո՜ս, իսկ ես մտածում էի ձեզ փրկելու մասին:

- Շնորհակալ եմ, պարոն գնդապետ, բայց արդեն ուշ է...

Քնած մարմինների վրայով մի կերպ վերադարձան բաժնեխցիկ: Սվինները շարունակ մերկացված էին: Ներս մտնելուն պես ավագ ժանդարմը հարցրեց.

- Աղջկա վիճակն ինչպե՞ս է, ողջ կմնա՞:

Նրա ձայնում անկեղծ հետաքրքրություն կար, գուցեև կարեկցանք: Երևի հենց դա գրգռեց Ռուբենին, որը կտրուկ պատասխանեց.

- Դուք միայն ավստրիացի աղջիկներին եք խղճո՞ւմ:

Ժանդարմը ոչինչ չպատասխանեց: Միայն գլուխն օրորեց. դժվար էր ասել, թե դա ինչի նշան է:

Վախենում էր, թե ուշ գիշերով խմած կոնյակը պիտի խանգարի քնել: Սակայն գլուխը ճամպրուկին դնելուն պես կոպերը փակվեցին: Արթնացավ գնացքի կտրուկ կանգառից և արգելակների ականջ ծակող աղմուկից: Դուրս նայեց: Երկնքի սևակապույտն արդեն տեղի էր տալիս բաց թանաքագույնին: Սկզբում լռություն էր: Հետո միջանցքից պայտած կոշիկների աղմուկ լսեց, ձայներ եկան դրսից՝ թուրքերեն, գերմաներեն: Անհանգստություն ծնվեց, տագնապ, բայց՝դժվար էր հասկանալ կանգառի պատճառը: Ավագ ժանդարմը դուրս եկավ պարզելու, թե ինչ է պատահել: Քիչ հետո վերադարձավ ու հայտնեց, որ վթար է, որ կանգառը կտևի մի քանի ժամ: Հետո ավելացրեց.

- Դոկտոր էֆենդի, այստեղից քիչ հեռու մի գյուղ կա, գուցե գնամ աղբյուրի ջուր բերեմ: Կուզեի՞ք ինձ հետ գալ:

Կրտսեր ժանդարմին պահապան կարգելով մթերքի պաշարի վրա, դուրս եկան և երկաթուղին եզերող բլուրը բարձրացան: Առավոտյան սյուքը հաճելի զով էր բերում, սակայն մի տարօրինակ հոտ կար: Բլրի կատարին հասնելուն պես, գեղեցիկ տեսարան բացվեց: Վարը ձորակն էր, որն անցնելուց հետո պիտի մագլցեին մեկ ուրիշ, ավելի բարձր բլրի լանջն ի վեր: Հենց այդտեղ էր փռված գյուղակը. անկանոն ցրված տներ՝ փարթամ պարտեզներով շրջապատված: Հայացքը սահեցրեց լանջն ի վեր և հանկարծ մի սարսուռ անցավ մեջքով: Գյուղի ծայրին, առատորեն կանաչած պարտեզների միջից բարձրանում էր եկեղեցու անխաչ գմբեթը: Ակամայից ժամացույցը նայեց. վեցին երկու րոպե էր պակաս: Ժամհարն ուր որ է զանգահարությունը պիտի սկսի: Բայց քնով էր ընկել: Լուռ էր ամեն ինչ: Անգամ թռչունների՝ այգաբացն ազդարարող, պարտադիր ճռվողյունը չկար: Երդիկներից ծուխ չէր բարձրանում: Աքաղաղները մոռացել էին արթնացնել տանտերերին: Միայն խոտերի մեջ ցատկոտող մորեխների սվսվոցն էր լսվում: Ուրիշ ոչինչ:

- Էֆենդիս...

Ժանդարմն արդեն պատրաստվում էր իջնել ձորակ և նայում էր հարցական: Լուռ գլխով արեց և հնազանդ հետևեց նրան: Ձորակում մի հարուստ կա-

նաչ չերտ երևաց: Անզուսպ աճած խոտերի տակով մի բարակ առու էր հոսում: Ժանդարմն ուրախացած մատը տնկեց վեր և ասաց.

- Ակունքը վերևն է:

Քառորդ ժամ լանջն ի վեր բարձրանալուց հետո հասան առաջին տանը: Գյուղի եզրին կանգնած հողաշեն մի կառույց էր՝ հսկա ծառերի սաղարթի տակ կորած: Հասած թթի արբեցնող բույրը միանգամից զարնվեց ռունգերին: Ծառերի տակն ամբողջովին սև թթի թանձր խյուսով էր պատած, որ նմանվում էր արդեն սևանալ սկսող լպրծուն արյան: Բոռերը, մեղուները, սև ու հսկայական ճանճերը սոսկալի բզզոցով մի խրախճանք էին սկսել: Ժանդարմը, կպչուն մակերեսին հավասարակշռությունը հազիվ պահելով, ձեռքը մեկնեց մոտակա ճյուղին, ուր ընդարձակ տերևների տակից հյութեղ ու խոշոր թթերի մուգ կարմրավուն բծերն էին երևում: Առաջին իսկ հպումից ծառն առատաձեռնությամբ պատասխանեց: Պտուղների մի անձրև թափվեց նրա գլխին, մի երկուսն ուղղակի բերանն ընկան: «Ալլա՛հ, Ալլա՛հ», - խանդավառված բացականչեց ժանդարմը և թանձր հյութից կարմրած ձեռքերով սկսեց ագահորեն բերանը լցնել: Պտուղներից մեկն ընկել էր սվինի ծայրին, և հյութն արյան պես հոսում էր ցած:

Թթենիների ետևը մի տափարակ էր, որտեղ հողն առանց ջրվելու, իր ներքին խոնավությամբ, ղմրուխտյա մի կանաչ էր աճեցրել: Բողկի, կոտեմի, սոխի մարգերը կանոնավոր շարված էին: Ասես բարի պարտիզպանը տքնաջան աշխատելուց հետո մտել էր տուն մի քիչ հանգստանալու: Պարտեզի խորքում կեռասենիների շարքն էր: Սալորի չափ խոշոր ու կարմիր կեռասներն առատորեն կախվել էին ճյուղերից և անհամբեր սպասում էին քաղվելուն: Իսկ քիչ այն կողմ ծիրանի հարուստ ծառերն էին՝ մեծ ու հյութեղ պտուղներով: Տանտերը լավ էր աշխատել, բնությունն էլ շռայլորեն օգնել էր նրան: Բերքն առատ էր այս տարի: Թվաց, թե հիմա դուռը կբացվի և հյուրասեր տանտերը կհրավիրի ներս: Սակայն դուռ չկար... Խորտակված էր, փշրված, ցրված տան շեմին...

Ժանդարմը թթից անցավ կեռասին, իսկ հիմա ծիրանն էր վայելում, հետն էլ հաճույքից տնքում: Վերջապես, հագենալուց հետո, մի քիչ դադար տվեց, մտավ տուն և դժգոհ դուրս եկավ: «Ավազակներն ամեն ինչ տարել են...»: Քայլերն ակամայից տարան ներս: Մի՞թե մարդն իսպառ կարող է անհետանալ իր ձեռքով կանգնեցրած տնից, գոնե մի հետք գտներ, մի վկայություն, մի առարկա...

Տունն ընդարձակ էր, պատերը՝ բարձր, երևում էր, որ վերջերս են կրով սպիտակեցրել: Սենյակները հաջորդում էին իրար, տանտերն ըստ երևույթին ունևոր մեկն է եղել, սակայն հիմա ոչինչ չկար, կատարյալ դատարկություն, եթե չհաշվենք այն կոտրված բաժակը, այս ծռված պատառաքաղը և ջախջախված օրորոցի մոտ ընկած Ս. Գիրքը, որ բացվել էր վերջին էջի վրա, այնտեղ, ուր ծնունդն ու մահը, կնունքն ու ամուսնությունն են գրանցվում: Ահա, առաջին նշումը. «Աստուածաշունչն զայս բերեալ յԱմստերդամէ Յամի Տեառն ՌՈԴԲ...»: Գրանցումները հաջորդում էին իրար՝ կապույտ, սև, կանաչ, կարմիր թանաքով... Կապույտը կնունքն էր, կանաչն՝ ամուսնությունը, սևը՝ մահը, կարմիրը՝ ծնունդը... Գույները հավասար հարաբերությամբ հաջորդում էին իրար, վերջի-

նը կարմիրն էր. «Ցամի Տեառն ՌՉԺԵ յամսոյս փետրուար 1-ին ծնեալ արու զաւակ Վարուժան՝ յոյս և ապաւեն Տէր-Գաբրիելեան տոհմին»: Ճեպ-ճերմակ պատին արյան ընդարձակ մի հետք կար...

- Թյո՛ւ, ամեն ինչ մուռտառել են... Էֆենդիս, հապա այստեղ եկեք:

Ժանդարմը կանգնել էր ջրհորի բաց բերանի մոտ և ղղվանքից երեսը ծռմռել: Անապակի և անփեղկ պատուհանների միջով ուղղակի դուրս եկավ պարտեզ և մոտեցավ ջրհորին: Խորքից եկող գիշահոտն ստիպեց ետ քաշվել, բայց հասցրեց նկատել ջրից դուրս ցցված կմախքացող ոտքերը՝ փտող մսի ծվենները վրան:

Լուռ և գլխիկոր դուրս եկան պարտեզից: Մի պահ կանգնեցին անորոշության մեջ, հետո քայլեցին լանջն ի վեր, խորանալով դատարկ գյուղի մեջ: Ուղղությունը եկեղեցու գմբեթն էր: Բոլոր տները նույն տեսարանն էին ներկայացնում: Միայն թե տեղ-տեղ պատերը փլված էին, ավերակների միջից անսպասելի կատուներ էին հայտնվում, չար ու կասկածոտ հայացքով նայում անկոչ հյուրերին և անմիջապես անհետանում թփերի մեջ: Հանկարծ ձայներ հասան ականջին: Կանացի և տղամարդու: Թուրքերեն էին խոսում: Ճամփան չեղեցին, որ մոտենան տանը, երբ ցանկապատի ետևից մի գամփռ հայտնվեց և սկսեց սպառնալից հաջալ: Նրան հաջորդեց քառասնամյա մի տղամարդ, ընդարձակ շալվարի փողքերը քշտած, ոտաբոբիկ, բահը ձեռքին: Զարմացած նայեց եկվորներին, չանը քշեց ներս և քծնական ժպիտը դեմքին, մինչև դետին խոնարհվելով ասաց.

- Մերհաբա, յուզբաշիս, պատիվ արեք մտեք ներս, միրդ անուշ արեք:

- Շնորհակալ ենք, եղբայր, շտապում ենք, - պատասխանեց ժանդարմը:

- Ձեզնից զատ ուրիշ ո՞վ կա այս գյուղում, - հարցրեց Ռուբենը:

- Միայն մենք ենք, յուզբաշիս: Այստեղ հայեր էին ապրում, երկու ամիս առաջ տարան նրանց:

- Ո՞ւր տարան:

- Չգիտեմ, ես այստեղ չեմ եղել... Ասում էին, իբր դնացքով Հալեպ պիտի տանեին, բայց հետո լցրել են եկեղեցու մեջ և այրել:

Տարօրինակ հոտն առավ նորից, որ գալիս էր առավոտյան սյուքի հետ:

- Ես այս գյուղից չեմ: Երբ հայ չմնաց այստեղ, չորս կողմից եկան ու լավ տները գրավեցին: Մենք էլ եկանք: Հայերը գռները փակել ու դնացել էին...

Գյուղացին ծիծաղեց բեղի տակ: Անշուշտ, վստահ էր, որ առջևը թուրք սպա է:

- Կարծում էին, թե նորից հետ են գալու... Իրենց այդպես էին ասել: Դռները ջարդեցինք մտանք ներս: Ի՜նչ ասես որ չկար... Միայն փողն էին տարել հետները, մի քիչ էլ շոր... Փողն էլ ժանդարմներն առան ձեռքներից: Ասացին, ով ուզում է դնացքով տեղ հասնել, պիտի վճարի...

Գյուղացին նախանձով գլուխն օրորեց:

- Ժանդարմները լա՜վ փող չինեցին էս գյուղում... Մեծ մասը վճարեց... Ճարներն ի՞նչ էր: Դրանց հավաքեցին տարան երկաթուղու մոտ, մնացածներին էլ փակեցին եկեղեցում: Հետո նավթ լցրեցին ու չորս կողմից կրակ տվին...

Մուռտառ հոտը մինչև հիմա գալիս է... Կողքի աղբյուրն էլ հարամեցին գյավուրները...

Հետաքրքիր էր նրան լսել, մանավանդ որ խոսում էր անկեղծ, բնական, ինչպես թուրքը թուրքի հետ: Այսպիսի առիթ այլևս հազիվ ունենար, ուստի զզվանքը զսպելով, որոշեց մեղմորեն խթանել գյուղացու յուրատեսակ խոստովանությունը: Վերջինս զրուցասեր մեկն էր երևում:

- Անունդ ի՞նչ է:

- Ադնան, էֆենդիս:

- Իսկ հայերի ունեցվածքն ի՞նչ եղավ:

- Ի՞նչ պիտի լիներ, էֆենդիս, կողքի գյուղերից եկան, տները մտան, ում ձեռքի տակ ինչ ընկավ, էն էլ վերցրին... Ի՜նչ ասես կար: Անասուններն էլ էին մնացել, կովերին ու այծերին կթող չկար... Խեղճ հայվանները ո՜նց էին տառապում... Բոլորը հավաքեցին ու տարան... Բայց էդ բոլորը հեչ... Ամենախելոքն իմ հարևան Հասանը եղավ: Եկեղեցու հրդեհի օրը գիշերը մնացել էր այստեղ: Սպասել էր մինչև կրակը մարի, հետո առավոտյան մտել էր ներս և էդ վառվածների ու խեղդվածների վրայից լիքը ոսկի ու արծաթ հավաքել... Միայն բերաններից երկու բուռ ոսկի ատամ էր քաշել... Ես էլ գնացի, բայց հազիվ էս մատանին գտա...

Ձեռքը մեկնեց և միջնամատին հագցված պսակի մատանին ցույց տվեց, որը կրակից, թե մակարդված արյունից սևացել էր:

- Ներքևը մի քանի պատեր կային փլված: Ի՞նչ է պատահել:

- Մեր գյուղացիք փլեցրին, ոսկի էին ման գալիս... Ասում են հայերն իրենց ոսկիները տան պատերի մեջ են պահում...

- Եվ ի՞նչ, գտա՞ն:

- Չգիտեմ, էֆենդիս, գուցե գտան, բայց վախենում են ասել, որ ոստիկանները չբռնագրավեն:

- Իսկ դու չես ուզո՞ւմ բախտդ փորձել, դեռ բազմաթիվ չփլված պատեր կան:

- Չէ, էֆենդիս, ես վախենում եմ... Էս գյուղն անեծք եղավ իմ գլխին: Երկու ամիս առաջ եկա այստեղ և երկու զավակ կորցրի...

- Ինչի՞ց:

- Չհասկացա, էֆենդիս... Միանգամից անկողին ընկան, կրակի պես վառվում էին: Ո՛չ բժիշկ կար էստեղ, ո՛չ հեքիմ, որ հասկանայինք, թե ինչպես բուժենք... Միանգամից գնացին: Վերջը հասկացա, որ գյավուրի անեծքն էր, որ մենք իրենց տներն էինք մտել, իրենց ունեցվածքին տիրացել...

Ադնանի կոշտացած երեսով երկու կաթիլ հոսեցին ու կորան աղպղպեղ մորուքի մեջ: Քիսան հանեց և սկսեց ծխախոտ փաթաթել: Ժանդարմը շարունակ լուռ էր:

- Միայն քո երեխաները հիվանդացա՞ն:

- Ուրիշ երեխաներ էլ հիվանդացան, մեծերն էլ, բայց դրանց անեծքը միայն իմ զավակներին կպավ... Թաղումի հաջորդ օրը բոլորը հեռացան այս գյուղից, մնացինք ես ու կինս...

- Ալլահը թող քեզ նոր զավակներ պարգևի, - վերջապես խոսեց ժանդարմը: - Ասում ես աղբյուրը վերևն է՞:

- Վերևն է, չավուշս, բայց հարամված է: Գնացեք ինքներդ տեսեք:

Շարունակեցին վերելքը և քիչ հետո հայտնվեցին մի ընդարձակ տափարակում, որի կենտրոնում կանգնած էր ածխի պես սևացած եկեղեցին: Ընդարձակ հրապարակը եզերված էր դարավոր թթենիներով: Քաղցուի, այրվածքի հոտին այստեղ ավելանում էր հրկիզված մարմնի ճենճահոտը: Եկեղեցու ծանր, փայտակուռ դռներն ածխացած տապալվել էին մուտքի առջև: Ներսը խավար էր, սակայն դժվար չէր տեսնել կիսախանձ, ոսկրացած, խառնիխուռն ընկած մարմինները, որոնք ամենայն հավանականությամբ, բորենիների և վայրենացած շների ավարն էին դարձել: Փորձեց մոտավոր հաշիվ անել. քսան, երեսուն... թերևս հիսուն... Ամենուր էին... Մուտքի մոտ, պատերի տակ, գավիթում, խորանի վրա... Եկեղեցուց քիչ հեռու աղբյուրի հսկայական գուռն էր, ասես քարի նավակ լիներ, որին հեռավոր ուղևորություն էին խոստացել, բայց տեղից շարժվել չէր կարող... Պատերը ներսից կանաչել էին, և ջրի թեթևակի շարժումը զանազան երանգներ էր հաղորդում: Ակունքը չկար, ավերված էր, քանդված, ցեխակոլոլ դարձած: Ջուրն, ասես, գետնի տակից աննկատ գալիս ու լցվում էր գռի մեջ... Խանձաբույրն այստեղ ուրիշ երանգ ուներ, խառնված էր գիշահոտին... Հայացքը բարձրացրեց և աղբյուրից քիչ հեռու չորս-հինգ բզկտված դիակներ տեսավ... Դրանցից մեկի լերկացած գանգին երևում էր հրազենից բացված կլոր անցքը...

Երևակայությունն անմիջապես մի տեսարան ստեղծեց. հրդեհի պահին, մի քանի հոգի, ուղղակի վտանգը դիմագրավելով, ինչ-որ կերպ կարողացել են գուրս պրծնել այրվող եկեղեցուց և բնական մղումով նետվել դեպի ջրով լցված գուռը... Սակայն ժանդարմների գնդակները վերջնականորեն ի չիք են դարձրել փրկության նրանց հույսերը... Դիակները մնացել են այդտեղ, մեկ օր, երկու օր, մեկ շաբաթ, գուցե մեկ ամիս... Քայքայվելով թունավորել են զուլալ ջրի ակունքը... Դատարկված գյուղի նոր տերերը փորձել են դիակները հեռացնել աղբյուրից, բայց արդեն ուշ էր, դիակային թույնը ծծվել էր հողի մեջ, ջրի հետ տարածվել գյուղով մեկ...

Գռի կողքին հայերեն դրեր նկատեց. «Կանգնեցուց աղբիւրն զայս Մահտեսի Կիրակոս ի յիշատակ ուխտագնացութեան առ ի Ս. Երուսաղեմ ՌՆՃԹ»:

- Էֆենդիս...

Գլուխը բարձրացրեց: Գռի մյուս կողմում ժանդարմն էր կանգնել փարչը ձեռքին և հարցական հայացքը հառել: Ինքը դեռ մտքերի մեջ էր, Կիրակոսին էր տեսնում մտովին, ուխտը կատարվել էր հավանաբար և առ ի երախտագիտություն այս աղբյուրն էր նվիրել իր գյուղին... Ժանդարմը շարունակում էր անօգնական ու խեղճ նայել: Խոսելու ցանկություն չուներ, միայն գլուխը ժխտական շարժեց: Նրանք լուռ և գլխիկոր անցան գյուղի միջով: Կլայեկած դատարկ փարչն ամեն մի քայլից խուլ արձագանքում էր, ասես բողոքեր, որ լիքը չէ: Երբ արդեն գյուղից դուրս էին գալիս, հիշեց, որ այդ հասած և հյութեղ պտուղներից ոչ մեկը չհամտեսեց... Դրանք իր համար այլևս ուրվական պտուղ-

ներ էին, ուրվական ծառերի վրա, ուրվական տների առջև... Վերջին անգամ հայացքը հառեց եկեղեցու ողբերգականորեն վեհապանծ գմբեթին, ծնրադրեց և աղոթք մրմնջաց իր տեսած առաջին նահատակների հիշատակին...

* * *

Շոգերն արդեն սկսվել էին, և Թերապիայում գտնվող գերմանական այս գաբեջրատանն ասեղ գցելու տեղ չկար: Սակայն հիմնական սրահին պատկից, Բոսֆորին նայող երեք սենյակներ կային, որտեղ չքեղ կահավորումի և մտերմիկ մթնոլորտի մեջ սիրում էին հաճելի ժամանց վայելել գերմանացի սպաներն ու դեսպանատան աշխատակիցները: Սա հատկապես Վանգենհայմի սիրած տեղն էր: Դեսպանը վերջին շաբաթ Թուրքիա մտած գերմանացիների ցանկը նայելով բացականչեց.

- Հա՜, տիկին Ապելն է եկել... Ես կարծում էի, որ ամուսինը կգա: Ի՞նչ պիտի անի այդ խեղճ կինն այստեղ:

- Նրանք ճիշտ հաշվարկ են արել. գնդապետը մնացել է Եվրոպայում, որպեսզի կարողանա իր կապերն օգտագործել տեղում, իսկ մայրը եկել է այստեղ, որպեսզի աղջկա հետ միասին մեզ հետապնդի:

- Դուք խոսեցի՞ք այդ ոստիկանապետի հետ:

- Ոչ, - անվրդով պատասխանեց ֆոն Նոյրաթը:

- Բայց, կարծեմ, դոկտորի կնոջն ուրիշ բան եք ասել, - նույնպիսի անվրդովությամբ նկատեց Վանգենհայմը:

- Ճիշտ այդպես:

- Կոնստանտին, դուք արդեն սկսել եք Թուրքերի պես աշխատել:

- Բայց ես չեմ ստել, - արդարացավ ֆոն Նոյրաթը:

- Դրանից ավելի մեծ սո՞ւտ. քաղաքի գլխավոր ոստիկանի անունից հայտարարություն եք անում մեր քաղաքացիներին:

- Ես հետևյալ առաջարկն ունեմ. այսօրևեթ այդ հարցով կզանգեմ Բեդրի բեյին և գրազ կգամ, որ բառացիորեն կասի այն, ինչ արդեն հայտնել եմ մայր և աղջիկ Ապելներին:

- Իսկ եթե գրազը կորցնե՞ս...

- Եթե կորցնեմ, ապա մեր հաջորդ ճաշը Պրինկիպո կղզում կլինի, որը շատ հավանական է դուք վճարեք:

- Տեսնենք, տեսնենք, - ժպտաց Վանգենհայմը:

- Մեկ ուրիշ հանգամանք կա, որն ինձ շատ չդրդեց խոսել Բեդրի բեյի հետ:

- Ի՞նչ հանգամանք, - հետաքրքրվեց Վանգենհայմը:

- Ես իմ հյուպատոսի կարգավիճակով իրավունք ունեմ միայն տեղեկություններ հարցնել խնդրո առարկա անձի վերաբերյալ, սակայն կինն ավելին է սպասում մեզնից. ուզում է, որ մենք ետ բերենք իր ամուսնուն: Իսկ դա կարող է տեղի ունենալ միայն ձեր միջնորդությունից հետո:

- Հասկացա, - ծոր տվեց Վանգենհայմը: - Սակայն զարմանալի է՝ ինչո՞ւ հիմա աքսորեցին նրան և ոչ թե երկու ամիս առաջ:

- Կարծում եմ, որ զգուշանում էին մեզնից:

- Դա բացառություն չէ, - առարկեց դեսպանը: - Ըստ ձեզ նրանք այլևս չեն զգուշանում:

- Հիմա ավելի են զգուշանում, ապացույց, որ Բեգրի բեյն աներևակայելի ստեր հորինելով հասկացրել է Յաննի Ապելին, որ խնդրի լուծումը դեսպանատանը փնտրի:

- Ձերբակալում են, բայց առայժմ չեն մորթում..., - հայացքն անորոշ կետի հառելով մտորեց դեսպանը:

- Սակայն եթե միջնորդեք, ոչ միայն չեն մորթի, այլև կազատեն աքսորից:

- Իսկ ո՞ւմ հետ պիտի խոսեմ, - միամիտ ձևանալով հարցրեց Վանդենհայմը:

- Միայն Թալյաթի, որովհետև այդ Բեգրի բեյը խեղկատակ է:

- Եվ այդքանը բավական կլինի՞:

- Իհարկե, լավագույն դեպքում մեկ-երկու օր հետո իր սիրելի կնոջ դրկում կհայտնվի, վատագույնը՝ կմնա Անատոլիայի զինվորական հիվանդանոցներից մեկում՝ թուրք զինվորների կյանքը փրկելու... Ի դեպ, նա աշխատում էր Պոլսի ավստրիական հիվանդանոցում և այնտեղ աչքի է ընկել բացառիկ նվիրվածությամբ:

- Ահա և ստանում է վարձատրությունը թուրքերից, - նկատեց դեսպանը:

- Իսկ մենք ուրիշ կերպ կվարվե՞նք, եթե մեր հիվանդանոցներում ֆրանսիացի կամ ռուս բժիշկներ աշխատեին, - անմեղ տեսքով հարցրեց Նոյրաթը:

- Մենք ստիպված չէինք լինի այդպիսի ապերախտություն ցուցաբերելու, որովհետև ռուսներն և ֆրանսիացիներն առիթը չէին ունենա մեր վիրավորներին բուժելու:

- Թուրքերը չեն կարող նման շռայլություն թույլ տալ իրենց:

- Ձեն կարող, բայց աշխատեցնում են, հետո՝ աքսորում, հետո էլ մենք նրանց եփած ճաշը պիտի ուտենք:

- Ձեր մեկ զանգը բավական կլինի, - հուշեց ֆոն Նոյրաթը:

- Ես էլ եմ կարծում, որ բավական կլինի, - ընդունեց դեսպանը: - Բայց չէի ուզի այդ գնչուից որևէ բան խնդրել, նա մի փոքրիկ ծառայություն է մատուցում, տեղը տասն է խնդրում: Նույնիսկ կարծում եմ, որ հենց այդ նպատակով է ձերբակալել համոզված, որ ես պիտի անպայման միջնորդեմ, ինքն էլ այդ ժամանակ վրաս թանկ ծախի իր չնչին լավությունը...

- Այդ դեպքում պետք չէ:

- Ես ձեզ չեմ հասկանում, Կոնստանտին: Քիչ առաջ ասացիք, որ իմ մեկ զանգը բավական կլինի հային փրկելու համար, ասես նրբորեն դրդում էիք այդ քայլին, հիմա էլ ասում եք պետք չէ:

- Ես ոչ ստիպել կարող եմ ձեզ, ոչ էլ դրդել, ես պարզապես վիճակն եմ ներկայացնում, - արգարացավ ֆոն Նոյրաթը:

- Վիճակն ինձ քաջ ծանոթ է, սակայն կես ժամ է խոսում ենք այս հարցի շուրջ և չեմ կարողանում հասկանալ, թե ինչ է ձեր ուզածը:

- Ես պարզապես կատարում եմ իմ ծառայողական պարտականությունները, - դասը լավ սերտած աշակերտի պես, աչքերն առանց թարթելու, պատասխանեց հյուպատոսը:

Վանգենհայմը տեղից ելավ, պատուհանը բացեց, սիգարը վառեց և, ասես ինքնիրեն, կրկնեց մի քանի անգամ. «Այո, իհարկե, ծառայողական պարտականություններ, այո, իհարկե...»: Հետո միանգամից դառնալով հյուպատոսին ասաց.

- Լսեք, Կոնստանտին, ես գիտեմ, որ դուք հիմար չեք, ավելին՝ խելացի եք, ավելին՝ անթերի եք կատարում ձեր ծառայողական պարտականությունները, սակայն ես ծայրահեղ արհամարհանքով կնայեի ձեզ, եթե իմանայի, որ դուք բավարարվում եք այդքանով...

- Իսկ մի՞թե այդպես չէ, - շարունակեց միամիտ ձևանալ Ֆոն Նոյրաթը:

- Ոչ, այդպես չէ, քանզի երկու անգամ նույն հարցով Յանների Ապելին ընդունելիս դուք խախտել եք այդ պարտականությունների սահմանները:

- Բայց չէ որ պետք է տեղյակ լինեմ մեր քաղաքացիներին առնչվող բոլոր խնդիրներին:

- Այո, եթե հարցը վերաբերում է մեր քաղաքացիներին, բայց ի՞նչ գործ ունեք օսմանյան հպատակների հետ, եթե անգամ նրանք մեր աղջիկների ամուսիններն են:

Ֆոն Նոյրաթն անկեղծ զարմանքով ձեռքերը տարածեց:

- Ես ձեզ չեմ մեղադրում, - շարունակեց դեսպանը: - Լավ եք արել, որ ընդունել եք: Բայց ես կուզեի, որ հիմա մի բան անկեղծորեն ասեք ինձ. դուք ուզո՞ւմ եք, որ նրա ամուսինը վերադառնա աքսորից:

- Այդպես չի կարելի հարցը դնել... Ես պարզապես ուզում եմ օգնել:

- Ո՛չ, ես հարցը ճիշտ եմ տալիս, Կոնստանտին, և քո անկեղծ պատասխանից է կախված՝ կխոսե՞մ Թալյաթի հետ, թե ոչ:

- Բայց ես անկեղծ եմ ասում. պարզապես ուզում էի օգնել:

- Այդ դեպքում ինչո՞ւ մինչև հիմա չես խոսել Բեդրի բեյի հետ:

Ֆոն Նոյրաթը նորից ձեռքերը տարածեց:

- Կարող ես չպատասխանել, միևնույն է գիտեմ, թե ինչ ես ասելու:

- Ոչ, կպատասխանեմ, - անվրդով ասաց Ֆոն Նոյրաթը: - Ինձ թվում է, որ շատ մեծ կարևորություն ենք տալիս այս սովորական պատմությանը:

- Համաձայն եմ, - ընդունեց դեսպանը: - Պատմությունն իրոք սովորական է, բայց նկատի առնենք, որ աղջկա հայրը՝ գնդապետ Ֆրանց Ապելը չնայած թոշակի է անցել, բայց մնում է արժանավոր և հարգված մի անձնավորություն: Նա բազմաթիվ կապեր ունի: Հիմա անպայման գործի է անցել, որպեսզի փրկի իր փեսային, և ես չեմ զարմանա, եթե առաջիկա օրերին դեպեշ ստանանք մեր նախարարությունից, հնարավոր է նույնիսկ վարչապետի գրասենյակից...

- Հնարավոր է նաև գլխավոր շտաբից, - լրացրեց հյուպատոսը:

- Ես այդ մասին մտածել եմ, բայց դա մեր գործը չէ:

- Մանավանդ որ այստեղ արդեն մտահոգված անձնավորություն կա, - ավելացրեց Ֆոն Նոյրաթը:

Դեսպանը հարցական նայեց նրան:

- Յոհան Ապելը, Ֆրանց Ապելի եղբորորդին, որ մարշալի հանձնակատարն է:

- Դա հարցն էականորեն փոխում է, - գոհունակությամբ նշեց դեսպանը:

- Ինչպե՞ս հասկանալ ձեզ:

- Շատ պարզ. մարշալը և Բրոնզարտն իրավունք ունեն տեղում ուղած վճիռն ընդունելու, մինչդեռ մենք հասարակ մի խնդիր լուծելու համար շաբաթներով գրագրություն ենք ծավալում նախարարության հետ... Հրաշալի է, թող բանակը զբաղվի նրանով, մանավանդ որ խնդրո առարկա անձն սպա է:

- Սակայն կա մի նրբություն, նույնիսկ երկու. ֆոն դեր Գոլցն այնպես է սրհամարհում Էնվերին, որ հազիվ թե մի կապիտանի համար խոսի նրա հետ, իսկ Բրոնզարտն առավել ևս չի միջնորդի, նա հայտնի է իր թրքասիրությամբ, իսկ Սարիղամիշի պարտությունից հետո դարձել է կատաղի հայատյաց:

- Հրաշալի է, ուրեմն, հարցը փակվեց, - ամփոփեց դեսպանը:

- Այդպե՞ս եք կարծում:

- Այո, մենք առայժմ ոչինչ չենք անի:

- Մինչև ե՞րբ:

- Մինչև որ նախարարությունը կամ ռայխսկանցլերի գրասենյակը Ֆրանց Ապելի և նրա բարեկամների գրոհներից զզված վերջապես մի հրահանգ ուղարկեն մեզ, և այդ ժամանակ, սիրելի Կոնստանտին, մենք ազնվորեն կկատարենք մեր ծառայողական պարտականությունները:

- Սակայն մինչ այդ, երկու տիկինները պիտի շարունակեն համառորեն մեր դռները բախել:

- Ընդունեք նրանց և անորոշ խոստումներ տվեք... Ինչպես թուրքերն են անում, - քմծիծաղով խորհուրդ տվեց դեսպանը: - Հը՛մ, թուրքերին չկարողացանք քաղաքակրթել, բայց ինքներս նրանցից հոռի սովորություններ ձեռք բերեցինք...

- Սակայն նրանք համոզվելով, որ ինձնից որոշակի բան չեն լսում, պիտի ցանկանան ձեզ տեսնել... Դժվար կլինի մերժել, մանավանդ այդ խեղճ կնոջը, որ Եվրոպայից եկել հասել է այստեղ:

- Ձգձգեք, որքան կարող եք, հետո կտեսնենք, - հրահանգեց դեսպանը:

Վերադարձին, երբ ֆոն Նոյրաթի մեքենան անցնում էր հրեական գերեզմանոցի մոտով, Վանդենհայմը չհապաղեց նկատել.

- Լսեք, Կոնստանտին, այդ ի՞նչ զարմանալի հակում ունեք դեպի գերեզմանոցները. երկու ամիս առաջ ձեր հավանած կանանցից մեկին զբոսանքի տարաք հայկական գերեզմանոց, անցած շաբաթ գործարանատիրոջ աղջկան տարաք հունական գերեզմանոց, հիմա էլ ինձ տանում եք եբրայեցիների գերեզմանոցի կողքով...

Ֆոն Նոյրաթը, լիովին տիրապետելով իրեն, պատասխանեց.

- Մեղքն իմը չէ, բարոն, այս քաղաքում գերեզմանները շա՜տ-շատ են...

Օրվա վերջում հյուպատոսը մտավ դեսպանի մոտ և սարկաստիկ ժպիտը դեմքին հայտնեց, որ քիչ առաջ խոսեց Բեդրի բեյի հետ:

- Ի՞նչ ասաց, - հարցրեց դեսպանը:

- Բառացիորեն այն, ինչն արդեն հայտնել եմ մայր ու աղջիկ Ապելներին: Հետո, դուրս գալուց առաջ, մեղմորեն հարցրեց.

- Բարոն, դուք կարծեմ ուզում էիք, որ Պրինկիպո գնանք:

- Այո, այնտեղ մի հրաշալի ռեստորան կա, - բռնազբոս ժպիտը դեմքին պատասխանեց Վանգենհայմը:

- Կարո՞ղ եմ որպես գրազը շահող խնդրել, որ ուրիշ տեղ գնանք, - խոնարհաբար հարցրեց հյուպատոսը:

- Կարող եք, անշուշտ, բայց ինչո՞ւ...

- Այդ կղզին շատ հայկական է, - պատասխանեց ֆոն Նոյրաթը:

* * *

Տարօրինակ զգացումներ էր հարուցում այս քաղաքը: Սկզբում պարզապես սիրահարված էին: Երբ Յաննին եկավ այստեղ ուսանելու, առիթը չէին փախցնում՝ մի շաբաթով, թեկուզ մի քանի օրով այցելելու, չասած ամառային արձակուրդների մասին, որ արդեն վաղո՛ւց անց էին կացնում Շամպերիում: Որոշել էր թոշակի անցնելուց հետո գալ և հաստատվել Լոզանում: Սակայն աղջկա ամուսնությունը հայի հետ կարծես ստիպեց որոշ ժամանակով հետաձգել այդ ծրագրի իրականացումը: Դժվարանում էր բացատրել, թե ինչու, բայց մի թաքնված դժկամություն ստիպում էր առայժմ մնալ Էրֆուրտում: Պատերազմը, այնուհետև աղջկա և փեսայի մեկնումը Պոլիս վերջնականապես հստակեցրին ամեն ինչ: Առանց հապաղելու եկան և տուն գնեցին Լոզանի գեղեցիկ թաղերից մեկում: Իր խիղճը մաքուր էր ու հանգիստ: Նախ, արդեն թոշակի էր անցել և իրավունք ուներ ապրել իր ուզած տեղում, իր ուզած ձևով: Բացի այդ, որպես նախկին սպա, որպես գերմանացի դեմ էր այդ պատերազմին և գտնում էր, որ միայն չարիք է բերելու իր հայրենիքին: Այնուհանդերձ, այստեղ գալուց հետո, այս գեղեցիկ քաղաքն իր հրաշագեղ լճով նախկին վայելքը չէր պատճառում նրան: Ինչ-որ անհանգստություն, անբացատրելի մի տագնապ էր զգում: Հույս ուներ, որ ժամանակի հետ ամեն ինչ կանցնի: Օրը եկավ, բայց հետը բարին չբերեց: Նախ, այդ հեռագիրն ստացան ուշ գիշերով, երբ խորը քնի մեջ արդար երազներ էին տեսնում: Այն ծանր հեռագիրը հիշեց, երբ Էրֆուրտում, դարձյալ կեսգիշերն անց, անկողնի մեջ նստած փորձում էին վերծանել երկիմաստ բառերը: Այն մեկը, սակայն, անմեղ բան էր սրա համեմատ: Զարագուշակ գաղտնիք կար այդ մի քանի բառի մեջ. «Sofort mutter kome: Janni»: Ի՞նչ է պատահել, որ գիշերվա երեքն անց կեսին շտապ հեռագիր է ուղարկել: Անշուշտ, լավ գիտի, թե ինչ է նշանակում այսօր, պատերազմական այս թոհուբոհի միջով, Շվեյցարիայից գնալ Պոլիս: Ինքն է անցել այդ ճանապարհով: Այն ժամանակ պատերազմը դեռ նոր էր սկսվել, գնացքները լավ թե վատ աշխատում էին, մինչդեռ այսօր ամեն ինչ անորոշ է, ճամփորդությունը կարող է շաբաթներ տևել, գնացքը կարող է ընդհանրապես տեղ չհասնել... Չասած ավելի վատ բաների մասին... Սակայն Գրետան պնդում էր, որ ամենամոտիկ գնացքով պիտի մեկնի: Զորս բա-

ռանոց հեռագրի անորոշությունն առիթ էր տալիս շատ որոշակի բաներ ենթադրելու: Այդ երկրում, նույնիսկ խաղաղ ժամանակներում ահավոր գրաքննություն կար փոստային բոլոր առաքումների վրա: Հիմա պիտի ավելի խստացված լինի: Նշանակում է, եթե իր հետ կամ երեխաների հետ մի բան պատահած լիներ, անպայման կգրեր: Հիվանդ երեխան ռազմական գրաքննությանը չէր մտահոգի: Ուրեմն խնդիրն առնչվում է իրենց փեսային, և այնպիսի խնդիր, որ չի կարողացել անգամ հեռավոր ակնարկ անել այդ մասին...

Գրետան մեկնեց: Բարեբախտաբար յոթ օրում հասավ: Փա՜ռք Աստծո, բախտը բերել է: Նրա հեռագրից կասկածներն ավելի հաստատվեցին. «Բարեհաջող հասա. երեխաները Յաննին լավ են»: Իսկ փեսա՞ն: Նա լավ չէ՞... Բայց ի՞նչ է պատահել...

Այդ հարցի պատասխանը վերջապես այսօր ստացավ: Հյուպատոսարանի ցրիչը զմուռսով կնքված մի ծրար բերեց՝ կայզերական ղինանշանը վրան: Ստիպված եղավ երկու անգամ կարդալ Յաննիի և կնոջ նամակները, որպեսզի կարդին հասկանա, թե ինչ է կատարվել այդ անիծյալ երկրում: Յաննին գրել էր միայն ամուսնու խորհրդավոր ձերբակալության մասին և եթե չլիներ Գրետայի նամակը, ոչ մի կերպ չպիտի հասկանար, թե ինչպես կարող են լավ բժշկին, նվիրված սպային, վերջապես ազնիվ քաղաքացուն ստորաբար ձերբակալել, տանել անհայտ ուղղությամբ և առանց ամոթի, որպես բացատրություն, զանազան ստեր ասել կնոջը: Եթե չլիներ կնոջ նամակը, պիտի կարծեր, թե Յաննին չափազանցության մեջ է ընկել. ի վերջո պատերազմական օրեր են, ամուսինն էլ զինվորական բժիշկ է, այո, կարող են կես գիշերին գալ, քնից հանել ու տանել, և շատ անգամ կնոջը պարտավոր չեն ասել, թե ուր են տանում, ռազմական գաղտնիք գոյություն ունի, չէ՞... Ուշացե՞լ է, յոթ-ութ օր է լուր չունե՞ն... Թերևս մի քիչ երկարել է, բայց այդպես էլ կարող է պատահել... Ոստիկանապետը չգիտի թե որտեղ է՞... Իսկ ոստիկանապետն ինչո՞ւ պիտի իմանա, թե բանակային սպան, պատերազմի ժամանակ, որտեղ է գտնվում...

Սակայն Գրետայի նամակը հուշում էր, որ փեսայի անհետացումը հրեշավոր իրողության փաստերից մեկն է լոկ... Այդ պատվելիի վկայությունները, հայ ընտրանիի ձերբակալությունները Պոլսում և ընդհանրապես պետության թշնամական վերաբերմունքը հայերի հանդեպ... Վիճակն իսկապես լուրջ էր, ստուրդ վտանգ էր կախված իր փեսայի գլխին... Հնարավոր է նույնիսկ, որ այլևս...

Ահավոր մի զայրույթ համակեց նրան: Եթե մինչև հիմա որոշ պաղություն էր ունեցել Յաննի ճակատագրական ընտրության հանդեպ, ապա հիմա աներևակայելի վճռականությամբ լցվեց՝ անել ամեն ինչ, որպեսզի բորենիների երախից փրկի այդ տղային... Եվ հազա՛ր անգամ ճիշտ է Գրետան, որ այս չլսված ամոթն ընկնում է նաև գերմանացիների վրա, քանզի իսկապես մեր մի խոսքը բավական կլիներ թուրքերին հետ պահելու համար հանցավոր մտադրություններից...

Եթե Գրետայի նամակը չլիներ, հավանական է, որ բավարարվեր մի զուսպ խնդրագիր ուղարկելով ռազմական նախարարին, սակայն հիմա, բոլոր հասցեներով, նախևառաջ իր խորին վրդովմունքը պիտի հայտներ դաշնակից

երկրում անմեղ մարդկանց, քրիստոնյա ժողովրդի հանդեպ կատարվող բարբարոսական արարքների առիթով, իր պետության վճռական միջամտությունը պիտի պահանջեր ոչ միայն փեսայի, այլև բոլոր հայերի համար: Ինչ վերաբերում է հիվանդանոցից հրավեր կազմակերպելուն, ապա այդ հարցով ավելի խոհեմ կլիներ դիմել ընկերոջը՝ Ռայնհարդտին:

* * *

Որոշեց այլևս ետ չնայել, այլ հնարավորին չափ շուտ մոտենալ գնացքին և այնտեղ, բաժնեխցիկի հսկվող մենության մեջ մտորել տեսածի մասին: Սակայն բլրի կատարից երբ իջնում էր ձորակ, նորից շրջվեց և մի քանի վայրկյան հայացքը մեխեց սևացած գմբեթին:

- Մեղք էին էդ մարդիկ, - ասաց ժանդարմը:

- Ովքե՞ր:

Հասկանալի էր, թե ինչ է ուզում ասել, սակայն լեզուն չէր դառնում ասելու՝ «հայերը»:

- Առաջին անգամ ես տեսնո՞ւմ:

- Այո, էֆենդիս:

- Եվ նույնիսկ չէի՞ր լսել այդ բաների մասին:

Նկատեց, որ ինքն էլ խուսափում է ամեն ինչ իր ուղղակի անունով ասել: Ժանդարմի մեջ խիղճն էր արթնացել, թե ոչ, սակայն դատարկված գյուղի, խունկի տեղ այրված մարմիններ բուրող եկեղեցու, անմեղ զոհերի դիակներով թունավորված աղբյուրի տեսարանները չէին կարող նրան չստիպել գնահատական տալու այս ամենին: Եվ այդպես զգուշորեն, մեղմաբանությամբ խոսելով, ուղղակի թե անուղղակի ասում էր, որ չի կարող լիաբերան դատապարտել այդ արարքները, իսպառ մեկուսացնել իրեն ոճրագործության պատասխանատուներից, ոչ միայն որ իր արհեստովն իսկ բռնության մարմնավորում է, այլև որ ինքն էլ մեղավորության ղգացում ունի: Հոգեբանական այդ վիճակը ծանոթ էր իրեն. վերջին ամիսներին, մանավանդ ապրիլի 24-ից հետո, երբ հիվանդանոցում բացառապես շփվում էր ավստրիացի և թուրք բժիշկների հետ: Եվ հատկապես նրանցից իմացավ մայրաքաղաքից հեռու տեղի ունեցող կոտորածների մասին: Իհարկե, մեծ մասը լուռ էր (չգիտեի՞ն, թե իմանալով, որ ինքը հայ է, գերադասում էին լռել կամ գուցե հավանություն էին տալիս իրենց կառավարության հայատյաց քաղաքականությանը), իսկ այն մի քանիսը, որ խոսում էին՝ նույն մեղմաբանությունն էր, նույն կեսբերանությունը, չասած չշուկով խոսելու մասին, ինչը կիրառվում էր լոկ այդ նյութին անդրադառնալիս... Միայն գեներալ Նիյազի փաշան էր, որ չէր վարանում բարձրաձայն, առանց վախենալու իր վրդովմունքը հայտնել...

- Լսել եմ, շատ անգամ, բայց ասում էին, թե ռուսական սահմանի մոտ ապրող հայերին են տեղահանում, որպեսզի պատերազմի ժամանակ չտուժեն... Հա, մեկ էլ ասում էին, թե մի քանի քարավանների վրա քրդեր են հարձակվել: Իբր, կողոպուտներ են եղել, մի քանի սպանություններ...

Ժանդարմն, անշուշտ, ավելին գիտեր, սակայն հիմա մեղմում էր ոչ միայն ասելու կերպը, այլև իրողությունները: Մինչդեռ թուրք սպաներն ուրիշ բան էին ասում, իսկ նրանք գալիս էին ամբողջ արևելյան ճակատի լայնքից ու խորքից՝ Տրապիզոնից ու Սարիղամիշից մինչև Բիթլիս ու Վան...

- Սակայն այս գյուղը ռուսական սահմանից շատ հեռու է և այստեղ քրդեր չկան:

- Այո, էֆենդիս, այստեղ քրդեր չկան...

Բառերն ասես աքցանով քաշեին բերանից: Նիյազի փաշան սրա հակառակն էր... Ոչ միայն, որ սա ընդամենը ժանդարմական տասնապետ է, իսկ նա մարտական գեներալ, այլև որ սկզբունքներ ուներ և պատրաստ էր դրանք պաշտպանել:

- Դոկտոր, - ասում էր նա: - Ես փոքր երեխա էի, երբ ծնողներիս հետ քոչեցինք այս կողմերը: Ես թուրքերի մեջ եմ մեծացել, բայց մենք միշտ ապրել ենք լեռների օրենքներով: Մեզ համար նվիրված բարեկամին վնասելը ոճրագործություն է, այդպիսի մարդուն մենք պատժում ենք խստորեն:

...Գեներալին ձմռանը բերեցին հիվանդանոց: Ոտքերի մատները ցրտահարվել էին: Ավստրիացի բժիշկները գտնում էին, որ ոտքի թաթն անհապաղ պետք է հեռացվի, այլապես կարող էր գանգրենա սկսվել և այդ ժամանակ ստիպված կլինեին ծնկից անդամահատել: «Ավելի լավ է ինձ սպանեք», - դոռաց գեներալը՝ լսելով ավստրիացիների վճռի մասին: Կոնսիլիումից հետո խնդրեցին, որ ինքը տեղեկացնի գեներալին, հոգեբանորեն նախապատրաստի: Կարող էր հրաժարվել այդ տհաճ առաքելությունից, մանավանդ որ վիրահատող բժիշկն ավստրիացին էր: Սակայն գեներալի անձն առինքնող ինչ-որ բան ուներ, ասում էին, որ խիզախ ու պարկեշտ մարդ է: Պակաս նշանակություն չունեցավ այն հանգամանքը, որ այդ գիշեր ինքը պիտի հերթապահեր, ուրեմն բավական ժամանակ կունենար հիվանդի հետ հանգիստ խոսելու: Եվ իսկապես, հանդամանորեն զննելուց և մի քանի հարցեր տալուց հետո, նրա ուշադրությունը գրավեց մի անոմալիա. մատները ցրտահարվել էին Նոր Տարվա գիշերը, հիվանդանոց հասավ դրանից երկու շաբաթ հետո և այստեղ, երեք օր անց, վճիռ ընդունվեց վիրահատել: Ինքն էր, որ հիվանդանոց հասնելուց հետո առաջինը զննեց վերքը. մատներն իրոք սևացել էին, մինչդեռ թաթն ամբողջությամբ առողջ էր: Սակայն հիմա, երեք օր հետո, նեկրոզն սկսել էր մատներից տարածվել թաթի վրա: Ավստրիացի վիրաբույժն իրավացի էր, որ առաջարկում էր ոտքը փրկելու համար թաթը հեռացնել: Բայց ինչպե՞ս հասկանալ այս առեղծվածը. վերջին երեք օրում հիվանդությունն ավելի էր զարգացել, քան առաջին երկու շաբաթում, ըստ որում, այդ երեք օրվա ընթացքում հատուկ խնամք էր եղել: Երբ իր զարմանքը հայտնեց գեներալին, վերջինս ժպտալով ասաց.

- Որովհետև իմ ձին էր իմ բժիշկը:

Բժշկի դեմքը զարմանքից երկարեց:

- Ես կատակ չեմ անում, դոկտոր, բոլոր լեռնցիները գիտեն այդ մասին, անգամ երեխաները... Լեռներում հաճախ էր պատահում, երբ մնում էինք ձյան հյուսի տակ և ցրտահարվում, և միայն երկու միջոց կար. նախ, պետք էր ձյունով շփել, բայց եթե դա չէր օգնում, մի քանի շաբաթ ձիու մեզով լվայ... Մի

խոսքով... Հիմա երեք օր է, ստիպված դադարեցրի այդ բուժումը... Կողքս ոչ ձի կա, ոչ էլ թողնում եք, որ...

Ժողովրդական բժշկության այդ ստուգված միջոցը նրան ծանոթ էր Շվեյցարիայից: Այնտեղ էլ պատահում էր, որ լեռնագնացները մոլորվեն բքի մեջ կամ ձյան թանձր շերտի տակ մնան: Նրանցից ոմանք, սևացած ծայրամասերով, հասնում էին հիվանդանոց և փրկվում հաշմանդամ դառնալու գնով: Հիշում էր, որ դոկտոր Ռուն, ի տարբերություն մյուսների, հեգնանքով չէր խոսում այդ մասին: «Հեռավոր գյուղերում, որտեղ ոչ բժիշկ կա, ոչ էլ հիվանդանոց, մարդիկ զանազան հիվանդություններ են բուժում այդպես...»:

Հաջորդ օրն շտապեց ժամ առաջ խոսել վիրաբույժի հետ:

- Եվ դուք հավատո՞ւմ եք այդ հիմարություններին, կոլեգա, - հարցրեց ավստրիացին:

- Ես ընդամենը ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն փաստի վրա, որ նա երկու շաբաթ կարողացել է կանգնեցնել հիվանդության խորացումը:

- Այո, պատահում է, որ սկզբնական շրջանում ախտահարումը տեղայնացված բնույթ է կրում, հետո միանգամից տարածվում է:

- Թույլ տվեք չհամաձայնել, կոլեգա, կասկածից դուրս է, որ այդ միջոցն է նրան փրկել, իսկ մենք այս երեք օրվա ընթացքում ծանրացրել ենք նրա վիճակը:

- Խոսեցի՞ք հետը, - հարցրեց վիրաբույժը:

- Նա լսել չի ուզում վիրահատության մասին, անիծում է այն օրը, երբ եկավ այստեղ:

- Դուք համամի՞տ եք նրան... Դուք պնդո՞ւմ եք:

- Ես պնդում եմ նաև այն պատճառով, որ ճիշտ նման ախտանիշներ ունեցող սպային երկու անգամ վիրահատեցինք և վիճակը գնալով ավելի բարդացավ:

- Նրա կացությունն ուրիշ էր, - արդարացավ վիրաբույժը:

- Իրավացի եք, նա չէր փորձել այդ եղանակով նեկրոզը կանխել:

- Գուցե, - մտածկոտ ասաց վիրաբույժը: - Բայց պատկերացնո՞ւմ եք, կոլեգա, սա կատարյալ սկանդալ կլինի: Ծիծաղի առարկա կդառնանք բոլորի համար:

- Իսկ ձեզ ո՞վ է ստիպում բոլորին պատմել այդ մասին... Իմիջիայլոց, բազմաթիվ հիվանդներ կան, որ նրանից առաջ են բերվել և սպասում են վիրահատության:

- Ի՞նչ կարող եմ անել... Ջեմ հասցնում, արդեն ուժասպառ եմ եղել:

- Առավելևս, ինչո՞ւ որոշեցիք անմիջապես նրան վիրահատել:

- Շատ պարզ, - անկեղծորեն զարմացավ ավստրիացին: - Նախ՝ գեներալ է, հետո նրա ախտանշաններն ստիպում են շտապել:

- Նույն ախտանշաններով ուրիշ հիվանդներ կան, որ նրանից առաջ են եկել և հետո, Հիպոկրատի երդումի մեջ զինվորական տարբերանշանների մասին ոչինչ չի ասված:

- Բայց մենք զինվորական բժիշկներ ենք, - արդարացավ ավստրիացին:

- Շատ ճիշտ է, ուրեմն, պարոն մայոր, բարի եղեք ենթարկվել գեներալի հրամանին, - ժպտալով նկատեց ինքը:

Վիրաբույժը հոգոց հանելով գլուխն օրորեց:

- Իսկ ե՞րբ պիտի վիրահատենք, որքա՞ն պիտի սպասենք, - հարցրեց նա:

- Դուք գիտեք, կոլեգա, որ այդ հարցին ես չեմ կարող ձեր ուզած պատասխանը տալ... Վիրահատեք առայժմ նրանց, ովքեր գեներալից առաջ են եկել:

Հասկանում էր, որ իր արածը խաղ է կրակի հետ: Խնդիրը միայն իր բժշկական հեղինակությունը չէր, այլ հիվանդի առողջությունը, թերևս կյանքը: Սակայն թե՛ տրամաբանությունը, թե՛ իր ներքին ձայնն ասում էին, որ լուրջ հաշմանդամությունից փրկվելու միակ ճանապարհը դա է: Շտապեց գեներալին հայտնել, որ վիրաբույժը փոխել է իր որոշումը և որ պետք է անհապաղ շարունակել... Նախկին բուժումը:

- Յուզբաշի, ես գիտեմ, որ քեզ եմ պարտական, ես տեսա, որ դու շատ բարի ես, իսկ այդ ավստրիացին անհոգի մարդ է երևում:

Ամենածանրն առաջին օրերն էին, և երբ հինգերորդ օրը վիրահատությունների ցուցակի մեջ գեներալի անունը կարդաց, նորից պահանջեց հետաձգել: Ավստրիացին չէր հավատում իր աչքերին. մեռուկացումը ոչ միայն կանգ էր առել, այլև նկատվում էր, որ ետ քաշվելու միտում կա: Այս անգամ արդեն վիրաբույժն ինքը պահանջեց ևս մեկ շաբաթ համբերել: Մեկ շաբաթը դարձավ երկուս, երեք... Հիվանդի վիճակը գնալով լավանում էր: Վիրաբույժն, այնուամենայնիվ, իրենն էր պնդում.

- Սա եզակի դեպք է: Մենք չենք կարող այն տարածել բոլորի վրա:

Գուցե իրավացի էր:

Այդ մեկ ամսվա ընթացքում հասցրեց մտերմանալ գեներալի հետ: Նրանից իմացավ հայկական դնդի ողբերգական պատմությունը, որ տեղի էր ունեցել Սարիղամիշի մոտ:

- Կյանքումս ավելի մեծ ստորություն չեմ տեսել, - ասում էր նա: - Բանակային մի ամբողջ կորպուս ռուսները շրջապատեցին: Այդտեղ էր նաև Էնվերը՝ իր ամբողջ շտաբով: Փրկության միակ հույսը հայկական գունդն էր, որ գտնվում էր փակվող օղակի ծայրերի միջև: Եթե նրանք հանձնվեին ռուսներին՝ ամեն ինչ վերջացած էր... Սակայն հայկական գունդը դիմադրեց, միջանցք ստեղծեց, որպեսզի Էնվերն իր սպաների հետ դուրս գա օղակից, իսկ հետո շրջապատումից դուրս եկավ ամբողջ կորպուսը...

Մեղքս ինչ թաքցնեմ, ճիշտ է հայերին կյանքումս վատություն չեմ արել, բայց Թուրքերի մեջ եմ մեծացել և նրանց պես կարծում էի, թե դուք էլ մյուս քրիստոնյաների հետ ուզում եք մեր երկիրը կործանել, բայց էն, ինչ որ ես տեսա, ստիպեց կարծիքս իսպառ փոխել ձեր մասին... Ես շատ բաներ սկսեցի հասկանալ... Թուրքերի ձեռքին ինչե՛ր եք քաշել... Բայց այդքանից հետո, ճակատագրական պահին, երբ կարող էիք ձեր բոլոր տառապանքների վրեժը լուծել, հավատարիմ եղաք... Հապա ի՛նչ ծառայություն մատուցեցիք Էնվերին... Իսկ նա այդպիսի քաջարի ու հավատարիմ զինվորների ձեռքերը համբուրելու փոխարեն նրանց մեկ-մեկ ոչնչացրեց...

- Փաչա, ասացի նրան, ուշքի եկ, սրանք հերոսներ են, ոչ թե դավաճաններ... «Գիտեմ, - ասաց նա: - Բայց հայ են»: Փաչա, հասկանո՞ւմ ես, թե ինչ ես

անում, դու թշնամուն ես օգնում... «Հայերը մեզ պետք չեն մեր ապագա երկրում, - ասաց նա: - Իսկ թշնամուն առանց նրանց էլ կհաղթենք»: Էհ, դոկտոր, բերանս բացել մի տուր... Ես զինվոր եմ, քաղաքականությունն իմ գործը չէ, բայց իմ կարճ խելքով տեսնում եմ, որ շատ վատ բաներ են կատարվում մեր երկրում...

* * *

- Տիկին, ձեր ամուսնուն փրկելու համար ամեն ինչ պիտի անեք...

Այսպես ասողը Ֆոն Նոյրաթն էր:

- Բայց ամենազորավոր միջոցը դուք եք...

- Մենք գործադրում ենք մեր բոլոր հնարավորությունները ձեզ օգնելու համար... Սակայն Բեդրի բեյը շարունակ նույն պատասխանն է տալիս:

- Իսկապե՞ս բոլոր հնարավորություններն եք գործադրում, - թերահավատ հարցրեց մայրը:

- Իհարկե, տիկին Ապել:

- Ստում եք, պարոն հյուպատոս, - համբերությունը հատած ասաց մայրը:

Ֆոն Նոյրաթի երեսին ոչ մի մկան չշարժվեց:

- Տիկին Ապել, հարգելով ձեր ամուսնու վաստակը և հաշվի առնելով հոգեկան ձեր վիճակը, անուշադրության եմ մատնում այդ ցավալի արտահայտությունը, սակայն գուցե բացատրեիք, թե ինչն է ձեզ ստիպում այդպես որակել իմ բազում ջանքերը:

- Ստում եք, երբ ասում եք, թե բոլոր միջոցներն եք գործադրել... Ահա, մեկ շաբաթ է ոչ մի կերպ չեմ կարողանում տեսնել իմ դեսպանին:

- Այդպես էլ պետք է լիներ, տիկին, որովհետև ինձ է հանձնարարված զբաղվել այդ հարցով:

Այս անգամ արդեն Յաննին գոռաց.

- Այնուհանդերձ, ես պնդում եմ, ես պահանջում եմ, ես ուզում եմ, որ դեսպանը զբաղվի այս հարցով...

Ֆոն Նոյրաթի երակներով կապույտ արյուն չի հոսում, այլ ձկան արյուն: Նա հանգիստ վեր կացավ, մի բաժակ ջուր լցրեց և դրեց գոռացողի առջև, որը հաճույքով այդ ջուրը կշվեր նրա երեսին, բայց զսպեց իրեն:

- Տիկին, այսօր իսկ կհայտնեմ ձեր ցանկությունը նորին գերազանցությանը: Սակայն ժամանակը սուղ է: Մենք, անշուշտ, մեր կարելին կանենք, բայց մտածեք նաև, թե ուրիշ ինչպես կարելի է ետ բերել ձեր ամուսնուն:

- Պարզ խոսեք, պարոն, ես չեմ հասկանում, թե որ միջոցները նկատի ունեք:

- Ասեմ. դուք ծանո՞թ եք Հալիդե Էդիպ հանրմին:

- Պատիվ չունեմ, - պատասխանեց Յաննին:

- Իզուր, այդ կինը շատ բան կարող է անել ձեզ համար, գուցե նույնիսկ ավելին, քան մենք:

- Ո՞վ է նա:

- Օ՜, մի բառով դժվար է ասել: Մահմեդականություն ընդունած հրեայի աղջիկ է, սակայն իրեն համարում է թուրք, այն էլ ինչպիսի՜ թուրք: Ճանաչված գրող է, հայտնի է իր առաջադիմական գաղափարներով:

- Բայց ինչո՞վ կարող է մեզ օգնել:

- Շա՜տ բաներով..., - երկիմաստ ժպիտով պատասխանեց Ֆոն Նոյրաթը: - Որպեսզի ձեզ համար ամեն ինչ հասկանալի դառնա, միանգամից ասեմ, որ նա երիտթուրքերի մադամ դը Պոմպադուրն է:

- Շա՜տ հետաքրքիր է, - հեգնանքով նկատեց Յաննին: - Սակայն ինչպե՞ս հասկանալ, մադամը կարծեմ միայն թագավորի սիրուհին էր, իսկ երիտթուրքերի կուսակցությունը, որքան գիտեմ, երեք հոդու է ենթարկվում:

Ֆոն Նոյրաթի երեսը հաճույքից շողաց:

- Շատ ճիշտ նկատեցիք. նա մտերիմ է և՛ Թալյաթի, և՛ Էնվերի և մանավա՜նդ Ջեմալի հետ... Մադամը բոլորովին վերջերս է վերադարձել Պաղեստինի ճակատից, ուր գնացել էր Ջեմալի անձնական հրավերով՝ թուրք զինվորներին ոգևորելու:

- Եվ դուք գտնում եք, որ այդպիսի կինը կարող է օգտակար լինե՞լ:

- Օ, մի նայեք նրա աղատ կենցաղին, նա շատ բարի է: Ես իմացա, որ հետն այնտեղից մի խումբ հայ որբեր է բերել, որոնց մտադիր է իր ծախսով կրթել ու դաստիարակել: Նշանակում է՝ հայերի հանդեպ լավ է տրամադրված, և կարծում եմ, որ կցանկանա ձեզ օգնել:

- Սակայն ծանոթ չեմ նրան:

- Խնդիր չկա, - ասաց Ֆոն Նոյրաթը: - Ես կկազմակերպեմ ձեր հանդիպումը:

Եվ իսկապես, հաջորդ օրն իսկ, առավոտ կանուխ, զանգահարեց ու ասաց, որ Հալիդե հանըմը կեսօրից հետո սպասում է իրեն:

Հարկ եղավ ասիական ափն անցնել այդ ազատախոհ համարվող կնոջը հանդիպելու համար: Նա ապրում էր Սկյուտարի բարձունքում գտնվող շքեղ մի առանձնատան մեջ, որը հազիվ թե իր դավանափոխ ծնողներից ժառանգած լիներ: Դա երեք հարկանի ճերմակ մի շինություն էր՝ շրջապատված սրածայր նոճիներով և բարձր պարիսպով: Ամենայն հավանականությամբ Արդուլ Համիդի մերձավորներից մեկի ապարանքն էր եղել, մի բեկորն այն հարստության, որ երիտթուրքերի վերնախավը բռնագրավեց և իրար մեջ արեց:

Պարտեզն իսկապես հոյակապ էր: Տարաշխարհիկ զանազան բույսեր կային, խայտաբղետ թռչուններ՝ ճյուղերից կախված ոզորահյուս վանդակների մեջ, որ հետկեսօրյա տապից թմրած լռել էին:

Սպասուհին ընդարձակ ծառուղիով առաջնորդեց դեպի առանձնատան մոտ ընկած կանաչ մարգը: Այստեղ ճերմակ հագած թխահեր մի կին՝ խրոխտ կեցվածքով նստած էր բարձրաստիճան երկու սպաների միջև: Նրանց առջև հինգից-տասը տարեկան երկսեռ երեխաների մի խումբ էր շարվել՝ ասես զինվորական տողան լիներ: Եվ իսկապես, ցախավելի պես չորուկ, իգական սեռի մի արարած, ցուցափայտը ձեռքին, մոտենում, թեթևակի խփելով ստիպում էր գլուխը բարձրացնել, ուսերը շտկել, ոտքի թաթերը հավասարեցնել: Երեխաները չէին հասկանում, թե իրենցից ինչ են ուզում, սակայն ջանում էին ամեն կերպ բավարարել վանող արտաքինով դաստիարակչուհուն: Նրանցից մեկը, հինգ-վեց տարեկան կապուտաչյա, չեկ մազերով հրեշտակատիպ մի աղջնակ սկսեց արտասվել և հայերեն ինչ-որ բան ասել: Դա ճիշտ այն պահին էր, երբ սպասուհին մո-

տեցել և տանտիրուհու ականջին հյուրի ժամանումն էր հայտնում: Վերջինս տեղից ելավ, հաճոյակատար քաղաքավարությամբ Յաննիի թևը մտնելով բերեց, իր կողքը նստեցրեց և գերմաներեն կիսաձայն ասաց.

- Հուսամ, թե կարող եք մի քանի բոպե սպասել:

Դրական պատասխան ստանալով, դարձավ սպաներին և թուրքերեն ինչ-որ բան ասաց: Յաննին կարողացավ որսալ միայն «չոջուկլար» և «էրմենի» բառերը: Թուրք սպաներն, ըստ երևույթին, շատ էին հուզվել, գլուխներն օրորելով «վախ-վախ» էին անում: Նրանցից մեկը մոտեցավ, երեխային գրկեց, մազերը շոյեց և համբուրեց ճակատը: Աղջնակի լացն ավելի սաստկացավ: Թվում էր, թե հիմա կխեղդվի սեփական արցունքներից: Տեսարանն ահավոր էր, ճնշող, մանավանդ մայրական սրտի համար:

- Ի՞նչ է կատարվում, - չդիմացավ Յաննին: - Ասեք թող երեխային ցած դնի, չեք տեսնո՞ւմ, սարսափած է:

Դաստիարակչուհին երեխաներին տարավ ներս, իսկ թուրք սպաները հրաժեշտի ընդգծված ծեսից հետո հեռացան: Տանտիրուհին վերջապես մենակ մնաց հյուրի հետ:

- Դուք Յաննի Սևակն ե՞ք:

Հարցը հաճելիորեն զարմացրեց Յաննին: Նրան այդպես դիմում էին միայն Պոլսի հայ մտավորականները:

- Այո, - պատասխանեց ուրախությամբ:

- Հալիդե Էդիպ, - ասաց տանտիրուհին՝ ձեռքը մեկնելով:

Բալզակյան տարիքի մի կին էր՝ իր ցեղի իգական ամբողջ գրավչությունը վրան: Իր տարիքից ավելի երիտասարդ էր երևում: Դեմքին մի հանդուգն արտահայտություն կար, որը կարող էր հեշտասեր տղամարդուն, մանավանդ արևելցուն, խելքահան անել: Նա սևեռուն նայեց իր հյուրին և աչքերը կկոցելով ասաց.

- Ես լսել էի ձեր գեղեցկության մասին, սակայն տեսածս գերազանցեց երևակայությունս:

- Շնորհակալ եմ, - ասաց Յաննին նեղված և ավելացրեց. - Սակայն հիմա գուցե դա չէ կարևորը... Ես կուզեի, որ ուրիշ բանից խոսենք:

- Գիտեմ, տիկին, մենք կխոսենք այդ մասին, բայց մի ասեք, թե գեղեցկությունը կարևոր չէ:

- Ի՞նչ գեղեցկություն կարող է մնալ այսքան արցունքի մեջ:

- Իրավացի եք, տիկին Սևակ, մանավանդ ձեր պարագայում:

«Տիկին Սևակը» երկրորդ անգամ հնչելով նրան ստիպեց թեթևակի ցնցվել, ինչը չվրիպեց տանտիրուհու ուշադրությունից:

- Դուք զարմացա՞ծ եք, որ ձեր ամուսնու գրական ծածկանունով եմ դիմում ձեզ... Եթե հաճելի չէ, խնդրեմ, կարող եմ ուրիշ կերպ դիմել, ասենք՝ տիկին Զիլինկիրյան կամ՝ տիկին Ապել:

- Ոչ, հաճելի է, պարզապես նրա բանաստեղծ ընկերներն են այդպես դիմում:

- Բայց ես էլ բանաստեղծ եմ, - ժպտալով ասաց Հալիդե Էդիպը: - Ճիշտ է, նրան ծանոթ չեմ, բայց բանաստեղծությունները կարդացել եմ... Մի քանիսը:

- Դուք հայերեն գիտե՞ք, - զարմացավ Յաննին:

- Ոչ, թարգմանություններ էին:

- Հետաքրքիր է, և ի՞նչ կասեիք:

- Կասեի, որ ձեր ամուսինը տաղանդավոր է: Բայց, ափսոս, փուչ բաների վրա է ծախսում իր տաղանդը... Ես կասեի նույնիսկ՝ չար բաների վրա: Գեղեցկություն և սեր փառաբանելու փոխարեն նա սուր է տալիս անօգնական որբին:

- Բայց, տիկին, դրանք թուրքերի ձեռքով մորթված հայերի որբերն են:

- Գիտեմ, դրանք Կիլիկիայի հայ որբերն են, բայց դա Աբդուլ-Համիդի մեղքով եղավ: Քիչ առաջ տեսաք այդ երեխաներին: Նրանք հիմա մաքուր հագնված և կուշտ կերած են, բայց եթե տեսնեիք Սիրիայի անապատներում, ձեր սիրտը չէր դիմանա:

- Ձեմ հասկանում, տիկին, այդ երեխաներն ինչո՞ւ էին հայտնվել Սիրիայի անապատներում:

- Որովհետև հայ մտավորականները սեր ու եղբայրություն քարոզելու փոխարեն ավելի խորացրին այն վիհը, որ բռնակալ սուլթանն էր փորել հայերի և թուրքերի միջև:

- Տիկին, անհեթեթ բաներ եք ասում, - վրդովված բացականչեց Յաննին:

- Ոչ, տիկին Սևակ, ցավալի ճշմարտություններ են, ձեր ամուսինը որբի ձեռքերի մեջ ոչ թե սուր պիտի դներ, այլ ճերմակ վարդ: Ոչինչ, ձեր սխալը մենք կշտկենք: Այդ որբերին կդաստիարակենք որպես անքեն ու բարի քաղաքացիներ:

- Հրաշալի է, ծնողներին մորթում եք, իսկ զավակներից նոր ենիչերիներ պատրաստում, գուցեև ասում՝ թե հայերն են մորթել նրանց հորն ու մորը:

- Նախ, մենք չենք մորթել, այլ քրդերը, այդ վայրենիները: Եվ հետո պետք չէ չափազանցությունների գիրկն ընկնել, մանավանդ ձեր պարագայում: Կարծեմ եկել եք ինձնից ծառայություն խնդրելու:

- Այո, այդպես է... Բայց երևի սխալվել եմ, - ասաց Յաննին՝ տեղից ելնելով:

- Ոչ, տիկին, չեք սխալվել, նստեք, խնդրում եմ, դեռ խոսելիք ունենք: Այդ բաները ձեզ ասացի ոչ թե մեղադրելու համար, այլ որպեսզի հասկանաք, թե ձեր ամուսինն ինչպիսի ծանր վիճակում է:

- Ես արդեն համոզվեցի դրանում:

- Լավ է, որ համոզվել եք, - գոհունակությամբ նկատեց Էդիպը:

- Ուրեմն, հարցն ի՞նչ է:

- Հարցը հետևյալն է. Ֆոն Նոյրաթը կարծեմ ձեզ ասել է, որ ես լավ հարաբերություններ ունեմ երիտթուրքերի ղեկավարների հետ:

- Այո, և նրա ասելով այդ ղեկավարները չեն կարող ձեզ մերժել:

- Ձգիտեմ, դժվարանում եմ ասել... Ես, իհարկե, կփորձեմ, սակայն կուզեի ձեզ ուրիշ կերպ օգնել:

- Ինչպե՞ս:

- Գուցե ինքներդ խնդրեք միևնույն անձանց:

- Այդ անձանց ես ծանոթ չեմ, բացի այդ, արդեն խնդրել եմ նրանցից մեկին՝ Բեգրի բեյին և խոստումներից զատ ուրիշ ոչինչ չեմ ստացել:

- Բեգրի՞ն..., - հեգնանքով արտաբերեց Էդիպը: - Ի՞նչ կարող է անել այդ

ողորմելին: Ես ձեզ կծանոթացնեմ ում հետ որ պետք է և կարծում եմ՝ նա ձեր գեղեցկության առջև անձնատուր կլինի:

- Ո՞վ է գեղեցկության այդ անշահախնդիր երկրպագուն, - զուսպ հեգնանքով հարցրեց Յաննին:

- Ճիշտ նկատեցիք, նա գեղեցկության երկրպագու է, մանավանդ գերմանուհիների, բայց ոչ անշահախնդիր:

- Եվ դուք ի՞նչ անվանում կտայիք դրան:

- Կարևորն անվանումը չէ, տիկին Սևակ, այլ նպատակը:

- Այդպիսի ստորացման գնալով ես պարզապես կսպանեմ նրան:

- Իսկ եթե չգնաք, դարձյալ կսպանեք... Հասկացեք, նա ոչինչ չի իմանա այդ մասին:

- Բավական է, որ ես իմանամ:

- Դուք ինձ զարմացնում եք, տիկին Սևակ, դուք փակուղու մեջ եք, ոչ մի ելք չունեք, և այն պահին, երբ ձեր առջև միակ հնարավորությունն է բացվում, սկսում եք հիմարություններ դուրս տալ, - անկեղծ վրդովմունքով շպրտեց Հալիդե Էդիպը: - Դուք դաժան և անսիրտ կին եք և բնավ չեք սիրում ձեր ամուսնուն:

- Դուք սեր ասելով, հավանաբար, ուրիշ բան եք հասկանում:

- Ես հասկանում եմ ընդամենը մեկ բան. անել ամեն ինչ սիրելի անձը փրկելու համար:

- Իրավացի եք, - համաձայնեց Յաննին: - Պետք է անել ամեն ինչ: Բայց կան բաներ, որոնք ոչ մի դեպքում չի կարելի անել՝ նույնիսկ հանուն ամենասիրելի մարդու:

- Թող ձեր ուզածով լինի, տիկին, չեմ ստիպում, իմ նպատակն էր պարզապես ձեզ օգնել:

- Շնորհակալ եմ, - սառը քաղաքավարությամբ ասաց Յաննին: - Բայց ձեր առաջարկն ընդունել չեմ կարող: Ես ուրիշ միջոց կփնտրեմ:

- Նկատի ունեցեք, շատ դժվար է լինելու, գրեթե անհնար:

- Գիտեմ:

- Եվ մեծ հույսեր չկապեք ձեր դեսպանատան հետ, նրանք ոչ մի շահ չունեն ձեր ամուսնուն փրկելու:

- Կտեսնենք, - ասաց Յաննին՝ պայուսակը վերցնելով և մոտենալով դռանը:

Երբ արդեն դուրս էր եկել առաձնատնից և քայլում էր ծառուղիով, թիկունքից տանտիրուհու ձայնը լսեց.

- Տիկին Սևակ, եթե հանկարծ ձեր միտքը փոխեք, կարող եք ուղղակի գալ այստեղ, առանց ժամադրության:

- Հազիվ թե:

* * *

- Կես ժամից հասնում ենք Էնկյուրի, - հայտնեց ավագը՝ մտնելով բաժնեխցիկ:

Գնացքը նորից դանդաղ էր ընթանում: Ասես նոր արթնացավ և դեռ ժա-

մանակ է պետք արագություն հավաքելու համար: Եվ իսկապես, լույսը նոր էր բացվել՝ մեջտեղ հանելով թուրքական դավառի տխուր տեսարանները, ասես օղուղ ցեղն այս հողերին տիրանալով՝ որևէ լուրջ կառույց չէր կանգնեցրել՝ մզկիթներից զատ: Ողորմելի տեսարան էին ներկայացնում, մերթ ընդ մերթ, գծին զուգահեռ հայտնվող գյուղերն՝ իրենց հողաշեն խրճիթներով, հետույքները մշտապես բաց խլնքոտ լամուկներով, արորը մի կերպ քաշող հյուծված եզներով: Միջանցքում եռուզեռ սկսվեց, հրամաններ լսվեցին՝ թուրքերեն ու գերմաներեն, հրճվալից ճիչեր, զինվորական անտաշ սրամտություններ: Համընդհանուր խանդավառության մթնոլորտ էր տիրում, ասես ամբողջ կյանքը թափառելուց հետո, վերջապես, հասել էին ավետյաց երկիր, և յուրաքանչյուրն շտապում էր վայրկյան առաջ ոտքը դնել երանելի հողին: Մինչդեռ իրականությունն այն էր, որ ռազմաճակատի անհագուրդ երախը լցնող թնդանոթի միսն այստեղ պիտի կիսվեր. մի մասը, Սվաղով ու Երզնկայով, պիտի գնար Կովկասյան ռազմաճակատ, մյուսը՝ դեպի Հալեպ, Բաղդադ: Սակայն մեծ մասն ուղարկված էր ռուսական ճակատ, քանզի թուրքերն իրենց սպառնացող ամենամեծ վտանգն այնտեղից էին սպասում: Ով-ով, ինքը լավ գիտեր այդ մասին. հիվանդանոց հասնող վիրավորները հիմնականում այդ ճակատից էին:

Կայարանն ասես հսկայական ռազմական լիներ: Զինվորներն իրար էին անցել: Մոտակայքից եկած գյուղացիք միրգ էին ծախում, պանիր և հաց: Ճեղքելով խլրտացող զանգվածը, քայլեցին դեպի ոստիկանատուն: Քիչ հետո մտան երկար ու լայն մի փողոց, որի զույգ մայթերին երկհարկանի քարաշեն տներ էին շարված՝ գեղեցիկ ու խնամված պարտեզներով: Տներից մեկն իր այրված ծառերով և դատարկ պատուհանների սև խոռոչներով խախտում էր հովվերգական տեսարանը: Քիչ հետո հրդեհի ճարակ դարձած երկրորդ տունը տեսան:

- Հայկական թաղն էր, - նկատեց ավագ ժանդարմը:

- Հիմա ովքե՞ր են ապրում այստեղ:

- Ի՞նչ ասեմ, էֆենդիս, բանտերում ինչքան գող ու ավազակ կար ազատվեցին և լցվեցին այս տները:

- Հապա այն երկուսն ինչո՞ւ են այրել:

- Բնակիչները, հավանաբար, դիմադրել են տեղահանվելիս կամ էլ այս ոճրագործներն իրար հետ լեզու չեն գտել:

Ժանդարմը գլխի շարժումով դռների առջև նստած տղամարդկանց ցույց տվեց, որ մեքենայական շարժումներով թզբեհ էին քաշում կամ նարդի խաղում: Տաճկական ծույլ անդորրն էր իշխում այստեղ: Փողոցը թեքվեց, և նրանք հայտնվեցին եկեղեցու առջև, որն, ի տարբերություն իր տեսած նախորդի, ընդամենը պղծումի երկու հետք ուներ. խաչը կոտրված էր, իսկ բուն շինությունը վերածվել էր ախոռի: Եկեղեցու կողքին գտնվող տապանաքարերը ծածկված էին թրիքով ու կտտորով:

Մի երկու փողոց անցնելուց հետո մոտեցան անշուք մի շինության, մտան ներս և քիչ հետո նրանց առաջնորդեցին ոստիկանապետի սենյակ: Վերջինս քաղաքացիական զգեստ հագած մի երիտասարդ էր: Ուշադիր կարդաց ներկայացրած գրությունը և դարմացած նայեց իր առջև կանգնած սպային:

- Դոկտորն ինչո՞ւ է համազգեստով, - հարցրեց նա ավագ ժանդարմին:

- Էֆենդիս, մեզ հրամայել էին գնալ նրա տուն և ասել, որ հիվանդի մոտ ենք տանում: Համազգեստի մասին մեզ բան չեն ասել:

- Ես ծառայության մեջ եմ, էֆենդիս, - դիմեց նա ոստիկանապետին, - և պարտավոր եմ համազգեստ կրել:

Ոստիկանապետը ոչինչ չասաց: Դարակից մի հեռագիր հանեց, աչք ածեց և մյուս գրության հետ նորից տեղը դրեց:

- Ձեզ հրամայված է ուղարկել Զանղբրի: Այնտեղ պիտի սպասեք ռազմական դատարանի վճռին: Կմեկնեք այսօր:

Հետո մի ծրար հանձնելով ավագ ժանդարմին, շարունակեց.

- Դուք երկուսով կուղեկցեք դոկտորին և կվերադառնաք այստեղ:

Ահա թե որտեղ է գտնվում հիվանդը:

Ի՞նչ կարիք կար այս ղավեշտը խաղալու, ինչո՞ւ միանգամից չասացին, թե ուր պիտի գնա, ինչո՞ւ թողեցին, որ համազգեստ հագնի... Եվ ո՞ր մեղքերի համար պիտի կանգնի ռազմական դատարանի առջև, իր նվիրված ծառայությա՞ն... Այսինքն, ինչո՞ւ է միամիտ հարցերով ուղեղը չարչարում, ապրիլի 24-ին ինչի՞ համար հարյուրներով հայ մտավորական տարան ուշ գիշերով, գաղտագողի, ասես իրենք իրենցից վախենալով... Նրանք ի՞նչ մեղք էին գործել...

Եվ հատկապես պետք չէր հարցեր տալ այս երիտասարդ ոստիկանապետին: Նա խուսափողական պատասխան կտա կամ կասի, թե հրաման է կատարում, կամ պարզապես ոչինչ չի ասի: Իսկ ուրիշ ի՞նչ էիր սպասում... Դեռ լավ է՝ արտաքուստ քաղաքավարի է: «Ռազմական դատարանի» մասին խոսելիս գոնե աչքերը գցեց ցած, դեռ չի հասցրել լիովին լկտիանալ:

- Ձեզ ավելին հայտնել չեմ կարող, մնացած ամեն ինչը կիմանաք տեղում, - լրացրեց ոստիկանապետը, ասես իր մտքերը կարդալով:

Հետո դարձավ ժանդարմներին.

- Մեկ ժամ հետո կառքերի քարավան է մեկնելու Զանղբրի..., - նա ժամացույցը հանեց դրպանից: - Ժամը տասին կլինեք այստեղ: Իսկ մինչ այդ աշխատեք լավ նախաճաշել. ճամփան երկար է:

Կառքով ճամփորդելն, անշուշտ, ավելի հաճելի կլիներ: Մանավանդ ամռանը, դեղեցիկ բնանկարների միջով: Կառապանն ասաց, թե սովորաբար առավոտ կանուխ են ճանապարհ ընկնում. նախ, ավելի զով է, հետո ավելի շուտ տեղ կհասնեն: Ավագ ժանդարմը հարգալից ժպիտով դիմեց Ռուբենին.

- Էս լավ եղավ, դոկտոր էֆենդի, որ թողեց համազգեստով մնաք, թե չէ իմացա, որ էս կողմերը ավազակախմբեր կան, որ հարձակվում են հայերի քարավանների վրա և կոտորում:

Հույսն, իհարկե, միայն իր համազգեստը չէր: Քարավանը բաղկացած էր տասներկու կառքերից և յուրաքանչյուրի մեջ առնվազն մեկ զինված ժանդարմ կար: Ուղևորները պաշտոնյաներ էին, զինվորականներ, և ինչպես երևում էր միայն հայերի վրա չէին հարձակվում:

Էնկյուրիից արդեն բավական հեռացել էին, մինչև Գալեջիկ հասնելը դեռ մի երեսուն կիլոմետր կար: Ճանապարհը դյուրին չէր, շարունակ զառիվերով

էին գնում: Գյուղերից մեկի մոտ որոշեցին դադար առնել: Քիչ հետո նրանց մոտեցավ գյուղապետը՝ տեղի երևելիներով շրջապատված: ԹեմենաՀներ մատուցելուց և ստանալուց հետո դիմեց սպաներից ավագին՝ հաղթանդամ մի մայորի.

- Բինբաշիս, լավ կլիներ, որ գիշերը մնայիք այստեղ, մինչև տեսնեինք, թե ինչ է լինելու:

- Ի՞նչ է պատահել, - մտահոգ հարցրեց մայորը:

- Անցած գիշեր, հարևան գյուղի կողմերը, ավազակները հարձակվել են մի քարավանի վրա և կողոպտել:

- Հայեր էի՞ն, - անտարբեր հարցրեց մայորը:

- Ոչ, էֆենդիս, թուրքե՛ր... Մեջները նույնիսկ գերմանացիներ են եղել:

- Զոհեր, վիրավորներ կա՞ն:

- Չէ, ոչ մեկին չեն վնասել, միայն մոտների դրամն են առել ու զարդերը:

- Վախենալու բան չունենք, - ասաց մայորը: - Տասնհինգ ժանդարմ են ուղեկցում, չհաշված մեզ, - շարունակեց նա՝ կողքի սպաներին ցույց տալով:

- Քիչ եք, էֆենդիս, - ասաց գյուղապետը: - Այնտեղ հարյուրից ավելի ավազակ կա, Արաբաջիբաշի Իսմայիլի խումբն է, արնախում գաղաններ են... Հայերին թալանեցին-պրծան, հիմա մեզ են թալանում:

- Բայց շտապում ենք, - պնդեց մայորը:

- Որ այդպես է լեռան կողով դնացեք, ճամփան մի քիչ կերկարի, բայց ապահով կլինեք: Ավազակներն այդ ճանապարհից հեռու են մնում... Գնացողեկողը քիչ է:

Մի քանի րոպե խորհրդակցելուց հետո սպաները որոշեցին այդ ճանապարհով շարունակել ուղևորությունը:

Լեռան լանջին, ասես, քանոնով մի գիծ էին քաշել: Ճանապարհն այստեղ նախորդի պես հարթ ու լայն չէր, բայց երևում էր, որ իսկապես ավելի ապահով է: Արդեն մեկ ժամ կլիներ, ինչ ընթանում էին չափավոր արագությամբ, սակայն ոչ մեկին չհանդիպեցին: Եղանակն սքանչելի էր, օդն աննման, իսկ բնանկարի վայրի դեղեցկությունից հաղենալ չէր լինում:

Կողքին նստած ժանդարմը հանկարծ մատը տնկեց վեր և ինչ-որ բան ցույց տվեց հեռվում: Սև կետեր էին, որ հանդարտ պտտվում էին անամպ երկնքի ֆոնին: Երբեմն-երբեմն նրանցից մեկը պոկվում էր երամից և խոյանում ներքև:

- Ագռավներ են, - ասաց ժանդարմը:

Բառը լսելուն պես մի գիշահոտ զգաց: Օդն անշարժ էր, քամի չկար և ամառային տապը սաստկացրել էր ձորակից բարձրացող փտող մարմինների սրտխառնիչ հոտը: Ոլորանին հասնելուն պես երևաց և ակունքը: Աջից, գրեթե ուղղահայաց, մի հսկա ժայռապատ էր կանգնած, որի հիմքը գնում կորչում էր մոտ հարյուր մետր խորության մեջ: Ագռավներն ու գիշանգղները սրընթաց իջնում էին այդ վիհը: Նրանց կռավոցներն ահասարսուռ մի մթնոլորտ էին ստեղծել: Դժվար էր, թեկուզ մոտավորապես, հաշվել անդունդի հատակում կուտակված դիակները: Ավելի ծանր տեսարան էին ներկայացնում ցից-ցից ժայռերին կամ թփերին հանգրվանած, բզկտված ու ծվատված մարմինները: Բոլորը կա-

նայք էին: Այդ էին վկայում սյուքի տակ ծածանվող երկար մագերը: Եվ բոլորը մերկ էին: Թփերից մեկի վրա մի կին կար՝ բերանքսիվայր ընկած: Նրա հերարձակ գլխի մոտ, ուսի տակից, փոքրիկ մի գանգ էր երևում, որ ագռավներն արդեն իսպառ լերկացրել էին: Սև ու խոշոր ակնախոռոչները հառած էին անորոշ մի կետի, թերևս առ Աստված...

Առջևից ընթացող կառքի ծածկոցի տակից մի գլուխ երևաց և փսխուքի հոնդոց լսվեց: Ժանդարմները լուռ էին: Կառապանն էլ լուռ էր: Միայն ձիերն էին փոքր ինչ նյարդայնացած: Բնազդով ընկալում էին բնական կարգի վայրագ խախտումը:. Գիշակեր թռչունների խրախճանքն անգամ բնության հետ համերաշխ մի բան էր: Արարիչը նրանց ստեղծել էր այդպես: Սակայն կենդանինե՞ր էին, թե մարդիկ երկոտանի այն արարածները, որ անպաշտպան կանանց ու երեխաներին բռնաբարելուց, որովայնը պատառոտելուց, կրծքերը կտրելուց հետո չալրտել էին անդունդը... Ագռավներն իրենց քաղցն էին հագեցնում, իսկ սրանք ընդամենը իրենց վայրենի բնազդները... Ագռավի քաղցը ենթարկվում է մարսողության անխախտ օրենքին... Դա հավերժ է... Իսկ ո՞ր օրենքին է ենթարկվում վայրենի բնազդը և կա՞ հագեցում դրա համար, թե թուրքի պարագայում սպանելն ու թալանելը նույնպես հավերժական են...

Եվ հիմա եթե չէր ցնցվում, եթե չէր աղաղակում, վերջապես եթե չէր խելագարվում Հայր Կոմիտասի պես, ապա պատճառն այն էր, որ ստույգ համոզվածություն ուներ, թե ականատեսն է եղել այս և նման անթիվ ու անհամար նախճիրների, որոնք Ադանայի աղետից ի վեր, գրեթե ամեն օր տեղի էին ունենում նրա երևակայության մեջ, դառնում բանաստեղծություն, հոդված, դասախոսություն, մասնավոր զրույց, ամենօրյա մտատանջություն: Այն սոսկալի օրը հիշեց, երբ Կիլիկյան ջարդերի սահմռկեցնող լուսանկարները տեսնելուց հետո իջավ Լեմանի ափ և ինքն իրեն շարունակ նույն հարցն էր տալիս. «Ի՞նչ պիտի անեին, որ չարեցին բոլոր հայերը, որպեսզի նման կոտորած չլիներ»: Եվ քանի որ անկարող էր բոլոր հայերի համար պատասխան տալ, ապա այդ հարցը թունավոր սլաքի պես գալիս մխրճվում էր իր սիրտը, դառնալով ուղեղը քրքրող համառ մորմոք. «Իսկ ի՞նչ պիտի արած լիներ անձամբ ինքը, որպեսզի կանխեր աղետը»: Արգելված էր պատասխանել. «Իսկ ես ո՞վ եմ որ... Ես ի՞նչ կարող էի անել... Իմ ուժերը չնչին են...» և այլ չքմեղանքներ: Եվ այս հարցի ծանրությունը կարծես քիչ էր, կրկնապատկված ուժգնությամբ զգաստացնող հարված էր հասցնում մյուսը. «Իսկ ի՞նչ պիտի անեն բոլոր հայերը, որպեսզի կոտորածներ այլևս չլինեն»: Սա էր ամենակարևո՛ր:

Հիշում էր, թերթերից մեկում հոդված տպագրեց Նապոլեոն Բոնապարտի մասին, որի բուն իմաստը հետևյալն էր. Նապոլեոնը մահացավ ոչ միայն որ երեք ծանրագույն հիվանդություն ուներ, որ ջախջախված էր ու ստորացված, այլև որ մեռել էր չմեռնելու հաստատ կամքը: Իսկ հնարավո՞ր է արդյոք մի ամբողջ ժողովուրդ այդպիսի կամքով համակել, այն էլ գազանի անմիջական հարևանությամբ, նրա գիշատիչ թաթի տակ... Դժվարին, եթե ոչ անկարելի մի առաքելություն: Բայց հենց այդ անկարելիությունն էր ստիպում մտածել չմեռնելու կամքի մասին: Ամբողջ աղգը դժվար էր միանգամից համակել այդ կամ-

քով: Բավական էր, որ նախևառաջ մտավորականությունը համակվեր և շտապեր դրանով ոգևորել երիտասարդությանը: Բայց, ավա՜ղ, ամենամեծ պառակտումը հենց մտավորականության մեջ էր: Իսկ քաղքենի դասը թաղված էր անբուժելի տխմարության և փոխադարձ ու անգիջում ատելության ճահճի մեջ: Հիշում էր, նոյեմբերին էր, թուրքերն արդեն պատերազմ էին սկսել ռուսների դեմ, մթնոլորտը խիստ լարված էր և բացառված չէր, որ առաջին իսկ առիթով հայերը կարող են հերթական անգամ նոր գաղանությունների զոհը դառնալ, սակայն ունևոր դասի հոգը չէր: Նրանք շարունակում էին իրենց նախկին կյանքը՝ լցված զանազան հաշիվներով, անվերջանալի ինտրիգներով ու բամբասանքներով, անգիջում քենով ու վրեժխնդրությամբ: Իր հաճախորդները մեծ մասամբ այս խավից էին: Օրերից մի օր հարուստ մի վաճառական եկավ, բողոքում էր ստամոքսից: Հատուկ բուժում էր պետք և կանոնավոր քննություն: Պահանջեց, որ մեկ շաբաթ հետո նորից դա: Սակայն այլևս չերևաց: Մեկ ամիս հետո, պատահական հանդիպելով նրան, հետաքրքրվեց, թե ինչու չի շարունակում բուժումը: «Շարունակում եմ, - ասաց նա, - բայց ուրիշ բժշկի մոտ»: «Ձեր գործն է, անշուշտ, բայց ինչո՞ւ որոշեցիք ուրիշ բժշկի մոտ գնալ»: «Ջնեղանաք, պարոն Ջիլինկիրյան, ես գիտեմ, որ դուք լավ բժիշկ եք, բայց ցավով իմացա, որ ձեր տիկինը հայ չէ, դրանից զատ, ինձնից առաջ այդ ավազակ Զինչինյանին եք ընդունել, այդ ստոր, խաբեբա մարդուն»: «Բայց դա պատճառ չէ, պարոն, ես բժիշկ եմ և պարտավոր եմ նույնիսկ իմ թշնամուն բուժել...»: Նման խոստովանություններ տեղի էին ունենում գրեթե ամեն օր, ունևոր խավը կարծես գալիս էր իր մոտ ոչ թե բուժվելու, այլ բամբասելու համար: Աչքի էին ընկնում մանավանդ կանայք... Նրանցից շատերը նույնիսկ որոշակի հիվանդություն կամ բողոք չունեին, գալիս էին պարզապես հանվելու և խոսելու մարմաջը բավարարելու համար, և իրենց հաճախակի այցելություններով քիչ էր մնում նույնիսկ Յաննիի խանդը բորբոքեին...

Բավական հեռացել էին նախճիրի ձորից, բայց գիշակեր թռչունների կռնչոցները դեռ ականջի մեջ էին, իսկ նեխող դիակների հոտը կարծես վերջնականորեն խառնվել էր օդին: Այդ տպավորությունը ջնջելու նպատակով էր, թերևս, որ կառքերը կանգ առան լեռնային աղբյուրի մոտ: Ժանդարմները ձեռքերն ու երեսը չփելուց և ծարավը հագեցնելուց հետո իրեն քաշեցին մի կողմ:

- Դոկտորս, դու բարի մարդ ես, - ասաց ավագը՝ կարծես իրենց երկուսի անունից, - մենք քեզ շատ սիրեցինք և չէինք ուզի որ քեզ վատ բան պատահեր... Էստեղ մեկը հետաքրքրվում էր քեզնով, չասացինք, որ հայ ես... Պարզապես ասացինք, որ հրամայել են քեզ ուղեկցել...

Ավագ ժանդարմը լռեց, ասես սպասելով, թե իր խոսքերն ինչ տպավորություն կգործեն: Հետո շարունակեց.

- Հարկ համարեցի ձեզ զգուշացնել, որպեսզի սրանց առջև հանկարծ չբացվեք... Ես մեկն եմ ասում, դուք երկուսը հասկացեք, էֆենդիս... Մի բան էլ խնդրենք, հայերի մասին ավել-պակաս խոսքեր կլինեն... Բանի տեղ չդնեք, չխառնվեք էդ զրույցներին...

Արդեն մթնում էր, երբ հասան Գալեջիկ: Ասում էին, թե այստեղ բավա-

կան հայեր կան: Ասում էին, ժամանակին... Սակայն հիմա, այս բարձունքից դիտելիս, կարելի էր ստույգ ասել, որ հայերը քաղաքի մեկ երրորդ մասն են կազմել: Ջնայած թանձրացող մթնշաղին, հայկական թաղը գծագրվում էր որոշակի սահմաններով: Դա ձվաձև ու ընդարձակ մի տարածք էր, որի կենտրոնում բարձրագմբեթ եկեղեցին էր իր զանգակատնով, շուրջը տարածվել էին երկուերեք հարկանի, կանոնավոր շարված տներն՝ ընդարձակ պարտեզներով: Քաղաքի այդ հատվածն ամբողջովին սև էր: Սև էր եկեղեցին, տները, դատարկ պատուհանները, քանոնով գծված փողոցները և անգամ ծառերը, որոնք տարվա այս եղանակին պիտի զուգված լինեին կանաչով: Գուցե թանձրացող խավարն էր ստեղծում այս տպավորությունը, սակայն ենթադրեց, որ ցերեկով տեսարանը կարող է ավելի դժնի լինել:

Հայկական թաղի միջով չանցան: Թաղը գետի ափից բարձրանում էր բլուրն ի վեր: Այլ անցան գետի եզրով, հայկական թաղի կողքով: Երեկոյան զովն այրվածի հոտ էր բերում: Սա արդեն դարձել էր թուրքական բնանկարի անբաժան մասը: Ասես նոր հանգցրած խարույկի կողքով անցնեին: Հավանաբար վերջերս էին հրդեհել: Առավելագույնը մի շաբաթ առաջ: Այդ էին վկայում ձորի ցից ժայռերից ու թփերից կախված կանացի դիակները: Այս տներից ո՞ր մեկում էր ապրել այն կինը, որն անգամ օդում, անկումի մեջ, երեխային բաց չէր թողել գրկից... Մայրական բնազդը ջնջել էր ինքնապաշտպանության բնազդը...

Գիշերը պիտի անցկացնեին այս քաղաքում: Ավագ ժանդարմն ասաց, որ Գալեջիկում ընդամենը մեկ տեղ կա գիշերելու՝ նշանավոր Արթին խանը...

- Այո, տերը հայ էր, բայց հիմա Ղահրաման անունով մեկի ձեռքին է, չգիտենք թուրք է, թե քուրդ... Շտապենք, որպեսզի կարողանանք տեղ դտնել:

Հարությունի պանդոկը թուրքական թաղը հայկականից բաժանող սահմանագծին էր: Ինչ-որ ձեռք խնայել էր այս հաստատությունը, անշուշտ, հեռատես նպատակներով: Բարձր ու ամուր դարպասը նայում էր քաղաքի միջով անցնող լայն պողոտային: Այդտեղով կարող էին նույնիսկ կառքեր մտնել և ապահով տեղավորվել չորս կողմից փակված բակում: Հյուրերին հատկացրեցին ամենաընդարձակ սենյակը: Չորս հոգի էին. երկու սպա, քաղաքացիական զգեստով մի պաշտոնյա, որ գալիս էր Պոլսից և ինքը: Ժանդարմներին տեղավորեցին բեյերից առանձին: Քիչ հետո խանի տերը բոլորին հրավիրեց ընթրիքի: Ինքն էլ տեղ գրավեց սեղանի մոտ: Երևում էր, որ ջանք չի խնայում թանկագին հյուրերին դուր գալու համար: Հատկապես ուշադիր էր քաղաքացիական զգեստ հագածի հանդեպ: Վերջինս հարցրեց.

- Դե, ասա տեսնեմ, Ղահրաման, հիմա գոհ ե՞ս... Այսպիսի հարստության տեր դարձար:

- Գոհ ասելը քիչ է, բեյս, Ալլահի փառքը շատ լինի, չմեռած ջեննեթ ընկա:

- Միայն խանը քեզ հասա՞վ, - հարցրեց մայորը:

- Չէ, բինբաշիս, երկու ջրաղաց, հիսուն գլուխ կով ու տավար, քառասուն այծ, հարյուր գլուխ ոչխար, երկու այգի... Խանն էլ որ ասում ես հո միայն չենքը չի, մեջը եղածը որ պատմեմ չի վերջանա...

- Բայց ամեն ինչ չասացիր, Ղահրաման, - վավաշոտ ժպիտը դեմքին ընդհատեց պոլսեցին: - Պատմիր, թող լսեն, թե Արթինի աղջիկներին ինչպես փախցրիր:

- Ալլահ, Ալլահ, - ասես արդարություն հայցելով ձեռքերը տարածեց ու հայացքը վեր հառեց պանդոկատերը: - Ես չեմ փախցրել, բեյս, ինքը՝ Արթինն իր ձեռքով երեխաներին հանձնեց ինձ, հետն էլ հինգ հարյուր ոսկի տվեց, որպեսզի իր բացակայությամբ լավ նայեմ, ոչ մի բանի կարիք չունենան:

- Վստա՞հ էր, որ պիտի հետ գա, - անմեղ ժպիտով հարցրեց պոլսեցին:

- Բոլորն էլ կարծում էին, թե պիտի հետ գան, այդ պատճառով էլ շատերն իրենց երեխաներին, իրենց տան բանալիները, ողջ ունեցվածքը թողեցին թուրք հարևանների մոտ... Հիմա Գալեջիկում գրեթե հինգ հարյուր հայ երեխա կա:

- Որտեղի՞ց գիտես այդ թիվը, - հարցրեց ինքը:

- Մեր քաղաքի «Իթթիհաթի» պատասխանատուն ասաց: Տներն ընկած ցուցակագրում էր: Ինձ մոտ էլ եկավ:

- Ինչո՞ւ էր ցուցակագրում, - հարցրեց մայորը:

- Կենտրոնի հանձնարարությամբ, - լուրջ ու հանդիսավոր հայտարարեց պոլսեցին: - Պետք է տիրություն անել այդ որբերին: Մենք շահագրգռված ենք, որպեսզի այդ երեխաները մնան թուրք ընտանիքներում և իսլամի ոգով դաստիարակվեն: Բազմաթիվ հայ որբեր կան ճանապարհներին, Սիրիայի անապատներում: Դրանց բոլորին պիտի հավաքենք և ապագա Թուրքիայի քաղաքացիներ դարձնենք:

- Ի՞նչ տարիքի են այդ երեխաները, - հարցրեց ինքը:

- Աշխատում ենք 10-12 տարեկանից բարձր չվերցնել... Այդ գյավուրները շատ համառ են, տասնհինգ տարեկան լակոտն արդեն հրաժարվում է իսլամ ընդունել:

- Իսկ տասներկուսից բարձրերին ի՞նչ եք անում, - դարձյալ հարցրեց ինքը:

- Ի՞նչ պիտի անենք, տալիս ենք չեթեների ձեռքը, նրանք լավ գիտեն իրենց գործը:

- Հա, էդ մեկը ճիշտ է, բեյս, - համաձայնեց Ղահրամանը:

- Իհարկե, ճիշտ է, - հաստատեց պոլսեցին: - Չեթեները որ չլինեին, ինչպե՞ս պիտի ազատվեինք հայերից: Պատերազմ է, չէինք կարող բանակին իր հիմնական գործից կտրել և ստիպել, որ գյավուրներին կոտորելով զբաղվեն:

- Բանակը չի կարելի սեփական ժողովրդի դեմ հանել, - վճռական ասաց մայորին ուղեկցող կապիտանը:

Պոլսեցին շեշտակի նայեց նրան և որոշ դադարից հետո պատասխանեց.

- Այդ պատճառով էլ ոճրագործներին ազատեցինք բանտերից, որպեսզի ձեր ձեռքերը չկեղտոտեք:

- Կարիք չկար ոճրագործներին բանտերից հանելու, - ընկերոջը սատար կանգնեց մայորը: - Քրդերն արդեն բավական էին այդ գործի համար:

«Գործ» բառը նա հատուկ ընդգծեց: Իթթիհաթական պաշտոնյան տեսնելով, որ կարող է մենակ մնալ երեք սպաների դեմ, որոշեց դառնալ Ղահրամանին:

- Արթինը բոլոր երեխաներին թողեց քեզ մո՞տ:

- Այո, բեյս... Զորս ղավակ, երկու տղա, երկվորյակ աղջիկներ՝ տասնվեց տարեկան...

- Հա՜, տեսել եմ, շա՜տ սիրուն աղջիկներ են, - աչքերի վավաշոտ փայլով գնահատեց իթթիհաթականը: - Ի՞նչ արեցիր աղջիկների հետ:

- Նիքյահ* արեցի, էֆենդիս:

- Երկուսի հե՞տ:

- Երկուսի հետ միաժամանակ, բեյս, տեսա երկվորյակ քույրեր են, ասացի մեղք են, որ իրարից բաժանեմ:

- Ճիշտ ես արել, Ղահրաման, - հավանություն տվեց իթթիհաթականը: - Իսկ տղաները քանի՞ տարեկան են:

- Մեկը ութ է, մյուսը՝ տասնմեկ:

- Տուր մեզ, կդաստիարակենք իսկական թուրքեր կդարձնենք:

- Թող մնան ինձ մոտ, բեյս, ինձ աշխատող ձեռքեր են պետք:

- Իրավունք ունես, Ղահրաման, իսկ թլպատե՞լ ես:

- Դեռ ոչ, ժամանակ չունեի, էդ հարստությունը միանգամից գլխիս ընկավ... Երկու օր հետո պիտի թլպատեմ, և այդ առթիվ մեծ քեֆ եմ անելու, մնացեք, հյուրս եղեք, մեծ պատիվ կլինի ինձ համար:

- Կարևոր գործեր ունեմ, Ղահրաման, չեմ կարող, վաղն առավոտ պիտի մեկնեմ:

Իթթիհաթականը դարձավ մյուսներին.

- Հիմա հասկանո՞ւմ եք, թե մեր կուսակցությունն ինչ իմաստուն որոշում ընդունեց:

- Ի՞նչը նկատի ունեք, - հարցրեց մայորը:

- Մի զարկով երկու նապաստակ խփեցինք. հայերից ազատվեցինք, իսկ նրանց հարստության շնորհիվ աղքատության մեջ տառապող թուրք գյուղացիության տնտեսական վիճակը շտկեցինք:

- Ճիշտ ես, բեյս, բոլորս մի բանի տեր դարձանք... Մենակ թե մի բան լավ չեղավ, հայերի տներն ափսոս էին, իղուր տեղը վառեցինք:

- Դուք վառեցի՞ք, թե հայերը, - հարցրեց ինքը:

- Չէ, յուղբաշիս, հայերն ինչո՞ւ պիտի վառեին: Նրանք կարծում էին, որ պիտի հետ գան:

- Կարծում էին, որ պիտի հետ գա՞ն... Բա որ հիմա Արթինը վերադառնա, ի՞նչ ես անելու, - չարախնդաց իթթիհաթականը:

Ղահրամանը ձեռքը տարօրինակ շարժեց, ասես ճանճ քշեր.

- Էլ հետ չի գա, էֆենդիս, ես իմ ձեռքով նրան գյավուրի ջեննեթ ուղարկեցի:

- Հա՞, - հետաքրքրվեց իթթիհաթականը: - Պատմիր տեսնենք՝ ինչպես եղավ:

- Ի՞նչ ասեմ, էֆենդիս, երբ հայերին տեղահանում էին, Արթինն արտոնություն ստացավ սայլով ճամփա գնալ: Բայց ես գիտեի, որ քաղաքից դուրս

* Ամուսնություն մահմեդական ծեսով:

գալուն պես սայլը ձեռքից խլելու են: Մտածեցի՝ եզներն ափսոս են, սայլն էլ ափսոս է: Իրենց հետ ճամփա ընկա, ասացի մի քիչ ուղեկցեմ ու ետ դառնամ: Կես ժամ կլիներ, քաղաքից հեռացել էինք, չեթեները հարձակվեցին, սկսեցին կողոպտել ու մորթել: Ասում էին, թե ուզում եք առանց չարչարվելու մեռնել՝ փող տվեք, որ միանգամից սպանենք, թե չէ տանջելով կսպանենք... Էդ գյավուրներից ինչքա՜ն փող հավաքեցին... Արթինն էլ տեսնելով, որ փրկության հույս չկա, մոտը պահած ոսկին ու փողը տվեց ինձ ու խնդրեց, որ իրեն ու կնոջն ատրճանակով սպանեմ... Միայն թե ասաց, որ դիմացից չկրակեմ, ասաց՝ աղոթենք-վերջացնենք, հետո մեջքից կկրակես... Դե ես էլ գյավուրի աղոթքից մի քիչ հասկանում եմ, մոտները քանի՜ տարի ծառայել եմ... Ձոքեցին իրար կողքի ու աղոթեցին... «Ամենը» լսելուն պես էլ չսպասեցի, մի-մի հատ կրակեցի ու փրկեցի չեթեների չարչարանքներից... Էհ, լավ մարդ էր Արթին աղան, ափսոս, որ գյավուր էր...

Սուրճ և նարգիլե մատուցելուց հետո Ղահրամանը հյուրերին առաջնորդեց իր ամենալավ սենյակը: Սիրով կգերադասեր գիշերել ժանդարմների հետ: Այս իթթիհաթականն ասես բորենի լիներ, որի հետ ստիպված էր մի քանի ժամ անցկացնել մի տանիքի տակ: Սակայն մի՞թե իր դրությունն ավելի վատ է ամբողջ հայ ժողովրդի ճակատագրից, որ արդեն քանի՜ դար ապրում է իր դահճի կողքին: Իր վիճակը դեռ գերադասելի է, չգիտեն, որ ինքը հայ է, և դա ապահովության հետ ցավալի մի արտոնություն է տալիս. իմանալ, թե թուրքերն ինչ են խոսում հայերի մասին իրար մեջ, հատկապես այս օրերին: Վաղը երկար ճամփա ունեն կտրելիք, ուրեմն, դեռ առիթ կունենա վայելելու այդ «առավելությունը»:

Առավոտ կանուխ ճամփա ընկան Զանգրրի: Ճանապարհը հոգնեցուցիչ էր, և ուղևորները, ննջելով, չնկատեցին, թե ինչպես կեսօրը մոտեցավ: Գետի ափին, ծառերի ստվերում դադար արեցին: Լեռնային մաքուր օդը գրգռել էր բոլորիախորժակը և, ինչպես պարզվեց, նաև խոսելու ցանկությունը: Մայորը, որ նախորդ օրը կեսբերան էր առարկում իթթիհաթականին, այսօր պարզապես մոլեգնել էր:

- Ձեզ կախելը քիչ է, - ասում էր նա: - Բավական չէ երկիրը քանդեցիք, հիմա էլ բանակն եք քանդում... Ձեմ հասկանում, թե ով է այսօր կանգնած բանակի գլխին՝ Էնվե՞րը, դո՞ւք, թե գերմանացիք...

- Մենք, թե Էնվերը միևնույն է, - հպարտությամբ պատասխանեց իթթիհաթականը:

- Այդ պատճառով էլ Սարիղամիշի մոտ խայտառակ պարտություն կրեցինք ռուսներից, որոնք թվով երկու անդամ պակաս էին մեզնից...

- Մեղավորը մենք չէինք, այլ ցրտերը:

- Ոչ, մեղավորը դուք էիք, պիտի իմանայիք, որ այդ կողմերը միշտ դաժան ցրտեր են լինում, և հետո, ցրտերն ինչո՞ւ չխանգարեցին ռուսներին:

Իթթիհաթականն աչքերը կկոցելով մի չար հայացք նետեց մայորի կողմը:

- Բինբաշի, - ասաց նա, - այնպես եք խոսում, ասես հայ լինեք:

- Ով որ համարձակվում է չհամաձայնել ձեզ հետ, դառնում է ձեր թշնամին, այսինքն՝ հայ... Ոչ, ես իսկական օսմանցու նման եմ մտածում և գտնում եմ,

որ հայերին կոտորելով վնաս հասցրիք երկրին... Նախ սուլթանի հարստությունը կողոպտեցիք, հիմա էլ հայերին եք կողոպտում, հետո ո՞ւմ եք կողոպտելու...

- Նախ հարց է, թե ով ում էր թալանում, - չար ժպիտը դեմքին պատասխանեց իթթիհաթականը: - Սուլթանի թալանածը մենք վերադարձրինք ժողովրդին, իսկ հայերը դարեր շարունակ ծծում էին մեր արյունը, ժամանակն էր ետ բերել մեզնից խլվածը: Մենք մեր ունեցվածքն ենք ետ վերցնում և ուրիշ ոչինչ:

- Իսկ այդ ունեցվածքը մսխելուց հետո ի՞նչ պիտի անեք:

- Անհոգ եղեք, բինբաշիս, մենք նոր կայսրություն ենք ստեղծելու՝ Միջերկրականից մինչև Դեղին ծով, հայերն էին մեզ խանգարում, նրանք ընկել էին մեր և իսլամական ամբողջ աշխարհի միջև, չասած արդեն, որ ռուսների համար հենարան էին ծառայում:

- Սակայն, էֆենդիս, գիտե՞ք, թե մեր բանակի ամենալուրջ անհաջողությունները որտեղ են:

Իթթիհաթականը հեգնանքով ժպտաց.

- Գիտեմ, թե ինչ եք ասելու. այն տարածքներում, որտեղից հայերին տեղահանել ենք:

- Այո, և որտեղ դուք ձեր քթթները խոթել եք ռազմական գործերի մեջ:

- Բայց մեր միջամտության շնորհիվ նաև լուրջ հաջողություններ են եղել, - բողոքեց իթթիհաթականը:

- Այդ որո՞նք են ձեր հաջողությունները, Կիրենաիկան և Տրիպոլիտանիա՞ն, Կրետե կղզի՞ն, եվրոպական տարածքնե՞րը..., - մայորի դեմքին դառը քմծիծաղ հայտնվեց. - Նոր կայսրություն եք ուզում հիմնել, դուք եղածը կարողացեք պահպանել...

Նրանց վեճը շարունակվեց կառքի մեջ: Սպայի մեղադրանքները բնավ չէին փակում իթթիհաթական պաշտոնյայի բերանը: Երևում էր, որ արդեն հասցրել է դեմագոգիկ պատասխաններ մշակել: Սպայի մտահոգությունները ծանոթ էին: Հիվանդանոցում առիթներ էր ունեցել նման դժգոհություններ լսելու վիրավոր սպաներից: Իմիջիայլոց, մայորը հենց այդպես էլ ասաց. «Մեզ պետք չէր այս պատերազմը, պարզապես դուք ձեր մութ հաշիվներն ունեիք...»: Սպան ավելին չասաց: Արդեն շատ էր ասել և կարող էր լուրջ խնդիրներ ունենալ:

Երեկոյան ժամը յոթին հասան Զանդերի և միանգամից ներկայացան ժանդարմների հրամանատար Նուրհանեդդին բեյին: Վերջինս բժշկական ծառայության սպային տեսնելով՝ տեղից վեր կացավ, որպեսզի ըստ պատշաճի դիմավորի, սակայն ուղեկցող ժանդարմները կարծես կանխեցին նրան՝ սեղանին դնելով Էնկյուրիում ստացած ծրարը: Նուրհանեդդին բեյը ողջույնի արարողությունը կիսատ թողնելով եկավ տեղը նստեց, դեմքին նորից խոժոռ արտահայտություն տալով գրությունը կարդաց, հետո դարակից մի ահարկու դաշույն հանելով, մոտեցավ աքսորյալին: Նախ արհամարհանքով չափեց վերից-վար, հետո վարպետ շարժումով ուսադիրները կտրեց, դաշույնի ծայրով տարբերանշանները պոկեց օձիքի վրայից և սպայական վկայականը պահանջեց: Այնուհետև, ուզածն ստանալով, եկավ տեղը նստեց և, առանց դիմացինին նայելու, հայտարարեց.

- Առայժմ այսքանը: Ձեր ընկերները հիմա Հաջի բաբայի սրճարանում են, հեռու չէ, գետի ափին է, գնացեք այնտեղ և որոշեք, թե ում հետ եք մնալու: Առավոտյան ժամը իններին կներկայանաք ոստիկանություն՝ ստորագրելու:

Հետո աքսորյալի բժշկական պայուսակին նայելով հարցրեց.

- Ի՞նչ կա այնտեղ:

- Էֆենդիս, - պատասխանեց ավագ ժանդարմը, - բժշկական գործիքներ են, վիրակապ, դեղեր... Ես ուշադիր նայել եմ:

- Կարող եք պահել... Գոնե այդպես մի օգուտ կլինի ձեզնից:

Ժանդարմներն ուղեկցեցին մինչև փողոց: Ավագը հրաժեշտ տալուց առաջ ասաց.

- Դոկտորս, մի մտահոգվեք: Ձեզ նման մարդուն երկար չեն պահի այստեղ:

Վերջապես մնաց մենակ՝ թուրքական անծանոթ քաղաքի հողե մայթին կանգնած: Դիմացը կավաշեն տներ էին, որոնց առջև տանտերերը նստած թզբեհ էին քաշում և զարմացած նայում անուսադիր համազգեստով սպային: Երկու շուն ծուլորեն քայլում էին իր մայթով: Նրանցից մեկը մոտեցավ, հոտոտեց, տխուր աչքերով նայեց պայուսակին, հետո մայթը փոխելով ծվարեց տներից մեկի կիսաբաց դռան մոտ:

Քաղաքը տարածվել էր գետի զույգ ափերին, որ սահուն թեքությամբ բարձրանում էին լանջերն ի վեր: Աջ կողմից, բլրի գագաթին, կանգնած էր բյուզանդական փառահեղ և սարսափազդու ամրոցը, որն արդեն ժամանակի ավերիչ հետքն էր կրում, իսկ մյուս ափին, տափարակ մի տեղում, բարձրանում էր հսկայական մզկիթը, որն ասես Պոլսի Սուլեյմանիեի պատճենը լիներ: Գետի ներկայությունն ավելի շատ զգացվում էր ափերին շարված երկար ու հաստաբուն բարդիներով: Սրճարանը հավանաբար դրանց ստվերում էր: Մի վերջին հայացք նետեց բյուզանդական ամրոցին, իր հսկայական ծավալներով խեղճ գյուղաքաղաքը ճնշող մզկիթին և արդեն ուզում էր քայլել դեպի գետը, երբ թիկունքից իր անունը լսեց.

- Փառահեղ է, չէ՞, պարոն Սևակ:

Զարմացած շրջվեց և Հակոբիկին տեսավ՝ «Ազատամարտի» խմբագրությունում աշխատող երիտասարդը:

- Հակոբի՛կ, ի՞նչ ես անում այստեղ:

- Նույն հարցը պիտի ձեզ տամ, պարոն Սևակ... Այսօր ժամանեցի՞ք:

- Այո, քիչ առաջ:

- Ի՜նչ լավ եղավ, որ առաջինը ես տեսա ձեզ, հիմա գնանք սրճարան, ուրախ լուրը հայտնենք բոլորին:

* * *

Վերջապե՛ս: Այսօր վերջապես նամակ ստացավ Ռուբենից: Այսինքն՝ նամակ ասելը շատ կլինի: Ընդամենը մի բացիկ էր՝ չորս-հինգ կնիքներով ծածկված: Գրում էր, որ ճամփորդությունն ութ օր է տևել, որ գոհ է իր պայմաննե-

րից և վերջում բժշկական մի քանի գրքեր էր խնդրում: Նշանակում է վիճակն այնքան էլ վատ չէ, բանտում չէ, այլ տուն է վարձում և կարող է իր մասնագիտությամբ աշխատել:

Լավատեսության մի հուժկու ալիք ողողեց նրան: Ուրեմն, օգտակար էին ամենօրյա իր այցելությունները, իր համառ խնդրանքներն այդ քարսիրտ մարդկանց: Տարօրինակ մի համոզվածություն ծնվեց նրանում, որ եթե Ռուբենը ողջ է, գոհ է իր վիճակից, ապա դա նաև իր հետապնդումների շնորհիվ է: Այո, կա՛ Աստված, որ հետևում է մարդկանց արարքներին, այո, թուրքերը գազան են, բայց ինչպե՞ս կարող են Ռուբենի նման մարդուն... Նույնիսկ մտովի չուզեց պատկերացնել: Հիմա պետք է, որ իր միտքն ու սիրտը լավատեսությամբ լցնի: Հիլմի փաշային վաղուց չէր զանգել: Գտավ, որ հարմար առիթ է՝ նամակի մասին հայտնելով, խնդրել, որպեսզի նոր քայլեր ձեռնարկի: Վերջինս, կարծես, անկեղծ ուրախությամբ ընդունեց այդ լուրը.

- Տեսնո՞ւմ եք, տիկին Զիլինկիրյան, ասում էի, չէ՞, որ երբեք պետք չէ հույսը կորցնել... Հիմա նորից կփորձեմ մի քանի հոգու հետ խոսել, իսկ դուք այդ նամակը ցույց տվեք Վանգենհայմին, ի դեպ, դեռ չեք հանդիպե՞լ...

Ոչ, դեռ չէր հանդիպել: Նա պարզապես անմատչելի էր: Նախորդ օրը մոր հետ էր գնացել: Ընդունարանի քարտուղարը դարձյալ ֆոն Նոյրաթի մոտ ուղարկեց: «Պարոն, ես իմ դեսպանին եմ ուզում տեսնել, - հայտարարեց մայրը: - Ի դեպ, ես արդեն երկրորդ անգամ եմ գալիս»: «Ցավում եմ, տիկին, սակայն դեսպանն այս պահիս բացակա է...»: Հետո դուրս եկավ և վերադարձավ մի մեծ մատյան ձեռքին. «Ահա, տիկին, կարող եք ձեր խնդրանքը գրել այստեղ»: «Սա նշանակում է, որ այլևս ինձ չի ընդունի՞», - մարտականորեն հարցրեց մայրը: «Ոչ, ի՞նչ եք ասում, տիկին, ընդհակառակը»: Մայրը գրիչը թաթախեց և գրեց հետևյալը. «Ձերդ գերազանցություն, խնդրում եմ ինձ անհապաղ ընդունել մի հարցով, որն ուղղակիորեն առնչվում է Գերմանիայի պատվին ու հեղինակությանը»: Քարտուղարն ուշադիր կարդալով ասաց. «Մենք ձեզ կհայտնենք, թե նորին գերազանցությունը երբ կարող է ընդունել»: Ապակե աչքեր, անհաղթահարելի պարիսպ: Մայրը նորից հասկացավ, որ իր հանդիպումը դեսպանի հետ հայտնի չէ՝ կկայանա՞, թե ոչ:

Ռուբենի նամակը կարծես պահանջ էր, որ փոխեն իրենց ռազմավարությունը. ոչ թե խնդրեն, այլ պահանջեն: Ո՛ւթ օր... Ութ օր է տևել ճամփորդությունը դեպի դժոխք, և կարելի է պատկերացնել, թե այդ օրերի ընթացքում ինչպիսի վտանգների միջով է անցել, մինչդեռ իրենք այստեղ հանգիստ ու ապահով գնում են դեսպանատուն, գլուխները կախ, նկուն ձայնով խնդրում այդ խաբեբա ֆոն Նոյրաթից, որպեսզի զանգի մյուս խաբեբային, և երկուսով միասին նույն սուտը հորինեն... Գոնե մի քիչ երևակայություն ունենային: Ո՛չ, պետք է ոտքը գետնին զարնել, պետք է գոռալ, պետք է օձիքից բռնել և բաց չթողնել, մինչև Ռուբենին չազատեն:

Վճռականությամբ լցվեց գնալ ոչ միայն պահանջել, այլև մեղադրել դեսպանատանը, որ իրենց անորոշ, երկդիմի պահվածքով փաստորեն հովանավորում են թուրքերի հանցավոր ընթացքը: Սակայն, ափսո՛ս, չկարողացավ մորն

ուղեկցել: Երեխաներին նայող չկար: Մայրը որոշեց մենակ գնալ: Տանը չէր կարող նստել: Ինքն էր շարունակ Յաննիին բորբոքում: Նամակն առնել որպես զորավոր մի փաստարկ, որպես մի ապացույց և մենակ գնալ: Ինքը գիտի, թե ինչպես պետք է խոսել այդ անհոգի մարդկանց հետ:

Դեսպանատան ընդունարանում միևնույն քաղաքավարի սառնությունն էր սպասում նրան: «Տիկին, նա զբաղված է, այսօր իսկապես չի կարող ձեզ ընդունել... Այո, մենք հայտնել ենք ձեր նախորդ այցերի մասին, պարոն հյուսպատոսին է հանձնարարել այդ գործը, և չնայած իր սոսկալի զբաղվածությանը, ամենայն ուշադրությամբ հետևում է ընթացքին... Ոչ, պետք չէ առանց ժամադրության գալ... Գնացեք տուն և սպասեք, մենք ձեզ կհայտնենք...»:

- Ես այստեղից ոչ մի տեղ չեմ գնա, - կտրուկ և բարձրաձայն հայտարարեց Գրետա Ապելը:

Ընդունարանի քարտուղարի դեմքին վերջապես ուրիշ մի արտահայտություն երևաց: Սակայն նա աշխատեց մնալ բարեկրթության սահմաններում:

- Բայց, տիկին, անիմաստ է այստեղ սպասելը:

- Սխալվում եք, պարոն, - նորից գոռաց Գրետա Ապելը: - Ես կսպասեմ այնքան, որքան պետք կլինի իմ երկրի դեսպանին տեսնելու համար:

- Բայց, տիկին, հասկացեք, սա սպասասրահ չէ... Վերջապես իրավունք չունեք...

- Իսկ դուք իրավունք ունե՞ք երկու արժանավոր գերմանուհիների սուտ խոստումներով ծանակելու: Ես այստեղից չեմ հեռանա, կարող եք ոստիկան կանչել...

Ընդունարանում արդեն ժողովուրդ էր հավաքվել: Մարդիկ զարմացած նայում էին, շշուկով հարցեր տալիս իրար: Մթնոլորտը գնալով շիկանում էր և ուր որ է սկանդալ պիտի պայթեր:

- Դուք թուրքերից վատ եք, - լացակումած արտասանեց պատկառաչուք գերմանուհին:

Քարտուղարն շփոթված կանգնել էր և չգիտեր, թե ինչ աներ: Մի սպա մոտեցավ և ականջին ինչ-որ բան ասաց, վերջինս հնազանդ գլխով արեց, դուրս եկավ և մի քանի րոպե անց վերադառնալով դիմեց տիկին Ապելին.

- Տիկին, նորին գերազանցությունը հենց նոր ազատվեց և խնդրում է, որ բարեհաճեք իր մոտ մտնել:

Տիկին Ապելն ապշած նայում էր քարտուղարին: Հոգեկան ցնցումն, ասես, զրկել էր նրան խոսքերն ու երևույթները միանգամից հասկանալու կարողությունից: Քարտուղարը կրկնեց.

- Տիկին, նորին գերազանցությունն սպասում է ձեզ, բարեհաճեք հետևել ինձ:

Դեսպանի աշխատասենյակն, ասես, պատկերասրահ լիներ: Ներս մտնողն ամենից առաջ Վիլհելմ կայզերի հսկայական դիմանկարն էր տեսնում: Վեհապետը ներկայացված էր գոտկատեղից վեր: Դեմքին խրոխտ արտահայտություն կար, անսասան մի վճռականություն: Արծվաբիբ աչքերը, սրագմբեթ սաղավարտի տակից, անմատչելի հեռուներն էին զննում: Կանոնավոր քիթը, խնամված

կարճ ու վեր ցցված բեղերը դեմքին միաժամանակ հաղորդում էին առնականություն և ազնվականություն: Նուրբ բերանը և կզակի փոսիկը փոքր ինչ մեղմում էին նրա ռազմաշունչ ոգին, իսկ սուսերի դաստապանին օրիորդական շարժումով դրված ձեռքերն ուրիշ, երբեմն-երբեմն շշուկով ասվող բամբասանքներն էին հաստատում: Բալետային ինչ-որ բան կար այդ շարժումի մեջ, և թվում էր, որ եթե կարողանայինք մի հրաշքով շրջանակը կոտրել և վեհապետին ներկայանում ամբողջ հասակով, ապա կտեսնեինք, որ տրիկոյի պես ձիգ շալվարի մեջ ամփոփված ոտքերը «հինգերորդ դիրքով» իրար առջև են դրված: Մյուս պատերն էլ ծածկված էին նկարներով ու քարտեզներով: Առանձնապես աչքի էր ընկնում ջրաներկային գույներով մի կտավ, որ պատկերում էր կայսրին և Օգյուստա կայսրուհուն՝ Երուսաղեմի Ս. Հարության տաճարի առջև, թուրք և գերմանացի բարձրաստիճան զինվորականներով շրջապատված: Գրասեղանից աջ երկու մեծ քարտեզ կար. առաջինը ներկայացնում էր պատերազմի ռազմաբեմը Եվրոպայում, մյուսն՝ Ասիայում: Իսկ քարտեզների մեջտեղը Զիգֆրիդի ահեղ կերպարանքն էր՝ արնածոր սուրը ձեռքին, գլխատված հրեշի կողքին կանգնած:

Նորին գերազանցություն բարոն ֆոն Վանգենհայմն ասես, ռամիկ լիներ կամ բյուրգերական ստորին խավի բնորոշ ներկայացուցիչ: Ֆոն Նոյրաթի կատարյալ հակապատկերը: Երեսը՝ քառակուսի, վիզը՝ կարճ ու հաստ, մատները՝ լայն ու կոպիտ, մարմինը՝ պարարտ, ոտքերը՝ տձև: Բացի այդ, ծակող աչքերի մեջ ավազակային ինչ-որ բան կար, ասես շարունակ մտածում է այն մասին, թե ինչպես խաբի դիմացինին:

Այնուհանդերձ, տիկին Ապելի մտնելուն պես, ցուցադրաբար տեղից ելավ և ժպիտը դեմքին մոտեցավ նրան:

- Ես չգիտեմ, թե ինչպես արդարանամ, տիկին Ապել... Եթե ամենածանր մեղադրանքները չպրտեք երեսիս, դարձյալ իրավացի կլինեք:

Կանացի սիրտը միանգամից փափկեց.

- Օ, ոչ, ձերդ գերազանցություն, ես մեղադրելու համար չեմ եկել, այլ խնդրելու...

- Շատ ճիշտ եք արել, տիկին, դուք ձեր տուն եք եկել, վերջապես, սա մեր երկինքն է, մեր հողը... Ասացեք տեսնեմ, բարեհաջող հասա՞ք:

- Շնորհակալ եմ, պարոն դեսպան, լավ:

- Իսկ այստեղ ամեն ինչ կարգի՞ն է... Կարծեմ ձեր դստեր մոտ եք ապրում:

- Այո, պարոն դեսպան, ամեն ինչ լավ է, միայն թե...

- Ես ամեն ինչ գիտեմ, տիկին, - ընդհատեց դեսպանը: - Ճիշտ է, հնարավորություն չունեի ձեզ անմիջապես ընդունելու, սակայն հայտնեցին, թե ինչ խնդրով էիք ուզում ինձ տեսնել... Կարծեմ ձեր փեսայի համար էիք եկել:

- Այո, ձերդ գերազանցություն, շատ անարդար բան են արել թուրքերը:

- Ինձ մանրամասնորեն ներկայացրել են ամեն ինչ, և ես անմիջապես ֆոն Նոյրաթին հանձնարարեցի, որ զբաղվի այդ հարցով: Կարծեմ հանդիպել եք նրան:

- Հանդիպել եմ, պարոն դեսպան, իսկ աղջիկս՝ մի քանի անգամ, բայց, ավա՜ղ, ապարդյուն:

Վանգենհայմը տեղով կարեկցանք էր:

- Տիկին, ես հասկանում եմ, դուք ուզում եք, որ ձեր փեսան անմիջապես վերադառնա Պոլիս, դա բնական է, անարդարության զոհ դարձած մարդիկ ուզում են տեղնուտեղը հատուցված լինել... Սակայն, խնդրում եմ, մի ասեք, թե ֆոն Նոյրաթի միջնորդությունն ապարդյուն էր: Արդյունքը միանգամից չի երևա, թուրքերի հետ բանակցելը դյուրին չէ, նրանք մեր դաշնակիցն են, բայց ենթական չեն, բացի այդ, դրությունը հիմա շատ լարված է:

- Բայց դա իրավունք չի տալիս անմեղ մարդկանց կեսգիշերին տնից հանել և աքսորել անհայտ ուղղությամբ, - վրդովված ընդհատեց տիկին Ապելը:

- Տիկին, երբ ասում եմ, թե դրությունը լարված է, միայն պատերազմը նկատի չունեմ...

Նա մի պահ լռեց և բազմանշանակալից նայեց այցելուի աչքերի մեջ.

- Հուսամ գիտեք, թե հայերի հանդեպ թուրքերն ինչ վերաբերմունք են ցուցաբերում վերջերս:

- Այո, տեղյակ եմ, - գլուխն օրորելով հաստատեց տիկին Ապելը:

- Ուրեմն, ինձ ավելի լավ կհասկանաք. եթե ձեր փեսան հույն լիներ, ասորի քրիստոնյա, անգամ եթե ֆրանսիացի կամ ռուս, ապա անհամեմատ ավելի դյուրին կլիներ նրան հետ բերելը, մինչդեռ հայի դեպքում խնդիրն անչափ բարդանում է:

- Ուրեմն, հույսներս կորցնե՞նք, - սարսափահար հարցրեց տիկին Ապելը:

- Հույսը ոչ մի դեպքում պետք չէ կորցնել, - անսասան համոզվածությամբ հորդորեց Վանգենհայմը, - այլ պարզապես լցվեք համբերությամբ, իսկ մենք կաշխատենք անել հնարավոր ամեն բան:

Տիկին Ապելը բացիկը հանեց և դրեց դեսպանի առջև.

- Խնդրում եմ, ձերդ գերազանցություն, շտապեք, քանի դեռ ողջ է... Այս բացիկն այսօր ստացանք... Բայց թուրքերը շատ անգութ են, նրանցից ամեն ինչ կարելի է սպասել:

Դեսպանն ուշադիր զննեց բացիկը և վերադարձնելով ասաց.

- Տեսնում եք, դրությունն այնքան էլ ծանր չէ, ինչպես դուք եք ներկայացնում: Այնպես որ, մի քիչ էլ համբերեք, տիկին, կարծում եմ՝ ամեն ինչ լավ կլինի:

Վանգենհայմն իր այցելուին ընդգծված քաղաքավարությամբ ուղեկցեց մինչև դուռը և, հրաժեշտ տալով, խնդրեց բարևներ հաղորդել տիկին Զիլինկիրյանին:

* * *

Քայլեցին դեպի գետեզերք, որը զորանոցից հեռու չէր, բայց ստիպված էին անցնել նեղ ու ծուռ փողոցների լաբիրինթոսով, որ լցված էին գարշահոտով, անլվա ու խլնքոտ լամուկներով, քոսոտ ու նիհար շներով և լկտիորեն վազվզող առնետներով: Հակոբիկը, նկատելով Ռուբենի դեմքին հայտնված սոսկումը, շտապեց հանգստացնել.

- Ուշադրություն մի դարձրեք, պարոն Սևակ, մենք հայկական թաղում ենք ապրում, այնտեղ ավելի մաքուր է:

Քամին, ասես, երբեք չէր մտել այս գռիհները: Եվ ի՞նչ ուղեղ, ինչպիսի՞ մտքեր ու բարոյական պիտի ունենար այս գարշահոտի մեջ ապրողը: Ահա, դռան ճեղքից մի գլուխ հայտնվեց՝ մորուքը ճենճոտ, աչքերը՝ ճպռակալած... Հայերեն բառեր հասան ականջին, անծանոթ դեմքեր տեսավ... «Գյավուրները եկել ու մուռտառում են մեր քաղաքը», - դժգոհ մրթմրթաց ու դուռը շրխկոցով ծածկեց:

Մի երկու ծուռումուռ փողոց անցնելուց հետո վերջապես դուրս եկան գետափ: «Հաջի բաբան» կավաշեն մի խրճիթ էր՝ գետից քիչ հեռու կանգնած, որի տերը՝ նույնինքը Հաջի բաբան, իր տան ընդարձակ բակը վերածել էր սրճարանի: Առջևից բարդիների շարքն էր, որ սահմանագծում էր տարածքը մինչև գետափ, աջից ու ձախից՝ թթենիների փարթամ սաղարթը, որ ընդարձակ բակի կենտրոնում կանգնած բալի և ծիրանի ծառերի հետ հաճելի զով ու ստվեր էր անում:

Հակոբիկը խնդրեց, որ քայլերը դանդաղեցնի և առաջ վազեց: Հասկանալի և նույնիսկ հաճելի մի բան կար երիտասարդի այդ ցանկության մեջ՝ առաջինը հասցնել լուրը, այսպես ասած, իր հայտնությունը նախապատրաստել: Երկու ամիս է այստեղ են, հեռու իրենց հարազատներից, բարեկամներից, ծանոթ միջավայրից, ուստի մի նոր մարդու դալուստն իրենց համար երևույթ էր լինելու:

Հակոբիկը երեխայական հրճվանքով նետվեց առաջ, հետո հանկարծ կանգ առավ, շրջվեց, վազեվազ մոտեցավ և խորամանկ ժպիտը դեմքին ասաց.

- Ինչպիսի՞ մարդիկ եք տեսնելու այնտեղ, մեկը մյուսից նշանավոր...

Հետո նորից սլացավ: Այդ պահին հիշեց, որ ժանդարմների զորանոցի առջև նրան տեսնելուն պես, մի հարց ծագեց գլխում, որն այդպես էլ մնաց չտրված. «Իսկ քեզ, սիրելի Հակոբիկ, քեզ ինչո՞ւ են աքսորել: Մեր այստեղ լինելն ինչ-որ կերպ հասկանալի է, բայց դու, տասնյոթամյա պատանիդ ի՞նչ վտանգ կարող ես ներկայացնել Օսմանյան ահասարսուռ կայսրության համար»:

Խորովվող մսի բույրը հասավ: Ակունքն, անշուշտ, սրճարանում էր: Իսկապես, թթենիների առատ սաղարթի ետևից ծխի թանձր քուլաներ էին բարձրանում: Կարելի էր կարծել, որ մի հսկա խրախճանք է պատրաստվում: Պատկերացրեց աքսորական հայ երևելիներին, խեղճ ու թշվառ, աղքատիկ սեղանի շուրջ բոլորած, իսկ նրանց կողքը թուրքերը մի խենեշ խրախճանք են անում: Ամենօրյա ստորացումն, ուրեմն, դարձել է սովորական... Դարեր շարունակ այս երկրում տխած անհամար նվաստացումներին պիտի ավելանա նաև այս մեկը: Քայլերն ավելի դանդաղեցին: Ութ օրվա ընթացքում արտասվելու չափ կարոտել էր հայ խոսքին, հայկական դեմքերին, մտավորական ընկերներին, որոնց մի մասն անպայման պիտի այստեղ լինի, սակայն չէր ուզի նրանց այդ վիճակում տեսնել: Թող Հակոբիկը նրանց հանի այնտեղից, գան գետեզերքը և բարդիների շուքի տակ հանգիստ զրուցեն: Սակայն Հակոբիկը երևաց նորից և ուրախությունից փայլող դեմքով բարձրաձայն ասաց.

- Խնդրում եմ շտապեք, պարոն, այլևս չեն համբերում...

Ահա թե ինչպիսի վարակիչ հատկություն ունի պատանեկան խանդավառությունը: Տխուր մտքերն անմիջապես անհետացան, չտապեց թթենիների տակով մտնել սրճարան:

- Սեա՜կը, դոկտորը, Ռուբե՜նը, պարոն Զիլինկիրյանը..., - միաժամանակ լսվեց բացօդյա սրճարանի տարբեր անկյուններից:

Աչքերը մշուշվեցին, արցունքների կիսաթափանց շղարշի միջով փորձեց դեմքերը զանազանել մեկ առ մեկ, բայց անմիջապես չհաջողեց, որովհետև իր թաց այտը մյուսների ոչ պակաս թրջված այտերին էր հպվում (ո՞վ է ասում, թե միայն դառը արցունքներն են աղի, հապա հրճվանքի արցունքնե՞րը...): Այդպես ամուր, այդպես անկեղծ և այդպես երկար չէր ողջագուրվել դեռ ոչ մեկի հետ... Ի՞նքն էր ավելի ուժգին սեղմում նրանց իր գրկում, թե՞ նրանք: Թվում էր, թե հիմա ոսկորները կփշրվեն... Ամբողջ ցեղի, ազգի, ժողովրդի հետ էր գրկախառնվում: Վերջապես, կարոտներն առան, կիսաշրջանով շարվեցին իր առջև:

- Դանիե՛լ, եղբայրս... Օ՜, պարոն Քելեկյան, ինչպիսի՜ պատիվ... Ահա և Բյուզանդ Քեչյանը... Դոկտոր Դինանյան, ողջո՛ւյն... Հովհան վարդապետ, Գրիգորիս վարդապետ, Աստված օգնական, հայր սուրբեր, մեր հոգիների և մարմինների փրկությունը լիովին ապահովված է... Դոկտոր Զարեվանդ, դոկտոր Ալթունյան, բարի տեսանք...

Շարունակեց մեկ առ մեկ թվարկել բոլոր նրանց, ում ծանոթ էր կամ գիտեր դեմքով, ծանոթացավ մյուսներին, հետո մի քիչ ետ քաշվեց, որպեսզի հայացքով կարողանա բոլորին ընդգրկել և ամենայն լրջությամբ ասաց.

- Չէ, թուրքերին պետք է մի հարցում երախտապարտ լինեմ, որ այսպիսի եղակի առիթ չնորհեցին այսքան հարգարժան անձինք միանգամից, մեկ տեղում տեսնելու:

Ընդհանուր քրքիջ բարձրացավ:

- Իսկապես, - համաձայնեց արժանավորներից մեկը: - Պոլսում կկարողանայի՞նք ռամկավարին, դաշնակցականին, հնչակյանին և անկուսակցականին մի տեղում հավաքել... Ես այդպիսի դեպք չեմ հիշում:

- Ես նույնպես, - համաձայնեց մեկ ուրիշը:

- Եղբայրներ, միայն աղետը պիտի միավորի՞ մեզ, - հարցրեց ինքը:

- Ավա՜ղ, - նկատեց Բյուզանդ Քեչյանը: - Երբեմն աղետն էլ բավական չէ մեզ միավորվելու համար:

Խորովվող մսի հոտն զգաց նորից, ածուխի ճթճթոցը լսեց: Կողքը նայեց և երկու հոգու տեսավ, որ մի ամբողջ ոչխար էին խորովում բորբոքուն ածուխների վրա: Նրանցից մեկը դանդաղորեն դարձնում էր հսկայական շամփրին հագցրած ոչխարը, իսկ մյուսը՝ ժամանակ առ ժամանակ, ինչ-որ հեղուկ լցնում և համեմունքներ շաղ տալիս: Հայացքը դարձրեց սրճարանով մեկ և ոչ մի թուրք չտեսավ՝ պատի տակ նստած քառասնամյա տղամարդուց զատ, որն ուշադիր նայում էր նոր ժամանած հային: Ահա, որսաց իր հայացքը, մոտեցավ, թուրքական թեմենահներով* ողջունեց և հաճոյակատար ժպիտը դեմքին ասաց.

---

* Ողջույնի ծես(թուրք.):

- Բարով եկար, էֆենդիս, գլխիս վրա տեղ ունես:

Իհարկե կուրախանա՝ մի հաճախորդ էլ ավելացավ:

Հաջի բաբան Զանղըրիի միակ թուրքն է, որն ուրախ է աքսորական հայերի ներկայությունից: Գործերը երբեք այսքան լավ չէին գնացել: Գիշեր-ցերեկ մոտը հաճախորդ կա: Շահույթը միանգամից բազմապատկվեց: Առատաձեռն մարդիկ են այս հայերը, առանց սակարկելու վճարում են: Եվ ոչ միայն: Օգնեցին, որ սրճարանը կարգին տեսք ստանա: Նույնիսկ սուրճի հատուկ սպասք պատվիրեցին Իբրանոսյանների միջոցով: Մի խոսքով, Հաջի բաբան շա՜տ գոհ է, Ալլահի պարգևն են այս հայերը... Եվ ի՜նչ մարդիկ են, իսկական պոլսեցի էֆենդիներ: Միայն ափսոս, որ նրանց թիվը գնալով նվազում է: Սկզբում երեք հարյուր հոգի էին, և բոլորն էլ իր հաճախորդները: Ի՜նչ օրեր էին, քուն ու դադար չուներ, բայց շատ գոհ էր, շա՜տ: Հետո հարյուր հիսուն դարձան: Հիմա ընդամենը յոթանասուներկուսը մնացին: Լավ է, այսօր մեկով ավելացավ: Թե չէ գնում են ու հետ չեն գալիս... Ասում են, իբր, տանում են Հալեպի կողմերը՝ անապատների մեջ ապրելու: Բա մեղք չե՞ն այս պատվական մարդիկ, այսպիսի աղաները ո՞նց պիտի ապրեն այնտեղ: Ասում են՝ շատերը տեղ չեն հասնում... Ինչպե՞ս կարելի է, բա այսպիսի առատաձեռն հաճախորդներն ափսոս չե՞ն...

- Բարի գալուստ, - ազդարարեց Արամ Անտոնյանը՝ օղու բաժակը բարձրացնելով:

Ռուբենը խմեց իր գալստյան կենացը և, շուրջը նայելով, ասաց.

- Բայց ես տեսնում եմ, որ այստեղ շատ չեք տխրում:

- Դու որ եկար, հիմա ավելի ուրախ կլինենք, - պատասխանեց բժիշկ Ալթունյանը՝ առաջացնելով մյուսների ծիծաղը:

- Ես նույնպես ուրախ եմ, - արդարացավ նա, - որ ձեր ոգին չեք կորցնում: Պարզապես մինչև այստեղ գալը սոսկալի տեսարաններ էի պատկերացնում... Չէ, իսկապես կեցցե՛ք:

- Սրանք փոքրիկ ուրախություններ են, դոկտոր, - ասաց Բյուզանդ Քեչյանը՝ օղու բաժակը ցույց տալով, - որ զարդարում են մեր աքսորն այս տխուր քաղաքում, սակայն ցավով ու վրդովմունքով եմ կարդում թերթերը...

Նա առջևը՝ սեղանին ընկած հայկական թերթերը ցույց տվեց.

- Այս բոլորը ապրիլի 24-ից հետո լույս տեսած համարներն են... Հասկանում եմ, չեն կարող մտավորականության աքսորի մասին գրել, սակայն ուրախ հանդիսությունների հրճվալից նկարագրությունները գոնե չտպագրեն: Մի՞թե չեն հասկանում, թե ինչ է կատարվում, մի՞թե լուրեր չեն հասնում գավառներից:

- Լուրերը հասնում են Պոլիս, և բոլոր հայ ընտանիքները գիտեն, - պատասխանեց Ռուբենը: - Բայց մի՞թե նույն պատկերը չէր վեց տարի առաջ, երբ թուրքերը երեսուն հազար հայ կոտորեցին Կիլիկիայում... Հայկական թերթերը դարձյալ լցված էին զանազան հանդիսությունների ցնծագին նկարագրություններով...

Զրուցակիցների ուշադրության կենտրոնում հայտնվեց Տիրան Քելեկյանը, որը կեսօրից հետո հանդիպել էր մյութեսարիֆին* և բավական զրուցել հետը:

---

* Սանջակի կառավարիչ:

- Աթըֆ բեյին վաղուց գիտեմ, - ասաց նա: - Իմ ուսանողն է եղել Օսմանյան համալսարանում...

- Դա նույն Աթըֆը չէ՞, - անսպասելի ընդհատեց Ռուբենը, - որ համարվում էր Կիլիկյան եղեռնի պատասխանատուներից մեկը:

- Այո, նույնն է, բայց ինքը ժխտում է իր մեղավորությունը, ասում է նույնիսկ, որ փորձել է ջարդերի դեմն առնել, հայերին պաշտպանել:

- Աներևակայելի է:

- Ինչ որ է, մարդն այսօր ինձ համար ապշեցնող հայտնություններ արեց. պարզվում է, որ Զանգեզրին միակ քաղաքն է Օսմանյան կայսրության մեջ, որի հայ բնակիչները դեռևս չեն տեղահանվել:

- Մեջտեղը մի նենգ հաշիվ կա անպայման, - ասաց Արամ Անտոնյանը:

- Ոչ մի հաշիվ, պարզապես Աթըֆը չի ենթարկվել Թալյաթի գաղտնի հրամաններին, որ դեռևս ապրիլին էր ստացել:

Տիրան Քելեկյանն աչքերը փակելով գլուխն օրորեց.

- Օ՜, երանի չտեսնեի այդ հեռագրերը... Նա ինձ՝ աքսորական հայիս, հույժ գաղտնի փաստաթղթեր ցույց տվեց, որոնք անգամ իր թուրք ենթականերից պիտի գաղտնի պահեր... ամենաահավորն առաջինն էր, որտեղ Թալյաթն ուղղակի հրահանգ էր տալիս՝ առանց սեռի և տարիքի խտրության, տեղահանել և ճանապարհներին կոտորել բոլոր հայերին...

- Ի՞նչ շահ ուներ այդպիսի փաստաթղթեր ցույց տալու, այն էլ քեզ:

- Ոչ մի շահ, մարդը պարզ ասաց, որ հակառակվել է բոլոր հրամաններին, որովհետև գտնում է, որ մեծ ոճիր է գործվում, որ պատերազմը շուտով կվերջանա և բոլոր մեղավորները կկանգնեն ատյանի առջև:

- Երևի չհավատալու պատճառ չունենք, - նկատեց ներկաներից մեկը: - Փաստ է, որ այստեղ հայերի մազին անգամ չեն դիպել:

- Ասաց նաև, - շարունակեց Քելեկյանը, - որ վաղուց դիմում է ուղարկել ազատվելու և մի քանի օր հետո մեկնում է Պոլիս:

- Իսկ չգիտի՞, թե ով է փոխարինելու իրեն:

Քելեկյանը նորից գլուխն օրորեց.

- Ինքը չգիտի, ես գիտեմ... Նա միայն անունն է լսել, իսկ ես և՛ անունը գիտեմ, և՛ էությունը:

Բոլորը հարցական նայեցին նրան:

- Ջեմալ Օղուզը, կատարյալ հրեշ, որն այսօր գնաց Կաստամոնու, երկու օր հետո կվերադառնա Զանգեզրի՝ որպես «Իթթիհաթի» ներկայացուցիչ, և այստեղ բոլորը փաստորեն պիտի ենթարկվեն նրան:

- Ինձ թվում է, թե գիտեմ այդ անձնավորությանը, - ասաց Ռուբենը և պատմեց իր պոլսեցի ուղեկցի մասին:

- Հենց դա է, որ կա, - հաստատեց Քելեկյանը: - Մի կատարյալ ճիվաղ... Ես լավ գիտեմ դրան, իմ ուսանողն է եղել, իսկ հիմա «Իթթիհաթի» եռանդուն գործիչներից մեկն է, սոսկալի հայատյաց: Այնպես որ, եղբայրներ, ծանր օրեր են սպասվում մեզ:

- Պետք է մի բան անել, - ասաց Հակոբիկը: - Հո չենք կարող այսպես ձեռքերը ծալած նստել:

- Ի՞նչ կարող ենք անել, - վհատված ասաց մի վաճառական: - Արդեն ուշ է:

- Ոչ, ոչ, պետք է մի բան ձեռնարկել, - ասաց մի ճարտարապետ: - Գուցե կաշառք տանք, սիրաշահենք, մինչև որ մեկ ուրիշ ելք գտնվի:

- Կարելի էր փախչել այստեղից դեպի ծովափ, - ասաց Բալաքյան վարդապետը: - Այնտեղ լազերը կօգնեին ծովով Բուլղարիա հասնել: Բայց ճանապարհները լցված են քրդերով և Բեհաէդդինի ավազակներով:

- Ոչ փախուստը կօգնի, ոչ էլ կաշառքը, - ասաց Տիրան Քելեկյանը: - Ես Թուրքերին լավ գիտեմ. նրանք դրամը կառնեն, հետո իրենց մտքինը կանեն: Պետք է աշխատել, որ Պոլսում դեսպանները միջնորդեն մեզ համար:

- Ճիշտ է ասում պարոն Քելեկյանը, - համաձայնեց Ռուբենը: - Ինչ էլ որ լինի, մեր արժանապատվությունը պահպանենք և չստորանանք Թուրքերի առջև:

* * *

Ջեմալ Օղուզը չէր թաքցնում իր դժգոհությունը: Երեկ առավոտյան Կաստամոնուից ժամանեց Զանղըրի, անմիջապես հավաքեց տեղական իշխանությունը, սակայն չկարողացավ խորհրդակցությունը միանգամից սկսել: «Իթթիհաթի» տեղական ակումբի անդամներից մեկն զգուշորեն հասկացրեց, որ պետք է սպասել Արաբաջիբաշի Իսմայիլին:

- Դա ո՞վ է, - զարմացած և մի քիչ էլ վրդովված հարցրեց Օղուզը:

- Ջեթեների պետն է, - դեմքին հարգալից արտահայտություն տված պատասխանեց ոստիկանապետը: - Բեհաէդդին Շաքիրի մտերիմ մարդը:

- Այդ դեպքում գուցե սկսենք, ժամանակը քիչ է, իսկ ժողովի բովանդակությունը հետո կհայտնենք նրան:

Օղուզի առաջարկը օդում կախված մնաց:

- Էֆենդիս, ավելի խոհեմ կլինի, որ սպասենք, - վերջապես առաջարկեց Ուլու մզկիթի հոջան:

Հենց այդ պահին ներս մտավ Արաբաջիբաշի Իսմայիլը և, առանց ներողություն խնդրելու ուշանալու համար, հանգիստ բազմեց Օղուզի առջև: Վերջինս, զայրույթից բեղը կրծելով, հայտարարեց, որ օրակարգում մեկ հարց կա. Զանղըրիի հայերի տեղահանությունը:

- Պետք է լրջորեն նախապատրաստվել, - ավարտեց նա իր հայտարարությունը:

- Լրջորեն նախապատրաստվելու կարիք չկա, - միջամտեց Նուրհանեդդին բեյը, որի մականունը «Ոսկոր փշրող» էր: - Ընդամենը հարյուր ընտանիք են, միանգամից կհավաքենք ու կտանենք:

- Ոչ մի դեպքում, - կտրականապես առարկեց Օղուզը: - Կրկնում եմ, պետք է լրջորեն նախապատրաստվել: Այսօր և իսկ կշրջեք բոլոր թաղերում, կհայտարարեք, որ կառավարության հատուկ հրամանով բոլոր զենքերը ժամանակավորապես առգրավվում են: Պատերազմի ավարտից հետո կվերադարձվեն: Հրամանին չենթարկվողները կկանգնեն ռազմական դատարանի առջև: Խոսքը վերաբերում է բոլորին՝ հայերին և Թուրքերին: Վաղն առավոտյան կշրջեք տուն

առ տուն և կհավաքեք զենքերը: Ձևականությունը պահպանելու համար թուրքերից մի քանի զենք կվերցնեք: Ինչ վերաբերում է հայերին, կփնտրեք ամենայն բարեխղճությամբ: Ո՛չ մի հրազեն, ո՛չ մի դաշույն, ո՛չ մի կացին չպետք է մնա հայերի մոտ: Անփույթ կամ անուշադիր գտնվողները խստորեն կպատժվեն:

Առավոտ կանուխ լույսը չբացված ժանդարմներն սկսեցին խուզարկությունը: Թուրքական թաղում չորս-հինգ տներից մեկն էին նայում: Մի քանի կայծքարի հրացան վերցրին, մի երկու կեռ դաշույն և անկոթ կացիններ: Հիմնական աշխատանքը հայերի տներում էր: Փնտրում էին ամենուր, ներքնակները շրջում, պատառոտում, կճուճները ջարդում կամ պարունակությունը դատարկում՝ համոզված, որ ոչինչ չեն գտնելու: Հայերից մեկին ստիպեցին, որ պարտեզում փոսեր փորի և իբր հողի տակ պահված զենքերը հանի, սակայն անձրևաորդերից զատ ուրիշ ոչինչ չգտան: Անհաջողությունից կատաղած հավաքեցին բոլոր ծակող ու կտրող գործիքները, հետո ողորմելի ավարը սայլի մեջ լցրած բերեցին ոստիկանատուն:

Ջեմալ Օղուզի զայրույթին չափ ու սահման չկար.

- Հիմարներ, չկարողացա՞ք մի երկու զենք գցել հայերի տները:

- Բեյս, - փորձեց բացատրել Նուրհանէդդինը, - հայերին պատժելու համար կարիք չունենք այդպիսի ապօրինի բաներ անելու, որին ուզենք, երբ ուզենք, կբռնենք և կբերենք այստեղ:

Օղուզը չհամոզվեց.

- Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ եք ասում: Այստեղ բազմաթիվ մտավորականներ կան Պոլսից: Պետք է ամեն ինչ ըստ պատշաճի անել, որպեսզի վաղը չկարողանան ավել-պակաս խոսել:

- Իսկ ինչ է, նրանք Պոլիս պիտի վերադառնա՞ն, - զարմացած հարցրեց «Ոսկոր փշրողը»:

- Մի քանիսն արդեն վերադարձել են, - հայտնեց Օղուզը: - Մեծ երկրների դեսպանները շարունակ միջնորդում են նրանց համար, այնպես որ բացառված չէ, որ ևս մի քանի հոգու ետ ղրկենք:

- Էֆենդիս, - վերջապես խոսեց Արաբաջիբաշի Իսմայիլը: - Դու մեզ ասա, թե երբ ես ետ ղրկելու, մենք ճանապարհին այնպես կանենք, որ տեղ չհասնեն:

Նա բթամատի ծայրով վիզը կտրելու շարժում արեց և այնպես հռհռաց, ասես նրա հուժկու մարմնի ներսում մի հրաբուխ քլթքլթար:

Օղուզը նայեց նրան: Մյուսները լուռ նստել էին:

- Պարոնայք, - շարունակեց Օղուզը: - Հարցը միայն հայերից ազատվելը չէ, այլ ինչպես ազատվելը: Դա նշանակում է նրանցից ազատվել հնարավորին չափ իրավաբանորեն հիմնավորված, հնարավորին չափ աննկատ, հնարավորին չափ արագ և վերջնական: Ի՞նչ ասել է «իրավաբանորեն հիմնավորված»: Դա նշանակում է, որ մենք պետք է քաղաքական լուրջ փաստարկներ բերենք տեղահանության և հետագա բոլոր հավանական պատիժների համար...

Նա լռեց, ասես ստուգելու համար, թե իր խոսքերը հասնո՞ւմ են «աշակերտներին», թե արդյոք դարձե՞լ է դրության տերը և, կարծես համոզվելով, որ այդպես է, շարունակեց իր հանրամատչելի բացատրությունը.

- Դա նշանակում էր, որ պետք է զենքեր գտնեիք հայերի մոտ, և հնարավորին չափ շատ, որպեսզի կարողանայինք խոսել կառավարության դեմ պատրաստվող դավադրության, եթե կուզեք նույնիսկ ապստամբության մասին:

Արաբաջիբաշի Իսմայիլի ահռելի և տարածուն փորի ընդերքներից դարձյալ քլթքլթացող ծիծաղը հնչեց.

- Էդ խեղճ հայերն ի՞նչ են, որ համարձակվեն գլուխ ցցել մեր կառավարության դեմ: Ինձ հինգ րոպե ժամանակ տվեք, ես մենակս դրանց բոլորի վիզը կկտրեմ:

Օղուզն այս անգամ դադար չտվեց, այլ միանգամից անցավ հակահարձակման.

- Զարաչար սխալվում եք, Աբդուլ Համիդն էլ այդպես էր կարծում, բայց չկարողացավ հայերի վերջը տալ: Ավելին, մեր երկրի հեղինակությունն արատավորվեց, և այդ գյավուրների պատճառով եվրոպացիք սկսեցին քթթները խոթել մեր գործերի մեջ: Պատերազմը մեզ հրաշալի առիթ է ընձեռում, որպեսզի Օսմանյան կայսրությունը, իսկ հնարավորության դեպքում նաև Կովկասը վերջնականապես մաքրենք հայերից, ուստի կրկնում եմ. պետք է գործել հիմնավորված, աննկատ, արագ և վերջնական: Մինչև պատերազմի ավարտը պետք է լուծենք այս հարցը, և ցավով եմ նշում, որ Զանգեզուրին այսօր միակ բնակավայրն է, ուր հայեր են մնացել:

- Դա մեր մեղքը չէ, - շտապեց արդարանալ Նուրհանէդդին բեյը: - Նախկին մյութեսարիֆը Պոլսից եկած կարգադրությունները չէր կատարում:

- Ոչինչ, շուտով նոր մյութեսարիֆ կգա և հայերից մաքրված քաղաք կստանա:

- Բեյս, հիմա դու մեզ ասա, թե վաղը քանիսին ենք սկսում, - հարցրեց Արաբաջիբաշին:

Օղուզը, մինչև պատասխանելը, առջևը դրված ցուցակները նայեց:

- Բարեբախտաբար, շատ անելիք չունեք, - ասաց նա: - Ընդամենը հարյուր տասներկու տուն է, վեց հարյուր իննսունյոթ չունչ: Այսպես, վաղն առավոտյան վեցին, մեկական ժանդարմ և ոստիկան միաժամանակ ներկայանում են այս տանտերերին, - նա հայ ընտանիքների ցուցակը թափահարեց օդում, - և մեկ ժամ տալիս պատրաստվելու ուղևորության: Նրանց հայտնում եք, որ իրենց անվտանգությունն ապահովելու նպատակով ժամանակավորապես տեղահանվում են Սիրիա, որտեղ կմնան մինչև պատերազմի ավարտը, որից հետո կարող են վերադառնալ, նորից տեր կանգնել իրենց ունեցվածքին: Տները պիտի կողպվեն, բանալիներն էլ պիտի հանձնվեն ոստիկանության: Ճամփորդական ծախսերը կառավարությունը վերցնում է իր վրա:

Նա լռեց, հետո նայեց ներկաներին.

- Հարցեր կա՞ն:

Հարցեր չկային: Բայց ինքը հարց ուներ.

- Ձեզնից որևէ մեկը մասնակցե՞լ է տեղահանություններին:

Արաբաջիբաշի Իսմայիլը նորից քլթքլթաց.

- Բա էս երեք ամիսը ինչո՞վ եմ զբաղված, էֆենդիս:

- Հրաշալի է, - գոհունակություն հայտնեց Օղուզը և դիմեց ոստիկանապետին և Նուրհանէդդինին բեյին. - Ձեր գործն է այդ վեց հարյուր ինն սունյոթ հոգուն հասցնել մինչև անտառ... Կամրջից մինչև անտառ քանի՞ րոպե է:

- Առավելագույնը մեկ ժամ, - պատասխանեց Նուրհանէդդինը:

- Հրաշալի է, հրաշալի է, - նորից ուրախացավ Օղուզը: - Ուրեմն, անտառ հասնելուն պես ոստիկաններն ու ժանդարմները դադար են տալիս ու հեռանում, մնացածն արդեն «Թաշքիլասա մախսուսայի» գործն է, - ավարտեց նա և բազմանշանակալից նայեց Իսմայիլին, վերջինս լուռ գլխով արեց:

Քիչ հետո սուրճ մատուցեցին աղբյուրի սառնորակ ջրի հետ: Հոջան երկու կում ֆոթացնելուց հետո դիմեց Օղուզին.

- Էֆենդիս, իսկ ի՞նչ կլինի նրանց ճակատագիրը, ովքեր կհամաձայնեն իսլամ ընդունել:

- Հարցը տեղին է, - շտապեց պատասխանել Օղուզը: - Ես այդ մասին չխոսեցի հետևյալ պատճառով. սկզբում ներքին գործոց նախարարության հրահանգի մեջ ասվում էր, որ պետք է խնայել միայն նրանց, ովքեր կհամաձայնեն իսլամ ընդունել: Բայց փորձը ցույց տվեց, որ հայերից շատ քչերն են ընդունում մեր հավատը, իսկ ընդունելուց հետո էլ աշխատում են գնալ Պոլիս կամ արտասահման և վերադառնում քրիստոնեության: Հայերն, իրենց նենգ նկարագրի համաձայն, չարաշահեցին մեր մեծահոգությունը, ուստի հիմա մենք չափազանց զգուշավոր ենք այդ հարցում:

- Ուրեմն, ինչպե՞ս վարվենք, - հարցրեց Նուրհանէդդինը:

- Եթե իսկապես իսլամ ընդունել ցանկացողներ լինեն, պետք է խնայել նրանց կյանքը և, իհարկե, նրանք չեն տեղահանվի... Ձմռանանք նախապես հայտարարել այդ մասին:

Օղուզն ընդհատեց իր խոսքը, խիստ հետաքրքրված և զարմացած մոտեցավ պատուհանին և, անմիջապես դառնալով ներկաներին, հարցրեց.

- Նուրհանէդդին բեյ, ո՞վ է այս մարդը, որն առանց ուսադիրների համազգեստ է կրում:

Վերջինս մոտեցավ պատուհանին և բավական անտարբեր պատասխանեց.

- Աքսորական հայ է... Երեք օր առաջ բերեցին Էնկյուրիից: Ուսադիրները ես պոկեցի, սպա էր՝ հարյուրապետ:

Եկավ տեղը նստեց և, ասես հիշելով, ավելացրեց.

- Իմիջիայլոց, բժիշկ է:

Արաբաջիբաշին նույնպես մոտեցավ պատուհանին.

- Հա՞, ասում եք բժիշկ է՞..., - հարցրեց նա: - Դե լավ է, պետք կգա:

* * *

Զանգեզուրի հայ համայնքի ավագ Գրիգոր Մերջիկյանի գամփռն ամբողջ գիշեր անհանգիստ էր: Կես ժամը մեկ կլանչում էր, կաղկանձում, հաչում, շարունակ շղթան ձգում: Շան անհանգստությունն ի վերջո անցավ տիրոջը: Այդ օրը քիչ ավելի ուշ պառկեցին: Դոշաբ էին եփում: Տունը լցված էր թանձր ու

արբեցնող բույրով: Այդ տարվա թութն աննման էր: Խոշոր ու հյութեղ, հաճելի քաղցրությամբ, հին գինու նման բուրավետ: Բոլոր տեսակի թթերը կային իր պարտեզում. սև, մանուշակագույն, մուգ կարմիր, վարդագույն, մեղրի պես դեղին, շաքարի պես սպիտակ... Զանգեզուրում թթենիներ շատ կային, բայց ոչ մեկինն այդպես համեղ ու ընտիր չէր, ինչպես իրենը: Ո՞րն էր գաղտնիքը: Իր պարտեզի դի՞րքն էր ավելի լավը, հո՞ղն էր հարուստ և խոնավ, թե՞ մորից, տատից ու բոլոր նախնիներից ժառանգած առանձնահատուկ պաշտամունքն էր այդ ծառի հանդեպ: Եվ թթենիներն այդ սիրուն պատասխանում էին սիրով: Իսկ իր մոր եփած դոշաբը միակն էր ամբողջ քաղաքում:

Այլևս չդիմացավ և որոշեց դուրս գալ պարտեզ: Շղթան հավանաբար կաշկանդում էր խեղճ կենդանուն: Տիրոջ ոտնաձայնը լսելով՝ շունը հանդարտվեց, բայց կապից աղատվելուն պես նետվեց պարտեզի խորքը, հետո վերադարձավ ու սլացավ մյուս կողմը:

- Զորա՛վ, Զորա՛վ, - կանչեց տերը:

«Զորավորը» համառոտվել դարձել էր «Զորավ»: Դա մի հսկա գամփռ էր, հինգ տարեկան: Քուրդ Յաղուբի մշտական նախանձի առարկան: Ամեն հանդիպելուց ասում էր. «Գրիգոր աղա, երեք ոչխար կտամ էդ շանը, տուր ինձ»: «Ես նվեր կտամ քեզ, բայց ինքը չի գա»: Յաղուբը գլխով էր անում, ասես, գնահատելով շան բացառիկ նվիրվածությունը:

Շունն անհանգիստ դեսուդեն վազեց, հետո եկավ, լեզուն կախ գցած, հայացքը հառեց տիրոջը:

- Հը՛, հանգստացա՞ր, թողնելու ե՞ս քնենք:

Շունը մի կարճ հաջոց արձակեց, տեղավորվեց բնի առջև:

- Դե, հանգիստ կմնաս, տես, չեմ կապում:

Գիշերվա ընթացքում մի երկու անգամ էլ կլանչեց, հետո կարծես հանգստացավ: Սակայն դժվար եղավ խանգարված քունը վերականգնել: Լուսաբացի հետ աչքերը հազիվ կպան և այդ պահին, ինչ-որ կոշտ բանով, դարպասը ծեծեցին: Միաժամանակ պատի ժամացույցը վեց անգամ զողանջեց: Զարկերը կրկնվեցին: Ավելի հանդուգն, ավելի համառ: Ինչ-որ մեկը թուրքերեն գոռաց. «Բաց արեք, չո՛ւտ»: Որոշեց մինչև բացելը պատուհանից նայել: Դարպասի մոտ երկու զինված ժանդարմ տեսավ: Կոպիտ զարկերն արդեն արթնացրել էին տնեցիներին: Զորավը կատաղած հաջում էր:

- Սպասեք, շունը կապեմ:

Վերջապես դարպասը բացեց: Փողոցի ծայրին սայլեր տեսավ շարված: Մյուս տների առջև էլ ոստիկաններ ու ժանդարմներ էին կանգնել, պատուհաններ էին բացվում, վախեցած դեմքեր հայտնվում: Շոգ ամռան մի զով առավոտ էր: Ժանդարմներից մեկին ճանաչում էր: Ներս մտավ և հարգալից բարևեց.

- Գրիգոր աղա, կառավարության հրամանով Զանգեզուրի բոլոր հայերին տեղահանում ենք: Մեկ ժամ ունեք պատրաստվելու համար: Վերցրեք ամենաանհրաժեշտը: Փողոցի ծայրին սայլեր կան կանգնած: Դրանցով կգնաք մինչև Էնկյուրի, այնտեղից էլ՝ գնացքով մինչև Հալեպ:

Համբերատար լսեց նրան և եթե չընդհատեց, ապա պատճառն այն էր, որ

շրջակայքում ապրող հայերի տեղահանության մասին լուրեր էին հասել, գիտեին նաև, որ ամբողջ Անատոլիայի հայությունից միայն իրենք են մնացել: Եվ նրանք ամեն գիշեր անկողին էին մտնում վախը սրտում՝ սպասելով ոստիկանների առավոտյան հայտնությանը: Գիտեին նաև, որ մյութեսարիֆ Աթըֆի շնորհիվ հետաձգվում է կառավարության հրամանի կատարումը, թե ոչ իրենք վաղուց պիտի ծարավի ու սովի ճարակ դարձած լինեին սիրիական անապատներում: Աթըֆի հեռանալուց հետո, տանջալից սպասումների մեջ էին: Մի քանիսը, հեռատեսորեն, արդեն պատրաստել էին իրենց փոքրիկ ուղեբեռը:

- Իսկ մեր տունը, մեր ունեցվածքը ի՞նչ է լինելու:

- Այդ մասին կարող ես չմտածել, Գրիգոր աղա: Ձեր ամբողջ ղարդերն ու դրամը վերցրեք, դռներն ամուր փակեք, բանալիները հանձնեք ոստիկանությանը: Մենք ուշադիր կհսկենք, որպեսզի ոչ մի բան չպակասի: Պատերազմը վերջանալուն պես հետ կգաք և բանալիները մեզնից կստանաք:

Գիտեր, որ ժանդարմն ամենայն լկտիությամբ ստում է: Հայտնի էր, թե ինչ է եկել Գալեջիկի հայերի գլխին: Հենց իրենք՝ թուրքերն էին պատմում: Երեկոյան կողմն էր, Օրհանը հայտնվեց երկու պարտեզները բաժանող ցանկապատի մոտ և պատմեց Գալեջիկի աղետի բոլոր մանրամասները: Արաբաջիբաշի Իսմայիլի ավազակներից էր լսել: Սակայն ինչո՞ւ էր շտապում հայտնել ահավոր լուրը. «Գրիգոր աղա, ձեզ էսպես չեն թողնի, որ հանգիստ ապրեք, վաղ թե ուշ մյուսների պես կտանեն... Տունդ ափսոս է, երեխաներդ մեղք են... Բանալիներդ տուր ինձ, աղջկադ ու տղայիդ էլ թող մոտս, հարազատ զավակներիս պես կնայեմ, գլխներից մի մազ չի պակասի...»: Լուռ գլխով արեց, հետո ասաց. «Շնորհակալ եմ, Օրհան, որ զգուշացրիր, կմտածեմ... Երեխաներիս՝ ոչ մի դեպքում, բայց տան համար կմտածեմ»: «Իմացիր, ժամանակը քիչ է»:

Գիտեր, որ քիչ է, բայց մատղաշ, անմեղ զավակներին ինչպե՞ս թողներ թուրքի տանը, առանց իմանալու՝ վերադառնալու է աքսորից, թե ոչ: Հապա տունը, հայրական, պապական տունը, որ այս քաղաքի ամենագեղեցիկ և ամենահին տներից էր: Լուսահոգի պապը, որ ուսյալ և աշխարհ տեսած մարդ էր, ասում էր, թե այդ տունը չա՜տ հին է, թե հռչակավոր Սինան ճարտարապետը երեք հարյուր տարի առաջ երբ եկել էր Ջանղըրի՝ մզկիթ կառուցելու, այդ տանն էր ապրել: Ինչպե՞ս թողներ այդ տունն ընդմիշտ... գիտեր, որ այլևս ետդարձ չկա... Եվ եթե Օրհանին կեսբերան խոստացավ բանալին թողնել, ապա լոկ մի պատճառով, որպեսզի այս փառահեղ տունը կրակի ճարակ չդառնա...

Ահա, Օրհանը հայտնվեց, ոտը կախ գցեց, հարցական նայեց ժանդարմներին, հետո իրեն, և այդքանով արագացրեց վճիռը.

- Բայց ես կուզեի իմ տան բանալիները Օրհանի մոտ թողնել: Իմ հարևանն է, կգա, կհետևի, որ տանը մի բան չպատահի:

Ժանդարմի համար դա անսպասելի էր.

- Տունը քոնն է, ինչպես կուզես՝ արա, բայց ավելի ճիշտ կլիներ, որ մեզ տայիր, - ասաց նա և, խեթ-խեթ նայելով Օրհանին, ավելացրեց. - Ժամը յոթին պատրաստ կմոտենաք սայլերին:

Շատ անելիք չունեն: Գրեթե ամեն ինչ պատրաստ է մեկնելու համար:

Թերևս մի երկու բան հարկ լինի ավելացնել: Մայրն, ահա, կանգնել է դռների մեջ, հավանաբար լսեց ամբողջ խոսակցությունը:

- Բանալիները թողնում ես Օրհանի մո՞տ:

- Այո, մայրիկ:

- Ճիշտ ես անում, մեղք են թթենիները, թե չէ կգան կվառեն, չեն խնայի...

Ներս մտավ: Կինն արդեն ճանապարհորդության էր պատրաստվում, արագացնում էր երեխաներին, որ հագնվեն: Մեծ տղան բանակում էր, ոչ մի լուր չունեին: Ասում էին, թե բոլոր հայ զինվորներին, ժանդարմների հսկողության տակ, աշխատեցնում են որպես բանվոր: Հետո ուրիշ լուրեր հասան, իբր հայ զինվորներին ոչնչացրել են, իբր քչերն են կարողացել փրկվել՝ փախչելով ռուսների, արաբների կամ անգլիացիների մոտ... Ամբողջ ընտանիքով աղոթում էին, որ իրենց զավակը փրկվածների մեջ լինի... Արդեն մեկ ամսից ավելի այս պահն էր աչքերի առջև, ճիշտ այսպես, ինչպես հիմա: Երբ նախորդ օրը եկան զենքերը հավաքելու, բոլորը հասկացան, որ վերջնական հրաժեշտն անխուսափելի է և չափազանց մոտիկ, բայց չէին կարծում, թե հաջորդ օրն իսկ: Երեկ, ոստիկանների ձեռնունայն հեռանալուց հետո, երբ մայրն սկսեց դոշաբ եփել, քիչ էր մնում ասեր. «Ո՞ւմ համար ես չարչարվում, մայրիկ»: Բայց չասաց: Հիմա էր հասկանում, թե ի՜նչ ցավ էր պատճառելու նրան: Եվ հետո ինչո՞ւ ասեր, մի՞թե նա չգիտեր: Ինչպիսի՜ խորունկ և իմաստուն արժանապատվություն կար մոր պահվածքի մեջ... Եվ, ասես, կարողացավ դրանով վարակել ամբողջ ընտանիքը, քանզի բոլորն իմանալով առջևում սպասվող ծանրագույն փորձության մասին, իրենց պահում էին ծայրաստիճան անվրդով:

Աղջիկն ու տղան հանգիստ իջան, գնացին լվացվելու: Տղան ութ տարեկան է, աղջիկը՝ տասներկու: Ժանդարմն էլ զենքը ձեռքին մտավ խոհանոց, հոտոտեց.

- Էս բեքմեզ եք եփե՞լ, հանըմ:

- Այո, կուզե՞ք համը տեսնել, - առաջարկեց մայրը:

Թուրքը դեմ չէր: Հանգիստ նստեց սեղանի մոտ, դոշաբով լի խորը ափսեն դրեց առջևը, զենքը տեղավորեց ոտքերի արանքում և հացը թաթախեց թանձր ու շագանակագույն հեղուկի մեջ:

- Մածուն չունե՞ք, հանըմ, - հարցրեց ժանդարմը:

- Ներող կլինեք, էֆենդիս, չհասցրեցի պատրաստել, երեկ ամբողջ օրը դրանով էի զբաղված, - արդարացավ մայրը:

Երեխաները հայտնվեցին և, զինված ժանդարմին տեսնելով, քարացան, բայց մայրն շտապեց հանգստացնել նրանց.

- Եկեք նստեք, հիմա սուրճը կտամ:

Ժամը յոթին հինգ պակաս ընտանիքը կազմ ու պատրաստ կանգնել էր դարպասի առջև: Զորավը նորից սկսեց շղթան ձգել, կլանչել: Երեխաները մոտեցան, շոյեցին: Շունը հանգստացավ, բայց տնեցիների դուրս գալուց հետո նորից կլանչոցը դրեց: Գրիգորը դարպասի ծանր կողպեքը փակեց և բանալիները հանձնեց Օրհանին: Գիտեր, որ այդ գործողությունը զուտ խորհրդանշական բնույթ ունի, որ իրենց հեռանալուն պես թուրք հարևանը ուղղակի պարտեզի

միջով գալու է մտնի իր տունը, և ապրի այնտեղ մինչև... Մինչև ե՞րբ...

Անգամ մտովին չուզեց պատասխանել այդ հարցին: Զորավը հիմա կատաղի հաջոց էր գցել:

- Մենք որ հեռանանք, շանը կարձակես, մեղք է, չտանջվի...

- Անհոգ եղիր, Գրիգոր աղա, Ալլահը մեծ է, պատերազմը հրես կվերջանա, և կգաք կտեսնեք, որ ձեր տնից մի տաշեղ չի պակասել:

Վերջին անգամ նայեցին տանը, կապոցներն առան և մոտեցան սայլերի շուրջ հավաքված ժողովրդին: Դատարկվող տներից դեռ շարունակում էին մոտենալ: Գրիգոր Մերջիկյանն ուշադիր նայեց դեմքներին: Հուսահատություն, վախ կամ խուճապ չնկատեց: Բոլորն արժանապատիվ կեցվածքով կանգնել էին սայլերի շարանի մոտ, քաջ իմանալով, թե ուր են գնում: Սակայն ամենից շատ երեխաները հուզեցին և ապշեցրին նրան: Եթե խորաթափանց մարդը ծնողների հայացքում, այնուամենայնիվ, մի քողարկված տագնապ կնկատեր, ապա երեխաների դեմքից պարզապես լույս էր ծորում, աստվածային մի անդորր: Եվ չէր կարող ասել, թե երանելի անգիտությունն էր դրա պատճառը: Իրենցից քիչ հեռու կանգնած հինգ-վեց տարեկան մի աղջնակ, ինքնաշեն տիկնիկն ամուր գրկած օրոր էր ասում, հետն էլ հորդորում. «Զվախենաս, Նուրի, ես չեմ թողնի, որ թուրքերը քեզ վնասեն»: Ավելի փոքրերը թնկթնկում էին, հավանաբար դժգոհ էին, որ այդպես կանուխ արթնացրել են:

Ջեմալ Օղուզը հայտնվեց՝ սպաներով շրջապատված: Հայացքով ամփոփեց հայերի բազմությունը և հանդիսավորությամբ հայտարարեց.

- Ժանդարմներն արդեն բացատրել են ձեզ, թե ուր և ինչպես պիտի գնաք: Սա արվում է հանուն ձեր ապահովության, մեր բարեխնամ կառավարությունն այս դժվարին օրերում հսկայական ծախսեր է անում՝ ձեզ վտանգից հեռու պահելու համար: Անհոգ եղեք, պատերազմը շուտով կվերջանա մեր ջախջախիչ հաղթանակով և դուք ուրախ ու երջանիկ կվերադառնաք ձեր տները:

Ընդհատեց իր խոսքը, գրպանից մի երկար ծխախոտ հանեց, բայց չվառեց.

- Հարկ եմ համարում հայտնել, որ կառավարությունը հատուկ արտոնություն է սահմանել ձեզ համար. նրանք, ովքեր կհամաձայնեն մահմեդական դառնալ, չեն տեղահանվի, կմնան այստեղ և կշարունակեն ապրել իրենց տներում: Հինգ րոպե ժամանակ եմ տալիս մտածելու և որոշելու, այսինքն՝ ճիշտ այնքան, որքան պետք է այս ծխախոտը ծխելու համար:

Ծխախոտը հանդիսավորությամբ տնկեց վեր, հետո սկսեց գրպաններում դանդաղորեն լուցկի փնտրել: Սպաներից մեկը վառած լուցկին հաճոյակատարությամբ մոտեցրեց ծխախոտին: Օղուզը սառը հայացքով նայեց նրան, փչեց հանգցրեց թրթռուն բոցը, այնուհետև տուփն առավ ձեռքից, ականջին մոտեցնելով թափահարեց, մի հատիկ լուցկի հանեց, վառեց և սկսեց նայել, թե բարակ փայտն ինչպես է ածխանում: Կրակն արդեն մոտենում էր մատներին: Թքեց մյուս ձեռքի ցուցամատին, լուցկու սևացած գլխիկը բռնեց և բոցի վերջին բռնկումով ծխախոտը վառեց: Հետո մոտեցավ ծառերի տակ դրված նստարանին, տեղավորվեց և սկսեց դանդաղ վայելել: Երբեմն-երբեմն, մաներային շար-

ժումներով ծխախոտը մեկնում էր առաջ և թփթփացնելով մոխիրը թափում: Վերջին քուլաներն էլ ցուցադրաբար փչեց վեր, չգիտես ինչու գրպանից ժամացույցը հանեց, ուշադիր նայեց և նորից մոտեցավ բազմությանը:

- Նրանք, ովքեր որոշել են իսլամ դառնալ, թող մոտենան, - հայտարարեց նա:

Ոչ ոք դուրս չեկավ խմբից:

- Կրկնում եմ, դուք իրավունք կստանաք մնալու այստեղ, ապրելու ձեր տներում և դեռ ուրիշ պարգևների կարժանանաք:

Օղուզի խոսքերը դարձյալ մնացին անպատասխան: Նորից նայեց ժամացույցը և դժգոհ ասաց.

- Իզուր ժամանակ ենք կորցնում:

Հետո դարձավ սպաներից մեկին և մատի կտրուկ շարժումով հասկացրեց, որ գործի անցնեն: Հայերով բեռնված սայլերը ճամփա ընկան: Առջևից ընթանում էին հեծյալ սպաները: Յուրաքանչյուր սայլին ուղեկցում էր մեկական ժանդարմ ու ոստիկան: Երբ վերջին սայլն անհետացավ տեսադաշտից, Օղուզը՝ Նուրհանէդդին բեյի ուղեկցությամբ, քայլեց դեպի իթթիհաթական ակումբ:

* * *

«Տարօրինակ են էս գյավուրները», - մտովին ասաց Օրհանը:

Մերջիկյան ընտանիքի հեռանալուն պես, ուշադրություն չդարձնելով գամփռի կատաղի հաջոցներին, ցանկապատի բաց տեղով անցավ (հատուկ անցք էին թողել, որպեսզի իրար մոտ գնալիս փողոց դուրս չգային), մոտեցավ տանը և առաջին հերթին նկուղի դուռը բացեց: Թարմ դոշաբի բույրն այստեղ շատ ուժգին էր և առանձնապես հաճելի: Թարեքների վրա խնամքով շարված էին թանձր հեղուկով լեցուն շշերն ու պուլիկները՝ բերանը սպիտակ պաստառով փակված: Զնայած կես ժամ առաջ լիուլի վայելել էր Մերջիկյանների խոհանոցում, այնուամենայնիվ, գայթակղությանը չդիմացավ, շշերից մեկը բացեց և մի երկու կում արեց: Նորից նայեց դոշաբների այդ անսպառ զինանոցը և շատ գոհ մնաց. «Լավ է, ամբողջ ձմեռ կհերիքի»: Իրենցը չհաշված, որ սրա հետ համեմատելու բան չէ... Գրիգոր աղայի և իր պարտեզները նույն հողն են, նույն ծառերը, բայց Ալլահը գիտի միայն, թե ինչու գյավուրի դոշաբն այսքան համեղ է, իսկ իրենցն՝ անհամ: Հապա ծիրանի մուրաբան ու անուշը... Լեփլեցուն կճուճները կանգնած են պատի տակ, հապա բալը, կեռա՜սը... Հապա չրերը՝ թելին շարված, տախտակներին սփռված... Դիմացի պատի տակ թթուների կճուճներն են կանգնած՝ մեկը մյուսից աննման, մի լիքը կճուճ էլ ղավուրմա կա՝ անցյալ տարվանից մնացած... Հապա երշիկնե՛րը, բաստուրմանե՛րը, մսասուջուխնե՛րը... Հապա չոր լավաշների դեզը՝ թելերից կախված թարեքների վրա... Հապա բլղուրի և հաճարի, ոսպի և սիսեռի, լոբու և բրնձի տոպրակները՝ տոգած, բերնեբերան լցված... Հապա ալյուրի տոպրակները... Հապա սոխերը, սխտորները, կարմիր պղպեղների շարանները... Հապա քացախի և գինու շշերը... Հապա օղի՜ն, թթի օղին, Գրիգոր աղայի անմահական օղին, որի նմանն ամբողջ Անատոլիայի

մեջ չէիր գտնի... Մոտավոր հաշվարկով գտավ, որ այս ամբողջ հարստությունը բավական է, որպեսզի ուղիղ մեկ տարի փաշայի պես, ոտքը ոտքին գցած վայելի: «Չէ, իսկապես գյավուրի խելքից բան չես հասկանա... Էս մի տարվա պաշարն ո՞ւմ համար են հավաքել... Գրիգոր աղան գիտեր, որ պիտի տեղահանվեն, նույնիսկ զարմանում էր, որ ուշացնում է, քանի՛ անգամ խոսել են այդ մասին... Բայց մրջյունի պես բերել լցրել են»:

Գամփռն այնպես էր հաջում, ասես հիմա կխեղդվի: Դուրը չեկավ, որ օտար մարդը մտել է իր տիրոջ մառանը: Ոչինչ, կսովորի, տերը հիմա ես եմ, չնայած գյավուրի շունն էլ իր տիրոջը քաշած կլինի... Ճիշտ կանի, որ քուրդ Ցաղուբին տա, տեղը չորս ոչխար կուզի...

Մառանից դուրս գալուն պես շան հաջոցը կտրվեց: Սկսեց պոչը շարժել, ականջները խլշտացնել: Հետո թաթերն առաջ էր գցում, գլուխն իջեցնում, պոչը շարժում: Ինչ-որ բան էր ուզում ասել: «Չէ, երևում է, որ բարկացած չի, հասկացել է, որ տերը ես եմ»: Հիշեց՝ Գրիգոր աղայի խնդրանքը, որ արձակի շանը: Մոտեցավ, որ կատարի: Շունն անմիջապես նստեց գետնին և վիզն առաջ բերեց, որ կապը քանդի: Սակայն քանդելուն պես կատարվեց աներևակայելի մի բան. գամփռը սրընթաց մոտեցավ ցանկապատին, մի ցատկով հաղթահարեց և պարտեզների միջով անհետացավ:

Օրհանը չվարած կանգնել էր: Հետո գլխի ընկավ, որ շան անհետանալու հետ ընդմիշտ չքվեցին չորս ոչխարի սքանչելի հեռանկարները:

* * *

Կամուրջը համարվում էր Զանգեզրի սահմանագիծը: Գետը մնում էր թիկունքում և սրածայր բարդիներով երկար ժամանակ հիշեցնում իր գոյությունը: Բայց նաև աղբյուրը կար, որ հայտնվում էր կամուրջն անցնելուն պես, ուստի քաղաք մտնելուց առաջ կամ դուրս գալուց հետո կանգ էին առնում՝ սառնորակ ջուրը խմելու՝ որպես ողջույն կամ հրաժեշտ: Հիմա էլ կանգ առան, և ժողովուրդը, սովորության համաձայն, շտապեց մի վերջին անգամ վայելելու, սակայն զարմացան՝ տեսնելով աղբյուրի գլխին կանգնած երկու զինվորներին, որ սպառնալից ցցել էին սվինները:

- Հե՛տ, հե՛տ, - գոռում էին նրանք:

Գրիգոր Մերջիկյանը, որպես համայնքի ավագ, մոտեցավ սպային:

- Ժամանակը խնայելու համար է, Գրիգոր աղա, մի քիչ համբերեք, անտառի մոտ ավելի լավ աղբյուրներ կան, այնտեղ կխմեք:

Սակայն ջուր խմելու արգելքը չէր սոսկալին: Աղբյուրի մոտ հավաքված հայերն ապշանքով նայում էին, թե սայլերն ինչպես են շրջվում և վերադառնում քաղաք:

- Ճանապարհը պիտի շարունակեք ոտքով, - հայտարարեց սպան:

Սակայն երկու սայլ մնացին կանգնած: Դրանք բեռնված էին և բրեզենտով ծածկված: Ժանդարմները մոտեցան, եզներին արձակեցին և մյուս սայլերի հետ ուղարկեցին քաղաք: Այնուհետև սպան տասը տղամարդ ջոկեց և

հրամայեց լծվել սայլերին: Ամենահաղթանդամ և զորեղ տղամարդիկ:

- Բավական է, որքան մեր երկիրը թալանեցիք, - արհամարհանքով շպրտեց նա: - Մի քիչ էլ մեզ համար աշխատեք:

Տղամարդիկ գլխիկոր ու հնազանդ մոտեցան սայլերին: Բացառությամբ մեկի, որ կանգնել էր կնոջ ու երեխաների կողքին և տեղից չէր շարժվում:

- Մեզ խոստացաք սայլերով տանել Էնկյուրի, հիմա պարզվում է, որ պիտի լծկան դառնանք:

Սպան սկզբում անակնկալի եկավ, հետո, հեգնական ժպիտը շրթունքներին, մոտեցավ, մի պահ նայեց տղամարդուն և մտրակն անսպասելի ու կտրուկ շաչեցրեց երեսին: Մի երկար ու կարմիր զոլ երևաց, որն անմիջապես դարձավ արյունածոր վերք՝ ճակատից մինչև կզակը: Տղամարդը ցնցվեց, հետո անսպասելի մտրակը խլեց ու սկսեց մոլեգնաբար ծեծել սպային: Վերջինս ողբալի և հուսահատ ճիչեր արձակելով փորձում էր երեսը պաշտպանել կատաղի հարվածներից: Կինը սարսափած, գունատ ձայնով արտաբերեց. «Վա՜յ, Թորգոմ, մեր տունը քանդեցիր»: Հետո ուշաթափված տարածվեց գետնին և չտեսավ, թե ինչպես սվիններ փայլեցին ամուսնու շուրջ և անմիջապես դարձան կարմիր: Մոտ տասը զինվոր խոցում էին նրան բոլոր կողմերից: Տղամարդն արդեն անշունչ փռվել էր գետնին, բայց զինվորները միևնույն կատաղությամբ շարունակում էին պատժել անհնազանդին: Սպան, որ վերջապես ուշքի էր եկել, մոտեցավ, զինվորներից մեկի հրացանը խլեց, բոլորին քշեց մի կողմ և սկսեց իր վրեժը լուծել: Նախ արյունաշաղախ մարմինը ծակոտեց, խզակոթով գլուխը ջախջախեց, հետո հրացանը գցեց մի կողմ, ատրճանակը հանեց և պարունակությունը պարպեց մսակույտի վրա:

Աքսորականները ճամփա ընկան: Սպան տեղավորվեց բրեզենտով ծածկված սայլերից մեկի վրա և մտրակով «խրախուսում» էր սայլ քաշող տղամարդկանց: Քրտինքն ու արյունը խառնվել էին իրար, սակայն լծկան դարձած հայերը համբերատար քաշում էին՝ աչքի առջև ունենալով քիչ առաջվա տեսարանը: Գրիգոր Մերջիկյանը քայլում էր տղայի ձեռքը բռնած: Նրան թվում էր, թե այդպես ավելի ապահով է: Դաժան հաշվեհարդարն «անհնազանդի» հետ ցնցել էր նրան: Իսկ եթե սպան իրեն ընտրած լիներ, ի՞նչ պիտի աներ: Պիտի ենթարկվե՞ր... Զինվորների մեծ մասը վերադարձավ քաղաք: Հիմա հազիվ մի քառասուն ժանդարմ էր ուղեկցում յոթ հարյուր հոգիանոց քարավանը, չհաշված չորսհինգ սպաներին: Առնվազն երկու հարյուր ուժեղ ու առողջ տղամարդ կար: Քայլում էին դատարկ ճանապարհով: Այս ժամին մարդ չէիր տեսնի: Նայեց կողքից քայլող զինվորին: Իր առջև երկու տղամարդ կար: Մեկն էլ ետևից էր գալիս: Եթե թիկունքից հարձակվեր զինվորի վրա, հեշտությամբ կտապալեր: Բայց մյուսներն ի՞նչ կանեին: Կօգնեի՞ն հրացանը խլել և հարձակվել մյուս զինվորների վրա, թե հանգիստ կնայեին, թե ինչպես է խողխողվում: Սակայն ենթադրենք, թե կարողացան զինաթափել ժանդարմներին: Հետո ի՞նչ պիտի անեն, ո՞ւր պիտի գնան: Վերադառնալ չեն կարող, այս ճանապարհը տանում է Գալեջիկ: Այնտեղ էլ չեն կարող գնալ: Ապաստան գտնեն լեռներո՞ւմ: Ինչո՞ւ ոչ: Սասնո լեռներում մի բուռ քաջարի հայդուկներ տարիներ շարունակ դիմադրել

են զորքերին: Այո, կարելի էր հայդուկների պես ապաստանել լեռներում, հետո միանալ ռուսներին, բայց ի՞նչ անեն այս ծերերի, կանանց ու երեխաների հետ... Ամենաճիշտը վանեցիք էին, կեցցե՛ն նրանք, մեկ ամիս դիմադրեցին թուրքերին, մինչև որ ռուսներն օգնության հասան: Նրանք հեշտացրին ռուսների առաջխաղացումը, թուրքերին ստիպեցին հազարավոր զինվորներ ռազմաճակատից հանել և բերել Վան, և ասում էին, թե բոլորը փրկվել են... Իսկ իրենք մի՞թե չէին կարող դիմադրել, հետո ի՞նչ, որ քիչ են... Հը՛մ, ինչպե՞ս դիմադրեին, ինչո՞վ, երբ յոթ հարյուր հոգու մոտ անգամ մի ատրճանակ չգտնվեց: Ամո՛թ և խայտառակությո՛ւն: Մոռացե՞լ էին, որ շնագայլի հետ են ապրում: Ո՛ւշ է արդեն, ուշ... Հիմա հույսները միայն Աստծո վրա կարող են դնել, հայի խե՛ղճ Աստծո վրա...

Բեռների մի մասն ստիպված եղան թողնել աղբյուրի մոտ, սակայն դարձյալ դժվար էր այդքանը ձեռքով տանել, մանավանդ որ առավոտյան զովն արդեն տեղը զիջում էր հուլիսյան անգութ շոգին: Սայլերը քաշող տղամարդիկ չդիմացան: Ճանապարհը զառիվեր էր: Հազիվ երեք-չորս հարյուր մետր քաշեցին և ուժասպառ ընկան փոշոտ ճանապարհին: Մտրակն անգամ չօգնեց, որպեսզի շարունակեն լուծը քաշել: Սպան թարմ ուժեր ջոկեց, իսկ ջարդված տղամարդիկ հարբածի պես ճոճվելով, ամոթահար, մոտեցան իրենց կանանց ու երեխաներին: Շուտով նորերն էլ ուժասպառ կլինեն: Ի՞նչ պիտի անի ինքը, եթե սպան մտրակի կոթը դնելով կրծքին պահանջի գնալ և սայլին լծվել: Ջանում էր այդ միտքը հեռու վանել, սակայն չէր ստացվում, և տեսնում էր իրեն ծեծված, անարգված, քրտինքն արյան ու փոշու հետ ցեխ կապած, գլխիկոր ու ամոթահար՝ որդու կողքից քայլելիս... Եվ ի՞նչ պիտի մտածի որդին՝ իր ստորացված հորը տեսնելով, ինչպիսի՞ տղամարդ դուրս կգա նրանից... Ուշ է, շա՛տ ուշ՝ այս հարցերի պատասխանը գտնելու համար...

Մեկ ժամ կլիներ, ինչ հեռացան աղբյուրից: Արդեն ծարավ էին: Բլրի լանջին տարածվող անտառը երևաց: Հոյակապ աղբյուրներ կան այնտեղ: Սպան խոստացավ հենց դրանց կողքին դադար տալ: Կկատարի՞ արդյոք իր խոստումը ծեծվելուց հետո: Բայց, ոչ, կարծես նա էլ է ծարավել, քանզի սայլը կանգնեցրեց, մոտեցավ առջևից ընթացող սպաներին, ինչ-որ բան ասաց և մտրակի կոթն ուղղեց դեպի անտառը: Հետո նշան արեց, որ քարավանն ուղղությունը փոխի: Ուրեմն, այնքան էլ հիշաչար չէ, թե ոչ կարող էր արգելել, որ ծարաված ամբոխն այդ հոյակապ ջուրը վայելի: Սակայն ինչո՞ւ կանգնեցրեց չտապող մարդկանց... Հա՛, որպեսզի աղբյուրի գլխին հանդիսավորությամբ հայտարարի. «Նախ կանայք ու երեխաները, հետո տղամարդիկ»: Չէ, այս սպան իսկապես անհիշաչար է:

Աքսորական հայերի բազմությունն անմիջապես բաժանվեց երկու մասի: Կանայք երեխաների հետ շտապեցին դեպի աղբյուրները, տղամարդիկ մնացին տեղում: Երկու խմբերն իրարից բաժանող և ընդարձակվող տարածքի միջև անմիջապես դիրք բռնեցին զինվորները, ասես, որպեսզի կարգը հսկեն և զանգվածի թույլ մասին հնարավորություն տան ուզածի չափ, հանգիստ ջուր խմելու... Եվ նրանք իսկապես մոտեցան, սկսեցին խմել, մի քանիսի ձեռքին նույնիսկ բաժակներ երևացին... Բայց այդ ի՞նչ կերպարանքներ հայտնվեցին անտառի եզ-

րին... Քսան, երեսուն, քառասուն... Գուցեև ավելին... Դաշույնները մերկացրած, ինքնագոհ ժպիտները դեմքներին: Ակնթարթի մեջ շրջապատեցին անպաշտպան բազմությունը և սկսեցին պառավներին զատել: Այսինքն՝ չէին զատում. մազերից բռնած քաշում էին մի կողմ և վիզը կտրում՝ ուշադրություն չդարձնելով սոսկալի վայնասունին: Տղամարդիկ մի երկու անգամ բնազդական շարժում արեցին կանանց մոտենալու, սակայն իրենց առջև մերկացրած սվիններ տեսան:

Պառավների հաշիվը մաքրելուց հետո, սկսեցին կանանց զատել երեխաներից: Երեք սպաներ ուշադիր հետևում էին գործողությանը: Երեք մատղաշ աղջիկ զատեցին՝ տասնչորս-տասնհինգ տարեկան, և տարան ծառերի տակ: Աղջիկներից մեկը, հավանաբար, ուշաթափվեց և կախվեց սպայի թևից: Վերջինս հենց տեղում պատառոտեց աղջկա զգեստները և այդպես ուշաթափված տիրացավ: Մինչդեռ հրոսակները, դաշույնները ցցած, կանանց ստիպեցին մերկանալ և հռհռալով վիճում էին, թե որն ում է հասնելու: Վերջապես որոշեցին և սկսեցին երեխաների ու տղամարդկանց հայացքների ներքո բռնաբարել: Հաճույքն առնելուց հետո անարգված կանանց մորթում էին՝ դաշույնը խրելով սիրտը, փորոտիքը բացելով կամ վիզը կտրելով: Ովքեր դեռ չէին դարձել գազանների ճարակը, երկու ձեռքով ամոթը ծածկած, սրսփուն ծառերի նման կանգնել էին իրար կողքի: Մի հղի կին կար մեջները: Երկու հրոսակ, շալվարները վեր քաշելով, մոտեցան և հռհռալով չափեցին վերից վար:

- Հանըմ, ի՞նչ ես ուզում, տղա՞, թե աղջիկ:

- Ինչ որ Աստված տա, - սարսափած պատասխանեց կինը:

- Հիմա կասեմ, թե ինչ կունենաս, - ժպիտը դեմքին հայտարարեց նրանցից մեկը և ականջը հպեց փորին:

- Տղա է, - ասաց նա:

- Չէ, աղջիկ է, - առարկեց մյուսը:

- Գրպզ գանք սպիտակ ձիուդ վրա:

- Գրպզ գանք:

Ձեռքերը զարկեցին իրար, հետո կնոջը տապալեցին: Նրանցից մեկն ուսերը գամեց գետնին, մյուսը վարժ շարժումով որովայնը բացեց վարից վեր, արնաշաղախ պտուղը հանեց, զննեց և մոր երեսին շպրտելով ասաց.

- Ես ճիշտ էի, տղա է, ճերմակ ձիդ իմն է:

Մյուսը, տեսնելով, որ գրպզը կորցրեց, կեռ դաշույնի ծայրով բարձրացրեց վեց-յոթ ամսական պտուղը, զայրույթով շպրտեց գետին, կտրատեց և, կտորները մեռած մոր բերանը խցկելով, ասում էր. «Առ, կե՛ր, քո պատճառով փառահեղ ձիս կորցրի»:

Գրիգոր Մերջիկյանը դեպքերի անակնկալ զարգացումից համրացել ու քարացել էր: Անշուշտ, լսելով ամեն տեսակի վայրագությունների մասին, ենթադրում էր, որ իրենց հետ էլ նման բաներ կարող են պատահել, այնուհանդերձ, այդ ամենը պատկերացնում էր մի տեսակ տարտամ, իրենից հեռացված... Ցաթալիստական երերուն մի հույս էր, որ այդ սարսափներն Աստված իր համար չի նախատեսել: Անգամ Թորգոմի գազանային սպանությունը չազատեց նրան այդ պատրանքից. յոթ հարյուր տարի շարունակ ապրել էին այսպես թուր-

քի լծի տակ, մի օր մորթում էր, մի օր հանգստանում, մի օր բարեկամ ձևանում, հետո նորից մորթում... Եվ այսպես շարունակ: Հո միայն իրենք չէին: Բոլոր քրիստոնյաներն էին այդ վիճակում:

Աչքի առջև մոր վիզը կտրեցին: Հետո տիկին Իսկուհուն մերկացրին: Քսան տարվա ամուսիններ էին, բայց ամեն օր, բոլորի ներկայությամբ նրան դիմում էր «Տիկին» բառով: Առաջին անգամ նրա մերկությունը տեսավ, մինչև հիմա, անգամ մտերմության պահերին, կիսախավարի մեջ էր երևացել կնոջ մարմինը, և միայն այսօր փաստեց, որ կաթնաթույր ճերմակ է, և դրանով իսկ ավելի էր ընդգծվում մազերի սևը: Հիմա հասկացավ, թե որքա՜ն գեղեցիկ է իր կինը: Նրա մարմինը լույս էր արձակում հուլիսյան տաք արևի ներքո: Ահա թե ինչու երեք գազան միաժամանակ մոտեցան և յուրաքանչյուրն իր կողմն էր քաշում: Վեճը հաղթեց ահռելի բեղերով հրեշակերպ մի քուրդ... Այժմ տիկին Իսկուհին տարածվել էր մեջքի վրա, և կաթնաթույր ճերմակին ու թանձր սևին ավելացել էր վառ կարմիրը, որ ընդարձակվում էր որովայնի վրա...

Աղջիկն ու տղան կանգած էին երեխաների խմբի մեջ: Նրանք ամեն ինչ տեսան: Սկզբում հուսահատ և աղերսական հայացքներ էին նետում հոր կողմը, իսկ հիմա, մյուս երեխաների պես, երեսները թեքել էին կամ ձեռքերով աչքերը փակել: Հրոսակները կանանց զարդերը վերցնելուց, բռնաբարելուց և մորթելուց հետո մոտեցան երեխաներին: Նախ սկսեցին աղջիկներին ջոկել: Դժնետեսիլ մի քուրդ մոտեցավ իր աղջկան և ձեռքը դրեց գլխին: Մեկ ուրիշը տղայի թևը բռնած քաշեց մի կողմ, ուսերը, թևերը, ոտքերը շոշափեց և գլուխը շարժեց գոհունակությամբ: Բայց այդ ի՞նչ ասաց տղան, կտրուկ շարժումով ինչպե՞ս ազատվեց քրդի երկաթյա մագիլներից, որն ութ տարեկան երեխայի մազերից բռնած վիզը կտրեց, հետո գլուխը կտրուկ շարժումով պոկեց ու շպրտեց մի կողմ...

Գրիգոր Մերջիկյանն ուշքի եկավ զինվորների աքացիներից: Մի կերպ ոտքի հանեցին և մոտեցրին զույգ սայլերին: Բրեզենտը քաշել էին, ի ցույց դնելով բահերը: Տղամարդկանց ստիպեցին մեկական բահ վերցնել, այնուհետև, տարան աղբյուրներից հեռու և ստիպեցին հսկայական մի փոս փորել: Փորելուց հետո սպան՝ մոտեցավ, գոհ մնաց աշխատանքից և կարգադրեց, որ կանանց ու պառավների դիակները բերեն ու գցեն մեջը: «Կներեք, որ քեշիշ չեմ կանչել, որպեսզի աղոթեր ձեր կանանց ու ծնողների հոգու հանգստության համար», - ժպտալով ասաց սպան: Զինվորները, սվիններ ցցած, ուշադիր հսկում էին տղամարդկանց գործողությունները: Վերջին դիակը բերելուց հետո սպան կարգադրեց բահերը դնել սայլերի մեջ և մեծահոգաբար առաջարկեց. «Հիմա կարող եք մոտենալ փոսին և աղոթել ձեր հանգուցյալների համար: Տեսնո՞ւմ եք, մենք հարգում ենք քրիստոնյաների օրենքները»:

Մինչ հայերը ծնրադրած կամ ոտքի կաղոթեին, սպաները խորհրդակցում էին քիչ հեռվում: «Փոսի մոտ հարմար կանգնել են, եկեք դրանց էլ սատկացնենք և մինչև շոգն ընկնելը վերադառնանք քաղաք»: «Իսկ սատկացնելուց հետո ո՞վ պիտի թաղի», - հարցրեց մյուսը: «Զինվորները», - պատասխանեց առաջինը: «Օրենքի դեմ բան է, որպեսզի մահմեդականը գյավուր թաղի, մեղք են զինվորները, կվիրավորվեն»: Վերջը որոշեցին անել հետևյալ կերպ. կեսին սպանել, մյուս

կեսն էլ թողնել, որ գերեզմանը ծածկի: «Իսկ դրանց հետ ի՞նչ պիտի անենք»: «Կտանենք քիչ վեր, կգցենք անդունդը, - խորհուրդ տվեց մյուս սպան և ժպտալով ավելացրեց: - Հանգիստ կաց, այնտեղ զով է, լավ քամի է անում»: «Համաձայն եմ, միայն թե զինվորներին ասա, որ լավ նշան բռնեն, փամփուշտն ափսոս է»:

Հայերը շրջապատել էին խոր ու ընդարձակ փոսը: Մի քանիսն աղոթքի խոսքեր էին մրմնջում, մյուսները լուռ հրաժեշտ էին տալիս կամ պարզապես կանգնել էին խելացնոր ապշանքի մեջ: Գրիգոր Մերջիկյանն իջել էր փոսը և իր հարազատների մահն էր ողբում՝ անհոդաբաշխ հնչյուններ արձակելով...

Հանկարծ կրակոց լսեց՝ մի համազարկ: Զհասցրեց անդրադառնալ, երբ փոսի եզրից երկու մարմին ընկան նրա վրա: Անակնկալից շշմած, փորձեց դուրս գալ դրանց տակից, երբ երկրորդ համազարկը որոտաց, հետո՝ երրորդը: Նախկին երկուսին ավելացան ևս չորս-հինգ՝ թաց ավազի պարկի պես ծանր մարմիններ, որ կաշկանդում էին նրա շարժումները: Ինչ-որ սուր բան մեջքն էր ծակում, սպանված հայրենակիցների արյունն առվակի պես սկսեց հոսել ու լցվել աղաղակի համար բացված բերանը, աչքերը, ականջները, քիթը... Արդեն հազիվ էր շնչում, օդը գնալով նվազում էր, և խամրող գիտակցության վերջին բռնկումներով փաստեց, որ բահերի զնգոց է լսում և որ ինքը, հայերի վերջին բեկորների հետ, եղբայրական գերեզման գտավ Անատոլիայի հողում, որտեղ իր նախնիներն էին ապրել ավելի քան երեք հազար տարի:

Քառասուներեք հոգի հարյուր քսանիննը կրակոցով սպանել ու վիրավորել էին հարյուր քսանիննը տղամարդ: Կրակում էին քսան-երեսուն մետրից, խոշոր, անշարժ և բարոյապես ջախջախված թիրախներին: Վիրավորների վրա գնդակ չծախսեցին: Սվիններով ու խզակոթերով գցեցին փոսը: Մեռածներն արդեն իրենք էին ընկել: Մնացած յոթանասուն հոգուն ստիպեցին բահերն առնել և փոսի եզրերին կուտակված հողը նախկին տեղը լցնել: Վիրավորվածները հուսահատ փորձում էին դուրս գալ իրենց վրա լցվող հողի տակից, գութ էին աղերսում հայերեն և թուրքերեն, սակայն երկուսն էլ խուլ էին: Քիչ հետո մի մեծ հողաթումբ գոյացավ: Սպան հրամայեց հողը տրորել, պնդացնել: «Երբ որ Հալեպից հետ գաք ես հողը կտանք ձեզ, ձեր նոր քիլիսը կշինեք էստեղ... Լավ, ամուր հիմք է...», - խոստացավ սրամիտ սպան, որ մոռացել էր «քեշիշ» կանչել:

Զինվորները գոհ հռհռացին:

Զանազրրի յոթ հարյուր հայերից ողջ մնացած յոթանասունին շարք կանգնեցրին և տարան դեպի լեռնանցքի վիհերը...

* * *

Դոկտոր Ռուից ժառանգություն մնաց այս սովորությունը. ծանր հիվանդին բուժելիս գիշերը մոտը մնալ՝ որպեսզի բեկման պահին կողքին լինի:

Հիմա նստած էր յոթ տարեկան երեխայի, սրճարանատեր Հաջի բաբայի կրտսեր որդու սնարին: Գունատ, մոմի նման թափանցիկ մի տղա... Անցած գիշեր եկան քնից հանեցին: «Դոկտոր, շտապեք, երեխան արյունաքամ է լինում: Բերեցին ճիշտ այստեղ, այս աթոռի վրա նստեցրին: Երեխան մատը կտրել էր, և

արյունն ամբողջ օրը հոսել էր: Կեղտոտ լաթը փաթաթել էին մատին, կարմիրը խառնված էր սևի հետ: «Այս ի՞նչ սև բան է», - զայրացած հարցրեց հորը: «Մոխիր է, դոկտոր, հոջայի խորհուրդով ենք դրել»: Արյունը կանգնեցնելու ավանդական այդ եղանակի մասին լսել էր դեռևս մանկությունից, իր գյուղաքաղաքում, սակայն հարկ համարեց հարցնել. «Իսկ օգնո՞ւմ է»: «Ի՞նչ ասեմ, դոկտոր, կարծես թե օգնում է, բայց երեխան ամեն անգամ ահագին արյուն է կորցնում»: Հաջի աղան լռեց, հետո ավելացրեց. «Երկու աղջիկս դրանից մահացան»: «Կինդ քեզ ի՞նչ է գալիս», - հարցրեց նրան: «Զարմուհիս է, դոկտոր էֆենդի, մեծ եղբորս աղջիկը... Որբ էր մնացել, մեղքս եկավ, որոշեցի ամուսնանալ հետը...»: «Մտադրությունդ բարի է եղել, Հաջի բաբա, բայց, ինչպես տեսնում ես, բոլորդ դժբախտացաք՝ դու էլ, կինդ էլ, երեխաներդ էլ...»: «Ճիշտ ես, դոկտոր, Ալլահին դուր չեկավ այս ամուսնությունը...»:

Մոխիրն օգտակար էր, գուցեև անվտանգ առողջ արյուն ունեցողների համար, մինչդեռ այս երեխային պետք էր փրկել ներսից, ինչպես դոկտոր Ռուն էր անում վիրահատությունից առաջ, երբ տեսնում էր, որ արյունը դժվար է մակարդվում: Ուստի ինքն էլ աշխատեց հնարավոր ամեն բան անել:

...Առավոտյան կողմ վիրակապը փոխեց, վերքը լվաց: Արյունահոսությունն իսպառ դադարել էր: Հաջի բաբան հարևաններին կանչեց, որպեսզի հրաշքը ցույց տա: Նրանք գալիս էին, զարմացած ու հիացած գլուխներն օրորում և պատկառանքով նայում «գյավուր դոկտորին»: Իսկ երբ առաջարկված վարձից հրաժարվեց, Հաջի բաբան, ծնկի իջնելով, սկսեց փրկարարի ձեռքերը համբուրել: Հարևաններից մեկն էլ մոտեցավ ձեռքը համբուրեց, դրեց ճակատին և լալագին ձայնով ասաց. «Դոկտորս, իմ երեխային էլ նայիր, աչքերից շարունակ արցունք է հոսում, վախենում եմ կուրանա...»: Մյուսներն էլ համարձակություն առան, մոտեցան ձեռքը խլեցին, սկսեցին իրենց ցավերից բողոքել. «Էֆենդիս, մեջքս... Դոկտորս, սիրտս ծակում է... Դոկտորս, գլխացավերից քուն ու դադար չունեմ...»: Տգիտության և խավարի մեջ թաղված այս ռամիկ ժողովուրդը պատճառահետևանքային միևնույն կապն էր տեսնում Հաջի բաբայի երկու աղջիկների մահվան և տղայի վերքի մեջ, և չէր սխալվում, ուստի հիմա համոզվելով, թե մի գիշերվա մեջ մահացու վերքն ինչպես դադարեց արյունել, միանգամից երկրպագեց «գյավուր դոկտորին»: Իսկ երբ լսեց, որ այդ հրաշքի համար պետք չէ վճարել, անմիջապես հիշեց իր ցավերը:

- Ամբողջ Զանգեզուրում մեկ հատիկ բժիշկ չեք գտնի, - բողոքում էր հարևաններից մեկը: - Ամիսը մեկ Գալեջիկից կամ Կաստեմոնուից բժիշկ է գալիս, ահագին փող առնում և գնում, հիվանդներն էլ դարձյալ մնում են հիվանդ:

Առավոտյան տասը կլիներ, երբ վերջին անգամ վերքը նայելով ու համոզվելով, որ վտանգն անցել է, դուրս եկավ Հաջի բաբայի տնից: Զնայած անքուն և անհանգիստ գիշերվան, առույգ էր և շարժվելու ցանկությամբ լի: Մի քանի ծուռումուռ փողոց անցնելուց հետո մոտեցավ պարտեզի կենտրոնում զետեղված երկհարկանի տանը, որտեղ ապրում էին աքսորական երեք դոկտորները: Ներս մտնելով, Վարուժանին տեսավ՝ Հակոբիկի և բժիշկ Զարեվանդի հետ, մռայլ ու գլխիկոր նստած:

- Ի՞նչ է պատահել:

- Զգիտե՞ս, - զարմացած՝ հարցին հարցով պատասխանեց Զարեվանդը:

- Ամբողջ գիշեր հիվանդի կողքին էի, քիչ առաջ դուրս եկա...

- Դուք այդ թուրք ոճրագործներին եք բուժում, իսկ նրանք այստեղի բոլոր հայերին տարան, - լացակումած պոռթկաց Հակոբիկը:

- Ե՞րբ...

- Այսօր, առավոտ կանուխ, ժամը յոթին, - հազիվ արտաբերեց Վարուժանը:

- Դա պիտի լիներ վաղ թե ուշ... Դա անխուսափելի էր... Մանավանդ նախորդ օրվա զավեշտից հետո՝ այդ զենք հավաքելը... Ինչ վերաբերում է թուրք ոճրագործներին բուժելուն...

- Կներեք, պարոն Սևակ, ես շատ անզուսպ եղա:

- Բան չկա, դու մեղավոր չես... Զանգեզրի հայերին աքսորելուց հետո էլ պիտի շարունակենք բուժել:

- Դու՝ թերևս, բայց ես այլևս սիրտ չունեմ..., - ասաց Զարեվանդը: - Հիմա պիտի հիվանդի կողքին լինեի, բայց չգնացի: Այսօրվա տեսարանները նայելուց հետո այլևս չեմ կարող:

- Այսո՞ր իմացար, որ հայերին տեղահանում են, ոչնչացնում... Զգիտեիր մի՞թե Գալեջիկի, Էնկյուրիի, Թրակիո, վերջապես ամբողջ հայության աքսորի մասին:

- Գիտեի, - խուլ մրմնջաց Զարեվանդը: - Բայց ուրիշ բան է սեփական աչքով տեսնելը:

- Իրավունք ունես: Բայց մենք այլ կերպ չենք կարող:

- Այո, երդում ենք տվել:

- Միայն երդումը չէ, կա նաև ուրիշ հանգամանք... Այսօր ստույգ մահից փրկեցի մի թուրք երեխայի:

- Իսկ քանի՞ սպայի կյանք փրկեցիր հիվանդանոցում, - ընդհատեց Զարեվանդը: - Թալյաթը երբ ուղարկում էր քեզ այստեղ, չգիտե՞ր այդ մասին:

- Ենթադրում եմ, որ գիտեր... Էնվերն էլ գիտեր, որ հայերը փրկեցին իրեն ռուսական գերությունից, սակայն նրանք որոշել են հայերին իսպառ ոչնչացնել և պիտի գնան մինչև վերջ:

- Ո՞րն է այդ վերջը, - հարցրեց Վարուժանը:

- Այդ վերջը մեր վերջն է:

- «Վերջին հայե՞րը», - ակնարկեց Վարուժանը:

- Թերևս... Նրանք գտնում են, որ իրենց նոր կայսրությունն ստեղծելուն ընդամենը մեկ բան է խանգարում՝ հայերի գոյությունը:

- Բայց նրանց կայսրությունն արդեն քանդվում է, - նկատեց Հակոբիկը:

- Այնուհանդերձ հայատյացությունը դարձրել են պետական քաղաքականություն: Նրանք երբեք չեն ունենա այդ կայսրությունը, բայց ամբողջ ողբերգությունն այն է, որ հնի փլատակների տակ մնացինք մենք...

Զարեվանդը հուզված ելավ և ձեռքերը թափահարելով ասաց.

- Ես քեզ չեմ հասկանում, Ռուբեն... Այո, ճիշտ բաներ ես ասում, բայց

դրանք ի՞նչ կապ ունեն թուրքերին այսուհետ բուժելու կամ չբուժելու հետ:

- Այն կապն ունեն, որ մենք՝ բժիշկներս, մեզ նվաստացրած կլինենք, եթե Զանգեզուրի հայերի աքսորից հետո հրաժարվենք թուրքերին բուժել՝ ձգտելով այդպես վրեժխնդիր լինել:

- Ես նույնպես չեմ հասկանում, Ռուբեն, - իր զարմանքը հայտնեց Վարուժանը: - Վեց տարի առաջ դու խոսում էիր «մարդկորեն կատղելու» և վրեժի մասին, և իրավացի՛ էիր, հրաշալի՛ էիր դու, իսկ այսօր ճիշտ հակառակն ես խոսում:

- Այո, սիրելի Դանիել, վեց տարի առաջ, երբ ժողովուրդ կար, երբ մեր ձեռքին հնարավորություններ կային և վերջապես բավական ժամանակ կար թուրքին հասկացնելու, որ մենք կոտորվելու համար չենք եկել այս աշխարհ...

- Բայց ի՞նչ տարբերություն, մի՞թե հիմա էլ չպիտի վրեժ գոռանք, - հարցրեց Հակոբիկը:

- Մենք հիմա թուրքերի ծուղակն ենք ընկել... Ինչ-որ չափով էլ մեր մեղքով... Հիմա ընդամենը երկու ելք ունենք. արժանապատվությամբ փրկվել և դիմադրել, իսկ եթե չենք կարող՝ արժանապատվությամբ մեռնել... Պիտի մտածենք, թե ինչ հիշատակ ենք թողնելու մեզնից հետո ապրողների սրտում:

- Մի՞թե հայ մնաց այլևս, - հուսահատված բացականչեց Հակոբիկը, - որպեսզի մտածենք մեզնից հետո ապրողների մասին... Շուտով մենք էլ չենք լինի:

- Մնաց, սիրելի Հակոբիկ: - Մնացին նախ նրանք, ովքեր դիմադրեցին թուրքին... Բոլորը, անկախ այն բանից հիմա ողջ են, թե ոչ:

- Ուրեմն, ինչպես հասկացա, պիտի շարունակես բուժել թուրքերին, - հարցրեց Վարուժանը: - Դու դտնում ես, որ դա և՞ս արժանապատիվ ապրելու կերպ է:

- Այո, Դանիել, պիտի փորձեմ բուժել բոլոր հիվանդներին, լինեն թուրք, թե հայ, իրավունք չունենք թուրքի բարբարոսությանը նույն կերպ պատասխանել:

- Եվ շարունակ անվճա՞ր, - հարցրեց Զարեվանդը:

- Ինչպես որ պատահի... Դու էլ, Զարեվանդ, պիտի շարունակես բժշկի արհեստդ, դու էլ, Դանիել, պիտի շարունակես քերթվածներդ գրել:

- Որտեղի՞ց գիտես, որ գրում եմ այստեղ, - հուզվեց Վարուժանը: - Ես քեզ ոչինչ չեմ ասել:

- Բոլորը գիտեն, - ծիծաղեց Ռուբենը: - Կեցցե՛ս, որ ոգիդ պահպանում ես:

- Ես նախանձում եմ, Ռուբեն, քեզ և Ատոմին, որ ձեր քերթվածներում կարողանում եք մահվանն այդպես շեշտակի նայել... Իսկ ես հիմա միայն բնության անդորրն եմ երազում:

- Ճշմարիտ ես, Դանիել, հավերժության կարոտն է դա, դու էլ այդպես ես ժխտում անարդ մահը:

- Շնորհակալ եմ, Ռուբեն, որ քաջալերում ես:

- Բարեկամներս, ապրենք այնպես, ինչպես աղատության մեջ կապրեինք, և ոչ թե նստենք գլխիկոր ու սպասենք, թե մահը երբ կգա մեզ տանելու:

* * *

Այս ի՜նչ կեղտոտ պատերազմ է, ի՜նչ ստոր բաներ են արվում... Ո՞վ է տեսել, որ գազը և թույնը դարձնեն զենք, մի՞թե այդ պստիկ Բելգիան էր մեր թշնամին, մեր բանակն ինչո՞ւ մտավ այնտեղ, իսկ մտնելուց հետո ինչո՞ւ այդպիսի հրեշավոր բաներ արեց: Պատերազմը կորցրեց իր ասպետական փայլը և դարձավ սրիկաների զբաղմունք: Դրանք զինվորներ չեն, այլ մարդասպաններ: Անցյալ օրը նստած էր սրճարանում: Կողքի սեղանին երկու ուսանող վրդովմունքով խոսում էին գերմանական բանակի դաժանությունների մասին, և նրանցից մեկը գերմանացիներին անվանեց «Եվրոպայի թուրքեր»: Եթե այդ զրույցը տեղի ունենար պատերազմից առաջ, տեղնուտեղը կպահանջեր, որ նեղողություն խնդրի, բայց հիմա, ինքը՝ գերմանական բանակի նախկին սպան, լռեց, որովհետև նրանք իրավացի էին, որովհետև գիտեր, ցավոք սրտի, հրաշալի գիտեր, թե ինչու են իրենց համեմատում թուրքերի հետ... Ինքը հիմա և՛ հայ էր, և՛ գերմանացի: Նույնիսկ ավելի շատ հայ, քան գերմանացի: Ոչ միայն, որ ամեն օր, ամեն ժամ մտածում էր իր աղջկա, իր հրաշալի թոռների, վերջապես իր փեսայի ճակատագրի մասին, այլև ամաչում էր, որ գերմանացի է: Տարօրինակ զգացում էր՝ միաժամանակ լինել ամենազորեղը և ամենաթույլը, դահիճը և զոհը, մեղավորը և անմեղը... Աստված կարծես դիտմամբ էր այդպիսի կացության մեջ գցել, որպեսզի առավել խորությամբ հասկանա իրավիճակը և կարողանա առավել արդարությամբ դատել: Մի՞թե չարիք գործողն անպայման պիտի մաշկի վրա զգա իր արարքի ծանրությունը, որպեսզի մեղա գա Աստծո առջև: Ուրեմն, պատիժն աստվածային անհրաժեշտություն է, արդա՜ր պատիժը: Եվ ինքը հիմա իր մեջ մարմնավորում էր հանցանքն ու պատիժը, և երկուսն էլ կատարվում էին միաժամանակ:

Հանցանք էր նաև գերմանական մամուլի այս լռությունը: Թուրքերի խժդժությունների մասին անգամ մեկ տող չէին գրում: Յաննիի նամակից հետո սկսեց մամուլը կարդալ: Մինչ այդ առիթից-առիթ էր թերթերը նայում, այն էլ հայտարարությունները: Այդ կերպ էր ժխտում պատերազմի գոյությունը: Անշուշտ, լուրեր էին հասնում ականջին. խանութներում, փողոցում, սրճարաններում խոսում էին այդ մասին, Ռոմանդական Շվեյցարիան* ցնծությամբ էր ընդունում Անտանտի յուրաքանչյուր հաջողությունը: Սակայն Յաննիի նամակից հետո սկսելով ամենայն ուշադրությամբ տեղական թերթերը կարդալ, զարմանքով փաստեց, որ պատերազմն իր փոքրիկ ավերն է գործել նաև այս չեզոք երկրում՝ նկատելի պառակտում մտցնելով ֆրանսախոս և գերմանախոս հատվածների միջև: Ցյուրիխի, Բեռնի և գերմանախոս այլ քաղաքների մամուլն անսքող հրճվանքով էր ներկայացնում Գերմանիայի և նրա դաշնակիցների ամենաչնչին հաջողությունները: Եվ ո՜չ մի խոսք հայերի կոտորածների մասին: Այդպիսի բան չկար և չէր եղել: Հատկապես սա էր զայրացնում նրան: Մինչդեռ ֆրանսիական և տեղի ֆրանսագիր մամուլը սոսկալի լուրեր էր տպագրում, որոնք գուցե չա-

* Շվեյցարիացի ֆրանսախոս հատվածը:

փազանցված թվային, եթե կնոջ և աղջկա նամակները կարդացած չլիներ... Կարդում էր երկու մամուլը միաժամանակ, համեմատում, վրդովվում, զայրանում: Կեղտոտ պատերազմը շարունակվում էր թերթի էջերում, և եթե այնտեղ թունավորում էին մարմինը, ապա այստեղ՝ միտքը: Նույնիսկ նամակ գրեց թերթերի խմբագրություն, սակայն ոչ մի պատասխան չստացավ:

Այսինքն՝ ավելի լավ, որ չստացավ, թե ոչ սրանց նման կեղծավոր, որձևէգ, եղկելի դիվանագիտությամբ լցված գրություններ էին լինելու. «...Մենք ամենայն ուշադրությամբ կարդացինք ձեր նամակը», - գրում էր կայսերական գրասենյակի քարտուղարը: Վարչապետի գրասենյակն ավելի առատաձեռն էր. «...Խորին շնորհակալությամբ ստացանք ձեր նամակը, որն ուսումնասիրեցինք ամենայն մանրակրկիտությամբ»: Ինչպե՞ս հասկանալ օձիք թոթափելու այս գործողությունը, գրասենյակային այս լեզուն: Ահա թե ի՜նչ... Պարզվում է, որ «Արտակարգ և լիազոր դեսպան Ն. Գ.* բարոն ֆոն Վանգենհայմն անձամբ ճամփորդել է Օսմանյան կայսրության այն վիլայեթներում, որտեղ հայեր են տեղահանվել և վարչական մի քանի անկարևոր խախտումներից ու չարաշահումներից զատ, որևէ ուշագրավ բան չի նկատել»: Իհարկե, չի նկատի: «Ինչ վերաբերում է քրիստոնյա ժողովրդի, մասնավորապես հայերի հանդեպ կիրառվող բռնություններին կամ, ինչպես դուք եք գրում, «կոտորածներին», ապա մեր պաշտոնական տեղեկատվություններն այդպիսի լուրեր չեն հայտնում»:

Ահա թե որտեղից է գալիս գերմանական մամուլի համրությունը... «Այնուհանդերձ, չենք հրաժարվում մեր կարելին անել՝ ձեր խնդրանքը կատարելու համար: Սակայն հարկ ենք համարում հայտնել, որ դա ընդամենը միջնորդություն է լինելու, քանզի խնդրո առարկա անձն օսմանյան հպատակ է, հետևաբար, իրավունք չունենք միջամտելու օտար երկրի ներքին հարցերին...»: Այո, իհարկե, այդ երկրին կարող էիք ստիպել, որ պատերազմի մեջ մտնի: Դա «ներքին հարց» չէր, իսկ անմեղ մարդու համար, չեք կարող միջամտել... Այս նամակները, այս թերթերը կարդալուց հետո քիչ էր մնում պացիֆիստ դառնար:

Ինչ-որ չափով հանդուրժելի էր գլխավոր շտաբի պատասխանը. «Մեր ստացած տեղեկությունների համաձայն ձեր փեսան, բժշկական ծառայության կապիտան Ռուբեն Զիլինկիրյանն աչքի է ընկել որպես կարգապահ սպա և նվիրված ու բարձրորակ բժիշկ: Ավստրիական հիվանդանոցի տնօրինությունը դրվատանքով է խոսում նրա մասին: Ուստի, հաշվի առնելով այս հանգամանքը, ռազմական բժիշկների մեծ պահանջարկը բոլոր ռազմաճակատներում, ինչպեսև ձեր բազմամյա ու անբասիր ծառայությունը հանուն Կայզերի և Գերմանիայի, մենք կհանձնարարենք Օսմանյան բանակի գլխավոր շտաբում գտնվող մեր ներկայացուցչին, որպեսզի հնարավոր ամեն ինչ անի՝ կապիտան Ռուբեն Զիլինկիրյանին աքսորից ետ բերելու համար»:

Սա արդեն ինչ-որ բան էր: Մնում է հուսալ, որ հեռագրով են ուղարկել, և որ այնտեղ՝ Պոլսում թղթերի հեղեղի մեջ չի կորել: Պետք է Յոհանին զգուշացնել, այսինքն՝ ոչ, ավելի ճիշտ կլինի ֆոն դեր Գոլցին դիմել, հիշատակելով, ան-

* Նորին գերազանցություն:

շուշտ, գլխավոր շտաբի դրական պատասխանը: Ճիշտ է, ասում են թրքամոլ է, բայց հին զինվոր է, կհասկանա... Սակայն զարմանալի էր, որ պատասխան չկար Ռայնհարդտից: Մի՞թե նամակը տեղ չի հասել: Չէ որ դիվանագիտական փոստով էր ուղարկել: Որոշեց նորից գրել, հիշեցնելով, որ խնդրանք է ուղարկել ֆոն դեր Գոլցին:

* * *

- Ռուբեն, այսպես եթե շարունակես, շուտով ինքդ բժշկի կարիք կունենաս:

- Հապա ի՞նչ անեմ, Դանիել, ինչպե՞ս կարող եմ մերժել հիվանդներին:

- Մի մերժիր, բայց չափավորիր, գոնե գիշերներն աշխատիր հանգիստ քնել:

- Կներեք, պարոն Սևակ, - միջամտեց Հակոբիկը: - Այդ ռամիկների պատճառով նաև մեր քունն ու հանգիստն է խանգարվել: Գիշեր-ցերեկ այստեղ են, մարդկային լեզվով բացատրում ենք, որ չկաք, որ կուշանաք, սակայն չեն հեռանում, ժամերով ձեղ են սպասում, հիմա էլ՝ այս պահիս, ծառի տակ երկու հոգի նստած են:

- Նաև ուրիշ բան կա, - ասաց Զարեվանդը: - Զգույշ եղիր, սա երախտամոռ ցեղ է, եթե կարիքդ ունի, ոտքերդ կհամբուրի, երբ նպատակին հասավ, տեղնուտեղը քեզ կմոռանա, եթե ոչ ավելին...

- Մի՞թե կարծում ես, թե թուրքերին նոր եմ ճանաչում:

- Ոչ, այդպես չեմ կարծում, Ռուբեն, բայց որպես բժիշկ դեռ չես հասցրել ճանաչել: Հազիվ մի քանի ամիս աշխատեցիր, իսկ քո պացիենտներն էլ փաշաներն ու բեյերն էին, Պոլսի ունևոր վերնախավը, ազնվական, բարեկիրթ մարդիկ, մինչդեռ այս ռամիկները քինախնդիր են, դու Հիսուսը չես, որ բոլորին ձեռքի մի հպումով բուժես, հիվանդներ են, ամեն ինչ կպատահի, մանավանդ այստեղ՝ կեղտի ու տգիտության մեջ:

- Ես Հիսուսը չեմ, բայց իմ հիվանդները հավատում են ինձ և բուժվում:

- Գիտեմ, բոլորը խոսում են քո հրաշքների մասին, բայց Աստված մի արասցե, որ հիվանդներից մեկը մահանա, սրանց քինախնդրությունից չես պրծնի: Պիտի ասեն, թե դու ես սպանել:

- Եվ տեղնուտեղը կմոռանան քո գործած նախկին հրաշքները, - լրացրեց Վարուժանը:

- Եվ վերջապես, Ռուբեն, մինչև ե՞րբ պիտի անվճար բուժես դրանց, - հարցրեց Զարեվանդը:

- Մինչև որ մեր բարի գործերը խեղդեն նրանց չարությունը, - ասես ինքն էլ չհավատալով իր ասածին, դառը ժպիտով պատասխանեց Ռուբենը:

Դուռը թակեցին և ինչ-որ մեկը դրսից կանչեց.

- Դոկտոր Զիլինկիրյան...

Մի ոստիկան էր կանգնած չեմին, առանց զենքի, զարմանալիորեն վարանոտ:

- Ես եմ:

Ոստիկանն ընդդծված քաղաքավարությամբ մի ծրար մեկնեց և գրեթե չչուկով ասաց.

- Մյութեսարիֆը կարգադրեց հանձնել ձեզ:

Ծրարի վրա իր անունն էր, իսկ ներսը մի տոմսակ՝ հետևյալ բովանդակությամբ. «Դոկտոր էֆենդի, ուրախությամբ իմացա, որ այստեղ եք: Շատ կուզեի հնարավորին չափ շուտ հանդիպել ձեզ: Ուստի խնդրում եմ. եթե այսօր ազատ եք, պատիվ արեք ինձ հետ միասին ճաշելու: Եղբայրական սիրով ու հարգանք՝ Ռասուլ բեյ, Զանզբրիի մյութեսարիֆ»:

- Ռասուլ բեյը վաղո՞ւց է եկել, - հարցրեց ոստիկանին:

- Երեկ ժամանեց, էֆենդիս... Հիմա սպասում է ձեր պատասխանին:

- Իմ խորին շնորհակալությունը հայտնեք բեյին և ասեք, որ կես ժամից կլինեմ մոտը:

Ոստիկանը պատիվ տվեց ու հեռացավ:

- Ե՞վս մի հիվանդ, - հարցրեց Վարուժանը:

- Այս մեկը, կարծես, լիովին առողջ է, - ասաց նա՝ ցույց տալով տոմսակը: - Եվ ոչ միայն մարմնով, այլև մտոք:

- Ծանո՞թ ես նրան, - հարցրեց Վարուժանը:

- Անձամբ ծանոթ չեմ, բայց կարծես թե գիտեմ և կարծես թե... Սակայն չշտապենք, համբերենք, բարեկամներս, ճաշից հետո ավելի հստակ պատասխան կտամ ձեզ:

Ռասուլ բեյն, իր արտաքինով, բնավ նման չէր գավառական պաշտոնյաներին: Բարձրահասակ էր ու հաղթանդամ, դեմքով ավելի եվրոպացու էր հիշեցնում: Ռուբենին տեսնելով, տեղից ելավ, մոտեցավ և անկեղծ ջերմությամբ ողջունեց:

- Դոկտորս, մեծ պատիվ է ինձ համար, որ ընդունեցիք հրավերս:

Ռուբենը ժպտալով նայեց այդ բարի հսկային և ասաց.

- Հիմա հասկացա... Եթե նույնիսկ փողոցում պատահական հանդիպեի ձեզ, անմիջապես պիտի ասեի, որ Նիյազի փաշայի եղբայրն եք:

- Այո, մենք հարազատ եղբայրներ ենք, չնայած տարբեր ազգանուններ ունենք:

Նա ուշադիր նայեց Ռուբենին:

- Եղբայրս շատ է գրել ձեր մասին... Նա հիացած էր ձեզնով և ընդհանրապես հայերով:

- Հիմա որտե՞ղ է:

- Պաղեստինում...

- Երբ նամակ գրեք, խնդրում եմ անպայման բարևներս հաղորդեք:

- Սիրով... Ես ապշած էի, երբ հայ աքսորյալների ցուցակում ձեր անունը տեսա... Աչքերիս չէի հավատում, ոստիկանապետին կանչեցի, որպեսզի համոզվեմ, որ սա հենց այն դոկտոր Զիլինկիրյանն է, որը փրկել է եղբորս...

- Ինչպես տեսնում եք...

- Քայլեր ձեռնարկե՞լ եք Պոլիս վերադառնալու համար:

- Կինս Պոլսում դիմել է բարեկամներիս, բայց առայժմ այստեղ եմ:

- Այսօր իսկ պիտի գրեմ եղբորս, որպեսզի ամեն ինչ անի ձեզ փրկելու համար... Անշուշտ, քանի դեռ այստեղ եմ, որևէ վտանգ չի կարող սպառնալ ձեզ, սակայն սոսկալի ժամանակներ ենք ապրում, ոչ մի բան ստույգ չէ, այնպես որ պետք է շտապել Պոլիս վերադառնալ:

- Ափսո՜ս, որ ուշ եկաք:

- Հասկանում եմ, թե ինչու եք այդպես ասում... Ինձ պարզապես ուշացրին զանազան պատճառներով, մոտ տասն օր պահեցին Կաստամոնուում... Ես չեմ ասում, որ եթե այստեղ լինեի, թույլ չէի տա Զանգեզուրի հայերին աքսորել, բայց գոնե այնպես կանեի, որ նրանք բոլորն իսկապես Հալեպ հասնեին, ներկա պայմաններում դա էլ մեծ բան կլիներ:

- Ես զարմանում եմ, որ ձեզ նման մարդուն այսպիսի պաշտոն են վստահել:

- Պիտի մի պաշտոն տային, վիրավորվելուց հետո, այլևս չէի կարող բանակում մնալ... Մեր ընտանիքը մեծ ծառայություններ ունի այս երկրի հանդեպ: Ուզում էին Պոլսում պահել, բայց ես խնդրեցի, որ գավառ ուղարկեն: Մայրաքաղաքի մթնոլորտը տանել չեմ կարող:

- Բայց այդ մթնոլորտն արդեն հասել է գավառները: Հուսամ պատիվ ունեցաք Ջեմալ Օղուզին տեսնելու:

- Կատարյալ ճիվաղ... Զանգեզուրի հայերի կոտորածը հենց նա է կազմակերպել:

- Հուսամ նաև իրագործողներին գիտեք:

- Այդ էլ գիտեմ... Գիտեմ նաև, որ վաղ թե ուշ պիտի կանգնեն արդար դատաստանի առջև: Սա դավադրություն է, դոկտոր, և գիտե՞ք ում դեմ:

- Առայժմ մեր դեմ է:

- Այո, բայց նաև այս երկրի դեմ, թուրքերի դեմ... Մեջտեղը մի ահավոր դավադրություն կա: Մի՞թե ձեզ նման մարդը պիտի այստեղ լիներ, այդ ի՞նչ են արել ձեր համազգեստի հետ... Նրանք նախևառաջ մեր բանակի պատիվն են անարգել:

- Կուզեի մի դժվար հարց տալ ձեզ. ինչպե՞ս կվերջանա այս պատերազմը մեր երկրի համար:

Մյութեսարիֆը դառնությամբ գլուխն օրորեց.

- Դժվար հարց չէ, ընդհակառակը, բայց ծանր է պատասխանել դրան... Ինչ-որ ձեռք միտումնավոր քանդում է երկիրը... Այս պատերազմը մեզ պետք չէր, բայց մի՛ խումբ մարդիկ սկսեցին արկածախնդրությունը, լավ իմանալով, որ մեծ Թուրան ստեղծելու գաղափարը երբեք չի իրագործվի... Առաջին հերթին հենց գերմանացիք դեմ կլինեն դրան, դեռ չեմ խոսում Անգլիայի կամ Ռուսաստանի մասին:

Նա լռեց և շեշտակի նայեց դոկտորի աչքերի մեջ.

- Գիտեք, դոկտոր, գուցե տարօրինակ է, բայց ես գալիս եմ այն եզրակացության, որ Էնվերն ու Թալյաթն այս պատերազմի մեջ մտան լոկ մի նպատակով. որպեսզի պատեհ առիթ ստեղծեն վերջնականապես լուծելու հայերի հարցը:

- Բայց երկիրը կործանելու գնո՞վ:

- Դա նրանց չի հետաքրքրում. նրանք շտապում են ձեր հաշիվը մաքրել:

- Եվ, ավա՜ղ, մենք մեր անհեռատեսությամբ օգնեցինք նրանց...

- Դուք հիմա միայն մեկ նպատակ պիտի դնեք ձեր առջև. փրկվել այս կոտորածից, ամեն գնով: Այսպես չի կարող երկար շարունակվել, արդարությունն անպայման կգա, և նրանք պատասխան կտան իրենց արածների համար:

- Այո, պետք է փրկվել, բայց ո՛չ ամեն գնով և մանավանդ ո՛չ նվաստանալով:

- Ես ձեզ չեմ հասկանում, դոկտոր, ձեր ցեղի գոյության հարցն է դրված, իսկ դուք պայմաններ եք ուզում թելադրել:

- Այո, որովհետև խնդիրը միայն փրկվելը չէ, այլ ինչպես փրկվելը: Հարյուրավոր տարիներ վիզ ենք ծռել Թուրքի առջև, հանդուրժել նրա բռնությունները, որպեսզի մեր մաշկը փրկենք և չենք նկատել, թե ինչպես դարձել ենք նրա ստրուկը... Ես հատկապես դեմ եմ, որ իսլամ ընդունելու գնով փրկենք մեր կյանքը, դա.կլինի վերջնական և մեծագույն ստորացումը:

- Տարօրինակ բաներ եք ասում, դոկտոր, - մի պահ մտորելուց հետո ասաց մյութեսարիֆը: - Բայց հասկանում եմ ձեզ... Մենք էլ պատվի ու խոսքի ժողովուրդ ենք և տանել չենք կարող բռնությունը... Ես պատկերացրի, որ եթե ռուսները մեզ պայման դնեին քրիստոնյա դառնալ կամ կոտորվել...

- Եվ ի՞նչ կանեիք, եթե ստիպեին:

- Բարեբախտաբար, այդպիսի բան չեղավ, բայց եթե ստիպեին, իհարկե, չպիտի ընդունեինք... Ի դեպ, «Ղորանն» արգելում է բռնությամբ հավատ տարածել:

- Ավետարանը նույնպես:

- Եվ չնայած դրան, ես այսօր պաշտպանեցի Զանղըրիի հոջային:

Ռուբենը հետաքրքրված նայեց նրան:

- Այսօր առավոտ կանուխ խորհրդակցում էինք մի քանի հարցերի շուրջ: Խոսք գնաց աքսորական հայերի մասին: Հոջան ասաց, որ երեք հոգի ցանկություն են հայտնել իսլամ ընդունել, պայմանով, որ նրանց կյանքը խնայվի: Ջեմալ Օղուզը կտրականապես դեմ էր, ասում էր, թե հայից իսլամ դուրս չի գա, որ դրանք խորամանկ քայլեր են: Ես պաշտպանեցի հոջային, ասելով, որ եթե մարդը դիմում է քեզ Մուհամմեդի հավատն ընդունելու համար, իրավունք չունես մերժելու:

- Իսկ չասա՞ց, թե ովքեր են:

- Անուններ չտրվեց, միայն մեկի մասին խոսեց հոջան՝ խղճալով... Ասում էր, թե տղան մեղք է, տասնութ տարեկան է, ափսոս է այդքան ջահել գնա մեռնի:

Ռուբենը ցնցվեց, բայց տիրապետեց իրեն:

- Եվ ե՞րբ են մտադիր թլպատել նրանց:

- Ստույգ բան չասաց, առայժմ ընդհանուր զրույց էր...

Հետո, կարծես նկատելով Ռուբենի անհանգստությունը, ավելացրեց.

- Դոկտոր, այս լուրն ինձնից չես լսել... Եվ եթե մտադիր եք հակազդել, ապա խորհուրդ կտայի չափազանց շրջահայաց լինել: Այդ Օղուզը և Նուրհանէդդին բեյը հազիվ են հանդուրժում ձեր ներկայությունն այստեղ:

- Իսկ ի՞նչ եք կարծում, մինչև ե՞րբ են մտադիր հանդուրժել:

- Դա կախված է այն բանից, թե Պոլիսն ինչ հրահանգներ կուղարկի: Աքսորականների հարցում իրավունք չունենք կատարելապես ինքնուրույն գործելու... Անշուշտ, գիտեք, որ ձեզնից ոմանք արդեն վերադարձել են դեսպանների կամ հեղինակավոր անձանց միջնորդությամբ:

- Վերադառնալու արտոնությունը դեռ քիչ է, - նկատեց Ռուբենը: - Պետք է կարողանալ Պոլիս հասնել: Ճամփաներն անապահով են, մանավանդ հայերի համար:

- Իրավունք ունեք, այնուհանդերձ աշխատեք արտոնությունը ձեռք բերել, հետո ելքը կգտնենք...

* * *

Տարօրինակ բաներ են կատարվում... «Ինչ-որ ձեռք քանդում է այս երկիրը»: Այս բառերն արդեն լսել էր Քենանից, Նիյազի փաշայից, ուրիշ ողջախոհ թուրքերից... Անգամ իր հայրը՝ Հովհաննես աղան բառացիորեն նույն նախադասությունն ասաց, երբ լսեց, որ թուրքերը պատերազմի մեջ են մտել Անտանտի դեմ: Վերջապես, պարտադիր չէր, որ այդ նախադասությունը նույնությամբ կրկնվեր. այս էլ որերոդ դեպքն էր, թուրք հեղինակավոր պաշտոնյան կամ բարձրաստիճան զինվորականը նման մտքեր էին հայտնում: Անցած օրն էլ Տիրան Քելեկյանն ասաց, որ թուրք սպաների առնվազն մեկ երրորդը դեմ է այս պատերազմին, որ մնացածը պարզապես հրաման են կատարում, և միայն չնչին մասն է հավատում հաղթանակին, դրանք էլ իթթիհադական դրածոներ են:

Սակայն հիմա ընդամենը մեկ հարց էր չարչարում նրա միտքը. ովքե՞ր են մյուս երկուսը: Տասնութամյան, անշուշտ, Հակոբիկն է, այդ տարիքի ուրիշ մեկը չկար: Յոթանասուներկու հայ էր ապրում հիմա Զանգեզուրում, և միայն երկուսի մտադրությունն էր նրան ստույգ հայտնի. իր և Հակոբիկի: Մեկ «ոչ» և մեկ «այո»: Մյուս երկուսին պետք էր փնտրել յոթանասունի մեջ, և փաստորեն ստացվում էր հավասարում ոչ թե երկու, այլ յոթանասուն անհայտով: Մեղա՛, մեղա՛... Այս ինչե՞ր են անցնում իր գլխով... Օրինակ՝ մի՞թե կարող է այդ յոթանասունի մեջ թողնել Վարուժանին, հոգևորականներին... Հապա Տիրան Քելեկյանը, այդ հոյակապ մտավորականը, թուրք սպաների կեսը նրա ուսանողներն են եղել, իշխանազունը, եպարքոսը, նախարարներն ու մեբուսները նրա մտերիմ բարեկամներն են, մի՞թե իրեն թույլ կտա այդպես ստորանալ... Հապա Բյուզանդ Քեչյանը... Բացառվո՛ւմ է: Հապա իր բժիշկ ընկերները... Անկարելի՛ է... Գաղափարի մարդիկ են, նվիրված, հավատարիմ: Սակայն ովքե՞ր են այդ երկուսը... Խանութպաննե՞ր, վաճառականնե՞ր, արհեստավորնե՞ր, գուցե դրանց միջից են... Սակայն, Տեր Աստված, ինչո՞ւ եմ մեղք գործում, մի՞թե հավատարմությունն ու նվիրվածությունը մտավորականների մենաշնորհն են, դա ի՞նչ վտանգավոր մոլորություն է, մի՞թե մեր հերոս ֆիդայիների մեծ մասը հասարակ ժողովրդի ծոցից չելավ... Մեղա՛, մեղա՛... Մի՞թե Զանգեզուրի հայերը մեկ մարդու պես չհրաժարվեցին ստորանալուց, մինչդեռ նրանց մեջ ոչ մի մտավորական

չկար: Սակայն ովքե՞ր են այդ երկուսը... Պետք է գտնել այդ մարդկանց քանի դեռ աղետը տեղի չի ունեցել, և ճիշտ կլիներ նախևառաջ խորհրդակցել հոգևորականների հետ:

Հովհան Կարապետյանին գտավ Հաջի բաբայի սրճարանից քիչ հեռու՝ Վարուժանի հետ բարդիների տակ նստած: Հավանաբար բանաստեղծություններ էին կարդում: Լավ է, թող Վարուժանն էլ ներկա լինի:

Վարդապետն ուշադիր լսելով նրան, ասաց.

- Նախ, մի կարևոր բան պիտի զգուշացնեմ. այս լուրը քեզնից չեմ լսել, դու այդ մասին ոչինչ չգիտես, դու նույնպես՝ Վարուժան: Կարծում եմ, հասկանում եք ինչու:

- Բացատրելու կարիք չկա, հայր սուրբ, մյութեսարիֆին հիմար կացության մեջ կդնենք: Հաղիվ մի պարկեշտ մարդ է հայտնվել այստեղ:

- Բացի այդ, դուք եթե միջամտեք, կարող է հակառակն ստացվի, քանզի կրքոտ նկարագիր ունեք, հնարավոր է նույնիսկ բուռն վիճաբանություններ ծագեն... Այս խնդրի լուծումը պահանջում է լռություն և համբերություն:

- Հանգիստ եղեք, հայր սուրբ, իմ միջամտությունը բացառվում է, քանզի չգիտեմ, թե ովքեր են այդ երկուսը:

- Ավելի լավ, որ չգիտեք:

- Հասկանում եմ ձեր մտահոգությունը. որքան քիչ մարդ իմանա այդ մասին, խնդիրն այնքան ավելի դյուրին կլինի լուծել, բայց դուք ինչպե՞ս եք պարզելու, թե ովքեր են:

- Կարծես գուշակում եմ... Այսօր իսկ կփորձեմ խոսել նրանց հետ:

- Իսկ եթե չհաջողվեց կամ պարզվեց, որ ձեր ենթադրությունները սխալ են...

- Զգիտեմ, դոկտոր, տեսնո՞ւմ եք, արդեն անհամբեր եք... Թողեք նախ խոսեմ, հետո կերևա...

- Լավ, ենթադրենք, թե երկու հոգու հաջողվեց հետ պահել, հապա մյուսնե՞րը, այդ վարակը կարող է նրանց էլ դիպչել:

- Դոկտոր, լիովին հասկանում եմ ձեր մտահոգությունը, բայց պետք չէ խուճապի մատնվել... Ժամանակից շուտ բաներ չանենք: Արդեն երրորդ ամիսն է այստեղ ենք, և նման դեպք առաջին անգամ է պատահում:

- Որովհետև վտանգի զգացումը բթացել էր, - պատասխանեց Ռուբենը: - Որովհետև այստեղի հայերին մի քանի օր առաջ տարան և մորթեցին և բոլորս հասկացանք, որ նույն ճակատագիրն սպասում է մեզ, և հիմա յուրաքանչյուրս տենդագին մտածում է փրկվելու մասին, բնական է, մարդիկ ենք, ուզում ենք ապրել... Վաղն այդ երկուսին կարող են հետևել տասը, քսանը...

Ռուբենը հևասպառ կանգ առավ: Խոսում էր գրեթե գոռալով, բառերն իրար ետևից կրակելով: Շունչ առավ և շարունակեց ավելի հանգիստ, գրեթե աղաչելով.

- Հայր սուրբ, պետք է շտապել, ժամանակը սուղ է, մարդիկ սարսափած են և կարող են սխալ որոշումներ ընդունել, պետք է խոսել բոլորի հետ, ոգի տալ, քաջալերել...

Վարուժանը, որ լուռ և ուշադիր լսում էր, վերջապես միջամտեց.

- Հայր սուրբ, խնդրում եմ ներողամիտ եղեք, բայց ինձ թվում է՝ Ռուբենը կկարողանա ավելի համոզիչ լինել:

- Ինչո՞ւ ես այդպես կարծում, Դանիել:

- Շատ պարզ է, Ռուբեն, հայր սուրբի պարագայում խնդիրը կարող է զուտ կրոնական բնույթ ստանալ, մինչդեռ ես տեսնում եմ, որ դավանափոխության հարցին դու ավելի լայն իմաստ ես հաղորդում:

- Վարուժանն իրավացի է, - համաձայնեց Հովհան վարդապետը:

- Սիրելիներս, դավանափոխության հարցին այսօր բոլորս ենք այդ իմաստը հաղորդում, ուստի բոլորս պիտի իրար ոգի տանք, չթողնենք, որպեսզի որևէ մեկը վհատվի:

- Դու գտնում ես, որ մեկ առ մեկ պիտի խոսենք ու համոզե՞նք, - հարցրեց Վարուժանը:

- Եթե գիտենք, թե ովքեր են այդ երկուսը, բայց կարծում եմ, որ ավելի ճիշտ կլինի միաժամանակ դիմել բոլորին:

- Ինչպե՞ս, Ռուբեն, - հարցրեց Վարուժանը: - Կարո՞ղ է մտադիր ես...

- Ճիշտ ես կռահում, - Վարուժանի խոսքը կտրելով ասաց նա: - Զանղրիում միայն մեկ տեղ կա, ուր կարող ենք բոլորս հավաքվել՝ առանց կասկած առաջացնելու իշխանության մոտ. հայոց լքյալ եկեղեցին:

- Դոկտոր, այնտեղ էլ վտանգավոր է, - առարկեց Հովհան վարդապետը: - Երեկ մտա աղոթելու, կողքը թուրքեր կային կանգնած, չար հայացքներով նայեցին ինձ:

- Թող նայեն, հայր սուրբ, իսկ դուք վաղն առավոտն իսկ գնացեք նոր կառավարչի մոտ և արտոնություն խնդրեք արարողություն մատուցելու համար: Թուրքերը սիրում են, երբ իրենց հետ հաշվի են նստում: Բոլորս կհավաքվենք եկեղեցում, և հենց այնտեղ էլ կդիմենք ներկաներին:

- Թուրքերը մեզ ականջ կդնեն, - զգուշացրեց Վարուժանը:

- Շատ հնարավոր է, բայց այլևս վախենալու ոչ մի բան չունենք:

* * *

Գերմանական զինվորական առաքելության ամբողջ փոստը նախ հավաքվում էր կապիտան Մատիաս Բրոնկեի մոտ: Այնուհետև՝ այդտեղից հասնում հասցեատիրոջը: Պատահում էր նաև, որ չէր հասնում: Դա նամակաբաշխիչ գրաքննություն էր, որն իրավունք ուներ բացել ուղած ծրարը, չնչին կասկածի դեպքում կասեցնել նամակի առաքումը և պարզել ուղարկողի անձն ու նպատակները: Գերմանիայից եկող նամակներն արդեն անցել էին գրաքննությունը տեղում: Խոսքը վերաբերում էր այլ երկրներից եկող փոստին: Իսկ եթե հաշվի առնենք, որ Բրոնկեն «Նախրիխտենդինստի»* սպա էր, ապա պարզ կդառնա, որ դա սովորական գրաքննություն չէր և որ հաշվետու չէր անգամ ֆոն դեր Գոլ-

*Գերմանական հակահետախուզությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

ցին: Այդ մասին գիտեին բոլորը և աշխատում էին մթագին կապիտանի հետ հարաբերություն չունենալ: Գիտեր նաև Յոհան Ապելը, սակայն այդ գիշեր չվարանեց երկու ծանր հարված հասցնել կապիտանին՝ այն էլ մի շարք սպաների ներկայությամբ: Նախ, թղթախաղում դեմ առ դեմ մնաց նրա հետ և հինգ հարյուր թուրքական ոսկի շահեց: Բախտը բերում էր այդ օրը, շարունակ լավ թղթեր էր գալիս, ուստի ստիպված էր խաղագումարը բարձրացնել: Բոլորը լարված հետաքրքրությամբ հետևում էին խաղին, և ինքն զգում էր, որ ընդհանուր համակրանքն իր կողմն է: Մեկ ժամ չանցած կապիտանը հայտարարեց, որ մոտն այլևս փող չկա և իրավունք խնդրեց «ազնիվ խոսքի» վրա խաղալ: Ըստ թղթախաղի դաժան օրենքների կարող էր որևէ գրավական պահանջել, իսկ ըստ սպայական պատվի պահանջների մերժել՝ նշանակում էր ստորացնել պարտվողին: Յոհան Ապելը փորձեց միջին ճանապարհն ընտրել. «Կապիտան, ես դեմ չեմ, սակայն այսօր վատ օր է ձեզ համար, չէի ուզի չարաշահել կացությունը, ապա թե ոչ ձեր պարտքերը կարող են կրկնապատկվել»: «Ես ձեզ պարտք չեմ, լեյտենանտ, ինչե՞ր եք խոսում»: Բոլորը գիտեին, որ նա պարտքերի մեջ խրված է, և լեյտենանտի ակնարկը նրա ցավոտ տեղին էր խփում: «Թուղթը խռովել է ձեզնից, կապիտան, եկեք ռեվանշը հետաձգենք մի ուրիշ օրվան»: Կապիտանը չէր զիջում: Ի վերջո հասավ իր նպատակին, և հինգ հարյուր ոսկին դարձավ հաղար:

Այժմ նստած թղթակցությունների կույտի առջև անցած դիշերվա տհաճ տեսարանն էր վերհիշում: Զայրացնողն այնքան կորցրած գումարը չէր, որքան լեյտենանտի հանդուգն պահվածքը: Ավելին՝ զգում էր, որ ներկաները (այդ երեկո հակառակի պես շատ էին) չէին թաքցնում իրենց գոհունակությունը և ցուցադրաբար շնորհավորում էին լեյտենանտին:

Մեքենայորեն բացում էր ծրարները, երբ հանկարծ դրանցից մեկը գրավեց ուշադրությունը: Նամակը գալիս էր Լոզանից, ուղարկողն էր ոմն գնդապետ Ֆրանց Ապել: Սովորական խնդրանք էր, որ ռազմական տեսանկյունից որևէ կարևորություն չէր ներկայացնում: Սակայն հիմա, այս նամակը, մի հզոր խաղաթուղթ թվաց նրա ձեռքում:

Հայ սպայի ձերբակալության պատմությունը հասել էր նրա ականջին՝ որպես թուրքերի քինախնդիր տխմարության հերթական ապացույց: Գիտեր նաև, որ Յոհանի հորեղբոր աղջկա ամուսինն է: Հիմարի մեկն է այդ Յոհանը, որ մինչև հիմա ետ չի բերել նրան: Եթե պատշաճ ձևով ներկայացներ Ֆոն դեր Գոլցին, ապա խնդիրը մեկ ժամում կհարթվեր: Ի վերջո, սա ընտանեկան հարց չէ, այլ ռազմական: Ավելի վատ Յոհանի համար, որ մինչև հիմա չի զբաղվել իր աղգականով...

Սակայն ի՞նչ կարող էր անել այս նամակով: Սպառնա՞լ Յոհանին, բայց ինչպե՞ս: Հետո ի՞նչ, որ հորեղբայրն է նամակը գրել: Եթե մինչև հիմա ոչինչ չի արել, ի՞նչ երաշխիք, որ նամակը կարդալուց հետո գործի կանցնի, ավելին՝ պարտքը չեղյալ կհամարի: Անհոգի արարած է, ձեռքերը կլվանա ու կքաշվի մի կողմ: Չէ, դժվար է այս նամակով նրան շանտաժ անել:

Բայցև չէր ուզում այս չնչին առիթն անգամ ձեռքից բաց թողնել: Ուստի երկար մտածելուց հետո որոշեց խնդրագիրն առայժմ չուղարկել հասցեատի-

րոջը, իսկ որպեսզի իր արարքը հետագայում չհամարվի պաշտոնական դիրքի չարաշահում, նամակը պատճենեց և կից գրությամբ ուղարկեց Կենտրոն՝ պարզելու, թե ով է այդ գնդապետը և ինչու է թոշակի անցնելուց հետո հայտնվել Շվեյցարիայում: Դա նրա իրավունքն էր, նույնիսկ պարտականությունը. ամենաչնչին կասկածի դեպքում պիտի հայտներ ուր որ պետք է: Եվ նրան թույլատրված էր կասկածել բոլորին:

Նամակի բնօրինակը պահեց չհրկիզվող պահարանում, կարևոր թղթերի կողքին, որոնց մեջ էր նաև իր պարտքերի ցուցակը: Գտավ, որ միակ ճիշտ որոշումն ընդունեց: Մինչև պատասխանն ստանալը բավական ժամանակ կունենա մտածելու, թե այդ առիթն ինչ կերպ հնարավոր կլինի լավագույնս օգտագործել:

* * *

Կյանքում երբեք չէր իմացել, թե դրամի նեղությունն ինչ բան է: Ծնվել ու մեծացել էր ունևոր ընտանիքում, բացի այդ, ի տարբերություն իր ընկերուհիների, կատարելապես անտարբեր էր եղել ոսկեղենի, զարդերի, շքեղ հագուստների հանդեպ, և Աստված առատորեն փոխհատուցել էր այս համեստության համար. պարզ ու անպաճույճ զգեստը նրա հագին գեղեցկանում, առանձնահատուկ մի շուք էր ստանում: Ամուսնությունը նրա սկզբունքները չփոխեց: Նվեր ստացած կամ տարբեր առիթներով գնված զարդերը մեծ մասամբ մնում էին տուփի մեջ: Թերևս մի քիչ ավելի հետաքրքրություն ցուցաբերեց զգեստների հանդեպ, այն էլ ոչ թե շքեղության, այլ գեղեցկության համար: Դա միջոց էր, նույնիսկ պարտականություն, օրեցօր ավելի ընդգծվող, ավելի նրբացող կանացիությունը մատուցելու: Գեղեցիկ լինելը նույնքան ազնվացնող էր, որքան գեղեցկություն տեսնելն ու գնահատելը: Ամուսինը նրան խնայել էր բնակարանի ու տնտեսության հետ կապված տաղտուկից: Սնունդի և շուկայի հոգսն ամբողջովին սպասուհու վրա էր: Նրան մնում էր միայն իր և ամուսնու հագուստի, զվարճանալու, ժամանցի և այլ հաճելի զբաղմունքները: Առանց իր հավանության տանը ոչ ոք իրավունք չուներ հագուստ գնելու: Ճաշակի խնդիր էր, ոչ թե դրամի: Եվ նրանք երկուսով երբեք դրամի գերին չէին եղել, երբեք չէին մտածել ամեն կերպ, ամեն գնով հայթայթելու, ավելին շահելու մասին: Դա նաև թաքուն, անխոս համաձայնությամբ հաստատված արհամարհանք էր դեղին մետաղի հանդեպ, որը հատուկ է միայն վսեմ հոգիներին:

Սակայն դրամն սկսում էր իր անգութ իշխանությունը հաստատել նաև նրանց տանը: Ուզում էր վրեժխնդիր լինել իր հանդեպ ցուցաբերված արհամարհանքի համար: Նա զգույշ եկավ, աննկատ... Սկզբում սպասուհին հիշեցրեց իր ամսական աշխատավարձի մասին... Հետո նպարավաճառն ասաց, թե հուլիսի պարտքը կգումարի հունիսի պարտքին: Նա ասաց բարեկիրթ ժպիտով, բայց պարտք *բառն արտասանվեց: Ինչո՞ւ ցնցվեց... Մի՞թե առաջին անգամ էր լսում: Անշուշտ, լսել էր, բայց շա՜տ տարտամ, հեռավոր իմաստ էր պարունակել, քանզի մինչև հիմա նրա համար* պարտքը *նախևառաջ բարոյական, հոգեկան իմաստ ուներ և ավելի շատ* պարտականություն *էր:*

Ամենասոսկալին, սակայն, Օսման բեյի հայտնությունն էր: Առավոտ կանուխ դուռը զանգեց և առանց թույլտվություն ստանալու, առանց ներողություն խնդրելու, մտավ ներս ու հայտարարեց, թե հինգ օր ժամանակ է տալիս հուլիս ամսվա վարձը մուծելու համար, այլապես ստիպված կլինի վտարել: Եվ վերջում, դուրս գալուց առաջ, հարկ համարեց հայտնել, որ եկող ամսվանից վարձը կրկնապատկվում է: «Բայց դա կողոպուտ է, պարոն, այս բնակարանն արդեն բավական թանկ է»: «Հասյա ի՞նչ եք ուզում, հանըմ, այս պատերազմի պատճառով ամեն ինչը թանկացավ տասը-քսան անգամ, ուզում եք բնակարանը գոնե երկու անգամ չթանկանա՞...»: Ստիպված էր տհաճ լուրը հայտնել Ռուբենին: Վերջինս չուշացրեց պատասխանը. «Սպայի ընտանիքն իրավունք չունեն վտարելու»: Օ, սիրելի՛, օ, բանաստե՛ղծ Ռուբեն... Այդպիսի հրեշավոր ապօրինություններն իր մաշկի վրա զգալուց հետո շարունակում էր իրավունքից խոսել... Ստիպված էր տանը եղած ամբողջ գումարը հավաքել և տալ բնակարանի տիրոջը: Եվ դեռ որոշ գումար էլ Ռուբենին պիտի ուղարկեր: Լավ էր, մայրը կողքին էր. նա հեռատեսորեն հետը դրամ էր բերել և արդեն ինքն էր հոգում տան ծախսերի մի մասը: Հիմա էլ մոտեցավ ու հարցրեց.

- Անկեղծ ասա, ուզո՞ւմ ես հետդ գամ:

- Ասացի, ոչ, մայրիկ, մնա երեխաների հետ:

Եվ մայրն զգուշորեն մի քիչ դրամ գցեց ձեռքի պայուսակի մեջ:

Որոշել էր գնալ Վանգենհայմի մոտ: Ուզում էր երես առ երես խոսել հետը: Անցյալ անգամ դեսպանը խորամանկությամբ կարողացել էր փափուկ բարձ դնել մոր գլխի տակ: Այսպես երկար շարունակվել չէր կարող: Ռուբենի թուրք բարեկամները որոշակիորեն ասում էին, որ անզոր են որևէ կերպ օգնել, և բոլորը խորհուրդ էին տալիս համառորեն պահանջել դեսպանից, որ միջնորդի: Վերջին երկու շաբաթվա ընթացքում շարունակ լսում էր, որ ավստրիական, ամերիկյան դեսպանների և անգամ պապի նվիրակի բարեխոսությամբ բազմաթիվ մարդիկ են վերադարձել աքսորից: Նշանակում էր, որ թուրքերի համար առաջին դաշնակցի՝ գերմանացիների միջնորդությունը պիտի ավելի արդյունավետ լինի:

Անհավատալի էր, սակայն այս անգամ, առանց սպասեցնելու, առաջնորդեցին դեսպանի մոտ: Իսկ վերջինս ընդունեց նախորդ անգամվա պես ընդգծված քաղաքավարությամբ և նույնիսկ որոշ ջերմությամբ:

- Ի՞նչ լուրեր ունեք ձեր ամուսնուց:

- Շարունակ այնտեղ է, արդեն մեկ ամիս կլինի:

- Կարևորը՝ ողջ-առո՞ղջ է:

- Գրում է, որ այդպես է, բայց իրո՞ք այդպես է...

- Ջեմ հասկանում ձեզ, տիկին:

- Ինձ թվում է, ձերդ գերազանցություն, որ ես շատ պարզ ասացի. եթե վիճակը լավ չէ, կարո՞ղ է արդյոք այդ մասին հայտնել:

- Այո, հասկացա... Բայց նկատի ունեցեք, տիկին, պատերազմ է, զինվորական դրաքննություն կա:

- Հայերի բերանը միշտ փակված է եղել այստեղ, իսկ հիմա պարզապես դժոխք է դարձել նրանց կյանքը:

- Մի չափազանցրեք, տիկին, ընդամենը մի քանի հոգու աքսորեցին, հիմնականում կասկածելի անձանց: Դրանց մեծ մասն արդեն վերադարձել է Պոլիս, կարծում եմ, որ մյուսներն էլ կվերադառնան:

- Նրանք չեն վերադառնա, ձերդ գերազանցություն, - հոգնած ձայնով ասաց Յաննին, - որովհետև արդեն մորթված են, ինչպես և հազարավոր անմեղ մարդիկ չեն վերադառնա, որովհետև նրանք էլ մորթված են:

- Ինչե՞ր եք խոսում, տիկին, այդ հրեշավոր ստերն ո՞վ է պատմել ձեզ... Այսինքն՝ մեղավոր չեք, այդպիսի չապացուցված լուրեր իսկապես շրջում են, նույնիսկ դիվանագիտական և կառավարական շրջանակներում: Ի դեպ, ձեր ամուսինը որտե՞ղ է:

- Զանզբրիում, Էնկյուրիից հյուսիս:

- Ինչպիսի՜ զուգադիպություն: Մեկ շաբաթ առաջ հենց այդ կողմերում էի, գնացել էի անձամբ այդ լուրերը տեղում ստուգելու:

- Եվ ի՞նչ պարզվեց, - անհամբերությամբ հարցրեց Յաննին:

- Պարզվեց, որ այդ սահմռկեցնող պատմությունները հայերի կոտորածների մասին՝ հերյուրանքներ են: Այո, տեղահանություններ կան, այո, չարաշահումների, կաշառակերության, նույնիսկ դաժանության որոշ դեպքեր են եղել թուրքերի կողմից, հայերից մի քանիսին էլ ստիպված են եղել պատժել անհնազանդության համար, սակայն կոտորածներ իսկապես չեն եղել:

- Ինչպե՞ս իմացաք այդ բաները:

- Թուրքերը պատմեցին, տեղական իշխանությունները... Հայերն էլ պատմեցին...

- Ի՜նչ եք ասում, ձերդ գերազանցություն, հայեր մնացե՞լ էին, - զարմանքով հարցրեց Յաննին:

- Այո, բազմաթիվ հայեր կային, ինքս եմ անձամբ խոսել նրանց հետ, - առանց աչքը թարթելու պատասխանեց դեսպանը:

- Դուք ստում եք, պարոն դեսպան:

Վանդենհայմը ցնցվեց և ընդոստ ելնելով ասաց.

- Զափավորեք ձեր լեզուն, տիկին:

Յաննին նույնպես ելավ տեղից:

- Այո, ստում եք, որովհետև բռնաբարված, մորթված, խեղանդամված դիակների հետ չէիք կարող խոսել:

- Տիկին, դուք մոռանում եք, թե որտեղ եք և ում հետ եք խոսում, - ձայնը բարձրացրեց Վանդենհայմը:

- Ես հատկապես գերմանական դեսպանատանը և նորին գերազանցություն դեսպանի ներկայությամբ եմ խոսում թուրքերի վայրագությունների մասին, որովհետև աչք փակելով, ճշմարտությունը թաքցնելով դառնում ենք հանցակից... Ես ամաչում եմ, որ գերմանացի եմ... Ինչպե՞ս կարելի էր այդ բարբարոսի դաշնակիցը դառնալ, մի՞թե չգիտեիք, թե թուրքերն ինչ արարածներ են:

Վանդենհայմի դեմքին զայրույթի արտահայտությունը տեղը զիջեց հեգնական ժպիտին:

- Տիկին, մենք լավ գիտենք, թե ով է մեր դաշնակիցը և ինչ ենք սպասում

նրանից, այդ դուք, դո՛ւք եք սխալվել ձեր հաշիվների մեջ... Ավա՜ղ, չլսելով մեծերին... Հա, լավ հիշեցի, մի հարց պիտի տամ և շատ կուզեի, որ անկեղծորեն պատասխանեք: Ճի՞շտ է, որ ձեր ծնողները դեմ էին այս ամուսնությանը:

- Պարոն, այդ հարցերը ձեզ չեն առնչվում:

- Այդ դեպքում ինչո՞ւ եք եկել մեր միջնորդությունը խնդրելու մի մարդու համար, որն առնչություն չունի մեզ հետ: Դուք հանդգնում եք դասեր տալ, թե ում հետ պիտի դաշնակցի մեր երկիրը, բայց ինքներդ ամուսնանում եք այդ թշվառական հայի հետ...

- Ես ձեզ թույլ չեմ տա, պարոն դեսպան...

- Արդեն թույլ եք տվել, ուրեմն, համբերություն ունեցեք մինչև վերջ լսելու: Դուք անարժան գերմանուհի եք և լավ իմացեք, ձեր ամուսինը հետ չի գալու: Ես խնայեցի ձեզ, չուզեցի միանգամից ասել այդ մասին: Սակայն գուցե չկա չարիք առանց բարիք: Ճակատագիրը հնարավորություն է տվել սխալը շտկելու, ուստի առանց հապաղելու վերադարձեք Գերմանիա և նոր կյանք սկսեք այնտեղ: Դուք դեռ երիտասարդ եք, ամեն ինչ ձեր առջևում է:

Դեսպանի անսիրտ բառերը լսելով, հանգիստ ու արժանապատվությամբ պատասխանեց.

- Ձերդ գերազանցություն, ես իմ կյանքի ուղին ընտրել եմ վերջնականորեն և մտադիր չեմ փոխել ոչ մի դեպքում, ինչ վերաբերում է ձեզ և ձեր դաշնակցին, ապա քայլում եք մի ուղիով, որը տանում է դեպի կործանում:

- Տիկին, շարունակ ասում եք «ձեզ», ինչպե՞ս հասկանալ, դուք գտնում եք, որ այլևս գերմանուհի չե՞ք: Եթե ամաչում եք ձեր գերմանական ծագումի համար, ինչպես բարեհաճեցիք ասել քիչ առաջ, ապա ինչո՞ւ եք գալիս այստեղ: Դա ազնիվ պահվածք չէ... Ես կասեի, նույնիսկ՝ երկդիմի, կեղծավոր մի խաղ եք սկսել, դուք ցեխ եք գցում մեր երկրի պատվին, բայց չեք խորշում օգտվել գերմանական անձնագրի ընձեռած բազմաթիվ առավելություններից: Դա չափազանց անազնիվ է, տիկին:

Յաննին, որ անվրդով լսում էր դեսպանին, պայուսակը բացեց, անձնագիրը հանեց, շպրտեց նրա երեսին և կտրուկ շրջվեց, որ դուրս գա:

Վանգենհայմն ապշած էր իր այցելուի այս անակնկալ քայլից: Հետո, անմիջապես ուշքի եկավ (դիվանագիտական փորձառությունն օգնեց) և բառերը գնդացրի պես իրար ետևից շարեց.

- Սա չտեսնված լկտիություն է, տիկին, դուք պատասխան կտաք դատարանին՝ պետական բարձրաստիճան անձին վիրավորելու և անձնագրի հանդեպ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելու համար:

- Շատ ուրախ կլինեմ, վերջապես կզգամ, որ իմ պետությունը գոնե այդ կերպ է զբաղվում ինձնով:

Դուռը շրխկոցով փակեց, դեսպանատան աշխատակիցների ապշած հայացքների ներքո, վճռական քայլերով անցավ ընդունարանը և դուրս եկավ փողոց: Քայլում էր առանց գիտակցելու, թե ուր: Ուշքի եկավ այն պահին, երբ մի ձայն լսեց, որ Թիկունքից գերմաներեն կանչում էր. «Ֆրաու Ապել, կանգ առեք, խնդրում եմ»: Շրջվեց և երիտասարդ մի սպա տեսավ, որ վազել-հասել էր իրեն: Նա հևալով մոտեցավ և անձնագիրը վերադարձրեց:

...Անձնագիրը ձեռքին կանգնել էր փողոցում՝ չիմանալով, թե ինչ անել. դնել պայուսակը, շպրտել մայթի եզրով հոսող առվի մեջ, թե՞ հետ տալ սպային, որը հետաքրքրված կանգնել էր տեղում: Հիմա հասկացավ, որ քիչ առաջ դեսպանի սենյակում սոսկալի բան կատարվեց, և թերևս իր մեղքով: Անզուսպ եղավ, գուցե նույնիսկ անհարգալից, անբարեկիրթ: Այո, դեսպանը ստում էր: Իսկ մի՞թե չգիտեր, որ դիվանագետներն ու պետական գործիչները մեծագույն ստախոսներն են: Պարզապես հիմա, իր մաշկին զգաց կեղծիքի ահավորությունը: Արդեն մեկ ամիս է առանց ամոթի խաբում են, այլևս չդիմացավ, նյարդերը տեղի տվեցին... Անմիջապես հակադարձեց դեսպանին, լավ իմանալով, որ այդ բառերով զոհերին հարություն չի շնորհելու, բայց չէր կարող ականջ կախել դեսպանի բացահայտ ստախոսություններին, քանզի զգաց, որ եթե դահիճը տառապանքներ է պատճառում զոհին, ապա ոճրագործությունը թաքցնողներն ու խեղաթյուրողները նույնպիսի տառապանքներ են պատճառում արդարություն պահանջող ապրողներին: Եվ բառերը բերանից դուրս թռան, չնայած մի ձայն կողքից ասում էր. «Հիշիր, որ Ռուբենի կյանքը մազից է կախված, հիշիր, որ հիմա ամեն ինչ պիտի անես, որպեսզի անվնաս վերադառնա...»:

Այսպիսով, հույսի մի ակունք էլ ցամաքեց, և գուցե վերջինը: Ի՞նչ մնաց հիմա, ի՞նչ կարող է անել: Հայրը գոնե մի բան ձեռնարկե՞լ է, գրե՞լ է իր ընկերներին... Իսկ Յոհա՞նը... Նույնիսկ մոռացել էր նրա գոյության մասին, նրան գտնելն անգամ անկարելի էր, գտնելու դեպքում էլ՝ սպասելիքները չնչին: Ուրեմն, վե՞րջ: Թերևս, եթե չհաշվենք հրաշքը, ինչին նա հավատում էր անվերծանելի մի համոզվածությամբ, ճիշտ այնպես, ինչպես իրենց սիրուն, որը պիտի նրանց պահպաներ անողոք ժամանակի բոլոր հարվածներից:

* * *

Զանգեզուրի եկեղեցին մենավոր կանգնած էր հայկական թաղի կենտրոնում: Լքյալ տներից առայժմ մի քանիսն էին բնակված թուրքերով: Մյուսները մնում էին թալանված ու դատարկ: Հայկական թաղն այստեղ չհրդեհվեց: Սակայն չէին շտապում հաստատվել գյավուրների մաքուր և քարաշեն կառույցներում: Եկեղեցին էլ այս ուրվական թաղի մեջ մնացել էր կատարելապես անվնաս, անգամ դուռը չէին խորտակել և ոչինչ չէին պղծել: Միայն մի քանի թուրք լամուկներ էին պտտվում շուրջը և հետաքրքրված նայում առավոտյան ծեսին հավաքվող աքսորական հայերին:

Ահավոր մի երկյուղածությամբ էին մոտենում հայերն այս համեստ շինությանը: Ասես Հռոմի առաջին քրիստոնյաները լինեին, որ թաքուն եկել էին իրենց հավատակիցներին հաղորդակցվելու: Այդ յոթանասուն հոգու մեջ կային մարդիկ, որ ամբողջ կյանքում ջերմեռանդ քրիստոնյայի պես կանոնավոր հաճախել էին եկեղեցի, որոնց հոգիները ձևավորվել էին հավատի գրկում, կային մարդիկ, որոնց համար կրոնական ծեսերն արմատացած սովորույթ էին դարձել, անխախտ ավանդություն՝ անում էին այն, ինչ ստացել էին նախնիներից, և այդպես անփոփոխ պիտի ժառանգեին եկող սերունդներին, վերջապես մտավորա-

կաններ կային, որոնց համար կրոնը դիտակցված, տրամաբանական մի երևույթ էր, ազգային ինքնության կարևոր մասը, որի հանդեպ ավելի բանական, քան զգացական վերաբերմունք ունեին (չնայած նրանցից մի քանիսը համոզված աթեիստներ էին): Սակայն այսօր բոլորը գալիս էին միևնույն զգացումով համակված՝ ոչ՝ միայն ուժ ստանալու հավատից, այլև պաշտպանելու հավատն իրենց ներկայությամբ: Գալիս էին արդեն հոգեբանորեն նախապատրաստված: Ռուբենի զրույցը Վարուժանի և Հովհան Կարապետյանի հետ, այնուամենայնիվ, տարածվել էր աքսորականների մեջ: Նրանք վրդովված էին և խնդրում էին, որ հոգևորականները մեկ առ մեկ խոստովանեցնեն բոլորին և հետ պահեն մահմեդական դառնալու ցանկությունից:

Գործը դրան չհասավ. ուշ երեկոյան հայր սուրբը Ռուբենի դուռը թակեց և շշուկով ասաց, որ այդ երկուսի հետ խոսել է, որ նրանք մեղա են եկել: «Հայր սուրբ, երկու մարդ փրկեցիր այսօր ստույգ մահից»: «Ձեր օգնությամբ, դոկտոր»: «Ոչ, ոչ, ես չէի կարողանա ճիշտ բառեր գտնել, կսկսեի վիճել, կռվել և գուցե գործը վերջնականապես փչացնեի»: Հետո, ուրախությունից փայլող աչքերով հարցրեց. «Հայր սուրբ, ձեր քունը տանո՞ւմ է... Այսինքն, ներողամիտ եղեք, հարցս անպատշաճ էր, ավելի ճիշտ մի կես ժամ ունե՞ք, կուզեի ձեզ հետ մի քիչ զրուցել, ձեր ուրախ լուրն իսպառ ցրեց քնելու ցանկությունս»:

Քայլեցին դեպի պարտեզի խորքը և տեղավորվեցին թթենիների տակ դրված նստարանին: Հոյակապ երեկո էր, շոգ օրվան հաջորդող զով քամին ավելի հաճելի էր դարձրել ծղրիդների երգն ու առվի խոխոջը: «Դոկտոր, մի հարց պիտի տամ... Գուցե նույնիսկ հարց չէ, այլ զարմանք... Խնդրում եմ ճիշտ հասկանաք»: «Խնդրեմ, հայր սուրբ»: «Ես զարմացած ու հիացած եմ, թե ինչպիսի՜ եռանդով, ինչպիսի՜ համոզվածությամբ և նախանձախնդրությամբ եք պաշտպանում մեր հավատը: Անշուշտ, հասկանում եմ, ձեզ համար սա միայն կրոնական խնդիր չէ, բայց մեղքս ինչ թաքցնեմ, չէի կարծում, թե այդքան համոզված կլինեք»: «Ինչո՞ւ, հայր սուրբ, ինչո՞վ եմ առիթ տվել...»: «Ոչ մի առիթ չեք տվել, դոկտոր, պարզապես հիմա Եվրոպայում ուսանած բժիշկներից շատերը վարակված են սոցիալիստական, մարքսիստական, ես կասեի՝ նույնիսկ տասնութերորդ դարի հակակղերական դաղափարախոսությամբ»: «Եվ դուք նման բաներ եք տեսե՞լ իմ գործերում»: «Հիշում եմ՝ ձեր ''Կարմիր գրքում'' խենթացած երիտասարդն իր քահանա հոր դիակն է գցում Սիհուն գետը, մեկ այլ տեղ Աստծո մահն եք ազդարարում, կարմիր դրոշակ փառաբանում, ընդվզումի կոչեր անում... Մի խոսքով, նման ուրիշ տողեր, որոնք հիմա լավ չեմ հիշում...»: «Իրավացի եք, հայր սուրբ, այդպիսի տողեր ունեմ գրած, սակայն պետք չէ դրանք ուղղակի հասկանալ, պետք է խորքը թափանցել: Այո, ես դեմ եմ այն կղերականությանը, որ դարեր շարունակ հնազանդություն քարոզեց, երբ ասում եմ, որ Աստվածն է մեռել, ոչ թե անաստվածություն եմ քարոզում, այլ տագնապ հնչեցնում, որ անաստված ժամանակներ են եկել, ես կարմիր դրոշակն եմ փառաբանում որպես մարդկային արդարության և հավասարության խորհրդանիշ»: «Ուրեմն, գտնում եք, որ մարդկությունն իսպառ կորցրե՞լ է Աստծուն»: «Այո, կորուստը կրկնակի է. մարդկությունն Աստծուն կորցնելու վրա է, իսկ Աստված

կորցնում է մարդուն...»: «Ձե՛մ հավատում ձեզ... Դուք մի հոդված ունեիք, կարծեմ "Հրաշալի բժշկություն" վերնագրով, այնտեղ մարմնի հիվանդությունները բուժելու համար հույսը փաստորեն դնում էիք ոչ այնքան գիտության, որքան գերբնականի, խորհրդավորի, աստվածային կամքի վրա»: «Այո, որպես բժիշկ ես դտնում եմ, որ կա մի սահման, որտեղ վերջանում է գիտությունը և սկսվում գերբնականը, անբացատրելին... Համաձայն եմ, դա հենց Աստծո գոյության հաստատումն է: Եվ հետո, հայր սուրբ, մենք բոլորս մահկանացուներ ենք, և բաներ կան, որ տարիքն առնելու հետ ենք հասկանում»: «Ի՞նչը նկատի ունեք»: «Թերևս այն, որ մեր բիրտ ժամանակները, բարքերի ապականումը, վերջապես թուրքի վայրագությունը անաստվածության ամենահրեշավոր դրսևորումներն են, և դրանց պիտի դիմադրենք Աստծո գաղափարն անխախտ պահելով: Այսինքն՝ բավական չէ միայն մեր անձը փրկել, պիտի մտածենք նաև ընդհանուրի մասին»: «Ուրեմն, ընդունում եք, դոկտոր, որ մարդն առանց կրոնի չի կարող գոյություն ունենալ»: «Հայր սուրբ, մեր պարագան հիմա շատ որոշակի է. պե՞տք է արդյոք, որ մարմինդ փրկելու համար հավատարիմ մնաս քո կրոնին... Ինձ համար սա միայն հավատքի հարց չէ, այլև ազատության»: «Իսկ մի՞թե դա տարբեր է»: «Տարբեր է այնքանով, որ մեզ պարտադրվող դավանափոխությունը մեր դեմ կիրառվող ընդարձակ բռնության մի դրվագն է լոկ, եթե իսլամ ընդունելով մեր կյանքը փրկենք, բռնությունն իր ամբողջության մեջ չի վերանա, մենք դարձյալ կմնանք նրա զոհերը, բայց ավելի անարդ, քան այն թշվառները, որ մորթվեցին գաղթի ճանապարհներին»:

Ամառային գիշերվա անդորրի մեջ լուռ նստել էին և չէին նկատում բոպեների վազքը: Կարծես ամեն ինչ ասվեց և ժամանակն էր հրաժեշտ տալու: Սակայն լռությունն էլ նույնքան խորհուրդ ուներ, որքան նրանց անսպասելի հայտնությունները: «Ասացեք, դոկտոր, - երկարատև դադարից հետո խոսեց վարդապետը: - Դուք հավատո՞ւմ եք մեր ապագային... Հուսամ հասկանում եք, թե ինչու այդ հարցը տվեցի: Այս ամենից հետո, ինչ կատարվեց մեզ հետ, պահը են լինում, երբ սևամաղձ մի հուսահատություն է պատում ինձ, մեղա՛, մեղա՛, իրավունք չունեմ, անշուշտ, բայց վերջապես ես էլ մահկանացու եմ, հայ մարդ եմ, դյուրին չէ այս հարվածներին դիմանալ...»: «Մեղավոր չենք, հայր սուրբ, ես էլ արդեն քանի ամիս է նույն վիճակում եմ, երբեմն ինձ թվում է, թե ամեն ինչ վերջացավ... Եվ իսկապես ինչե՛ր կորցրինք, ինչպիսի՛ մարդիկ, ինչպիսի՛ երիտասարդություն, մի ամբողջ ժողովուրդ... Նույնիսկ վախենում եմ մոտավոր հաշվարկ անել...»: «Իսկապես, դոկտոր, ես սոսկումով հարց եմ տալիս՝ արդյոք հայ մնա՞ց Օսմանյան կայսրության մեջ: Ո՞ւմ է պետք հովիվը, որը հոտ չունի, ո՞ւմ է պետք մտավորականը, որը ժողովուրդ չունի...»: «Նույն հարցը ես եմ տալիս և նույն սոսկումն ապրում, սակայն ստույգ գիտեմ, որ բոլորը դյուրին զոհ չդարձան, դիմադրողներ եղան, որոնք ոչ միայն փրկվեցին, այլև սոսկումի մատնեցին թուրքերին...»: «Արդարև, դոկտոր, ես էլ եմ լսել, բայց կոտորվածներն անհամեմատ ավելին են»: «Ավա՛ղ, այդպես է, բայց շատ ավելի քիչ կլինեին, եթե բոլորս դիմադրեինք, եթե ավելի շուտ սկսեինք մտածել արժանապատիվ փրկության մասին... Առայժմ փրկվեցին նրանք, ովքեր դիմադրեցին»:

«Նրանք են մեր հույսը»: «Սակայն, հայր սուրբ, եթե նույնիսկ այս մի բուռ հայերս մնացած լինեինք, ապա ներկայիս հուսահատության, այս փակուղու մեջ, այսքան կորուստներից հետո, ես պիտի դարձյալ հավատայի մեր ապագային... Այո, դժվար է լինելու, սոսկալի ծանր, բայց պիտի գա այդ ապագան, մե՛ր ապագան»: «Դուք որ նախևառաջ բանաստեղծ եք, զգայուն հոգու տեր, որտեղի՞ց եք կարողանում այդքան լավատեսություն գտնել, ինչպե՞ս եք կարողանում այդպես առողջ ու սթափ տրամաբանել»: «Հայր սուրբ, այդ դուք պիտի օգնեք ինձ հասկանալու, - պատասխանեց Ռուբենը: - Քանզի սա ավելի շատ հավատ է, քան տրամաբանություն, ավելի շատ ներքին համոզվածություն, քան բանական վճիռ»: «Թերևս և՛ մեկը, և՛ մյուսը»: «Թերևս»: «Դոկտոր, մի բան պիտի խնդրեմ. վաղն արարողությունից հետո մտադիր էի հոգեշահ մի քարոզով դիմել "վերջին հայերին", բայց հիմա լսելով ձեզ, համոզվեցի, որ ձեր խոսքն ավելի վարակիչ ու ավելի համոզիչ կլինի: Դուք այստեղ, մի քանի րոպեում, այնպիսի՛ լավատեսությամբ համակեցիք ինձ, որ կարող եմ հիմա բոլոր արհավիրքներին դիմադրել: Պատկերացրեք, թե ինչպիսի փրկություն կլինի ձեր խոսքն այս տառապած հոգիների համար... Դա պիտի անսովոր մի արարողություն լինի»:

Արարողությունն իսկապես անսովոր եղավ: Կարճեցված ծեսից հետո վարդապետը դիմեց հավաքվածներին: Մթնոլորտն արդեն էլեկտրականացած էր և քարոզչի յուրաքանչյուր խոսքն անդրադարձ էր գտնում խռովյալ հոգիներում: Նա ասաց, որ դաժան ճակատագիրը ևս մեկ անգամ փորձության առջև է կանգնեցնում. թե որքանով ենք հավատարիմ նախնիներից ժառանգություն ստացած մեր հավատին: Այս պայքարը ծանոթ է մեզ վաղուց, և ամեն անգամ մեր պատասխանը եղել է նույնը. մեր սուրբ հավատը մեզ համար վեր է ամեն ինչից, հրաժարվել նրանից, նշանակում է կորցնել ամեն ինչ... «Հիշեցեք ոսկյանների օրինակը, - ասաց վարդապետը, - գայանյան կույսերին, վարդանանց... Նրանք բոլորն առանց վարանելու գերադասեցին մահ իմացյալը...»: Ուրիշ օրինակներ էլ բերեց հայոց պատմությունից, խոսեց հատկապես մեր ցեղին հատուկ ոգու ամրության մասին և վերջացրեց համոզվածություն հայտնելով, որ այս փորձությանն էլ կկարողանանք դիմագրավել:

Վարդապետը խոսեց որպես հոգևորական: Գուցե ուրիշ կերպ չէր կարող: Ներկաներից մի քանիսի այտերն ի վար արցունքներ էին գլորվում: Հոգևորականի խոսքերն, այսպես թե այնպես, հիշեցրին գեհենի սարսափները, կրոնը, որն իր բազմաչարչար նահատակներով ավելի շատ մահվան գաղափարն է վկայակոչում, քան կյանքի: Վարդապետի քարոզը հասել էր նրանց հոգու խորքերը ոչ այնքան բուն ասելիքի, առանձին բառերի որոշակի իմաստով, որքան եկեղեցու, խորանի տեսքով, սքեմ հագած հոգևորականի ներկայությամբ, որը եթե անգամ լուռ կանգներ նրանց առջև այդ հանդիսավոր կիսախավարի մեջ, ապա գուցե դարձյալ միևնույն սրբազան սարսուռն ու խորհրդավոր պատկառանքն առաջացներ: Բավակա՞ն էր արդյոք այդքանը, որպեսզի կարողանային գլուխը բարձր դիմագրավել մոտալուտ արհավիրքներին, չէ՞ որ նրանք հիմա կանգնել էին գլխիկոր, լուռ, ասես դատապարտվածներ լինեին, ասես արդեն հաշտվել էին ամեն ինչի հետ:

...Աներևույթ մի ձեռք նրան ստիպեց բարձրանալ բեմ.

- Եղբայրներ, մեկ ամսից ավելի է, ինչ այստեղ եմ և գրեթե ամեն օր նույն հարցն եմ լսում. ի՞նչ է լինելու մեզ հետ, հայ ազգի հետ, Հայաստանի հետ... Իրավացի եք, որ այդպիսի հարց եք տալիս, քանզի երբեք մեր գոյությունն այսպիսի արյունոտ հարցականի տակ չի եղել և երբեք այսպես զրկված չենք եղել դիմադրելու հնարավորությունից, թվում է, թե լիովին հանձնված ենք բախտի քմահաճույքին...

Դուք հարցնում եք, թե ինչ է լինելու Հայաստանի ապագան, այդ հարցը տալիս եմ նաև ես, և տեսնում, որ այդ ապագան կախված է ինձնից, այստեղ կանգնած յուրաքանչյուր հայից... Այդ ապագան գոյություն կունենա այնքանով, որքանով մենք ճիշտ վճիռ կընդունենք: Հիմա դուք կասեք, թե ինչպե՞ս պիտի կարողանամ ես, չնչին անհատս ապագա կերտել իմ ազգի համար: Հավատացեք, կարող եմ, և դուք էլ կարող եք, եթե «ո՛չ» ասենք թուրքին... Դարեր շարունակ, կաթիլ առ կաթիլ, թուրքը խլել է մեզնից մեր բոլոր իրավունքները, և մենք լուռ հանդուրժել ենք՝ մտածելով, որ կարևորն ապրելն է, մեր գոյությունը պահպանելը: Հիմա թուրքն արդեն մեր գոյությունն է խլում մեզնից, այն ողորմելի, ստրկական գոյությունը, որը փորձել էինք պահպանել անթիվ նվաստացումների գնով... Դարեր շարունակ, կաթիլ առ կաթիլ, կորցրել ենք մեր ոգին, իսկ հիմա կորցնելու ենք նաև մարմինը... Դարեր շարունակ մտածել ենք միայն ապրելու, գոյատևելու մասին, ոչինչ, որ թուրքը մեզ ստորացնում է ամեն օր, ոչինչ, որ բռնաբարում է մեր բոլոր իրավունքները, ոչինչ, որ կողոպտում է մեզ, ոչինչ, որ ամենահետին ռայան ենք, ոչի՛նչ, ոչի՛նչ, ոչի՛նչ... Միայն թե ապրենք... Թեկուզ վիրը ծուռ, բայց ապրենք, շարունակենք գոյություն քարշ տալ... Սակայն թուրքը դարձյալ դժգոհ է, թուրքն առևտուր է անում. ուզո՞ւմ եք պահպանել այդ ստրկացված մարմինը, ուրեմն վերջին զիջումը կատարեք՝ ընդունեք մեր հավատը:

Մենք հարցնում ենք, թե ի՞նչ է լինելու Հայաստանի հետ... Հայաստանը ապրելու է, մենք այս վերքերն էլ կբուժենք, իսկ թուրքը պիտի պատասխան տա իր ոճիրների համար, վաղ թե ուշ, ես համոզված եմ... Հայաստանը կհաղթի ու կապրի այն հերոսների շնորհիվ, ովքեր դիմադրեցին թուրքին. Հայաստանը կապրի նրանց շնորհիվ, ովքեր կարողացան առանց ստորանալու փրկել իրենց մարմինն ու հոգին և վերջապես Հայաստանը կապրի նաև, եթե մերժենք թուրքի անարգ առաջարկները... Մեր մաքուր հոգիների հիշատակն ավելի ամուր հենարան կլինի մեր երկրի համար, քան մեր պղծված և իսլամացած մարմինները...

Խոսելու հետ մեկ առ մեկ նայում էր ներկաների դեմքներին, նրանց աչքերի մեջ... Երբ ավարտելուց հետո իջավ ու միացավ բոլորին, հիշեց, որ որոշել էր մինչև արարողությունը խոսել Հակոբիկի հետ: Հայացքով փնտրեց ու չգտավ: Հարցրեց մի քանիսին. նրան չէին տեսել երեկվանից ի վեր:

* * *

Ամենից շատ անհանգիստ էր նրա համար: Այդ անփորձ և զգայուն պատանին կարող էր կոտրվել մահվան սարսափի առջև: Որոշեց առանց հապաղե-

լու գնալ-փնտրել նրան: Հայկական թաղից իջավ գետեզերք և հեռվից տեսավ՝ Հաջի բաբայի սրճարանից քիչ հեռու, բարդիների տակ նստած: Պատանին նկատեց իր մոտենալը, բայց ցուցադրաբար հայացքը շրջեց:

- Հակոբիկ, - կանչեց հեռվից:

Ոչ մի պատասխան: Անգամ գլուխը չդարձրեց:

- Հակոբիկ, խոսելիք ունեմ հետդ:

Արդեն երկու քայլի վրա էր նրանից:

- Զմոտենաք ինձ, գիտեմ, թե ինչ պիտի ասեք:

Նրա դեմքը սոսկալի է: Աչքերի տակն՝ ուռած, ճակատին կնճիռներ էին հայտնվել, բերանը պրկված էր, ասես պատրաստ հենց հիմա սոսկալի բաներ ասելու: Բայց ամենաահավորը աչքերի արտահայտությունն էր. խելահեղ մի բան կար, խենթության մատնիչ կանխանշաններ, վտանգավոր վճռականություն...

- Այդպես մի նայեք և չփորձեք գլխիս քարոզներ կարդալ, գիտեմ, գիտեմ, արդեն լսեցի...

- Ե՞րբ լսեցիր, Հակոբիկ, այդ ե՞րբ եմ քարոզներ կարդացել:

- Քիչ առաջ, եկեղեցիում:

- Դու այնտե՞ղ էիր, - զարմացավ Ռուբենը: - Հապա ինչո՞ւ քեզ չտեսա:

- Որովհետև ներս չմտա:

- Ինչո՞ւ, ո՞վ խանգարեց:

- Իմ խիղճը:

Ռուբենը ցնցվեց: Մոտեցավ, փորձեց գրկել պատանուն: Վերջինս ետ քաշվեց:

- Զդիպչե՛ք ինձ, ես արժանի չեմ:

- Լսիր, եղբայրս, Հակոբիկ, դա սքանչելի՜ է, որ քո խիղճը խոսում է, որ քեզ մեղավոր ես զգում, նշանակում է ազնվագույն հոգի ունես...

- Ոչ, իմ հոգին արդեն ապականված է:

- Այդպես մի ասա, Հակոբիկ, ես քեզ վաղուց գիտեմ և միշտ հիացել եմ քո ուշիմությամբ, քո ազնվությամբ... Դու ես մեր ապագան, և այդ ապագան հոյակապ է լինելու:

Պատանին լուռ էր: Նրանից օղու հոտ էր գալիս: Ըստ երևույթին երեկվանից էր խմում: Ամբողջ մարմնում նյարդային դող կար, աչքերի խելահեղ արտահայտությունն էլ մատնում էր, որ հաշիշ է ծխել:

Ուսերից բռնեց և աչքերի մեջ նայելով հարցրեց.

- Ինչո՞ւ ես ասում, թե հոգիդ ապականված է... Ինչո՞ւ չմտար եկեղեցի, ի՞նչ է պատահել, ասա տեսնեմ... Արդե՞ն...

- Դեռ ոչ, - գլուխը կախելով պատասխանեց Հակոբիկը:

- Ուրեմն, ի՞նչ կարիք կա խուսափելու մեզնից՝ քո հավատակիցներից:

- Վաղն ինձ պիտի թլպատեն:

- Վաղը, բայց ոչ հիմա, - գոռաց Ռուբենը և օղու շիշը ձեռքից խլելով շպրտեց գետը:

- Վաղը, թե հիմա, միևնույն է, - դառը ժպիտով ասաց Հակոբիկը:

- Ոչ, միևնույնը չէ, քո հոգին հիմա տագնապների մեջ է, անդունդի եզրին ես, բայց միջոց կա ետ քաշվելու, փրկվելու, ահա, բռնիր իմ ձեռքը, հետևիր ինձ և դու կփրկվես:

Հակոբիկը խելագար մի քրքիջ արձակեց.

- Բանաստե՛ղծ, կղերականի նման եք խոսում, մնում է՝ սքեմ հագնեք:

- Եթե պետք է կհագնեմ, միայն կարողանամ քեզ ետ պահել:

- Արդեն ուշ է, սիրելի բանաստեղծ, շա՜տ ուշ... «Վարդե՛րը մեռան, վարդե՛րը մեռան... Կ'երթամ տարաժամ, կ'երթամ ու կուլամ...»*:

- Երբեք ուշ չէ, քանի հոգիդ դեռ չես աղտոտել:

- Ուշ է, քանզի հոգիս արդեն հոժար է, մարմինս էլ պատրաստ...

Ռուբենը զայրացած բռնեց նրա թևը.

- Ես քեզ չեմ թողնի որևէ տեղ գնաս, կմնաս կողքիս այնքան, որքան պետք կլինի, որ այդ դավաճան քամիները գլխիցդ դուրս գան:

Հակոբիկը կտրուկ շարժումով թևն ազատեց, երկու քայլ հեռացավ և ատելավառ հայացքով նայեց Ռուբենին:

- Սրբոց դասում եք ուզում գրանցվե՞լ, տիար, նահատակաց անթիվ ու անհամար շարքին եք ուզում ավելացնե՞լ ձեր անունը, քերթողի դափնիներն ուզում եք արյունով ոռոգե՞լ... Օն, անդր**, բանաստեղծ, սակայն ես չեմ ուզում իմ սուղ արյունը հայոց արյան գետերին ավելացնել... Ես ապրել եմ ուզում, բանաստեղծ...

- Հակոբիկ, սիրելիս, դու չես կարողանա այդպես ապրել, և դու գիտես, որ ես ճիշտ եմ, թե ոչ՝ այդպես դառնացած չէիր խոսի, դու հրաշալի գիտես, որ մահ ես ընտրում, որպեսզի կյանքդ փրկես, սակայն քո սիրտը քեզնից ավելի ազնիվ է, և նա մատնում է քո ահավոր տագնապը, օգնում, որպեսզի ետ կանգնես սոսկալի վճռից:

- Լսեք, սիրելի բանաստեղծ, ես չեմ ուզում Զանգեզրի հայերի ճակատագիրը կիսել... Պարզամիտ չինականները կարծում էին մեծ հերոսություն են անում, չգիտեին, որ նույն օրը, մի քանի ժամ հետո էլ նահատակ են լինելու:

- Գիտեին, Հակոբիկ, գիտեին, այդ բարի և ազնիվ չինականները, և դա է նրանց մեծությունը:

- Ոչ, չգիտեին, նրանք համոզված էին, որ իրենց ոսկիներով պիտի փրկվեն, և դուք էլ կուզեիք փրկվել, բոլորդ կուզեիք, սակայն ձեզ չեն առաջարկել, եթե առաջարկեին, առանց վարանելու Մուհամմեդի հավատին կփարեիք:

- Դու գիտես, որ սխալ ես, Հակոբիկ, ինքդ քեզ խաբում ես, ուրիշներին մեղադրում, հոգուդ վրա մեղք վերցնում, որպեսզի հեշտացնես քո վճիռը, ուրեմն, գիտես, հասկանում ես, որ աններելի սխալ ես գործում: Արի ինձ հետ, այսօր պիտի իմ կողքից չհեռանաս... Այսօր, վաղը, մնացած բոլոր օրերը:

Պատանին կտրուկ շրջվեց և քայլեց փողոցն ի վեր:

- Հակոբի՛կ:

---

* Ռ. Սևակի բանաստեղծությունն է «Կարմիր գիրքը» ժողովածուից:

** Դե, առա՛ջ (գրաբար):

Պատասխան չկար: Երկրորդ անգամ կանչեց, դարձյալ ապարդյուն: Որոշեց վազել ետևից և արդեն առաջին քայլն էր գցում, երբ նա դարձավ ու ասաց.

- Ես այլևս Հակոբիկ չեմ, այլ Ահմեդ, Իսմայիլ, Ալի...

Ռուբենն արդեն վազում էր ետևից:

- Սպասե՛ք, չմոտենաք... Մի հարց ունեմ ձեզ տալու. երբ անունս դառնա Ալի, Իսմայիլ կամ Իբրահիմ, ինչպե՞ս պիտի կարողանամ կարդալ ձեր բանաստեղծությունները, որ շատ եմ սիրում...

Ասաց և մինչև Ռուբենն ուշքի կգար, անհետացավ ծուռումուռ փողոցներում:

* * *

Վերջապե՛ս, վերջապես մի մարդկային պատասխան ստացավ: Այս քարուքանդվող աշխարհում գոնե մի բան մնացել է անխաթար՝ տղամարդկային ազնիվ, անշահախնդիր ընկերությունը: Ռայնհարդտի նամակը հակիրճ էր ու գործնական: Երևում էր, որ այդ մարդն ուզում է օգնել և անում է իր կարելին.

«Նամակդ ուշացումով կարդացի: Երկար ժամանակ բացակա էի: Երեկ վերադարձա և արդեն քայլեր եմ ձեռնարկել փեսայիդ փրկելու համար.

1. Խոսել եմ այստեղի հոսպիտալի տնօրենի հետ, որպեսզի հնարավորին չափ շուտ փեսայիդ կանչեն Էրֆուրտ:

2. Հեռագրել եմ Բեռլին. նախարարություն և գլխավոր շտաբ, գեներալներ V.-ի և F.-ին: Անկարելի է, որ նրանք մերժեն:

3. Անձամբ դիմել եմ ֆոն դեր Գոլցին և ֆոն Սանդերսին: Նրանք էլ չեն կարող ինձ մերժել:

Անհավատալի բաներ եմ լսում Թուրքիայի մասին: Թուրքերն ամեն ինչով դեմ են գերմանական ոգուն, ճակատագրական սխալ էր դրանց հետ դաշնակցելը, նրանք մեր վրա շատ թանկ են նստում՝ բոլոր առումներով»:

Ստորագրությունից հետո մի հետգրություն կար, որ արտասվելու չափ հուզիչ էր. «Հիշո՞ւմ ես այն օրը, երբ առաջին նամակն էր եկել Լոզանից, երբ ինձ մոտ նստած կոնյակ էինք խմում: Ինչպե՞ս էինք մտահոգված երկուսս, ո՞վ կմտածեր, թե ինչեր ենք տեսնելու այս աշխարհի երեսին... Եվ դեռ ինչե՛ր են սպասվում»:

* * *

Զանգեզուրի բոլոր հայերը չաքսորվեցին: Մեկը կար, որ մնաց իր տանը, և Թուրքերը չստիպեցին, որ միանա տեղահանվողներին: Այդ միակ բախտավորը տեղի քահանա Տեր Սիմոնն էր, որ գամված էր անկողնին և շարժվել չէր կարող: Նրա երեք զավակներն՝ իրենց ընտանիքներով, աքսորվել էին Գալեջիկի հայերի հետ: Հյուր էին գնացել իրենց ազգականներին և հայտնվել տեղահանվողների քարավանի մեջ: Մի քանի օր հետո լուր հասավ, որ երեքն էլ իրենց ընտանիքներով կոտորվել են:

Տեր Սիմոնն այդ օրն իսկ անկողին ընկավ, և լավ է կինը կողքին էր. կինամեր նրան, սակայն կնոջն ստիպեցին միանալ տեղահանվողներին, իսկ անդամալույծ քահանային թողեցին անկողնում: Գթասրտությունից չէր, որ անպաշտպան ծերունուն ուղղակի անկողնում չխեղդեցին, այլ դպուշավորությունից և գուցե հայ «քեշիշների» հանդեպ ունեցած անահավատ երկյուղից:

Եվ այդպես մենակ հանդչում էր Զանգըրիի վերջին հայը, որը դեպքերի խորհրդավոր բերումով հոգևորական էր, հովիվ, որին բռնությամբ զրկել էին իր հոտից: Աքսորյալ հայերը փութացին քահանային խնամել, մի երկուսը նույնիսկ տեղափոխվեցին նրա տուն, որպեսզի կիշեր ու զոր կողքին լինեն: Ծերուկի օրերը, սակայն, հաշվված էին: Եթե առաջին հարվածը նրան անկողին էր գցել, ապա երկրորդից՝ Զանգըրիի հայերի աքսորից հետո նրա հետ տարօրինակ բաներ սկսեցին կատարվել: Նա, որ իսպառ կորցրել էր խոսելու և շարժվելու կարողությունը, անսպասելի ինչ-որ բառեր էր արտասանում, մարմինը պրկվում էր, ասես ուզում էր շարժվել, բայց անզորությունից սկսում էր լալ և նրա ակոսված դեմքով արցունքներ էին հոսում:

Տեր Սիմոնը հայ բժիշկների հատուկ հոդածության առարկան դարձավ: Նրա կողքին շարունակ մեկը կար: Սակայն ծերուկին փրկելն անհնարին էր: Օգոստոսյան մի տոթ երեկո էր: Իր համեստ տան մեջ, իր հոգի վրա հոգին ավանդեց գաղաթիացի վերջին հայը:

Որոշեցին իր տան բակում թաղել: Սակայն յուրջ առարկություններ եղան, որ թուրքերն աչք ունեն այս տան վրա, վաղ թե ուշ տիրանալուց հետո կքանդեն նրա գերեզմանը և ոսկորները կշպրտեն մի կողմ: Ավելի խոհեմ կլիներ և ավելի տրամաբանական թաղել տեղի հայկական գերեզմանոցում, որը քաղաքից դուրս էր: Սակայն դա չէր միակ անպատեհությունը. հուղարկավորները պիտի անցնեին թուրքական թաղերի միջով: Մի հանդամանք, որն այս օրերին հղի էր տհաճ անակնկալներով, եթե չասենք վտանգներով:

Փոզոցի թուրք լակոտները հակահայ տրամադրությունների լավագույն արտահայտողն էին: Մինչև վերջերս աքսորականներին նայում էին հետաքրքրասեր, երբեմն նույնիսկ վախվորած հայացքով: Ճիշտ է, հայեր էին, դյավուրներ, բայցևայնպես Պոլսից եկած էֆենդիներ էին, բարձրակարգ բժիշկներ, փաստաբաններ, մեքուսներ, հարուստ վաճառականներ: Նրանցից նաև օգուտ կար, քանի՛ս-քանիսին բուժեցին, դրել-կարդալ սովորեցրին, դանդան օգտակար խորհուրդներ տվեցին:

Սակայն Ջեմալ Օղուզի գալով հակահայկական տրամադրություններ հայտնվեցին, որ գնալով սասակացան ու դարձան պարզապես անտանելի: Սկզբում կասկածոտ ու թշնամական հայացքներ էին, հետո մուլտոցներ ու քրթմնջոցներ լսվեցին, որ վերածվեցի՝ վիրավորական ու սպառնալից արտահայտությունների: Անլսվա մի լակոտ կարող էր հայհոյել պատկառելի պարոններին և մնալ անպատիժ, ավելին, արժանանալ իր տարեկիցների խրախուսական քրքիջներին:

...Աքսորական հայերից կազմված սգո թափորը ճամփա ընկավ գերեզմանոց: Հայկական թաղում հաստատված թուրքերն առանձնապես հետաքրքրու-

թյուն չցուցարերեցին: Կամուրջն անցան և հասան Հաջի բաբայի սրճարան, որտեղից, ոլորապտույտ փողոցներով, պիտի բարձրանային գերեզմանոց: Լուրն արդեն տարածվել էր տնից տուն: Լակոտների բազմությանն ավելացել էին ծնողները: Վիրավորական ու հեգնական արտահայտություններին չափ ու սահման չկար: Հայ քահանայի հուղարկավորությունը նրանց համար գռեհիկ զավեշտի նյութ էր: Փողոցից-փողոց կրկնվում էր միևնույն չարամաղթանքը. «Գնացեք բոլորդ ձեր գյուղում թաղվեք»: Անգամ մահվան հանդեպ պատկառանք չուներ այս ցեղը: Փողոցներից մեկում գզգղված մորուքով մի ծերունի կանգնեցրեց թափորը և արգելեց, որ իր տան առջևով անցնեն: Նա մահակն էր ճոճում սպառնալից և հայհոյանքներ տեղում: Ստիպված էին ուրիշ փողոց մտնելով երկարացնել ճամփան: Սակայն այստեղ մեկ այլ պատուհաս էր սպասվում: Ընդամենը մի քանի քայլ էին արել, երբ մի քար, սոսկալի չխկոցով, դիպավ դագաղին: Նման բան դեռ չէր եղել: Զանգեզրի թուրքերի հայատյացությունն առայժմ արտահայտվել էր հիշոցներով ու հայհոյանքներով: Եվ ճակատագրի դառը հեգնանքով ատելության առաջին քարը զարնվում էր Զանգեզրի վերջին հայի դագաղին:

- Շարունակեք երթը, - կարգադրեց Տիրան Քելեկյանը, որ բոլորի լուռ համաձայնությամբ հայկական փոքրիկ խմբի ավագն էր դարձել: - Եվ հատկապես մի շրջվեք, մի փորձեք քար նետողին փնտրել, դա նրանց ավելի կգրգռի: Մնանք անտարբեր և մեր երթը շարունակենք:

Առաջին քարին հաջորդեցին մյուսները: Հիշոցներ այլևս չէին լսվում: Միայն քարեր էին տեղում: Քսու խոսքերին հաջորդում էին քսու արարքները:

- Լավ է լակոտներ են գցողները, քարերը փոքր են, - նկատեց Վարուժանը: - Պատկերացրու մեր վիճակը, եթե մեծերը լինեին քար գցողները:

- Սրանց մեծերը քար չեն գցում, - պատասխանեց Ռուբենը: - Նրանք յաթաղան են գործածում:

- Ո՞ւր է, հայ մնա՞ց, որ գործածեն:

- Ուրիշին կկոտորեն, թուրքը միշտ ուրիշի արյան կարիքն ունի, այն օրը, երբ դադարի կոտորել՝ ուրիշ բան կդառնա, ուրիշ ազգ, վերջապես մարդ կդառնա, և այդ ժամանակ կգիտակցի, թե յոթ հարյուր տարի շարունակ ի՜նչ ավերներ է գործել, որքան արյուն է հեղել, կամաչի, որ ինքը թուրք է, կպահանջի, որ բառարաններից հանեն «թուրք» բառը, որ իրեն ուրիշ անունով կոչեն:

- Ռուբեն, մի՞թե հավատում ես, որ օրերից մի օր նման բան կկատարվի: Ես չեմ դարմանա, երբ ձկները մի օր սկսեն խոսել, բայց այս գաղանը երբեք մարդ չի դառնա:

- Անկեղծ ասած, ես էլ խիստ թերահավատ եմ, բայց տես, թե ինչեր են կատարվում, պետությունները, ժողովուրդները, մարդիկ ինչպես են գազանացել... Այսպես շարունակվել չի կարող, մարդկությունը պիտի խելքի գա...

Քարերը շարունակում էին տեղալ: Տիրան Քելեկյանի ձայնը հնչեց նորից.

- Գլուխներդ պաշտպանեք:

Լավ խորհուրդ էր, բայց ոչ դագաղակիրների համար:

Վարուժանը շարունակեց սկսված զրույցը.

- Եվ դու կարծում ես, որ խելքի եկող մարդկության հետ թուրքն էլ վերջապես պիտի մարդ դառնա՞:

- Դժվար հարց ես տալիս, բայց ես գիտեմ, որ այսպես շարունակվել չի կարող, աշխարհով մեկ արյուն է հոսում, այդ արյան համար պիտի պատասխան տրվի... Եթե ես ու դու, գոնե երկուսս, չենք հավատալու աստվածային արդարությանը, ապա ապրելն անիմաստ է:

Վերջապես դուրս եկան ատելության ու չարության տարածքներից և հանդիսավոր դանդաղությամբ մոտեցան Զանգեզրիի հայոց գերեզմանատանը, որ փռվել էր լեռան լանջին, անջրդի և քարքարոտ հողերի վրա: Այստեղ տապանաքարեր կային Հուստինիանոսի և Լևոն Ասորու ժամանակներից: Հազար հինգ հարյուր գուցեև ավելի տարիներ շարունակ հայերի մահվան փաստագրումը նրանց կյանքի և գործունեության ստույգ վկայությունն էր այս հողերի վրա: Պատվագրերով, խաչերով, հավերժության նշաններով ծածկված տապանաքարերին ավելանում էր մեկը, որն իր անշուքությամբ ու համեստությամբ պիտի փաստեր հայ կյանքի ու գործունեության ավարտն այս քաղաքում:

* * *

Առավոտ կանուխ դուռը թակեցին ճանկռելու պես: Բացեց և մի երեխա տեսավ չեմին՝ ձեռքին երկծալ մի թուղթ: «Դոկտոր էֆենդի, Ահմադը խնդրեց հանձնել ձեզ»: Նախորդ օրվա քարկոծումից հետո անսովոր էր տեսնել մի թուրք երեխա, որը կարող է լինել բարեկիրթ: Ավելին, երբ երեխային մի քանի մանրադրամ առաջարկեց, վերջինս հրաժարվեց վերցնել: Բայց զարմանալին միայն դա չէր. Ահմադը նրան դիմում էր հայերեն. «Մեծարգո Տիար, Պաշտելի Բանաստեղծ, Գիտեմ, որ ներում չկա այն ցավալի օրվա անարժան պահվածքիս համար, հուսամ գոնե կհասկանաք հոգուս անագորույն խռովքը, որ մթագնել էր իմ տկար բանականությունը և մղել զազրելի բաներ ասելուն... Մնաք բարով, սիրելի ուսուցիչներ, կամքս թույլ եղավ, սակայն հոգիս պահեցի անաղարտ, հուսամ Տերը կգնահատի երկնքում, բայց ներում կգտնի՞... Ձերդ՝ անարժան Հակոբոս»: Տակը թուրքերեն ավելացրած էր. «Ի գիտություն տեղական իշխանությունների, Ընդունածս վճռի համար խնդրում եմ ոչ մեկին չմեղադրել, միակ պատասխանատուն ես եմ, քանզի ես եմ մարմնիս տերը, Ահմադ»:

Ռուբենը, որ կարդում էր կիսաբաց դռան առջև, նետվեց փողոց, հուսալով, որ երեխան շատ հեռացած չի լինի: Եվ, իսկապես, թաղի իր հասակակիցների հետ կանգնած զրուցում էր:

- Այս նամակը քեզ ե՞րբ է տվել:

- Երեկ երեկոյան, դոկտոր էֆենդի, մեր տանը հյուր էր:

Արդեն երեք օր էր Զանգեզրիի թուրքերը հանդիսավորապես նշում էին Հակոբիկի թլպատումը: Գավառական թմբիրի, կեղտի ու սնահավատ ատելության մեջ թաղված քաղաքում կարևոր իրադարձություն էր տեղի ունեցել՝ դյավուրն ընդունել էր իրենց կրոնը: Նրանք շատ վիրավորված էին, որ իրենց հետ տարիներով ապրած հայերից ոչ մեկը չուզեց Մուհամմեդի ուղղափառ հավատն

ընդունել: «Ապուշ են, այդ դյավուրները, անարժան խոզեր, էսքան ապրեցին մեր հողի վրա, մեր հաց ու ջուրը վայելեցին, վերջը մեր հավատը վիրավորեցին... Թո՛ւ, խնզրներ*...»:

Հիմա հրաշալի առիթ էր ստեղծվել ռեվանշ վերցնելու: Հյուրասիրություններ էին անում, նորադարձին տնից-տուն տանում, յուղալի և ծանրամարս թուրքական կերակուրների հետ օղի խմում առատորեն, չնայած «միակ ուղղափառ հավատը» խստիվ արգելում էր ոգելից խմիչքը: Ցուցամոլություն կար այս ամենի մեջ, և սովորական իրադարձությունն անհամեմատ ավելի համեստ կնշվեր, եթե աքսորական «էֆենդի» հայեր չլինեին այստեղ:

Հակոբիկ-Ահմադին, որպես դավանափոխության պարգև, հայերի դատարկված տներից մեկն էին նվիրել և նշանել տեղի աղաներից մեկի աղջկա հետ: Շուտով պիտի հարսանիքը լիներ:

- Շտապենք այնտեղ, - ասաց Վարուժանը: - Հնարավոր է դեռ չի իրագործել իր սոսկալի մտադրությունը:

- Անշուշտ, պետք է շտապել, չնայած շատ հույս չունեմ, թե կփրկենք, - գլուխը տխրագին ճոճելով ասաց Ռուբենը:

- Սակայն բոլոր դեպքերում պիտի գնանք այնտեղ, - նկատեց Զարեվանդը:

- Կգնանք անպայման, բայց մինչ այդ պետք է խոսել Տիրան Քելեկյանի հետ:

Վերջինս խորհուրդ տվեց անպայման հայտնել իշխանություններին և ոստիկանի ուղեկցությամբ գնալ տղայի մոտ:

Տան տեղը ոչ ոք չգիտեր: Հարցուփորձ անելով վերջապես գտան: Երկհարկանի աղյուսաշեն մի տուն էր՝ ընդարձակ պարտեզով: Դարպասը փակ էր: Ստիպված եղան հարևանի պարտեզով մտնել: Տանը մոտենալուն պես մի աղիողորմ մլավոց հասավ նրանց ականջին: Ի տարբերություն դարպասի, տան դուռը բաց էր: Ոստիկանի առաջնորդությամբ մտան ներս և չվարած կանգնեցին: Ոչ ոք չկար:

- Հակոբիկ, - կանչեց հայերից մեկը:

Ի պատասխան կատվի մլավոց լսեցին: Բարձրացան վերև ու դեմ առան ննջարանի փակ դռանը: Փորձեցին բացել, բայց ապարդյուն: Ներսից փակված էր: Կատվի սաստիկ մլավոցին ավելացավ դռան ճանկռոցը:

- Հակոբիկ, - համենայն դեպս կանչեցին նորից:

Դուռը մի քանի անգամ ապարդյուն հրելուց հետո, ոստիկանը հրացանի խզակոթով զարկեց փականին և շրխկոցով բացեց: Կատուն դուրս ցատկեց և սրընթաց վազեց ներքև: Հակոբիկի բոբիկ ոտքերը երևացին, որ օդի մեջ թեթևակի երերում էին, հանց առաստաղից կախված լվացք: Ոտքերի տակ սեղան կար, կողքը՝ շրջված աթոռ:

Առաջինը ոստիկանը մտավ, ետևից՝ հայերը և թուրք հարևանները: Տեսարանն անմիջապես պարզվեց. պարանը կապել էր առաստաղի գերանից, օղակը գցել վիզը և ոտքով աթոռը հրել:

Թուրք ոստիկանն աթոռը դրեց սեղանին և, հարևանների օգնությամբ,

* Խոզեր (թուրք.):

դին իջեցնելով պառկեցրեց խառնշտկված մահճակալի վրա: Հայերը փորձեցին մոտենալ, բայց հանդիպեցին ոստիկանի չար հայացքին:

- Հեռացեք այստեղից, - հրամայեց նա կոպտորեն: - Այս մեռելը ձերը չի, գյավուրն ինչո՞ւ պիտի սգա մահմեդականի մահը:

* * *

Արաբաջիբաշի Իսմայիլը քաղաքի փաստացի տեր-տիրականն էր: Ոչ մի գայմագամ*, ոչ մի մյութեսարիֆ կամ վալի** չէր համարձակվի նրա դեմ որևէ քայլ ձեռնարկել: Լավագույն դեպքում պետության այդ ներկայացուցիչը կխայտառակվեր և ստիպված կլիներ հրաժարական տալ, իսկ վատագույն դեպքում՝ նրան կգտնեին իր անկողնում մորթված: Բոլորը կիմանային, թե դա ում ձեռքի գործն է, սակայն ոչ ոք չէր համարձակվի օրենքի անունից նրան պատասխանատվության կանչել: Զանղըրի եկող պետական քիչ թե շատ բարձր պաշտոնյան աշխատում էր նախևառաջ իր հարաբերությունները լավացնել Արաբաջիբաշիի հետ, առնվազն գոնե չեզոք մնալ և ոչ մի գործ չունենալ: Ցուրատեսակ լուռ համաձայնագիր էր կնքվում. պաշտոնյան աչք էր փակում նրա ավազակությունների վրա, վերջինս էլ աշխատում էր չվարկաբեկել տեղական իշխանությունների հեղինակությունը:

Դատելով մասնագիտությունը նշող ազգանունից, Արաբաջիբաշին կառքերի և սայլերի կիսապաշտոնական համքարության գլխավորն էր: Այսինքն՝ քիչ է ասել, թե գլխավորն էր: Զանղըրիում կամ մերձակայքում որևէ անիվ չէր կարող դառնալ առանց նրա գիտության և համաձայնության: Միայն այս գործը բավական էր, որպեսզի պատկառելի շահույթ ունենար: Սակայն գլխավոր սայլապանի օրինական պաշտոնը հրաշալի ծխածածկույթ էր նրա հիմնական գործունեության համար, որը լայն թափ առավ պատերազմի առաջին իսկ օրերից. դա ավազակությունն էր և հայերի ոչնչացումը: Նա «Թաշքիլասի մախսուսայի» պարագլուխներից մեկն էր և իր հրոսակախումբն ուներ, որի ուղղակի պարտականությունն էր բնակավայրերից հեռու, ճանապարհների վրա կոտորել տեղահանվող հայերին՝ անշուշտ, նրանց ունեցվածքի, կանանց ու երեխաների լիիրավ տերը դառնալու արտոնություններով: Սակայն միայն հայերով չէին բավարարվում. ժամանակ առ ժամանակ կողոպտում էին թուրքերին և նույնիսկ դաշնակից երկրների քաղաքացիներին: Նրա ավազակները հսկում էին Էնկյուրիից Կաստեմոնու ընկած ճանապարհները: Եվ աստված մի արասցե, որ այդ ավազակներից որևէ մեկի մտքով անցներ գողոնը թաքցնել: Արաբաջիբաշին անձամբ իր կեռ դաշույնով նրա վիզը կկտրեր:

Սակայն այս գազանը մի թուլություն ուներ՝ իր տասնութամյա աղջիկը՝ Այշեն, որի ներկայությամբ իսպառ անհետանում էին նրա քարանձավային ընազդները և անգութ ոճրագործը դառնում էր բամբակի պես փափուկ, աղջկա

* Շրջանի, կազայի կառավարիչ:
** Վիլայեթի նահանգապետ:

բոլոր քմայքները հանդուրժող, նույնիսկ խրախուսող գորովագութ մի հայր: Յոթ արու զավակ ուներ տարբեր մայրերից: Օրերով երեսները չէր տեսնում և չէր հետաքրքրվում նրանցով, բայց ամեն օր, որպես կանոն, տնից դուրս գալուց առաջ աղջկան պիտի տեսներ, գրկեր ու համբուրեր, չասած այն մասին, որ առիթը չէր փախցնում զանազան, երբեմն նույնիսկ շքեղ նվերներով նրան ուրախացնելու: Եվ եթե իսկապես ճիշտ է այն կարծիքը, թե աղջիկները մեծ մասամբ հորն են քաշում, ապա միայն ապշել կարելի էր, թե այդ կոշտուկոռ, այդ հրեշակերպ անձնավորությունից ինչպե՞ս կարող էր այդպիսի նրբին և կատարյալ էակ ծնվել: Այշեն արևելյան գեղեցկության տիպական մարմնավորումն էր: Կաթնաթույր դեմքին անմիջապես ուշադրություն էին գրավում տարօրինակ, բայց գեղեցիկ գծագրությամբ աչքերը, որոնց մանկական մրամտության տակից սկսում էր կանացի կանչող հետաքրքրությունը նկատվել: Մուդ շագանակագույն մազերը, որ առատորեն իջնում էին ուսերն ի վար, աղջկա նարդիսական հիացմունքի առարկան էին. սիրում էր նստել հայելու առջև, սանրել, հետո հյուսքեր անել, քանդել, նորից սանրել: Կառուցիկ և բարեձև մարմին ուներ, որ արդեն կլորություններ էր ձեռք բերում՝ խռովմունք պատճառելով աղջկան: Հայրը նայում էր նրան և հիացմունքով ասում. «Սուլթանի, փաշայի կին պիտի դառնաս, աղջիկս, Ալլահի պարգևն ես դու»: Զանազան չարխափաններ ու համայլներ էին կապում աղջկա ձեռքուոտքին, շորերի վրա կարում, ծալքի տակ թաքցնում, վզից կախում, որ չար աչքը չդիպչի: Կախարդական այդ միջոցները դուցե օգնում էին, եթե չհաշվենք հիվանդոտ նշադեղձերը, որ մանկությունից չարչարում էին աղջկան: Բավական էր մի բաժակ սառը ջուր խմեր, որպեսզի տաքությունն անմիջապես բարձրանար, իսկ կոկորդը՝ խեղդելու աստիճան ուռեր: Մինչև հիմա հեքիմական զանազան միջոցներով փորձել էին բուժել, բայց ապարդյուն: Հայ աքսորականների քարավանը երբ հայտնվեց Զանղըրիում, Արաբաջիբաշին առաջինը գնաց նրանց տեսնելու, հարցուփորձ անելու, թե բժիշկ չկա՞ նրանց մեջ: Հետո բոլոր բժիշկներին հավաքեց ու տարավ իր տուն: Նրա բախտից Զանղըրիում էր գտնվում Պոլսի լավագույն մասնագետներից մեկը՝ դոկտոր Դինանյանը: Հենց նա էլ հանձն առավ նշադեղձերը հեռացնել: Սակայն երկու պայման դրեց. աղջկա հայրը պիտի վճարեր վիրահատության համար, երկրորդ՝ չպիտի խառնվեր իր գործերին, իսկ հետագա յոթ օրվա ընթացքում պիտի խստորեն կատարվեին նրա հրահանգները: «Դոկտոր, մի մտածիր, քեզ լավ կվճարեմ, միայն թե աղջիկս ազատվի այս ցավից, բայց եթե նրա հետ մի վատ բան պատահի, ես կմորթեմ քեզ»:

Արաբաջիբաշին կատակ չէր անում: Աքսորյալ հայերը խորհուրդ էին տալիս հեռու մնալ այդ վիրահատությունից, սակայն փորձառու բժիշկը, ներողամիտ ժպիտը դեմքին, պատասխանում էր. «Պոլսեցիների կեսն իրենց նշադեղձերն ինձ մոտ են հեռացրել, և ոչ մի անգամ չեմ ձախողել, ինչո՞ւ պիտի հիմա չհաջողեմ»:

Վիրահատությունը հաջող անցավ, և մի տասն օր հետո աղջիկը կատարելապես ապաքինված էր: Արաբաջիբաշին հարգեց իր խոստումը՝ վճարեց պահանջված գումարը, չնայած հետն էլ մի քիչ դժգոհեց. «Դոկտոր, շա՛տ-շատ ես

ուղում»: «Եթե սրանից հետո աղջիկդ թեկուզ մեկ անգամ տաքություն ունենա, դրամդ կվերադարձնեմ»: Դոկտոր Դինանյանը չհասցրեց իր խոստումի հիմնավորվածությունն ապացուցել, քանզի իր նախկին հիվանդների շնորհիվ մեկ ամիս հետո վերադարձավ Պոլիս: Իսկ աղջիկը, որ վիրահատությունից առաջ շարունակ հիվանդ էր, այժմ վերջնականապես ազատվել էր այդ ցավից:

Բայց օգոստոսյան մի շոգ օր, բարձր տաքությամբ, անսպասելի անկողին ընկավ: Պատճառը կոկորդը չէր, սակայն Արաբաջիբաշին կատաղած «գյավուր դոկտորին» էր հայհոյում և սպառնում, որ կգնա Պոլիս և կխեղդի նրան: Իսկ մինչ այդ, պետք էր աղջկան փրկել: Եվ նա հիշեց համազգեստ հագած դոկտորին, որն այդ հրեշի մեջ, չգիտես ինչու, համակրանք և հավատ էր արթնացրել: Արդեն լսել էր նրա հրաշագործությունների մասին, և հատկապես ուրախացավ, իմանալով, որ անվճար է բուժում:

* * *

Նախ կոկորդը զննեց: Անհանգստացնող որևէ բան չտեսավ: Ընդամենը մի քանի ամիս առաջ տեղի ունեցած վիրահատության փոքրիկ սպիները նկատեց: Կեցցե՛ դոկտոր Դինանյանը, իսկապես ոսկի ձեռքեր ունի: Շտապեց հորը հանգստացնել.

- Աղջկադ տաքությունը կոկորդից չէ, այնտեղ ամեն ինչ կարգին է:

- Հա, աղջիկս էլ ասաց, որ կոկորդում ցավեր չունի: Նախկինում, երբ կոկորդն ուռչում էր, չէր կարողանում նույնիսկ թուքը կուլ տալ:

- Ուրեմն, դոկտոր Դինանյանին մի մեղադրեք, նա խղճով գործ է արել:

- Բայց նա էր բուժում աղջկաս, - խեղճացած պատասխանեց Արաբաջիբաշին:

Անկարելի էր հավատալ. ճամփաներին ահ ու սարսափ սփռող ավազակն է առջը:

- Հիմա եթե ես էլ բուժեմ, բայց մի երկու ամիս հետո նորից մրսի ու տաքություն ունենա, պիտի ինձ մեղադրե՞ս:

- Չէ, դոկտորս, աչքերս կուրանան, եթե այդպիսի բան ասեմ, միայն թե բուժեք աղջկաս, տեսեք, հազիվ է շնչում...

Աղջիկն իսկապես դժվարությամբ էր շնչում: Օգոստոսյան շոգ կեսօրին պառկած էր բրդե ծանր վերմակի տակ: Երեսը շառագունել էր, աչքերը կիսափակ էին, ներկաների վրա ոչ մի ուշադրություն չէր դարձնում, հնարավոր է նույնիսկ չէր նկատում նրանց: Գրեթե անգիտակից վիճակում էր: Ջերմաչափը դրեց և մինչև ժամանակը կլրանար, զարկերակը չափեց: 110, ինչը զարմանալի չէր: Ջերմաչափն էլ նրա ենթադրությունները հաստատեց. 39,9: Այո, ցրտառություն է, բայց ոչ սովորական: Ուշադրությունը գրավեց ծանր շնչառության միջով լսվող խզխզոցը:

- Դոկտոր, ի՞նչ է եղել աղջկաս, շատ ծանր է՞, - գրեթե լացակումած հարցրեց Արաբաջիբաշին:

- Այո, ծանր է, բայց նորից եմ ասում. մեղավորը ոչ թե դոկտոր Դինանյանն է, այլ դուք:

- Մենք ի՞նչ ենք արել որ:

- Մրսացրել եք, ուշադիր չեք եղել, - պատասխանեց Ռուբենը:

- Այս շոգին ի՞նչ մրսել, դոկտորս:

- Ամենավտանգավոր մրսածությունը շոգին է լինում, մանավանդ այսպիսի փխրուն աղջկա համար: Երեկ որտե՞ղ էիք, սառը ջուր շատ է խմե՞լ:

- Գնացել էինք լեռան աղբյուրը, քեֆ անելու: Այնտեղ միշտ զով է: Երեխաները վազվզում էին, քրտնել էին, երևի պաղ ջուր է խմել... Բայց դոկտոր Դինանյանն ասաց, որ կարող է պաղ ջուր խմել, որ այլևս ոչ մի վտանգ չկա:

- Այո, բայց ոչ քրտնած մարմնին:

Համոզվելու համար, որ իր կասկածները ճիշտ են, պիտի անպայման հիվանդի թոքերը լսեր: Գրեթե անկարելի մի բան, երբ հարցը վերաբերում էր թուրք կանանց: Ամուսնացած, թե՝ ոչ: Եվ վտանգավոր՝ քրիստոնյա բժիշկների համար. թոքերը լավ լսելու համար ցանկալի էր գործիքը հպել մերկ մարմնին: Անգամ բարձր դասի թուրքերը բավական դժվարությամբ էին համաձայնում այդ անմեղ գործողությանը. ինչպե՞ս կարող էր գյավուրը, թեկուզ գործիքի միջոցով, թեկուզ բուժական նպատակներով առնչություն ունենալ իր կնոջ կամ դստեր մերկ մարմնի հետ... Ուստի հարմար գտավ նախևառաջ բացատրել հորը և հասկացնել, որ աղջկա ճիշտ բուժումը դրանից է կախված: Արաբաջիբաշին լուռ ու համակերպված լսեց բոլոր բացատրությունները և հարցրեց.

- Դոկտորս, հիմա այդ գործիքով որ լսես, աղջիկս կբուժվի՞:

- Ոչ, չի բուժվի, բայց դա ինձ կօգնի, որ ճիշտ բուժեմ:

- Ուրեմն, թոքերը պիտի լսես... Ինչո՞ւ, աղջիկս թոքախտ ունի՞:

- Ոչ, թոքախտ չունի, բայց թոքերը մրսած են, ենթադրում եմ, որ թոքերի բորբոքում է:

- Իսկ դա շատ վտանգավոր է՞:

- Այո, վտանգավոր է և եթե ժամանակին չբուժվի, կարող է ծանր հետևանքներ ունենալ:

Արաբաջիբաշին մոլորված հայացքը բժշկին հառելով հարցրեց.

- Ուրեմն, այդ գործիքը պիտի դնես մեջքին:

- Այո, առանց դրա չեմ կարող բուժել, և ոչ մի բժիշկ չի կարող: Հիմա դու, որպես հայր, պիտի քո համաձայնությունը տաս:

- Խնդրեմ, դոկտորս, բայց միայն մեջքը:

- Այո, միայն մեջքը, նույնիսկ մեջքի մի մասը:

- Եվ ձեռքդ չես դիպցնելու, չէ՞:

- Ոչ, նույնիսկ չեմ նայելու, մեկ րոպե էլ չի տևի:

Արաբաջիբաշին գլխով արեց, հետո դառնալով դռան կողմը ինչ-որ մեկին կանչեց: Մի կին մտավ և գլուխը կախ, ձեռքերը ծալած կանգնեց դռան մոտ.

- Դոկտորն ինչ որ ասի, կանես, - կարգադրեց նա և մեջքով դարձավ դեպի աղջիկը:

Որոշեց հարգել հոր անսպասելի ըմբռնումը և խնդրեց բացել միայն մեջքի մի մասը: Հիվանդը չէր գիտակցում, թե ինչ են անում իր հետ, քրտինքի մեջ

զառանցում էր: Այնուհանդերձ, թեկուզ թույլ շնչառության տակից կարողացավ որսալ թոքերից եկող խզզոցը: Իր կասկածները հաստատվում էին: Այժմ պիտի սկսվեր դժվարին և վտանգավոր մասը: Դժվար, որովհետև այս ծակուռում ոչ մի դեղորայք չկար, հետները բերած մի քանի փոշիներն ու լուծույթները վաղուց սպառվել էին: Նախ պետք էր տաքությունն իջեցնել, իսկ դրա համար ընդամենը մեկ միջոց էր տեսնում, որը նույնպես յուրացրել էր Շվեյցարիայում. քացախը՝ հիգիենիկ և ազդեցիկ: Եթե ամեն ինչ լավ գնա, վաղն առավոտյան աղջկա տաքությունը պիտի որ կտրուկ իջնի:

- Արաբաջիբաշի, - դարձավ տանտիրոջը: - Տանը քացախ կա՞:

- Պիտի ունենանք, - զարմացավ նա: - Քացախն ի՞նչ է, որ չունենանք:

- Ուրեմն, այսպես. հենց հիմա տանը եղած ամենաթունդ քացախը կբերեք այստեղ և լաթեր պատրաստեք, սրբիչներ:

Այնուհետև կարգադրեց, որ քացախի մեջ թաթախված սրբիչներով ու լաթերով մարմինը սրբեն, հետո նորից թաթախեն քացախի մեջ, թեթևակի մզեն, ամբողջ մարմնին փակցնեն և տաք վերմակով ծածկեն: Պահանջեց նաև, որ մի կին էլ կանչեն, որպեսզի այդ գործողությունները շատ արագ կատարվեն, և Արաբաջիբաշիի հետ լքեց սենյակը:

Քիչ հետո կանայք հայտնեցին, որ ամեն ինչ արված է դոկտորի ասածի պես:

Հիվանդը թաց լաթերի շփումից ուշքի եր եկել: Թեթևակի ժպիտով նայեց հորը և զարմացած հայացքը հառեց անծանոթ տղամարդուն:

- Աղջիկս, քո դոկտորն է, քո փրկարարը, հիմա ամեն ինչ լավ կլինի, չէ՞, դոկտորս:

Վերջինս զարկերակը ստուգեց. նկատելի բարելավում կար:

- Անունդ ինչպե՞ս է:

- Այշե, - պատասխանեց աղջիկը, հայացքը ցած գցելով:

- Ուրեմն, լավ լսիր ինձ, Այշե: Որպեսզի արագ բուժվես, պիտի կատարես իմ հրահանգները: Խոստանո՞ւմ ես:

Աղջիկը գլխով արեց:

- Հիմա դու տաք կաթ կխմես մեղրով և կաշխատես քնել: Հայրիկդ ասել է, որ կաթ չես սիրում: Բայց դա անհրաժեշտ է, հասկանո՞ւմ ես...

Արաբաջիբաշին ապշած նայում էր, թե իր դուստրն ինչպես իրար ետևից երկու գավաթ կաթ խմեց: Երբ դուրս եկան սենյակից, հայրը երախտագիտական հիացմունքով դիմեց Ռուբենին.

- Դոկտորս, ինչպե՞ս կարողացար համոզել, աղջիկս տանել չի կարողանում կաթը:

Օրվա ընթացքում, ժամանակ առ ժամանակ մոտենում էր հիվանդին, զարկերակը ստուգում և ջերմությունը չափում: Արաբաջիբաշին խնդրեց, որ գիշերը մնա իրենց տանը: Նույնիսկ ճոխ հյուրասիրություն արեց: Հրաժարվելն անկարելի էր:

Նստել էր սեղանի մոտ ու պատառը կուլ չէր գնում: Սեղանն ուրիշ տարածք է, ուրիշ պարտականություն: Չես կարող կիսել մեկի հացը, որի հանդեպ

սեր, հարգանք կամ համակրանք չունես: Բայց դիտեր նաև, որ թուրքի հյուրասիրությունը մերժելը սոսկալի անարգանք է, ուստի միայն մրրգ կերավ և տանտիրոջը մի կերպ համոզեց, որ ուշքնումիտքն այնտեղ է (հարևան սենյակը ցույց տվեց), ուստի խորին շնորհակալություն է հայտնում այս մեծարանքի համար և արտոնություն խնդրում հիվանդի մոտ վերադառնալու: Բժշկի խոսքերը ոչ միայն համոզեցին Արաբաջիբաշիին, այլև ոգևորեցին.

- Դոկտորս, ճիշտ ես ասում, հիմա հիվանդն է կարևոր, ոտքի հանեք նրան և էդ ժամանակ իսկական քեֆ կանենք, քեզ էլ էնքան փող կտամ, որ մինչև կյանքիդ վերջը փաշայի պես կապրես:

Մեծադույն թեթևություն զգաց վերադառնալով աղջկա մոտ: Զարկերակը չափեց և գոհ մնաց, սրտի բախոցը կանոնավորել էր: Աղջիկը խորը քուն էր մտել, և դժվար էր այդ վիճակում ջերմությունը չափել, սակայն ձեռքի սովորական հպումից զգացվում էր, որ մարմինն այլևս չի այրվում, դեմքն էլ այլևս շառադունած չէր, այլ սովորական վարդադույնն էր ծածկել այտերը: Ճակատը քրտնած էր, բայց թեթևակի: Հիվանդության ընթացքը կտրուկ փոխվում էր դեպի բարելավում, և դրա ամենաստույգ վկայությունը խորը, հանդիստ և առողջարար քունն էր, որը հավանաբար կտևեր այնքան, որքան պետք էր մարմինը ճգնաժամից հանելու համար:

Ժամացույցը նայեց: Ութն էր: Մտավոր աշխատանքի, սթափ ու եռանդուն արթնության ժամը: Սակայն զգաց, թե հենց հիմա, թեկուզ նստած տեղում քնելու անդիմադրելի ցանկությունն ինչպես է դրավել: Այդպես լինում է, երբ մի քանի ժամ տևած ծանր, պատասխանատու մի գործ բարեհաջող ավարտ է ունենում, երբ մարմինն ուղղակիորեն հասկացնում է, որ անհրաժեշտ է լրացնել ուղեղի և մկանների սպառվող պաշարները: Սակայն մասնագիտական սովորույթի համաձայն ինքնաբերաբար սկսեց դիմադրել, փորձելով ժամանակ առ ժամանակ կրծքին կախվող գլուխը շտկել: Կիսաքուն վիճակում էր, երբ Արաբաջիբաշիի ձայնը հասավ ականջին. «Դոկտորս, հոգնած ես, արի մի քիչ հանգստացիր»: Զդիմադրեց: Թողեց, որ տանտերը զարմանալի հոգատարությամբ, թևանցուկ ինչ-որ սենյակ առաջնորդի, խնամքով պառկեցնի փափուկ դորգի վրա, գլուխը զգուշորեն դնի մութաքային, թեթև վերմակով ծածկի և անգամ կոշիկները հանի: Ի՜նչ բարի, ի՜նչ նրբանկատ, ի՜նչ ուշադիր մարդ է այս Արաբաջիբաշին... Կիսաքուն վիճակում շնորհակալություն հայտնեց նրան, կարգադրեց, որ հիվանդի կողքին մեկը նստի և արթնանալուն պես իրեն կանչեն:

Հավանաբար խորն էր քնել, որ այդպիսի երազ տեսավ. Դան դյու Միդիի կատարին էին, ինքը, Յաննին, զավակները՝ արդեն մեծացած, իրենց զավակների հետ, Թիկունքում Սալանֆի կապույտ լիճն էր, իսկ առջևը, ուր պիտի Վալեի հոյակապ հովիտը լիներ, ծածկված էր թանձր մշուշի տակ, մառախուղի ծանր քուլաները գալիս քսվում էին նրանց ոտքերին: Վաղուց պիտի իջած լինեին հովիտ, սակայն մշուշոտ անորոշությունը նրանց պահում էր լեռան կատարին: Ի վերջո, չդիմացավ և որոշեց մենակ իջնել: Մի հարյուր մետր էր քայլել, երբ մշուշն անհետացավ և հսկայական բոցեր հայտնվեցին, որ բարձրանում էին հովտի խորքից, սակայն վարը ոչ թե հովիտ էր, այլ հսկայական քաղաքներ՝ իրենց լայնար-

ձակ փողոցներով, խռնված ամբոխներով, մուր և ծուխ թքող գործարաններով... Փորձեց ուշադիր նայել, ճանաչել այդ քաղաքները, սակայն ուսը ցնցեցին... Փորձեց իջնել ներքև, որ ավելի լավ տեսնի, սակայն այս անգամ ուսը բռնեցին, նույնիսկ կանչեցին իրեն. «Դոկտորս, դոկտորս...»: Ձայնը ծանոթ էր... Հա՛, Արաբաջիբաշի Իսմայիլն է, երևի նա էլ լեռան կատարին է, մտահոգվում է, որ իր հետ մի բան չպատահի, թե ոչ աղջկան ո՞վ պիտի բուժի... «Դոկտորս, դոկտորս, արթնացել է, շուտ արա...»:

Վերջապես աչքերը բացեց և կիսախավարի մեջ Արաբաջիբաշիի դեմքը նշմարեց, որ պաղատական հայացքով նայում էր.

- Դոկտորս, Այշեն արթնացել է, ծարավ է, խմել է ուզում, ի՞նչ անենք, - տագնապած հարցրեց նա, ասես մի սոսկալի բան էր պատահել:

Երազի անավարտ պատկերները գլխում, մի կերպ վեր կացավ և մոտեցավ հիվանդին: Վերջինս, մեջքը բարձին հենած, կիսապառկած էր անկողնում և դեմքին մի տարտամ ժպիտ կար: Այտերի վարդագույնը տեղը զիջել էր գունատության: Երկու կին էին կանգնել կողքին: Մեկի ձեռքին կուժն էր, մյուսը ջրով լի գավաթն էր բռնել:

- Դոկտորս, երեխան ծարավ է, խմել է ուզում:

- Թող խմի, բայց գոլ ջուր:

Արաբաջիբաշին ուրախ գլխով արեց կանանց.

- Տեսնո՞ւմ եք, ես էլ նույնն էի ասում:

Հետո կտրուկ հրամայեց.

- Դե, ի՞նչ եք կանգնել, շուտ արեք, խմեցրեք:

Ժամացույցը նայեց. ուղիղ կեսգիշերն էր: Այս ի՜նչ խորը քուն էր մտել: Սակայն պատահական ոչինչ չկա: Իր քունն էլ հիմնավորապես կապված էր հիվանդի առողջացման հետ: Աղջկա զարկերակը հոյակապ էր: Գուցե նորմայից պակաս էր, բայց դա վկայում էր, որ ջերմությունն էլ պիտի կտրուկ իջած լինի: Սա հաղթանակի սկիզբն էր:

Սակայն ինչպե՞ս բուժել աղջկան առանց որևէ դեղորայքի. հազի դեմ գործածվող ավանդական միջոցներո՞վ. էշի կաթ, այծի ճրագու, խոտերի թուրմ... Անշուշտ, ղրանցից պետք չէր հրաժարվել, սակայն դա քիչ էր: Պետք էր արմատական միջոց գտնել, մարմնի միջից հանել ցուրտը: Ներկա պահին միայն մեկ միջոց կար. սրվակ փակցնել: Հեռատես Դինանյանը բժշկական գործիքների մի ամբողջ պայուսակ էր բերել, որը հետո թողեց գործընկերներին: Այնտեղ սրվակներ կային, կարելի էր բերել և... Սակայն ոչ հիմա, քանզի տաքության կտրուկ անկումից հետո հիվանդը պիտի որ բավական թուլացած լինի: Թող մի քիչ էլ քնի և ուժ հավաքի:

* * *

Մատիաս Բրոնկեն չէր կարծում, թե այսպիսի արագությամբ կպատասխանեն, այն էլ հիմա, երբ իր հիմնարկը գերզբաղված է կարևորագույն հոգսերով: Գնդապետի մասին դրական կարծիք էր ուղարկված և գտնում էին, որ նրա

միջնորդությունը հիմնավորված է «ազնիվ մտահոդությամբ՝ փրկել ոչ միայն սեփական փեսայի, այլև դաշնակից բանակի սպայի պատիվն ու կյանքը»:

Այլևս ուշացնելու պատճառ չուներ: Նամակն այսօր իսկ կհանձնվի հասցեատիրոջը:

Երկրորդ ծրարը վերցրեց, որ դարձյալ ֆոն դեր Գոլցին էր հասցեագրված: Նամակն ստորագրել էր արդյունաբերող Վիլլի Ռայնհարդտը, բանակի մատակարարներից մեկը, առավել քան ծանոթ անուն ռազմական շրջանակներում: Եվ, ո՜վ զարմանք, այս մարդն էլ գնդապետի փեսայի համար էր միջնորդում: Պարզվում է, որ մանկության ընկերներ են: Եվ ինչպիսի՜ վճռականությամբ էր պաշտպանում այդ կապիտանին. «Եթե թուրքերը գնահատել չգիտեն իրենց լավ սպաներին, ապա այստեղ նրան սիրով կընդունենք: Ավստրիացիք վկայում են, որ նա արտակարգ նվիրվածությամբ և մասնագիտական բարձր մակարդակով էր աշխատում իրենց հիվանդանոցում»:

Ի՞նչ կարող էր անել, այս նամակն էլ պիտի թողներ: Գնդապետի մասին կարող էր տեղեկություններ հարցնել, գերմանական բանակում այսօր հարյուրավոր գնդապետներ կան, սակայն Վիլլի Ռայնհարդտը մեկ հատ է:

Երրորդ ծրարը գալիս էր գլխավոր շտաբից և դարձյալ հասցեագրված էր ֆոն դեր Գոլցին, և դարձյալ միջնորդություն էր այդ փեսայի համար: Իսկ միջնորդողը ոչ ավել, ոչ պակաս գեներալ F.-ն էր, որի նամակի տակ ստորագրել էր նաև գեներալ V.-ն և ավելացրել. «Ես նույնպես խնդրում եմ անել ամեն ինչ այդ կապիտանին ազատելու համար»: Այս նամակն էլ միացավ նախորդ երկուսին: Ֆոն դեր Գոլցն այսօր ահագին բան կունենա կարդալու:

Չորրորդ նամակը վարչապետի գրասենյակից էր՝ հասցեագրված բարոն ֆոն Վանգենհայմին: Տեր Աստված, սա ի՞նչ բան է, կարելի է կարծել, թե այս ծանր օրերին Գերմանիան ընդամենը մեկ հոգս ունի. ազատել այս հային թուրքերի ճիրաններից: Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ են իրար անցել, թուրքերն օրեկան հազարավոր հայեր են մորթում... Արժեր դրան տեսնել, հավանաբար արտակարգ մի անձնավորություն է... Ուրեմն, թող դեսպանն էլ զբաղվի նրա փրկությամբ:

Ափսո՜ս, չկարողացավ գնդապետի նամակն օգտագործել: Պարտքը դեռ մնում էր չվճարված... Այդ Յոհանն իսկապես թքած է ունեցել իր ազգականի վրա: Սրիկայի մեկը, կարիերիստ, դրամաշորթ... Իզուր տեղն էլ ուշացրեց միջնորդագրի հանձնումը, հիմա այդ խեղճ կապիտանն ազատված կլիներ:

* * *

- Կոնստանտին, դուք անկեղծ չեք:

- Ձերդ գերազանցություն, իմ սիրտը բաց է ձեր առջև:

- Ես սիրտը չեմ ուզում, ինձ ավելի շատ հետաքրքրում է ձեր գլուխը:

- Օ, բարոն, խնայեք ձեր նյարդերը, իմ թշվառ գլուխն այնպիսի հոգսերով է լցված, որ ինքս եմ սոսկում:

- Կոնստանտին, մի փորձեք ինձ վախեցնել, այդ նույն հոգսերը նաև այս-

տեղ էին լցված, - դեսպանն իր գլուխը թակեց, - երբ ձեր տարիքին էի, և ես վստահ չեմ, թե ձեր գլուխն այսօր ավելի ծանրաբեռնված է, քան իմն էր...

- Գոնե հիմա թեթևացա՞վ, բարոն:

- Ոչ, սիրելիս, պարզապես հներին նորերը փոխարինեցին... Սակայն ձեր գլխում, ինչպես տեսնում եմ, առայժմ փոփոխություններ չեն նկատվում:

- Ձերդ գերազանցություն, կան բաներ, որոնք ես հավանաբար երբեք փոփոխության չենթարկեմ:

- Յաննի Ապելը մտնո՞ւմ է դրանց մեջ:

- Գուցե, բայց ոչ այնպես, ինչպես դուք եք պատկերացնում:

- Հետաքրքիր է, - ժպտալով նկատեց դեսպանը:

- Դուք կարծում եք, թե այդ կինը իմ հերթական արկածի, ինչպես ասեմ, հավանական առարկան է, ճի՞շտ եմ կռահում:

- Թերևս, բայց շարունակեք, իսկապես հետաքրքիր է:

- Որոշ առումով գուցե իրավունք ունեք այդպես կարծելու: Սակայն ուրիշ ավելի կարևոր խնդիրներ կան, որ ինձ ստիպում են առանձնակի հետաքրքրություն ցուցաբերել այդ կնոջ հանդեպ:

Դեսպանը քահ-քահ ծիծաղեց.

- Իսկ ես միամիտս կարծում էի, թե գեղեցիկ կանայք միայն մեկ առումով կարող են ձեզ հետաքրքրել:

- Ձեք սխալվել, ձերդ գերազանցություն, բայց ես նաև իմ պետությունը, իմ ժողովուրդն եմ ներկայացնում:

- Դուք գնալով ավելի հետաքրքիր եք դառնում, Կոնստանտին: Օրինակ՝ կարո՞ղ եք բացատրել՝ ինչպե՞ս եք մեր պետության շահերը պաշտպանում կանանց հետ անկողնում պառկած:

- Այդ մասին ուրիշ անգամ կխոսենք, բայց այս կնոջ պարագայում գործն անկողնին գուցե չհասնի:

- Այո, որովհետև, որքան հասկացա, նա իր ամուսնուց զատ ուրիշ տղամարդ չի պատկերացնում, չասած, որ ձեր հանդեպ բավական սառը եղավ:

- Որովհետև ես չցանկացա, թե ոչ հիմա արդեն...

- Եվ ի՞նչ կլիներ արդյունքը. հերթական մի կի՞ն է, թե մեր պետական շահերի պաշտպանությունը բուդուարում:

- Բարոն, խնդիրը շատ ավելի լուրջ է: Փորձեմ պարզ խոսել. այդ կնոջ պատմությունը, դրան առնչվող անձնական մի շարք հանգամանքներ, վերջապես հայերի այս տեղահանություններն ինձ բազմաթիվ մտորումների առիթ են տալիս:

- Դարձյա՞լ մեր ֆատերլանդի հետ կապված:

- Պատկերացրեք՝ այո, ձերդ գերազանցություն: Մենք գրեթե ամեն օր առնչվում ենք հայերի տեղահանության հարցին, օր չկա, որպեսզի որևէ մեկի համար չխնդրեն միջնորդել, իսկ ձեզ ավելի շատ են դիմում... Գիտեմ, որ նույնիսկ մի քանիսին ետ եք բերել աքսորից: Սակայն ի՞նչ է կատարվում, մենք միայն մակերեսին ենք դիպչում՝ առանց խորանալու երևույթի մեջ, առանց հասկանալու նրա ճշգրիտ էությունը:

- Ի՞նչ կա խորանալու, Կոնստանտին, à la guerre comme à la guerre,* պատերազմ է Ռուսաստանի դեմ, և Թուրքերը չեզոքացնում են ռուսամետ տարրը՝ հայերին, ճիշտ է, դա արվում է բարբարոսական եղանակներով, բայց բոլոր դեպքերում համապատասխանում է մեր շահերին:

- Բայց տեսեք, Թե այդ բարբարոսները, որ բոլոր հարցերում աչքի են ընկնում ծայրահեղ անկարգապահությամբ, ասիական անպատասխանատվությամբ, վերջապես ամեն ինչ բախտի քմահաճույքին թողնելու անտարբերությամբ, ինչպիսի՜ անթերի կազմակերպվածություն, ապշեցնող կարգապահություն և մեթոդիկ հետևողականություն են ցուցաբերում հայերին ոչնչացնելու հարցում: Եթե նրանց բանակում այսպիսի կարգապահություն լիներ, Կովկասն արդեն գրավել էինք վաղուց:

Դեսպանը, որի դեմքից հեգնական արտահայտությունն արդեն վերացել էր և ամենայն ուշադրությամբ լսում էր հյուպատոսին, գլխով արեց.

- Իրավացի եք, Կոնստանտին, ապշեցնող կարգապահությամբ են գործում, և ես հետաքրքիր մի բան նկատեցի. հայատյացությունն ավելի միավորեց Թուրքերին, քան ջիհադը:

- Իսկ նկատե՞լ եք արդյոք, Թե ինչպիսի անթերի ծրագիր է մշակված, ուղեղ կա այնտեղ, ճիշտ է՝ դիվական, բայց դարձյալ ուղեղ է, մի բան, որը բնավ հատուկ չէ Թուրքին, նրանք ռացիոնալ ժողովուրդ չեն, նրանք հլու կատարողներ են:

- Ոչ միշտ, սիրելիս, ոչ միշտ, հարցրեք ֆոն դեր Գոլցին կամ ֆոն Սանդերսին, Թե ինչպես են կատարվում մեր հրահանգները, - նկատեց դեսպանը: - Սակայն ինչո՞ւ եք այդպիսի սևեռուն ուշադրությամբ հետևում հայերի տեղահանություններին, ինչ-որ գաղափարներ ունե՞ք:

- Անկեղծ ասած որևէ գաղափար չունեմ, բայց հայերի տեղահանության, չիտակն ասենք՝ հայերի բնաջնջման ծրագիրը կարծում եմ խորհելու առիթներ է տալիս...

- Կոնստանտին, դուք նորից սկսեցիք հարցի շուրջը դառնալ, չէի՞ք ուզի ձեր մտորումները կիսել ինձ հետ:

- Ձերդ գերազանցություն, առայժմ հստակ ձևավորված որևէ գաղափար չունեմ գլխումս, բայց ինձ Թվում է, որ ժամանակի հետ պիտի անպայման ինչ-որ բան ձևավորվի... Ֆիխտեն երազում էր պրուսական տնտեսության ավտարկիայի մասին, հիմա, հավանաբար, ժամանակն է մտածել ազգային ավտարկիայի մասին:

- Ահա Թե ինչ, Կոնստանտին... Երբ ձեր տարիքին էի, իմ գլխում այդպիսի գաղափարներ չկային:

- Կլինեին, ձերդ գերազանցություն, եթե ժամանակը պահանջեր:

- Եվ դուք գտնում եք, որ հիմա ժամանակն է:

- Այո, մենք նույնիսկ ուշացել ենք, Թուրքերը մեզնից առաջ անցան:

- Բայց մենք հայեր չունենք:

---

* Պատերազմը պատերազմ է(Ֆրանս.):

- Կգտնվեն, Գերմանիան մեծ է:

Դեսպանը մի պահ անջատված գլուխն էր տմբտմբացնում: Վերջապես խոսեց.

- Կոնստանտին, դուք գիտեք, որ ես համակրանք ունեի ձեր հանդեպ, իսկ հիմա այն փոխվեց հարգանքի և... չեմ թաքցնում, երկյուղի:

- Այո, հասկանում եմ ձեզ, ապագան միշտ երկյուղալի է:

- Նայած ում համար. ձեզ համար՝ երիտասարդներիդ, ապագան գրավիչ մի բան է, դուք կարծում եք, թե վաղն ավելի լավ կլինի, քան այսօր և մանավանդ ձեզ թվում է, թե այսօրվա սխալները վաղը կմոռացվեն...

- Առնվազն կշտկվեն, - երկիմաստ ժպիտով ընդհատեց Ֆոն Նոյրաթը:

- Օ, ոչ, բարեկամս, սխալները մեծ մասամբ գնալով խորանում են, ուստի չեմ պատկերացնում, թե ինչ եք ուզում թուրքերից ուսանել, սակայն գտնում եմ, որ մենք՝ գերմանացիներս, մանավանդ պաշտոնական ներկայացուցչությունները, պետք է հնարավորին չափ հեռու մնանք այդ դեպքերից:

- Դուք կարծում եք, որ մենք պիտի պատասխան տա՞նք թուրքերի վայրագությունների համար, - զարմացած հարցրեց հյուպատոսը:

- Իսկ. դուք ի՞նչ եք կարծում:

- Հաղթողներին չեն դատում, ձերդ գերազանցություն:

- Բայց պատվի հարց կա, պարոն հյուպատոս, - գոռաց դեսպանը: - Մենք գերմանացիներ ենք, և այդ արյունից անգամ մեկ կաթիլ չպիտի արատավորի մեր պատիվը: Խոհեմ լինենք և հեռու մնանք... Թուրքերի ոչնչացման մեքենան անթերի գործում է... Իսկ մենք աշխատենք հնարավորին չափ շատ փաստաթղթեր ու վկայություններ թողնել ի նպաստ մեզ...

- Եթե ճիշտ հասկացա, ուզում եք, որ ռայխսկանցլերի գրասենյակից եկած նամակի հետքերով մի գրություն ուղարկեմ Բեռլինի բեյին:

- Շատ ճիշտ եք հասկացել, անշուշտ, կցելով Բեռլինից եկած միջնորդագիրը:

- Իսկ դուք, հավանաբար, այսօր կխոսեք Թալյաթի հետ:

- Օ, միայն թե ոչ այսօր, Կոնստանտին: Ինչպես երևում է դուք էլ՝ մյուս երիտասարդների պես սնահավատ չեք, - նկատեց դեսպանը:

- Հա, ճիշտ է, ասում են երկուշաբթին վատ օր է... Բայց ո՞ւմ համար. հայի՞, թուրքի՞, թե մեզ համար:

- Կարծում եմ՝ բոլորի համար, - դեմքին հոգնած արտահայտություն տալով պատասխանեց դեսպանը:

- Ուրեմն, մնաց երեքշաբթի...

* * *

Թալյաթն իր օգնականին կանչեց և կարգադրեց, որ դեսպանների զանգելու դեպքում հայտնեն, թե ինքը տեղում չէ:

- Մեկ օրվա մեջ երեք դեսպան շատ կլինի:

- Ձերդ գերազանցությունը որոշակի զանգ է սպասո՞ւմ, թե ընդհանրապես է ասում:

- Ե՛վ ընդհանրապես, և՛ որոշակի... Գիտեմ, թե ինչի համար են գանգում, այդ հայերն իսկապես հոգս դարձան գլխներիս:

Թալյաթը գրգռված և հոգնած էր ոչ միայն, որ իրար ետևից երկու դեսպան ընդունեց և երկու ժամ լարված խոսակցություն ունեցավ, ոչ միայն որ երկուսն էլ եկել էին աքսորյալ հայերի համար միջնորդելու, այլև որ այդ երկուսը Բարձր Դռան մոտ հավատարմագրված դիվանագետներից ամենատհաճն էին. պապի նվիրակ մոնսենյոր Դոլչին և ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն: Հատկապես վերջինին տանել չէր կարող: Ամեն անգամ նրա հետ հանդիպելուց հետո գլխացավ էր ունենում: Թալյաթը գտնում էր, որ երկուսն էլ լկտի են: Մեկը լկտի էր դեմքին տպված իր հեզաբարո ժպիտով, կքված, գրեթե խոնարհված մեջքով, քաղցրանուշ, բայց սմսեղուկ խոսելաձևով, պահանջելու պես խնդրելով և իր նպատակին հասնելու համառությամբ: Մյուսը գալիս նստում էր դիք-դիք, հանդիսավոր, ասես գահի վրա լիներ, խոսում էր բարձրաձայն, կարծես հանդիսասրահի առջև գտնվեր, «խնդրել» բայը երբեք չէր գործածում, փոխարենը նրա բերանից լսվում էին. «ես գտնում եմ...», «մեր պետությունը չի ընդունում», «մեր նախագահը կարծում է...», «մենք համաձայն չենք...», վերջապես՝ «մենք պահանջում ենք...»: Ալլա՛հ, Ալլա՛հ, անգամ ինքը՝ Թուրքիո ամենահզոր մարդն իր ենթակաների հետ այդպես չէր խոսում: Եվ ստիպված էր կուլ տալ նրա մշտական հոխորտանքը, որովհետև պատերազմ էր, որովհետև չէին ուզի թշնամիների թիվը մեկով ավելացնել, այն էլ ի՜նչ թշնամի՝ Ամերիկայի պես հսկա և հարուստ երկիրը, որն իր տնտեսական ու քաղաքական շահերով ավելի շատ Անտանտի երկրներին էր կապված, ուստի պետք էր չափազանց զգույշ լինել, այնպես չանել, որ ռազմական շահերն էլ մերձենան: Եվ այդ խորամանկ հրեան հասկանում էր իրավիճակի նրբությունը և ինչպե՜ս էր կարողանում ի շահ իր նպատակների օգտագործել: Քիչ առաջ գնաց՝ բողոքական երկու պատվելիների համար միջնորդելուց հետո: Նվիրակն էլ եկել էր կաթոլիկ հայերի համար միջնորդելու: Անորոշ խոստումներով ճամփու դրեց, բայց հավանաբար նրան էլ չմերժի: Լավ է, որ կաթոլիկներն ու բողոքականները մեծ թիվ չեն կազմում հայերի մեջ:

Կես ժամ հետո օգնականը հայտնեց, որ բարոն Ֆոն Վ.անգենհայմն է զանգել:

- Ի՞նչ էր ուզում:

- Հետաքրքրվում էր Բեդրի բեյին ուղարկված նամակով, - պատասխանեց օգնականը՝ գլխի շարժումով սեղանին դրված նամակը ցույց տալով:

- Ուրիշ ի՞նչ ասաց:

- Խնդրեց, որ ծանոթանաք և հարցրեց, թե երբ կարող է ձեզ զանդել:

- Եվ ի՞նչ:

- Ասացի, որ ձեզ կզեկուցեմ և ինքս կզանգեմ՝ արդյունքների մասին հայտնելու:

- Ճիշտ ես պատասխանել... Այսօր ի՞նչ օր է:

- Չորեքշաբթի, ձերդ գերազանցություն:

- Շատ լավ, դու կզանգես ուրբաթ կեսօրից հետո և կասես, որ երկուշաբթի կարող է գալ այստեղ:

- Ձերդ գերաղանցությունը երկուշաբթի ամբողջ օրը զբաղված է:

- Հա, ճիշտ է... Օղուզից նոր լրատվություններ չկա՞ն:

- Այսօր մեկն ստացա:

- Ի՞նչ է գրում:

- Դարձյալ դոկտորի մասին է, շարունակում է հայերին հետ պահել իսլամանալուց:

- Տարօրինակ ժողովուրդ են այդ հայերը, բանաստեղծներն զբաղված են հոգևորականների գործերով: Վերջը իր դլխին պատուհաս է բերելու այդ դոկտորը...

Հետո դիմացի նամակը վերցրեց, աչք ածեց և օգնականին կանչելով ասաց.

- Տար դիր նրա թղթապանակի մեջ, հուսամ սա վերջին փաստաթուղթն է լինելու... Օղուզին էլ հեռագրիր, թող Զանղեզրիում մնացած աքսորական հայերի քանակը հայտնի... Կարդալիր նաև, որ սկսեն փոքր խմբերով ուղարկել Այաշ:

* * *

Առաջին անգամ զգաց, որ իր ձեռքը տղամարդ է բռնել: Մի հաճելի թրթիռ անցավ մարմնով: Թվաց, թե դանդաղ, աննկատ ընկղմում է մի փափուկ բանի մեջ: Նման հաճելի պահ երբեք չէր ապրել, եթե ոչ իր երազների մեջ, երբ լուսանկարների գեղեցիկ տղաները գրկում էին իրեն, և կատարվում էր մի բան, որն արթնանալուց հետո, ամաչում էր հիշել... Եվ չկար մեկը, որին կարողանար պատմել այդ երազները: Ոչ մեկին չէր վստահում, վախենում էր բոլորից, իսկ բոլորովին վերջերս նկատեց, որ նաև զզվում է: Այլևս չէր կարողանում հորը նայել, նրա ճապաղ ու լայն քթին, սև քթախոռոչներին, որտեղից խոզանակի պես մազեր էին դուրս ցցվում, հաստ ու խիտ հոնքերին, կոշտ ու ճենճահոտ բեղմիրուքին, մանրիկ ու ծակող աչքերին, կարմիր ու վարդագույն սպիներով ծածկված երեսին, որ ասես մսի սանդաքար լիներ: Հապա ծխախոտի, օղու և մշտական այլ գարշահոտությունները, որ պարզապես խեղդում էին նրան: Մինչև վերջերս այդ ամենն իր համար սովորական էր, ինչպեսև իր եղբայրների ու զարմիկների հետաքրքրասեր, վավաշոտ հայացքները, նրանց ձեռքերի անհամեստ հպումները մարմնին, որ խռովք էին պատճառում, իսկ հիմա՝ պարզապես զզվանք:

Ամեն ինչ սկսվեց այն օրվանից, երբ հայրը մի գեղեցիկ սնդուկ բերեց և դրեց իր անկողնի կողքին: Զղիմացավ գայթակղությանը և հենց նույն օրը երեկոյան բացեց և ինչե՛ր գտավ այնտեղ... Նախ, առաջին բանը, որ ապշեցրեց, սնդուկի միջից եկող անծանոթ և հաճելի բույրն էր, որ կափարիչը բացելուն պես պարուրեց նրան: Այդպիսի անուշահոտություն երբեք չէր զգացել: Հմայված նստել էր ու աչքերը փակ կախարդական բույրն էր շնչում: Հետո սկսեց պարունակությունը նայել: «Գյավուր հանրմի սնդուկ է», - ասաց հայրը, երբ բերեց ու դրեց իր մահճակալի կողքին: Հավանաբար հեռուներից էր բերել, քանի որ Զանղեզրիի հայերի մեջ հանրմներ չկային:

Ի՜նչ գեղեցիկ զգեստներ գտավ այնտեղ, ի՜նչ շքեղ շալեր, ի՜նչ թաշկինակներ... Հապա կոշինե՜րը, գուլպանե՜րը... Եվ ամեն ինչից նույն անուշահոտ էր դալիս: Զգեստների մեջ գույնզգույն, բուրավետ օճառներ էին դրված, սակայն անուշահոտության հիմնական աղբյուրը գեղեցիկ մի սրվակ էր՝ մանուշակագույն հեղուկով: Զգուշորեն բացեց, և լելակի բույրը միանգամից տարածվեց սենյակով մեկ: Մի քանի կաթիլ լցրեց շորերին, որպեսզի իրենից էլ այդպիսի բույրեր տարածվեն:

Նրա համար, սակայն, մեծագույն հայտնությունը եղան պատկերազարդ, շքեղ հանդեսները և լուսանկարների ալբոմը: Նախ ագահորեն հանդեսները թերթեց: Անծանոթ գրեր էին: Քիչ թե շատ գրել կարդալ գիտեր, ուստի հասկացավ, որ թուրքերեն չէ: Ի՜նչ հոյակապ պատկերներ կային այդտեղ, պերճաշուք տներ, խորհրդավոր պարտեզներ, մեծ քաղաքներ, երազային կանայք և գեղեցիկ տղամարդիկ՝ մաքուր ու կոկիկ զգեստներով: Կանայք դրեթե կիսամերկ էին՝ թևերը, ուսերը բաց, նույնիսկ մի քանիսի կրծքերն էին երևում... Եվ բոլորը ժպտում էին՝ տղամարդիկ, թե կանայք: Մի՞թե մարդիկ կարող են այդպես գեղեցիկ լինել, այդքան ուրախ, մի՞թե գոյություն ունեն այդպիսի կանայք և տղամարդիկ, որտե՞ղ են ապրում նրանք, իրենց քաղաքում ինչո՞ւ են բոլորը տգեղ, տհաճ, անճոռնի, կոպիտ, անբարեհամբույր, ոչ մեկը չի ժպտում, բոլորը չարացած են: Նրան հատկապես ապշեցրել էր, որ տղամարդիկ կարող են այդպես գեղեցիկ լինել... Նույն օրը երեկոյան նայում էր իր ծնողներին, հարազատներին, և բոլորը տգեղ թվացին, արգահատելի:

Ալբոմում խնամքով փակցված պատկերները նույնպես գեղեցիկ էին: Առաջին էջում մի մեծ լուսանկար տեսավ: Մի գերդաստան էր՝ էֆենդիներ ու հանըմներ, հավաքված տարիքավոր ու պատկառելի զույգի շուրջ: Հետո մի երիտասարդ զույգի նկարները տեսավ, հետո՝ մի երեխա, երկու-երեք ամսական, երիտասարդ մոր գրկին, հետո՝ հոր գրկին... Այդ աղջիկն աչքի առջև մեծացավ՝ երկու տարեկան, երեք, չորս, հինգ... Եվ շարունակ մոր կամ հոր գրկին... Ահա, այստեղ հավանաբար իր տարիքին է՝ տասնյոթ-տասնութ տարեկան, ի՜նչ բարի, ի՜նչ գեղեցիկ դեմք ունի, մազերն, ըստ երևույթին, շեկ են, իսկ աչքերը՝ կապույտ, բարձրահասակ է, նիհար, ձեռքին հովանոց... Հանկարծ աղջկա կողքին մի երիտասարդ հայտնվեց, նրա նման բարձրահասակ, կոկիկ հագնված, աղջկա հետ թևանցուկ... Հետո նրանց լուսանկարների շարքն սկսվեց՝ գեղեցիկ պարտեզներում, մաքուր փողոցներում, ջրի ափին, միշտ ուրախ, ժպտադեմ, միշտ գեղեցիկ... Եվ վերջին լուսանկարը. երիտասարդ զույգը նստած էր շքեղ բազմոցին, և մոր գրկում երեխա կար: Մայրը քնքշանքով բռնել էր զավակին և ժպիտով նայում էր նրան...

Սնդուկը, գեղեցիկ զգեստները, կոշիկներն ու անուշահոտության սրվակը հավանաբար այդ գեղեցիկ կնոջն էին... Նորից այդ հոտն զգաց, նրան թվաց, թե այդ բուրմունքը գալիս է ալբոմից, լուսանկարներից, այդ գեղեցիկ կնոջից, որն իրենով է անուշահոտել ամեն ինչը, նույնիսկ սրվակի մանուշակագույն հեղուկը...

Ո՞վ էր այդ կինը, որտե՞ղ է հիմա, նրա սնդուկն ինչպես էր հայտնվել

այստեղ: Հայրը հաճախ էր բացակայում, գնում էր Կաստամոնու, Դալեջիկ, Էնկյուրի և վերադառնում ղանազան ապրանքով բեռնավորված, և ամեն անգամ իր համար թանկարժեք զարդեր էր բերում՝ ականակուռ մատանիներ, ոսկե ապարանջաններ, մանյակներ, կանացի նրբին ու գեղեցիկ ժամացույցներ, հետո պատմում էր, թե այդ ամենն ինչպես է խլել հայերից, թե ինչպես են նրանց մորթել, ողջողջ թաղել կամ գլորել անդունդը: Մի՞թե այս կինն էլ նման բախտի է արժանացել, իսկ նրա ամուսի՞նը, երեխա՞ն... Նրանց էլ են մորթե՞լ կամ շպրտել անդունդը... Ո՞վ է սպանել... Իր հա՞յրը, թե մեկ ուրիշը, հետո սնդուկը հանձնել հորը...

Եվ թվաց, թե իր քրոջն են մորթել, նրա ամուսնուն, երեխային, քանզի հարազատ մի բան զգաց նրանց հետ, քանզի շատ կուզեր այդպիսի մի քույր ունենալ, գրկել նրա երեխային, սիրել: Կուզեր ինքն էլ նրա պես հաճելի լինել, գեղեցիկ զգեստներ հագնել, օծանելիք ցողել...

Մի անգամ նույնիսկ որոշեց հագնել այդ զգեստները: Տանը մենակ էր մոր հետ: Սնդուկը բացեց, իր ամենահավանած զգեստն առավ՝ ծաղկազարդ մետաքսից: Հետո կոշիկները հագավ: Տարօրինակ կոշիկներ էին, սև, փայլուն, կրունկները բարձր, հազիվ էր կարողանում կանգնած մնալ: Հետո գլխարկը դրեց, մուգ կարմիր, սև ժապավենով, վրան ճերմակ մետաքսից վարդեր: Հայերի տներից բերված հայելիավոր մի պահարան կար հարևան սենյակում: Կանգնել էր առջևն ու հիանում էր իրենով... Այո, ինքը նման էր այդ երիտասարդ կնոջը, չնայած նա շիկահեր էր, իսկ ինքը շագանակագույն մազեր ուներ, բայց, միևնույն է, այս զգեստը կարծես իրենը լիներ, քանզի ինքն էլ նրա նման բարձրահասակ էր ու նիհար: Մայրը, տատը, եղբայրները շարունակ խոսում էին իր նիհարությունից, ասես մեղադրեին: Հիմա տեսավ, որ իր նիհարությունը գեղեցիկ է, քանի որ ինքը նման է երիտասարդ կնոջը: Հետո մյուս զգեստները հագավ, գլխարկները դրեց, գույնզգույն թաշկինակները կապեց, շալերը գցեց ուսին, ճիշտ ինչպես պատկերազարդ հանդեսներում ներկայացված կանայք, և հանկարծ տեսավ, որ ինքն էլ այդ կանանց պես գեղեցիկ է, որ ինքը նրանցից է:

Եվ դա դարձավ նրա ամենասիրելի զբաղմունքը. ժամերով նստել սնդուկի մոտ, կախարդական բույրը շնչել, հանդեսները թերթել, լուսանկարները նայել, իսկ երբեմն, երբ մոր հետ մնում էր մենակ, զգեստները հագնել: Այդ օրերին էր, երբ անսպասելի մրսեց, տաքությունը միանգամից բարձրացավ և սկսեց հազալ: Առաջին անգամ չէր, որ հայրը բժիշկ էր կանչում: Սակայն դրանցից ոչ մեկին չսիրեց, մանավանդ վերջինը, որ գործիքներ մտցրեց կոկորդը և այնպես ցավեցրեց, որ մինչև հիմա հիշելիս աչքերից արցունք է հոսում: Այս մեկը բոլորովին նման չէ նախորդին: Երիտասարդ է, հետո շարունակ ժպտում է, բարի է, այնպես հաճելի է նրան լսել... Ինքը, որ կաթ չի սիրում, հաճույքով խմեց, քանի որ նա էր կարգադրել: Հետո գեղեցիկ է, շա՜տ գեղեցիկ, ճիշտ հանդեսների երիտասարդների պես: Ամեն անգամ, երբ ձեռքը բռնում է, որ զարկերակը չափի, մարմնով մի դող է անցնում, չափազանց հաճելի մի զգացում, թվում է ուր որ է կհալվի: Իսկ երբ մեջքն էր բացում, այնպե՜ս էր ուզում, որ նրա ձեռքերը դիպչեն, բայց, ավա՜ղ, ինչ-որ սառը գործիք դիպավ:

Արդեն երեք օր է բժիշկը կողքից չի հեռանում: Ջերմությունն իջնելու

հաջորդ օրն առավոտյան աչքերը բացեց և նրան տեսավ՝ կողքը նստած: Սենյակն ամբողջովին լցված էր քացախի հոտով, և այդ հոտն իրենից էր գալիս՝ տհաճ, կծու, հեղձուցիչ: Ինչպիսի՜ ամոթ և խայտառակություն: Կուզեր հենց հիմա դետնի տակը մտնել: Այդ դոկտորն անպայման հանդիպած կլինի հանդեսում պատկերված գեղեցիկ կանանց, որոնք, հավանաբար, այս հայ կնոջ պես անուշաբույր են... Խեղճը բավական չէ իր պատճառով անքուն գիշեր է անցակցրել, դեռ ստիպված է եղել քացախի այս գարշահոտը շնչել: Սակայն բժիշկն իր մշտական ժպիտով նայեց ու ասաց.

- Տեսնո՞ւմ ես քացախն ինչպես օգնեց:

Նա թեթևակի դիպավ ճակատին, խնդրեց, որ ջերմաչափը դնի թևի տակ և ձեռքը բռնեց, որ զարկերակն ստուգի: Իսկ երբ վերջացրել էր, չթողեց, որ դոկտորն իր ձեռքը հեռացնի, չզգաց, թե ինչպես մի քանի վայրկյան պահեց իր ափի մեջ... Բժիշկն անմիջապես անդրադարձավ, ժպտաց, ձեռքը սեղմեց, ասես սրտալից բարևեր: Հետո ջերմաչափը նայեց և ուրախ բացականչեց.

- Հրաշալի է, վտանգն անցավ, շատ քիչ մնաց, որ քեզ բուժենք:

Հետո նորից թոքերը լսեց ու ասաց.

- Սա էլ կբուժենք, եղածը մի բան չէ:

Հայրը պատի տակ, ուղղակի գորգին պառկած, խռմփացնում էր: Առավոտյան ժամը ութն էր, ուր որ է կարթնանա, մինչդեռ այնպե՜ս կուզեր մի քիչ զրուցել բժշկի հետ, մի քանի հարցեր տալ, նա պիտի շատ կարդացած լինի, հետո այնքա՜ն գեղեցիկ է, այնպես հաճելի է նրան լսելը... Եվ հանկարծ իրենից անկախ հարցրեց.

- Դոկտորս, ձեր անունն ի՞նչ է:

- Ռուբեն, - բարի ժպիտով պատասխանեց նա:

- Կարելի՞ է ձեզնից մի բան խնդրեմ, էֆենդիս:

- Իհարկե:

- Այս քացախի հոտն այնպե՜ս տհաճ է...

- Քացախը քո փրկիչն է:

- Ոչ, էֆենդիս, դուք եք իմ փրկիչը:

- Լավ, թող քո ասածը լինի, մի քիչ էլ համբերիր, այս հոտը ինքնիրեն կանցնի:

- Ոչ, էֆենդիս, այնպե՜ս կուզեի լողանալ, մաքրվել այս հոտից...

- Քեզ համար վտանգավոր է լողանալը, կարող ես նորից մրսել:

- Դոկտորս, ես պաղ ջրից մրսեցի, սառը քամու տակ, քրտնած, պաղ ջուր խմեցի:

Օգոստոսյան շոգերն էին, ոչ մի քամի չկար, տերևներն անգամ չէին շարժվում, եթե մտադրվես, դարձյալ չես կարողանա մրսել: Մի պահ մտորումների մեջ ընկավ, հետո ասաց.

- Այս շոգին դուցե վտանգավոր չէ, պայմանով, որ տաք բաղնիք անեն, արագ լողանաս և մեջքդ ու կուրծքդ լավ չփեն:

Այնուհետև մտորումների մեջ ընկավ և ասաց.

- Հնարավոր է նույնիսկ օգնի:

Բաղնիքից հետո մի սքանչելի թեթևություն զգաց: Ասես ոչ մի հիվանդություն չէր ունեցել: Դոկտորն ինչ-որ յուղ տվեց մորը, որպեսզի մեջքին ու կրծքին քսի, իսկ ինքը դուրս եկավ սենյակից: Հոտավետ մի յուղ էր, որ մայրը ջանասիրությամբ քսում էր մարմնին: Մեջքն ասես այրվեր, մի հաճելի տաքություն զգաց, շնչառությունը բացվեց, այնուհետև ընկավ թմբիրի մեջ և աչքերն ակամայից փակվեցին:

* * *

Յոհանը վերջապես կարողացավ օգտակար լինել իր զարմուհուն: Ֆելդմարշալի բացակայության ընթացքում թղթապանակի մեջ կուտակված դործերին ավելացան գլխավոր շտաբի գեներալների, Ֆրանց Ապելի և Վիլլի Ռայնհարդտի նամակները: Ֆոն դեր Գոլցն ուշադիր լսում էր համհարզին, գրառումներ անում ծոցատետրի մեջ, գործին միանգամից ընթացք տալիս, կարգադրում մերժել կամ ուղարկել ուրիշ հասցեով: Մի երկու փաստաթուղթ վերցրեց և զետեղեց բանալիով փակվող դարակում: Պաշտոնական գրությունները ներկայացնելուց հետո, Յոհանը երեք նամակներն անխոս դրեց սեղանին և թղթապանակը ձեռքին՝ մնաց ֆելդմարշալի առջև կանգնած: Վերջինս արագորեն կարդաց նամակները և վրդովված բացականչեց.

- Այս թուրքերն իրենց հայատյացությամբ բոլոր սահմաններն անցան: Հոսպիտալներում վիրավոր զինվորներն անօգնական ընկած են, որովհետև բժիշկ չկա, իսկ այս ապուշները Եվրոպայում ուսանած բժշկին աքսորում են:

- Ի դեպ, ձերդ գերազանցություն, երկու օր առաջ մայոր Վայսը հետաքրքիր մի տվյալ հայտնեց. փաստորեն վիրավորների կեսն է միայն հասնում հիվանդանոց...

- Գիտեմ, ես կարդացել եմ մայոր Վայսի զեկուցագիրը: Իսկ հիվանդանոցներում բուժվածների, ավելի ճիշտ կլինի ասել՝ չմահացածների կեսը հաշմանդամներ են: Ստացվում է, որ պատերազմի դաշտում նույնքան ենք կորցնում, որքան հիվանդանոց տանելիս և այնտեղ իբրև թե բուժելիս, և այս խայտառակ վիճակի մեղավորը թուրքական բանակի բժշկական ծառայությունն է:

Ֆելդմարշալը լռեց, նորից աչք ածեց նամակները և հարցրեց համհարզին.

- Իսկ ո՞ր մեղքի համար են աքսորել:

- Չգիտեմ, ձերդ գերազանցություն, որքան ինձ հայտնի է, նա կատարելապես անմեղ է:

- Ի՞նչ է նշանակում. «որքան ինձ հայտնի է»:

Յոհանը, հանկարծակիի եկած, կարմրեց և շուտասելուկով պատասխանեց.

- Հարցն այն է, որ գնդապետ Ֆրանց Ապելն իմ հորեղբայրն է և հանգամանքների բերումով ես լավ գիտեմ այդ սպային, որն իսկապես բարձրակարգ բժիշկ է և ավստրիական հիվանդանոցում աչքի էր ընկնում անթերի աշխատանքով, հիվանդանոցի տնօրինուհին հիացմունքով է խոսում նրա մասին:

- Ուրեմն, վաղուց եք տեղյակ այս պատմությանը:

- Ճիշտ այդպես, ձերդ գերազանցություն:

- Երբվանի՞ց:

- Հունիսի վերջից:

- Եվ ես այսօ՞ր եմ իմանում այդ մասին, - վրդովված հարցրեց Ֆոն դեր Գոլցը: - Կարո՞ղ եք բացատրել, թե ինչու:

- Զուզեցի այնպիսի տպավորություն ստացվի, թե իմ ազգականի համար եմ միջնորդում:

- Բայց հասկանո՞ւմ եք, որ ձեր անտեղի նրբանկատությամբ վտանգել եք նրա կյանքը:

Յոհանը լուռ էր:

- Իմ ստորագրությամբ միջնորդագիր պատրաստեք Էնվերի անունով և հենց հիմա հեռագրեք նրան, - կարգադրեց Ֆոն դեր Գոլցը: - Եթե այդ բժիշկը Թուրքերին պետք չէ, մենք նրան կուղարկենք Գերմանիա, այնտեղ ավելի պիտանի կլինի:

* * *

Ես պառկած եմ փորի վրա: Ինձ մերկացրել են: Ռուբենը պահանջեց: Ի՜նչ տարօրինակ անուն ունի: Հայերի անուններն ինչո՞ւ են մեզնից տարբեր: Միևնույն է, գեղեցիկ է: Ես նրան այլևս «դոկտոր» չեմ ասի, այլ «Ռուբեն»:

Նա կարողացավ համոզել հորս: Երեք օր շարունակ մարմինս մերսում են հոտավետ յուղով: Ռուբենն ասաց, որ դա կոչվում է «կամֆարա», որ շատ օգտակար է ինձ համար: Մայրս էր քսում ամենայն խնամքով, օրը երկու անգամ: Մարմինս տաքանում էր, թվում էր հիմա կվառվի, ես սկսում էի հազալ, հազալ, հազալ... Բայց Ռուբենն ի՜նչ բարի է, ժպտալով նայում էր ու ասում. «Լավ է, շատ լավ է, դա նշանակում է, որ առողջանում ես»:

Հորս ուրախությանը չափ ու սահման չկար: Այսօր ասաց. «Դոկտորս, դու իմ փոքր եղբայրն ես, բայց ափսո՜ս, որ գյավուր ես, բա քեզ նման մարդը մեղք չի՞, որ գյավուր լինի...»: Ռուբենը ծիծաղեց և ասաց. «Արաբաջիբաշի, դու ասացիր, որ քո եղբայրն եմ, ուրեմն, ինձ սիրեցիր, որ այդպիսի բան ես ասում»: «Հա, դոկտորս, քեզ շատ սիրեցի... Աշխարհում մի մարդ կար, որ ինձ համար թանկ էր, իմ աղջիկը, հիմա դու դարձար երկրորդը»: «Բայց դու ինձ սիրեցիր իմ գործի համար, ճի՞շտ է»: «Քո գործի համար, դոկտորս, բոլորն ասում էին, որ դու հրաշքներ ես գործում, հիմա աչքովս տեսա»: «Արաբաջիբաշի, դու ասացիր, որ գործերիս համար սիրեցիր, նշանակում է իմ հավատն ինձ չի խանգարում, որպեսզի բարիք գործեմ մարդկանց, ուրեմն, պետք չէ խղճալ ինձ, որ ես ուրիշ հավատ ունեմ»: «Ճիշտ ես, դոկտորս, դու շատ բարիք գործեցիր, մեր աչքերը կքոռանան, եթե մոռանանք, բայց որ դու էլ մեզ պես իսլամ լիներիր, քեզ ավելի շատ կսիրեինք»: «Արաբաջիբաշի, գիտե՞ս ինչ է ասում իմ հավատը. սիրիր քո թշնամուն քո հարազատ եղբոր պես»: «Բայց ես ինչպե՞ս սիրեմ իմ թշնամուն, - զարմացավ հայրը: - Ինչո՞ւ սիրեմ, դա ի՞նչ հիմար հավատ է, որ այդպի-

սի խորհուրդ է տալիս... Թշնամուդ պիտի մորթես, թե չէ նա քեզ կմորթի... Պիտի մորթես, մինչև թշնամիներդ վերանան աշխարհի երեսից»: «Մորթելով չես վերացնի թշնամուդ, Արաբաջիբաշի, - ասաց Ռուբենը: - Ոչ էլ թշնամությունը... Մինչև գլխիցդ չհանես մորթելու գաղափարը»: Հայրը չէր համոզվում: Ի վերջո գլուխն օրորեց ու ասաց. «Չէ, դոկտորս, շատ տարօրինակ է ձեր հավատը, ես զարմանում եմ՝ էդ ձևի ապրելով ինչպե՞ս եք մինչև հիմա դիմացել»: «Շատ դժվար, բայց դիմացել ենք և էլի կդիմանանք, միայն թե մենք էլ պիտի դաշույն պահենք»: «Բա ես ի՞նչ եմ ասում», - հաստատեց հայրը: «Չէ, մորթելու համար չէ, Արաբաջիբաշի, այլ թշնամուն հասկացնելու, որ մեզ մորթելու գաղափարը գլխիցը հանի»: «Ճիշտ ես, դոկտոր, դա է՞լ է գրված ձեր հավատում»: «Այո, մեր հավատը նաև ասում է՝ աչքդ հանողի աչքը հանիր, ատամդ ջարդողի ատամը ջարդիր»: «Շատ ճիշտ բան է ասում ձեր հավատը, բա ինչո՞ւ այդպես չեք ապրում»: «Հարցդ տեղին էր, Արաբաջիբաշի, մենք հիմա դրա պատասխանն ենք փնտրում ու չենք գտնում, բայց կգտնենք, պիտի անպայման գտնենք...»:

Չնայած Ռուբենի խոսքերից շատ բան չէր հասկանում, բայց հետաքրքիր էր նրան լսելը, կարևորը չէր, թե ինչ է ասում, կարևորը նրա արտասանած բառերն էին, նրա ներկայությունը: Նա խոսում էր հանգիստ, առանց ձայնը բարձրացնելու, և հայրը, որ երբեք ոչ մի առարկություն չէր ընդունում, որ բոլորի հետ խոսում էր գոռալով, հրամայելով, սպառնալով ու վիրավորելով (միայն իր հետ էր քնքույշ), համբերատար լսում էր նրան:

Ռուբենի ձայնը նաև հանգստացնող էր, շոյող, կոպերն ակամայից իջնում էին և միանգամից ընկնում էիր երազների աշխարհը... Այս անգամ մի գեղեցիկ երազ տեսավ. ամառային թեթև զգեստ էր հագել, որ հասնում էր մինչև ծնկները, մազերը շեկ էին և գանգուր, կանգնել էր՝ ձեռքերն իրար միացրած, գլուխը մի քիչ թեքած, որպեսզի Ռուբենը կարողանար շուրթերը դիպցնել իր այտին և նվերներով լցված զամբյուղն առաջարկել, իսկ ներքևն, իրենց ոտքերի տակ, մի հիասքանչ կատվիկ, վզին կարմիր ժապավեն, նայում էր իրենց ու մլավում:

...Արթնացավ Ռուբենի ձայնից, նա պատրաստվում էր սրվակները փակցնել: Կապույտ բոց տեսավ... Զգաց, թե ինչպես այրող մի բան դիպավ մեջքին, թիակի տակ: Ակամայից ցնցվեց: «Զվախենաս, - լսեց Ռուբենի ձայնը: - Շատ տաք է, բայց չի վառի»: Երկրորդը դրեց մյուս թիակի տակ: Հետո երրորդը, չորրորդը... Ասես տաք բերաններ են հպվել իր մարմնին և ինչ-որ բան են քաշում միջից...

Բայց այնպե՜ս կուզեի, որ իր մատները, իր ձեռքերը դիպցներ մարմնիս... Հայրս շարունակ մեր կողքին է, թե ոչ, կբռնեի նրա ձեռքը և կհամբուրեի... Սակայն աչքերս նորից փակվում են, ես լողում եմ օդի մեջ, սուզվում, անհետանում...

Արթնանում եմ Ռուբենի ծիծաղից: Հայրս էլ է ծիծաղում, իր ծանր, քլթքլթացող ծիծաղով: «Աղջիկս, - ասում է նա բարի ժպիտով: - Քնիդ մեջ դոկտորին էիր կանչում, ի՞նչ էր պատահել, վատ երազ է՞ր...»: Ամոթից քիչ մնաց գլուխս մտցնեմ վերմակի տակ: Ուրեմն քնի մեջ խոսել եմ, այդ ինչե՞ր եմ ասել... Բայց բոլորը ժպտում են, ուրեմն, անհանգստանալու պատճառ չկա: Սակայն

պառկած եմ մեջքի վրա, ո՞ւր են կորել սրվակները: Հաճելի տաքություն եմ զգում մարմնիս մեջ: Ռուբենը գոհ է, ասում է, որ դա լավ է, որ ես բուժվում եմ, որ մեկ անգամ էլ սրվակ կփակցնի և արդեն իսպառ բուժված կլինեմ և իր կարիքն այլևս չեմ ունենա:

* * *

Հազիվ կարողացավ Արաբաջիբաշի Իսմայիլին համոզել, որպեսզի թույլ տա մի կես ժամով գնալ մյութեսարիֆի մոտ: Նրա գոռգոռոցն ու սպառնալիքները հնչում էին փողոցով մեկ: Ոստիկանին կոպտորեն դուրս հրեց և ասաց. «Դոկտորը մինչև իմ աղջկան չբուժի, էս տնից ոչ մի տեղ չի գնա, մյուս հիվանդները թող սպասեն»: «Բուժելու համար չի կանչում, հետը խոսելիք ունի», - փորձում էր հասկացնել ոստիկանը: Բազմաթիվ թախանձանքներից ու երդումներից հետո վերջապես կարողացավ համոզել՝ խոստանալով այնտեղ երկար չմնալ և անմիջապես վերադառնալ հիվանդի մոտ:

Մյութեսարիֆը Ռուբենի առջև երկու հեռագիր դրեց, երկուսն էլ Թալյաթի ստորագրությամբ: Առաջինը պահանջում էր հայտնել Զանգեզուրում մնացած աքսորական հայերի քանակը, երկրորդը կարգադրում էր նրանց փոքր խմբերով անհապաղ ուղարկել Այաշ:

- Ի՞նչ է նշանակում սա, - հարցրեց Ռուբենը:

- Սա նշանակում է, որ գործերը վատ են, որ դրությունը լրջանում է:

Մյութեսարիֆն իր զրուցակցի հարցական հայացքը տեսնելով շարունակեց.

- Առաջին հեռագիրը կարծես անմեղ մի հարց է. հայտնել, թե քանի հայ է մնացել Զանգեզուրում:

- Իսկ ինչո՞ւ «մնացել»:

- Այո, ձեր հարցը շատ ճիշտ է, որովհետև Թալյաթի տրամաբանությամբ այստեղ ոչ մի հայ չպիտի մնա, - բացատրեց մյութեսարիֆը:

- Իսկ որտե՞ղ պիտի մնան:

- Ոչ մի տեղ: Այստեղ գալուս առաջին օրն իսկ ճիշտ այդպիսի հեռագիր ստացա և տեղնուտեղը պատասխանեցի: Իհարկե, միամիտ ձևանալով, թե չեմ հասկանում Թալյաթի հարցի բուն իմաստը:

- Ո՞րն է այդ բուն իմաստը:

- Բուն իմաստը հետևյալն է. պակասեցրու այդ թիվը, և որպեսզի ես՝ անհասկացողս հասկանամ նրա ուզածը, մեկ ուրիշ հեռագիր է ուղարկել, պահանջելով, որ ձեզ փոքր խմբերով ուղարկեմ Այաշ:

- Իսկ ինչո՞ւ ուղղակի չի պահանջում միանգամից, հենց այստեղ ոչնչացնել, չէ որ Զանգեզուրի յոթ հարյուր հայերին մեկ օրում ոչնչացրեցին, յոթանասունն ի՞նչ է որ նրա համար:

- Թալյաթը, տեղահանության սկզբում, ուղղակի հրահանգներ էր տալիս. ոչնչացնել, սպանել, չխնայել ոչ մեկին, իսկ հիմա ուրիշ կերպ է խոսում, մի բան է ասում, ուրիշ բան պահանջում:

- Ինչո՞վ բացատրել այդ փոփոխությունը:

- Նախ, բոլոր հայերին տեղահանեց, գցեց քրդերի ու ավազակների ձեռքը, չասած ճանապարհի դժվարությունների, սովի և հիվանդությունների մասին, այնպես որ ուղղակի հրահանգների կարիք չկա, մահվան մեքենան անխափան գործում է:

- Կարծում եք միայն դա է՞ պատճառը, - հարցրեց Ռուբենը:

- Իհարկե, ոչ: Թալյաթը, հավանաբար, չէր պատկերացնում, որ Պոլսում նստած դիվանագետները կբողոքեն: Անգամ դաշնակից երկրների դեսպաններն են բողոքում, նրանց միջնորդությամբ բազմաթիվ հայեր են փրկվել:

- Եվ վերջապես, - ավելացրեց Ռուբենը, - դավառներում աղնիվ պաշտոնյաներ եղան, որոնք հրաժարվեցին Թալյաթի հրամանները կատարել, ինչպես դուք:

- Թերևս, բայց սա նաև ուրիշ բան է նշանակում, - շարունակեց մյութեսարիֆը: - Թալյաթն ղգուշանում է ուղղակի հետքեր թողնել:

- Ուրեմն, վախենում է ապագա դատաստանից:

- Այո, վաղ թե ուշ դատաստան պիտի լինի, - համաձայնեց մյութեսարիֆը: - Բայց ի՞նչ օգուտ, զոհվածներին ետ չես բերի:

- Սակայն նոր զոհեր չեն լինի:

- Իրավացի ես, դոկտոր, մտածենք ողջ մնացածներին փրկելու մասին: Հենց դրա համար եմ ձեզ կանչել: Ջեմալ Օղուզն առավոտյան այստեղ էր: Սովորաբար բոլորին կանչում է իր մոտ, միայն ես եմ, որ չեմ ենթարկվում նրա կամայականությանը, որովհետև իշխանության ներկայացուցիչն այստեղ ես եմ, իսկ նա ընդամենը մի հանցավոր կուսակցության անդամ է... Պահանջում էր, որ վաղվանից իսկ հինգ-վեց հոգիանոց խմբերով ուղարկենք Այաշ և պնդում, որ առաջին խմբի մեջ անպայման լինեք դուք:

- Իսկ ինչո՞ւ հատկապես ես:

- Այդ մարդը մի առանձնահատուկ ատելություն ունի ձեր հանդեպ: Ասում է, թե ձեր ներկայությունը չափազանց վնասակար է տեղի բնակչության համար:

Ռուբենը ծիծաղեց.

- Որովհետև անվճար բուժում եմ այդ բնակչությանը, որը տարիներով բժշկի երես չի տեսնում:

- Մինչև հիմա չհասկացա՞ք իթթիհաթականների տրամաբանությունը: Նրանք ոչ միայն հայերին են ոչնչացնում, այլև այն ամենը, ինչ օգտակար է մեր երկրին:

- Եվ կարողացա՞ք համոզել:

- Կտրականապես մերժեցի, որ ձեր անունը լինի որևէ խմբում, ավելին՝ հեռագիր ուղարկեցի Թալյաթին, գրեցի, որ ձեր ներկայությունն այստեղ խիստ անհրաժեշտ է, որ դուք մեծ օգնություն եք ցուցաբերում բնակչությանը, ուստի ցանկալի է, որ մինչև պատերազմի ավարտը մնաք այստեղ:

- Սակայն, ըստ ձեր ասածի, եթե օգտակար եմ երկրի համար, նշանակում է ինձ առաջին հերթին պիտի ոչնչացնեն, - ծիծաղեց Ռուբենը:

- Ես գիտեմ, թե ինչ եմ անում, - պատասխանեց մյութեսարիֆը: - Ես համոզված եմ, որ Օղուզը հիմա մի ղրպարտագիր է շարադրում ձեր դեմ, և չեմ զարմանա, որ վաղը, Թալյաթի ստորագրությամբ, մի հեռագիր ստանամ անձնապես ձեր վերաբերյալ... Սակայն դարձյալ պիտի աշխատեմ հնարավորին չափ հետաձգել հրամանի կատարումը:

- Հետաձգել որքա՞ն:

- Մինչև որ ձեր ընկերները կարողանան ձեզ փրկել այստեղից:

- Կինս գրում է, որ արվում է ամեն ինչ , - մտածկոտ պատասխանեց Ռուբենը: - Բայց ինչպես տեսնում եք առայժմ այստեղ եմ:

- Այսօր իսկ հեռագրեք, որ ավելի եռանդուն լինեն, բոլոր միջոցները դործադրեն, իսկ ես ամեն ինչ կանեմ, որպեսզի վտանգը ձեզնից հեռու մնա:

* * *

...Այլևս չեմ լսելու Ռուբենին, այլևս չեմ խմելու տաք կաթը՝ մեղրով ու կարագով, զզվելի բան է, սակայն խմում էի միայն նրան դուր գալու համար: Բայց այլևս չպիտի խմեմ, որովհետև խմելուց հետո կուրծքս անմիջապես փափկում է, հազս էլ թեթևանում: Իսկ դա նշանակում է, որ շուտով կբուժվեմ: Սակայն ես բուժվել չեմ ուզում, որովհետև եթե բուժվեմ, Ռուբենին այլևս չեմ տեսնի: Ամբողջ քաղաքը սպասում է նրան: Հայրս չի թողնում, որ ուրիշ հիվանդի մոտ գնա: Ես արդեն լավ եմ, հազս գրեթե կտրվել է, սակայն Ռուբենը որոշեց մեկ անգամ էլ սրվակներ փակցնել: «Որպեսզի հիվանդությունը միջիցդ իսպառ դուրս գա»: Բայց ես չեմ ուզում, որ դուրս գա, ես ուզում եմ հիվանդ մնալ, որպեսզի Ռուբենը միշտ կողքս լինի:

Այսօր ավելի վատ բան իմացա: Ռուբենը մյութեսարիֆի մոտից էր եկել և պատմում էր, թե շուտով իրեն Այաշ պիտի ուղարկեն: Որտե՞ղ է այդ Այաշը, չգիտեմ, հավանաբար հեռու է այստեղից: Հետո ասաց, թե ամեն ինչ պիտի անի, որ վերադառնա Պոլիս: Հայրս Ռուբենի հետ խոսում էր հարգանքով և մի քիչ էլ գորովով, ասես իր շատ սիրելի փոքր եղբոր հետ խոսեր: Ուրեմն, կարող է ավելի լավը լինել, ավելի բարի, այլևս չգոռգոռալ, չկոպտել, չվիրավորել... Ոչ մի դեպքում Ռուբենը չպետք է հեռանա այստեղից, պիտի մնա միշտ մեր կողքին, մեզ հետ...

* * *

Այսպիսի բախտ չէր կարող երազել. Ռուբենը մենակ է, իր կողքին: Հոր ընկերները եկան ու կանչեցին ինչ-որ տեղ: Հայրը, որ սովորաբար տանը հազվադեպ էր լինում, օրերով բացակայում էր, արդեն մի շաբաթ կլիներ, ինչ գիշեր ու զոր հսկում էր աղջկա անկողնու մոտ, իսկ կարճատև բացակայությունների ժամանակ փոխարինում էր մայրը: Այսօր զարմանալի բան կատարվեց. հայրը փութով դուրս եկավ, բայց մայրը չէր շտապում փոխարինել նրան: Պառկած սպասում էր նրան, իսկ Ռուբենն անկյունում նստած ինչ-որ բան էր գրում

հաստ տետրակի մեջ: Արդեն քանի օր է գրում է: Ի՞նչ է գրում այդքան, արդյոք անպատշա՞ճ է հարցնելը.

- Էֆենդիս, այդ ի՞նչ եք գրում:

Ռուբենը հանկարծակիի գալով ժպտաց:

- Անկարևոր բաներ են, Այշե, իմ մտորումները:

- Իսկ կարո՞ղ եմ խնդրել, որ կարդաք:

- Սիրով կկարդայի, բայց դու չես հասկանա, հայերեն է:

Անմիջապես գլխով մի գաղափար անցավ: Այո, պետք է շտապել, այսպիսի հարմար առիթ այլևս կարող է չլինել: Մի վերջին հայացք է նետում դռան կողմը և ներքնակի տակից հանում հանդեսն ու լուսանկարների ալբոմը: Ռուբենը զարմացած է:

- Ի՞նչ լեզվով է գրված, դոկտոր, ինչի՞ մասին է:

- Ֆրանսերեն է, Այշե, այս հանդեսը կանանց համար է, այստեղ բացատրում են, թե կանայք ինչպես պիտի հագնվեն, որ ավելի գեղեցիկ լինեն:

- Իսկ կարելի՞ է գեղեցիկ լինել...

Այս ի՜նչ խայտառակ հարց տվեցի, լեզուս այլևս ինձ չի ենթարկվում... Բայց, ոչ, իմ հարցը կարծես դուր եկավ Ռուբենին: Միանգամից լրջացավ, ժպիտն անհետացավ դեմքից, բայց չարություն չկա աչքերի մեջ, ընդհակառակը, բարի և ուշադիր հայացք է:

- Ոչ միայն կարելի է, Այշե, այլև պետք է ամեն ինչ անել գեղեցիկ լինելու համար:

- Իսկ ի՞նչ պետք է անել, դոկտոր:

- Նախևառաջ պետք է ձգտել գեղեցիկ լինել ամեն վայրկյան, ամեն օր, ամբողջ կյանքում, գեղեցիկ լինել ամեն ինչով...

- Դոկտոր, իսկ ես գեղեցի՞կ եմ:

Նորի՜ց լեզուն դավաճանեց, բայց Ռուբենը շարունակում է նույն բարի լրջությամբ նայել:

- Այո, Այշե, դու գեղեցիկ ես:

- Այդ հանդեսի կանանց չափ գեղեցիկ ե՞մ:

Ռուբենն այս անգամ բարձր ծիծաղեց.

- Դու ավելի գեղեցիկ ես, Այշե, որովհետև նրանցը սարքովի գեղեցկություն է, իսկ քոնը՝ բնական:

- Ի՞նչ է նշանակում «սարքովի»:

- Դա նշանակում է, որ նրանք այնքան գեղեցիկ չեն, որքան երևում են:

Ես տեղից ելնում եմ, նրա ձեռքը խլում, համբուրում և դնում ճակատիս, հետո երկու ձեռքով եմ բռնում, ամուր, նորից համբուրում, և հանկարծ արցունքներ են հոսում, հետո սկսում եմ հազալ... Ռուբենն անմիջապես պառկեցնում է ինձ և, մի քիչ խստություն տալով ձայնին, ասում.

- Դու քեզ հիվանդի պես չես պահում, Այշե:

Պառկում եմ, ամոթից փակում աչքերս, սակայն արցունքները հոսում են ինձնից անկախ... Զգում եմ, թե ինչպես մի ձեռք թաշկինակով սրբում է: Նրա ձեռքն է: Այդ ձեռքը հանգստացնում է: Բայց ես ամաչում եմ աչքերս բացել:

Ձեռքը հեռանում է: Թեթև շրշյուն եմ լսում: Երևի նորից հանդեսն է թերթում: Ավելի լավ, թող կարդա, հետո հետաքրքիր բաներ կասի, ինձ կոգևորի: Մինչև հիմա ոչ ոք այդպիսի լավ բաներ չէր ասել: Սակայն ինչո՞ւ է երկարում լռությունը: Ձեմ համարձակվում աչքերս բացել: Ինչ-որ բան է ընկնում գետին: Բացում եմ աչքերս. լուսանկարների ալբոմն է ձեռքին: Նա բարձրացնում է լուսանկարը, դնում տեղը և նայում ինձ:

- Դու ծանո՞թ ես այս մարդկանց, - հարցնում է նա:

- Ոչ, հայրս բերեց, այդ սնդուկի մեջ էր:

Ռուբենը շարունակում է թերթել, հասնում է վերջին լուսանկարին. երիտասարդ կինը՝ երեխայի և ամուսնու հետ: Ուշադիր նայում է լուսանկարը, հետո շրջում, ետևի անծանոթ գրերը կարդում:

- Իսկ դու գիտե՞ս նրանց, դոկտոր:

Նորից իր դավաճան լեզուն. խոսելուց հետո զգաց, որ «դու»-ով դիմեց նրան: Սակայն Ռուբենը կարծես չնկատեց, նա տխուր հայացքը հառել էր լուսանկարին:

- Հարցնում ես՝ գիտե՞մ... Ոչ, չգիտեի, բայց արդեն իմացա:

- Ովքե՞ր են, դոկտոր:

- Հայեր են, Այշե, մեծ ընտանիք է Տրապիզոնից...

Նա բացեց ալբոմի առաջին էջը:

- Այս բեղավոր, բարձրահասակ էֆենդին հավանաբար հարուստ վաճառական է եղել Տրապիզոնում, կողքը կինն է, այս չորսը զավակներն են՝ երեք տղա և մի աղջիկ...

- Այդ գեղեցիկ աղջիկը վաճառականի դուստրն է՞:

- Հավանաբար, Այշե:

- Իսկ այդ վերջին լուսանկարում նրա ամուսինն է ու երեխա՞ն:

- Այո, դու արդեն ամեն ինչ գիտե՞ս:

- Ոչ, ամեն ինչ չգիտեմ... Օրինակ՝ նրա անունը:

- Նրա անունը Մաքրուհի է... Մաքրուհի Ասատրյան:

- Հիմա նա Տրապիզոնո՞ւմ է, դոկտոր:

- Հազիվ թե, Այշե:

- Իսկ ո՞ղջ է:

- Հուսանք, թե ողջ են բոլորն էլ...

Ռուբենը լռեց: Նա շարունակում էր լուսանկարները նայել:

- Դոկտոր, այնպես կուզեի, որ իմ քույրը լիներ:

Նա տխուր ժպտաց ու գլխով արեց:

- Ի՞նչ պիտի անես այս նկարները:

- Պիտի պահեմ մինչև պատերազմը վերջանա, հետո կհանձնեմ այդ կնոջը, արդեն գիտեմ, թե որտեղ է ապրում:

- Բայց ստիպված կլինես շատ սպասել:

- Կսպասեմ:

Ռուբենի դեմքին նորից իր բարի ժպիտը հայտնվեց:

- Այշե, դու ոչ միայն գեղեցիկ ես, այլև շատ բարի:

Ուզում եմ նորից նրա ձեռքը խլել, բայց Ռուբենն ինքն է մոտենում, մազերս շոյում և համբուրում ճակատս: Նրա բեղմորուքը թեթևակի ծակոտում են երեսս: Բայց ես հալվում եմ հաճույքից... Նա մեկ անգամ էլ է հպում իր շուրթերը ճակատիս և նորից տեղավորվում աթոռին, և ճիշտ ժամանակին, քանզի մոտեցող կառքի աղմուկն է լսվում դրսից, հետո հոր գոռգոռոցը: Փակում եմ աչքերս և քիչ հետո նորից հորս ձայնն եմ լսում, որն այս անգամ շշուկով հարցնում է.

- Մինչև հիմա քնա՞ծ է, դոկտորս:

* * *

...Արդեն բուժվում եմ: Օրվա մեջ միայն երկու-երեք անգամ եմ հազում, այն էլ ոչ ուժգին: Իսկ գիշերները քնում եմ հանգիստ, առանց հազալու: Այսօր մի քանի անգամ ինքս ինձ ստիպեցի հազալ: Հայրս սարսափած նայեց ինձ հետո՝ Ռուբենին: Վերջինս մոտեցավ, ուշադիր լսեց, խորամանկ ժպտաց ու դարձավ հորս.

- Լուրջ բան չկա, Արաբաջիբաշի, մի քանի օր այսպես կհազա, հետո կանցնի:

- Բայց արդեն առողջ է, չէ՞, դոկտոր:

- Իհարկե, առողջ է, ժամանակն է, որ անկողնից դուրս գա: Բայց թող զգույշ լինի, չմրսի և պաղ ջուր չխմի:

Գլուխս մտցնում եմ վերմակի տակ և քիչ է մնում գոռամ, բայց զսպում եմ ինձ, արցունքներս սակայն չեմ կարողանում զսպել... Հիմա կխայտառակվեմ, հայրս եթե տեսնի, ամեն ինչ կհասկանա, և ինչպե՞ս պիտի արդարանամ... Բայց Ռուբենը փրկում է ինձ, շշուկով դիմում է հորս.

- Դուրս գանք, քնել է ուզում, խանգարում ենք:

* * *

Արաբաջիբաշին աղջկա առողջացման առթիվ հրավիրել էր քաղաքի մեծամեծներին: Ջեմալ Օղուզին էլ էր կանչել: Օգոստոսյան զով երեկո էր: Պարտեզում սեղան էին բացել: Չնայած հոջայի ներկայությանը, օղին ու գինին հոսում էին առատորեն:

Ամեն ինչ արեց, որ խուսափի այդ հյուրասիրությունից: Ոչ մի կերպ չէր պատկերացնում իրեն այդ սեղանի մոտ: Ճիշտ է, անցած օրերի ընթացքում ստիպված էր հաշտվել Արաբաջիբաշիի մշտական ներկայությանը, սակայն Օղուզի և Նուրհանէդդինի հետ մի սեղան նստելը... Արաբաջիբաշին չէր համոզվում. «Լուրջ խոսելիք ունեմ դրանց հետ, դու պիտի անպայման ներկա լինես»: Կռահում էր, թե ինչին է վերաբերում «լուրջ խոսելիքը»: Դժնի արտաքինի տակ դիվանագետի հատկություններ ուներ: Նա միանգամից չանցավ բուն նյութին, այլ օղու հերթական շիշը դատարկելուց հետո միայն.

- Մեր հոգատար կառավարությունը գիտեր, որ Ջանղըրիում բժիշկ չկա,

այդ պատճառով էլ Պոլսի ամենալավ դոկտորին ուղարկեց այստեղ... Հիմար կլինենք, եթե թողնենք հետ գնա, ճիշտ չեմ ասո՞ւմ, Հոջա:

- Լավ բժիշկը մեծ բախտավորություն է, - համաձայնեց Հոջան: - Ալլահը մեզ պարգևել է այդ բախտը, մնում է խելոք լինենք և մեր ձեռքից բաց չթողնենք:

- Կինս և հայրս երբ հիվանդանում էին, - ասաց ոստիկանապետը: - Գնում հասնում էի Էնկյուրի՝ բժիշկ Զոհրապյանի մոտ: Հիմա որ նորից հիվանդանան, չգիտեմ, թե ինչ պիտի անեմ, այնպես որ մեր դոկտորին երկու ձեռքով պիտի պահենք:

- Ճիշտ էիր անում, որ գնում էիր Էնկյուրի, - նկատեց Նուրհանէդդին բեյը: - Գալեջիկում ընդամենը երկու բժիշկ կա, ինչ հիվանդությամբ գնաս դրանց մոտ, նույն դեղը կգրեն. մեկը՝ լուծողական, մյուսը՝ քնաբեր:

Ջեմալ Օղուզը լուռ էր: Նա երեսունհինգ տարեկան էր, մարմնի ցավերը նրան դեռ չէին դիպել լրջորեն, բացի այդ մտադիր չէր հաստատվել այս կեղտոտ գյուղաքաղաքում և, վերջապես, խոսքը գնում էր հայի մասին...

- Դուք ի՞նչ կասեք, Օղուզ բեյ, դոկտորը հենց ձեր կուսակցության նվերն է մեր քաղաքին, իսկ նվերը հետ չեն առնում, չէ՞:

- Ճիշտ է, նվերը հետ չեն առնում, - դժկամությամբ համաձայնեց Օղուզը: - Բայց պետությունն իր շահերն ունի. պատերազմի մեջ ենք, դոկտորը ռազմական բժիշկ է, վաղը կարող է պետքական լինել մեկ ուրիշ տեղում, այնպես որ...

- Ճիշտ ես ասում, Օղուզ բեյ, - ընդհատեց մյուֆթեսարիֆը: - Պետության շահն է կարևոր, բայց որպեսզի պետությունն իր շահերը պաշտպանի, մենք այստեղից պիտի ճիշտ տեղեկություն տանք: Ահա ինչու Թալյաթին հեռագիր ուղարկեցի, բացատրելով, թե դոկտորի ներկայությունը որքան օգտակար է Զանղըրիի բնակչության համար, խնդրեցի, որ իրավունք տա՝ մինչև պատերազմի ավարտը մնա այստեղ: Լավ կլիներ, Օղուզ բեյ, որ այդպիսի մի հեռագիր էլ դուք ուղարկեիք ձեր կուսակցության գրասենյակ:

- Ես չեմ կարող իմ վերադասներին թելադրել, թե ինչ պիտի անեն:

- Դուք չհասկացաք ինձ, Օղուզ բեյ, որովհետև չուզեցիք հասկանալ:

- Ես միայն մի բան եմ հասկանում. ես այստեղ եմ, որպեսզի կատարեմ իմ կուսակցության հրահանգները:

- Նույնիսկ եթե սխալ լինե՞ն, - հարցրեց մյուֆթեսարիֆը:

- Մեր կուսակցությունը չի կարող սխալվել:

Օղուզի բթամիտ վճռականությունը պատճառ դարձավ, որպեսզի մի ճնշող լռություն հաստատվի, որը սակայն շտապեց խախտել Հոջան.

- Ալլահը գիտի իր անելիքը, մենք էլ կանենք այնպես, ինչպես նա կամենա:

Քիչ հետո հյուրերը վերկացան, որպեսզի հրաժեշտ տան: Ռուբենն ուզում էր միանալ նրանց, սակայն Արաբաջիբաշին խնդրեց, որ մի քիչ էլ մնա: «Խոսելու բան կա», - ասաց նա:

Հրաժեշտը բավական երկար տևեց: Տանտերը մեկ առ մեկ հրավիրվածների ձեռքերն էր սեղմում, մեծարանքի բառեր ասում, նվերներ մատուցում, վերջում խորհրդավորությամբ հայտնեց, որ առաջիկայում մի ուրախ առիթով նո-

րից պիտի հրավիրի: Վերջապես հյուրերին ճանապարհեց, վերադարձավ, կանանց պատվիրեց, որ սուրճ բերեն, նարգիլե և հարմար տեղավորվելով դիմեց Ռուբենին.

- Տեսա՞ր այդ ավազակին, լսեցի՞ր դրան:

Ռուբենը հասկացավ, թե ում մասին է խոսքը, բայցևայնպես հարցրեց.

- Ո՞ր ավազակին, Արաբաջիբաշի:

- Ջեմալ Օղուզը, էլ ո՞վ:

- Ինձ համար դա նորություն չէր:

- Հա, բայց ես դիտմամբ սկսեցի այդ խոսակցությունը, որովհետև բոլորն ուզում են, որ դու էստեղ մնաս, այդ Օղուզից բացի:

- Այո, տեսա, - ընդունեց Ռուբենը:

- Իսկ գիտե՞ս ինչու են ուզում, որովհետև ես եմ ուզում... Ես եմ պահում դրանց, ոչ թե պետությունը, դրա համար էլ լսում են ինձ, իսկ էդ Օղուզը դեռ խամ է, դեռ չի հասկանում, թե ով եմ... Ոչինչ, կիմանա, նրան էլ խելքի կբերեմ, բայց մինչ այդ պիտի մտածենք, թե քեզ ոնց փրկենք էդ գազանից...

Նա լռեց, հետո, հայացքը Ռուբենին հառելով, հարցրեց.

- Լսեցի՞ր ոնց էր խոսում:

Ռուբենը դլխով արեց:

- Վիճակդ շատ դժվար է, դոկտոր, էդ Օղուզն ուզում էր քեզ հենց էսօր առավոտյան Այաշ ուղարկել, իսկ դա գիտես, թե ինչ է նշանակում:

- Գիտեմ, Արաբաջիբաշի, բոլորը գիտեն:

- Դա նշանակում է, որ Այաշ չես հասնի, քաղաքից դուրս գաք, թե չէ, ձեզ բոլորիդ կմորթեն... Ջանղըրիի հայերի հետ գիտես, չէ՞, ինչ արեցին...

- Գիտեմ, - պատասխանեց Ռուբենը, որի ականջից չվրիպեց Արաբաջիբաշիի յուրօրինակ մեղմաբանությունը. «արեցինք» ասելու փոխարեն գործածեց «արեցին» ձևը:

- Ուրեմն, ոչ մեկին մի հավատա, այդ մյութեսարիֆին էլ մի հավատա, գիտեմ, քաջ մարդ է, քեզ էլ սիրում է, բայց վերջիվերջո պիտի ենթարկվի Թալյաթին, ճարն ի՞նչ է, չենթարկվեց՝ կկանչեն Պոլսից կամ, ավելի վատ, վիզը կկտրեն:

- Ո՞վ:

Արաբաջիբաշիի ներսում նորից լավան քլթքլթաց.

- Դոկտորս, խելացի մարդ ես, բայց միամիտ հարցեր ես տալիս, հիմա հարյուր հոգու կանչեմ, մի ոսկի տամ, վաղն ուզածդ մարդու գլուխը կկտրեն կբերեն էստեղ, - Արաբաջիբաշին ղեյլանի մուշտուկը բերանից հանեց և ոտքերի տակը ցույց տվեց, ասես նշելով, թե գլուխը որտեղ պիտի դրվի: Հետո, խորամանկ ժպիտով շարունակեց. - Հա, ես գիտեի, որ մյութեսարիֆը հեռագիր է ուղարկել քեզ համար, բայց...

- Որտեղի՞ց գիտեիր, - ընդհատեց Ռուբենը:

Լավան նորից քլթքլթաց.

- Դոկտորս, ինչ որ կատարվում է էս քաղաքում, ես տեղնուտեղն իմանում եմ: Պարտավոր եմ իմանալ, որովհետև քաղաքի տերը ես եմ, ոչ թե մյութեսարիֆը կամ Օղուզը, կամ Նուրհանէդդինը... Դրանք բոլորն իմ ձեռքից

կուտ են ուտում... Էսօր էստեղ են, վաղը կտանեն ուրիշ տեղ, իսկ Արաբաջիբաշի Իսմայիլը ոնց կար, էդպես էլ կմնա Զանղըրիի տերը: Հիմա հասկանո՞ւմ ես, որ ես պիտի փրկեմ քեզ, ոչ թե մյութեսարիֆը:

- Ինչպե՞ս պիտի փրկես:

- Շատ պարզ: Լավ լսիր ինձ, որոշված է, որ մեր երկրում ոչ մի հայ չպիտի մնա, բոլորիդ պիտի սպանեն: Եթե էստեղ չսպանեցին, ճանապարհների վրա կմորթեն, եթե էնտեղ փրկվեցիք, ուրիշ տեղ կսպանեն, Պոլիս էլ հասնեք, դարձյալ չեք փրկվի:

- Ուրեմն հանուն ինձ պիտի դեմ գնա՞ս քո կառավարությանը:

- Չէ, ուրիշ ձևեր կան... Ես քեզ շատ սիրեցի, ոնց որ իմ հալալ եղբայրը լինես, և հետո պարտական եմ քեզ, դու իմ աղջկան փրկեցիր:

- Ես բժիշկ եմ, պիտի փրկեի:

- Գիտեմ, գիտեմ, ուրիշ բան էլ կա... Ես անուսում մարդ եմ, բայց շատ բաներից եմ հասկանում, ես տեսնում եմ, որ աղջիկս սիրահարվել է քեզ... Այսօր տխուր պառկած էր, ասացի. «Աղջիկս, ի՞նչ կա, ուրախ չե՞ս, որ բուժվեցիր»: Ասաց՝ չէ, ու լաց եղավ: Հետո ասաց. «Երանի միշտ հիվանդ լինեի, որ դոկտորը կողքս լիներ, հիմա որ բուժվել եմ, դոկտորը պիտի գնա»:

Ռուբենը ծիծաղեց.

- Դա հաճախ է պատահում, որ ապաքինված հիվանդը սիրահարվի իր բժշկին, մանավանդ ջահել աղջիկները, բայց ժամանակի հետ անցնում-գնում է:

- Երևի ճիշտ ես ասում, դոկտորս, բայց էս մեկը, ոնց որ ես եմ տեսնում, անցնողներից չի, իմ աղջկան մի հիվանդությունից ազատեցիր՝ գցեցիր մյուսի մեջ: Հիմա ոնց որ գցել ես, էնպես էլ պիտի հանես:

- Չեմ հասկանում, մտքինդ ասա, ինչպե՞ս պիտի հանեմ:

- Շատ պարզ, ամուսնացիր հետը, կդառնաս իմ փեսան, և Օղուզը չէ, Թալյաթն անգամ չի համարձակվի քո մազին դիպչել:

- Չեմ կարող, Արաբաջիբաշի, կին ունեմ, երեխաներ ունեմ:

- Ոչինչ, մեր կրոնի համար դա արգելք չէ, կարող ես միաժամանակ չորս կին պահել:

- Բայց իմ կրոնը թույլ չի տալիս:

- Կրոնդ փոխիր, դոկտորս, ինչի՞դ է պետք էդ կրոնը, որ քեզ չի թողնում մարդավարի ապրել:

- Միայն կրոնի հարց չէ, ես իմ կնոջը չեմ դավաճանի, մենք հավերժական երդում ենք տվել, մենք սիրում ենք իրար:

- Միամիտ բաներ ես խոսում, ի՜նչ սեր, ի՜նչ երդում, հիմա կարևորը կյանքն է, ապրելը:

- Ո՛չ, ո՛չ, անկարելի է... Շնորհակալ եմ, որ ուզում ես ինձ օգնել, բայց ոչ այդ գնով:

- Հասկացիր, դոկտորս, գլխիդ վտանգ է կախված:

- Ես ուրիշ կերպ չեմ կարող ապրել, ես չեմ կարող ոչ իմ հավատից հրաժարվել, ոչ էլ ընտանիքից, այդպիսի կյանքն ինձ համար հարամ կլինի, մեռնելուց վատ:

- Շա՜տ տարօրինակ մարդիկ եք՝ քրիստոնյաներդ, ձեր կյանքը դիտմամբ բարդացնում եք: Հավատն ի՞նչ է որ, կյանքից հո ավելի թանկ չի՞:

- Արաբաջիբաշի, հիմա մեկը դանակը կոկորդիդ դներ և ստիպեր հավատդ փոխել, ի՞նչ կանեիր:

- Էդպիսի բաներ մի ասա, դոկտորս, քո տեղը մեկ ուրիշը լիներ, հիմա վիզը կտրել էի:

- Որովհետև հավատդ սուրբ է, չէ՞:

- Հապա ինչպե՞ս:

- Իսկ ինչո՞ւ չես ուզում ընդունել, որ իմ հավատն էլ սուրբ է:

- Ձեր հավատը սխալ է, դոկտորս, աշխարհում մի ճշմարիտ հավատ կա՝ իսլամը:

- Դու Ղորան կարդացե՞լ ես:

- Ես անուսում մարդ եմ, դոկտորս, ինչպե՞ս պիտի կարդամ:

- Ղորանում ասված է, որ մեր Հիսուսը ճշմարիտ մարգարե է, նշանակում է նրա հավատն էլ ճշմարիտ է:

- Չի կարող պատահել, - գոռաց Արաբաջիբաշին: - Էդ որտեղի՞ց գիտես:

- Կարդացել եմ:

- Ղորա՞նը:

- Այո:

- Ծայրեծա՞յր:

- Այո, ծայրեծայր:

- Քո ինչի՞ն էր պետք:

- Ուզում էի իմանալ, վերջապես, մի երկրում ենք ապրում:

Արաբաջիբաշիի զարմանքին չափ ու սահման չկար:

- Քո ասելով ստացվում է, որ եթե քրիստոնյա եմ սպանում հավատի համար, Ղորանի դեմ եմ գնում:

- Դու ասացիր:

- Չէ, չէ, դոկտորս, խառնում ես, չի կարող էդպիսի բան լինել:

- Եթե ինձ չես հավատում, հոջային հարցրու:

- Հապա եթե Իսայի հավատն էլ սուրբ է, Ղորանում ինչո՞ւ է գրված, թե որքան շատ քրիստոնյա սպանես, էնքան ավելի հեշտությամբ կընկնես Ջեննեթ:

- Ղորանում այդպիսի բան չկա գրված, ընդհակառակը, այնտեղ ասված է, որ քրիստոնյաներին չի կարելի բռնի իսլամացնել:

Արաբաջիբաշին շվարած նստել էր:

- Ես չգիտեմ, դոկտորս Ղորանում ինչպես է գրված, ես մի բան եմ հասկանում, որ կյանքդ փրկելու համար պիտի փեսաս դառնաս և իսլամ ընդունես:

- Պատասխանս արդեն տվեցի, չխոսենք այլևս այդ մասին:

- Լուրջ մտածիր:

- Մտածել եմ, ամբողջ կյանքս այդ մասին եմ մտածում:

- Կրակի հետ խաղ ես անում, դոկտորս:

- Գիտեմ, բայց ուրիշ ելք չունեմ:

Արաբաջիբաշին տխուր նայեց նրան և «վախ-վախ» անելով գլուխն օրորեց.

- Չէ, դոկտորս, ինչպես երևում է, քեզ հետ ուրիշ կերպ պիտի խոսեմ:

Գոտու տակից «Մաուզերը» հանեց, ուղղեց զրուցակցին և ասաց.

- Վեր կաց:

Ռուբենը տեղում քարացավ:

- Վեր կաց, ասում եմ, մի ստիպիր, որ վատ բաներ անեմ, Ալլահը վկա, կարող է չդիմանամ, չնայած շատ եմ սիրում քեզ:

Ռուբենը շվարած կանգնեց:

- Գնա՛ այնտեղ:

Մտան կիսախավար միջանցք: Արաբաջիբաշին մի ձեռքով ատրճանակն էր բռնել, մյուսով՝ նավթի լապտերը: Միջանցքի ծայրին ծանր դուռ կար՝ կողպեքով փակված: Արաբաջիբաշին մի բանալի հանեց, տվեց իր գերյալին և հրամայեց.

- Կողպեքը բա՛ց:

Մի ընդարձակ սենյակ էր, որ վերածվել էր պահեստի: Լապտերի թույլ լուսավորությունը հնարավորություն չէր տալիս զանազանել խառնիխուռն լցված իրերը: Դռան մոտ, պատի տակ, մի թախտ կար՝ հարդե ներքնակով:

- Քեզ էստեղ էնքան կպահեմ, մինչև խելքդ գլուխդ գա:

Արաբաջիբաշին դուրս եկավ, դուռը վրան փակեց, վերջին անգամ ափսոսանքը հայտնեց («Վա՜խ, Մեմեդ, Մեմեդ...») և ծանր քայլերով հեռացավ:

Անթափանց խավար, որն ավելի էր ընդգծվում սենյակի խորքում երևացող պատուհանի շրջանակով: Լուսնի կաթնագույն լույսը հասնում էր այդտեղ ու կանգ առնում: Պատճառն արդյոք երկաթյա հաստ ճաղերն էի՞ն, որ արգելում էին բնության այդ սուղ պարգևի մուտքը: Իրավիճակի շրջադարձն այնքան անսպասելի էր, որ չէր հասցնում միանգամից ստանձնել իր դերը նոր հանգամանքներում: Արաբաջիբաշիի հանդեպ ոչ մի վարդագույն պատրանք չտածելով հանդերձ, չգիտես ինչու այն համոզումն ուներ, որ սա ընդամենը մանկական խաղ է, ամենաշատը չար կատակ, որ քիչ հետո կողպեքի ձայնը կլսի, դուռը կբացվի և դուրս կգա այդ խավար որջից: Սակայն կատարյալ լռություն էր և միայն ծղրիդի միալար նվագն էր լսվում:

Գրպանի ժամացույցը հանեց: Ֆոսֆորապատ սլաքներն ուղիղ կեսգիշեր էին ցույց տալիս: Ուրեմն, ավելի քան կես ժամ այստեղ է՝ անշարժ կանգնած: Բացարձակ խավարի մեջ որևէ ուղղությամբ շարժվելը հղի էր վտանգներով: Իրենից քիչ հեռու, մեկ քայլի վրա, թախտը պիտի լիներ: Զգուշորեն մոտեցավ և ձեռքը մեկնեց՝ համոզվելու, որ չի սխալվել: Մատներն ինչ-որ փափուկ բանի դիպան, որ նման էր կենդանու մորթի: Ձեռքը սոսկումով ու զզվանքով ետ քաշեց: Նույն պահին մի զույգ աչք փայլատակեց խավարի մեջ, դժգոհ մլավոց լսվեց և հատակին դիպչող չորս թաթերի փափուկ ձայնը: Տեղնուտեղը հանգստացավ, նույնիսկ երախտագիտությամբ լցվեց այդ մռլտացող գազանիկի հանդեպ, քանզի եթե նա այստեղ էր, նշանակում էր ուրիշ, իսկապես տհաճ, նույնիսկ երկյուղալի ներկայությունները բացառվում էին:

Մեջքի վրա պառկած փորձում էր անցած օրվա խելահեղ ավարտը գնահատել: Արաբաջիբաշիի առաջարկները և անգամ սպառնալիքները լիովին հաս-

կանալի էին: Այո, Այշեն սիրահարվել է: Գիտեր, որ այդպես է լինելու: Առաջին անգամը չէր, ուստի նկատում էր չնկատելու պես, նրբանկատ, ի տարբերություն Արաբաջիբաշիի, որը շատ կուզեր, բժիշկ փեսա ունենալ, ուստի ամեն ինչ անում էր միակ արգելքը վերացնելու համար. հավատը: Հարկ եղած դեպքում, առանց երկմտելու, վիզն էր կտրում, հավատն ի՞նչ է որ...

Չէր կասկածում, որ Արաբաջիբաշին իսկապես ուզում է իրեն փրկել, և եթե կենաց-մահու ստիպողականությունը չլիներ, դարձյալ պիտի դավանափոխություն առաջարկեր, թեկուզ այն պատճառով, որ եթե քրիստոնյան ամուսնանում է մահմեդականի հետ, պիտի հրաժարվի իր հավատից:

Հարդե ներքնակը բավական հարմարավետ էր, դրան գումարվեց ծղրիդների քնաբեր երգը, և չնկատեց, թե ինչպես կոպերը փակվեցին: Արթնացավ մի սոսկալի երազից. ջրի տակն էր, ուզում էր շնչել, բայց Մարմարայի աղի ջուրն էր լցվում բերանը... Մի վերջին ճիգով թևերը շարժեց, որպեսզի ջրի երես բարձրանա և այդ պահին արթնացավ: Աչքերը բացեց և մի հսկայական որձ կատու տեսավ, որ նստել էր կրծքին և մեղրագույն աչքերը հառել: Ասես հաշիվ էր պահանջում, թե ինչու է իր տեղը գրավել, ասես հասկացնում էր, որ ժամանակն է, բավական է, վեր կաց ու գնա:

Ժամը վեցն էր: Առավոտյան լույսն առատորեն լցվել էր ներս՝ բացելով աներևակայելի մի պատկեր: Ինչ ասես չկար այստեղ: Կանացի և տղամարդու եվրոպական հագուստների դեզեր, կոշիկներ, գլխարկներ, կահույք, հայելիներ, խաղալիքներ, փայտե ձիեր, զանազան խմիչքների շշեր՝ հարյուրներով իրար կողք շարված, սեղանի սպասք, հախճապակի, բյուրեղապակի, «Underwood» գրամեքենաներ, երաժշտական գործիքներ, ջութակներ, կիթառներ, գրամոֆոններ, ձայնապնակներ և նույնիսկ դաշնամուր ու ֆիսհարմոն... Երևում էր, որ այս ամենը շարունակ բերվել և առանց կարգուկանոնի դարսվել է այստեղ: Միակ բանը, որ այս սենյակում պատկանել էր տանտիրոջը, ամենայն հավանականությամբ հնամենի թախտն էր և հարդե ներքնակը (չհաշված կատուն), մնացած իրերն, առանց կասկածի, հայկական ունևոր ընտանիքներից էին խլված, իսկ դրանց իսկական տերերը հիմա նույնիսկ գերեզման չունեին... Ի՜նչ բարի էր խավարը, որ գիշերվա քողի տակ թաքցրեց այս դժնի տեսարանը, թե ոչ հնարավոր է՝ երեկվա անսպասելի զրույցի անմիջական տպավորությամբ չափազանց ծանր ընդուներ հոգեզրկված իրերի այս ծանր պատկերը:

Ձայնապնակներից մեկը վերցրեց: «Կիլիկիան» էր, Արմենակ Շահմուրադյանի կատարմամբ: Մյուսները նայեց, դարձյալ Շահմուրադյան, Կոմիտաս, Եկմալյանի պատարագից հատվածներ, արիաներ իտալական և ֆրանսիական օպերաներից՝ «բելկանտոյի» վարպետների կատարմամբ: Երաժշտական մի ամբողջ գանձարան էր դրված՝ այս բարբարոսի տնօրինության տակ, որն անպայման պիտի աղբանոց նետեր՝ տարիների ընթացքում, գուրգուրանքով ու նրբին ճաշակով կուտակված անգնահատելի այս հարստությունը:

Գրամոֆոններից մեկը լարեց, ձայնապնակների կույտից առանձնացրեց Շահմուրադյանի «Կիլիկիան» և զգուշորեն տեղադրեց պտտվող սկավառակի վրա: Երգչի թախծոտ բարիտոնը տարածվեց սենյակով մեկ.

Երբոր բացվին դռներն հուսո
Եվ մեր երկրեն փախ տա ձմեռ...

Առավոտյան լռության մեջ տխուր և հանդիսավոր մեղեդին հրաշագործ ազդեցություն ունեցավ... Վախենում էր, թե կուտակված զգացմունքները կարող են պոռթկալ և արցունքների վերածվել, սակայն հակառակը կատարվեց: Մի զարմանալի անդորր իջավ վրան, անկոտրելի մի զորություն, աներեր մի համոզվածություն զգաց իր մեջ՝ դիմադրելու ամենածանր փորձություններին: Երգը վերջացել էր արդեն, սկավառակը պտտվում էր միալար՝ թեթև խշշոց արձակելով: Կանգնեցրեց ապարդյուն պտույտները, ձայնապնակը տեղադրեց ծրարի մեջ՝ առանց ցանկանալու երկրորդը լսել: Հրաշագործ ազդեցությունը կարող էր ցրվել, ուժը տեղի տալ հուզմունքին: Այսպես ավելի լավ էր: Այսքանը բավական էր:

Երաժշտությունը, հավանաբար, արթնացրել էր տանտիրոջը: Շուտով նրա հողաթափերի քստքստոցը լսեց միջանցքից, «Վա՜խ, Մեմեդ, վախ...» տրտունջը, հետո ժանգոտ կողպեքը ճռնչաց և նրա կերպարանքը հայտնվեց դռան շեմին:

- Զվարճանո՞ւմ ես, դոկտորս, - հարցրեց նա հորանջելով: - Լավ ես անում, ինձ էլ կսովորեցնես, թե չէ էդ գործիքը բերել գցել եմ էստեղ, չգիտեմ, թե հետն ինչ անեմ:

- Ո՞վ է այդ Մեմեդը, որ այդպես ափսոսում ես նրա համար:

- Այդ Մեմեդը դու ես, դոկտորս: Իսլամ ընդունելուց հետո անունդ պիտի փոխենք և Մեմեդ կոչենք քեզ:

Հետո ձեռքի շարժումով սենյակ-պահեստի պարունակությունը ցույց տվեց.

- Էս եղած-չեղածը քեզ եմ թողնելու, էս տունը, էս այգին, հինգ հողակտոր ունեմ, երկու ջրաղաց, հայերի տներից երեքն ինձ եմ վերցրել՝ ամենալավերը, էլ չեմ ասում ոսկիների ու փողերի մասին, որոնց թիվն ու քանակն իսկի Ալլահը չգիտի: Էդ ամենը քեզ պիտի մնա, կնոջդ ու երեխաներիդ Պոլսից բեր էստեղ, կուշտ ու հանգիստ ապրեք, ես էլ ձեր կողքին կլինեմ, մեկը ձեր մազին չի համարձակվի դիպչել, Արաբաջիբաշի Իսմայիլի փեսա՜ն, դոկտոր Մեմեդը... Խելքդ գլուխդ հավաքիր, Մեմեդ, ժամանակը քիչ է, ինձ մի կատաղացրու:

Հաստ քյամարի տակից «Մաուզերն» ու կեռ դաշույնն էին դուրս ցցվել: Մեծ ճանապարհների ավազակն արդեն ոսկի պատրանքներ էր հյուսում, համոզված, որ ինքը բարի է, առատաձեռն և գուցե դա այդպես էր, միայն թե նրա ուղեղում մի բան չէր տեղավորվում. իսկ դիմացինն ուզո՞ւմ է: Ուստի անիմաստ էր նրան հակաճառելը, բացատրելը, պետք էր առայժմ ժամանակ շահել և, ամենակարևորը, դուրս գալ այս որջից: Բերանը բացել էր, որպեսզի ինչ-որ կերպ փորձեր համոզել, երբ Արաբաջիբաշին ինքը խոսեց այդ մասին.

- Հասկանում եմ, դոկտորս, քեզ համար դժվար է միանգամից հավատդ թողնել, մի օր ժամանակ եմ տալիս, գնա հանգիստ մտածիր, բայց մինչ այդ պիտի խնդրեմ, որ մորս մոտ գաս, ուզում է քեզ տեսնել:

- Ինչպես կուզես:

- Հա, նրան ասել եմ, որ համաձայն ես մահմեդական դառնալ, հանկարծ ուրիշ բան չասես:

Համաձայն էր նույնիսկ սրան, միայն թե շուտ ազատվեր այստեղից:

Մայրը նստած էր պարտեզում, թթենու տակ փռված գորգի վրա: Սովորություն ուներ այդտեղ խմել իր առավոտյան սուրճը: Նիհար և մանրիկ կին էր, սև ու երկար զգեստի մեջ կծկված:

- Անե*, մեր Այշեի փեսային բերել եմ, որ տեսնես:

«Տեսնել» բառը շատ տեղին էր, որովհետև ծեր կինը, ինչպես երևում էր, գրեթե կույր էր: Անարտահայտիչ աչքերն ուղղել էր ավելի շատ ձայնի, քան դեմքի կողմը: Հայացքով փնտրելու հետ միաժամանակ ձեռքը մեկնեց: Ռուբենը մոտեցավ, ըստ թուրքական սովորության ձեռքը համբուրեց ու մոտեցրեց ճակատին: Իսկ պառավը հինայած մատներով երեսը շոշափեց և փորձեց մի բան տեսնել:

- Կարգին սիրուն տղա է երևում, - վերջապես խոսեց պառավը: - Ասում էիր բժիշկ է, հա՞:

- Հա, անե, շատ լավ բժիշկ է, մեր Այշեին ինքը բուժեց, հիմա ողջ-առողջ է:

- Անունն ի՞նչ է:

- Մեմեդ, անե:

- Բա ասում էիր գյավուր է, - զարմացավ պառավը:

- Չէ, անե, էլ գյավուր չի, - ուրախ-ուրախ հայտնեց Արաբաջիբաշին:

- Դե լավ է, թող բախտավոր լինեն:

Արաբաջիբաշին անչափ գոհ էր: Իր ապագա փեսային ուղեկցելով մինչև փողոցի անկյունը, ասաց.

- Տեսնում ես, դոկտորս, բոլորը քո լավն են ուզում, միայն դու ես քո թշնամին: Մինչև վաղն առավոտ քեզ ժամանակ, գնա և լուրջ մտածիր:

Հետո, մտերմաբար թևը մտնելով, ավելացրեց.

- Գիտե՞ս ինչ դժվարությամբ եմ համոզել Օղուզին: Ասում էր, թե հայ գյավուրից իսլամ դուրս չի գա... Պոլսից ինչ-որ թուղթ է ստացել, որ ոչ մեկին զիջում չանեն, իսլամանալ ցանկացող-չցանկացողներին հավասարապես..., - նա բթամատը քսեց վզին: - Հասկացա՞ր, էնպես որ խելքդ գլուխդ հավաքիր:

* * *

Ստիպված եղավ սպասել մինչև մութն ընկնելը, որպեսզի իր ուզած մարդկանց կարողանա մի տեղ հավաքել և խորհրդակցել: Այսինքն՝ ուրիշներից կարծիք լսելն անիմաստ էր, քանի որ ինքն արդեն վճռել էր: Վարուժանն էր, որ պնդեց, ասելով, թե այս օրհասական վիճակում մի բուռ հայ ենք մնացել և այլևս մասնավոր խնդիր չկա: Բոլորին հնարավոր չեղավ կանչել: Թուրքերը

---

* Մայրիկ (թուրք.):

գնալով ավելի չար հայացքով էին նայում հայերին, հսկում նրանց յուրաքանչյուր շարժումը: Մեծ խմբով որևէ տեղ հավաքվելը կարող էր կասկածներ հարուցել:

Մուրթն ընկնելու հետ տասն-տասներկու հոգի հավաքվեց երկհարկանի տանը, որն ամբողջովին հայ բժիշկներն էին վարձում: Բոլորը լսել էին Արաբաջիբաշիի դստեր ապաքինման մասին, ոմանք նույնիսկ կարծում էին, թե այդքանն արդեն բավական է, որպեսզի զերծ մնար բոլոր վտանգներից: Տիրան Քելեկյանը չհամաձայնեց.

- Այդպիսի անձնավորությունների բարիքն ու չարիքը դժվար է զանազանել, դրանց հետ ավելի լավ է ընդհանրապես գործ չունենաս:

- Դյուրին է ասելը, պարոն Քելեկյան, - առարկեց բժիշկ Ալթունյանը: - Մենք չենք ընտրում մեր հաճախորդներին, այլ նրանք մեզ:

Ռուբենն ամենայն մանրամասնությամբ պատմեց իր զրույցն Արաբաջիբաշիի հետ՝ չմոռանալով արգելափակումը պահեստի վերածված սենյակում, հայկական ձայնապնակները և վերջապես հանդիպումը մոր հետ:

- Վաղն առավոտյան սպասում է իմ պատասխանին:

- Ի՞նչ ես որոշել, - հարցրեց Բյուզանդ Քեչյանը:

- Պատասխանս արդեն տվել եմ. ոչ, - վճռական ասաց Ռուբենը:

- Սպասիր, սպասիր, պետք չէ տաք գլխով վճիռ ընդունել: Լրջորեն, հանգիստ, վերջապես առողջ տրամաբանությամբ մտածիր հետևանքների մասին:

- Արդեն երկու ամիս է այդ մասին եմ մտածում, գիշեր ու զօր, մանավանդ Հակոբիկի ողբերգական պատմությունից հետո:

- Հակոբիկի պարագան ուրիշ էր, - առարկեց Տիրան Քելեկյանը: - Մի սխալն անելուց հետո, զգացական հողի վրա, երկրորդն արեց: Ահա ինչու քեզնից պահանջում եմ նախևառաջ պաղարյուն դատողություն:

- Դուք ի՞նչ կառաջարկեիք, - չափազանց հանգիստ հարցրեց Ռուբենը:

- Ես ոչինչ չեմ կարող առաջարկել... Շատ ծանր և նրբին կացություն է, որքան էլ ուղղակիորեն առնչվում է բոլորիս, այնուհանդերձ մեզնից յուրաքանչյուրն ինքը պիտի պատասխան տա իր խղճի առջև... Դժվար է, Ռուբեն, չգիտեմ ինչ խորհուրդ տալ..., - պատասխանեց Տիրան Քելեկյանը:

- Ռուբեն, կուզեի այնպես աներիր, - ասաց Վարուժանը, - որ և՛ մեր հավատը չլքեիր, և՛ ողջ մնայիր, սակայն գիտեմ, որ երկուսից մեկը պիտի զոհաբերվի... Չգիտեմ, թե որը... Երկուսն էլ թանկ են...

- Հարցն այնքան հավատին չի վերաբերում, որքան կյանքին ու մահվան, այս արհավիրքը վերապրելուն, - ճշտեց Բյուզանդ Քեչյանը:

- Իսկ ի՞նչ գնով, - հարցրեց Ռուբենը:

- Գինն այդքան կարևոր չէ, - պատասխանեց Բյուզանդ Քեչյանը: - Հիշիր Վարդանանց օրինակը, եթե նրանք էլ քեզ նման մտածեին, հայտնի չէ՝ հայ ազգն այսօր գոյություն կունենա՞ր, թե ոչ:

- Այո, Ռուբեն, տեղին էր այս օրինակը, - միջամտեց բժիշկ Զարեվանդը: - Վարդանը և իր զինակիցները հանուն երկրի, ազգի փրկության գիտակցաբար, ես ընդգծում եմ՝ գի-տակ-ցա-բար գնացին առերես ուրացման: Ճիշտ նույն պա-

բագայում հիմա գտնվում ես դու, և ես գիտեմ, որ միակ ելքն առերես ուրացումն է:

- Ոչ, սիրելի Զարեվանդ, Վարդանը և նրա զինակիցները պետական գործիչներ էին, ուստի հանուն իրենց ժողովրդի պիտի գնային այդ քայլին: Պետական գործիչն այն ճյուղն է, որն ամեն անգամ ծովելուց հետո անմիջապես ուղղվում է, մինչդեռ բանաստեղծի հոգին նուրբ անոթ է, ամեն մի անզգույշ քայլից կարող է փշրվել, ինչպես Հակոբիկի հետ եղավ... Ոչ, ոչ, անկարելի է, դուք պատկերացնո՞ւմ եք հավատուրաց բանաստեղծ, դա հրեշավոր ոճիր կլինի Աստծո դեմ:

- Բայց, Ռուբեն, խոսքը ժամանակավոր ուրացման մասին է, - փորձեց բացատրել Զարեվանդը: - Հոգիդ պահիր անմատչելի տեղում, թող ոչինչ չդիպչի նրան:

- Եթե կարողանայի այդպես դյուրությամբ հոգիս թաքցնել, կդադարեի բանաստեղծ լինելուց, կդառնայի դիվանագետ... Վերջապես, պատկերացնո՞ւմ եք հայ բանաստեղծ՝ անունը Մեմեդ...

- Սոսկալի բաներ ես խոսում, Ռուբեն, - պոռթկաց Վարուժանը: - Դու երբեք չես գնա այդ քայլին:

- Թող բանաստեղծները լռեն, - հրամայեց Բյուզանդ Քեչյանը: - Խնդիրը զուտ քաղաքական հանգամանք ունի, ուստի հույզերը մի կողմ դրեք և եկեք սթափ հայացքով նայենք իրողությանը: Ասում ես՝ Վարդանանք պետական գործիչներ էին և վասն երկրի ու ժողովրդի գնացին առերես ուրացման: Շատ ճիշտ է: Իսկ ովքե՞ր ենք մենք այսօր՝ պարոն Քելեկյանը, ես, դու, Վարուժանը, վարդապետները, դոկտորները... Մենք նույնպես քաղաքական գործիչներ ենք, պարզապես, ի տարբերություն Վարդանանց, չունենք պետություն, անգամ երկիր, բայց ունենք հայրենիք, չունենք քաղաքացիներ, բայց ունենք ժողովուրդ, չունենք հայկական օրենքներ, բայց ունենք ծանրագույն պարտականություններ, ուստի մենք պետք ենք մեր ժողովրդին, մեր այսօրվա թշնամին անհամեմատ ավելի նենգ է և արյունախում, մենք պիտի նրանից ավելի խորամանկ լինենք... Ուստի իմ կարծիքը հետևյալն է. թող մեռնի բանաստեղծ Ռուբեն Սևակը, ի՞նչ արած, առանց զոհի չի լինի, բայց թող փրկվի Ռուբեն Զիլինկիրյանը:

Բյուզանդ Քեչյանի տրամաբանված խոսքը համոզել էր բոլորին: Մի պահ լռություն տիրեց, որն առաջինը խախտեց Զարեվանդը.

- Ռուբեն, ես լիովին համաձայն եմ Բյուզանդ Քեչյանի հետ և այսքան մարդկանց ներկայությամբ ասում եմ, որ երբեք մեղադրանքի ոչ մի խոսք չեմ ասի քո հասցեին: Ավելին, կողջունեմ քայլդ:

- Ես նույնպես, - ասաց բժիշկ Ալթունյանը:

- Ես նույնպես, - կրկնեց Միքայել Շամտանճյանը:

- Ես նույնպես...

- Ես նույնպես...

- Սպասեք, սպասեք, - գոռաց Ռուբենը: - Ժամանակները նույնը չեն և կացությունը նույնը չէ, խնդիրը միայն հայոց երկիրն ու պետությունը չէր, այլև

որ հայ ազգն ամուր ու հաստատուն նստած էր իր հողի վրա, իր տան մեջ, և Հաղկերտը նրանց չէր քշում դեպի անապատները, մինչդեռ այսօր մեր ժողովուրդն ամբողջովին մահվան երախն է նետված, մենք չգիտենք, թե քանիսն են փրկվել, պիտի որ լինեն փրկվածներ, նրանք ապրում են վերջին հույսով, եթե մենք այստեղ ուրանանք մեր հավատը, նրանք կզրկվեն այդ հույսից, վերջնականապես կկոտրենք նրանց կամքը: Մեր վճռականությունը մեր վերջին զենքն է... Այո, ճիշտ ասացիք, մենք ենք մեր ցեղի առաջնորդները, եթե հարկ լինի պիտի մեռնենք, որ ազգն ապրի:

- Ռուբեն, ի՜նչ թեթևությամբ ես խոսում մահվան մասին...

- Թեթևությամբ չեմ խոսում, Դանիել, պարզապես այդ կյանքը, ավելի շուտ ամոթալի գոյությունը, որ պիտի ձեռք բերեմ ուրանալու գնով, մահվանից ավելի վատ է լինելու... Ոչ, այդ առևտուրը չեմ ընդունում, ես չեմ կարող հոգիս անունիս պես սևացնել և հետո եղկելի գոյությունը քարշ տալ:

Նա լռեց, ներկաներին նայեց մեկ առ մեկ, հետո ավելացրեց.

- Գուցե վերամբարձ են խոսքերս, ներողամիտ եղեք...

- Այո, բայց լիովին համապատասխան են ողբերգական կացությանը, - վերջապես խոսեց Տիրան Քելեկյանը, որ ուշադիր հետևում էր բանավեճին: - Սակայն մեր հոգևորականներն ինչո՞ւ են լռում, մի՞թե հավատի հարցերն այլևս չեն հետաքրքրում նրանց:

- Մեր հոգիներում հիմա փոթորիկ է, պարոն Քելեկյան, - հուզմունքից խեղդված ձայնով պատասխանեց Հովհան վարդապետ Կարապետյանը: - Մենք սրտով Ռուբենի հետ ենք, այո, մեր նվիրվածությունը առաքելական եկեղեցուն, մեր լուսավորչական հավատին, վերջապես մեր վճռականությունը հեռու մնալ ամոթալի առևտրից, մեր վերջին զենքն է և զորավոր զենք է... Ես հիացած եմ Ռուբենի հոգու զորությամբ և մաղթում եմ, որ միշտ այդպես անսասան մնա... Ահա, սա է իմ սրտի խոսքը... Բայց միտքս, բանականությունս նկուն մի ձայնով հուշում է, որ եթե վաղն Աստծո օգնությամբ վերադառնանք Պոլիս և Սուրբ ավազանով մկրտված Ռուբեն Հովհաննեսի որդի Զիլինկիրյանը ցանկանա իր սուրբ հավատի գիրկը վերադառնալ, ես չեմ լինի մերժողը:

- Լռեցրո՛ւ բանականությանդ ձայնը, հայր սուրբ, - պաղատեց Ռուբենը:

- Սպասիր, Ռուբեն, թող վերջացնեն իրենց ասելիքը... Իսկ դուք, հայր սուրբ, - դիմեց Քելեկյանը Գրիգորիս վարդապետ Բալաքյանին:

- Ես բառ առ բառ պիտի կրկնեմ Հովհան վարդապետի խոսքերը:

Տեր Հուսիկ և Տեր Վարդան քահանաներն էլ համամիտ էին իրենց վարդապետ եղբայրներին:

- Հայր սուրբեր, տեր հայրեր, այդ դո՞ւք եք խոսում, թե մեկ ուրիշը՝ ձեր բերանով: Ուրացումի գաղափարն անգամ չպիտի անցներ ձեր մտքով: Եթե մեր սուրբ նահատակներն այսպիսի դիվանագիտություն անեին իրենց խղճի հետ, մեր եկեղեցին արդեն վաղուց քանդվել էր, հավատն էլ իսպառ անհետացել... Արժեքներ կան, որ ոչ մի բանով չի կարելի փոխարինել... Մեր քրիստոնեական հավատն այդ արժեքն է և հանուն նրա, անհրաժեշտության դեպքում, զոհաբերվում է ամեն ինչ, այդ թվում և կյանքը:

Հովհան Կարապետյանը, ինքնաբուխ մի մղումով, վեր կացավ և Ռուբենին ամուր գրկեց.

- Սիրելի եղբայր, մենք բոլորս պատրաստ ենք մահվան, ես համոզված եմ՝ մեզնից ոչ մեկը ոչ մի զիջում չի անի, բայց ինչպիսի՜ ահավոր կորուստ կլինի ազգի համար, եթե քեզ նման ազնվագույն մտավորականը... Աստված մի՜ արասցե...

Արցունքները չթողեցին, որ ասելիքն ավարտի: Ռուբենը ժպտաց, մոտեցավ պատուհանին, որտեղից երևում էր Ուլու մզկիթը և, ձեռքն ուղղելով այդ կողմն, ասաց.

- Սիրելի վարդապետ, ինչպիսի՜ ահավոր խարան կլինի ազգի համար, եթե ինձ նման մտավորականը... Աստված մի՜ արասցե...

Հետո մեջքն անելով պատուհանին շարունակեց.

- Շնորհակալ եմ ձեր մտահոգության, ձեր բարի խորհուրդների համար, համոզված եմ, որ ամեն ինչ ասվեց մաքուր ու ազնիվ մղումներով: Սակայն ես արդեն վճռել ու պատասխանել եմ և գիտեմ, որ գիշերվա ընթացքում վճիռս չի փոխվի:

- Վճիռդ մի փոխիր, Ռուբեն, - ընդհատեց նրան Բյուզանդ Քեչյանը: - Բայց մի քիչ ճկուն եղիր, դիվանագետ եղիր:

- Այսի՞նքն:

- Կարո՞ղ ես պատասխանը մի քիչ հետաձգել... Որևէ պատրվակով... Մեկ օր, երկու օր, եթե հնարավոր է, նույնիսկ երեք-չորս օր:

- Հասկացա, թե ինչ ես ակնարկում, այո, հնարավոր է առաջիկա օրերին Պոլսից մի փրկարար հեռագիր գա, գուցե... Բայց գիտեմ, որ հետաձգելն անկարելի է, Օղուզն է պնդում, ես արդեն պիտի Այաչի ճանապարհին լինեի, եթե... Արաբաջիբաշին է պահել ինձ, խոստանալով, որ պիտի մահմեդականություն ընդունեմ:

- Մեղավորը դու ես, Ռուբեն, որ շուտ բուժեցիր նրա աղջկան, - կատակեց բժիշկ Զարեվանդը՝ հարուցելով բոլորի ծիծաղը և փոքր ինչ թեթևացնելով ծանրացած մթնոլորտը:

Գիշերվա լռության մեջ մուեձինի միալար ձայնը հնչեց, որն ուղղափառ հավատացյալներին կանչում էր աղոթքի: Նրանց թիվն այդ գիշեր չպիտի ավելանար:

* * *

Զանգեզուրում, ըստ էության, փոստ չկար: Ոստիկանության երկհարկանի շենքում երկու խուց էր հատկացված այդ նպատակի համար: Մեկում հավաքվում էին նամակները և փոստային առաքումները, մյուսում հեռագրիչ Զաֆարն էր նստած իր գործիքի առջև: Նա միաժամանակ կատարում էր փոստատարի, հեռագրիչի և նույնիսկ ցրիչի պարտականությունները: Գործը շատ չէր: Զանգեզուրի թուրքերը նամակ գրելու սովորություն չունեին (չասած, որ նրանց ջախջախիչ մեծամասնությունը գրել-կարդալ չգիտեր): Փոստը բացառապես գործում էր պետական նպատակների համար:

Պատերազմն սկսվելուց հետո Ջաֆարի գործը մի քիչ շատացավ, բայց իսկական ծանրաբեռնվածությունն զգաց աքսորական հայերի հայտնվելուց հետո: Երեք հարյուր հոգի, որոնցից յուրաքանչյուրն առնվազն երկու նամակ էր գրում շաբաթվա ընթացքում: Թղթատարական հատուկ տոպրակները, որ ամիսներով անգործության էին մատնված, այժմ բերնեբերան լցված հասնում էին Էնկյուրի և նույն կերպ հետ գալիս: Ջաֆարը վերջապես համոզվեց, որ փոստը չափազանց շահութաբեր ծառայություն է. առաջին իսկ ամսվա ավարտին պատկառելի մի գումարի հաշվետվություն ուղարկեց մայրաքաղաք:

Միայն հեռագրերի և նամակների բազմապատկված քանակը չէր, որ մեծացրեց աշխատանքի ծավալը: Պատերազմն սկսվելուն պես Ջաֆարին համազգեստ հագցրին և նույնիսկ տասնապետի կոչում տվեցին: Ոչ, նա չգնաց ռազմաճակատ, այլ մնաց իր տեղում, պարզապես ունեցած պարտականություններին ավելացավ ևս մեկը՝ զինվորական գրաքննիչ: Գործն առանձնապես շատ չէր. Զանգեզուրում տեղակայված զորանոցի սպաների հատուկենտ և անհետաքրքիր նամակները, որ կարդում էր ամենայն ուշադրությամբ, ծրարի վրա իրեն հանձնված հատուկ կնիքը խփում (իր հպարտության առարկան). «Գրաքննված է, Զանգեզուր»: Կարդում էր առավելագույնը հինգ-վեց միապաղաղ նամակներ, գցում տոպրակի մեջ և գնում պարապությունից հորանջող ոստիկանների հետ սուրճ խմելու և նարդի խաղալու: Մինչդեռ հիմա, հայերին բերելուց հետո, գլուխ քորելու ժամանակ չուներ: Այդ հայերը բոլորը պատվական էֆենդիներ էին: Ոչ միայն, որ նրանց նամակները հասցեագրված էին Սուլթանին, Բեհաէդդին իշխանին, մեծ վեզիրին, Թալյաթին, Էնվերին, դոկտոր Նազիմին, Խալիլ բեյին, դեսպաններին, այլև որ գրելու հատուկ մի ձև ունեին և շատ անգամ դժվարանում էր որոշել՝ թույլ տա՞լ, թե ոչ:

Բոլորը միևնույն բանն էին գրում. խնդրում էին, որ իրենց ազատեն աքսորից: Բոլորին գիտեր, հականե, թե հանվանե: Հետո այդ մարդիկ հանկարծ անհետանում էին քաղաքից. վերադառնում Պոլիս կամ քշվում հեռավոր գավառները: Երեք հարյուրից նրանց թիվը հասել էր յոթանասունի: Բայց տարօրինակ բան. Պոլիս ուղարկվող նամակների քանակը դրանից չէր նվազել: Առաջին օրերին մեկ-երկու նամակ էին գրում, ասենք Թալյաթին կամ Սայիդ Հալիմ փաշային և Հաջի բաբայի սրճարանում նստած հանգիստ սպասում փրկարար հեռագրին: Ջաֆարն առանձնապես տպավորված էր Տիրան Քելեկյանի նամակներից: Օսմանյան կայսրության ամենաբարձր, ամենամեծ մարդկանց էին հասցեագրված նրա խնդրագրերը: Մյուսներն էլ պակաս չէին. սուլթանից ու եպարքոսից բռնած մինչև նախարարներ, մեբուսներ, փաշաներ ու գեներալներ: Նամակներից երևում էր, որ այս էֆենդիները սովորական խնդրարկուներ չեն, այլ իսկապես այդ մեծամեծների բարեկամները, մտերիմները, նույնիսկ հոգեհարազատները:

Եվ զարմանում էր Ջաֆարը, որ այսպիսի մարդիկ հայտնվել են թշվառ վիճակում, Գաղաթիայի խեղճուկրակ քաղաքում: Այո, հրաշալի գիտեր, որ հրաման կա հայերին ոչնչացնել (բոլոր հեռագրերը նա էր ընդունել և անձամբ տարել մյութեսարիֆին, ոստիկանապետին, Նուրհանէդդին բեյին և ծածկագրերը

բացել), բայց մի բան մնում էր գաղտնիք. այսպիսի մարդկանց ինչո՞ւ էին աքսորել, իսկ աքսորելուց հետո ինչո՞ւ չէին թողնում վերադառնալ: Ի՞նչ խաղ էր սա, չէր կարողանում հասկանալ:

Ջաֆարը հայերին չէր սիրում, ինչպես Ջանղըրիի մեծամասնությունը: Ոչ, առանձնահատուկ մի ատելություն չուներ: Պարզապես չէր սիրում: Սակայն վերջին երեք ամսում հայերի հանդեպ սկսեց մի տարօրինակ զգացմունք տածել, որն ամենևին սեր չէր, բայց ատելություն էլ չէր: Դա ավելի շուտ երախտագիտության էր նման, բայց ոչ թե ամբողջ հայ «միլլեթի», այլ Ջանղըրիում գտնվող հայերի հանդեպ: Ճիշտ է, անցյալ տարվա նոյեմբերից պաշտոնապես զինվորական գրաքննիչ էր, բայց ոստիկան ընկերները հեգնանքով էին նայում նրա համազգեստին, մանավանդ տասնապետի տարբերանշաններին: Սակայն հայերի փոստը հայտնվելուն պես, վերաբերմունքը նրա հանդեպ արմատապես փոխվեց: Ոստիկաններն արդեն ակնածանքով էին նայում, թե լեփ-լեցուն տոպրակները շալակած ինչպես է մտնում խուցը, ժամերով փակվում, հետո հոգնած դուրս գալիս և զմռսված ու կնքված տոպրակները տանում ոստիկանության հատուկ սենյակում փակելու, որպեսզի հաջորդ օրն առավոտյան ուղարկի Էնկյուրի:

Այո, հայերի քանակը գնալով նվազում էր, բայց տոպրակների ծանրությունը մնում էր նույնը: Այժմ Ջանղըրիում մնացած յոթանասունը գրում էին ամեն օր և ում պատահի: Ասես խեղդվողներ լինեին, որ ձեռքը գցում են փրփուրին: Այդ նամակները լցված էին աղաչանքներով, հուսահատական կանչերով և նույնիսկ վերջնական հրաժեշտով: Եվ լավ գիտեր, թե ինչու: Ներքին գործոց նախարարությունից եկող հրահանգները հստակ էին ու կտրուկ. քաղաքը վերջնականապես մաքրել աքսորական հայերից:

Այդ հրահանգները նրա սրտովը չէին: Նրան որ մնար, հայերին ցմահ կպահեր այստեղ, պայմանով, որ շաբաթը մեկական նամակ և հեռագիր ուղարկեն Պոլիս: Բայց գիտեր, որ դա անկարելի է, ավելին, տեսնում էր, որ նրանց թիվը գնալով նվազում է, և նա տխրում էր...

Ոչ, նա հայասեր չդարձավ, նա համաձայն էր, իր երկրի հայահալած քաղաքականության հետ, թող կոտորեին հայերին ամենուր, միայն թե այս յոթանասուն աքսորականներին ձեռք չտային... Բայց Թալյաթն իր կարծիքը չէր հարցնում, նրա ուղարկած ծածկագրերը պահանջում էին, որ հայերը վերացվեն ամբողջ կայսրության մեջ, իսկ նրա խոսքը ո՞վ կհանդգներ չլսել... Միայն այս խելագար չերքեզը, այս մյութեսարիֆը, որ ասում են, թե հերոս է, թե սուլթանն իր կրծքից շքանշանը հանել փակցրել է նրա կրծքին: Ոստիկանները «Դալի չերքեզ» են դրել անունը: Արդեն տասը օր կլինի, ինչ Թալյաթը հեռագրեց, որ աքսորականներին փոքր խմբերով ուղարկի Այաշ, բայց չի ենթարկվում: Եվ լավ է անում: Ջեմալ Օղուզը կատաղել փրփրել է: Ինձ էլ ինչ-որ ծուռ աչքով է նայում: Արդեն մեկ շաբաթ է, առավոտվանից սկսած, օրը մի քանի անգամ գալիս կանգնում է գլխիս, որպեսզի Պոլսից եկող հեռագրերն առաջինը կարդա: Իրավունք չունի, կարգապահության կոպիտ խախտում է, բայց ի՞նչ կարող ես անել, բոլորը նրանից վախենում են, միայն չերքեզը չի վախենում: Երկու օր առաջ

վռնդեց իր սենյակից՝ ասելով, թե կառավարչության չենքն «Իթթիհաթի» գրասենյակ չէ:

Այսօր առավոտ կանուխ Օղուզը եկավ անկողնից հանեց: Վատ էր զգում, գլխապտույտ ուներ, սրտխառնուք, ստամոքսն ուղղակի շուռ էր գալիս: Ամբողջ գիշեր չէր քնել: Լուսադեմին հազիվ կարողացավ մեկ ժամ աչք փակել: «Գնանք հեռագրերը կարդանք», - հրամայեց նա: Տեսավ, որ վատ է, բայց ձևի համար անգամ չհարցրեց, թե ինչ է պատահել: Ճոճվելով, քայլերը մի կերպ գցելով հասավ ոստիկանատուն: Գիշերվա ընթացքում մի քանի հեռագիր էր եկել: Օղուզն ուշադիր նայեց և առանձնացրեց մեկը՝ Թալյաթի ստորագրությամբ: Հինգ հոգու անուն կար այնտեղ, որոնց կարգադրում էր ժանդարմների հսկողությամբ անհապաղ ուղարկել Այաշ: Դրանց բոլորին դիտեր՝ իրենց նամակներով, իսկ դոկտոր Զիլինկիրյանի հետ հասցրել էր նույնիսկ մտերմանալ. ամեն անգամ հեռագիր ուղարկելիս առատորեն վճարում էր, չասած, որ երկու անգամ եկավ երեխային նայեց: Օղուզն, ուրախ-ուրախ, հեռագիրն առավ և դուրս գալուց առաջ ասաց. «Տեսքդ շատ վատ է, դու հիվանդ ես, լավ կանես դուռը փակես գնաս տուն»: «Չեմ կարող, Օղուզ բեյ, ծառայության մեջ եմ»: «Ես քեզ արտոնում եմ, մարդ ես, չէ՞, իրավունք չունե՞ս հիվանդանալու»:

Նստել էր և չէր կարողանում վերկենալ: Ժապավենի թմբուկն սկսեց պտտվել: Նոր հեռագիր էր՝ հասցեագրված մյութեսարիֆին. «Բժշկական ծառայության հարյուրապետ դոկտոր Ռուբեն Զիլինկիրյանին անհապաղ ուղարկել Պոլիս. Էնվեր»: Հեռագիրը մայրաքաղաքից չէր, այլ ծածկագրված ինչ-որ տեղանքից: Արի ու իմացիր, թե այս հսկա և անծայրածիր ռազմաբեմի որ հատվածից էր ուղարկված այդ հրամանը:

Հանկարծ մի սառը քրտինք պատեց մարմինը: Ոչ, հիվանդությունը չէր պատճառը: Իրենից անկախ ընկել էր կայսրության երկու ամենահզոր մարդկանց միջև: Մեկը պահանջում էր անհապաղ ուղարկել ավելի հեռու, այսինքն՝ վերացնել, մյուսը՝ նույնպես անհապաղ, վերադարձնել Պոլիս: Իսկ ինքը պարտավոր էր, նույնպես անհապաղ, այդ հեռագիրը վերցնել և հանձնել հասցեատիրոջը: Էնվերն ու Թալյաթը հետո մի կերպ կհարթեին այս ակամա տարաձայնությունը, բայց ինքը գլխով պատասխան կտար. Օղուզը նրան չէր ների, եթե հիմա հեռագիրը վերցներ և տաներ Դալի Զերքեզին: Մանավանդ որ երկու բոպե առաջ հրամայելու պես խորհուրդ տվեց՝ անմիջապես վերադառնալ տուն և անկողին մտնել: Վերջապես ինքն էլ մարդ է, չէ՞, հիվանդանալու իրավունք ունի՞, թե ոչ:

Հեռագրի ժապավենը չանջատեց թմբուկից, այլ թողեց օղակ-օղակ սեղանին ընկած: Մի կերպ տեղից վեր կացավ, դուռը կողպեց, անպատասխան թողեց հերթապահ ոստիկանի դռեհիկ սրամտությունը և ճոճվելով վերադարձավ տուն: Այո, դոկտորը լավ մարդ է, հիմա ինքը՝ հեռագրիչ Ջաֆարը, կարող էր բառացիորեն մի քանի բոպեում նրա կյանքը փրկել, բայց այդ դեպքում ո՞վ պիտի փրկեր իր կյանքը... Թալյա՞թը, Էնվե՞րը, Դալի Զերքե՞զը, թե Օղուզը... Հապա կի՞նը, երեխանե՞րը... Հետո մտածեց, որ այնքան էլ մեղք չի վերցնում իր վրա: Այդպիսի բազմաթիվ «անհապաղ» հեռագրեր էին եկել, բայց մյութեսարիֆը քնաց-

րել էր դրանք իր դարակում: Այս մեկն էլ, հավանաբար, կքնացնի: Իսկ ինքն այսօր-վաղը կպառկի, կլավանա, հետո կգա և փրկարար հեռագիրը (որը չի տեսել, չի կարդացել) առոք-փառոք կհանձնի Զերքեզին:

* * *

Արաբաջիբաշին տանը չէր: Կինը դիմավորեց, առաջնորդեց պարտեզ և առաջարկեց տեղավորվել ստվերում դրված թիկնաթոռներին: «Եկան կանչեցին, - բացատրեց կինը: - Ասաց, որ չգնաք, իրեն սպասեք»: Քիչ հետո սուրճի ախորժելի բույրն զգաց, մի դուռ բացվեց, պղնձյա կլոր մի մատուցարան երևաց, հետո մի ճերմակ ձեռք և, վերջապես, Այշեն՝ իր ամբողջ հասակով, չարաճճի ժպիտը դեմքին: Արևելյան սպիտակ շալվար էր հագին՝ նուրբ բեհեզից կարված. մերկ և ցանկահարույց ոտքերը քաղքենի տիկնոջ թավշյա կարմիր, բարձրակրունկ կոշիկների մեջ էին, սակայն ամենաարտառոցը մետաքսյա ծաղկազարդ շրջազգեստն էր, որ իջնում էր վար՝ ծնկներից քիչ ցած, փարիզյան վերջին նորաձևությունը, որի նպատակն էր ընդգծել մետաքսյա գուլպաների մեջ պարփակված կանացի գեղեցիկ ոտքերը, սակայն գալիս և դեմ էր առնում շալվարին: Արևելքն ու Արևմուտքը վիճում էին, թե ով ավելի լավ կներկայացնի կնոջը:

Այշեն տեղով հրավեր էր, կանչ, քաղցր որոգայթ: Երևում էր, որ նախապատրաստվել է ամենայն հոգածությամբ, գուցեև ծնողների օրհնանքով: Սիրված լինելու մոլեգին մի ցանկություն կար նրանում, որ արտահայտվում էր ամեն ինչի՝ շարժումների, ժպիտի, թրթռացող շուրթերի, խուսափուկ հայացքների մեջ: Ամեն ինչը նրանում մատնում էր արթնացող էգին, փափուկ և ազնիվ կավը, որ անհամբեր սպասում էր հմուտ ձեռքերին, որպեսզի հունցվեր ու դառնար իսկական կին: Եվ աղջիկն, իր անսխալ բնազդով, գտել էր այդ վարպետին, բայց, ավա՜ղ, չպիտի իրականանար նրա երազանքը, և նա պիտի դառնար տեղական որևէ բռնակալի հերթական կանանցից մեկը և թոշներ ու կոպտանար նրա անասնական կրքերի տղմուտում:

Կլայեկած ու դրվագված մատուցարանը համառորեն առաջարկում էր վայելել գոլորշի արձակող սուրճը, մեղրածոր փախլավան, Զանզիբարի սառնորակ աղբյուրների ջուրը և այս ամենի հետ, գերագույն հաճույքով, ծխել անգլիական սիգարետը, որ հայտնի չէ, թե ինչպես է ընկել Արաբաջիբաշիի ձեռքը: Այսինքն՝ լավ էլ հայտնի է: Քիչ հետո, դրանց կողքին, դրվեցին սեխն ու ձմերուկը, տեղական քաղցր պտուղները: Օգոստոսյան այս զով առավոտին անկարելի էր ավելի մեծ հաճույք երազել:

Մի պահ իրեն պատկերացրեց որպես տանտեր կամ որպես սիրված փեսա՝ այստեղ նստած, ծույլ Արևելքի մեղկ ու քաշող մթնոլորտում, մութաքային թիկնած թզբեհ գցելիս, նարգիլե ծխելիս և բութ ու անտարբեր հայացքով աշխարհին նայելիս: Այո, հենց այդպես կլիներ:

- Դոկտոր, հայրս ասում է՝ չես ուզում իսլամ դառնալ և այստեղ մնալ, ճի՞շտ է:

- Ինքն ասա՞ց քեզ:

- Ոչ, այսօր առավոտյան խոսում էր մորս հետ:

- Դու շատ ես ուզո՞ւմ, որ իսլամ դառնամ:

- Այո, շատ:

- Ինչո՞ւ:

- Որ մնաս այստեղ, որ չգնաս...

- Բայց, Այշե, բոլոր դեպքերում պիտի գնամ. կինս ու երեխաներս սպասում են ինձ:

- Թող նրանք էլ գան այստեղ, դոկտորս, ես ձեզ բոլորիդ կսիրեմ, երդվում եմ:

- Իմ կինը չի ցանկանա գալ այստեղ:

- Ինչպե՞ս չի ցանկանա: Ամուսինը դու ես, չէ՞, ստիպիր:

Նա ապշած էր, մոլորված:

- Ձեզ մոտ հակառա՞կն է, դոկտոր... Գյավուրների մոտ կինն է՞ տերը:

- Ոչ, Այշե, մենք անհավատ չենք, պարզապես մերը տարբեր է, և հետո, մեր ընտանիքում մեկս մյուսի տերը չէ, մեզնից յուրաքանչյուրը հարգում է մյուսի ցանկությունը, և այդպես ավելի լավ է:

- Հիմա ի՞նչ պիտի պատասխանես հորս:

Ռուբենը ձայնին մի քիչ խստություն տալով, բացատրեց.

- Աղջիկս, դա տղամարդկանց խոսակցություն է, պետք չէ, որ դու խառնվես... Ճիշտ եմ ասում, չէ՞:

- Այո, դոկտորս, ճիշտ ես, - համաձայնեց նա և գլխիկոր հեռացավ:

Քիչ հետո Արաբաջիբաշին հայտնվեց: Նա քրտնած էր, հավանաբար շտապելուց: Մոտեցավ, գլխով բարևեց հյուրին և ձմերուկի շերտն առնելով սկսեց ագահաբար ուտել: Հետո ձեռքերը թաշկինակով սրբեց ու դիմեց Ռուբենին.

- Լսեցեք, գիտեմ, թե ինչ ես ասելու:

Ծխախոտ վառեց և շարունակեց.

- Օղուզի մոտից եմ գալիս: Հրաման էր ստացել Թալյաթից, որ հինգ հոգու ուղարկի Այշ: Քո անունն էլ կար մեջը...

Ուզեց հարցնել, թե աչքովդ տեսա՞ր, բայց հիշեց, որ կարդալ չգիտի:

- Լավ լսիր, դոկտորս, քո անունն էլ կար մեջը... Հասկանո՞ւմ ես, Օղուզը հատուկ կարդաց ինձ համար և ասաց, որ Թալյաթի հրամանն է: Վերևն՝ Ալլահ, ներքևը՝ Թալյաթ... Տեսնեիր Օղուզը ո՛նց էր ուրախացել: Ինձ որ մնար, ես հիմա քեզ կտանեի նորից էն սենյակը, հաց ու ջրից կզրկեի, կպահեի էնքան մինչև խելքդ գլուխդ գար: Բայց Թալյաթի դեմ չեմ կարող գնալ... Բոլորի դեմ կարող եմ, Օղուզ-մողուզ ինձ համար հաշիվ չեն, բայց նրա դեմ չեմ կարող...

- Պետք չէ, որ ինձ համար...

- Դու սուս կաց, Արաբաջիբաշին, որ մի բան որոշեց, պիտի անի, աչխարհը շուռ գա՝ պիտի անի: Հիմա լավ լսիր: Վաղն առավոտյան ձեզ պիտի տանեն Այշ: Օղուզն ասաց, հատուկ կանչել էր, որ կառքեր ապահովեմ: Դու գիտես, որ առանց իմ օգնության, էս քաղաքից ոչ ոք չի կարող դուրս գալ... Հա, էն էլ ասեմ, որ Ձերքեզն էլ համաձայն է: Մինչև հիմա Թալյաթի հրամաններն ուշացնում էր, չէր կատարում, բայց էս անգամ համաձայնեց, էլ տեղ չուներ... Ինձ

լավ լսիր, դոկտոր... Մի երկու ժամ հետո ձեզ կկանչեն Զերքեզի մոտ՝ հայտնելու, որ վաղը մեկնում եք... Ալլահը քեզ մեկ օր էլ ժամանակ տվեց, գնա տուն և լավ մտածիր:

- Շնորհակալ եմ, Արաբաջիբաշի, որ այդպես մտահոգված ես ինձ համար...

- Հավատում ես, չէ՞, որ ուզում եմ փրկել... Ես բարիքը հասկացող մարդ եմ, դոկտորս, հետո սիրեցի քեզ:

- Հավատում եմ, աչքովս եմ տեսնում, միայն թե մի չարչարվիր, իզուր է:

- Ո՞նց թե իզուր է, պիտի փրկեմ քեզ... Ասե՞մ, թե Օղուզի մտքինն ինչ է:

- Գիտեմ, մի ասա... Ես ու դու փրկությունը տարբեր ենք հասկանում:

- Այ դոկտորս, ի՞նչ տարբեր, կյանք կա, ապրել կա, պիտի փրկվես, որ ապրես:

Ռուբենը ժպտաց, գլուխն օրորեց ու ասաց.

- Երբեմն էլ մեռնել կա, որ քո ասած ապրելուց ավելի լավ է:

Արաբաջիբաշին ձեռքը սեղանին խփեց.

- Մութ բաներ ես խոսում, դոկտորս, ես չեմ հասկանում: Հիմա քեզ նորից էնտեղ կփակեի, ափսո՛ս չեմ կարող... Գնա, գնա տուն, քիչ հետո ձեզ պիտի կանչեն մյութեսարիֆի մոտ... Մտածիր, մի օր էլ ունես:

* * *

Աքսորական հինգ հայեր նստած էին գրասենյակում: Մյութեսարիֆը, ձեռքերը ետևը գցած, ետուառաջ էր անում նրանց և գրասեղանի միջև:

- Զանղրի գալուս առաջին օրվանից, ամեն ինչ արեցի, որպեսզի աքսորական հայերը մնան այստեղ մինչև պատերազմի ավարտը: Ինձ ոմանք մեղադրում են հայասիրության մեջ, իսկ ես պատասխանում եմ, որ հայերին չէ, որ սիրում եմ, այլ նրանց, ովքեր օգուտ են տալիս մեր երկրին: Այս քաղաքը յոթ հարյուր տարի բժիշկ չուներ, իսկ հիմա միանգամից յոթը հայտնվեցին, յոթն էլ հայեր, քաղաքում ընդամենը մի քանի ուսուցիչ կա, մինչդեռ միանգամից մի քանի հարյուր մտավորականներ եկան, որոնք երեխաներին անվճար գրել-կարդալ են սովորեցնում, նույնիսկ ճարտարապետ կա, որը հանրային պարտեզի նախագիծն է մշակել Զանղրրիի համար: Զերկարացնեմ, այս ամիսների ընթացքում ձեզնից ամեն մեկը մի օգտակար բան է արել քաղաքի համար, և ես շնորհակալություն եմ հայտնում բոլորիդ:

Վերջապես դադարեց գրասենյակը չափչփել, եկավ նստեց աթոռին և ներողություն խնդրելու պես ասաց.

- Բայց, ավա՛ղ, ցանկություններս հնարավորություններիս համապատասխան չեն... Վերևից եկող կարգադրություններ կան, որոնք կարող եմ որոշ ժամանակ անտեսել, ձգձգել, բայց չկատարել չեմ կարող, եթե նույնիսկ դրանք վնասակար են երկրի համար... Ուրեմն, այսպես, Պոլսից պահանջում են, որ ձեզ՝ հինգ հոգուդ, ուղարկենք Այաշ, ուստի վաղն առավոտյան, ցավոք սրտի, պիտի մեկնեք:

- Իսկ ճանապարհները վտանգավոր չե՞ն, բեյս, - հարցրեց հայերից մեկը: - Ասում են ավազակներ են վխտում:

- Ես այդ մասին մտածել եմ: Ժանդարմների մի խումբ կուղեկցի ձեզ մինչև Էնկյուրի: Հատուկ նամակ եմ ուղարկում նրանց հետ այնտեղի մյութեսարիֆին, որպեսզի հետագա ճանապարհին նա ևս ապահովի ձեր անվտանգությունը:

- Մենք հավատում ենք ձեր ազնվությանը, էֆենդիս, - ասաց Ռուբենը: - Սակայն ժանդարմները ենթարկվում են Նուրհանէդդին բեյին, իսկ նա, ինչպես գիտեք, հայերին տանել չի կարող:

- Ճիշտ եք, դոկտորս, բայց Նուրհանէդդին բեյը ենթարկվում է ինձ, ես առաջին դեմքն եմ այստեղ, չենթարկվել ինձ, նշանակում է դեմ գնալ կառավարությանը:

- Ուրեմն, դուք համոզվա՞ծ եք, որ անվտանգ կհասնենք Էնգյուրի, - հարցրեց Վարուժանը:

- Եթե համոզված չլինեի, չէի ուղարկի: Պատվով եմ երդվում, որ բոլորդ անվտանգ տեղ կհասնեք:

* * *

Հինգ հոգի էին. Ռուբեն Սևակ, Դանիել Վարուժան, Օննիկ Մաղազաճյան, Վահան Քեհյայան և դեռևս Պոլսից բոլորին քաջ ծանոթ հացթուխ Հարությունը: Մոլորված կանգնել էին կառավարչության շենքի առջև: Ոչ մեկը չէր խոսում: Կարծես ասելիք չէր մնացել:

- Դուք հավատո՞ւմ եք այս մարդու խոսքերին, - հարցրեց հացթուխը:

- Ես նրա ազնվությանը հավատում եմ, - պատասխանեց Ռուբենը: - Իսկապես պարկեշտ մարդ է, բայց գիտեմ նաև, որ Օղուզն ու Նուրհանէդդինը սրիկաներ են:

- Եվ այդ երկուսն են ներկայացնում օրվա քաղաքականությունը, - նկատեց Վարուժանը: - Հարցն այն է, թե ով ավելի ուժեղ դուրս կգա:

- Մի՞թե պարզ չէ, - զարմացած հարցրեց հացթուխը:

- Պարզ է ամբողջ երկրի առումով, - ասաց Ռուբենը: - Ամենուր ոճրագործներ են նստած, բայց այստեղ առայժմ հավասար պայքար է ընթանում: Ի վերջո փաստ է, որ նրա գալուց հետո հայերից ոչ մեկը չի տուժել:

- Այո, բայց մինչև ե՞րբ կարող է դիմադրել:

- Նոր է եկել, - պատասխանեց Ռուբենը, - կարծում եմ դեռ մի քանի ամիս էլ կմնա, և այդ ընթացքում, համոզված եմ, օգտակար կլինի մեզ:

- Իսկ ճամփորդությունն ինչպե՞ս կանցնի, Ռուբեն, - հարցրեց Վարուժանը:

- Վաղվա համար ես լավատես եմ, - պատասխանեց Ռուբենը: - Դու մտածիր, թե ինչ պիտի տանենք Սիամանթոյին, չէ որ նա Այաշում է:

- Լավ հիշեցրիր, նա մրգերի խենթ է, հետս դեղձ կտանեմ:

- Դեղձ Այաշում էլ կլինի: Ես ուզում եմ հետս փախլավա տանել, այստեղինը շատ համեղ է:

- Այստեղից մինչև Այաշ չորս օրվա ճանապարհ է, Ռուբեն, պատկերացնո՞ւմ ես՝ քո փախլավան ինչ կդառնա:

- Իրավացի ես, Դանիել, բայց ինչպե՜ս կուրախանար...

- Ռուբեն, կարծում եմ, որ մեր հայտնությունն այնտեղ ավելի մեծ ուրախություն կպատճառի նրան:

Սպասվածին հակառակ, գիշերը հանգիստ քնեց: Միայն կողքի տան աքաղաղն էր, որ մինչև լուսաբաց, խախտելով ժամերը, երեք անգամ կանչեց՝ ամեն անգամ արթնացնելով օրվա ծանր տպավորություններից հոգնած ու խոր քուն մտած բժիշկներին: Երրորդ անգամ որ կանչեց, Ռուբենը չդիմացավ, գլուխը հանեց պատուհանից և, կատակով թե լուրջ, դիմեց աքաղաղին.

- Լսիր, թռչուն, բավական է, ես իմ Տիրոջը չեմ ուրանալու:

Հայերի խումբը շագրենակաշվի պես նվազում էր: Այս ընթացքում մի քանիսն իրավունք ստացան վերադառնալ Պոլիս: Սակայն բոլորը տեղ չհասան. ճանապարհներին արյունի ծարավ ավազակներ կային: Յոթանասունը դարձել էր վաթսուն: Հիմա ևս հինգը պիտի մեկնեին: Այաշ կամ դեպի անհայտը: Ուստի Զանղըրիի կամրջի մոտ հավաքված հիսունհինգ հայերը հրաժեշտի յուրահատուկ մի արարողության էին մասնակցում: Մահվան կնիքը կար նրանց խոսքերում և շարժումների մեջ, նրանց ժպիտը՝ արցունքը խեղդելու ճիգ էր, խրախուսանքի և բարեմաղթանքի բառերը բումերանգի պես գալիս խոցում էին նրանց սրտերը: Միլիոնավոր զոհերի ցավն էր խտացել այստեղ, որ ստիպում էր արժանապատվությամբ կրել ամեն ինչ: Իսկ արժանապատվությունը ուժ էր ծնում:

Ծածկովի երկու կառք էր կանգնած, կողքին հինգ ժանդարմ՝ իրենց ձիերի սանձերը բռնած և մեկական զինված ոստիկան:

Ժանդարմների հիսնապետը մոտեցավ ճանապարհողներին և ձեռքով նշան արեց, որ ետ քաշվեն: Հետո Ռուբենին տարավ մի կողմ և ասաց.

- Արաբաջիբաշին հարցնում էր, թե դոկտորը բան չունի՞ իրեն ասելու:

- Ե՞րբ տեսար նրան:

- Այսօր, լուսադեմին:

- Ջէ, ասելիք չունեմ, արդեն ասել եմ:

Հիսնապետը նշան արեց, և ժանդարմները հարձակվելով աքսորականների վրա՝ ձեռքերը կապեցին: Ռուբենը դիմեց նրան:

- Ինչո՞ւ եք կապում մեր ձեռքերը:

- Կանոնադրությունն է պահանջում, կալանավորներին տեղափոխում են կապված ձեռքերով:

Զինված ոստիկանը նստեց նրանց առջև: Մերկացված սվինը շողշողում էր առավոտյան արևի տակ: Ռուբենը նստած էր Վարուժանի և Օննիկ Մաղազաճյանի միջև: Այդպես ավելի հարմար էր: Երեքով քիպ սեղմվել էին իրար, և կառքի ճոճվելու հետ միմյանց նեցուկ էին լինում: Ոչ մի տեղից բռնվել չէին կարող: Եվ այդպես պիտի ճամփորդեին մի քանի օր:

Հիշեց, թե ինչպես երկու ամիս առաջ, մերկացված սվինների տակ, գալիս էր այստեղ: Ձեռքերն այն ժամանակ կապված չէին և հեծյալ ոստիկաններ չկա-

յին: Եղանակն էլ այսպես հաճելի չէր: Օգոստոսի վերջին օրերն էին, շոգը երկու ամիս շարունակ իր կատաղությունը թափելուց հետո թուլացել էր, մեղմացել, բարեկամացել մարդկանց հետ, և հիմա, քաղցր պտուղների տեսքով, ամռան վայելքն էր պարգևում: Վարուժանի գլուխն իր ուսին էր: Նա քնած էր: Մինչև կառք նստելն ասաց, թե գիշերը չի քնել և սաստիկ գլխացավ ունի: Մոտն ասպիրինի փոշի կար: Առաջարկեց, բայց ժամանակ չեղավ խմելու: Կառքը շարժվելուն պես կոպերը կախվեցին, հետո՝ գլուխը, որը հիմա հայտնվեց իր ուսին: Այդպես գուցե ավելի լավ եղավ, թող քնի, քունը բուժում է... Ջնայած շատ կուզեր զրույցով ճանապարհը կարճել:

Ի՞նչ հասցրեց անել: Ինչո՞ւ նորից նույն հարցն սկսեց փայտփորի նման ուղեղը կտցել: Առաջին անգամ այդ հարցը հնչեց Հայդար փաշայի կայարանում, գարշահոտ և անշարժ գնացքի մեջ: Իսկ ինչո՞ւ այդ հարցին չի պատասխանում այսպես. «Այն, ինչ արել եմ, առանձնապես մի բան չէ, բայց կյանքն առջևս է, դեռ կհասցնեմ անել»: Բայց արդյո՞ք դա ճիշտ պատասխան կլինի... Հարցն այն չէ, որ այս ճանապարհն անստույգ է, անորոշ, որ իսկապես հավատալով Դալի Ջերքեզի ազնվությանն, այլևս վաղուց չի հավատում այս երկրին: Դա հարցի մի կողմն է, քանզի անկախ այն բանից, ճանապարհը բարեհաջող կլինի, թե ոչ, պետք է ներքուստ համոզված լինես, որ եղար անսխալ, չմեղանչեցիր վերին ճշմարտության դեմ... Առանց ինքդ քեզ խաբելու իմանաս, որ կյանքիդ մի շրջանն ավարտվեց, իսկ դա նշանակում է ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին վերջակետ դնես: Եվ դրեց այդ վերջակետը կամրջի մոտ՝ ժանդարմին հայտնելով, որ Արաբաջիբաշիին ոչ մի ասելիք չունի:

Ինչպե՜ս կուզեր այս բաների մասին խոսել Վարուժանի հետ, բայց քնած է... Գուցե ավելի լավ. նման զրույցը կարող էր ուրիշ, ծանր ու ճնշող գաղափարներ արթնացնել: Արդյոք կուզե՞ր ինքն էլ այսպես քնով ընկնել մինչև ճանապարհի ավարտը և արթնանար միայն տեղ հասնելուց հետո կամ գուցե այլևս... Իսկ մի՞թե շատերը, գուցե մարդկությունն ամբողջ քնած չի ապրում իր կյանքը... Կարճատև արթնացումներ են լինում միայն ծանր ցավի պահերին, հետո նորից թմբիր, մահաքուն... Մի՞թե քնած չէր մոլորակը, մարդկությունը, վերջապես հայ ազգն այս մարդակուլ պատերազմից առաջ... Դժվար է արթուն ապրելը... Քնածները չեն սիրում արթուն մարդկանց, քանզի խանգարում են նրանց անդորրը... Մարդկության պահակներ, որ կարգված են ինքնակամ, ուստի ոչ ոք չի ուզում լսել նրանց... Անգամ քնի մեջ մշտապես արթուն, իսկ նրանք քնած են արթնության մեջ... Օ՜, հերոսական ոչինչ չկա դրանում, միայն տաժանելիության զգացում, որ իզուր է այդ ամենը... Երանի աչքերդ հանած լինեին և չտեսնեիր ոչինչ... Գուցե կուզեր քնի մեջ պատսպարվել, որպեսզի ավելի թեթև տաներ այս ստորացումը, կապկպված ձեռքերով ճամփորդելը...

Սակայն հարցը շարունակում էր ուղեղը տանջել. ինչի՞ համար ապրեց, վասն ինչի՞, ընդամենն այդ պարզ գործողությունն անելո՞ւ, ճիշտ տեղում, ճիշտ ժամանակին ճի՛շտ վերջակետը դնելո՞ւ... Շա՞տ է, թե քիչ: Շատ երբեք չի կարող լինել, քիչ՝ թերևս... Որովհետև դեպի վեր ձգտողին միշտ թվալու է, թե ինքը նույնիսկ գետնից չի կտրվել... Ինչի՞ համար... Կամրջի մոտ արտասանված

այդ երկու բառի համա՞ր... Շա՞տ է, թե քիչ... Ոչ շատ է, ոչ էլ քիչ... Ճիշտ այնքան, որքան պետք էր... Ուրիշ ոչինչ պետք չէր ասել... Այլևս նոր փորձություն չի կարող լինել: Հոգու վրա հիմա զարմանալի մի անդորր կա, աստվածային մի գոհություն, որ չխուսափեց իր ճակատագրից, արժանապատվությամբ ընդառաջ գնաց և երբեք չվարանեց շիտակորեն նայել իր առջև... Եվ չքարացավ սոսկումից...

Ինչի՞ համար ապրեց... Սիրո՞, գեղեցկությա՞ն... Ի՞նքը գտավ սերը, թե՞ սերն՝ իրեն... Ստույգ է, որ փնտրում էր տենդագին և միայն Յաննիին հանդիպելով իմացավ թե ինչ է սերը և գեղեցկությունը... Ուրեմն, Յաննին սերն է՞ր... Ոչ, նրանք երկուսով ստեղծեցին իրենց սերը, որը գուցե (թո՛ղ սրբապիղծ չհնչի) դեռևս մանկությունից սիրելի Հիսուսի պես կարողանար ասել, թե «այս աշխարհից չէ», որովհետև աշխարհն ապրում էր առանց սիրո, ահագնացող ատելության մեջ... Ութ տարի շարունակ ամեն ինչ արեցին դիմադրելու այդ մահաթույն ատելությանը, ապացուցելու, որ սերը պիտի ապրի «այս աշխարհում», իսկ որպեսզի ապրի, չուզեցին այն հարմարեցնել առօրյային և այդ պատճառով փաստորեն մնացին կյանքից դուրս... Աշխարհն ուզում էր իր ատելությունը մատուցել որպես սեր, նրանք մերժեցին այդ խաբեությունը, և նրանց ճշմարիտ սերը դարձավ մահ...

Իսկ եթե չլիներ սերը, կարո՞ղ է համաձայներ առաջարկված առևտրին և հոգին սևացնելով փրկեր մարմինը: Ի՜նչ ծիծաղելի հարց տվեց... Ճակատագիրն ամեն ինչ նախապատրաստել էր միասին՝ Յաննին անբաժան էր այս ճանապարհից... Ամեն ինչ նախապատրաստված էր միանգամից, բայց մատուցվում էր հաջորդաբար... Իսկ վերջակետն արդեն դրել է:

Վարուժանն արթնացավ: Ասաց, որ գլխացավը թեթևացել է, բայց հիմա էլ վիզն է ցավում:

- Ձեռքերս ազատ լինեին, մի քիչ կշփեի կանցներ, - ասաց Ռուբենը: - Բայց ինքդ էլ կարող ես օգնել քեզ. շարժիր գլուխդ, և կթեթևանա...

Դիմացը նստած ոստիկանը խոժոռված նայում էր նրանց:

- Ռուբեն, մի հարց կար, որ միշտ ցանկացել եմ քեզ տալ, բայց չգիտեմ ինչու քաշվել եմ:

- Մի քաշվիր, Դանիել, ուզածդ հարցը տուր, սիրով կպատասխանեմ:

- Ճի՞շտ է, որ մինչև տասը տարեկանդ հայերեն ոչ մի բառ չես արտասանել:

Ռուբենը ժպտաց.

- Սխալ կլինի ասել, թե չեմ արտասանել, պարզապես թրքախոս էինք ամբողջ ընտանիքով, չնայած հայրս պատարագը ծայրեծայր անգիր գիտի, հայերեն գրերը գիտի, հայատառ թուրքերենով նամակներ էր ուղարկում ինձ Լոզան:

- Իսկ ինչպե՞ս սովորեցիր հայերեն:

- Տասը տարեկան էի, հայրս տարավ հայկական վարժարան, և պարզապես հրաշք կատարվեց. կարճ ժամանակում սովորեցի գրել ու կարդալ... Ասես այդ լեզուն ժամանակին իմացել էի, հետո մոռացել, և մի թեթև խթան էր պետք, որպեսզի վերհիշեի:

- Հիմա եմ հասկանում քո նախանձախնդրությունը. մեկ անգամ կորցրածը նորից գտնելուց հետո առավել թանկագին է դառնում:

- Եվ ոչ մի դեպքում չէիր ցանկանա երկրորդ անգամ կորցնել:

Ճանապարհին երկու տեղ դադար տվեցին: «Ձիերը մեղք են, պետք է ջուր խմեն, մի քիչ հանգստանան», - բացատրում էր հիսնապետը և «տեղափոխվող կալանավորների» կապերը քանդելով, հնարավորություն տալիս, որ նրանք էլ ծարավը հագեցնեն:

Վերջապես վեց ժամ չարչարվելուց հետո հասան Թյունա գյուղի մոտ գտնվող պահակակետին, որտեղ նրանց կերակրեցին: Հիսնապետը հատուկ նշեց, որ այդ ճաշը կառավարության հաշվին է: Օննիկ Մաղազաճյանը, որ դիմացն էր նստած, աղամանը վերցնելու պատրվակով գլուխը մոտեցրեց և շշուկով ասաց.

- Լավ է, որ մեզ կերակրում են:

Ռուբենի ապշած դեմքը տեսնելով ավելացրեց.

- Ես սրանց լավ գիտեմ. եթե մտադրություն ունենային մեզ... ապա ավելորդ ծախսեր չէին անի:

- Դու գտնում ես, որ սա մեծ ծախս է՞:

- Ինչո՞ւ ոչ, մեր հացին ցանված մեկ պտղունց աղն անգամ համարում են կորուստ:

Ձեռքերը նորից կապկպեցին և ճամփա ընկան: Երևում էր, որ շտապում է: Թյունա գյուղից հետո վերելքը շարունակվում էր: Հիսնապետը, հավանաբար, շտապում էր մութն ընկնելուց առաջ լեռնանցքը կտրել:

Ընդամենը կես ժամ էր անցել, երբ մի սարահարթ հասան, որտեղ ճանապարհի եզրին աղբյուր կար: Հիսնապետը կարգադրեց կանգ առնել, ձիուց իջավ, մոտեցավ ջուր խմեց և քրտնած երեսը լվաց: Այդ պահին դիմացից մի ձիավոր երևաց: Մոտեցավ, պտույտ գործեց կառքերի շուրջ, ուշադիր նայեց հայերին և խոսուն հայացքը հիսնապետին հառելուց հետո դարձավ եկած ճանապարհով: Իսկ հիսնապետն աղբյուրի մոտ նստած ծխախոտ էր փաթաթում: Հանգիստ, անշտապ: Հետո բավական երկար, կայծքարով ու թանձր պատրույգով փորձում էր վառել: Ժամը չորսը կլիներ: Ձնայած հետմիջօրեի սաստիկ արևին, շոգ չէր: Լեռնային բարձունքներում իշխող մշտական զով քամիները հաճելի մի բարեխառնություն էին ստեղծել: Կատարյալ լռություն էր, միայն երբեմն-երբեմն, արքայական թռչնի խրոխտ կռինչն էր լսվում երկնի խորքերից:

Հանկարծ սմբակների դոփյունը ցնցեց գետինը: Վերևի՞ց էր, թե ներքևից, դժվար էր ասել, բայց դանդաղորեն մոտենում էր: Սիրտ մաշեցնող դանդաղությամբ: Ոստիկանները, որ իջել էին կառքից, զարմացած իրար նայեցին, հետո՝ հիսնապետին: Բայց նրա դեմքը ոչինչ չէր արտահայտում: Վերջապես, հեծյալների խումբը երևաց: Մոտ տասը բաշիբոզուկ: Նրանց առջևից, որոշ հեռավորության վրա, ընթանում էր Արաբաջիբաշի Իսմայիլը:

Ոստիկաններն ակնթարթային արագությամբ հրացաններն ուղղեցին դեպի հեծյալները: Հիսնապետն, աղբյուրի մոտից, անմիջապես գոռաց.

- Հասան, Ֆարիդ, չկրակե՛ք:

Հետո ելավ, գնաց խմբին ընդառաջ: Հեծյալները ձիերից իջան, բարևեցին հիսնապետին, ինչ-որ բաներ ասացին, որից հետո կառապաններին իջեցրին և, չգիտես ինչու, նրանց ձեռքերը կապեցին: Աքսորյալներին ևս հրամայեցին կառքերից իջնել, և սկսեցին գրպանները խուզարկել: Ամբողջ ավարը հանձնեցին Արաբաջիբաշիին, որը քիչ հեռվում կանգնած խոսում էր հիսնապետի հետ: Նա թալանը դրեց գրպանը, հրահանգներ տվեց ավազակներին, և աքսորյալներին մոտենալով, կարգադրեց հետևել իրեն:

Սարահարթից ճանապարհը շարունակվում էր երկու ուղղությամբ: Մեկն ուղիղ գնում էր վեր՝ դեպի լեռնանցքը, մյուսն իջնում էր ձորը: Արաբաջիբաշին ընտրեց վերջինը: Քարքարոտ, անհարթ, ոլորապտույտ մի կածան էր, որ կտրուկ իջնում էր ներքև: Քայլելը դժվար էր ու վտանգավոր, մանավանդ կապված ձեռքերով:

- Որքա՜ն կուզեի, որ մեր ձեռքերը հիմա կապված չլինեին:

- Ոչինչ, Դանիել, այդպես էլ կարելի է քայլել, միայն թե զգո՛ւյշ, չընկնես, ուրախություն չպատճառես սրանց:

- Դրա համար չեմ ասում, Ռուբեն, պարզապես շատ կուզեի, որ վերջին պահին իրար ձեռք բռնած դիմավորենք մահը, այդպես ավելի դյուրին կլիներ:

- Դանիել, ես բռնել եմ քո ձեռքը, մի՞թե չես զգում, Օննիկ, Հարություն, Վահան, սեղմենք մեր ձեռքերը:

- Սեղմում եմ, դոկտոր, - պատասխանեց Օննիկ Մաղազաճյանը:

- Մենք նույնպես, - պատասխանեցին Վահանը և Հարությունը:

- Զգո՞ւմ եք, թե ինչպիսի զորությամբ լցվեցինք, ավելի ուժգին սեղմեք, ավելի ուժգին:

Վերջապես իջան ձորակ և սկսեցին դիմացի լանջը բարձրանալ: Այստեղ քայլելն ավելի դյուրին էր: Անտառին մոտենալուն պես Արաբաջիբաշին ձեռքով նշան արեց կանգ առնել, հետո, հայերի խմբին մոտենալով, Ռուբենին առանձնացրեց և, ավազակներին դիմելով, ասաց.

- Էս մեկին ձեռք չտաք, սա իմն է:

Ասաց ու, իր զոհի թևը մտած, մի քանի քայլ հեռացավ և կողքին լուռ կանգնած, հայացքը հառեց դեպի մնացած չորսը: Ավազակները մերկացրին նրանց, կապեցին ծառերից և հարցական նայեցին իրենց պարագլխին: Վերջինս ձեռքով նշան արեց: Դաշույններ փայլեցին արևի տակ և տեղնուտեղը ներկվեցին արյունով: Նախ զոհերի աչքերը հանեցին: Աղաղակները լցվեցին ձորը և արձագանքվեցին չորս կողմից: Արաբաջիբաշին երեսը ծռմռեց.

- Դրանց ձենը կտրեք:

Չորս հոգի մոտեցան, արյունոտված գլուխները բռնեցին, իսկ մյուս չորսը դաշույնները բերանը խրելով, ատամները ջարդելով, լեզուները կտրեցին: Աղաղակները դարձան տնքոց, բայց հնչեցին ավելի սոսկալի: Հետո սկսեցին անպաշտպան մարմինները մաս առ մաս կտրատել: Դանդաղ, վարպետորեն, այնպես, որ միանգամից չմեռնեն:

- Դոկտորս, տեսնո՞ւմ ես, լավ նայիր:

Ոչ մի պատասխան:

- Դոկտորս, չեմ ուզում, որ քեզ հետ նույն բանն անեն, դեռ ժամանակ ունես փրկվելու:

Ոչ մի պատասխան:

- Դոկտորս, վերցրու աղջկաս, ուր կուզես գնա, մեղք ես, դոկտորս... Հաշվում եմ մինչև տասը. մեկ... երկու... երեք... Ինձ մի կատաղացրու... չորս... հինգ... վեց...

Տնքոցներն արդեն դարձել էին հոգեվարքի խուլ հառաչներ... Հայացքը շրջեց, որ չնայի:

- Գլուխդ մի շրջիր, նայիր, դոկտորս, լավ նայիր... յոթ... ութ... Նայիր, նայիր, դոկտորս... իննը... իննը... իննը... Լավ, դոկտորս, Արաբաջիբաշին բարի է, Արաբաջիբաշին լավությունը գնահատել գիտի, ես էլ քեզ լավություն կանեմ, դոկտորս, չէ, դու էդպես չես տանջվի: Չէ, դոկտորս, չեմ ուզում քեզ պարտական մնալ...

Տնքոցները շարունակվում են: Հայացքը մի փրկություն ունի լոկ. երկինքը՝ անսահման կապույտ... Գլուխը հետ գցեց, որպեսզի միայն երկինքը տեսնի, ուսերը ցնցեց, ձեռքերը փորձեց ազատել կոշտ պարանի կապանքներից... Եվ այդ պահին մի սուր ծակոց զգաց այնտեղ, ուր սիրտն է... Բանի տեղ չդրեց... Սրտի ծակոց վաղուց ուներ... Զգաց նաև, թե ինչպես կապանքներից ազատված սլանում է երկինք... Եվ այդ ծակոցն անսպասելի սլացքի հրճվանքից էր գուցե և ոչ թե Արաբաջիբաշիի դաշույնից, որ մինչև կոթը մխրճվեց սիրտը...

* * *

Օգոստոսի 26-ին և 27-ին տեղի ունեցան հետևյալ դեպքերը: Կառքերը երեկոյան վերադարձան առանց հայ աքսորյալների: Մի քանի օրվա ճանապարհը տևել էր մի քանի ժամ: Կառապաններից մեկը, Հասան անունով, ցնցված պատմում էր քստմնելի սպանության բոլոր մանրամասները: Չնայած ուշ ժամին, լուրը տարածվեց քաղաքով մեկ: Հասանը հազիվ էր մտել տուն և լվացվել ճանապարհի փոշիներից, երբ չորս ժանդարմ ներխուժեցին, գրեթե կիսամերկ հանեցին տնից և մութ փողոցներով տարան զորանոց: Այստեղ, Նուրհանէդդին բեյի հրամանով, սոսկալի ջարդ տվեցին նրան՝ «կառավարության հասցեին զրպարտություններ տարածելու համար»: Մեծից քիչ հետո «ոսկոր փշրողին» իր մոտ կանչեց մյութեսարիֆը և պահանջեց պատասխանատվության կանչել բոլոր մեղավորներին:

Հինգ աքսորյալների սպանության լուրը հասավ նաև Ջաֆարին: Արդեն լավացել էր և ուզում էր առավոտյան գործի գնալ: Գիշերը, սակայն, նորից վատացավ. խղճի խայթը և սարսափը սկսեցին տանջել նրան: Եթե Էնվերի հեռագիրը ժամանակին հանձնած լիներ Զերքեզին, հիմա դոկտորը Հալի բաբայի սրճարանում հանգիստ նստած սուրճ խմելիս կլիներ: Բայց Օղուզը կար մեջտեղը, Օղո՜ւզը... Հիմա Զերքեզը պատժում է մեղավորներին: Իսկ ինքը՝ Ջաֆարը, մեղավո՞ր է, թե ոչ: Այո, Ալլահի առջև մեղավոր է, բայց մարդկանց առջև՝ ոչ: Ալլահը մեծ է իսկապես, բայց աշխարհի գործերը մարդիկ են որոշում: Օղուզը

կվկայի, որ ինքն ընդամենը հինգ բոպեով մտավ հեռագրատուն, այն էլ ի՜նչ վիճակում... Հերթապահ ոստիկանն էլ կվկայի, որ մտնելն ու դուրս գալը մեկ եղավ, որ հազիվ էր քարշ տալիս ոտքերը, որ նույնիսկ գռեհիկ սրամտություն արեց այդ առթիվ: Չէ, Ջաֆարը մեղավոր չէ, ոչ մեկի առջև... Եթե խորը մտածես՝ նույնիսկ Ալլահի առջև... Էնվերի հեռագիրը եկել է իր դուրս գալուց հետո... Վերջապես, ինքն էլ մարդ է, կարո՞ղ է հիվանդանալ, թե ոչ:

Առավոտ կանուխ, նույնիսկ ժամանակից մի քիչ շուտ, Ջաֆարը բացեց իր պաշտոնական սենյակի դուռը: Էնվերի հեռագիրն օղակ-օղակ ընկած էր սեղանին: Միայն թե հասել էր մինչև եզրը, քանզի դրանից հետո ուրիշ հեռագրեր էին եկել, որ հասցեագրված էին Զերքեզին: Այդ բոլորը խնամքով անջատեց իրարից և տարավ հանձնեց հասցեատիրոջը: Վերջինս մանրամասն ծանոթանալով, առանձնացրեց Էնվերի կարգադրությունը և դիմեց նրան.

- Ինչո՞ւ ես այսօր ներկայացնում:

- Հիվանդ էի, բեյս, այսօր առավոտյան միայն կարողացա գործի գալ:

Նա չմտավ մանրամասների մեջ, չհամեմատեց Թալյաթի հեռագրի հետ: Պարզապես հարցրեց.

- Հիմա լա՞վ ես:

- Փառք Ալլահին, բեյս, վատ չեմ:

- Ափսո՜ս մեր դոկտորը, հիմա այստեղ լիներ, կխնդրեի, որ քեզ քններ... Շնորհակալ եմ, Ջաֆար, կարող ես գնալ:

Հետո դռան մոտ կանգնած ոստիկանին խոժոռ դեմքով կարգադրեց.

- Օղուզին բեր այստեղ:

* * *

15 հոկտեմբերի 1915 թ.

«Պանկալթի, Նալբանդ փող. -1, Կոնստանդնուպոլիս»:

Այս հասցեն քաջ ծանոթ էր փոստատարին: Ճիշտ է, արդեն մեկ ամսից ավելին կլիներ, ինչ փոստային ոչ մի առաքում չէր բերել այստեղ, բայց լավ գիտեր տանտիրուհուն, որն ամեն անգամ հուզմունքով էր ընդունում Ջանղըրիից եկող նամակները: Այս մեկն էլ Ջանղըրիից էր գալիս, ավելի շուտ հետ էր գալիս ուղարկողին, և ծրարի վրա հատուկ կնիք կար, որ ֆրանսերեն ասում էր. «Parti sans laisser l'adresse»:* Փոստատարն իզուր փնտրեց հետադարձ հասցեում ապրող անձին՝ տիկ. Զիլինկիրյանին: Ի վերջո, իր պարտքը կատարած լինելու համար, ծրարը թողեց նույն թաղում գտնվող «Քյուրքչյան» դեղատանը:

Յաննին փորձեց ամեն կերպ, արժանապատվությամբ, առանց իրենց սկզբունքներին դեմ գնալու փրկել ամուսնուն: Նամակում նա գրում էր որպես վերջին պատգամ. «Ա՜հ, Ռուբեն, պետք է սիրուց կառչենք, միայն նա կարող է պահել մեզ այս աշխարհում»: Այդ պատգամը հասցեագրում էր որքան Ռուբենին,

* Մեկնել է առանց հասցե թողնելու (ֆրանս.):

նույնքան էլ իրեն: Մինչև կյանքի վերջը՝ 1967 թ. դեկտեմբերի 27-ը, ամենայն արթնամտությամբ, հավատում էր, որ Ռուբենը ողջ է և առասպելական հերոսուհիների հավատարմությամբ սպասում էր նրա վերադարձին: Նա ճշմարիտ էր յուրովի, քանզի այն սերը, որ ստեղծեցին միասին պիտի ապրեր անդամ նրանց մահից հետո:

Նույն օրը, հոկտեմբերի 15-ին, Յաննին երկու զավակների և մոր հետ ճանապարհ ընկավ դեպի Շվեյցարիա, ընդմիշտ թողնելով այն երկիրը, որ գերեզման դարձավ մի ամբողջ ժողովրդի համար:

25 դեկտեմբերի 2003 թ.-
25 օգոստոսի 2004 թ. Փարիզ-Երևան

Ռուբեն ՍԵՎԱԿ
(1885-1915)

«Դարեր շարունակ մրմնջել ենք միայն ապրելու, գոյատևելու մասին, ոչինչ, որ թուրքը մեզ արհամարհում է ամեն օր, ոչինչ, որ բռնաբարում է մեր թոռոր իրավունքները, ոչինչ, որ կողոպտում է մեզ, ոչինչ, որ ամենահեշտորեն հայտնի ենք, ոչի՛նչ, ոչի՛նչ, ոչի՛նչ... Միայն թե ապրենք... Թեկուզ վիրաց ծուռ, բայց ապրենք, շարունակենք գոյությունն քարշ տալ... Սակայն թուրքը դարձյալ դժգոհ է, թուրքն ասելիքը է անում. ուզո՞ւմ եք պահպանել այդ ստրկացված մարմինը, որեմն վերցրեք վիզումը կտրատեք՝ թեղուենք մեր հավարը: Մենք հարցնում ենք, թե ի՞նչ է լինելու Հայաստանի հետ... Հայաստանը ապրելու է, մենք այս վերքերն էլ կքուծենք, իսկ թուրքը պիրպ պարտասման գա իր ոձիրների համար, վաղ թե ուշ, ես համոզված եմ... Հայաստանը կիսադիր ու կապիր այն հերոսների շնորհիվ, ովքեր դիմադրեցին թուրքին, Հայաստանը կապիր նրանց շնորհիվ, ովքեր կարողացան ասանց ստրուանալու փրկել իրենց մարմինն ու հոգին և վերջապես Հայաստանը կապիր նաև, երբ մերժենք թուրքի անարգ առաջարկները... Մեր մայրը հոգիների հիշատակն ավելի ամոր հենարան կլինի մեր երկրի համար, քան մեր պղծված մարմինները...»